Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

М. Салтыков-Щедрин

ГОСПОДА ГОЛОВЛЕВЫ

❊

СКАЗКИ

Перевод А. Тер-Овнанесяна

ИЗДАТЕЛЬСТВО «СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН—1977

Մ. Սալթիկով-Չեդրին

ՊԱՐՈՆԱՅՔ ԳՈԼՈՎԼՅՈՎՆԵՐԸ

❊

ՀԵՔԻԱԹՆԵՐ

Թարգմանությունը Ա. Տեր-Հովհաննիսյանի

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ — 1977

Р 1
У 13

У $\frac{70301\ (4069)}{701(01)76}$ 203 77 «S»

© «Սովետական գրող» հրատարակչություն,
Թարգմանված է հայերեն, 1977

ՊԱՐՈՆԱՅՔ ԳՈԼՈՎԼՅՈՎՆԵՐԸ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Մեկ անգամ հեռավոր կալվածքի բուրմիստր[1] Անտոն Վասիլևը, վերջացնելով զեկուցումը տիրուհի Արինա Պետրովնա Գոլովլյովային՝ անձնագրերով ապրող գյուղացիներից տուրքեր գանձելու համար Մոսկվա կատարած ուղևորության մասին և արդեն թույլտվություն ստանալով սպասավորների սենյակը գնալու, կանգնած տեղը հանկարծ մի տեսակ խորհրդավոր վարանեց, ասես նա դեռ մի խոսք էլ, մի գործ էլ ուներ, որի մասին և՛ ուզում էր, և՛ չէր ուզում զեկուցել։

Արինա Պետրովնան, որ լիովին հասկանում էր իր մերձավոր մարդկանց ոչ միայն ամենափոքր շարժումը, այլև նրանց գաղտնի մտածմունքները, իսկույն անհանգստացավ։

— Ուրիշ ի՞նչ կա,— հարցրեց նա, ակնդետ նայելով բուրմիստրին։

— Ուրիշ ո՞ինչ— փորձեց խույս տալ Անտոն Վասիլևը։

— Սուտ մի՛ ասա։ Էլի՛ կա։ Աչքերի՛ց դեմ տեսնում։

Անտոն Վասիլևը, սակայն, չէր վճռում պատասխանել և շարունակում էր ոտքից ոտք փոխվել։

— Ասա՛, ուրիշ էլ ի՞նչ գործ ունես,— կտրուկ ձայնով բղավեց նրա վրա Արինա Պետրովնան։— Ասա՛, պոչ թափ մի՛ տուր... բացբերան։

Արինա Պետրովնան սիրում էր մականուններ կպցնել իր վարչական և ընտանեկան անձնակազմը հանդիսացող մարդ-

կանց։ Անտոն Վասիլևին նա «բացբերան» էր անվանել ո՛չ այն պատճառով, որ նա իրոք երբևիցե նկատվել էր դավաճանության մեջ, այլ այն պատճառով, որ նա լեզվից թույլ էր։ Նրա կառավարած կալվածքի կենտրոնը մի աչքի ընկնող առևտրական գյուղ էր, ուր շատ պանդոկներ կային։ Անտոն Վասիլևը սիրում էր պանդոկում թեյ խմել, պարծենալ, որ իր տիրուհին ամենազոր է և այդ պարծենկոտության ժամանակ աննկատելի կերպով բերանից խոսքեր էր թռցնում։ Բայց որովհետև Արինա Պետրովնան մշտապես զանազան դատական գործեր ուներ, ուստի հաճախ այնպես էր պատահում, որ հավատարիմ մարդու շաղակրատանքը տիրուհու ռազմական խորամանկությունները հրապարակ էր հանում նախքան նրանց իրագործվելը։

— Կա... իսկապես...— վերջապես փնթփնթաց Անտոն Վասիլևը։

— Ի՞նչ։ Ի՞նչ է,— հուզվեց Արինա Պետրովնան։

Որպես տիրակալ կին և միաժամանակ մեծագույն շափով օժտված լինելով ստեղծագործական շնորհքով, նա մի ակնթարթում ամեն տեսակ հակասությունների ու հակազդեցությունների մի ամբողջ պատկեր նկարեց իր մտքում և անմիջապես այնպես տարվեց դրանով, որ նույնիսկ գունատվեց ու վեր թռավ բազկաթոռից։

— Ստեպան Վլադիմիրիչը Մոսկվայի տունը ծախել է...— գեկուցեց բուրմիստրը, ծոր տալով։

— Ինչպե՞ս։

— Ծախել է։

— Ինչո՞ւ, ինչպե՞ս։ Մի՛ ծամծմիր, ասա՛։

— Պարտքի տեղ... Այդպես պետք է ենթադրել։ Հայտնի բան է, լավ գործերի պատճառով չեն ծախում։

— Նշանակում է, ոստիկանությո՞ւնն է ծախել։ Դատարա՞նը։

— Նշանակում է, այդպես է։ Ասում են, տունը աճուրդով ութ հազարով է գնացել։

Արինա Պետրովնան ծանրորեն ընկավ բազկաթոռին և աչքերը հառեց լուսամուտին։ Առաջին րոպեներին այդ հայտնությունն, ըստ երևույթին, մթագնեց նրա գիտակցությունը։

Եթե նրան ասեին, որ Ստեպան Վլադիմիրիչը մեկնումեկին սպանել է, որ գոլովլյովյան գյուղացիներն ապստամբել են և կոռի դուրս չեն գալիս, կամ որ ճորտատիրական իրավունքը վերացել է, անգամ այդ դեպքում նա այդ աստիճան ապուշ չէր կտրի։ Նրա շրթունքները շարժվում էին, աչքերը նայում էին հեռուն, սակայն ոչինչ չէին տեսնում։ Նա նույնիսկ չնկատեց, որ նույն այդ ժամանակ սպասավորուհի Դունյաշկան գոգնոցով մի բան ծածկելով, թափով ուզեց սլանալ լուսամուտի տակով, բայց հանկարծ տեսնելով տիրուհուն, մի պահ պտույտ-պտույտ եկավ նույն տեղում և հուշիկ քայլերով ետ դարձավ (ուրիշ դեպքում այդ արարքը մի ամբողջ հետաքննության առիթ կհանդիսանար)։ Վերջապես, սակայն, Արինա Պետրովնան ուշքի եկավ և ասաց.

— Ի՞նչ մասխարություն։

Որին կրկին հաջորդեց ահեղ լռության մի քանի րոպե։

— Այդպես ուրեմն, ասում ես, որ տունը ոստիկանությունը ութ հազարո՞վ է ծախել,— նորից հարցրեց նա։

— Ճիշտ այդպես։

— Ծնողական օրհնությունը, հա՞։ Լա՞վ է... սրիկա՛ն։

Արինա Պետրովնան զգում էր, որ ստացած տեղեկության պատճառով նա անհապաղ պետք է որոշում ընդունի, բայց ոչ մի բան մտածել չէր կարողանում, որովհետև նրա մտքերը խճճվում էին միանգամայն հակառակ ուղղություններով։ Մի կողմից մտածում էր՝ «Ոստիկանությունն է ծախել։ Չէ՞ որ մի րոպեում չի ծախել։ Չէ՞ որ վերգիր է կազմել, գնահատություն է եղել, աճուրդի հայտարարություններ են արվել։ Ծախել է ութ հազարով, երբ ինքը նույն այդ տան համար երկու տարի առաջ սեփական ձեռնարով տասներկու հազար է համրել մի կոպեկի պես։ Թե որ իմանար ու տեղյակ լիներ, ինքը կարող էր ութ հազարով առնել՝ աճուրդով»։ Մյուս կողմից մտքին գալիս էր և այն, որ «Ոստիկանությունը ութ հազարով է ծախել... Ծնողական օրհնությո՞ւնը։ Սրիկա՛։ Ութ հազարով ծնողական օրհնությո՞ւնն է քոռ ու փուչ արել»։

— Ումի՞ց լսեցիր,— վերջապես հարցրեց նա, վերջնականապես կանգ առնելով այն մտքի վրա, որ տունն արդեն

ծախվել է և որ, հետևապես, էժան գնով ձեռք բերելու հույսն իր համար կորել է ընդմիշտ։

— Իվան Միխայլիչը, պանդոկապետն ասաց

— Իսկ ինչո՞ւ նա ինձ ժամանակին չի զգուշացրել։

— Երկյուղ է կրել, նշանակում է։

— Երկյո՞ւղ է կրել։ Այ ես նրան «երկյուղ կրել» ցույց կտամ։ Կանչել նրան Մոսկվայից, և հենց որ գա, իսկույն զինվորական վարչությո՛ւն ուղարկել և ճակատը սափրել[2]։ «Երկյո՞ւղ է կրել»։

Թեպետ ճորտատիրական իրավունքը վերանալու վրա էր, բայց դեռ գոյություն ուներ։ Շատ էր պատահել Անտոն Վասիլևին տիրուհուց շատ տեսակ յուրահատուկ հրամաններ լսել, բայց Արինա Պետրովնայի այս որոշումն այն աստիճան անսպասելի էր, որ նույնիսկ Անտոն Վասիլևը բավական անհարմար զգաց իրեն։ Ըստ որում ակամայից հիշեց իր «բացբերան» մականունը։ Իվան Միխայլիչը շրջահայաց մարդ էր, և ոչ ոքի մտքով անգամ չէր անցնի, որ նրա գլխին որևէ փորձանք կգա։ Բացի այդ, նա իր մտերիմ բարեկամն էր ու քավորը — և հանկարծ նրան զինվոր ուղարկել այն բանի համար միայն, որ ինքը, Անտոն Վասիլևը, բացբերանի նման չկարողացավ լեզուն իրեն պահել։

— Ներեցեք... Իվան Միխայլիչին,— փորձեց պաշտպանել նրան։

— Գնա՛... միջնո՛րդ,— բղավեց նրա վրա Արինա Պետրովնան, բայց այնպիսի ձայնով, որ Անտոն Վասիլևը մտքով անգամ չանցկացրեց այնուհետև ևս պաշտպանել Իվան Միխայլիչին։

Սակայն, նախքան իմ պատմությունը շարունակելը, ես կրխնդրեմ ընթերցողին մոտիկից ծանոթանալ Արինա Պետրովնա Գոլովլյովայի և նրա ընտանեկան դրության հետ։

***

Արինա Պետրովնան վաթսուն տարեկանին մոտ կին է, բայց դեռևս առույգ է և սովոր է իր ուզածի պես ապրել։ Պահում է նա իրեն ահեղ, միանձնա և ինքնիշխան կառավարում

է գոլովլյովյան ընդարձակ կալվածքը, ապրում է առանձնացած, խնայողաբար, համարյա ժլատ, հարևանների հետ բարեկամություն չի անում, տեղական իշխանություններին բարյացակամ վերաբերմունք է ցույց տալիս, իսկ երեխաներից պահանջում է, որպեսզի նրանք այնպես հնազանդ լինեն իրեն, որ մի բան անելիս հարց տան իրենց՝ իսկ ի՞նչ կասի այդ մասին մամենկան։ Ընդհանրապես ինքնուրույն բնավորություն ունի, անդրդվելի և մասամբ ըմբոստ, ինչին, ըստ որում, քիչ չէր նպաստում և այն հանգամանքը, որ ամբողջ գոլովլյովյան ընտանիքում չկար մի մարդ, որի կողմից նա հակառակության հանդիպեր։ Նրա ամուսինը թեթևամիտ և հարբեցող մարդ է (Արինա Պետրովնան հոժարությամբ ասում է իր մասին, որ ինքը ոչ այրի է, ոչ ամուսնացած կին). երեխաներից ոմանք ծառայում են Պետերբուրգում, ոմանք քաշել են հորը և որպես «ատելիներ», թույլ չեն տրվում մասնակցելու որևէ ընտանեկան գործի։ Այդ պայմաններում Արինա Պետրովնան իրեն վաղ զգաց միայնակ, այնպես որ, ճշմարիտն ասած, նույնիսկ ընտանեկան կյանքից բոլորովին խորթացավ, թեպետ «ընտանիք» բառը շարունակ նրա լեզվին է, և արտաքնապես նրա բոլոր գործողությունները բացառապես ընտանեկան գործերը կարգավորելու անխոնջ հոգսերն են ղեկավարում։

Ընտանիքի գլխավորը՝ Վլադիմիր Միխայլիչ Գոլովլյովը, դեռևս երիտասարդ հասակում հայտնի էր իր անկարգ և անբզդամ բնավորությամբ և Արինա Պետրովնայի մեջ, որը մշտապես աչքի էր ընկնում իր լրջությամբ ու գործնականությամբ, երբեք ոչ մի համակրանք չէր հարուցում։ Վլադիմիր Միխայլիչը դատարկ ու անգործ կյանք էր վարում, շատ հաճախ փակվում էր իր առանձնասենյակում, երգում էր՝ սարյակներին, աքաղաղներին ու այլ թռչուններին նմանեցնելով և զբաղվում էր այսպես կոչված «ազատ բանաստեղծություններ» հորինելով։ Անկեղծության զեղումների բոպեներին հպարտանում էր նրանով, որ եղել է Բարկովի[3] ընկերը, և որ վերջինս, իբրև թե, նույնիսկ իր մահվան անկողնում օրհնել է իրեն։ Արինա Պետրովնան հենց սկզբից չսիրեց ամուսնու բանաստեղծությունները, գարշելիություն և խեղկատակություն էր համարում դրանք, բայց, որովհետև Վլադիմիր Միխայլիչն, իս-

կապես ասած, ամուսնացավ հենց նրա համար, որպեսզի միշտ իր բանաստեղծությունները լսող մեկը ունենա ձեռքի տակ, ապա հասկանալի է, որ գժտությունները երկար սպասեցնել չտվեցին իրենց։ Աստիճանաբար աճելով և անողոք բնույթ ստանալով, այդ գժտությունները վերջացան կնոջ կողմից կատարյալ և արհամարհական անտարբերությամբ դեպի ծաղրածու-ամուսինը, ամուսնու կողմից՝ դեպի կինը սրտանց ատելությամբ, որի մեջ, սակայն, նշանակալից չափով վախ կար։ Ամուսինը կնոջն անվանում էր «վհուկ» և «սատանա», կինը ամուսնուն անվանում էր «քամու ջրաղաց» և «անլար բալալայկա»։ Այդպիսի հարաբերության մեջ գտնվելով, նրանք ավելի քան քառասուն տարի համատեղ կյանք էին վարում և երբե՛ք ոչ մեկի, ոչ մյուսի մտքով չէր անցնում, որ այդպիսի կյանքն իր մեջ ինչ-որ հակաբնական բան է պարունակում։ Ժամանակի ընթացքում Վլադիմիր Միխայլիչի ամբարշտությունը ոչ միայն չէր անցնում, այլև նույնիսկ առավել նենգամիտ բնույթ էր ստանում։ Բարկովյան ոգով բանաստեղծական վարժություններից անկախ, նա սկսեց խըմել և միջանցքում դարանակալում էր աղախիններին։ Արինա Պետրովնան սկզբում իր ամուսնու այդ նոր զբաղմունքին վերաբերում էր զզվանքով և նույնիսկ հուզմունքով (որի մեջ, սակայն, ավելի դեր էր խաղում իշխանատենչությունը, քան ուղղակի խանդը), բայց հետո ձեռք քաշեց և միայն հետևում էր, որպեսզի անամոթ աղջիկները բարինին երոֆեիչ[4] չտանեն։ Այն ժամանակվանից սկսած, երբ Արինա Պետրովնան ասաց իրեն, որ ամուսինն իր ընկերը չի, նա իր ամբողջ ուշադրությունը դարձրեց բացառապես մի առարկայի՝ գոլովլյովյան կալվածքն ամբողջացնելու վրա. և իրոք, քառասնամյա ամուսնական կյանքում նա կարողացավ տասնապատկել իր կարողությունը։ Զարմանալի համբերատարությամբ և աչալրջությամբ նա հետամտում էր հեռավոր և մոտակա գյուղերին, գաղտնաբար տեղեկանում էր խնամակալական խորհրդի[5] հետ նրանց տերերի ունեցած հարաբերության մասին և միշտ, ինչպես մարդու գլխին ձյուն մաղվի, հայտնվում էր աճուրդներում։ Սեփական միջոցներով հողեր գնելու այդ մոլեռանդ հետապնդումների շրջապտույտի մեջ Վլադիմիր Միխայլիչն

ավելի ու ավելի էր ետին պլան մղվում, իսկ վերջապես՝ բոլորովին վայրիացավ։ Այն րոպեին, երբ սկսվում է այս պատմությունը, նա արդեն զառամյալ ծերունի է, որը համարյա անկողնուց դուրս չի գալիս, իսկ եթե հազվադեպ անգամներ էլ դուրս էր գալիս ննջարանից, ապա միայն այն բանի համար, որպեսզի կնոջ սենյակի կիսաբաց դռնից գլուխը ներս տանի, բղավի՝ «սատանա՛» ու նորից անհայտանա։

Շատ էլ բախտավոր չէր Արինա Պետրովնան նաև զավակների կողմից։ Նա չափից ավելի անկախ, այսպես ասած, ամուրի բնավորություն ուներ, որպեսզի երեխաների մեջ որևէ այլ բան տեսներ, քան ավելորդ բեռ լինելը։ Նա այն ժամանակ էր միայն ազատ շնչում, երբ միայնակ էր մնում իր հաշիվների ու տնտեսական ձեռնարկումների հետ, երբ ոչ ոք չէր խանգարում նրա գործնական խոսակցություններին բուրմիստրների, գյուղապետների, մատակարարուհիների և ուրիշների հետ։ Նրա աչքին երեխաները մեկն էին այն ճակատագրական կենսական հանգամանքներից, որոնց ամբողջականության դեմ նա իրեն իրավազոր չէր համարում բողոքելու, բայց որոնք, այնուամենայնիվ, չէին շոշափում նրա ներքին էության ոչ մի լարը, որն ամբողջովին անձնատուր էր եղել կենսակառուցման անթիվ մանրամասնություններին։ Երեխաները չորսն էին՝ երեք տղա և մեկ աղջիկ։ Մեծ որդու և աղջկա մասին նա նույնիսկ չէր սիրում խոսել, դեպի կրտսեր որդին ավել կամ պակաս անտարբեր էր և միայն միջնեկին՝ Պորֆիշային ոչ թե սիրում էր, այլ, ասես թե, վախենում էր նրանից։

Ստեպան Վլադիմիրիչը, ավագ որդին, որի մասին առավելապես խոսվում է այս պատմվածքում, ընտանիքում Ստյոպկա-տխմար և Ստյոպկա-կովարար անունով էր հռչակված։ Նա շատ վաղ ընկավ «ատելիների» շարքը և մանուկ հասակից ոչ այն է պարիայի[6], ոչ այն է ծաղրածուի դեր էր կատարում տանը։ Դժբախտաբար, դա շատ շնորհալի տղա էր, որ մեծ հաճույքով և արագ յուրացնում էր այն տպավորությունները, որոնք մշակում էր իրեն շրջապատող միջավայրը։ Հորից նա ընկալել էր անսպառ ստահակություններ, մորից՝ մարդկանց թույլ կողմերն արագորեն գուշակելու ընդունակություն։ Շնորհիվ առաջին հատկության, նա շուտով հոր սիրելին դար-

ձավ, որը է՛լ ավելի սաստկացրեց մոր ատելությունը դեպի նա։ Հաճախ, երբ Արինա Պետրովնան բացակայում էր տնտեսական գործերով, հայրը և պատանի որդին մեկուսանում էին Բարկովի նկարով զարդարված առանձնասենյակում, անպարկեշտ բանաստեղծություններ էին կարդում և բամբասում էին, ըստ որում ամենից շատ հասնում էր «վհուկին», այսինքն՝ Արինա Պետրովնային։ Բայց «վհուկը» կարծես հոտառությամբ կռահում էր նրանց զբաղմունքը, կառքով անշշուկ հասնում էր մուտքին, ոտների մատների վրա մոտենում էր առանձնասենյակի դռանը և ծածուկ լսում էր նրանց ուրախ զրույցները։ Եվ Ստյոպկա-տխմարը ենթարկվում էր անհապաղ ու սաստիկ ծեծի։ Բայց Ստյոպկան չէր զսպվում. նա անզգա էր թե՛ դեպի ծեծը, թե՛ դեպի հորդորանքները և կես ժամ անց կրկին սկսում էր չարություններ անել։ Մեկ Անյուտկա աղախնի գլխաշորն էր կտրատում, մեկ քնած Վասյուտկայի բերանն էր ճանճեր լցնում, մեկ գաղտագողի խոհանոց էր մտնում և կարկանդակ թոցնում (Արինա Պետրովնան՝ խընայողության համար՝ երեխաներին կիսաքաղց էր պահում), որը, սակայն, անմիջապես բաժանում էր եղբայրների հետ։

— Սպանե՛լ է քեզ հարկավոր,— շարունակ կրկնում էր նրան Արինա Պետրովնան։— Կսպանեմ — և պատասխանատու էլ չեմ լինի։ Թագավորն էլ դրա համար ինձ չի՛ պատժի։

Այսպիսի մշտական ստորացումը, հանդիպելով փափուկ, հեշտությամբ մոռացության տվող հողի, ապարդյուն չանցավ։ Դրա արդյունքը եղավ ոչ թե գազազում, ոչ թե բողոք, այլ կազմակերպումը ճորտական, խեղկատակության հասնող բնավորության, որը չի ճանաչում չափի զգացում և զուրկ է ամեն մի հեռատեսությունից։ Այդպիսի անձնավորությունները հաճույքով ենթարկվում են ամեն մի ազդեցության և կարող են դառնալ ինչ որ ուզեք՝ հարբեցող, մուրացկան, խեղկատակ և նույնիսկ՝ հանցագործ...

Քսան տարեկան հասակում Ստեպան Գոլովլյովն ավարտեց Մոսկվայի գիմնազիաներից մեկի դասընթացը և համալսարան մտավ։ Բայց դառն էր նրա ուսանողությունը։ Նախ և առաջ մայրը նրան ճիշտ այնքան փող էր տալիս, որքան որ հարկավոր էր քաղցից չմեռնելու համար. երկրորդ, նրա մեջ

աշխատանքի ոչ մի ձգտում չկար, այլ դրա փոխարեն բուն էր դրել անիծյալ տաղանդավորությունը, որն արտահայտվում էր առավելապես տնազ անելու ընդունակությամբ. երրորդ, նա շարունակ հասարակության մեջ գտնվելու պահանջ էր զգում և ոչ մի բոպե չէր կարողանում մնալ մենակ, ինքն իր հետ։ Ուստի՝ նա կանգ առավ ձրիակերի և pique-assiette՛-ի* թեթև դերի վրա և շնորհիվ ամեն տեսակի կատակ տանելու, հանդուրժելու հատկության, շուտով դարձավ հարուստ ուսանողների ֆավորիտը[7]։ Բայց հարուստ ուսանողները, թողնելով նրան իրենց միջավայրը, այնուամենայնիվ, գլխի ընկան, որ նա իրենց ընկերը չի, որ նա միայն ծաղրածու է, և հենց այդ իմաստով էլ հաստատվեց նրա համբավը։ Մեկ անգամ արդեն կանգնելով այդ հողի վրա, նա բնականորեն ավելի ու ավելի ցած ընկավ, այնպես որ 4-րդ կուրսի վերջում վերջնականապես դարձավ խեղկատակ։ Այնուամենայնիվ, շնորհիվ արագ ըմբռնելու և լսածը հիշելու ընդունակության, նա հաջող քննություն տվեց և թեկնածուի աստիճան ստացավ։

Երբ նա մոր մոտ եկավ դիպլոմը ծոցում, Արինա Պետրովնան միայն ուսերը վեր քաշեց և ասաց. «Զարմանո՛ւմ եմ»։ Ապա, մի ամսի չափ գյուղում պահելուց հետո, ուղարկեց նրան Պետերբուրգ, ապրուստի համար ամսական նշանակելով հարյուր ռուբլի ասիգնացիայով[8]։ Սկսվեցին թափառումները դեպարտամենտներում և գրասենյակներում. չուներ նա հովանավորներ, չուներ ոչ մի ցանկություն անձնական աշխատանքով իր համար ճանապարհ հարթելու։ Երիտասարդի պարապ միտքն այն աստիճան ետ էր սովորել կենտրոնանալ, որ նույնիսկ բյուրոկրատական փորձարկումները, ինչպես՝ զեկուցագրեր և գործերի համառոտագրություններ կազմելը, նրա ուժերից վեր էին։ Չորս տարի Գոլովլյովը շարշարվեց Պետերբուրգում և վերջապես ստիպված էր ասել ինքն իրեն, որ գրասենյակային չինովնիկի պաշտոնից բարձր պաշտոն ստանալու հույսը նրա համար երբեիցե գոյություն չունի։ Ի պատասխան նրա գանգատների, Արինա Պետրովնան սպառնալի նամակ գրեց, որն սկսվում էր հետևյալ խոսքերով. «Ես

* Պնակալեզ, հացկատակ

սկզբից դրանում համոզված էի» և վերջանում էր Մոսկվա ներկայանալու հրամանով։ Այնտեղ, սիրեցյալ գյուղացիների խորհրդում որոշվեց՝ Ստյոպկա-տխմարին նշանակել նադվորնի դատարանում[9], նրա հսկողությանը հանձնելով դատաստանական գրագրին, որը հնուց ի վեր միջնորդում էր գոլովլյովյան գործերի մասին։ Ինչ էր անում և ինչպես էր պահում իրեն Ստեպան Վլադիմիրիչը նադվորնի դատարանում, անհայտ է, բայց երեք տարի անց նա այլևս այնտեղ չէր։ Այն ժամանակ Արինա Պետրովնան դիմեց ծայրահեղ միջոցի՝ նա որդուն «նետեց մի պատառ», որը, սակայն, միաժամանակ պետք է իրենից ներկայացներ նաև «ծնողական օրհնությունը»։ Այդ պատառը մի տուն էր Մոսկվայում, որի համար Արինա Պետրովնան տասներկու հազար ռուբլի վճարեց։

Առաջին անգամ Ստեպան Գոլովլյովն ազատ շունչ քաշեց։ Տունը խոստանում էր տարեկան հազար ռուբլի արծաթով եկամուտ տալ և նախկինի համեմատությամբ այդ գումարը իսկական բարեկեցություն էր թվում նրան։ Նա ոգևորությամբ համբուրեց մոր ձեռքը («Տես հա՞, տխմար, ավելին մի սպասիր»,— ասաց ըստ որում Արինա Պետրովնան) և խոստացավ արդարացնել իրեն ցույց տված ողորմածությունը։

Բայց, ավա՜ղ, նա այնքան քիչ գիտեր վարվել փողի հետ, այնքան անհեթեթ հասկացողություն ուներ կյանքի իրական չափերի մասին, որ տարեկան հեքիաթային հազար ռուբլին շատ կարճ ժամանակ բավականացրեց։ Չորս-հինգ տարուց նա վերջնականապես սնանկացավ և չափազանց ուրախ էր, երբ հաջողվեց գնալ որպես փոխարինող զինվոր[10] այդ ժամանակ կազմակերպվող աշխարհազորում։ Աշխարհազորը, սակայն, մինչև Խարկով հասավ միայն, երբ հաշտություն կնքվեց, և Գոլովլյովը կրկին վերադարձավ Մոսկվա։ Նրա տունն այդ ժամանակ արդեն ծախված էր։ Նա հագած ուներ աշխարհազորի համազգեստ, բայց բավական մաշված. ոտներին՝ կոշիկներ, ճտքերը անդրավարտիքի տակ դրած և գրպանում՝ հարյուր մանեթ փող։ Այդ կապիտալով նա ուզեց սպեկուլյացիայով զբաղվել, այսինքն՝ սկսեց թուղթ խաղալ և կարճ ժամանակից հետո բոլորը տարվեց։ Այն ժամանակ նա սկսեց հաճախել մոր ունևոր գյուղացիների տները, որոնք ապրում

էին Մոսկվայում իրենց տնտեսությամբ. որի մոտ ճաշում էր, որից մի քառորդ ֆունտ ծխախոտի փող էր խնդրում, ոմանցից մանր փող էր փոխ առնում։ Բայց, վերջապես, հասավ մի րոպե, երբ նա, այսպես ասած, երես առ երես հանդիպեց խուլ պարսպի։ Նա արդեն քառասուն տարեկան էր և հարկադրված էր խոստովանել, որ իր ուժերից վեր է այլևս հետագա թափառական կյանքը։ Մի ճանապարհ էր մնում՝ դեպի Գոլովլյովո...

Ստեպան Վլադիմիրիչից հետո գոլովլյովյան ընտանիքում մեծը Աննա Վլադիմիրովնա դուստրն էր, որի մասին ևս Արինա Պետրովնան չէր սիրում խոսել։

Բանն այն է, որ Աննուշկայի նկատմամբ Արինա Պետրովնան հաշիվներ ուներ, սակայն Աննուշկան ոչ միայն չարդարացրեց նրա հույսերը, այլև ամբողջ գավառով մեկ սկանդալ տարքեց։ Երբ դուստրն ավարտեց ինստիտուտը, Արինա Պետրովնան նրան գյուղ փոխադրեց, ակնկալելով ձրի տնային քարտուղար և հաշվապահ դարձնել նրան, բայց դրա փոխարեն Աննուշկան մի գեղեցիկ գիշեր Գոլովլյովոյից փախավ կոռնետ Ուլանովի հետ և ամուսնացավ։

— Այդպես էլ, առանց ծնողական օրհնության, շների նման ամուսնացան,— գանգատվում էր այդ առիթով Արինա Պետրովնան։— Լավ է դեռ, որ ամուսինը գրքակալի չորս բոլորքը պատեց[11]։ Ուրիշը որ լիներ, կօգտվեր ու կգնար իր բանին։ Հետո արի ու գտիր նրան։

Դստեր հետ էլ Արինա Պետրովնան նույնչափ վճռական վարվեց, որչափ ատելի որդու հետ. վերցրեց ու «պատառ նետեց» նրան։ Նա նրան հինգ հազար դրամագլուխ տվեց և երեսուն հոգիանոց մի փոքրիկ գյուղ, լքված դաստակերտով, ուր բոլոր լուսամուտներից փչում էր և հատակին ոչ մի ողջ տախտակ չկար։ Երկու տարուց նորապսակները դրամագլուխը կերան, և կոռնետը հայտնի չէ, թե ուր փախավ, Աննա Վլադիմիրովնային թողնելով երկու երկվորյակ աղջիկների՝ Աննինկայի և Լյուբինկայի հետ։ Հետո ինքը՝ Աննա Վլադիմիրովնան, երեք ամիս անց մեռավ, և Արինա Պետրովնան կամաակամա պետք է անհայր ու անմայր որբերին ապաստան տար իր մոտ, ինչ և արեց նա, մանկիկներին տեղավորելով կողա-

շենքում և մի աչքը կույր պառավ Պալաշկային նրանց խնամող նշանակեց։

— Աստծու ողորմությունը շատ է,— ասում էր նա ընդսմին,— որբերի կերած հացը մի բան չի, բայց ինձ համար ծերությանս օրերին մխիթարություն է։ Աստված մի աղջիկս առավ, երկուսը տվեց։

Եվ միևնույն ժամանակ գրեց որդուն՝ Պորֆիրի Վլադիմիրիչին՝ «Քույրդ ինչպես անառակ ապրեց, այդպես էլ մեռավ, իր երկու լակոտին իմ վզին թողնելով»...

Ընդհանրապես, որչափ էլ ցինիկ կարող է թվալ այս դիտողությունը, բայց արդարությունը պահանջում է խոստովանել, որ այդ երկու դեպքերը, որոնց պատճառով «պատառներ նետվեցին», Արինա Պետրովնայի ֆինանսներին ոչ միայն վնաս չպատճառեցին, այլև զարտուղի միջոցով նույնիսկ օժանդակեցին գոլովլյովյան կալվածքի կլորանալուն, կրճատելով նրա փայատերերի թիվը։ Որովհետև Արինա Պետրովնան խիստ կանոնների տեր կին էր և, մի անգամ «պատառ նետելուց» հետո, ատելի երեխաների նկատմամբ այլևս իր պարտականությունները վերջացած էր համարում։ Նույնիսկ որբ-թոռնիկների մասին անգամ մտածելիս երբեք նա չէր պատկերացնում, որ ժամանակին հարկ կլինի նրանց որևէ բաժին հանել։ Նա աշխատում էր միայն հնարավորին չափ շատ քամել հանգուցյալ Աննա Վլադիմիրովնային բաժին հասած փոքրիկ կալվածքից և ստացածը ետ դնել խնամակալական խորհրդում։ Ըստ որում ասում էր.

— Որբերի համար ահա փող եմ հավաքում, իսկ որ նրանց ապրուստն ու խնամքը ծախս է նստում, նրանցից ես արդեն ոչինչ չեմ վերցնում։ Իմ աղուհացի համար, երևում է, աստված ինձ կհատուցի։

Վերջապես կրտսեր երեխաները՝ Պորֆիրի և Պավել Վլադիմիրիչները ծառայում էին Պետերբուրգում. առաջինը՝ քաղաքացիական գծով, իսկ երկրորդը՝ զինվորական։ Պորֆիրին ամուսնացած էր, Պավելն՝ ամուրի։

Պորֆիրի Վլադիմիրիչն ընտանիքում հայտնի էր երեք անունով՝ Բուդուշկա[12], արյունարբու և խարարբզիկ երեխա, որպիսի մականունները դեռևս երեխա հասակում տվել էր

նրան Ստյոպկա-տխմարը։ Մանուկ հասակից սիրում էր նա փաղաքշել սիրելի բարեկամ մամենկային, գաղտագողի համբուրել նրա ուսը, իսկ երբեմն և հարևանցի չարախոսել։ Պատահում էր, անշշուկ բաց էր անում մամենկայի սենյակի դուռը, անաղմուկ սպրդում էր մի անկյուն, նստում էր և, կարծես դյուրված, աչք չէր հեռացնում մամենկայից, մինչ նա գրում կամ հաշիվներ էր անում։ Բայց Արինա Պետրովնան այն ժամանակ արդեն մի տեսակ կասկածանքով էր վերաբերում որդիական այդ քծնանքներին։ Այն ժամանակ էլ իրեն ուղղված այդ ակնդետ հայացքը նրան խորհրդավոր էր թվում, և այն ժամանակ էլ չէր կարողանում որոշել, ինչ էր արդյոք թափվում այդ հայացքից՝ թույն, թե որդիական պատկառանք։

— Ինքս էլ հասկանալ չեմ կարողանում, թե ինչ աչքեր ունի նա,— խորհրդածում էր Արինա Պետրովնան երբեմն ինքն իրեն.— երբ նայում է, թվում է, թե ահա օղ է գցում վիզդ։ Թույն է թափում, հրապուրում է։

Եվ վերհիշում էր այդ դեպքում այն ժամանակվա բազմանշանակալից մանրամասնությունները, երբ ինքը դեռ «ծանրացած էր» Պորֆիշայով։ Այն ժամանակ իրենց տանը ապրում էր մի ինչ-որ բարեպաշտ և կանխատես ծերունի, որին Պորֆիշա-երանելի էին կանչում և որին Արինա Պետրովնան դիմում էր մշտապես, երբ ուզում էր որևէ բան կանխորոշել ապագայում։ Եվ ահա, նույն այդ ալևորը, երբ Արինա Պետրովնան հարցրեց նրանից, արդյոք շուտ է լինելու ծննդաբերությունը և աստված ինչ է տալու, տղա, թե աղջիկ,— ուղղակի ոչինչ չպատասխանեց, բայց երեք անգամ աքաղաղի պես կանչեց և ապա փնթփնթաց.

— Աքաղա՛ղ, աքաղաղ, սուր-սուր եղունգ, աքաղաղը կանչում է, թխսին սպառնում է. թուխսը կչկչում է, բայց ուշ կլինի։

Եվ ուրիշ ոչինչ։ Բայց երեք օրից (ահա թե ինչու երեք անգամ կանչեց) նա որդի ծնեց (ահա ինչու՝ աքաղաղ, աքաղաղ), որի անունը, ալևոր-կանխատեսի պատվին, Պորֆիրի դրեցին։

Գուշակության առաջին մասը կատարվեց, բայց ինչ կարող էին նշանակել «թուխսը կչկչում է, բայց ուշ կլինի» խոսքերը,— ահա այդ մասին էր մտածում Արինա Պետրովնան,

ձեռքի տակով նայելով Պորֆիշային, մինչ նա նստել էր իր անկյունում և իր խորհրդավոր հայացքով իրեն էր նայում։

Իսկ Պորֆիշան շարունակում էր իր համար նստել հեզ ու անաղմուկ և շարունակ նայում էր նրան, նայում էր այն աստիճան սևեռուն, որ նրա լայն բացված և անշարժ աչքերն արցունքով էին շղարշվում։ Նա կարծես զգում էր մոր հոգում շարժվող կասկածանքները և իրեն այն հաշվով էր պահում, որ ամենաթափանցիկ կասկածամտությունն անգամ պետք է զինաթափ լիներ իր հնազանդության առաջ։ Նույնիսկ մորը ձանձրացնելու վտանգին ենթարկելով իրեն, նա մշտապես պտույտ էր գալիս նրա աչքի առաջ, կարծես ասում էր՝ նայիր ինձ, ես ոչինչ չեմ թաքցնում, ես ամբողջապես հնազանդություն եմ և անձնվիրություն, ըստ որում հնազանդություն եմ ոչ միայն ահից, այլև խղճի մտոք։ Եվ որչափ էլ մոր մեջ խոսում էր այն վստահությունը, որ Պորֆիշկա-սրիկան միայն պոչով է ստորաքարշություն անում, իսկ աչքերով, այնուամենայնիվ, օղ է գցում, բայց այդպիսի անսահման անձնվիրության հանդեպ նրա սիրտն էլ չդիմացավ։ Եվ ակամայից նրա ձեռքը ափսեում լավ պատառ էր որոնում՝ սիրալիր որդուն տալու համար, չնայած այն բանին, որ այդ որդու տեսքը միայն նրա հոգում ինչ-որ խորհրդավոր, վատ, չար բանի անորոշ անհանգստություն էր առաջացնում։

Պորֆիրի Վլադիմիրիչի կատարյալ հակապատկերն էր նրա եղբայրը, Պավել Վլադիմիրիչը։ Դա որևէ արարմունքից միանգամայն զուրկ մարդու կատարյալ մարմնացումն էր։ Դեռ մանուկ հասակում նա ամենաչնչին հակում իսկ չէր ցույց տալիս ոչ ուսման, ոչ խաղերի, ոչ սրտաբացության, բայց սիրում էր ապրել մեկուսի, խուսափելով մարդկանցից։ Երբեմն քաշվում է մի անկյուն, նստում է խոսված ու սկսում է երևակայել։ Պատկերանում է նրան, որ ինքը վարսակալյուր է կերել և որ դրանից նրա ոտները բարակել են ու նա չի սովորում։ Կամ՝ որ ինքը ոչ թե ազնվականի որդի Պավելն է, այլ հովիվ Դավիդկան է, որ նրա ճակատին խուլ է դուրս եկել, ինչպես Դավիդկայի ճակատին, որ նա մտրակ է շրխկացնում ու չի սովորում։ Պատահում էր, Արինա Պետրովնան նայում էր, նայում նրա վրա ու նրա մայրական սիրտը զայրանում էր։

— Դու ի՞նչ ես մկան նման վարսակալյուրից խռովել,— չի համբերում, բղավում է նրա վրա։— Թե՞ այդ հասակից արդեն ներսդ թույնով է լցված։ Չի՞ լինի, որ մոտենաս մորդ, թե՝ մամենկա, փաղաքշեցեք ինձ, հոգյա՞կս։

Պավլուշան դուրս էր գալիս իր անկյունից ու դանդաղ քայլերով, ասես հրում էին նրան մեջքից, մոտենում էր մորը։

— Մամենկա,— կրկնում էր նա երեխայի համար մի տեսակ անբնական բամբ ձայնով,— փաղաքշեցեք ինձ, հոգյակս։

— Կորի՛ր աչքիցս, սուսիկ-փուսիկ։ Դու կարծում ես, որ անկյուն քաշվեցիր, նշանակում է ես բան չե՞մ հասկանում։ Ամբողջովին հասկանում եմ քեզ, սիրելիս։ Քո բոլոր ծրագիր-պլանները տեսնում եմ, ինչպես ափիս մեջ։

Եվ Պավելը նույն դանդաղ քայլերով ետ էր գնում ու նորից քաշվում էր իր անկյունը։

Անցնում էին տարիներ, և աստիճանաբար Պավել Վլադիմիրիչից կազմակերպվեց այն անտարբեր ու խորհրդավոր-մռայլ անձնավորությունը, որից, վերջին հաշվով, ստացվում է արարմունքներից զուրկ մարդը։ Գուցեև նա բարի էր, բայց ոչ ոքի բարիք չէր արել. գուցեև հիմար չէր, բայց իր ամբողջ կյանքում ոչ մի խելացի բան չէր արել։ Նա հյուրասեր էր, սակայն ոչ ոք չէր հրապուրվում նրա հյուրասիրությամբ. նա սիրով էր փող ծախսում, բայց այդ ծախսումներից ոչ ոքի համար երբեք ոչ օգտակար, ոչ հաճելի արդյունք չէր եղել. նա ոչ ոքի երբեք չէր վիրավորել, բայց ոչ ոք նրա համար դա արժանիք չէր համարում. նա ազնիվ էր, բայց ոչ ոք չէր լսել, որ մեկնումեկն ասեր՝ որչա՞փ ազնիվ վարվեց այսինչ գործում Պավել Գոլովլյովը։ Այդ բոլորին ավելանում էր և այն, որ նա շատ անգամ էր գազազում մոր դեմ և միաժամանակ վախենում էր նրանից, ինչպես կրակից։ Կրկնում եմ՝ դա մռայլ մարդ էր, սակայն նրա մռայլության տակ թաքնված էր արարմունքների բացակայություն — ուրիշ ոչինչ։

Հասուն տարիքում երկու եղբոր բնավորությունների զանազանությունն առավել խիստ արտահայտվեց դեպի մայրն ունեցած վերաբերմունքի մեջ։ Իուդուշկան ամեն շաբաթ ճշտապահորեն ընդարձակ նամակ էր գրում մորը, որի մեջ մեկիկ-մեկիկ հաղորդում էր պետերբուրգյան կյանքի բոլոր մանրա-

մասնությունները և ամենանրբին արտահայտություններով հավաստիացնում էր իր անշահասեր որդիական նվիրվածությունը։ Պավելը սակավ էր գրում և համառոտ, իսկ երբեմն նույնիսկ խորհրդավոր՝ կարծես աքցանով էր դուրս քաշում իրենից ամեն մի բառը։ «Փողը՝ այսքան ու այսինչ ժամանակի համար, սիրելի բարեկամ մամենկա, ձեր հավատարմատար գյուղացի Երոֆեևից ստացա,— հաղորդում էր, օրինակ, Պորֆիրի Վլադիմիրիչը,— իսկ փողն ուղարկելու համար՝ համաձայն ձեր, սիրելի մամենկա, բարեհաճության իմ ապրուստի վրա գործադրելու նպատակով՝ զգայացունց շնորհակալությունս եմ հայտնում և անկեղծ որդիական նվիրվածությամբ համբուրում եմ ձեր ձեռքը։ Մի բանի համար եմ միայն տրտում և կասկածանքներով տանջվում՝ շատ չե՞ք վտանգում արդյոք դուք ձեր թանկագին առողջությունը անընդհատ հոգսերով մեր ոչ միայն կարիքները, այլև քմահաճույքները բավարարելու համար։ Չգիտեմ, եղբայրս ինչպես, իսկ ես...» և այլն, և այլն։ Իսկ Պավելը նույն առիթով արտահայտվում էր. «Փողը՝ այսքան և այսինչ ժամանակամիջոցի համար, թանկագին ծնողս, ստացա և իմ հաշվով ես դեռ պետք է վեց ու կես նույնպես ստանամ, որի համար և խոնարհաբար խնդրում եմ ձեզ ներել ինձ»։ Երբ Արինա Պետրովնան նախատում էր երեխաներին շռայլության համար (դա հաճախ էր պատահում, թեպետև լուրջ պատճառներ չկային), ապա Պորֆիշան միշտ հնազանդ հպատակվում էր այդ նկատողություններին և գրում էր. «Գիտեմ, սիրելի բարեկամ մամենկա, որ դուք ուժերից վեր տանջանքներ եք կրում մեզ, ձեր անարժան որդիների համար, գիտեմ, որ մենք շատ հաճախ մեր վարքով չենք արդարացնում մեր մասին ձեր ունեցած մայրական հոգացողությունները և, որն ամենից վատն է, մարդկանց հատուկ մոլորությամբ, նույնիսկ մոռանում ենք այս մասին, որի համար և որդիական անկեղծ ներողություններս եմ հայտնում ձեզ, հույս ունենալով ժամանակի ընթացքում ազատվել այդ մոլությունից և ապրուստի ու այլ ծախսերի համար ձեր, սիրելի բարեկամ մամենկա, ուղարկած փողերը ծախսելու մեջ լինել զգույշ»։ Իսկ Պավելն այսպես էր պատասխանում. «Թանկագին ծնողս, թեպետև դուք ինձ համար պարտքեր դեռ չեք

վճարել, բայց ինձ շռայլող անվանելու ձեր նկատողությունն ընդունում եմ առանց առարկության, որի համար և խնդրում եմ ընդունեք իմ սրտագին հավաստիացումները»։ Նույնիսկ Արինա Պետրովնայի այն նամակին, որով քրոջ, Աննա Վլադիմիրովնայի մահվան լուրն էր հաղորդում, եղբայրները տարբեր արձագանքեցին։ Պորֆիրի Վլադիմիրիչը գրում էր. «Սիրասուն քույրիկ և մանկությանս լավ ընկերուհի Աննա Վլադիմիրովնայի մահվան լուրը տրտմությամբ լցրեց իմ սիրտը, որպիսի վիշտն է՛լ առավել սաստկացավ այն մտքից, որ ձեզ, սիրելի բարեկամ մամենկա, նոր խաչ բաժին ընկավ հանձինս երկու որբ մանկիկների։ Մի՞թե բավական չէր, որ դուք, մեր ընդհանուր բարերար, ամեն բանից զրկում եք ձեզ և, չխնայելով ձեր առողջությունը, բոլոր ուժերը տրամադրում եք, որպեսզի ապահովեք ձեր ընտանիքը ոչ միայն անհրաժեշտով, այլև հավելյալով։ Ճշմարիտ, թեպետև մեղք է, բայց երբեմն մարդ ակամայից տրտնջում է։ Եվ, իմ կարծիքով, ձեզ համար, հարազատս իմ, այս դեպքում միակ մխիթարությունն է հնարավորին չափ հաճախ հիշել, թե ինչե՞ր կրեց ինքը՝ Քրիստոսը»։ Իսկ Պավելը գրում էր. «Լուրը՝ զոհ եղած քրոջս մասին ստացա։ Սակայն, հույս ունեմ, որ ամենաբարձրյալը հանգիստ կտա նրան իր հովանիում, թեպետ սույնը և անհայտ է»։

Շատ անգամ էր կարդում Արինա Պետրովնան որդիների այդ նամակները և աշխատում էր գուշակել, արդյոք ո՞րն է նրանցից իր շարակամը դառնալու։ Կարդում է Պորֆիրի Վլադիմիրիչի նամակը և թվում է, թե ահա, ահա նա է չարագործը, որ կա։

— Տեսե՞ք ինչպես է գրում, ի՞նչ լեզու է թափում,— բացականչում էր նա։— Զուր չէ Ստյոպկա-տխմարը նրան Իուդուշկա անվանել։ Ո՛չ մի ճիշտ խոսք չկա, բոլորը ստում է։ Ե՛վ «սիրելի բարեկամ մամենկա», և՛ իմ տանջանքների մասին, և՛ իմ խաչի մասին... ոչ մի այդպիսի բան նա չի զգում։

Հետո սկսում է կարդալ Պավել Վլադիմիրիչի նամակը ու կրկին թվում է, թե ահա, ահա նա՛ է որ կա իր ապագա չարակամը։

— Հիմարը՝ հիմար է, բայց տես ինչպե՞ս է աննկատելի կերպով սիրաշոյում մորը։ «Որի համար և խնդրում եմ ընդու-

նեք իմ սրտագին հավաստիացումը»... Շնո՞ր արեք, խնդրեմ։ Ա՜յ, ես քեզ «ընդունեք իմ սրտագին հավաստիացումը» ցույց կտամ։ Մի պատառ կնետեմ քեզ, ինչպես Ստյոպկա-տխմարին, այն ժամանակ կիմանաս դու, թե ինչպես եմ հասկանում ես քո «հավաստիացումները»։

Եվ ի վերջո նրա մայրական կրծքից հիրավի ողբերգական հառաչանք պոռթկաց.

— Եվ ո՞ւմ համար եմ ես այսքանը կուտակում։ Ո՞ւմ համար եմ մթերում։ Գիշերները չեմ քնում, պատառը խնայում եմ... ո՞ւմ համար։

Այսպես էր Գոլովլյովների ընտանեկան դրությունն այն պահին, երբ բուրմիստր Անտոն Վասիլևը զեկուցեց Արինա Պետրովնային Ստյոպկա-տխմարի կողմից իրեն «նետված պատառը» վատնելու մասին, որը, էժան ծախված լինելու պատճառով, «ծնողական օրհնության» է՛լ առավել մեծ նշանակություն էր ստացել արդեն։

***

Արինա Պետրովնան նստել էր ննջարանում և չէր կարողանում ուշքի գալ։ Ինչ-որ մի բան շարժվեց նրա ներսը, որի մասին նա իրեն պարզ հաշիվ տալ չէր կարողանում։ Մասնակի՞ց էր արդյոք դրան ինչ-որ հրաշքով հրապարակ եկած խղճահարությունը դեպի ատելի, բայց և այնպես հարազատ որդին, թե՞ միայն վիրավորված ինքնիշխանության մերկ զգացմունքն էր խոսում,— այդ բանը չէր կարող որոշել ամենահմուտ հոգեբանն անգամ, այն աստիճան խճճվում և արագորեն փոփոխում էին մեկը մյուսին նրա մեջ բոլոր զգացմունքներն ու զգացողությունները։ Վերջապես կուտակված պատկերացումների բազմության մեջ ամենից ավելի որոշակի առանձնացավ այն վախը, որ «ատելին» նորից իր վզին է նստելու։

«Անյուտկան իր լակոտներին վզիս փաթաթեց, հիմա էլ ահա տխմարը»...— հաշիվ արեց նա մտքում։

Երկար նստեց նա այդպես, առանց որևէ խոսք ասելու և ակնդետ նայելով լուսամուտին, մի կետի։ Ճաշը բերեցին, որին նա համարյա ձեռք չտվեց. եկան ասելու՝ աղային օղի բերեցեք տալ»։ Նա, առանց նայելու, նետեց նկուղի բանալին։ Ճաշից հետո գնաց սրբապատկերների սենյակը, կարգադրեց լուսավորել բոլոր կանթեղները և փակվեց, նախապես պատվիրելով բաղնիքը տաքացնել։ Այդ բոլորը նշաններ էին, որոնք անկասկած ապացուցում էին, որ տիրուհին «զայրանում է», և այդ պատճառով տանը ամեն ինչ հանկարծ լռեց, ասես մեռավ։ Աղախինները ոտների մատների վրա էին քայլում, մառանապետուհի Ակուլինան ցնորվածի պես այս ու այն կողմ էր ընկնում. ճաշից հետո որոշված էր մուրաբա եփել, և ահա հասել է ժամանակը, պտուղները մաքրված պատրաստ են, բայց տիրուհուց ոչ մի կարգադրություն չկա. այդպես Մատվեյը եկավ հարցնելու, ժամանակը չէ՞ արդյոք դեղձերը հավաքելու, բայց աղախինների սենյակում այնպես բղավեցին վրան, որ նա անմիջապես ետ քաշվեց։

Աղոթելով աստծուն և լողանալով բաղնիքում, Արինա Պետրովնան մասամբ խաղաղված զգաց իրեն ու կրկին պահանջեց Անտոն Վասիլևին՝ բացատրության։

— Իսկ ի՞նչ է անում տխմարը,— հարցրեց նա։

— Մոսկվան մեծ է, մի ամբողջ տարի էլ ման գաս, վերջացնել չես կարող։

— Բայց չէ՞ որ ուտել-խմել է հարկավոր։

— Իր գյուղացիների մոտ է կերակրվում։ Մեկի մոտ ճաշում է, մյուսից տասը կոպեկ է խնդրում թութունի համար։

— Իսկ ո՞վ է թույլ տվել, որ տան։

— Ներեցեք, տիրուհի, գյուղացիները մի՞թե վիրավորվում են։ Օտար չունևորներին են տալիս, իսկ իրենց տերերին կմերժե՞ն։

— Այ հիմա ես այդ... ողորմացողների՞ն... Տխմարին կքշեմ քո կալվածքը, դե պահեք նրան ողջ հասարակությամբ ձեր հաշվին։

— Ձեր կամքն է, տիրուհի։

— Ի՞նչ, ինչ ասացի՞ր։

— Որ ձեր կամքն է, տիրուհի։ Թե որ հրամայեք, կկերակրենք։

— Կկերակրե՞նք... Դու խոսք ասա, ոչ թե գլխիցդ դուրս տուր։

Լռություն։ Բայց Անտոն Վասիլևը զուր չէր տիրուհուց բացբերան մականունը ստացել։ Նա չի կարողանում համբերել ու կրկին սկսում է կուչուձիգ անել, մի ինչ-որ բան ևս զեկուցելու ցանկությունից այրվելով։

— Եվ դեռ ինչ խենթն է,— վերջապես ասում է նա։— Ասում են, արշավանքից դառնալիս հետը հարյուր մանեթ փող է բերած լինում։ Մեծ փող չի հարյուր մանեթը, բայց դրանով էլ մի կերպ ապրել կարելի է...

— Հետո՞։

— Ենթադրել է, թե գործերը կուղղի, աֆյորա է ուզեցել անել...

— Ասա՛, մի ծամծմիր։

— Տարել է գերմանական ժողովարան[13]։ Մտածել է հիմար մարդ գտնի, թղթախաղում տանի, բայց դրա փոխարեն խելոքի է հանդիպել։ Ուզեցել է փախուստ տա, բայց միջանցքում, ասում են, բռնել են։ Ինչքան փող որ ունեցել է, բոլորը առել են։

— Կողերին էլ, երևի, հասցրե՞լ են։

— Ամեն բան եղել է։ Մյուս օրը գալիս է Իվան Միխայլիչի մոտ, ինքն էլ հենց պատմում է։ Եվ նույնիսկ զարմանալի է՝ ծիծաղում է... ուրախ է։ Ասես թե գլուխը շոյել են։

— Նրան տե՛ղն է, միայն թե իմ աչքին չերևա։

— Բայց պետք է ենթադրել, որ այդպես է լինելու։

— Ի՞նչ ես ասում, ես նրան շեմքից ներս չեմ թողնի։

— Կա-չկա, այդպես է լինելու,— կրկնում է Անտոն Վասիլևը։— Իվան Միխայլիչն էլ ասում էր, թե նա ասել է. «Վե՛րջ,— ասում է,— գնալու եմ պառավի մոտ՝ ցամաք հաց կրծելու»։ Դե նա, տիրուհի, ճիշտը որ ասելու լինենք, գնալու ուրիշ տեղ չունի էլ, բացի այստեղ գալը։ Իր գյուղացիների մոտ, Մոսկվայում երկար ժամանակ ապրել չի կարող։ Հաղուստ էլ է հարկավոր, հանգստություն էլ...

Ահա հենց դրանից էր, որ վախենում էր Արինա Պետրովնան և դա էր հենց կազմում այն անորոշ պատկերացման իսկությունը, որն անգիտակցաբար անհանգստացնում էր նրան։ «Այո՛, կգա նա, ուրիշ գնալու տեղ չունի — դա անխուսափելի է։ Նա այստեղ կլինի, մշտապես իր աչքի առաջ, նա՝ անիծվածը, ատելին, մոռացվածը։ Էլ ինչո՞ւ հապա այն ժամանակ «պատառ» նետեց նրան։ Մտածում էր, որ նա, ստանալով «ինչ հարկավոր է», անհայտության գիրկը սուզվեց,— բայց ա՛հա վերածնվո՛ւմ է։ Նա կգա, կպահանջի, բոլորի աչքը կծակի իր մուրացկանի տեսքով։ Եվ պետք է բավարարել նրա պահանջները, որովհետև նա անպատկառ մարդ է, պատրաստ է ամեն տեսակ մոլեգնության։ «Նրան» կողպեքի տակ թաքցնել չես կարող. «նա» ընդունակ է օտարների ներկայությամբ էլ երևալ ցնցոտիներով, պատրաստ է անկարգություն անել, վազտալ հարևանների մոտ և գոլովլյովյան բոլոր գաղտնի գործերի մասին պատմել նրանց։ Սուզդալ-վանքը[14] աքսորել գուցե։ Բայց ով է իմանում, կա՞ արդյոք այդ Սուզդալ-վանքը և իսկապես այդ վանքը հենց նրա համար գոյություն ունի, որպեսզի վշտացած ծնողներին ազատի իրենց անհնազանդ երեխաների երեսը տեսնելուց։ Ասում են նույնպես, որ գժանոց կա... բայց չէ որ գժանոցը — դե, ինչպե՞ս կարող ես դու նրան, այդ քառասուն տարեկան որձ ձիուն գժանոց տանել»։ Մի խոսքով, Արինա Պետրովնան բոլորովին գլուխը կորցրեց այն դժբախտությունների մտքից միայն, որոնք սպառնում էին պղտորել նրա խաղաղ գոյությունը՝ Ստյոպկա-տխմարի գալու հետևանքով։

— Ես նրան քո կալվածքը կուղարկեմ։ Կերակրի՛ր քո հաշվին,— սպառնաց նա բուրմիստրին։— Ոչ թե կալվածքի, այլ քո սեփական հաշվին։

— Ի՞նչ պատճառով այդպես, տիրուհի։

— Այն պատճառով, որ մի կոկռա։ Կը՞ռ, կը՞ռ։ «Կա-չկա, այդպես է լինելու...» Կորի՛ աչքիցս... ագռա՛վ։

Անտոն Վասիլևը ուզեց ձախ դառնալ, գնալու, բայց Արինա Պետրովնան նորից կանգնեցրեց նրան։

— Կա՛ց, սպասիր։ Ուրեմն այդ ճի՞շտ է, որ նա ուզում է Գոլովլյովոյի ճամփան բռնել,— հարցրեց նա։

— Մի՞թե ես սուտ պիտի ասեմ, տիրուհի։ Ճիշտ ասել է՝ «գնալու եմ պառավի մոտ ցամաք հաց կրծելու»։

— Այ ես արդեն ցույց կտամ նրան, թե պառավի մոտ ինչ հաց է պատրաստված իր համար։

— Բայց, տիրուհի, նա երկար չի ապրի ձեզ մոտ։

— Ի՞նչ կա որ։

— Սաստիկ հազում է... շաբունակ ձախ կուրծքն է բրոնում... Չի՛ առողջանա։

— Այդ տեսակները, սիրելիս, շատ երկար են ապրում։ Մեզ բոլորիս գերեզման կդնեն։ Հազում է ու հազում,— ի՞նչ է եղել որ լոլլող ձիուն։ Դե լավ, հետո կտեսնենք։ Այժմ գնա, ես պետք է կարգադրություն անեմ։

Ամբողջ գիշեր Արինա Պետրովնան միտք արեց և վերջապես վճռեց ընտանեկան խորհուրդ հրավիրել՝ տխմարի վիճակը որոշելու համար։ Այդպիսի սահմանադրական հակումներն հատուկ չէին նրա բնավորությանը, բայց այս անգամ նա որոշեց նահանջել ինքնակալական ավանդություններից, որպեսզի ամբողջ ընտանիքի որոշումով իրեն պաշտպանի մարդկանց նախատինքներից։

Սակայն նա չէր կասկածում առաջիկա խորհրդակցության արդյունքի մասին, ուստիև թեթև սրտով նստեց նամակներ գրելու, որոնցով հրամայվում էր Պորֆիրի և Պավել Վլադիմիրիչներին՝ անհապաղ ժամանել Գոլովլյովո։

* * *

Մինչ տեղի էր ունենում այս բոլորը, խառնաշփոթության հանցավորը՝ Ստյոպկա-տխմարն արդեն Մոսկվայից դեպի Գոլովլյովո էր առաջանում։ Նա Մոսկվայում, Ռոգոժսկու մոտ նստեց մեկը այն, այսպես կոչված «դելեժաններից», որոնցով անցյալներում ճանապարհորդում էին և դեռ հիմա էլ տեղ-տեղ ճանապարհորդում են մանր վաճառականները և առևտրով զբաղվող գյուղացիները՝ այցելության գնալով իրենց վայրերը։ «Դելեժանը» մեկնում էր Վլադիմիրի ուղղությամբ, և նույն այն սրտացավ պանդոկապան Իվան Միխայլիչն իր հաշվին տանում էր Ստեպան Վլադիմիրիչին, տեղ վերցնելով նրա համար և ամբողջ ճանապարհին վճարելով նրա ուտելիքի ծախսը։

— Ուրեմն դուք, Ստեպան Վլադիմիրիչ, այդպես էլ արեք. ճանապարհը շուտ գալու տեղն իջեք ու ասքով, ինչպես որ

կաք, կոստյումով՝ այդպես էլ ներկայացեք մամենկային,— պայմանավորվեց նրա հետ Իվան Միխայլիչը։

— Այդպես, այդպես, այդպես,— հաստատեց նաև Ստեպան Վլադիմիրիչը։— Շուտ գալու տեղից շա՞տ ճանապարհ է, ինչ է — տասնհինգ վերստ ոտով գնալն ինչ է որ, իսկույն կհասնեմ։ Փոշոտած, աղբոտած — այդպես էլ հենց կներկայանամ։

— Կտեսնի մամենկան կոստյումով՝ գուցեև խղճահարվի։

— Կխղճահարվի՞։ Ինչպե՞ս չի խղճահարվի։ Մայրի՞կը — չէ որ նա բարի պառավ է։

Ստեպան Գոլովլյովը դեռ քառասուն տարեկան չկա, բայց արտաքինից նրան երբեք հիսունից պակաս տալ չի լինի։ Կյանքն այն աստիճան մաշել է նրան, որ նրա մեջ ազնվականի որդի լինելու ոչ մի նշան չի թողել, ոչ մի հետք, թե նա էլ մի ժամանակ եղել է համալսարանում և որ գիտության դաստիարակիչ խոսքը նրան ևս ուղղված է եղել։ Դա մի չափազանց երկարահասակ, չսանրված, համարյա անլվա մարդ է, սննդի պակասությունից նիհար, ներս ընկած կրծքով, երկար, չանթող ձեռներով։ Նրա դեմքը ուռած է, գլխի և մորուքի մազերը գըզգըզված են, խիստ ալեխառն, ձայնը բարձր է, բայց խռպոտ, մրսած, աչքերը դուրս ընկած են և տենդոտ՝ մասամբ չափից դուրս օղու գործածությունից, մասամբ՝ մշտապես քամու տակ գտնվելուց։ Հագել է հին և բոլորովին մաշված մոխրագույն զինվորական բաճկոն, որի տրեզները պոկված են ու ծախված հալելու համար[15]. ոտներին՝ մաշված, դեղնած ու կարկատած սապոգներ. արձակված բաճկոնի տակից երևում է շապիկը, համարյա սև, ասես մրի մեջ թաթախած,— շապիկ, որը նա ինքն, իսկական զինվորի ցինիզմով, «լվանոց» է անվանում։ Նայում է նա խեթ, հոնքերի տակից, մռայլ, բայց այդ մռայլությունը ներքին անբավականություն չի արտահայտում, այլ հետևանք է ինչ-որ անորոշ անհանգստության, թե ահա-ահա, և՛ս մի բոպե — ու նա որդի պես քաղցից կըսատկի։

Խոսում է նա անդադար, անկապ, մեկ առարկայից մյուսին թռչելով, խոսում է և այն ժամանակ, երբ Իվան Միխայլիչը լսում է նրան, և այն ժամանակ, երբ վերջինս քնում է

նրա խոսքի երաժշտության տակ։ Նա շատ անհարմար է նստել։ «Դելեժանում» չորս հոգի են տեղավորված, ուստի նա ստիպված է նստել ոտները կծկած, որի պատճառով երեք-չորս վերստ անցնելուց հետո ծնկներն անտանելի ցավում են։ Բայց և այնպես, չնայած ցավին, նա շարունակ խոսում է։ Սայլակի կողքերի անցքերից փոշու ամպեր են ներխուժում, երբեմն արևի շեղ ճառագայթներն են ներս սողում այնտեղ և հանկարծ բոցի պես այրում են «դելեժանի» ամբողջ ներսը,— իսկ նա շարունակ խոսում է։

— Այո, եղբայր, ես իմ կյանքում շատ վիշտ եմ կրել,— պատմում է նա,— ժամանակ է և հանգիստ առնելու։ Ես հո նրա տունը չեմ քանդելու, իսկ մի պատառ հաց ինչպե՞ս չի գտնվի։ Դու ի՞նչ ես մտածում այս մասին, Իվան Միխայլիչ։

— Ձեր մամենկան շատ պատառներ ունի։

— Միայն թե ինձ համար չէ, այդ ես ուզում ասել, հա՞։ Այո, բարեկամս, նա անչափ շատ փող ունի, բայց ինձ համար հինգ կոպեկն ափսոսում է։ Եվ միշտ էլ վհուկը ատել է ինձ։ Ինչի՞ համար։ Բայց այժմ այլևս բավական է։ Այժմ ինձ համար արդեն մի հաշիվ է, ես կարող եմ և կոկորդին չոքել։ Կուզենա դուրս անել ինձ — չե՛մ գնա։ Ուտելիք չի տա — ի՛նքս կվերցնեմ։ Ես, եղբայր, ծառայել եմ հայրենիքին, այժմ ամեն մարդ պարտավոր է ինձ օգնել։ Մի բանից եմ վախենում՝ թութուն չի տա, շա՛տ վատ կլինի։

— Հա, թութունից, երևում է, պետք է ձեռք քաշել։

— Ես էլ բուրմիստրի հոգին կհանեմ։ Գուցե քաշալ սատանան աղային նվեր կտա։

— Կտա, ինչու չի տա։ Բայց եթե ձեր մամենկան բուրմիստրին էլ արգելի՞։

— Դե, այդ դեպքում իմ բանը բոլորովին բուրդ է. իմ առաջվա ճոխ կյանքից մի բան է միայն մնացել՝ թութունը։ Ես, եղբայր, երբ փող էի ունենում, օրական քառորդ ֆունտ Ժուկով[16] էի ծխում։

— Այ, օղուց էլ պետք է ձեռք քաշել։

— Նույնպես վատ է։ Օղին իմ առողջության համար նույնիսկ օգտակար է՝ խորիսը մաքրում է։ Մենք երբ արշավանքի էինք գնում Սևաստոպոլ, դեռ Սերպուխովո չհասած, ամեն մեկս արդեն մի վեդրո խմել էինք։

— Երևի շշմե՞լ էիք։

— Ձե՛մ հիշում։ Կարծեմ այդպիսի բան եղավ։ Ես, եղբայր, հասա մինչև Խարկով, բայց որ սպանես, ոչինչ չեմ հիշում։ Հիշում եմ միայն, որ գյուղերով էինք գնում, քաղաքներով էինք գնում, մեկ էլ այն, որ Տուլայում կապալառուն ճառ ասաց մեզ։ Արտասվե՛ց սրիկան։ Այո, այն ժամանակ շատ տառապանք կրեց մեր ուղղափառ մայր Ռուսիան։ Կապալառուներ, վարձակալներ, ընդունողներ — զարմանալի է, թե աստված ինչպես փրկեց։

— Իսկ ձեր մամենկան այդտեղ էլ շահ ստացավ։ Մեր կալվածքից գնացած զինվորների կեսից ավելին տուն չդարձավ, այնպես որ ամեն մեկի համար, ասում են, հրամայված է զինվորական հաշվային ստացական տալ[17]։ Իսկ ստացականը գանձարանում չորս հարյուրից ավելի արժի։

— Այո, եղբայր, մայրիկը խելացի է։ Նա պիտի մինիստր լիներ և ոչ թե Գոլովլյովոյում մուրաբայի քափ քաշեր։ Իմանում ես, ինչ անարդար է եղել նա դեպի ինձ, զրկել է նա ինձ, բայց ես նրան հարգում եմ։ Սատանի պես խելոք է, ահա որն է գլխավորը։ Նա որ չլիներ, մենք ի՞նչ էինք հիմի։ Մենակ մի Գոլովլյովո էր լինելու հարյուրմեկ ու կես շնչով։ Իսկ նա տես թե ինչքա՞ն է առել։

— Ձեր եղբայրները կապիտալի տեր են դառնալու։

— Դառնալու են։ Այ, ես որ ոչինչ չեմ ստանալու, այդ հաստատ է։ Այո, եղբայր, ես ամեն ինչից զրկվեցի։ Իսկ եղբայրներս հարստանալու են, մանավանդ Արյունարբուն։ Նա առանց օճառի մարդու հոգու մեջ կմտնի։ Բայց եկա ժամանակ, նա պառավ վհուկին էլ վերջ կտա. և՛ կալվածքը, և՛ կապիտալը կծծի նրանից — ես այդ բաներում կանխատես եմ։ Այ Պավել եղբայրս — նա հոգի մարդ է։ Նա ծածուկ ինձ թութուն կուղարկի, ա՛յ կտեսնես։ Հենց որ Գոլովլյովո հասնեմ, նրան նամակ կգրեմ, թե այսպես-այսպես, սիրելի եղբայր, հանգստացրու։ Է՜խ-է՜խ-է՜խ, թե որ ես հարուստ լիներ՞։

— Ի՞նչ կանեիք որ։

— Ամենից առաջ քեզ կոսկեզօծեի...

— Ինձ ինչի՞ համար։ Դուք ձեր մասին մտածեցեք, իսկ ես առանց դրա էլ, ձեր մայրիկի ողորմածությամբ, գոհ եմ։

— Է՜ չէ, եղբայր, այդ արդեն թողեք, ես քեզ ամբողջ կալվածքի գլխավոր հրամանատար կդարձնեի։ Այո, բարեկամը, կերակրեցիր, ջերմացրիր դու զինվորիս,— շնորհակալ եմ քեզանից։ Դու որ չլինեիր, հիմի ես ոտքով էի քարշ գալու նախահայրերիս տունը։ Եվ իսկույն ազատության թուղթ կտայի քեզ ու իմ ամբողջ գանձերը քո առաջ բաց կանեի — խրմի՛ր, կե՛ր և ուրախացի՛ր։ Իսկ դու ի՞նչ էիր կարծում իմ մասին, բարեկամս։

— Չէ, դուք արդեն իմ մասին թողեք։ Ուրիշ է՞լ ինչ կանեիք դուք, թե որ հարուստ լինեիք։

— Երկրորդ, ես ինձ համար իսկույն մի սիրուհի կվերցնեի։ Կուրսկում գնացի վանամոր մոտ՝ մաղթանք անել տալու, տեսա մեկին... ա՜խ, լա՜վ պատառ էր։ Հավատում ես, մի րոպե չեղավ, որ նա իր տեղը հանգիստ կանգներ։

— Բայց գուցե նա չուզենար սիրուհի դառնալ։

— Փողն հապա ինչի՞ համար է։ Ատելի մետաղն ինչի՞ համար է։ Հարյուր հազարը քի՞չ է,— երկո՛ւ հարյուր վերցրու։ Ես, եղբայր, երբ փող եմ ունենում, ոչի՞նչ չեմ խնայում, միայն թե քեֆիս ուզածի պես ապրեմ։ Ես, խոստովանանք լինի, եֆրեյտորի միջոցով այն ժամանակ երեք մանեթ առաջարկեցի նրան — անասունը հինգ մանեթ պահանջեց։

— Իսկ հինգ մանեթ, երևի, չկար։

— Չգիտեմ էլ ինչ ասեմ, եղբայր։ Ասում եմ քեզ՝ ամեն ինչ կարծես երազում լիներ։ Գուցե նա ինձ մոտ նույնիսկ եղել է, բայց ես մոռացել եմ։ Ողջ ճանապարհին, ամբողջ երկու ամիս ոչինչ չեմ հիշում։ Իսկ քեզ հետ, երևի, այդպիսի բան չի՞ պատահել։

Բայց Իվան Միխայլիչը լուռ է։ Ստեպան Վլադիմիրիչը նայում է և համոզվում, որ իր ուղեկիցը համաչափ ճոճում է գլուխը և երբեմն, երբ քիթը քիչ է մնում կպչի ծնկներին, մի տեսակ անհեթեթ ցնցվում է ու նորից սկսում է ճոճել տակտով։

— Հեյվա՜խ,— ասում է նա,— արդեն քունդ տանում է։ Շատ ես պարարտացել դու, եղբայր, պանդոկի հաց ու թե-

յով։ Իսկ ես այդպես էլ քուն չունեմ։ Քուն չունեմ ես — և վե՛րջ։ Հիմի բայց մենք ի՞նչ մի այնպիսի բան անենք։ Գուցե այ այս խաղողի պտուղից...

Գոլովլյովը նայում է շուրջը և հավաստիանում է, որ մյուս ուղևորները նույնպես քնած են։ Իր կողքին նստած վաճառականի գլուխը դիպչում է ձողին, բայց նա շարունակում է քնած մնալ։ Դեմքն էլ փայլ է ստացել, ասես լաք է քսած, և ճանճերն էլ հավաքվել են բերանի շուրջը։

«Իսկ ինչ, թե որ բոլոր այս ճանճերը նրա կոկորդը ճամփենք, այ թե երկինքը փուլ կգա գլխին»,— հանկարծ երջանիկ միտք է ծագում Գոլովլյովի գլխում և նա արդեն ձեռքը կամացուկ պարզում է դեպի վաճառականը, որպեսզի իրագործի իր ծրագիրը, բայց կես ճանապարհին ինչ-որ բան է հիշում ու կանգ է առնում։

— Չէ, հերիք է գժություններ անել — բավակա՛ն է։ Քնեցեք, բարեկամնե՛ր, և հանգստացեք։ Իսկ ես առայժմ... և ո՞ւր է դրել նա կիսաշտոֆը։ Վա՜հ։ Ահա՜ նա, սիրելիս։ Ա՛րի, ա՛րի այստեղ։ Փրկյա տեր ծառայից քոց,— երգում է նա կիսաձայն, շիշը հանելով կիբիտկայի կողքից կախված կտավե տոպրակից և բերանին դնելով։— Այ, հիմի լա՜վ է, տաքացա։ Քիչ էլ, հը՞։ Չէ, հերիք է... մինչև կայարան դեռ մի քսան վերստ կլինի, դեռ կարող եմ կլկլացնել... թե է՞լի։ Ա՜խ, գետի՛ն անցնի օդին։ Շտոֆը որ տեսնում եմ — ուղղակի քաշում է։ Խմելը վատ է, բայց չխմել էլ չի լինում, որովհետև քո՛ւն չունեմ։ Գոնե քունը, գրողը տանի, ուժասպառ աներ ինձ։

Մի քանի կում էլ անելով, նա կիսաշտոֆը նախկին տեղն է դնում և սկսում է ծխամորճը լցնել։

— Լա՜վ է,— ասում է նա,— առաջ խմեցինք, իսկ հիմի ծխամորճ ծխենք։ Թութունն չի՛ տա ինձ վհուկը, չի տա,— այդ նա ճիշտ ասաց։ Ուտելիք կտա՞ գոնե։ Ճաշից մնացած ավելցուկները կուղարկի երևի։ Հեյվա՜խ։ Մենք էլ փող ունեինք — և չկա՛ արդեն։ Կար մարդը — և չկա՛ նա։ Այսպե՞ս էլ ահա ամեն ինչ այս աշխարհում։ Այսօր դու և՛ կուշտ ես, և՛ հարբած, ապրում ես քո քեֆին, ծխամորճ ես ծխում...

Իսկ վաղը — ո՞ւր ես դու, մարդ[18]։

Սակայն հարկավոր է և մի բան ուտել։ Խմում ես, խմում, կարծես ծակ տակառ լինես, բայց ուտելը մի կարգին չես ուտում։ Իսկ բժիշկներն ասում են՝ խմելն այն ժամանակ է օգտակար, երբ հետը ախորժալի ուտելիք կա, ինչպես ասում էր սրբազան Սմարագդը, երբ մենք Օբոյան գետն էինք անցնում։ Օբոյա՞նն էր արդյոք։ Սատանան գիտե, գուցեև Կրոմա գետն անցնելիս էր։ Բանն այդ չէ սակայն, իսկ ինչպես հիմի ուտելիք գտնեմ։ Հիշում եմ, նա տոպրակի մեջ երշիկ և երեք հատ ֆրանսիական հաց դրեց։ Իհարկե, ափսոսաց խավիար առնի։ Տեսեք հապա ինչպես է քնել։ Ի՞նչ երգեր է երգում քթով։ Երևի ուտելիքն էլ տակն է դրել։

Նա որոնում է իր շորս բոլորքը և ոչինչ չի գտնում։

— Իվան Միխայլիչ, այ Իվան Միխայլիչ,— ձայն է տալիս նա։

Իվան Միխայլիչը արթնանում է և մի րոպե կարծես չի հասկանում, թե ինչպես է եղել, որ ինքը vis-à-vis* գտնվում է բարինի հետ։

— Իսկ ես հենց հիմա սկսեցի երազ տեսնել,— վերջապես ասում է նա։

— Ոչինչ, բարեկամս, քնիր։ Ես միայն ուզում էի հարցնել, պաշարի տոպրակը որտե՞ղ է պահված։

— Ուտե՞լ եք ուզում։ Ախր չէ՞ որ առաջ հարկավոր է խըմել։

— Այդ էլ ճիշտ է։ Կիսաշտոֆը որտե՞ղ է։

Խմելուց հետո Ստեպան Վլադիմիրիչն սկսում է ուտել երշիկը, որը քարի պես պինդ է, աղի պես աղի է և այնպիսի հաստ աղիքի մեջ է լցրած, որ կտրելու համար պետք է դանակի սուր ծայրի օգնությանը դիմել։

— Սաղմոն որ լիներ, հիմի լավ կլիներ,— ասում է նա։

— Ներեցեք արդեն, տեր իմ, մտքիցս բոլորովին ընկել էր։ Առավոտյան շարունակ մտքիս էր, նույնիսկ կնոջս ասեցի՝ անպայման կհիշեցնես սաղմոնի մասին,— և տես, կարծես հակառակի պես եղավ։

* Vis à-vis—դեմ-դիմաց։

— Ոչինչ, երշիկն էլ կուտենք։ Արշավանքի ժամանակ ինչ ասես չենք կերել։ Այ, հայրիկս պատմում էր, որ մի անգլիացի անգլիացու հետ գրազ է գալիս, թե սատկած կատու կուտի։ Եվ կերել է։

— Կերե՞լ է։

— Կերել է։ Միայն թե հետո սիրտը խառնում է։ Ռոմով բժշկվում է։ Երկու շիշ ռոմ է միանգամից խմում — և կարծես ոչինչ պատահած չլինի։ Մի ուրիշ անգլիացի էլ գրազ է գալիս, որ մի ամբողջ տարի շաքարով կսնվի։

— Տարե՞լ է։

— Չէ, տարուց երկու օր պակաս է ապրում,— ոտները մեկնում է։ Այդ ինչո՞ւ ինքդ չես ուտում։ Օղի գցեիր, հը՞։

— Կյանքումս չեմ խմել։

— Մենակ թեյ ես խմում։ Լավ չի, եղբայր, դրա համար էլ փորդ մեծանում է։ Թեյի հետ էլ պետք է զգույշ վարվել՝ մի բաժակ խմիր, իսկ վրայից գավաթով ծածկիր։ Թեյը խոնավություն է հավաքում, իսկ օղին ցրիվ է տալիս։ Այդպե՞ս է, չէ՞։

— Չեմ իմանում, դուք ուսյալ մարդ եք, դուք ավելի լավ եք իմանում։

— Հա։ Մենք երբ գնում էինք արշավանքի, թեյի ու կոֆեի հետ ընկնելու ժամանակ չունեինք։ Իսկ օղին սուրբ բան է. բացեցիր շշի բերանը, լցրեցիր, խմեցիր,— և վե՛րջ։ Շատ շուտ-շուտ էին մեզ քշում այն ժամանակ, այնպես շուտ-շուտ, որ ես տասը օր անլվա էի մնացել։

— Շատ չարչարանքներ եք կրել դուք, տեր իմ։

— Շատը շատ չի, բայց, այ հապա փորձիր ճամփով ոտքով գնալ։ Դե, քանի առաջ էինք գնում, էլի վնաս չուներ՝ նվիրաբերում էին, ճաշ էին ուտացնում, գինի՝ ինչքան ուզես։ Բայց երբ ետ էինք գալիս՝ դաղարեցին այլևս պատիվ տալ։

Գոլովլյովը դժվարությամբ կրծում է երշիկը և վերջապես մի կտոր ծամում է։

— Աղի է երշիկը, եղբայր,— ասում է նա։— Թեպետ ես պահանջկոտ չեմ։ Մերս էլ դե հո համադամ կերակուրներով հյուրասիրողը չի՝ մի ափսե շշի ու մի ամաև կաշա,— ուրիշ ոչինչ։

— Աստված ողորմած է, գուցե տոն օրերին կարկանդակ էլ կտա։

— Ոչ թեյ, ոչ թութուն, ոչ օղի — այդ դու ճիշտ ասեցիր։ Ասում են, հիմի սիրում է դուրաչկի խաղալ,— գուցե դրա պատճառով։ Կկանչի խաղալու ու թեյով կհյուրասիրի։ Իսկ մնացած բաները — չէ՛, եղբայր։

Կայարանում չորս ժամ կանգ առան՝ ձիերը կերակրելու։ Գոլովլյովն արդեն վերջացրել էր կիսաշտոφը և սաստիկ քաղց էր զգում։ Ուղևորները խրճիթ գնացին ու պատրաստվեցին ճաշելու։

Թափառելով բակում, նայելով գոմն ու ձիերի մսուրները, աղավնիներին փախցնելով և նույնիսկ փորձելով քնել, Ստեպան Վլադիմիրիչը վերջապես համոզվում է, որ իր համար ամենից լավն այն է, որ մյուս ուղևորների նման ինքն էլ խրճիթ գնա։ Այնտեղ սեղանի վրա արդեն շշին է գոլորշի արձակում և մի կողմը, փայտյա տեփուրի վրա մի մեծ կտոր տավարի միս կա, որը Իվան Միխայլիչը մանր կոտորում է։ Գոլովլյովը նստում է փոքր-ինչ հեռու, ծխամորճ է ծխում և երկար ժամանակ չի իմանում ի՞նչ անի, որ կշտանա։

— Բարի ախորժակ, պարոնայք,— վերջապես ասում է նա։— Շշին, կարծես, յուղալի է։

— Ոչինչ,— ասում է Իվան Միխայլիչը։— Դուք, տեր իմ, ձեզ համար էլ ուզեք։

— Չէ, ես այնպե՞ս, խոսքի համար ասեցի, ես կուշտ եմ։

— Ի՞նչն եք կուշտ։ Մի կտոր երշիկ կերաք, իսկ անիծյալ երշիկից մարդու փորը ավելի՝ է ուտշում։ Կերեք, խնդրեմ։ Ես կասեմ, որ ձեզ համար առանձին սեղան բաց անեն,— անուշ արեք։ Տիրուհի, բարինի համար այն կողմը սեղան պատրաստիր,— այ այդպես։

Ուղևորները լուռ սկսում են ուտել և միայն խորհրդավոր նայում են միմյանց։ Գոլովլյովը գլխի է ընկնում, որ իրեն «հասկացել են», թեպետ նա անամոթաբար ամբողջ ճանապարհին իրեն բարինի պես էր պահում և Իվան Միխայլիչին իր գանձապահն էր անվանում։ Նրա հոնքերը խոժոռված են, բերանից ծխախոտի ծուխ է դուրս ժայթքում։ Նա պատրաստ է հրաժարվել ուտելիքից, բայց քաղցի պահանջն այն աստի-

ճան ստիպողական է, որ նա մի տեսակ հափշտակողական հարձակվում է իր առաջը դրած շշի ամանի վրա և ակնթարթապես դատարկում է այն։ Հագենալու հետ վերադառնում է նաև նրա ինքնավստահությունն ու նա հանգիստ ասում է, դիմելով Իվան Միխայլիչին.

— Դե, եղբայր գանձապահ, դու իմ փոխարեն արդեն վճարիր, իսկ ես գնամ խոտանոցը, մի լավ քնեմ։

Օրորվելով գնում է նա խոտանոցը և այս անգամ, որովհետև ստամոքսը ծանրացած էր, պինդ քնում է։ Ժամը հինգին նա կրկին ոտքի վրա է։ Տեսնելով, որ ձիերը կանգնել են դատարկ մսուրների առաջ և դնչերը քսում են մսուրների կողերին, սկսում է արթնացնել կառապանին։

— Խոմփացնում է անպիտանը,— բղավում է նա։— Մենք շտապում ենք, իսկ նա անուշ երազներ է տեսնում։

Գործն այսպես ընթանում է մինչև այն կայարանը, որտեղից ճանապարհը շուռ է գալիս դեպի Գոլովլյովո։ Միայն այդտեղ է Ստեպան Վլադիմիրիչը մի փոքր լրջանում։ Նա նկատելի վհատվում է և դառնում է լռակյաց։ Այս անգամ արդեն Իվան Միխայլիչն է խրախուսում նրան և ամենից շատ համոզում է դեն նետել ծխամորճը։

— Դուք, տեր իմ, հենց որ կալվածատանը մոտենաք, ծխամորճը եղինջի մեջ նետեք։ Հետո կգտնեք։

Վերջապես ձիերը, որ պետք է Իվան Միխայլիչին առաջ տանեն, պատրաստ են։ Հասնում է հրաժեշտի վայրկյանը։

— Մնաս բարով, եղբայր,— ասում է Գոլովլյովը կերկերուն ձայնով, համբուրելով Իվան Միխայլիչին։— Կուտի՛ նա ինձ։

— Աստված ողորմած է։ Դուք էլ շատ մի՛ վախեցեք։

— Կուտի՛,— կրկնում է Ստեպան Վլադիմիրիչն այնպիսի համոզված եղանակով, որ Իվան Միխայլիչն ակամայից ցած է խոնարհում աչքերը։

Այդ ասելով, Գոլովլյովն արագ դառնում է գյուղամիջյան ճանապարհի ուղղությամբ և սկսում է քայլել, հենվելով ոստրավոր փայտին, որը դրանից առաջ կտրել էր ծառից։

Իվան Միխայլիչը միառժամանակ հետևում է նրան, ապա վազում է, որ հասնի։

— Ահա թե ինչ, բարին,— ասում է նա, հասնելով նրան,— առավոտյան, երբ ձեր հագուստը մաքրում էի, կողքի գըրպանում երեք հատ մանեթ տեսա, պատահաբար վայր չգցեք։

Ստեպան Վլադիմիրիչն, ըստ երևույթին, տատանվում է և չգիտե ինչպես վարվել այս դեպքում։ Վերջապես նա ձեռքը պարզում է Իվան Միխայլիչին և ասում է արտասվալից.

— Հասկանում եմ... զինվորին ծխախոտի փող... շնորհակալ եմ։ Իսկ ինչ վերաբերում է այն բանին... կուտի՛ նա ինձ, սիրելի բարեկամս։ Այ, հիշիր իմ խոսքը՝ կուտի՛։

Գոլովլյովը վերջնականապես դեմքը դարձնում է գյուղամիջյան ճանապարհի կողմը, և հինգ րոպե անց արդեն հեռվից երևում է նրա մոխրագույն զինվորական գդակը՝ մերթ անհայտանալով, մերթ հանկարծ երևալով մատղաշ անտառի թփուտների միջից։ Դեռ շուտ է. ժամը վեցի սկիզբն է. առավոտյան ոսկեշող մառախուղն է կանգնած ճանապարհի վրա, հազիվ անդրադարձնելով հորիզոնում հենց նոր բարձրացած արևի շողերը. խոտը փայլում է, օդը հագեցած է եղևնու, սունկերի և հատապտուղների բույրերով. ճանապարհը ոլոր-մոլոր անցնում է հարթավայրով, ուր թռչունների անհամար երամներ են վխտում։ Բայց Ստեպան Վլադիմիրիչը ոչինչ չի նկատում, ամբողջ թեթևամտությունը հանկարծ թռավ նրանից, և նա ասես ահեղ դատաստանի է գնում։ Մի միտք բերնե-բերան լցնում է նրա ողջ էությունը՝ ևս երեք-չորս ժամ — ու այլևս գնալու տեղ չունի։ Նա վերհիշում է իր հին գոլովլյովյան կյանքը և նրան թվում է, որ իր առջև բացվում է խոնավ նկուղի դուռը և հենց որ ինքն այդ դռան շեմքից ներս անցնի, ապա դուռն անմիջապես փակվելու է,— և այն ժամանակ ամեն ինչ վերջացած է։ Վերհիշում է և ուրիշ մանրամասնություններ, որոնք թեպետ անմիջականորեն իր հետ կապված չեն, բայց անտարակույս ընութագրում են գոլովլյովյան կարգերը։ Ահա քեռի Միխայիլ Պետրովիչը (ռամկորեն ասած՝ «Միշկա-աղմըկարարը»), որը նույնպես պատկանում էր «ատելիների» թվին և որին Պյոտր Իվանիչ պապն աքսորել էր Գոլովլյովո՝ աղջկա մոտ, ուր նա ծառաների հետ էր ապրում և ուտում էր Տրեզոր շան հետ նույն ամանից։ Ահա և հորաքույր Վերա Միխայլովնան, որը ողորմությամբ ապրում էր գոլովլյովյան

կալվածատանը՝ Վլադիմիր Միխայլիչ եղբոր մոտ և որը մեռավ «չափավորությունից», որովհետև Արինա Պետրովնան նախատում էր նրան ճաշին կերած յուրաքանչյուր պատառի համար, և ամեն մի կտոր փայտի համար, որը գործադրվում էր նրա սենյակը տաքացնելու վրա։ Մոտավորապես նույն այդ դրության մեջ է լինելու և ինքը։ Նրա երևակայության մեջ պատկերանում է խավարչտին օրերի անվերջ մի շարան, որ թաղված է ինչ-որ երախաբաց գորշ անդունդի մեջ,— և նա ակամայից փակում է աչքերը։ Այսուհետև նա մեն-մենակ է լինելու շար պառավի հետ, որը նույնիսկ շար չէ, այլ միայն քարացած է տիրակալական թմրության, անզգայության մեջ։ Այդ պառավը կուտի նրան, կուտի ոչ թե տանջանքով, այլ մոռացությամբ։ Ոչ ոքի հետ խոսք փոխանակել չի լինի, ոչ մի տեղ փախչել չի լինի — ամեն տեղ նա է, տիրական, անզգայացնող, արհամարհող։ Այդ անխուսափելի ապագայի միտքն այն աստիճան տրտմությամբ լցրեց նրան ամբողջությամբ, որ նա կանգ առավ ծառի մոտ, բավական ժամանակ գլուխը խփելով ծառին։ Ծամածռությամբ, անգործությամբ, խեղկատակությամբ տոգորված ողջ կյանքը հանկարծ կարծես լուսավորվեց նրա մտավոր աչքի առաջ։ Նա հիմա Գոլովլյովո է գնում, նա իմանում է ինչ է սպասում իրեն այնտեղ, բայց և այնպես գնում է, և չի կարող չգնալ։ Չունի նա այլ ճանապարհ, չունի՛։ Ամենահետին մարդը կարող է իր համար մի բան անել, կարող է հաց վաստակել իր համար — միայն նա՛ ոչինչ չի կարող։ Այդ միտքը կարծես առաջին անգամ արթնացավ նրանում։ Առաջ էլ պատահել էր նրան մտածել ապագայի մասին ու այլևայլ հեռանկարներ պատկերել իրեն, բայց դրանք միշտ ձրի բավարարման հեռանկարներ էին և երբեք՝ աշխատանքի հեռանկարներ։ Եվ ահա այժմ նա պետք է հատուցի այն հափշտակության, այն զմայլանքի համար, որի մեջ անհետ խորասուզվեց իր անցյալը։ Հատուցումը դառն էր, որն արտահայտվում էր մեկ սոսկալի բառով՝ կուտի՛։

Առավոտյան ժամը տասի մոտ էր, որ անտառի ետևից երևաց գոլովլյովյան սպիտակ զանգակատունը։

Ստեպան Վլադիմիրիչի դեմքը գունատվեց, ձեռները դողացին. նա հանեց գլխարկն ու խաչակնքեց։ Հիշեց ավետարանի առակը տուն վերադարձող անառակ որդու մասին, բայց նա անմիջապես հասկացավ, որ իր նկատմամբ նման հիշողությունները լոկ միայն գայթակղություն են հանդիսանում։ Վերջապես հայացքով որոնեց ճանապարհի կողքին տնկված սահմանային սյունը և հայտնվեց գոլովլյովյան հողի վրա, այն ատելի հողի վրա, որը ծնեց նրան ատելի, սնուցեց ատելի, բաց թողեց աշխարհի չորս կողմը ատելի, և այժմ կրկին որպես ատելի նորից իր գիրկն է ընդունում։ Արևն արդեն բարձրացել էր և անխնա խանձում էր գոլովլյովյան անսպառ դաշտերը։ Բայց Ստեպան Վլադիմիրիչն ավելի ու ավելի էր գունատվում և զգում էր, որ սկսում է ջերմել։

Վերջապես նա հասավ գերեզմանատանը, և այդտեղ կորովը լքեց նրան վերջնականապես։ Տիրական կալվածատունը ծառերի միջից այնպես խաղաղ էր նայում, որ կարծես ոչ մի առանձին բան տեղի չէր ունենում այնտեղ. բայց նրա վրա կալվածատան տեսքը Մեդուզայի գլխի[19] ազդեցությունն ունեցավ։ Այնտեղ նրան դագաղ էր պատկերանում։ Դագա՛ղ, դագաղ՛, դագա՛ղ,— կրկնում էր նա ինքն իրեն անգիտակցաբար։ Եվ չվստահեց ուղղակի կալվածատուն գնալ, այլ առաջ գնաց քահանայի մոտ և ուղարկեց նրան հայտնելու իր գալուստն ու իմանալու՝ կընդունի արդյոք մամենկան իրեն։

Տերտերակինը նրան տեսնելով, ախուվախ արեց ու սկսեց ձվածեղ պատրաստել, գյուղի երեխաները խմբվեցին շուրջն ու նայում էին բարինին՝ զարմացած աչքերով. մոտով անցնող գյուղացիները լուռ հանում էին գդակները և մի տեսակ խորհրդավոր նայում էին նրան. մի ինչ-որ ծեր սպասավոր նույնիսկ մոտ վազեց և խնդրեց բարինին՝ թույլ տա ձեռքը համբուրելու։ Բոլորը հասկանում էին, որ իրենց առաջ կանգնել է ատելին, որը եկել է ատելի վայրը, եկել է առմիշտ, և չունի նա այստեղից ելք, բացի ոտներն առաջ մեկնած՝ դեպի գերեզմանատուն։ Ու բոլորը միաժամանակ և՛ խղճահարություն զգացին, և՛ սարսափ։

Վերջապես քահանան եկավ և ասաց, որ «մամենկան պատրաստ է ընդունելու» Ստեպան Վլադիմիրիչին։ Տասը րոպեից նա արդեն այնտեղ էր։ Արինա Պետրովնան դիմավորեց նրան հանդիսավոր-խիստ և սառը հայացքով չափեց վերից-վար, բայց ոչ մի անօգուտ կշտամբանք թույլ չտվեց իրեն։ Եվ սենյակները ներս չթողեց, այլ այդպես էլ աղախինների նախամուտքում հանդիպեց ու բաժանվեց, պատվիրելով երիտասարդ բարինին մյուս մուտքով առաջնորդել պապենկայի մոտ։ Ներսինին նիրհում էր սպիտակ վերմակով ծածկված անկողնում, գլխին սպիտակ թասակ, ամբողջովին սպիտակ, կարծես մեռել։ Տեսնելով նրան, արթնացավ ու ապուշի պես քրքջաց։

— Հը՞, սիրելիս, ընկա՞ր վհուկի ճանկը,— բացականչեց նա, մինչև Ստեպան Վլադիմիրիչը համբուրում էր նրա ձեռքը։ Հետո աքաղաղի պես կանչեց, կրկին քրքջաց ու մի քանի անգամ կրկնեց՝ «կուտի՛, կուտի՛, կուտի՛»։

«Կուտի՛»,— արձագանքի պես կրկնվեց և Ստեպան Վլադիմիրիչի հոգում։

Նրա ենթադրություններն արդարացան։ Նրան տեղավորեցին առանձին սենյակում այն առանձնատան մեջ, ուր գտնվում էր և գրասենյակը։ Այդտեղ նրա համար տնային գործած քաթանից սպիտակեղեն բերեցին, հայրիկի հին խալաթը, որը և նա անմիջապես հագավ։ Դամբարանի դռները բացվեցին, ներս առան նրան ու փակվեցին։

* * *

Զգվեց ալարկոտ, այլանդակ օրերի շարան, մեկը մյուսի ետևից թաղվելով ժամանակի գորշ, երախը բաց անդունդը։ Արինա Պետրովնան նրան չէր ընդունում, հոր մոտ նույնպես չէին թողնում։ Երեք օր անց բուրմիստր Ֆինոգեյ Իպատիչը մամենկայի կողմից նրան հայտարարեց «կանոնադրությունը», որի համաձայն նա կստանա ուտելիք ու հագուստ և, դրանից բացի, ամսական մի ֆունտ Ֆալեր[20]։ Նա լսեց մամենկայի կամքն ու միայն նկատեց.

— Տեսնո՞ւմ ես պառավին։ Հոտ է առել, որ Ժուկովը երկու մանեթ արժի, իսկ Ֆալերը՝ մեկ ու իննսուն. այստեղ էլ

ամսեկան տասը կոպեկ ասիգնացիայով կորզել է։ Երևի ուզում է իմ հաշվին ողորմություն տա աղքատի։

Բարոյական զգաստության նշանները, որոնք հրապարակ էին եկել այն ժամերին, մինչ նա գյուղամիջյան ճանապարհով մոտենում էր Գոլովլյովոյին, կրկին ուր-որ անհայտացան։ Թեթևամտությունը կրկին իր իրավունքների մեջ մտավ, իսկ դրան հետևեց և «մամենկայի կանոնադրության» հետ հաշտվելը։ Անհույս և անելանելի ապագան, մեկ անգամ շոլալով նրա ուղեղում, սարսուռով պատելով նրան, օրեցօր ավելի ու ավելի էր պարուրվում մշուշով և, վերջապես, բոլորովին դադարեց գոյություն ունենալ։ Բեմ դուրս եկավ կենսական օրը իր ցինիկ մերկությամբ, և հանդես եկավ այնպես աներես ու լպիրշ, որ ամբողջապես լցրեց բոլոր մտածումները, ամբողջ էությունը։ Բայց ի՞նչ դեր կարող է խաղալ ապագայի մասին եղած միտքը, երբ ամբողջ կյանքի ընթացքն անվերադարձ և բոլոր մանրամասնություններով որոշված է արդեն Արինա Պետրովնայի մտքում։

Ամբողջ օրերով քայլում էր նա ետ ու առաջ իրեն հատկացրած սենյակում, ծխամորճը բերանից բաց չթողնելով և ինչ-որ երգերի կտորներ երգելով, ըստ որում եկեղեցական եղանակներին անսպասելի հաջորդում էին անպատկառ երգեր և հակառակը։ Երբ զեմսկին[21] գտնվում էր գրասենյակում, ապա այցելում էր նրան ու հաշիվ էր անում Արինա Պետրովնայի ստացած եկամուտները։

— Եվ ի՞նչ է անում նա այդչափ փողը,— զարմանում էր, հաշվելով մինչև ութսուն հազար ասիգնացիայով։— Եղբայրներիս, ես գիտեմ, մի մեծ գումար չի ուղարկում, ինքն ապրում է գծուծ, հորս աղը դրած ձկնեղենով է կերակրում։ Լոմբարդ[22] է գցում։ Ուրիշ տեղ չկա, լոմբարդ է գցում։

Երբեմն գրասենյակ էր գալիս և ինքը՝ Ֆինոգեյ Իպատիչը, գանձած տուրքերը հետը, և այն ժամանակ գրասենյակի սեղանի վրա էին դարսվում կապուկներով նույն այն փողերը, որոնց տեսքից այնպես փայլում էին Ստեպան Վլադիմիրիչի աչքերը։

— Տես, ինչքա՞ն փող է,— բացականչում էր նա։— Եվ բոլորը նրա կոկորդը կլցվի։ Չի լինի, որ մի կապոց որդուն

տա, թե՝ առ, որդիս, դժբախտության մեջ ես ընկել, ահա քեզ գինու և ծխախոտի փող։

Հետո Յակով-գրագրի հետ սկսվում էին անվերջանալի և ցինիզմով լի զրույցներ այն մասին, թե ինչ միջոցներով մոր սիրտն՝ այնպես փափկացնեն, որպեսզի նա հոգի տա նրա համար։

— Մոսկվայում մի ծանոթ քաղքենի կար,— պատմում էր Գոլովլյովը,— նա «խոսք» էր իմանում... Պատահում էր, երբ մայրը չէր ուզում փող տալ, նա այդ «խոսքն» էր ասում... Եվ իսկույն մոր ոտ ու ձեռն սկսում էր կուչ գալ — մի խոսքով, վերջացա՛վ։

— Նշանակում է, անպայման հմայում էր,— գլխի էր ընկնում Յակով-գրագիրը։

— Դե, ինչպես ուզում ես հասկացիր, բայց զուտ ճշմարտություն է, որ այդպիսի «խոսք» կա։ Նմանապես և մի մարդ ասում էր՝ վերցրու, ասում է, մի կենդանի գորտ, կեսգիշերին դիր մրջնանոցը. առավոտյան կողմը մրջյունները կուտեն, կմնա մենակ ոսկորը. այդ ոսկորը վերցրու, և քանի նա քո գրպանումն է, ինչ ուզում ես՝ ամեն մի կնոջից խնդրիր,— ոչ մի բան քեզ չեն մերժի։

— Էդ հենց թեկուզ հիմա՛ կարելի է անել։

— Բանն այն է, եղբայրս, որ առաջ պետք է անեծքի ենթարկես քեզ։ Այդ որ չլիներ... վհուկը պար կգար իմ առաջ։

Ժամեր շարունակ այսպիսի խոսակցություններով էին անցկացնում, բայց միջոց, այնուամենայնիվ, չէր գտնվում։ Բոլոր դեպքերում կամ պետք էր անեծքի ենթարկել իրեն, կամ հոգին սատանային ծախել։ Հետևանքն այն էր լինում, որ ուրիշ ոչինչ չէր մնում անել, քան «մամենկայի կանոնադրությամբ» ապրել, լրացնելով այն գյուղապետներից ստացած կամայական տուրքերով, որոնց բոլորին Ստեպան Վլադիմիրիչը հարկադրել էր իր օգտին՝ ծխախոտով, թեյ ու շաքարով։ Նրան չափազանց վատ էին կերակրում։ Սովորաբար բերում էին մոր ճաշի մնացորդները, բայց որովհետև Արինա Պետրովնան ժլատության աստիճան չափավոր էր, ապա բնական է, որ նրան քիչ բաժին էր մնում։ Ստեպան Վլադիմիրիչին դա առանձնապես տանջում էր, որովհետև այն օրից, երբ գինին

նրա համար արգելված պտուղ դարձավ, ախորժակը շատ էր բացվել։ Առավոտից մինչև երեկո նա քաղցած էր և միայն այն մասին էր մտածում, թե ինչպես կշտանա։ Հետևում էր, երբ մայրն հանգստանում էր, վազ էր տալիս խոհանոց, նույնիսկ սպասավորների սենյակն էր մտնում — և ամեն տեղ մի բան որոնում էր։ Երբեմն նստում էր բաց լուսամուտի առաջ և սպասում, թե ով կանցնի։ Եթե իրենց գյուղացիներից էր լինում անցնողը, ապա կանգնեցնում էր նրան և հարկ էր վերցնում՝ ձու, կարկանդակ և այլն։

Դեռևս առաջին հանդիպման ժամանակ Արինա Պետրովնան կարճառոտ խոսքերով Ստեպան Վլադիմիրիչին պարզաբանեց նրա ապրուստի ու կացության լրիվ ծրագիրը։

— Առայժմ ապրիր,— ասաց նա։— Ահա քեզ անկյուն գրասենյակում. կուտես-կխմես իմ սեղանից, իսկ ուրիշ բաների համար մի՛ նեղացիր, սիրելիս։ Համաղամ խոբտիկներ կյանքումս չեմ ունեցել, իսկ քեզ համար առավել ևս չեմ անի։ Ահա, եղբայրներդ կգան, ինչ որոշում որ անեն նրանք իրար մեջ քո մասին, ես այնպես էլ կվարվեմ քեզ հետ։ Ինքս չեմ ուզում մեղք վերցնեմ հոգուս, իսկ ինչպես եղբայրներդ վրճռեն, այդպես էլ թող լինի։

Եվ ահա նա այժմ անհամբեր սպասում էր եղբայրների գալուն։ Ըստ որում նա ամենևին չէր մտածում այն մասին, թե այդ գալուստն իր հետագա վիճակի վրա ինչ ազդեցություն կունենա (ըստ երևույթին, նա որոշել էր, որ այդ մասին մտածելու հարկ չկա), այլ գուշակում էր միայն՝ արդյոք Պավել եղբայրը ծխախոտ կբերի՞ իր համար և ինչքա՞ն կբերի։

«Գուցեև փող տա,— ավելացնում էր նա մտովի։— Որ-ֆիշկա-արյունարբուն չի տա, իսկ Պավելը... Կասեմ նրան՝ ա՛ռ, եղբայր, զինվորին գինու փող... Կտա՛... Ինչպե՞ս կարելի է, որ չտա»։

Ժամանակն անցնում էր, և նա չէր նկատում այդ։ Դա բացարձակ անգործություն էր, որից նա, սակայն, համարյա չէր ճնշվում։ Միայն երեկոներն էր տխրում, որովհետև գրագիրը ժամը ութին տուն էր գնում, իսկ նրա համար Արինա Պետրովնան մոմ բաց չէր թողնում այն հիման վրա, որ սենյակում հետ ու առաջ քայլել առանց լույսի էլ կարելի է։ Բայց

նա շուտով դրան էլ վարժվեց և նույնիսկ սիրեց խավարը, որովհետև խավարի մեջ երևակայությունն ավելի էր բորբոքվում և հեռու էր տանում նրան ատելի Գոլովլյովոյից։ Մի բան էր նրան անհանգստացնում՝ սիրտը հանգիստ չէր և մի տեսակ տարօրինակ բաբախում էր կրծքում, մանավանդ, երբ պառկում էր քնելու։ Երբեմն վեր էր թռչում անկողնուց շշմածի պես ու վազվզում էր սենյակում, ձեռքով կրծքի ձախ կողմը բռնած։

«Է՞խ, թե որ սատկեի,— մտորում էր նա այդ պահին։— Բայց չէ, չեմ սատկի։ Սակայն գուցե»...

Բայց երբ մեկ անգամ գրագիրը խորհրդավոր կերպով հայտնեց նրան, որ գիշերը եղբայրները եկել են, նա ակամայից ցնցվեց և գույնը գցեց։ Հանկարծ նրա մեջ ինչ-որ ելեխայական բան արթնացավ՝ ուզում էր շուտով տուն վազել, տեսնել, ինչպես են նրանք հագնված, ինչ անկողին են փռել նրանց համար և արդյոք նրանք էլ այնպիսի նեսեսերներ[23] ունեն, ինչպիսին տեսել էր նա մի զինվորական գնդապետի մոտ. ուզում էր լսել՝ մամենկայի հետ նրանք ինչպես են խոսելու, տեսնել՝ ինչեր են մատուցելու նրանց ճաշին։ Մի խոսքով, ուզում էր մեկ անգամ ևս մասնակից լինել այն կյանքին, որն այնպես համառորեն դեն էր շպրտում նրան իրենից, ընկնել մոր ոտները, ներումն աղերսել և ապա, ուրախությունից, թերևս, և պարարտ հորթի միս ուտել։ Տանը դեռևս ամեն ինչ լուռ էր, իսկ նա արդեն վազեց խոհարարի մոտ՝ խոհանոց և իմացավ ճաշի համար ինչ է պատվիրված՝ տաք կերակուրը թարմ կաղամբից շչի էր փոքրիկ ամանով և կարգադրված էր երեկվա արգանակը տաքացնել. սառը կերակուրը՝ աղ դրած ձուկ էր, կողքին էլ երկու զույգ փոքրիկ կոտլետ. տապական՝ ոչխարի միս և կողքին չորս հատ կրտսար. քաղցրը՝ մորու կարկանդակ էր՝ սերուցքով։

— Երեկվա արգանակը, ձուկն ու ոչխարի միսը — դա, եղբայր, ատելիի համար է,— ասաց նա խոհարարին։— Կարկանդակ, այնպես եմ կարծում, ինձ նույնպես չեն տա։

— Այդ ինչպես հաճելի կլինի ձեր մայրիկին, տեր իմ։

— Է՞խ, բայց կար ժամանակ, որ ես էլ էի կտցարներ ուտում։ Ուտո՛ւմ էի, եղբայր։ Մի անգամ նույնիսկ պորուչիկ

Գրեմիկինի հետ գրաղ եկա, որ միանգամից տասնհինգ կրոցար կուտեմ,— և տարա։ Բայց դրանից հետո մի ամբողջ ամիս կտցար տեսնել չէի կարողանում։

— Ինչ հիմի էլի կուտեի՞ք։

— Չի՛ տա։ Բայց թե ինչ կա ափսոսալու։ Կտցարը ազատ թռչուն է, ոչ կերակրել է հարկավոր, ոչ խնամք տանել,— ապրում է ինքն իր հաշվին։ Կտցարն էլ փողով առած չի, ոչխարն էլ առած չի, բայց արի տե՛ս։ Իմանում է վհուկը, որ կտցարը ոչխարից համով է,— դրա համար էլ չի տա։ Կհոտեցնի, բայց չի տա... Իսկ նախաճաշի համար ի՞նչ է պատվիրված։

— Լյարդ է պատվիրված, սունկ՝ սերով տապակած, յուղահաց...

— Դու գոնե ինձ յուղահաց ուղարկեիր... մի բան արա, եղբայր։

— Պետք է մի բան անել։ Դուք ահա ինչ արեք, տեր իմ։ Հետո, երբ ձեր եղբայրները նախաճաշի կնստեն, գրագրին ուղարկեցեք այստեղ. նա ձեզ համար մի երկու յուղահաց կբերի՝ ծոցը դրած։

Ամբողջ առավոտ Ստեպան Վլադիմիրիչը սպասեց, կգա՞ն արդյոք եղբայրները, բայց եղբայրները չեկան։ Վերջապես ժամը տասնմեկի մոտ գրագիրը բերեց խոստացած երկու յուղահացը և զեկուցեց, որ եղբայրներն հենց նոր նախաճաշեցին և մամենկայի հետ փակվեցին ննջարանում։

***

Արինա Պետրովնան որդիներին դիմավորեց հանդիսավոր, ընկճված։ Երկու աղախին բռնել էին նրա թևերից, ճերմակ մազերի փնջերը դուրս էին ընկել սպիտակ գլխադիրի տակից, գլուխն հակված էր և օրորվում էր այս ու այն կողմ, ոտներն հազիվ էին քարշ գալիս։ Ընդհանրապես նա սիրում էր երեխաների աչքում պատկառելի ու ընկճված մոր դեր խաղալ և այդ դեպքում դժվարությամբ քարշ էր տալիս ոտներն ու պահանջում էր, որպեսզի աղախինները բռնեն թևերից։ Ստյոպկա-տխմարն այդպիսի հանդիսավոր ընդունելությունները եպիսկոպոսական ծիսակատարություն էր անվանում,

մորը՝ եպիսկոպոսուհի, իսկ Պոլկա և Յուլկա աղախիններին՝ եպիսկոպոսական գավազանակիրներ։ Բայց որովհետև արդեն գիշերվա ժամը երկուսն էր, ուստի հանդիպումը տեղի ունեցավ առանց խոսքերի։ Լուռ պարզեց նա ձեռքը որդիներին համբուրելու, լուռ համբուրեց ու խաչակնքեց նրանց, և երբ Պորֆիրի Վլադիմիրիչը պատրաստակամություն հայտնեց թեկուզ ամբողջ գիշեր զրուցել սիրելի բարեկամ մամենկայի հետ, նա ձեռքը թափահարեց, ասելով.

— Գնացե՛ք։ Հանգստացե՛ք ճանապարհից։ Հիմա խոսակցության ժամանակ չէ, վա՛ղը կիոսենք։

Մյուս օրն առավոտյան երկու որդիներն էլ գնացին պապենկայի ձեռքն համբուրելու, բայց պապենկան ձեռքը չտվեց։ Նա պառկել էր անկողնում փակ աչքերով, և երբ որդիները ներս մտան, բղավեց.

— Մաքսավորին[24] դատելո՞ւ եք եկել... Դո՛ւրս, փարիսեցիներ[25]... դո՛ւրս։

Այնուամենայնիվ, Պորֆիրի Վլադիմիրիչը հոր առանձնասենյակից դուրս եկավ հուզված ու արտասված, իսկ Պավել Վլադիմիրիչը, որպես «իսկական անզգա կուռք», մատով քիթն էր քշփորում միայն։

— Լավ չի նա, սիրելի բարեկամ մամենկա, ա՜խ, լավ չի,— բացականչեց Պորֆիրի Վլադիմիրիչը, նայելով մոր կրծքին։

— Մի՞թե այսօր շատ է թույլ։

— Այնպե՞ս թույլ է, այնպե՞ս թույլ է։ Ապրողը չի՛ նա։

— Դեռ կապրի՞։

— Ոչ, սիրելիս, ոչ։ Եվ թեպետ ձեր կյանքը երբեք առանձնապես ուրախ չի եղել, բայց երբ միտք ես անում, որ այսքան հարված միանգամից... Ճշմարիտ, նույնիսկ զարմանում ես, ինչպե՞ս է, որ դուք այդքան ուժ ունեք այդ փորձություններին դիմանալու։

— Ինչ արած, բարեկամս, կկրես, թե որ աստծուն այդպես է հաճելի։ Գիտե՞ս ավետարանում ինչ է ասված՝ կրեցեք միմյանց բեռը,— ահա և աստված ինձ ընտրել է, որպեսզի իմ ընտանիքի բեռը կրեմ։

Արինա Պետրովնան նույնիսկ աչքերը կկոցեց, այն աս-

տիճան լավ թվաց նրան այն, որ բոլորն ապրում են ամեն ինչ պատրաստ ունենալով, բոլորի համար ամեն ինչ մթերված-պատրաստված է, և միայն ինքն է, որ ամբողջ օրը տանջվում է ու բոլորի նեղությունները կրում։

— Այո, բարեկամս,— ասաց նա բոպեական լռությունից հետո,— դժվար է ինձ համար ծերությանս օրերին։ Ես ինչ որ կարող էի, կուտակել եմ երեխաներիս համար, ժամանակն է, որ հանգստանամ։ Կատա՞կ է ասել,— չո՞րս հազար հոգի։ Այդպիսի ահագին կալվածք կառավարել իմ տարիքո՞ւմ։ Ամեն բանի հետևիր, ամենքին հսկիր։ Գնա՛, վա՛զ տուր։ Թեկուզ հենց մեր այդ բուրմիստրներն ու կառավարիչները. դու մի նայիր, որ նա քո աչքերին է մտիկ տալիս։ Մի աչքով նա քեզ է նայում, իսկ մյուսով՝ դեպի անտառը։ Դրանք իրենք հենց թերահավատ մարդիկ են։ Դե, իսկ դու ի՞նչ կասես,— ընդհատեց նա հանկարծ, դիմելով Պավելին։— Քի՞թդ ես քշփորում։

— Ինձ ի՞նչ որ,— կոպտեց Պավել Վլադիմիրիչը, իր աշխատանքի ամենաեռուն ժամանակ անհանգստացած։

— Ինչպե՞ս թե ինչ։ Այնուամենայնիվ, հայրդ է, կարելի է և խղճահարվել։

— Ի՞նչ անենք, որ հայր է։ Այնպես է, ինչպես եղել է։ Տասը տարի է այդպես է։ Դուք միշտ ինձ ճնշում եք։

— Ինչո՞ւ պետք է ես քեզ ճնշեմ, բարեկամս, ես քո մայրն եմ։ Այ, Պորֆիշան և՛ փաղաքշեց, և՛ խղճահարվեց — բոլորն, ինչ վայել է բարի զավակին, արեց, իսկ դու մորդ էլ չես ուզում մի կարգին մտիկ տաս, շարունակ աչքի տակով ու կողքանց ես նայում, կարծես թե քո մայրը չեմ, այլ քո թշնամին եմ։ Մի՛ կծիր, բարի եղիր։

— Դե ես ի՞նչ եմ...

— Սպասիր՛։ Մի բոպե սո՛ւս կաց։ Թող մայրդ մի խոսք ասի։ Հիշո՞ւմ ես, պատվիրանում ինչ է ասված՝ պատվիր զհայր քո և զմայր քո — և բարի լիցի քեզ... Նշանակում է, դու քեզ համար «բարի» չե՞ս ուզում։

Պավել Վլադիմիրիչը լուռ էր ու տարակուսած աչքերով մորն էր նայում։

— Այ տեսնո՞ւմ ես, սուս ես անում,— շարունակեց Արինա Պետրովնան,— նշանակում է, ինքդ զգում ես, որ հանցանք ունես։ Բայց տերը քեզ հետ։ Հանդիպման ուրախության պատճառով թողնենք այս խոսակցությունը։ Աստված ամեն բան տեսնում է, բարեկամս, իսկ ես... Ա՜խ, ինչպես վաղուց ես հասկանում եմ քեզ ամբողջովին։ Ա՜խ, երեխանե՜ր, երեխանե՜ր։ Կհիշեք ձեր մորը, երբ գերեզմանում պառկած կլինի, կհիշեք, բայց ուշ կլինի արդեն։

— Մայրի՜կ,— միջամտեց Պորֆիրի Վլադիմիրիչը,— թողե՛ք այդ սև մտքերը, թողե՛ք։

— Բոլո՛ր ենք մեռնելու, բարեկամս,— խրատական արտասանեց Արինա Պետրովնան։— Սև չեն այս մտքերը, այլ, կարելի է ասել... աստվածային են։ Տկարանում եմ ես, երեխաներ, ա՜խ, ինչպես եմ տկարանում։ Ոչինչ չի՛ մնացել իմ մեջ առաջվանից՝ միայն անզորություն և հիվանդություն։ Նույնիսկ անպիտան աղախիննե՛րն էլ նկատել են այդ և ինձ բանի տեղ չե՞ն դնում։ Ես մի՛ խոսք եմ ասում, նրանք՝ երկո՞ւսը։ Ես մի՛ խոսք՝ նրանք տա՜սը։ Մի բանով եմ միայն կարողանում սպառնալ նրանց՝ թե երիտասարդ պարոններին կգանգատվե՛մ։ Դե, երբեմն սո՛ւս են անում։

Թեյ մատուցեցին, հետո նախաճաշ, որոնց ընթացքում Արինա Պետրովնան շարունակ գանգատվում էր և գթաշարժվում ինքն իր վրա։ Նախաճաշից հետո նա որդիներին հրավիրեց իր ննջարանը։

Երբ դուռը բանալիով փակվեց, Արինա Պետրովնան անհապաղ դարձավ այն գործին, որի համար հրավիրված էր ընտանեկան խորհուրդը։

— Տխմարն ախր հայտնվե՞լ է,— սկսեց նա։

— Լսե՞լ ենք, մամենկա, լսե՞լ ենք,— արձագանքեց Պորֆիրի Վլադիմիրիչը ոչ այն է հեգնական, ոչ այն է կուշտ կերած մարդու բարեսրտությամբ։

— Եկել է, կարծես թե գործ է արել, կարծես թե այդպես էլ հարկավոր էր. ինչքան էլ, ասում է, ես քեֆեր եմ արել, ինչքան էլ պղտորել եմ, պառավ մորս մոտ ինձ համար միշտ մի կտոր հաց կճարվի։ Իսկ ես իմ կյանքում ինչքա՞ն ատելություն եմ տեսել նրանից։ Հենց միայն նրա ծաղրածություններից ու բանսարկություններից ինչքա՞ն տառապանք եմ կրել։ Ինչքա՞ն ջանք եմ թափել այն ժամանակ, որպեսզի նը-

բան ծառայության ընդունել տամ։ Եվ բոլորը՝ ապարդյունք։ Չարչարվեցի, չարչարվեցի, վերջապես մտածում եմ՝ տե՛ր աստված, քանի որ նա ինքն իր մասին հոգս տանել չի ուզում, մի՞թե ես պարտավոր եմ լողլող տխմարի համար կյանքս մաշել։ Արի, մտածում եմ, մի պատառ նետեմ նրան, գուցե երբ իր սեփական փողը ձեռքն ընկնի, խելքի գա։ Եվ տվեցի։ Ինքս էլ հենց տուն գտա նրա համար, ինքս իմ ձեռքով մի կոպեկի պես տասներկու հազար վճարեցի արծաթով։ Եվ ի՞նչ։ Երեք տարի էլ չի անցել դրանից հետո, իսկ նա կրկին կախվել է իմ վզից։ Երկա՞ր պիտի կրեմ ես այդ անարգանքը։

Պորֆիշան աչքերը գցեց առաստաղին և տրտում օրորեց գլուխը, կարծես թե ասում էր. «Ա՜-ա՜-ա՜խ, գործե՛ր, գործե՛ր։ Եվ ինչո՞ւ պետք է սիրելի բարեկամ մամենկային այդպես անհանգստացնել։ Նստեին բոլորը հանգիստ, հաշտ ու խաղաղ, և ոչ մի այսպիսի բան չէր պատահի, ու մամենկան էլ չէր զայրանա... Ա՜-ա՜-ա՜խ, գործե՛ր, գործեր»։

Բայց Արինա Պետրովնային, որպես մի կնոջ, որը չի հանդուրժում, որպեսզի իր մտքերի ընթացքը որևէ բանով ընդհատվի, Պորֆիշայի շարժումը դուր չեկավ։

— Չէ, դու սպասիր գլուխդ օրորել,— ասաց նա,— դու առաջ լսի՛ր։ Ինչքա՞ն ցավալի էր ինձ համար իմանալ, որ նա ծնողական օրհնությունը կրծած ոսկորի նման աղբակույտն է նետել։ Ինչպե՞ս ցավալի էր ինձ համար զգալ, որ ես, թող թույլ տրվի ասել, գիշերները չեմ քնել, կուշտ չեմ կերել, իսկ նա — համեցե՛ք։ Ասես թե շուկայից մի ինչ-որ հիմար բան առավ, հետո էլ հարկավոր չեղավ ու լուսամուտից դուրս նետեց։ Ծնողական օրհնությո՞ւնը այդպես, հա՞։

— Ա՜խ, մամենկա, դա այնպիսի արարմունք է, այնպիսի՜ արարմունք է,— ուզեց սկսել Պորֆիրի Վլադիմիրիչը, բայց Արինա Պետրովնան կրկին ընդհատեց նրան։

— Կա՛ց, սպասի՛ր։ Երբ ես կհրամայեմ, այն ժամանակ էլ դու քո կարծիքը կասես։ Եվ գոնե նա, սրիկան, նախազգուշացնե՞ր ինձ։ Հանցավոր եմ, մամենկա, այսպես ու այսպես, չկարողացա ինձ զսպել։ Թե որ ժամանակին իմանայի, չէ որ ես ինքս կարող էի չնչին գնով տունը ձեռք բերել։ Չկարողացավ անարժան որդին օգտվել, թող օգտվեն արժանավոր որդիները։

Չէ որ տունը առանց այլևայլության տարեկան տասնհինգ տոկոս շահ կբերի։ Գուցե ես դրա համար նրան մի հազար մանեթ էլ փող նետեի՝ աղքատության պատճառով։ Բայց թե համեցե՞ք։ Նստել եմ այստեղ, ոչ երազումս եմ տեսնում, ոչ գործով եմ տեսնում, իսկ նա արդեն կարգադրություն արել է։ Տասներկու հազար սեփական ձեռներովս եմ հաշվել, իսկ նա աճուրդով ութ հազարով է բաց թողել։

— Իսկ գլխավորը, մամենկա, որ նա ծնողական օրհնության հետ է այդպես վարվել,— շտապեց արագ ասել Պորֆիրի Վլադիմիրիչը, կարծես վախենալով, որ մամենկան նորից կընդհատի իրեն։

— Դա էլ, բարեկամս, նմանապես և դա։ Իմ փողերը, սիրելիս, պատահական փողեր չեն, ես դրանք պարերով չեմ վաստակել, այլ ողնաշարով ու քրտինքով։ Ես ինչպե՞ս եմ հարստության հասել։ Ձեր հայրիկի հետ ամուսնանալիս նա ուներ-չուներ միայն Գոլովլյովոն էր՝ հարյուրմեկ հոգի, հեռավոր տեղերում էլ — որտեղ քսան, որտեղ երեսուն — հարյուր հիսուն հոգի հավաքվեց։ Իսկ ես ինքս ամենևին ոչինչ չունեի։ Եվ ահա, այդպիսի միջոցներ ունենալով, ինչպիսի՜ ահագին կալվածք եմ դարձրել։ Չո՛րս հազար հոգի — չէ՞ որ այդքանը թաքցնել չես կարող։ Կուզենայի հետս գերեզման տանել, բայց չի լինի։ Ի՞նչ ես կարծում, հե՞շտ եմ ձեռք բերել ես այդ չորս հազար հոգին։ Ոչ, սիրելի բարեկամս, այնպե՞ս դժվար, այնպե՞ս դժվար, որ պատահում էր, գիշերները, չէի քնում, շարունակ միտք էի անում, թե ինչպես գործն այնպես խելացի ձևով տանեմ, որ ոչ ոք այդ մասին հոտ անգամ չառնի, մինչև ժամանակը գա։ Եվ որպեսզի ոչ ոք չխլի, որ ավելորդ կոպեկ չծախսվի։ Եվ ինչե՞ր ասեք, որ ես չեմ ճաշակել՝ և՛ անձրև ու ձյուն, և՛ հալչլոցք, և՛ սառնամանիք,— ամեն ինչ ճաշակել եմ։ Վերջին ժամանակներն է միայն, որ ես տարանտասով եմ ճանապարհ գնում, իսկ առաջվա ժամանակ գյուղական սայլ էի լծել տալիս, վրան կիբիտկա էին կապում, մի ջուխտ ձի էին լծում — և ես դբխկ-հա-դբխկ քարշ էի գալիս Մոսկվա։ Գնում եմ ու շարունակ միտք եմ անում՝ չլինի թե մեկնումեկը կալվածքը խլի իմ ձեռքից։ Հասնում էի Մոսկվա, կանգ էի առնում Ռոգոժսկու վրա եղած իջևանում,—

գարշահոտություն ու կեղտ,— ամե՞ն ինչ կրել եմ ես, բարեկամներս։ Պատահում էր, քսան կոպեկ խնայում էի կառքի տալ. Ռոգոժսկուց մինչև Սոլյանկա ոտքով էի գնում։ Դոնապաններն անգամ զարմանում էին. դու, ասում էին, ջահել տիրուհի ես, միջոցների տեր ես, բայց այդչափ նեղություն ես տալիս քեզ։ Իսկ ես շարունակ լուռ եմ մնում և համբերում եմ։ Ունեցածս փողն էլ սկզբի ժամանակ ընդամենը երեսուն հազար էր ասիգնացիայով — ձեր հայրիկի ունեցած կտորները՝ մինչև հարյուր հոգի՝ ծախեցի ու այդ փողով,— կատակ է ասել,— ուզեցի հազար հոգի առնել։ Իվերյան տաճարում մաղթանք անել տվեցի ու գնացի Սոլյանկա՝ բախտս փորձելու։ Եվ ի՞նչ կասեք։ Կարծես տեսավ աստվածամայրը իմ դառն արտասուքները — կալվածքը ինձ թողեց։ Ու ի՞նչ հրաշք բան. հենց որ ես, բացի պետական պարտքից, երեսուն հազար տվեցի, կարծես ամբողջ աճուրդը վերջացավ։ Առաջ և՛ աղմուկ էին անում, և՛ բորբոքվում էին, բայց այդ ժամանակ նույնիսկ դադարեցին ավելացնել ու հանկարծ այնպիսի՞ լռություն տիրեց չորս կողմը։ Վեր կացավ ներկայացուցիչը, շնորհավորում է ինձ, իսկ ես ոչինչ չեմ հասկանում։ Փաստաբանն այնտեղ Իվան Նիկոլայիչն էր, մոտեցավ ինձ՝ «Շնորհավորում եմ, ասում է, տիրուհի»։ Իսկ ես ինչպես փայտի սյուն լինեմ կանգնած։ Եվ ինչքա՞ն մեծ է աստծու ողորմությունը։ Իմ այդպես ցնորված ժամանակ թե որ մեկնումեկը կատակի համար հանկարծ ձայն տար՝ «երեսունհինգ հազար եմ տալիս»,— ես անպայման, խելքս կորցրած, քառասուն կտայի։ Բայց որտեղի՞ց էի տալու։

Արինա Պետրովնան շատ անգամ էր պատմել երեխաներին կալվածքների գնման ասպարեզում իր առաջին քայլերի էպոպեան, բայց դա, ըստ երևույթին, մինչև օրս էլ չէր կորցրել նրանց աչքում նորության հետաքրքրությունը։ Պորֆիրի Վլադիմիրիչը լսում էր մամենկային մերթ ժպտալով, մերթ հառաչելով, մերթ աչքերը վեր ամբառնալով, մերթ ցած խոնարհելով՝ նայած փոփոխությունների հատկությանը, որոնց միջով անցել էր այդ էպոպեան։ Իսկ Պավել Վլադիմիրիչը նույնիսկ մեծ աչքերը լայն-լայն բաց արեց երեխայի

պես, որին ծանոթ, բայց երբեք ձանձրույթ չպատճառած հեքիաթ են պատմում։

— Իսկ դուք, երևի, կարծում եք, ձեր մոր հարստությունը ձրի՞ է ձեռք բերվել,— շարունակեց Արինա Պետրովնան։— Ո՛չ, բարեկամներս։ Ձրի նույնիսկ բշտիկ չի բուսնում քթին։ Իսկ առաջին գնումից հետո վեց ամիս ես տենդով պառկեցի։ Այ, հիմի դատեցեք, թե բոլոր այդ, կարելի է ասել, տառապանքներից հետո ինձ համար ինչքան ցավալի է տեսնել, որ իմ քրտինքով վաստակած փողերը ոչ այս, ոչ այն՝ աղբակույտն են նետվում։

Հաջորդեց լռություն։ Պորֆիրի Վլադիմիրիչը պատրաստ էր իր հանդերձները պատառոտել, բայց վախենում էր գյուղում կարկատող չգտնվի. Պավել Վլադիմիրիչը, հենց որ կալվածքները գնելու «հեքիաթը» վերջացավ, իսկույնևեթ թոռոմեց և նրա դեմքը նախկին անտարբեր արտահայտությունն ստացավ։

— Ահա ես ձեզ դրա համար էլ հենց կանչել եմ,— կրկին սկսեց Արինա Պետրովնան.— իմ ու նրա, այդ չարագործի դատը կտրեք։ Դուք ինչպես ասեք, այնպես էլ կլինի։ Նրան կդատապարտեք՝ նա մեղավոր կլինի, ինձ կդատապարտեք՝ ես մեղավոր կլինեմ։ Միայն թե ես թույլ չեմ տա, որ չարագործն ինձ վիրավորանք պատճառի,— ավելացրեց նա միանգամայն անսպասելի։

Պորֆիրի Վլադիմիրիչն զգաց, որ իր փողոցում հարսանիքն սկսվեց, ու գեղգեղանքի ծայրը բացեց։ Բայց որպես իսկական արյունարբու, նա գործին ուղղակի չմոտեցավ, այլ կողմնակի հանգամանքներից սկսեց։

— Եթե դուք թույլ կտաք ինձ, սիրելի բարեկամ մամենկա, արտահայտելու իմ կարծիքը,— ասաց նա,— ապա ահա այն երկու խոսքով՝ երեխաները պարտավոր են հնազանդվել ծնողներին, կուրորեն հետևել նրանց ցուցումներին, խնամել նրանց ծերությունը,— ահա բոլորը։ Ինչ ասել է երեխաներ, սիրելի մամենկա։ Երեխաները՝ դրանք սիրող էակներ են, որոնց ամեն ինչը, սկսած հենց իրենցից և վերջացրած հետին ցնցոտիով, որ հագել են նրանք, ամեն ինչ ծնողներին է պատկանում։ Ուստի ծնողները կարող են դատել

երեխաներին, իսկ երեխաները ծնողներին՝ երբեք։ Երեխաների պարտականությունն է պատվել, այլ ոչ դատել։ Դուք ասում եք՝ դատեցեք ինձ ու նրան։ Դա մեծահոգություն է, սիրելի մամենկա, հոյյաա-կաա-ա՞պ է։ Բայց կարո՞ղ ենք արդյոք մենք, առանց սարսափ զգալու, նույնիսկ մտածել այդ մասին, մենք, որ ծնված առաջին օրվանից բարերարված ենք ձեր կողմից գլխից մինչև ոտք։ Կամքը ձերն է, բայց դա սրբապղծություն կլինի, այլ ոչ թե դատ։ Դա այնպիսի՞ սրբապղծություն կլինի, այնպիսի՞ սրբապղծություն...

— Կա՛ց, սպասի՛ր։ Թե որ ասում ես չես կարող ինձ դատել, այդ դեպքում արդարացրու ինձ, իսկ նրան դատապարտի՛ր,— ընդհատեց նրան Արինա Պետրովնան, որը ուշադիր լսեց, բայց ամենևին չէր կարողանում գուշակել, թե ինչ նենգություն է նստել Պորֆիշա արյունարբուի գլխում։

— Ոչ, սիրելի մամենկա, ա՛յդ էլ չեմ կարող։ Կամ, լավ է ասել, չեմ համարձակվում և չունեմ իրավունք։ Ոչ արդարացնել, ոչ դատապարտել,— առհասարակ դատել չեմ կարող։ Դուք մայր եք, ձեզ է միայն հայտնի, ինչպես վարվել մեզ հետ, ձեր երեխաների հետ։ Արժանի ենք եղել՝ կվարձատրեք մեզ, մեղանչել ենք՝ կպատժեք։ Մեր գործն է հնազանդվել և ոչ թե քննադատել։ Եթե դուք ծնողական զայրույթի բոպեին նույնիսկ արդարության սահմանն անցնեք, այդ դեպքում անգամ մենք չենք հանդգնի տրտնջալ, որովհետև նախախնամության ճանապարհներն անհայտ են մեզ։ Ո՞վ գիտի, գուցեև այդպես էլ պետք է։ Նույնն էլ այս դեպքում. եղբայր Ստեպանը ստոր է վարվել, նույնիսկ, կարելի է ասել, ապերախտ, բայց որոշել հատուցման աստիճանը, որին արժանի է նա, դուք միայն կարող եք։

— Նշանակում է, դու հրաժարվո՞ւմ ես։ Ուրեմն տակից դուրս եկեք, սիրելի մամենկա, ինչպես ինքներդ գիտեք։

— Ա՞խ, մամենկա, մամենկա, և մեղք չե՞ք համարում այդպես մտածել։ Ա՞խ, ա՞խ, ա՞խ։ Ես ձեզ ասում եմ՝ ինչպես հաճելի է ձեզ որոշել եղբայր Ստեպանի բախտը, թող այդպես էլ լինի, իսկ դուք... ա՞խ, ի՞նչ սև մտքեր եք դուք իմ մեջ ենթադրում։

— Դե, իսկ դո՞ւ ինչպես,— դարձավ Պավել Վլադիմիրիչին Արինա Պետրովնան։

— Ի՞նձ ինչ։ Մի՞թե դուք կլսեք ինձ,— ասաց Պավել Վլադիմիրիչն ասես երազի միջից, բայց ապա անսպասելի քաջություն առավ և շարունակեց.— հայտնի է, մեղավոր է... մաս-մաս անել... սանդում ծեծել... սկզբից հայտնի է... ինձ ինչ։

Փնթփնթալով այդ անկապ խոսքերը, նա դադարեց և բաց բերանով նայեց մորը, ասես ինքն էլ չէր հավատում իր ականջներին։

— Դե, սիրելիս, քեզ հետ՝ հետո,— սառը ընդհատեց նրան Արինա Պետրովնան։— Դու, տեսնում եմ ես, Ստյոպկայի ճանապարհով ես ուզում գնալ... ա՞խ, չսխալվես, բարեկամս։ Կզղջաս հետո, բայց ուշ կլինի։

— Ես ի՞նչ, ես ոչի՞նչ... Ես ասում եմ՝ ինչպես ուզում եք։ Այստեղ ինչ... անպատկառություն կա,— տեղի տվեց Պավել Վլադիմիրիչը։

— Հետո, բարեկամս, հետո քեզ հետ կխոսենք։ Դու կարծում ես, որ սպա ես, ուրեմն քո հախից գալ չի կարելի։ Կարելի՛ է, սիրելիս, ա՞խ, ինչպե՞ս կարելի է։ Այդպես, ուրեմն, դուք երկուսդ էլ դատելուց հրաժարվո՞ւմ եք։

— Ես, սիրելի մամենկա...

— Ես նույնպես։ Ինձ ի՞նչ։ Իմ կարծիքով, թեկուզ կտորկտոր...

— Լռի՛ր վերջապես, ի սեր Քրիստոսի... չար զավակ։ (Արինա Պետրովնան հասկանում էր, որ իրավունք ունի ասելու «սրիկա», բայց ի սեր հանդիպման ուրախության, զսպեց իրեն)։ Դե, քանի որ դուք հրաժարվում եք, մնում է որ ես իմ սեփական դատաստանով դատեմ նրան։ Եվ ահա ինչ է իմ որոշումը՝ կփորձեմ մի անգամ նույնպես լավություն անել նրան՝ հայրիկի վոլոգդյան գյուղը նրան կտամ, կհրամայեմ այնտեղ փոքրիկ տնակ կառուցել,— և թող աղքատի պես ապրի գյուղացիների ողորմությամբ։

Թեպետև Պորֆիրի Վլադիմիրիչը հրաժարվեց եղբորը դատելուց, բայց մամենկայի մեծահոգությունը այնպես զարմացրեց նրան, որ նա ոչ մի կերպ չկարողացավ թաքցնել

նրանից այն վտանգավոր հետևանքները, որոնց առիթ կարող էր հանդիսանալ նոր արտահայտված պատժաչափ։

— Մա՜մենկա,— բացականչեց նա,— դուք ավելի քան մեծահոգի եք։ Դուք տեսնում եք ձեր առաջ մի արարք... ամենաստոր, սև արարք... և հանկարծ ամեն ինչ մոռացված է, ամեն ինչ ներվա՜ծ։ Հոյյա-ա-կա-ա՜պ է։ Բայց ներեցեք ինձ... վախենում եմ ես, աղավնյակս, ձեզ համար։ Ինչպես կուզեք դատեցեք ինձ, բայց ձեր տեղը... ես այդպես չէի վարվի։

— Այդ ինչո՞ւ։

— Չգիտեմ... Գուցե իմ մեջ չկա այդ մեծահոգությունը.... այդ, այսպես ասած, մայրական զգացմունքը... Բայց եթե այնպես լինի, որ եղբայր Ստեպանը, իրեն հատուկ փչացածությամբ ձեր այդ երկրորդ ծնողական օրհնության հետ էլ ճիշտ այնպես վարվի, ինչպես առաջինի՞։

Պարզվեց սակայն, որ այդ ենթադրությունը Արինա Պետրովնան արդեն նկատի էր ունեցել, բայց միաժամանակ գոյություն ուներ նաև մեկ այլ գաղտնի միտք, որը և հարկ եղավ այժմ արտահայտել։

— Վոլոգոդյան կալվածքն ախր պապենկայինն է, հայրական է,— ծոր տվեց Արինա Պետրովնան ատամների արանքից,— վաղ թե ուշ հարկ կլինի պապենկայի կալվածքից մաս հանել նրան։

— Հասկանում եմ ես այդ, սիրելի բարեկամ մամենկա։

— Իսկ թե որ հասկանում ես, նշանակում է, հասկանում ես և այն, որ Վոլոգոդյան գյուղը նրան տալով, կարելի է պարտավորագիր վերցնել նրանից, որ նա պապենկայից բաժանված է և զոհ է ամեն ինչից։

— Այդ էլ եմ հասկանում, սիրելի մամենկա։ Մեծ սխալ արեցիք դուք այն ժամանակ ձեր բարության շնորհիվ։ Պետք է այն ժամանակ, երբ դուք տունը գնում էիք,— այն ժամանակ պետք է նրանից պարտավորագիր վերցնեիք, որ նա պապենկայի կալվածքից բաժին չունի։

— Ի՜նչ արած, գլխի չընկա։

— Այն ժամանակ նա ուրախությունից ինչ թուղթ որ ուզեիք, կստորագրեր։ Իսկ դուք ձեր բարության շնորհիվ... Ա՜խ, ինչ սխալ էր գա։ Ի՜նչ սխալ, փ՜նչ սխալ։

—«Ա՜խ, ա՜խ»,— դու այն ժամանակ պետք է ախ աներիր, երբ հարկ էր։ Այժմ դու պատրաստ ես ամեն ինչ մորդ գլխին բարդել, բայց հենց որ բանը գործին է հասնում՝ այդ ժամանակ դու չկաս։ Սակայն բանը թղթին չի վերաբերում, թուղթը, երևի, ես հիմա էլ կարող եմ նրանից վերցնել։ Պապենկան, դե հո հիմա չմեռավ, իսկ մինչ այդ տխմարին նույնպես ուտելիմել է հարկավոր։ Չի տա թուղթը, կարելի է և շեմքը ցույց տալ նրան՝ սպասիր պապենկայի մահվան։ Չէ, ես այնուամենայնիվ ուզում եմ իմանալ, քեզ ինչու դուր չի գալիս, որ ես ուզում եմ Վոլոգոդյան գյուղակը նրան տալ։

— Կվատնի նա, աղավնյակս։ Տունը վատնեց, գյուղն էլ կվատնի։

— Իսկ թե որ վատնի, թող ինքն իր վրա բարկանա։

— Չէ՞ որ նա այն ժամանակ ձեզ մոտ է գալու։

— Է՜, չէ, կներես։ Շեմքից էլ ներս չեմ թողնի։ Ոչ թե հաց, ջուր էլ չեմ տա ատելիին։ Եվ դրա համար մարդիկ ինձ չեն մեղադրի, ասուված էլ չի պատժի։ Համեցե՛ք։ Տունը կերավ, կալվածքը կերավ... Ես նրա ճո՞րան եմ, ինչ է, որ ամբողջ կյանքումս մենակ նրա համար աշխատեմ։ Չէ՞ որ ես ուրիշ երեխաներ էլ ունեմ։

— Բայց և այնպես նա ձեզ մոտ կգա։ Ախր նա լպիրշ է, աղավնյակս մամենկա։

— Ասում եմ քեզ՝ շեմքից ներս չեմ թողնի։ Ի՞նչ ես կաշաղակի պես «կգա» ու «կգա» դրել,— չե՛մ թողնի։

Արինա Պետրովնան լռեց և հայացքը հառեց լուսամուտին։ Նա ինքն անորոշ կերպով հասկանում էր, որ Վոլոգոդյան գյուղակը միայն ժամանակավորապես է ազատելու իրեն «ատելիից», որ նա վերջ ի վերջո այն էլ է վատնելու ու կրկին գալու է իր մոտ և որ, որպես մայր, նա չի կարող մերժել նրան անկյուն տալ, բայց այն միտքը, որ իր ատելին ընդմիշտ իր հետ է մնալու, որ նա, նույնիսկ գրասենյակում փակված, ուրվականի պես ամեն ակնթարթ հետապնդելու է իր երևակայությունը,— այդ միտքն այն աստիճան ճնշում էր նրան, որ նա ակամայից ամբողջ մարմնով ցնցվում էր։

— Ո՛չ մի դեպքում,— բացականչեց նա վերջապես, բռունցքը սեղանին խփելով ու վեր թռչելով բազկաթոռից։

Իսկ Պորֆիրի Վլադիմիրիչը նայում էր սիրելի բարեկամ մամենկային և տրտում օրորում էր գլուխը։

— Բայց դուք, մամենկա, զայրանո՞ւմ եք,— վերջապես արտասանեց նա այնպիսի գորովալից ձայնով, ասես պատրաստվում էր մամենկայի փորը խտուտ տալ։

— Իսկ քո կարծիքով պա՞ր պիտի գամ ես, ինչ է։

— Ա-ա-ա՜խ։ Իսկ ավետարանում ի՞նչ է ասված համբերության մասին։ Համբերությամբ, ասված է, շահեցեք հոգին ձեր։ Համբերությամբ — ահա՛ ինչ։ Դուք կարծում եք, ասված չի՞ տեսնում։ Ոչ, նա ամեն ինչ տեսնում է, սիրելի բարեկամ մամենկա։ Մենք գուցեև չենք կասկածում ոչինչ, նստել ենք ահա՝ և՛ այսպես ենք զցում, և՛ այնպես ենք շափում,— իսկ նա այնտեղ արդեն որոշել է՝ արի ես փորձություն ուղարկեմ մամենկային։ Ա-ա-ա՜խ։ Իսկ ես կարծում էի, որ դուք խոհեմ եք։

Բայց Արինա Պետրովնան լավ հասկացավ, որ Պորֆիշկա-արյունարբուն միայն մահվան օղ է զցում, ուստիև վերջնականապես բարկացավ։

— Մաղրածո՞ւ ես ուզում դու ինձ դարձնել, ինչ է,— բղավեց նրա վրա։— Մայրը գործի մասին է խոսում, իսկ նա միմոսություն է անում։ Հարկ չկա, որ դու իմ գլուխը յուղես։ Ասա, ի՛նչ է քո միտքը։ Ուզում ես, որ նա մնա Գոլովլյովոյո՞ւմ, մորդ վզի՞ն։

— Ճիշտ այդպես, մամենկա, եթե դուք ողորմած լինեք։ Թողնել նրան նույն դրությամբ, ինչպես հիմա է և ժառանգության համար նրանից թուղթ պահանջել։

— Այդպես... այդպես... գիտեի ես, որ դու այդ խորհուրդը կտաս։ Դե լավ։ Ընդունենք, որ քո ասածով եղավ։ Ինչքան էլ անտանելի լինի ինձ համար ատելիին միշտ իմ կողքին տեսնել, բայց երևում է, որ ինձ ոչ ոք չի խղճում։ Ջահել էի՝ լուծ կրեցի, իսկ պառավը առավել ևս չպետք է լծից հրաժարվի։ Ընդունենք այդ, հիմա ուրիշ բանի մասին խոսենք։ Քանի ես ու պապենկան կենդանի ենք, նա էլ կապրի Գոլովլյովոյում, սովից չի մեռնի։ Իսկ հետո ինչպե՞ս։

— Մա՞մենկա, բարեկամս, այդ ի՞նչ սև մտքեր են։

— Սև են թե սպիտակ են, բայց մտածել հարկավոր է։

Ջահել չենք մենք։ Երկուսս էլ որ մեռանք, նրա դրությունն ի՞նչ է լինելու այն ժամանակ։

— Մամենկա, բայց մի՞թե դուք մեզ վրա, ձեր երեխաների վրա վստահ չեք։ Մի՞թե դուք մեզ այդպիսի դաստիարակություն եք տվել։

Եվ Պորֆիրի Վլադիմիրիչը նրան նայեց այն խորհրդավոր հայացքներից մեկով, որոնք միշտ մորը շփոթություն էին պատճառում։

«Օղ է զցում»,— արձագանքեց նրա հոգում։

— Ես, մամենկա, աղքատին առավել մեծ ուրախությամբ կօգնեմ։ Հարուստին ի՞նչ, Քրիստոսը նրա հետ։ Հարուստն ինքն էլ շատ ունի։ Իսկ աղքատը — գիտե՞ք Քրիստոսն ինչ է ասել աղքատի մասին։

Պորֆիրի Վլադիմիրիչը վեր կացավ և համբուրեց մոր ձեռքը։

— Մամենկա, թույլ տվեք ինձ եղբորս երկու ֆունտ ծխախոտ նվիրեմ,— խնդրեց նա։

Արինա Պետրովնան չպատասխանեց։ Նայում էր նրան ու մտածում՝ «Մի՞թե իրոք նա այնպիսի արյունարբուն է, որ հարազատ եղբորը փողոց կշպրտի»։

— Արա ինչպես գիտես։ Գոլովլյովոյում, թող Գոլովլյովոյում ապրի,— վերջապես ասաց նա։— Խճճեցիր ինձ։ Սկսեցիր նրանից, թե՝ ինչպես ձեզ, մամենկա, հաճելի կլինի։ Իսկ վերջը, այնուամենայնիվ, հարկադրեցիր ինձ քո զուռնայով պար գալ։ Սակայն ինձ լսիր։ Ատելի է նա ինձ, ամբողջ կյանքումս նա ինձ խայտառակ է արել ու պատուհաս է դարձել և վերջն էլ իմ ծնողական օրհնությունը ծաղրեց, բայց և այնպես, եթե դու նրան տանից դուրս անես կամ ստիպես, որ ծառա դառնա,— չե՛ս ստանա դու իմ օրհնությունը։ Քե՛ս ստանա, չե՛ս ստանա։ Գնացեք հիմա երկուսդ էլ նրա մոտ։ Երևի աչքը ջուր դարձավ ձեզ սպասելով։

Որդիները գնացին, իսկ Արինա Պետրովնան կանգնեց լուսամուտի առաջ և հետևեց, ինչպես նրանք, առանց միմյանց խոսք ասելու, գլխավոր բակով դեպի գրասենյակն անցան։ Պորֆիշան անընդհատ հանում էր գլխարկն ու խաչակնքում էր՝ մերթ հեռվում սպիտակին տվող եկեղեցու

կողմը, մերթ մատուռի, մերթ փայտե սյան, որի վրա տուփ էր կախած ողորմության համար։ Պավլուշան, ըստ երևույթին, հայացքը չէր կարողանում կտրել իր նոր կոշիկներից, որոնց ծայրերին արևի շողերն էին պլպլում։

— Եվ ո՞ւմ համար եմ կուտակել։ Գիշերներն անքուն եմ անցկացրել, չեմ կերել... ո՞ւմ համար,— պոռթկաց Արինա Պետրովնայի կրծքից։

⁂

Եղբայրները մնկնեցին. գոլովլյովյան կալվածքը դատարկվեց։ Արինա Պետրովնան կրկնապատկած եռանդով ձեռք զարկեց ընդհատված տնտեսական գործերին։ Խոհանոցում լուց խոհարարական դանակների թխկթխկոցը, բայց դրա փոխարեն կրկնապատկվեց աշխատանքը գրասենյակում, ամբարներում, պահեստներում, նկուղներում և այլն։ Շտեմարանող ամառը վախճանին էր մոտենում. եփվում էր, աղվում էր, պաշար էր պատրաստվում, ամեն կողմից ձմռան պաշար էր բերվում, բոլոր կալվածքներից սայլերով բերում էին կանանց բնատուրքը՝ չորացրած սունկ, հատապտուղներ, ձու, բանջարեղեն և ուրիշ բաներ։ Այդ բոլորը կշռվում էր, ընդունվում էր և մթացվում նախկին տարիների պաշարին։ Զուր չէր, որ գոլովլյովյան տիրուհին անթիվ նկուղներ, պահեստներ ու ամբարներ ուներ. դրանք բոլորը բերնե-բերան լիքն էին և նրանց մեջ քիչ փչացած մթերքներ չկային, որոնց մոտենալ չէր լինում հոտած լինելու պատճառով։ Ամռան վերջին ամբողջ այդ մթերքները տեսակավորվում էին և այն մասը, որ անհուսալի էր, հատկացվում էր սպասավորներին։

— Վարունգները դեռ լավ են, միայն երեսից է կարծես քիչ լպրծել, հոտում են. դե վնաս չունի, թող սպասավորներն ուտեն,— ասում էր Արինա Պետրովնան, հրամայելով մերթ այս, մերթ այն տակառիկը դեն դնել։

Ստեպան Վլադիմիրիչը զարմանալի կերպով ընտելացավ իր նոր դրությանը։ Ժամանակ առ ժամանակ նա անզուսպ կերպով ուզում էր «կոնծաբանել», «հարբեցողություն անել» և ընդհանրապես «սանձերը բաց թողնել» (նա, ինչպես հեռ

կտեսնենք, դրա համար նույնիսկ փող ուներ), բայց անհնազանդ կերպով զսպում էր իրեն, կարծես գտնելով, որ «իսկական ժամանակը» դեռ չի հասել։ Այժմ նա ամեն բոպե զբաղված էր, որովհետև ժիր և անհանգիստ մասնակցություն ուներ պաշարելու գործողությանը, անշահախնդիր ուրախանալով և տխրելով գոլովլյովյան գծուծության հաջողությունների և անհաջողությունների համար։ Ինչ-որ բուռն ոգևորությամբ նա, միայն խալաթով, առանց գլխարկի, գրասենյակից գաղտագողի մոտենում էր նկուղներին, մորից թաքնվելով ծառերի և գլխավոր բակը խճողած ամեն տեսակ խորդանոցների ետևը (Արինա Պետրովնան, թեպետ շատ անգամ էր նկատել նրան այդպես, և վրդովվել էր ծնողական սիրտը՝ Ստյոպկա-մխմարին մի լավ հուպ տալու, բայց, միտք անելով, ձեռք էր վերցրել նրանից) և այնտեղից տենդային անհամբերությամբ հետևվում էր, ինչպես դատարկվում էին սայլերը, կալվածատնից պուլիկներ, տակառներ, տակառիկներ էին բերվում, ինչպես այդ բոլորը տեսակավորվում էր և վերջապես անհայտանում երախաբաց նկուղների ու պահեստների անդունդներում։ Մեծ մասամբ նա գոհ էր մնում։

— Այսօր Դուբրովինոյից երկու սայլ ագարիկոն բերեցին. ի՞նչ ագարիկոն, եղբայր,— հիացմունքով հաղորդում էր նա գրագրին։— Իսկ մենք արդեն կարծում էինք, որ ձմեռն առանց ագարիկոնի ենք մնալու։ Շնորհակալություն, շնորհակալություն դուբրովինցիներին։ Կեցցեն դուբրովինցիները, փրկեցին։

Կամ.

— Այսօր մայրս կարգադրել է լճակում ծածան որսալ,— ա՜խ, լավ ծածաններ են, կես արշինից ավելի։ Երևի այս ամբողջ շաբաթ ծածան ենք ուտելու։

Երբեմն, սակայն, և տրտմում էր։

— Այս տարի վարունգը լավ չի, եղբայր։ Մուռումուռ են, չեչոտ են, վրաները խալեր կան,— իսկական վարունգ չկա, և վե՛րջ։ Երևում է հերվա վարունգն ենք ուտելու, իսկ այս տարվանը՝ սպասավորներին ենք տալու, ուրիշ ոչ ոքի։

Բայց ընդհանրապես Արինա Պետրովնայի տնտեսական սիստեմը նրան չէր բավարարում։

— Ինչքա՞ն բարիք է հոտացրել նա, եղբայր,— անհաշի՛վ։ Այսօր կրում էին ու կրում՝ աղ դրած միս, ձուկ, վարունգ — բոլորը կարգադրեց սպասավորներին տալ։ Մի՞թե դա գործ է։ Մի՞թե հաշիվ կա այդ ձևով տնտեսություն վարել։ Թարմ պաշարին հաշիվ չկա, իսկ նա ձեռք էլ չի տալիս դրանց, մինչև հին հոտածները չվերջանան։

Արինա Պետրովնայի վստահությունը՝ թե Ստյոպկա-տրխմարից ինչ թուղթ ուզես, առանց դժվարության ստանալ կարելի է, միանգամայն արդարացավ։ Նա ոչ միայն առանց առարկության ստորագրեց մոր ուղարկած բոլոր թղթերը, այլև նույն գիշեր պարծեցավ գրագրին.

— Այսօր ես, եղբայրս, բոլոր թղթերը ստորագրեցի։ Բոլորը հրաժարական թղթեր էին — տկլոր եմ հիմի։ Ո՛չ ճրագ, ո՛չ կրակ — ես հիմա ոչինչ չունեմ և հետագայում չի էլ սպասվում։ Հունգստայրի պառավին։

Եղբայրների հետ խաղաղ բաժանվեց և հիացած էր, որ այժմ ծխախոտի մեծ պաշար ունի։ Նա, իհարկե, չկարողացավ իրեն զսպել, որպեսզի Պորֆիշային արյունարբու և Իուդուշկա չանվանի, բայց այդ արտահայտությունները միանգամայն աննկատելի խորասուզվեցին շաղակրատանքի հորձանքի մեջ, որում ոչ մի կապակցված միտք չէր կարելի որսալ։ Հրաժեշտի ժամանակ եղբայրները առատաձեռնացան և նույնիսկ փող տվեցին, ըստ որում Պորֆիրի Վլադիմիրիչն իր պարգևը ուղեկցեց հետևյալ խոսքերով.

— Կանթեղի համար ձեթ առնելու կարիք կլինի կամ կուզենաս եկեղեցում մոմ վառել — ահա և փող կա՛։ Այդպե՞ս, եղբայր։ Ապրիր, եղբայր, խաղաղ ու հանդարտ,— և՛ մամենկան գոհ կլինի քեզանից, և՛ քեզ համար հանգիստ կլինի, և՛ մենք բոլորս ուրախ ու զվարթ կլինենք։ Ախր մայրիկը բարի է, բարեկամս։

— Բարին բարի է,— համաձայնեց և Ստեպան Վլադիմիրիչը,— բայց աղը դրած հոտած մսով է կերակրում։

— Իսկ ո՞վ է մեղավոր։ Ո՞վ անարգեց ծնողական օրհնությունը։ Ինքդ ես հանցավոր, ինքդ կալվածքդ վատնեցիր։ Իսկ ի՞նչ կալվածք էր՝ կլոր, ամենաշահավետ, ամենասքանչելի կալվածքն էր։ Այ, թե որ դու քեզ համեստ ու լավ պահեիր, և՛ տավարի միս կուտեիր, և՛ հորթի միս, և սուս կըհրամայեիր տան։ Եվ ամեն ինչ դու կունենայիր առատությամբ՝ և գետնախնձոր, և կաղամբ, և սիսեռ... Ճի՞շտ եմ ասում ես, եղբայր։

Եթե Արինա Պետրովնան լսեր այս տրամախոսությունը, հավանորեն չէր կարող չասել՝ «Դե, բլբլացրեց բլբլանը»։ Բայց Ստյոպկա-տխմարը հենց նրանով էր երջանիկ, որ նրա լսողությունը, այսպես ասած, կողմնակի խոսակցություն չէր պահում։ Իուդուշկան կարող էր խոսել ինչքան ուզում էր և միանգամայն վստահ կարող էր լինել, որ իր ոչ մի խոսքը նպատակին չի հասնում։

Մի խոսքով, Ստեպան Վլադիմիրիչը եղբայրներին ճանապարհեց բարեկամաբար և ցակով գրագրին գոհունակությամբ երկու քսանհնգանոց թղթադրամ ցույց տվեց, որ հրաժեշտից հետո հայտնվեց իր ձեռքում։

— Հիմի ինձ, եղբայր, երկար ժամանակ հերիք կանի,— ասաց նա։— Ծխախոտ մենք ունենք, թեյ ու շաքարով մենք ապահով ենք, գինին էր միայն պակաս,— որ ուզենանք, գինի էլ կլինի։ Սակայն, առայժմ դեռ կզսպեմ ինձ. հիմի ժամանակ չկա, նկուղ պետք է վազ տալ։ Մի փոքր որ անուշադիր եղար, իսկույն կթռցնեն։ Բայց վհուկը, եղբայր, տեսավ, ինչպես ես մեկ անգամ սպասավորների սենյակի պատի տակով ծածուկ մոտենում էի։ Կանգնել է լուսամուտի առաջ, մտիկ է տալիս ինձ ու երևի մտածում է, թե ես վարունգից կվերցնեմ,— ահա թե ինչ։

Բայց ահա վերջապես և հոկտեմբերն է դրսում. անձրևներ տեղացին, փողոցը սևացավ ու անանցանելի դարձավ։ Ստեպան Վլադիմիրիչը դուրս գալու տեղ չուներ, որովհետև ոտներին պապենկայի մաշված տուֆիլիներն էին, հագին պապենկայի հին խալաթը։ Առանց տանից դուրս գալու նստում էր նա լուսամուտի առաջ իր սենյակում ու կրկնակի փեղկերի միջով նայում էր ցեխի մեջ թաղված գյուղական ավանին։ Այնտեղ, աշնանային դժգույն գոլորշիների մեջ սև կետերի պես երևում էին աճապարող մարդիկ, որոնց դեռևս չէր ընկճել ամառային ծանր աշխատանքը։ Եռուն աշխատանքը չէր դադարել, այլ միայն նոր իրադրություն էր ստացել, երբ

մեջ ամառային ցնծուն երանգները փոխարինվել էին աշնանային անընդմիջվող մթնշաղերով։ Մարագները գոլորշի էին արձակում մինչև ուշ գիշեր, շղթաների տրտմաձայն շխկոցները տարածվում էին ամբողջ շրջակայքում։ Կալվածական մարագներում նույնպես ծեծում էին ցորենը, և գրասենյակում խոսում էին, որ հազիվ թե մինչև բարեկենդան կարողանան վերջացնել կուտակված ահագին բերքը։ Ամեն ինչ մշուշային, քնկոտ տեսք ուներ, և ամեն ինչ ճնշման մասին էր ասում։ Գրասենյակի դռներն ամառվա պես կրնկի վրա բաց չէին, և գրասենյակում թաց կիսամուշտակներից բարձրացող կապտին տվող գոլորշի էր կանգնած։

Դժվար է ասել, թե ինչ տպավորություն էր գործում Ստեպան Վլադիմիրիչի վրա գյուղական աշխատանքային աշնան պատկերը և նույնիսկ գիտակցո՞ւմ էր արդյոք նա դրա մեջ ծանր եռուն աշխատանք, որը շարունակվում էր ցեխի մեջ, անընդհատ տեղացող անձրևի տակ, բայց ստույգ է, որ աշնան գորշ, մշտապես արտասվող երկինքը ճնշում էր նրան։ Թվում էր նրան, որ այդ երկինքն ուղղակի կախված է իր գլխին ու սպառնում է խեղդել իրեն երկրի բացված անդունդների մեջ։ Նա ուրիշ գործ չուներ, բացի այն, որ նայում էր լուսամուտից և հետևում ծանրորեն շարժվող ամպերին։ Առավոտվանից, լույսը հազիվ նոր բացված, արդեն ամբողջ հորիզոնը ծածկված էր ամպերով. ամպերը կանգնած էին կարծես անշարժացած, դյութված. անցնում էր մի ժամ, երկու ժամ, երեք ժամ, իսկ նրանք դեռ կանգնած էին նույն տեղը և նույնիսկ ամենաչնչին փոփոխություն չէր նկատվում ոչ նրանց երանգներում, ոչ ուրվագծերում։ Ահա այն ամպը, որ մյուսներից ցածր է և ավելի սև է. առաջ էլ նա նույն պատառոտուն ձևը ուներ (ասես ֆարաջա հագած տերտեր լիներ, թևերն այս ու այն կողմ փռած), որ որոշակի աչքի էր ընկնում վերին ամպերի սպիտակավուն ֆոնի վրա,— հիմա էլ, կեսօրին, պահպանել է նույն ձևը։ Աջ թևը, ճշմարիտ է, կարճացել է, բայց ձախը այլանդակ երկարել է և անձրև է տեղում այնտեղից, այնպես է տեղում, որ նույնիսկ երկնքի մութ ֆոնի վրա է՛լ առավել մութ, համարյա սև շերտ է գծագրվել։ Ահա և մեկ այլ ամպ հեռու նրանից. առաջ էլ նա հսկայական բրդոտ գուղ-

ձի նման կախվել էր հարևան Նագլովկա գյուղի վրա և, թվում էր, սպառնում է խեղդել գյուղը. հիմա էլ նույն բրդոտ գուղձի նման կախված է նույն այն տեղում, իսկ թաթերը տարածել է ցած, ասես ահա-ահա ուզում է ներքև ցատկել։ Ամպեր, ամպեր և ամպեր — այդպես ամբողջ օրը։ Ժամը հնգի մոտերքը՝ ճաշից հետո՝ կերպարանափոխություն է տեղի ունենում, շրջապատը կամաց-կամաց սքողվում է, սքողվում և վերջապես բոլորովին աներևութանում է։ Սկզբում ամպերն են անհայտանում և ամեն ինչ ծածկվում է անտարբեր սև քողով, հետո կորչում են անտառն ու Նագլովկան, նրանից հետո խորասուզվում է եկեղեցին, մատուռը, մոտակա գյուղական ավանը, մրգեղենի այգին, և այդ խորհրդավոր աներևութացումների գործողությանն ակնդետ հետևող աչքը միայն կարող է զանազանել մի քանի սաժենի վրա գտնվող կալվածատունը։ Սենյակում արդեն բոլորովին մութ է. գրասենյակում դեռևս նստած են խավարի մեջ, լույս չեն վառում, մնում է միայն քայլել, քայլել, քայլել անվերջ։ Հիվանդագին խոնջանքը շղթայում է միտքը, ամբողջ օրգանիզմում, չնայած անգործությանը, առանց որևէ պատճառի, անտանելի հոգնածություն է զգացվում. մի միտք է միայն դես ու դեն նետվում, ծծում, ճնշում — և այդ միտքն է՝ դագաղ, դագաղ, դագաղ։ Ահա այն կետերը, որ առավոտյան երևում էին ցեխի մութ ֆոնի վրա, գյուղական կալատեղերի մոտ,— նրանց այդ միտքը չի ճնշում, և նրանք չեն կորչի վհատության ու խոնջության ծանրության տակ. նրանք եթե ուղղակի երկնքի դեմ չեն էլ պայքարում, բայց, համենայն դեպս, թպրտում են, ինչ-որ բան անում են, պաշտպանում են, ծածկում են։ Արժի՞ արդյոք պաշտպանել և ծածկել այն, որի կառուցման վրա օր ու գիշեր ուժասպառ էին լինում նրանք,— դա նրա մտքով չէր անցնում, բայց նա գիտակցում էր, որ նույնիսկ այդ անանուն կետերն անհամեմատ բարձր են կանգնած իրենից, որ ինքը նույնիսկ թպրտալ չի կարող, որ ինքը ոչինչ չունի ոչ պաշտպանելու, ոչ ծածկելու։

Երեկոները նա անց էր կացնում գրասենյակում, որովհետև Արինա Պետրովնան առաջվա նման մոմ բաց չէր թողնում նրա համար։ Մի քանի անգամ նա բուրմիստրի միջո-

ցով խնդրեց, որպեսզի իրեն կոշիկներ և կիսամուշտակ ուղարկեն, բայց պատասխան ստացավ, որ նրա համար կոշիկներ չեն պատրաստված, իսկ երբ ցրտերը կընկնեն, ապա վալենկաներ կտան նրան։ Ըստ երևույթին Արինա Պետրովնան մտադրվել էր տառացիորեն իրագործել իր ծրագիրը՝ ատելուն պահել այն չափով միայն, որպեսզի նա քաղցից չմեռնի։ Սկզբում նա հայհոյում էր մորը, բայց հետո կարծես մոռացավ նրա մասին, սկզբում նա ինչ-որ բաներ հիշում էր, հետո դադարեց նաև հիշելուց։ Նույնիսկ գրասենյակում վառվող մոմերի լույսը զզվեցրեց նրան, և նա փակվում էր իր սենյակում, որպեսզի մեն-միայն մնա խավարի հետ։ Առջևում նա ուներ միայն մի միջոց, որից առայժմ դեռ վախենում էր, բայց որը անզուսպ ուժով ձգում էր նրան։ Այդ միջոցն էր՝ խմել ու մոռանալ։ Մոռանալ խորունկ, անվերադարձ, սուզվել մոռացության ալիքում այն աստիճան, որ հնարավոր չլինի նույնիսկ նրանից դուրս գալ։ Ամեն ինչ նրան այդ կողմն էր գրավում՝ և՛ անցյալի բուռն սովորությունները, և՛ ներկայիս բռնի անգործությունը, և՛ հիվանդ օրգանիզմը՝ խեղդող հազով, անտանելի, ոչ մի պատճառ չունեցող շնչարգելությամբ, սրտի շարունակաբար սաստկացող բաբախումով։ Վերջապես նա չդիմացավ։

— Այսօր, եղբայրս, գիշերն հարկավոր է շտոֆի պատրաստություն տեսնել,— ասաց նա մի անգամ գրագրին այնպիսի ձայնով, որը ոչ մի լավ բան չէր գուշակում։

Այսօրվա շտոֆն իր ետևից հետևողականորեն բերեց այլ շտոֆների մի ամբողջ շարք, և այդ ժամանակվանից սկսած նա ամեն գիշեր ճշտորեն հարբում էր։ Ժամը իններին, երբ գրասենյակում լույսը հանգչում էր և մարդիկ ցրվում էին իրենց բները, նա սեղանին էր դնում նախապես պատրաստած օղու շտոֆը և մի կտոր սև հաց, վրան աղ ցանած։ Միանգամից չէր սկսում նա օղին խմել, այլ կարծես մոտենում էր գաղտագողի։ Չորս կողմն ամեն ինչ մահվան քուն էր մտած, միայն մկներն էին պատից պոկված պաստառների ետևը քրթքրթում, և ժամացույցն էր ձանձրալի չկչկում գրասենյակում։ Խալաթը հանած, մի տակ շապկով, շրջում էր նա առաջ ու ետ շոգ սենյակում, երբեմն-երբեմն կանգ էր առնում, մոտենում էր սե-

դանին, խավարի մեջ շոշափում էր շտոֆը ու կրկին շարունակում էր քայլել։ Առաջին գավաթները խմում էր զվարճալի ասացվածքներով, հեշտասիրաբար ծծելով այրող հեղուկը, բայց կամաց-կամաց սրտի խփոցը սաստկանում էր, գլուխը տաքանում էր ու լեզուն սկսում էր ինչ-որ անհասկանալի բաներ մմռալ։ Բթացած երևակայությունը ջանում էր ինչ-որ պատկերներ ստեղծել, անկենդան հիշողությունը փորձում էր թափանցել անցյալի շրջանը, բայց կերպարները ստացվում էին բզկտված, անիմաստ, իսկ անցյալը ոչ մի հիշողությամբ չէր արձագանքում՝ ոչ դառն, ոչ պայծառ, ասես անցյալի և ներկայի մեջ միանգամ ընդմիշտ թանձր պատնեշ էր կանգնել։ Նրա առաջ միայն ներկան էր խուլ փակված բանտի ձևով, որի մեջ անհետք սուզվել էր և՛ տարածության գաղափարը, և՛ ժամանակի գաղափարը։ Սենյակ, վառարան, երեք լուսամուտ դրսի պատի մեջ, փայտե ճոճոան մահճակալ՝ վրան բարակ, լմկված ներքնակ, սեղան՝ վրան շտոֆ,—որևէ այլ հորիզոն նրա միտքը ստեղծել չէր կարողանում։ Բայց շտոֆի բովանդակությունը նվազելու, գլուխը տաքանալու հետ միասին ներկայիս նույնիսկ այդ խղճուկ զգացումը դառնում էր ուժերից վեր։ Մոմոցը, որ սկզբում գոնե ինչ-որ ձև ուներ, վերջնականապես տարրալուծվում էր, աչքի բիբերը՝ աշխատելով խավարի գծագրերը զանազանել՝ անչափ լայնանում էին, ինքը՝ խավարը, վերջապես, անհայտանում էր, և նրա փոխարեն հրապարակ էր գալիս ֆոսֆորային փայլով լցված տարածություն։ Դա անսահման դատարկություն էր, մեռած, ոչ մի կենդանի ձայն չունեցող իր մեջ, չարագույժ ճաճանչափայլ։ Այդ դատարկությունը հետևում էր նրան կրնկակոխ, նրա յուրաքանչյուր քայլի ետևից։ Ոչ պատեր, ոչ լուսամուտներ — ոչինչ գոյություն չուներ՝ միայն անսահման ձգվող, շողացող դատարկություն։ Նա սոսկում էր զգում, նա պետք է իրականության զգացումը խեղդեր իր մեջ այն աստիճան, որպեսզի նույնիսկ այդ դատարկությունը չլիներ։ Եվս մի փոքր ջանք, և նա հասնում էր նպատակին։ Սայթաքող քայլերը կողքից-կողք էին տանում նրա անզգայացած մարմինը, կուրծքը ոչ թե մոմոց էր արձակում, այլ խռխռում էր, իր գոյությունն իսկ կարծես դադարում էր։ Հասնում էր այն

տարօրինակ թմբությունը, որը, իր մեջ կրելով գիտակցական կյանքի բացակայության ամեն մի նշույլ, միաժամանակ անտարակույս մատնանշում էր ինչ-որ յուրահատուկ կյանքի գոյություն, որ զարգանում է անկախ որևէ պայմանից։ Հառաչանք հառաջանքի ետևից էր դուրս թռչում կրծքից, ամենևին չխանգարելով քունը. օրգանական ախտը շարունակում էր իր քայքայիչ աշխատանքը, ըստ երևույթին ոչ մի ֆիզիկական ցավ չպատճառելով։

Առավոտյան արթնանում էր լույսը բացվելուն պես, և նրա հետ միասին արթնանում էին վիշտը, զզվանքը, ատելությունը։ Ատելություն առանց բողոքի, ոչ մի բանով չպայմանավորված, ատելություն դեպի ինչ-որ անորոշ, կերպար չունեցող բան։ Բորբոքված աչքերը անիմաստաբար կանգ են առնում մերթ այս, մերթ այն առարկայի վրա և երկար ու ակնդետ նայում են. ձեռներն ու ոտները դողում են. սիրտը մերթ մարում է, կարծես ցած է գլորվում, մերթ սկսում է այնպիսի ուժով բաբախել, որ ձեռքն ակամայից բռնում է կուրծքը։ Ոչ մի միտք, ոչ մի ցանկություն։ Աչքերի առաջ վառարանն է, և միտքն այն աստիճան լցված է այդ պատկերացումով, որ այլ տպավորություններ չի ընդունում։ Հետո վառարանին փոխարինում է լուսամուտը,— լուսամուտ, լուսամուտ, լուսամուտ... Պետք չէ ոչինչ, ոչինչ, ոչինչ պետք չէ։ Ծխամորճը լցվում և ծխվում է մեքենայորեն և, կիսատ, կրկին ընկնում է ձեռքից. լեզուն ինչ-որ բան է փնթփնթում, բայց, ակներև է, միայն ըստ սովորության։ Ամենից լավն է նստել ու լռել, լռել ու նայել մի կետի։ Լավ է գինովությունից սթափվելու համար խմել այդպիսի բոպեին, լավ է օրգանիզմի ջերմաստիճանը բարձրացնել այնքան, որպեսզի թեկուզ կարճ ժամանակով զգացվի կյանքի ներկայությունը, բայց ցերեկը ոչ մի գնով օղի ձեռք բերել հնարավոր չէ։ Պետք է սպասել գիշերվան, հասնելու համար նույն այն երանելի բոպեներին, երբ հողն անհայտանում է ոտների տակից և զզվանք ազդող չորս պատերի փոխարեն աչքերի առաջ բացվում է շողշողացող անհուն դատարկությունը։

Արինա Պետրովնան ոչ մի հասկացողություն չուներ այն մասին, թե «տխմարն» ինչպես է անցկացնում ժամանակը

գրասենյակում։ Զգացմունքի պատահական նշույլը, որ արյունարբու Պորֆիշկայի հետ խոսելիս հրապարակ եկավ, ակնթարթապես հանգավ այնպես, որ նա նույնիսկ չնկատեց էլ։ Մոր կողմից նույնիսկ գործողության սիստեմատիկ ձև չկար, այլ կար պարզ մոռացում։ Նա բոլորովին մոռացության տվեց, որ իր կողքին, գրասենյակում ապրում է արյունակցական կապերով իր հետ կապված մի էակ, մի էակ, որը, թերևս, տառապում է կյանքի կարոտով։ Ինչպես նա ինքը, մեկընդմիշտ մտնելով կյանքի ակոսը, համարյա մեքենաբար նույն բովանդակությամբ էր լցնում այն, նրա կարծիքով այդպես պիտի վարվեն նաև ուրիշները։ Նրա մտքով չէր անցնում, որ կյանքի բովանդակության բնույթն ինքը փոփոխվում է համեմատ բազմաթիվ այս կամ այն կերպ գոյացած պայմանների, և որ, վերջապես, ոմանց համար (և նույն թվում իր համար) այդ բովանդակությունը հանդիսանում է ինչ-որ սիրած, կամավորապես ընտրած բան, իսկ ուրիշների համար՝ ատելի և ակամա։ Ուստի, չնայած բուրմիստրը շատ անգամ էր զեկուցում նրան, որ Ստեպան Վլադիմիրիչը «վատ է», բայց այդ զեկուցումները անուշադրության էին մատնվում, ոչ մի տպավորություն չթողնելով նրա մտքում։ Շատ-շատ նույնաձև ֆրազով էր պատասխանում դրանց.

— Մի վախեցի, շունչ կառնի, ինձ ու քեզ էլ կթաղի։ Ինչ է պատահել լողլող որձ ձիուն։ Հազո՞ւմ է։ Ոմանք երեսուն տարի շարունակ հազում են, բայց ոչինչ չի պատահում։

Այնուամենայնիվ, երբ մեկ անգամ առավոտյան նրան զեկուցեցին, որ Ստեպան Վլադիմիրիչը գիշերն անհայտացել է Գոլովլյովոյից, նա հանկարծ ուշքի եկավ։ Անմիջապես բոլորին ուղարկեց որոնելու և անձամբ դիմեց քննության, սկսելով այն սենյակի զննումից, ուր ապրում էր ատելին։ Առաջին բանը, որ ապշեցրեց նրան, դա սեղանի վրա եղած շտոֆն էր, որի մեջ դեռ քիչ մնացել էր հեղուկից և որը, շտապողականությունից, չէին կռահել վերցնել։

— Սա ի՞նչ է,— հարցրեց նա, կարծես չհասկանալով։

— Ուրե՛մն... զբաղվում էին,— կմկմալով պատասխանեց բուրմիստրը։

— Ո՞վ է բերել...— սկսեց նա, բայց հետո սթափվելով և զայրույթը զսպելով, շարունակեց զննությունը։

Սենյակը կեղտոտ էր, սևացած, ապականված, այնպես որ նույնիսկ ինքը, որ չգիտեր և չէր ընդունում փարթամակեցության ոչ մի պահանջ, անհարմար զգաց։ Առաստաղը ծխոտած էր, պատերի պաստառները պատռտվել էին և շատ տեղ կախվել, լուսամուտի գոգերը սևացել էին ծխախոտի մոխրից, բարձերն ընկած էին լպրծուն կեղտով ծածկված հատակին, մահճակալի վրա ընկած էր ճմրթված, վրայի կեղտից ամբողջովին գորշացած սավանը։ Լուսամուտներից մեկի ձմռանը հագցվող փեղկը հանված էր, ավելի ճիշտ՝ պոկված, և լուսամուտն ինքը կիսաբացված էր. ըստ երևույթին ատելին այդ ճանապարհով էր անհայտացել։ Արինա Պետրովնան բնազդաբար նայեց փողոց և էլ ավելի վախեցավ։ Դրսում արդեն նոյեմբերի սկիզբն էր, բայց աշունն այդ տարի առանձնապես երկարատև էր, և սառնամանիքը դեռ չէր սկսված։ Ե՛վ ճանապարհը, և՛ դաշտերը սևացած էին, փափկած, անանցանելի։ Ինչպե՞ս է նա գնացել։ Ո՞ւր։ Եվ անմիջապես հիշեց, որ նա հագին ոչինչ չուներ բացի խալաթից և տուֆլիներից, որոնցից մեկը գտնվել էր լուսամուտի տակ և որ անցյալ ամբողջ գիշեր, կարծես դիտավորյալ, անընդհատ անձրև էր տեղացել։

— Վաղուց է, որ ես այստեղ, ձեզ մոտ չեմ եղել, սիրելիներս,— ասաց նա, ներծծելով օդի փոխարեն սիվուխայի, թութունի և մորթու զզվելի հոտը։

Ամբողջ օրը, մինչ մարդիկ որոնում էին անտառում, նա կանգնած մնաց լուսամուտի առաջ, բութ ուշադրությամբ նայելով մերկացած հեռավորությանը։ Տխմարի պատճառով այսպիսի խառնաշփոթությո՞ւն։ Նրան թվում էր, որ դա մի ինչոր անմիտ երազ է։ Ասում էր, ախր, այն ժամանակ, որ նրան հարկավոր է Վոլոգոդյան նահանգն աքսորել, բայց չէ՛, քրծնում է անիծյալ Իուդուշկան՝ մամենկա, թողեք Գոլովլյովոյում։ Արի դե տակից դուրս արի։ Թե որ նա աչքից հեռու ապրեր,— Քրիստոսն իր հետ։ Ինքն իր անելիքն արեց՝ մի պատառը վատնեց, մյուսը նետեց։ Իսկ որ այդ էլ վատներ,— դե այլևս մի նեղացիր, սիրելիս։ Աստված որ աստված է, նա էլ ագահ փորը կշտացնել չի կարող։ Եվ ամեն բան հաշտ

ու խաղաղ կանցներ, իսկ հիմա հե՞շտ է ասել, ինչ տեսակ մարդ է փախել։ Դե արի ու գտիր նրան անտառում։ Դեռ լավ է, թե որ կենդանի տուն բերեն,— չէ որ հարբած վիճակում այնքան էլ դժվար չի կախվելը։ Վերցրեց պարանը, գցեց ծառի ճյուղին, փաթաթեց վզին — ու վե՛րջ։ Մայրը գիշերներն անքուն է լուսացրել, չի կերել, իսկ նա, համեցեք, ինչ մոդա է հնարել — կախվե՞լ։ Եթե գոնե վատ ապրելու լիներ,— շրկերակրեին-չխմացնեին, աշխատանքով ուժասպառ անեին,— մինչդեռ ամբողջ օրը հիմարի պես ետ ու առաջ էր քայլում սենյակում, ուտո՞ւմ էր ու խմո՞ւմ, ուտո՞ւմ ու խմո՞ւմ։ Ուրիշը լիներ, չէր իմանա ինչպես շնորհակալ լինի մորից, իսկ նա կախվել է մտածել — ահա՞ թե ինչպես հատուցեց սիրելի որդյակը։

Բայց այս անգամ Արինա Պետրովնայի ենթադրությունները՝ տխմարի բռնի մահվան մասին՝ չարդարացան։ Երեկոյան կողմը Գոլովլյովոյի տեսադաշտում երևաց մի զույգ գյուղական ձի լծած կիբիտկա, և փախստականին բերեցին գրասենյակ։ Նա կիսաուշագնաց վիճակում էր գտնվում, ամբողջովին ծեծված, վիրավոր, կապտած և ուռած դեմքով։ Պարզվեց, որ նա գիշերը հասել է Գոլովլյովոյից քսան վերստի վրա գտնվող Դուբրովինսկ կալվածքը։

Դրանից հետո մեկ ամբողջ օր քնած մնաց և արթնացավ մյուս օրը։ Սովորության համաձայն սկսեց սենյակում ետ ու առաջ քայլել, բայց ծխամորճին ձեռք չտվեց, կարծես մոռացել էր և բոլոր հարցերին ոչ մի խոսք չպատասխանեց։ Իր կողմից Արինա Պետրովնան այն աստիճան զգացվեց, որ քիչ մնաց հրամայեր նրան գրասենյակից կալվածատուն փոխադրեն, բայց հետո հանգստացավ և տխմարին թողեց գրասենյակում, հրամայելով լվանալ և մաքրել նրա սենյակը, փոխել անկողնի սպիտակեղենը, լուսամուտներին վարագույրներ կախել և այլն։ Հետևյալ օրը, երբ նրան զեկուցեցին, թե Ստեպան Վլադիմիրիչը արթնացել է, նա կարգադրեց տուն կանչել նրան թեյի և նույնիսկ փաղաքշական խոսքեր էր որոնում նրա հետ բացատրվելու համար։

— Դու այդ ո՞ւր էիր գնում մորդ մոտից,— սկսեց նա։— Իմանո՞ւմ ես դու, թե ինչքա՞ն անհանգստացրիր դու մորդ։

Դեռ լավ է, որ պապենկան ոչ մի բան չիմացավ. ի՞նչ դրության մեջ կընկներ նա իր ներկայիս վիճակում։

Բայց Ստեպան Վլադիմիրիչն, ըստ երևույթին, անտարբեր մնաց դեպի մայրական փաղաքշանքը և անշարժ, ապակիացած աչքերը հառեց ճրագուի մոմին, կարծես հետևելով պատրույգի ծայրին աստիճանաբար գոյացող այրուցքին։

— Ա՜խ, հիմարիկ, հիմարիկ,— շարունակեց Արինա Պետրովնան ավելի ու ավելի փաղաքշական։— Գոնե մտածեիր, թե քո պատճառով մորդ մասին ինչե՞ր կտարածեին։ Չէ՞ որ նա, փառք աստծո, նախանձորդներ շատ ունի։ Ինչե՞ր չեն հնարի։ Կասեն, որ և՛ չեմ կերակրել, և՛ չեմ հագցրել... Ա՜խ, հիմարիկ, հիմարիկ...

Նույն այն լռությունը և նույն այն անշարժ, անիմաստ հայացքը՝ մի կետի հառած։

— Եվ ինչո՞վ էր վատ քեզ համար մորդ մոտ։ Հագնված ես ու կուշտ, փառք աստծու։ Եվ տաք է, և լավ է... ուրիշ էլ ինչ ես ուզում։ Տխուր է, դե դրա համար մի նեղացիր, բարեկամս, գյուղ է։ Ուրախություններ և պարահանդեսներ մեզանում չկան, բոլորս էլ նստում ենք այս ու այն անկյունում ու տխրում ենք։ Այ ես ուրախ կլինեի պար գալ ու երգեր երգել, բայց որ նայում ես փողոց, մարդ այսպիսի թացության ժամանակ աստծու եկեղեցին էլ չի ուզում գնալ։

Արինա Պետրովնան դադար տվեց, սպասելով, որ տրխմարը գոնե մի բան բառաչի, բայց տխմարը կարծես քարացած լիներ։ Մոր սիրտը կամաց-կամաց սկսում է բորբոքվել, սակայն դեռևս զսպում է իրեն։

— Իսկ թե որ դու որևէ բանից դժգոհ էիր,— ուտելիքը, գուցե, պակաս էր, կամ սպիտակեղենից մի բան, մի՞թե չէիր կարող բացեբաց մորդ բացատրել, թե՝ մամենկա, հոգյակս, հրամայեցեք սունկ տապակեն, կարկանդակ թխեն,— մի՞թե մայրդ պատառը կխնայեր քեզ։ Կամ թե հենց գինին — դե, գինի ուզեցիր խմել, տերը քեզ հետ, մի գավաթ, երկու գավաթ միթե մայրդ կափսոսա՞ր։ Բայց, համեցեք, ճորտից խնդրելն ամոթ չէ, իսկ մորը խոսք ասելը դժվար է։

Սակայն ապարդյուն էին բոլոր շողոքորթող խոսքերը. Ստեպան Վլադիմիրիչը ոչ միայն չզգացվեց (Արինա Պետրովնան հույս ուներ, որ նա իր ձեռքը կհամբուրի) և չզղջաց, այլ նույնիսկ կարծես ոչինչ չլսեց։

Այդ օրվանից սկսած նա առանց այլևայլության լռեց։ Ամբողջ օրերով քայլում էր սենյակում ճակատը կնճռոտած, շրթունքները շարժելով և հոգնածություն չզգալով։ Ժամանակ առ ժամանակ կանգնում էր, կարծես ինչ-որ բան արտահայտելու, բայց բառեր չէր գտնում։ Ըստ երևույթին նա մտածելու ընդունակությունը չէր կորցրել, բայց տպավորություններն այն աստիճան աղոտ էին պահվում ուղեղում, որ իսկույն մոռանում էր նրանց։ Ուստի անհրաժեշտ խոսքը գտնելու անհաջողությունը նրա մեջ նույնիսկ անհամբերություն չէր առաջացնում։ Արինա Պետրովնան իր կողմից մտածում էր, որ նա անպայման կալվածական տունը կհրգեհի։

— Ամբողջ օրը լռում է,— ասում էր նա,— բայց չէ՞ որ տխմարը մտածում է մի բանի մասին, քանի որ լուռ է։ Այ, հիշեցեք իմ խոսքը, որ նա անպայման կալվածատունը կրակ կտա։

Բայց տխմարն ուղղակի ամենևին չէր մտածում։ Թվում էր, որ նա ամբողջովին խորասուզվել է անթափանց մշուշի գիրկը, ուր տեղ չկա ոչ միայն իրականության, այլև երևակայության համար։ Նրա ուղեղը ինչ-որ մի բան մշակում էր, բայց դա ոչ մի կապ չուներ ոչ անցյալի, ոչ ներկայի, ոչ էլ ապագայի հետ։ Ասես սև ամպ էր պարուրել նրան ոտից մինչև գլուխ, և նա նայում էր այդ ամպին, միայն նրան, նրա երևակայության տատանումներին և ժամանակ առ ժամանակ ցնցվում էր ու կարծես պաշտպանվում էր նրանից։ Այդ առեղծվածային ամպի մեջ խորասուզվեց նրա ողջ ֆիզիկական և մտավոր աշխարհը...

Նույն տարվա դեկտեմբեր ամսին Պորֆիրի Վլադիմիրիչը Արինա Պետրովնայից հետևյալ բովանդակությամբ նամակ ստացավ.

«Երեկ առավոտյան մեզ հասավ նոր, տիրոջ կողմից առաքված փորձություն՝ իմ որդին, իսկ քո եղբայր Ստեպանը վախճանվեց։ Նախօրյակի երեկոյան դեռ կատարելապես առողջ էր և նույնիսկ ընթրեց, իսկ առավոտյան գտան անկողնում մեռած,— այսպես է սուրն կյանքի վաղանցիկ լինելը։ Եվ ինչն

ամենից ավելի վշտալի է մայրական սրտի համար, այդ այն է, որ նա այդպես էլ առանց հաղորդության թողեց սույն անցավոր աշխարհը, անհայտության գիրկը գնալու համար։

Սույնը խրատ թող հանդիսանա մեզ բոլորիս համար՝ ով կարհամարհի կապերն ընտանեկան, միշտ պետք է իր համար նման վախճան սպասի։ Ե՛վ անհաջողությունները սույն կյանքում, և՛ ապարդյուն մահը, և՛ հավիտենական տառապանքները հանդերձյալ կյանքում,— բոլորը սույն այս աղբյուրից է բխում։ Վասն զի, որչափ էլ մենք լինենք մեծախելք և նույնիսկ նշանավոր, բայց եթե ծնողներին չենք հարգում, ապա դրանք հենց՝ և՛ մեծախելքությունը, և՛ նշանավորությունը մեզ ոչնչության են դատապարտում։ Այսպիսիք են կանոնները, որպիսիք սույն աշխարհում ապրող յուրաքանչյուր մարդ պետք է լավ յուրացնի, իսկ ճորտերը, բացի դրանից, պարտավոր են հարգել տերերին։

Սակայն, չնայած դրան, հավիտենականության գիրկը գընացողի համար բոլոր մեծարանքները մատուցված են լիովին, որպես որդու։ Դագաղի քողը դուրս գրվեց Մոսկվայից, իսկ թաղման ծեսը կատարեց մայր եկեղեցու քեզ հայտնի վանահայրը։ Քառասնօրյա հոգեհանգիստը և հիշատակ ննջեցելոցը մինչ օրս էլ կատարվում է, որպես վայել է՝ քրիստոնեական սովորությամբ։ Ափսոսում եմ որդուս, սակայն տըրտընջալ չեմ համարձակվում, և ձեզ, զավակներս, խորհուրդ չեմ տալիս։ Վասն զի ո՞վ կարող է սույնը իմանալ — մենք այստեղ տրտնջում ենք, իսկ նրա հոգին այնտեղ զվարճանում է»։

ԱԶԳԱԿՅԱԲԱՐ

Հուլիսյան շոգ կեսօր է։ Դուբրովինսկի կալվածատանը ասես ամեն ինչ մեռել է։ Ոչ միայն պարապ մարդիկ, այլև բանվորներն այս ու այն անկյուն են ցրվել ու նստել են ըստվերում։ Շները մեկնվել են գլխավոր բակի մեջտեղ եղած ահագին ուռենու սաղարթի տակ, ու լսելի է, ինչպես նրանք քնի մեջ ճանճ են բռնում՝ ատամները չխկացնելով։ Նույնիսկ ծառերը կանգնել են գլխահակ ու անշարժ, կարծես տառապած։ Ինչպես կալվածատան, նույնպես և սպասավորների սենյակների բոլոր լուսամուտներն ամբողջովին բաց են։ Տապը տաք հոսանքով ցած է թափվում վերևից, խանձված խոտով ծածկված հողը բոցավառվում է, անտանելի լույսը ոսկեփայլ շղարշի նման քողարկել է շրջակայքը, այնպես որ առարկաները դժվարությամբ են զանազանվում։ Ե՛վ կալվածատունը, որ մի ժամանակ մոխրագույն էր ներկված, իսկ այժմ սպիտակին է տալիս, և՛ տան առջև եղած փոքրիկ նախապարտեզը, և՛ բանուկ ճանապարհով կալվածատնից բաժանված ցարասիների պուրակը, և՛ լճակը, և՛ գյուղական ավանը, և՛ անմիջապես ավանի շրջակայքից սկսվող հաճարի արտերը,— բոլորը խորասուզված են լուսափայլ մառախուղի մեջ։ Ամեն տեսակի բույրերը՝ սկսած ծաղկող լորենիների անուշահոտությունից և վերջացրած անասունների բակի գարշահոտ գոլորշիները՝ թանձրորեն կանգնած են օդում։ Ոչ մի ձայն։ Միայն խոհարարական դանակների հատվածական թխթխկոցն է հնչում խոհանոցից, որ ազդարարում է անփոփոխելի մածնաբրդոշից և բիտկիից բաղկացած ճաշի մասին։

Աղայական տան ներսը անաղմուկ տագնապ է տիրում։ Պառավ տիրուհին և երկու ջահել աղջիկներ նստել են սեղանատանը և, առանց ձեռք տալու սեղանի վրա ընկած ասեղնագործերին, ասես անշարժացել են սպասողական։ Աղախինների սենյակում երկու կին զբաղված են յախուներ ու թրջոցներ պատրաստելով, և գազլների մեղմ զնգոցները, ծղրիդի ծվոցի նման, հնչում են ընդհանուր անզգայացման միջից։ Միջանցքում զգուշությամբ շարժվում են ոտաբոբիկ աղախինները՝ վերնահարկի աստիճաններով աղախնանոց ու ետ վազելով։ Ժամանակ առ ժամանակ վերևից բացականչություն է լսվում՝ «Ի՞նչ եղավ յախուն, քնե՞լ եք, ինչ է»,— որից անմիջապես հետո աղախնանոցից նետի նման սլանում է աղախիններից մեկը։ Վերջապես աստիճանների վրա լսվում է ծանր քայլերի ճռնչոց ու սեղանատուն է մտնում գեր բժիշկը։ Բժիշկը բարձրահասակ մարդ է, այնքիկունք, պիրկ, կարմիր այտերով, որոնք փայլում են առողջությամբ։ Դա կենսասեր մարդ է բառի կատարյալ իմաստով, չնայած իր հիսուն տարուն, կենսասեր, որը հենց սկզբից չի հրաժարվել և դեռ երկար ժամանակ չի հրաժարվի ոչ մի գինարբուքից, ոչ մի որկրամոլությունից։ Հագնված է ամառային, պճնամոլ, արտասովոր ճերմակության պիկեի բաճկոն՝ պայծառ արծվենիշ կոճակներով զարդարված։ Նա ներս է գալիս, շուրթերը ծպպացնելով ու լեզուն ծծելով։

— Ահա ինչ, աղավնյակս, բեր հապա մեզ համար օղի և ուտելու մի բան,— պատվիրում է նա, կանգ առնելով նախասենյակ տանող դռան մեջ։

— Դե ի՞նչ, ինչպե՞ս է,— անհանգիստ հարցնում է պառավ տիրուհին։

— Աստծու ողորմածությունն անսահման է, Արինա Պետրովնա,— պատասխանում է բժիշկը։

— Այդ ինչպե՞ս։ Նշանակում է...

— Այդպես։ Երկու-երեք օր քարշ կտա, իսկ հետո —վե՛րջ։

Բժիշկը ձեռքով նշանակալից շարժում է անում և կիսաձայն մոլտում է.

— Գյուխկոնծի, գյուխկոնծի, գը-լուխ-կոն-ծի կթը-չի՞։

— Այդ ինչպե՞ս։ Բուժում էին բժիշկները, բուժում էին — և հանկա՞ծ...

— Ո՞ր բժիշկները։

— Մեր զեմսկին, մեկն էլ քաղաքից էր գալիս։

— Բժիշկնե՞ր։ Թե որ մի ամիս առաջ նրան մի լավ արտածծում արվեր, կենդանի կմնար։

— Մի՞թե այդպես էլ ոչինչ անել չի կարելի։

— Ասացի՝ աստծու ողորմածությունը շատ է, իսկ ուրիշ ոչինչ ավելացնել չեմ կարող։

— Բայց գուցեե՞ ներգործի։

— Ի՞նչը ներգործի։

— Այ հիմի... այդ յախունները...

— Գուցե։

Սև հագուստով և սև թաշկինակը գլխին մի կին բերում է սկուտեղը, վրան օղու գրաֆին և երկու ափսեով երշիկ ու խավիար։ Նրա գալու պահին խոսակցությունը դադարում է։ Բժիշկը լցնում է գավաթը, պահում է լույսին և լեզուն ծպպացնում։

— Ձեր կենացը, մամենկա,— ասում է նա, դիմելով պառավ տիրուհուն և կուլ է տալիս օղին։

— Անուշ լինի, հարգելիս։

— Ահա սրանից է հենց, որ Պավել Վլադիմիրիչը զոհ է գնում ծաղիկ հասակում, այս իսկ օղուց,— ասում է բժիշկը հաճույքով կնճռոտվելով և պատառաքաղով երշիկի օղը վերցնելով։

— Այո, շատ մարդ է կորչում դրանից։

— Ամեն մարդ չի կարող այս հեղուկը բովանդակել,— դրանից է։ Բայց օրավհետև մենք կարող ենք բովանդակել, ուստի կրկնենք։ Ձեր կենացը, տիրուհի։

— Խմեք, խմեք, ձեզ համար ոչինչ։

— Ինձ համար ոչինչ։ Իմ թե թոքերը, թե երիկամները, թե լյարդը, թե փայծաղը — բոլորը կարգին են։ Հա՜, ահա ինչ,— դառնում է նա սևազգեստ կնոջը, որը կանգ է առել դռանը, ասես ականջ դնելով նրանց զրույցին։— Այսօր ճաշին ի՞նչ է պատրաստված։

— Մածնաբրդոշ, բիտկի, ճտեր տապակած,— պատասխանում է կինը, մի տեսակ թթված ժպտալով։

— Իսկ աղը դրած ձուկ ունե՞ք։

— Ինչպե՞ս կարող է չլինել։ Օսետրինա կա, սերյուգա... Ջուկ կգտնվի բավական։

— Այդ դեպքում դու մեզ համար ճաշին պատվիրիր ճակընդեղի ապուր՝ օսետրինայով... մեջքի մի օղը, յուղալի՛։ Ինչպե՞ս է քո անունը, Ուլի՞տուշկա է, ի՞նչ։

— Ուլիտա են ասում մարդիկ։

— Դե, շուտ արա, Ուլիտուշկա, շուտ։

Ուլիտուշկան գնում է. մի պահ ծանր լռություն է տիրում։ Արինա Պետրովնան վեր է կենում տեղից և դռնից նայում է, թե գնաց արդյոք Ուլիտուշկան։

— Որբերի մասին դուք ասացի՞ք նրան, Անդրեյ Օսիպիչ,— հարցնում է նա բժշկին։

— Խոսեցինք։

— Եվ ի՞նչ։

— Կրկին նույնը։ Այ, ասում է, երբ առողջանամ, անպայման և կտակ կգրեմ, և մուրհակներ։

Էլ առավել ծանր լռություն է տիրում սենյակում։ Աղջիկները սեղանից վերցնում են կանվայի ձեռագործներն ու նրանց ձեռները նկատելի ցնցումներով սկսում են գործել օղ-օղի ետևից։ Արինա Պետրովնան մի տեսակ անհուսալի հառաչում է, բժիշկը քայլում է սենյակում և սուլում է՝ գլուխկոնծի, գլուխ-կոնծի՜

— Դուք լավ ասեիք նրան։

— Դրանից էլ լա՞վ։ Սրիկա կլինես, ասում եմ, եթե դու որբերին չապահովես։ Այո, մամաշենկա, սխալվել եք դուք։ Եթե մի ամիս առաջ դուք ինձ կանչած լինեիք, ես և՛ արտածծում արած կլինեի, և՛ կտակի մասին հոգացած կլինեի... Իսկ հիմա բոլորը Իուդուշկային է հասնելու, օրինական ժառանգին... անպայման։

— Տատիկ, այդ ի՞նչ է լինելու,— համարյա արտասվալից գանգատվում է աղջիկներից մեծը։— Այս ի՞նչ է անում քեռին մեզ հետ։

— Չգիտեմ, սիրելիս, չգիտեմ։ Այ նույնիսկ իմ մասին

չգիտեմ։ Այսօր այստեղ եմ, իսկ վաղը արդեն չգիտեմ էլ թե ուր կլինեմ... Գուցե աստված այնպես կանի, որ մի ցախատան մեջ կգիշերեմ, գուցեև գյուղացու խրճիթում։

— Տեր աստված, ի՞նչ հիմարն է քեռին,— բացականչում է աղջիկներից կրտսերը։

— Իսկ դուք, երիտասարդ օրիորդ, լավ է ձեր լեզուն փակի տակ պահեիք,— նկատում է բժիշկը և, դիմելով Արինա Պետրովնային, ավելացնում է.— ինչու դուք ինքներդ, մամաշենկա, չեք փորձում համոզել նրան։

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Չի՛ ուզում։ Նույնիսկ ինձ տեսնե՛լ չի ուզում։ Նորերս գնացի մոտը. հրաժեշտ տալու՞ եք եկել ինձ, ինչ է, ասում է։

— Ես կարծում եմ, որ այդ բոլորը ավելի Ուլիտկան է... Նա է նրան ձեր դեմ լարում։

— Նա է, հենց նա է որ կա։ Եվ ամեն ինչ հայտնում է Պորֆիրկա-արյունարբուին։ Ասում են, որ նա ամբողջ օրը կառքը լծած է պահում, ի դեպ, թե որ եղբայրը մեռնելու լինի։ Եվ պատկերացրեք, այս օրերս Ուլիտկան նույնիսկ կարասինները, իրերը, ամանեղենը,— բոլորը ցուցակ է արել, իբրև թե չկորչելու համար։ Դրանով նա ուզում է մեզ գող դուրս բերել։

— Իսկ դուք նրան, գիտեք, զինվորական ձևով՝ գլուխկոնծի, գլուխկոնծի...

Սակայն բժիշկը դեռ չէր զարգացրել իր միտքը, որ շնչահեղձ ներս վազեց աղախինը և վախեցած ձայնով բացականչեց

— Բարինի մո՛տ։ Բարինը բժշկին է պահանջում։

* * *

Այս պատմվածքում հանդես եկող ընտանիքը մեզ արդեն ծանոթ է։ Պառավ տիրուհին ոչ այլ ոք է, քան եթե Արինա Պետրովնա Գոլովլյովան, Դուբրովինսկու կալվածքի մեռնող կալվածատերը նրա որդին է, Պավել Վլադիմիրիչը, վերջապես երկու աղջիկները՝ Աննինկան և Լյուբինկան, հանգուցյալ Աննա Վլադիմիրովնա Ուլանովայի դուստրերն են, նույն այն Աննա Վլադիմիրովնայի, որին Արինա Պետրովնան մի ժամա-

նակ «պատառ նետեց»։ Անցել էր ոչ ավել քան տասը տարի այն ժամանակից, երբ մենք տեսանք Նրանց, բայց գործող անձերի դրությունն այն աստիճան փոխվել էր, որ հետք անգամ չէր մնացել այն արհեստական կապերից, որոնց շնորհիվ գոլովլյովյան ընտանիքն իրենից ինչ-որ անառիկ ամրոց էր ներկայացնում։ Արինա Պետրովնայի անխոնջ ձեռներով կառուցված ընտանեկան ամրությունը փուլ էր եկել, բայց փուլ էր եկել այն աստիճան աննկատելի, որ Արինա Պետրովնան, չհասկանալով, թե ինչպես պատահեց այդ, ինքը դարձավ այդ խորտակման մասնակիցը և նույնիսկ ակնհայտնի շարժիչը, որի իսկական ոգին, հասկանալի է, Պորֆիշկա-արյունարբուն էր։

Արինա Պետրովնան, գոլովլյովյան կալվածքի անձնիշխան և ամբարիշտ տիրակալից կրտսեր որդու տանը դարձել էր մի համեստ ձրիակեր, պարապ ձրիակեր և տնտեսական կարգադրությունների մեջ ոչ մի ձայն չունեցող։ Նրա գլուխը կախ էր ընկել, մեջքը կորացել էր, աչքերը հանգել էին, քայլքը ակնհայտնի ալարկոտ էր դարձել, շարժումների բուռն բնույթը կորել էր։ Անգործությունից, ծերությունն օրերին ձեռագործ էր սովորել, սակայն դա էլ հաջող չէր գնում, որովհետև նրա միտքը մշտապես սավառնում էր ուր որ — ո՞ւր, ինքն էլ միշտ չէր, որ կարողանում էր որոշել, բայց, համենայն դեպս, ձեռագործի շյուղերի շուրջը չէր։ Նստում է, գործում է մի քանի րոպե — և հանկարծ ձեռներն իրենք իրենց ցած են կախվում, գլուխը ետ է ընկնում բազկաթոռի մեջքին, ու սկսում է նա վերհիշել... Վերհիշում է, վերհիշում է, մինչև ծերունական նիրհն է պարուրում նրա ողջ պառավական էությունը։ Կամ վեր է կենում ու սկսում է թափառել սենյակներում և շարունակ ինչ-որ բան է որոնում, այս ու այն տեղ է նայում, նման այն կնոջը, որն իր ամբողջ կյանքում ձեռքին բանալիներ է ունեցել և չի հասկանում, թե ուր և ինչպես է կորցրել իր բանալիները։

Առաջին հարվածն Արինա Պետրովնայի տիրակալությանն հասավ ոչ այնչափ ճորտատիրական իրավունքի վերացումով, որչափ այն նախապատրաստություններով, որոնք նախորդեցին այդ վերացմանը։ Սկզբում հասարակ լուրերը, հետո նահանգական կոմիտեները, հետո խմբագրական հանձնաժողովները[26] — այդ բոլորն ուժասպառ էր անում, խառնաշփոթություն էր առաջ բերում։ Արինա Պետրովնայի առանց այն էլ հարուստ ստեղծագործական երևակայությունն անհաշիվ հիմար բաներ էր պատկերացնում իրեն։ Մեկ հանկարծ հարց էր ծագում՝ Ագաշկային ես ի՞նչ անունով եմ կանչելու։ Երևի Ագաֆյուշկա... բայց գուցեև պետք է Ագաֆյա Ֆեոդորովնա անվանեմ։ Մերթ պատկերանում էր՝ քայլում է ինքը դատարկ տանը, իսկ սպասավորներն հավաքված իրենց սենյակում, խժռում են։ Խժռելուց ձանձրանում են, սեղանի տակն են նետում։ Մերթ թվում էր, որ ինքը նկուղ է գնում, իսկ Յուլկան ու Ֆյոշկան այնտեղ այնպե՞ս են ուտում, այնպե՞ս են ուտում։ Ուզեց կշտամբել նրանց, բայց խոսքը կոկորդում մնաց։ «Ինչպե՞ս կարող ես դու նրանց բան ասել, հիմա նրանք ազատ են, նրանց համար, երևի, դատ ու դատաստան էլ չկա»։

Որչափ էլ չնչին են նման հիմարությունները, սակայն դրանցից կամաց-կամաց ամբողջ մի ֆանտաստիկ իրականություն է ստեղծվում, որը մարդու ամբողջովին կլանում է իր մեջ և բոլորովին չլատում է նրա գործունեությունը։ Արինա Պետրովնան մի տեսակ հանկարծ ձեռքից բաց թողեց կառավարման սանձերը և երկու տարի արածը միայն այն էր, որ առավոտից մինչև երեկո բացականչում էր.

— Գոնե շո՛ւտ վերջանար, կամ այս կողմ, կամ այն կողմ, թե չէ՝ առաջին կոչ, երկրորդ կոչ,— ոչ այս է, ոչ այն է։

Հենց այդ ժամանակ, կոմիտեների քայքայման ժամանակ էլ մեռավ Վլադիմիր Միխայլիչը։ Մեռավ խազաղված, հանգարտված, հրաժարված Բարկովից և նրա բոլոր գործերից։ Նրա վերջին խոսքերն էին.

— Շնորհակալ եմ աստծուց, որ չթողեց ինձ ճորտերի հետ համահավասար իրեն ներկայանալ։

Այդ խոսքերը խոբապես տպավորվեցին Արինա Պետրովնայի զգայուն հոգում և ամուսնու մահը, ապագայի ուրվապատկերների հետ միասին, ինչ-որ անհուսալի երանգավորում տվեցին գոլովլյովյան ամբողջ առօրյային։ Կարծես

հին գոլովլյովյան տունը և բոլոր ապրողներն այնտեղ — բոլորը միանգամից պատրաստվեցին մեռնել։

Պորֆիրի Վլադիմիրիչը Արինա Պետրովնայի նամակներում արտահայտված մի քանի գանգատներից զարմանալի նրբազգացությամբ գուշակեց նրա մտքին տիրապետած խառնաշփոթությունը։ Արինա Պետրովնան իր նամակներում այլևս չէր կշտամբում կամ ուսուցչաբար խրատներ չէր կարդում, այլ ավելի շուտ ապավինում էր աստվածային օգնությանը, «որը ներկայիս թեթնամիտ ժամանակներում ստրուկներին անգամ չէր լքում, ուր մնաց նրանց, ովքեր իրենց ունևորության պատճառով եկեղեցու ամենահուսալի հենարանն ու զարդն էին հանդիսանում»։ Իուդուշկան բնազդով հասկացավ, որ եթե մամենկան սկսում է ապավինել աստծուն, ապա այդ նշանակում է, որ նրա գոյության մեջ ինչ-որ թերություն, ինչ-որ պակասություն է թաքնված։ Եվ նա օգտվեց այդ թերությունից իրեն հատուկ խորամանկ ճարպկությամբ։

Էմանսիպացիայի գործն[27] համարյա վերջանալու ժամանակ նա միանգամայն անսպասելի այցելեց Գոլովլյովո և Արինա Պետրովնային գտավ հուսալքված, համարյա տանջված։

— Ի՞նչ կա, ինչպե՞ս է, Պետերբուրգում ի՞նչ են ասում,— եղավ նրա առաջին հարցը, փոխադարձ ողջույններից հետո։

Պորֆիշան խոնարհել էր հայացքն ու նստել էր լուռ։

— Չէ, դու մտիր իմ դրության մեջ,— շարունակեց Արինա Պետրովնան, որդու լռությունից ըմբռնելով, որ լավ բան սպասել չի կարելի։— Աղախնանոցում միայն երեսուն հոգի զզվելիներ կան, ես ինչպե՞ս վարվեմ նրանց հետ։ Եթե նրանք իմ խնամքին են մնալու, ես ինչո՞վ պիտի կերակրեմ նրանց։ Հիմա ես և՛ կաղամբ ունեմ, և՛ գետնախնձոր, և՛ հաց. ամեն ինչ էլ լիուլի կա, դե ուրեմն և կամաց-կամաց ապրում ենք։ Գետնախնձոր չի լինում, պատվիրում ես կաղամբ եփել. կաղամբ չկա՝ վարունգով ենք կառավարվում։ Իսկ այն ժամանակ չէ՞ որ ամեն բանի համար ես ինքս պետք է շուկա վազ տամ, ամեն բանի փող պիտի տամ, պիտի առնեմ, մատուցեմ,— այդ ահագին բազմությունը ես ինչպե՞ս կշտացնեմ։

Պորֆիշան նայում էր սիրելի բարեկամ մամենկայի աչքերին և դառնորեն ժպտում էր ի նշան կարեկցության։

— Իսկ եթե նրանց բաց թողնելու լինես, թե՝ վազ տվեք ձեզ համար, սիրելիներս, աչքերդ չորս արած,— դե, արդեն չեմ իմանում։ Չե՛մ իմանում, չե՛մ իմանում, չե՛մ իմանում, ինչ դուրս կգա դրանից։

Պորֆիշան քմծիծաղեց, ասես իրեն էլ արդեն չափազանց ծիծաղելի թվաց, թե՝ «ինչ դուրս կգա դրանից»։

— Չէ, դու մի ծիծաղիր, բարեկամս, այդ գործն այնքան լուրջ է, այնքան լուրջ է, որ գուցե աստված նրանց արդեն մի քիչ խելք ավելացնի, այն ժամանակ դե... Հենց թեկուզ իմ մասին կասեմ. չէ՞ որ ես էլ կրծոտանք չեմ, այսպես թե այնպես ե՛ս էլ պիտի ապրե՞մ թե չէ։ Ինչպե՞ս ենք անելու։ Մենք ի՞նչ տեսակ դաստիարակություն ենք ստացել։ Պար գալ, երգեր երգել, հյուրեր ընդունել,— ի՞նչ կարող եմ ես անել առանց իմ զզվելիների։ Ո՛չ տալ, ո՛չ առնել, ո՛չ ինձ համար ճաշ եփել,— չէ՛ որ ես, բարեկամս, ոչ մի գործ անել չեմ կարող։

— Աստված ողորմա՞ծ է, մամենկա։

— Ողորմած էր, բարեկամս, իսկ հիմա, երևում է,— ավա՜ղ։ Ողորմած է, ողորմած, բայց երևում է, նույնպես հաշվով է. մենք որ լավ էինք, երկնային թագավորն էլ բարեհաճ էր դեպի մեզ, մենք որ վատացանք,— դե ուրեմն զայրանալու բան չունենք։ Ես արդեն ինչ եմ մտածում՝ չթողնե՞մ արդյոք ամեն ինչ իմ կամքով։ Իսկապես։ Պապենկայի գերեզմանի մոտ մի տնակ շինեմ ինձ համար ու ապրեմ, օրս մի կերպ անցկացնեմ։

Պորֆիրի Վլադիմիրիչն ականջները սրեց. նրա շրթունքներին թուք երևաց։

— Իսկ կալվածքներն ո՞վ կկառավարի,— առարկեց նա զգուշությամբ, կարծես կարթ գցելով։

— Ներող եղեք, ինքներդ էլ կկառավարեք։ Փա՜ռք աստծո, կուտակել եմ։ Բեռը հո միշտ ես չեմ քաշելու...

Արինա Պետրովնան հանկարծ կարծես սայթաքեց ու բարձրացրեց գլուխը։ Նրա աչքին ընկավ Իուդուշկայի ղնչըլ-

տացող, փայնքոտ, աչես ամբողջովին յուղով ծածկված. ինչ-որ գիշատիչ ներքին փայլով տոգորված դեմքը։

— Դու չլինի՞ ինձ արդեն պատրաստվում ես թաղել,— շոր նկատեց նա։— Շուտ չի՞, սիրելիս։ Մի՛ սխալվիր։

Այդպիսով առաջին անգամ գործը ոչնչով վերջացավ։ Բայց կան խոսակցություններ, որոնք մեկ անգամ սկսվելով, այլևս չեն դադարում։ Մի քանի ժամից Արինա Պետրովնան նորից վերադարձավ ընդհատված զրույցին։

— Կգնամ Սերգի-Տրոիցայի վանքը,— երազում էր նա,— կբաժանեմ կալվածքը, ավանում տնակ կգնեմ ու կապրե՞մ ինձ համար։

Բայց Պորֆիրի Վլադիմիրիչը, քիչ առաջվա փորձից խրատված, այս անգամ լուռ մնաց։

— Անցյալ տարի, հանգուցյալ պապենկան երբ դեռ ողջ էր,— շարունակում էր երազել Արինա Պետրովնան,— նստած եմ ես իմ ննջարանում մենակ ու հանկարծ լսում եմ, կարծես մեկը շշնջում է ինձ՝ գնա՛ հրաշագործի մոտ, գնա՛ հրաշագործի, մոտ, գնա՛ հրաշագործի մոտ... այսպես երեք անգամ։ Ես այսպես, իմանում ես, շուռ եկա՝ ոչ ոք չկա։ Սակայն միտք եմ անում՝ չէ՞ որ սա հայտնություն էր ինձ։ Դե ինչ, ասում եմ ես, եթե իմ հավատը հաճելի է աստծուն, ես պատրաստ եմ։ Եվ հենց նոր էի ասել ես այդ, որ հանկարծ սենյակում այնպիսի անուշահոտություն, այնպիսի՞ անուշահոտություն լցվեց.... Հասկանալի է, իսկույն կարգադրեցի կառքը լծել և երեկոյան արդեն ճանապարհին էի։

Արինա Պետրովնայի աչքերին նույնիսկ արտասուք երևաց։ Իուդուշկան օգտվեց դրանից, որպեսզի համբուրի մամենկայի ձեռքն, ըստ որում իրեն թույլ տվեց նույնիսկ թեթևակի գրկել նրան։

— Այ հիմա դուք խելացի եք,— ասաց նա։— Ախ, լավ է, սիրելիդ իմ, ով աստծու հետ հաշտ է ապրում։ Նա աստծուն է աղոթում, և աստված նրան է օգնում։ Այդպես աՀա, սիրելի բարեկամ մամենկա։

— Սպասիր, ես դեռ բոլորը չեմ վերջացրել։ Մյուս օրը երեկոյան հասնում եմ ավան և ուղղակի՝ սրբի մոտ։ Իսկ այնտեղ երեկոյան ժամերգություն է՝ երգում են, մոմեր են

վառվում, բուրվառներից անուշ բույր է բարձրանում, և չգիտեմ որտեղ եմ գտնվում ես, երկրի վրա, թե երկնքում։ Ժամերգությունից հետո գնացի Իոնա վարդապետի մոտ և ասում եմ՝ ձերդ գերապատվություն, այսօր ինչ-որ շատ լավ է ձեր տաճարում։ Իսկ նա ինձ՝ «իհարկե, չէ որ ժամերգության ժամանակ հայր Ավվակումին տեսիլք երևաց։ Հենց նոր է ձեռքը բարձրացնում աղոթք կարդալու, տեսնում է գմբեթում լույս է երևում, և աղավնին իրեն է նայում»։ Ահա այդ ժամանակից ես որոշել եմ, ինչ էլ որ լինի, կյանքիս վերջին օրերը Սերգի-Տրոիցայի տաճարի մոտ պիտի ապրեմ։

— Իսկ մեր մասին ո՞վ հոգ կտանի։ Ձեր երեխաների համար ո՞վ նեղություն կկրի։ Ա՜խ, մամենկա, մամենկա։

— Դե փոքր չեք, ինքներդ ձեր մասին կհոգաք։ Իսկ ես... Աննուշկայի որբերի հետ կգնամ հրաշագործի մոտ և կապրեմ նրա թևի տակ։ Գուցե որբերից մեկնումեկի մեջ ցանկություն առաջանա աստծուն ծառայել, այդ դեպքում խոտկովը կողքներիս է։ Տնակ կառնեմ ինձ համար, բանջարանոց կցանեմ, կաղամբ, գետնախնձոր — ամեն ինչ կունենամ առատ։

Մի քանի օր շարունակ ընթանում էր այս դատարկ խոսակցությունը. մի քանի անգամ Արինա Պետրովնան ամենահամարձակ ենթադրություններ էր անում, հետ էր վերցնում ու նորից էր անում, բայց վերջապես գործը հասցրեց այն կետին, որ այլևս նահանջել չէր կարելի։ Իուդուշկայի այցելությունից հազիվ կես տարի անց գործերի դրությունը հետևյալն էր՝ Արինա Պետրովնան ոչ Տրոիցա մեկնեց, ոչ էլ ամուսնու գերեզմանի մոտի տնակը փոխադրվեց, այլ կալվածքը բաժանեց, իրեն պահելով միայն կապիտալը։ Ըստ որում, Պորֆիրի Վլադիմիրիչին տվեց լավ մասը, իսկ Պավել Վլադիմիրիչին՝ վատ մասը։

***

Արինա Պետրովնան առաջվա պես մնաց Գոլովլյովոյում, ըստ որում, հասկանալի է, բանը առանց ընտանեկան կոմեդիայի չվերջացավ։ Իուդուշկան արտասուք թափեց և աղերսեց սիրելի բարեկամ մամենկային կառավարել իր կալվածքը։

քը լիակատար իրավունքով, ստանալ եկամուտը և ծախսել իր հայեցողությամբ, «իսկ ինչ որ դուք, սիրելիս, եկամուտից կհատկացնեք ինձ, ես ամեն ինչից, նույնիսկ քչից գոհ կլինեմ»։ Դրան հակառակ, Պավելը սառնորեն շնորհակալություն հայտնեց մորը («ասես կծել ուզեց»), անմիջապես հրաժարական տվեց («այդպես էլ, առանց մայրական օրհնության, հիմարի պես սանձը կտրեց») և բնակվեց Դուբրովինոյում։

Այդ ժամանակվանից սկսած Արինա Պետրովնայի վրա մի տեսակ մտքի խավարում իջավ։ Պորֆիշկա-արյունարբուի այն ներքին կերպարը, որը նա մի ժամանակ այնպիսի հազվադեպ խորաթափանցությամբ հասկացել էր, հանկարծ կարծես մըշուշով ծածկվեց։ Թվում էր, որ նա ոչինչ այլևս չի հասկանում, բացի այն, որ, չնայած կալվածքի բաժանվելուն և գյուղացիների ազատվելուն, նա առաջվա նման ապրում է Գոլովլյովոյում և առաջվա նման ոչ ոքի հաշվետու չէ։ Այդտեղ իսկ, կողքին ապրում է մյուս որդին, բայց ինչպիսի՜ տարբերություն։ Մինչ Պորֆիշան և՛ իրեն, և՛ ընտանիքը՝ ամեն ինչ մամենկայի հայեցողությանն է վստահել, Պավելը ոչ միայն երբեք ոչ մի բանի մասին նրա հետ խորհուրդ չի անում, այլև նույնիսկ հանդիպելիս մի տեսակ ատամների արանքից է խոսում։

Եվ որչափ շատ էր խավարում Արինա Պետրովնայի միտքը, այնչափ ավելի խանդով էր բորբոքվում մայրական սիրտը դեպի սիրալիր որդին։ Պորֆիրի Վլադիմիրիչը նրանից ոչինչ չէր խնդրում, մայրը ինքն էր ընդառաջում նրա ցանկություններին։ Կամաց-կամաց նա սկսեց պակասություններ գտնել գոլովլյովյան ագարակների պատկերում։ Այսինչ տեղ ուրիշի հողը խրվում էր ագարակի հողերի մեջ՝ լավ կլիներ այդ հողը գնել. այսինչ տեղ կարելի էր առանձին ագարակատուն շինել, խոտհարքը փոքր է, իսկ հենց կողքին ծախու խոտհարք կա,— ա՜խ, լավ խոտհարք է։ Արինա Պետրովնան հափշտակվում էր և՛ որպես մայր, և՛ որպես տնտեսուհի, որը ցանկանում է սիրալիր որդու առաջ ամբողջ փայլով հանդես բերել իր ընդունակությունները։ Բայց Պորֆիրի Վլադիմիրիչը կարծես անթափանց կեղևի մեջ էր փակվել։ Զուր էր Արինա

Պետրովնան գայթակղում նրան գնումներով, նրա բոլոր առաջարկներին՝ ձեռք բերելու այսինչ անտառակը կամ այսինչ խոտհարքը, նա անփոփոխ կրկնում էր. «Ես, սիրելի բարեկամ մամենկա, գոհ եմ և նրանով, ինչ որ դուք, ձեր ողորմածության շնորհիվ, տվել եք ինձ»։

Այդ պատասխանները միայն բորբոքում էին Արինա Պետրովնային։ Հրապուրվելով մի կողմից տնտեսական խնդիրներով, մյուս կողմից՝ բանավիճական նկատառումներով «սրիկա Պավլուշկայի» վերաբերմամբ, որն իր կողքին էր ապրում, սակայն ճանաչել անգամ չէր ուզում իրեն, նա կատարելապես կորցրեց Գոլովլյովոյի նկատմամբ իր ունեցած իրական հարաբերությունների պատկերացումը։ Ձեռք բերելու, առնելու նախկին տենդը նոր թափով տիրապետեց նրա ողջ էությունը, բայց գնում էր արդեն ոչ թե իր սեփական անձի համար, այլ սիրած որդու համար։ Գոլովլյովյան կալվածքը մեծանում էր, կլորանում ու ծաղկում։

Եվ ահա նույն այն ժամանակ, երբ Արինա Պետրովնայի կապիտալն այնքան էր նվազել, որ նրա տոկոսներով անկախ գոյություն պահպանել համարյա անհնարին էր, Իուդուշկան ամենահարգալից նամակի հետ միասին մի ամբողջ կապոց հաշվային ձևեր է ուղարկում, որոնք պիտի մոր համար ուղեցույց հանդիսանային ապագայում տարեկան հաշվետվությունը կազմելիս։ Այդտեղ, տնտեսության գլխավոր առարկաների հետ կային՝ մորի, հաղարջ, սունկեր և այլն։ Ամեն մի հոդվածի համար հատուկ հաշիվ կար մոտավորապես հետևյալ բովանդակությամբ.

Առ 18.. թիվը կար մորու թուփ 00
Դրանց ավելացավ նոր տնկած 00
Եղած թփերից հավաքված է . . . . . .00 փ. 00 ֆ. 00 մսխ.
Այդ քանակից՝
Դուք, սիրելի բարեկամ մամենկա, գործադրել եք
00 փ. 00 ֆ. 00 մսխ.
Գործադրված է նորին գերազանցություն
Պորֆիրի Վլադիմիրովիչ Գոլովլյովի տան
համար եփած մուրաբայի . . . . . .00 փ. 00 ֆ. 00 մսխ.
Ծրված է № տղային հեղաբարոյության համար 1 ֆ.

Մախված է հասարակ ժողովրդին՝ բերանց
քաղցրացնելու համար . . . . . .00 փ. 00 ֆ. 00 մսխ.
Փտել է գնորդներ չգնելու, այլև ուրիշ
պատճառներով . . . . . .00 փ. 00 ֆ. 00 մսխ.
Եվ այլն, և այլն։

Սանոթություն. Հաշվետու տարվա բերքը անցյալ տարվա համեմատությամբ պակաս լինելու դեպքում պետք է այստեղ բացատրվի դրա պատճառները, ինչպես՝ երաշտ, անձրևներ, կարկուտ և այլն։

Արինա Պետրովնան զարմանքից շշմեց։ Նախ, նրան ապշեցրեց Իուդուշկայի ժլատությունը. նա երբեք լսած էլ չէր, որ հաղարջը Գոլովլյովոյում կարող է հաշվետվության նյութ դառնալ, իսկ նա, ըստ երևույթին, ամենից ավելի հենց դրա վրա էր ծանրանում. երկրորդ՝ նա շատ լավ հասկացավ, որ բոլոր այդ ձևերը ոչ այլ ինչ են, եթե ոչ նրա ոտ ու ձեռը կապող սահմանադրություն։

Վերջացավ նրանով, որ երկարատև բանավիճային գրագրությունից հետո Արինա Պետրովնան, վիրավորված ու զայրացած, փոխադրվեց Դուբրովինո, իսկ դրանից հետո Պորֆիրի Վլադիմիրիչը հրաժարական տվեց ու բնակվեց Գոլովլյովոյում։

Այդ ժամանակվանից պառավի համար սկսվեցին հարկադրական հանգստի նվիրված մի շարք պղտոր օրեր։ Պավել Վլադիմիրիչը, որպես վարմունքից զուրկ մարդ, առանձնապես բծախնդիր էր մոր նկատմամբ։ Նա բավական տանելի ընդունեց նրան, այսինքն պարտավորվեց կերակրել ու խնամել նրան և որբ ազգականուհիներին, բայց երկու պայմանով՝ նախ, չգնալ իր բնակված վերնահարկը և, երկրորդ, չմիջամտել տնտեսական կարգադրություններին։ Վերջին պայմանը առանձնապես հուզմունք էր պատճառում Արինա Պետրովնային։ Պավել Վլադիմիրիչի տանը ամեն ինչ կառավարում էին՝ նախ և առաջ Ուլիտուշկա տնտեսուհին՝ մի նենգ կին, որը բռնվել էր արյունարբու Պորֆիշկայի հետ գրագրություն ունենալու մեջ, և, երկրորդ, պապենկայի նախկին սենեկապան Կիրյուշկան, որը ոչինչ չէր հասկանում դաշտավարությունից և ամեն օր Պավել Վլադիմիրիչին ջծնական բնույթի խրատներ

էր կարդում։ Երկուսն էլ անխիղճ գողանում էին։ Քանի՞-քանի՞ անգամ ցավել էր Արինա Պետրովնայի սիրտը տանը թագավորող թալանը տեսնելիս։ Քանի՞ անգամ ուզեցել էր նախազգուշացնել, բաց անել որդու աչքերը թեյի, շաքարի, յուղի նկատմամբ։ Դրանք գործադրվում էին ահագին քանակությամբ, և շատ անգամ էր Ուլիտուշկան, ամենևին չքաշվելով պառավ տիրուհու ներկայությունից, նույնիսկ նրա աչքի առաջ բուռերով շաքար թաքցնում գրպանում։ Արինա Պետրովնան տեսնում էր այդ բոլորը և պետք է լուռ վկա մնար այդ թալանին։ Որովհետև հազիվ էր նա բերանը բաց անում որևէ դիտողություն անելու, որ Պավել Վլադիմիրիչն անմիջապես ընդմիջում էր նրան.

— Մամենկա,— ասում էր նա,— տանը պետք է մեկը կարգադրություններ անի։ Այդ ես չեմ ասում, բոլորն են այդպես վարվում։ Ես իմանում եմ, որ իմ կարգադրությունները հիմար են, բայց դե թող և հիմար լինեն։ Իսկ ձեր կարգադրությունները խելացի են,— դե թող և խելացի լինեն։ Խելոք եք դուք, նույնիսկ չափազանց խելոք եք, բայց Իուդուշկան ձեզ, այնուամենայնիվ, առանց անկյունի թողեց։

Ի լրումն բոլորի, Արինա Պետրովնան սոսկալի հայտնություն արեց՝ Պավել Վլադիմիրիչը խմում էր։ Այդ մոլությունը նրա մեջ արմատացավ գաղտագողի, գյուղական մենակության շնորհիվ և վերջապես այն աստիճան զարգացավ, որ պետք է անխուսափելի վախճանի հասցներ։ Սկզբնական շրջանում, երբ մայրը բնակվեց տանը, նա դեռ կարծես ամաչում էր, բավական հաճախ ցած էր իջնում իր հարկից ու խոսում էր մոր հետ։ Նկատելով ինչպես փոթ է ընկնում նրա լեզուն, Արինա Պետրովնան երկար ժամանակ միտք էր անում, որ դա հիմարությունից է առաջանում։ Նա չէր սիրում, երբ որդին գալիս էր «խոսելու», և այդ զրույցներն իր համար մեծ ճնշում էր համարում։ Պավել Վլադիմիրիչն, իսկապես ասած, մշտապես և մի տեսակ անհեթեթ տրտնջում էր։ Մեկ ամբողջ շաբաթներով անձրև չի գալիս, մեկ հանկարծ այնպես է թափվում, որ կարծես շղթան կտրած լինի. մեկ բզեզն է ուժասպառ արել՝ այգու բոլոր ծառերը կրծել. մեկ խլուրդ է երևացել՝ բոլոր մարգագետինները փորփրել։ Այդ բոլորը տրտնջալու

անսպառ աղբյուր էր հանդիսանում։ Երբեմն իջնում է իր հարկաբաժնից, նստում է մոր դիմաց ու սկսում.

— Չորս կողմն ամպերով է ծածկվել։ Գոլովլյովոն շա՞տ է հեռու։ Արյունարբուի մոտ երեկ վարար անձրև էր, իսկ մեզ մոտ չկա՛ ու չկա՛։ Լողում են ամպերը, պտտվում են չորս կողմը,— գոնե կաթիլները մեր հողամասում թափվեին։

Կամ.

— Ինչպե՞ս է թափվում տեղատարափ։ Վուշը նոր է ըսկրսել ծաղկել, իսկ անձրևը թափվում է ու թափվում։ Խոտի կեսը արդեն փտել է, իսկ նա թրջում է ու թրջում։ Գոլովլյովոն շա՞տ է հեռու,— արյունարբուն վաղուց խոտը դաշտից կրել է, իսկ մենք նստել ենք ու նստել։ Ձմեռը ստիպված ենք անասուններին փտած խոտով կերակրել։

Լուռ է մնում, լուռ է մնում Արինա Պետրովնան, լսելով հիմար գանգատները, բայց երբեմն չի համբերում, ասում է.

— Ձեռներդ ծալած որ նստես, լավ կանես։

Հազիվ է նա այդ ասում, որ Պավել Վլադիմիրիչը կատաղում է.

— Իսկ ի՞նչ կհրամայեիք դուք ինձ անել, անձրևը Գոլովլյովո՞ փոխադրել, ինչ է։

— Ոչ թե անձրևը, այլ ընդհանրապես...

— Չէ՛, դուք ասացեք, ձեր կարծիքով ես ի՞նչ պիտի անեմ։ Ոչ թե «ընդհանրապես», այլ ուղղակի... Կլիմա՞ն պիտի ես փոխեմ ձեզ համար, ինչ է։ Այ Գոլովլյովոյում անձրև էր հարկավոր,— անձրև եկավ, անձրև հարկավոր չի — չկա՛։ Նշանակում է և ամեն ինչ բուսնում է այնտեղ... Իսկ մեզանում ամեն բան հակառակն է։ Այ տեսնենք, թե ինչ կանեք դուք, երբ ուտելու բան չի լինի։

— Նշանակում է, աստծու կամքն այդպես է...

— Դե դուք այդպես էլ արեք, որ աստծու կամքն է։ Թե չէ՝ «ընդհանրապե՞ս»— ահա թե ինչ բացատրություն եք գըտել։

Երբեմն բանն այնտեղ էր հասնում, որ նա նույնիսկ սեփականությունից ճնշված էր զգում իրեն։

— Եվ ինչո՞ւ Դուբրովինոն ինձ բաժին ընկավ,— գանգատվում էր նա։— Ի՞նչ կա նրանում։

— Այդ ինչո՞վ է Դուբրովինոն վատ։ Հողը լավ է, ամեն ինչ առատ... ի՞նչ փչեց հանկարծ գլխիդ։

— Այն փչեց, որ ներկա ժամանակ ամենևին սեփականություն հարկավոր չի ունենալ։ Փողը — ուրիշ է։ Փողը վերցրիր, դրեցիր գրպանդ ու ծլկեցիր։ Իսկ այս անշարժ գույքը...

— Այդ ի՞նչ առանձնահատուկ ժամանակ է, որ արդեն սեփականություն էլ ունենալ չի կարելի։

— Այնպիսի ժամանակ է, որ դուք ահա լրագրեր չեք կարդում, իսկ ես կարդում եմ։ Հիմա փաստաբաններ են լույս ընկել ամեն տեղ — դե և հասկացեք։ Կիմանա փաստաբանը, որ դու սեփականություն ունես ու կսկսի քեզ գլխացավանք տալ։

— Այդ ինչպե՞ս պիտի նա քեզ գլխացավանք տա, քանի որ դու իսկական փաստաթղթեր ունես։

— Հենց այդպես կսկսի քարշ տալ ու քարշ տալ։ Կամ թե հենց Պորֆիշկա-արյունարբուն. փաստաբան կվարձի, նա էլ կսկսի քեզ կոչնագիր կոչնագրի ետևից ուղարկել։

— Ի՞նչ ես ասում, անդատ ու անդատաստան երկիր հո չի։

— Հենց նրա համար կուղարկի, որ անդատ ու անդատաստան չի։ Թե որ դատ ու դատաստան չունենար, առանց կոչնագրի էլ կխլեին, իսկ հիմա կոչնագրով է։ Այ հրեն իմ ընկերոջ, Գորլոպյատովի քեռին մեռավ, իսկ նա հիմարաբար գնաց ու ժառանգությանը տեր կանգնեց։ Ժառանգությունը դուրս եկավ գրոշանոց, իսկ պարտքերը՝ հարյուր հազար, պարտամուրհակներ, բոլորն էլ կեղծ։ Ահա երեք տարի է անընդհատ դատում են նրան. առաջ քեռու կալվածքը խլեցին, հետո արդեն իր սեփականը աճուրդով ծախեցին։ Ահա՞ և քեզ սեփականություն։

— Մի՞թե այդպիսի օրենք կա։

— Թե որ օրենք չլիներ, չէին ծախի։ Նշանակում է, ամեն տեսակ օրենք կա։ Ով որ խղճմտանք չունի, նրա համար բոլոր օրենքները բաց են, իսկ ով որ խղճմտանք ունի, նրա համար օրենքը փակ է։ Արի ու գրքերում գտիր։

Արինա Պետրովնան այդ վեճերում միշտ զիջում էր։ Շատ անգամ նա քիչ էր մնում աղաղակի՝ «Կորի՛ր աչքիցս, սրիկա»,

բայց միտք էր անում, միտք էր անում ու լուռ էր մնում։ Միայն ինքն իրեն էր տրտնջում՝ «Ե՞ր աստված, և ո՞ւմ են քաշել այս ճիվաղները։ Մեկն արյունարբու է, մյուսը մի տեսակ ապուշ։ Ո՞ւմ համար կուտակեցի ես, գիշերներն անքուն մնացի, պատառը խնայեցի... ո՞ւմ համար»։

Եվ որչափ շատ էր տիրապետում Պավել Վլադիմիրիչին հարբեցողությունը, այնչափ ֆանտաստիկ և, այսպես ասած, անակնկալ էին դառնում նրա զրույցները։ Վերջապես Արինա Պետրովնան սկսեց նկատել, որ այդտեղ ինչ-որ վատ բանի հոտ է փչում։ Օրինակ, առավոտվանից սեղանատան պահարանում մի լիքը գրաֆին օղի է դրվում, իսկ ճաշին նրա մեջ արդեն ոչ մի կաթիլ չի մնում։ Կամ նստում է ինքը հյուրասենյակում և սեղանատնից ինչ-որ խորհրդավոր ճռճռոցներ է լսում նվիրական պահարանի մոտ. ձայն է տալիս՝ «ո՞վ է այնտեղ,— և լսում է ինչ-որ մեկի քայլերը, որոնք շտապ, բայց զգուշությամբ գնում են վերնահարկի կողմը։

— Սիրելիս, չլինի՞ նա խմում է,— հարցրեց նա մեկ անգամ Ուլիտուշկային։

— Զբաղվում են,— պատասխանեց Ուլիտուշկան, խայթոց ժպտալով։

Համոզվելով, որ մայրն հասկացել է իրեն, Պավել Վլադիմիրիչը վերջնականապես դադարեց քաշվելուց։ Մի գեղեցիկ առավոտ պահարանը բոլորովին անհայտացավ սեղանատնից, և Արինա Պետրովնային՝ ի՞նչ եզավ պահարանը, Ուլիտուշկան որոտաձայնեց.

— Հրամայեցին փոխադրել վերնահարկ. այնտեղ ազատ կարող են զբաղվել։

Իսկապես, վերնահարկում գրաֆինները փոխարինում էին մեկը մյուսին զարմանալի արագությամբ։ Առանձնանալով ինքն իր հետ, Պավել Վլադիմիրիչն ատեց կենդանի մարդկանց շրջանը և իր համար հատուկ, ֆանտաստիկ իրականություն ստեղծեց։ Դա մի ամբողջ անմիտ-հերոսական ռոման էր փոխակերպումներով, անհայտացումներով, հանկարծակի հարստացումներով, ռոման, որի գլխավոր հերոսներն էին՝ նա ինքը և արյունարբու Պորֆիշկան։ Նա ինքը լիովին չէր գիտակցում, թե որչափ խորն էր իր մեջ ատելությունը

դեպի Պորֆիշկան։ Նա ատում էր նրան իր բոլոր մտածումներով, ողջ էությամբ, ատում էր անդադար, ամեն րոպե։ Կարծես կենդանի, դես ու դեն էր նետվում նրա առաջ այդ դարշելի կերպարը, իսկ ականջներում հնչում էր Իուդուշկայի լալագին-կեղծավոր շաղակրատանքը, շաղակրատանք, որի մեջ հնչում էր ինչ-որ չոր, համարյա վերացական զայրույթ դեպի այն ամենը, ինչ որ չէր ենթարկվում կեղծավորության ավանդության ստեղծած կոդեքսին։ Պավել Վլադիմիրիչը խմում էր ու վերհիշում։ Վերհիշում էր բոլոր վիրավորանքներն ու ստորացումները, որպիսիք հարկադրված էր կրել շնորհիվ այն բանի, որ Իուդուշկան տան գլխավորը լինելու հավակնություն ուներ։ Առանձնապես հիշում էր կալվածքի բաժանումը, հաշվի էր առնում յուրաքանչյուր կոպեկը, համեմատում էր հողի ամեն մի կտորը,— և ատում էր։ Գինուց բորբոքված երևակայության մեջ ամբողջ դրամաներ էին ստեղծվում, որոնց մեջ վրեժ էր լուծվում բոլոր զրկանքների համար և որոնց մեջ զրկանք հասցնողն արդեն ինքն էր և ոչ թե Իուդուշկան։ Մերթ նա իբրև թե երկու հարյուր հազար է տարել և եկել է հայտնելու այդ մասին Պորֆիշկային (ամբողջ մի տեսարան՝ խոսք ու զրույցով), որի դեմքը նախանձից նույնիսկ ծամածռվեց։ Մերթ իբրև թե մեռավ պապը (կրկին տեսարան՝ խոսք ու զրույցով, թեպետ ոչ մի պապ չկար էլ), իրեն մեկ միլիոն թողեց, իսկ Պորֆիշկա-արյունարբուին՝ ոչինչ։ Մերթ իբրև նա անտեսանելի դառնալու հնար է գտել և դրա շնորհիվ հնարավորություն է ստացել այնպիսի զզվելի բաներ անել Պորֆիշկային, որից նա սկսում է տնքալ։ Այդ զզվելիություններն հնարելու մեջ նա անսպառելի էր, և երկար ժամանակ անմիտ քրքիջն էր թեռում վերնահարկում, ի ուրախություն Ուլիտուշկայի, որն շտապում էր պատահածի մասին հաղորդել Պորֆիրի Վլադիմիրիչին։

Պավել Վլադիմիրիչն ատում էր Իուդուշկային և միաժամանակ վախենում էր նրանից։ Նա գիտեր, որ Իուդուշկայի աչքերից թավիշ թույն է թափվում, որ նրա լեզուն օձի պես սողում է հոգու մեջ և ջլատում է մարդու կամքը։ Ուստի նա վճռականորեն հրաժարվեց նրա հետ հանդիպելուց։ Արյունարբուն երբեմն ժամանում էր Դուբրովինո սիրելի քա-

բեկամ մամենկայի ձեռքը համբուրելու համար (նա մորը տանից դուրս էր արել, բայց հարգանքը չէր դադարեցրել),— այն ժամանակ Պավել Վլադիմիրիչը բանալիով փակում էր վերնահարկը և ամբողջ ժամանակ, քանի Իուդուշկան զրուցում էր մամենկայի հետ, նստում էր փակված։

Այդպիսով օրերն ընթանում էին օրերի ետևից, մինչև, վերջապես, Պավել Վլադիմիրիչը դեմ-հանդիման կանգնեց մահացու ախտին։

***

Բժիշկը «ձևի համար» գիշերեց և մյուս օրը վաղ առավոտյան մեկնեց քաղաք։ Դուբրովինոյից հեռանալիս նա ուղղակի ասաց, որ հիվանդին ապրելու մնացել է ոչ ավելի քան երկու օր և որ այժմ արդեն ուշ է մտածել ինչ-որ «կարգադրությունների» մասին, որովհետև նա իր ազգանունն անգամ կարգին ստորագրել չի կարող։

— Կստորագրի նա ձեզ համար «սարքովի» կտակ,— հետո դատարանի ձեռքից օձիք չեք կարող թափ տալ,— ավելացրեց նա։— Իուդուշկան թեպետև շատ է հարգում մամենկային, բայց կեղծիքի մասին, այնուամենայնիվ, գործ կսկսի, և եթե օրենքով մամաշային աքսորեն ոչ այնքան հեռավոր վայրերը, նա միայն մաղթանք անել կտա ճանապարհ գնացողի համար։

Արինա Պետրովնան ամբողջ առավոտ բթացած դրության մեջ էր գտնվում։ Փորձեց աղոթք անել, որպեսզի աստված որևէ միտք ներշնչի իրեն, սակայն աղոթք էլ չէր գալիս մտքին։ Նույնիսկ լեզուն մի տեսակ չէր ենթարկվում։ Սկսում էր՝ ողորմյա ինձ աստված ողորմությամբ fn, և հանկարծ, ինչն էլ չիմանալով ինչպես, անցնում էր «փրկյա ի սատանայե»-ին։ «Քավեսցե, քավեսցե»,— մեքենայորեն թոթովում է լեզուն, իսկ միտքը շարունակ թռչում է՝ մերթ վերնահարկն է նայում, մերթ նկուղն է իջնում («ինչքա՞ն բարիք կար աշնանը, բոլորը թալանել են»), մերթ սկսում է ինչ-որ հեռավոր-հեռավոր բաներ հիշել։ Ամեն ինչ մթնշող է, և այդ մթնշողում մարդիկ կան, շատ մարդ, և բոլորն էլ խլրտում են, աշխատում են,

կուտակում են։ Երանյալ է այր։։։ երանյալ է այր։։։ զի բուրվառ։։։ ուսուցյա։։։ ուսուցյա։։։ Բայց ահա լեզուն նույնպես կամաց-կամաց թուլացավ, աչքերը նայում են սրբապատկերներին և չեն տեսնում, բերանը լայն բացված է, ձեռները դարձված են փորին, և կանգնած է նա բոլորովին անշարժ, կարծես անզգայացել է։

Վերջապես նստեց ու լաց եղավ։ Արցունքները խամրած աչքերից շարունակաբար թափվում էին պառավական սմքած այտերով, կանգ առնելով խորշոմների ակոսներում ու կաթելով չթե հին բլուզի ճարպակալած օձիքին։ Դա ինչ-որ անհուսությամբ լի դառնություն էր և միաժամանակ անզոր ըմբոստություն։ Ե՛վ ծերությունը, և՛ ուժասպառությունը, և՛ դրության անօգնականությունը — բոլորը, թվում էր, նրան մահվան էր կոչում, որպես միակ հաշտեցնող վախճանի, բայց միաժամանակ միախառնվում էր նմանապես և անցյալն իր տիրակալությամբ, գոհունակությամբ ու ընդարձակությամբ, և անցյալի այդ հիշողություններն ամրապինդ կպչում էին նրան, ձգում էին նրան դեպի ցած, դեպի հողը։ «Մեռնեի՞»,— անցնում էր նրա գլխով, բայց մի ակնթարթից նույն այդ բառը փոխարինվում էր ուրիշ բառով՝ «Ապրեի՞»։ Նա չէր հիշում ոչ Իուդուշկային, ոչ մեռնող որդուն. նրանք երկուսն էլ կարծես գոյություն չունեին նրա համար։ Ոչ ոքի մասին նա չէր մտածում, ոչ ոքի վրա չէր զայրանում, ոչ ոքի չէր մեղադրում. նա նույնիսկ մոռացել էր, թե արդյոք կապիտալ ունի ինքը և բավարա՞ր է այդ կապիտալն իր ծերությունը ապահովելու համար։ Վիշտը, մահացու վիշտն էր պարուրել նրա ողջ էությունը։ Անտանելի՛ է, դա՛ռն է,— ահա միակ բացատրությունը, որ կարող էր տալ նա իր արտասուքներին։ Այդ արտասուքները հեռվից եկան. կաթիլ առ կաթիլ կուտակվել էին նրանք նույն այն րոպեից, երբ մեկնել էր նա Գոլովլյովոյից ու բնակվել Դուբրովինոյում։ Այն ամենին, որ մոտալուտ էր այժմ, նա արդեն նախապատրաստված էր, ամեն ինչ նա սպասում էր ու նախատեսել էր, բայց նրան երբեք այդպիսի պարզությամբ չէր պատկերացել, որ այդ սպասածն ու նախատեսածը պետք է վախճան ունենա։ Եվ ահա այժմ այդ վախճանը հասավ, վախճան, լի վշտով և հուսահա-

տական մենակությամբ։ Իր ամբողջ կյանքում նա ինչ-որ բան սարքել էր, ինչ-որ բանի համար տանջվել էր, բայց պարզվում է, որ տանջվել է ուրվականի համար։ Ամբողջ կյանքում «ընտանիք» բառը միշտ նրա լեզվին է եղել, հանուն ընտանիքի նա ոմանց դատապարտել է, ոմանց պարգևատրել. հանուն ընտանիքի նա զրկանքների է ենթարկել իրեն, տանջել է իրեն, այլանդակել է իր ամբողջ կյանքը — և հանկարծ դուրս է գալիս, որ ընտանիքն է հենց, որ նա չունի։

«Տե՜ր աստված, մի՞թե բոլորի համար էլ այսպես է»,— պտտվում էր նրա գլխում։

Նա նստած էր, գլուխը ձեռքին հենած և արտասվաթոր դեմքը դարձրած բարձրացող արևին, կարծես ասում էր նրան՝ ծագի՛ր։ Նա չէր տնքում ու չէր անիծում, այլ միայն խուլ հեծկլտում էր, ասես խեղդվելով արտասուքից։ Եվ միաժամանակ հոգին այրվում էր՝ «Չկա՛ ոչ ոք, չկա՛ ոչ ոք, չկա՛, չկա՛»։

Բայց ահա ցամաքեցին նաև արցունքները։ Դեմքը լվանալով, նա աննպատակ անցավ սեղանատուն, բայց այդտեղ աղջիկները դիմեցին նրան նոր գանգատներով, որոնք այս անգամ նրան առանձնապես ձանձրալի թվացին։

— Այս ի՞նչ է լինելու, տատիկ։ Մի՞թե մենք հենց այդպես էլ առանց ոչնչի ենք մնալու,—տրտնջում էր Աննինկան։

— Այդ ինչ հիմա՞րն է քեռին, — ձայնակցում էր նրան Լյուբինկան։

Կեսօրվա մոտ Արինա Պետրովնան վճռեց ներս մտնել մեռնող որդու մոտ։ Զգուշությամբ, հուշիկ քայլերով բարձրացավ աստիճաններով և խավարի մեջ շոշափելով գտավ սենյակները տանող դուռը։ Վերնահարկում մթնշող էր տիրում. լուսամուտները ծածկված էին կանաչագույն վարագույրներով, որոնց միջից հազիվ-հազ էր լույս անցնում. սենյակների վաղուց ի վեր չթարմացված մթնոլորտը ներծծված էր զանազան տեսակի բույրերի զզվելի խառնուրդով, որի մեջ մասնակցություն ունեին և՛ պտուղները, և՛ սպեղանիները, և՛ ձեթը, և՛ այն առանձնահատուկ զարշահոտությունները, որոնց ներկայությունն ուղղակի հիվանդության և մահվան մասին է խոսում. ընդամենը երկու սենյակ էր. առաջինում նստել էր Ուլիտուշկան և պտուղ էր մաքրում ու կատաղությամբ ճանճ էր քշում, որոնք աղմկալից պարսով պտտվում էին հաղարջի կույտերի վրա ու աներեսաբար նստում էին նրա քթին ու շրթունքներին։ Հարևան սենյակի կիսով չափ ծածկված դռնից անընդհատ լսվում էր շոր ու կարճ հազ, որ ժամանակ առ ժամանակ վերջանում էր խուխի դրժվարին արտաթորանքով։ Արինա Պետրովնան կանգնեց անվճռական դիրքով, նայելով խավարին և կարծես սպասելով, թե ինչ կանի Ուլիտուշկան իր գալու առթիվ։ Բայց Ուլիտուշկան նույնիսկ տեղից չշարժվեց, կարծես միանգամայն հավատացած էր, որ հիվանդի վրա ազդելու ամեն մի փորձ ապարդյուն կանցնի։ Միայն բարկացկոտ շարժում անցավ շուրթերով, և Արինա Պետրովնան լսեց շշուկով արտասանած՝ գրո՛ղ բառը։

— Դու, սիրելիս, ներքև գնայիր,— դարձավ Արինա Պետրովնան Ուլիտուշկային։

— Այդ էլ ի՞նչ նորություն է,—բարկացայտ ասաց վերջինս։

— Ես պետք է Պավել Վլադիմիրիչի հետ խոսեմ։ Գնա՛։

— Ներեցեք, տիրուհի, ես ինչպե՞ս կարող եմ նրան թողնել։ Իսկ եթե հանկարծ մի բան պատահի, ով կտա, ով կբռնի։

— Ի՞նչ է այդտեղ,— խուլ լսվեց ննջարանից։

— Հրամայիր, բարեկամս, Ուլիտային՝ գնա։ Ես խոսելիք ունեմ քեզ հետ։

Այս անգամ Արինա Պետրովնան այնպես հաստատակամ էր, որ հաղթող դուրս եկավ։ Նա խաչակնքեց ու մտավ սենյակ։ Հիվանդի անկողինը գտնվում էր ներքին պատի մոտ, լուսամուտներից հեռու։ Նա պառկել էր մեջքին, սպիտակ վերմակով ծածկված և համարյա անգիտակցաբար ծխում էր։ Չնայած ծխախոտի ծխին, ճանճերը կատաղաբար հարձակվում էին նրա վրա, այնպես որ նա մերթ այս, մերթ այն թևը տանում էր դեպի դեմքը։ Այն աստիճան անուժ էին այդ թևերը, զուրկ մկաններից, որ պարզ գծագրում էին թաթից մինչև ուսը համարյա հավասարապես բարակ ոսկորը։ Գլուխը մի տեսակ անհուսալի սեղմվել էր բարձին, դեմքը և ամբողջ մարմինը այրվում էին ջերմից։ Մեծ, կլոր աչքերը փոս էին ընկել և նայում էին վերացական, կարծես մի բան

որոնում էին. քիթը երկարել էր ու սրվել, բերանը կիսաբաց էր։ Նա չէր հազում, բայց այնպիսի ուժով էր շնչում, որ, թվում էր, ողջ կենսական ուժը կուտակված էր կրծքում։

— Այսօր ինչպե՞ս ես զգում քեզ,— հարցրեց Արինա Պետրովնան, նստելով բազկաթոռին, նրա ոտքերի մոտ։

— Ոչինչ... վաղը... այսինքն այսօր... բժիշկը ե՞րբ էր մեզ մոտ...

— Բժիշկն այսօր էր։

— Դե, նշանակում է, վաղը...

Հիվանդը անհանգիստ շարժվեց, կարծես աշխատելով հիշել բառը։

— Կարող ես վե՞ր կենալ,— հուշեց Արինա Պետրովնան։— Տա՛ աստված, բարեկամս, տա՛ աստված։

Երկուսով էլ լռեցին մի պահ։ Արինա Պետրովնան ինչ-որ բան էր ուզում ասել, բայց ասելու համար հարկավոր էր խոսակցել։ Ահա հենց այդ խոսակցելն էր, որը նա երբեք չէր կարողանում գտնել, երբ մեն-մենակ էր մնում Պավել Վլադիմիրիչի հետ։

— Իուդուշկան... ապրո՞ւմ է — հարցրեց վերջապես ինքը՝ հիվանդը։

— Նրան ի՞նչ է պատահել որ։ Ապրում է իր քեֆին։

— Երևի մտածում է՝ այ, Պավել եղբայրս կմեռնի և աստծու ողորմածությամբ կալվածքն ինձ կհասնի։

— Բոլորս էլ երբևիցե մեռնելու ենք և բոլորից հետո կալվածքները կանցնեն... օրինական ժառանգներին։

— Միայն ոչ արյունարբուին։ Շների՛ն կնետեմ, բայց ո՛չ նրան։

Սքանչելի առիթ էր. ինքը՝ Պավել Վլադիմիրիչը խոսեց այդ մասին։ Արինա Պետրովնան չհապաղեց օգտվել դրանից։

— Հարկավոր է մտածել այդ մասին, բարեկամս,— ասաց նա կարծես անցողակի, առանց որդուն նայելու և լույսի տակ դիտելով ձեռները, կարծես այդ բոպեին դրանք էին հանդիսանում նրա ուշադրության գլխավոր առարկան։

— Այդ ի՞նչ «այդ մասին» է։

— Այ թեկուզ այն մասին, եթե չես ուզում, որ քո կալվածքը եղբորդ մնա...

Հիվանդը լուռ էր։ Աչքերն էին միայն անբնական լայնանում և դեմքն ավելի ու ավելի շառագունում էր։

— Կարելի է, բարեկամս, հաշվի առնել և այն, որ դու որբ ազգականուհիներ ունես,— ի՞նչ կապիտալ ունեն նրանք։ Դե, մայրդ էլ նույնպես...— շարունակեց Արինա Պետրովնան։

— Բոլորը Իուդուշկայի՞ն տվեցիք։

— Ինչ էլ որ լինի... Գիտեմ, որ ինքս եմ մեղավոր... Դե այնքան էլ մեծ հանցանք չի... Մտածում էի նույնպես, թե որդի է... Դե դու էլ չպետք է հիշեցնես այդ մասին մորդ։

Լռություն։

— Մի բա՛ն ասա դ ոնՀ

— Իսկ դուք ե՞րբ եք պատրաստվում ինձ թաղել։

— Թաղել չենք մտածում, բայց և այնպես... Եվ ուրիշ քրիստոնյաները... Բոլորը չէ, որ իսկույն մեռնում են, բայց ընդհանրապես...

— Այդ է որ «ընդհանրապե՞ս»։ Դուք միշտ՝ «ընդհա՞նրապես»։ Կարծում եք, ես չե՞մ տեսնում։

— Ի՞նչ ես տեսնում դու, բարեկամս։

— Այն եմ տեսնում, որ դուք ինձ հիմարի տեղ եք դնում։ Դե, ասենք որ ես հիմար եմ, թո՛ղ հիմար լինեմ։ Ինչո՞ւ ես գալիս հիմարի մոտ։ Մի՛ եկեք։ Եվ մի՛ անհանգստացեք։

— Ես չեմ էլ անհանգստանում, այլ միայն ընդհանրապես... որ ամեն մարդու կյանք իր սահմանն ունի...

— Դե ուրեմն սպասեցեք։

Արինա Պետրովնան կախ գցեց գլուխը և մտածմունքների մեջ ընկավ։ Նա շատ լավ տեսնում էր, որ իր գործը վատ դրության մեջ է, բայց ապագայի անհուսալիությունն այն աստիճան տանջում էր նրան, որ նույնիսկ հետագա փորձերի ապարդյուն լինելու ակներևությունն անգամ չէր կարող համոզել նրան։

— Չգիտեմ ինչու ես դու ինձ ատում,— արտասանեց Արինա Պետրովնան վերջապես։

— Ամենևին... ես ձեզ... ամենևի՛ն։ Ես նույնիսկ շատ... Ներեցե՞ք, դուք մեզ այնպես եք առաջնորդել... Բոլորին հավասարապես...

Նա այդ ասաց բուռն, շնչասպառ լինելով. ձայնի մեջ հընչում էր ինչ-որ ջլատված և միաժամանակ հաղթական քրքիջ. աչքերում կայծեր երևացին. ուսերն ու ոտներն անհանգիստ յոգնեցին։

— Գուցե ես իրոք հանցավոր եմ որևէ բանով, այդ դեպքում նեբբիր արդեն, ի՛ սեր Քրիստոսի։

Արինա Պետրովնան վեր կացավ և գլուխ տվեց, ձեռքը մինչև գետին պարզելով։ Պավել Վլադիմիրիչը փակեց աչքերն ու պատասխան չտվեց։

— Դիցուք թե անշարժ կայքի վերաբերմամբ... Այդ ճիշտ է, որ քո ներկայիս վիճակում չի էլ կարելի մտածել, որ կարգադրություն անես... Պորֆիրին օրինական ժառանգն է, դե թող անշարժ կայքը նրան հասնի... Իսկ շարժակա՞նը, իսկ կապիտա՞լը ինչպես,— վճռեց առանց այլևայլության բացատրվել Արինա Պետրովնան։

Պավել Վլադիմիրիչը ցնցվեց, բայց լուռ մնաց։ Շատ հավանական է, որ «կապիտալ» բառը լսելով, նա ամենևին չանդրադարձավ Արինա Պետրովնայի դրդումներին, այլ ուղղակի միտք արեց այն մասին, որ դրսում ահա սեպտեմբերն է, հարկավոր է տոկոսները ստանալ... վաթսունյոթ հազար վեց հարյուրը հինգ անգամ բազմապատկած, հետո բաժանած երկուսի, որքա՞ն կանի դա։

— Դու երևի կարծում ես, որ ես քո մահն եմ ուզում, սխալվում ես, բարեկամս։ Միայն թե դու ապրեիր, իսկ ես, պառավս, ուրախ կլինեմ։ Ինձ ի՞նչ կա որ, ես քեզ մոտ և՛ տաք եմ ապրում, և՛ կուշտ եմ, և եթե նույնիսկ քաղցր բան եմ ուզում,— ամեն ինչ ունեմ։ Ես միայն այն մասին եմ ասում, որ քրիստոնյաներն այդպիսի սովորություն ունեն, որպեսզի հանդերձյալ կյանքի սպասումով...

Արինա Պետրովնան կանգ առավ, ասես համապատասխան բառ որոնելով։

—... իրենց մերձավորներին ապահովեն,— ավարտեց խոսքը, լուսամուտին նայելով։

Պավել Վլադիմիրիչը պառկել էր անշարժ և կամացուկ հազում էր, ոչ մի շարժումով ցույց չտալով, լսում է արդյոք, թե ոչ։ Ըստ երևույթին մոր ողբը ձանձրացրեց ներան։

— Կապիտալը կենդանության ժամանակ էլ կարելի է ձեռքից-ձեռք տալ,— ասաց Արինա Պետրովնան, ասես հարևանցի նետելով այդ ենթադրությունը ու նորից սկսեց ձեռները դիտել լույսի տակ։

Հիվանդը հազիվ նկատելի ցնցվեց, բայց Արինա Պետրովնան չնկատեց այդ ու շարունակեց.

— Կապիտալը, բարեկամս, օրենքով էլ թույլ է տրվում մեկից մյուսին տալ։ Որովհետև կապիտալը վաստակովի բան է, երեկ կար, այսօր չկա։ Եվ ոչ ոք դրա համար հաշիվ պահանջել չի կարող, ում ուզում եմ, նրան էլ տալիս եմ։

Պավել Վլադիմիրիչը հանկարծ շարախինդ ծիծաղեց։

— Երևի Պալոչկինի պատմությունը հիշեցիք,— թշշաց նա։— Նա էլ կապիտալը ձեռքից-ձեռք, կնոջը տվեց, իսկ կինը փախավ սիրականի հետ։

— Ես, բարեկամս, սիրականներ չունեմ։

— Ուրեմն առանց սիրականի կփախչեք... կապիտալով։

— Բայց այդ ինչպե՞ս ես դու ինձ հասկանում։

— Ոչ մի կերպ ես ձեզ չեմ հասկանում... Դուք ինձ աշխարհով մեկ հիմար եք հռչակել,— դե ես հիմա՛ր եմ, և թող հիմար լինեմ։ Տեսեք ինչե՞ր են հնարել՝ կապիտալը ձեռքից-ձեռք նրանց տուր։ Իսկ ես ինքս ի՞նչ անեմ, վանք գնամ ապաշխարելու և այնտեղից նայեմ, թե ինչպես եք դուք իմ կապիտալը ծախսո՞ւմ։

Նա այդ բոլորն ասաց մի շնչով, ոխակալած ու հուզվելով և ապա բոլորովին ուժասպառ եղավ։ Դրանից հետո նա համենայն դեպս քառորդ ժամի չափ սկսեց հազալ ամբողջ ուժով, այնպես որ նույնիսկ զարմանալի էր, որ այդ խղճուկ մարդկային կմախքը այդչափ ուժ ունի իր մեջ։ Վերջապես նա շունչ առավ ու փակեց աչքերը։

Արինա Պետրովնան շփոթահար չորս կողմը նայեց։ Մինչև այժմ նա, այնուամենայնիվ, մի տեսակ հավատալ չէր կարողանում, այժմ վերջնականապես համոզվեց, որ հիվանդին հորդորելու ամեն մի նոր փորձ միայն կարող է մոտեցնել Իուդուշկայի հաղթանակի օրը։ Իուդուշկան մի գլուխ երևում էր աչքի առաջ։ Ահա նա քայլում է դագաղի ետևից, ահա տալիս է եղբորը վերջին հուղարկավորությունը և զզվելի

արտասուքի երկու կաթիլ է ցայտում նրա աչքերից։ Ահա և դագաղն իջեցրին հողը։ «Մնա՞՝ս բարև, եղբայր»,— բացականչում է Իուդուշկան, դողացնելով շուրթերը, աչքերը վեր հառնելով և աշխատելով ձայնին վշտի երանգ տալ, և ապա անմիջապես դառնում է Ուլիտուշկային ու ասում է. «Մեղրահատիկը, մեղրահատիկը չմոռանաք տուն տանել, և մաքուր սփռոցի վրա դրեք... տանն էլ եղբորս կրկին հիշատակենք»։ Ահա վերջացավ և հոգեհացը, որի ժամանակ Իուդուշկան առանց հոգնության խոսում է քահանայի հետ հանգուցյալի արժանիքների մասին, և քահանան լիովին հաստատում է այդ գովասանքները։ «Ա՜խ, եղբայր, եղբայր, չուզեցիր դու մեզ հետ ապրել»,— բացականչում է նա, սեղանի մոտից վեր կենալով և ձեռքը՝ ափը վերև դարձրած, պարզում է քահանայի օրհնությունը ստանալու։ Ահա վերջապես բոլորը, փառք աստծո, կշտացան և նույնիսկ քուն առան ճաշից հետո։ Իուդուշկան տնատիրոջ պես ման է գալիս սենյակներում, ընդունում է իրերը, ցուցակ է անում ու ժամանակ առ ժամանակ կասկածական նայում է մորը, եթե որևէ բանում երկմտում է։

Ապագայի բոլոր այդ անխուսափելի տեսարանները շարունակ անցնում-դառնում էին Արինա Պետրովնայի աչքերի առաջ։ Եվ կարծես կենդանի հնչում էր նրա ականջներում Իուդուշկայի իրեն դարձրած ձիթոտ-սուր ձայնը.

— Հիշո՞ւմ եք, մամենկա, եղբայրս ոսկե ճարմանդներ ուներ... լավն էր, տոն օրերին էր հագնում... և ի՞նչ եղան այդ ճարմանդները, չեմ կարողանում հասկանալ։

***

Հազիվ էր Արինա Պետրովնան ցած իջել, որ դուբրովինյան եկեղեցու բլրակի վրա երևաց չորս ձի լծած մի կառք։ Կառքում պատվավոր տեղը նստել էր Պորֆիրի Վլադիմիրիչը գլուխը բաց և խաչակնքում էր եկեղեցու կողմը. դիմացը նստել էին նրա երկու որդիները՝ Պետենկան և Վոլոդենկան։ Արինա Պետրովնայի սիրտն անմիջապես անդգայացավ։ «Աղվեսը լեշի հոտ է առել»,— անցավ մտքով. աղջիկները նույնպես վախեցան և անոգնական սեղմվեցին տատին։ Մինչ այդ խաղաղ տանը հանկարծ աղմուկ բարձրացավ. բացուփփվեցին դռները, վազվզեցին մարդիկ, բացականչություններ լսվեցին՝ «Բարինը գալիս՞ է, բարինը գալի՞ս է»,— և կալվածատան բոլոր բնակիչները միանգամից դուրս թափվեցին տան մուտքի առաջ։ Ոմանք խաչակնքում էին, ոմանք ուղղակի կանգնել էին սպասողական դիրքով, բայց բոլորն, ակներև էր, գիտակցում էին, որ այն ամենը, ինչ տեղի ուներ Դուբրովինոյում մինչև այժմ, միայն ժամանակավոր էր և որ այժմ է սկսվում իսկականը, ճշմարիտը՝ իսկական տիրոջ գլխավորությամբ։ Հին, վաստակավոր սպասավորներից շատերին «նախկին» բարինի ժամանակ ամսական պարեն էր տրվում, շատերը տիրոջ խոտով կով էին պահում, բանջարանոց ունեին և ընդհանրապես «ազատ» էին ապրում,— բոլորին, բնական է, հետաքրքրում էր այն հարցը, թե արդյոք «նոր» բարինը հին կարգերը կթողնի, թե կփոխի նոր, գոլովլյովյան կարգերով։

Իուդուշկան մինչ այդ մոտեցավ և իրեն ցույց տված ընդունելությունից արդեն եզրակացրեց, որ Դուբրովինոյում բանը վախճանին է հասնում։ Առանց շտապելու իջավ կառքից, ձեռքը թափահարեց սպասավորների վրա, որոնք նետվեցին բարինի ձեռքը համբուրելու, հետո երկու ձեռները կրծքին դրած, սկսեց դանդաղ քայլերով բարձրանալ աստիճաններով, շշուկով աղոթք արտասանելով։ Նրա դեմքը միաժամանակ արտահայտում էր և՛ վիշտ, և՛ հաստատուն հնազանդություն։ Որպես մարդ, նա վշտանում էր, որպես քրիստոնյա՝ տրտնջալ չէր համարձակվում։ Նա աղոթում էր «առաքման» մասին, բայց առավել ապավինում էր ու հնազանդվում նախախնամության կամքին։ Ձավակները, զույգով, քայլում էին նրա ետևից։ Վոլոդենկան տնազ էր անում հորը, այսինքն ձեռները կրծքին էր դարսում, աչքերը երկինք էր ամբարձում ու շարժում էր շրթունքները. Պետենկան հրճվում էր եղբոր տված ներկայացումով։ Նրանց ետևից լուռ խմբով հետևում էր սպասավորների շքերթը։

Իուդուշկան համբուրեց մամենկայի ձեռքը, հետո շուր-

թերը, հետո նորից ձեռքը. հետո փաղաքշական խփելով սիրելի բարեկամի մեջքին, ասաց.

— Իսկ դուք շարունակ վհատվո՞ւմ եք։ Լավ չէ այդ, բարեկամս, ա՜խ, որչա՜փ լավ չէ։ Բայց դուք հարց տայիք ձեզ՝ ի՞նչ կասի աստված դրան։ Կասի՝ ահա ես իմ իմաստությամբ ամեն ինչ դեպի լավն եմ տանում, իսկ նա տրտնջում է։ Ա՜խ, մամենկա, մամենկա։

Հետո համբուրեց երկու ազգականուհիներին և նույն այն ազգակցական հմայքը ձայնում, ասաց.

— Դուք նո՞ւյնպես, ճպուռներ, արտասուք եք թափում։ Որպեսզի այլևս այդ չլինի՛։ Բարեհաճեցեք իսկույն ժպտալ և վե՛ր։

Եվ նա ոտները դոփեց, կամ, ավելի ճիշտ, ցույց տվեց, թե դոփում է, բայց, իսկապես, միայն ողորմածաբար կատակում էր։

— Նայեցեք ինձ,— շարունակեց նա։— Որպես եղբայր, ես վշտանում եմ։ Մեկ անգամ չէ, գուցե, որ նույնիսկ արտասվել եմ... Մեղք է եղբայրս, արտասվելու չափ մեղք է... Լաց ես լինում ու մեկ էլ ուշքի ես գալիս՝ իսկ աստված ինչի՞ համար է։ Մի՞թե աստված մեզանից վատ է իմանում ի՞նչ և ինչպե՞ս։ Միտք ես անում այսպես ու քաջալերվում ես։ Այդպես պետք է վարվեն և բոլորը։ Եվ դուք, մամենկա, և դուք, ազգականուհիներս, և դուք... բոլորդ,— դարձավ նա սպասավորներին։— Նայեցեք ինձ, ինչպես կտրիճ եմ պահում ես ինձ։

Եվ նա նույն այն հմայչությամբ «կտրիճ» ցույց տվեց իրեն, այսինքն շտկվեց, մի ոտքն առաջ դրեց, կուրծքը դուրս ցցեց և գլուխը ետ գցեց։ Բոլորը ժպտացին, բայց մի տեսակ թթված, ասես ամեն մեկն ասում էր իրեն՝ դե, սկսեց սարդն արդեն իր ոստայնը հյուսել։

Վերջացնելով ներկայացումը դահլիճում, Իուդուշկան անբավ հյուրասենյակ ու կրկին համբուրեց մամենկայի ձեռքը։

— Այդպես, այդպես, սիրելի բարեկամ մամենկա,— ասաց նա, նստելով բազմոցին։— Ահա և եղբայր Պավելը...

— Այո, և Պավելը...— կամացուկ արձագանքեց Արինա Պետրովնան։

— Այո, այո, այո... շո՛ւտ է, շո՛ւտ է։ Ես, մամենկա, թեպետև քաջալերվում եմ, բայց հոգումս նույնպես... շատ, շատ եմ վշտանում եղբորս համար։ Չէր սիրում ինձ եղբայրս, շատ չէր սիրում,— գուցե դրա համար է հենց աստված նրան ուղարկում...

— Այսպիսի բոպեին կարելի է և մոռանալ այդ մասին։ Հին հակառակությունները պետք է թողնել...

— Ես, մամենկա, վաղուց եմ մոռացել։ Ես միայն ի դեպ եմ ասում՝ չէր սիրում ինձ եղբայրս, բայց թե ինչո՞ւ, չգիտեմ։ Ես արդեն, կարծեմ, և՛ այսպես, և՛ այնպես, և՛ ուղղակի, և՛ կողմնակի, և՛ «սիրելի» և՛ «եղբայրս»— ետ-ետ էր քաշվում ինձանից և ուրիշ ոչինչ։ Իսկ աստված ահա աննկատելի իր վախճանը սահմանեց։

— Ասում եմ քեզ, հարկ չկա հիշել այդ մասին։ Մարդը մահվան դուռն է հասել։

— Այո, մամենկա, մեծ խորհուրդ է դա — մա՛հը։ Չգիտեք ո՛չ օրը, ո՛չ ժամը,— ահա ինչպիսի խորհուրդ է դա։ Այ ահա նա շարունակ ծրագրեր էր մշակում, կարծում էր, թե շատ, շատ բարձր է կանգնած, բայց աստված միանգամից, մի ակնթարթում նրա բոլոր երազանքները խորտակեց։ Հիմա նա գուցեև ուրախ է իր մեղքերը քավել, բայց նրանք արդեն գրված են կենաց գրքում։ Իսկ այդ գրքից, մամենկա, շուտ չես ջնջի այն, ինչ գրված է այնտեղ։

— Չէ՞ որ զղջումը ընդունելի է լինում։

— Ցանկանո՛ւմ եմ, հոգով ցանկանում եմ եղբորս։ Չէր սիրում նա ինձ, բայց ես ցանկանում եմ։ Ես բոլորին բարիք եմ ցանկանում։ Ե՛վ ատողներին, և՛ վիրավորանք հասցնողներին,— բոլորի՛ն։ Անարդար էր նա իմ նկատմամբ,— ահա և աստված հիվանդություն առաքեց նրան. ոչ թե ես, այլ աստված։ Իսկ շա՞տ է տանջվում նա, մամենկա։

— Այնպես... Ոչինչ։ Բժիշկը եկավ, նույնիսկ հույս տրվեց,— ասեց Արինա Պետրովնան։

— Ա՜յ, դա լավ է։ Ոչի՛նչ, բարեկամս, մի վշտացեք, գուցեև շունչ կառնի։ Մենք այստեղ նստել նրա մասին ենք մորմոքում և արարչի դեմ ենք տրտնջում, իսկ նա, գուցե, իր

համար հանգիստ նստել է անկողնում և շնորհակալ է լինում աստծուց իր առողջանալու համար։

Այդ միտքն այն աստիճան դուր եկավ Իուդուշկային, որ նա նույնիսկ թեթևակի ծիծաղեց։

— Ես ձեզ մոտ, մամենկա, եկել եմ հյուր մնամ,— շարունակեց նա, կարծես մորը հաճելի անակնկալ անելով.— չի կարելի, սիրելիս... ազգակցաբար։ Ո՞վ գիտի, այնուամենայնիվ, որպես եղբայր... և՛ մխիթարել, և՛ խորհուրդ տալ, և՛ կարգադրություն անել... դուք թույլ կտաք, չէ՞։

— Ես ինչ թույլտվություն կարող եմ տալ։ Ինքս հյուր եմ այստեղ։

— Դե ուրեմն ահա ինչ, սիրելիս։ Քանի որ այսօր ուրբաթ է, ուստի դուք պատվիրեցեք, եթե այդչափ ողորմած կլինեք, որպեսզի ինձ համար ճաշին պասուց կերակուր պատրաստեն։ Ցուկ լինի աղը դրած, սունկ, կաղամբ—ինձ շատ բան հարկավոր չի։ Իսկ ես մինչ այդ, ազգակցաբար... վերնահարկ բարձրանամ եղբորս մոտ, գուցեև հասնեմ.... Եթե ոչ մարմնի, գոնե հոգու համար որևէ օգտակար բան կանեմ։ Իսկ նրա դրությանմեջ հոգին, թերևս, ավելի կարևոր է։ Մարմինը մենք, մամենկա, դեղերով, թրջոցներով լավացնել կարող ենք, իսկ հոգու համար ավելի հիմնավոր դեղեր են հարկավոր։

Արինա Պետրովնան չէր հակառակում։ «Վախճանի» անխուսափելիության միտքն այն աստիճան էր տիրապետել նրա ողջ էությունը, որ նա ինչ-որ ընդունմացած դրության մեջ էր նայում ու լսում այն բոլորն, ինչ կատարվում էր իր շուրջը։ Նա տեսավ, ինչպես Իուդուշկան տնքտնքալով վեր կացավ բազմոցից, ինչպես կորացավ, քսքստացրեց ոտները (նա սիրում էր երբեմն ուժասպառ ձևանալ. նրան թվում էր, որ այդպես ավելի պատվավոր է)։ Արինա Պետրովնան հասկանում էր, որ արյունարբուի անսպասելի հայտնվելը վերնահարկում խորապես կհուզի հիվանդին և, թերևս, արագացնի վախճանը, բայց այդ օրվա հուզմունքներից հետո այնպիսի հոգնածություն էր իջել վրան, որ իրեն կարծես երազի մեջ էր զգում։

Մինչ տեղի էր ունենում այդ, Պավել Վլադիմիրիչն անկարագրելի տագնապի մեջ էր գտնվում։ Նա վերնահարկում

պատկած էր բոլորովին մենակ և միաժամանակ լսում էր, որ տանը ինչ-որ արտասովոր շարժում է տեղի ունենում։ Դռների ամեն մի շրմփոց, ամեն մի քայլ միջանցքում ինչ-որ խորհրդավոր արձագանք էր գտնում։ Մի որոշ ժամանակ նա կանչում և աղաղակում էր ուժով մեկ, բայց համոզվելով, որ աղաղակելն ապարդյուն է, հավաքեց բոլոր ուժերը, կիսաբարձրացավ անկողնում և սկսեց ականջ դնել։ Ընդհանուր վազվզուքից հետո, ձայների բարձր խոսակցություններից հետո մեռելային լռություն տիրեց։ Ինչ-որ անհայտ, սոսկալի բան պաշարեց նրան ամեն կողմից։ Իջեցրած վարագույրների միջից ցերեկային լույսը ժլատ էր ներս թափանցում, և որովհետև անկյունում, սրբապատկերի առաջ պլպլում էր կանթեղը, ուստի սենյակը ողողած մթնշողն ավելի խավար ու թանձր էր թվում։ Այդ խորհրդավոր անկյունին էլ հենց հառեց նա իր հայացքը, կարծես այդ խորքում ինչ-որ մի բան առաջին անգամ զարմանք պատճառեց նրան։ Ոսկեզօծ շրջանակով սրբապատկերը, որի վրա անմիջապես ընկնում էին կանթեղի ճառագայթները, զարմանալի պայծառությամբ, ասես ինչ-որ կենդանի բան, երևում էր խավարի մեջ. առաստաղին, կանթեղի լույսի ուժեղանալու կամ թուլանալու հետ միասին մերթ բռնկվելով, մերթ գունատվելով տատանվում էր լույսի մի շրջան։ Ցածում կիսալույս էր տիրում, որի ընդհանուր ֆոնի վրա ստվերներ էին ցնցվում։ Նույն այն պատին՝ լուսավորված անկյան մոտ՝ կախված էր խալաթը, որի վրա նույնպես լույսի շերտեր ու ստվերներ էին ցնցվում, որի շնորհիվ թվում էր, թե խալաթը շարժվում է։ Պավել Վլադիմիրիչն ակընդետ նայեց, նայեց և նրան թվաց, որ այնտեղ, այդ անկյունում հանկարծ ամեն ինչ շարժվեց։ Միայնակություն, անօգնականություն, մեռելային լռություն, և այդ ամենի մեջ՝ ստվերներ, ստվերների մի ամբողջ պարս։ Նրան թվում էր, որ այդ ստվերները գալիս են, գալիս են, գալիս են... Աննկարագրելի սարսափով, աչքերն ու բերանը բաց արած, նա նայում էր խորհրդավոր անկյանն ու չէր աղաղակում, այլ հեծում էր։ Հեծում էր խուլ, բուռն, ասես հաչում էր։ Նա չլսեց ոչ աստիճանների ճռնչոցը, ոչ ոտների զգույշ քսքստոցն առաջին սենյակում, երբ հանկարծ իր անկողնու մոտ բուսեց Իու-

դուշկայի ատելի կերպարանքը։ Նրան թվաց, որ Իուդուշկան դուրս եկավ այնտեղից, այն խավարից, որն հիմա հենց իր աչքերի առաջ այդպես խորհրդավոր շարժվում էր, որ այնտեղ էլի, էլի կան ստվերներ... ստվերներ, ստվերներ անվերջ։ Գալի՛ս են, գալի՛ս են...

— Ինչո՞ւ, ո՞րտեղից, ո՞վ ներս թողեց,— բնազդաբար աղաղակեց նա, ուժասպառ ընկնելով բարձին։

Իուդուշկան կանգնել էր անկողնի մոտ, ուշադիր նայում էր հիվանդին և վշտոտ օրորում էր գլուխը։

— Ցավո՞ւմ է,— հարցրեց նա, տալով իր ձայնին այնպիսի գորովանք, որպիսին նա միայն կարող էր։

Պավել Վլադիմիրիչը լուռ էր և իմաստազուրկ աչքերով նայում էր նրան, ասես փորձելով հասկանալ։ Իսկ Իուդուշկան մինչ այդ մոտ գնաց սրբապատկերին, ծունկ չոքեց, գթաշարժվեց, երեք անգամ երկրպագեց, վեր կացավ ու նորից հայտնվեց անկողնու մոտ։

— Դե, եղբայր, վե՛ր կաց, աստված ողորմություն ուղարկեց,— նստելով բազկաթոռին, ասաց նա այնպիսի ուրախ ձայնով, կարծես իրոք էլ «ողորմությունը» գտնվում էր իր գրպանում։

Պավել Վլադիմիրիչը վերջապես հասկացավ, որ իր առաջ ոչ թե ստվեր է, այլ ինքն արյունարբուն է կենդանի մարմնով։ Նա մի տեսակ կծկվեց, կարծես դողը բռնեց։ Իուդուշկայի աչքերը նայում էին լուսապայծառ, ազդակցաբար, բայց հիվանդը շատ լավ տեսնում էր, որ այդ աչքերում «օղ» է թաքնված, որն ահա, ահա իսկույն դուրս կցատկի ու կըփաթաթվի իր վզին։

— Ա՜խ, եղբայր, եղբայր, ի՞նչ վատն ես դարձել,— շարունակեց կատակել Իուդուշկան ազդակցաբար,— իսկ դու քաջալերվիր։ Վեր կաց ու վա՛զ տուր։ Չափ ընկած, չափ ընկած — թող մամենկան տեսնի, թե ինչ կտրիճն ես դարձել դու։ Ա՜յ-ա՜յ, ա՜յ-ա՜յ։

— Գնա՛, արյունարբու, դո՛ւրս,— հուսահատ աղաղակեց հիվանդը։

— Ա՜-ա՜-ա՜խ, եղբայր, եղբայր։ Ես եկել եմ քեզ մոտ փաղաքշանքով, մխիթարանքի խոսքով, իսկ դու... Ի՞նչ խոսք

ասացիր դու։ Ա՜-ա՜-ա՜խ, ինչ մեղք ես անում։ Եվ այդ ինչպես լեզուդ պտտվեց, բարեկամս, այդպիսի խոսք ասել եղբորդ։ Ամոթ է, սիրելիս, նույնիսկ շատ ամոթ է։ Սպասիր, ես քո բարձը ուղղեմ։

Իուդուշկան վեր կացավ և մատով խթեց բարձը։

— Ահա այսպե՞ս,— շարունակեց նա։— Ա՜յ հիմա սքանչելի է։ Պառկիր քեզ համար լավ ու հանգիստ, թեկուզ մինչև վաղը ուղղելու կարիք չկա։

— Հեռացի՛ր...

— Ա՜խ, հիվանդությունը սակայն ինչպե՞ս փչացրել է քեզ։ Նույնիսկ քո բնավորությունը — այն էլ մի տեսակ ըմբոստ է դարձել։ Հեռացիր հա հեռացիր,— բայց ես ինչպե՞ս հեռանամ։ Այ դու որ խմել ուզենաս, ես քեզ ջուր կտամ, հրեն կանթեղը լավ չի վառվում, կանթեղը կուղղեմ, ձեթ կավելացնեմ։ Դու կպառկես, ես կնստեմ. հանգիստ ու խաղաղ, և չենք էլ նկատի, ինչպես ժամանակը կանցնի։

— Հեռացի՛ր... արյունարբո՛ւ։

— Այ դու ինձ հայհոյում ես, իսկ ես քեզ համար աղոթք կանեմ աստծուն։ Դե ես գիտեմ, որ դու այդ քեզանից չես ասում, այլ հիվանդությունդ է ասում։ Ես, եղբայր, սովոր եմ ներել, ես բոլորին ներում եմ։ Այ, այսօր էլ՝ գալիս եմ քեզ մոտ, ճանապարհին մի գյուղացի հանդիպեց, ինչ-որ բաներ ասաց։ Դե ինչ արած, Քրիստոսն իր հետ։ Չէ որ նա ինքն իր լեզուն ապականեց։ Իսկ ես... ոչ միայն չբարկացա, այլ նույնիսկ խաչակնքեցի նրան, ճշմարի՛տ։

— Թալանեցի՞ր... գյուղացուն։

— Ո՞վ, ե՞ս։ Ոչ, բարեկամս, ես չեմ թալանում. այդ ավազակներն են մեծ ճանապարհներին թալանում, իսկ ես օրենքով եմ վարվում։ Նրա ձին բռնեցի իմ մարգագետնում, դեուրեմն, սիրելիս, գնա հաշտարար դատավորի մոտ։ Թե որ դատավորն ասի, որ ուրիշի արտերն արածացնելը թույլ է տրվում,— աստված իր հետ, իսկ եթե ասի, որ արածացնել թույլ չի տրվում, ինչ կարող ես անել, տուգանք տուր։ Ես օրենքով եմ վարվում, սիրելիս, օրենքով։

— Իուդուշկա, դավաճան, մորդ մուրացկա՛ն դարձրիր։

— Եվ նորից կասեմ՝ ուզում ես բարկացիր, ուզում ես մի

բարկացիր, բայց դու լավ բան չես ասում։ Թե որ ես քրիստոնյա չլինեի, ես նույնպես... դրա համար կարող էի քեզանից պահանջ անել։

— Դարձրի՞ր, դարձրի՞ր, դարձրի՞ր... մորդ մուրացկան դարձրիր։

— Դե դադարիր, դադարիր։ Այ ես աստծուն աղոթք կանեմ, գուցե դու հանգիստ զգա։ Քեզ...

Որչափ էլ զսպում էր իրեն Իուդուշկան, բայց մեռնողի հայհոյանքներն այն աստիճան ազդեցին նրա վրա, որ նույնիսկ նրա շրթունքները ծռմռվեցին ու գունատվեցին։ Բայց և այնպես կեղծավորությունն այն աստիճան հատուկ էր նրա բնավորությանը, որ ոչ մի կերպ չէր կարող ընդհատել իր մեկ անգամ արդեն սկսած կոմեդիան։ Վերջին խոսքերն ասելիս նա իրոք որ ծունկ չոքեց և քառորդ ժամի չափ ձեռները վեր բարձրացրեց ու շշնջաց։ Կատարելով այդ, նա մեռնողի անկողնու մոտ վերադարձավ խաղաղված, համարյա պայծառ դեմքով։

— Իսկ ես, եղբայր, եկել եմ քեզ հետ գործի մասին խոսելու,— ասաց նա, նստելով բազկաթոռին.— դու ինձ ահա հայհոյում ես, իսկ ես քո հոգու մասին եմ մտածում։ Ասա խնդրեմ, վերջին անգամ դու ե՞րբ ես հաղորդություն առել։

— Տե՞ր աստված, սա ի՞նչ բան է... տարեք սրան։ Ուլի՛տակա, Ագա՛շկա, ո՞վ կա այդտեղ,— տնքում էր հիվանդը։

— Դե, դե, դե, հանգստացիր սիրելիս։ Գիտեմ, որ դու այդ մասին խոսել չես սիրում։ Այո, եղբայր, դու միշտ էլ վատ քրիստոնյա ես եղել և այժմ էլ այդպիսին մնում ես։ Բայց վատ չէր լինի, ա՞խ, որչափ վատ չէր լինի, որ այսպիսի բոպեին հոգու մասին մտածեիր։ Չէ որ մեր հոգին... Ա՞խ, ինչպես զգույշ պետք է վերաբերել նրան, բարեկամս։ Եկեղեցին մեզ ի՞նչ է հրահանգում։ Աղոթք արեք, ասում է, գոհաբանական մաղթանք մատուցեք... Այլև մեր կյանքի քրիստոնեական վախճանը առանց ցավերի է, ամոթալի չէ, խաղաղ է... ահա ինչ, բարեկամս։ Ուղարկիր հիմա դու քահանայի ետևից և անկեղծորեն, զղջումով... Դե, դե, էլ չէ, էլ չէ։ Բայց ճշմարիտ, այդպես...

Պավել Վլադիմիրիչը պառկել էր ամբողջովին բոսորա-

գույն և քիչ էր մնում խեղդվեր։ Եթե նա այդ բոպեին կարողանար փշրել իր գլուխը, անտարակույս կաներ այդ։

— Այ կալվածքի մասին նույնպես, գուցե դու արդեն կարգադրություն արե՞լ ես,— շարունակեց Իուդուշկան։— Լավ, շատ լավ կալվածք է քո կալվածքը, խոսք չկա։ Հողը նույնիսկ լավ է, քան Գոլովլյովոյում՝ կավախառն ավազահող է։ Հետո քո կապիտալը... չէ որ ես ոչինչ չգիտեմ։ Գիտեմ միայն, որ դու հողը տվել ես գյուղացիներին ետ գնման[78] պայմանով, բայց ինչ և ինչպես, երբեք չեմ հետաքրքրվել։ Ահա այսօր էլ, գալիս եմ քեզ մոտ և ասում եմ ինքս ինձ՝ պետք է որ Պավել եղբայրս կապիտալ ունենա։ Բայց սակայն, մտածում եմ, եթե կապիտալ ունի էլ, երևի արդեն կարգադրություն արել է այդ մասին։

Հիվանդը շուտ եկավ և ծանր հառաչեց։

— Չե՞ս արել։ Ուրեմն ավելի լավ, բարեկամս։ Օրենքով դա նույնիսկ արդարացի է։ Չէ որ օտարներին չի հասնելու, այլ յուրայիններին։ Ես ահա որչափ էլ որ վատառողջ եմ, մի ոտքով գերեզմանումն եմ, բայց և այնպես մտածում եմ՝ ինչ կարիք կա որ ես կարգադրություն անեմ, քանի որ օրենքն իմ փոխարեն կարող է կարգադրել։ Եվ որչա՞փ լավ է դա, սիրելիս։ Ոչ կռիվ, ոչ նախանձ, ոչ բանսարկություններ... օրե՛նք։

Դա սարսափելի էր։ Պավել Վլադիմիրիչին թվում էր, որ ինքը կենդանի-կենդանի դագաղն է դրված, որ պառկած է նա կարծես կաշկանդված, լեթարգիական քնով, մարմնի ոչ մի մասը շարժել չի կարող և լսում է, ինչպես արյունարբուն անարգում է իր մարմինը։

— Հեռացիր... ի սեր Քրիստոսի... հեռացի՛ր,— սկսեց նա վերջապես աղերսել իրեն տանջողին։

— Դե, դե, դե, հանգստացիր, կգնամ։ Գիտեմ, որ դու ինձ չես սիրում... Ամոթ է, բարեկամս, շատ ամոթ է հարազատ եղբորը չսիրել։ Ահա ես քեզ ինչպե՞ս եմ սիրում։ Երեխաներիս էլ շարունակ ասում եմ՝ թեպետև եղբայր Պավելն հանցավոր է իմ առաջ, իսկ ես նրան, այնուամենայնիվ, սիրում եմ։ Ուրեմն դու, նշանակում է, կարգադրություններ չե՞ս արել,— և՛ սքանչելի, բարեկամս։ Պատահում է, սա-

կայն, երբեմն, որ կենդանության ժամանակ էլ կապիտալը թալանում են, մանավանդ ով չունի հաթաղատներ, ժենակ է... Բայց ես դե, կհետեմ... Հը՞, ի՞նչ, ձանձրացրի՞ քեզ։ Դե, դե, լավ, կգնամ։ Թող միայն աղոթեմ աստծուն։

Նա վեր կացավ, ձեռները դարսեց կրծքին ու արագ-արագ շշնջաց.

— Մնաս բարև, բարեկամս, մի՛ անհանգստացիր։ Ննջիր քեզ համար խաղաղ, գուցեև աստված տա... Իսկ մենք մամենկայի հետ խոսք ու զրույց կանենք, գուցեև մի բան մըտածենք։ Ես, եղբայր, խնդրել եմ, որ ինձ համար պասուց կերակուր պատրաստեն... աղը դրած ձուկ, սունկ, կաղամբ... այնպես որ դու ինձ ներիր։ Ի՞նչ, նորից ձանձրացրի՞։ Ա՜խ, եղբայր, եղբայր... Դե, դե, կգնամ, կգնամ։ Գլխավորը, բարեկամս, մի անհանգստացիր, մի հուզվիր, քնիր ու ննջիր։ Խրո...խրո...— կատակեց նա վերջում, վերջապես որոշելով գնալ։

— Արյունարբո՛ւ,— հնչեց նրա ետևից այնպիսի սուր աղաղակով, որ Պորֆիրի Վլադիմիրիչն ինքը նույնիսկ զգաց, որ կարծես իրեն դաղեցին։

* * *

Մինչ Պորֆիրի Վլադիմիրիչը շաղակրատում է վերնահարկում, ներքևում տատը՝ Արինա Պետրովնան շուրջն է հավաքել ջահելներին (ոչ առանց նպատակի՝ մի բան դուրս քաշելու նրանցից) և զրույց է անում նրանց հետ։

— Հը՞, ինչպե՞ս ես դու,— դիմում է նա մեծ թոռանը՝ Պետենկային։

— Ոչինչ, տատի, այ, եկող տարի սպա կդառնամ։

— Կդառնա՞ս։ Քանի՞ տարի է արդեն իրոստանում ես։ Ձեր քննությունները՞ն են դժվար, ինչ է,— աստված է քո բանը իմանում։

— Նա, տատի, վերջին քննությունների ժամանակ կրոնից կտրվեց։ Տերտերն հարցնում է՝ ի՞նչ է աստված։ Իսկ նա՝ աստված ոգի է... և է ոգի... և սուրբ հոգուն....

— Ա՜խ, խեղճ, խեղճ, այդ ինչպե՞ս դու... Այ, սրանք, որ որբ են, սրանք էլ անշուշտ իմանում են։

— Իհարկե, աստված ոգի է, անտեսանելի...— շտապում է փայլել իր գիտելիքներով Աննինկան։

— Նրան ոչ ոք չի տեսնում ոչ մի տեղ,— ընդմիջում է Լյուբինկան։

— Ամենագետ, ամենաողորմած, ամենահզոր, ամենուրեք գոյություն ունեցող...— շարունակում է Աննինկան։

— Ո՞ւր կարող եմ գնալ քո զորությունից և քո երեսից ո՞ւր կարող եմ փախչել։ Եթե երկինք բարձրանամ — այնտեղ ես դու, եթե դժոխք իջնեմ,— այնտեղ ես դու...

— Այ, դու էլ թե որ այդպես պատասխաններիր, հիմի ուսադիրներով կլինեիր։ Իսկ դու, Վոլոդյա, դու ի՞նչ ես մտածում դառնալ։

Վոլոդյան կարմրում է ու լռում։

— Նույնպես երևում է՝ «և սուրբ հոգուն»։ Ա՜խ, երեխաներ, երեխաներ, տեսքով դուք շատ ճարպիկն եք երևում, բայց ոչ մի կերպ գիտությունը հաղթահարել չեք կարողանում։ Գոնե եթե ձեր հայրը երես տար ձեզ... Հիմա ինչպե՞ս է ձեզ հետ։

— Էլի այնպես, տատիկ։

— Մնծո՞ւմ է։ Իսկ ես լսել եմ, որ նա հիմի այլևս կրոնավարարություն չի անում։

— Քիչ է կռվում, բայց և այնպես էլի կռվում է... Իսկ գլխավորը, շատ է ձանձրացնում։

— Այդ արդեն ես հասկանալ չեմ էլ կարողանում։ Ինչպե՞ս կարող է հայրը ձանձրացնել։

— Շատ է ձանձրացնում, տատի։ Առանց հարցնելու ոչ դնալ կարելի է, ոչ մի բան վերցնել... ուղղակի ստորություն է։

— Իսկ դուք հարցրեք։ Լեզուներդ հո պոկ չի գա։

— Չէ՞ արդեն։ Մեկ անգամ որ հարցրեցինք, այլևս ձեռք չի վերցնի։ Սպասիր ու համբերիր, կամաց-կամաց ու քիչ-քիչ... շատ է արդեն տխուր խոսում, տատի։

— Նա, տատիկ, դրան ետևից ծածուկ ականջ է դնում մեզ։ Հենց այս օրերս։ Պետենկան նրան հանկարծակի բռնեց։

— Ա՜խ, գուք, չարաճճիներ։ Իսկ նա ի՞նչ ասաց։

— Ոչինչ։ Ես ասում եմ նրան՝ հայրիկ, դա մի բան չի՝ դռան ետևից ականջ դնելը, գուցե, մեկ էլ տեսաք, ձեր քիթը ջարդվեց։ Իսկ նա՝ դե-դե, ոչինչ, ոչինչ, ես եղբայր, ինչպես գողը գիշերային...

— Նա, տատիկ, այս օրերս այգում ծառից ընկած մի խնձոր բերեց, դրեց իր պահարանը, իսկ ես վերցրի ու կերա։ Նա հետո ման եկավ, ման եկավ, բոլոր ծառաներին հարցաքննության ենթարկեց։

— Այդ ինչ է, այդչափ ժլատացե՞լ է նա, ի՞նչ է։

— Ոչ, ժլատ էլ չի, այլ հենց այնպես... շարունակ դատարկ բաներով է զբաղվում։ Թղթի կտորներ է թաքցնում, ծառերի տակ թափված պտուղներ է որոնում...

— Նա ամեն առավոտ ընծայման մաղթանք է անում իր առանձնասենյակում, հետո մեզ մի-մի կտոր նշխար է տալիս... քառթո՞ւ-քառթու։ Միայն թե մենք մի անգամ նրա գլխին օյին խաղացինք. հետևեցինք, թե որտեղ է պահում նշխարը, մեջտեղը կտրեցինք, փափուկ մասը հանեցինք ու տեղը կարագ դրեցինք։

— Բայց դուք էլ... կապկտրած եք։

— Չէ, դուք պատկերացրե՞ք նրա զարմանքը մյուս օրը։ Նշխա՞ր, այն էլ կարագով։

— Երևի կարգին հասավ ձեզ։

— Ոչինչ... Միայն ամբողջ օրը թքոտում էր ու շարունակ ինքն իրեն փնթփնթում՝ ստահակներ։ Դե մենք, հասկանալի է, մեզ վրա չէինք առնում։ Բայց նա, տատիկ, ձեզանից վախենում է։

— Ինձանից ինչո՞ւ է վախենում... ես հո խրտվիլակ չեմ։

— Վախենում է, այդ ճիշտ է. վախենում է, որ իրեն կանիծեք։ Նա անեծքներից սաստիկ վախենում է։

Արինա Պետրովնան մտածմունքների մեջ է ընկնում։ Սկզբում միտք է անում՝ իսկ եթե, իրոք էլ...անիծե՞մ։ Ոչ այս, ոչ այն, ուղղակի կանիծեմ... անիծուո՞ւմ եմ... Հետո այդ միտքը տեղի է տալիս մի ուրիշ, ավելի կենսական հարցի առաջ՝ ի՞նչ է անում Իուդուշկան, ի՞նչ խորամանկություններ է բանեցնում նա հիմա այնտեղ, վերևում, երևի շարունակ ծրոմբոլվում է։ Վերջապես երջանիկ միտք է ծագում նրա գլխում։

— Վոլոդյա,— ասում է նա,— դու, սիրելիս, թեթև ես, կամացուկ գնայիր ու ականջ դնեիր, ի՞նչ կա այնտեղ։

— Ուրախությամբ, տատիկ։

Վոլոդյան մատների վրա մոտենում է դռանն ու անհայտանում։

— Այդ ինչպե՞ս եղավ, որ դուք այսօր մեզ մոտ եկաք,— սկսում է հարցաքննել Արինա Պետրովնան Պետենկային։

— Մենք, տատիկ, վաղուց պատրաստվում էինք գալ, իսկ այսօր Ուլիտուշկան մարդ էր ուղարկել ասելու, որ բժիշկը եկել էր և որ եթե ոչ այսօր, վաղը հորեղբայրը անպայման կմեռնի։

— Իսկ ժառանգության մասին... խոսք եղե՞լ է ձեզանում։

— Մենք, տատիկ, ամբողջ օրը շարունակ ժառանգության մասին ենք խոսում։ Նա շարունակ պատմում է, թե առաջ, պապիկից դեռ առաջ ինչպես է եղել... Նույնիսկ Գորյուշկինոն է հիշում, տատիկ։ Այ, ասում է, թե որ հորաքույրը Վարվառա Սիխայլովնան երեխաներ չունենար, Գորյուշկինոն էլ մեզ կպատկաներ։ Երեխաներն էլ, ասում է, աստված գիտի ումից են, բայց դե մե՞նք չենք ուրիշներին դատողը։ Մեր մերձավորի աչքի փուշը մենք տեսնում ենք, բայց մեր աչքի գերանն էլ չե՛նք նկատում... Այդպե՞ս, եղբայր։

— Տեսեք ի՛նչ մարդ է։ Հորաքույրը ամուսնացած է եղել, թե որ մի բան էլ եղել է, ամուսինը ամեն ինչ իր վրա է վերցրել։

— Ճշմարիտ, տատիկ։ Եվ միշտ, երբ անց ենք կենում Գորյուշկինոյի մոտով, ամեն անգամ նա բարձրացնում է այդ պատմությունը։ Նատալյա Վլադիմիրովնա տատիկն էլ, ասում է, Գորյուշկինոյից է վերցրած, բոլոր օրենքներով Գորյուշկինոն Գոլովլյովների պիտի պատկանի, բայց հանգուցյալ հայրիկը քրոջը բաժին է տվել։ Ի՞նչ սեխեր են հասնում, ասում է, Գորյուշկինոյում։ Քսան-քսան ֆունտանոց, ահա՞ ինչպիսի սեխեր։

— Քսան ֆունտանո՞ց... Ես ինչ-որ այդպիսի սեխերի մասին չեմ լսել։ Իսկ Դուբրովինոյի մասին ի՞նչ ենթադրություններ ունի։

— Նույնպես դրա նման։ Ձմերուկներ ու սեխեր... դատարկ-

դատարկ բաներ։ Վերջին օրերս, սակայն, շարունակ հարցնում էր՝ երեխաներ, իսկ դուք ի՞նչ եք կարծում, եղբայր Պավելը մե՞ծ կապիտալ ունի։ Նա, տատիկ, վաղուց արդեն ամեն բան հաշիվ է արել՝ և՛ հետ գնման վարկն ինչքան է, և՛ երբ է կալվածքը խնամատարական խորհրդում գրավ դրված, և՛ պարտքից ինչքան է վճարված... Մենք թուղթն էլ տեսանք, որի վրա նա հաշիվներ էր անում, միայն մենք, տատիկ, այդ թուղթը թոցրինք։ Այդ թղթով մենք նրան, տատիկ, քիչ մնաց գժվացնեինք։ Նա թուղթը դնում է սեղանի արկղը, իսկ մենք վերցնում, պահարանն ենք դնում. նա թուղթը կողպում է պահարանում, իսկ մենք բանալի ենք հարմարեցնում, բաց ենք անում ու նշխարի մեջ ենք դնում... Մի անգամ գնում է բաղնիք լողանալու, իսկ դարակի վրա... այդ թուղթն է դրած։

— Ուրախություն է այնտեղ, ձեզանում։

Վերադառնում է Վոլոդյան. բոլորի աչքերը դարձած են նրան։

— Ոչինչ չի լսվում,— հայտնում է նա շշուկով,— միայն լսվում է, որ հայրիկն ասում է՝ առանց ցավերի է, ամոթալի չէ, խաղաղ է, իսկ քեռին նրան՝ հեռացի՛ր, արյունարբու։

— Իսկ «կարգադրության» մասին... չլսեցի՞ր։

— Կարծեմ այդպես խոսք եղավ, բայց չհասկացա... Հայրիկը շատ պինդ էր ծածկել դուռը, տատիկ։ Բզզում է և ուրիշ ոչինչ... Իսկ հետո քեռին հանկարծ սաստիկ բղավեց՝ հե-ե-ացի՞ր։ Ես էլ իսկույն փախա եկա։

— Գոնե որբերի՞ն...— վշտաբեկ արտասանում է Արինա Պետրովնան մտախոհ։

— Թե որ հայրիկին անցավ, տատիկ, նա ոչ ոքի ոչինչ չի տա,— հաստատում է Պետենկան։— Ես այնպես եմ կարծում, որ նա մեզ էլ ժառանգությունից կզրկի։

— Հետը հո գերեզման չի՞ տանելու։

— Ոչ, բայց մի հնար կգտնի։ Նա վերջերս զուր չէր, որ խոսում էր տերտերի հետ.— տեր հայր, ասում է, ինչ կաս ոեք, եթե բաբելոնյան աշտարակ[29] շինվի, շա՞տ փող է հարկավոր դրա համար։

— Դե, դա երևի նա... հետաքրքրությունից է հարցրել։

— Ոչ, տատիկ, նա ինչ-որ ծրագիր ունի։ Բաբելոնյան աշտարակը թե որ չլինի, Աֆոնին[30] կնվիրաբերի, բայց մեզ չի տա։

— Իսկ հայրիկի կալվածքը շա՞տ կմեծանա, տատիկ, երբ որ քեռին մեռնի,— հետաքրքրվում է Վոլոդենկան։

— Դե դա աստծուն է միայն հայտնի, ով շուտ կմեռնի։

— Չէ, տատիկ, հայրիկը հաստատ համոզված է։ Քիչ առաջ, երբ մենք Դուբրովինոյի խորխորատին հասանք, նա նույնիսկ գլխարկը հանեց, խաչակնքեց՝ փա՞ռք աստծո, ասում է, նորից մեր հողով ենք գնալու։

— Նա, տատիկ, արդեն ամեն ինչ կարգադրել է։ Անտառակը որ տեսավ՝ ահա, ասում է, թե որ տեր ունենա,— ա՞խ, լավ անտառ կդառնա... Հետո խոտհարքին նայեց՝ ի՞նչ խոտհարք է, տես, տես, քանի՞ դեզ է դրած։ Այստեղ առաջ ձիաբուծարան էր...

— Այո, այո... և՛ անտառը, և՛ խոտհարքը — բոլորը ձերն է լինելու, սիրելիներս,— հառաչում է Արինա Պետրովնան։— Տե՞ր աստված, սանդուղքը ճռճռաց, հա՞։

— Սուս, տատիկ, սուս, այդ նա է... ինչպես գողը գիշերային... դռան ետև ականջ է դնում։

Լռություն է տիրում. բայց զուր տագնապ էր։ Արինա Պետրովնան շունչ է առնում ու շշնջում ինքն իրեն՝ ա՞խ, երեխաներ, երեխա՛ներ... Երիտասարդները ակնդետ նայում են որբուկներին, ասես խժռել են ուզում նրանց. որբուկները լսում են ու նախանձում։

— Իսկ դուք, կուզինա, մամզել Լոտարին տեսե՞լ եք,— հարցնում է Պետենկան։

Աննինկան և Լյուբինկան միմյանց են նայում, կարծես հարց են տալիս՝ պատմությունի՞ց է դա, թե աշխարհագրությունից։

—«Զքնաղ Հեղինեում»[31]... նա Հեղինեի դերն է խաղում թատրոնում։

— Ա՞խ, հա... Հեղինե... դա Պարի՞սն է։ «Վինելով գեղեցիկ ու երիտասարդ, նա բորբոքեց սրտերն աստվածուհիների»... Իմանո՛ւմ ենք, իմանո՛ւմ ենք,— ուրախացավ Լյուբինկան։

— Հենց դա է, որ կա։ Իսկ ինչպիսի՞ cas-ca-ader, ca-as-ca-der է անում... սքանչելի՞։

— Անցյալ օրը մեզ մոտ բժիշկը շարունակ «Գլուխկոնծի» էր երգում։

—«Գլուխկոնծին»— դա հանգուցյալ Լյադովան էր երգում... Այ սքանչելի էր... Երբ մեռավ, դագաղի ետևից երկու հազար մարդ էր գնում... Կարծում էին, թե հեղափոխություն կլինի։

— Դու թատրոնների մասի՞ն ես շատախոսում, ինչ է,— միջամտում է Արինա Պետրովնան։— Նրանք, բարեկամս, ոչ թե թատրոններ պիտի գնան, այլ կուսանոց...

— Դուք, տատիկ, շարունակ ուզում եք մեզ կուսանոցում թաղել,— գանգատվում է Աննինկան։

— Իսկ դուք, կուզինա, կուսանոցի փոխարեն եկեք Պետերբուրգ։ Մենք այնտեղ ձեզ ամեն բան ցույց կտանք։

— Նրանք, բարեկամս, ոչ թե բավականությունների մասին պետք է մտածեն, այլ աստվածային բաների մասին,— շարունակում է խրատական Արինա Պետրովնան։

— Մենք նրանց, տատիկ, կառքով Սերգիի վանքը կսլացնենք,— ահա և աստվածային բան կլինի։

Որբուհիների աչքերը նույնիսկ վառվեցին ու քթերի ծայրերը կարմրեցին այդ խոսքերի ժամանակ։

— Իսկ, ասում են, ինչպե՞ս են երգում Սերգիում,— բացականչում է Աննինկան։

— Հրաշալի են երգում, կուզինա։ Զայնակցյալ երգն երեքսրբյան... նույնիսկ հայրիկն այդպես երգել չի կարող։ Իսկ հետո մենք ձեզ բոլոր երեք Պոդյաչեսկիներում ման կտանք։

— Մենք ձեզ, կուզինա, ամեն, ամեն բան կսովորեցնենք։ Պետերբուրգում ձեզ նման օրիորդներ շատ կան, ման են գալիս ու կրունկներն են կտկտացնում։

— Այդ բաները կսովորեցնե՞ք, իհարկե,— ասում է Արինա Պետրովնան։— Հանգիստ թողեք նրանց, ի սեր Քրիստոսի... ուսուցիչնե՞ր են դուրս ընկել, գիտությունն է՞ն ուզում սովորեցնել... Պավելի մեռնելուց հետո ես նրանց հետ խոտկով եմ գնալու... և այդպես մի կերպ կապրենք մենք այնտեղ։

— Իսկ դուք շարունակ զրախոսում եք,— հանկարծ հընչեց դռներում։

Խոսակցության ընթացքում ոչ ոք չէր էլ նկատել, ինչպես Իուդուշկան գաղտագողի մոտեցել էր, ինչպես գողը գիշերային։ Նա ամբողջովին արտասվաթոր է, գլուխը կախ գցած, դեմքը՝ գունատ, ձեռները՝ կրծքին դարսած, շուրթերը շշնջում են։ Միաժամանակ աչքերով սրբապատկերն է որոնում, վերջապես գտնում է և բոպեաչափ աղոթք է վեր առաքում։

— Վա՛տ է, ինչպե՞ս վատ է,— վերջապես բացականչում է նա, գրկելով սիրելի բարեկամ մամենկային։

— Մի՞թե այդչափ արդեն։

— Շատ, շատ վատ է, սիրելիս... Իսկ հիշո՞ւմ եք առաջ ինչ կտրիճն էր նա։

— Դե երբ է նա կտրիճ եղել... ես ինչ-որ այդ չեմ հիշում...

— Ա՜խ, չէ, մամենկա, մի՛ ասեք։ Նա միշտ... ես ինչպես այսօր հիշում եմ, երբ նա կորպուսն[32] ավարտեց... Պարթևահասակ, լայնաթիկունք, կարմրայտ... Այո՛, այո՛։ Այդպե՞ս, իմ բարեկամ մամենկա։ Բոլորս աստծու հովանու տակ ենք ապրում։ Այսօր և՛ առողջ ենք, և՛ ուժեղ ենք, թվում է, թե կապրենք ու կապրենք, քեֆ-ուրախություն կանենք, քաղցր բաներ կուտենք, իսկ վաղը...

Նա ձեռքը թափ տվեց և հուզվեց։

— Խոսե՞ց նա գոնե։

— Քիչ, սիրելիս. այն է միայն, որ կրկնում էր՝ մնաս բարև, եղբայր։ Իսկ նա, մամենկա, զգո՛ւմ է, զգում է, որ իր բանը վատ է։

— Իհարկե, կզգա, երբ կուրծքը քիչ է մնում պատռվի։

— Ոչ, մամենկա, ես այդ մասին չեմ ասում։ Կանխատեսության մասին եմ ես ասում. կանխատեսությունը, ասում են, հատուկ է մարդուն. մեռնող մարդը միշտ նախապես ըզգում է։ Այ մեղապարտներին այդ մխիթարանքը չի տված։

— Լավ, լավ։ «Կարգադրության» մասին ոչինչ չասա՞ց։

— Ոչ, մամենկա։ Ուզեց մի բան ասել, բայց ես թույլ չտվեցի։ Ոչ, ասում եմ, կարիք չկա կարգադրությունների մասին խոսել։ Ինչ որ դու, եղբայր, քո ողորմածությամբ կթողնես ինձ, ես ամեն ինչից գոհ կլինեմ, իսկ եթե ոչինչ չթողնես էլ, ես ձրիաբար էլ քեզ համար հոգեհանգիստ անել կը-

տամ։ Իսկ ինչպե՞ս է նա ուզում ապրել, մամենկա, ինչպե՞ս է ուզում... ինչպե՞ս է ուզում։

— Ամեն մարդ էլ ապրել է ուզում։

— Չէ, մամենկա, այ, ես իմ մասին կասեմ։ Եթե աստծուն հաճելի լինի ինձ իր մոտ կանչել, ես, թեկուզ հիմա, պատրաստ եմ։

— Լավ է, թե որ աստծու մոտ լինի, իսկ եթե սատանայի մոտ լինի՞։

Խոսակցությունն այս ոգով շարունակվում է և՛ մինչև ճաշ, և՛ ճաշի ժամանակ, և՛ ճաշից հետո։ Արինա Պետրովնան անհանգստությունից նույնիսկ չի կարողանում աթոռի վրա նստած մնալ։ Մինչ Իուդուշկան շաղակրատում է, նրա մտքով ավելի ու ավելի հաճախ է անցնում՝ իսկ ի՞նչ, եթե... անիծեմ։ Իսկ Իուդուշկան չի էլ կասկածում, որ մոր հոգում մի ամբողջ փոթորիկ է անցնում, նա նայում է այնպես պայծառ ու շարունակում է իր համար կամաց-կամաց ու հանգիստ-հանգիստ ճնշել սիրելի բարեկամ մամենկային իր հուսահատական ավելորդախոսությամբ։

«Կանիծե՛մ, կանիծե՛մ, կանիծե՛մ»,— ավելի ու ավելի վճռական կրկնում է ինքն իրեն Արինա Պետրովնան։

***

Սենյակներում խնկահոտ է կանգնած, տանը ծորուն երգասացություն է հնչում, դռները կրնկի վրա բաց են, հանգուցյալին հրաժեշտ տալ ցանկացողները գալիս ու գնում են։ Կենդանության ժամանակ ոչ ոք ուշադրություն չէր դարձնում Պավել Վլադիմիրիչի վրա, մեռնելուց հետո բոլորն սկսեցին խղճահարվել։ Վերհիշում էին, որ նա «ոչ ոքի չէր վիրավորել», «ոչ ոքի կոպիտ խոսք չէր ասել», «ոչ ոքի վրա ծուռ չէր նայել»։ Բոլոր այդ հատկությունները, որ առաջ բացասական էին թվում, այժմ ինչ-որ դրական պատկերացում էին ստանում և սովորական թաղման պարապ խոսակցությունների անորոշ պատառիկներից «բարի բարինի» տիպար էր գծագրվում։ Շատերն ինչ-որ բանում զղջում էին, խոստովանում էին, որ երբեմն-երբեմն հանգուցյալի պարզությունից օգտվում էին ի վնաս նրա,— բայց դե ով գիտեր, որ այդ պարզությունն այսպես շուտ վախճան կունենա։ Ապրում էր, ապրում էր պարզությունը, կարծում էին, որ նա հավիտենական է լինելու, վերջ չի ունենալու, բայց նա հանկարծ... Իսկ եթե կենդանի լիներ պարզությունը, հիմա էլ կսկսեին բորբոքել.— բորբոքեցեք, տղերք, ինչ կարիք կա հիմարների վրա ուշադրություն դարձնել։

Մի գյուղացի երեք մանեթ բերեց Իուդուշկային ու ասաց.

— Հանգուցյալ Պավել Վլադիմիրիչին պարտք էի։ Մեր մեջ ստորագրություն չի եղել, այնպես որ ահա՛։

Իուդուշկան փողը վերցրեց, գյուղացուն գովաբանեց և ասաց, որ այդ երեք մանեթը «կանթեղի» համար ձեթ առնելու կտա։

— Եվ դու, բարեկամս, կտեսնես, և բոլորը կտեսնեն, իսկ հանգուցյալի հոգին կուրախանա։ Գուցեև նա այնտեղ մի բան կաղերսի քեզ համար։ Դու չես էլ սպասում, բայց տեսար աստված քեզ բախտավորություն ուղարկեց։

Շատ հնարավոր է, որ հանգուցյալի հատկությունների հասարակական գնահատության մեջ անորոշ կերպով մասնակցություն ուներ և համեմատությունը։ Իուդուշկային չէին սիրում։ Ոչ այն պատճառով, որ նրանից խուսափել չէր կարելի, այլ որ շատ էր նա արդեն չնչին բաներ սիրում, ձանձրացնում էր և օձիքից կպչում։ Նույնիսկ քշերն էին վճռում կապալով հողամաս վերցնել նրանից, որովհետև հողամասը նա կտա, բայց յուրաքանչյուր ավելորդ վարած կամ հնձած վերշոկի համար, փողը վճարելու ամեն մի ուշացրած րոպեի համար անմիջապես կսկսի հողը կապալով վերցնողին դատարանները քարշ տալ։ Շատերին էր նա այդպես քաշեքաշ տվել, և՛ ինքը ոչինչ չէր շահել (նրա բանսարկելու սովորությունն այնպես հայտնի էր ամենուրեք, որ համարյա առանց գործը քննելու, մերժում էին նրա պահանջները), և՛ մարդկանց քաշքշուկով ու աշխատանքից գցելով, քայքայել էր։ «Տուն մի գնիր, այլ հարևան գնիր»,— ասում է առածը, իսկ բոլորին հայտնի էր, թե ինչպիսի հարևան է գոլովլյովյան բարինը։ Կարևոր չէ, որ դատավորը քեզ կարդարացնի, բայց Իուդուշկան իր սատանայական դատարանով հոգիդ կհանի։

Եվ որովհետև չարությունը (նույնիսկ ոչ թե չարությունը, այլ ավելի շուտ բարոյական քարացածությունը), քողարկված կեղծավորությամբ, միշտ ինչ-որ սնահավատ սարսափ է առաջ բերում, ապա նոր «հարևանները» (Իուդուշկան նրանց մեծ սիրալիրությամբ «սիրելի հարևաններ» էր ասում) վախեցած խորը գլուխ էին իջեցնում արյունարբուի կողքով անցնելիս, որն ամբողջովին սևազգեստ, կանգնել էր դագաղի մոտ՝ ձեռները կրծքին ծալած և աչքերը երկինք ամբարձած։

Քանի հանգուցյալը տանն էր, տնեցիները մատների ծայրերի վրա էին քայլում, ներս էին նայում սեղանատուն (այնտեղ, ճաշասեղանի վրա էր դրած դագաղը), գլուխներն էին օրորում, շշնջում էին միմյանց։ Իուդուշկան հազիվ կենդանի էր ձևանում, քսքստացնում էր ոտները միջանցքով անցնելիս, մտնում էր «հանգուցյալիկի» մոտ, խանդաղատում էր, ուղղում էր դագաղի ծածկոցը և շշուկով խոսում գավառակային պրիստավի[33] հետ, որը ցուցակագրում էր իրերն ու կնքում։ Պետենկան և Վոլոդենկան իրարանցման մեջ էին դագաղի մոտ, մոմերն էին վառում, բուրվառն էին տալիս և այլն։ Աննինկան և Լյուբինկան լաց էին լինում և արտասվելից բարակ ձայնով երգակցում էին տիրացուներին հոգեհանգստի կարգը կատարելու ժամանակ։ Սպասավոր կանայք՝ սև կալենկորի հագուստներ հագած, գոգնոցներով մաքրում էին արցունքից կարմրած քթերը։

Արինա Պետրովնան Պավել Վլադիմիրիչի մահից անմիջապես հետո, քաշվեց իր սենյակն ու փակվեց այնտեղ։ Արտասվելու ժամանակ չուներ նա, որովհետև գիտակցում էր, որ ինքը պետք է իսկույն որևէ որոշում ընդունի։ Դուբրովինոյում մնալու մասին նա չէր էլ մտածում... «երբե՛ք»,— հետևապես մնում էր մի բան՝ մեկնել Պոգորելկի, որբերի կալվածքը, նույն այն կալվածքը, որը մի ժամանակ հանդիսանում էր անհնազանդ աղջկան՝ Աննա Վլադիմիրովնային նետած «պատառ»։ Այդ որոշումն ընդունելով, նա իրեն թեթևացած զգաց, կարծես թե Իուդուշկան հանկարծ և ընդմիշտ ամեն մի իշխանություն կորցրեց իր վրա։ Հանգիստ հաշվեց հինգ տոկոսանոց թղթերը (կապիտալը դուրս եկավ՝ տասնըհինգ հազար իրենը, մի այդքան էլ որբերինը, որ ինքն էր

կուտակել) և հանգիստ էլ հաշիվ արեց, թե ինչքան փող պետք է ծախսել Պոգորելկիի տունը կարգի բերելու համար։ Հետո անմիջապես մարդ ուղարկեց Պոգորելկիի տանուտիրոջ ետևից, անհրաժեշտ պատվերներ տվեց հյուսներ վարձելու և սայլեր ուղարկելու Դուբրովինո՝ իր և որբերի իրերի փոխադրության համար, պատվիրեց պատրաստել տարանտասը (Դուբրովինոյում գտնվում էր նրա սեփական տարանտասը, և նա ապացույցներ ուներ, որ դա իր սեփական տարանտասն է) ու սկսեց հավաքվել։ Դեպի Իուդուշկան ոչ ատելություն էր զգում, ոչ տրամադրվածություն. նա ուղղակի զզվում էր նրա հետ գործ ունենալուց։ Նույնիսկ տհաճությամբ և քիչ էր ուտում, որովհետև այդ օրվանից ստիպված էր ուտել ոչ թե Պավելի, այլ Իուդուշկայի ունեցածից։ Մի քանի անգամ Պորֆիրի Վլադիմիրիչն ուզեց նրա սենյակն անցնել, սիրելի բարեկամ մամենկայի հետ զրույց անելու համար (նա շատ լավ էր հասկանում նրա մեկնելու պատրաստությունները, սակայն ցույց էր տալիս, թե ոչինչ չի նկատում), բայց Արինա Պետրովնան ներս չթողեց։

— Գնա, բարեկամս, գնա,— ասում էր նա,— ժամանակ չունեմ ես։

Երեք օրից Արինա Պետրովնան միանգամայն պատրաստ էր մեկնելու։ Պատարագ մատուցեցին ու թաղեցին Պավել Վլադիմիրիչին։ Թաղման ժամանակ ամեն ինչ այնպես եղավ, ինչպես պատկերացնում էր Արինա Պետրովնան այն առավոտ, երբ Իուդուշկան Դուբրովինո ժամանեց։ Ճիշտ այնպես բացականչեց Իուդուշկան՝ «Գնա՜ս բարև, եղբայր»,— երբ դագաղը իջեցնում էին գերեզմանը, ճիշտ այնպես էլ անմիջապես դարձավ Ուլիտուշկային և շտապով ասաց.

— Մեղրահատիկը, մեղրահատիկը չմոռանաք վերցնել։ Եվ սեղանատանը մաքուր սփոցի վրա դրեք... Չէ որ տանն էլ պետք է եղբորս հիշատակել...

Ճաշին, որը սովորության համաձայն մատուցվեց, հենց որ թաղումից վերադարձան, հրավիրված էին երեք քահանա (նույն թվում և գործակալը) և սարկավագը։ Տիրացուների համար առանձին սեղան էր պատրաստված նախասրահում։ Արինա Պետրովնան և որբուկները նստեցին ճանապարհի հա-

գուստներով, բայց Իուդուշկան այս անգամ էլ ձևացրեց, իբրև չի տեսնում։ Մոտ գնալով ուտելիքին, Պորֆիրի Վլադիմիրիչը խնդրեց հայր գործակալին օրհնել ուտելիքն ու խմելիքը, հետո իր և հոգևոր հայրերի համար օղի լցրեց գավաթները, գթաշարժվեց ու ասաց.

— Նորոգ հանգուցյալին հավերժ հիշատակ։ Ա՜խ, եղբա՜յր, եղբա՜յր, թողեցիր դու մեզ... Իսկ ո՞վ էր, որ կարծեք, պիտի ապրեր, եթե ոչ դու։ Վա՜ղ եղբայր, վա՜ղ եղբայր։

Ասաց, խաչակնքեց ու խմեց։ Հետո կրկին խաչակնքեց ու մի պատառ խավիար կուլ տվեց, նորից խաչակնքեց ու զուրգել ճաշակեց։

— Կերեք, տեր հայր,— համոզում էր նա հայր գործակալին։—Այս բոլորը հանգուցյալ եղբորս պաշարներից է։ Հանգուցյալը սիրում էր ուտել։ Եվ ինքն էր լավ ուտում, իսկ առավել շատ սիրում էր ուրիշներին հյուրասիրել։ Ա՜խ, եղբայր, եղբայր, թողեցիր դու մեզ... Վա՜ղ եղբայր, չա՜ր եղբայր։

Մի խոսքով, այն աստիճան տարվեց խոսքով, որ նույնիսկ մոռացավ մամենկայի մասին։ Այն ժամանակ միայն հիշեց, երբ արդեն գդալել էր սունկի ապուրը և արդեն պատրաստվում էր բերանը տանել։

— Մա՜մենկա, սիրելի՜ս,— իրար անցավ նա։— Իսկ ես, անխելքս, խժռում եմ,— ա՜խ, ինչ մեծ մե՜ղք։ Մամենկա, խորտիկ, սունկ, սունկ... Դուբրովինյան սունկ է, նշանավոր սունկ է...

Բայց Արինա Պետրովնան ի պատասխան միայն լուռ գլխով արեց ու չշարժվեց։ Թվում էր, որ նա հետաքրքրությամբ ականջ էր դնում ինչ-որ բանի։ Ասես թե ինչ-որ լույս էր ծագել նրա աչքերի առաջ և այդ ամբողջ կոմեդիան, որի կրկնվելուն նա մանուկ հասակից էր վարժվել, հանկարծ նրան բոլորովին նոր թվաց, չտեսնված։

Ճաշը սկսվեց ազգակցական վիճաբանությամբ։ Իուդուշկան պնդում էր, որ մամենկան տանտիրոջ տեղը նստի, Արինա Պետրովնան հրաժարվում էր։

— Ոչ, այստեղ տերը դու ես, դու էլ նստիր, ուր ուզում ես,— չոր ասաց նա։

— Դուք եք տերը, մամենկա, ամեն տեղ տերը դուք եք, և՛ Գոլովլյովոյում, և՛ Դուբրովինոյում, ամե՛ն տեղ,— համոզում էր Իուդուշկան։

— Չէ՛ արդեն, նստիր։ Որտեղ որ աստված կամենա ես տանտեր լինեմ, այնտեղ էլ ինքս կնստեմ, ուր ուզենամ։ Իսկ այստեղ տերը դու ես, դո՛ւ էլ նստիր։

— Այդ դեպքում մենք ահա ինչ կանենք,— հուզվեց Իուդուշկան։— Մենք տանտիրոջ տեղը ազատ կթողնենք։ Որպես թե եղբայրս անտեսանելի ճաշում է մեզ հետ... Նա տանտերը, իսկ մենք նրա հյուրերը կլինենք։

Այդպես էլ արեցին։ Մինչ ապուրն էին լցնում ափսեները, Իուդուշկան, պատշաճ նյութ ընտրելով, զրույց է սկսում քահանաների հետ, առավելապես, սակայն, խոսքը ուղղելով հայր գործակալին։

— Այ շատերն այժմ հոգու անմահությանը չեն հավատում... Իսկ ես հավատում եմ,— ասում է նա։

— Այդ արդեն միայն հանդուգն մարդիկ չեն հավատում,— պատասխանում է հայր գործակալը։

— Ոչ, հանդուգն մարդիկ էլ չեն, բայց այդպիսի գիտություն կա։ Իբրև մարդը ինքն իրեն է... Ապրում է, ապրում և հանկարծ... մեռնում է։

— Շատ արդեն այդ տեսակ գիտություններ են այժմ առաջ եկել, քշացնել է հարկավոր։ Գիտություններին հավատում են, իսկ աստծուն չեն հավատում։ Նույնիսկ գյուղացիները — նրանք էլ են ուզում գիտնական դառնան։

— Այո, տեր հայր, դուք ճշմարիտ եք։ Ուզում են, ուզում են գիտնականների շարքն ընկնել։ Մեզանում, օրինակ, նագլովցիները. ուտելու հաց չունեն, բայց վերջերս համախոսական գրեցին, դպրոց են ուզում բաց անեն... ուսյալնե՞ր։

— Ամեն բանի դեմ հիմի գիտություն է լույս ընկել։ Անձրևի դեմ՝ գիտություն, պայծառ եղանակի դեմ՝ գիտություն։ Առաջ ուղղակի գալիս մաղթանք էին անել տալիս, և աստված կտար ինչ հարկավոր էր։ Պայծառ եղանակ է հարկավոր, աստված պայծառ եղանակ կուղարկի, անձրև է հարկավոր, աստված անձրևն էլ ուրիշից փոխ չի առնելու։ Աստված ամեն բան էլ ունի առատորեն. իսկ այն ժամանակվանից, ինչ գիտությամբ

սկսեցին ապրել, ամեն բան էլ կտրվեց, ամեն ինչի ժամանակը խառնվեց։ Հարկավոր է ցանել՝ երաշտ է, հնձել է հարկավոր՝ անձրև է։

— Ճշմարտություն է, տեր հայր, սուրբ ճշմարտություն է։ Առաջ, երբ ավելի էին աղոթում աստծուն, հողն էլ լավ բերք էր տալիս։ Հիմիկվա բերքը չէր՝ մեկին չորս, մեկին հինգ,— հարյուրապատիկ էր տալիս հողը։ Այ մամենկան, երևի, հիշում է։ Հիշո՞ւմ եք, մամենկա,— դառնում է Իուդուշկան Արինա Պետրովնային, նպատակ ունենալով նրան ևս ներգրավել խոսակցության մեջ։

— Չեմ լսել, թե մեր կողմերում այդպիսի բերք է եղել... Դու, երևի, քանանացիների երկրի[34] մասին ես կարդացել,— այնտեղ, ասում են, իսկապես այդպես եղել է,— չոր պատասխան է տալիս Արինա Պետրովնան։

— Այո, այո, այո,— ասում է Իուդուշկան, ասես չլսելով մոր դիտողությունը,— աստծուն չեն հավատում, հոգու անմահությունը չեն ընդունում... Բայց ուտել ուզո՛ւմ են։

— Ճիշտ որ միայն ուտել և խմել,— կրկնում է հայր գործակալը, քշտելով իր ֆարաջայի թևքը՝ հոգեհանգստի կուտապ վերցնելու համար։

Բոլորը սկսում են ապուր ուտել. որոշ ժամանակ լսվում է միայն գդալների շխկոցն ափսեներին ու տերտերների փընչոցները՝ տաք ապուրը փչելիս։

— Բայց ահա կաթոլիկները,— շարունակում է Իուդուշկան, դադարելով ուտել,— նրանք, թեպետև հոգու անմահությունը չեն ժխտում, բայց դրա փոխարեն ասում են, որ հոգին իբրև թե ոչ թե ուղղակի դժոխք կամ արքայություն է ընկնում, այլ միաժամանակ մի ինչ-որ միջին տեղ է ընկնում[35]։

— Դա նույնպես անհիմն է։

— Ինչպե՞ս ասել ձեզ, տեր հայր,— մտածմունքների մեջ է ընկնում Պորֆիրի Վլադիմիրիչը,— թե որ սկսենք խոսել կաթոլիկների տեսակետով...

— Հարկ չկա դատարկ բաների մասին խոսել։ Սուրբ եկեղեցին ինչպե՞ս է երգում։ Երգում է՝ կանաչավետ վայրեր,

զովաշունչ վայրեր, ուր չկա ոչ վիշտ, ոչ հառաչանք... Այլևս ինչ «միջին» տեղի մասին կարող է խոսք լինել։

Իուդուշկան, սակայն, ամբողջովին համաձայն չէ և ուզում է որոշ չափով հակաճառել։ Բայց Արինա Պետրովնան, որին այդ խոսակցությունն սկսում է տհաճություն պատճառել, կանգնեցնում է նրան։

— Դե կեր, կեր... աստվածաբան... Ապուրդ, երևի, արդեն սառել է,— ասում է նա և, որպեսզի խոսակցությունը փոխի, դիմում է հայր գործակալին։— Գարին հնձե՞լ եք, տեր հայր։

— Հնձել եմ, տիրուհի. գարին այս տարի լավ է, բայց գարնանացանը լավ բերք չի խոստանում։ Վարսակը դեռ կարգին հատիկ չի լցրել, բայց արդեն սկսել է պառկել։ Ոչ հատիկ, ոչ դարման չի սպասվում։

— Այս տարի ամեն տեղ վարսակից գանգատվում են,— հառաչում է Արինա Պետրովնան, հետևելով, ինչպես Իուդուշկան գդալում է ապուրի մնացորդը։

Մատուցում են այլ կերակուր՝ վիշինա սիսեռով։ Իուդուշկան օգտվում է դրանից, վերսկսելու ընդհատված խոսակցությունը։

— Այ ջհուդներն այս կերակուրը չեն ուտում,— ասում է նա։

— Ջհուդները կեղտոտ մարդիկ են,— ասում է հայր գործակալը,— դրա համար էլ նրանց խոզի ականջ են ասում։

— Սակայն թուրքերը նմանապես... Դա իր որոշ պատճառն ունի, իհարկե...

— Թուրքերը նույնպես կեղտոտ են,— ահա պատճառը։

— Մենք ձիու միս չենք ուտում, իսկ թուրքերը խոզի մսից են զզվում։ Փարիզում ահա, ասում են, պաշարման ժամանակ առնետներ էին ուտում[36]։

— Դե նրանք ֆրանսիացի են։

Այսպես ընթանում է ամբողջ ճաշը։ Մատուցում են ծածան՝ հում սերուցքով։ Իուդուշկան բացատրում է.

— Կերեք, տեր հայր, սա առանձնահատուկ ծածան է. հանգուցյալ եղբայրս շատ էր սիրում։

Մատուցում են ծնեբեկ։ Իուդուշկան ասում է.

— Ա՜յ սա ծներեկ է։ Պետերբուրգում այսպիսի ծներեկի համար մի արծաթ մանեթ պետք է վճարել։ Հանգուցյալ եղբայրս ինքն էր խնամում։ Այ տեսեք, ինչ հաստ ու դալար է։

Արինա Պետրովնայի սիրտը եփ է գալիս։ Մի ամբողջ ժամ է անցել, բայց ճաշը հազիվ կես է եղել։ Իուդուշկան կարծես դիտավորյալ ձգձգում է՝ ուտում է, հետո ցած է դնում դանակ-պատառաքաղը, խոսում է, հետո նորից է ուտում ու նորից խոսում։ Քանի՜-քանի անգամ առաջներում դրա համար Արինա Պետրովնան բղավում էր վրան՝ դե կե՛ր, սատանա, տե՜ր մեղա,— սակայն երևում էր մոռացել է նա մամենկայի խրատները։ Բայց գուցեև չի մոռացել, այլ դիտմամբ է անում, վրեժ է լուծում։ Գուցեև նույնիսկ վրեժ չի լուծում գիտակցաբար, այլ ներքին էությունը հենց այնպես, բնությունից նենգ լինելով, խաղ է անում։ Վերջապես մատուցեցին տապական. նույն այն րոպեին, երբ բոլորը վեր կացան և հայր սարկավագը վեր քաշեց «հաղագս հանգուցելո», միջանցքում քաշքշուկ սկսվեց, բացականչություններ լսվեցին, որոնք բոլորովին փչացրին հոգեհանգստյան շարականի տպավորությունը։

— Ի՞նչ աղմուկ է այնտեղ,— բղավեց Պորֆիրի Վլադիմիրիչը։— Գինետուն եք եկել, ի՞նչ է։

— Մի գոռա, բարի եղիր։ Այդ ես եմ... այդ իմ սնդուկներն են դուրս տանում,— ասաց Արինա Պետրովնան և ոչ առանց հեգնանքի ավելացրեց.— Ստուգել ուզո՞ւմ ես։

Բոլորը հանկարծ լռեցին, Իուդուշկան նույնիսկ չիմացավ ինչ ասել և գունատվեց։ Նա, սակայն, իսկույն գլխի ընկավ, որ հարկավոր է մի կերպ կոծկել մոր անախորժ խոսքը և, դառնալով հայր գործակալին, սկսեց.

— Այ, մարեհավը, օրինակ.... Ռուսաստանում շատ կա, բայց ուրիշ երկրներում...

— Վերջապես կեր, ի սեր Քրիստոսի, մենք ախր քսանհինգ վերստ ճանապարհ պիտի գնանք, հարկավոր է լույսով տեղ հասնել,— ընդհատեց նրան Արինա Պետրովնան։— Պետենկա, սիրելիս, շտապեցրու, որ կարկանդակը շուտ բերեն։

Լռությունը մի քանի րոպե տևեց։ Պորֆիրի Վլադիմիրիչն շտապով կերավ մարեհավի պատառն ու նստել էր գունատ,

ոտքով հատակը թխթխկացնելով ու դողդողացնելով շրթունքները։

— Վիրավորում եք դուք ինձ, սիրելի բարեկամ մամենկա, սաստիկ վիրավորում եք դուք ինձ,— վերջապես ասաց նա, սակայն առանց մորը նայելու։

— Ո՞վ է քեզ վիրավորում։ Եվ այդ ինչո՞վ եմ ես քեզ... այդպես սաստիկ վիրավորում։

— Շա՜տ, շա՜տ վիրավորական է... այնպե՜ս վիրավորական է, այնպե՜ս վիրավորական է։ Այսպիսի րոպեին... մեկնել... Ապրում էիք ձեզ համար.... և հանկարծ.... Եվ վերջապես, այդ սնդուկները.... ստուգելը.... վիրավորակա՛ն է։

— Դե թե որ ուզում ես ամեն ինչ իմանալ, ես կարող եմ և պատասխանել։ Ապրում էի ես այստեղ, քանի Պավել որդիս կենդանի էր, մեռավ նա, ես էլ մեկնում եմ։ Իսկ ինչ վերաբերում է սնդուկներին... Ուլիտկան վաղուց է քո հրամանով հետևում ինձ։ Իմ կարծիքով ավելի լավ է ուղղակի ասել մորը, որ նա կասկածի տակ է գտնվում, քան ուրիշի թիկունքից օձի պես ֆշշալ նրա վրա։

— Մա՜մենկա, բարեկա՜մս, բայց դուք... բայց ես...— տնքաց Իուդուշկան։

— Հերիք է,— թույլ չտվեց նրան շարունակել Արինա Պետրովնան,— ես իմն ասացի։

— Բայց ինչո՞վ կարող էի ես, բարեկամս...

— Ասում եմ քեզ,— ես իմն ասեցի, և վերջ տուր։ Թող ինձ, ի սեր Քրիստոսի, գնամ խաղաղությամբ։ Տարանտասը, լսում ես, պատրաստ է։

Իսկապես, բակում բոժոժների զնգզնգոց և մոտեցող կառքի դղրդոց լսվեց։ Արինա Պետրովնան առաջինը բարձրացավ սեղանից, նրանից հետո վեր կացան նաև մյուսները։

— Դե, այժմ նստենք մի րոպե և ճանապարհ ընկնենք,— ասաց նա, ուղղվելով դեպի հյուրասենյակ։

Նստեցին, լռեցին, իսկ այդ ընթացքում Իուդուշկան արդեն բոլորովին ուշքի եկավ։

— Թե չէ կապրեիք, մամենկա, Դուբրովինոյում... Նայեցեք հապա, ի՞նչ լավ է այստեղ,— ասաց նա, հանցանք գործած շան փաղաքշանքով նայելով մոր աչքերին։

— Ո՛չ, բարեկամս, հերի՛ք է։ Հրաժեշտի պահին չեմ ուզում ես քեզ անախորժ խոսք ասել... բայց այստեղ մնալ ես չեմ կարող։ Բա՞ն չունեմ։ Տեր հայր, աղոթենք։

Բոլորը վեր կացան ու աղոթեցին. հետո Արինա Պետրովնան բոլորի հետ համբուրվեց, բոլորին խաչակնքեց... ազգակցաբար և ծանր քայլերով ուղղվեց դեպի դուռը։ Պորֆիրի Վլադիմիրիչը, բոլոր տնեցիների գլուխն անցած, ճանապարհեց նրան մինչև նախամուտքը, բայց այդտեղ նրան՝ տարանտասի տեսքից՝ գայթակղեց իմաստասիրության դեը։ «Իսկ տարանտասը ախր եղբորս է»,— ծագեց նրա գլխում։

— Այդպես ուրեմն, կտեսնվենք, սիրելի բարեկամ մամենկա,— ասաց նա, մորը նստեցնելով և աչքի տակով տարանտասին նայելով։

— Աստված որ ուզենա... ինչու չպետք է տեսնվենք։

— Ա՜խ, մամենկա, մամենկա, շարաճճին եք դուք, իսկապես։ Հրամայեցեք տարանտասը արձակել և վերադարձեք ձեր հին բույնը... Իսկապես,— քծնում էր Իուդուշկան։

Արինա Պետրովնան չէր պատասխանում. նա արդեն բոլորովին տեղավորվել էր ու երեսը խաչակնքել, բայց որբուկներն ինչ-որ դանդաղում էին։

Իսկ Իուդուշկան այդ ընթացքում նայում ու նայում էր տարանտասին։

— Իսկ տարանտասը, մամենկա, ինչպե՞ս, դուք ինքներդ կուղարկեք, թե կհրամայեք մարդ ուղարկել ետևից,— վերջապես չհամբերեց նա։

Արինա Պետրովնան զայրույթից նույնիսկ ամբողջովին դողաց։

— Տարանտասը ի՛մն է,— բացականչեց նա այնպիսի ցավագին ճիչով, որ բոլորն իրենց և՛ անհարմար զգացին, և՛ ամոթահար։— Ի՛մն է, ի՛մն է, ի՛մն է տարանտասը։ Ես այն... ես ապացույցներ ունեմ... վկաներ կան։ Իսկ դու... իսկ քեզ... Բայց դեռ կսպասեմ.... կտեսնեմ, թե հետո ի՞նչ է դուրս գալու քեզանից։ Երեխանե՛ր, շո՛ւտ արեք։

— Ներեցեք, մամենկա, ես հո պահանջ չեմ անում... եթե նույնիսկ տարանտասը Դուբրովինոյինը լիներ...

— Ի՛մ տարանտասն է, ի՛մը։ Ոչ թե Դուբրովինոյինն է, այլ ի՛մն է։ Չհամարձակվես ասել... լսո՛ւմ ես։

— Լսում եմ, մամենկա... Այդպես ուրեմն, դուք, սիրելիս, մի մոռացեք մեզ... ուղղակի, գիտեք, առանց ձևականությունների։ Մենք ձեզ մոտ, դուք մեզ մոտ... ազգակցաբա՛ր։

— Նստեցի՞ք, հը՞։ Քշի՛ր,— բացականչեց Արինա Պետրովնան, հազիվ զսպելով իրեն։

Տարանտասը տեղից պոկվեց ու չափ ընկավ ճանապարհով։ Իուդուշկան կանգնել էր մուտքի մոտ, թաշկինակն էր թափահարում և, քանի տարանտասը բոլորովին չէր անհայտացել, բացականչում էր ետևից.

— Ազգակցաբար... Մենք ձեզ մոտ... դուք մեզ մոտ... ազգակցաբա՛ր...

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Երբե՛ք Արինա Պետրովնայի մտքով չէր անցել, թե կարող է այնպիսի բոպե լինել, երբ ինքն «ավելորդ բերան» կդառնա. և ահա այդ բոպեն մոտեցավ գաղտագողի ու մոտեցավ ճիշտ այն պահին, երբ նա առաջին անգամ կյանքում գործնականորեն համոզվեց, որ իր բարոյական ու ֆիզիկական ուժերը ջլատվել են։ Այդպիսի բոպեները միշտ հանկարծակի են գալիս. թեպետ մարդը, գուցե, վաղուց արդեն բեկված է, բայց և այնպես դեռ ուժ է գործ դնում ու դեռ կանգնած է,— և հանկարծ, որտեղից-որտեղ կողքից հասնում է վերջին հարվածը։ Հետամուտ լինել այդ հարվածին, գիտակցել նրա մոտենալը շատ է դժվար, մարդը ստիպված է լինում ուղղակի և լռությամբ ենթարկվել նրան, որովհետև դա նույն այն հարվածն է, որը դեռ վերջերս առույգ մարդուն ակնթարթապես և առանց առարկության փլատակի է վերածում։

Ծանր էր Արինա Պետրովնայի դրությունը, երբ նա, խզելով կապերը Իուդուշկայի հետ, բնակվեց Դուբրովինոյում, սակայն այն ժամանակ նա, համենայն դեպս, գիտեր, որ Պավել Վլադիմիրիչը, թեպետև խեթ է նայում իր ներխուժմանը, բայց, այնուամենայնիվ, ունևոր մարդ է, որի համար ավելորդ պատառը մեծ նշանակություն չունի։ Այժմ գործը բոլորովին այլ ընթացք էր ստանում.— նա այնպիսի տնտեսության գլուխ էր կանգնած, ուր բոլոր «պատառները» հաշ-

վի էին։ Իսկ նա գիտեր այդ «պատառների» գինը, ամբողջ կյանքը գյուղում, գյուղացիների հետ անցկացրած լինելով, միանգամայն յուրացրել էր գյուղացու ունեցած հասկացողությունը վնասի մասին, որը կարող է հասցնել «ավելորդ բերանը» առանց այն էլ աղքատիկ տնտեսությանը։

Բայց և այնպես Պոգորելկի փոխադրվելու սկզբնական շրջանում նա դեռևս քաջալերվում էր, ջանասիրությամբ սարքավորվում էր նոր վայրում և արտահայտում էր տնտեսական ըմբռնումների նախկին պարզորոշությունը։ Բայց տնտեսությունը Պոգորելկիում մանր էր, անհանգիստ, պահանջում էր աճապարանք, մշտական անձնական հսկողություն, և թեպետ բորբոքված պահին նրան թվաց, որ ճիշտ հաշվառքի հասնելն այնտեղ, ուր գրոշներից կոպեկներ են կազմվում, իսկ կոպեկներից մանեթներ՝ ոչ մի իմաստություն չի հանդիսանում, սակայն շուտով նա պիտի խոստովաներ, որ դա սխալ համոզմունք էր։ Իմաստություն, իհարկե, չկար, բայց և չկար ոչ առաջվա ցանկությունը, ոչ առաջվա ուժը։ Մանավանդ գործը տեղի ուներ աշնանը, տնտեսական հանրագումարների ամենաեռուն պահին, իսկ մինչդեռ եղանակը և՛ վատ էր, և՛ ակամայից սահմանափակում էր Արինա Պետրովնայի եռանդը։ Հրապարակ եկան ծերունական տկարություններ, որոնք թույլ չէին տալիս տանից դուրս գալ, սկսվեցին ճակատագրական պարապության դատապարտող աշնանային երկար, տխուր երեկոները։ Պառավը հուզվում էր, այս ու այն կողմ էր նետվում, սակայն ոչինչ անել չէր կարող։

Մյուս կողմից նա չէր կարող չնկատել, որ որբուկների հետ էլ ինչ-որ վատ բան է կատարվում։ Նրանք հանկարծ տխրեցին ու գլուխները կախեցին։ Նրանց հուզում էին ապագայի ինչ-որ անորոշ ծրագրեր, ծրագրեր, որոնց մեջ աշխատանքի վերաբերյալ ունեցած պատկերացումները մեջտեղ ընթանում էին բավականությունների, իհարկե, ամենաանմեղ հատկության բավականությունների պատկերացումների հետ։ Այդտեղ կային և՛ հիշողություններ ինստիտուտի մասին, ուր դաստիարակվել էին նրանք, և՛ ընդհատումներով կարդացած մտքեր աշխատանքի մարգկանց մասին, և՛ երկչոտ հույս՝ ինստիտուտի կապերի օգնությամբ որևէ թեկի ծայր բռնել

և նրա օժանդակությամբ մարդկային կյանքի պայծառ թագավորությունը մտնել։ Ամբողջ այդ անորոշության վրա, այնուամենայնիվ, տիրապետում էր մի սիրտ ճմլող և շատ որոշակի միտք՝ ինչ էլ ուզում է լինի, հեռանալ ատելի Պոգորելկիից։ Եվ ահա մի գեղեցիկ առավոտ Աննինկան ու Լյուբինկան հայտարարեցին տատիկին, որ այսուհետև Պոգորելկիում մնալ չեն կարող և չեն ուզում, որ դա ոչ մի բանի նման չէ, որ նրանք Պոգորելկիում ոչ ոքի չեն տեսնում, բացի քահանայից, որը, մանավանդ, միշտ նրանց հանդիպելիս չգիտես ինչու ջահերը հանգցնող կույսերի մասին է խոսում իրենց հետ և որ ընդհանրապես «այդպես չի կարելի»։ Աղջիկները կտրուկ էին խոսում, որովհետև վախենում էին տատիկից և առավել ևս քաջ էին ձևացնում իրենց, այնչափով որ սպասում էին, թե տատիկը կզայրանա ու դեմ կլինի։ Բայց, ի զարմանս, Արինա Պետրովնան նրանց լսեց ոչ միայն առանց զայրույթի, այլև ըմբռամադրություն ցույց չտվեց ապարդյուն խրատներ կարդալու, որի մեջ այնքան առատաձեռն է ուժահատ ծերությունը։ Ավա՜ղ, նա այլևս այն տիրական կինը չէր, որը մի ժամանակ այնպես վստահությամբ ասում էր. «Կգնամ խոտկով և թոռներիս էլ հետս կտանեմ»։ Եվ միայն ծերունական ուժահատությունը չէր, որ մասնակից էր այդ փոփոխությանը, այլև ինչ-որ լավի, ավելի արդարացի լինելու հասկացողությունը։ Բախտի վերջին հարվածները ոչ միայն պարզապես մեղմացրել, խաղաղեցրել էին նրան, այլև նրա մըտավոր տեսադաշտում լուսավորել էին որոշ անկյուններ, ուր նրա միտքն, ըստ երևույթին, մինչ այդ երբեք չէր թափանցել։ Նա ըմբռնեց, որ մարդկային էության մեջ հայտնի ձգտումներ կան թաքնված, որոնք երկար ժամանակ նիրհել կարող են, բայց մեկ անգամ արթնանալով, արդեն անդիմադրավ կերպով մարդուն հրապուրում են այնտեղ, ուր ճառագայթում է կյանքի շողը, այն բերկրալի շողը, որի երևալուն այնպես վաղո՜ւց հետամտել են աչքերը ներկայի անհուսալի խավարի գրկում։ Եվ, մեկ անգամ արդեն հասկանալով այդպիսի ձգտման օրինականությունը, նա այլևս անուժ էր հակառակ ընթանալ դրան։ Ճշմարիտ է, նա աշխատեց ետ կանգնեցնել թոռնիկներին իրենց մտադրությունից, բայց թույլ, առանց համոզվածության. նա անհանգստանում էր նրանց գալիք ապագայից. առավել ևս, որ ինքը ոչ մի կապեր չուներ «լսպես կոչված բարձր աշխարհում, բայց միաժամանակ զգում էր, որ աղջիկներից բաժանվելն անհրաժեշտություն է, անխուսափելիություն։ Ի՞նչ կպատահի նրանց,— այդ հարցը կանգնում էր նրա առաջ առանց հանգիստ տալու, ամեն րոպե, սակայն չէ՛ որ ոչ այդ հարցով, ոչ էլ նույնիսկ ավելի սարսափելիով չես կարող ետ պահել նրան, ով ազատության է ձգտում։ Իսկ աղջիկներն հենց այդ էր միայն, որ ուզում էին՝ դուրս պրծնեն Պոգորելկիից։ Եվ իսկապես, մի քանի տատանումներից և տատիկին հաճույք պատճառելու համար մի քանի անգամվա հետաձգումներից հետո, նրանք մեկնեցին։

Որբերի գնալուց հետո Պոգորելկիի տունը թաղվեց ինչ-որ անհուսալի լռության գիրկը։ Որչափ էլ որ Արինա Պետրովնան բնականից կենտրոնացած լիներ, բայց մարդկային շնչի մերձավորությունը նրա վրա ևս հանգստացնող ազդեցություն էր ունենում։ Ճանապարհելով թոռնիկներին, նա, թերևս, առաջին անգամ զգաց, որ իր էությունից ինչ-որ բան պոկվեց և որ ինքը միանգամից ինչ-որ անսահմանափակ ազատություն ստացավ, այն աստիճան անսահմանափակ, որ այլևս ոչինչ չէր տեսնում իր առջև, բացի դատարկ տարածությունից։ Որպեսզի սեփական աչքերում որևէ կերպ թաքցնի այդ դատարկությունը, նա կարգադրեց անհապաղ փակել շքասենյակները և կիսավերնահարկը, ուր ապրում էին որբերը («փ դեպ փայտ էլ քիչ կգնա», մտածում էր նա միաժամանակ), իսկ իր համար կահավորեց ընդամենը երկու սենյակ, որոնցից մեկում զետեղված էր սրբապատկերների մեծ տապանակը, իսկ մյուսը ներկայացնում էր միաժամանակ ննջարան, առանձնասենյակ և սեղանատուն։ Սպասավորներին նույնպես, խնայողության համար, արձակեց, իր մոտ պահելով միայն պառավ, հազիվ ոտները քարշ տըվող մառանապետուհի Աֆիմյուշկային և զինվորի այրի միաչքանի Մարկովնային, որը կերակուր էր եփում և լվացք էր անում։ Սակայն բոլոր այդ նախագգուշացումները քիչ օգուտ տվեցին.— դատարկության զգացողությունը չհապաղեց թա-

փանցել և այն երկու սենյակներն, ուր նա ուզում էր անջրպետվել նրանից։ Անօգնական միայնակություն և տրտում պարապություն — ահա երկու թշնամի, որոնց հանդիպեց նա երես առ երես և որոնց հետ այսուհետև պարտավորվում էր կարճել իր ծերությունը։ Իսկ դրանցից անմիջապես հետո չհարկադրեց իրեն սպասեցնել տալ նաև ֆիզիկական ու բարոյական քայքայման աշխատանքը, առավել ևս դաժան աշխատանք, որչափով որ պարապ կյանքը քիչ հակահարված է տալիս նրան։

Օրերն հաջորդում էին միմյանց այն ճնշիչ միօրինակությամբ, որոնցով այնչափ հարուստ է գյուղական կյանքը, եթե նա չի շրջապատված ոչ կոմֆորտով[37], ոչ տնտեսական աշխատանքով, ոչ մտքին կերակուր տվող նյութով։ Բացի արտաքին պատճառներից, որոնք անմատչելի էին դարձնում անձնական տնտեսական աշխատանքը, Արինա Պետրովնային ներքնապես նույնպես զզվեցրեց այն գրոշանոց իրարանցումը, որը բաժին ընկավ իրեն իր կյանքի վերջում։ Գուցե և նա հաղթահարեր իր զզվանքը, եթե աչքի առաջ կյանքի նպատակ ունենար, որը արդարացներ նրա չանքերը, բայց նպատակն էր հենց, որ չկար։ Նա բոլորին զզվեցրել էր, ձանձրացրել էր, և իրեն էլ բոլորն ու ամեն ինչ զզվեցրել էին, ձանձրացրել էին։ Նախկին տենդային գործունեությունը հանկարծ տեղի տվեց քնկոտ պարապության, իսկ պարապությունը կամաց-կամաց ապականեց կամքը և իր ետևից այնպիսի հակումներ բերեց, որոնց մասին Արինա Պետրովնան, իհարկե, մի քանի ամիս առաջ երազումն էլ չէր տեսնի։ Ամրապինդ և զուսպ կնոջից, որին ոչ ոք նույնիսկ չէր կարող պառավ անվանել, ստացվեց փլատակ, որի համար գոյություն չուներ ոչ անցյալ, ոչ ապագա, այլ գոյություն ուներ միայն այն րոպեն, որն ապրելու էր։

Ցերեկը նա մեծ մասով նիրհում էր։ Նստում է բազկաթոռին սեղանի մոտ, որի վրա փռված են գաբշահոտ խաղաթղթերն ու նիրհում է։ Հետո ցնցվում է, արթնանում, նայում է լուսամուտին ու երկար, առանց որևէ գիտակցական մտքի, աչք չի կտրում անսահմանորեն փռված հեռավորությունից։ Պոգորելկին տրտում կալվածատուն էր։ Նա, ինչպես ասում են, ցցված էր շատ անհարմար տեղում, առանց այգու, առանց ստվերի, առանց որևէ հարմարության նշույլների։ Նույնիսկ առաջը պարտեզ չուներ։ Տունը միհարկանի էր, կարծես տափակած և ժամանակից ու վատ եղանակներից ամբողջովին սևացած. հետևի կողմը տեղավորված էին փոքրաթիվ օժանդակ շենքերը, որոնք նույնպես խարխլվել էին, իսկ շուրջը փռված էին դաշտեր, անվերջ դաշտեր. նույնիսկ անտառը չէր երևում հորիզոնում։ Բայց որովհետև Արինա Պետրովնան մանկությունից համարյա մնայուն ապրել էր գյուղում, ուստի այդ աղքատիկ բնությունը, ոչ միայն տրտում չէր թվում նրան, այլ նույնիսկ խոսում էր նրա սրտի հետ և նրա մեջ դեռևս պլպլացող զգացմունքներ էր արթնացնում։ Նրա էության լավագույն մասն ապրում էր այդ մերկ ու անվերջանալի դաշտերում և հայացքը ամեն ժամանակ բնազդաբար նրանց էր որոնում։ Նա նայում էր այդ դաշտային հեռավորությանը, նայում էր այդ թրջված գյուղերին, որոնք սև կետերի նման երևում էին հորիզոնում մերթ այստեղ, մերթ այնտեղ, նայում էր գյուղական գերեզմանատների սպիտակ եկեղեցիներին. նայում էր խայտաբղետ բլուրներին, որոնք արևի ճառագայթների մեջ թափառող ամպերը նկարում էին դաշտերի հարթության վրա. նայում էր այն անծանոթ գյուղացուն, որը քայլում էր դաշտային ակոսների միջով, իսկ իրեն թվում էր, որ գյուղացին կարծես անշարժացել է նույն տեղը։ Ըստ որում նա ոչ մի բանի մասին չէր մտածում, կամ, լավ է ասել, նրա մտքերն այն աստիճան ցրված էին, որ նա առավել կամ պակաս երկարատև որևէ բանի վրա կանգ առնել չէր կարող։ Նա միայն նայում էր, նայում էր այնքան ժամանակ, մինչև ծերունական նիրհն էր կրկին թրջում ականջներում ու մառախլապատում էր և դաշտերը, և եկեղեցին, և գյուղը, և հեռվում քայլող գյուղացուն։

Երբեմն նա ըստ երևույթին վերհիշում էր. բայց անցյալի հիշողությունը վերադառնում էր առանց կապակցության, պատառիկների ձևով։ Ուշադրությունը ոչ մի բանի վրա չէր կենտրոնանում և անընդհատ մեկ հեռավոր հիշողությունից մեկ այլ հեռավոր հիշողության էր անցնում։ Երբեմն, սահայն, որևէ առանձնահատուկ բան զարմանք էր պատճառում

նրան. ոչ ուրախությունը,— ուրախությունների վերաբերյալ նրա անցյալն անագորույն կերպով ժլատ էր եղել,— այլ որևէ վիրավորանք, դառը, անտանելի վիրավորանք։ Այն ժամանակ նրա ներսն ասես վառվում էր, վիշտը սողում էր սիրտն ու աչքերն արցունքով էին լցվում։ Նա սկսում էր արտասվել. արտասվում էր ծանր, ցավագին, արտասվում էր այնպես, ինչպես արտասվում է խղճալի ծերությունը, որի արցունքները թափվում են կարծես կոշմարի ծանրությունից։ Բայց մինչ թափվում էին արցունքները, անգիտակցական միտքը շարունակում էր իր գործը և, Արինա Պետրովնայից աննկատելի, հեռացնում էր նրան տխուր տրամադրություն ծնող աղբյուրից, այնպես որ մի քանի բոպեից պառավն ինքն էլ զարմանքով հարց էր տալիս, թե ինչ պատահեց իրեն։

Ընդհանրապես նա ապրում էր, կարծես անձամբ մասնակցություն չունենալով կյանքին, այլ միմիայն շնորհիվ այն բանի, որ այդ փլատակում թաղված կային ինչ-որ մոռացված ծայրեր, որոնք պետք էր հավաքել, հաշվի առնել և հանրագումարի բերել։ Քանի այդ ծայրերը դեռևս կային, կյանքն ընթանում էր իր հերթով, հարկադրելով ավերակին կատարելու բոլոր արտաքին գործունեությունները, որոնք հարկավոր էին, որպեսզի այդ կիսաքուն գոյությունը չփոշիանար։

Սակայն եթե օրերն անցնում էին անգիտակցական նիրհով, ապա գիշերները կատարյալ տառապանք էին։ Գիշերն Արինա Պետրովնան վախենում էր. վախենում էր գողերից, ուրվականներից, սատանաներից,— մի խոսքով այն ամենից, ինչը որ նրա դաստիարակության և կյանքի արդյունքն էր կազմում։ Իսկ այդ բոլորի դեմ եղած պաշտպանությունը վատ էր, որովհետև բացի զառամյալ սպասավորներից, որոնց մասին ասվեց վերը, Պոգորելկիի գիշերային ողջ պահակների անձնակազմն անձնավորվում էր կաղ գյուղացի Ֆեդոսյուշկայի մեջ, որն ամսական երկու մանեթով գյուղից գալիս էր պահպանելու տիրոջ կալվածատունը և սովորաբար նիրհում էր սրահում, սահմանված ժամերին դուրս գալով՝ մի քանի հարված տալու չուգունի տախտակին։ Թեպետ անասունների բակում մի քանի բանվոր և բանվորուհիներ

էին ապրում, բայց անասնապահների տնակը տանից քսան սաժեն հեռավորության վրա էր գտնվում և այնտեղից մեկնումեկին կանչելն այնքան էլ հեշտ բան չէր։

Գյուղական անքուն գիշերն իր մեջ ինչ-որ ծանր, ճընշող բան ունի։ Ժամը իններին, շատ-շատ տասին կյանքը կարծես դադարում է և սարսափ ազդող լռություն է տիրում։ Անելիք չկա, մոմն էլ ափսոս է,— ակամայից պիտի պառկել քնելու։ Աֆիմյուշկան, հենց որ ինքնաեռը վերցնում էին սեղանից, ճորտատիրության ժամանակվանից ձեռք բերած սովորության համաձայն, թաղիքը փռում էր տիրուհու ննջարանը տանող սենյակի դռանը, հետո քորում էր մարմինը, հորանջում էր և հենց որ պառկում էր հատակին, այդպես էլ անշարժանում էր։ Մարկովնան մի քիչ ավելի էր մնում ադախնանոցում և շարունակ փնթփնթում էր, ում որ հայհոյում էր. բայց ահա վերջապես նա էլ լռեց, և մի բոպե անց արդեն լսվում է, ինչպես նա հերթով մերթ խոմփացնում է, մերթ, զառանցում։ Պահակը մի քանի անգամ թխկացրեց տախտակը իր ներկայությունը ազդարարելու համար ու լռեց երկար ժամանակով։ Արինա Պետրովնան նստած է ճարպե մոմի առաջ և փորձում է քունը փախցնել թուղթ բացելով. բայց հազիվ է նա խաղաթղթերը դասավորել, որ նիրհը սկսում է հաղթահարել։ «Կարող է պատահել հրդեհ առաջանա այսպես քնածս ժամանակ»,— ասում է ինքն իրեն և որոշում է պառկել մահճակալին։ Սակայն հազիվ է թաղվում փետրանկողնում, որ մեկ այլ փորձանք է գալիս՝ ամբողջ երեկոյան շարունակ իրեն հաղթահարող քունը բոլորովին փախչում է։ Սենյակում, որ առանց այն էլ սաստիկ տաքացրած է, բաց չերմանցքից տապ է փչում, իսկ փետրավերմակներից ու ներքնակներից մթնոլորտն ուղղակի անտանելի է դառնում։ Արինա Պետրովնան շուռումուռ է գալիս կողքից-կողք. և՛ ուզում է ձայն տալ մեկնումեկին, և՛ գիտե, որ իր կանչի վրա ոչ ոք չի գա։ Խորհրդավոր լռություն է տիրում շուրջը,— լռություն, որի մեջ լարված ականջը կարողանում է բազմաթիվ այլևայլ ձայներ տարբերել։ Մերթ ուր-որ դուռը թխկաց, մերթ հանկարծ ոռնոց լսվեց, մերթ կարծես մարդ անցավ միջանցքով, մերթ սենյակով ինչ-որ շունչ անցավ և նույնիսկ դեմքին դիպավ։ Կանթեղն

է վառվում սրբապատկերի առաջ և իր լույսով առարկաներին ինչ-որ խարուսիկ բնույթ է տալիս, ասես թե դրանք առարկաներ չեն, այլ առարկաների ուրվագծեր են միայն։ Այդ կասկածելի լույսի կողքին հայտնվում է ուրիշը, որ երևում է միայն սենյակի բաց դռնից, ուր տապանակի առաջ չորս թե հինգ կանթեղ է վառված։ Այդ լույսը դեղին քառանկյունու նման պառկել է հատակին, ասես մխվել է ննջարանի խավարի մեջ, շմիաձուլվելով նրան։ Ամենուրեք ստվերներ՝ երերացող, անձայն շարժվող։ Ահա մուկը քրթքրթաց պաստառի ետևը։ «Փըստ... գարշելի՛»,— բղավում է նրա վրա Արինա Պետրովնան, ու կրկին ամեն ինչ լռում է։ Կրկին ստվերներ, կրկին անհայտ որտեղից որ լսվող շշուկ։ Զգայուն, հիվանդագին նիրհով անցնում է գիշերվա մեծ մասը, և միայն լուսադեմին է քունն իր իսկական իրավունքների մեջ մտնում։ Իսկ ժամը վեցին Արինա Պետրովնան արդեն ոտքի վրա է, անքուն գիշեր անցկացնելուց տանջված։

Բոլոր այդ պատճառներին, որոնք բավականաչափ պատկերում են Արինա Պետրովնայի ունեցած խղճուկ գոյությունը, ավելացան ևս երկուսը՝ սննդի աղքատիկ լինելը և բնակարանի անհարմարությունները։ Նա քիչ էր ուտում և վատ էր սնվում, հավանորեն մտածելով դրանով ծածկել տընտեսության մեջ անբավարար հսկողության հետևանքով առաջացած վնասը։ Իսկ ինչ վերաբերում է բնակարանին, ապա Պոգորելկիի տունը հին էր ու խոնավ, իսկ այն սենյակն, ուր փակվել էր Արինա Պետրովնան, երբեք չէր թարմացվում և շաբաթներով մնում էր առանց հավաքելու։ Եվ ահա այդ լիակատար անօգնականության, ամեն տեսակ հարմարությունների ու խնամքի բացակայության մեջ մոտենում էր զառամությունը։

Բայց որչափ շատ էր նա զառամում, այնչափ ուժգին էր երևան գալիս նրա մեջ կյանքի փափագը։ Կամ, լավ է ասել, ոչ այնչափ կյանքի փափագը, որչափ «համեղ բաներ ուտելու» փափագը՝ զուգակցված մահվան զաղափարի լիակատար բացակայության հետ։ Առաջ նա վախենում էր մահվանից, այժմ կարծես բոլորովին մոռացել էր այդ մասին։ Եվ որովհետև նրա կենսական զաղափարները շատ քիչ բանով էին զանա-

զանվում յուրաքանչյուր գյուղացու զաղափարներից, ապա և «լավ կյանքի» պատկերացումը, որով նա գայթակղում էր իրեն, բավականաչափ ստոր հատկություն ուներ։ Այն ամենը, ինչից որ զրկել էր նա իրեն կյանքի ընթացքում՝ լավ պատառը, հանգստությունը, զրույցը կենդանի մարդկանց հետ,— այդ ամենը դարձավ նրա ամենահամառ մտորումների առարկան։ Մոլի ձրիակերի բոլոր հատկությունները՝ դատարկախոսությունը, քծնողական հաճոյակատարությունը ի սեր ողորմության, որկրամոլությունը՝ աճում էին զարմանալի արագությամբ։ Նա տանը սնվում էր սպասավորների կերած աղը դրած ոչ թարմ մսի կաղամբապուրով և այդ ժամանակ երազում էր գոլովլյովյան պաշարների մասին, դուբրովինյան լճերում եղած ծածանների մասին, գոլովլյովյան անտառներում առատորեն բուսնող սունկերի մասին, Գոլովլյովոյում, անասունների բակում գիրացվող թռչունների մասին։ «Արգանակ լիներ հիմի սագի լյարդ ու թոքով կամ ագարիկոն՝ հում սերով», ծագում էր նրա գլխում, ծագում այնպես վառ, որ նույնիսկ շուրթերի անկյունները կախ էին ընկնում։ Գիշերը նա շուռ էր գալիս կողքից-կողք, յուրաքանչյուր շշուկից վախից անզգայանալով ու մտածում էր. «Գոլովլյովոյում և՛ փակերն են ամուր, և՛ պահակներն են հավատարիմ, ամբողջ գիշեր անխոնջ ծեծում են ու ծեծում տախտակը.— քնիր քեզ համար ինչպես Քրիստոսի թևի տակ»։ Ցերեկը նա ժամերով ոչ ոքի հետ խոսք չէր փոխանակում և այդ ակամա լռության ժամանակ մտքում ինքն իրեն ծագում էր. «Գոլովլյովոյում բազմամարդ է, այնտեղ մարդիկ կան, որոնց հետ կարող ես հոգիդ թեթևացնել»։ Մի խոսքով, ամեն րոպե վերհիշում էր Գոլովլյովոն և վերհիշումների հետ զուգընթաց Գոլովլյովոն դառնում էր ինչ-որ լուսապայծառ կետ, ուր կենտրոնացած էր «լավ ապրուստը»։

Եվ որչափ հաճախ էր խոովվում երևակայությունը Գոլովլյովոյի մասին եղած պատկերացումներով, այնչափ ուժգին էր անբարոյականանում կամքը և այնչափ խորն էին թաղվում վերջերս տեղի ունեցած ծանր վիրավորանքները։ Ռուսկինը իր դաստիարակությամբ և կյանքի կերտվածքով չափից ավելի հեշտ է համակերպվում ձրիակերության վիճա-

կի հետ, ուստի և Արինա Պետրովնան նույնպես չխուսափեց այդ բախտից, թեպետ, թվում էր, որ նրա ամբողջ անցյալը նախազգուշացնում ու պաշտպանում էր նրան այդ լծից։ «Այն ժամանակ» սխալված չլիներ, որդիներին բաժանած չլիներ, Իուդուշկային չհավատար, հիմա էլ նա քրթմնջան ու պահանջկոտ պառավ կլիներ, որը կհարկադրեր երեխաներին իր ձեռքին նայել։ Բայց որովհետև սխալն անդարձ կերպով կատարվել էր, ապա քրթմնջան կամակորությունից քծնող ձրիակերի հնազանդությանն անցնելը միայն ժամանակի խնդիր էր։ Քանի ուժերը դեռ պահպանում էին նախկին ամրության մնացորդները, անցումը երևան չէր գալիս, բայց հենց որ գիտակցեց, որ դատապարտված է անօգնականության և միայնակության, ապա անմիջապես հոգու մեջ սողացին փոքրոգության բոլոր հատկությունները և կամաց-կամաց վերջնականապես ապականեցին առանց այն էլ թուլացած կամքը։ Իուդուշկան, որն սկզբներում Պոգորելկի եկած ժամանակ լոկ ամենասառն ընդունելության էր հանդիպում, հանկարծ դադարեց ատելի դառնալ։ Հին վիրավորանքները մոռացվեցին մի տեսակ իրենք-իրենց, և Արինա Պետրովնան ինքն արեց մերձենալու առաջին քայլը։

Սկսվեց խնդրանքներից։ Պոգորելկիից Իուդուշկայի մոտ դեսպաններ եկան, սկզբում երբեմն-երբեմն, հետո ավելի ու ավելի հաճախ։ Մերթ Պոգորելկիում ագարիկոն չէր բուսել, մերթ վարունգներն անձրևներից խալխլոտել էին, մերթ հնդուհավերը, ներկայիս ազատ ժամանակների հետևանքով, սատկոտել էին, «և հրամայիր դու, սրտակից, բարեկամս, Դուբրովինոյում ծածաններ որսան, որը նույնիսկ հանգուցյալ Պավել որդիս էլ երբեք չէր մերժում պառավ մորը»։ Իուդուշկան մոայլվում էր, բայց բացարձակ դժգոհություն արտահայտել չէր համարձակվում։ Ափսոսում էր ծածանը, բայց ամենից ավելի վախենում էր, որ մայրը իրեն կանիծի։ Նա հիշում էր, ինչպես մի անգամ մայրն ասում էր՝ կգամ Գոլովլյովո, կհրամայեմ եկեղեցին բաց անել, կկանչեմ քահանային ու կգոչեմ՝ անիծո՞ւմ եմ,— և այդ հիշողությունը նրան ետ էր պահում շատ ստորություններից, որոնց մեջ նա մեծ վարպետ էր։ Բայց, կատարելով «սիրելի բարեկամ

մամենկայի» կամքը, նա, այնուամենայնիվ, հարևանցի ակնարկում էր շրջապատին, որ ամեն մարդ աստծու կողմից սահմանված խաչ ունի կրելու, և որ դա աննպատակ չի արվում, որովհետև խաչ չունենալով, մարդ մոռանում է իրեն և ապականության գիրկն է թաղվում։ Իսկ մորն այսպես էր գրում. «Վարունգներ, սիրելի բարեկամ մամենկա, ուժերիս ներածին չափ ուղարկում եմ. իսկ ինչ վերաբերում է հնդուհավերին, ապա ցեղականներից բացի մնացել են միայն արուները, որոնք ձեզ համար, իրենց մեծության և ձեր սեղանի սահմանափակության պատճառով, անօգուտ կլինեն։ Իսկ չէի՞ք հաճի դուք գալ Գոլովլյովո՝ ինձ հետ բաժանելու իմ աղքատիկ ճաշը. այն ժամանակ մենք այդ պորտաբուծներից մեկը (իսկապես պորտաբուծներ, որովհետև իմ խոհարար Սամվելը չափազանց վարպետորեն նրանց որձատում է) կհրամայենք տապակել և ձեզ հետ, թանկագին բարեկամս, անուշ կանենք»։

Այդ ժամանակվանից Արինա Պետրովնան հաճախ էր Գոլովլյովո գնում։ Ճաշակեց Իուդուշկայի հետ և՛ հնդուհավեր, և՛ բադեր, ուղածին չափ քնեց և՛ գիշերը, և՛ ճաշից հետո. հոգին թնթևացրեց անսպառ զրույցներով ընչին բաների մասին, որոնց նկատմամբ Իուդուշկան բնությունից ճարպիկ էր. իսկ նա ճարպիկ էր դարձել ծերության հետևանքով։ Նույնիսկ այն ժամանակ չդադարեցրեց իր այցելությունները, երբ լուրեր հասան իրեն, որ Իուդուշկան, ձանձրանալով երկարատև այրիությունից, Եվպրակսիա անունով մի հոգևոր ծագում ունեցող աղջկա տնտեսուհի է վերցրել իրեն։ Ընդհակառակը, իմանալով այդ մասին, նա իսկույնևեթ մեկնեց Գոլովլյովո և, դեռ կառքից չիջած, ինչ-որ մանկական անհամբերությամբ ձայն տվեց Իուդուշկային՝ «Հապա, հին մեղսավոր, ցո՛ւյց տուր, ցո՛ւյց տուր քո սիրունիկին»։ Այդ ամբողջ օրը նա անցկացրեց մեծ բավականությամբ, որովհետև Եվպրակսեյուշկան ինքն էր սպասավորում նրան ճաշի ժամանակ, ինքը նրա համար անկողին պատրաստեց ճաշից հետո, իսկ երեկոյան Իուդուշկայի ու նրա սիրունիկի հետ դուրաչկի խաղաց։ Իուդուշկան նույնպես գոհ էր այդպիսի վերջավորությամբ և, ի նշան որդիական շնորհակալության, Արինա Պետրովնայի Պոգորելկի մեկնելու ժամանակ պատվիրեց

կաղքում, ի միջի այլոց, նաև մի ֆունտ խավիար դնել, մի բան, որ արդեն հարգանքի մեծագույն արտահայտություն էր, որովհետև խավիարը սեփական արտադրություն չէր, այլ գնովի էր։ Այդ արարքն այնպես հուզեց պառավին, որ նա չհամբերեց ու ասաց.

— Այ, սրա համար շնորհակա՛լ եմ։ Աստված էլ քեզ, սիրելի բարեկամս, կսիրի այն բանի համար, որ դու խնամում ու փայփայում ես մորդ ծերության հասակում։ Պոգորելկի գնամ, գոնե չեմ տխրի։ Խավիար ես միշտ սիրել եմ, հիմի էլ ահա, քո շնորհիվ, կճաշակեմ։

***

Հինգ տարի էր անցել Արինա Պետրովնայի Պոգորելկի փոխադրվելուց հետո։ Իուդուշկան ինչպես որ նստեց իր տոհմական Գոլովլյովոյում, այնպես էլ չի շարժվում այնտեղից։ Նա բավականաչափ ծերացել է, խունացել է ու փայլը կորցրել, բայց առաջվանից ավելի է խարդախում, սըտում ու զրախոսում, որովհետև սիրելի բարեկամ մամենկան միշտ ձեռքի տակ է, որը պառավական քաղցր պատառի համար դարձել է նրա զրախոսությունների պարտադիր ունկնդիրը։

Չպետք է կարծել, որ Իուդուշկան կեղծավոր էր, օրինակ, Տարտյուֆի[38] կամ ժամանակակից ֆրանսիական որևէ բուրժուայի իմաստով, որը սոխակի պես գեղգեղում է հասարակական հիմունքների վերաբերյալ։ Ոչ, եթե նա նույնիսկ կեղծավոր էր, ապա զուտ ռուսական տեսակի, այսինքն՝ ուղղակի մի մարդ էր, զուրկ ամեն տեսակ բարոյական չափանիշներից և որը չգիտեր ոչ մի այլ ճշմարտություն, բացի այն ճշմարտությունը, որ կա տարրական ավանդություններում։ Նա չափից դուրս անկիրթ էր, դատամոլ, ստախոս, զրախոս, և ի լրումն այդ ամենի, վախենում էր դևից։ Սրանք բոլորն այնպիսի բացասական հատկություններ են, որոնք իսկական կեղծավորության համար երբեք կայուն նյութ տալ չեն կարող։

Ֆրանսիայում կեղծավորությունը մշակվում է զատիկ-

ռակությամբ. կազմում է, այսպես ասած, «լավ վարվելաձևի» պատկանելությունը և համարյա միշտ ցայտուն քաղաքական կամ սոցիալական գունավորում ունի։ Կան կեղծավորներ կրոնի, կեղծավորներ հասարակական հիմունքների, սեփականության, ընտանիքի, պետականության, իսկ վերջին ժամանակներս առաջացել են նույնիսկ կեղծավորներ «վարչակարգի»։ Եթե այս տեսակի կեղծավորությունը չի կարելի համարել համոզմունք, ապա, համենայն դեպս, դա դրոշ է, որի շուրջը համախմբվում են մարդիկ, որոնք նպատակահարմար են համարում կեղծավորել հատկապես այդ, այլ ոչ թե այլ կերպ։ Նրանք կեղծավորում են գիտակցաբար, իրենց դրոշի իմաստով, այսինքն իրենք ևս գիտեն, որ կեղծավոր են, այլև, բացի դրանից, գիտեն, որ դա անհայտ չէ նաև ուրիշներին։ Ֆրանսիացի բուրժուայի հասկացողությամբ տիեզերքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի ընդարձակ բեմ, ուր անվերջ թատերական ներկայացում է տրվում, ուր մեկ կեղծավոր ռեպլիկ է տալիս մյուս կեղծավորին։ Կեղծավորությունը — դա հրավեր է քաղաքավարության, դեկորումի[39], գեղեցիկ արտաքին իրադրության, և ինչն ամենից կարևորն է, կեղծավորությունը — դա սանձ է։ Ոչ թե նրանց համար, իհարկե, ովքեր կեղծավորում են, լողալով բարձր հասարակական էմպիրեներում[40], այլ նրանց համար, որոնք անկեղծ խլրտում են հասարակական կաթսայի հատակում։ Կեղծավորությունը զսպում է հասարակությանը կրքերի սանձարձակությունից և վերջինս դարձնում է միայն խիստ սահմանափակ փոքրամասնության արտոնությունը։ Քանի կրքերի սանձարձակությունը դուրս չի գալիս փոքրաթիվ, բայց սերտ կազմակերպված կորպորացիայի[41] սահմաններից, նա ոչ միայն վտանգավոր չէ, այլև նույնիսկ աջակցում է ու սնուցում է նրբագեղության ավանդությունները։ Նրբագեղությունը ոչընչացած կլիներ, եթե գոյություն չունենային հայտնի թվով cabinets particuliers*, ուր նա մշակվում է պաշտոնական կեղծավորության կուլտից ազատ բոպեներին։ Սակայն սանձարձակությունն ուղղակի վտանգավոր է դառնում, երբ այն

* Առանձնասենյակներ։

դառնում է հանրամատչելի ու միաձուլվում է այն պատկերացման հետ, թե ամեն ոք ազատ է ներկայացնելու իր պահանջները և ապացուցելու դրանց օրինականությունն ու բնականությունը։ Այն ժամանակ առաջ են գալիս հասարակական նոր շերտավորումներ, որոնք ձգտում են եթե ոչ ամբողջովին դուրս մղել հները, ապա, համենայն դեպս, նշանակալից չափով սահմանափակել դրանք։ Պահանջը cabinets particuliers-ի այնչափ է մեծանում, որ վերջապես հարց է ծագում՝ ավելի լավ չի՞ արդյոք ապագայում ուղղակի կառավարվել առանց դրանց։ Ահա այդ անցանկալի հարցեր առաջանալուց է, որ պաշտպանում են ֆրանսիական հասարակության ղեկավարող դասակարգերն այն սիստեմատիկ կեղծավորությունը, որը չբավարարվելով սովորույթի հողով, անցնում է լեգալության[42] հողի վրա և բարքերի հասարակ գծից դառնում է հարկադիր բնույթ ունեցող օրենք։

Կեղծավորության հարգանքի այս օրենքի վրա է հիմնված, շատ քիչ բացառությամբ, ամբողջ ֆրանսիական ժամանակակից թատրոնը։ Ֆրանսիական լավագույն դրամատիկական երկերի հերոսները, այսինքն նրանք, որոնք կենսական ստորությունների արտասովոր ռեալիստական պատկերացման շնորհիվ հենց ամենամեծ հաջողությունն են վայելում, միշտ վերջում մի քանի ազատ րոպե են գտնում, որպեսզի համեմեն այդ ստորությունները բարձր ֆրազներով, որոնց մեջ հայտարարվում են առաքինության սրբությունը և վայելչանքները։ Ադելը[43] կարող է չորս գործողության ընթացքում ամեն կերպ պղծել ամուսնական անկողինը, բայց հինգերորդ գործողության մեջ անպայման ի լուր բոլորի հայտարարել, որ ընտանեկան օջախը միակ ապաստանն է, ուր ֆրանսիացի կնոջը երջանկություն է սպասում։ Հարց տվեք ձեզ՝ ինչ կպատահեր Ադելին, եթե հեղինակն ուզենար իր պիեսը ևս հինգ այդպիսի գործողություն շարունակել. և դուք կարող եք առանց սխալվելու պատասխանել այդ հարցին, որ հաջորդ չորս գործողության ընթացքում Ադելը կրկին կպղծի ամուսնական անկողինը, իսկ հինգերորդում նորից կդիմի հասարակությանը նույն հայտարարությամբ։ Բայց հարկ էլ չկա ենթադրություններ անելու, այլ պետք է

միայն Théâtre Français-ից գնալ Gymnase, այնտեղից Vaudeville կամ Variétés*, համոզվելու համար, որ Ադելն ամեն տեղ պղծում է ամուսնական անկողինը և ամեն տեղ էլ վերջում հայտարարում է, որ այդ անկողինն է հենց այն միակ բաղինը, ուր կարող է նվիրագործել ազնիվ ֆրանսուհին։ Դա այն աստիճան ներծծվել է բարքերում, որ ոչ ոք նույնիսկ չի էլ նկատում, թե այդտեղ ամենահիմար հակասություն է թաքնված, որ կյանքի ճշմարտությունը հանդես է գալիս կեղծավորության ճշմարտության հետ և երկուսն էլ ընթանում են ձեռք-ձեռքի, այն աստիճան միաձուլվելով միմյանց հետ, որ դժվար է լինում ասել, թե այդ երկու ճշմարտություններից ո՞րն ավելի իրավունք ունի ճանաչման։

Մենք, ռուսներս, կրթության խիստ գունավորված սիստեմ չունենք։ Մեզ խստությամբ չեն վարժեցնում, մեզանից չեն պատրաստում այս կամ այն հասարակական հիմունքների կողմնակիցներ և պրոպագանդիստներ, այլ ուղղակի թողնում են աճել, ինչպես եղինջն է աճում ցանկապատի մոտ։ Դրա համար էլ մեր մեջ շատ քիչ կեղծավորներ կան և շատ կան ստախոսներ, կեղծ սրբեր և զրախոսներ։ Մենք կարիք չունենք հանուն ինչ-որ հասարակական հիմունքների կեղծավորել, որովհետև ոչ մի այդպիսի հիմքեր չգիտենք և նրանցից ոչ մեկը մեզ չի պատսպարում։ Մենք գոյություն ունենք միանգամայն ազատ, այսինքն բուսական կյանք ենք վարում, ստում ենք ու զրախոսում ենք ինքնին, առանց որևէ հիմունքների։

Հարկավո՞ր է արդյոք այս առթիվ ուրախանալ, թե ցավակցել,— դատել այս մասին իմ բանը չէ։ Կարծում եմ, սակայն, որ եթե կեղծավորությունը կարող է զայրույթ և վախ ներշնչել, ապա դատարկ ստախոսությունը ընդունակ է ծանձրույթ և զզվանք առաջացնել։ Ուստի ամենից լավն է, մի կողմ թողնելով գիտակցական կեղծավորության առավելության հարցը անգիտակցականի հանդեպ կամ ընդհակառակը, հրաժարվել և՛ կեղծավորներից, և՛ ստախոսներից։

---

* Ֆրանսիական թատրոն, ժիմնազ, Վոդևիլ, Վարյետե (փարիզյան թատրոններն են)։

Եվ այդպես, Իուդուշկան ոչ այնչափ կեղծավոր է, որչափ ստոր է, ստախոս է ու զրախոս։ Փակվելով գյուղում, նա անմիջապես ազատ զգաց իրեն, որովհետև ոչ մի տեղ, ոչ մի այլ մթնոլորտում նրա հատկությունները չէին կարող իրենց համար այդպիսի լայն ասպարեզ գտնել, քան այստեղ։ Գոլովլյովոյում նա ոչ մի կողմից չէր հանդիպում ոչ միայն ուղղակի դիմադրության, այլև ամենափոքրիկ կողմնակի դժգոհության, որը հարկադրեր նրան մտածել այն մասին, թե՝ այ, ստորություն կանեի, բայց մարդկանցից ամաչում եմ։ Ոչ ոքի կարծիքը չէր անհանգստացնում, ոչ ոքի անհամեստ հայացքը չէր վրդովում, հետևապես առիթ չկար նաև ինքն իրեն վերահսկելու։ Ինքն իրեն անսահման փնթիությամբ վերաբերվելը տիրապետող գիծ դարձավ նրա մեջ։ Վաղուց ի վեր նրան գրավում էր այդ անսահման ազատությունը բարոյական որևէ սահմանափակումից, և եթե նա դեռևս առաջ չէր փոխադրվել գյուղում ապրելու, ապա միմիայն այն պատճառով, որ վախենում էր պարապությունից։ Երեսուն տարուց ավելի անցկացնելով դեպարտամենտի աղոտ մթնոլորտում, նա ձեռք էր բերել մոլի չինովնիկի բոլոր սովորություններն ու իղձերը, որը չի ենթադրում, թե իր կյանքում ջուր ծեծելուց բացի կարող է թեկուզ մի րոպե ազատ ժամանակ լինել։ Բայց ուշադիր հետևելով գործին, նա հեշտությամբ եկավ այն համոզման, որ գործնական դատարկապորտության աշխարհն այն աստիճան դյուրաշարժ է, որ ոչ մի դժվարություն չի ներկայացնում փոխադրելու այն ուր որ ցանկանաս, ինչ մթնոլորտ ուզենաս։ Եվ իրոք, հենց որ բնակություն հաստատեց նա Գոլովլյովոյում, ապա անմիջապես իր համար անչափ շնչին ու աննշան բաներ ըստեղծեց, որոնք կարելի էր անընդհատ շուտումուտ տալ, ամենևին վախ չունենալով, թե դրանք երբևիցե կարող են վերջ ունենալ։ Առավոտվանից նա նստում էր գրասեղանի մոտ ու սկսում էր աշխատանքը. նախ ստուգում էր անասնապահուհուն, մառանապետուհուն, կառավարչին — առաջ մեկ ձևով, հետո այլ ձևով. երկրորդ՝ չափազանց բարդ հաշվետվության ձև մտցրեց թե դրամական, թե նյութական. յուրաքանչյուր կոպեկ, ամեն մի առարկա գրանցում էր քսան գրքում, հանրագումար էր տալիս, մերթ կես կոպեկ կորցնում էր, մերթ մի ամբողջ կոպեկ ավելորդ գտնում։ Վերջապես գրիչ էր վերցնում ու գանգատներ էր գրում հաշտարար դատավորներին և միջնորդին[44]։ Այս բոլորը ո՛չ միայն ոչ մի պարապ րոպե չէր թողնում, այլև նույնիսկ տոկուն, ուժերից վեր աշխատանքի արտաքին ձև ուներ։ Ոչ թե անգործությունից էր գանգատվում Իուդուշկան, այլ այն բանից, որ չէր հասցնում ամեն ինչ վերափոխել, թեպետ ամբողջ օրը տքնում էր առանձնասենյակում, առանց խալաթը հանելու։ Խնամքով կարված, սակայն վերստուգման չենթարկված տեղեկագրերի կույտերը մշտապես ընկած էին նրա գրասեղանի վրա և նույն թվում անասնապահուհի Ֆյոկլայի ամբողջ տարեկան հաշվետվությունը, որի գործունեությունն առաջին անգամից իսկ կասկածելի թվաց նրան և որն ստուգելու ոչ մի ազատ րոպե, այնուամենայնիվ, չէր գտնում։

Ամեն մի հարաբերություն արտաքին աշխարհի հետ վերջնականապես խզվեց։ Նա ոչ գրքեր էր ստանում, ոչ լրագրեր և ոչ իսկ նամակներ։ Որդիներից մեկը, Վոլոդենկան, անձնասպան եղավ, մյուսի՝ Պետենկայի հետ կարճառոտ նամակագրություն ուներ և այն էլ այն ժամանակ, երբ փող էր ուղարկում։ Տգիտության, նախապաշարմունքների, շանասիրաբար ջուր ծեծելու թանձր մթնոլորտ էր թագավորում նրա շուրջը, և նա ոչ մի ձգտում ցույց չէր տալիս դրանից ազատագրվելու համար։ Նույնիսկ այն մասին, որ Նապոլեոն III-ն[45] այլևս չի թագավորում, նա իմացավ միմիայն նրա մահից մեկ տարի անց, գավառական պրիստավից, բայց այդ դեպքում ևս ոչ մի առանձնակի զգացողություն չցուցաբերեց, այլ միայն խաչակնքեց, շշնջաց՝ «արքայություն իրեն» ու ասաց.

— Իսկ որչա՞փ հպարտ մարդ էր, այ-այ-այ։ Ե՛վ այս լավ չի, և՛ այն կարգին չի։ Թագավորները ողջունելու էին գնում նրան, արքայորդիները նախասենյակում հերթապահում էին։ Բայց աստված մի րոպեում նրա բոլոր ցնորքները խորտակեց։

Իսկապես սատ նա չգիտեր նույնիսկ, թե ինչ է կատարվում իր տնտեսության մեջ, թեպետ առավոտից մինչև երե-

կո արածը միայն այն էր, որ հաշվում էր ու ստուգում։ Այդ կողմից նա ուներ դեպարտամենտական չինովնիկի բոլոր անուղղելի հատկությունները։ Պատկերացրեք ձեզ մի պաշտոնյա, որին դիրեկտորը քեֆով եղած ժամանակ ասեր՝ «Սիրելի բարեկամս, իմ նկատառումների համար անհրաժեշտ է իմանալ, թե Ռուսաստանը տարեկան ինչքա՛ն գետնախնձոր կարող է արտադրել,— ուստի նեղություն կրեք մանրամասն հաշիվ կազմել»։ Կշվարե՞ր արդյոք պաշտոնյան այդ հարցն հանդեպ։ Կմտածե՞ր արդյոք համենայն դեպս այն ձեվերի մասին, որոնք պետք է գործադրեր նա իրեն պատվիրած աշխատանքը կատարելու համար։ Ոչ, նա շատ ավելի հասարակ կվարվեր. կգծագրեր Ռուսաստանի քարտեզը, կբաժաներ միանգամայն հավասար քառակուսիների, կպարզեր, թե ամեն մի քառակուսին քանի դեսյատին է կազմում, հետո կանցներ մանրավաճառի խանութը, իմանալու համար, թե որքան կարտոֆիլ է ցանվում մեկ դեսյատինում և միջին հաշվով որքան է ստացվում և, ի վերջո, աստծո և թվաբանության առաջին չորս գործողության օգնությամբ կգար այն եզրակացության, որ Ռուսաստանը նպաստավոր պայմաններում կարող է այսչափ գետնախնձոր արտադրել, իսկ անբարենպաստ պայմաններում՝ այսչափ։ Եվ այդ աշխատանքը ոչ միայն կբավարարեր նրա պետին, այլև, հավանորեն, կզետեղեր ինչ-որ «Աշխատությունների» հարյուրերկուերորդ հատորում։

Նույնիսկ տնտեսուհի ընտրեց նա միանգամայն համապատասխան իր ստեղծած իրադրությանը։ Եվպրակսիան Նիկոլա-վ-Կապելկախ եկեղեցու տիրացուի աղջիկն էր և ամեն կողմով զուտ գանձ էր հանդիսանում։ Նա աչքի չէր ընկնում ոչ արագ պատկերացնելու ընդունակությամբ, ոչ ճարտարամտությամբ, ոչ նույնիսկ արագաշարժությամբ, բայց դրա փոխարեն լավ աշխատող էր, հլու-հնազանդ և համարյա ոչ մի պահանջ չէր ներկայացնում։ Նույնիսկ այն ժամանակ, երբ Իուդուշկան նրան իրեն «մոտեցրեց»,— անգամ այդ ժամանակ Եվպրակսեյուշկան հարցրեց միայն՝ կարո՞ղ է արդյոք ցանկացած ժամանակ կվաս խմել առանց թույլտվության։ Այնպես որ ինքը՝ Իուդուշկան, հուզվեց նրա անշահասի-

բությունից և անհապաղ նրա տրամադրության տակ, բացի կվասից, երկու կիսատակառ թթու դրած խնձոր դրեց, ազատելով այդ հոդվածով ամեն տեսակ հաշվետվությունից։ Նրա արտաքինն էլ առանձնապես գրավչություն չուներ կանանց սիրահար մարդկանց համար, բայց անպահանջկոտ մարդու համար, որը գիտե, թե ինչ է ուզում ինքը, միանգամայն բավարար էր։ Դեմքը լայն էր, սպիտակ, ճակատը նեղ՝ դեղնավուն նոսր մազերով շրջանակված, աչքերը խոշոր էին, անփայլ, քիթը բոլորովին ուղիղ, բերանը հարթ, այն խորհրդավոր, ասես ուր-որ փախչող ժպիտով, որի նմանը կարելի է տեսնել տնաբույժ նկարիչների պատկերներում։ Ո՛չ մի աչքի ընկնող բան, բացի, թերևս, մեջքից, որն այն աստիճան լայն էր ու զորեղ, որ ամենից անտարբեր մարդու ձեռքն անգամ ակամայից բարձրանում էր, ինչպես ասում են, «մի լավ թմփացնելու» աղջկա մեջքին։ Եվպրակսեյուշկան գիտեր այդ և չէր վիրավորվում, այնպես որ, երբ Իուդուշկան առաջին անգամ թեթևակի տփտփեց նրա պարարտ վզակոթը, նա միայն ուսերը ցնցեց։

Այդ աղոտ շրջապատում օրերն անցնում էին օրերի ետևից, մեկը նման մյուսին, առանց որևէ փոփոխության, առանց թարմ հոսանքի ներխուժման հույսի։ Միայն Արինա Պետրովնայի ժամանումն էր մասամբ կենդանացնում այդ կյանքը, և պետք է ճշմարիտն ասել, որ եթե Պորֆիրի Վլադիմիրիչն սկզբներում մոայլվում էր, հեռվում տեսնելով մամենկայի կառքը, ապա ժամանակի ընթացքում ոչ միայն վարժվեց նրա այցելություններին, այլև սիրեց դրանք։ Այդ այցելությունները գոհացնում էին նրա դատարկախոսության կիրքը, որովհետև եթե նա հնարավոր էր համարում դատարկախոսել մեն-միայնակ ինքն իր հետ բազմազան հաշիվների ու հաշվետվությունների առիթով, ապա սիրելի բարեկամ մամենկայի հետ դատարկախոսելը նրա համար ավելի հաճելի էր։ Հավաքվելով միասին, նրանք առավոտից մինչև երեկո խոսում էին և վերջ չէր ունենում նրանց խոսակցությունը։ Խոսում էին ամեն բանի մասին՝ այն մասին, թե առաջ ինչպիսի բերք էր լինում, իսկ այժմ ինչպիսին է լինում. այն մասին, ինչպես էին ապրում կալվածատերերն առաջ, ինչպես են ապրում այժմ. այն մասին, թե

անցյալում աղն էր լավ թե ինչ, բայց այժմ առաջվա վարունգը չկա։

Այդ խոսակցություններն այն առավելությունն ունեին, որ ջրի պես հոսելով, անմիջապես մոռացվում էին, հետևապես դրանք կարելի էր վերսկսել անվերջ նույն այն հետաքրքրությամբ, ասես թե առաջին անգամը լիներ։ Այդ խոսակցություններին ներկա էր լինում նաև Եվպրակսեյուշկան, որին Արինա Պետրովնան այնպես սիրեց, որ ոչ մի քայլ չէր թողնում իրենից հեռանա։ Երբեմն, ձանձրանալով խոսակցություններից, երեքով նստում էին թուղթ խաղալու և նստում էին մինչև ուշ գիշեր՝ դուրաչկի խաղալով։ Փորձեցին Եվպրակսեյուշկային վիստ սովորեցնել, բայց նա չըհասկացավ։ Գոլովլյովյան հսկայական տունը կարծես կենդանություն էր ստանում այդպիսի երեկոներին։ Բոլոր լուսամուտներում լույս էր երևում, ստվերներ էին սահում, այնպես որ անցորդը կարող էր մտածել, թե այնտեղ ով է իմանում ինչ ուրախություն է տիրում։ Ինքնաեռները, սըրճամանները, ուտելիքներն ամբողջ օրը սեղանից չէին պակասում։ Եվ Արինա Պետրովնայի սիրտն ուրախանում էր ու թրթռում և նա մեկ օրվա փոխարեն հյուր էր մնում երեք, չորս օր։ Եվ նույնիսկ մեկնելով Պոգորելկի, նախապես արդեն պատճառ էր հնարում, որպեսզի մի կերպ շուտ վերադառնա գոլովլյովյան «լավ կյանքի» գայթակղություններին։

* * *

Նոյեմբերը վերջանալու վրա է, գետինը անծայրածիր տարածությամբ սպիտակ սավանով է ծածկված։ Դրսում գիշեր է ու բուք, սուր, սառը քամին փորփրում է ձյունը, մի ակնթարթում կույտեր է հավաքում, ծածկում է այն ամենն, ինչ հանդիպում է ճանապարհին, և ամբողջ շրջապատը հառաչանքով է լցնում։ Գյուղը, եկեղեցին, մոտակա անտառը — ամեն ինչ կորել է օդում պտտվող ձնային մառախուղի մեջ. գոլովլյովյան հնամենի անտառը հուժկու ղողանջում է։ Բայց կալվածատանը լույս է, տաք ու հաճելի։ Սեղանատանը ինքնաեռի շուրջը հավաքվել են Արինա Պետրովնան,

Պորֆիրի Վլադիմիրիչն ու Եվպրակսեյուշկան։ Մի կողմ դրված է թղթախաղի սեղանը, վրան ընկած են մաշված խաղաթղթերը։ Սեղանատնից բաց դռները տանում են մի կողմից սրբապատկերանոցը՝ ամբողջովին ողողված վառված կանթեղների լույսերով, մյուս կողմից՝ բարինի առանձնասենյակը, ուր նույնպես պլպլում է սրբապատկերի առաջ վառված կանթեղը։ Սաստիկ տաքացրած սենյակներում տոթ է, փայտի յուղի և ինքնաեռի ածուխի հոտ է կանգնած։ Եվպրակսիան, ինքնաեռի առաջ նստած, գավաթներն է լվանում ու մաքրում է սրբիչով։ Ինքնաեռը երգում է շարունակ. մերթ թշշում է ողջ ուժով, մերթ կարծես նիրհել է սկսում ու սուր թանչում է։ Գոլորշու կոհակները վեր բարձրանալով կափարիչի տակից, մառախուղով են պատում արդեն քառորդ ժամից ավելի կոնֆորկայի վրա գտնվող թեյնիկը։ Նստածները զրուցում են։

— Հապա, այսօր քանի անգամ ես հիմար մնացել,— հարցնում է Արինա Պետրովնան Եվպրակսեյուշկային։

— Չէի մնա, թե որ ինքս չուզենայի։ Ուզում եմ ձեզ ուրախություն պատճառել,— պատասխանում է Եվպրակսեյուշկան։

— Պատմի՛ր։ Տեսա ինչպե՞ս էիր ուրախանում, երբ ես երեքանոց ու հինգանոց էի նետում քեզ։ Ես հո Պորֆիրի Վլադիմիրիչը չեմ. նա քեզ երես է տալիս, շարունակ մի տեսակ թուղթ է գալիս, իսկ ես, սիրելիս, պատճառ չունեմ։

— Մի չէ-չէ, խարդախությո՞ւն անեիք։

— Այ, այդ մեղքը ես չունեմ։

— Ո՞ւմ բռնեցի ես հենց նոր։ Ո՞վ էր, որ խաչի յոթանոցն ուզում էր փոսիկի ութանոցի հետ զույգ անել։ Դա արդեն ես ինքս տեսա, ինքս բռնեցի։

Այդ ասելով, Եվպրակսեյուշկան վեր է կենում, որ թեյնիկը վերցնի ինքնաեռի վրայից ու մեջքով դառնում է Արինա Պետրովնայի կողմը։

— Ի՞նչ մեջք ունես...— ակամայից բացականչում է Արինա Պետրովնան։

— Այո, նրա մեջքը...— մեքենայաբար ասում է Իուդուշկան։

— Մե՞ջք հա մե՞ջք... անամոթնե՛ր։ Եվ ի՞նչ է արել ձեզ իմ մեջքը։

Եվպրակսեյուշկան աջ ու ձախ է նայում ու ժպտում էր։ Մեջքը — դա նրա սիրած նյութն է։ Այսօր նույնիսկ ծերուկ Սավելիչը՝ խոհարարն անգամ հիացավ նրա մեջքով ու ասաց՝ մե՞ջք եմ ասել, հա՞, կարծես պլիտա լինի։ Եվ նա չգանգատվեց Պորֆիրի Վլադիմիրիչին։

Գավաթներն հերթով լցվում են, ու ինքնաեռն սկսում է խաղաղվել։ Իսկ բուքն ավելի ու ավելի է սաստկանում՝ մերթ ձնի ահագին կույտեր է խփում լուսամուտների ապակիներին, մերթ ինչ-որ անասելի հեծկլտանքով սլանում է վառարանի ծխնելույզի երկայնքով։

— Բուքը, երևում է, կատակ չի անում,— նկատում է Արինա Պետրովնան,— ոռնում է ու ոռնում։

— Թող ոռնա։ Նա ոռնում է, իսկ մենք այստեղ թեյ ենք խմում, այդպես, սիրելի բարեկամ մամենկա,— ասում է Պորֆիրի Վլադիմիրիչը։

— Ա՜խ, լավ չէ հիմի դաշտում, թե որ մեկնումեկն այնտեղ աստվածային այս ողորմությանն հանդիպի։

— Ում համար ուզում է թող վատ լինի, իսկ մեր հոգսը չի։ Կան մարդիկ, որոնց համար ցուրտ է ու խավար, իսկ մեզ համար տաք է ու լուսավոր։ Նստել ենք ու թեյ ենք խմում։ Շաքարով, սերով ու լիմոնով։ Իսկ որ ուզենանք ռոմով՝ ռոմով էլ կխմենք։

— Այո, բայց հիմի թե որ...

— Թույլ տվեք, մամենկա։ Ես ասում եմ, որ հիմի դաշտում շատ վատ է։ Ոչ ճանապարհ կա, ոչ շավիղ,— ամեն ինչ թաղվել է ձնի տակ։ Գայլեր կան նույնպես։ Իսկ մեզանում այստեղ և՛ լույս է, և՛ հաճելի է, ու մենք ոչնչից չենք վախենում. նստել ենք այստեղ մեզ համար հաշտ ու խաղաղ։ Թե ուզենանք թուղթ խաղալ՝ թուղթ կխաղանք, ուզենանք թեյ խմել՝ թեյ կխմենք։ Չափից ավելի չենք խմի, ինչքան հարկավոր է, այնքան էլ կխմենք։ Իսկ ինչից է, որ այդպես է։ Նրանից է, սիրելի բարեկամ մամենկա, որ աստվածային ողորմությունը չի պակասում մեզանից։ Թե որ նա, երկնային թագավորը չլիներ, ցուցե մենք էլ հիմի դաշ-

տում մոլորվել էինք և մեզ համար էլ և՛ խավար կլիներ, և՛ ցուրտ... Հնամաշ կապա հագած, անպետք գոտիկ, տրեխներ...

— Չէ՛ մի, տրեխնե՛ր։ Չէ՛ որ մենք էլ ազնվականի կոչումով ենք ծնվել։ Լավ թե վատ, բայց և այնպես կոշիկ ենք հագնում։

— Իսկ գիտե՞ք դուք, մամենկա, թե ինչո՞ւ ենք մենք ազնվականի կոչումով ծնվել։ Այն պատճառով միայն, որ աստծու ողորմությունը մեզ հետ է եղել։ Նա որ չլիներ, մենք էլ հիմի խրճիթում էինք նստել և ոչ թե մոմ էինք վառում, այլ՝ մարխ, իսկ թեյի ու սուրճի մասին չէինք էլ համարձակվի մտածել։ Նստել էինք հիմի — ես տրեխ էի կարկատում, դու անմիս կաղամբապուր էիր բերում ընթրիք անելինք, իսկ Եվպրակսեյուշկան քաթան էր գործում... Իսկ կարող էր պատահել, որ դժբախտություն լիներ, տասնապետը պահանջեր սայլը լծեի...

— Այսպիսի ժամանակ տասնապետն էլ սայլ լծել չի տա։

— Չի իմացվի, սիրելի բարեկամ մամենկա։ Իսկ հանկարծ եթե զորագնդեր են անցնում։ Գուցե պատերազմ է կամ խռովություն է — որպեսզի զորագնդերը ժամանակին իրենց տեղը լինեն։ Այ վերջերս պրիստավն ինձ ասաց, որ Նապոլեոն III-ը մեռել է,— երևի հիմի ֆրանսիացիները կըսկըսեն անկարգություններ անել։ Բնական է, մերոնք իսկույն առաջ կշարժվեն,— դե, գյուղացի, սայլ տուր։ Ցրտին լինի, բքին լինի, ճանապարհները փակված լինեն — ոչ մի բանի չեն նայի,— գնա, գյուղացի, երբ իշխանությունը հրամայում է։ Իսկ մեզ դեռ կխնայեն, սայլ հանել չեն տա։

— Ի՞նչ ասել կուզի, մեծ է աստծու ողորմությունը մեր նկատմամբ։

— Իսկ ես ի՞նչ եմ ասում։ Աստված, մամենկա, ամեն ինչ է։ Նա է մեզ և՛ պալատ տալիս, որ տաք լինի, և՛ պաշար է տալիս, որ կուշտ լինենք։ Ամեն ինչ նա է։ Մենք այնպես ենք կարծում, որ ամեն ինչ մենք ենք, մեր փողով ենք առնում, բայց որ մտիկ ենք տալիս, որ նայում ենք, որ միտք ենք անում — ամեն ինչ նա է։ Եվ թե որ նա չուզենա, մենք ոչինչ չենք ունենա։ Ես հիմի կուզենայի նարինջ ունենալ,

ինքս էլ կուտեի, սիրելի բարեկամ մամենկային կհյուրասիրեի ու ամենքին մի-մի հատ կտայի, փող էլ ունեմ, որ նարինջ առնեմ, հանեցի փողը — դե տուր։ Բայց աստված ասում է՝ կա՛ց, ես էլ ահա նստել եմ ինչպես փիլիսոփա անվարունգ[46]...

Բոլորը ծիծաղում են։

— Պատմեցե՞ք,— ասում է Եվպրակսեյուշկան,— այ, իմ քեռին Պեսոչնիում Ուսպենյա եկեղեցու ժամկոչն էր, էնպես չերմեռանդն էր, որ ասել չի լինի, կարո՛ղ էր աստված մի բան անել նրա համար,— բայց ընկավ բքի տակ ու սառեց։

— Ես էլ այդ եմ ասում, թե որ աստված ուզենա, մարդը կսառչի, թե որ չուզենա, ողջ կմնա։ Աղոթքի մասին էլ նույնպես պիտի ասել, կա աղոթք ընդունելի և կա աղոթք անընդունելի։ Ընդունելին հասնում է, իսկ անընդունելին, ինչպես եղած լինի, թե եղած չլինի։ Գուցե քեռուդ աղոթքն անընդունելի է եղել ու դրա համար էլ չի հասել։

— Հիշում եմ, քսանչորս թվին ես գնացի Մոսկվա,— այն ժամանակ ես դեռ հղի էի Պավելով,— գնացի ես դեկտեմբեր ամսին Մոսկվա...

— Թույլ տվեք, մամենկա, աղոթքի մասին ես վերջացնեմ։ Մարդ ամեն բանի համար աղոթք է անում, որովհետև նրան ամեն բան հարկավոր է։ Ե՛վ յուղ է հարկավոր, և՛ կաղամբ է հարկավոր, և՛ վարունգ,— մի խոսքով՝ ամեն ինչ։ Երբեմն նույնիսկ ինչ որ հարկավոր չի, բայց նա՝ մարդկային թուլության շնորհիվ՝ խնդրում է։ Սակայն աստված վերից ամեն ինչ տեսնում է։ Դու յուղ ես խնդրում, իսկ նա քեզ կաղամբ կամ սոխ է տալիս. դու լավ ու տաք եղանակի մասին ես խնդրում, իսկ նա քեզ անձրև ու կարկուտ է տալիս։ Եվ պետք է դու այդ հասկանաս ու չտրտնջաս։ Այ մենք անցյալ սեպտեմբերին սառնամանիք էինք խնդրում աստծուց, որպեսզի մեր աշնանացանը չփտի, սակայն աստված սառնամանիք չտվեց, և մեր աշնանացանը փտեց։

— Այն էլ ինչպե՞ս փտեց,— ցավակցում է Արինա Պետրովնան։— Նովինկայում գյուղացիների ամբողջ աշնանացանը թեկուզ դեն գցիր։ Մոռացված են գարնանը նորից վարել և գարնանացան անել։

— Ա՛ռ առ է որ կա։ Մենք այստեղ խորամանկություն

ենք անում ու խելքներիս զոռ ենք տալիս, իսկ աստված միանգամից, մի ակնթարթում մեր բոլոր ծրագիր-խորհուրդները փոշի է դարձնում։ Դուք, մամենկա, ինչ-որ բան էիք ուզում պատմել, թե ինչ է պատահել ձեզ հետ քսանչորս թվին։

— Ինչի մասի՞ն, մոռացա արդեն։ Երևի նույն այդ մասին, աստծու ողորմածության մասին։ Չեմ հիշում, բարեկամս, չեմ հիշում։

— Աստուծով մյուս անգամ կհիշեք։ Իսկ մինչ գրսում բուքն է ոռնում, դուք, սիրելի բարեկամս, մուրաբա կերեք։ Բալի մուրաբա է։ գոլովլյովյան է։ Եվպրակսեյուշկան ինքն է եփել։

— Ուտում եմ։ Խոստովանանք լինի, բալը հիմի ինձ համար հազվագյուտ բան է։ Առաջներում շատ հաճախ էի բերանս քաղցրացնում, բայց հիմի... Գոլովլյովոյում բալը լավն է, հյութալի է, խոշոր, բայց Դուբրովինոյում, ինչ արեցինք, բոլորն էլ անհամ դուրս եկան։ Դու չլինի, Եվպրակսեյուշկա, ֆրանսիական օղի ես լցրել մուրաբի մեջ։

— Ինչպե՞ս չէ, ինչպես սովորեցրել եք, այնպես էլ արել եմ։ Հա, ահա թե ինչ էի ուզում հարցնել,— վարունգը դուք ինչպե՞ս եք աղը դնում, հիլ[47] գցո՞ւմ եք մեջը։

Արինա Պետրովնան միաժամանակ մտածում է և նույնիսկ թևերն է տարածում։

— Չեմ հիշում, բարեկամս, կարծեմ առաջ հիլ էլ էի գցում։ Հիմի չեմ գցում, հիմի իմ աղ դնելն ի՞նչ աղ դնել է։ Իսկ առաջ գցում էի... Նույնիսկ շատ լավ հիշում եմ, որ գցում էի։ Տուն որ գնամ, ռեցեպտներում մտիկ կտամ։ Ես, քանի ուժս տեղն էր, ամեն բանով հետաքրքրվում էի, գրում էի։ Մի տեղ մի բան որ դուր էր գալիս, հարցուփորձ էի անում, գրի էի առնում ու տանը փորձում էի։ Ես մի անգամ մի այնպիսի գաղտնիք իմացա, այնպիսի՞ գաղտնիք, որ հազար մանեթ տալիս էին, բայց այն մարդը չէր հայտնում ու չէր հայտնում։ Իսկ ես մատակարարուհուն մի քսանհնգանոց տվեցի, նա ինձ բոլորը մանրամասն բացատրեց։

— Այո, մամենկա, իր ժամանակ դուք... ուղղակի մինիստր էիք։

— Մինիստրը — մինիստր չէի, բայց աստծուց շնորհակալ

կարող եմ լինել, չեմ շռայլել, այլ ավելացրել եմ։ Այժմ էլ ահա իմ արդար աշխատանքի պտուղն եմ ուտում,— բայեթին Գոլովլյովոյում չէ՞ որ ես ինքս եմ աճեցրել։

— Եվ դրա համար շնորհակալություն ձեզ, մամենկա, մեծ շնորհակալություն։ Հավիտյան շնորհակալություն և՛ իմ կողմից, և՛ գալիք սերունդների կողմից։

Իուդուշկան վեր է կենում, մոտենում է մորը և համբուրում է նրա ձեռքը։

— Քեզ էլ շնորհակալություն, որ մորդ խնամք ես տանում։ Այո, լավ պաշարներ ունես դու, շատ լավ։

— Մենք ի՞նչ պաշար ունենք։ Այ, պաշարը դուք ունեիք, այդ ճիշտ է։ Քանի՞-քանի նկուղ ունեիք միայն և ոչ մեկում ազատ տեղ չկար։

— Ես էլ պաշարներ ունեի,— սուտ չեմ ուզում ասել, երբեք անտարբեր չեմ եղել։ Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ նկուղները շատ էին, դե այն ժամանակ անիվն էլ մեծ էր, ներկայիս համեմատությամբ տասնապատիկ շատ ուտող բերան կար։ Միայն սպասավորները քանի՞ հոգի էին,— բոլորի մասին հոգ տար, բոլորին կերակրիր։ Սրան վարունգ, նրան կվաս — քիչ ու շատ, ավել-պակաս, մեկ էլ տեսար ամեն բանից շատ-շատ դուրս եկավ։

— Այո, լա՜վ ժամանակ էր։ Ամեն բան այն ժամանակ շատ էր։ Ե՛վ հացը, և՛ պտուղները— ամեն ինչ առա՜տ-առա՜տ։

— Գոմաղբ շատ էինք կուտակում, դրա համար էլ լավ բերք էր տալիս։

— Ոչ, մամենկա, դրանից չի։ Այլ աստվածային օրհնությունը կար,— ահա ինչից էր։ Հիշում եմ, պապենկան այգուց մի հատ խնձոր բերեց, բոլորը նույնիսկ զարմացել էին, ափսեում չէր տեղավորվում։

— Այդ չեմ հիշում։ Ընդհանրապես գիտեմ, որ լավ խընձոր էր լինում, բայց որ այդպիսիները լինեին, ափսեի մեծությամբ, այդ չեմ հիշում։ Այ որ դուբրովինյան լճում քսան ֆունտանոց ծածան որսացին այն թագադրության ժամանակ,— այդ իսկապես որ եղել է։

— Եվ ծածանը, և մրգերը,— բոլորն այն ժամանակ խոշոր էին լինում։ Այ հիշում եմ, այգեպան Իվանը ձմերուկ էր ցանում, այ այսքան էին լինում։

Իուդուշկան սկզբում շոռում է ձեռները, հետո կլորացնում է, ցույց տալով, որ գրկել չի կարողանում։

— Ձմերուկ էլ լինում էր։ Ձմերուկը, ասեմ քեզ, բարեկամս, նայած տարվան։ Տարի կա, որ շատ է ու քաղցր, տարի կա, որ և քիչ է, և անհամ, իսկ տարի էլ կա, որ ամենևին չի լինում։ Դե այն էլ պետք է ասած, թե ինչը որտեղ է լավ աճում։ Այ օրինակ Խլեբնիկովում, Գրիգորի Ալեքսանդրովիչի հողում ոչինչ չէր բուսնում,— ոչ պտուղ, ոչ միրգ, ոչինչ։ Միայն սեխ։ Բայց ի՞նչ սեխեր էին։

— Նշանակում է նրա համար աստծու ողորմածությունը սեխն էր։

— Այո, իհարկե, առանց աստծու ողորմության ոչինչ անել չես կարող, խուսափել նրանից չես կարող։

Արինա Պետրովնան արդեն երկու գավաթ խմել է ու ըսկըսում է թղթախաղի սեղանի կողմը աչք ածել։ Եվպրակսեյուշկան նույնպես այրվում է անհամբերությունից՝ դուրս չկի խաղալու։ Բայց այդ ծրագրերը քանդվում են հենց Արինա Պետրովնայի շնորհիվ, որովհետև նա հանկարծ մի բան է հիշում։

— Ես ախր նորություն ունեմ,— հայտարարում է նա,— երեկ որբուկներից նամակ եմ ստացել։

— Սուս արեցին, սուս արեցին ու հանկարծ ձայն հանեցին։ Երևում է դժվարության մեջ են, փող են խնդրում։

— Չէ, չեն խնդրում։ Այ հիացիր։

Արինա Պետրովնան գրպանից հանում է նամակն ու տալիս է Իուդուշկային, որը կարդում է։

«Դուք, տատիկ, այլևս մեզ ոչ հնդուհավ, ոչ հավ մի ուղարկեք։ Փող էլ մի ուղարկեք, այլ թողեք տոկոս բերեն։ Մենք Մոսկվայում չենք, այլ Խարկովում ենք, ընդունվել ենք թատրոն, իսկ ամռանը շրջելու ենք տոնավաճառից-տոնավաճառ։ Ես, Աննինկաս, «Պերիկոլայում» դերյուս ունեցա, իսկ Լյուբինկան «Անյուտինի գլազկի»-ում։ Ինձ մի քանի անգամ բեմ կանչեցին, մանավանդ այն տեսարանից հետո, երբ Պերիկոլան դուրս է գալիս մի փոքր քեֆով ու երգում է՝ ես

պատ-ռա՜ստ եմ, պատռաստ եմ, պատ-ռա-ա՜ստ եմ։ Լյուբինկան նույնպես շատ դուր եկավ։ Դիրեկտորն ինձ ամսական հարյուր մանեթ ռոճիկ նշանակեց և բենեֆիս՝ Խարկովում, իսկ Լյուբինկային՝ յոթանասունհինգ մանեթ և բենեֆիս ամռանը, տոնավաճառում։ Բացի դրանից նվերներ են լինում սպաներից ու փաստաբաններից։ Միայն փաստաբանները երբեմն կեղծ փող են տալիս, այնպես որ պետք է զգույշ լինել։ Եվ դուք, սիրելի տատիկ, Պոգորելկիում ամեն բանից օգտվեցեք, իսկ մենք այդտեղ երբեք չենք գա և նույնիսկ չենք հասկանում, թե ինչպես կարելի է այդտեղ ապրել։ Երեկ առաջին ձյունը եկավ, և մենք այստեղի փաստաբանների հետ տրոյկայով զբոսանքի գնացինք. մեկը նման է Պլեվակոյին, շատ լավն է։ Գլխին դրեց շամպայնով լի բաժակն ու պար եկավ — շատ ուրախ էր։ Մյուսն այնքան լավը չի արտաքինից, Պետերբուրգի Յազիկովին[48] է նմանվում։ Պատկերացրեք, իր երևակայությունը խանգարել է «Ռուսական լավագույն երգերի ու ռոմանսների ժողովածու» կարդալով և այն աստիճան թուլացել է, որ նույնիսկ դատարանում ուշքից գնում է։ Եվ այդպես համարյա ամեն օր անց ենք կացնում կամ սպաների, կամ փաստաբանների հետ։ Զբոսնում ենք, լավագույն ռեստորաններում ճաշում ենք, ընթրում ենք և ոչինչ չենք վճարում։ Իսկ դուք, տատիկ, Պոգորելկիում ոչինչ մի խնայեցեք և ինչ որ բուսնում է այնտեղ՝ հացը, ճտերը, սունկերը,— բոլորը կերեք։ Մենք դրամագլուխն էլ ուրախու...

Մնացեք բարև, մեր կավալերները եկան — նորից հրավիրում են տրոյկաներով զբոսնելու։ Սիրելի՜, աստվածայի՜ն, մնա՜ք բարև։

Անենիկա։
Եվ ես նույնպես՝ Լյուբինկա»։

— Թա՛ւ,— թքեց Իուդուշկան, նամակը վերադարձնելով։ Արինա Պետրովնան նստել է մտախոհ ու միառժամանակ ոչինչ չի ասում։

— Դուք նրանց, մամենկա, դեռ ոչինչ չե՞ք պատասխանել։

— Դեռ ոչ, նամակն էլ երեկ եմ միայն ստացել, դրա համար էլ եկել եմ ձեզ մոտ, որ ցույց տամ, բայց այս ու այն բաներով տարվեցի, քիչ էր մնում մտահան անեի։

— Մի պատասխանեք։ Ավելի լավ կլինի։

— Ինչպե՞ս թե չպատասխանեմ։ Չէ որ ես հաշիվ պիտի ներկայացնեմ։ Պոգորելկին ախր նրանցն է։

Իուդուշկան նույնպես մտածմունքների մեջ է ընկնում. ինչ-որ շարամիտ ծրագիր է հղանում նրա գլխում։

— Իսկ ես շարունակ այն մասին եմ միտք անում, թե նրանք իրենց ինչպես են պահում այդ որջում,— շարունակում է մինչ այդ Արինա Պետրովնան։— Այդ արդեն այնպիսի բան է, թե որ մեկ անգամ սայթաքեցին՝ կուսական պատիվն այլևս վերադարձնել չի լինի։ Դե հետո արի գլխիդ վա՜յ տուր։

— Շա՜տ նրանց հարկավորն է,— հակաճառեց Իուդուշկան։

— Ինչ էլ որ լինի... Աղջկա համար դա նույնիսկ, կարելի է ասել, ամենաառաջին գանձն է կյանքում... Դրանից հետո այլևս ո՞վ կամուսնանա այդ տեսակի հետ։

— Հիմի, մամենկա, առանց ամուսնու էլ՝ ինչպես թե ամուսնու հետ են ապրում։ Հիմի կրոնի պատվիրանների վրա ծիծաղում են։ Հասան մի թփի, թփի տակ ամուսնացան ու հարցը փակվեց։ Դա նրանց մոտ քաղաքացիական ամուսնություն է կոչվում։

Իուդուշկան հանկարծ գլխի է ընկնում, որ ինքն էլ ախր ապօրինի կենակցում է հոգևոր կոչման տեր աղջկա հետ։

— Իհարկե, երբեմն, կարիքից դրդված...— ուղղում է ինքն իրեն,— թե որ մարդը դեռ ուժերը չի կորցրել, այն էլ եթե այրի է... կարիքից օրենքն էլ փոփոխվում է։

— Իհարկե, կարիքի դեպքում կոցարն էլ գեղգեղում է սոխակի պես։ Սրբերն էլ կարիքից դրդված մեղանչել են, ուր մնաց մենք, մեղավորներս։

— Այդպես է որ կա։ Ձեր տեղը որ ես լինեի, գիտե՞ք ինչ կանեի։

— Խորհուրդ տուր, բարեկամս, ասա։

— Ես նրանցից լիակատար լիազորագիր կպահանջեի Պոգորելկիի համար։

Արինա Պետրովնան վախեցած նրան է նայում։

— Ես արդեն լիակատար լիազորագիր ունեմ կառավարելու,— ասում է նա։

— Ոչ միայն կառավարելու։ Այլ այնպես, որ ծախեք, գրավ դնեք և, մի խոսքով, ամեն բան ձեր հայեցողությամբ կարգադրեք...

Արինա Պետրովնան հայացքը ցած է գցում ու լռում է։

— Իհարկե, դա այնպիսի առարկա է, որ այդ մասին պետք է մտածել։ Մտածե՞ք, մամենկա,— պնդում է Իուդուշկան։

Բայց Արինա Պետրովնան շարունակում է լռել։ Թեպետ, ծերության հետևանքով նրա ըմբռնողությունը բավական բթացել է, բայց նա, այնուամենայնիվ, իրեն մի տեսակ վատ է զգում Իուդուշկայի սադրանքներից։ Եվ վախենում է նա Իուդուշկայից՝ ափսոսում է Գոլովլյովոյում եղած տաքուկ, ընդարձակ, առատ կյանքը, և միաժամանակ թվում է նրան, որ Իուդուշկան լիազորագրի մասին զուր տեղը չասաց, որ նա կրկին նոր օղակ է գցում։ Նրա դրությունն այն աստիճան լարված է դառնում, որ արդեն սկսում է ներքնապես կշտամբել իրեն, թե ինչու գլխին փչեց նամակը ցույց տալ։ Բարեբախտաբար Եվպրակսեյուշկան հասավ փրկության։

— Թուղթ խաղալո՞ւ ենք, թե ոչ,— հարցնում է նա։

— Եկեք, եկեք,— շտապում է պատասխանել Արինա Պետրովնան և արագ վեր է թռչում թեյասեղանի մոտից։ Բայց թղթասեղանին մոտենալիս նրան նոր միտք է այցի գալիս։

— Իսկ դու գիտե՞ս այսօր ինչ օր է,— դառնում է նա Պորֆիրի Վլադիմիրիչին։

— Նոյեմբերի քսաներեքն է, մամենկա,— տարակուսական պատասխանում է Իուդուշկան։

— Քսաներեքը քսաներեքն է, բայց հիշո՞ւմ ես դու, թե նոյեմբերի քսաներեքին ինչ պատահեց։ Հոգեհանգստի մասին, երևի, մոռացել ես։

Պորֆիրի Վլադիմիրիչը գունատվում է ու խաչակնքում։

— Ա՜խ, տեր աստված, այ քեզ փորձանք,— բացականչում է նա։ Բայց այդպե՞ս է արդյոք, ճի՞շտ է։ Թույլ տվեք ես օրացույցը նայեմ։

Մի քանի րոպեից նա բերում է օրացույցը և որոնում է մեջը դրած թուղթը, որի վրա գրված է.

«23 նոյեմբերի։ Իմ սիրելի որդի Վլադիմիրի մահվան հիշատակի օրը։

Ննջիր, սիրելի աճյուն, մինչ ցնծագին առավոտ և աղոթիր առ աստված հայրիկիդ համար, որն ամեն տարի այսօր անշեղորեն մաղթանք ու պատարագ կանի քո հիշատակի համար»։

— Ա՜յ քեզ բան,— ասում է Պորֆիրի Վլադիմիրիչը։— Ա՜խ, Վոլոդյա, Վոլոդյա, չա՜ր, չա՜ր որդի։ Երևում է, հայրիկիդ համար աստծուն չես աղոթում, որ նա իմ հիշողությունն անգամ խլել է։ Ինչպե՞ս անենք հապա, մամենկա։

— Շատ էլ մեծ փորձանք չի պատահել, վաղն էլ կարելի է հոգեհանգիստ կատարել։ Ե՛վ հոգեհանգիստ, և՛ պատարագ — ամեն ինչ կանենք։ Ամբողջ մեղքը իմն է։ Եկել եմ հենց դրա համար, որ հիշեցնեմ, բայց ճանապարհին ամեն բան էլ մոռացա։

— Ախ, մեծ մեղք է։ Լավ է դեռ, որ սրբարանում կանթեղները վառվում են։ Կարծես վերուստ ներշնչվեցի ես։ Այսօր ոչ տոն է, ոչ այլ բան, բայց ընծայման օրվանից դեռ կանթեղները վառվում են։ Այսօր Եվպրակսեյուշկան մոտենում է ինձ ու հարցնում է՝ կողքի կանթեղները հանգցնեմ, թե չէ։ Իսկ ես, կարծես մեկը դրդեց ինձ, մի փոքր միտք արեցի ու ասում եմ՝ ձեռք մի տուր, թող վառվեն, տերն իրենց հետ։ Ահա՜ թե ինչու։

— Այդ էլ լավ է, որ գոնե կանթեղները վառվում են։ Հոգու համար դա էլ թեթևություն է։ Դու որտե՞ղ ես նստում, նորից իմ ձեռքի տակ ես ընկնելու, թե քո սիրունիկին ես պաշտպանելու։

— Չգիտեմ էլ ես արդեն, մամենկա, կարելի՞ է արդյոք ինձ...

— Ի՛նչը չի կարելի։ Նստի՛ր։ Աստված կների։ Նպատակով հո չես արել, դիտավորյալ, այլ մոռանալուցդ է։ Դա նույնիսկ արդար մարդկանց հետ էլ է պատահել։ Վաղն ա՛յ, լույսը բացվելուն պես վեր կկենանք, ժամերգություն կլսենք,

հոգեհանգստի մաղթանք անել կտանք,— բոլորը, ինչպես կարգն է, կանենք։ Եվ նրա հոգին կուրախանա, որ ծնողներն ու բարի մարդիկ հիշեցին իր մասին, և մենք հանգիստ կլինենք, որ մեր պարտքը կատարեցինք։ Այդպես ահա, բարեկամս։ Իսկ վշտանալ պետք չէ, դա ես միշտ կասեմ՝ առաջինը, վշտանալով որդուդ ետ չես վերադարձնի, իսկ երկրորդ՝ մեղք է հանդեպ աստծու։

Իուդուշկան համոզվում է այդ խոսքերից և համբուրում է մամենկայի ձեռքը, ասելով.

— Ա՜խ, մամենկա, մամենկա, ոսկի հոգի ունեք դուք, ճշմարիտ։ Դուք որ չլինեիք, ինչ էի անելու ես այս բոպեիս։ Ուղղակի կորած էի, շփոթվել էի հիմի ես ու գլուխս կորցրել։

Պորֆիրի Վլադիմիրիչը կարգադրություններ է անում վաղվա ծիսակատարությունների մասին, և բոլորը նստում են թուղթ խաղալու։ Խաղում են մեկ, խաղում են երկու, Արինա Պետրովնան զայրանում է Իուդուշկայի վրա, որ նա Եվպրակսեյուշկային միշտ նույն տեսակի թուղթ է դնում։ Թուղթը բաժանելու ընդմիջումներին Իուդուշկան անձնատուր է լինում հիշողություններին մեռած որդու մասին։

— Իսկ ինչպես սիրալիրն էր,— ասում է նա։— Ոչինչ առանց թույլտվության, պատահում էր, չէր վերցնում։ Թուղթ էր հարկավոր՝ կարելի է, հայրիկ, թուղթ վերցնեմ։— Վերցրու, բարեկամս։ Կամ՝ հայրիկ, բարի չե՞ք լինի այսօր նախաճաշին ծածան պատվիրել։— Համեցիր, բարեկամս։ Ա՜խ, Վոլոդյա, Վոլոդյա, ամեն բանով խելոք էիր, միայն նրանով խելոք չեղար, որ հայրիկիդ թողեցիր։

Անցնում է ևս մի քանի շրջան. կրկին հիշողություն։

— Եվ ի՞նչ պատահեց հանկարծ նրան, ինքս էլ հասկանալ չեմ կարողանում։ Ապրում էր լավ ու հանգիստ, ապրում էր իր համար ու ինձ էլ ուրախացնում, դրանից էլ լավ էլ ինչ կար։ Հանկարծ — թրա՜խկ։ Ի՞նչ մեղք բան է, մտածեցեք հապա այս մասին, մամենկա, թե ինչի դեմ է մարդը մահափորձ անում, կյանքի՛ դեմ, երկնային հոր պարգևի՛ դեմ։ Ի՞նչ պատճառով, ինչո՞ւ, ի՞նչն էր պակաս։ Փո՞ղը, ինչ է։ Ոռճիկը ես, կարծեմ, երբեք չեմ ուշացնում, նույնիսկ իմ թշնամիներն իմ մասին այդ բանը չեն ասի։ Իսկ թե որ քիչ էր թվում, դե

դրա համար նեղանալու բան չկա, բարեկամս, հորդ ունեցած փողն էլ այնքան շատ չի արդեն։ Թե որ փողը քիչ է, կարողացիր քեզ զսպել։ Միշտ քաղցր բաներ մի կեր, միշտ շաքարով, այլ աղոթքով ու կվասով կեր։ Այդպես, եղբայր։ Այ հայրիկդ, այսօր հույս ուներ փող ստանալ, բայց կառավարիչը եկավ թե՝ տերպենկովյան գյուղացիները բահրան չեն վճարում։ Դե ինչ արած, խնդրագիր գրեցի դատավորին։ Ա՜խ, Վոլոդյա, Վոլոդյա։ Չէ, խելոք չես դու, թողեցիր հայրիկիդ, որը թողեցիր։

Եվ որչափ տաքանում է խաղը, այնչափ հորդ ու զգայուն են դառնում հիշողությունները։

— Եվ ի՞նչ խելոքն էր։ Հիշում եմ այսպիսի դեպք։ Կարմրուկով պառկած էր, հազիվ յոթ տարեկան լիներ, հանգուցյալ Սաշան մոտ է գնում թե չէ, նա հարցնում է. «Մայրիկ, մայրիկ, ճի՞շտ է, որ միայն հրեշտակներն են թևեր ունենում»։ Մայրը թե՝ «Այո, միայն հրեշտակները»։ «Հապա ինչո՞ւ, ասում է, հայրիկը որ այստեղ եկավ, թևեր ուներ»։

Վերջապես շատ ծիծաղելի խաղ է տեղի ունենում. Իուդուշկան ութը թղթով հիմար է մնում, որոնց թվում կոզիրի տուզը, թագավորն ու դաման։ Քրքիջ է բարձրանում, ծաղր, և ինքը, Իուդուշկան էլ ներողամտաբար կրկնում է այդ բոլորը։ Բայց ընդհանուր ուրախության կիսին Արինա Պետրովնան հանկարծ լռում է ու ականջ է դնում։

— Սպասեցե՛ք, մի՛ աղմկեք։ Եկող կա,— ասում է նա։

Իուդուշկան ու Եվպրակսեյուշկան նույնպես ականջ են դնում, բայց ապարդյուն։

— Ասում եմ ձեզ, գալիս են։ Քամին այս կողմը փչեց հանկարծ... Սը՜ս... գալիս է, և նույնիսկ մոտ է։

Նորից ականջ են դնում և իսկապես ինչ-որ հեռավոր զնգզնգոց են լսում, որ մերթ լսվում է, մերթ քամուց խլանում է։ Անցնում է հինգ րոպե, և զանգակի ղողանջն ավելի որոշակի է լսվում, և ապա ձայներ բակում։

— Երիտասարդ բարինը, Պյոտր Պորֆիրիչը եկավ,— հընչում է նախասենյակից։

Իուդուշկան վեր կացավ ու անշարժացավ կանգնած տեղը, քարանի պես գունատ։

***

Պետենկան ներս եկավ մի տեսակ թոռոմած, համբուրեց հոր ձեռքը, ապա նույն արարողությունն արեց տատիկի վերաբերյալ, գլուխ տվեց Եվպրակսեյուշկային ու նստեց։ Դա քսանհինգ տարեկան երիտասարդ էր, բավական գեղեցիկ արտաքինով, սպայական ճամփորդական տարազով։ Ահա բոլորն, ինչ կարելի էր ասել նրա մասին։ Բայց և Իուդուշկան ինքն էլ հազիվ ավելին գիտեր։ Հոր և որդու փոխադարձ հարաբերություններն այնպես էին, որ նույնիսկ չէր կարելի լարված համարել, այլ ուղղակի կարծես ոչինչ գոյություն չուներ։ Իուդուշկան գիտեր, որ կա մի մարդ, որը փաստաթղթերով իր որդին է համարվում, որին նա պարտավոր է որոշ ժամկետներում ուղարկել պայմանավորված, այսինքն իր կողմից իսկ սահմանված ոճիկը և որից, դրա փոխարեն, իրավունք ունի հարգանք և հնազանդություն պահանջել։ Պետենկան իր կողմից գիտեր, որ հայր ունի, որը կարող է նրան ամեն ժամանակ ճնշել։ Նա բավական հաճույքով էր Գոլովլյովո գալիս, մանավանդ սպա դառնալուց հետո, բայց ոչ այն պատճառով, որ բավականություն էր ստանում հոր հետ խոսակցելուց, այլ ուղղակի այն պատճառով, որ ամեն մարդու, որը ոչ մի հաշիվ չի տալիս իրեն կենսական նպատակների մասին, մի տեսակ բնազդաբար ձգում է իր տեղը։ Բայց այժմ, ըստ երևույթին, նա եկել էր կարիքից դրդված, հարկադրաբար, որի շնորհիվ նա չարտահայտեց նույնիսկ ոչ մեկն այն ուրախագին տարակուսանքների նշաններից, որով սովորաբար նշանավորում է յուրաքանչյուր ազնվականի անառակ որդի իր գալուստը հայրենի վայրերը։

Պետենկան լուռ էր։ Հոր բոլոր բացականչություններին՝ «այ քեզ անակնկա՜լ, ա՜յ պարտավորեցրիր, իսկ ես նստել ու միտք եմ անում՝ այս ո՞վ է, ներիր ինձ տեր, գիշերները թրև գալիս, բայց տե՜ս ով է և այլն,— նա կամ լուռ էր մնում, կամ հարկադրական ժպիտով էր պատասխանում։ Իսկ այն հարցին՝ «այդ ինչ փչեց խելքիդ,— նույնիսկ կոպիտ պատասխանեց՝ «դե փչեց ու եկա։

«Դե շնորհակալ եմ, շնորհակալ եմ, հիշեցիր հորդ։ Ուրախացրիր։ Պառավ տատիդ էլ հիշեցիր անշուշտ։

— Տատին էլ հիշեցի։

— Սպասիր, գուցե դու հիշեցիր, որ այսօր Վոլոդյա եղբորդ մահվան տարեդարձն է։

— Այո, այդ էլ հիշեցի։

Այս եղանակով խոսակցությունը տևեց կես ժամի չափ, այնպես որ հասկանալ չէր լինում, իսկապես պատասխանում է Պետենկան, թե միայն օձիք է թափ տալիս։ Ուստի, որչափ էլ որ համբերատար էր Իուդուշկան իր որդիների անտարբերության նկատմամբ, սակայն նա էլ չդիմացավ ու նկատեց.

— Այո, եղբայր, սիրալիր չե՛ս դու։ Չի կարելի ասել, որ դու սիրալիր որդի ես եղել։

Թե որ այս անգամ Պետենկան լուռ մնար, հոր նկատողությունն ընդուներ հնազանդությամբ, իսկ ավելի լավ կլիներ, եթե համբուրեր հոր ձեռքն ու ասեր նրան՝ «ներեցեք ինձ, բարի հայրիկս, չէ որ ես ճանապարհ եմ եկել, հոգնած եմ,— ամեն ինչ լավ կվերջանար։ Բայց Պետենկան միանգամայն անշնորհակալի պես վարվեց։

— Ինչ որ կա՛մ,— կոպիտ ասաց նա, ասես ուզում էր ասել՝ «դե բարի եղիր ձեռք վերցրու ինձանից։

Այն ժամանակ Պորֆիրի Վլադիմիրիչն այնքան վշտացավ, այնքան վշտացավ, որ այլևս հնարավոր չգտավ լռել։

— Կարծեմ ես ձեզ համար ամեն բան արել եմ,— ասաց նա դառնացած։— Նույնիսկ այստեղ նստած, շարունակ միտք եմ անում, ինչպես անեմ, որպեսզի բոլորի համար լավ լինի, հաճելի լինի, առանց կարիքի, առանց հոգսի... Իսկ դուք ինձանից շարունակ հեռու եք փախչո՞ւմ ու փախչում։

— Ովքե՞ր — դուք։

— Դե, դու... թեպետ հանգուցյալն էլ, արքայություն իրեն, այդպես էր...

— Դե ինչ, ես շատ շնորհակալ եմ ձեզանից։

— Ոչ մի շնորհակալություն ես ձեզանից չեմ տեսնում։ Ոչ շնորհակալություն, ոչ փաղաքշանք — ոչի՛նչ։

— Բնավորությունս անսիրալիր է, ուրիշ ոչինչ։ Բայց

դուք ինչո՞ւ եք շարունակ հոգնակիով խոսում։ Մեկն արդեն մեռել է...

— Այո, մեռավ, աստված պատժեց։ Աստված անհնազանդ երեխաներին պատժում է։ Բայց և այնպես ես նրան հիշում եմ։ Նա անհնազանդ էր, բայց ես հիշում եմ։ Այ վաղը պատարագ կլսենք ու մաղթանք կատարել կտանք։ Նա ինձ վիրավորանք հասցրեց, բայց ես իմ պարտքը հիշում եմ։ Տե՞ր աստված, այժմ այս ինչե՞ր են կատարվում։ Որդին եկել է հոր մոտ և առաջին իսկ խոսքից հանդգնություն է անում։ Այդպե՞ս էինք վարվում մենք մեր ժամանակ։ Պատահում էր, Գոլովլյովո ես գալիս և երեսուն վերստ շարունակ կրկնում ես՝ հիշիր, տեր, Դավիթ թագավորին և ամենայն խոնարհություն նրա։ Բայց ահա մամենկան, կենդանի վկա է, նա կասի։ Իսկ այժմ... չե՛մ հասկանում, չե՛մ հասկանում...

— Ես նույնպես չեմ հասկանում։ Եկա ես խաղաղ, բարևեցի ձեզ, համբուրեցի ձեր ձեռքը, այժմ նստել եմ, ձեզ չեմ վիրավորում, թեյ եմ խմում, իսկ եթե ընթրիք տաք, կընթրեմ։ Ինչո՞ւ բարձրացրիք դուք այս ամբողջ պատմությունը։

Արինա Պետրովնան նստել է իր բազկաթոռում և ականջ է դնում։ Ու թվում է նրան, որ նա նույն ծանոթ պատմությունն է լսում, որը վաղուց, չի էլ հիշում, թե երբ էր սկսվել։ Փակվել էր կարծես այդ պատմությունը, սակայն ահա կրկին նորից ու նորից բացվում է նույն այն էջը։ Բայց և այնպես նա հասկանում է, որ հոր ու որդու մեջ տեղի ունեցած այդպիսի հանդիպումը ոչ մի լավ բան չի խոստանում, ուստի պարտք է համարում միջամտել վեճին և հաշտարար խոսք ասել։

— Դե, դե, հնդու աքաղաղներ,— ասում է նա, աշխատելով իր խրատներին կատակային բնույթ տալ։— Նոր հենց հանդիպեցին, բայց արդեն սկսեցին կռվել։ Շարունակ հարձակվում են միմյանց վրա, շարունակ հարձակվում են։ Հիմի փետրահա՞ն կլինեն։ Ա՜խ, ա՜խ, ա՜խ, ինչ ցավ է սա։ Դուք, ջահելներդ, նստեք հանգիստ ու սիրով խոսեք միմյանց հետ, իսկ ես, պառավս, ականջ կդնեմ ու կհիանամ ձեզանով։ Դու, Պետենկա, զիջիր։ Հորը, բարեկամս, պետք է մշտապես զի-

ջել, որովհետև նա հայր է։ Թե որ մեկ-մեկ էլ հոր ասածները դառը կթվան, բայց դու ընդունիր պատրաստակամ, հընազանդությամբ ու հարգանքով, որովհետև դու որդի ես։ Գուցե դառնությունը հանկարծ քաղցրի փոխվի՝ ահա և դու շահվեցիր։ Իսկ դու, Պորֆիրի Վլադիմիրիչ, ներողամիտ եղիր։ Նա որդի է, ջահել է, փայփայված է։ Նա յոթանասունհինգ վերստ դար ու փոսերով, ձնակույտերով ճանապարհ է կտրել, հոգնել է ու մրսել, և քունը տանում է։ Ահա թեյը վերջացրինք, պատվիրիր ընթրիք տան, հետո արդեն՝ կգնանք քնելու։ Այդպես ահա, բարեկամներս։ Կցրվենք ամեն մեկս մեր տները, աղոթք կանենք ու կթեթևանան մեր սրտերը։ Եվ բոլոր մեր ունեցած վատ մտքերը քնի մեջ աստված կհեռացնի։ Իսկ վաղը շուտ կարթնանանք ու հանգուցյալի համար կաղոթենք։ Պատարագ կլսենք, մաղթանք կլսենք, իսկ հետո, երբ տուն դառնանք, կխոսենք։ Եվ ամեն մեկը, հանգստանալով, կարդին, ինչպես հարկն է, կպատմի իր գործը։ Դու, Պետենկա, Պետերբուրգի մասին, իսկ դու, Պորֆիրի, քո գյուղական կյանքի մասին։ Իսկ հիմա ընթրենք ու քնենք...

Այս հորդորանքն իր ազդեցությունն ունեցավ ոչ այն պատճառով, որ իր մեջ իսկապես ինչ-որ համոզիչ բան էր պարունակում, այլ որովհետև Իուդուշկան ինքն էլ տեսնում է, որ չափն անցավ, որ լավ է օրը մի կերպ խաղաղությամբ վերջացնել։ Ուստի նա վեր է կենում տեղից, համբուրում է մամենկայի ձեռքը, շնորհակալություն է հայտնում «խրատի» համար ու հրամայում է ընթրիք մատուցել։ Ընթրիքն անցնում է մռայլ ու լուռ։

Սեղանատունը դատարկվեց, բոլորը գնացին իրենց սենյակները։ Տունը կամաց-կամաց խաղաղվում է, և մեռելային լռությունը սողում է սենյակից-սենյակ ու վերջապես հասնում է մինչև վերջին ապաստարանը, ուր բոլոր անկյուններից ավելի էր համառում ծիսական կյանքը, այսինքն մինչև գոլովլյովյան բարինի առանձնասենյակը։ Իուդուշկան վերջապես վերջացրեց ծնրադրումները, որոնք երկար-երկար ժամանակ կատարում էր նա օրբապատկերների առաջ և նույնպես անկողին մտավ։

Պառկել է Պորֆիրի Վլադիմիրիչն անկողնում, բայց աչք

փակել չի կարողանում։ Զգում է նա, որ որդու գալուստն ինչ-որ արտասովոր բան է նախագուշակում, և արդեն վաղօրոք նրա գլխում ծնունդ են առնում ամեն տեսակի սնամեջ խրատներ։ Այդ խրատներն այն առավելությունն ունեն, որ նրանք համապատասխան են բոլոր դեպքերի համար և նույնիսկ մտքերի հետևողական կապակցություն չեն ներկայացնում իրենցից։ Ոչ քերականական, ոչ շարահյուսական ձև նրանց համար նույնպես չի պահանջվում։ Դրանք կուտակվում են գլխում որպես հատվածական աֆորիզմներ[49] և լույս աշխարհ են ելնում լեզվին եկած ժամանակ։ Այնուամենայնիվ, հենց որ կյանքում արտաքո կարգի որևէ դիպված է պատահում, ապա գլխում աֆորիզմների հոսանքից այնպիսի խառնաշփոթություն է բարձրանում, որ նույնիսկ քունը չի կարող խաղաղեցնել նրանց։

Իուդուշկայի քունը չի տանում. ահագին թվով չնչին բաներ են խառնվել նրա գլխավերևն ու ճնշում են նրան։ Իսկապես ասած, Պետենկայի խորհրդավոր գալուստն առանձնապես չի հուզում նրան, որովհետև, ինչ էլ որ պատահելու լինի, Իուդուշկան արդեն վաղօրոք պատրաստ է ամեն ինչի։ Նա գիտե, որ ոչինչ իրեն չի կարող հանկարծակիի բերել և ոչինչ չի կարող հարկադրել նրան որևէ շեղում անելու դատարկ ու ամբողջովին փտած աֆորիզմների այն ցանցից, որոնց մեջ պարուրվել է նա ոտքից-գլուխ։ Նրա համար գոյություն չունի ոչ վիշտ, ոչ ուրախություն, ոչ ատելություն, ոչ սեր։ Ամբողջ աշխարհը նրա աչքում դագաղ է, որը կարող է անսպառ դատարկաբանության առիթ ծառայել միայն։ Որչա՜փ մեծ վիշտ էր արդեն այն, որ Վոլոդյան անձնասպան եղավ, բայց այդ դեպքում էլ նա անդրդվելի մնաց։ Դա շատ տխուր պատմություն էր, որ ամբողջ երկու տարի տևեց։ Ամբողջ երկու տարի Վոլոդյան դիմանում էր. սկզբում հպարտություն ու վճռականություն ցուցաբերեց հոր օգնության կարիքը չզգալու, հետո թուլացավ, սկսեց աղերսել, ապացուցել, սպառնալ... Եվ միշտ ի պատասխան հանդիպեց պատրաստի աֆորիզմի, որը նշանակում էր սոված մարդուն քար տալ։ Գիտակցո՞ւմ էր արդյոք Իուդուշկան, որ դա քար է, այլ ոչ հաց, թե չէր գիտակցում, դա վիճելի հարց է, բայց, համենայն դեպս, նա

ուրիշ ոչինչ չուներ և տալիս էր իր քարը որպես միակ բանը, ինչ կարող էր տալ։ Երբ Վոլոդյան անձնասպան եղավ, նա հոգեհանգիստ կատարել տվեց նրա համար, օրացույցում գրեց նրա մահվան օրը և խոստացավ նաև հետագայում ամեն տարի նոյեմբերի 23-ին հոգեհանգիստ կատարել տալ՝ «նմանապես պատարագով»։ Բայց երբ ժամանակ առ ժամանակ նույնիսկ նրա մեջ նսեմ ձայն էր բարձրանում, որը շշնջում էր, թե ընտանեկան վեճն անձնասպանությամբ լուծելն, այնուամենայնիվ, համենայն դեպս կասկածելի է, այն ժամանակ նա բեմ էր հանում պատրաստի աֆորիզմների ամբողջ մի շքախումբ, ինչպես՝ «աստված անհնազանդ երեխաներին պատժում է», «հպարտներին աստված հակառակ է գնում» և այլն,— ու հանգստանում էր։

Ահա և այժմ։ Կասկած չկա, որ Պետենկայի հետ ինչ-որ մի վատ բան է պատահել, բայց ինչ էլ որ եղած լինի, նա, Պորֆիրի Վլադիմիրիչը, պետք է բարձր կանգնի այդ պատահականություններից։ Ինքդ խճճվել ես, ինքդ էլ դուրս եկ, ապուրը որ եփել ես, ինքդ էլ կեր, սիրում ես զբոսնել, սիրիր և սահնակը քաշել։ Ճիշտ հենց այդ, ճիշտ հենց այդ էլ կասի նա վաղը, ինչ էլ որ հայտնելու լինի որդին։ Իսկ եթե Պետենկան նույնպես Վոլոդյայի նման հրաժարվի քարը ընդունել հացի փոխարե՞ն։ Ինչ, եթե նա էլ... Իուդուշկան հրաժարվում է այդ մտքից և սատանայի գայթակղության է վերագրում դա։ Նա շուտ է գալիս կողքից-կողք, ուժ է գործ դնում քնելու և չի կարողանում։ Նոր-նոր քունը մոտ է գալիս, հանկարծ՝ ուրախ կլիներ մարդ մինչև երկինք հասնել, բայց ձեռները կարճ են, կամ՝ վերմակիդ չափ մեկնիր ոտներդ... ահա ես... ահա դու... շատ ճարպիկն եք դուք... բայց առածը գիտես՝ շտապողականությունը միայն լու որսալիս է հարկավոր։ Շրջապատել են չորս կողմից չնչին բաները, սողում են, սողում են, ճնշում են։ Ու չի քնում Իուդուշկան դատարկաբանության ծանրության տակ, որով հույս ունի վաղը հագեցնել իր հոգին։

Չի քնել նաև Պետենկան, թեպետ ճանապարհը բավականաչափ հոգնեցրել է նրան։ Այնպիսի գործ ունի նա, որը կարող է վճռվել միայն այստեղ, Գոլովլյովոյում, բայց այնպի-

սի գործ է դա, որ չի էլ իմանում ինչպես ձեռք զարկի դրան։ Ճշմարիտն ասած, Պետենկան սքանչելի հասկանում է, որ իր գործն անհույս է, որ Գոլովլյովո գալը միայն ավելորդ անախորժություններ է միայն պատճառելու իրեն, բայց բանն այն է, որ մարդու մեջ ինչ-որ մի մութ բնազդ. կա ինքնապահպանման, որը հաղթահարում է ամեն մի գիտակցականություն և որը շարունակ մղում է նրան՝ փորձիր ամեն ինչ մինչև վերջինը։ Ահա և նա եկել է, բայց փոխանակ կոփելու իրեն և պատրաստ լինի ամեն ինչ կրելու, քիչ մնաց առաջին իսկ քայլից կովեր հոր հետ։ Ի՞նչ դուրս կգա այս ճանապարհորդությունից։ Կկատարվի՞ արդյոք հրաշքը, որը պետք է քարը հաց դարձնի, թե չի՞ կատարվի։

Լավն այն չէ՞ր լինի, որ վերցնի ատրճանակն ու քունքին դնի.— պարոնայք, ես արժանի չեմ ձեր համազգեստը կրելու, ես պետական փող եմ վատնել, ուստի ինքս ինձ արդար ու խիստ դատավճիռ եմ կարդում։ Թ՞խկ — ու ամեն ինչ վերջացած է։ Ցուցակներից ջնջվում է մեռածը՝ պորուչիկ Գոլովլյովը։ Այո, դա կլիներ վճռական և... գեղեցիկ։ Ընկերները կասեին՝ դու անբախտ էիր, դու հրապուրվում էիր, բայց դու ազնիվ մարդ էիր։ Սակայն նա, փոխանակ անմիջապես այդպես վարվելու, գործն այնպես տարավ, որ իր արարքը բոլորին հայտնի դարձավ, և ահա նրան բաց են թողել որոշ ժամանակով այն պայմանով, որ այդ ընթացքում նրա վատնածն անպայման ծածկվի։ Իսկ հետո — գնդից դո՛ւրս։ Եվ ահա այդ նպատակին հասնելու համար, նպատակ, որի վերջում կանգնած էր նոր միայն սկսված կարիերայի անարգական վախճանը, նա մեկնեց Գոլովլյովո, մեկնեց, հաստատ համոզված՝ հացի տեղ քար ստանալու։

Բայց գուցեև մի բա՞ն դուրս գա։ Չէ՞ որ պատահում է... Հանկարծ ներկայիս Գոլովլյովոն կանհայտանա և նրա տեղը նոր Գոլովլյովո հանդես կգա, նոր իրադրությամբ, որի մեջ նա... Ոչ թե հայրը... կմեռնի — ինչո՞ւ — այլ այնպես... ընդհանրապես նոր «իրադրություն» կլինի... Բայց գուցեև տատիկը — չէ՞ որ նա փող ունի։ Կիմանա, որ փորձանք է սպառում իրեն ու հանկարծ կտա։ Առ, կասի, շուտ մեկնիր, քանի ժամանակը չի անցել։ Եվ նա մեկնում է. ոտապեցնում է կա-

ռապաններին, հազիվ է կայարան հասնում — ու ներկայանում է գունդը ժամանակին երկու ժամ միայն մնացած։ Կեցցե՞ս, Գոլովլյով,— ասում են ընկերները։— Ձեռքդ, ազնիվ երիտասարդ, և թող այսուհետև ամեն ինչ մոռացված լինի։— Եվ նա ոչ միայն մնում է գնդում առաջվա նման, այլև բարձրացվում է նախ շտաբս-կապիտանի, հետո կապիտանի աստիճանի, դառնում է գնդի ադյուտանտը (գանձապահ արդեն եղել էր) և, վերջապես, գնդի հոբելյանի օրը...

Ա՜խ, շուտ անցներ այս գիշերը։ Վաղը... վաղը թող լինի, ինչ լինելու է։ Բայց ինչե՞ր պիտի լսի նա վաղը... Ինչե՞ր ասես չի լսելու... Վա՞ղը... բայց ինչի՞ համար վաղը։ Չէ՞ որ դեռ մի ամբողջ օր կա առջևում... Նա երկու օր ժամանակ խնդրեց ճիշտն ասած նրա համար, որպեսզի ժամանակ ունենա համոզելու, սրտաշարժելու... Ինչպե՞ս չէ... կհամոզե՞ս, կսրտաշարժե՞ս... Չէ՞ արդեն...

Այդտեղ նրա մտքերը վերջնականապես խճճվում են և աստիճանաբար, մեկը մյուսի ետևից թաղվում են քնարբ մառախուղի մեջ։ Քառորդ ժամից ամբողջ գոլովլյովյան կալվածատունը լիովին խորասուզված է ծանր քնի մեջ։

Մյուս օրը վաղ առավոտյան ողջ տունն արդեն ոտքի վրա է։ Բոլորը մեկնեցին եկեղեցին, բացի, սակայն, Պետենկայից, որը մնաց տանը, ճանապարհից հոգնած լինելու պատրվակով։ Վերջապես պատարագն ու մաղթանքը լսեցին և տուն վերադարձան։ Պետենկան, սովորության համաձայն, մոտեցավ հորը ձեռքը համբուրելու, սակայն Իուդուշկան ձեռքը պարզեց կողքանց, և բոլորը նկատեցին, որ նա նույնիսկ չխաչակնքեց որդուն։ Թեյ խմեցին, հոգեհանգստի մեղրահատիկ կերան. Իուդուշկան մռայլ էր, ոտները քսքստացնում էր, խուսափում էր խոսակցություններից, հառաչում էր, անընդհատ խաչում էր ձեռներն ի նշան մտացի աղոթքի և ամենևին չէր նայում որդուն։ Իր կողմից Պետենկան ևս կծկվում էր, լուռ ծխում էր ծխախոտ ծխախոտի ետևից։ Երեկվա լարված դրությունը ոչ միայն չբարվոքվեց գիշերվա ընթացքում, այլ այնպիսի խիստ երանգներ ընդունեց, որ Արինա Պետրովնան լուրջ անհանգստացավ և որոշեց Եվպրակսեյուշկայից հետախուզել, արդյոք որևէ բան չի՞ պատահել։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց նա։— Ի՞նչ են նրանք առավոտվանից կարծես թշնամու պես նայում միմյանց։

— Իսկ ես որտեղի՞ց իմանամ։ Մի՞թե ես նրանց գործերին խառնվում եմ,— կոպիտ պատասխանեց Եվպրակսեյուշկան։

— Դու չե՞ս արդյոք։ Գուցե թոռնիկս հետապնդո՞ւմ է քեզ։

— Ի՞նչ կա ինձ հետապնդելու։ Ուղղակի առավոտյան դարանել էր ինձ միջանցքում, իսկ Պորֆիրի Վլադիմիրիչը տեսավ։

— Այդպե՞ս, ահա թե ինչ։

Եվ իրոք, չնայած իր դրության ծայրահեղ ծանր լինելուն, Պետենկան ամենևին չէր թողել իրեն հատուկ թեթևամտությունը։ Նա նույնպես հրճվեց Եվպրակսեյուշկայի հզոր թիկունքով և որոշեց արտահայտել իր հրճվանքը։ Այդ իսկ նպատակով էլ, իսկապես ասած, նա եկեղեցի չգնաց, հույս ունենալով, որ Եվպրակսիան, որպես տնտեսուհի, տանը կմնա։ Եվ ահա, երբ տանը ամեն ինչ խաղաղվեց, նա շինելը գցեց ուսերին ու թաքնվեց միջանցքում։ Անցավ մեկ րոպե, երկու րոպե, սրահից նաժշտանոց տանող դուռը շըրխկաց, և միջանցքի վերջում երևաց Եվպրակսիան, ձեռքին սկուտեղը, վրան կաթնահունց՝ թեյի համար։ Բայց Պետենկան դեռևս մի լավ չէր շրխկացրել մեջքին, դեռ չէր արտասանել՝ ա՜յ մեջք եմ ասել, հա՞, որ սեղանատան դուռը բացվեց ու երևաց հայրը։

— Թե որ դու լրբության համար ես այստեղ եկել, սրիկա, ապա ես կհրամայեմ քեզ աստիճաններից ցած գլորել,— արտասանեց Իուդուշկան մի տեսակ անսահման չարություն արտահայտող ձայնով։

Հասկանալի է, Պետենկան վայրկյանապես անհայտացավ։

Նա, սակայն, չէր կարող չհասկանալ, որ առավոտյան միջադեպն այնպիսիներից չէր, որպեսզի նպաստավոր ազդեցություն ունենար իր գործի համար։ Ուստի որոշեց լռել ու բացատրությունը վաղվան հետաձգել։ Բայց միաժամանակ նա ոչ միայն ոչինչ չէր անում հոր ջղայնությունը մեղմելու համար, այլ, դրան հակառակ, իրեն շատ անզգույշ և հիմար ձևով էր պահում։ Առանց դադարելու ծխում էր, ոչ մի ուշադրություն չդարձնելով, որ հայրը թափով դեն է քշում սենյակը լցված ծուխը։ Ապա ամեն րոպե քնքուշ-հիմարական հայացքներ էր գցում Եվպրակսեյուշկայի վրա, իսկ նա, դրանց ազդեցության տակ մի տեսակ ծուռ ժպտում էր, որը նույնպես նկատում էր Իուդուշկան։

Օրը ձգվեց անկենդան, ալարկոտ։ Արինա Պետրովնան փորձ արեց Եվպրակսեյուշկայի հետ դուրաչկի խաղալ, բայց դրանից բան դուրս չեկավ։ Չէր խաղացվում, չէր խոսվում, նույնիսկ հիմարություններ չէին գալիս մտքներին, թեպետ նրանցից յուրաքանչյուրն այդ բարիքից անարատ մնացած ահագին կույտեր ուներ։ Դժվարությամբ հասավ ճաշը, բայց ճաշի վրա էլ բոլորը լուռ էին։ Ճաշից հետո Արինա Պետրովնան պատրաստվեց Պոգորելկի մեկնել, բայց սիրելի բարեկամ մամենկայի այդ որոշումը Իուդուշկային նույնիսկ վախեցրեց։

— Քրիստոս ձեզ հետ, սիրելիս,— բացականչեց նա,— դուք, ինչ է, ուզում եք ինձ մեն-մենա՞կ թողնել այդ... վատ որդու հետ։ Ո՛չ, ո՛չ, մի՛ էլ մտածեք, չե՛մ թողնի։

— Ախր բանն ի՞նչ է, ձեզ մեջ ի՞նչ է պատահել, ասա,— հարցրեց Արինա Պետրովնան նրան։

— Ոչ, առայժմ դեռ ոչինչ չի պատահել, բայց դուք կըտեսնեք... Ոչ, դուք արդեն ինձ մենակ մի թողեք։ Թող արդեն ձեր ներկայությամբ լինի... Ջուր չէ, զուր չէ, որ նա եկել է... Այնպես որ, եթե մի բան պատահի, դուք արդեն վկա եղեք։

Ճաշից հետո Պորֆիրի Վլադիմիրիչը գնաց քնելու, Եվպրակսեյուշկային նախապես ուղարկելով գյուղ՝ տերտերի մոտ։ Արինա Պետրովնան, հետաձգելով Պոգորելկի մեկնելը, նույնպես քաշվեց իր սենյակը և, բազկաթոռում նստած, նիրհում էր։ Պետենկան այդ ժամանակն ամենահարմարը համարեց, որպեսզի բախտը փորձի տատիկի մոտ ու գնաց նրա սենյակը։

— Ի՞նչ է, եկել ես պառավի հետ դուրաչկի՞ խաղալու,— դարձավ նրան Արինա Պետրովնան։

— Ոչ, տատիկ, ես ձեզ մոտ գործով եմ եկել։

— Դե պատմիր, ասա։

Պետենկան մի պահ վարանեց և ապա հանկարծ վրա տրվեց.

— Տատիկ, ես պետական փող եմ տարվել։

Արինա Պետրովնայի աչքերն անսպասելիությունից նույնիսկ մթնեցին։

— Շա՞տ,— հարցրեց նա վախեցած ձայնով։

— Երեք հազար։

Բոպեաչափ լռություն տիրեց։ Արինա Պետրովնան անհանգիստ այս ու այն կողմ էր նայում, կարծես սպասում էր, որպեսզի մեկնումեկն օգնության գա իրեն։

— Իսկ դու գիտես, որ դրա համար կարող են Սիբիր քշել,— վերջապես ասաց նա։

— Գիտեմ։

— Ա՜խ, խե՜ղճ, խե՜ղճ։

— Ես, տատիկ, ուզում էի ձեզանից փոխարինաբար վերցնել... Ես լավ տոկոս կվճարեմ։

Արինա Պետրովնան բոլորովին վախեցավ։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում,— անհանգիստ ասաց նա։— Իմ ունեցած փողը այնքան է միայն, որ հազիվ բավականացնի դագաղի ու թաղման։ Եվ կուշտ եմ ապրում ես շնորհիվ թոռնիկներիս և ահա ինչ որ ուտում եմ որդուս մոտ։ Ո՛չ, ո՛չ ո՛չ։ Դու ինձ արդեն հանգիստ թող։ Բարի եղիր, հանգիստ թող։ Գիտես ինչ՝ դու հորիցդ խնդրիր։

— Չէ, բան դուրս չի գա, քարից արի հաց խնդրիր։ Ես, տատիկ, հույսս ձեզ վրա էի դրել։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում... Դե ես ուրախությամբ կտայի, բայց ես ի՞նչ փող ունեմ... Այդքան փող ես չունեմ էլ։ Դու դիմիր հորդ՝ սիրալիր, հարգանքով։ Ահա, պապենկա, այսպես ու այսպես, մեղավոր եմ, ջահելություն եմ արել, սխալվել եմ... Ծիծաղելով ու ժպտալով, ձեռքը համբուրիր, ծունկ չոքիր, լաց եղիր,— նա դա սիրում է,— դե և պապենկան քաց կանի քսակի բերանը սիրեցյալ որդու համար։

— Դուք այդպե՞ս եք կարծում... Անե՞մ արդյոք... Սպասեցեք, սպասեցեք... իսկ չի՞ լինի, տատիկ, որ դուք նրան ասեիք՝ եթե փող չտաս, կանիծեմ։ Նա վաղուց վախենում է դրանից, ձեր անեծքից։

— Դե ինչո՞ւ անիծել։ Խնդրիր այնպես։ Խնդրիր, բարեկամս։ Չէ որ մի ավելորդ անգամ հորդ առաջ խոնարհվելուց վիզդ չի կոտրվի, հայրդ է։ Դե նա էլ, իր կողմից, կտեսնի... Արա, իսկապես այդպես արա...

Պետենկան թևերը կանթած ետ ու առաջ է քայլում, ասես կշռադատում է. վերջապես կանգնում է ու ասում.

— Ոչ։ Միևնույն է, չի տա։ Ինչ էլ որ անեմ, թեկուզ ճակատս կոտրեմ գետին խփելով, միևնույն է, չի տա։ Այ, եթե դուք անեծքով սպառնայիք... Ուրեմն ի՞նչ անեմ ես հապա, տատիկ։

— Չգիտեմ, իսկապես. փորձիր, գուցեև մեղմացնես։ Բայց ինչպե՞ս է եղել, որ դու այդպիսի բան ես արել,— հեշտ բա՞ն է պետական փող տարվելը։ Սովորեցնո՞ղ է եղել քեզ, ինչ է։

— Հենց այնպես, վերցրի ու տարվեցի։ Դե, թե որ դուք չունեք, որբերի փողերից տվեք։

— Ի՞նչ ես ասում, ուշքի եկ։ Ես ինչպե՞ս կարող եմ որբերի փողը տալ։ Չէ արդեն, ազատիր ինձ դրանից։ Մի խոսիր ինձ հետ այդ մասին, ի սեր Քրիստոսի։

— Ուրեմն չե՞ք ուզում։ Ափսոս։ Ես լավ տոկոս կտայի։ Հինգ տոկոս ամսական ուզո՞ւմ եք։ Ո՞չ։ Դե, մի տարուց դրամագլխին դրամագլուխ։

— Մի է՛լ գայթակղիր դու ինձ,— ձեռները թափահարեց նրա վրա Արինա Պետրովնան։— Հեռացիր ինձանից, Քրիստոսի սիրուն։ Հայրդ կարող է լսել, կասի, որ ես եմ քեզ գրգռել։ Ա՜խ, աստված իմ, ես, պառավս, հանգստանալ էի ուզում, նույնիսկ նիրհում էի արդեն, իսկ նա ահա ի՛նչ տեսակ գործով է եկել։

— Դե լավ, ես կգնամ։ Նշանակում է չի՞ կարելի։ Սքանչելի՞։ Ազգակցաբա՞ր։ Երեք հազար մանեթի համար թոռդ Սիբիր պիտի գնա։ Բարի երթի մաղթանք շմոռանաք կատարել տալ։

Պետենկան շխկացրեց դուռն ու գնաց։ Նրա թեթևամիտ հույսերից մեկը ցնդեց,— հիմա ի՞նչ անել։ Մի բան է մնում՝ ամեն բան հայտնել հորը։ Կարող է պատահել... Գուցե մի բան...

«Կգնամ հիմա ու միանգամից վերջ կտամ,— ասում էր

նա իրեն։— Թե ոչ։ Ոչ, ինչո՞ւ այսօր... Գուցե, որևէ բան... սակայն, ի՞նչ կարող է լինել։ Ոչ, լավ է վաղը... Այնուամենայնիվ գոնե այսօր... Այո, լավ է վաղը... Կասե՛մ — ու կմեկնեմ»։

Այդպես էլ որոշեց, որ վաղը — վե՛րջ ամեն ինչի...

Տատի հետ բացատրվելուց հետո, երեկոն է՛լ ավելի անկենդան ձգվեց։ Նույնիսկ Արինա Պետրովնան սկսվեց, Պետենկայի գալու իսկական պատճառն իմանալով։ Իուդուշկան փորձեց կատակներ անել մամենկայի հետ, բայց տեսնելով, որ նա մտածմունքների մեջ է, լռեց։ Պետենկան նույնպես ոչինչ չէր անում, միայն ծխում էր։ Ընթրիքի ժամանակ Պորֆիրի Վլադիմիրիչը դիմեց նրան, հարցնելով.

— Վերջապես ասելու՞ ես, թե ինչու ես շնորհ բերել այստեղ։

— Վաղը կասեմ,— մռայլ պատասխանեց Պետենկան։

°•°

Պետենկան վաղ արթնացավ համարյա անքուն անցկացրած գիշերվանից հետո։ Նույն այն երկվացած միտքը շարունակ հետապնդում էր նրան, միտք, որն սկսվում էր՝ գուցեև կտա, և միշտ վերջացնում էր այն հարցով, թե ինչու՞ ինքը եկավ այդտեղ։ Գուցեև նա չէր հասկանում իր հորը, բայց, համենայն դեպս, նա նրա մեջ չէր տեսնում ոչ մի զգացում, ոչ մի թույլ լար, որից կարելի լիներ բռնել և որը շահագործելով, հնարավոր լիներ որևէ բանի հասնել։ Նա մի բան էր միայն զգում՝ որ հոր ներկայությամբ նա գտնվում է ինչ-որ մի անբացատրելի, անորսալի բանի հետ դեմ-հանդիման։ Անգիտությունը՝ թե որ ծայրից մոտենալ, ինչից սկսել խոսքը, եթե ոչ վախ, ապա անհանգստություն էր առաջացնում։ Եվ այդպես էր գնում դեռ մանկությունից սկսած։ Միշտ, այն օրից, երբ նա սկսեց գիտակցել իրեն, բանն այնպիսի ընթացք էր ստանում, որ թվում էր, ավելի լավ է հրաժարվել որևէ ենթադրությունից, քան թողնել այն հորը որոշելու։ Այդպես էր և այժմ։ Ինչի՞ց պետք է նա սկսի։ Ինչպե՞ս պետք է սկսի։ Ի՞նչ ասի... Ա՜խ, ինչո՞ւ եկավ նա...

Թախիծ տիրեց նրան։ Այնուամենայնիվ նա հասկացավ, որ իր առջև մի քանի ժամ է մնացել միայն և որ, հետևապես, հարկավոր է արդեն մի բան անել։ Արհեստական վճռականություն առնելով, կոճկելով սյուրտուկն ու ինչ-որ բան շըշընջալով, նա բավական հաստատուն քայլերով մտավ հոր առանձնասենյակը։

Իուդուշկան աղոթքի էր կանգնած։ Նա աստվածավախ էր և սիրով օրական մի քանի ժամ հատկացնում էր աղոթքի։ Բայց նա աղոթում էր ոչ այն պատճառով, որ սիրում էր աստծուն և հույս ուներ աղոթքի միջոցով հաղորդակից լինել նրան, այլ որովհետև վախենում էր սատանայից և հույս ուներ, որ աստված իրեն կազատի նենգավորից։ Նա շատ աղոթքներ գիտեր և առանձնապես սքանչելի ուսումնասիրել էր աղոթելու ձևերը։ Այսինքն գիտեր, երբ պետք է շարժել շրթունքները և աչքերը վեր ամբառնալ, երբ պետք է ծալել ձեռները՝ ափերը փորին և երբ պետք է նրանք տարածել, երբ պետք է հուզվել և երբ կանգնել պատշաճորեն, չափավոր խաչակնքելով։ Նրա և՛ աչքերը, և՛ քիթը կարմրում ու խոնավանում էին որոշ բոպեներին, որոնց մասին մատնանշում էր նրան աղոթքի պրակտիկան։ Բայց աղոթքը չէր նորոգում նրան, չէր լուսավորում նրա զգացմունքները, ոչ մի ճառագայթ չէր մտցնում նրա խավար գոյության մեջ։ Նա կարող էր աղոթել ու կատարել բոլոր մարմնաշարժումները և միաժամանակ նայել լուսամուտին, տեսնելու համար՝ արդյոք որևէ մեկն առանց թույլտվության նկուղը հո չի գնում և այլն։ Դա կյանքի միանգամայն հատուկ, մասնավոր ֆորմուլա էր, որը կարող էր գոյություն ունենալ և բավարարել իրեն բոլորովին անկախ ընդհանուր կենսական ֆորմուլայից։

Երբ Պետենկան առանձնասենյակ մտավ, Պորֆիրի Վլադիմիրիչը չոքել էր, ձեռները վեր տարածած։ Նա չփոխեց իր դիրքը, այլ միայն օդում շարժեց մի ձեռքը, ի նշան այն բանի, որ դեռ ժամանակը չի։ Պետենկան նստեց սեղանատանն, ուր արդեն թեյի սեղան էր պատրաստված ու սպասեց։ Այդ կեռ ժամը նրան հավիտենական թվաց, առավել ևս, որ համոզված էր, թե հայրն իրեն դիտմամբ է սպասեցնել տալիս։ Արհեստա-

կան հաստատակամությունը, որով զինվել էր, կամաց-կամաց տեղի տվեց վրդովմունքի զգացմունքին։ Սկզբում նա հանգիստ նստել էր, հետո սկսեց սենյակում ետ ու առաջ քայլել և վերջապես սկսեց սուլել, որի հետևանքով առանձնասենյակի դուռը կիսաբացվեց և այնտեղից լսվեց Իուդուշկայի ջղայնացած ձայնը.

— Ով սուլել է ուզում, կարող է ախոռը գնալ։

Քիչ անց Պորֆիրի Վլադիմիրիչը դուրս եկավ, ամբողջովին սև հագած, մաքուր սպիտակեղենով, կարծես պատրաստված ինչ-որ հանդիսավորության։ Նրա դեմքը լուսավոր էր, գորովագին, հեզություն և ուրախություն արտահայտող, ասես թե նա նոր էր հենց միայն «արժանացել աստվածային շնորհին»։ Նա մոտեցավ որդուն, խաչակնքեց ու համբուրեց։

— Բարև, բարեկամս,— ասաց նա։

— Բարև ձեզ։

— Ինչպե՞ս գիշերեցիր։ Անկողինդ լա՞վ էր պատրաստված։ Թաղթաբիթի, լու չկա՞ր։

— Շնորհակալ եմ։ Քնեցի։

— Դե փառք աստծու։ Ծնողների մոտ միայն կարելի է անուշ քնել։ Այդ արդեն ես իմ փորձով գիտեմ. որչափ էլ որ լավ էր լինում Պետերբուրգում, բայց երբեք այնպես քաղցր չէի քնում, ինչպես Գոլովլյովոյում։ Կարծես օրորոցում լինես։ Ուրեմն ինչպե՞ս ենք անում մենք, առաջ թեյ խմենք, թե դու հիմա ես ուզում ինձ բան ասել։

— Ոչ, լավ է այժմ խոսենք։ Ես վեց ժամից մեկնելու եմ, այնպես որ գուցե որոշ բաների մասին մտածելու կարիք լինի։

— Դե, լավ։ Միայն թե, եղբայր, ուղղակի ասում եմ՝ երբեք ես մտածելու կարիք չեմ զգում, իմ պատասխանը միշտ պատրաստ է։ Եթե դու ճիշտ բան ես խնդրում,— համեցի, ես երբեք ոչ մի արդար բանում չեմ մերժի։ Թեպետև դժվար է լինում, երբեմն և ուժերից վեր, բայց եթե արդարացի է,— մերժել չեմ կարող։ Բնավորությունս այդպես է։ Բայց եթե անիրավացի բան ես խնդրում — մի զայրացիր, թեպետև խղճում եմ, բայց կմերժեմ։ Ես, եղբայր, աչքա-

կապություններ չունեմ։ Ես ամբողջապես այս եմ, ինչ որ կամ։ Դե, գնանք առանձնասենյակ։ Դու կասես, իսկ ես կըլսեմ։ Լսենք, լսենք ի՞նչ բան է։

Երբ երկուսով առանձնասենյակ մտան, Պորֆիրի Վլադիմիրիչը դուռը փոքր-ինչ կիսաբաց թողեց և ապա ոչ ինքը նստեց, ոչ որդուն նստեցրեց, այլ սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում։ Կարծես նա բնազդաբար զգում էր, որ գործը փափկանկատ է լինելու և որ այդպիսի առարկաների մասին քայլելիս բացատրվելն ավելի ազատ կլինի։ Եվ դեմքի արտահայտությունը թաքցնելը հարմար է, և բացատրությունն ընդհատելը հեշտ է, եթե նա չափից ավելի անհաճո ընթացք կստանա։ Իսկ կիսաբաց դռան օգնությամբ կարելի է և վկաների վկայակոչել, որովհետև մամենկան Եվպրակսեյուշկայի հետ, երևի, շուտով սեղանատուն կգան թեյի։

— Ես, պապենկա, պետական փող եմ տարվել,— միանգամից և մի տեսակ բութ ասաց Պետենկան։

Իուդուշկան ոչինչ չասաց։ Միայն նկատելի էր, ինչպես ցնցվեցին նրա շուրթերը։ Եվ ապա նա, ըստ սովորության, սկսեց շշնչալ։

— Ես երեք հազար եմ տարվել,— բացատրեց Պետենկան,— և եթե վաղը չէ մյուս օրը չմուծեմ, ապա կարող է ինձ համար շատ վատ հետևանքներ ունենալ։

— Ինչ կա որ, մուծիր,— սիրալիր ասաց Պորֆիրի Վլադիմիրիչը։

Մի քանի շրջան հայր ու որդի կատարեցին լուռ։ Պետենկան ուզեց շարունակել բացատրությունը, բայց զգում էր, որ շունչը կտրվում է։

— Ես ո՞րտեղից փող վերցնեմ,— վերջապես ասաց նա։

— Ես, սիրելի բարեկամս, քո աղբյուրները չգիտեմ։ Ինչ աղբյուրների վրա որ հույս ես ունեցել, երբ թղթախաղում պետական փող ես տարվել, դրանցից էլ վճարիր։

— Դուք ինքներդ լավ գիտեք, որ այդպիսի դեպքերում մարդիկ աղբյուրների մասին մոռանում են։

— Ոչինչ ես չգիտեմ, բարեկամս։ Ես երբեք թուղթ չեմ խաղացել. այ միայն մամենկայի հետ մեկ-մեկ դուրաչկի եմ խաղում, պառավին զվարճացնելու համար։ Եվ, խնդրում

եմ, դու ինձ այդ կեղտոտ գործերի մեջ մի խառնիր, ավելի լավ է գնանք թեյ խմենք։ Թեյ կխմենք, կնստենք, գուցեև այս ու այն մասին խոսենք, միայն թե, ի սեր Քրիստոսի, ոչ այդ մասին։

Եվ Իուդուշկան ուզեց մոտենալ դռանը, սեղանատուն անցնելու համար, բայց Պետենկան կանգնեցրեց նրան։

— Թույլ տվեք, բայց,— ասաց նա,— մի կերպ պե՞տք է դուրս գամ ես այս դրությունից։

Իուդուշկան քմծիծաղեց ու նայեց Պետենկայի երեսին։

— Պետք է, սիրելիս,— համաձայնեց նա։

— Դե ուրեմն օգնեցեք։

— Իսկ դա արդեն ուրիշ հարց է։ Որ պետք է մի կերպ դուրս գալ այդ դրությունից, այդ այդպես է, այդ դու ճիշտ ասացիր։ Իսկ թե ինչպե՞ս դուրս գալ, այդ արդեն իմ գործը չէ։

— Բայց ինչո՞ւ դուք չեք ուզում օգնել։

— Նրա համար, որ նախ ես փող չունեմ քո անպիտան գործերը պարտակելու համար, իսկ երկրորդ՝ և այն պատճառով, որ դա ընդհանրապես ինձ չի վերաբերում։ Ինքդ խճճվել ես, ինքդ էլ տակից դուրս արի։ Սիրում ես զբոսնել, սիրիր և սահնակը քաշել։ Այդպես, բարեկամս։ Ես քիչ առաջ հենց նրանից սկսեցի, որ եթե դու իրավացի բան ես խընդրում...

— Գիտեմ, գիտեմ, շատ խոսքեր կան ձեր լեզվին...

— Սպասիր, զսպիր քո կոպտությունները, թող ես վերջացնեմ։ Որ դրանք լոկ խոսքեր չեն, ես այդ հիմա կապացուցեմ քեզ... Եվ այդպես, ես քեզ հենց նոր ասացի՝ եթե դու հարկավոր, բանիմաց բան խնդրես,— համեցեք, բարեկամս, միշտ պատրաստ եմ քեզ բավարարել։ Բայց եթե դու գալիս ես անպետք խնդիրքով,— ներիր, եղբայր։ Անպետք բաների համար ես փող չունե՛մ, չունե՛մ և չունե՛մ։ Եվ չի՛ լինի, դու այդ իմացի՛ր։ Եվ մի համարձակվիր ասել, որ դրանք լոկ «խոսքեր» են, այլ հասկացիր, որ այդ խոսքերը շատ մոտ են կանգնած գործին։

— Մտածեցեք, սակայն, ինչ կպատահի ինձ հետ։

— Ինչ որ աստծուն հաճելի է, այն էլ կպատահի,— պա-

տասխան տվեց Իուդուշկան, ձեռքերը թեթևակի վեր տարածելով և կողքանց նայելով սրբապատկերին։

Հայր ու որդի նորից մի քանի շրջան արեցին սենյակում։ Իուդուշկան դժգոհությամբ էր քայլում, կարծես գանգատվում էր, որ որդին իրեն գերի է վերցրել։ Պետենկան, թևերը կանթած, հետևում էր նրան, բեղերը կրծելով ու ջղային քըմծիծաղելով։

— Ես ձեր վերջին որդին եմ,— ասաց նա,— մի մոռացեք այդ մասին։

— Հոբից, բարեկամս, աստված ամեն ինչ առավ, բայց նա չէր տրտնջում, այլ միայն ասաց՝ աստված տվեց, աստված էլ վերցրեց — եղիցի, տեր, կամքը քո։ Այդպե՞ս ահա, եղբայր։

— Հոբից աստված առավ, իսկ դուք ինքներդ եք խլում ձեզանից։ Վոլոդյան...

— Դե, դու կարծեմ գռեհկություններ ես սկսում ասել։

— Ոչ, գռեհկություն չէ, այլ ճիշտ է։ Բոլորին հայտնի է, որ Վոլոդյան...

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, չե՛մ ուզում քո գռեհկությունները լսել։ Եվ ընդհանրապես բավական է։ Ինչ հարկավոր էր ասել, դու ասացիր։ Ես քեզ պատասխանեցի։ Իսկ այժմ գնանք թեյ խմենք։ Կնստենք ու կխոսենք, հետո կնստենք, հրաժեշտի կենաց կխմենք — և բարի ճանապարհ։ Տեսնում ես, որչափ ողորմած է աստված դեպի քեզ։ Եվ եղանակը հանդարտեց, և ճանապարհը հարթ դարձավ։ Կամաց-կամաց, թըխկ հա թըխկ, չես էլ նկատի ինչպես հասար կայարան։

— Լսեցե՛ք, վերջապես ես ձեզ խնդրում եմ։ Եթե դուք գեթ զգացմունքի մի կաթիլ ունեք...

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, չխոսենք այդ մասին։ Գնանք սեղանատուն. մամենկան, երևի, առանց թեյի վաղուց տխրում է։ Լավ չէ պառավին սպասեցնել տալը։

Իուդուշկան թափով շուռ եկավ և համարյա վազելով հասավ դռանը։

— Ուզում եք գնացեք, ուզում եք մի գնացեք, ես այս խոսակցությունը չեմ թողնի,— բացականչեց նրա ետևից

Պետենկան։— Ավելի վատ, եթե վկաների ներկայությամբ սկսենք խոսել։

Իուդուշկան վերադարձավ և ուղիղ կանգնեց որդու դիմաց։

— Ի՞նչ ես ուզում ինձանից, սրիկա... Ասա՛,— հարցրեց նա գրգռված ձայնով։

— Ես ուզում եմ, որպեսզի դուք վճարեք այն փողը, որը ես տարվել եմ։

— Երբե՛ք։

— Ուրեմն դա ձեր վերջի՞ն խոսքն է։

— Տեսնո՞ւմ ես,— հանդիսավոր բացականչեց Իուդուշկան, մատով ցույց տալով անկյունում կախված սրբապատկերը։— Այդ տեսնո՞ւմ ես։ Դա հորս օրհնությունն է... Ահա ես նրա մոտ ասում եմ քեզ՝ երբե՛ք։

Եվ նա վճռական քայլերով դուրս գնաց առանձնասենյակից։

— Մարդասպա՛ն,— հնչեց նրա ետևից։

***

Արինա Պետրովնան արդեն նստել է սեղանի մոտ, և Եվպրակսեյուշկան թեյի պատրաստություն է տեսնում։ Պառավը մտախոհ է, լուռ է և նույնիսկ կարծես ամաչում է Պետենկայից։ Իուդուշկան, ըստ սովորության, մոտենում է համբուրելու մոր ձեռքը, մայրն էլ, ըստ սովորության, մեքենայաբար խաչակնքում է նրան։ Հետո, սովորության համաձայն, հարցեր են սկսվում՝ առողջ են արդյոք բոլորը, լավ են քնել, որոնց հետևում են սովորական միավանկ պատասխաններ։

Արդեն նախօրյակի երեկոյան Արինա Պետրովնան տխուր էր։ Այն ժամանակից, երբ Պետենկան փող խնդրեց իրենից և արթնացրեց նրա մեջ «անեծքի» հիշողությունները, նա հանկարծ ինչ-որ խորհրդավոր անհանգստության մեջ ընկավ և նրան սկսեց հետապնդել այն միտքը, թե՝ իսկ ի՞նչ, եթե անիծեմ։ Առավոտյան իմանալով, որ առանձնասենյակում բացատրություն է սկսվել, նա դարձավ Եվպրակսեյուշկային, խնդրելով.

— Գնա, աղջի, զգույշ ականջ դիր դռան ետև, ի՞նչ են խոսում նրանք։

Բայց Եվպրակսեյուշկան թեպետև ականջ դրեց, սակայն այնքան հիմար էր, որ ոչինչ չհասկացավ։

— Այնպես, խոսում են իրար հետ։ Շատ էլ չեն գոռգոռում,— բացատրեց նա վերադառնալով։

Այն ժամանակ Արինա Պետրովնան չհամբերեց ու ինքը սեղանատուն գնաց, ուր այդ ժամանակ ինքնաեռն էլ արդեն մատուցված էր։ Բայց բացատրությունն արդեն վերջանալուն էր մոտենում, լսեց միայն, որ Պետենկան ձայնը բարձրացնում է, իսկ Պորֆիրի Վլադիմիրիչը կարծես մարմաջում է ի պատասխան։

«Մարմաջում է, հենց մարմաջում է,— պտտվում էր նրա գլխում։— Այն ժամանակ էլ ահա նա այդպես մարմաջում էր։ Եվ այդ ինչպես ես այն ժամանակ չհասկացա»։

Վերջապես երկուսն էլ, և հայրը, և որդին, երևացին սեղանատանը։ Պետենկան կարմրել էր ու ծանր շնչում էր. աչքերը լայն բացված էին, մազերը գզգզված, ճակատը ծածկված էր քրտինքի մանր կաթիլներով։ Ընդհակառակը, Իուդուշկան ներս մտավ գունատ ու չարացած, ուզեց անտարբեր ձևանալ, բայց, չնայած բոլոր ջանքերին, նրա ներքին շրթունքը դողդողում էր։ Դժվարությամբ կարողացավ արտասանել սովորական առավոտյան բարևը սիրելի բարեկամ մամենկային։

Բոլորը գրավեցին իրենց տեղերը սեղանի շուրջը. Պետենկան նստեց փոքր-ինչ հեռու, ետ ընկավ աթոռի մեջքին, ոտքը գցեց ոտքին և, ծխելով, հեգնական նայում էր հորը։

— Այ եղանակն էլ, մամենկա, խաղաղվեց,— սկսեց Իուդուշկան,— երեկ ինչ իրարանցում էր, բայց բավական էր, որ աստված ցանկանար, և ահա մեղանում խաղաղ է ու հանգիստ և աստվածային հաճություն է։ Այդպե՞ս է, բարեկամս։

— Չգիտեմ, այսօր տանից դուրս չեմ եկել։

— Իսկ մենք, ի դեպ, թանկագին հյուրին ենք ճանապարհում,— շարունակեց Իուդուշկան։— Ես գիշերը մեկ-մեկ վեր էի կենում, նայում էի լուսամուտից,— տեսնեմ դրսում խաղաղ է ու հանգիստ, կարծես ահա աստծու հրեշտակը

թռավ ու մի րոպեում իր թևով խաղաղեցրեց ամբողջ այդ հուզմունքը։

Ոչ ոք նույնիսկ չպատասխանեց Իուդուշկայի շողոմքոր խոսքերին։ Եվպրակսեյշկան ֆրթացնելով թեյ էր խմում սնակից, փչելով ու փնչացնելով. Արինա Պետրովնան նայում էր գավաթին ու լուռ էր. Պետենկան, շարունակելով ճոճվել աթոռի վրա, շարունակում էր նայել հորը այնպիսի հեգնական-գրգռիչ տեսքով, որ թվում էր նա շատ մեծ չանք է անում, որպեսզի ծիծաղից չփոթկա։

— Հիմի Պետենկան թե որ այնքան սրընթաց չգնա էլ,— կրկին սկսեց Պորֆիրի Վլադիմիրիչը,— այդ դեպքում էլ մինչև երեկո երկաթուղու կայարանը կհասնի։ Ձիերը մեր ձիերն են, հոգնած չեն, երկու ժամի չափ Մուրավյովում կկերակրեն,— ակնթարթապես տեղ կհասցնեն։ Իսկ հետո՝ հա՞յդա,— մեքենան դղրդաց։ Ա՜խ, Պետենկա, Պետենկա։ Բարի չե՞ս դու։ Մնայիր այստեղ մեզ մոտ, հյուր մնայիր, իսկապես։ Եվ մեզ համար ուրախ կլիներ, և դու էլ, կտեսնես, մի շաբաթում ինչպես կկազդուրվես։

Բայց Պետենկան շարունակում է ճոճվել աթոռի վրա և հորը նայել։

— Դու ի՞նչ ես շարունակ ինձ վրա նայում,— բորբոքվում է վերջապես Իուդուշկան։— Նախշե՞ր ես տեսնում, ինչ է։

— Նայում եմ, սպասում եմ ուրիշ է՛լ ինչ դուրս կդա ձեզանից։

— Ոչինչ չես տեսնի, եղբայր։ Ինչպես ասված է, այնպես էլ կլինի։ Ես իմ խոսքը փոխողը չե՛մ։

Բոպեաչափ լություն է տիրում, որի ընթացքում որոշակի շշուկ է լսվում.

— Իուդուշկա։

Պորֆիրի Վլադիմիրիչն, անտարակույս, լսեց այդ խոսքը (նա նույնիսկ գունատվեց), բայց ցույց է տալիս, թե բացականչությունն իրեն չի վերաբերում։

— Ա՜խ, երեխանե՜ր, երեխանե՜ր,— ասում է նա։— Եվ մեղք եք դուք, և ուզում է մարդ փաղաքշել, սիրաշոյել ձեզ, բայց, երևում է, բան դուրս չի գա,— վիճակված չի։ Ինքներդ դուք ծնողներից խուսափում եք, ձեր բարեկամ-ընկերներն ունեք դուք, որոնք թանկ են ձեզ համար հոր ու մորից։ Դե, ոչինչ անել չե՛ս կարող։ Մտածում ես, մտածում ես ու հնազանդվում ես։ Երիտասարդ մարդիկ եք դուք, իսկ երիտասարդին, հայտնի է, հաճելի է երիտասարդի հետ լինել, քան փընթփընթացող ծերունու։ Ուստի և հանգստացնում ես քեզ ու չես տրտնջում, միայն խնդրում ես ասածուց՝ եղիցի կամք քո։

— Մարդասպա՛ն,— կրկին շշնջում է Պետենկան, բայց արդեն այնպես որոշակի, որ Արինա Պետրովնան վախով նրան է նայում։ Նրա աչքերի առջև կարծես հանկարծ սահեց Ստյոպկա-տխմարի ստվերը։

— Դու այդ ո՞ւմ մասին ես ասում,— հարցնում է Իուդուշկան, հուզմունքից ամբողջովին դողալով։

— Այնպես, մի ծանոթի մասին։

— Դե դու այդպես էլ ասա, թե չէ աստված է իմանում ինչ կա քո մտքում. գուցե դու ներկա եղողներից մեկնումեկին ես այդպես մեծարում։

Բոլորը լռում են. թեյով բաժակները մնացել են առանց ձեռք դիպցնելու։ Իուդուշկան նույնպես ետ է ընկնում աթոռի մեջքին և ջղային ճոճվում է։ Պետենկան, տեսնելով, որ ամեն հույս կորած է, նախամահվան թախծի նման բան է զգում և դրա ազդեցության տակ պատրաստ է ծայրահեղության դիմել։ Եվ հայրը, և որդին ինչ-որ անբացատրելի ժպիտով նայում են միմյանց աչքերի։ Որչափ էլ որ վարժեցրել է իրեն Պորֆիրի Վլադիմիրիչը, սակայն մոտենում է րոպեն, երբ նա ևս անկարող կլինի զսպել իրեն։

— Դու լավ կանես խելքդ գլուխդ հավաքած մեկնես,— վերջապես արտահայտվում է նա։— Այո՛։

— Կմեկնեմ։

— Սպասելու ի՞նչ ունես։ Տեսնում եմ, դու կռվել ես ուզում, իսկ ես ոչ ոքի հետ կռվել չեմ ուզում։ Ապրում ենք մենք այստեղ խաղաղ ու հանգիստ, առանց կռիվների ու վեճերի,— ահա պառավ տատիկդ նստած է այստեղ, գոնե նրանից ամաչեիր։ Դե ինչո՞ւ ես դու եկել։

— Ես ձեզ ասացի՝ ինչու։

— Իսկ եթե միայն դրա համար ես եկել, ապա զուր ես

նեղություն քաշել։ Մեկնի՛ր, եղբայր։ Է՞յ, ո՞վ կա այնտեղ։ Կարգադրեցեք երիտասարդ բարինի համար կիբիտկան լծեն։ Եվ տապակած հավի ճուտ, խավիար, էլ ուրիշ ինչ կա... ձու, ինչ... փաթաթեցեք թղթի մեջ։ Կայարանում կնախաճաշես, մինչև ձիերին կերակրելը։ Տեր ընդ քեզ։

— Ո՛չ։ Ես դեռ չեմ մեկնի։ Ես դեռ եկեղեցի եմ գնալու՝ սպանված ծառա աստծո Վլադիմիրի համար հոգեհանգիստ կատարել տալու։

— Անձնասպանի, այսինքն։

— Ոչ, սպանված։

Հայր ու որդի միմյանց են նայում լայն բացված աչքերով։ Թվում է, որ երկուսն էլ ահա վեր կցատկեն։ Բայց Իուդուշկան անմարդկային ուժ է գործ դնում և աթոռով միասին շուռ է գալիս սեղանի կողմը։

— Զարմանալի՞ է,— ասում է նա խզված ձայնով։— Զա՞ր-մա՞-նա՞-լի՞ է։

— Այո, սպանված,— կոպտորեն պնդում է Պետենկան։

— Իսկ ո՞վ է նրան սպանել,— հետաքրքրվում է Իուդուշկան, ըստ երևույթին, այնուամենայնիվ, հույս ունենալով, որ որդին ուշքի կգա։

Բայց Պետենկան ամենևին չշփոթվելով, շպրտում է, ասես թնդանոթից կրակելով.

— Դո՛ւք։

— Ե՞ս։

Պորֆիրի Վլադիմիրիչը զարմանքից ուշքի գալ չի կարողանում։ Նա շտապ վեր է կենում աթոռից, դեմքը դարձնում է սրբապատկերի կողմը և սկսում է աղոթել։

— Դո՛ւք, դո՛ւք, դո՛ւք,— կրկնում է Պետենկան։

— Դե հիմի, փառք աստծո, աղոթելուց հետո թեթևություն զգացի,— ասում է Իուդուշկան, կրկին նստելով սեղանի մոտ։— Սպասիր, համբերիր, թեպետ ես, որպես հայր, կարող եմ և քեզ հետ բացատրությունների մեջ չմտնել, բայց դե թող այդպես լինի արդեն։ Նշանակում է, քո կարծիքով, Վոլոդյային ե՞ս եմ սպանել։

— Այո՛, դուք։

— Իսկ իմ կարծիքով, այդպես չէ։ Իմ կարծիքով նա ինքն է իրեն սպանել։ Ես այն ժամանակ այստեղ էի, Գոլովլյովոյում, իսկ նա՝ Պետերբուրգում։ Ի՞նչ կապ կարող եմ ես ունենալ։ Ինչպե՞ս կարող էի ես նրան յոթ հարյուր վերստ հեռավորության վրա սպանել։

— Իբրև թե դուք չե՞ք հասկանում։

— Չեմ հասկանում... վկա է աստված, չեմ հասկանում։

— Իսկ ո՞վ Վոլոդյային առանց կոպեկի թողեց։ Ո՞վ կտրեց նրա ոոճիկը։ Ո՞վ։

— Ա՞յ-ա՞յ-ա՞յ։ Իսկ ինչո՞ւ նա ամուսնացավ հոր կամքին հակառակ։

— Բայց չէ՞ որ դուք թույլ էիք տվել։

— Ո՞վ, ե՞ս։ Տերը քեզ հետ։ Երբե՛ք ես թույլ չեմ տվել։ Երբե՛ք։

— Դե հա, այսինքն այդտեղ էլ դուք ձեր սովորության համաձայն եք վարվել։ Ձեր ամեն մի խոսքը չէ՞ որ տասը նշանակություն ունի, արի ու գուշակիր։

— Երբե՛ք ես թույլ չեմ տվել։ Նա այն ժամանակ ինձ գրել էր՝ ուզում եմ, պապա, Լիդոչկայի հետ ամուսնանալ։ Հասկանո՞ւմ ես՝ «ուզում եմ», այլ ոչ թե «թույլտվություն եմ խնդրում»։ Դե ես էլ պատասխանեցի նրան՝ եթե ուզում ես ամուսնանալ, ամուսնացիր, ես չեմ կարող արգելք լինել։ Այսպես է եղել։

— «Այսպե՞ս է եղել»,— ծաղրում է Պետենկան։— Իսկ մի՞թե դա թույլտվություն չի։

— Բանն այն է, որ ոչ։ Ես ի՞նչ եմ ասել։ Ես ասել եմ՝ չեմ կարող արգելք լինել, ուրիշ ոչինչ։ Իսկ թույլ կտամ, թե թույլ չեմ տա,— դա ուրիշ հարց է։ Նա ինձանից թույլտվություն չի էլ խնդրել, նա ուղղակի գրել է՝ ուզում եմ, պապա, Լիդոչկայի հետ ամուսնանալ,— դե ես էլ թույլտվության մասին լռեցի։ Ուզում ես ամուսնանալ, դե, Քրիստոսը քեզ հետ։ Ամուսնացիր, բարեկամս, կուզես Լիդոչկայի, կուզես կրկնա-Լիդոչկայի հետ, ես արգելք լինել չեմ կարող։

— Բայց առանց հացի պատառի թողնել կարո՞ղ եք։ Դե դուք այդպես էլ գրեիք՝ դուր չի գալիս ինձ քո մտադրությունը, ուստի, թեպետ ես արգելք չեմ հանդիսանում, բայց և այնպես նախազգուշացնում եմ, որ դու այլևս հույս չունե-

նաս իմ դրամական օգնության վրա։ Գոնե այդ դեպքում պարզ կլիներ։

— Ո՛չ, ես այդ երբեք թույլ չեմ տա ինձ անել։ Որպեսզի՞ ես սպառնալիք գործ դնեմ չափահաս որդու վրա — երբե՛ք։ Իմ կանոնն է, որ ես արգելք չեմ հանդիսանում ոչ ոքի։ Ուզեցիր ամուսնանալ՝ ամուսնացիր։ Բայց հետևանքների համար մի բարկացիր։ Ինքդ պետք է նախատեսես, դրա համար էլ աստված քեզ խելք է տվել։ Իսկ ես, եղբայր, ուրիշների գործերին չեմ միջամտում։ Եվ ոչ միայն ինքս չեմ միջամտում, այլև չեմ խնդրում, որ ուրիշներն իմ գործերին միջամտեն։ Այո, չեմ խնդրում, չեմ խնդրում, չեմ խնդրում և նույնիսկ... արգելո՛ւմ եմ։ Լսո՞ւմ ես արդյոք, վատ, անհնազանդ որդի,— ար-գե-լո՛ւմ եմ։

— Արգելեցեք, խնդրեմ, բոլորի բերանը փակել չեք կարող։

— Եվ գոնե նա զղջա՞ր։ Գոնե հասկանար, որ հորը վիրավորել է։ Դե, ստորություն արեցիր, արեցիր, գոնե զղջա՛։ Ներողությո՛ւն խնդրիր։ Ներեցեք, հոգյակ պապենկա, որ ձեզ վշտացրի։ Թե չէ՝ համեցե՞ք։

— Բայց չէ որ նա գրեց ձեզ, բացատրեց, որ ապրուստի միջոց չունի, որ այլևս դիմանալու ուժ չունի...

— Հոր հետ չեն բացատրվում։ Հորից ներողություն են խնդրում, ուրիշ ոչինչ։

— Այդ էլ է եղել։ Նա այնպես էր տանջվել, որ ներողություն էլ խնդրեց։ Ամե՛ն ինչ եղել է, ամե՛ն ինչ։

— Թեկուզ և այդպես — նորից նա իրավացի չէ։ Մեկ անգամ ներողություն խնդրեց, տեսնում է հայրը չի ներում, երկրորդ անգամ խնդրի՛ր։

— Ա՜խ, դո՛ւք։

Այդ ասելով, Պետենկան հանկարծ դադարում է ճոճվել աթոռի վրա, դառնում է սեղանի կողմը և զույգ ձեռքով կրթնում է նրան։

— Ահա ես նույնպես...— հազիվ լսելի ասում է նա։ Նրա դեմքը աստիճանաբար աղճատվում է։

— Ահա ես նույնպես...— կրկնում է նա, հիստերիկ հեկեկալով։

— Իսկ ով է մեղա...

Սակայն Իուդուշկային չհաջողվեց ավարտել իր խրատը, որովհետև նույն այդ րոպեին ինչ-որ միանգամայն անսպասելի բան տեղի ունեցավ։ Նկարագրած փոխադարձ հարձակումների ժամանակ Արինա Պետրովնայի մասին կարծես մոռացել էին։ Բայց նա ամենևին անտարբեր հանդիսատես չէր ընտանեկան այդ տեսարանին։ Ընդհակառակը, առաջին իսկ հայացքից կարելի էր կասկածել, որ նրա մեջ ինչ-որ ոչ այնքան սովորական բան է տեղի ունենում և որ, գուցե, հասել է րոպեն, երբ նրա մտավոր աչքի առաջ իր ամբողջությամբ ու մերկությամբ կանգնեց իր սեփական կյանքի հանրագումարը։ Նրա դեմքը կենդանություն էր առել, աչքերը լայնացել էին ու փայլում էին, շրթունքները շարժվում էին, կարծես ինչ-որ խոսք էին ուզում ասել և չէին կարողանում։ Եվ հանկարծ, նույն այն րոպեին, երբ Պետենկան սեղանատունը թնդացրեց իր հեկեկանքներով, Արինա Պետրովնան ծանրորեն բարձրացավ իր բազկաթոռից, ձեռքը առաջ պարզեց, և նրա կրծքից դուրս թռավ.

— Ասնի-ծո՜ւմ եմ։

ԱԶԳԱԿԱՆՈՒՀԻՆ

Իուդուշկան այդպես էլ փող չտվեց Պետենկային, թեպետ, որպես բարի հայր, պատվիրեց մեկնելիս նրա սայլակի մեջ դնել և տապակած հավեր ու հորթի միս, և կարկանդակներ։ Հետո, չնայած ցրտին ու քամուն, անձամբ դուրս եկավ մուտքի առաջ որդուն ճանապարհելու, հարցրեց, արդյոք հանգի՞ստ է նստել, ոտները լա՞վ է փաթաթել և, վերադառնալով տուն, երկար ժամանակ խաչակնքում էր սեղանատան լուսամուտը, հեռակա բարի երթ մաղթելով Պետենկային տանող սայլակին։ Մի խոսքով, արեց ամբողջ ծիսակատարությունն ըստ հարկի, ազգակցաբար։

— Ա՜խ, Պե՜տկա, Պե՜տկա,— ասում էր նա,— անմիտ որդի ես դու, վա՜տ։ Ա՜յ թե ինչ փորձանքի մեջ է ընկել... Ա՜խ, ա՜խ, ա՜խ։ Եվ ի՜նչ կլիներ, եթե ապրեիր խաղաղ ու հանգիստ, հնազանդ ու կարգուկանոնով, հայրիկի ու պառավ տատիկի հետ... բայց ո՛չ... Չէ՛ որ չէ՞, մենք մեր գլխում մեր թագավորը ունենք, մեր խելքով կապրենք։ Ահա՛ և քո խելքը։ Ա՜խ, ինչ ցավալի բան դուրս եկավ։

Ըստ որում նրա փայտյա դեմքի վրա ոչ մի մկան չցնցվեց, ոչ մի նոտա նրա ձայնում չհնչեց այնպես, որ որևէ կերպ նման լիներ, թե անառակ որդուն հրավեր է կարդում։ Թեպետ ոչ ոք չլսեց էլ նրա խոսքերը, որովհետև սենյակում միայն Արինա Պետրովնան էր գտնվում, որը նոր միայն կրած ցնցման ազդեցության տակ միանգամից կարծես կորցրեց

կենսական ամեն մի եռանդ ու նստել էր ինքնաեռի մոտ բերանը բաց արած, ոչինչ չլսելով և առանց որևէ իմաստի առաջը նայելով։

Հետո կյանքն ընթացավ առաջվա նման, լցված դատարկ վազվզուկով և անսպառ դատարկախոսությամբ։

Հակառակ Պետենկայի սպասածի, Պորֆիրի Վլադիմիրիչը մոր անեծքը կրեց բավական հանգիստ և մազաչափ չնահանջեց այն որոշումներից, որոնք, այսպես ասած, մշտապես պատրաստի նստած էին նրա գլխում։ Ճշմարիտ է, նա փոքրինչ գունատվեց ու նեղվեց մոր մոտ, բացականչելով։

— Մա՜մենկա, հոգյա՜կս, Քրիստոս ձեզ հետ, հանգըստացեք, սիրելիս, աստված ողորմած է, ամեն ինչ կրնկնի։

Բայց այդ խոսքերն ավելի շուտ մոր համար էին անհանգըստություն արտահայտում, քան իր համար։ Արինա Պետրովնայի արարքն այն աստիճան հանկարծակի էր, որ Իուդուշկան չկռահեց նույնիսկ զարմացած ձևանալ։ Դեռևս նախօրյակին մայրն իր հետ ողորմած էր, կատակում էր, դուրաչկի էր խաղում Եվպրակսեյուշկայի հետ, ըստ երևույթին, նշանակում է, որ նրան հիմա, այս րոպեիս է միայն ինչ-որ բան թվացել, իսկ կանխամտածված, «իսկական» ոչինչ չի եղել։ Իրոք, նա մամենկայի անեծքից շատ էր վախենում, բայց այդ անեծքը նա բոլորովին այլ կերպ էր պատկերացնում։ Նրա պարապ մտքում այդ դեպքի համար ամբողջ իրադրություն էր գոյացել՝ սրբապատկերներ, վառված մոմեր, մամենկան կանգնած է սենյակի մեջտեղը, սարսափելի, սեվացած դեմքով և... անիծում է։ Հետո՝ որոտ, մոմերը հանգան, վարագույրը պատռվեց, խավարը պատեց աշխարհը, իսկ վերևում, ամպերի մեջ երևում է Եհովայի դեմքը՝ կայծակներով լուսավորված։ Բայց որովհետև ոչ մի այդպիսի բան չպատահեց, ապա նշանակում է, որ մամենկան միայն խելառություն արեց, ինչ-որ բան է թվացել նրան, ուրիշ ոչինչ, սակայն պատճառ էլ չուներ նրան «իսկական կերպով» անիծելու, որովհետև վերջին ժամանակ նրանք նույնիսկ ընդհարվելու առիթ էլ չունեին։ Այն ժամանակվանից սկսած, երբ նա կասկած հայտնեց տարանտասը մամենկային պատկանե-

լու մասին (Իուդուշկան ներքնապես համաձայնում էր, որ այն ժամանակ նա հանցավոր էր և արժանի էր անեծքի), շատ ջուր էր հոսել. Արինա Պետրովնան խաղաղվել էր, իսկ Պորֆիրի Վլադիմիրիչն այն մասին էր միայն մտածում, թե ինչպես հանգստացնի սիրելի բարեկամ մամենկային։

— Վա՛տ է պառավը, ա՜խ, շատ վատ է։ Ժամանակ առ ժամանակ նույնիսկ սկսել է մոռանալ իրեն,— մխիթարում էր նա իրեն։— Նստում է աղավնյակը դուրաչկի խաղալու, բայց տեսնում ես, նիրհում է։

Արդարությունը պահանջում է ասել, որ Արինա Պետրովնայի զառամությունը նույնիսկ անհանգստացնում էր նրան։ Նա դեռ պատրաստված չէր կորստին, ոչինչ չէր մտածել, չէր կարողացել անհրաժեշտ հաշիվներն անել՝ ինչքան դրամագլուխ ուներ մամենկան Դուբրովինոյից մեկնելու ժամանակ, ինչքան եկամուտ կարող էր այդ դրամագլուխը բերել տարեկան, ինչքան կարող էր նա այդ դրամագլխից ծախսած լինել և ինչքան ավելացնել։ Մի խոսքով ասած, դեռ ժամանակ չէր ունեցել մի շարք չնչին բաներ անել, առանց որոնց նա միշտ զգում էր, որ անակնկալի է գալիս։

«Պառավը պինդ է,— երազում էր նա երբեմն,— չի ծախսի բոլորը — ինչպե՞ս կծախսի։ Այն ժամանակ, երբ մեզ բաժանեց, լավ դրամագլուխ ուներ։ Գուցե որբուկներին տված լինի մի բան... բայց ոչ, որբուկներին էլ շատ չի՛ տա։ Պառավը փող ունի՛, ունի՛»։

Այդ երազանքները սակայն առայժմ դեռ ոչ մի լուրջ բան չէին ներկայացնում և չքանում էին, չպահվելով նրա ուղեղում։ Առօրյա ոչնչությունների բազմությունն առանց այն էլ շատ հսկայական էր, որպեսզի նորերով ավելացվեր այն, որոնց կենսական պահանջի կարիքն առայժմ չկար։ Պորֆիրի Վլադիմիրիչը շարունակ հետաձգում էր ու հետաձգում և անեծքի հանկարծակի տեսարանից հետո միայն գլխի ընկավ, որ ժամանակն է սկսել։

Աղետը վրա հասավ, սակայն, ավելի շուտ, քան նա ենթադրում էր։ Պետենկայի մեկնելու հաջորդ օրը Արինա Պետրովնան գնաց Պոգորելկի և այլևս չվերադարձավ Գոլովլյովո։ Մի ամսվա չափ նա կատարյալ առանձնության մեջ անցկացրեց, առանց սենյակից դուրս գալու և նույնիսկ երբեմն-երբեմն միայն խոսք փոխանակելով սպասուհիների հետ։ Արթնանալով առավոտյան, նա, սովորության համաձայն, նստում էր գրասեղանի առաջ, սովորության համաձայն էլ ընկնում էր թուղթ բացել, բայց համարյա երբեք չէր վերջացնում և կարծես անզգայանում էր նստած տեղը, աչքերը լուսամուտին հառած։ Ի՛նչ էր նա մտածում և արդյոք մտածում էր որևէ բան,— այդ իմանալ չէր կարող մարդկային սրտի ամենախորհրդավոր գաղտնիքների խորաթափանց իրազեկ մարդն անգամ։ Թվում էր, նա ուզում է մի բան հիշել, թեկուզ, օրինակ, այն, թե ինչպես է ինքն ընկել այդտեղ, այդ պատերի մեջ, և չէր կարողանում։ Անհանգստացած նրա լռությունից, Աֆիմյուշկան մտնում էր սենյակ, ուղղում էր բազկաթոռի բարձերը, որ դրված էին նրա շուրջը, փորձում էր խոսել մի բանի մասին, բայց միայն միավանկ ու անհամբեր պատասխաններ էր ստանում։ Այդ ժամանակվա ընթացքում Պորֆիրի Վլադիմիրիչը մի երկու անգամ Պոգորելկի եկավ, մամենկային Գոլովլյովո էր կանչում, փորձում էր բորբոքել նրա երևակայությունը սունկերի, ծածանների ու գոլովլյովյան այլ գայթակղությունների պատկերացումներով, բայց մայրը միայն խորհրդավոր ժպտում էր նրա առաջարկությունների վրա։

Մի առավոտ, սովորականի համաձայն, փորձեց վեր կենալ անկողնուց, բայց չկարողացավ։ Նա ոչ մի առանձին ցավ չէր զգում, ոչ մի բանից չէր գանգատվում, այլ ուղղակի չէր կարողանում վեր կենալ։ Այդ հանգամանքը նրան նույնիսկ չանհանգստացրեց, կարծես այդ այդպես էլ պետք է լիներ։ Դեռևս երեկ նստել էր սեղանի մոտ, ուժ ուներ ման գալու,— հիմա պառկած է անկողնում, «տկար է զգում իրեն»։ Այդպես նույնիսկ իրեն ավելի հանգիստ էր զգում։ Բայց Աֆիմյուշկան իրար անցավ և, տիրուհուց ծածուկ, մարդ ուղարկեց Պորֆիրի Վլադիմիրիչի մոտ։

Իուդուշկան եկավ մյուս օրը վաղ առավոտյան։ Արինա Պետրովնան արդեն զգալի չափով վատ էր։ Հանգամանորեն հարցրեց սպասավորներից, ինչ է կերել մամենկան, արդյոք ավելորդ անժուժկալություն չի թույլ տվել իրեն, բայց պա-

տասխան ստացավ, որ Արինա Պետրովնան մի ամիս է արդեն համարյա ոչինչ չի ուտում, իսկ երեկվանից ամենևին բան չի կերել։ Վշտացավ Իուդուշկան, ձեռները թափահարեց և, որպես բարի որդի, նախքան մոր մոտ մտնելը, աղախինների սենյակում վառարանի մոտ տաքացավ, որպեսզի ցուրտ չտանի հետը հիվանդի մոտ։ Եվ, ի դեպ (նա հանգուցյալների նկատմամբ ինչ-որ դիվային հոտառություն ուներ), անմիջապես սկսեց կարգադրություններ անել։ Հարցրեց քահանայի մասին, արդյոք տանն է, որպեսզի կարևորության դեպքում կարելի լինի անմիջապես ուղարկել նրա ետևից, տեղեկացավ, թե որտեղ է դրված մամենկայի արկղը թղթերով, փակված է արդյոք, և, հանգստանալով էականի մասին, կանչեց խոհարարուհուն և պատվիրեց ճաշ պատրաստել իր համար։

— Ինձ շատ բան հարկավոր չի,— ասում էր նա։— Հավ կա՞, հավի մսով ապուր եփեցեք։ Գուցե աղը դրած միս կա — մի կտոր պատրաստեցեք։ Որևէ տապակա և ահա ես կուշտ եմ։

Արինա Պետրովնան մեջքին փռված, պառկած էր անկողնի վրա բաց բերանով ու ծանր շնչում էր։ Նրա աչքերը լայն բացված էին, մի թևը դուրս էր եկել վերմակի տակից ու անշարժացել էր օդում։ Ըստ երևույթին նա ականջ էր դնում խուլ աղմուկին, որ առաջացել էր որդու գալուստով, գուցե նաև նրան հասնում էին Իուդուշկայի արած կարգադրությունները։ Շնորհիվ իջեցրած վարագույրների, սենյակում մթնշաղ էր տիրում։ Պատրույգները այրվում-վերջանում էին կանթեղների հատակին, և լսելի էր, ինչպես ճթճթում էին նրանք ջրին դիպչելով։ Օդը ծանր էր ու գարշահոտ. սաստիկ ջերմացած վառարաններից, կանթեղների արձակած ծխից և ժահահոտությունից անտանելի տոթ էր կանգնած։ Պորֆիրի Վլադիմիրիչը թաղիքե կոշիկներով, օձի պես սողաց մոր անկողնի մոտ. նրա երկար ու նիհարավուն կերպարանքը մթնշաղի մեջ խորհրդավոր տարուբերվում էր։ Արինա Պետրովնան հետևում էր նրան ոչ այն է վախեցած, ոչ այն է զարմացած աչքերով ու կծկվում էր վերմակի տակ։

— Այդ ես եմ, մամենկա,— ասաց նա։— Այս ի՞նչ է, դուք այսօր թուլացել եք, ա՞խ, ա՞խ, ա՞խ։ Ահա թե ինչու այս գի-

շեր իմ քունը չէր տանում. ամբողջ գիշեր շարունակ միտք էի անում՝ արի մի գնամ տեսնեմ, ինչպես են ապրում Պոգորելկիի բարեկամներս։ Այսօր առավոտյան վեր կացա, անմիջապես նստեցի կիբիտկան, մի զույգ ձի լծեցինք — և ահա այստեղ եմ։

Պորֆիրի Վլադիմիրիչը սիրալիր ծիծաղեց, բայց Արինա Պետրովնան չէր պատասխանում և ավելի ու ավելի էր կծկվում վերմակի տակ։

— Դե, ասված ողորմած է, մամենկա,— շարունակեց Իուդուշկան.— գլխավորը, անձնատուր մի եղեք։ Թքեք հիվանդության վրա, վեր կացեք անկողնից և կտրիճ ման եկեք սենյակում։ Ահա՛ այսպես։

Պորֆիրի Վլադիմիրիչը վեր կացավ աթոռից և ցույց տրվեց, ինչպես են կտրիճ ման գալիս սենյակում

— Բայց սպասեցեք, թող վարագույրը բարձրացնեմ ու ձեզ նայեմ։ Է՞, բայց դուք կտրիճից կտրիճ եք, սիրելիս։ Բավական է քաջալերվեք և աղոթեք աստծուն ու զարդարվեք — թեկուզ իսկույն պարահանդես կարող եք գնալ։ Այ ես ձեզ համար օրհնած ջուր եմ բերել, խմեցեք։

Պորֆիրի Վլադիմիրիչը գրպանից հանեց սրվակը, սեղանի վրա գտավ մի գավաթ, լցրեց և մոտեցրեց հիվանդին։ Արինա Պետրովնան շարժում արեց, որ գլուխը բարձրացնի, բայց չկարողացավ։

— Որբերին կանչեիք... — տնքաց նա։

— Դե արդեն որբերի գալու կարի՞քը զգացվեց, ինչ է։ Ա՞խ, մամենկա, մամենկա։ Այդ ինչպե՞ս դուք... այդպե՞ս։ Մի չնչին հիվանդացել եք և արդեն վհատվել եք։ Ամեն բան էլ կարվի։ Եվ որբերի ետևից մարդ կուղարկվի, և Պետկային Պիտերից բերել կտանք — ամեն ինչ իր ժամանակ կանենք։ Շտապելու հարկ չկա, մենք դեռ ձեզ հետ կապրենք... Եվ այն էլ ինչպե՞ս կապրենք։ Այ կգա ամառը,— անտառը սունկի կգնանք, մորու, պտուղների, սև հաղարջի։ Կամ թե՝ Դուբրովինոյում ծածան որսալու կգնանք։ Մեր աշխատը կլծենք երկար դրոգին, կնստենք և կամաց-կամաց ու հանգիստ, թը՞խկ հա թը՞խկ կգնանք։

— Որբերին...— կրկնեց Արինա Պետրովնան թախծալի։

— Որբերն էլ կգան։ Ժամանակ տուր, բոլորին կկանչենք. բոլորս կգանք։ Կգանք ու ձեր շուրջը կնստենք։ Դուք թուխսը կլինեք, իսկ մենք՝ ճտերը... ջո՜ւ-ջո՜ւ-ջո՜ւ։ Ամեն ինչ կլինի, եթե դուք խելոք լինեք։ Բայց այ, որ հիվանդացել եք, խելոք բան չեք արել։ Այ թե դուք ինչ եք մտածել, չարաճըճի... ա՜խ, ա՜խ, ա՜խ։ Փոխանակ ուրիշներին օրինակ տաք, դուք ահա թե ինչ եք արել։ Լավ չէ՛, սիրելիս, ա՜խ, լավ չէ։

Բայց որչափ էլ աշխատում էր Պորֆիրի Վլադիմիրիչը և՛ կատակներով, և՛ զվարճալի խոսքերով քաջալերել սիրելի բարեկամ մամենկային, նրա ուժերը ժամեժամ նվազում էին։ Հատուկ մարդ ուղարկեցին քաղաք բժշկի ետևից, և որովհետև հիվանդը շարունակում էր տխրել ու որբերին կանչել, ապա Իուդուշկան իր ձեռքով նամակ գրեց Աննինկային ու Լյուբինկային, որի մեջ համեմատում էր նրանց բռնած ընթացքն իր ընթացքի հետ, իրեն համարում էր քրիստոնյա, իսկ նրանց՝ ապերախտ։ Գիշերը բժիշկը եկավ։ Բայց արդեն ուշ էր։ Արինա Պետրովնան, ինչպես ասում են, մեկ օրում «հալվեց»։ Գիշերվա ժամը չորսին հոգեվարքը սկսվեց, իսկ առավոտյան վեցին Պորֆիրի Վլադիմիրիչը շոքել էր մոր անկողնու առաջ ու ողբում էր.

— Մա՜մենկա, բարեկամս, օրհնեցե՜ք...

Բայց Արինա Պետրովնան չէր լսում։ Նրա բաց աչքերը մթագնած նայում էին տարածության մեջ, կարծես նա աշխատում էր մի բան հասկանալ և չէր հասկանում։

Իուդուշկան նույնպես չէր հասկանում։ Նա չէր հասկանում, որ իր աչքերի առաջ բացված գերեզմանը տարավ իր հետ նրա վերջին կապը կենդանի աշխարհի հետ, վերջին կենդանի էակը, որի հետ կարող էր բաժանել այն աճյունը, որով լցված էր ինքը։ Եվ որ այսուհետև այդ աճյունը, ելք չունենալով, կուտակվելու է իր իսկ մեջ այնքան ժամանակ, մինչև վերջնականապես խեղդի իրեն։

Սովորական ունայն աճապարանքով խորասուզվեց նա թաղման ծիսակատարությանը հատուկ անթիվ մանրուքների գիրկը։ Մաղթանքներ էր անել տալիս, հոգեհանգստի պատարագներ էր պատվիրում, բացատրվում էր քահանայի հետ, քսքստացնում էր ոտները սենյակից-սենյակ անցնելով, մըտ-

նում էր սեղանատուն, ուր պառկած էր ննջեցյալը, խաչակրնքում էր, աչքերը երկինք էր ամբառնում, գիշերները վեր էր կենում, անձայն մոտենում էր դառնը, ականջ էր դնում սաղմոսի միապաղաղ ընթերցմանը և այլն։ Ըստ որում հաճելի կերպով զարմացած էր, որ այս դեպքում նույնիսկ ինքը առանձին ծախսերի տակ չընկավ, որովհետև Արինա Պետրովնան դեռևս կենդանության օրոք գումար էր ետ դրել իր թաղման համար, շատ մանրամասն նշելով որքան և ինչի վրա պետք է ծախսել։

Մորը թաղելուց հետո Պորֆիրի Վլադիմիրիչն անմիջապես զբաղվեց նրա գործերը պարզաբանելով։ Ծանոթանալով թղթերին, նա տասի չափ կտակներ գտավ (նրանցից մեկի մեջ մայրը իրեն «անպատկառ» էր անվանում), բայց դրանք բոլորը գրված էին որպես նախագծեր՝ դեռ այն ժամանակ, երբ Արինա Պետրովնան տիրակալ բարինյա էր, և չէին ձևակերպված։ Ուստի Իուդուշկան շատ գոհ մնաց, որ հարկ չունեցավ նույնիսկ հոգու վրա մեղք վերցնել, իրեն մորից մնացած կայքի միակ ժառանգը հայտարարելով։ Այդ կայքը բաղկացած էր տասնհինգ հազար ռուբլի դրամագլխից և խղճուկ շարժական իրերից, որոնց մեջ էր և հոչակավոր տարանտասը, որը քիչ էր մնացել կովախնձոր դառնար մոր և որդու մեջ։ Արինա Պետրովնան խնամքով զատել էր իր հաշիվները խնամակալական հաշիվներից, այնպես որ անմիջապես կարելի էր տեսնել, ինչն է պատկանում իրեն և ինչը՝ որբերին։ Իուդուշկան անմիջապես ուր որ հարկն էր իրեն ժառանգ հայտարարեց, կնքեց խնամակալության վերաբերող թղթերը, մոր աղքատիկ հագուստեղենը սպասավորուհիներին բաժանեց, տարանտասը և երկու կով, որոնք Արինա Պետրովնայի գրած ցուցակում «իմոնք» հատվածում էին նշանակված, ուղարկեց Գոլովլյովո, ապա, վերջին մաղթանքը կատարել տալով, մեկնեց։

— Սպասեցեք տիրուհիներին,— ասում էր նա սրահում իրեն ճանապարհելու հավաքված մարդկանց։— Կգա՛ն՝ բարով են եկել։ Չե՛ն գա՝ ինչպես կուզեն։ Ես իմ կողմից ամեն բան արեցի, խնամակալության հաշիվները կարգի բերեցի, ոչինչ չթաքցրի, չպահեցի — ամեն ինչ բոլորի աչքի առաջ եմ արել։

Մամենկայից մնացած դրամագլուխը ինձ է պատկանում օրենքով. տարանտասը և երկու կովը, որ ես Գոլովլյովո ուղարկեցի, նույնպես իմն են օրենքով։ Գուցե որոշ բան իմոնցից մնաց այստեղ, բայց տերը նրանց հետ, որբերին աստված ինքն է հրամայել օգնել։ Ափսո՞ս մայրիկը, բարի պառավ էր, հոգատար էր։ Ահա ձեր մասին, սպասավորուհիներիդ մասին էլ հոգացել է, իր հագուստեղենը ձեզ է թողել։ Ա՜խ մամենկա, մամենկա, լավ չարեցիք դուք այդ, սիրելիս, որ մեզ որբ թողեցիք։ Բայց եթե աստծուն այդպես է հաճելի, ապա մենք պետք է հնազանդվենք նրա սուրբ կամքին։ Միայն թե ձեզ համար լավ լինի, իսկ մեր մասին.... ի՞նչ պետք է մեր մասին մտածել։

Առաջին գերեզմանին շուտով հաջորդեց և երկրորդը։

Որդու պատմությանը Պորֆիրի Վլադիմիրիչը բավական խորհրդավոր վերաբերմունք ունեցավ։ Լրագրեր նա չէր ստանում, ոչ ոքի հետ նամակագրություն չուներ, ուստի այն դատավարության մասին, որի մեջ հանդես էր գալիս Պետենկան, ոչ մի տեղից իմանալ չէր կարող։ Եվ հազիվ էլ թե նա նույնիսկ ուզում էր որևէ բան իմանալ այդ առարկայի մասին։ Ընդհանրապես նա մի մարդ էր, որը ամենից շատ հեռու էր մնում ամեն տեսակի անհանգստությունից, որը մինչև ականջները թաղված էր ամենազզվելի ինքնապահպանման տիղմի մեջ և որի գոյությունը, դրա հետևանքով, ոչ մի տեղ և ոչ մի բանի վրա իրենից հետո հետք չի թողել։ Այդպիսի մարդկանց թիվը աշխարհում բավական շատ է և նրանք բոլորն էլ ապրում են առանձնացած, չգիտենալով ու չցանկանալով որևէ բանի մոտ ապաստան գտնել, չիմանալով, թե ինչ է սպասում իրենց հաջորդ րոպեին և ի վերջո պայթելով այնպես, ինչպես անձրևի փուչիկներն են պայթում։ Չունեն նրանք բարեկամական կապեր, որովհետև բարեկամության համար անհրաժեշտ է ընդհանուր հետաքրքրության գոյություն. չկան նաև գործնական կապեր, որովհետև բյուրոկրատիզմի մեռյալ գործի մեջ անգամ նրանք արդեն ինչ-որ միանգամայն անտանելի մեռելություն են։ Երեսուն տարի շարունակ Պորֆիրի Վլադիմիրիչը քարշ էր գալիս ու երևում էր դեպարտամենտում. հետո մի գեղեցիկ

առավոտ անհայտացավ, և ոչ ոք չնկատեց այդ։ Ուստի նա որդու վիճակի մասին իմացավ վերջինը, երբ այդ լուրն արդեն տարածվել էր սպասավորների մեջ։ Բայց այդ դեպքում անգամ ձևացավ, որ ոչինչ չգիտի, այնպես որ, երբ Եվպրակսեյուշկան ուզեց մեկ անգամ Պետենկայի անունը տալ, Իուդուշկան ձեռները թափ տվեց նրա վրա ու ասաց.

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, և՛ չգիտեմ, և՛ չեմ լսել, և՛ լսել չեմ ուզում։ Չեմ ուզում ես նրա կեղտոտ գործերն իմանալ։

Բայց վերջապես, այնուամենայնիվ, իմանալու առիթ եղավ։ Պետենկայից նամակ ստացվեց, որով նա հայտնում էր, որ շուտով ինքը մեկնելու է հեռավոր նահանգներից մեկը և հարցնում էր, արդյոք պապենկան շարունակելու է իրեն ապրուստի փող ուղարկել իր նոր դրության մեջ։ Ամբողջ օրը դրանից հետո Պորֆիրի Վլադիմիրիչը նկատելի անգիտակից դրության մեջ էր գտնվում, սենյակից-սենյակ էր անցնում, մըտնում էր սրբապատկերների սենյակը, խաչակնքում էր ու հառաչում։ Երեկոյան կողմը, սակայն, սիրտ արեց ու գրեց.

«Հանցագործ որդի Պյոտր.

Որպես հավատարիմ հպատակ, որը պարտավոր է հարգել օրենքները, ես նույնիսկ չպետք է պատասխանեի քո նամակին։ Բայց որպես հայր, որ հաղորդակից է մարդկային թուլության, կարեկցության զգացումից դրդված, չեմ կարող մերժել բարի խորհուրդ տալ զավակիս, որը սեփական հանցանքով չարությունների հորձանքի մեջ է գլորել իրեն։ Եվ այդպես, ահա համառոտակի իմ կարծիքն այս առարկայի նկատմամբ։ Պատիժը, որին հնթարկվել ես դու, ծանր է, բայց միանգամայն արժանի ես դու դրան,— այսպես է առաջին և ամենագլխավոր միտքը, որն այսուհետև պետք է միշտ ուղեկցի քեզ քո նոր կյանքում։ Իսկ մնացյալ բոլոր քմահաճույքները և նույնիսկ հիշողությունները նրանց մասին դու պետք է թողնես, որովհետև քո վիճակում այդ բոլորը կարող է միայն ջղայնացնել և տրտունջի առիթ հանդիսանալ։ Դու արդեն ճաշակել ես մեծամտության դառն պտուղները, փորձիր ճաշակել նաև հեզության պտուղներից, առավել ևս, որ քեզ ապագայում ոչինչ այլ բան չի սպասում։ Մի տրտնջ-

ջա պատժից, որովհետև իշխանությունը նույնիսկ քեզ չի պատժում, այլ միայն ուղղվելու միջոց է տալիս։ Շնորհակալ լինել սրա համար ու աշխատել քավել արարքը,— ահա ինչի մասին պետք է մտածես դու անընդհատ, այլ ոչ փառահեղ ժամանակ անցկացնելու մասին, որը, ի դեպ, ինքս երբեք դատի տակ չլինելով, չունեմ։ Հետևիր ուրեմն սույն խոհեմ խորհրդին ու վերածնվիր նոր կյանքի համար, վերածնվիր կատարելապես, բավարարվելով նրանով, ինչ որ իշխանությունը, իր ողորմածությամբ, հարկավոր կհամարի նշանակել քեզ համար։ Իսկ ես, իմ կողմից, անդուլ կաղոթեմ բոլոր բարիքները շնորհողին՝ առաքելու քեզ հաստատակամություն և հնազանդություն, և նույնիսկ այսօր, երբ գրում եմ սույն այս տողերը, եղել եմ եկեղեցում և այս մասին ջերմագին աղերսանքներ եմ առաքել։ Ապա օրհնում եմ քեզ քո նոր ճանապարհին և մնում եմ վրդովված, բայց և այնպես դեռ սիրող քո հայրը՝

Պորֆիրի Գոլովլյով»։

Հայտնի չէ, հասավ արդյոք այդ նամակը Պետենկային. բայց մեկ ամիս չանցած նրա աքսորից, Պորֆիրի Վլադիմիրիչը պաշտոնական ծանուցում ստացավ, որ նրա որդին, աքսորավայր չհասած, պառկեց ճանապարհին եղած քաղաքներից մեկի հիվանդանոցում և մեռավ։

Իուդուշկան մնաց մենակ, բորբոքված դրության մեջ նա այնուամենայնիվ դեռևս չհասկացավ, որ այդ նոր կորուստով արդեն վերջնականապես ընկել է տարածության գիրկը, դեմ առ դեմ է մնացել մեն-միայն իր դատարկախոսության հետ։ Այդ պատահեց Արինա Պետրովնայի մահից անմիջապես հետո, երբ նա ամբողջովին խորասուզված էր հաշիվների մեջ։ Նա կարդում էր հանգուցյալի թղթերը, հաշվում էր յուրաքանչյուր գրող, որոնում էր այդ գրողի կապը խնամակալական գրոշների հետ, չկամենալով, ինչպես ինքն էր ասում, ոչ ինքը յուրացնի ուրիշինը, ոչ իրենը բաց թողնի։ Այդ խառնաշփոթության մեջ նրա առաջ հարց անգամ չէր ծագում, թե ինչո՞ւ է նա այդ ամենը անում և ո՞վ է օգտվելու իր ունայն իրարանցման պտուղներից։ Առավոտից մինչև երեկո տքնում էր նա գրասեղանի առաջ, քննադատելով հանգուցյալի կարգադրությունները և նույնիսկ անձնատուր էր լինում ցնորքների, այնպես որ հոգսերի մեջ կամաց-կամաց բարձիթողի արեց և իր սեփական տնտեսության հաշիվները։

Եվ տանը ամեն ինչ լռեց։ Սպասավորները, որոնք ըստ կրզբում էլ գերադասում էին ավելի իրենց սենյակներում մնալ, համարյա բոլորովին լքեցին տունը, իսկ տիրոջ սենյակները գալիս ոտները մատների վրա էին ման գալիս ու շշուկով էին խոսում։ Ինչ-որ մահացություն էր զգացվում և՛ այդ տանը, և՛ այդ մարդու մեջ, այնպիսի մի բան, որն ակամա ու սնահավատ սարսափ է ազդում։ Աղջամուղջը, որ պարուրել էր Իուդուշկային, օրեցօր ավելի ու ավելի պիտի թանձրանար։

***

Մեծ պասին, երբ ներկայացումները դադարեցին, Գոլովլյովո ժամանեց Աննինկան և հայտարարեց, որ Լյուբինկան չկարողացավ իր հետ գալ, որովհետև դեռ առաջուց պայմանագիր էր կնքել ամբողջ մեծ պասի համար և այդ պատճառով մեկնեց Ռոմնա, Իզյում, Կրեմենչուգ և այլն, ուր նա պետք է կոնցերտներ տար ու երգեր իր ամբողջ ռեպերտուարը։

Կարճատև արտիստական կարիերայի ընթացքում Աննինկան նշանակալից չափով հավասարակշռվել էր։ Դա այլևս նախկին միամիտ, սակավարյուն ու մասամբ ալարկոտ աղջիկը չէր, որը Դուբրովինոյում ու Պոգորելկիում անշնորհք օրորվելով ու կամացուկ երգելով, սենյակից-սենյակ էր թափառում, ասես չիմանալով, թե ուր տեղ գտնի իր համար։ Ոչ, դա միանգամայն կազմակերպված, կտրուկ և նույնիսկ համարձակ շարժուձևերով աղջիկ էր, որի մասին առաջին իսկ հայացքից անսխալ կերպով կարելի էր ասել, որ խոսքի տակ մնացողը չի։ Նրա արտաքինը նույնպես փոխվել էր ու բավական հաճելի զարմանք պատճառեց Պորֆիրի Վլադիմիրիչին։ Նրա առաջ հայտնվեց բարձրահասակ ու բարեկազմ մի կին՝ գեղեցիկ կարմրայտ դեմքով, բարձր, լավ զար-

գաղած կրծքով, մոխրագույն, դուրս պրծած աչքերով և սքանչելի մոխրագույն մազերի հյուսով, որը ծանրորեն իջնում էր ծոծրակին,— կին, որն, ըստ երևույթին, տոգորված էր այն գիտակցությամբ, որ ինքն է հենց այն «Զքնաղ Հեղինեն», որի համար վիճակված է հառաչել պարոնայք սպաներին։ Վաղ առավոտյան ժամանեց նա Գոլովլյովո և անմիջապես առանձնացավ հատուկ սենյակում, որտեղից սեղանատուն դուրս եկավ թեյի ժամանակ, հոյակապ մետաքսյա հագուստով, խշխշացնելով երկար քղանցքը և շատ ճարպկորեն խաղացնելով այն աթոռների արանքում։ Իուդուշկան թեպետև սիրում էր իր աստծուն ամենից ավելի, սակայն դա չէր խանգարում նրան ճաշակ ունենալ դեպի գեղեցիկ և առանձնապես փարթամ կանայք։ Ուստի նա սկզբում խաչակնքեց Աննինկային, հետո առանձնակի որոշությամբ համբուրեց նրա այտերը և ըստ այդու աչքի տակով այնպես տարօրինակ նայեց նրա կրծքին, որ Աննինկան հազիվ նկատելի ժպտաց։

Նստեցին թեյի. Աննինկան երկու ձեռները վեր բարձրացրեց ու ձգձգվեց։

— Ա՜խ, քեռի, ինչ տխուր է այստեղ,— սկսեց նա, թեթևակի հառաչելով։

— Ա՜յ քեզ բան, հազիվ ես ոտքդ ներս դրել և արդեն՝ տխո՞ւր թվաց։ Իսկ դու ապրիր մեզ հետ, այն ժամանակ կտեսնենք, գուցեև ուրախ երևա,— պատասխանեց Պորֆիրի Վլադիմիրիչը, որի աչքերն հանկարծ ծածկվեցին ճարպային փայլով։

— Ո՛չ, հետաքրքիր չէ։ Ի՞նչ կա այստեղ։ Զորս կողմը ձյուն է, հարևաններ չկան... Կարծեմ, այստեղ զորագո՞ւնդ կա։

— Ե՛վ զորագունդ կա, և՛ հարևաններ կան, բայց, խոստովանանք լինի, ինձ դա չի հետաքրքրում։ Բայց եթե...

Պորֆիրի Վլադիմիրիչը նայեց նրան, սակայն չավարտեց խոսքը, այլ ծպտացրեց։ Գուցեև նա դիտավորյալ ընդհատեց, ուզեց գրգռել նրա կանացի հետաքրքրությունը, համենայն դեպս նախկին, հազիվ նկատելի ժպիտը նորից սահեց Աննինկայի դեմքով։ Նա արմունկներով հենվեց սեղանին ու բավական ակնդետ նայեց Եվպրակսեյուշկային, որը, ամբողջովին կարմրատակած, մաքրում էր բաժակները և

նույնպես իր մեծ պղտոր աչքերով նրան էր նայում խեթ-խեթ։

— Սա իմ նոր տնտեսուհին է... փութաջան է,— ասաց Պորֆիրի Վլադիմիրիչը։

Աննինկան հազիվ նկատելի գլխով արեց ու կամացուկ մոլկտաց՝ ah! ah! que j'aime... que j'aime... le s mili-mili-taires!*... ըստ որում նրա գոտկատեղը մի տեսակ ինքն իրեն ցնցվում էր։ Լռություն տիրեց, որի ընթացքում Իուդուշկան աչքերը հեզորեն խոնարհած, քիչ-քիչ թեյ էր կում անում բաժակից։

— Տաղտկալի՞ է,— կրկին հորանջեց Աննինկան։

— Հենց մի գլուխ տաղտկալի՞ է ու տաղտկալի՞... Սպասիր, ապրիր... Կպատվիրենք սա՛հնակը լծել — զբոսնիր, ինչքան ուզում ես։

— Քեռի, ինչո՞ւ դուք հուսար չեք դարձել։

— Նրա համար որ, բարեկամս, ամեն մարդու համար աստված իր գիծն է սահմանել։ Մեկին հուսար դառնալ, մյուսին՝ աստիճանավոր դառնալ, երրորդին՝ առևտուր անել, չորրորդին...

— Ա՜խ, այո, չորրորդին, հինգերորդին, վեցերորդին... Ես մոռացել էի։ Եվ այդ բոլորն աստված է սահմանում... այդպե՞ս է։

— Ի՞նչ կա որ, և աստված։ Դրա վրա բարեկամս, ծիծաղելու բան չկա։ Գիտես դու, սուրբ գրքում ի՞նչ է ասված.— առանց աստծու կամքի...

— Մազի մասի՞ն, այդ էլ գիտեմ։ Բայց ցավն այն է, որ հիմի բոլորը կեղծ մազեր են գործածում, իսկ դա, կարծեմ, նկատի չի առնված։ Ի դեպ, տեսեք, քեռի, ես ինչ սքանչելի հյուս ունեմ... Ճշմարիտ չէ՞, լավն է։

Պորֆիրի Վլադիմիրիչը մոտ գնաց (չգիտես ինչու ոտների մատների վրա) և հյուսը բռնեց ձեռքում։ Եվպրակսեյուշկան ևս առաջ ձգվեց առանց պնակը ձեռքից վայր դնելու և շաքարն ատամների տակ սեղմած, ասաց.

* Ա՜խ ա՜խ, ես ինչպես... ես ինչպե՞ս եմ սիրում զին-զին-զինվորականներին։

— Կե՞ղծ է երևի։

— Ոչ, կեղծ չէ, այլ իմ սեփական մազերն են։ Քեռի, ես մեկ անգամ բաց կթողնեմ ձեր առաջ։

— Այո, լավ հյուս է,— գովաբանեց Իուդուշկան և մի տեսակ գարշելի բաց արեց շուրթերը, բայց հետո հանկարծ հասկացավ, որ նման գայթակղություններից հարկավոր է իսկապես հեռու փախչել ու ավելացրեց.— ա՜խ, չարաճճի, չարաճճի, շարունակ մազերն ու քղանցքներն են քո մտքին, իսկ իսկականի, գլխավորի մասին չես էլ կուզում հարցնել։

— Այո, տատիկի մասին... Մեռավ նա, չէ՞։

— Վախճանվեց, բարեկամս։ Եվ այն էլ ինչպե՞ս վախճանվեց։ Խաղաղ, հանգիստ, ոչ ոք չիմացավ էլ։ Իսկապես որ արժանացավ խաղաղ վախճանի։ Բոլորին հիշեց, բոլորին օրհնեց, քահանա կանչեց, հաղորդվեց... Եվ հանկարծ այնպե՞ս, այնպե՞ս հանգիստ զգաց իրեն։ Նույնիսկ ինքն այդ մասին ասաց՝ ինչպե՞ս լավ է հանկարծ ինձ համար։ Եվ պատկերացրու՝ նոր էր միայն այդ ասել, սկսեց հառաչել։ Հառաչեց մեկ անգամ, երկրորդ, երրորդ անգամ — տեսնենք այլևս չկա։

Իուդուշկան վեր կացավ, դեմքը սրբապատկերի կողմը դարձրեց, ձեռները խաչեց կրծքին ու սկսեց աղոթել։ Նույնիսկ արցունքներ երևացին աչքերին, այնպես լավ էր ստում նա։ Բայց Աննինկան, ըստ երևույթին, շուտ զգացվողներից չէր։ Ճշմարիտ է, նա մի պահ մտքերի մեջ ընկավ, սակայն բոլորովին այլ պատճառով։

— Իսկ հիշում եք, քեռի,— ասաց նա,— ինչպես նա ինձ ու քրոջս փոքր հասակում մածնով էր կերակրում։ Ոչ թե վերջին ժամանակ... վերջին ժամանակ նա շատ լավն էր... այլ այն ժամանակ, երբ հարուստ էր։

— Դե-դե, անցածը հիշելու հարկ չկա։ Մածնով են կերակրել, բայց տեսեք, ինչպիսին ես դարձել, տերը քեզ հետ։ Գերեզմանատուն գնալո՞ւ ես։

— Գնանք, իհարկե։

— Բայց միայն գիտե՞ս ինչ... Դու առաջ լավ կաներիր քավեիր։

— Ինչպե՞ս թե... քավեիր։

— Դե, այնուամենայնիվ... դերասանուհի ես... Դու, կարծում ես, տատիկի համար հե՞շտ էր դա։ Այնպես որ նախքան գերեզմանին այցի գնալը պատարագ լսեիր, քավեիր։ Ես կպատվիրեմ առավոտ վաղ պատարագ մատուցել, հետո արդեն գնա։

— Ոչ, ես այսպես... ես հիմա կգնամ։

— Չգիտեմ, ինչպես ուզում ես։ Իսկ իմ խորհուրդն այսպես է՝ վաղը պատարագ կլսենք, թեյ կխմենք, կհրամայենք զույգ ձի լծել կիբիտկային ու միասին կգնայինք։ Եվ դու քաված կլինես, և տատիկի հոգու համար...

— Ա՜խ, քեռի, որչափ հիմարն եք դուք, սակայն։ Աստված գիտի ինչ հիմարություններ եք ասում և դեռ պնդում եք։

— Ի՞նչ, դուր չեկա՞վ։ Դե արդեն ներող եղեք — ես, եղբայր, պարզախոս մարդ եմ։ Սուտը չեմ սիրում, իսկ ճշմարտությունը և ուրիշներին կասեմ, և ինքս կլսեմ։ Թեպետև դուր չի գալիս երբեմն ճշմարտությունը, թեպետև դառն է, բայց և այնպես լսելու ես։ Եվ պետք է լսել, որովհետև ճշմարտություն է։ Այդպե՞ս, բարեկամ իմ։ Դու ահա ապրիր մեզ հետ և մեզ նման ինքդ էլ կտեսնես, որ այդպես լավ է, քան կիթառն առած տոնավաճառից տոնավաճառ շրջելը։

— Աստված գիտի, ինչե՞ր եք դուք ասում, քեռի, կիթառն առած...

— Դե, կիթառ չէ, բայց դրա նման մի բան։ Թեպետ, չէ որ առաջինը դու ինձ վիրավորեցիր, հիմար անվանեցիր, իսկ ես, ծերուկս, առավել ևս կարող եմ ճշմարտությունը քեզ ասել։

— Լավ, թող ճշմարտություն լինի, չխոսենք այդ մասին։ Ասացեք խնդրեմ, տատիկից հետո ժառանգություն մնացե՞լ է։

— Ինչպե՞ս չի մնացել։ Միայն թե օրինական ժառանգը ներկա էր գտնվում։

— Այսինքն դուք... Ավելի լավ։ Տատիկն այստեղ, Գոլովլյովոյո՞ւմ է թաղված։

— Ոչ, իր ծխում, Պոգորելկիի մոտ։ Ինքը ցանկացավ։

— Ուրեմն ես գնամ։ Կարելի՞ է ձեզանից ձի վարձել, քեռի։

— Ինչո՞ւ վարձել, սեփական ձիեր կան։ Օտար հո չես։

Ազգականուհի ես... ազգականուհի ես գալիս ինձ,— հոգացողություն արտահայտեց Պորֆիրի Վլադիմիրիչը, «ազգակցաբար» ժպտալով։— Կիբիտկա... զույգ ձի,— փառք աստծո, դատարկ տան մեջ չեմ ապրում։ Ես էլ չգա՞մ արդյոք քեզ հետ։ Ե՛վ գերեզմանը կայցելեինք, և՛ Պոգորելկի կգնայինք։ Եվ այն կտեսնեինք, և այն կնայեինք, և կխոսեինք, ու կմտածեինք ինչն ու ինչպես.... Լավ կալվածք է ձեր կալվածքը, օգտակար տեղեր կան այնտեղ...

— Ոչ, ես արդեն մենակ կգնամ... Դուք ինչո՞ւ գաք։ Ի միջի այլոց, Պետենկան նո՞ւյնպես մեռել է։

— Մեռավ, բարեկամս, Պետենկան էլ մեռավ։ Եվ ափսոսում եմ ես նրան մի կողմից, նույնիսկ արտասվելու չափ մեղք է, բայց մյուս կողմից՝ ինքն է հանցավոր։ Նա միշտ էլ հորից չէր պատկառում,— ահա աստված էլ դրա համար պատժեց։ Իսկ թե որ աստված իր իմաստությամբ մի բան արել է, ապա ես և դուք փոխել չենք կարող այն։

— Հասկանալի բան է, չենք փոխի։ Միայն ես ահա ինչ եմ մտածում՝ այդ ինչպե՞ս է, քեռի, որ դուք չեք սարսափում ապրելուց...

— Իսկ ինչո՞ւ պիտի սարսափեմ։ Տեսնում ես որչափ աստվածային շնորհներ ունեմ իմ չորս կողմը։— Իուդուշկան ձեռները տարածեց, սրբապատկերները ցույց տալով։— Եվ այստեղ շնորհ, և առանձնասենյակում շնորհ, իսկ տապանակում իսկական դրախտ է արդեն։ Ահա ինչքան պաշտպաններ ունեմ ես։

— Այնուամենայնիվ... Միշտ դուք մենակ եք... սարսափելի՛ է։

— Իսկ երբ սարսափելի է լինում, ծունկ եմ չոքում, աղոթում եմ — և ամեն ինչ կարծես ձեռքով սրբեցին։ Եվ ինչի՞ց պետք է վախենամ։ Ցերեկը լույս է, իսկ գիշերն ամեն տեղ, բոլոր սենյակներում կանթեղներ են վառվում... Երբ մթնում է, փողոցից կարծես պարահանդես լինի։ Իսկ ինչպիսի՞ պարահանդես։ Հովանավորներ ու սրբեր — ահա և իմ ամբողջ պարահանդեսը։

— Իսկ գիտե՞ք, որ Պետենկան մահից առաջ նամակ էր գրել մեզ։

— Ինչ կա, որպես ազգական... Դրա համար էլ շնորհակալ պետք է լինել, որ ազգակցական զգացմունքները չէր կորցրել։

— Այո, գրել էր։ Դատից հետո, երբ վճիռ էր կայացվել։ Գրել էր, որ երեք հազար էր տարվել և դուք չէիք տվել նրան։ Չէ՞ որ դուք հարուստ եք, քեռի։

— Ուրիշի գրպանի փողը, բարեկամս, հաշվելը հեշտ է։ Երբեմն մեզ թվում է, որ մարդը ոսկի լեռներ ունի, բայց որ նայում ես ու ծանոթանում, ունեցածը ձեթի ու մոմի հազիվ է բավականացնում, այն էլ ոչ թե իրենն է, այլ աստծունը։

— Դե ուրեմն մենք ձեզանից հարուստ ենք։ Մենք ինքներս էլ տվեցինք, մեր կավալերներին էլ հարկադրեցինք ստորագրել — վեց հարյուր ռուբլի հավաքեցինք և ուղարկեցինք նրան։

— Այդ ի՞նչ «կավալերներ» են։

— Ա՜խ, քեռի, չէ՞ որ մենք... դերասանուհիներ ենք։ Դուք ինքներդ հիմա առաջարկեցիք ինձ «քավել»։

— Չեմ սիրում, երբ դու այդպես ես խոսում։

— Ի՞նչ արած, սիրում եք թե չեք սիրում, բայց ինչ եղել է, այլևս չես փոխի։ Չէ՞ որ, ձեր կարծիքով, դա էլ աստծու բանն է։

— Սրբապղծություն մի արա գոնե... Ամեն ինչ կարող ես ասել, բայց սրբապղծություն... Թույլ չե՛մ տա։ Փողը ո՞ւր ուղարկեցիք։

— Չեմ հիշում։ Ինչ-որ փոքրիկ քաղաք... Նա ինքն էր նշանակել։

— Չգիտեմ։ Եթե փող է եղել, նրա մահից հետո ես պիտի ստացած լինեի։ Հո բոլորը ծախսած չէր լինի։ Չգիտեմ, ես ոչինչ չեմ ստացել։ Վերակացուներն ու պահակներն են երևի օգտվել։

— Դե մենք չենք էլ պահանջում, դա ի միջի այլոց, խոսքի վրա ասացի։ Բայց և այնպես, քեռի, սոսկալի է, երբ երեք հազարի համար մարդը մեռնում է։

— Բանն այն է, որ երեք հազարի համար չի։ Այդ մեզ է այդպես թվում, որ երեք հազարի համար է, այդ պատճա-

ռով էլ շարունակ կրկնում ենք՝ երեք հազա՞ր, երեք հազա՞ր։ Այլ աստված...

Իուդուշկան արդեն բոլորովին ոգևորվեց, ուզեց բոլոր մանրամասնություններով բացատրել, ինչպես աստված... նախախնամությունը... անտեսանելի ճանապարհով... և այլն... Բայց Աննինկան առանց քաշվելու հորանջեց ու ասաց.

— Ա՜խ, քեռի, ի՞նչ ձանձրալի է ձեզ մոտ։

Այս անգամ Պորֆիրի Վլադիմիրիչը լուրջ կերպով վիրավորվեց ու լռեց։ Երկար քայլում էին նրանք սեղանատանը կողք-կողքի. Աննինկան հորանջում էր, Պորֆիրի Վլադիմիրիչը բոլոր անկյուններում խաչակնքում էր։ Վերջապես զեկուցեցին, որ կառքը պատրաստ է, ու սկսվեց ճանապարհ գցելու սովորական ազգակցական կոմեդիան։ Գոլովլյովը հագավ մուշտակը, նախամուտք դուրս եկավ, համբուրվեց Աննինկայի հետ, բղավեց մարդկանց վրա՝ «Ոտները, ոտները լավ փաթաթեցեք», կամ «Մեղրահատի՞կը, մեղրահատի՞կը վերցրի՞ք։ Ա՜խ, չմոռանաք», ընդսմին խաչակնքելով օդը։

Այցելեց Աննինկան տատիկի գերեզմանին, Վոպլինյան տերտերին խնդրեց հոգեհանգիստ կատարել, և երբ տիրացուները տրտում ծոր տվեցին՝ «Հավե՞րժ հիշատակ», լաց եղավ։ Տեսարանը, որի մեջ կատարվում էր արարողությունը, տխուր էր։ Եկեղեցին, որի բակում թաղել էին Արինա Պետրովնային, պատկանում էր աղքատ եկեղեցիների թվին. ծեփը տեղ-տեղ թափվել էր, մերկացնելով պատերի աղյուսը. զանգը թույլ և խուլ էր հնչում. քահանայի շուրջառը հնամաշ էր։ Խոր ձյունը ծածկել էր գերեզմանատունը, այնպես որ հարկ եղավ թիերով ճանապարհ բացել մինչև գերեզմանը. գերեզմանաքար դեռևս չկար, այլ հասարակ սպիտակ խաչ էր տընկված, որի վրա նույնիսկ ոչինչ գրված չէր։ Գերեզմանատունը մեկուսացած էր, հեռու բոլոր գյուղերից. եկեղեցուց փոքրինչ հեռու գտնվում էին քահանայի և տիրացուների սևացած խրճիթները, իսկ չորս բոլորքը ամեն կողմ փռված էր որբացած ձնապատ դաշտավայրը, ուր տեղ-տեղ ցցված ջախեր էին երևում։ Մարտ ամսի սաստիկ քամին էր փչում գերեզմանատան վրա, անընդհատ ծածանելով տերտերի շուրջառը ու մի կողմ էր քշում տիրացուների երգասացությունը։

— Եվ ո՞վ կարող էր մտածել, տիրուհի, որ ամենահամեստ այս խաչի տակ, մեր աղքատիկ եկեղեցու գերեզմանատանը իր համար հանգիստ է գտել այս գավառի մի ժամանակ ամենահարուստ կալվածատիրուհին,— ասաց քահանան մաղթանքը վերջացնելուց հետո։

Լսելով այդ խոսքերը, Աննինկան նորից լաց եղավ։ Նա վերհիշեց՝ ուր սեղանն էր ուտելիքներով — դագաղն է այնտեղ[50], և արցունքները հոսում էին անկանգ։ Հետո նա գնաց քահանայի խրճիթը, թեյ խմեց, խոսեց տերտերակնոջ հետ, կրկին հիշեց՝ և գունատ մահն է նայում բոլորին, և նորից երկար ու անկանգ արտասվեց։

Օրիորդի գալու մասին Պոգորելկի իմաց չէին տվել, ուստի այնտեղ նույնիսկ սենյակ չէին տաքացրել։ Աննինկան, առանց մուշտակը հանելու, անցավ բոլոր սենյակներով ու բոպեաչափ կանգ առավ տատի ննջարանում և սրբապատկերանոցում միայն։ Տատի սենյակում գտնվում էր նրա անկողինը, որի վրա այդպես էլ ընկած մնացել էր ճարպոտած վերմակների կույտն ու մի քանի բարձ՝ առանց երեսների։ Գրասեղանի վրա թղթի կտորտանք էր թափված, հատակը ավելած չէր, և փոշու հաստ շերտն էր ծածկել բոլոր առարկաները։ Աննինկան նստեց այն բազկաթոռին, որի վրա նստում էր տատիկն, ու մտքերի մեջ ընկավ։ Սկզբում հայտնվեցին անցյալի հիշողություններն, ապա փոխարինեցին նրանց ներկայիս պատկերացումները։ Առաջինները գալիս էին պատառիկներով, անցողակի ու կանգ չէին առնում. երկրորդները նստում էին ամրապինդ։ Վաղո՞ւց է, ինչ նա ձգտում էր դուրս գալ այդտեղից, վաղո՞ւց է, որ Պոգորելկին զզվելի էր թվում,— և ահա այժմ հանկարծ նրա սիրտը լցվեց ցավագին մի ցանկությամբ՝ ապրել այդ զզվելի տեղում։ Խաղաղ է այստեղ, հարմարությունից զուրկ է, անհրապույր է, բայց խաղաղ է, այնպես խաղաղ է, ասես չորս բոլորքն ամեն ինչ մեռել է։ Շատ օդ կա և ընդարձակություն. ահա նա, դաշտը — ինչպե՞ս վազ կտար։ Աննպատակ, առանց ետ նայելու, միայն որպեսզի ազատ շնչի, որպեսզի կուրծքը հևա։ Իսկ այնտեղ, այն կիսաթափառական միջավայրում, որտեղից նա նոր է միայն դուրս պրծել և ուր կրկին պետք է վերադառնա,—

Ի՞նչ է սպասում իրեն, և ի՞նչ է դուրս բերել նա այնտեղից։ Հիշողություններ գարշահոտությամբ ներծծված հյուրանոցների, ընդհանուր սեղանատնից ու բիլյարդանոցից հնչող հավիտենական աղմուկի, չսանրված ու անլվա հավաքարարների մասին, փորձերի մասին՝ բեմում թագավորող մութընշաղի մեջ, ներկած քաթանե կուլիսների մեջ, որոնց ձեռք տալը նողկալի է, միջանցուկ քամու, խոնավության մեջ... Ուրիշ ոչի՛նչ։ Իսկ հետո՝ սպաներ, փաստաբաններ, ցինիկ խոսքեր, դատարկ շշեր, գինով թրջված սփռոցներ, ծխի ամպեր և աղմո՛ւկ, աղմո՛ւկ, աղմո՛ւկ։ Եվ ինչե՞ր էին ասում նրանք իրեն, ինչպիսի ցինիզմով էին նրանք ձեռք տալիս իրեն... Առանձնապես այն բեղավորը, հարբեցողությունից խռպոտած ձայնով, բորբոքված աչքերով, որից հավիտենապես ախորի հոտ է փչում... ա՜խ, ինչե՞ր էր ասում նա։ Աննինկան այդ հիշողությունից նույնիսկ ցնցվեց և աչքերը փակեց։ Հետո սակայն սթափվեց, հառաչեց ու անցավ սրբապատկերների սենյակը։ Տապանակի վրա արդեն քիչ սրբապատկերներ էին մնացել, միայն նրանք, որոնք անտարակույս պատկանում էին նրա մորը, իսկ մնացածը՝ տատիկինը, հանված էին, և Իուդուշկան դրանք, որպես ժառանգ, տարել էր Գոլովլյովո։ Դրա հետևանքով դատարկ տեղերը նայում էին կարծես փորված աչքերի պես։ Կանթեղներ էլ չկային,— բոլորը Իուդուշկան վերցրել էր. միայն մի դեղնավուն մոմի կտոր էր որբացած մնացել մոռացված՝ թիթեղյա փոքրիկ աշտանակի վրա։

— Նրանք տապանակն էլ ուզում էին վերցնել, շարունակ հարցուփորձ էին անում՝ ճի՞շտ է, որ դա օրիորդի բաժինքն է,— տեղեկացրեց Աֆիմյուշկան։

— Ի՞նչ կա որ, թող տաներ։ Իսկ տատիկը, Աֆիմյուշկա, մեռնելուց առաջ շա՞տ տանջվեց։

— Այնքան էլ չէ, մի օրից մի քիչ ավել պառկեց։ Այնպես, կարծես ինքն իրեն հալվեց։ Կարգին հիվանդ էլ չէր։ Ոչինչ համարյա չէր խոսում, միայն ձեր ու քույրիկի մասին երկու անգամ հիշեց։

— Սրբապատկերները, նշանակում է, Պորֆիրի Վլադիմի՞րիչը տարավ։

— Նա տարավ։ Ասում է, մամենկայի սեփական սրբապատկերներն են։ Տարանտասն էլ տարավ, երկու կով էլ։ Բոլորը, ուրեմն, տիրուհու թղթերից էր իմացել, որ ձերը չէին, այլ տատիկինն էին։ Մի ձի էլ ուզում էր քաշել-տանել, բայց Ֆեդուլիչը չտվեց՝ մերն է, ասում է, ձին պոգորելկովյան հին ձիերից է, ուստի թողեց, վախեցավ։

Շրջեց Աննինկան և բակում, եղավ օժանդակ շենքերում, կալատեղում, անասունների բակում։ Այնտեղ, անասնաղբի ճահճուտում կանգնած էր «շրջանառու դրամագլուխը»՝ քսան հատ նիհար կով և երեք ձի։ Հրամայեց հաց բերել, ըստ որում ասելով՝ ես կվճարեմ — և ամեն կովի մի-մի կտոր տվեց։ Հետո անասնապահուհին օրիորդին խնդրեց խրճիթ անցնել, ուր սեղանին մի ման կաթ էր դրած, իսկ անկյունում վառարանի մոտ, տախտակի ցածրիկ միջնորմի ետևը նորածին հորթն էր տեղավորվել։ Աննինկան կաթ խմեց, վազեց հորթուկի մոտ, ուրախությունից համբուրեց նրա դունչը, բայց անմիջապես զզվանքով մաքրեց շրթունքները, ասելով, որ հորթի դունչը զզվելի է, ամբողջովին փսլնքոտ է։ Վերջապես դրամապանակից երեք հատ դեղնավուն թղթադրամ հանեց, բաժանեց ծեր ծառաներին ու պատրաստվեց մեկնելու։

— Ի՞նչ եք անելու դուք,— նստելով կիբիտկան, հարցրեց նա Ֆեդուլիչին, որը, որպես գյուղապետ, հետևում էր օրիորդին, ձեռները կրծքին ծալած։

— Ինչ պիտի անենք, կապրենք,— պարզ պատասխանեց Ֆեդուլիչը։

Աննինկան կրկին տխրեց. նրան թվաց, որ Ֆեդուլիչի խոսքերը կարծես հեգնանք լինեին։ Նա կանգնեց, կանգնեց տեղում, հառաչեց ու ասաց.

— Դե, մնաք բարև։

— Իսկ մենք կարծում էինք, որ դուք կվերադառնաք մեզ մոտ, մեզ հետ կապրեք,— ասաց Ֆեդուլիչը։

— Չէ, ինչ եք ասում... Միևնույն է... Ապրեցեք։

Ու կրկին արցունքները թափվեցին նրա աչքերից, ու բոլորն էլ նույնպես լաց եղան։ Մի տեսակ տարօրինակ բան էր ստացվում. թվում էր, որ նա ոչինչ չի ափսոսում, նույնիսկ հիշելու բան չունի, բայց լաց է լինում։ Նրանք նմանապես.

սովորական հարց ու պատասխանից դուրս արտաքո կարգի ոչ մի բան չի ասվել, բայց բոլորի համար էլ ծանր էր, «ափսոսում էին»։ Նստեցրին նրան կիբիտկան, փաթաթեցին ու բոլորը միանգամից խորը շունչ առան։

— Բարի ճանապա՞րհ,— հնչեց նրա ետևից, երբ սայլակը շարժվեց։

Գերեզմանատան կողքից անցնելիս, նա կրկին հրամայեց կանգնել ու մենակ, առանց եկեղեցու սպասավորների, մաքրած ճանապարհով գնաց գերեզմանի մոտ։ Արդեն բավական մթնել էր և եկեղեցականների տներում լույսեր էին վառվել։ Նա կանգնել էր, մի ձեռքով գերեզմանի խաչը բռնած, բայց չէր արտասվում, այլ միայն օրորվում էր կանգնած տեղը։ Ոչինչ առանձին բան չէր մտածում, ոչ մի որոշակի միտք ձևակերպել չէր կարողանում, բայց թախիծ էր իջել վրան, անսահման տրտմություն։ Եվ նրա վիշտը ոչ թե տատիկի համար էր, այլ իր համար, իր մասին։ Անգիտակից երերալով ու խոնարհված, նա քառորդ ժամի չափ կանգնած մնաց այդտեղ և հանկարծ նրան պատկերացավ Լյուբինկան, որը, թերևս, նույն այդ րոպեին սոխակի պես գեղգեղում է որևէ Կրեմենչուգում, ուրախ խմբի շրջանում...

Ah! ah! que j'aime, que j'aime։
Que j'aime les mili-mili-mili-taires։

Նա քիչ մնաց վայր ընկներ։ Վազեվազ հասավ սայլակին, նստեց ու հրամայեց հնարավորին չափ շուտ Գոլովլյովո հասնել։

***

Աննինկան քեռու մոտ վերադարձավ տխուր, խաղաղված։ Թեպետ դա չխանգարեց նրան փոք-ինչ քաղցած զգալ իրեն (քեռին շտապելուց նույնիսկ տապակած հավ չդրեց նրա հետ) և շատ ուրախ էր, որ թեյի սեղանն արդեն բացված էր։ Հասկանալի է, Պորֆիրի Վլադիմիրիչը չհապաղեց զրույցի անցնել։

— Դե ինչ, հղա՞ր։

— Եղա։

— Գերեզմանի վրա է՞լ աղոթեցիր։ Հոգեհանգիստ կատարել տվեցի՞ր։

— Այո, հոգեհանգիստ էլ։

— Քահանան, նշանակում է, տա՞նն էր։

— Իհարկե տանն էր։ Էլ ո՞վ պիտի մաղթանք կատարեր։

— Այո... այո... Երկու տիրացուներն է՞լ կային։ «Հավերժ հիշատակ» երգեցի՞ն։

— Երգեցին։

— Այո։ Հավերժ հիշատա՞կ, հավերժ հիշատակ հանգուցյալին։ Հոգատար պառավ էր, հարազատ էր։

Իուդուշկան վեր կացավ աթոռից, դարձավ սրբապատկերների կողմն ու աղոթեց։

— Իսկ Պոգորելկիում ինչպե՞ս գտար։ Լա՞վ էր։

— Իսկապես, չգիտեմ։ Կարծեմ ամեն բան իր տեղն է։

— Բանն էլ այն է, որ «կարծեմ»։ Մենք միշտ «կարծում ենք», բայց որ մտիկ ես տալիս ու նայում ես, տեսնում ես այստեղ ծուռտիկ է, այնտեղ փտած է... Այդպես էլ ահա մենք ուրիշի կարողության մասին ենք հասկացողություն կազմում՝ «կարծե՛մ» ու «կարծե՛մ»։ Սակայն լավ կալվածք ունեք դուք. լավ հարմարություններ է ստեղծել ձեզ համար հանգուցյալ մամենկան, իր փողերից էլ քիչ չի ծախսել... Բայց դե որբերին օգնելը մեղք չէ։

Լսելով այդ գովասանքները, Աննինկան չկարողացավ զրպել իրեն, չծաղրելու սրտացավ քեռուն։

— Իսկ դուք ինչո՞ւ եք Պոգորելկիից երկու կով բերել, քեռի,— հարցրեց նա։

— Կո՞վ։ Ի՞նչ կով։ Ջերնավկա՞ն ու Պրիվեդենկա՞ն։ Բայց նրանք մամենկայինն են եղել, բարեկամս։

— Իսկ դուք՝ նրա օրինական ժառա՞նգը։ Դե ինչ, տիրեցեք։ Ուզում եք, կարգադրեմ ձեզ մի հորթ էլ բերեն։

— Ա՛յ-ա՛յ-այ, դու արդեն բորբոքվում ես, բայց դու քան ասա։ Ի՞նչ ես կարծում, ո՞ւմ կովերն էին։

— Ես ի՞նչ իմանամ, Պոգորելկիումն էին գտնվում։

— Իսկ ես գիտեմ, ես ապացույցներ ունեմ, որ կովերը

մամենկայինն են եղել։ Նրա սեփական ձեռքով գրած ցուցակը գտա, այնտեղ ասված է՝ «իմն են»։

— Դե թողնենք։ Չարժի այդ մասին խոսել։

— Այ Պոգորելկիում մի ձի կա, մազը թափված, այ նրա մասին ճիշտը ասել չեմ կարող։ Կարծեմ մամենկայի ձին է, բայց ճիշտը չգիտեմ։ Իսկ ինչ որ չգիտեմ, այդ մասին խոսել էլ չեմ կարող։

— Թողնենք այդ, քեռի։

— Ոչ, ինչո՞ւ թողնենք։ Ես, եղբայր, ուղղասեր մարդ եմ, ես ամեն գործ սիրում եմ մաքուր լինի։ Սակայն ինչո՞ւ չխոսենք։ Ամեն մարդ էլ ափսոսում է իր ունեցածը — ես էլ եմ ափսոսում, դու էլ ես ափսոսում — ուրեմն խոսենք։ Իսկ եթե որ խոսելու ենք, ապա կասեմ քեզ ուղղակի՝ ուրիշինը ինձ հարկավոր չի, բայց և իմը ես չեմ տա։ Որովհետև, թեպետև դուք օտար չեք ինձ, բայց և այնպես...

— Սրբապատկերները նույնպես վերցրել եք,— կրկին չը-կարողացավ համբերել Աննինկան։

— Սրբապատկերներն էլ եմ վերցրել, ամեն ինչ էլ վերցրել եմ, ինչ որ ինձ է պատկանում, որպես ժառանգի։

— Տապանակն ասես ծակծկված լինի ամբողջովին...

— Ի՛նչ արած, նրա առաջ էլ կարող ես աղոթել։ Աստծուն ոչ թե տապանակը, այլ քո աղոթքն է հարկավոր։ Եթե դու անկեղծ ես դիմում, ապա վատ սրբապատկերների առաջ էլ քո աղոթքը տեղ կհասնի։ Իսկ թե որ դու մենակ՝ բըլը-բըլը-բըլը և աչքդ չորս կողմը կգցես ու կնիկսեն[51] կանես, լավ սրբապատկերներն էլ քեզ չեն օգնի։

Այնուամենայնիվ Իուդուշկան վեր կացավ ու գոհություն հայտնեց աստծուն այն բանի համար, որ ինքը «լավ» սրբապատկերներ ունի։

— Իսկ եթե հին տապանակը դուրս չի գալիս, պատվիրիր նորը պատրաստեն։ Կամ ուրիշ սրբապատկերներ դիր հանածների տեղը։ Առաջվանները հանգուցյալ մամենկան ինքն էր ձեռք բերել ու սարքավորել, իսկ նորերը արդեն դու ինքդ ձեռք բեր։

Պորֆիրի Վլադիմիրիչը նույնիսկ քրքջաց՝ այնքան խելացի ու պարզ թվաց նրան այդ դատողությունը։

— Ասացեք խնդրեմ, ես հիմա ի՞նչ պիտի անեմ,—հարցրեց Աննինկան։

— Սպասիր դեռ։ Առաջ հանգստացիր, քնիր քո քեֆին։ Կխոսենք ու կդատենք, և՛ այսպես կնայենք, և՛ այնպես կը-հաշվենք, գուցե երկուսով մի բան մտածենք։

— Մենք չափահա՞ս ենք, կարծեմ։

— Այո, չափահաս եք։ Կարող եք ինքներդ և՛ ձեր գործողությունները, և՛ ձեր կալվածքը կառավարել։

— Փա՞ռք աստծո, գոնե այդ։

— Պատիվ ունենք շնորհավորել։

Պորֆիրի Վլադիմիրիչը վեր կացավ և ուզեց համբուրվել։

— Ա՜խ, քեռի, ինչ տարօրինակ մարդ եք։ Շարունակ համբուրվում եք։

— Ինչո՞ւ չհամբուրվել, դու ինձ օտար չես, ազգականուհի ես։ Ես, եղբայր իմ, ազգակցաբար եմ համբուրում։ Ես հարազատներիս համար միշտ պատրաստ եմ։ Ուզում է երրորդ պորտը լինի, ուզում է չորրորդը — ես միշտ...

— Դուք ավելի լավ է ինձ ասեք, ես ի՞նչ անեմ։ Քաղա՞ք պետք է գնալ, ի՞նչ է։ Դիմո՞ւմ ներկայացնել։

— Եվ քաղաք կգնանք, և դիմում կներկայացնենք — ամեն ինչ իր ժամանակին կանենք։ Իսկ նախ՝ հանգստացիր, ապրիր։ Փա՞ռք աստծուն, ոչ թե տրակտիրում, այլ հարազատ քեռուդ մոտ ես ապրում։ Ե՛վ ուտել, և՛ թեյ խմել, և՛ մուրաբայով բերանը քաղցրացնել,— ամեն ինչ առատ կա։ Իսկ թե կերակուրը դուր չի գա, ուրիշը ուզիր։ Ուզիր, պահանջիր։ Կաղամբապուրը դուր չի գա, արգանակ հրամայիր տան։ Կոտլետ, բադ, խոզի միս... Եվպրակսեյուշկային հուպ տուր... Ի դեպ, Եվպրակսեյուշկա, պարծեցա, որ խոզի միս ունենք, բայց չգիտեմ կա՞, թե չկա։

Եվպրակսեյուշկան, որ այդ ժամանակ տաք թեյով պը-նակն էր պահել բերանի առաջ, քիթը շարժեց օդում դրա-կան։

— Ա՛յ, տեսնում ես, խոզի միս էլ ունենք։ Նշանակում է, ինչ որ ուզում ես, այն էլ խնդրիր։ Այդպե՛ս։

Իուդուշկան կրկին մոտ ձգվեց Աննինկային և ազգակցաբար խփեց նրա ծնկանը, ըստ որում, իհարկե պատահաբար,

ձեռքը ուշացրեց ետ քաշել, այնպես որ որբուհին բնազդաբար ետ քաշվեց։

— Բայց չէ՛ որ ես պիտի մեկնեմ։

— Հենց ես էլ այդ մասին եմ ասում։ Կխոսենք, կզրուցենք, իսկ հետո էլ կմեկնենք։ Աստծուն փառք տալով ու աղոթելով, այլ ոչ թե հենց այնպես՝ թը՞ռռ ու ֆը՞ռռ։ Կշտապես, մարդկանց վրդ կծիծաղեցնես։ Շտապում են հրդեհի դեպքում, իսկ մեզանում, փառք աստծո, ոչինչ չի այրվում։ Այ Լյուբինկան, նա պետք է տոնավաճառ շտապի, իսկ դու ի՞նչ ունես շտապելու։ Հա, ես քեզ էլի ինչ էի հարցնելու՝ դու Պոգորելկի՞ում ես ապրելու։

— Ոչ, ես Պոգորելկիում ապրելու կարիք չունեմ։

— Ես էլ ուզում էի ասել։ Ապրիր ինձ մոտ։ Կապրենք մեզ համար — և այն էլ ինչպե՞ս կապրենք։

Այդ ասելով Իուդուշկան այնպիսի պագշոտ աչքերով էր նայում Աննինկային, որ նա իրեն անհարմար զգաց։

— Ոչ, քեռի, ես ձեզ մոտ չեմ ապրի։ Տխուր է։

— Ա՜խ, հիմարի՜կ, հիմարի՜կ։ Եվ ի՞նչ ես դու ընկել այդ տխրության ետևից։ Տխուր է, հա տխուր, իսկ թե ինչո՞ւ է տխուր, երևի ինքդ էլ չես ասի։ Ով, բարեկամս, գործ ունի և ով կարողանում է իրեն կառավարել, նա երբեք տխրությունը չի իմանում ինչ բան է։ Ահա ես, օրինակ, չեմ էլ տեսնում, ինչպես է ժամանակը թռչում։ Լի օրերին տնտեսությամբ եմ զբաղվում. այնտեղ ես նայում, այստեղ ես մտիկ տալիս, մի ուրիշ տեղ ես գնում, խոսում ես, դատողություն ես անում — տեսար օրը անցավ։ Իսկ տոն օրերին՝ եկեղեցի։ Այդպես էլ դու։ Ապրիր մեզ հետ, քեզ համար էլ գործ կըգտնվի, իսկ թե գործ չկա, Եվպրակսեյուշկայի հետ դուրաչկի խաղա կամ պատվիրիր սահնակը լծեն և քեզ համար զբոսնի՞ր ու զբոսնի՞ր։ Իսկ երբ ամառը գա, անտառը սունկի կգնանք։ Կանաչի վրա թեյ կխմենք։

— Ոչ, քեռի, զուր եք առաջարկում։

— Իսկապես, ապրիր։

— Ոչ։ Բայց ահա ինչ. ճանապարհից հոգնել եմ, կարո՞ղ եմ պառկել քնելու։

— Քնել էլ կարելի է։ Ես քեզ համար մահճակալ էլ եմ

պատրաստել և ամեն բան, ինչ հարկավոր է։ Քնել ես ուզում, քնիր, Քրիստոսը քեզ հետ։ Բայց և այնպես դու այդ մասին մտածիր. ինչքա՞ն լավ կլիներ, եթե դու մնայիր մեզ հետ, Գոլովլյովոյում։

***

Աննինկան գիշերն անհանգիստ անցկացրեց։ Ջղային ցընորքը, որ տիրել էր նրան դեռ Պոգորելկիում, շարունակվում էր։ Լինում են րոպեներ, երբ մարդը, որը մինչ այդ լոկ միայն գոյություն ուներ, հանկարծ սկսում է հասկանալ, որ նա ոչ միայն հիրավի ապրում է, այլ որ նրա կյանքում ինչ-որ վերք կա։ Որտեղի՞ց է հայտնվել այդ վերքը, ինչպես և երբ է իրոք գոյացել, մեծ մասամբ նա իրեն բացատրել չի կարողանում և հաճախ վերքի ծագումը վերագրում է ոչ այն պատճառներին, որոնցով իսկապես պայմանավորված է այն։ Բայց նրա համար փաստի գնահատությունը նույնիսկ հարկավոր չէ, բավական է և այն, որ վերքը գոյություն ունի։ Այդպիսի հանկարծակի հայտնության ազդեցությունը, լինելով միանման տանջալից բոլորի համար, հետագա գործնական հետևանքներում ձևափոխվում է, նայած անհատական խառնվածքին։ Ոմանց այդ գիտակցությունը նորոգում է, ոգևորում է վճռականությամբ՝ նոր կյանք սկսելու նոր հիմունքներով. մյուսների վրա ազդում է լոկ որպես անցողակի ցավ, որը ապագայում ոչ մի բեկում չի առաջացնի դեպի լավը. բայց ներկայումս առավել ցավագին է արտահայտվում, քան այն դեպքում, երբ ընդունված որոշումների հետևանքով հանգստացած խղճին ապագայում այնուամենայնիվ թեկուզ որոշ լույսի նշույլներ են երևում։

Աննինկան չէր պատկանում այն անձնավորությունների թվին, որոնք իրենց վերքերը գիտակցելու մեջ կենսական վերանորոգման առիթ են գտնում, բայց և այնպես, որպես ոչ հիմար աղջիկ, նա հիանալի հասկանում էր, որ աշխատանքային հացի մասին ունեցած անորոշ երազանքների՝ որոնք ելակետ հանդիսացան նրա համար, որպեսզի ընդմիշտ թողնի Պոգորելկին՝ և գավառական դերասանուհու վիճակի մեջ՝

որը բաժին ընկավ իրեն՝ ամբողջ անդունդ գոյություն ունի։ Աշխատանքային խաղաղ կյանքի փոխարեն նա գտավ բուռն գոյություն՝ լի անվերջ կերուխումով, անպատկառ ցինիզմով և անկարգ, ոչ մի բանի չհանգեցնող ունայնությամբ։ Զրկանքների և արտաքին խիստ հանգամանքների փոխարեն, որոնց հետ նա մի ժամանակ հաշտվում էր, նրան դիմավորեց համեմատական լիություն ու փարթամություն, որոնց մասին նա, սակայն, այժմ չէր կարող հիշել առանց կարմրելու։ Եվ այդ մեկը մյուսով փոխարինվելը նրա համար մի տեսակ աննկատելի պատահեց. գնում էր նա մի ինչ-որ լավ տեղ, բայց մի դռան փոխարեն մի այլ դուռ բաց արեց։ Նրա ցանկություններն, իրոք, շատ համեստ էին։ Քանի՞-քանի՞ անգամ պատահում էր Պոգորելկիում, վերնահարկում նստած, երազանքներում իրեն տեսնում էր լուրջ աղջիկ, աշխատավոր, որը տենչում է կրթություն ստանալ, հաստատակամությամբ կրում է կարիքն ու զրկանքներն ի սեր բարիքի գաղափարի (ճշմարիտ է, որ «բարիք» բառը հազիվ թե որևէ որոշակի նշանակություն ուներ). բայց հազիվ ինքնագործունեության լայն ասպարեզ դուրս եկավ, որ այնպիսի գործնական կյանք ստեղծվեց, որն անմիջապես ջարդուփշուր արեց նրա ողջ երազանքը։ Լուրջ աշխատանքն իրեն-իրեն չի գալիս, այլ ձեռք է բերվում համառ որոնումով և նախապատրաստությամբ, որը թեպետև ոչ լիովին, սակայն թեկուզ հայտնի չափով օժանդակում է որոնումին։ Բայց այդ պահանջներին չէին համապատասխանում Աննինկայի ոչ խառնըվածքը, ոչ դաստիարակությունը։ Նրա խառնվածքն ամենևին աչքի չէր ընկնում կրքոտությամբ, այլ միայն թեթևակի գըրգռվում էր. իսկ այն նյութը, որը տվել էր նրան դաստիարակությունը և որով պատրաստվում էր աշխատավորական կյանք մտնել, այն աստիճան սնանկ էր, որ չէր կարող որևէ լուրջ մասնագիտության հիմք ծառայել։ Այդ դաստիարակությունն, այսպես ասած, ինստիտուտային-օպերետային էր, որի մեջ գերակշռությունն ստանում էր համարյա թե օպերետկան։ Այդտեղ քառասային անկարգությամբ միախառնվում էին և՛ խնդիրները թռչող սագերի մասին, և՛ շալով պարելու ձևերը, և՛ Պյոտր Պիկարդսկու[53] քարոզը, և՛ Ջքնաղ Հեղինեի արարքները, և՛ Ֆելիցային[53] նվիրված օդան, և՛ երախտագիտությունը դեպի ազնվական օրիորդների ինստիտուտի պետերն ու հովանավորները։ Այս անկարգ խառնախորտիկից (որից դուրս նա լիակատար հիմունքով կարող էր իրեն tabula rasa[54] անվանել) դժվար էր նույնիսկ գլուխ հանել, ուր մնաց թե ելակետ գտնել։ Այսպիսի նախապատրաստությունը ոչ թե սեր էր արթնացնում դեպի աշխատանքը, այլ սեր դեպի աշխարհիկ հասարակությունը, ցանկություն լինել շրջապատված, լսել կավալերների սիրալիրությունները և ընդհանրապես խորասուզվել այսպես կոչված աշխարհիկ կյանքի աղմուկի, փայլի ու փոթորկի մեջ։

Եթե նա ակնդետ հետևած լիներ իրեն, ապա նույնիսկ Պոգորելկիում, այն բոպեներին, երբ նրա մեջ դեռևս նոր էին միայն ծնունդ առնում աշխատավորական կյանքի ծրագրերը, երբ նա նրանցում եգիպտական գերությունից ազատագրվելու նման բան էր տեսնում,— նույնիսկ այն ժամանակ նա կարող էր որսալ, որ երազանքում ինքը ոչ այնքան աշխատում է, որչափ շրջապատված է համախոհ մարդկանց հասարակությամբ և իր ժամանակը խելացի զրույցներով է կարճում։ Իհարկե, այդ երազանքների մարդիկ և՛ խելացի էին, և՛ նրանց զրույցներն ազնիվ էին ու լուրջ, սակայն և այնպես առաջնակարգ տեղը գրավում էր կյանքի տոնական, հանդիսավոր կողմը։ Աղքատությունը մաքրասեր էր, զրկանքները շռայլության բացակայությունն էին միայն վկայում։ Ուստի երբ իրականում աշխատանքով հաց վաստակելու երազանքները լուծվեցին նրանով, որ նրան առաջարկեցին օպերետային դերասանուհի դառնալ գավառական թատրոններից մեկում, ապա, չնայած որ դա հակապատկեր էր իր երազանքներին, նա երկար չտատանվեց։ Շտապով թարմացրեց ինստիտուտում ստացած տեղեկություններն Հեղինեի դեպի Մենելայոսն ունեցած հարաբերությունների մասին, լրացրեց այն որոշ կենսագրական մանրամասնություններով Տավրիդայի[55] հոյակապ իշխանի կյանքից, և վճռեց, որ դա միանգամայն բավական է, որպեսզի նահանգական քաղաքներում և տոնավաճառներում վերարտադրի «Ջքնաղ Հեղինեն» և «Հատվածներ՝ Հերոլշտեյնյան դքսուհուց»։ Ըստ որում,

խղճի մաքրության համար, նա վերհիշեց, որ մի ուսանող, որի հետ ծանոթացել էր Մոսկվայում, ամեն քայլափոխին բացականչում էր՝ սուրբ գեղարվեստ,— և այդ խոսքերը սիրով դարձրեց իր կյանքի նշանաբանը, քանի որ դրանք վայելուչ կերպով ազատ էին արձակում նրա ձեռներն ու մի տեսակ՝ թեկուզ արտաքին փայլ էին տալիս այն ճանապարհը դուրս գալուն, որին նա բնազդորեն ձգտում էր իր ողջ էությամբ։

Դերասանուհու կյանքը խառնաշփոթեց նրան։ Մեն-մենակ, առանց ղեկավար պատրաստականության, առանց գիտակցված նպատակի, աղմուկի, փայլի ու գովասանքների ծարավի խառնվածքով միայն, նա շուտով տեսավ, որ պտտվում է ինչ-որ քաոսի մեջ, ուր մեկը մյուսին անկապորեն փոխարինող անթիվ-անհամար դեմքեր էին խառնված։ Դրանք բազմազան բնույթի և համոզմունքների դեմքեր էին, այնպես որ սրան կամ նրան մոտ լինելու դրդապատճառներն ամենևին չէին կարող միանման լինել։ Բայց և այնպես և՛ սա, և՛ նա, և՛ երրորդը հավասարապես կազմում էին նրա շրջանը, որից կարելի էր եզրակացնել, որ այդտեղ, իսկապես ասած, դրդապատճառների մասին խոսք անգամ չէր կարող լինել։ Պարզ է, նշանակում է, որ նրա կյանքը դարձել է իջևանի պես մի բան, որի դռները կարող է ծեծել ամեն ոք, ով իրեն ուրախ, երիտասարդ և որոշ նյութական միջոցներ ունեցող էր զգում։ Պարզ է, որ բանն այստեղ ամենևին այն չէր, որ իր սրտով հասարակություն ընտրի իր համար, այլ այն էր, որպեսզի հասարակության հետ լինի, միայն թե մենմիայնակ չտառապի։ Էապես «սուրբ արվեստը» նրան գցեց կեղտաջրի հորը, սակայն նրա գլուխն անմիջապես այնպես պտույտ եկավ, որ չկարողացավ զանազանել այդ տարբերությունը։ Ոչ հյուրանոցների սպասավորների անլվա ռեխերը, ոչ ճմրթված, լորձունքոտված դեկորները, ոչ հյուրանոցների և իջևանների աղմուկը, գարշահոտությունը և ժխորը, ոչ երկրպագուների ցինիկ վարմունքը — ոչինչ չսթափեցրեց նրան։ Նա նույնիսկ չէր նկատում, որ մշտապես տղամարդկանց հասարակության մեջ է միայն գտնվում և որ իր ու մյուս,

մշտական դիրք ունեցող կանանց մեջ ինչ-որ անհաղթահարելի անջրպետ էր պառկել...

Գոլովլյովո գալը մի բոպե սթափեցրեց նրան...

Առավոտվանից, համարյա գալու բոպեից իսկ ինչ-որ մի բան հուզում էր նրան։ Որպես տպավորվող աղջիկ, նա շատ շուտ էր ընկալում նոր տպավորությունները և նույնքան շուտ էլ հարմարվում էր ամեն մի դրության։ Ուստի Գոլովլյովո գալով, նա հանկարծ իրեն զգաց որպես «օրիորդ-տիրուհի»։ Հիշեց, որ ինքը ինչ-որ սեփական բաներ ունի՝ իր տունը, իր գերեզմանները, և ուզեց նա նորից տեսնել նախկին պարագաները, կրկին շնչել այն օդը, որից նա նորերս փախել էր առանց ետ նայելու։ Բայց այդ տպավորությունն անհապաղ պիտի փշրվեր, բախվելով Գոլովլյովոյում հանդիպած իրականությանը։ Այդ կողմից նրան կարելի էր նմանեցնել այն մարդուն, որը դեմքի սիրալիր արտահայտությամբ մտնում է վաղուց չտեսած մարդկանց հասարակության մեջ և հանկարծ նկատում է, որ բոլորը մի տեսակ խորհրդավորությամբ են վերաբերում իր սիրալիրությանը։ Իուդուշկայի ծուռ հայացքը՝ ուղղված իր կրծքին՝ անմիջապես հիշեցրեց նրան, որ իր ետևում արդեն այնքան յուրատեսակ գույք է կուտակված, որից ազատվելն այնքան էլ դյուրին չէ։ Եվ երբ պոգորելկյան սպասավորների միամիտ հարցերից, վոպլինյան քահանայի ու նրա տերտերակնոջ խրատական հառաչանքներից և Իուդուշկայի նոր քարոզներից հետո նա մենակ մնաց, երբ ազատ պահին ստուգման ենթարկեց օրվա տպավորություններն, ապա իր համար միանգամայն անտարակուսելի դարձավ, որ նախկին «օրիորդ-տիրուհին» մեռել է ընդմիշտ, որ այսուհետև նա լոկ խղճուկ գավառական թատրոնի դերասանուհի է և որ ռուս դերասանուհու դրությունը շատ հեռու չի գտնվում հասարակաց կնոջ դրությունից։

Մինչև այժմ նա ապրում էր կարծես երազում։ Մերկանում էր «Ջքնաղ Հեղինեում», թեթևակի հարբած էր հանդես գալիս «Պերիկոլայում», ամեն տեսակ անամոթ բաներ էր երգում «Հատվածներ՝ Հերոլշտեյնյան դքսուհուց» և նույնիսկ ափսոսում էր, որ թատերական բեմում ընդունված չէ «la chose» և «l'amour» ներկայացնել, երևակայելով, թե ինչպես

գայթակղիչ կցնցեր գոտկատեղն ու ինչպես լավ պատույտ կտար պոչը։ Բայց նրա գլխով երբեք չէր անցնում խորամուխ լինել իր արարքին։ Նա լոկ այն մասին էր հոգում, որպեսզի ամեն ինչ ստացվի «հաճելի», «շքեղ» և միաժամանակ դուրգա քաղաքում տեղակայված գնդի սպաներին։ Բայց թե ինչ բան է դա և ինչ տեսակի զգացմունքներ են արթնացնում սպաների մեջ նրա ցնցումները,— այդ մասին նա իրեն հարց չէր տալիս։ Սպաները քաղաքում վճռական հասարակություն էին հանդիսանում, և հայտնի էր իրեն, որ իր հաջողությունը նրանցից էր կախված։ Նրանք ներխուժում էին կուլիսների ետևը, առանց քաշվելու ծեծում էին նրա առանձնարանի դուռը, երբ նա դեռ կիսահագնված էր լինում, փաղաքշական անուններով էին կանչում նրան, և նա այդ բոլորին նայում էր որպես հասարակ ձևականության, որպես արհեստի անխուսափելի հանգամանքների վրա և հարց էր տալիս իրեն միայն այն մասին՝ արդյոք «հաճելի» կամ «անհաճելի» է տանում իր դերն այդ պարագաներում։ Բայց ոչ իր մարմինը և ոչ իր հոգին առայժմ նա դեռ չէր գիտակցում որպես հասարակական։ Եվ ահա այժմ, երբ նա իրեն մի բոպե կրկին «օրիորդ-տիրուհի» զգաց, հանկարծ մի տեսակ անտանելի գարշանք զգաց։ Կարծես հանեցին նրա վրայից բոլոր հագուստները մինչև վերջին շապիկը և մերկ դուրս բերեցին ժողովրդի առաջ, կարծես բոլոր այդ, գինու և ախորի բույրերով թունավորված զզվելի շնչառությունները միանգամից պարուրեցին նրան. կարծես նա իր մարմնի վրա զգաց քրտնած ձեռների ու թքոտ շրթունքների հպումը և պղտոր, անասնական գիշատիչ աչքերի հայացքները, որոնք անիմաստ սահում են նրա մերկացած մարմնի կորագծով, կարծես պատասխան պահանջելով նրանից, թե ի՞նչ բան է «la chose»։

Ո՞ւր գնալ։ Ո՞ւր թողնել այդ գույքը, որը ճնշում էր նրա ուսերը։ Այդ հարցը անհուսալի վեճվեճում էր նրա գլխում, բայց միայն վեճվեճում էր, պատասխան չգտնելով և նույնիսկ չորոնելով։ Չէ որ դա ևս իր տեսակի երազ էր՝ և՛ նախկին կյանքն էր երազ, և՛ ներկայիս արթնացումը նույնպես երազ է։ Վշտացավ աղջիկը, զգացվեց — ուրիշ ոչինչ։ Կանցնի։ Պատահում են լավ, քաղցր բոպեներ, պատահում են և

դառը բոպեներ — սովորական երևույթ է դա։ Բայց թե՛ դրանք և թե՛ ուրիշները լոկ միայն սահում են, բայց ո՛չ երբեք փոխում մեկ անգամ գոյացած կյանքի ընթացքը։ Վերջինիս այլ ուղղություն տալու համար մեծ ջանք է անհրաժեշտ, ոչ միայն բարոյական, այլև ֆիզիկական քաջություն է հարկավոր։ Դա համարյա նույնն է, ինչ որ անձնասպանությունն է։ Թեպետ անձնասպանությունից առաջ մարդն անիծում է իր կյանքը, թեպետ նա հաստատապես գիտե, որ մահն իր համար ազատություն է, բայց մահվան գործիքն այնուամենայնիվ դողում է նրա ձեռքում, դանակը սահում է կոկորդի վրայով, ատրճանակը փոխանակ ուղիղ ճակատին խփելու, ցած է խփում, այլանդակում է։ Այդպես էլ այստեղ, սակայն է՛լ առավել դժվար։ Այստեղ ևս պետք է սպանել իր նախկին կյանքը, բայց սպանելով այն, մնալ կենդանի։ Այն «ոչինչը», որին իսկական անձնասպանության դեպքում, հասնում են հրահանի ակնթարթային իջեցումով, այստեղ այս առանձնահատուկ անձնասպանության դեպքում, որը նորոգում» է կոչվում, հասնում են մի շարք խիստ, համարյա ճգնավորական ջանքերով։ Եվ հասնում են այնուամենայնիվ «ոչնչի», որովհետև չէ որ չի կարելի նորմալ համարել մի գոյություն, որի բովանդակությունը կազմում է միմիայն իր վրա ուժ գործադրելը, զրկանքներն ու ժուժկալությունը։ Ում կամքը քնքշացած է, ում արդեն թեթև գոյության սովորության որդն է կրծել, նրա գլուխը պտույտ կգա նման «նորոգման» հեռանկարից միայն։ Եվ բնազդաբար, շուռ տալով գլուխն ու փակելով աչքերը, ամաչելով ու փոքրոգության մեջ մեղադրելով իրեն, նա, այնուամենայնիվ, տրորված ճամփով կընթանա։

Ա՜խ, մեծ բան է աշխատանքային կյանքը։ Բայց նրա հետ հաշտ կարող են լինել միայն ուժեղ մարդիկ և նրանք, որոնց դատապարտել է դրան ինչ-որ անիծյալ բնածին մեղք։ Այդպիսիներին միայն նա չի վախեցնում։ Առաջիններին՝ որովհետև գիտակցելով աշխատանքի իմաստը և միջոցները, նրանք կարողանում են նրանում հաճույք գտնել. երկրորդներին՝ որովհետև նրանց համար աշխատանքը նախ և առաջ բնական պարտականություն է, ապա և սովորություն։

Աննինկայի մտքով անգամ չէր անցնում հաստատվել Պոգորելկիում կամ Գոլովլյովոյում, և այդ կողմից նրան մեծ օգնություն ցույց տվեց այն գործնական հողը, որի վրա դրեցին նրան հանգամանքները և որը նա բնազդորեն չէր թողնում։ Նրան արձակուրդ էր տված, և նա վաղօրոք արդեն դասավորել էր ամբողջ ժամանակը և նշանակել էր Գոլովլյովոյից մեկնելու օրը։ Թույլ բնավորության տեր մարդկանց համար այն արտաքին սահմանները, որոնք բոլորապատում են կյանքը, նշանակալից չափով թեթևացնում են նրա բեռը։ Դժվարին հանգամանքներում թույլ մարդիկ բնազդաբար սեղմվում են այդ սահմաններին և նրանցում արդարացում են գտնում իրենց համար։ Այդպես իսկ վարվեց և Աննինկան. նա որոշեց հնարավորին չափ շուտ մեկնել Գոլովլյովոյից, և եթե քեռին կհետապնդի, ապա պաշտպանել իրեն այդ հետապնդումներից այն անհրաժեշտությամբ, որ նշանակված ժամանակ պետք է ներկայանալ։

Մյուս օրն առավոտյան արթնանալով, նա շրջեց գոլովլյովյան հսկայական տան բոլոր սենյակները։ Ամեն տեղ դաս արկություն էր, անհրապույր, խորթացման, մահացության հոտ էր փչում։ Այդ տանը մշտապես բնակվելու միտքը վախեցնում էր նրան։ «Երբե՛ք,— կրկնում էր նա ինչ-որ անգիտակցական հուզմունքով։— Երբե՛ք»։

***

Պորֆիրի Վլադիմիրիչը մյուս օրը ևս դիմավորեց նրան սովորական բարյացակամությամբ, որից ոչ մի կերպ չէր կարելի որոշել, արդյոք նա ուզում է փաղաքշել մարդուն, թե նրա արյունը ծծել։

— Դե ինչ, շտապող, լավ քնեցի՞ր։ Հիմա ո՞ւր ես շտապելու,— կատակեց նա։

— Իսկապես, քեռի, շտապում եմ. չէ որ ես արձակուրդի մեջ եմ, պետք է ժամանակին այնտեղ լինեմ։

— Նորի՞ց խեղկատակություն անելու։ Թույլ չե՛մ տա։

— Թույլ կտաք, թե թույլ չեք տա, ինքս կգնամ։

Իուդուշկան տրտում օրորեց գլուխը։

— Իսկ հանգուցյալ տատիկն ի՞նչ կասի,— հարցրեց նա սիրալիր կշտամբանքի եղանակով։

— Տատիկը կենդանության ժամանակ էլ գիտեր։ Բայց այդ ի՞նչ արտահայտություններ են, քեռի։ Երեկ դուք ինձ տոնավաճառներն էիք ուղարկում կիթառը ձեռքիս, իսկ այսօր խեղկատակության մասին եք խոսում։ Լսո՞ւմ եք, իսկ ես չեմ ուզում, որ դուք այդպես ասեք։

— Էհե՜, երևում է, ճշմարտությունը կծում է։ Իսկ ես ահա այդպես սիրում եմ ճշմարտությունը։ Իմ կարծիքով, եթե ճշմարտությունը...

— Ո՛չ, ո՛չ, չե՛մ ուզում, ես չեմ ուզում։ Ինձ ոչ ձեր ճշմարտությունը, ոչ էլ ոչճշմարտությունը հարկավոր չի։ Լսո՞ւմ եք, ես չեմ ուզում, որ դուք այդպես արտահայտվեք։

— Դե-դե՜, բորբոքվե՞ց։ Գնանք, ճպուռ, գնանք թեյ խմենք, ինքնաեռը, երևի, վաղուց է սեղանի վրա թը՜շ-թը՜շ անում։

Պորֆիրի Վլադիմիրիչը կատակով ու ծիծաղով ուզում էր հարթել «խեղկատակություն անել» խոսքի թողած տպավորությունը և, ի նշան հաշտության, ուզեց նույնիսկ գրկել ազգականուհու մեջքը, բայց այդ ամենն Աննինկային այն աստիճան հիմար, նույնիսկ նողկալի երևաց, որ նա զզվանքով խուսափեց իրեն սպասող փաղաքշանքից։

— Ես ձեզ լուրջ կրկնում եմ, քեռի, որ պետք է շտապեմ,— ասաց նա։

— Այ գնանք հիմա նախ թեյ խմենք, իսկ հետո կխոսենք։

— Բայց ինչո՞ւ անպայման թեյից հետո։ Ինչո՞ւ չի կարելի մինչև թեյ խմելը խոսել։

— Որովհետև՝ որովհետև։ Որովհետև ամեն բան պետք է հերթով անել։ Առաջ մեկը, հետո՝ մյուսը. առաջ թեյ կխըմենք, այս ու այն բանից կզրուցենք, իսկ հետո էլ գործի մասին կխոսենք։ Ամեն բան ժամանակին կանենք։

Այդպիսի անհաղթահարելի դատարկախոսության առաջ մնում էր միայն հպատակվել։ Սկսեցին թեյ խմել, ըստ որում Իուդուշկան ամենանենգամիտ կերպով ձգձգում էր ժամանակը, կում էր անում բաժակից, խաշկանքում էր, խփում էր

ուզդրերին, զրուցաբանում էր հանգուցյալ մամենկայի մասին և այլն։

— Հիմա արդեն խոսենք,— ասաց նա վերջապես։— Դու երկա՞ր ժամանակ ես հյուր մնալու ինձ մոտ։

— Մի շաբաթից ավելի չեմ կարող։ Դեռ Մոսկվա էլ պիտի գնամ։

— Մի շաբաթը, բարեկամս, մեծ բան է. մի շաբաթում կարելի է և շատ բան անել, և քիչ բան անել, նայած ինչպես կձեռնարկվի։

— Մենք, քեռի, լավ է շատը անենք։

— Այդ մասին էլ ես հենց ասում եմ։ Եվ շատ կարելի է անել, և քիչ։ Երբեմն շատ ես ուզում անել, բայց քիչ է դուրս գալիս, իսկ երբեմն, թվում է քիչ է արվում, բայց որ նայում ես, աստծու օգնությամբ, աննկատելի կերպով ամբողջ գործը վերջացրել ես։ Այ դու շտապում ես Մոսկվա պետք է, իբրև, գնաս, բայց թե ինչու, թե որ հարցնելու լինենք, ինքդ էլ կարգին չես կարող ասել։ Իսկ իմ կարծիքով, Մոսկվայի փոխարեն ավելի լավ է այդ ժամանակը գործի վրա դնել։

— Մոսկվա գնալն անհրաժեշտ է, որովհետև ես ուզում եմ փորձել, չենք կարող արդյոք մենք այնտեղի բեմերն ընդունվել։ Իսկ ինչ վերաբերում է գործին, չէ որ ինքներդ եք ասում, որ մի շաբաթում շատ բան կարելի է անել։

— Նայած թե ինչպես կձեռնարկես, բարեկամս։ Թե որ սկսես ինչպես հարկն է, ամեն բան լավ ու հարթ կգնա, բայց որ սկսես ոչ այնպես, ինչպես հարկավոր է, դե, ուրեմն գործն էլ կանգնած կմնա, կքնի։

— Դե ուրեմն դուք ինձ ղեկավարեցեք, քեռի։

— Բանն էլ այդ է, է՞։ Հենց որ հարկավոր է՝ «դուք ինձ ղեկավարեցեք, քեռի», բայց երբ հարկավոր չէ՝ տխուր է քեռու մոտ, հնարավորին չափ շուտ մեկնեմ։ Հը, ճիշտ չէ՞։

— Դուք ինձ միայն ասացեք, ես ի՞նչ պիտի անեմ։

— Սպասի՛ր, համբերի՛ր։ Այդպես ահա, ես ասում եմ՝ երբ քեռին հարկավոր է, նա և՛ սիրելի է, և՛ աղավնյակ է, և՛ հոգյակ է, իսկ երբ հարկավոր չի՝ իսկույն պոչ ցույց կըտան նրան։ Բայց այնպես չի, որ հարցնեն նրան թե՝ դուք,

սիրելի քեռի, ինչպե՞ս եք կարծում, կարո՞ղ եմ ես Մոսկվա գնալ։

— Ի՞նչ տարօրինակն եք դուք, քեռի։ Իմ Մոսկվա գնալը չէ՞ որ անհրաժեշտ է, իսկ դուք հանկարծ կասեք՝ չի կարելի։

— Իսկ եթե կասեմ՝ չի կարելի, ուրեմն նստիր։ Օտար մարդ չի ասում, քեռիդ է ասում, կարելի է և քեռուն լսել։ Ա՜խ, բարեկամս, բարեկամս, դեռ լավ է, որ դուք քեռի ունեք — կա մեկը, որն, այնուամենայնիվ, կկարեկցի ձեզ և ետ կկանգնեցնի։ Բայց կան այնպիսիները, որոնք ոչ ոք չունեն։ Ո՛չ կարեկցող, ո՛չ ետ կանգնեցնող — մեն-մենակ են մեծանում։ Եվ դե, նրանց հետ կյանքում... ամեն բան պատահում է, բարեկամս։

Աննինկան ուզեց հակաճառել, սակայն հասկացավ, որ այդ կնշանակի միայն կրակի վրա յուղ լցնել ու լռեց։ Նա նստել ու անհուսալի նայում էր ոգևորված Պորֆիրի Վլադիմիրիչին։

— Այ ես վաղուց ուզում եմ քեզ ասել,— շարունակեց մինչ այդ Իուդուշկան,— դուր չի գալիս ինձ, շատ դուր չի գալիս, որ դուք այդ... տոնավաճառներն եք գնում։ Թեպետև քեզ դուր չի գալիս, որ ես կիթառի մասին ասում եմ, բայց և այնպես...

— Բայց բավական չէ ասել՝ դուր չի գալիս, հարկավոր է ելք ցույց տալ։

— Ապրիր ինձ մոտ — ահա՛ և ելքը։

— Ո՛չ... այդ... երբե՛ք։

— Ինչո՞ւ այդպես։

— Որովհետև ես այստեղ անելիք չունեմ։ Ի՞նչ անեմ ես այստեղ։ Առավոտն արթնանամ, թեյ խմեմ, թեյի ժամանակ մտածեմ՝ ահա շուտով նախաճաշ կմատուցեն։ Նախաճաշի ժամանակ՝ շուտով ճաշի սեղան բաց կանեն։ Ճաշի ժամանակ՝ շո՞ւտ թեյ կտան նորից։ Իսկ հետո՝ ընթրել ու քնել... Մեռնել կարելի է այստեղ։

— Բոլորն էլ, բարեկամս, այդպես են անում։ Առաջ թեյ են խմում, հետո, ով ազոր է նախաճաշելու, նախաճաշում է, իսկ ես, ահա, նախաճաշելու ազորություն չունեմ —

և չեմ նախաճաշում. հետո ճաշում են, հետո երեկոյան թեյն են խմում և վերջապես պառկում են քնելու։ Ի՞նչ է որ, կարծեմ դրանում ծիծաղելի կամ դատապարտելի բան չկա։ Այ, եթե որ ես...

— Դատապարտելի ոչինչ չկա, բայց ինձ համար չէ։

— Այ, եթե որ ես որևէ մեկին վիրավորեի, կամ դատապարտեի, կամ որևէ մեկի մասին վատ արտահայտվեի, այդ դեպքում այո՛, կարելի էր և իրեն դատապարտել դրա համար։ Թե չէ՝ թեյ խմել, նախաճաշել, ճաշել... Տերը քեզ հետ, սակայն դու էլ, որչափ էլ որ ժիր ես, բայց առանց սնունդի ապրել չես կարող։

— Դե հա, այդ բոլորը լավ է, բայց միայն ինձ համար չէ։

— Իսկ դու ամեն ինչ քո արշինով մի չափիր, մեծերի մասին էլ մտածիր։ «Ինձ համար չէ», «ինձ համար չէ»,— մի՞թե այդպես կարելի է ասել։ Իսկ դու ասա՝ «աստծու կամքով է» կամ «աստծու կամքով չէ»,— այ դա խելացի կլինի, այ դա այդպես կլինի։ Թե որ մեզանում՝ Գոլովլյովոյում աստծու կամքին հակառակ ենք վարվում, նրա կամքով չենք շարժվում, մեղանչում ենք կամ տրտնջում ենք, կամ նախանձում ենք, կամ ուրիշ վատ բաներ ենք անում, այդ դեպքում ահա մենք իրոք որ հանցավոր ենք և արժանի ենք, որ մեզ պատժեն։ Միայն թե այդ դեպքում էլ պետք է դեռ ապացուցել, թե ինչն ենք մենք աստծու կամքին հակառակ անում։ Թե չէ համեցեք՝ «ինձ համար չէ»։ Կասեմ թեկուզ հենց իմ մասին. քի՞չ բան կա, որ ինձ դուր չի գալիս։ Ինձ դուր չի գալիս ահա, որ դու ինձ հետ այդպես ես խոսում և իմ սրտանց տված աղուհացը վատաբանում ես, սակայն ես նստել, լռում եմ։ Արի, ասում եմ, ես նրան մեղմ ձևով զգացնել տամ, կարող է պատահել, որ նա ինքն իրեն էլ խելքի գա։ Գուցե մինչ ես կատակով ու քմծիծաղով պատասխանում եմ քո արարքներին, քո պահապան-հրեշտակը քեզ ճշմարիտ ճանապարհի կառաջնորդի։ Չէ՞ որ ոչ թե ինձ համար, այլ քեզ համար է վիրավորական։ Ա՜-ա՜-խ, բարեկամս, որչա՞փ լավ չէ դա։ Եվ գոնե եթե ես քեզ որևէ վատ բան ասած լինեի, կամ վատ վարված լինեի քեզ հետ, կամ որևէ վիրավորանք տեսած լինեիր դու ինձանից, այն ժամանակ, դե, աստվա՞ծ քեզ հետ։ Թեպետև աստված պատվիրում է մեծերից նույնիսկ խրատ ընդունել,— բայց եթե ես քեզ վիրավորել եմ, դե արդեն, տերը քեզ հետ, բարկացիր ինձ վրա։ Թե չէ նստել եմ ես ինձ համար խաղաղ ու հանգիստ, նստել, ոչինչ չեմ ասում, միայն միտք եմ անում, ինչպես անեմ, որ բոլորի համար լավ ու հարմար լինի, որպեսզի բոլորն ուրախանան ու մխիթարվեն, իսկ դու,— ա՜յ, ա՜յ, ա՜յ, ահա թե դու իմ փայփայանքներին ինչով ես պատասխանում։ Իսկ դու միանգամից ամեն ինչ մի ասա, բարեկամս, այլ սկզբում մտածիր, աղոթք արա աստծուն ու խնդրիր նրան խելք սովորեցնի։ Եվ ահա եթե որ...

Պորֆիրի Վլադիմիրիչը երկար ճոռոմաբանում էր, առանց դադար տալու։ Խոսքերն անվերջ ձգվում էին մեկը մյուսի ետևից, ինչպես թանձր լորձունքը։ Աննինկան բնազդական սարսափով նայում էր նրան ու մտածում էր, այդ ինչպե՞ս է, որ նա չի խեղդվում։ Սակայն քեռին այդպես էլ չասաց, թե ինչ պետք է անի ինքը Արինա Պետրովնայի մահից հետո։ Ե՛վ ճաշի ժամանակ նա փորձեց դնել այդ հարցը, և՛ երեկոյան թեյի ժամանակ, սակայն, ամեն անգամ Իուդուշկան ինչ-որ կողմնակի ճոռոմաբանությունների ետևից էր ընկնում, այնպես որ Աննինկան զզջում էր, որ հարցը բարձրացրեց ու միայն մի բանի մասին էր միտք անում՝ ե՞րբ է վերջանալու այդ բոլորը։

Ճաշից հետո, երբ Պորֆիրի Վլադիմիրիչը քնելու գնաց, Աննինկան մեն-մենակ մնաց Եվպրակսեյուշկայի հետ և հանկարծ ցանկություն զգաց խոսքի մեջ մտնել քեռու տընտեսուհու հետ։ Նա ուզեց իմանալ, թե ինչո՞ւ Եվպրակսեյուշկան սարսափ չի զգում Գոլովլյովոյում և ի՛նչն է ուժ տալիս նրան դիմանալու դատարկամիտ խոսքերի հեղեղին, որն առավոտից մինչև երեկո ժայթքում է քեռու շրթունքներից։

— Տխրո՞ւմ եք դուք Գոլովլյովոյում, Եվպրակսեյուշկա։

— Ինչո՞ւ պետք է տխրենք։ Մենք պարոններ չենք։

— Այնուամենայնիվ... դուք միշտ մենակ եք... չունեք դուք ոչ զվարճություններ, ոչ բավականություններ... ոչինչ։

— Ի՞նչ բավականություններ են հարկավոր մեզ։ Տխուր

է լինում՝ լուսամուտից դուրս ենք նայում։ Ես հորս մոտ ապրածս ժամանակ էլ շատ ուրախություն չեմ տեսել։

— Բայց և այնպես տանը, ես կարծում եմ, ձեզ համար լավ էր... Ընկերուհիներ ունեիք, միմյանց մոտ հյուր էիք գնում, խաղում էիք...

— Է՜հ։

— Իսկ քեռու հետ... Տխուր է խոսում ինչ-որ և մի տեսակ երկար... Մի՞շտ այդպես է։

— Միշտ, ամբողջ օրը այդպես խոսում է։

— Եվ դուք չե՞ք ձանձրանում։

— Ինձ ի՞նչ։ Ես չեմ էլ լսում։

— Դե բոլորովին չլսել չի կարելի։ Նա կարող է նկատել այդ, վիրավորվել։

— Իսկ որտեղի՞ց գիտի նա։ Ես նայում եմ իրեն։ Նա խոսում է, իսկ ես նայում եմ և այդ ժամանակ իմ մտքերի ետևից եմ։

— Իսկ ինչի՞ մասին եք մտածում։

— Ամեն բանի մասին էլ մտածում եմ։ Վարունգ պետք է աղը դնել՝ վարունգի մասին եմ մտածում, պետք է քաղաք ուղարկել թեյ առնելու՝ այդ մասին եմ մտածում։ Տրնական գործերի համար ինչ որ պահանջվում է — բոլորի մասին մտածում եմ։

— Նշանակում է, դուք թեպետև միասին եք ապրում, բայց փաստորեն մենա՞կ եք։

— Այո, համարյա մենակ եմ։ Մեկ-մեկ պատահում է երեկոները մտքին գալիս է դուրաչկի խաղալ — դե, խաղում ենք։ Այդ դեպքում էլ, խաղի կեսին դադարում է, ծալում է խաղաթղթերն ու սկսում է խոսել։ Իսկ ես մտիկ եմ տալիս։ Հանգուցյալ Արինա Պետրովնայի ժամանակ ավելի ուրախ էր։ Նրա ժամանակ ավելորդ բաներ խոսելուց վախենում էր, մեկ էլ տեսար պառավը կանգնեցնում էր։ Իսկ հիմի ոչ մի բանի նման չի, էնպիսի ազատություն է ստացել։

— Այ, տեսնո՞ւմ եք։ Չէ՛ որ դա, Եվպրակսեյուշկա, սարսափելի՞ է։ Սարսափելի է, երբ մարդը խոսում է և չես իմանում, թե ինչու է խոսում, ինչ է խոսում և երբևիցե վերջացնելո՞ւ է արդյոք։ Չէ՞ որ սարսափելի է։ Անհարմար է, չէ՞։

Եվպրակսեյուշկան նայեց նրան, կարծես առաջին անգամ ինչ-որ զարմանալի միտք լուսավորեց իրեն։

— Մենակ դուք չեք,— ասաց նա,— մեզանում շատերը դրա համար նրան չեն սիրում։

— Ահա՜ ինչ։

— Այո։ Թեկուզ լաքեյները — ոչ մեկը երկար ժամանակ մնալ չի կարողանում. համարյա ամեն ամիս փոխում ենք։ Կառավարիչները նույնպես։ Եվ բոլորն այդ պատճառով։

— Ձանձրացնո՞ւմ է։

— Կեղեքում է։ Հարբեցողները մնում են, որովհետև հարբեցողը չի լսում։ Ուզում ես փող փչիր, նրա գլխին ոնց որ պուտուկ հագցրած լինի։ Բայց փորձանքն այն է, որ նա հարբեցողներին չի սիրում։

— Ա՜խ, Եվպրակսեյուշկա, Եվպրակսեյուշկա, նա դեռ համոզում է ինձ, որ ապրեմ Գոլովլյովոյում։

— Իսկապես, օրիորդ, ապրեիք մեզ հետ։ Գուցե նա ձեր ներկայությամբ ամաչի։

— Է՜, չէ, շնորհակալ եմ։ Ես համբերություն չեմ ունենա նրա աչքերին նայելու։

— Ի՞նչ ասել կուզի, դուք պարոններ եք, դուք ձեր կամքը ունեք։ Սակայն կամքը՝ կամք, բայց նույնպես ուրիշի զուռնայով պար գալու հարկ է լինում։

— Եվ այն էլ ինչպե՞ս հաճախ։

— Ես էլ այդպես եմ մտածում։ Ահա թե ես ուրիշ ինչ էի ուզում հարցնել ձեզ՝ դերասանուհի լինելը լա՞վ բան է։

— Սեփական հաց է — այդ էլ լավ է արդեն։

— Իսկ ճի՞շտ է, Պորֆիրի Վլադիմիրիչն ինձ ասաց, իբր թե դերասանուհիներին բոլոր տղամարդիկ կարող են գրկել։

Աննինկան մի բոպե բռնկվեց։

— Պորֆիրի Վլադիմիրիչը չի հասկանում,— պատասխանեց նա ջղային,— դրա համար էլ հիմարություն է ասում։ Նա նույնիսկ չի կարողանում զանազանել, որ բեմում խաղ է տեղի ունենում և ոչ թե իրականություն է։

— Բայց և այնպե՞ս։ Այ հենց ինքը, Պորֆիրի Վլադիմիրիչը... Հենց որ ձեզ տեսավ, նույնիսկ շրթունքները բացվեցին... «Ազգականուհի» հա «ազգականուհի»— ոնց որ խել-

քը գլխին մարդը, բայց անամոթ աչքերը շարունակ վազվզում են։

— Եվպրակսեյուշկա, ինչո՞ւ եք հիմար բաներ ասում։

— Ե՞ս։ Ինձ ինչ որ։ Ապրեք,— ինքներդ կտեսնեք։ Իսկ ինձ ի՞նչ։ Թե որ գործից հեռացնեն, ես կրկին հայրիկիս մոտ կգնամ։ Իսկապես էլ տխուր է այստեղ, այդ դուք ճիշտ ասացիք։

— Որ ես կարող եմ այստեղ մնալ, այդ դուք զուր եք նույնիսկ ենթադրում։ Իսկ որ Գոլովլյովոյում տխուր է,— այդ այդպես է։ Եվ որչափ երկար ապրեք դուք այստեղ, այնքան տխուր կլինի։

Եվպրակսեյուշկան փոքր-ինչ մտածմունքների մեջ ընկավ, հետո հորանջեց ու ասաց.

— Ես երբ հորս մոտ էի ապրում, նիհար-նիհար էի. իսկ այժմ ահա ինչպիսին եմ, իսկական վառարան եմ դարձել։ Ջանձրույթը, նշանակում է, օգուտ է տալիս։

— Միևնույն է, երկար չեք դիմանա։ Այ, հիշեք իմ խոսքը, չեք դիմանա։

Դրանով խոսակցությունը վերջացավ։ Բարեբախտաբար Պորֆիրի Վլադիմիրիչը չլսեց այն, այլապես նա նոր և թանկագին նյութ կստանար, որն անշուշտ կթարմացներ նրա բարոյախոսական զրույցների անվերջ միօրինակությունը։

Ամբողջ երկու օր ևս տանջեց Պորֆիրի Վլադիմիրիչն Աննինկային։ Շարունակ ասում էր՝ սպասիր ու համբերիր, կամաց-կամաց ու հանդարտ-հանդարտ, փառք տալով և աստծուն աղոթելով։ Վերջապես հինգերորդ օրը պատրաստվեց քաղաք գնալ, թեպետ այդ ժամանակ էլ միջոց գտավ տանջելու ազգականուհուն։ Աննինկան մուշտակը հագած կանգնած էր միջանցքում, իսկ նա մի ամբողջ ժամ, կարծես դիտմամբ, չէր շտապում։ Հագնվում էր, լվացվում էր, ազդրերին էր խփում, խաչակնքում էր, քայլում էր, նստում, հրամաններ էր տալիս, ինչպես օրինակ՝ «այդպես, այդպես, եղբայր...» կամ՝ «այնպես որ դու արդեն... Նայիր, եղբայր, չլինի որ մի բան պատահի»։ Ընդհանրապես այնպես էր վարվում, կարծես Գոլովլյովոյից հեռանում էր ոչ թե մի քանի ժամով, այլ ընդմիշտ։ Ջարշարելով բոլորին՝ և՛ մարդկանց,

և՛ ձիերին, որ ժամուկես կանգնած էին մուտքի առաջ, նա վերջապես համոզվեց, որ իր կոկորդն էլ չորացել է դատարկաբանությունից ու վճռեց մեկնել։

Քաղաքում ամբողջ գործը վերջացավ, մինչ ձիերը վարսակ էին ուտում իջևանում։ Պորֆիրի Վլադիմիրիչը հաշիվ ներկայացրեց, որից պարզվեց, որ որբերի դրամագլուխն Արինա Պետրովնայի մահվան օրը կազմում էր քիչ պակաս քսան հազար ռուբլուց հինգտոկոսանոց արժեթղթերով։ Ապա խնամակալությունը հանելու դիմումը որբերի չափահասությունը հաստատող թղթերի հետ միասին ընդունվեց և անհապաղ կարգադրվեց վերացնել խնամակալությունը և կալվածքն ու դրամագլուխը որբերին հանձնել։ Նույն օրն իսկ երեկոյան Աննինկան ստորագրեց Պորֆիրի Վլադիմիրիչի պատրաստած բոլոր թղթերն ու ցուցակները և վերջապես ազատ շունչ առավ։

Մնացած օրերը Աննինկան մեծագույն հուզմունքի մեջ անցկացրեց։ Նա ուզում էր Գոլովլյովայից հեռանալ անհապաղ, իսկույն ևեթ, բայց քեռին նրա բոլոր ցանկություններին պատասխանում էր կատակներով, որոնք, չնայած բարեսիրտ ոճին, այնպիսի հիմար համառություն էին թաքցնում իրենց տակ, որպիսին ոչ մի մարդկային ուժ ընդունակ չէր խորտակել։

— Ինքդ ասացիր, որ մի շաբաթ կապրես, դե ուրեմն ապրիր,— ասում էր նա։— Ի՞նչ ունես որ, բնակարանի վարձ չես տալիս — առանց վարձի էլ խնդրում ենք համեցեք արեք։ Եվ թեյ խմել, և ուտել — բոլորը, ինչ որ ուզում եք, բոլորը կլինի։

— Ախր ինձ հարկավոր է, քեռի,— խնդրում էր Աննինկան։

— Դու շտապում ես, իսկ ես ձիեր չեմ տա,— կատակում էր Իուդուշկան։— Ձիեր չեք տա, և նստիր ինձ մոտ գերության մեջ։ Այ, շաբաթը որ անցավ, ոչ մի խոսք չեմ ասի։ Պատարագ կլսենք, կճաշենք, թեյ կխմենք, կխոսենք... Կուշտ կնայենք միմյանց ու — բարի՞ ճանապարհ։ Հա, ահա թե ինչ. չե՞ս ուզում մեկ էլ մեկնել Վոպլինո, գերեզմանին այցելության։ Հրաժեշտ տայիր տատիկին, գուցեև հանգուցյալը որևէ լավ խորհուրդ կտա։

— Թերևս,— համաձայնեց Աննինկան։

— Ուրեմն մենք այսպես կանենք. շորեքշաբթի օրը այստեղ վաղ պատարագ կլսենք ու ճանապարհի ճաշ կանենք, իսկ հետո իմ ձիերը քեզ Պոգորելկի կհասցնեն, իսկ այնտեղից մինչև Դվորիկի արդեն քո՝ Պոգորելկիի ձիերով կգնաս։ Ինքդ կալվածատիրուհի՛ ես, քո սեփական ձիերն ունես։

Հարկադրված էր հնազանդվել։ Գռեհկությունը հսկայական ուժ ունի. նա միշտ նոր մարդուն հանկարծակիի է բերում, և այն ժամանակ մինչ նա զարմանում է ու ծանոթանում է շրջապատին, գռեհկությունը արագորեն խճճում է նրան ու առնում է իր ճզմիչների մեջ։ Ամեն մարդու, հավանորեն, պատահել է կոյուղու կողքից անցնելիս ոչ միայն քիթը բռնել, այլև աշխատել չշնչել. ճիշտ այդպիսի ուժ պիտի գործադրի մարդ իր վրա, երբ դատարկախոսությամբ և գռեհկությամբ հագեցած բնազավառ է ընկնում։ Նա պետք է բթացնի իր մեջ տեսողությունը, լսողությունը, հոտառությունը, ճաշակը. պետք է հաղթահարի յուրաքանչյուր ըմբռնելու ընդունակություն, պետք է փայտանա։ Այն ժամանակ միայն գռեհկության գարշահոտությունները չեն խեղդի նրան։ Աննինկան հասկացավ այդ, թեպետև ուշ, համենայն դեպս նա որոշեց Գոլովլյովոյից ազատվելու հարցը իրերի բնական ընթացքին թողնել։ Իուդուշկան իր դատարկախոսության անպարտելիությամբ այն աստիճան հաղթահարեց նրան, որ նա նույնիսկ չէր համարձակվում խուսափել, երբ նա գրկում էր իրեն ու ազգակցաբար շոյում էր մեջքը, ասելով՝ ա՜յ, այժմ դու խելացի ես։ Նա ակամայից ամեն անգամ ցնցվում էր, երբ զգում էր, որ Իուդուշկայի ոսկրոտ ու թեթևակի դողացող ձեռքը սողում է իր մեջքով, բայց զրզվանքի հետագա արտահայտություններից նրան զսպում էր այն միտքը, թե՝ տե՜ր աստված, գոնե մի շաբաթից բաց թողնի իրեն։ Բարեբախտաբար, Իուդուշկան չմահավան մարդ չէր և թեպետ, գուցեև նկատում էր նրա անհամբեր շարժումները, սակայն լռում էր։ Ըստ երևույթին, նա սեռերի փոխադարձ հարաբերության հարցում այն թեորիային էր հետևում, որն արտահայտվում է հետևյալ առածով՝ կուզես սիրիր, կուզես չէ, միայն թե հաճախ մտիկ տուր։

Վերջապես հասավ անհամբեր սպասած մեկնման օրը։ Աննինկան վեր կացավ համարյա առավոտյան ժամը վեցին, բայց Իուդուշկան այնուամենայնիվ կանխեց նրան։ Նա արդեն կատարել էր սովորական աղոթքի ծիսակատարությունը և սպասելով եկեղեցու զանգի առաջին զողանջին, հողաթափերով ու խալաթով թափառում էր սենյակներում, ներս էր նայում, ականջ էր դնում և այլն։ Ըստ երևույթին, նա հուզված էր և Աննինկային հանդիպելիս մի տեսակ ծուռ հայացք էր գցում վրան։ Դրսում համարյա լույս էր, բայց վատ եղանակ էր։ Երկինքն ամբողջ ծածկված էր խիտ մութ ամպերով, որոնցից գարնանային եղյամ էր թափվում՝ ոչ այն է անձրև էր, ոչ այն է ձյուն. ավանի սևացած ճանապարհին ջրագուբեր էին երևում, որոնք գուշակում էին, որ դաշտում ձնհալքից գոյացած հորդ ջրեր են լինելու. ուժգին քամի էր փչում հարավից, որից սաստիկ ձնհալք էր սպասվում. ծառերը մերկանում էին ձներից և խառնիխուռն օրորում էին իրենց թաց մերկ կատարները. կալվածատիրական օժանդակ շենքերը սևին էին տալիս և կարծես լպրծուն էին դարձել։ Պորֆիրի Վլադիմիրիչն Աննինկային մոտեցրեց լուսամուտին և ձեռքով ցույց տվեց գարնանային վերածնության պատկերը։

— Գնա՞ս արդյոք, արժի՞,— հարցրեց նա։— Ձմնա՞ս, հը՞։

— Ա՜խ, ո՛չ, ո՛չ,— վախեցած բացականչեց Աննինկան։— Դա... Դա... կանցնի։

— Հազիվ թե։ Ժամը մեկին որ դուրս գաս, հազիվ յոթին Պոգորելկի հասնես։ Իսկ գիշերն այս ձնհալքին միթե հնարավոր է գնալ, միևնույն է, գիշերելու ես Պոգորելկիում։

— Ա՜խ, ոչ, ես գիշերն էլ, ես հենց իսկույն կգնամ... ես քաջ եմ, քեռի։ Եվ ի՞նչ կարիք կա սպասելու մինչև ժամը մեկը։ Քեռի, սիրելիս, թույլ տվեք ինձ հենց հիմա մեկնել։

— Իսկ տատիկն ի՞նչ կասի։ Կասի՝ ա՜յ, ինչպիսի թոռնիկ է։ Եկավ, թռչկոտաց և նույնիսկ չուզեց իմ օրհնությունը ստանալ։

Պորֆիրի Վլադիմիրիչը դադարեց ու լռեց։ Միառժամանակ նա ոտներն էր քսքստացնում նույն տեղը և մերթ նայում էր Աննինկային, մերթ ցած էր թողնում աչքերը։ Ըստ երևույթին նա և վճռում էր և չէր վճռում ինչ-որ մի բան ասել։

— Սպասիր, ես ինչ ցույց տամ քեզ,— վերջապես վրճռեց նա և, գրպանից նամակի մի ծալած թերթ հանելով, տվեց Աննինկային։— Հապա, կարդա։

Աննինկան կարդաց.

«Այսօր ես աղոթեցի ու խնդրեցի աստծուն, որ նա իմ Աննինկային թողնի ինձ։ Եվ աստված ինձ ասաց՝ գրկիր Աննինկայի լիքը իրանը ու սեղմիր քո սրտին»։

— Այդպե՞ս է,— հարցրեց նա, թեթևակի գունատվելով։

— Ցո՜ւ, քեռի, ինչ զզվա՜նք,— պատասխանեց Աննինկան, շփոթված նայելով նրան։

Պորֆիրի Վլադիմիրիչն է՛լ ավելի գունատվեց և, ատամների միջից արտասանելով՝ «Երևում է, մեզ հուսարներ են հարկավոր», խաչակնքեց ու հոդաթափերը քսքստացնելով, սենյակից դուրս գնաց։

Քառորդ ժամից նա, սակայն, վերադարձավ ասես ոչինչ պատահած չլիներ և արդեն սկսեց կատակել Աննինկայի հետ։

— Ուրեմն ինչպե՞ս,— ասաց նա,— այստեղից Վոպլինո՞ ես գնալու։ Ուզում ես պառավ տատիկին հրաժե՞շտ տալ։ Հրաժեշտ տուր, հրաժեշտ տուր, բարեկամս։ Այդ լավ ես արել, որ տատիկին հիշել ես։ Երբեք չպետք է հարազատներին մոռանալ, իսկ առանձնապես այն հարազատներին, որոնք, կարելի է ասել, կյանքը չեն խնայել մեզ համար։

Պատարագ լսեցին հոգեհանգստի մաղթանքով, եկեղեցում մեղրահատիկ կերան, հետո տուն եկան, նորից մեղրահատիկ կերան ու նստեցին թեյ խմելու։ Պորֆիրի Վլադիմիրիչը կարծես դիտավորյալ, սովորականից ավելի դանդաղ էր կում անում բաժակից ու տանջալից ծոր էր տալիս բառերը, ճոռոմաբանելով երկու կումերի ընթացքում։ Ժամը տասին, սակայն, թեյը ավարտվեց և Աննինկան խնդրեց.

— Քեռի, հիմա ես կարո՞ղ եմ գնալ։

— Իսկ ճաշե՞լ։ Ճանապարհ գնալուց առաջ ճաշել հարկավո՞ր է։ Մի՞թե դու կարծում ես, որ քեռին քեզ այդպես առանց ճաշելու կթողնի։ Երբե՛ք, մի՛ էլ մտածիր։ Գոլովլյովոյում այդպիսի սովորություն չի էլ եղել։ Հանգուցյալ մամենկան թույլ էլ չէր տա ինձ իր աչքին երևալ, եթե իմանար, որ ես հարազատ ազգականուհուս առանց աղուհացի ճանա-

պարհ եմ դրել։ Մի՛ էլ մտածիր այդ մասին, մի՛ էլ երևակայիր։

Կրկին հարկ եղավ հպատակվել։ Սակայն ժամուկես անցավ, իսկ սեղանը գցել չէին էլ մտածում։ Բոլորը ցրվեցին, Եվպրակսեյուշկան, բանալիները զնգզնգացնելով, երբեմն-երբեմն երևում էր, մերթ մառան գնալով, մերթ նկուղ. Պորֆիրի Վլադիմիրիչը խոսում էր գործակատարի հետ, նրա հոգին հանելով անիմաստ հրամաններով, ազդրերին էր խըփում և ընդհանրապես հնարքներ էր անում մի կերպ ձրգձրգելու ժամանակը։ Աննինկան սեղանատանը մենակ ետ ու առաջ էր քայլում, ժամացույցին էր նայում, համրում էր իր քայլերը, իսկ հետո վայրկյանները՝ մեկ, երկու, երեք... Երբեմն-երբեմն փողոց էր նայում և համոզվում էր, որ ջրագուբերն ավելի ու ավելի մեծանում են։

Վերջապես զնգզնգացին գդալները, դանակները, ափսեները. լաքեյ Ստեպանը սեղանատուն եկավ ու սփոռոցը սեղանին գցեց։ Բայց թվում էր, որ Իուդուշկայի ներսը լըցված աճյունը մասամբ անցել էր նաև նրան։ Դանդաղ-դանդաղ տեղափոխում էր նա ափսեները, փչում էր բաժակների վրա, նայում էր նրանց միջով լույսին։ Ուղիղ ժամը մեկին սեղան նստեցին։

— Ահա և դու մեկնում ես,— սկսեց Պորֆիրի Վլադիմիրիչը մեկնումին համապատասխան խոսակցությունը։

Նրա առաջ դրած էր արգանակով ափսեն, բայց նա ձեռք չէր դիպցնում և այն աստիճան գորովանքով էր նայում Աննինկային, որ նույնիսկ նրա քթի ծայրը կարմրել էր։ Աննինկան շտապ-շտապ կուլ էր տալիս գդալ-գդալի ետևից։ Իուդուշկան նույնպես վերցրեց գդալը և համարյա թաղեց արգանակի մեջ, բայց իսկույն ևեթ նորից դրեց սեղանին։

— Դու ինձ, ծերուկիս, նևրիր արդեն,— մարմաջեց նա։— Այ դու արգանակը կերար այնպես շտապ, կարծես փոստակառքով ճանապարհ գնացիր, իսկ ես ուտում եմ այնպես, ասես սայլով եմ գնում։ Ձեմ սիրում աստվածային պարգևի հետ անփույթ վերաբերվել։ Հացը մեզ մեր գոյությունը պահպանելու համար է տված, իսկ մենք շաղ ենք տալիս այն.— տեսնում ես դու ինչքան հաց ես փշրել։ Եվ ընդհանրապես ես

սիրում եմ ամեն ինչ անել հիմնավոր ու շրջահայաց — հաստատուն է լինում։ Գուցե դա քեզ բարկացնում է, որ ես սեղանի մոտ օղակի միջով՝ կամ թե ինչպես եք դուք ասում՝ չեմ ցանկանում, բայց դե ի՞նչ արած, բարկացիր, թե որ ուզում ես։ Կբարկանաս, կբարկանաս ու կներես։ Դու էլ միշտ երիտասարդ չես մնա, շարունակ օղակների միջով չես ոստնի, դու էլ մի ժամանակ փորձառու կդառնաս,— ահա այն ժամանակ էլ կասես՝ իսկ քեռին, թերևս, իրավացի էր։ Այդպես, բարեկամս։ Այժմ, գուցե, դու լսում ես ինձ ու մտածում՝ քեռին ծեր փնթփնթացող է։ Բայց որ հասնես իմ հասակին, կասես՝ խոհե՛մ է քեռիս, լավ բաներ սովորեցրեց ինձ։

Պորֆիրի Վլադիմիրիչը խաչակնքեց և երկու գդալ արգանակ կուլ տվեց։ Այդ անելուց հետո նա գդալը կրկին դրեց պնակի մեջ և ետ ընկավ աթոռի մեջքին, որպես նշան առաջիկա խոսակցության։

«Արյունարբու»,— պտտվում էր Աննինկայի լեզվի ծայրին։ Բայց նա զսպեց իրեն, արագորեն ջուր լցրեց բաժակը և թափով խմեց։ Իուդուշկան կարծես հոտառությամբ գուշակում էր, թե ինչ է կատարվում նրա ներսը։

— Ի՞նչ, դուր չի՞ գալիս,— ինչ արած, թեպետև դուր չի գալիս, բայց այնուամենայնիվ դու քեռուդ լսիր։ Այ ես վաղուց ուզում էի քեզ հետ խոսել քո այդ շտապողականության մասին, բայց միշտ ժամանակ չէր լինում։ Չեմ սիրում ես քո մեջ այդ շտապողականությունը, թեթևամտություն է երևում դրանում, անխոհեմություն։ Այ այն ժամանակ էլ դուք իզուր հեռացաք տատիկի մոտից և չամաչեցիք վշտացնել պառավին,— բայց ինչո՞ւ։

— Ա՜խ, քեռի, ինչո՞ւ եք դուք հիշում այդ մասին։ Չէ՞ որ դա արդեն եղել է։ Ձեր կողմից դա նույնիսկ լավ չէ։

— Սպասիր, ես այն մասին չեմ ասում՝ լավ է, թե վատ է, այլ այն մասին, որ թեպետև եղել է, բայց չէ որ կարելի է և փոխել։ Ոչ միայն մենք, հանցավորներս, այլև աստված ինքն իր արարքները փոփոխում է՝ այսօր անձրև կուղարկի, իսկ վաղը լավ եղանակ կտա։ Հը՜, դե, չէ՞ որ թատրոնը մի այնպիսի մեծ գանձ չի։ Հապա վճռիր։

— Ո՛չ, քեռի, թողեք այդ, խնդրում եմ ձեզ։

— Եվ էլի քեզ ահա ինչ կասեմ. լավ չէ քո մեջ եղած թեթևամտությունը, բայց է՛լ ավելի շատ դուր չի գալիս ինձ այն, որ դու այդպես թեթև ես վերաբերվում մեծերի նկատողություններին։ Քեռին քո լավն է ուզում, իսկ դու ասում ես՝ թողեք։ Քեռին քեզ մոտենում է սիրով ու փաղաքշանքով, իսկ դու փնչացնում ես նրա վրա։ Իսկ մինչդեռ գիտե՞ս արդյոք, ով է քեզ քեռի տվել։ Հապա, ասա, ո՞վ է քեզ քեռի տվել։

Աննինկան տարակուսած նրան նայեց։

— Աստված է քեզ քեռի տվել, ահա՛ ով։ Թե աստված տված չլիներ, դու հիմի մենակ կլինեիր, չէիր իմանա ինչ անես, ի՛նչ խնդրագիր ներկայացնես, ո՛ւր ներկայացնես, և ինչ պատասխան սպասես այդ խնդրագրին։ Կլինեիր դու ինչպես անտառում, մեկը քեզ կվիրավորեր, մյուսը կխաբեր, իսկ երրորդն ուղղակի կծիծաղեր քեզ վրա։ Բայց քանի որ դու քեռի ունես, մենք աստծու օգնությամբ մեկ օրում քո բոլոր գործերը կարգի բերեցինք։ Ե՛վ քաղաք գնացինք, և՛ ենամակալականում եղանք, և՛ խնդրագիր ներկայացրինք, և՛ կարգադրությունն ստացանք։ Ահա թե, բարեկամ իմ, ի՞նչ է նշանակում քեռի։

— Դե ես էլ շնորհակալ եմ ձեզանից, քեռի։

— Իսկ եթե շնորհակալ ես, դե էլ մի փնչացրու նրա վրա, այլ լսիր։ Բարիք է ցանկանում քեզ քեռիդ, թեպետ երբեմն քեզ թվում է...

Աննինկան հազիվ էր կարողանում զսպել իրեն։ Մնում էր քեռու խրատներից ազատվելու մի միջոց ևս՝ ցույց տալ, որ նա, թեկուզ սկզբունքորեն, ընդունում է Գոլովլյովոյում մնալու նրա առաջարկությունը։

— Լավ, քեռի,— ասաց նա,— ես կմտածեմ։ Ես ինքս հասկանում եմ, որ մենակ ապրել, հարազատներից հեռու, այնքան էլ հարմար չէ... բայց, համենայն դեպս, այժմ ես ոչինչ որոշել չեմ կարող։ Պետք է մտածել։

— Այ, տեսնում ես, դու արդեն հասկացար։ Բայց մտածելու ի՞նչ կա այդտեղ։ Հրամայենք ձիերն արձակել, քո ճամպրուկները կիբիտկայից հանել,— ահա և ամբողջ մտածելը։

— Ոչ, քեռի, դուք մոռանում եք, որ ես քույր ունեմ։

Հայտնի չէ, համոզեց արդյոք Պորֆիրի Վլադիմիրիչին այդ փաստարկը, թե ամբողջ այդ տեսարանը նրա կողմից մեջ էր բերված քաղաքավարության համար և նա ինքը լավ չէր իմանում, իսկապես հարկավոր է, որ Աննինկան մնա Գոլովլյովոյում, թե ամենևին պետք չէ դա, այլ միայն մի րոպե գլխին փչած քմահաճույք էր դա։ Բայց համենայն դեպս ճաշը դրանից հետո կենդանի անցավ, Աննինկան ամեն ինչի հետ համաձայնվում էր, բոլորին այնպիսի պատասխաններ էր տալիս, որոնք ոչ մի պատրվակ չէին թողնում դատարկախոսության։ Բայց և այնպես ժամացույցն արդեն ցույց էր տալիս երեք ու կեսը, երբ ճաշը վերջացավ։ Աննինկան դուրս թռավ սեղանի մոտից, կարծես ամբողջ ժամանակ շոգու լողարանում նստած լիներ, և վազեց քեռու մոտ, հրաժեշտ տալու նրան։

Տասը րոպեից Իուդուշկան, մուշտակն ու արջամորթու կոշիկները հագած, ճանապարհում էր նրան մուտքի առաջ և անձամբ հսկում էր, ինչպես էին օրիորդին կիբիտկայում տեղավորում։

— Սարից իջնելիս կամաց կքշես, լսո՛ւմ ես։ Սենկինի զառիվայրում վայր չգցես,— հրամայում էր նա կառապանին։

Վերջապես Աննինկային փաթաթեցին, նստեցրին ու կիբիտկայի գոդնոցը կոճկեցին։

— Գուցե կմնայի՞ր,— կրկին անգամ ձայն տվեց Իուդուշկան, կամենալով, որպեսզի հավաքված սպասավորների ներկայությամբ ևս ամեն բան անցնի այնպես, ինչպես հարկն է, ազգակցաբար։— Համենայն դեպս կգա՞ս, ասա։

Բայց Աննինկան իրեն արդեն ազատ էր զգում և հանկարծ ցանկություն զգաց երեխայություն անել։ Նա դուրս նայեց կիբիտկայից և շեշտելով յուրաքանչյուր բառը, պատասխանեց.

— Ոչ, քեռի, չե՛մ գա։ Սարսափելի՞ է ձեզ հետ։

Իուդուշկան այնպես ցույց տվեց, որ չի լսում, բայց նրա շրթունքները սպիտակեցին։

* * *

Գոլովլյովյան գերությունից ազատագրվելն այն աստիճան ուրախացրեց Աննինկային, որ նա ոչ մի անգամ նույնիսկ կանգ չառավ այն մտքի վրա, որ իր ետևում, անժամկետ գերության մեջ մնում է մի մարդ, որի համար, իր մեկնումով, խզվեց ամեն մի կապ կենդանի մարդկանց աշխարհի հետ։ Նա իր մասին էր մտածում միայն, որ դուրս պրծավ և որ հիմա լավ է իր համար։ Ազատության այդ զգացողության ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ երբ նա կրկին այցելեց վոպլինյան գերեզմանատունը, ապա նրանում հետք անգամ չէր նկատվում այն չղային դյուրազգացությունից, որը նա դրսևորեց տատիկի գերեզմանին առաջին անգամ այցելելիս։ Հանգիստ ունկնդրեց նա հոգեհանգստի մաղթանքը, առանց արտասուքի խոնարհվեց գերեզմանի վրա և բավական հաճույքով ընդունեց քահանայի առաջարկն՝ իր խրճիթում մի բաժակ թեյ խմելու։

Այն պայմանները, որոնց մեջ ապրում էր վոպլինյան քահանան, շատ խղճուկ էին։ Տան միակ մաքուր սենյակում, որը ծառայում էր որպես ընդունարան, տրտում մերկություն էր տիրում։ Պատերի տակ մի դյուժինաչափ ներկված աթոռներ էին շարված, ծածկված մազագործ կտորով, որ տեղ-տեղ բավական պատառոտված էր, կար նաև նույնպիսի բազմոց՝ դուրս ցցված մեջքատեղով, որ մինչ ռեֆորմային դպրոցի գեներալի կրծքի էր նման. միջնապատերից մեկի մոտ երևում էր կեղտոտ մահուդով ծածկված հասարակ սեղան, վրան ծխի խոստովանագրքերը, և նրանց միջից երևում էր մեջը գրչակոթ ցցած թանաքամանը. արևելյան անկյունում կախված էր սրբապատկերների տապանակը՝ ծնողական օրհնանքով և վառված կանթեղով. նրա տակ կային երկու սրնդուկ՝ տերտերակնոջ բաժինքով, որ ծածկված էին գույնը գցած մոխրագույն մահուդով։ Պատերին պաստառներ չկային. պատերից մեկի միջամասում կախված էին մի քանի եպիսկոպոսների դագերրոտիպ[56] պատկերներ։ Սենյակում տարօրինակ հոտ էր կանգնած, ասես թե նա վաղուց ի վեր խավարամիջատների ու ճանճերի գերեզման լիներ։ Ինքը քա-

հանան թեպետև դեռ երիտասարդ էր, բավական խունացել էր այդ պարագաներում։ Նոսր սպիտակավուն մազերը ուղիղ հյուսքերով կախվել էին նրա գլխին, նման լացող ուռենու ճյուղերին. երբեմնի կապույտ աչքերը նայում էին սպանված, ձայնը ցնցվում էր, մորուքը սրվել էր. բրդյա ֆարաջայի փեշերը վատ էին ծածկվում և կարծես կախարանից կախված լիներ։ Տերտերակինը, նույնպես երիտասարդ կին, ամեն տարվա ծննդաբերությունից է՛լ ավելի էր հյուծված, քան ամուսինը։

Բայց և այնպես Աննինկան չէր կարող չնկատել, որ նույնիսկ այդ խեղճ, հյուծված ու աղքատ մարդիկ անգամ վերաբերվում են նրան ոչ այնպես, որպես իսկական ծխականի հետ, այլ ավելի շուտ խղճահարությամբ, որպես մոլորյալ ոչխարի։

— Եղա՞ք ձեր քեռու մոտ,— սկսեց տերտերը, զգուշությամբ վերցնելով տերտերակնոջ մատուցած սկուտեղից թեյի գավաթը։

— Այո, համարյա մի շաբաթ ապրեցի։

— Այժմ Պորֆիրի Վլադիմիրիչը մեր ամբողջ շրջանում գլխավոր կալվածատերն է դարձել, նրանից հզորը չկա։ Միայն կյանքում, կարծես, նա հաջողություն չունի։ Սկզբում մի որդին մեռավ, հետո մյուսը, վերջապես և ծնող մայրը։ Զարմանալի է, ինչպե՞ս է, որ նա ձեզ չի խնդրել մնալ Գոլովլյովոյում։

— Քեռին առաջարկեց, բայց ես ինքս չմնացի։

— Ինչո՞ւ այդպես։

— Լավ է, երբ ազատ ես ապրում։

— Ազատությունը, օրիորդ, իհարկե, վատ բան չէ, բայց նա էլ առանց վտանգների չի լինում։ Իսկ եթե նկատի ունենանք նաև, որ դուք Պորֆիրի Վլադիմիրիչի մերձավոր ազգականուհին եք, հետևապես և նրա ամբողջ կալվածքի ուղղակի ժառանգն եք հանդիսանում, ապա թվում է, ազատության հարցում կարելի էր փոքր-ինչ ճնշել իրեն։

— Ոչ, տեր հայր, սեփական հացը լավ է։ Ապրելը մի տեսակ հեշտ է լինում, երբ զգում ես, որ ոչ ոքի պարտական չես։

Տերտերը աղոտ նայեց նրան, կարծես ուզում էր հարցնել՝ գիտես արդյոք դու ի՞նչ բան է «սեփական հացը», բայց ամաչեց և միայն վեհերոտ ծածկեց իր փարաջայի փեշերը։

— Իսկ դուք մե՞ծ ոռճիկ եք ստանում դերասանությունից,— խառնվեց խոսակցությանը տերտերակինը։

Տերտերը վերջնականապես երկչոտեց և նույնիսկ աչքերը թարթեց տերտերակնոջ կողմը։ Նա սպասում էր, որ Աննինկան կվիրավորվի։ Սակայն Աննինկան չվիրավորվեց և առանց որևէ ծամածռության պատասխանեց.

— Այժմ ես հարյուր հիսուն ռուբլի եմ ստանում ամսական, իսկ քույրս՝ հարյուր։ Նաև բենեֆիսներ են տալիս մեզ։ Տարեկան երկուսս վեց հազար կստանանք։

— Ինչո՞ւ են ձեր քրոջը քիչ վճարում։ Արժանիքները պակա՞ս են նրա, ինչ է,— շարունակեց հետաքրքրվել տերտերակինը։

— Ոչ, քրոջս ժաները ուրիշ է։ Ես ձայն ունեմ, երգում եմ,— հասարակությանը դա ավելի է դուր գալիս, իսկ քրոջս ձայնը փոքր է, նա վոդևիլներում է խաղում։

— Նշանակում է այնտեղ էլ նույնն է, ով տերտեր է, ով սարկավագ, ով էլ տիրացու է։

— Բայց մենք հավասար կիսում ենք. մենք հենց սկզբից այդպես պայմանավորվել էինք, որ փողը հավասար կիսելու ենք։

— Ազգակցաբա՞ր։ Դրանից էլ լավ ի՞նչ կա, երբ ազգակցաբար է։ Իսկ ինչքա՞ն կանի այդ, տերտեր։ Վեց հազար ռուբլին որ ամիսների բաժանենք, ինչքա՞ն կլինի։

— Հինգ հարյուր՝ ամսական, իսկ երկուսի մեջ բաժանած՝ երկու հարյուր հիսունական։

— Ինչքա՞ն փող է։ Մենք մի տարում էլ չենք ծախսի։ Էլի ինչ էի ուզում ես հարցնել ձեզ. ճշմարի՞տ է, որ դերասանուհիների հետ այնպես են վարվում, կարծես նրանք իսկական կին չեն։

Տերտերը քիչ մնաց բոլորովին անհանգստանար և նույնիսկ փարաջայի փեշերը բաց թողեց, բայց տեսնելով, որ Աննինկան հարցին միանգամայն անտարբեր է վերաբերում,

մտածեց՝ «էհե՞, բայց սրան հեշտությամբ կոտրել չի կարելի»,— և հանգստացավ։

— Այսինքն, ինչպե՞ս թե իսկական կին չեն,— հարցրեց Աննինկան։

— Իբրև թե նրանց համբուրում են, գրկում են... իբրև թե, երբ որ չեն էլ ուզում, այդ դեպքում էլ նրանք պարտավոր են...

— Ոչ թե համբուրում են, այլ ցույց են տալիս, թե համբուրում են։ Իսկ այն մասին, ուզում է, թե չի ուզում, այդ մասին այդ դեպքերում խոսք էլ չի կարող լինել, որովհետև ամեն ինչ արվում է ըստ պիեսի. ինչպես գրված է պիեսում, այնպես էլ վարվում են։

— Թեկուզ և պիեսով, բայց և այնպես... կա այնպիսին՝ որը փսլնքոտ դնչով խցկվում է համբուրվելու, նրան նայելուց անգամ սիրտ է խառնում, բայց դու պետք է շրթունքներդ պարզես։

Աննինկան ակամայից կարմրատակեց. նրա երևակայության մեջ անցավ քաջ ռոտմիստր Պապկովի փսլնքոտ դեմքը, որը ճիշտ որ «խցկվում էր» և, ավա՜ղ, նույնիսկ ոչ «ըստ պիեսի» էր խցկվում։

— Դուք ամենևին այնպես չեք պատկերացնում ձեզ, թե դա ինչպես է կատարվում բեմում,— ասաց նա բավական սառը։

— Իհարկե, մենք թատրոններում չենք եղել, բայց և այնպես, անշուշտ, ամեն բան էլ լինում է։ Մենք, օրիորդ, տերտերի հետ շատ անգամ ենք ձեր մասին խոսում. խղճում ենք մենք ձեզ. նույնիսկ շատ ենք խղճում։

Աննինկան լուռ էր. տերտերը նստել ու մորուքն էր քաշքըշում, կարծես վճռում էր ինքն էլ իր խոսքն ասի։

— Թեպետ, օրիորդ, ամեն կոչման մեջ էլ և՛ հաճույքներ են լինում, և՛ անախորժություններ են լինում,— վերջապես արտահայտվեց նա,— բայց մարդը, իր թուլության շնորհիվ, առաջիններով սքանչանում է, իսկ վերջիններին մասին աշխատում է մոռանալ։ Իսկ ինչո՞ւ մոռանալ։ Նրա համար, օրիորդ, որպեսզի պարտքի և առաքինի կյանքի այս

վերջին հիշատակումն անգամ, ըստ հնարավորի, աչքի առաջ չունենա։

Եվ ապա, հառաչելով, ավելացրեց.

— Իսկ գլխավորը, օրիորդ, իր գանձը հարկ է պահպանել։

Տերտերը ուսուցչաբար նայեց Աննինկային. տերտերակինը տրտում օրորեց գլուխը, կարծես ասելով՝ ո՞րտեղից։

— Եվ ահա այդ գանձը, թվում է, դերասանական կոչման մեջ պահպանելը բավական կասկածելի է,— շարունակեց տերտերը։

Աննինկան չգիտեր ինչ ասել այդ խոսքերին։ Կամաց-կամաց նրան սկսում էր թվալ, որ այդ պարզամիտ մարդկանց խոսակցությունը «գանձի» մասին միանգամայն նույնարժեք է «սույն քաղաքում տեղակայած գնդի» պարոնայք սպաների «la chose»-ի մասին ունեցած խոսակցություններին։ Իսկ ընդհանրապես նա համոզվեց, որ այստեղ ևս, ինչպես քեռու մոտ, նրա մեջ բոլորովին առանձնակի երևույթ են տեսնում, որին թեպետև կարելի է ներողամիտ վերաբերվել, բայց, «չկեղտոտվելու» համար, որոշ հեռավորությունից։

— Ինչո՞ւ ձեր եկեղեցին, տեր հայր, այսպես աղքատ է,— հարցրեց նա, որպեսզի փոխի խոսակցությունը։

— Հարուստ լինելու հնարավորություն չունի, դրա համար էլ աղքատ է։ Կալվածատերերը բոլորը ծառայության են մեկնել, իսկ գյուղացիները բարվոքելու հնարավորություն չունեն։ Ասենք ծխում եղածներն էլ ընդամենը երկու հարյուրից քիչ ավելի մարդ է։

— Ահա մեր զանգն արդեն չափազանց վատ է,— հոգոց հանեց տերտերակինը։

— Եվ զանգը, և ուրիշ բոլոր բաները։ Մեր զանգը, օրիորդ, ընդամենը տասնհինգ փութ է կշռում, բայց և այն էլ, հակառակի պես, ճեղքվել է։ Ոչ թե զանգահարում է, այլ աղմկում է մի տեսակ,— նույնիսկ դատապարտելի է։ Հանգուցյալ Արինա Պետրովնան խոստացել էր նորը գցել և, եթե կենդանի մնար, այժմ մենք, անտարակույս, զանգ ունեցած կլինեինք։

— Դուք քեռուն ասեիք, որ տատիկը խոստացել է։

— Ասեցի, օրիորդ, և նա, պետք է ճշմարիտն ասել, իմ պատճառած գլխացավանքը բավական բարեհաճ լսեց։ Միայն բավարար պատասխան տալ ինձ չկարողացավ՝ չեմ լսել, բանն այն է, մամենկայից ոչինչ, հանգուցյալը, բանն այն է, նրան ոչինչ չի ասել այդ մասին։ Իսկ եթե, որպես թե, լսած լիներ, ապա անպայման կկատարեր նրա կամքը։

— Ինչպե՞ս թե չի լսել,— ասաց տերտերակինը։—Ամբողջ շրջանը իմանում է, իսկ նա չի՞ լսել։

— Ահա և ապրում ենք մենք այսպես։ Առաջ գոնե հույս ունեինք, իսկ հիմա բոլորովին անհույս ենք մնում։ Երբեմն ոչինչ չի լինում, որ պատարագ անեմ, ոչ նշխար, ոչ կարմիր գինի։ Իսկ մեր մասին արդեն էլ չենք խոսում։

Աննինկան ուզեց վեր կենալ և հրաժեշտ տալ, բայց սեղանի վրա նոր սկուտեղ հայտնվեց, որի վրա երկու ափսե կար, մեկում ագարիկոն, մյուսում խավիարի կտորներ և մի շիշ մադերա։

— Նստեցե՛ք, ներո՛ղ եղեք, անո՛ւշ արեք։

Աննինկան հպատակվեց, շտապ երկու ագարիկոն կուլ տվեց, բայց մադերայից հրաժարվեց։

— Ահա ինչի մասին էի ես նորից ուզում հարցնել,— ասում էր մինչ այդ տերտերակինը,— մեր ծխում մի աղջիկ կա, Լիշչևսկու սպասավորի աղջիկը. նա Պետերբուրգում մի դերասանուհու մոտ ծառայելիս է եղել։ Լավ են ապրում, ասում է դերասանուհիները, միայն թե ամեն ամիս պետք է տոմս նորոգեն... ճի՞շտ է դա։

Աննինկան նայում էր լայն բացված աչքերով և չէր հասկանում...

— Ազատ լինելու համար,— բացատրեց տերտերը։— Թեպետ, կարծում եմ, որ նա ճիշտ չի ասում։ Ընդհակառակը, ես լսել եմ, որ շատ դերասանուհիներ պետական դրամարկղից կենսաթոշակի են արժանանում։

Աննինկան համոզվեց, որ որչափ խորանա անտառը, այնչափ շատ փայտ կլինի, և սկսեց վերջնականապես հրաժեշտ տալ։

— Իսկ մենք մտածում էինք, որ դուք հիմա դերասանու-

թյունից դուրս կգաք,— շարունակում էր կպչել տերտերակինը։

— Ինչո՞ւ։

— Այնուամենայնիվ։ Դուք օրիորդ-տիրուհի եք։ Հիմա չափահաս եք դարձել, ձեր կալվածքը ունեք — դրանից էլ լա՞վ։

— Դե, և քեռուց հետո դուք եք անմիջական ժառանգը,— ավելացրեց տերտերը։

— Ոչ, ես այստեղ չեմ ապրի։

— Իսկ մենք ի՞նչ հույս ունեինք։ Շարունակ խոսում էինք մեր մեջ՝ թե մեր օրիորդներն անպայման կապրեն Պոգորելկիում։ Իսկ ամառը մեզանում այստեղ նույնիսկ շատ լավ է, կարելի է անտառը գնալ սունկի,— գայթակղում էր տերտերակինը։

— Մեզանում չոր ամառներն էլ շատ սունկ է լինում,— ավելացրեց տերտերը։

Վերջապես Աննինկան մեկնեց։ Պոգորելկի հասնելուն պես նրա առաջին խոսքը եղավ՝ «Ձիեր, խնդրում եմ շուտով ձիեր լծել»։ Բայց Ֆեդուլիչն ի պատասխան այդ խնդրանքի, միայն ուսերը ցնցեց։

— Ի՞նչ «ձիեր»։ Մենք դեռ չենք էլ կերակրել նրանց,— քրթմնջաց նա։

— Բայց ինչո՞ւ վերջապես։ Ա՜խ, տեր աստված, կարծես բոլորը խոսքը մեկ են արել։

— Խոսքը մեկ անել է, որ կա։ Ինչպե՞ս խոսք չանես, երբ ամեն մարդ տեսնում է, որ հալչելոցի ժամանակ գիշերը ճանապարհ գնալ չի կարելի։ Միևնույն է, հորդացած ջրերը չեն թողնելու, դաշտումն եք մնալու, այնպես որ, մեր կարծիքով, ավելի լավ է տանը մնաք։

Տատիկի սենյակները տաքացրած էին։ Ննջարանում անկողին էր պատրաստած, իսկ գրասեղանի վրա ինքնաեռն էր եփ գալիս. Աֆիմյուշկան տատիկի հնամենի արկղի հատակից հավաքում էր թեյի մնացորդը, որ մնացել էր Արինա Պետրովնայից հետո։ Մինչ թեյը գույն դուրս կտար, Ֆեդուլիչը, ձեռները խաչած, դեմքը օրիորդի կողմը դարձրած, կանգնել էր դռան մոտ, իսկ երկու կողքը կանգնել էին անաս-

նապահուհին և Մարկովնան այնպիսի դիրքով, ասես իսկույն կեթ, ձեռքի առաջին իսկ շարժումով, պատրաստ էին վազել ուր որ պատահի։

— Թեյը դեռ տատիկինն է,— առաջինը սկսեց Ֆեդուլիչը,— հանգուցյալից է մնացել արկղի տակը։ Պորֆիրի Վլադիմիրիչը արկղն էլ էր ուզում տանել, բայց ես չհամաձայնեցի։ Կարող է պատահել, ասում եմ, օրիորդները կգան, թեյ կուզենան խմել, մինչև որ իրենք կառնեն։ Դե, ոչինչ, դեռ կատակ էլ արեց՝ դու, ասում է, ծեր խաբեբա, ինքդ ես խմելու, տես, ասում է, արկղիկը հետո Գոլովլյովո բեր։ Տեսար վաղը մարդ ուղարկեց ետևից։

— Իզուր այն ժամանակ իրեն չեք տվել։

— Ինչո՞ւ տայի, նա ինքն էլ շատ թեյ ունի։ Իսկ հիմի, համենայն դեպս, ձեզանից հետո մենք կխմենք։ Բայց ահա ինչ, օրիորդ, դուք մեզ Պորֆիրի Վլադիմիրիչին եք հանձնարարելու, ի՞նչ է։

— Չեմ էլ մտածել։

— Այդպես։ Իսկ մենք պատրաստվում էինք բունտ անելու։ Թե որ, եթե, մտածում ենք, մեզ գոլովլյովյան բարինի իրավունքի տակ հանձնեն, մենք բոլորս կխնդրենք, որ մեզ ազատեն։

— Ինչո՞ւ այդպես։ Քեռին շա՞տ է սարսափելի։

— Շատ սարսափելի չի, այլ բռնանում է, խոսք չի ափսոսում։ Խոսքերով նա մարդու փտեցնել կարող է։

Աննինկան ակամայից ժպտաց։ Ճիշտ որ Իուդուշկայի շաղակրատանքից ինչ-որ թարախ էր կաթում։ Հասարակ դատարկախոսություն չէր դա, այլ գարշահոտող վերք էր, որը շարունակ թարախ էր արտաթորում։

— Իսկ ձեր մասին դուք ի՞նչ որոշեցիք, օրիորդ,— շարունակեց հարցուփորձ անել Ֆեդուլիչը։

— Այսինքն ես իմ մասին ի՞նչ պիտի «որոշեմ»,— փոքրինչ շփոթվեց Աննինկան, նախազգալով, որ այստեղ ևս նա պետք է շաղակրատանք լսի «գանձի» մասին...

— Մի՞թե դուք դերասանությունից դուրս չեք գալու։

— Ոչ... այսինքն, ես դեռ այդ մասին չեմ մտածել...

Բայց ի՞նչ վատ բան է, որ ես ինչպես կարող եմ, վաստակում եմ իմ հացը։

— Ի՞նչ լավ բան կա տոնավաճառից տոնավաճառ գնալ բանդիոով, հարբած մարդկանց զվարճացնել։ Չէ՛ որ դուք օրիորդ-տիրուհի եք։

Աննինկան ոչինչ չպատասխանեց, միայն հոնքերը խոժոռեց։ Գլխում տանջալից մի հարց էր կանգնած՝ տե՞ր աստված, ե՞րբ եմ գնալու վերջապես այստեղից։

— Հասկանալի է, դուք ավելի լավ եք իմանում, ինչ անեք, բայց մենք միտք էինք անում, որ դուք կվերադառնաք մեզ մոտ։ Տունը մեր տաք է, ընդարձակ է՝ թեկուզ պահմրտոցի խաղա, շատ լավ է պատրաստել հանգուցյալ տատիկը։ Տխրեցիք՝ սահնակը կլծենք, իսկ ամառը կարելի է անտառը սունկի գնալ։

— Այստեղ մեզանում ամեն տեսակ սունկ կա՝ և՛ ագարիկոն, և՛ սպիտակ, և՛ թնջուկ, և՛ փափախավոր — շա՞տ կա,— գայթակղիչ փսփսացրեց անատամ բերանով Աֆիմյուշկան։

Աննինկան զույգ ձեռքով հենվել էր սեղանին և աշխատում էր չլսել։

— Այստեղ մի աղջիկ կա,— անգութ շարունակում էր Ֆեդուլիչը,— Պետերբուրգումն էր ծառայում, ասում էր, իբրև թե բոլոր դերասանուհիները տոմսավոր են։ Ամեն ամիս պետք է ոստիկանատուն ներկայացնեն տոմսը։

Աննինկային կարծես խարանեցին. ամբողջ օրը նա շարունակ այդ խոսքերն է լսում։

— Ֆեդո՛ւլիչ,— աղաղակով պոռթկաց նա,— ի՞նչ եմ արել ես ձեզ, մի՞թե ձեզ բավականություն է պատճառում ինձ վիրավորել։

Բավակա՛ն էր արդեն։ Զգում էր, որ խեղդվում է, որ ևս մի խոսք — և այլևս չի դիմանա։

ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեկ անգամ, Պետենկայի հետ պատահած աղետից ոչ այնքան առաջ, Արինա Պետրովնան հյուր եկած լինելով Գոլովլյովո, նկատեց, որ Եվպրակսեյուշկան կարծես ուռած լինի։ Դաստիարակված լինելով ճորտատիրության իրավունքի պրակտիկայով, որի ժամանակ սպասավոր աղջիկների հղիությունը մանրամասն և հետաքրքրությունից ոչ զուրկ քննության առարկա էր դառնում և համարյա եկամտաբեր հոդված էր համարվում, Արինա Պետրովնան այդ կողմից սուր և անսխալ աչք ուներ, այնպես որ նրա համար բավական եղավ, որ հայացքը կանգ առներ Եվպրակսեյուշկայի վրա, որպեսզի վերջինս անխոս և իր հանցավոր լինելու լիակատար գիտակցությամբ կրակի պես վառվող դեմքը շուռ տար նրանից։

— Հապա՞, հապա՞, սիրունիկս, ինձ նայիր, հղի՞ ես,— հարցաքննեց փորձառու պառավը հանցանք կատարած աղավնուն, բայց նրա ձայնում կշտամբանք չէր լսվում, այլ ընդհակառակը, ձայնը հնչում էր կատակային, համարյա ուրախ, ասես թե նրա վրա հին, լավ ժամանակների շունչը բուրեց։

Եվպրակսեյուշկան ոչ է ամոթխած, ոչ է ինքնագոհ լուռ էր և միայն այտերն էին ավելի ու ավելի կարմրատակում Արինա Պետրովնայի փորձող հայացքի տակ։

— Ա՜յ թե ինչու դեռ երեկ նայում եմ, տեսնեմ՝ սեղմվում ես։ Ման է գալիս, պոչ է շարժում, ասես թե ոչինչ չի էլ պատահել։ Բայց ինձ պոչերով չես խաբի, ես հինգ վերստի

վրա տեսնում եմ աղջիկների արարքները։ Քամո՞ց ես ուռել, ինչ է։ Երբվանի՞ց է։ Խոստովանի՛ր, ասա։

Հետևեց մանրամասն հարցաքննություն և նույնքան էլ մանրամասն բացատրություն։ Ե՞րբ են նկատվել առաջին նշանները, տատմեր աչքի առաջ ունե՞ն, թե ոչ։ Իմանո՞ւմ է արդյոք Պորֆիրի Վլադիմիրիչն իրեն սպասող ուրախության մասին։ Պահպանո՞ւմ է արդյոք իրեն Եվպրակսեյուշկան, ծանր բաներ հո չի՞ վերցնում և այլն և այլն։ Պարզվեց, որ Եվպրակսեյուշկան արդեն հինգ ամիս է հղի է, որ տատմեր առայժմ աչքի առաջ չկա, որ Պորֆիրի Վլադիմիրիչին թեպետ զեկուցվել է, բայց նա ոչինչ չասաց, այլ միայն ձեռները խաչեց կրծքին, շշնջաց շուրթերով ու նայեց սրբապատկերին, ի նշան այն բանի, որ ամեն ինչ աստծուց է և նա, երկնային թագավորն ինքն ամեն բանի մասին կհոգա, և վերջապես, Եվպրակսեյուշկան մեկ անգամ չզգուշացավ, բարձրացրեց ինքնաեռը և նույն րոպեին զգաց, որ իր ներսը մի բան, կարծես, կտրվեց։

— Ինչպես տեսնում եմ ես, շատ անհասկացողն եք դուք,— վշտացավ Արինա Պետրովնան, լսելով այդ խոստովանությունները։— Երևում է, պետք է ինքս միջամտեմ այդ գործին։ Համեցեք, հինգերորդ ամիսն է հղի է, իսկ նրանք դեռ տատմեր էլ աչքի առաջ չունեն։ Դու, հիմար, զոնե Ուլիտկային ցույց տայիր։

— Ուզում էի, բայց բարինը Ուլիտուշկային այնքան էլ չի...

— Հիմարությո՛ւն է, աղջի, հիմարությո՛ւն։ Ուլիտկան հանցավոր է, թե հանցավոր չի բարինի առաջ, դա ինքն իրեն, բայց այստեղ այսպիսի դեպք է — իսկ նա, համեցե՛ք։ Համբուրվելո՞ւ ենք մենք նրա հետ, ինչ է։ Չէ, անպայման ինքս պիտի միջամտեմ այս գործում։

Արինա Պետրովնան ուզեց տրտմել, օգտվելով այդ դեպքից, թե մինչև հիմա էլ, ծերությանս օրերում անգամ հարկադրված եմ նեղություն քաշել, սակայն խոսակցության առարկան այնքան էր հրապուրիչ, որ նա շրթունքները միայն ծպպացրեց ու շարունակեց

— Դե, սիրունիկս, հիմի արդեն դիմացիր։ Հաճելի՞ էր զբոսնելը, հապա փորձիր սահնակն էլ քաշել։ Փորձի՛ր, փորձի՛ր։ Ես երեք տղա ու մի աղջիկ եմ մեծացրել, հինգ երեխա էլ փոքր-փոքր եմ թաղել, իմանում եմ։ Ահա թե նրանք, տղամարդիկ մեր որտեղն են նստած,— ավելացրեց նա, բռունցքներով իր ծոծրակին խփելով։

Հանկարծ նրա միտքը կարծես լուսավորվեց։

— Աստվա՞ծ իմ, չլինի՞ պաս օր է գալիս։ Սպասիր, սպասիր հաշիվ անեմ։

Մատների վրա սկսեցին հաշվել մեկ անգամ, երկու անգամ, երրորդ անգամ, ճիշտ հենց պաս օր էր գալիս։

— Այդպե՞ս, այդպե՞ս։ Ա՜յ քեզ սուրբ մարդ։ Սպասի՞ր արդեն, մի լավ կծիծաղեմ վրան։ Աղոթագի՞րքը մեր, ի՞նչ խաղեր է խաղացել։ Կծաղրեմ, ես չլինեմ, թե չծաղրեմ,— կատակում էր պառավը։

Իսկապես էլ, նույն օրը, երեկոյան թեյի ժամանակ Արինա Պետրովնան Եվպրակսեյուշկայի ներկայությամբ ծաղրում էր Իուդուշկային։

— Մեր հեզահամբույրի՞ն հապա տեսեք, ի՞նչ օյիններ է հանել։ Իսկապես էլ, քամին հո չի՞ փքել քո սիրունիկին։ Զարմացրիր բայց հա՞, եղբայր։

Իուդուշկան սկզբում արհամարհանքով ուսերն էր գցում մամենկայի կատակների վրա, բայց համոզվելով, որ Արինա Պետրովնան խոսում է «ազգակցաբար», «ողջ հոգով», ինքն էլ սկսեց կամաց-կամաց խնդալ։

— Զարաճճին եք դուք, մամենկա, իսկապես որ շարաճճի,— կատակեց ինքն էլ իր հերթին, բայց, այնուամենայնիվ, իր սովորության համաձայն, ընտանեկան խոսակցության առարկային խուսափողական վերաբերեց։

— Ի՞նչ «շարաճճի», այդ մասին հարկավոր է լուրջ խոսել։ Գիտե՞ս դա ինչ գործ է։ «Խորհուրդ» է դա, ահա ինչ կասեմ քեզ։ Թեպետև իսկական ձևով չի, բայց և այնպես... Հարկավոր է, շատ հարկավոր է, և այն էլ այնպե՞ս հարկավոր է մտածել այդ մասին։ Դու ինչ ես կարծում, կկարգադրես որ այստե՞ղ ազատվի, թե քաղաք կտանես։

— Չգիտեմ ես, մամենկա, ոչինչ չգիտեմ ես, հոգյակս,— խուսափեց Պորֆիրի Վլադիմիրիչը։— Զարաճճին եք դուք, իսկ որ շարաճճին։

— Դե դու սպասիր ուրեմն, սիրունիկ, մենք քեզ հետ այդ մասին հանգիստ ժամանակ կխոսենք։ Ինչ և ինչպես — բոլորը մանրամասն կորոշենք։ Թե չէ այս տղամարդիկ — նրանցն այն է, որ իրենց քմահաճույքը կատարեն, իսկ հետո արդեն մենք ենք նրանց փոխարեն պատասխան տալու, ինչպես կարող ենք։

Իր հայտնությունն անելով, Արինա Պետրովնան իրեն այնպես էր զգում, ինչպես ձուկը ջրում։ Ամբողջ երեկոն խոսեց Եվպրակսեյուշկայի հետ և խոսքը դեռ չվերջացավ։ Նույնիսկ նրա այտերը կարմրատակեցին և աչքերը պատանեկական փայլ ստացան։

— Չէ որ դա, ինչ ես կարծում, չէ՞ որ դա... աստվածային է,— պնդում էր նա։— Որովհետև, թեպետև ոչ այն կարգով, բայց և այնպես իսկական ձևով... Միայն թե տես, հա՞, թե որ պասին է ընկել... աստվա՞ծ ազատի, և՛ կծաղրեմ, և՛ կհալածեմ։

Խորհրդի կանչեցին նաև Ուլիտուշկային։ Սկզբում իսկական գործի մասին խոսեցին՝ ինչ անեն և ինչպես անեն, հարկավոր չի՞ արդյոք հոգնա անել կամ օծանելիքով փորը շփել, հետո նորից սիրած թեմային դարձան ու սկսեցին մատներով հաշվել ու միշտ էլ պաս օր էր դուրս գալիս։ Եվպրակսեյուշկան լալայի պես կարմրում էր, բայց չէր ժխտում, այլ պատճառ էր բռնում իր ենթակա վիճակը։

— Ինձ ի՞նչ կա որ,— ասում էր նա։— Իմ գործն այն է, ինչպես «նրանք» են ուզում, թե որ բարինը հրամայի, մենք կարո՞ղ ենք նրա հրամանին հակառակ գնալ։

— Դե, դե, սուսիկ-փուսիկ, պոչդ մի կծկիր,— կատակում էր Արինա Պետրովնան,— ինքդ էլ անպայման...

Մի խոսքով ասած, կանայք զբաղվեցին այդ գործով քեֆներն ուզածին չափ։ Արինա Պետրովնան իր անցյալից բազմաթիվ դեպքեր վերհիշեց և, իհարկե, առիթը բաց չթողեց պատմել գրանց մասին։ Սկզբում պատմեց իր հղիությունների մասին։ Ինչպես տանջվեց Ստյոպկա-տխմարի ժամա-

նակ, ինչպես Պավել Վլադիմիրիչի ժամանակ ճանապարհին փոխվող կառքերով Մոսկվա գնաց, որպեսզի դուբրովինյան աճուրդը բաց չթողնի, իսկ հետո այդ պատճառով քիչ մնաց մյուս աշխարհը գնար և այլն, և այլն։ Բոլոր ծնընդաբերություններն էլ մի որևէ բանով նշանավոր էին, մեկը միայն հեշտ անցավ — դա Խուդուշկայի ծնունդն էր։

— Ուղղակի նույնիսկ այ այսքան էլ չտանջվեցի,— ասում էր նա։— Նստել ու մտածում եմ, տե՞ր աստված, միթե ես հղի եմ։ Իսկ երբ ժամանակը հասավ, մի բոպեով ես այսպես պառկեցի մահճակալի վրա և արդեն ինքս էլ չիմացա ինչպես՝ ազատվեցի։ Ամենից հեշտ ծնված որդին էր դա ինձ համար։ Ամենի՞ց, ամենի՞ց հեշտ։

Հետո սկսեցին պատմություններ սպասավոր աղջիկների մասին. քանիսին նա ինքն էր «բռնել», քանիսին վստահելի մարդկանց և գլխավորապես Ուլիտուշկայի միջոցով էր բռնել։ Ծերունական միտքը զարմանալի պարզությամբ պահպանել էր այդ հիշողությունները։ Իր ողջ գորշ, ամբողջովին մանր ու խոշոր ժլատությամբ կլանված անցյալում, սիրային կապ ունեցող սպասավոր աղջիկներին հետամտելը միակ ռոմանտիկ տարրն էր, որն ինչ-որ կենդանի լար էր շոշափում։

Դա յուրատեսակ վիպասանություն էր տխուր ամսագրում, ուր ընթերցողն սպասում է հանդիպելու չոր մառախուղների և Օվիդիոսի[57] թաղման մասին եղած հետազոտություններին, և հանկարծ դրանց փոխարեն կարդում է՝ սլանում է անա եռաձիև անվեհեր... Աղախնանոցի պարզամիտ ռոմանների վախճանը սովորաբար չափազանց խիստ և անգամ անագորույն էր լինում (հանցավոր աղջկան ամուսնացնում էին հեռավոր գյուղում, անպայման մեծ ընտանիք ունեցող այրի գյուղացու հետ. հանցավոր տղամարդուն անասնապահ էին դարձնում կամ զինվոր էին ուղարկում), բայց վախճանի մասին եղած հիշողությունները մի տեսակ շնչվել էին (կուլտուրական մարդկանց հիշողությունն իրենց անցյալ տարիքների մասին ընդհանրապես ներողամիտ է), իսկ «սիրային խարդավանքին» հետամտելու պրոցեսը մինչև այժմ էլ կանգնած էր աչքերի առաջ կարծես կենդանի։ Եվ հասկանալի է։ Այդ պրոցեսը վաղուց անտի տարվում էր նույնպիսի հափշտակիչ հետաքրքրությամբ, ինչպիսի հետաքրքրությամբ այժմ ֆելիետոնային վեպն է կարդացվում, որի մեջ հեղինակը հերոսների փոխադարձ փափագը փոխանակ միանգամից հաջողությամբ պսակելու, ամենից պաթեթիկ տեղում կետ է դնում ու գրում է՝ շարունակությունը հետո։

— Շատ տանջանքներ եմ կրել ես դրանց հետ,— պատմում էր Արինա Պետրովնան։— Այնպիսին կար, որ մինչև վերջին բոպեն չէր ընկճվում, շողոքորթում էր, շարունակ հույս ուներ խաբել։ Բայց ինձ, սիրելիս, խաբել չես կարող. ես ինքս այդ գործերում շուն կերած եմ,— ավելացրեց նա համարյա դաժան, կարծես մեկին սպառնալով։

Վերջապես հետևեցին պատմություններ, այսպես ասած, քաղաքական բնույթի հղիության բնագավառից, որոնց նկատմամբ Արինա Պետրովնան հանդիսանում էր արդեն ոչ թե դատաժող, այլ ծածկող ու խրախուսող։

Այդպես, օրինակ, պապենկա Պյոտր Իվանիչը, յոթանասունամյա զառամյալ մի ծերունի, նույնպես «սիրունիկ» ուներ, և որը նույնպես հանկարծ հղիացավ և հարկավոր էր, վերին նկատառումներով, այդ հղիությունը ծերունուց թաքցնել։ Իսկ ինքը, Արինա Պետրովնան հակառակի պես այդ ժամանակ կռված էր Պյոտր Պետրովիչի եղբոր հետ, որը նույնպես, ինչ-որ քաղաքական նկատառումներով, հետամտել էր այդ հղիությանը և ուզում էր ծերուկի աչքերը բաց անել «սիրունիկի» նկատմամբ։

— Եվ ինչ ես դու կարծում, համարյա պապենկայի աչքերի առաջ այդ ամբողջ գործողությունը կատարեցինք։ Քնել է ծերունին իր ննջարանում, իսկ մենք կողքին մեր գործին ենք։ Շշուկով, ոտի մատների վրա ման գալով։ Ես ինքս սեփական ձեռներով սեղմել էի «սիրունիկի» բերանը, որպեսզի չաղաղակի. սպիտակեղենն էլ սեփական ձեռներովս հավաքեցի, իսկ երեխային՝ շատ լավ ու առողջ երեխա էր՝ կառք նստեցրի և ընկեցիկ երեխաների խնամակալական տուն ուղարկեցի։ Այնպես որ եղբայրս, երբ մի շաբաթ անց իմացավ, զարմանք կտրեց՝ ա՞յ քեզ, քույրիկ։

Եղել էր և մեկ ուրիշ քաղաքական հղիություն։ Վարվա-

ռա Միխայլովնա քույրիկի հետ էր բանը պատահել։ Նրա ամուսինը պատերազմ էր գնացել Թուրքերի դեմ, իսկ Վարվառա Միխայլովնան անզգույշ էր վարվել։ Սարսափահար Գոլովլյովո սլացավ՝ փրկի՞ր, քույրիկ։

— Մենք այն ժամանակ թեպետ կռված էինք իրար հետ, սակայն ես ցույց էլ չտվեցի, ընդունեցի ինչպես հարկն է, մխիթարեցի, հանգստացրի և հյուրասիրելու անվան տակ այնպես վերջացրի գործը, որ ամուսինը գերեզման իջավ առանց մի բան իմանալու։

Այսպես պատմում էր Արինա Պետրովնան, և, պետք է ճշմարիտն ասել, որ հազվագյուտ պատմիչ է այդպիսի ուշադիր ունկնդիրներ գտել իր համար։ Եվպրակսեյուշկան աշխատում էր ոչ մի խոսք բաց չթողնել, կարծես նրա առաջով ակներև կերպով ինչ-որ զարմանալի կախարդական հեքիաթի վճռական փոխակերպումներն էին անցնում։ Իսկ ինչ վերաբերում է Ուլիտուշկային, ապա նա, որպես պատմածների մեծ մասի մասնակիցը, շրթունքներն էր միայն ծպպացնում։

Ուլիտուշկան նույնպես փթթել էր ու հանգստացել։ Անհանգիստ էր նրա կյանքը։ Պատանեկական հասակից սկսած նա այրվում էր ճորտական փառասիրությամբ և քուն թե արթուն երազում էր, ինչպես անի, որ պարոններին ծառայի ու իր նմանների վրա իշխի,— և միշտ էլ անհաջող։ Պատահում էր, հենց նոր էր ոտքը բարձրացնում մի աստիճան վեր դնելու, որ նրան այնտեղից կարծես մի անտեսանելի ուժ թափով ցած էր նետում ու կրկին ուղղակի տարտարոսն էր գըցում։ Աղայական օգտակար ծառայի բոլոր հատկություններն ուներ նա կատարելությամբ՝ նենգամիտ էր, շարախոս և միշտ պատրաստ ամեն տեսակ դավաճանության, բայց միևնույն ժամանակ տառապում էր ինչ-որ անզուսպ հաճոյակատարությամբ, որը նրա ամբողջ նենգամտությունը ոչընչության էր դատապարտում։ Անցյալներում Արինա Պետրովնան սիրով օգտվում էր նրա ծառայությունից՝ աղախնանոցում հետաքննություն կատարելու կամ ընդհանրապես որևէ կասկածելի գործ ամբողջացնելու, բայց երբեք չէր գնահատում նրա արժանիքները և թույլ չէր տալիս որևէ լուրջ աշխատանքի։ Դրա հետևանքով էլ Ուլիտկան և՛ գանգատվում էր, և՛

լեզվով խայթում, բայց նրա գանգատներին ուշադրություն չէին դարձնում, որովհետև բոլորին հայտնի էր, որ Ուլիտկան շար աղջիկ է, իսկույն պատրաստ է քեզ դժոխքն ուղարկել, բայց մի րոպեից, մատով միայն հրապուրիր նրան, նա նորից վազ կտա կգա, ետևի թաթերի վրա կկանգնի։ Այդպես էլ շարշարվում էր նա, շարունակ աշխատում էր մի բանի հասնել, սակայն երբեք ոչ մի բանի չկարողացավ հասնել մինչ այն ժամանակ, երբ ճորտատիրության վերացումը վերջնականապես վերջ տվեց նրա ճորտական փառասիրությանը։

Երիտասարդության օրերին նույնիսկ այնպիսի դեպք պատահեց, որը նրան շատ լուրջ հույսեր էր ներշնչում։ Գոլովլյովո կատարած այցելություններից մեկի ժամանակ Պորֆիրի Վլադիմիրիչը կապ հաստատեց նրա հետ և նույնիսկ, ինչպես ասում էր գոլովլյովյան ավանդությունը, նրանից երեխա ուներ, որի համար և երկար ժամանակ Արինա Պետրովնան զայրացած էր Իուդուշկայի վրա։ Պահպանվո՞ւմ էր այդ կապն արդյոք հետագայում, Իուդուշկայի մյուս անդամներին հայրենական տունը այցելելիս, հայտնի չէ։ Բայց համենայն դեպս, երբ Պորֆիրի Վլադիմիրիչը վերջնականապես փոխադրվեց Գոլովլյովո ապրելու, Ուլիտուշկայի երազանքները խորտակվեցին ամենավիրավորական ձևով։ Իուդուշկայի գալուց անմիջապես հետո Ուլիտուշկան վազեց նրա մոտ բամբասանքների մի ամբողջ կույտով, որոնց մեջ Արինա Պետրովնան մեղադրվում էր համարյա խարդախության մեջ, բայց «բարինը» բամբասանքները լսեց բարեհաճությամբ, Ուլիտուշկային վերաբերվեց, այնուամենայնիվ, սառը և նրա նախկին «արժանիքները» չվերհիշեց։ Ուլիտուշկան, հաշիվների մեջ խաբված ու վիրավորված, նետվեց Դուբրովինո, ուր Պավել Վլադիմիրիչ եղբայրը, դեպի Պորֆիրի Վլադիմիրիչ եղբայրն ունեցած ատելությունից, սիրով ընդունեց նրան և նույնիսկ տնտեսուհի դարձրեց։ Այստեղ նրա դրությունը կարծես բարվոքվեց։ Պավել Վլադիմիրիչը վերնահարկում նստում ու գավաթ գավաթի ետևից խմում էր, իսկ Ուլիտուշկան առավոտից մինչև երեկո ժրաջան վազվզում էր նկուղները, մառանները, բանալիներն էր զնգզնգացնում, բարձրաձայն լեզվին էր տալիս և նույնիսկ որոշ հակառակությունները

ներ սկսեց Արինա Պետրովնայի հետ, որին քիչ մնաց աշխարհից հալածեր։

Սակայն Ուլիտուշկան շատ ավելի էր սիրում ամեն տեսակի դավաճանությունները, որպեսզի խաղաղության մեջ վայելեր իրեն բաժին ընկած լավ կյանքը։ Այդ այն ժամանակ էր, երբ Պավել Վլադիմիրիչն արդեն այնքան էր խմում, որ կարելի էր որոշ հույսեր ունենալ այդ մշտական հարբեցողության վախճանի նկատմամբ։ Պորֆիրի Վլադիմիրիչն հասկացավ, որ գործերի այդպիսի ընթացքի ժամանակ Ուլիտուշկան անշնահատելի գանձ է ու կրկին նրան իր կողմը գրավեց։ Գոլովլյովոյից հրաման տրվեց նրան ոչ մի քայլ չհեռանալ ընտրած զոհի կողքից, ոչ մի բանում չհակառակել նրան, նույնիսկ Պորֆիրի Վլադիմիրիչի նկատմամբ ատելություն ցույց տալ, միայն թե ամեն միջոցով խափանել Արինա Պետրովնայի միջամտությունը։ Դա մեկն էր ազգակցական այն շարագործություններից, որոնց դիմում էր Իուդուշկան ոչ թե լուրջ կշռադատության հետևանքով, այլ անում էր ինքնին, որպես շատ սովորական արարք։ Ավելորդ է ասել, որ Ուլիտուշկան հանձնարարությունը կատարում էր ճշտորեն։ Պավել Վլադիմիրիչը չէր դադարում ատել եղբորը, բայց որչափ շատ էր ատում, այնչափ ավելի շատ էր խմում և այնչափ քիչ ընդունակ էր դառնում լսելու Արինա Պետրովնայի դիտողությունները «կարգադրության» մասին։ Մեռնողի յուրաքանչյուր շարժումը, նրա յուրաքանչյուր խոսքն անհոգաղ հայտնի էր դառնում Գոլովլյովոյում, այնպես որ Իուդուշկան կարող էր գործին լրիվ տեղյակ լինելով, որոշել այն րոպեն, թե երբ պետք է ինքը դուրս գա կուլիսների ետևից և հայտնվի բեմում որպես լիակատար տեր իր ստեղծած դրության։ Եվ նա օգտվեց դրանից, այսինքն հայտնվեց Դուբրովինոյում ճիշտ այն ժամանակ, երբ Դուբրովինոն, այսպես ասած, ինքն էր ընկնում նրա ձեռքը։

Այդ ծառայության համար Պորֆիրի Վլադիմիրիչը բրգյա հագուստի կտոր նվիրեց Ուլիտուշկային, բայց, այնուամենայնիվ, մոտ չթողեց իրեն։ Կրկին գլորվեց Ուլիտուշկան իր բարձունքից տարտարոսը և, թվում էր, այս անգամ այնպես

գլորվեց, որ աշխարհում ոչ ոք այլևս ձեռքով չի անելու նրան, չի կանչելու։

Որպես հատուկ ողորմածություն այն բանի համար, որ նա «ինամել էր եղբորը վերջին րոպեներին», Իուդուշկան նրան մի անկյուն հատկացրեց խրճիթում, ուր ընդհանրապես պատսպարվում էին ճորտատիրության վերացումից հետո մնացած վաստակավոր ապատավորները։ Այնտեղ Ուլիտուշկան վերջնականապես խաղաղվեց, այնպես որ երբ Իուդուշկան ընտրեց Եվպրակսեյուշկային, ապա նա ոչ միայն անհնազանդություն ցույց չտվեց, այլ նույնիսկ առաջինը եկավ «բարինի սիրունիկին» ողջունելու և համբուրեց նրա ուսը։

Ու հանկարծ այն իսկ բոպեին, երբ նա ինքը գիտակցում էր, որ մոռացված է արդեն ու լքված, կրկին բախտը ժպտաց,— Եվպրակսեյուշկան հղիացավ։ Հիշեցին, որ ուր-որ, ապատավորների խրճիթում մի տակն մարդ» է ապրում ու կանչեցին նրան։ Ճշմարիտ է, ինքը բարինը չկանչեց, բայց այն էլ արդեն բավական էր, որ շհակառակեց։ Ուլիտուշկան իր կալվածատուն մանելը նշանավորեց նրանով, որ Եվպրակսեյուշկայի ձեռքից վերցրեց ինքնաեռն ու հպարտությամբ և մտատամբ էլ փքված, տարավ սեղանատուն, ուր այդ ժամանակ հոտած էր Պորֆիրի Վլադիմիրիչը։ Եվ «բարինը» ոչ մի խոսք չասաց։ Ուլիտուշկային թվաց, որ «բարինը» նույնիսկ ժպտաց, երբ մյուս անգամ նույն ինքնաեռը ձեռքին հանդիպեց նրան միջանցքում և դեռ հեռվից ձայն տվեց.

— Բարին, հանեսպա՛ռհ, թե չէ կխաշե՛մ։

Արինա Պետրովնայի կողմից հրավիրվելով ընտանեկան խորհրդի, Ուլիտուշկան որոշ ժամանակ կոտրատվում և չէր ուզում նստել։ Բայց երբ Արինա Պետրովնան փաղաքշական բղավեց վրան.

— Նստի՛ր, նստի՛ր, կարիք չկա օյինբազություն անելու, թագավորը մեզ բոլորիս հավասար է գտնվում, նստիր,— ապա նա նստեց սկզբում ուստուփուս, բայց հետո արդեն լեզուն էլ բացեց։

Այդ կինը նույնպես վերհիշում էր։ Շատ ամեն տեսակի վնասներ էր կուտակվել նրա ուղեղում նախկին ճորտական պրակ-

տիկայից։ Սպասավոր աղջիկների սիրային արարքներին հետապնդելու մեծ զգուշություն պահանջող հանձնարարություններ կատարելուց անկախ, Ուլիտուշկան գոլովլյովյան տան դեղագործն ու բուժակն էր։ Իր կյանքում քանի՞-քանի յախու էր գցել, ծծուկ էր դրել արյուն քաշելու, մանավանդ հոգնա։ Հոգնա էր արել նա և՛ ծեր բարին Վլադիմիր Միխայլիչին, և՛ պառավ տիրուհի Արինա Պետրովնային, և՛ երիտասարդ պարոններին բոլորին և այդ ամենի մասին շնորհակալ հիշողություններ էր պահել։ Եվ այժմ ահա այդ հիշողությունների համար համարյա անծայրածիր դաշտ էր ներկայանում...

Գոլովլյովյան տունը մի տեսակ խորհրդավոր կենդանություն ստացավ։ Արինա Պետրովնան շարունակ ժամանում էր Պոգորելկիից «բարի որդու» մոտ և նրա հսկողության տակ գործունյա պատրաստություններ էր գնում, որին առայժմ դեռևս անուն չէր տրվում։ Թեյից հետո բոլոր երեք կանայք հավաքվում էին Եվպրակսեյուշկայի սենյակում, տնական մուրաբա էին ուտում, դուրաչկի էին խաղում և մինչև աքաղաղների կանչելը անձնատուր էին լինում հիշողություններին, որոնցից «սիրունիկն» երբեմն սաստիկ կարմրում էր։ Յուրաքանչյուր չնչին պատճառ առիթ էր հանդիսանում նոր ու նոր հիշողությունների։ Մորու մուրաբա է մատուցում Եվպրակսեյուշկան՝ Արինա Պետրովնան պատմում է, ինչպես նա Սոնկա աղջկանով հղի եղած ժամանակ մորու հոտն անգամ տանել չէր կարողանում։

— Տուն են բերում թե չէ, ես իսկույն զգում եմ, որ բերեցին։ Եվ ամբողջ ձայնով մեկ աղաղակում եմ՝ դո՛ւրս, դու՛րս տարեք անիծյալը։ Իսկ հետո, երբ ազատվեցի, նորից ոչինչ, կրկին սիրեցի։

Խավիար է բերում Եվպրակսեյուշկան ընթրիքի ժամանակ՝ Արինա Պետրովնան խավիարի մասին էլ դեպք է հիշում։

— Այ խավիարի նկատմամբ էլ ինձ հետ մի դեպք պատահեց, ուղղակի տարօրինակ։ Այն ժամանակ ես մեկ թե երկու ամիս էր, ինչ ամուսնացել էի և հանկարծ այնպե՞ս խավիար ուզեցի, որ այն է թե՝ այս րոպեիս հան ու տուր։ Պատահում էր, սուսուփուս մտնում էի մառանը և ուտում էի

հա ուտում։ Հարցնում եմ ամուսնուս՝ այդ ինչ է նշանակում, Վլադիմիր Միխայլիչ, որ ես այսքան շատ խավիար եմ ուտում։ Իսկ նա մի տեսակ ժպտաց ու ասում է. «Դու, ախր, բարեկամս, հղի ես»։ Եվ ճիշտ, դրանից ուղիղ ինն ամիս անց ես ազատվեցի, ծնելով Ստյոպկա-տխմարին։

Պորֆիրի Վլադիմիրիչը մինչ այդ շարունակում էր նախկին խորհրդավորությամբ վերաբերվել Եվպրակսեյուշկայի հղիությանը և նույնիսկ ոչ մի անգամ որոշակի չարտահայտվեց այդ գործին իր ունեցած առնչության մասին։ Շատ բնական է, որ դա ճնշում էր կանանց, խանգարում էր նրանց զեղումներին, ուստի Իուդուշկային համարյա բոլորովին մի կողմ քշեցին և առանց քաշվելու դուրս էին անում, երբ նա երեկոները, լույսի վրա Եվպրակսեյուշկայի սենյակն էր գալիս։

— Գնա, գնա, կտրիճ,— ուրախ ասում էր Արինա Պետրովնան,— դու քո գործը արել ես, հիմա մեր գործն է սկրսվում, կանացի։ Մեր փողոցումն է տոն։

Իուդուշկան հնազանդ հեռանում էր և թեպետ ըստ այդու առիթը բաց չէր թողնում սիրելի բարեկամ մամենկային կշտամբելու, որ նա անողորմ է դարձել իր նկատմամբ, բայց հոգու խորքում շատ գոհ էր, որ իրեն անհանգիստ չեն անում և որ Արինա Պետրովնան ջերմ մասնակցություն է ունենում իր համար դժվարին պարագային։ Եթե այդ մասնակցությունը չլիներ, աստված գիտե, թե ինչեր պիտի նախաձեռներ ինքը, որպեսզի ծածկեր այդ խայտառակ դեպքը, որի մասին հիշելուց միայն նա կուչ էր գալիս ու թքում։ Իսկ այժմ, շնորհիվ Արինա Պետրովնայի փորձառությանը և Ուլիտուշկայի ճարպկությանը, նա հույս ուներ, որ «փորձանքը» կանցնի առանց լույս աշխարհ ընկնելու և որ ինքը, գուցե, հետևանքի մասին իմանա միայն այն ժամանակ, երբ ամեն ինչ արդեն վերջացած լինի։

* * *

Պորֆիրի Վլադիմիրիչի հաշիվները, սակայն, չարդարացան։ Նախ տեղի ունեցավ Պավել Վլադիմիրիչի աղետը, իսկ քիչ ժամանակ անց նրան հետևեց և Արինա Պետրովնայի

մահը։ Ստիպված էր ինքն անձամբ հատուցելու, և այն էլ առանց որևէ գարշելի կոմբինացիայի հույս ունենալու։ Չէր կարելի Եվպրակսեյուշկային, իբրև թե հարկավոր չլինելու պատճառով, ետ ուղարկել ծնողների մոտ, որովհետև Արինա Պետրովնայի միջամտության շնորհիվ գործն արդեն շատ էր հեռու գնացել և հայտնի էր բոլորին։ Ուլիտուշկայի եռանդի վրա էլ հույս դնել չէր կարելի, որովհետև թեպետև նա ճարպիկ աղջիկ էր, բայց եթե մարդ նրան վստահելու լիներ, ապա հետո թերևս և դատական քննիչից խույս տալ չկարողանար։ Կյանքում առաջին անգամ Իուդուշկան լուրջ և անկեղծ կերպով տրանջաց իր մենակությունից, առաջին անգամ աղոտ կերպով հասկացավ, որ իրեն շրջապատող մարդիկ հասարակ ոչընչություն չեն, որոնք պիտանի են միայն նրա համար, որպեսզի նրանց հիմարացնեն։

— Եվ ի՞նչ կլիներ, թե որ մի քիչ էլ էր համբերել,— գանգատվում էր նա գաղտնաբար սիրելի բարեկամ մամենկայից,— ամեն բան կարգի բերեր ինչպես հարկն է, խելոք-խելոք, խաղաղ ու հանգիստ, հետո արդեն տերն իր հետ։ Մեռնելու ժամանակը որ հասավ, ի՞նչ կարող ես անել։ Ափսոս էր պառավը, բայց եթե աստծուն այդպես է հաճելի, թե՛ մեր արցունքները, թե՛ բժիշկները, թե՛ դեղորայքը մեր, և՛ մենք բոլորս — ամեն ինչ աստծու կամքի առաջ անուժ է։ Ապրե՞ց պառավը, օգտվեց կյանքից, ինքն իր ողջ կյանքում որպես տիրուհի ապրեց։ Երեխաներին էլ աղա դարձրեց։ Ապրեց, է՛լ հերի՛ք է։

Եվ, ըստ սովորության, նրա խրարանցնող մտքերը, որ չէր սիրում կանգ առնել որևէ գործնական դժվարություն ներկայացնող առարկայի վրա, անմիջապես մի կողմ էր թեքվում, դեպի ավելի հեշտ առարկա, որի առթիվ կարելի էր անվերջ ու անարգել դատարկախոսել։

— Եվ ինչպե՞ս մեռավ, միայն արդարներն են այդպիսի մահվան արժանանում,— ասում էր նա ինքն իրեն, թեպետև չհասկանալով, ասում է արդյոք, թե ճշմարտություն է ասում։— Առանց հիվանդության, առանց խռովքի... այնպե՛ս։ Հոգոց հանեց—Նայենք, իսկ նա այլևս չկա։ Ա՜խ, մամենկա, մամենկա։ Ե՛վ ժպիտը դեմքին, և՛ այտերը կաթ-

միր... Ե՛վ ձեռքն այնպես էր դարսած, կարծես օրհնել է ուզում, և աչքերը փակեց... ցտեսություն։

Եվ հանկարծ, կարեկցական խոսքերի ամենազեղուն ժամանակ, նորից կարծես խոցում են նրան։ Կրկին այդ գարշելիությունը... թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ։ Դե ինչ արժեր մամենկային մի քիչ ժամանակ էլ սպասել։ Ընդամենը մի ամիս, գուցեև քիչ է մնացել,— բայց ահա, ոչինչ անել չես կարող։

Միառժամանակ փորձեց նա Ուլիտուշկայի հարցերին նույնպես ժխտողական պատասխան տալ, ինչպես ժխտում էր սիրելի բարեկամ մամենկային՝ չգիտե՛մ, ես ոչինչ չգիտեմ։ Բայց Ուլիտուշկային, որպես լպիրշ և ըստ այդու իր ուժը զգացող կնոջ, այդպիսի ձևերով մոտենալն այնքան էլ հեշտ չէր։

— Հապա ե՞ս գիտեմ, ե՞ս եմ փորը ուռցրել, ինչ է,—առաջին իսկ պահից այնպես կտրեց Ուլիտուշկան նրան, որ Իուդուշկան հասկացավ, որ այսուհետև իր սեփական շնության հետևանքներին օրպես կողմնակի դիտող նայելու հաշիվներն իր համար վերջնականապես խորտակվեցին։

Փորձանքն ավելի ու ավելի էր մոտենում, անխուսափելի, համարյա շոշափելի փորձանքը։ Նա հետաքրքրվում էր իրեն ամեն տեսակ և, ինչն ամենից վատն էր, ջլատում էր նրա դատարկությունը։ Նա ամեն հնարավոր ուժ գործ էր դնում, որպեսզի տրորի, ջախջախի այդ պատկերացումը, խեղդի դատարկ խոսքերի հեղեղի մեջ, սակայն դա մասամբ էր միայն հաջողվում նրան։ Փորձ արեց մի կերպ թաքնվել վերին բարեհաճության օրենքների անճառելիության տակ և, ըստ սովորության, այդ թեմայից ամբողջ մի կծիկ արեց, որն անվերջ քանդում էր, խճճելով դրան և՛ մարդու գլխից չբնկնող մազի առակը, և՛ ավազի վրա կառուցված շենքի լեգենդը, բայց նույն այն րոպեին, երբ դատարկ մտքերն անարգել մեկը մյուսի ետևից ուր-որ առեղծվածային անդունդն էին գլորվում, երբ կծիկի անվերջ քանդումն արդեն միանգամայն ապահովված էր թվում, հանկարծ, կարծես անկյունից, ներս էր սպրդում մի բառ և անմիջապես կտրում էր թելը։ Ավա՜ղ, այդ բառը «շնանալ» բառն էր և այնպիսի գոր-

ծողություն էր նշանակում, որը Իուդուշկան ինքն իր առաջ անգամ խոստովանել չէր ուզում։

Եվ ահա, երբ մոռանալու և սպանելու ապարդյուն փորձերից հետո վերջապես ակնհայտնի դարձավ, որ նա բռնված է, տխրություն իջավ վրան։ Նա սկսում էր ման գալ սենյակում, ոչ մի բանի մասին չմտածելով, այլ միայն զգալով, որ իր ներսը տնքում է ու դողում։

Դա միանգամայն նոր սանձ էր, որն առաջին անգամ կյանքում ճանաչեց նրա դատարկամտությունը։ Մինչ այդ, որ կողմ էլ որ գնալու լիներ նրա դատարկաբան երևակայությունը, ամեն տեղ սահմաններից ազատ տարածության էր հանդիպում, որի ընթացքում ամենատեսակ կոմբինացիաներ էին գոյանում։ Նույնիսկ Վոլոդկայի, Պետկայի կործանումը, նույնիսկ Արինա Պետրովնայի մահը նրա դատարկամտությանը դժվարություն չպատճառեցին։ Դրանք սովորական, հանրաճանաչ փաստեր էին, որոնց գնահատության համար գոյություն ունեին և հանրաճանաչ, վաղուց ի վեր պայմանավորված հանգամանքներ։ Հոգեհանգիստներ, քառասնօրյակներ, մեռելաճաշ և այլն,— այդ բոլորը նա, սովորության համաձայն, կատարեց ինչպես հարկն էր և այդ բոլորով, այսպես ասած, արդարացրեց իրեն թե՛ մարդկանց և թե՛ նախախնամության առաջ։ Բայց շնացո՞ւմը... ի՞նչ է դա։ Չէ՞ որ դա ամբողջ կյանքի դիմակազերծումն է, դա նրա ներքին ստի մերկացումն է։ Թեպետ առաջ էլ նրան բանսարկու էին համարում, և նույնիսկ «արյունարբու», բայց մարդկային բոլոր այդ համբավներն այնքան քիչ իրավական աստառ ունեին, որ նա կարող էր լիակատար հիմքով հակաճառել՝ ապացուցի՛ր։ Եվ հանկարծ հիմա... շնացո՛ղ։ Շնացող մերկացված, շնացող անտարակուսելի (Արինա Պետրովնայի շնորհիվ նա նույնիսկ ոչ մի միջոց (ա՜խ, մամենկա, մամենկա) ձեռք չառավ, նույնիսկ ստելու ժամանակ չունեցավ), և այն էլ դեռ «պասին»... թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ։

Այդ, ինքն իր հետ ունեցած ներքին զրույցներում, որչափ էլ խճճված լիներ նրանց ներքին բովանդակությունը, նույնիսկ խղճի արթնացման նման բան էր նկատվում։ Սակայն հարց էր առաջանում՝ կընթանա՞ արդյոք Իուդուշկան

այդ ճանապարհով, թե դատարկամտությունն այստեղ ևս իր նախկին ծառայությունը կմատուցի նրան և նոր անցք բաց կանի նրա համար, որի շնորհիվ նա, ինչպես միշտ, կկարողանա ջրից դուրս գալ առանց թրջվելու։

Մինչ Իուդուշկան այսպիսով տառապում էր ներքին դատարկության ծանրության տակ, Եվպրակսեյուշկայի մեջ կամաց-կամաց միանգամայն անսպասելի ներքին հեղաշրջում էր տեղի ունենում։ Մայր դառնալն, ըստ երևույթին, քանդում էր նրան կաշկանդող մտավոր կապանքները։ Մինչև այժմ նա ամեն ինչի անտարբեր էր վերաբերվում, իսկ Պորֆիրի Վլադիմիրիչի վրա նայում էր որպես «բարինի», որի հետ հարկադրական հարաբերությունների մեջ էր գտնվում։ Այժմ նա առաջին անգամ ինչ-որ բան հասկացավ, ինչպես օրինակ, որ նա ինքն ունի իր գործը, որի մեջ նա «ինքն է մեծը» և ուր չի կարելի անարգել կերպով քմահաճ վարվել իր հետ։ Դրա հետևանքով նույնիսկ նրա դեմքի սովորաբար բութ և անհեթեթ արտահայտությունը մի տեսակ իմաստավորվեց ու պայծառացավ։

Արինա Պետրովնայի մահը նրա կիսաանգիտակցական կյանքում առաջին փաստն էր, որը զգաստացնող ազդեցություն ունեցավ նրա վրա։ Որչափ էլ յուրատեսակ լիներ պառավ տիրուհու վերաբերմունքը Եվպրակսեյուշկայի առաջիկա մայրությանը, սակայն նրանցում անտարակույս կարեկցություն էր զգացվում, այլ ոչ թե միայն գարշալից նողկալի խուսափում, որպիսին հանդես էր գալիս Իուդուշկայի կողմից։ Ուստի Եվպրակսեյուշկան սկսում էր Արինա Պետրովնայի մեջ պաշտպանի նման ինչ-որ բան տեսնել, կարծես կասկած ունենալով, որ իր վրա առաջիկայում ինչ-որ հարձակում է պատրաստվում։ Այդ հարձակման պատկերացումը հետապնդում էր նրան այնչափ համառորեն, որչափով որ դա գիտակցությամբ չէր լուսավորված, այլ միայն մշտապես տրտում խռովքներով էր լցնում նրա ամբողջ էությունը։ Միտքն այնչափ հզոր չէր, որպեսզի ուղղակի մատնացույց աներ նրան, թե որտեղից է գալու այդ հարձակումը և ինչում է կայանալու այն, բայց բնազդներն այնչափ արդեն հուզվել էին, որ Իուդուշկային տեսնելիս անգիտակցական վախ էր

զգացվում։ Այո, հարձակումն այդտեղից է գալու,— լսվում էր նրա սրտի բոլոր գաղտնարաններում։ Այնտեղից, աճյունով լցված այդ գագաղից, որի մոտ նա մինչ այժմ հասարակ վարձկան էր և որն, ինչ-որ հրաշքով, դարձավ նրա երեխայի հայրն ու վեհապետը։ Այն զգացումը, որն արթնանում էր նրա մեջ այս վերջին մտքի ժամանակ, նման էր ատելության և անպայման ատելության կփոխվեր, եթե այլ բաներով չտարվեր Արինա Պետրովնայի կարեկից վերաբերմունքի շնորհիվ, որն իր բարեհոգի շաղակրատանքով ժամանակ չէր տալիս նրան մտածելու։

Բայց ահա Արինա Պետրովնան սկզբում հեռացավ Պորֆիրկի և վերջապես առհավետ հանգավ։ Ահը պատեց Եվպրակսեյուշկային։ Լռությունը, որի մեջ թաղվեց գոլովլյովյան տունը, խզվում էր միայն ոտների քստքստոցով, որն ազդարարում էր, թե Իուդուշկան գաղտագողի ու խալաթի փեշերը հավաքած, թափառում է միջանցքում ու դռների մոտ ականջ է դնում։ Երբեմն սպասավորներից մեկնումեկը բակից ներս է վազում, շխկացնում է աղախնանոցի դուռը, ու կրկին լռությունն է սողում բոլոր անկյուններից։ Մեռյալ լռություն, որ ամբողջ էությունը սնահավատ մարմաջող թախիծով է լցնում։ Բայց որովհետև այդ ժամանակ մոտենում էին Եվպրակսեյուշկայի ծննդաբերության օրերը, ապա նրա համար տնտեսական հոգսեր անգամ գոյություն չունեին, որոնք առաջ այնքան էին հաղնեցնում ֆիզիկապես, որ երեկոյան կողմն արդեն նա քնած վիճակում էր գտնվում։ Եվպրակսեյուշկան փորձ արեց փայփայել, փաղաքշել Պորֆիրի Վլադիմիրիչին, սակայն այդ փորձերն ամեն անգամ կարճառա, բայց զայրալից տեսարաններ էին առաջ բերում, որոնք Եվպրակսեյուշկայի անզարգացած բնավորության վրա անգամ տառապագին ազդեցություն էին ունենում։ Ուստի նա ստիպված էր նստել ձեռները ծալած և մտածել, այսինքն անհանգստանալ։ Իսկ անհանգստանալու ադիթներն օրեցօր ավելանում էին, որովհետև Արինա Պետրովնայի մահն արձակեց Ուլիտուշկայի ձեռները և գոլովլյովյան տուն մտցրեց բամբասանքների նոր տարր, որն այսուհետև դարձավ միակ կենդանի գործը, որով հանգստանում էր Իուդուշկայի հոգին։

Ուլիտուշկան հասկացավ, որ Պորֆիրի Վլադիմիրիչը վախենում է և որ այդ սնամեջ ու ստախոսության վարժված բնավորության մեջ վախն ու ատելությունը շատ մոտ են կանգնած միմյանց։ Բացի դրանից, նա շատ լավ գիտեր, որ Պորֆիրի Վլադիմիրիչն ընդունակ չէ ոչ միայն նվիրվածության, այլև նույնիսկ հասարակ խղճահարության, որ նա Եվպրակսեյուշկային այն պատճառով է միայն պահում, որ նրա շնորհիվ տան տնտեսությունն առաջ է գնում, առանց դուրս գալու մեկընդմիշտ սահմանված ընթացքից։ Ապահովվելով այդ ոչ բարդ տվյալներով, Ուլիտուշկան լիակատար հնարավորություն ուներ ամեն րոպե սնուցանել ու փայփայել ատելության այն զգացումը, որը բորբոքվում էր ամեն անգամ Իուդուշկայի հոգում, երբ որևէ բան հիշեցնում էր նրան մոտալուտ «փորձանքի» մասին։

Շուտով Եվպրակսեյուշկային ամեն կողմից բամբասանքների մի ամբողջ ցանց պատեց։ Ուլիտուշկան շարունակաբար «զեկուցում էր» բարինին։ Մեկ գալիս գանգատվում էր մթերքները գործադրելու անիմաստ կարգադրության մասին.

— Էս ինչ է, բարին, ինչքան շատ մթերք է բանեցվում ձեր տանը։ Քիչ առաջ մառանը գնացի աղած միս բերելու. միտք եմ անում, ինչքան ժամանակ է, որ նոր տակառ է բացած, մտիկ տամ՝ տակը երկու, թե երեք կտոր է մնացել։

— Մի՞թե,— աչքերը նրան է հառում Իուդուշկան։

— Թե որ ինքս իմ աչքերով տեսած չլինեի, չէի հավատա։ Նույնիսկ զարմանալի է, թե ո՞ւր է գնում այդքան մթերքը։ Յուղը, ձավարը, վարունգը— բոլո՛ր։ Ուրիշ կալվածատերերի մոտ քաշովին ծառաների համար սագի յուղով են եփում, իսկ մեզ մոտ՝ կովի արդար յուղով։

— Մի՞թե,— համարյա վախեցավ Պորֆիրի Վլադիմիրիչը։

Մեկ գալիս ու պատահաբար սպիտակեղենի մասին է զեկուցում.

— Դուք, բարին, արգելեիք Եվպրակսեյուշկային, իհարկե, աղջկա բան է, անսովոր գործ է, բայց վերցնենք թեկուզ սպիտակեղենը... Կույտերով սպիտակեղեն է փչացնում սա-

վանների ու բարուրի համար, իսկ սպիտակեղեներ բոլորն էլ նուրբ տեսակի է։

Պորֆիրի Վլադիմիրիչն ի պատասխան աչքերն է միայն փայլատակում, բայց նրա ամբողջ սնամեջ ներքինը շուտ ֆ գալիս այդ խոսքերից։

— Հայտնի՞ բան է, իր երեխային է մեղքանում,— շարունակում է Ուլիտուշկան մեղրածոր լեզվով։— Մտածում է, ով է իմանում թե ինչ է պատահել... Իշխա՞ն է ծնվելու։ Իսկ ի միջի այլոց նրա կոչման տեր երեխան կարող էր և կտավի սավանների վրա քնել...

Երբեմն նա նույնիսկ ուղղակի ծաղրում էր Իուդուշկային։

— Իսկ ինչ էի ուզում ես հարցնել ձեզ, բարին,— սկսում էր նա,— ի՞նչ եք մտադիր անել դուք երեխային։ Որդի եք դարձնելու ձեզ, թե ուրիշների նման որբանոց եք տալու...

Բայց Պորֆիրի Վլադիմիրիչն հենց սկզբից ընդհատում էր հարցն այնպիսի մռայլ հայացքով, որ Ուլիտուշկան լռում էր։

Եվ ահա, ամեն կողմից եռացող ատելության մեջ ավելի ու ավելի էր մոտենում այն բոպեն, երբ փոքրիկ, արտասվող «աստծու ծառայի» աշխարհ գալը որևէ կերպ պիտի լուծեր գոլովլյովյան տանը տիրող բարոյական խառնակությունը և միևնույն ժամանակ ավելացներ տիեզերքը բնակեցնող այլ «աստծու ծառաների» թիվը։

* * *

Երեկոյան յոթ ժամն է։ Պորֆիրի Վլադիմիրիչն արդեն քնել է ճաշից հետո և իր առանձնասենյակում նստած թվերի սյունակներ է գրում թերթերի վրա։ Այս անգամ նրան հետաքրքրում է այն հարցը, թե հիմա ինչքան փող կունենար ինքը, եթե մամենկա Արինա Պետրովնան իր ծնվելու օրը Պյոտր Իվանիչ պապից նվեր ստացած հարյուր մանեթը չյուրացներ, այլ ավանդ գցեր լոմբարդը փոքրահասակ Պորֆիրիի անունով։ Շատ չի ստացվում սակայն, ութ հարյուր ռուբլի ընդամենը։

«Ասենք, մեծ դրամագլուխ չէ,— դատարկամտում էր Իուդուշկան,— բայց և այնպես լավ է, երբ իմանում ես, որ սև

օրվա համար փող ունես։ Պետք եկավ — վերցրիր։ Ոչ ոքից չխնդրեցիր, ոչ ոքի գլուխ չխոնարհեցիր, ինքդ վերցրիր քո սեփականը, պապիդ նվիրած փողը։ Ա՜խ, մամենկա, մամենկա, այդ ինչպես է, որ դուք, բարեկամ իմ, այդպես առանց մտածելու գործ եք բռնել»։

Ավա՜ղ, Պորֆիրի Վլադիմիրիչն արդեն հանգստացել էր այն տագնապներից, որոնք դեռևս քիչ ժամանակ առաջ չլատում էին նրա դատարկամտությունը։ Խղճի յուրատեսակ ձայնը, որ արթնացել էր Եվպրակսեյուշկայի հղիության և Արինա Պետրովնայի անսպասելի մահվան առաջ բերած դժվարությունների հետևանքով, կամաց-կամաց լռեց։ Դատարկամտությունն այստեղ էլ իր սովորական ծառայությունը մատուցեց, և Իուդուշկային վերջիվերջո հաջողվեց, այնուամենայնիվ, արտասվոր ջանքերի օգնությամբ «փոքանքի» պատկերացումը խեղդել անթիվ-անհամար դատարկ խոսքերի մեջ։ Չի կարելի ասել, որ նա որևէ բան գիտակցաբար էր անում, այլ մի տեսակ ինքն իրեն հանկարծ հիշվում էր հին, սիրած ֆորմուլան՝ «ես ոչինչ չգիտեմ, ես ոչինչ չեմ թույլ տալիս, ես ոչինչ չեմ թույլատրում», որին նա մշտապես դիմում էր դժվարին հանգամանքներում և շատ շուտով վերջ դրեց ժամանակավորապես նրան տիրած ներքին խառնաշփոթությանը։ Այժմ նա արդեն առաջիկա ծննդաբերությանը նայում էր որպես իր հետ առնչություն չունեցող գործի, ուստի և նույնիսկ աշխատում էր իր դեմքին անտարբեր ու անթափանց արտահայտություն տալ։ Նա համարյա անտեսում էր Եվպրակսեյուշկային և նույնիսկ անունը չէր տալիս, իսկ եթե երբեմն պատահում էր հարցնել նրա մասին, ապա այսպես էր արտահայտվում. «Իսկ ինչպե՞ս է այն.... դեռ հիվա՞նդ է»։ Մի խոսքով ասած, այնքան ուժեղ դուրս եկավ, որ նույնիսկ Ուլիտուշկան, որը ճորտատիրության դպրոցում բավականաչափ վարժվել էր սրտագիտական գիտությանը, նա էլ անգամ հասկացավ, որ պայքարել այդպիսի մարդու հետ, որը պատրաստ է ամեն բանի և ամեն բանի համաձայն է, ամենևին հնարավոր չէ։

Գոլովլյովյան տունը թաղված է խավարի մեջ, միայն բարինի առանձնասենյակում և մեկ էլ հեռավոր կողքի սե-

նյակում՝ Եվպրակսեյուշկայի մոտ դեռ լույս է շողում։ Խուդուշկայի մասում լռություն է տիրում, որը խզվում է միայն համրիչի հատիկների չխկոցով ու մատիտի խզոցով, որով Պորֆիրի Վլադիմիրիչը թվերի սյունակներ է գրում թղթի վրա։ Եվ հանկարծ ընդհանուր լռության մեջ առանձնասենյակի է խուժում հեռավոր, բայց մորմոքիչ տնքոց։ Խուդուշկան ցնցվում է, նրա շրթունքները վայրկյանապես դողում են, մատիտն անհարկի խազեր է քաշում։

— Հարյուր քսանմեկ մանեթ, ևս տասներկու մանեթ տասը կոպեկ...— շշնջում է Պորֆիրի Վլադիմիրիչը, աշխատելով խեղդել տնքոցից առաջացած անհաճո տպավորությունը։

Սակայն տնքոցները կրկնվում են հաճախ ու հաճախ և վերջապես անհանդիստ են դառնում։ Աշխատանքն այնքան անհարմար է դառնում, որ Խուդուշկան վեր է կենում դրասեղանի մոտից։ Սկզբում նա քայլում է սենյակում, աշխատելով չլսել. բայց հետաքրքրությունը կամաց-կամաց հաղթահարում է ինամիջությանը։ Կամացուկ բաց է անում առանձնասենյակի դուռը, գլուխը կոխում է հարևան սենյակի խավարի մեջ ու սպասողական դիրքով ականջ է դնում։

«Ա՜խ, չլինի թե «Հագեցրու տրտմությունն իմ սրբապատկերի առաջ եղած կանթեղը մոռացել են լուսավորել»,— Դագում է նրա գլխում։

Բայց ահա միջանցքում լսվեց մեկի արագ, անհանգիստ քայլերի ձայնը։ Պորֆիրի Վլադիմիրիչն շտապով գլուխը կրկին ետ քաշեց առանձնասենյակ, զգուշությամբ ծածկեց դուռը և ոտքի մատների վրա վազելով, մոտեցավ սրբապատկերին։ Մի վայրկյանից նա արդեն գտնվում էր «իսկական դիրքում», այնպես որ, երբ դուռը բացվեց և Ուլիտուշկան սենյակ վազեց, ապա գտավ նրան ձեռները կրծքին խաչած աղոթելիս։

— Եվդրակսեյուշկան կարող է հոգին ավանդել աստծուն,— ասաց Ուլիտուշկան, չվախենալով խանգարել Խուդուշկայի աղոթքը։

Բայց Պորֆիրի Վլադիմիրիչը նույնիսկ շուռ չեկավ նրա կողմը, այլ սովորականից ավելի արագ շարժեց շրթունքները և պատասխանի փոխարեն ձեռքը թափահարեց օդում, կարծես ձանձրացնող ճանճերը քշելով։

— Ինչ եք ձեռքներդ թափ տալիս, Եվպրակսեյուշկան վատ է, ասում եմ, կարող է մեռնել,— կոպտորեն պնդեց Ուլիտուշկան։

Այս անգամ Խուդուշկան շուռ եկավ, բայց նրա դեմքն այնպես խաղաղ էր, հեզահամբույր, կարծես նա հենց նոր աստծու հետ առնչվելով. թողել է ամեն մի աշխարհիկ գործ և նույնիսկ չի հասկանում, թե ինչ պատճառով կարող են նրան անհանգիստ անել։

— Թեպետև մեղք է աղոթքի ժամանակ բարկանալ, բայց որպես մարդ, չեմ կարող չկշտամբել՝ քանի անգամ խնդրել եմ անհանգիստ չանել ինձ, երբ աղոթում եմ,— ասաց նա աղոթքի տրամադրությանը համապատասխանող ձայնով, թույլ տալով իրեն, սակայն, օրորել գլուխն ի նշան քրիստոնեական պախարանքի։— Դե, ի՞նչ է պատահել։

— Դե էլ ինչ պատահի, Եվպրակսեյուշկան տանջվում է, ազատվել չի կարողանում։ Կարծես առաջին անգամ եք լսում... ա՜խ դուք, գոնե նայեիք։

— Ի՞նչ նայեմ, բժի՞շկ եմ ես, ինչ է։ Խորհո՞ւրդ տալ կարող եմ, ինչ է։ Եվ ես չգիտեմ էլ ձեր գործերը։ Գիտեմ, որ տանը հիվանդ կա, բայց թե ինչով է հիվանդ, ինչու է հիվանդ, այդ մասին, խոստովանանք լինի, չեմ էլ հետաքրքրվել իմանալու։ Քահանայի ետևից ուղարկել, եթե հիվանդը ծանր է,— ահա այդ ես խորհուրդ տալ կարող եմ։ Ուղարկեցեք տերտերի ետևից, միասին աղոթք արեք, սրբապատկերների կանթեղները լուսավորեք... իսկ հետո մենք տերտերի հետ թեյ կխմենք։

Պորֆիրի Վլադիմիրիչը շատ գոհ էր, որ այդ վճռական րոպեին այդպես կտրուկ արտահայտվեց։ Նա Ուլիտուշկային նայում էր պայծառ ու վստահ հայացքով, կարծես ասում էր՝ հապա այժմ ժխտիր ինձ։ Նույնիսկ Ուլիտուշկան չիմացավ ինչ անել այդ բարեսրտության հանդեպ։

— Գայթք, տեսնեիք,— կրկնեց նա նորից։

— Չեմ գա, որովհետև գալու կարիք չկա։ Թե որ գործի համար լիներ, առանց քո ասելու էլ կգայի։ Թե որ հինգ վերստ հարկավոր լինի գործի համար գնալ — հինգ վերստ կգնամ. տասը վերստ է հարկավոր — տասը վերստ էլ կգնամ։ Սառ-

նամանիք լինի, փոթորիկ լինի, բայց և այնպես կգնամ։ Որովհետև գիտեմ գործ կա, չգնալ չի կարելի։

Ուլիտուշկային թվում էր, որ ինքը քնած է և երազում սատանան ինքն է կանգնել առաջն ու ճոռոմաբանում է։

— Այ քահանայի ետևից ուղարկելն — այդ ճիշտ է։ Դա խելացի կլինի։ Աղոթքը — դու իմանո՞ւմ ես աստվածաշնչում ինչ է գրված աղոթքի մասին։ Աղոթքը հիվանդների բժշկություն է,— ահա ինչ է ասված։ Դե դու այդպես էլ կարգադրություն արա։ Ուղարկեցեք քահանայի ետևից. աղոթեցեք միասին... ես էլ նույն այդ ժամանակ կաղոթեմ... Դուք այնտեղ, սրբապատկերների սենյակում աղոթեցեք, իսկ ես այստեղ, իմ սենյակում աստծու ողորմածությունը կհայցեմ... Ընդհանուր ուժերով, դուք այնտեղ, ես այստեղ — մեկ էլ տեսար աղոթքը տեղ հասավ։

Ուղարկեցին քահանայի ետևից, բայց նախքան նրա գալը, Եվպրակսեյուշկան տանջանքով ու տառապանքով արդեն ազատվեց։ Պորֆիրի Վլադիմիրիչը վազվզուկից ու դռների շրխկոցից, որ հանկարծ բարձրացավ աղախնանոցի կողմից, կարող էր գուշակել, որ ինչ-որ վճռական բան կատարվեց։ Եվ իրոք, մի քանի րոպեից միջանցքում կրկին շտապ քայլեր լսվեցին և դրանից հետո ամբողջ թափով առանձնասենյակ մտավ Ուլիտուշկան, ձեռքին բռնած սպիտակեղենի մեջ փաթաթած փոքրիկ մի արարած։

— Համեցեք, նայեցեք,— հանդիսավոր ձայնով բացականչեց նա, երեխային Պորֆիրի Վլադիմիրիչի դեմքին մոտեցնելով։

Իուդուշկան մի ակնթարթ կարծես տատանվեց, նույնիսկ մարմինը առաջ նետվեց և աչքերում ինչ-որ կայծեր շողացին, բայց դա մի ակնթարթ էր միայն, որովհետև դրանից հետո նա զզվանքով շուռ տվեց դեմքը երեխայից և զույգ ձեռները թափահարեց նրա կողմը։

— Ոչ, ոչ, վախենում եմ ես նրանցից... չեմ սիրում, գնա... գնա,— թոթովեց նա, ամբողջ դեմքով անսահման գարշանք արտահայտելով։

— Բայց դուք գոնե հարցնեիք՝ տղա՞ է, թե աղջիկ,— հորդորում էր նրան Ուլիտուշկան։

— Ոչ, ոչ... կարիք էլ չկա... և իմ գործը չէ դա։ Ձեր գործն է դա, իսկ ես չգիտեմ... Ես ոչինչ չգիտեմ և կարիք էլ չունեմ իմանալու... Հեռացիր ինձանից, ի սեր Քրիստոսի, հեռացի՛ր։

Կրկին երազ ու կրկին սատանա... Ուլիտուշկան նույնիսկ բռնկվեց։

— Իսկ ես ահա կնետեմ բազմոցի վրա... խնամեցեք ինքներդ,— սպառնաց նա։

Բայց Իուդուշկան այնպիսի մարդ չէր, որի վրա կարելի լիներ ազդել։ Այն ժամանակ, երբ Ուլիտուշկան իր սպառնալիքն էր անում, նա դեմքով արդեն սրբապատկերի կողմը դարձավ ու համեստորեն ձեռները վեր առաքեց։ Ըստ երևույթին նա խնդրում էր աստծուն ներել բոլորին՝ և՛ նրանց, «որ գիտակցաբար ու անգիտակցաբար», և՛ նրանց, «որ խոսքով, և՛ գործով, և՛ մտածումներով», իսկ իր համար գոհունակություն էր հայտնում, որ նա ոչ ավազակ է, ոչ կաշառակեր, և ոչ շնացող, և որ աստված իր ողորմածությամբ իրեն արդարների շավիղով է տարել։ Խանդաղատանքից անգամ նրա քիթը շարժվեց, այնպես որ նրան նայող Ուլիտուշկան թքեց ու հեռացավ։

«Ահա մի Վոլոդկային աստված առավ, ուրիշ Վոլոդկա տվեց,— միանգամայն անպատեհ թռավ նրա մտքից, բայց նա անմիջապես նկատեց մտքի այդ անսպասելի խաղը և մտովի ասաց՝ թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ»։

Եկավ և քահանան, երգեց ու խնկարկեց։ Իուդուշկան լսեց, ինչպես տիրացուն ծոր տվեց՝ «Հովանավորյալ ջերմեռանդ» և ինքն էլ ոգևորվեց, ձայնակցեց տիրացուին։ Կրկին վազ տվեց Ուլիտուշկան, ձայն տվեց դռան կողմը.

— Վլադիմիր անվանեցին։

Այդ հանգամանքի զուգադիպումը քիչ առաջ տեղի ունեցած մտքի խոտորման հետ, որ նույնպես հիշեցնում էր մեռած Վոլոդկայի մասին, գթաշարժեց Իուդուշկային։ Նա դրանում տեսավ աստվածային բարեհաճություն և այս անգամ արդեն առանց թքոտելու, ասաց ինքն իրեն.

«Դե ուրեմն փառք աստծո, մեկ Վոլոդկային աստված առավ, մյուսին տվեց։ Ահա աստծու գործերը։ Մի տեղ կորց-

նում ես, մտածում ես, որ այլևս չես գտնի, բայց տեսար, աստված մեկ ուրիշ տեղ հարյուրապատիկը կհատուցի»։

Վերջապես հայտնեցին, որ ինքնաեռը մատուցված է և քահանան սպասում է սեղանատանը։ Պորֆիրի Վլադիմիրիչը վերջնականապես խաղաղվեց ու սրտաշարժվեց։ Հայր Ալեքսանդրն, իրոք, արդեն սեղանատանը նստած, Պորֆիրի Վլադիմիրիչին էր սպասում։ Գոլովլյովյան տերտերը քաղաքագետ մարդ էր և աշխատում էր Իուդուշկայի հետ աշխարհիկ տոն պահպանել, բայց նա շատ լավ էր հասկանում, որ կալվածատանը ամեն շաբաթ և մեծ տոների նախօրեին երեկոյան ժամերգություն է կատարվում և բացի դրանից յուրաքանչյուր ամսի մեկին մաղթանք է կատարվում և որ այդ բոլորը տարեկան ոչ պակաս քան հարյուր մանեթ եկամուտ է բերում եկեղեցու սպասավորներին։ Բացի դրանից, նրան անհայտ չէր, որ եկեղեցուն պատկանած հողը դեռևս անհրաժեշտ ձևով չէր սահմանազատված և որ Իուդուշկան շատ անգամ էր տերտերի մարգագետնի մոտից անցնելիս ասել. «Ա՜խ, լավ մարգագետին է»։ Ուստի քահանայի աշխարհիկ վերաբերմունքին միախառնվում էր նաև բավականաչափ «Հուդայավախություն», որն արտահայտվում էր նրանով, որ տերտերը Պորֆիրի Վլադիմիրիչի հետ հանդիպելիս աշխատում էր պայծառ և ուրախ տրամադրություն ստանալ, թեպետև այդպիսի տրամադրության պատճառ չուներ, և երբ վերջինս խոսակցության ժամանակ թույլ էր տալիս իրեն նախախնամության ճանապարհների, ապագա կյանքի և այլ հարցերի մասին որոշ հերետիկոսություն զարգացնել, ապա, ուղղակի չխրախուսելով դրանք, դրանց մեջ սակայն սրբապղծություն կամ աստվածհայհոյանք չէր նկատում, այլ միայն ազնվականական կոչմանը հատուկ խիզախում էր տեսնում։

Երբ Իուդուշկան ներս մտավ, քահանան արագ խաչակնքեց նրան և էլ ավելի արագ ետ քաշեց ձեռքը, կարծես վախենալով, որ արյունարբուն կարող է կծել։ Ուզեց նա շնորհավորել իր հոգևոր զավակին նորածնի համար, սակայն միտք արեց, թե ինչպես կվերաբերվի այդ հանգամանքին ինքը Իուդուշկան, և զգուշացավ։

— Մառախուղ է դրսում հիմա,— սկսեց քահանան,—

ժողովրդական նշաններով, որոնք, սակայն, որոշ չափով նախապաշարմունք են պարունակում, այսպիսի եղանակը ձնհալք է նախագուշակում։

— Բայց գուցեև սառնամանիք. մենք ձնհալք ենք ենթադրում, բայց աստված, տեսար, սառնամանիք ուղարկեց,— հակաճառեց Իուդուշկան, ջանասեր և նույնիսկ ուրախ նստելով թեյի սեղանի մոտ, որն այս անգամ սպասարկում էր լաբեյ Պրոխորը։

— Այդ ճիշտ է, որ մարդը հաճախ իր երազանքներում ձգտում է անհասանելիին հասնել և գեպի անմատչելին ճանապարհ գտնել։ Եվ դրա հետևանքով իր համար կամ զղջման պատճառ, կամ տրտմություն է ձեռք բերում։

— Ուստի և մենք պետք է գուշակություններից և ենթադրություններից հեռու պահենք մեզ, այլ գոհ լինենք նրանից, ինչ աստված կուղարկի։ Աստված տաքություն կուղարկի, մենք տաքությանը ուրախ կլինենք. կուղարկի աստված սառնամանիք՝ սառնամանիքն էլ բարով է եկել։ Կպատվիրենք վառարանները տաք-տաք վառել, իսկ ովքեր ճանապարհ են գնում, նրանք մուշտակների մեջ լավ կփաթաթվեն,— և ահա տաք կլինի մեզ համար։

— Արդարացի է։

— Շատերն այժմ սիրում են ամեն ինչ քննել՝ և՛ այս այսպես չի, և՛ մյուսն իրենց ուզածով չի, և՛ երրորդն ահա այսպես արվեր, իսկ ես այդ չեմ սիրում։ Եվ ինքս ենթադրություն չեմ անում, և ուրիշներին էլ չեմ գովասանի։ Մեծամտություն է դա, ահա ինչ կարծիք ունեմ ես այդպիսի փորձերի մասին։

— Դա ևս արդարացի է։

— Մենք բոլորս այստեղ ճանապարհորդներ ենք. ես ինձ վրա այդպես էլ նայում եմ։ Այ թեյ խմել, որեէ թեթև բան ուտել... դա մեզ թույլ է տրված։ Որովհետև աստված մեզ մարմին և այլ անդամներ է տվել... Դա պետությունն էլ մեզ չի արգելում՝ ուտելը կերեք, բայց լեզուն ձեզ քաշեք։

— Եվ կրկին անգամ միանգամայն արդարացի է,— կրկնեց տերտերը, դատարկված բաժակը ներքին հրճվանքից պնակին շխկացնելով։

— Ես այնպես եմ դատում, որ խելքը տրված է մարդուն ոչ թե անհայտը փորձելու, այլ նրա համար, որպեսզի հեռու մնա մեղքերից։ Այ, օրինակ, եթե ես մարմնական տկարություն եմ զգում կամ գայթակղություն և օգնության եմ կանչում խելքս՝ ցույց տուր ինձ ճանապարհ, ինչպես հաղթահարեմ ես այս տկարությունը,— ահա այդ դեպքում ես ճիշտ եմ վարվում։ Որովհետև այդ դեպքում խելքն իսկապես օգտակար կարող է լինել։

— Բայց, այնուամենայնիվ, առավել հավատը,— թեթեվակի ուղղեց տեր հայրը։

— Հավատը իր տեղը, իսկ խելքը իր տեղը։ Հավատը նպատակն է մատնանշում, իսկ խելքը ճանապարհներ է որոնում։ Այս կողմ է ընկնում, այն կողմ է բախում... թափառում է, բայց և օգտակար մի բան է գտնում։ Ահա զանազան դեղերը, բուժական խոտերը, սպեղանիները, խաշուները,— այդ բոլորը խելքն է հնարում ու հայտնաբերում։ Բայց հարկավոր է, որ ամեն ինչ համաձայնեցված լինի հավատի հետ՝ հօգուտ, այլ ոչ ի վնաս։

— Դրա դեմ նույնպես առարկել չեմ կարող։

— Ես, տեր հայր, մի գիրք եմ կարդացել, այնտեղ հենց այդպես էլ ասված է՝ մտքի ծառայությունը, եթե նա առաջնորդված է հավատով, անշուշտ պետք չէ արհամարհել, որովհետև խելք չունեցող մարդը շուտով կրքերի խաղալիք է դառնում։ Իսկ ես նույնիսկ այնպես եմ կարծում, որ մարդկային առաջին մեղանչումն անգամ նրանից առաջացավ, որ սատանան, օձի կերպարանքով մարդկային դատողությունը մթագնեց։

Քահանան դրան չառարկեց, բայց և գովասանելուց ձեռնպահ մնաց, որովհետև դեռևս չէր կարողացել պարզել իր համար, թե ինչին է հանգելու Իուդուշկայի խոսքը։

— Հաճախ մենք տեսնում ենք, որ մարդիկ ոչ միայն մտավոր մեղքի մեջ են ընկնում, այլև հանցանք են կատարում,— և բոլորը մտքի պակասության շնորհիվ։ Մարմինը գայթակղում է, իսկ խելք չկա — ահա և մարդն անդունդն է գլորվում։ Եվ քաղցր բան է ուզում, և ուրախ բան, և հաճելի բան, մանավանդ, եթե կանացի սեռ է... առանց խելքի ինչպե՞ս զգուշանալ։ Իսկ եթե ես խելք ունեմ, քյաֆուրի յուղ կամ ձեթ կվերցնեմ, այստեղ կքսեմ, այնտեղ կկաթեցնեմ — տեսար գայթակղությունն ինձանից հեռացավ այնպես, կարծես չէր էլ եղել։

Իուդուշկան լռեց, կարծես սպասելով, թե ինչ կասի տերտերը, բայց քահանան դեռևս տարակուսում էր, թե ինչին է հանգում Իուդուշկայի խոսքը, ուստի միայն կռնչաց և առանց որևէ պատճառի, ասաց.

— Այ, ես բակում հավեր ունեմ... Արևադարձի ժամանակ անհանգստանում են, վազվզում են, դես ու դեն են ընկնում, հանգստանալ չեն կարողանում։

— Եվ բոլորը նրանից է, որ թե թռչունները, թե գազանները, թե սողունները խելք չունեն։ Ի՞նչ բան է թռչունը։ Ոչ հոգս ունի, ոչ վիշտ ունի, թռչում է իր համար։ Այ, առավոտյան նայում եմ լուսամուտից՝ ճնճղուկները կտուցներով գոմաղբն են քրքրում, և դա բավական է նրանց։ Իսկ մարդու համար դա քիչ է։

— Սակայն որոշ դեպքերում սուրբ գիրքը թռչուններին էլ է մատնացույց անում։

— Որոշ դեպքերում այդ այդպես է։ Այն դեպքերում, երբ առանց խելքի էլ հավատը փրկում է,— այդ դեպքում պետք է թռչուններին նմանվել։ Աստծուն աղոթել, բանաստեղծություններ գրել...

Պորֆիրի Վլադիմիրիչը լռեց։ Նա բնությունից շատախոս էր և, իսկապես ասած, օրվա դեպքը շարունակ լեզվի ծայրին էր։ Սակայն, ըստ երևույթին, դեռ չէր հասունացել այն ձևը, որով արժանավայել կերպով կարելի լիներ շաղակրատել այդ առարկայի մասին։

— Թռչուններին խելք հարկավոր չէ,— վերջապես ասաց նա,— որովհետև նրանք գայթակղություններ չունեն։ Կամ, լավ է ասել, գայթակղություններ կան, բայց ոչ ոք դրա համար նրանցից պահանջ չի անում։ Նրանց մոտ ամեն ինչ բընական է. ոչ սեփականություն ունեն, որին պետք է հսկել, ոչ օրինական ամուսնություն ունեն, հետևապես և այրի չեն մնում։ Ոչ աստծու, ոչ իշխանության առաջ նրանք պատաս-

խանատվություն չեն կրում. մի իշխանավոր ունեն նրանք — աքաղաղը։

— Աքաղա՜ղը, աքաղա՜ղը, դա ճիշտ է, նա հավերի համար կարծես տաճկական սուլթան լինի։

— Իսկ մարդն իր համար ամեն բան այնպես է արել, որ նա ոչ մի բան բնական չունի, հետևապես և նրան շատ խելք է հարկավոր։ Ե՛վ ինքը որպեսզի մեղքի մեջ չընկնի, և՛ ուրիշներին էլ գայթակղության մեջ չգցի։ Այդպե՞ս է, տեր հայր։

— Ստույգ ճշմարտություն է դա։ Սուրբ գիրքն էլ խորհուրդ է տալիս գայթակղող աչքը հանել։

— Դա՝ եթե տառացի հասկանանք, բայց կարելի է և աչքը չհանել, այնպես անել, որ նա չգայթակղվի։ Հաճախ դիմել աղոթքի, մարմնական բարկությունը զսպել։ Այ ես, օրինակ, և՛ լավ ժամանակս է, և՛ չի կարելի ասել, որ թուլացած եմ... Դե, և կին սպասավորներ ունեմ... Բայց ինձ համար արժեք չունի... Գիտեմ, որ առանց սպասավորների չի կարելի,— դրա համար էլ պահում եմ։ Ե՛վ տղամարդ սպասավորներ եմ պահում, և՛ կին սպասավորներ ամեն տեսակ։ Կին սպասավորը նույնպես տնտեսության մեջ հարկավոր է։ Մառան գնա, թեյ լցնի, ուտելիքի մասին հոգս տանի... Դե, Քրիստոս իր հետ։ Նա իր գործն է անում, ես՝ իմը... ահա և մենք ապրում ենք այդպես։

Այս ասելիս Իուդուշկան աշխատում էր նայել տեր հոր աչքերին. քահանան էլ իր հերթին աշխատում էր նրա աչքերին նայել։ Բայց, բարեբախտաբար, նրանց միջև գտնվում էր մոմը, այնպես որ նրանք կարող էին նայել միմյանց ինչքան ուզում են և միայն մոմի բոցը տեսնել։

— Եվ ըստ այդու նաև ես այսպես էլ եմ դատում՝ եթե սպասավորի հետ մտերմական հարաբերություններ ունենաս, նա անպայման իշխանություն կբանեցնի տանը։ Կսկսվեն անհամաձայնություններ ու անկարգություններ, կշտամբանքներ ու կոպտություններ. դու մի խոսք կասես, իսկ նա՝ երկուսը... Ես դրանից խուսափում եմ։

Տեր հոր աչքերը նույնիսկ շաղվեցին, այն աստիճան ակնդետ էր նայում նա Իուդուշկային։ Ուստի, զգալով նաև,

որ աշխարհիկ քաղաքավարությունն անգամ պահանջում է, որպեսզի խոսակիցը գոնե ժամանակ առ ժամանակ ինքն էլ մի խոսք ասի ընդհանուր զրույցի ժամանակ, նա գլուխն օրորեց ու արտասանեց.

— Ըսս...

— Իսկ եթե դրա հետ միաժամանակ և այնպես արվի, ինչպես ուրիշներն են անում... այ ինչպես իմ հարևանը, պարոն Անպետովը, օրինակ, կամ ուրիշ հարևանը, պարոն Ուտրորինը... ապա և հեշտությամբ կարելի է մեղքի մեջ ընկնել... Այ, պարոն Ուտրորինի մոտ այդ ապականությունից համարյա վեց մարդ ունի տանը... Իսկ ես այդ չեմ ուզում։ Ես այսպես եմ ասում՝ եթե աստված իմ պահապան-հրեշտակին խլեց,— նշանակում է այդպես է հաճելի նրա սուրբ կամքին, որպեսզի ես այրի մնամ։ Իսկ եթե ես, աստծու ողորմածությամբ, այրի եմ, ապա նշանակում է պետք է այրի մնամ ազնվորեն և իմ մահիճը առանց ապականելու պահպանեմ։ Այդպե՞ս է, տեր հայր։

— Ծանր է, պարոն։

— Ինքս իմանում եմ, որ ծանր է, բայց և այնպես կատարում եմ։ Կան, որ ասում են ծանր է, իսկ ես ասում եմ՝ որչափ ծանր, այնչափ լավ, միայն թե աստված զորավիգ լինի։ Բոլորի համար էլ քաղցր ու հեշտ չի լինի, հարկավոր է, որ մեկնումեկն էլ աստծու համար նեղություն կրի։ Այստեղ քեզ կզրկես, այնտեղ կստանաս։ Այստեղ դա «նեղություն» է կոչվում, իսկ այնտեղ արժանիք է կոչվում։ Արդարացի՞ եմ ասում ես։

— Շատ արդարացի։

— Նմանապես և արժանիքների մասին պետք է ասել։ Նրանք ևս անհավասար են լինում։ Մի արժանիք մեծ է, իսկ մեկ այլ արժանիք փոքր։ Հապա դու ի՞նչ էիր կարծում։

— Ինչպե՞ս կարելի է դա։ Մեծ արժանիք է, թե փոքր։

— Այ հենց իմ ասածով էլ դուրս է գալիս։ Եթե մարդն իրեն բարեխիղճ է պահում, չի զրախոսում, չի ունայնախոսում, ուրիշներին չի դատապարտում, եթե նա ըստ այդու ոչ ոքի չի նեղացրել, ոչ ոքից ոչինչ չի խլել... և գայթակղություններիր նկատմամբ էլ իրեն զգույշ է պահել, ապա այդ

տեսակ մարդու խիղճն էլ մշտապես հանգիստ կլինի։ Եվ ոչինչ նրան չի ապականի, ոչ մի կեղտ։ Իսկ եթե մեկնումեկն էլ ծածուկ կդատապարտի նրան, իմ կարծիքով, այդպիսի դատապարտությունները նույնիսկ հաշվի չպետք է առնել։ Պետք է թքել նրանց վրա և ուրիշ ոչինչ։

— Նման դեպքերում քրիստոնեական կարգերն առավելապես հանձնարարում են ներել։

— Դե, կամ ներել։ Ես միշտ այդպես էլ անում եմ. եթե մեկնումեկն ինձ դատապարտում է, ես նրան ներում եմ և դեռ աստծուն էլ աղոթում եմ նրա համար։ Ե՛վ նրա համար է լավ, որ աղոթքն առ աստված հասավ, և՛ ինձ համար է լավ — աղոթեցի ու մոռացա։

— Այ դա ճշմարիտ է. ոչինչ այնպես չի թեթևացնում հոգին, ինչպես աղոթքը։ Ե՛վ վշտերը, և՛ զայրույթը, և՛ նույնիսկ հիվանդությունները, ամեն ինչ աղոթքից փախչում է, ինչպես գիշերային խավարը՝ արեգակից։

— Դե, ուրեմն, փառք աստծու։ Եվ միշտ պետք է այդպես պահենք մեզ, որպեսզի մեր կյանքը, որպես մոմը լապտերում, բոլոր կողմերից երևա... Եվ քիչ կդատապարտեն, որովհետև պատճառ չկա։ Ահա թեկուզ մենք, նստեցինք, խոսեցինք, զրույց արեցինք,— դրա համար մեզ ո՞վ կարող է դատապարտել։ Իսկ այժմ կգնանք, աղոթք կանենք աստծուն ու կքնենք. իսկ վաղը կրկին կարթնանանք... այդպե՞ս է, տեր հայր։

Իուդուշկան վեր կացավ և աղմուկով ետ քաշեց իր աթոռը՝ ի նշան այն բանի, որ զրույցն ավարտված է։ Տեր հայրն իր կողմից նույնպես վեր կացավ և ձեռքը բարձրացրեց խաչակնքելու, սակայն Պորֆիրի Վլադիմիրիչն, այս անգամ որպես հատուկ բարեհաճ վերաբերմունք, բռնեց նրա ձեռքը և սեղմեց իր երկու ձեռներում։

— Ուրեմն Վլադիմի՞ր կոչեցիք,— ասաց նա, տրտում օրորելով գլուխը Եվպրակսեյուշկայի սենյակի կողմը։

— Ի պատիվ սուրբ և առաքելական իշխան Վլադիմիրի, պարոն։

— Դե, փառք աստծու։ Նա լավ սպասավոր է, բայց խելքի կողմից՝ ներող եղեք։ Դրա համար էլ նրանք... շնա-նում... ենք

***

Մյուս ամբողջ օրը Պորֆիրի Վլադիմիրիչը դուրս չեկավ իր առանձնասենյակից և աղոթում էր, աստծուց խնդրելով, որպեսզի ճանապարհ ցույց տա իրեն։ Երրորդ օրը թեյի ժամանակ դուրս եկավ ոչ թե սովորականի պես՝ խալաթով, այլ տոնական հագնված՝ սերթուկով, ինչպես անում էր միշտ, երբ որոշում էր որևէ վճռական բան ձեռնարկել։ Նրա դեմքը գունատ էր, սակայն հոգեկան պայծառությամբ էր շնչում. շուրթերին երանելի ժպիտ էր խաղում, աչքերը նայում էին փաղաքշական, ասես ամենաներողական, քթի ծայրը, շնորհիվ աղոթական գոհունակության, փոքր-ինչ կարմրել էր։ Նա լուռ խմեց իր երեք բաժակ թեյը և ումպից-ումպ ընկած ժամանակամիջոցում շարժում էր շրթունքները, ծալում էր ձեռներն ու սրբապատկերներին էր նայում, կարծես դեռևս չնայած երեկվա աղոթքին, նրանից շտապ օգնություն և հովանավորություն էր սպասում։ Վերջապես վերջին ումպը կուլ տալով, իր մոտ պահանջեց Ուլիտուշկային և կանգնեց սրբապատկերի առաջ, որպեսզի կրկին անգամ ամրապնդվի աստվածային զրուցակցությամբ և միևնույն ժամանակ Ուլիտային էլ ակնառու ցույց տա, որ այն, ինչ տեղի է ունենալու այնուհետև, ոչ թե իր, այլ աստծու գործն է։ Ուլիտուշկան, սակայն, Իուդուշկայի դեմքին ուղղած առաջին իսկ հայացքից հասկացավ, որ նրա հոգու խորքում դավաճանություն է նստած։

— Ահա և ես աստծուն աղոթեցի,— սկսեց Պորֆիրի Վլադիմիրիչը և, ի նշան նրա սուրբ կամքի հանդեպ ունեցած խոնարհության, գլուխը կախ գցեց ու ձեռքերը տարածեց։

— Եվ սքանչելի բան արեցիք,— պատասխանեց Ուլիտուշկան, բայց նրա ձայնում այնպիսի անտարակուսելի խորաթափանցություն էր հնչում, որ Իուդուշկան ակամայից աչքերը նրա վրա բարձրացրեց։

Ուլիտուշկան կանգնել էր նրա դիմաց իր սովորական դիրքով, մի ձեռքը կրծքին դրած, մյուսը այտին հենած, բայց նրա դեմքին հազիվ զսպած ծիծաղն էր կայծկլտում։ Պոր-

Ֆիրի Վլադիմիրիչը թեթևակի օրորեց գլուխն ի նշան քրիստոնեական նախատինքի։

— Հավանորեն աստված աղոթություն ուղարկեց,— շարունակեց Ուլիտուշկան, չշփոթվելով իր խոսակցի նախազգուշական շարժումից։

— Շարունակ դու սրբապղծություն ես անում,— չհամբերեց Իուդուշկան։— Քանի՞ անգամ ես և՛ փաղաքշական, և՛ կատակով աշխատեցի զգուշացնել քեզ դրանից, իսկ դու միշտ շարունակում ես նույնը։ Չար է քո լեզուն... նենգ...

— Ես ոչինչ չեմ ասում, կարծեմ... Սովորաբար, եթե աստծուն աղոթք եք անում, ուրեմն աստված ողորմություն է ուղարկում։

— Այդ է որ «կարծեմ»... Իսկ դու, ինչ որ «կարծում» ես, զուր տեղը դուրս մի տուր, երբեմն էլ սովորիր լուռ մընալ։ Ես գործի մասին եմ խոսում, իսկ դու՝ «կարծեմ»...

Ուլիտուշկան պատասխանի փոխարեն ոտքից ոտք էր շարժվում մի այն, կարծես այդ շարժումով ասելով, որ այն ամենը, ինչ ուզում է ասել Պորֆիրի Վլադիմիրիչը, վաղուց արդեն հայտնի է իրեն։

— Դե, ուրեմն, լսիր դու ինձ,— սկսեց Իուդուշկան,— աղոթեցի ես աստծուն, երեկ էլ աղոթեցի, այսօր էլ աղոթեցի, և շարունակ դուրս է գալիս, որ այսպես թե այնպես, Վոլոդյայի մասին մենք պետք է հոգանք։

— Հայտնի բան է, հարկավոր է հոգալ։ Շան լակոտ չի, ճահիճը գցել չի լինի։

— Սպասիր, համբերիր, թող խոսքս ասեմ... պատիժ ես դու, պատիժ... Դե, ուրեմն ես ասում եմ՝ այսպես թե այնպես, հարկավոր է Վոլոդյայի մասին հոգալ։ Առաջինը, պետք է Եվպրակսեյուշկային խղճալ, իսկ երկրորդ՝ նրան էլ մարդ դարձնել։

Պորֆիրի Վլադիմիրիչը նայեց Ուլիտուշկային, հավանորեն սպասելով, որ նա հաճությամբ կզուգադրանի իր հետ, բայց Ուլիտուշկան գործին շատ հատարակ, նույնիսկ ցինիկ վերաբերմունք ունենալով։

— Ե՞ս ինչի՞ սրբանոց տանեմ,— հայցեց նա, ակնդետ նրան նայելով։

— Ա՜խ, ա՜խ,— միջամտեց Իուդուշկան։— Դու արդեն որոշեցիր... կշկշան շաղակրատ։ Ա՜խ, Ուլիտկա, Ուլիտկա, քո մտքին շարունակ առ ու փախն է, շարունակ գլխիցդ ավելպակաս դուրս տալը։ Իսկ դու ի՞նչ գիտես, դուցե ես որբանոցի մասին չեմ էլ մտածում։ Գուցե ես մի ուրիշ բան եմ մտածել Վոլոդկայի համար։

— Ինչ կա որ, թող ուրիշ լինի,— ուրիշ բանն էլ վնաս չի տա։

— Ահա և ես ասում եմ. թեպետև մի կողմից ափսոս է Վոլոդկան, բայց մյուս կողմից, թե որ միտք անենք ու դատելու լինենք,— բայց դուրս է գալիս, որ տանը պահել նրան չի կարելի։

— Հայտնի՞ բան է։ Մարդիկ ի՞նչ կասեն։ Կասեն թե այս որտեղի՞ց է գոլովլյովյան տանը օտար երեխա հայտնվել։

— Դա էլ, և այն էլ, որ տանը նա ոչ մի օգուտ չի ունենա։ Մայրը ջահել է, կսկսի երես տալ. ես ծեր եմ, թեպետև կողմնակի մարդ եմ ես, բայց մոր հավատարիմ ծառայության համար... ուզես-չուզես... զիջողություն պիտի անես... կպատահի որ շարության համար երեխային ծեծ կտաս, բայց այս դեպքում այսպես թե այնպես... մոր արտասուքից ու աղմուկ-աղաղակից ազատում չի լինի,— դե ուրեմն և ձեռք թափ կտաս։ Այդպե՞ս է։

— Ճիշտ է դա, կձանձրացնի։

— Իսկ ես ուզում եմ, որ մեզանում ամեն ինչ լավ լինի։ Որպեսզի Վոլոդկայից ժամանակին իսկական մարդ դուրս գա։ Եվ աստծուն ծառա, և թագավորին հպատակ։ Թե որ աստված նրան գյուղացի դարձնի, այնպես որ հող մշակել իմանա... Հնձել, վարել, փայտ կոտորել — ամեն ինչից քիչքիչ... Իսկ թե որ ուրիշ բախտ է ունենալու, ապա որ արհեստ իմանա, գիտություն... Այնտեղից, ասում են, ոմանք ուսուցիչ են դուրս գալիս։

— Որբանոցի՞ց։ Ուղղակի գեներալ են դարձնում։

— Գեներալը գեներալ չէ, բայց և այնպես... Գուցեև Վոլոդկայից նշանավոր մարդ դուրս կգա։ Իսկ այնտեղ շատ լավ են դաստիարակում։ Այդ արդեն ես ինքս իմանում եմ։ Մահճակալները մաքուր են, գայակները առողջ, երեխաներն

սպիտակ շապիկով են, ծծակ, բարուր... մի խոսքով՝ բոլորը։

— Դրանից էլ լա՞վ... ապօրինիների համար։

— Իսկ եթե որ նա գյուղում հոգեզավակ դառնա,— ինչ կա որ, Քրիստոս իր հետ։ Փոքր հասակից աշխատանքի կվարժվի, իսկ աշխատանքը նույն աղոթքն է։ Այ մենք,— մենք իսկական ձևով աղոթք ենք անում։ Կանգնում ենք սրբապատկերի առաջ, խաչակնքում ենք, իսկ եթե մեր աղոթքը ընդունելի է աստծուն, ապա նա հատուցում է մեզ դրա համար։ Իսկ գյուղացին — նա աշխատում է։ Ոմանք կուզենային էլ իսկական ձևով աղոթք անել, բայց հազիվ թե տոն օրերին էլ նրանք ժամանակ ունենան։ Իսկ աստված, այնուամենայնիվ, տեսնում է նրա աշխատանքը և աշխատանքի համար հատուցում է նրան, ինչպես մեզ՝ աղոթքի համար։ Բոլորն էլ հո պալատներում չեն ապրելու և պարահանդեսներում թռչկոտելու, հարկավոր է, որ ոմանք էլ խրճիթներում ապրեն, մայր հողը խնամեն-մշակեն։ Իսկ երջանկությո՞ւնը,— այդ դեռ հարց է, թե որտեղ է երջանկությունը։ Կան որ պալատում են ապրում, փափուկ կյանք են վարում, բայց ոսկու մեջ արցունք են թափում, իսկ ուրիշը ծղոտների մեջ է քընում, հաց ու կվաս է կերածը, իսկ հոգում դրախտ է։ Ճի՞շտ եմ ես ասում։

— Հոգում դրախտ լինելուց էլ լավ բա՞ն։

— Ուրեմն մենք քեզ հետ, սիրելիս, այսպես կանենք։ Վերցրու դու շարաճճի Վոլոդկային, տաք-տաք փաթաթիր նրան և շուտ սլացրու Մոսկվա։ Կկարգադրեմ ձեզ համար ծածկված կառք լծեն, մի զույգ լավ ձի, իսկ ճանապարհն հիմա հարթ է, հավասար, ոչ դարուփոս, ոչ խորդուբորդություն... սլացիր ու սլացիր։ Միայն թե տես հա՞, որպեսզի ամեն ինչ կարգով-սարքով լինի։ Ինձ վայել, գոլովլյովյան տեսակի... ինչպես ես եմ սիրում... Որպեսզի մաքուր ծծակ լինի... շապիկներ... սավաններ, բարուր, վերմակ — ամեն ինչ շատ-շատ լինի։ Վերցրո՛ւ, կարգադրությո՛ւն արա, իսկ եթե չեն տա, ինձ գանգատվիր, ինձանից պահանջիր։ Իսկ որ Մոսկվա հասար, իջևանում կանգ առ, ուտելիք, ինքնաեռ, թեյ պահանջի՛ր։ Ա՜խ Վոլոդկա, Վոլոդկա, ա՜յ թե ինչ մեղքի մեջ ընկանք։ Եվ ափսոս է քեզանից բաժանվելը, բայց և,

եղբայր, ոչինչ անել չենք կարող։ Ինքդ հետո օգուտը կտեսնես, ինքդ շնորհակալ կլինես։

Իուդուշկան թևերը փոքր-ինչ վեր առաքեց, շարժեց շրթունքներն ի նշան մտացի աղոթքի։ Բայց դա չէր խանգարում նրան աչքի տակով նայել Ուլիտուշկային և նկատել նրա դեմքի խայթող արտահայտությունը։

— Դու, ի՞նչ է, բա՞ն ես ուզում ասել,— հարցրեց նրան։

— Ոչինչ։ Հայտնի բան է, շնորհակալ կլինի, թե որ իր բարերարներին գտնի։

— Ա՜խ դու, անմիտ, անմիտ։ Մի՞թե մենք նրան առանց տոմսի ենք այնտեղ տալու։ Դու տոմս վերցրու։ Տոմսով մենք նրան ինքներս կգտնենք։ Կպահեն, կխնամեն, խելք ու հասկացողություն կսովորեցնեն, իսկ մենք տոմսակով ահա հայտնվում ենք՝ խնդրեմ ետ տաք մեր կտրիճին, շարաճճի Վոլոդկային։ Տոմսով մենք նրան ծովի հատակից էլ կհանենք... Ճի՞շտ եմ ես ասում։

Բայց Ուլիտուշկան ոչինչ չպատասխանեց, միայն նրա դեմքի խայթիչ արտահայտությունն առաջվանից ավելի նկատելի էր։ Պորֆիրի Վլադիմիրիչը չհամբերեց։

— Ժանտախտ ես դու, ժանտախտ,— ասաց նա։— Դևն է քո մեջ նստած, սատանան... թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ։ Դե, բավական է։ Վաղը լույսը նոր բացված, կվերցնես Վոլոդկային և շուտ, որպեսզի Եվպրակսեյուշկան չիմանա, ճանապարհվեք աստծով, Մոսկվա։ Որքանոցը իմանո՞ւմ ես։

— Գնացել եմ,— միաբան պատասխանեց Ուլիտուշկան, կարծես ինչ-որ մի բան ակնարկելով անցյալից։

— Դե որ գնացել ես, նշանակում է, ծանոթ ես։ Նշանակում է, ելք ու մուտքը, ամեն բան քեզ հայտնի է։ Տես հա, տեղավորիր նրան և իշխանավորներին էլ խոնարհ գլուխ տուր,— ահա՛ այսպես։

Պորֆիրի Վլադիմիրիչը վեր ելավ և խոնարհվեց, ձեռքը գետնին դիպցնելով։

— Որպեսզի լավ լինի նրա համար այնտեղ։ Ոչ թե մի կերպ, այլ իսկական ձևով։ Եվ տոմս, տոմս վերցրու։ Ջմոռանաս։ Տոմսով մենք նրան հետո ամեն տեղ կգտնենք։ Իսկ ծախսերի համար ես քեզ երկու հատ քսանհինգանոց կտամ։

Իմանում եմ ես, ամեն բան իմանում եմ։ Եվ այստեղ պիտի տալ, և այնտեղ... Ա՜խ, ա՜խ, մեր մեղքերը, մեր մեղքերը։ Բոլորս մարդ ենք, բոլորս քաղցր ու լավ բաներ ենք ուզում։ Այ հենց մեր Վոլոդկան։ Ի՞նչ է որ դեռ, հազիվ մատնաչափ է, բայց տես ինչքա՜ն փող է արդեն նստում։

Այդ ասելով, Իուդուշկան խաչակնքեց և խնամարհ գլուխ տվեց Ուլիտուշկային, լռելյայն հանձնարարելով նրան չարաճճի Վոլոդկային չզրկել իր խնամքից։ Այլօրինակ ընտանիքի ապագան կարգավորվեց ամենահաստատակ ձևով։

***

Այդ խոսակցության հետևյալ առավոտյան, մինչ երիտասարդ մայրը տենդի մեջ այրվում էր ու զառանցում, Պորֆիրի Վլադիմիրիչը սեղանատան լուսամուտի առաջ կանգնած, շրթունքներն էր շարժում և ապակին խաչակնքում։ Գրլխավոր բակից մեկնում էր ռոգժով ծածկված կիբիտկան, տանելով Վոլոդկային։ Ահա կիբիտկան բարձրացավ բլուրը, հավասարվեց եկեղեցուն, դարձավ ձախ ու անհայտացավ։ Իուդուշկան վերջին անգամ խաչակնքեց ու հառաչեց.

— Երեկ տերտերը ձնհալքի մասին էր ասում,— ասաց նա ինքնիրեն,— բայց աստված ձնհալքի փոխարեն սառնամանիք ուղարկեց։ Սառնամանիք, այն էլ ի՞նչ սառնամանիք։ Այսպես էլ ահա մեզ հետ միշտ այդպես է լինում։ Երազում ենք մենք, օդային ամրոցներ ենք կառուցում, խելքներիս զոռ ենք տալիս, մտածում ենք աստծուց էլ խելոք երևալ, իսկ աստված մի րոպեում մեր ամբողջ մեծամտությունը ոչնչության է մատնում։

ԱՆԾԱՌԱՆԳԸ

Իուդուշկայի հոգեվարքն սկսվեց նրանից, որ դատարկախոսության աղբյուրը, որը մինչև այժմ նա այդպես հաճույքով չարաշահում էր, սկսեց նկատելի ցամաքել։ Ամեն ինչ նրա շուրջը դատարկվեց. ոմանք մեռան, մյուսները հեռացան։ Նույնիսկ Աննինկան, չնայած թափառական դերասանուհու խղճուկ ապագային, չգայթակղվեց գոլովլյովյան փարթամությամբ։ Մնում էր միայն Եվպրակսեյուշկան, սակայն անկախ նրանից, որ դա շատ սահմանափակ աղբյուր էր, նրա մեջ նույնպես ինչ-որ կախարդանք էր առաջացել, որը չուշացավ երևան գալ և մեկընդմիշտ համոզել Իուդուշկային, որ իր լավ օրերն անցել են անդարձ։

Մինչև այժմ Եվպրակսեյուշկան այն աստիճան անօգնական էր, որ Պորֆիրի Վլադիմիրիչը կարող էր կեղեքել նրան առանց ամենաչնչին վախի։ Շնորհիվ մտքի ծայրահեղ անզարգացածության և բնավորության բնածին անկենդանության, Եվպրակսեյուշկան նույնիսկ չէր էլ զգում այդ կեղեքումը։ Մինչ Իուդուշկան պղծախոսում էր, նա նայում էր նրա աչքերին և բոլորովին այլ բաների մասին էր մտածում։ Բայց այժմ նա հանկարծ ինչ-որ բան հասկացավ և հասկացողության արթնացած ընդունակության մոտավոր արդյունքը եղավ հանկարծակի, դեռևս չգիտակցված, սակայն չար ու անհաղթահարելի ատելությունը։

Ըստ երևույթին պոգորելկյան օրիորդի Գոլովլյովո գալն անհետևանք չանցավ Եվպրակսեյուշկայի համար։ Թեպետև

վերջինս չէր կարողանում հաշիվ տալ իրեն, թե Աննինկայի հետ ունեցած պատահական զրույցներն ինչ տեսակի ցավեր առաջացրին նրանում, սակայն ներքնապես նա իրեն միանգամայն վրդովված էր զգում։ Առաջ երբեք նրա մտքով չէր անցնում հարց տալ իրեն, թե ինչու Պորֆիրի Վլադիմիրիչը, հենց որ կենդանի մարդու է հանդիպում, իսկույն սկսում է նրան խճճել կցկտուր խոսքերի ցանցում, որոնցից ոչ մեկից կառչել հնարավոր չէ, բայց որոնցից անտանելի ծանր է դառնում. այժմ նրա համար պարզ դարձավ, որ Իուդուշկան, իսկական իմաստով, ոչ թե խոսում է, այլ «բռնանում է» և որ, հետևապես, ավելորդ չի լինի նրան «լռեցնել», զգացնել տալ, որ նրա համար էլ հասել է «հարգը իմանալու» ժամանակը։ Եվ ահա նա սկսեց ուշադիր ականջ դնել նրա անվերջ խոսաշատրվանին և իրոք մի բան միայն հասկացավ այդ բոլորից՝ որ Իուդուշկան ձանձրացնում է, վրդովում է, թութակի պես կրկնում է։

«Օրիորդն, ահա, ասում էր, որ իբրև նա ինքն էլ չի իմանում, թե ինչու է խոսում,— դատողություն էր անում նա ինքն իրեն.— ոչ, նրա մեջ դա չարությունն է գործում։ Իմանում է նա, թե որ մարդն իրենից պաշտպանվել չի կարող, ահա նրա հետ էլ վարվում է այնպես, ինչպես ինքն է ուզում»։

Սակայն դա դեռևս երկրորդական հանգամանք էր։ Աննինկայի Գոլովլյովո ժամանելը Եվպրակսեյուշկայի վրա գլխավորապես այն ազդեցությունն ունեցավ, որ ընդվզեցին նրա երիտասարդական բնազդները։ Մինչ այժմ այդ բնազդները նրա մեջ մի տեսակ բութ կերպով մարմրում էին, այժմ նրանք ջերմորեն ու մտերմորեն բոցավառվեցին։ Շատ բան հասկացավ նա նրանից, ինչի առաջ միանգամայն անտարբեր էր վերաբերվում։ Ահա, օրինակ, ինչո՞ւ Աննինկան չհամաձայնեց մնալ Գոլովլյովոյում, ուղղակի ասաց՝ սարսափելի՛ է։ Ինչո՞ւ այդպես։ Նրա համար, որ երիտասարդ է, որ «ապրել է ուզում»։ Ահա ինքն էլ, Եվպրակսեյուշկան էլ երիտասարդ է... Այո՛, երիտասարդ է։ Այդ հենց այնպես է միայն թվում, որ երիտասարդությունը նրանում թմրել է, ոչ, երբեմն շատ բուռն է արտահայտվում այն։ Ե՛վ կանչում է, և՛ հրապուրում է, մերթ անզգայանում է, մերթ կրկին բռնկվում։ Կարծում էր նա, որ Իուդուշկան իրեն կհամապատասխանի, բայց այժմ ահա... «Ա՜խ դու, փտած ծերուկ, համապատասխանեց, հապա ինչպե՞ս»... Լավ կլիներ հիմա սիրածի հետ ապրել, իսկական, երիտասարդ սիրածի։ Կրկնախառնվեին, կթավալեին, սիրածը կհամբուրեր իրեն, փաղաքշական խոսքեր կշշնջար ականջին։ «Ա՜խ դու, անիծյալ խրտվիլակ, ինչո՞վ ուզեց հրապուրել, իր չոր ոսկորներով... Երևի պոդորելկյան օրիորդն էլ սիրած երիտասարդ ունի։ Անպայմա՛ն ունի։ Ահա թե ինչու պոչն հավաքեց ու փախավ, իսկ այստեղ նստիր չորս պատերի մեջ, սպասիր, մինչև ծերունին միտ բերի...»

Հասկանալի է, Եվպրակսեյուշկան միանգամից չարտահայտեց իր ընդվզումը, բայց մեկ անգամ այդ ճանապարհը դուրս գալով, այլևս կանգ չառավ։ Որոնում էր պատրվակներ, վերհիշում էր անցյալը և, մինչդեռ Իուդուշկան կասկած անգամ չուներ, որ նրա հոգում ինչ-որ մութ աշխատանք է հասունանում, Եվպրակսեյուշկան լուռ, սակայն ամենայն բոպե բորբոքում էր իրեն մինչ ատելության աստիճան։ Սկզբում հրապարակ եկան ընդհանուր գանգատներ, ինչպես՝ «ուրիշի կյանքը խավարեց» արտահայտության նման, ապա հերթը հասավ համեմատություններին։ «Հրեն Մազուլինում Պալագեյուշկան բարինի մոտ տնտեսուհի է, նստում է ձեռները ծալած, և մետաքսի հագուստներ է հագնում։ Ոչ անասունների բակ գնալ ունի, ոչ նկուղ, նստում է իր համար սենյակում ու ձեռագործ է անում»։ Եվ բոլոր այդ վիրավորանքներն ու բողոքները վերջանում էին մեկ ընդհանուր աղաղակով.

— Ինչպե՞ս է հիմա իմ սիրտը բորբոքվել քո դեմ, զզվելի ծերունի։ Այնպե՞ս է բորբոքվել, այնպե՞ս է բորբոքվել։

Այդ գլխավոր պատճառին միացավ նաև մեկ ուրիշը, որն առանձնապես թանկ էր նրանով, որ սքանչելի պատրվակ կարող էր հանդիսանալ պայքարի մտնելու համար։ Այն է՝ ծննդաբերության հիշողությունը և Վոլոդյայի անհայտանալը։

Այն ժամանակ, երբ տեղի ունեցավ այդ անհայտանալը, Եվպրակսեյուշկան այդ փաստին մի տեսակ բութ վերաբերմունք ունեցավ։ Պորֆիրի Վլադիմիրիչը սահմանափակվեց նրանով, որ հայտարարեց նրան, թե նորածինը լավ ձեռքերի

է հանձնված, իսկ որպեսզի մխիթարի, մետաքսյա մի նոր թաշկինակ նվիրեց նրան։ Հետո ամեն ինչ կրկին սահեց անցավ ու ընթացավ նախկինի պես։ Եվպրակսեյուշկան նույնիսկ առաջվանից ավելի եռանդով թաղվեց տնտեսական մանրուքների տիղմի մեջ, կարծես նրանց վրա էր թափում իր անհաջող մայրության բարկությունը։ Բայց շարունակվո՞ւմ էր արդյոք կամաց-կամաց առկայծել Եվպրակսեյուշկայի մեջ մայրական զգացմունքը, թե քմահաճույք էր, որ ծագեց գլխում, համենայն դեպս հիշողությունը Վոլոդկայի մասին հանկարծ հարություն առավ։ Եվ հարություն առավ այն իսկ րոպեին, երբ Եվպրակսեյուշկայի վրա ինչ-որ նոր հոսանք փչեց՝ ազատ, անկախ, երբ նա զգաց, որ կա այլ կյանք, միանգամայն ուրիշ կերպ դասավորված, քան գոլովլյովյան պատերի մեջ եղածը։ Հասկանալի է, որ պատրվակը շատ էր լավ, որպեսզի նրանից չօգտվեր։

«Տեսա՞ք հո ինչ արեց,— հրահրում էր նա իրեն։— Երեխային խլե՛ց, շան լակոտի պես ջրաղբրի մեջ խեղդե՛ց»։

Կամաց-կամաց այդ միտքը տիրեց նրան ամբողջովին։ Նա ինքն էլ հավատաց ինչ-որ բուռն ցանկության՝ կրկին միանալու երեխային, և որչափ համառությամբ էր բորբոքվում նրա այդ ցանկությունը, այնչափ ավելի ու ավելի ուժ էր ստանում նրա վրդովմունքը Պորֆիրի Վլադիմիրիչի դեմ։

— Համենայն դեպս ես հիմա գոնե զվարճություն կունենայի։ Վոլո՞դյա, Վոլո՞դյուշկա, իմ ծնո՞ւնդ... Որտե՞ղ ես դու։ Երևի գյուղում մի որևէ մեզարավորի մոտ են գցել քեզ։ Ա՜խ, խիղճ չունեք դուք, անիծյալ աղաներ։ Կհղիացնեն, հետո էլ երեխաներին շան լակոտների նման փոսը կգցեն, թե՝ ոչ ոք մեզ չի պատժի դրա համար։ Ավելի լավ էր ես այն ժամանակ դանակով իմ վիզը կտրեի, քան թույլ տայի, որ անամոթն ինձ անպատվեր։

Երևան եկավ ատելություն, ցանկություն անախորժություն պատճառելու, ապականելու կյանքը, տանջելու. սկսվեց պատերազմներից ամենից անտանելին՝ պատերազմ բծախնդրության, ծաղրանքների, մանրիկ խայթոցների։ Բայց հենց այդպիսի պատերազմն էր, որ կարող էր կոտրել Պորֆիրի Վլադիմիրիչին։

***

Մեկ անգամ, առավոտյան թեյի ժամանակ Պորֆիրի Վլադիմիրիչը շատ անախորժ զարմացավ։ Սովորաբար նա այդ ժամանակ անհաշիվ խոսքի թարախ էր արտաթորում իրենից, իսկ Եվպրակսեյուշկան, թեյի պնակը ձեռքին, լուռ լսում էր նրան, ատամներով շաքարի կտորը սեղմած, ժամանակ առ ժամանակ փնչացնելով։ Եվ հանկարծ, նոր էր նա զարգացրել իր միտքը (այդ օրը թեյին տաք, նոր թխած հաց էին մատուցել), թե տարբեր հաց է լինում, տեսանելի, որը մենք ուտում ենք և դրանով պահպանում ենք մեր մարմինը, և անտեսանելի, հոգեկան, որը մենք ճաշակում ենք և դրանով իսկ հոգի վաստակում, որ Եվպրակսեյուշկան ամենաանպատկառ ձևով ընդհատեց նրա ճոռոմաբանությունը։

— Ասում են Մազուլինում Պալագեյուշկան լավ է ապրում,— սկսեց նա, ամբողջ մարմնով դառնալով լուսամուտի կողմը և համարձակորեն ճոճելով մեկը մյուսի վրա գցած ոտները։

Իուդուշկան անսպասելիությունից թեթևակի ցնցվեց, բայց առաջին անգամ, սակայն, առանձին նշանակություն չտվեց այդ դեպքին։

— Եվ եթե մենք երկար ժամանակ տեսանելի հաց չենք ուտում,— շարունակեց նա,— ապա մարմնական քաղց ենք զգում. իսկ եթե երկար ժամանակ հոգևոր հաց չենք ճաշակում...

— Պալագեյուշկան, լսում ես, Մազուլինում լավ է ապրում,— կրկին ընդհատեց նրան Եվպրակսեյուշկան և այս անգամ արդեն, ըստ երևույթին, ոչ աննպատակ։

Պորֆիրի Վլադիմիրիչը զարմացած աչքերը գցեց նրա վրա, բայց, այնուամենայնիվ, կշտամբանքից զգուշացավ, կարծես ինչ-որ վատ բան զգաց։

— Իսկ որ Պալագեյուշկան լավ է ապրում, ուրեմն տերն իր հետ,— հեզորեն ասաց նա ի պատասխան։

— Նրա աղան ոչ մի տհաճ բան չի անում նրան,— շարունակեց դուրս տալ Եվպրակսեյուշկան,— ոչ էլ աշխատան-

քով է ծանրաբեռնում, իսկ ի միջի այլոց, ամբողջովին մետաքսի հագուստներով է պահում։

Պորֆիրի Վլադիմիրիչի զարմանքը մեծանում էր. Եվպրակսեյուշկայի խոսքերն այն աստիճան անհամապատասխան էին, որ նա նույնիսկ չիմացավ ինչ անել տվյալ դեպքում։

— Եվ ամեն օր նոր-նոր հագուստ է հագնում,— կարծես քնի մեջ զառանցում էր Եվպրակսեյուշկան,— այսօր ուրիշ, վաղը ուրիշ, իսկ տոն օրին հատուկ տեսակի։ Եկեղեցի էլ քառաձի կառքով են գնում. առաջ նա է գնում, հետո պարոնը։ Իսկ տերտերը, հենց որ տեսնում է կառքը, սկսում է զանգահարել։ Իսկ հետո նա իր սենյակումն է նստում։ Եթե պարոնին ցանկալի է նրա հետ ժամանակ անցկացնել, պարոնին իր մոտ է ընդունում, իսկ թե որ չէ, իր աղախնի հետ է խոսում և հուլունքով ձեռագործ է անում։

— Դե, ի՞նչ է որ,— արթնացավ վերջապես Պորֆիրի Վլադիմիրիչը։

— Ես այն եմ ասում, որ Պալագեյուշկայի կյանքը շատ լավ կյանք է։

— Իսկ քո կյանքը, երևի, վա՞տ է։ Ա՞խ, ա՞խ, ա՞խ, ինչ տեսակ... ագահն ես դու սակայն։

Եթե այդ անգամ Եվպրակսեյուշկան լուռ մնար, Պորֆիրի Վլադիմիրիչն, իհարկե, անմիտ խոսքերի հեղեղ կթափեր, որոնց մեջ անհետ կկորչեին բոլոր հիմար ակնարկները, որոնք վրդովել էին նրա դատարկախոսության կանոնավոր ընթացքը։ Բայց Եվպրակսեյուշկան, ըստ երևույթին, մտադրություն անգամ չուներ լռելու։

— Ի՞նչ ասել կուզի,— բարկությամբ ասաց նա։— Իմ կյանքն է՞լ վատ չէ։ Որ գործի հագուստով չեմ, դրա համար էլ փառք տիրոջը։ Անցյալ տարի երկու չթի հագուստի համար հնգական մանեթ տվեցիք... քանդվեցի՞ք։

— Իսկ բրդի կտորի հագուստը մոռացե՞լ ես։ Իսկ վերջերս շալը ո՞ւմ համար առանք։ Ա՞խ-ա՞խ-ա՞խ։

Պատասխանի փոխարեն Եվպրակսեյուշկան պնակը բռնած ձեռքով հենվեց սեղանին և այնպիսի խոր ատելությամբ

շեղ հայացք գցեց Իուդուշկայի կողմը, որ նա անսովոր լինելուց սարսուռ զգաց։

— Իսկ դու իմանո՞ւմ ես ապերախտության համար աստված ինչպե՞ս է պատժում,— մի տեսակ անվճռական թոթովեց նա, հույս ունենալով, որ աստծու անունը մասամբ խելքի կբերի չգիտես ինչից դրդված կնոջը։ Բայց Եվպրակսեյուշկան ոչ միայն չազդվեց այդ հիշատակումից, այլ անմիջապես, առաջին իսկ խոսքից ընդհատեց նրան։

— Կարիք չկա՛, կարիք չկա մոլորության մեջ գցելու։ Աստծուն մատնացույց անելու բան չկա,— ասաց Եվպրակսեյուշկան։— Երեխա չե՛մ։ Բավակա՛ն է։ Իշխեցի՛ք։ Բռնացա՛ք։

Պորֆիրի Վլադիմիրիչը լուռ մնաց։ Լիքը բաժակը համարյա սառել էր, բայց նա նույնիսկ ձեռք չէր տալիս։ Դեմքը գունատվել էր, շրթունքները թեթևակի դողում էին, կարծես ջանք էին անում քմծիծաղել, բայց ապարդյուն։

— Այդ բոլորը Անյուտկայի օյիններն են։ Այդ նա է, օձն է գրգռել քեզ,— վերջապես արտասանեց նա, ինքը թեպետ պարզ հաշիվ չտալով իր ասածին։

— Այդ ի՞նչ օյիններ են։

— Այն, որ դու խոսել սկսեցիր ինձ հետ... Նա է, նա է սովորեցրել։ Ուրիշ ոչ ոք չի, բացի նրանից,— ալեկոծվեց Պորֆիրի Վլադիմիրիչը։— Տեսե՞ք հապա, ոչ այս, ոչ այն, մետաքսյա հագուստներ է ուզում։ Իսկ դու, անամոթ, իմանո՞ւմ ես ձեր կոչումն ունեցողներից ովքեր են մետաքսյա հագուստներ հագնում։

— Որ ասեք, կիմանամ։

— Ուղղակի ամենից... դե, ամենից անառակները, նրանք են միայն հագնում։

Բայց Եվպրակսեյուշկան նույնիսկ դրանից չքաշվեց, այլ, ընդհակառակը, ինչ-որ անամոթ հիմնավորությամբ ասաց.

— Չեմ իմանում, ինչու են նրանք անառակ... Հայտնի է, պարոնները պահանջում են... Որ պարոնը որ մեզանից մեկին իր հետ սեր անելու է դրդում... դե ուրեմն, նա էլ նրա հետ է ապրում... Ես ու դու էլ մաղթանք չենք անում, այլ

զբաղվում ենք նրանով, ինչով որ մազուլինյան բարին է զբաղվում։

— Ա՜խ, դու... թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ։

Պորֆիրի Վլադիմիրիչը նույնիսկ անզգայացավ անակընկալությունից։ Նա լայն բացված աչքերով նայում էր իր ապստամբած մտերմուհուն և դատարկ խոսքերի ամբողջ մի խումբ եռ էր գալիս նրա կրծքում։ Բայց առաջին անգամ կյանքում նա աղոտ կերպով կասկածեց, որ դեպքեր են լինում, երբ դատարկ խոսքերով էլ մարդ սպանել չի կարելի։

— Դե, սիրելիս, քեզ հետ, տեսնում եմ, այսօր համաձայնության չենք գա,— ասաց նա, սեղանի մոտից վեր կենալով։

— Այսօր էլ համաձայնության չենք գա, վաղն էլ համաձայնության չենք գա... երբե՛ք։ Բավակա՛ն է։ Շատ իշխանություն արեցիք։ Շատ եմ լսել, հիմա արդեն դուք լսեք, թե ինչպես են լինելու իմ խոսքերը։

Պորֆիրի Վլադիմիրիչը սեղմած բռունցքներով ուզեց հարձակվել նրա վրա, բայց Եվպրակսեյուշկան այնպես վճռական առաջ ցցեց իր կուրծքը, որ նա հանկարծ շշմեց։ Դեմքը դարձրեց սրբապատկերի կողմը, վեր առաքեց ձեռները, շարժեց շուրթերը և դանդաղ քայլերով գնաց իր առանձնասենյակը։

Այդ ամբողջ օրը նա իրեն վատ էր զգում։ Նա դեռևս որոշակի վտանգ չուներ ապագայի մասին, բայց նրան հուզում էր արդեն այն, որ պատահեց այնպիսի մի փաստ, որն ամենևին չէր մտնում նրա օրվա սովորական դասավորության մեջ և որ այդ փաստն անպատիժ անցավ։ Նույնիսկ ճաշին նա դուրս չեկավ, այլ հիվանդ ձևացավ և համեստորեն, դիտավորյալ թույլ ձայնով խնդրեց, որ իր ճաշը առանձնասենյակ բերեն։

Երեկոյան, թեյից հետո, որը կյանքում առաջին անգամ բոլորովին լուռ անցավ, նա, սովորության համաձայն, աղոթքի կանգնեց. սակայն նրա շրթունքները զուր էին սովորական աղոթքը մրմնջում. հուզված միտքը նույնիսկ արտաքնապես հրաժարվում էր աղոթքին հետևել։ Ինչ-որ անպիտան, բայց սևեռուն անհանգստություն տիրել էր նրա ողջ էությունը, իսկ ականջն ակամայից լսում էր օրվա թուլացող արձագանքները, որոնք դեռևս մերթ այստեղ, մերթ այնտեղ հնչում էին գոլովլյովյան տան զանազան անկյուններում։ Վերջապես, երբ պատի ետև հնչեց վերջին բարձր հորանջը և դրանից հետո հանկարծ ամեն ինչ լռեց, կարծես խորասուզվեց ուր-որ խորունկ հատակում, նա այլևս չհամբերեց։ Անշշուկ քայլերով գաղտագողի անցավ միջանցքով և մոտենալով Եվպրակսեյուշկայի սենյակին, ականջը հպեց դռանը, լսելու։ Եվպրակսեյուշկան մենակ էր և լսելի էր, ինչպես նա, հորանջելով, արտասանում է. «Տե՜ր աստված, ողորմա՜ծ, սո՜ւրբ աստվածածին» և միևնույն ժամանակ բռով քորում է գոտկատեղը։ Պորֆիրի Վլադիմիրիչը փորձեց դռան բռնակը քաշել, բայց դուռը փակ էր։

— Եվպրակսեյուշկա, այստե՞ղ ես,— ձայն տվեց նա։

— Այստեղ եմ, բայց ձեզ համար չեմ,— պատասխանեց նա այնպես կոպիտ, որ Իուդուշկային մնում էր միայն լուռ ետ քաշվել իր առանձնասենյակը։

Մյուս օրն այլ խոսակցություն հետևեց։ Եվպրակսեյուշկան Պորֆիրի Վլադիմիրիչին խոցելու համար կարծես դիտմամբ ընտրել էր առավոտյան թեյի ժամանակը։ Ասես նա հոտառությամբ զգում էր, որ նրա ամբողջ դատարկաբանությունն այնպիսի ճշտությամբ էր բաժանված, որ խանգարված առավոտն անհանգստություն և ցավ էր պատճառում նրան արդեն ամբողջ օրը։

— Տեսնեի ես մի, գոնե մի աչքով մտիկ տայի, թե ինչպես են ուրիշները ապրում,— սկսեց նա մի տեսակ խորհրդավոր։

Պորֆիրի Վլադիմիրիչն ամբողջովին ցնցվեց։ «Սկսվում է»,— մտածեց նա, բայց լռեց ու սպասեց՝ հետո ինչ է լինելու։

— Իսկապե՞ս, մարդ իր սիրած երիտասարդի հետ լինի։ Քայլում են սենյակում զույգով և հիանո՞ւմ են մեկը մյուսով։ Ոչ նա է կոպիտ խոսք ասում նրան, ոչ մյուսը հակառակում։ «Հոգյա՜կս» ու «սիրելի՜ս»,— սա է նրանց միակ խոսակցությունը։ Հաճելի՛ է, պատվակա՛ն է։

Այդ նյութն առանձնապես ատելի էր Պորֆիրի Վլադիմիրիչին։ Թեպետև նա թույլ էր տալիս շնացումը խիստ ան-

հրաժեշտության պայմաններում, բայց և այնպես սիրային ժամանցը սատանայական գայթակղություն էր համարում, Սակայն նա այս անգամ ևս փոքրոգություն արեց, մանավանդ որ ուզում էր թեյ խմել, որը քանի բոպե էր արդեն եռում էր կանֆորկայի վրա, իսկ Եվպրակսեյուշկան չէր էլ մտածում նրա բաժակը լցնել։

— Իհարկե, մեզանից շատերն են հիմարանում,— շարունակեց Եվպրակսեյուշկան, անամոթաբար ճոճվելով աթոռի վրա և ձեռքով սեղանը թմբկահարելով,— կան էնպիսիները, որոնք բոլորովին գերի են դառնում և մի չթե հագուստի համար պատրաստ են ամեն ինչի, իսկ ոմանք էլ հենց այնպես, առանց մի բանի են իրենց կորցնում... Կվաս, ասում է, վարունգ, կեր-խմիր ինչքան ուզում ես։ Գրավելու բա՞ն են գտել։

— Բայց միթե շահագրգռությունից միայն...— սիրտ արեց երկչոտ նկատել Պորֆիրի Վլադիմիրիչը, աչքերով հետևելով թեյնիկին, որից գոլորշի էր բարձրանում։

— Ո՞վ է ասում միայն շահագրգռությունից, չլինի՞ ես եմ շահամոլ դարձել,— հանկարծ մի կողմ նետվեց Եվպրակսեյուշկան։— Երևի սկսել եք պատառն ափսոսալ։ Կերածս պատա՞ռն եք երեսովս տալիս։

— Ես երեսով չեմ տալիս, այլ այնպես եմ ասում. մենակ շահից չէ, ասում եմ, որ մարդիկ...

—«Ասո՞ւմ եմ»։ Դուք ասեք, բայց խոսքով մի արեք։ Տեսե՞ք հապա՝ շահից դրդվա՞ծ եմ ես ծառայում։ Իսկ թույլ տվեք հարցնել, այդ ի՞նչ շահ եմ ես գտել ձեզանից։ Բացի կվասից ու վարունգից։

— Դե մենակ կվասն ու վարունգը չի,— չհամբերեց, տարվեց իր հերթին Պորֆիրի Վլադիմիրիչը։

— Դե ասեք, ասեք, ուրիշ է՞լ ինչ։

— Իսկ ո՞վ է Նիկոլա ամսական չորս տոպրակ ալյուր ուղարկում։

— Հա հենց, չո՞րս տոպրակ։ Ուրիշ է՞լ ինչ։

— Ձավար, ձեթ... մի խոսքով, ամեն ինչ...

— Ձավա՞ր, ձեթ... ափսոսացի՞ք ծնողներիս համար... Ա՜խ, դուք...

— Ես չեմ ասում, որ ափսոս է, բայց դու...

— Մեղավորը ե՞ս դուրս եկա։ Իմ երեսով են տալիս իմ կերած պատառը և ես էլ մեղավո՞ր եմ համարվում։

Եվպրակսեյուշկան չդիմացավ և լաց եղավ։ Իսկ թեյը մինչ այդ եռում էր ու եռում կանֆորկայի վրա, այնպես որ Պորֆիրի Վլադիմիրիչը խիստ անհանգստացավ։ Ուստի նա հաղթահարեց իրեն, կամացուկ նստեց Եվպրակսեյուշկայի մոտ և թփթփացրեց մեջքը։

— Դե լավ, թեյ լցրու... ինչ ես թնկթնկում։

Բայց Եվպրակսեյուշկան երկու-երեք անգամ ևս հեծկլտաց, շրթունքներն ուռցրեց ու պղտոր հայացքն ուղղեց տարածության մեջ։

— Այ, դու հիմա ջահելների մասին խոսեցիր,— շարունակեց Իուդուշկան, աշխատելով ձայնին փաղաքշական շեշտ տալ,— բայց չէ՛ որ մենք էլ նույնպես... պառաված չենք... նույնպես...

— Բա՞ն գտաք։ Թողե՛ք ինձ։

— Ճշմարի՛տ։ Ես... իմանո՞ւմ ես դու... երբ ես ծառայում էի դեպարտամենտում, դիրեկտորն իր աղջիկն ուզում էր ինձ տա։

— Փտած բան է եղել, երևի... կողքը ծուռ...

— Ոչ, կարգին աղջիկ էր... Եվ ինչպես էր «Մի կարի ինձ, մայրիկ» երգում, այնպե՞ս էր երգում, այնպե՞ս էր երգում։

— Նա երգելը երգել է, բայց երգակցողն անպետք է եղել։

— Ոչ, ես, կարծեմ...

Պորֆիրի Վլադիմիրիչը տարակուսում էր. նա դեմ չէր նույնիսկ կեղծել, ցույց տալ, որ ինքն էլ կարող է զույգով ման գալ։ Այդ նպատակով նա սկսեց մի տեսակ անշնորհք օրորվել ամբողջ մարմնով և նույնիսկ ուզեց գրկել Եվպրակսեյուշկային, բայց Եվպրակսեյուշկան կոպտորեն խուսափեց նրա առաջ մեկնված ձեռներից և բարկացած գոռաց.

— Պատվով ասում եմ՝ հեռացիր, դև։ Թե չէ եռման ջրով կխաշեմ։ Հարկավո՛ր չի ինձ ձեր թեյն էլ։ Ոչի՛նչ հարկավոր չի։ Տեսե՞ք ինչ եք մտածել — կերածս պատառը երեսովս եք տալիս։ Կհեռանա՛մ ես այստեղից։ Քրիստոսը վկա, կհեռանա՛մ։

Եվ նա, իրոք էլ հեռացավ, դուռը շրխկացնելով և Պորֆիրի Վլադիմիրիչին մենակ թողնելով սեղանատանը։

Իուդուշկան բոլորովին շվարեց։ Նա ուզեց ինքն իր համար թեյ լցնել, բայց ձեռներն այնպես էին դողում, որ հարկ եղավ լաքեյի օգնությանը դիմել։

— Ոչ, այսպես չի կարելի, հարկավոր է մի կերպ կարգի բերել... կշռադատել,— շշնջում էր նա, հուզված ետ ու առաջ քայլելով սեղանատանը։

Բայց ոչ «կարգի բերել», ոչ «կշռադատել» նա չէր կարողանում։ Նրա միտքն այն աստիճան վարժվել էր մի ֆանտաստիկ առարկայից մյուսին թռչել, ոչ մի տեղ դժվարության չհանդիպելով, որ առօրյա իրականության հաստատակ փաստն ինքը նրան անակնկալի բերեց։ Հազիվ սկսում էր նա «կշռադատել», որ անթիվ չնչին բաներ շրջապատում էին նրան ամեն կողմից և փակում էին յուրաքանչյուր մտքի լուսավոր շող իրական կյանքի նկատմամբ։ Ինչ-որ ծուլություն տիրեց նրան, մտավոր և բարոյական ընդհանուր սակավարժանություն։ Զգում էր հեռու գնալ իրական կյանքից, ուրվականների փափուկ մահիճը, որոնց նա կարող էր տեղից-տեղ փոփոխել, ոմանց բաց թողնել, ոմանց առաջ քաշել, մի խոսքով՝ կարգավորել, ինչպես ինքն է ուզում։

Ու կրկին նա ամբողջ օրը լիակատար մենակության մեջ անցկացրեց, որովհետև Եվպրակսեյուշկան այս անգամ ոչ Ճաշին եկավ, ոչ երեկոյան թեյին, այլ ամբողջ օրով գյուղ գնաց քահանայի մոտ հյուր և վերադարձավ միայն ուշ երեկոյան։ Նույնիսկ ոչ մի բանով զբաղվել չկարողացավ Իուդուշկան, որովհետև դատարկ բաներն անգամ կարծես լքել էին նրան։ Մի անելանելի միտք էր միայն բռնանում՝ պետք է մի կերպ կարգի բերել, պետք է։ Ոչ կարողանում էր ծընրադրել, ոչ աղոթքի կենալ։ Նա զգում էր, որ իրեն ինչ-որ տկարություն է տիրում, որը սակայն նա դեռ որոշել չի կարողանում։ Մի քանի անգամ կանգնեց լուսամուտի առաջ, մտածելով տատանվող միտքը գամել որևէ առարկայի վրա, որևէ բանով ցրել իրեն, բայց միշտ էլ ապարդյուն։ Դրսում գարուն էր սկսվում, բայց ծառերը մերկ էին, նույնիսկ մատաղաշ խոտը չէր երևացել։ Հեռվում երևում էին սևացած դաշ-

տերը, ուր տեղ-տեղ դեռ սպիտակին էր տալիս ձյունը, որ մնացել էր ցածր տեղերում ու հովիտներում։ Ճանապարհն ամբողջապես ծածկված էր սևին տվող ցեխով ու փայլող ջրագուբերով։ Բայց այդ բոլորը երևում էր նրան կարծես ցանցի միջից։ Օժանդակ շենքերի մոտ լիակատար ամայություն էր տիրում, թեպետ բոլոր դռները կրնկի վրա բաց էին. տանն էլ ոչ ոքի գտնել հնարավոր չէր, թեպետ ականջին զանազան ձայներ էին հասնում, ինչպես, օրինակ՝ դռների հեռավոր շխկոցներ։ Այ, լավ կլիներ հիմա անտեսանելի դառնալ ու ականջ գնել, թե ինչ է խոսում իր մասին գոեհիկների ցեղը։ Հասկանո՞ւմ են արդյոք սրիկաներն իր ողորմածությունը, թե, գուցե, իր բարիքների համար իրեն իսկ վատաբանում են։ Ուզում ես առավոտից-երեկո նրանց կոկորդը լցրու,— շարունակ քիչ է, կարծես ոչինչ չեն կերել։ Վաղո՞ւց է, որ վարունգի նոր տակառ է բացվել, բայց արդեն... Սակայն նոր էր տարվել այդ մտքով, նոր էր միայն սկսել հաշվել, թե տակառում քանի վարունգ կարող է լինել և քանի վարունգ պետք է վերցնել ամեն մարդու համար առատ-առատ հաշված, երբ կրկին գլխում փայլում էր իրականության շողը և միանգամից շուռ էր տալիս նրա բոլոր հաշվարկումները։

«Տեսնո՞ւմ եք հապա, նույնիսկ առանց հարցնելու գընաց»,— մտածում էր նա, մինչ աչքերը թափառում էին տարածության մեջ, ջանալով որոշել քահանայի տունը, որտեղ, ամենայն հավանականությամբ, այս րոպեիս սոխակի պես գեղգեղում է Եվպրակսեյուշկան։

Բայց ահա և ճաշը մատուցեցին. Պորֆիրի Վլադիմիրիչը մենակ նստել է սեղանի մոտ և մի տեսակ ալարկոտ գդալում է դատարկ արգանակը (Իուդուշկան տանել չէր կարողանում անմիս արգանակը, բայց այսօր նա դիտավորյալ կարգադրել է հենց այդպիսի արգանակ եփել)։

«Երևի տերտերի համար շատ անտանելի է, որ նրանց տուն է գնացել,— միտք է անում նա։— Այնուամենայնիվ ավելորդ պատառ պետք է հրամցնեն։ Կաղամբապուր, քաշովի... Իսկ հյուրի համար, թերևս, և որևէ տապակա...»

Կրկին նրա ֆանտազիան բորբոքվում է, կրկին նա սկըսում է մոռանալ իրեն, կարծես երազի մեջ է ընկնում։ Քա-

նի՞ ավելորդ գդալ կաղամբապուր կգնա։ Քանի՞ գդալ քաշովի... Եվ ի՞նչ են խոսում տերտերն ու տերտերակինը Եվպրակսեյուշկայի գալու առիթով։ Ինչպես են նրանք իրար մեջ հայհոյում նրան... Այդ բոլորը՝ և՛ ուտելիքները, և՛ խոսակցությունները շարունակ պտտվում են նրա աչքերի առաջ, որպես կենդանի։

«Երևի բոլորն էլ մի ամանից են ուտում։ Գնա՛ց։ Բերանը քաղցրացնելու լա՞վ տեղ է գտել։ Դուրսը ցեխ է, շլոփա,— մեկ էլ տեսար փորձանք պատահեց։ Կգա հիմի, կբերի գզգզված պոչերը... ա՞խ դու, գարշելի... Ի՛սկ որ գարշելի։ Այ, հարկավոր է, պետք է մի կերպ...»

Այդ խոսքի վրա միտքը մշտապես ընդհատվում էր։ Ճաշից հետո նա սովորականի պես պառկեց քնելու, բայց միայն տանջվեց կողքից-կողք շուռումուռ գալով։ Եվպրակսեյուշկան տուն եկավ, երբ արդեն մթնել էր, և այնպես անձայն անցավ իր անկյունը, որ նա չնկատեց էլ։

Նա սպասավորներին հրամայել էր, երբ Եվպրակսեյուշկան գա, հայտնեն իրեն, բայց նրանք էլ, կարծես խոսքը մեկ արած, ձայն չհանեցին։ Նա կրկին փորձեց նրա սենյակը գընալ, բայց այս անգամ նույնպես դուռը փակ գտավ։

Երրորդ օրվա առավոտյան Եվպրակսեյուշկան թեպետև հայտնվեց թեյի ժամանակ, բայց է՛լ ավելի ահեղ ու թունդ խոսեց։

— Որտե՞ղ է հիմի իմ Վոլոդյուշկան,— սկսեց նա, ձայնին դիտմամբ արտասվալից շեշտ տալով։

Պորֆիրի Վլադիմիրիչն այդ հարցի ժամանակ բոլորովին անզգայացավ։

— Աչքի պոչով գոնե մի տեսնեի, ինչպես է նա այնտեղ տանջվում։ Կամ գուցե իսկապես մեռել է արդեն...

Իուդուշկան դողդոջուն շարժում էր շուրթերը, աղոթք շշնջալով։

— Մեզանում ամեն բան սովորականի նման չի։ Այ, մազուլինյան պարոնի Պալագեյուշկան աղջիկ բերեց, իսկույն բատիստների մեջ փաթաթեցին, վարդագույն անկողին սարքեցին... Դայակին միայն այնքա՞ն դեյրա ու ապարոշ նվիրեցին... Իսկ մեզանում... է՞խ՛խ... դուք։

Եվպրակսեյուշկան գլուխը թափով շուռ տվեց լուսամուտի կողմն ու հառաչեց։

Եվպրակսեյուշկան գլուխը թափով շուռ տվեց լուսամուտի կողմն ու հառաչեց։

— Ճիշտ են ասում, որ բոլոր պարոններն անիծված են։ Երեխաներ են ծնում ու ճահիճն են նետում շան լակոտների նման։ Ե՛վ հոգս էլ չեն անում, և՛ պատասխան էլ չեն տալիս ոչ ոքի, կարծես նրանց համար աստված էլ գոյություն չունի։ Գայլը որ գայլ է, նա էլ այդպիսի բան չի անի։

Պորֆիրի Վլադիմիրիչի ներսը ուղղակի եփ էր գալիս։ Նա երկար զսպում էր իրեն, բայց վերջապես չդիմացավ ու ասաց ատամների արանքից.

—Սակայն... դու նոր մոդաներ ես հնարել։ Երրորդ օրն է արդեն, մի գլուխ քո ասածներն եմ լսում։

— Ինչ կա որ, մոդա է, թող մոդա լինի։ Շարունակ դուք հո չեք խոսելու, ուրիշներն էլ կարող են խոսք ասել։ Իսկա՞պես։ Երեխա ունեցաք — և ի՞նչ արեցիք նրան։ Երևի գյուղում, մի որևէ խրճիթում փտացրիք։ Ոչ խնամք ունի, ոչ ուտելիք ունի, ոչ հագնելիք... Երևի կեղտի մեջ ընկած, միայն ծծակ է ծծում։

Նա արտասվեց և վզի թաշկինակի ծայրով արցունքները մաքրեց։

— Պոգորելկյան օրիորդն այ ճիշտ ասաց, որ ձեզ հետ սարսափելի է։ Սարսափելի է, որ կա։ Ոչ բավականություն, ոչ ուրախություն, մենակ նենգություն... Բանտում կալանավորներն ավելի լավ են ապրում։ Այնուամենայնիվ, եթե որ ես հիմա երեխա ունենայի, գոնե ուրախություն կտեսնեի ինչ էլ որ լիներ։ Թե չէ, համեցեք, երեխա եղավ, բայց խլեցին։

Պորֆիրի Վլադիմիրիչը նստել էր ու մի տեսակ տանջալից գլուխն էր թափահարում, կարծես նրան իսկապես էլ պատին էին սեղմել։ Երբեմն-երբեմն նրա կրծքից նույնիսկ հառաչանք էր թռչում։

— Ա՞խ, ծանր է,— վերջապես ասաց նա։

— «Ծանրի» բան չկա։ Ճորտը ինքն իրեն է խփում, երբ վատ է ապրում։ Իսկապես, գնամ Մոսկվա, գոնե մի աչքով։

Վոլոդկային մտիկ տամ։ Վոլո՞դկա, Վոլո՞դինկա, սիրե՞լի-ի՞ս։ Բարին, կթողնե՞ս Մոսկվա գնամ։

— Կարիք չկա,— խուլ պատասխանեց Պորֆիրի Վլադիմիրիչը։

— Կգնա՛մ։ Ոչ ոքից իրավունք չեմ վերցնի և ո՛չ ոք ինձ արգելել չի կարող, որովհետև ես մայր եմ։

— Դու ի՞նչ մայր ես, դու ցոփ պոռնիկ ես,— ահա՛ ով ես դու,— պայթեց վերջապես Պորֆիրի Վլադիմիրիչը։— Ասա, ի՞նչ ես ուզում ինձանից։

Այդ հարցին Եվպրակսեյուշկան, ըստ երևույթին, պատրաստ չէր։ Նա հայացքը գամեց Իուդուշկայի վրա և լուռ մնաց, կարծես միտք էր անում՝ իսկապես, ի՞նչ է ուզում ինքը։

— Ա՜յ թե ինչ, արդեն պոռնի՞կ էլ անվանեցիք,— բացականչեց նա, արտասուք թափելով։

— Այո, ցոփ պոռնի՛կ, պոռնի՛կ, պոռնի՛կ. թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ։

Պորֆիրի Վլադիմիրիչը վերջնականապես կորցրեց իրեն, թռավ տեղից և համարյա վազելով դուրս գնաց սեղանատնից։

Դա եռանդի վերջին բռնկումն էր, որը նա թույլ տվեց իրեն։ Հետո նա մի տեսակ շուտ նիհարեց, բթացավ ու վախեցավ, մինչդեռ Եվպրակսեյուշկայի կողմից նրա օձիքից կպչելու վերջն էլ չէր երևում։ Եվպրակսեյուշկան իր տրամադրության տակ հսկայական ուժ ուներ՝ բթամտության համառությունը, և որովհետև այդ ուժը միայն մի կողմի վրա էր խփում՝ վրդովել, ապականել կյանքը, ապա ժամանակ առ ժամանակ նա ուղղակի սարսափելի էր դառնում։ Կամաց-կամաց սեղանատան ասպարեզը նեղ եկավ նրան։ Նա ներխուժում էր առանձնասենյակ և այնտեղ էլ վրա էր հասնում Իուդուշկային (առաջ նա մտքով անգամ չէր անցկացնի համարձակություն առնել առանձնասենյակ մտնելու, երբ բարինը «զբաղված էր»)։ Գալիս, նստում էր լուսամուտի մոտ, պղտոր աչքերը տարածությանն էր հառում, թիոսկըրները քորում էր շրջանակին քսելով ու սկսում էր անմիտանմիտ դուրս տալ։ Առանձնապես նրա սրտին մոտ եղավ խոսակցության մի թեմա, թեմա, որի հիմքում ընկած

էր Գոլովլյովոյից հեռանալու սպառնալիքը։ Իսկապես նա այդ մասին երբեք լուրջ չէր մտածել և նույնիսկ շատ կզարմանար, եթե հանկարծ նրան առաջարկեին վերադառնալ իր ծնողների մոտ. բայց նա կռահում էր, որ Պորֆիրի Վլադիմիրչն ամենից շատ վախենում է, թե նա կհեռանա։ Այդ առարկայի մասին նա քիչ-քիչ էր խոսում, կողմնակի ճանապարհներով։ Լռում է, ականջն է քչփորում և հանկարծ կարծես ինչոր բան է հիշում։

— Այսօր Նիկոլում, երևի, բլինի են եփում։

Պորֆիրի Վլադիմիրիչն այդ ներածականի ժամանակ զայրույթից կանաչ դույն է ստանում։ Հենց այդ ժամանակ էր, որ նա սկսել էր հաշիվներ անել, թե տարեկան ինչ գումարի կաթ կծախի նա, եթե շրջանի բոլոր կովերը սատկեն և միայն իր կովերը, աստծու ողորմածությամբ, մնան և այն էլ առաջվա համեմատությամբ կրկնակի կաթ տան։ Սակայն Եվպրակսեյուշկայի գալու և բլինիների մասին բացած խոսքի պատճառով նա թողնում է իր աշխատանքը և նույնիսկ ջանք է անում ժպտալ։

— Իսկ ինչո՞ւ են այնտեղ բլինի եփում,— հարցնում է նա, ամբողջ դեմքով ժպիտ ցույց տալով։— Ա՜խ աստված իմ, իսկապես էլ ախր այսօր ծնողների հիշատակության օր է։ Իսկ ես մոռացել եմ։ Ա՜խ, ինչ մեղք է։ Հանգուցյալ մամենկային ինչով ենք հիշելու։

— Բլինի կուղեի ուտել... հիշատակության բլինի...

— Իսկ ո՞վ է քեզ արգելում։ Կարգադրի՛ր։ Խոհարարուհի Մարյուշկային հո՛ւպ տուր։ Կամ թե Ուլիտուշկային։ Ուլիտուշկան շատ լավ բլինի է եփում։

— Դուցե ուրիշ բանով էլ է նա ձեզ դուր եկել,— խայթում է Եվպրակսեյուշկան։

— Ոչ, մեղք է ասել, լավ, նույնիսկ շատ լավ բլինի է եփում Ուլիտուշկան։ Թեթև, փափուկ, մարդ ուտելուց չի կշտանում։

Պորֆիրի Վլադիմիրիչն ուզում է կատակով ու ծիծաղով զվարճացնել Եվպրակսեյուշկային։

— Բլինի կուտեի ես, բայց ոչ գոլովլյովյան, այլ ծնողներիս,— համառում է նա։

— Դա էլ մի դժվար բան չի։ Հուպ տուր կառապան Արխիպուշկային։ Հրամայիր զույգ ձի լծեն, սլացիր քեզ համար ու սլացիր։

— Չէ՞ արդեն, թոչունը թակարդն է ընկել... ինքս եմ հիմար եղել։ Ո՞ւմ եմ հարկավոր ես հիմա այսպես։ Ինքներդ ցոփ պոռնիկ անվանեցիք ինձ...

— Ա՜խ, ա՜խ, ա՜խ, և ամոթ չի՞ քեզ, որ ինձ զրպարտում ես։ Իսկ դու գիտե՞ս, թե զրպարտության համար աստված ինչպես է պատժում։

— Ասացիք, հենց ուղղակի պոռնիկ էլ անվանեցիք։ Այ, սրբապատկերն էլ այստեղ է, հենց նրա առաջ։ Ա՜խ, զզվելի է ինձ համար այս Գոլովլյովոն։ Կփախչեմ այստեղից, իսկապե՛ս կփախչեմ։

Այս ասելիս Եվպրակսեյուշկան իրեն միանգամայն անբռնազբոսիկ է պահում՝ ճոճվում է, քիթն է քշփորում, քորվում է։ Ըստ երևույթին, նա կոմեդիա է խաղում, գրգռում է։

— Ես, Պորֆիրի Վլադիմիրիչ, ինչ էի ուզում ձեզ ասել,— շարունակում է նա դուրս տալ,— ես պիտի մեր տուն գնամ։

— Հյո՞ւր ես ուզում գնալ ծնողներիդ մոտ։

— Ոչ, ընդմիշտ։ Կմնամ, նշանակում է, Նիկոլում։

— Ինչո՞ւ այդպես։ Վիրավորվե՞լ ես, ինչ է։

— Ոչ, չեմ վիրավորվել, բայց և այնպես... Դե մի օր պիտի գնամ, չէ՞... Հետո, տխուր է ձեզ մոտ... այնպես որ նույնիսկ սարսափելի է։ Տանը կարծես ամեն ինչ մեռած լինի։ Սպասավորները բոլորը թաքնվում են խոհանոցում և իրենց սենյակներում, նստում եմ ամբողջ տանը մեն-մենակ, տեսար մեկ էլ դեռ մորթեցին։ Գիշերը պառկում եմ քնելու, բոլոր անկյուններից շշուկներ են լսվում։

Սակայն օրեր էին անցնում, իսկ Եվպրակսեյուշկան չէր էլ մտածում իրագործել իր սպառնալիքը։ Այնուամենայնիվ այդ սպառնալիքի ազդեցությունը Պորֆիրի Վլադիմիրիչի վրա շատ վճռական էր։ Նա հանկարծ ըմբռնեց, որ չնայած առավոտից մինչև երեկո տառապում էր այսպես ասած աշխատանքի ձեռքին, բայց, իսկապես ասած, բառի լայն իմաստով ոչինչ չէր անում և կարող էր մնալ առանց ճաշի, չուչնչալ ոչ մաքուր սպիտակեղեն, ոչ կանոնավոր հագուստ, եթե որևէ հսկող աչք չլիներ, որը հետևեր, որպեսզի նրա տնային կենցաղը չընդհատվի։ Մինչև այժմ նա կարծես չէր զգում կյանքը, չէր հասկանում, որ կյանքն ինչ-որ իրադրություն ունի, որն իրեն-իրեն չի ստեղծվում։ Նրա ամբողջ օրն ընթանում էր մեկընդմիշտ սահմանված կարգով. տանը ամեն ինչ համախմբված էր նրա շուրջը և նրա համար. ամեն ինչ արվում էր իր ժամանակ, ամեն առարկա գտնվում էր իր տեղը,— մի խոսքով ասած, ամեն տեղ այնպիսի անփոփոխ ճշտություն էր տիրում, որ նա նույնիսկ ոչ մի նշանակություն չէր տալիս դրան։ Շնորհիվ իրերի այդպիսի դասավորության, նա կարող էր ամբողջությամբ անձնատուր լինել և՛ դատարկախոսության, և՛ դատարկամտության, չվախենալով, որ իրական կյանքի խայթոցները երբևիցե նրան մակերես դուրս կբերեն, կմերկացնեն։ Ճշմարիտ է, որ ամբողջ այդ արհեստական մեքենայությունը մազից էր կախված, բայց մշտապես ինքն իր մեջ խորասուզված մարդու գլխով անգամ չէր անցնի, որ այդ մազը շատ բարակ է, հեշտությամբ կտրվող։ Նրան թվում էր, որ կյանքը հաստատված է ամրապինդ, մշտապես... Եվ հանկարծ այդ բոլորը պիտի խորտակվի, խորտակվի մի ակնթարթում, մի հիմար՝ կգնա՛մ խոսքով։ Իուդուշկան բոլորովին շփոթվեց։ Ի՞նչ կլինի, եթե Եվպրակսեյուշկան իսկապես էլ գնա,— մտածում էր նա։ Եվ սկսում էր մտովի ամեն տեսակի անհեթեթ համակարգումներ անել Եվպրակսեյուշկային որևէ կերպ պահելու համար և նույնիսկ որոշում էր այնպիսի զիջողություններ անել ընդվզող Եվպրակսեյուշկայի երիտասարդությանը, որպիսիք առաջ երբեք նրա մտքով անգամ չէին անցնի։

— Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ,— թքոտում էր նա, երբ իր ամբողջ վիրավորական մերկությամբ առաջն էր կանգնում կառապան Արխիպուշկայի կամ գրասենյակի ծառայող Իգնատի հետ գործ ունենալու հնարավորությունը։

Շուտով, սակայն, նա համոզվեց, որ Եվպրակսեյուշկայի հեռանալու վերաբերյալ իր ունեցած վախը առնվազն անհիմն է, և դրանից հետո նրա գոյությունը մի տեսակ կարծես միանգամից իր համար նոր և բոլորովին անսպասելի

փուլի մեջ մտավ։ Եվպրակսեյուշկան ոչ միայն չհեռացավ, այլև նույնիսկ նկատելի չափով խաղաղվեց, վերջ տալով իր ձանձրացուցիչ հետապնդումներին։ Դրա փոխարեն նա բոլորովին լքեց Պորֆիրի Վլադիմիրիչին։ Եկավ մայիսը, սկսվեցին լավ օրերը, և Եվպրակսեյուշկան համարյա տուն չէր գալիս։ Միայն դռների մշտական շրխկոցից էր Իուդուշկան հասկանում, որ նա իր սենյակը վազեց, որպեսզի դրանից հետո նորից անհայտանա։ Առավոտյան արթնանալով, Իուդուշկան իր սովորական տեղում չէր գտնում հագուստը և պիտի երկարատև բանակցություններ վարեր՝ մաքուր սպիտակեղեն ստանալու համար։ Թեյն ու ճաշը նրան մատուցում էին կամ շատ շուտ, կամ շատ ուշ, ըստ որում սպասարկում էր կիսահարբած լաքեյ Պրոխորը՝ կեղտոտ սերթուկով, որից մշտապես ձկան և օղու զզվելի հոտ էր փչում։

Այնուամենայնիվ Պորֆիրի Վլադիմիրիչն ուրախ էր արդեն և այն բանի համար, որ Եվպրակսեյուշկան հանգիստ է թողնում իրեն։ Նա հաշտվում էր նույնիսկ անկարգության հետ, միայն թե իմանար, որ տանը կա մեկը, որն այդ անկարգությունն իր ձեռքում է պահում։ Նրան սարսափեցնում էր ոչ այնքան խառնաշփոթությունը, որչափ կյանքի իրադրությանը անձամբ միջամտելու անհրաժեշտության միտքը։ Սոսկումով էր պատկերացնում նա, որ կարող է այնպիսի բոպե լինել, երբ նա ինքը հարկադրված պիտի լինի կարգադրել, հրամայել, հետևել։ Այդ բոպեի նախատեսությամբ նա աշխատում էր ճնշել իր մեջ ամեն տեսակի բողոք, աչք էր փակում տանը սկսվող անիշխանության վրա, նսեմացնում էր իրեն, լռում էր։ Իսկ կալվածատանը մինչ այդ ամենօրյա բացարձակ խրախճանք էր գնում։ Տաքերն ընկնելու հետ գոլովլյովյան կալվածատունը, որը մինչ այդ պատկառելի և նույնիսկ մռայլ տեսք ուներ, կենդանացավ։ Երեկոյան բոլոր սպասավորները՝ ինչպես ժամանակավոր, նույնպես և իսկական ծառայության մեջ գտնվողները՝ ծեր ու ջահել,— բոլորը փողոց էին թափվում։ Երգեր էին երգում, հարմոն էին նվագում, քրքջում էին, ճչում-ճղճղում էին, վազուկ-բռնուկ էին խաղում։ Գրասենյակի ծառայող Իգնատկան սկսեց հագնել վառ-կարմիր վերնաշապիկ և մի ինչ-որ

տարօրինակ նեղ բաճկոն, որն ամենևին չէր ծածկում նրա դուրս գցած կորովի կուրծքը։ Կառապան Արխիպն ինքնագլուխ տեր դարձավ հանդիսավոր երթերի համար հատկացրած մետաքսյա վերնաշապիկին ու պլիսե անթև վերնազգեստին և, ըստ երևույթին, մրցում էր Իգնատի հետ՝ Եվպրակսեյուշկայի սիրտը գրավելու ծրագրերում։ Եվպրակսեյուշկան վազվզում էր նրանց մեջ և, կարծես խենթացած, մեկ սրա մոտ էր նետվում, մեկ նրա մոտ։ Պորֆիրի Վլադիմիրիչը վախենում էր լուսամուտից դուրս նայել, որպեսզի սիրային տեսարանի վկա չդառնա, սակայն չլսել չէր կարող։ Երբեմն նրա ականջներում ուժգին շրմփոց էր հնչում՝ այդ կառապան Արխիպուշկան էր ամբողջ թաթով հասցնում Եվպրակսեյուշկային, վազելով նրա ետևից վազուկ-բռնուկ խաղի ժամանակ (և Եվպրակսեյուշկան չբարկացավ, այլ միայն թեթևակի նստեց)։ Երբեմն նրա ականջին այսպիսի խոսակցություն էր հնչում.

— Եվպրակսեյա Նիկիտիշնա, այ Եվպրակսեյա Նիկիտիշնա,— ձայն է տալիս հարբած Պրոխորը կալվածատան պատշգամբից։

— Ի՞նչ ես ուզում։

— Թեյի պահարանի բանալիները տվեք, բարինը թեյ է ուզում։

— Կսպասի՛... խրտվիլակը...

* * *

Կարճ ժամանակամիջոցում Պորֆիրի Վլադիմիրիչը բոլորովին վայրենացավ։ Նրա կյանքի ամբողջ սովորական ընթացքը վրդովվեց և ապականվեց, բայց նա մի տեսակ դադարեց ուշադրություն դարձնել դրան։ Նա կյանքից ոչինչ չէր պահանջում, բացի այն, որպեսզի իրեն հանգիստ թողնեն իր վերջին ապաստարանում՝ առանձնասենյակում։ Որչափ որ նա առաջ շրջապատողների հետ ունեցած հարաբերություններում բծախնդիր էր ու տաղտկացնող, այժմ նույնքան վախկոտ և մռայլ — հնազանդ դարձավ։ Թվում էր, որ ամեն մի հարաբերություն իրական կյանքի հետ ընդհատ-

վել էր նրա համար։ Ոչինչ չլսել, ոչ ոքի չտեսնել — ահա ինչ էր ցանկանում նա։ Եվպրակսեյշկան ամբողջ օրերով կարող էր տանը չերևալ, սպասավորները որքան ուզում էին, կարող էին սանձարձակություն անել, պարապ թրև գալ,— նա ամեն ինչի անտարբեր էր վերաբերվում, կարծես ոչինչ չէր պատահել։ Առաջ եթե գրասենյակային պաշտոնյան ամենափոքրիկ անճշտապահություն թույլ տար տնտեսական կառավարման զանազան ճյուղերի վերաբերյալ տեղեկագրերը կազմելու մեջ, նա, երևի, խրատներով հոգին կհաներ. այժմ նա ամբողջ շաբաթներով առանց տեղեկագրերի էր մնում և երբեմն էր միայն ճնշվում դրանից, այսինքն այն ժամանակ, երբ որևէ ֆանտաստիկ հաշիվ հաստատելու համար նրան թիվ էր պետք։ Այնինչ առանձնասենյակում, մենամենակ ինքն իր հետ նա իրեն լիակատար տեր էր զգում, որ հնարավորություն ուներ դատարկամտել որքան ցանկանում է։ Իր երկու եղբոր նման, որոնք մեռան հարբեցողությունից, նա էլ էր տառապում նույն հիվանդությամբ։ Միայն դա այլ տեսակի հարբեցողություն էր՝ դատարկամտության հարբեցողություն։ Փակված առանձնասենյակում և գրասեղանի առաջ նստած, նա առավոտից մինչև երեկո տառապում էր ֆանտաստիկ աշխատանքից. ամեն տեսակի անիրագործելի ենթադրություններ էր անում, վերստուգման էր ենթարկում ինքն իրեն, խոսում էր երևակայական զրուցակիցների հետ և ամբողջ տեսարաններ էր ստեղծում, որի մեջ պատահականորեն մտքին եկած առաջին իսկ մարդը գործող անձ էր դառնում։

Ֆանտաստիկ գործողությունների ու կերպարների այդ հորձանուտում գլխավոր դերը խաղում էր վաստակելու, շահելու հիվանդագին ծարավը։ Թեպետ Պորֆիրի Վլադիմիրիչը միշտ էլ ընդհանրապես եղել է մանրախնդիր և բանսարկությունների հակամետ, բայց շնորհիվ նրա գործնական անհեթեթության, այդ հատկություններից ոչ մի ուղղակի շահ անձամբ իր համար չէր ստացվում։ Նա ձանձրացնում էր, տանջում, բռնադատում (առավելապես ամենից անպաշտպան մարդկանց, որոնք իրենք, այսպես ասած, վիրավորանք կրելու պատրաստ էին), բայց ինքն ևս ավելի

հաճախ կորուստ էր ունենում իր հնարամտությունից։ Այժմ այդ հատկություններն ամբողջովին փոխադրվեցին վերացական, ֆանտաստիկ հողի վրա, ուր այլևս տեղ չկար ոչ դիմադրության, ոչ արդարացումների, ուր չկային ոչ ուժեղներ, ոչ թույլեր, ուր գոյություն չունեին ոչ ոստիկանություն, ոչ հաշտարար դատավորներ (կամ, ավելի լավ է ասել, գոյություն ունեին, բայց միմիայն նրա, Իուդուշկայի շահերը պաշտպանելու համար) և ուր, հետևապես, նա ազատորեն կարող էր ամբողջ աշխարհը բանսարկությունների, ճնշումների և վիրավորանքների ցանցով պատել։

Նա սիրում էր մտովի տանջել, քայքայել, թշվառացնել, արյուն ծծել։ Մեկը մյուսի ետևից հետազոտում էր իր տընտեսության բոլոր ճյուղերը՝ անտառը, անասունները, հացը, դաշտերը և այլն, և ամեն մեկի վրա ֆանտաստիկ ճընշումների նախշավոր շենք էր կառուցում, որ ուղեկցվում էին ամենաբարդ հաշիվներով, ուր մտնում էին և՛ տուգանքներ, և՛ վաշխառություն, և՛ համատարած փորձանքներ, և՛ արժեթղթեր ձեռք բերել, մի խոսքով՝ դատարկ կալվածատիրական իդեալների ամբողջ խճճված մի աշխարհ։ Բայց որովհետև այդտեղ ամեն ինչ կախված էր կամայական ավել վճարելուց կամ պակաս վճարելուց, ուստի յուրաքանչյուր ավել վճարած կամ պակաս վճարած կոպեկ առիթ էր ծառայում ամբողջ շենքի վերակառուցման, որն, այդպիսով, ենթարկվում էր հավիտենական ձևափոխումների։ Հետո, երբ հոգնած միտքն այլևս անուժ էր անհրաժեշտ ուշադրությամբ հետևելու վաստակելու գործողությունների խճճված հաշիվների բոլոր մանրամասնություններին, նա իր ֆանտազիայի ասպարեզը փոխադրում էր ավելի առաձգական հնարաբանությունների վրա։ Վերհիշում էր բոլոր ընդհարումները և վիճաբանությունները, որոնք ունեցել էր նա մարդկանց հետ ոչ միայն մոտիկ անցյալում, այլև հեռավոր երիտասարդության ժամանակ և մշակության էր ենթարկում դրանք այն հաշվով, որ միշտ յուրաքանչյուր ընդհարումից հաղթող էր դուրս գալիս։ Նա մտովի վրեժ էր լուծում դեպարտամենտի նախկին պաշտոնյաներից, որոնք ծառայության մեջ իրենից առաջ էին անցել և խոցել էին նրա ինքնասիրությունն

այն աստիճան, որ հարկադրեցին հրաժարվել ծառայության կարիերայից. վրեժ էր լուծում գպրոցական ընկերներից, որոնք մի ժամանակ օգտվում էին իրենց ֆիզիկական ուժից, որպեսզի գրգռեն ու ճնշեն նրան. վրեժ էր լուծում կալվածակից հարևաններից, որոնք հակահարված էին տալիս նրա պահանջմունքներին և պաշտպանում էին իրենց իրավունքները. վրեժ էր լուծում ծառաներից, որոնք երբևիցե կոպիտ խոսք էին ասել իրեն կամ ուղղակի բավականաչափ հարգանք չէին մատուցել. վրեժ էր լուծում մամենկա Արինա Պետրովնայից այն բանի համար, որ նա շատ փող էր ծախսել Պոգորելկին կարգի բերելու վրա, փող, որը «ամեն իրավունքներով» իրեն էր պատկանում. վրեժ էր լուծում Ստյոպկա եղբորից այն բանի համար, որ նա իրեն Իուդուշկա էր անվանել. վրեժ էր լուծում հորաքույր Վարվառա Միխայլովնայից այն բանի համար, որ նա այն ժամանակ, երբ ոչ ոք այլևս չէր սպասում, հանկարծ այնքան երեխաներ ծնեց՝ «մի քիչ դեսից, մի քիչ դենից», և որի հետևանքով Գորյուշկինո գյուղն ընդմիշտ գնաց գոլովլյովյան տոհմի ձեռքից։ Վրեժ էր լուծում կենդանիներից, վրեժ էր լուծում մեռածներից։

Ցնորամտելով այս ձևով, նա աննկատելի կերպով արբեցումի էր հասնում։ Հողը հեռանում էր նրա ոտների տակից, մեջքին կարծես թևեր էին բուսնում։ Աչքերը փայլատակում էին, շրթունքները ցնցվում էին ու փրփուրով ծածկվում, դեմքը գունատվում էր և սպառնալից արտահայտություն էր ստանում։ Եվ ֆանտազիան մեծանալու հետ, ամբողջ օդը նրա շուրջը լցվում էր ուրվականներով, որոնց հետ նա երևակայական պայքարի էր մտնում։

Նրա գոյությունն այնպես լիակատար և անկախ դարձավ, որ նրան այլևս ոչինչ չէր մնում ցանկանալ։ Ամբողջ աշխարհն իր ոտների տակ էր, հասկանալի է, այն պարզ աշխարհը, որը մատչելի էր նրա աղքատիկ աշխարհայացքին։ Յուրաքանչյուր պարզագույն մոտիվ նա կարող էր փոփոխակել անվերջ, յուրաքանչյուրին կարող էր դառնալ նորից՝ ամեն անգամ նոր ձևով մշակելով։ Դա յուրատեսակ էքստազ էր, գուշակություն, նման այն բանին, ինչ տեղի է ունենում

ոգեհարցության սեանսների[58] ժամանակ։ Ոչնչով չսահմանափակված երևակայությունը կարծեցյալ իրականություն է ստեղծում, որը մտավոր ուժերի մշտական գրգռման հետևանքով կոնկրետ, համարյա շոշափելի իրականության է փոխվում։ Դա հավատ չէ, համոզմունք չէ, այլ մտավոր անբարոյականություն է, էքստազ։ Մարդիկ անմարդկայնացվում են. նրանց դեմքերն աղճատվում են, աչքերը վառվում են, լեզուն անգիտակցական ճառեր է ասում, մարմինն անգիտակցական շարժումներ է գործում։

Պորֆիրի Վլադիմիրիչը երջանիկ էր։ Նա ամուր փակում էր դուռ ու լուսամուտ, որպեսզի չլսի, իջեցնում էր վարագույրները, որպեսզի չտեսնի։ Կենսական բոլոր սովորական պահանջները, որոնք անմիջական առնչություն չունեին նրա երևակայական աշխարհի հետ, նա կատարում էր շտապ, համարյա զզվանքով։ Երբ հարբած Պրոխորը ծեծում էր նրա սենյակի դուռը, զեկուցելով, որ ճաշը մատուցված է, նա անհամբեր վազ էր տալիս սեղանատուն, հակառակ բոլոր նախկին սովորությունների, շտապ ուտում էր իր երեք տեսակի կերակուրներն ու կրկին թաքնվում էր առանձնասենյակում։ Նույնիսկ կենդանի մարդկանց հետ եղած հանդիպումների ժամանակ նրա մեջ հրապարակ էր եկել ինչ-որ մասամբ երկչոտ, մասամբ հիմար-ծաղրական վերաբերմունք, կարծես նա միաժամանակ և՛ վախենում էր, և՛ մարտահրավեր էր անում։ Առավոտյան նա շտապում էր որչափ հնարավոր է շուտ արթնանալ, որպեսզի անմիջապես աշխատանքի անցնի։ Աղոթքի ժամանակը կրճատեց. աղոթքի խոսքերն արտասանում էր անտարբեր, առանց թափանցելու նրանց իմաստի մեջ. խաչակնքում և ձեռները վեր էր առաքում մեքենայորեն, խառնիխուռն։ Նույնիսկ գժոխքի և նրա տանջալից հատուցման պատկերացումը (յուրաքանչյուր մեղքի համար՝ հատուկ հատուցում) թողել էր նրան ըստ երևույթին։

Իսկ Եվպրակսեյուշկան մինչ այդ նվաղում էր մարմնական ցանկությունների մոլուցքի մեջ։ Անվճռական արշավելով գրասենյակային ծառայող Իգնատի և կառապան Արխիպուշկայի միջև և միաժամանակ աչք դնելով կարմրերես ատաղ-

ձագործ Իլյուշային, որն ամբողջ արտելով կապալավորվել էր կալվածատիրական նկուղը կարգի բերելու, նա ոչինչ չէր նկատում, թե ինչ է կատարվում կալվածատանը։ Նա մտածում էր, թե բարինը ինչ-որ «նոր կոմեդիա» է խաղում, և այդ առիթով շատ զվարճալի խոսքեր ասվեցին իրենց ազատ զգացած մարդկանց ընկերական շրջանում։ Բայց մեկ անգամ, պատահաբար սեղանատուն մտավ այն ժամանակ, երբ Իուդուշկան արագ-արագ ուտում-վերջացնում էր տապակած սագի կտորը, և հանկարծ սարսափ զգաց։

Պորֆիրի Վլադիմիրիչը նստել էր ճարպակալած խալաթով, որից տեղ-տեղ արդեն կախվել էր բամբակը. նա գունատ էր, առանց սանրվելու, մորուքի փոխարեն ցից-ցից մազերով էր ծածկված։

— Բա՞րինուշկա, սա ի՞նչ բան է, ի՞նչ է պատահել,— վախեցած նետվեց նրա կողմը Եվպրակսեյուշկան։

Բայց Պորֆիրի Վլադիմիրիչը միայն հիմար-կծու ժպտաց ի պատասխան նրա բացականչության, կարծես ուզեց ասել՝ հապա, փորձիր այժմ ինձ որևէ բանով խայթել։

— Բա՞րինուշկա, ախր ի՞նչ է, ասացեք, ի՞նչ է պատահել,— կրկնեց Եվպրակսեյուշկան։

Իուդուշկան վեր կացավ, ատելությամբ լի հայացքը գամեց նրա վրա և վանկ առ վանկ արտասանեց.

— Եթե դու, անառակ, երբևիցե նորից առանձնասենյակ... ինձ մոտ... Կսպանե՛մ։

***

Շնորհիվ այդ պատահականության, Պորֆիրի Վլադիմիրիչի գոյությունն արտաքին կողմից դեպի լավը փոխվեց։ Նյութական ոչ մի խոչընդոտ չզգալով, նա ազատորեն անձնատուր եղավ իր միայնակությանը, այնպես որ նույնիսկ չտեսավ, ինչպես անցավ ամառը։ Օգոստոսն անցել էր արդեն երկրորդ կեսին. օրերը կարճանում էին, դրսում անընդհատ մանրիկ անձրև էր մաղում, հողը խոնավացել էր, ծառերը կանգնել էին գլխահակ, ցած թափելով դեղնած տերևները։ Բակում և սպասավորների սենյակների մոտ անվրդով

լություն էր տիրում. սպասավորները քաշվել էին իրենց անկյունները, մասամբ մռայլ եղանակի պատճառով, մասամբ այն բանի հետևանքով, որ գլխի էին ընկնում, թե բարինի հետ ինչ-որ վատ բան է կատարվում։ Եվպրակսեյուշկան վերջնականապես արթնացավ, մոռացավ և՛ մետաքսյա հագուստների մասին, և՛ սիրելի ընկերների մասին ու ժամերով նստում էր աղախնանոցում արկղի վրա, չիմանալով ինչպես անել, ինչ ձեռնարկել։ Հարբած Պրոխորը չարացնում էր նրան, թե նա տանջել է բարինին, թունավորել է նրան և որ դրա համար նա անպայման զբոսնելու է Վլադիմիրկայի ճանապարհով[59]։

Իսկ Իուդուշկան մինչ այդ փակված նստել է իր առանձնասենյակում և երազում է։ Նրա համար ավելի լավ, որ դրսում ցուրտ է. նրա առանձնասենյակի լուսամուտն անխոնջ ծեծող անձրևը կիսաթմբիր է բերում նրան, որի մեջ է՛լ առավել ազատ, ընդարձակ է ծավալվում նրա ֆանտազիան։ Նա աներևութական է պատկերում իրեն և այդ տեսքով մըտովի վերստուգում է իր կալվածքները ծեր Իլյայի ուղեկցությամբ, որը դեռևս պապենկայի, Վլադիմիր Միխայլիչի ժամանակ տանուտեր է եղել և վաղուց ի վեր թաղված է գերեզմանատանը։

«Խելացի մարդ է Իլյան, հին ծառա է։ Այժմ այդպիսի մարդիկ վերջանում են։ Հիմի ինչ են. հոլի պես պտույտ կըգան, կշաղակրատեն, բայց հենց որ գործին հասնի, ոչ ոք չկա»,— դատողություն է անում ինքն իրեն Պորֆիրի Վլադիմիրիչը, շատ գոհ, որ Իլյան հարություն առավ մեռելներից։

Առանց շտապելու և աստծուն աղոթք անելով, բոլորից աներևույթ, դաշտերով ու ձորերով, հովիտներով ու մարգագետիններով մոտենում են նրանք Ուխովշչինա ամայի վայրին ու չեն հավատում իրենց աչքերին։ Կանգնած է նրանց առաջ պարսպի պես թանձր անտառ, կանգնած է, ու ծառերի գագաթներն են միայն աղմկում երկնքում։ Մեկը մեկի նման են, կարմիր սոճիներ են, որը երկու, որը երեք մարդագիրկ. քներն ուղիղ են, մերկ, իսկ գագաթները հզոր, տերևաշատ.

նշանակում է, դեռ երկար կարող է կանգնած մնալ այս անտառը։

— Ա՜յ քեզ անտառ,— հիացմունքով բացականչում է Իուդուշկան։

— Անձեռնմխելի է,— բացատրում է ծերունի Իլյան։— Դեռևս ձեր հանգուցյալ պապի, Միխայիլ Վասիլևիչի օրոք սրբապատկերներով մաղթանք արվեց — ահա՜ ինչպես է աճել։

— Իսկ քո կարծիքով քանի՞ դեսյատին կլինի։

— Այն ժամանակ ուղիղ յոթանասուն դեսյատին չափեցինք, իսկ հիմի... Այն ժամանակ դեսյատինը տնտեսական էր, ներկայիս համեմատությամբ մեկ ու կես անգամ ավելի էր։

— Իսկ ի՞նչ ես կարծում, ամեն դեսյատինի վրա մոտավորապես քանի՞ ծառ կլինի։

— Ո՞վ է իմանում։ Աստված է հաշվել։

— Իսկ ես այնպես եմ կարծում, որ անպայման վեց հարյուր-յոթ հարյուր հատ կլինի դեսյատինի վրա։ Եվ ոչ թե հին դեսյատինի, այլ նոր դեսյատինի։ Սպասիր, համբերիր, եթե որ վեց հարյուր լինի... դե, վեց հարյուր հիսուն որ հաշվենք, ինչքա՞ն կլինի հարյուր հինգ դեսյատինի վրա։

Պորֆիրի Վլադիմիրիչը թուղթ է վերցնում և 105-ը բազմապատկում է 650-ով. ստացվում է 68,250 ծառ։

— Հիմի, թե որ այս ամբողջ անտառը ծախվի... տարբեր տեսակներով... ի՞նչ ես կարծում, տասը մանեթ ամեն ծառին կարելի՞ է ստանալ։

Ծերունի Իլյան թափահարում է գլուխը։

— Քիչ է,— ասում է նա,— ի՞նչ անտառ է, ամեն մի ծառից ջրաղացի երկու թոփ դուրս կգա և դեռ շինարարական փայտ,— ինչ շինարարության որ ուզես,— և դեռ մի հատ էլ յոթ չետվերտանոց գերան, և դեռ վառելափայտ, ճյուղերն էլ... Ձեր կարծիքով ջրաղացի թոփը ի՞նչ արժի։

Պորֆիրի Վլադիմիրիչը ցույց է տալիս, իբրև չգիտե, թեպետ նա վաղուց արդեն մինչև վերջին կոպեկը որոշել է ու սահմանել։

— Այստեղարենքի գնով մեկ թոփը տասը մանեթ արժի, իսկ եթե Մոսկվա տարվի, գինը այլևս որոշել չի լինի։ Ի՞նչ

թոփ է։ Երեք ձիով հազիվհազ տարվի։ Եվ հետո ուրիշ թոփ, ավելի բարակը, և գերանը, և յոթ չետվերտանոցը, և վառելափայտը, և ճյուղերը... Ամեն ծառը քիչը-քիչը քսան մանեթով կգնա։

Լսում է Պորֆիրի Վլադիմիրիչը Իլյայի խոսքերը և լսելուց չի կշտանում։ Խելացի հավատարիմ մարդ է այդ Իլյան։ Եվ ընդհանրապես ամբողջ կառավարչությունը, աստծու օգնությամբ, արտասովոր հաջող է կազմակերպել։ Իլյային օգնական է ծառայում ծերունի Վավիլոն (նույնպես վաղուց պառկած է գերեզմանատանը), ա՜յ, ինչ քյոթուկ է։ Գրասենյակում մամենկայի գրագիր Ֆիլիպ-բերովին է (սրանից վաթսուն տարի առաջ վոլոգդյան գյուղերից է բերված), անտառապահները բոլորը փորձառու են, անխոնջ, շտեմարանները պահպանող շները կատաղի են։ Թե՛ մարդիկ, և թե՛ շները — բոլորը պատրաստ են կալվածատիրոջ կայքի ու գույքի պահպանման համար թեկուզ սատանայի կոկորդը կրծել։

— Հապա, եղբայր, արի հաշվենք, ինչքա՞ն կլինի, եթե ամբողջ այս անտառը ջոկ-ջոկ ծախելու լինենք։

Պորֆիրի Վլադիմիրիչը կրկին մտքում հաշիվ է անում՝ ինչքան արժի մեծ թոփը, ինչքան փոքրը, ինչքան շինարարական գերանը, յոթ չետվերտանոցը, վառելափայտը, ճյուղերը։ Հետո բազմապատկում է, գումարում, մի տեղ կրճատում է կոտորակները, մեկ այլ տեղ ավելացնում է։ Թղթի երեսը թվերով է ծածկվում։

— Ահա, եղբայր, տես ի՞նչ դուրս եկավ,— ցույց է տալիս Իուդուշկան երևակայական Իլյային ինչ-որ միանգամայն անլուր մի թիվ, այնպես որ նույնիսկ Իլյան, որն իր կողմից ևս դեմ չէ կալվածատիրոջ կայքի բազմանալուն, նա էլ կարծես կծկվում է։

— Ինչ-որ շա՞տ է կարծես,— ասում է նա, մտախոհ։

Բայց Պորֆիրի Վլադիմիրիչն արդեն ոչ մի կասկած չունի և ուրախ ծիծաղում է։

— Պարզամիտ ես դու, եղբայր։ Այս արդեն ես չեմ ասում, այլ թվերն են ասում... Այդպիսի գիտություն կա, եղբայր, թվաբանություն է կոչվում... Թվաբանությունը, եղբայր,

սուտ չի ասի։ Դե լավ, Ուխովշչինայի հաշիվը փակեցինք, հիմա գնանք Լիսյի Յամի, վաղուց ես այնտեղ չեմ եղել։ Թըվում է ինձ, որ այնտեղ գյուղացիները շարությունն են անում։ Պահապան Գարանկան նույնպես... Գիտեմ, գիտեմ, Գարանկան լավ, հավատարիմ պահապան է, այդ մասին խոսք չկա, բայց և այնպես... Կարծես նա մի քիչ սկսել է ճանապարհից շեղվել։

Գնում են նրանք կեչիների թավուտի միջով անշշուկ, անտեսանելի, հազիվ են դուրս գալիս և հանկարծ կանգ են առնում, շունչները զսպած։ Ճանապարհի ուղիղ եզերքին գյուղական մի սայլ է ընկել կողքի թեքված, իսկ գյուղացին կանգնել, վշտոտ նայում է կոտրած սռնակին։ Վշտացավ, վշտացավ, հայհոյեց սռնակը, իրեն էլ հետը միաժամանակ, մտրակով շխկացրեց ձիու մեջքին («ա՜խ, դու, ագռավ»)։ Սակայն մի բան պետք էր անել, կանգնած հո չի կարելի մընալ այդպես մինչև վաղը։ Շուրջն է նայում գող-գյուղացին. ականջ է դնում՝ հո եկող չկա՞, հետո մի հար՞ար սոճի է ընտրում, հանում է տապարը... իսկ Իուդուշկան շարունակում է կանգնել, տեղից չի շարժվում... Ցնցվեց կեչին, օրորվեց և հանկարծ, խրձի պես գետին տապալվեց։ Ուզում է գյուղացին տակի կողմից կտրել ինչքան որ հարկավոր է սրոնակի համար, բայց Իուդուշկան արդեն որոշեց, որ իսկական բոպեն հասել է։ Գաղտագողի մոտ է գնում գյուղացուն և անսպասելի խլում է նրա ձեռքից տապարը։

— Ա՜խ,— հազիվ է բացականչում հանկարծակիի եկած գողը։

—«Ա՜խ»,— ծաղրում է նրան Պորֆիրի Վլադիմիրիչը։— Իսկ ուրիշի անտառը գողանալ թո՞ւյլ է տրվում։ «Ա՜խ»,— իսկ ո՞ւմ կեչին ես կտրել, քո՞նն է, ինչ է։

— Ներեցեք, աղա։

— Ես, եղբայր, վաղուց ներել եմ բոլորին։ Ինքս հանցավոր եմ աստծու առաջ և ուրիշներին մեղադրել չեմ համարձակվում։ Ոչ թե ես, այլ օրենքն է դատապարտում։ Կըտրածդ սռնակը կալվածատուն բեր, հետն էլ, ի դեպ, մի մանեթ տուգանք վերցրու, իսկ առայժմ տապարը թող ինձ մոտ մնա։ Մի վախեցիր, չի կորչի։

Գոհ այն բանից, որ կարողացավ հաստատել Իլյային Գարանկայի մասին ունեցած իր կարծիքը, Պորֆիրի Վլադիմիրիչը հանցագործության վայրից մտքով անտառապահի խրճիթն է գնում և պատշաճ խրատ է կարդում։ Հետո նա տուն է գնում և կալվածատիրական հաճարի մեջ գյուղացու երեք հավ է բռնում։ Առանձնասենյակ վերադառնալով, նա կրկին սկսում է աշխատել և հանկարծ նրա մտքում մի ամբողջ հատուկ տնտեսական սիստեմ է ծագում։ Այն բոլորը, ինչ աճում է, ինչ բուսնում է նրա հողում, ցանած ու չցանած, առանձին-առանձին փողի է վերածվում, և ընդսմին տուգանքով։ Բոլոր մարդիկ հանկարծ դարձան ծառեր կըտրողներ ու արտեր արածացնողներ, և Իուդուշկան ոչ միայն չի վշտանում դրանից, այլ, ընդհակառակը, նույնիսկ ձեռներն է շփում գոհունակությունից։

— Արածացրեք, եղբայրներ, կոտորեցեք։ Ավելի լավ ինձ համար,— կրկնում է նա միանգամայն գոհ։

Եվ անմիջապես մի նոր թերթ թուղթ է վերցնում ու ըսկըսում է հաշիվներ անել։

Դեսյատինում ինչքա՞ն հաճար է բուսնում և ինչքա՞ն փող կբերի այդ հաճարը, եթե գյուղացիների հավերը տրորեն և տրորելու համար տուգանք վճարեն։

«Իսկ հաճարը, թեպետև տրորված էր, բայց և այնպես անձրևից հետո կրկին բարձրացավ»,— մտքում ավելացնում է Իուդուշկան։

Լիսյի Յամայում ինչքա՞ն կեչի է բուսած և ինչքա՞ն փող կարելի է ստանալ, եթե գյուղացիները դրանք ծածուկ կտրեն և կտրածների համար տուգանք վճարեն։

«Իսկ կեչին, թեպետև կտրած է, բայց և այնպես իմ տունն են բերում վառելու, նշանակում է, հարկավոր չէ, որ ինքս վառելափայտ կտրել տամ»,— նորից ավելացնում է Իուդուշկան մտքում։

Թուղթը թվերի ահագին սյունակներով է ծածկվում, նախ ռուբլիները, հետո տասնյակները, հարյուրները, հազարները... Իուդուշկան աշխատանքից այն աստիճան հոգնում է, այնպես է հուզվում, որ ամբողջովին քրտնած վեր է կենում սեղանի մոտից և պառկում է բազմոցի վրա հանգստանալուց

Բայց խռովահույզ երևակայությունն այստեղ ևս չի սանձահարում իր աշխատանքը, այլ միայն ուրիշ, ավելի թեթև թեմա է ընտրում։

«Խելացի կին էր մամենկա Արինա Պետրովնան,— ցնորում է Պորֆիրի Վլադիմիրիչը,— կարողանում էր և՛ պահանջել, և՛ սիրաշահել, դրա համար էլ բոլորը ուրախությամբ էին ծառայում նրան։ Սակայն նա էլ մեղքեր ունի։ Օ՜, շատ մեղքեր ուներ հանգուցյալը»։

Հազիվ է Իուդուշկան հիշել Արինա Պետրովնայի մասին, որ նա այդտեղ է ու այդտեղ. կարծես զգում է նրա սիրտը, որ պատասխան պիտի տա և ինքը գերեզմանից իր սիրելի որդու մոտ է եկել։

— Չգիտեմ, բարեկամս, չգիտեմ, թե ես ինչով եմ քո առաջ հանցավոր,— վհատ ասում է նա։— Կարծեմ ես...

— Այ-այ-ա՜յ, սիրելիս, ավելի լավ է մեղք մի գործեք,— առանց քաշվելու մերկացնում է նրան Իուդուշկան։— Թե որ բանն այդտեղ է հասել, ապա ես բոլորը իսկույն բաց կանեմ ձեր առաջ։ Ինչո՞ւ դուք, օրինակ, այն ժամանակ հորաքույր Վարվառա Միխայլովնային չարգելեցիք։

— Ինչպե՞ս կարող էի արգելել։ Նա ինքը չափահաս էր և ինքը իրավունք ուներ կարգադրել իր ունեցածը։

— Է՜, չէ, ներեցեք։ Նրա ամուսինը ինչպիսի՞ մարդ էր։ Մեր ու հարբեցող,— դե ուրեմն ամենից... անպտուղ։ Իսկ մինչդեռ հորաքույրը չորս երեխա ունեցավ... որտեղի՞ց հայտնվեցին, հարցնում եմ ձեզ, այդ երեխաները։

— Այդ ի՞նչ տարօրինակ ես խոսում, բարեկամս, կարծես ես այդտեղ մեղք ունեմ։

— Մեղք ունեք թե մեղք չունեք, բայց ազգել վրան կարող էիք։ Միծաղով ու կատակով, «սիրելիս» ու «հոգյակս»— տեսար մեկ էլ, ամաչեց։ Իսկ դուք ամեն բան հակառակն էիք անում։ Կամակորությամբ և առանց հասկանալու։ Վա՛րկա ու Վա՛րկա, անամո՛թ ու զզվելի՛։ Համարյա ամբողջ շրջանի հետ էիք պսակել։ Ահա և նա... նա էլ կամակորեց։ Ափսո՜ս, Գորյուշկինոն մերն էր հիմի։

— Ցա՜վ է դառել քեզ համար Գորյուշկինոն,— ասում է

Արինա Պետրովնան, ըստ երևույթին անհարմար դրության մեջ ընկնելով որդու մեղադրանքից։

— Գորյուշկինոն իմ ինչի՞ն է... Ինձ, թերևս, ոչինչ էլ պետք չէ։ Մոմի ու ձեթի համար որ լինի, ես գոհ եմ արդեն... Բայց ընդհանրապես, արդարությամբ... Այո, մամենկա, ուրախ կլինեի լռել, բայց չասել չեմ կարող.— մեծ մեղք կա ձեր հոգուն, մեծ, շատ մեծ։

Արինա Պետրովնան այլևս ոչինչ չի պատասխանում, այլ միայն ձեռներն է տարածում, ոչ այն է ճնշված, ոչ այն է տարակուսած։

— Կամ ահա, օրինակ, մի ուրիշ գործ,— շարունակում է մինչ այդ Իուդուշկան, զմայլվելով մամենկայի շփոթությամբ,— ինչո՞ւ դուք եղբայր Ստեպանի համար այն ժամանակ Մոսկվայում տուն առաք։

— Հարկավոր էր, բարեկամս, չէ՞ որ հարկավոր էր նրան էլ մի պատառ նետել,— արդարանում է Արինա Պետրովնան։

— Իսկ նա վերցրեց ու վատնեց։ Գոնե եթե նրան ճանաչելու չլինեի՞ք... և՛ աղմկարար էր, և՛ պղծախոս, և՛ անպատկառ — բայց և այնպե՞ս։ Դեռ պապենկայի վոլոգոդյան գյուղն էլ ուզում էիք տալ։ Իսկ գյուղն ի՞նչ գյուղ է։ Ամբողջը մի սահմանագծում, ո՛չ հարևան, ո՛չ հողերի ցրվածություն, լավ անտառ ունի, լճակ... կարծես կճպած ձու լինի։ Լավ է, որ այն ժամանակ ես հանդիպեցի ու արգելք եղա... Ա՜խ, մամենկա, մամենկա, մեղք չէ՞ դա։

— Բայց չէ որ որդի է նա... հասկացի՛ր, այնուամենայնիվ որդի է։

— Գիտեմ ես և նույնիսկ շատ լավ հասկանում եմ։ Բայց և այնպես պետք չէր այդպես վարվել, հարկավոր չէր։ Տանը տասներկու հազար արծաթով փող է տված, բայց ո՞ւր է այն։ Այ այդտեղ տասներկու հազարը գնաց, հորաքույր Վարվառա Միխայլովնայի Գորյուշկինոն էլ քիչը-քիչը տասնհինգ հազար պիտի գնահատել... Ինչքա՞ն փող կանի։

— Դե, դե, բավական է, վերջ տուր, մի բարկացիր, խսեր Քրիստոսի։

— Ես, մամենկա, չեմ բարկանում, ես միայն արդարու-

թյամբ եմ դատում... ինչ որ ճիշտ է, այն ճիշտ է, սուտը տանել չեմ կարող։ Արդարությամբ ծնվել եմ, արդարությամբ ապրել, արդարությամբ էլ կմեռնեմ։ Արդարությունն աստված է սիրում, մեզ էլ պատվիրում է սիրել։ Այ, թեկուզ Պոգորելկիի մասին՝ միշտ կասեմ, շատ, ա՜խ, շատ փող եք ծախսել նրա վրա։

— Ախր ես ինքս այնտեղ էի ապրում...

Իուդուշկան շատ լավ կարդում է մամենկայի երեսին՝ այլանդակ արյունարբու բառերը, բայց ցույց է տալիս, թե չի նկատում այն։

— Ինչ անենք, թե ապրում էիք, բայց և այնպես... Տապանակը մինչև հիմա էլ Պոգորելկիումն է, բայց ո՞ւմն է։ Փոքր ձին, նույնպես թեյի արկղիկը... ինքս սեփական աչքերով եմ տեսել Գոլովլյովոյում դեռ պապենկայի ժամանակ։ Իսկ արկղիկը լավ արկղիկ է։

— Դո՜ւ էլ։

— Չէ, մամենկա, մի՛ ասեք։ Իհարկե, միանգամից չի երևում, բայց այստեղ մի մանեթ, ուրիշ տեղ կես մանեթ, երրորդ տեղը՝ քսանհինգ կոպեկ... Երբ որ նայում ես ու մըտիկ ես տալիս... Բայց թույլ տվեք, ես հիմա բոլորը թվերով կհաշվեմ։ Թիվը սուրբ բան է, թիվը չի ստի։

Պորֆիրի Վլադիմիրիչը նորից վազում է սեղանի մոտ, որպեսզի վերջնականապես պարզի, թե ինչքան վնաս է հասցրել իրեն սիրելի բարեկամ մամենկան։ Զխչխկացնում է համրիչի վրա, թղթի վրա թվերի սյունակներ է գրում,— մի խոսքով, ամեն ինչ պատրաստում է Արինա Պետրովնային մերկացնելու համար։ Բայց, վերջինիս բախտից, նրա տարուբերվող միտքը չի կարող երկար ժամանակ կանգ առնել նույն առարկայի վրա։ Իր համար աննկատելի՝ շահի նոր առարկա է մոտենում նրան գաղտագողի և կարծես կախարդանքով նրա մտքին բոլորովին այլ ուղղություն է տալիս։ Արինա Պետրովնայի կերպարանքը, որը դեռ մի րոպե առաջ այնպես կենդանի կանգնած էր նրա աչքերի առաջ, հանկարծ խորասուզվեց մոռացության հորձանուտում։ Թվերը խճճվեցին։

Վազուց արդեն պատրաստվում էր Պորֆիրի Վլադիմիրիչը հաշվել, թե ինչ կարող է տալ իրեն դաշտավարությունը,

և ահա այժմ ամենահարմար րոպեն է դրա համար։ Նա գիտե, որ գյուղացին միշտ կարիքի մեջ է, միշտ փնտրում է մի տեղից փոխ առնի և միշտ էլ առանց խաբելու վերադարձնում է շահով։ Առանձնապես գյուղացին առատաձեռն է իր աշխատանքի նկատմամբ, որը «ոչինչ չարժի» և այդ հիման վրա վճարման ժամանակ հաշվի չի առնվում, համարվում է սիրո նշան։ Ռուսիայում շա՜տ, շատ կարիքավոր ժողովուրդ կա, ա՜խ, ինչքա՜ն շատ։ Շատ մարդիկ կան, որոնք չեն կարող այսօր որոշել, թե ինչ է սպասում իրենց վաղը, շատ այնպիսիները կան, որոնք ուր էլ որ դարձնում են իրենց վշտահար հայացքները, ամեն տեղ միայն անհուսալի դատարկություն են տեսնում, ամեն տեղ մի բան են լսում միայն՝ տո՛ւր։ Եվ ահա այդ հուսազուրկ մարդկանց, այդ տկլորների շուրջն է հյուսում իր անվերջ ցանցը Իուդուշկան,, երբեմն-երբեմն ինչ-որ կատաղի ֆանտաստիկ մոլուցքի մեջ ընկնելով։

Դրսում ապրիլ ամիսն է, և գյուղացին, ըստ սովորականի, ուտելու ոչինչ չունի։ «Կերաք-վերջացրիք, աղավնյակներս։ Ձմեռը քեֆ-ուրախություն արեցիք, իսկ գարնանը փորներդ եք հուպ տալիս»,— դատողություն է անում Պորֆիրի Վլադիմիրիչն ինքնիրեն, իսկ նա, կարծես դիտմամբ, հենց նոր է անցյալ տարվա դաշտավարության հաշիվները պարզել։ Փետրվարին ծեծվեցին ցորենի վերջին դեզերը, մարտին ցորենը լցված էր ամբարները, իսկ օրերումս ամբողջ կանխիկ եղածն արդեն գրանցված է գրքերում՝ համապատասխան սյունակներում։ Իուդուշկան կանգնել է լուսամուտի առաջ ու սպասում է։ Ահա հեռվում, կամուրջի վրա սայլակում երևաց գյուղացի Ֆոկան։ Գոլովլյովոյի ոլորանում նա մի տեսակ արագ ցնցեց փոկերը և, մտրակ չունենալու պատճառով, ձեռքով վախեցրեց ոտներն հազիվ փոխող ձիուն։

— Այստեղ է գալիս,— շշնջում է Իուդուշկան։— Ձին ի՞նչ օրն է ընկել, ինչպես է որ կենդանի է դեռ։ Բայց որ մի ամիս կերակրես, լավ ձի կդառնա։ Քսանհինգ կամ նույնիսկ երեսուն մանեթ կարժենա։

Մինչ այդ Ֆոկան սայլակը քշեց սպասավորների տնակի մոտ, ձին կապեց ցանկորմին, մի խտիտ խոտի կրճոնք նետեց առաջն ու մի րոպե անց արդեն կուշուձիգ է անում աղախ-

նանոցում, ուր սովորություն ունի ընդունել Պորֆիրի Վլադիմիրիչն այդպիսի մարդկանց։

— Դե, բարեկամս, ի՞նչ լուր բան կասես,— սկսում է Պորֆիրի Վլադիմիրիչը։

— Էնպես որ, աղա, հաճար է հարկավոր...

— Ինչո՞ւ այդպես, ունեցածներդ, երևի, արդեն կերել-վերջացրե՞լ եք։ Ա՜խ, ա՜խ, ի՞նչ մեղք բան է։ Այ, թե որ դուք քիչ արաղ խմեիք, բայց շատ աշխատեիք, աստծուն աղոթք անեիք, հողն էլ կզգար... Որտեղից հիմա մի հատիկ է ստացվում, այդ դեպքում, տեսար, երկուսը, երեքը տվեց։ Փոխ առնելու կարիք էլ չէր լինի։

Ֆոկան պատասխանի փոխարեն մի տեսակ անվճռական ժպտում է։

— Դու կարծում ես, որ աստված հեռու է, ուրեմն չի՞ տեսնում,— շարունակում է բարոյախոսել Պորֆիրի Վլադիմիրիչը։— Իսկ աստված և՛ այստեղ է, և՛ այնտեղ է, ահա մեզ հետ է, մինչ մենք խոսում ենք — ամե՛ն տեղ է։ Եվ ամեն ինչ նա տեսնում է, ամեն բան լսում է, միայն դույլ է տալիս, թե չի նկատում։ Թող մարդիկ, իրոք, իրենք իրենց խելքով ապրեն, տեսնենք կհիշե՞ն նրանք ինձ։ Իսկ մենք օգտվում ենք դրանից և մեր ունեցածից աստծուն մոմ առնելու փոխարեն, գինետուն ենք գնում։ Ահա այդ իսկ պատճառով էլ աստված մեզ հաճար չի տալիս,— այդպե՞ս է, բարեկամս։

— Ի՞նչ տեսլիք կա դրան։ Այդ այդպես է ճշմարիտ։

— Այ, տեսնում ես, դու ինքդ էլ հիմա հասկացար... Իսկ ինչո՞ւ հասկացար։ Որովհետև աստված քեզ զրկել է իր ողորմածությունից։ Թե որ քո հաճարը առատ բերք տված լինեիր, դու հիմա նորից կգոռոզանայիր, բայց որ աստված...

— Ճշմարիտ է դա և թե որ եթե մենք...

— Սպասիր, թող ես իմ խոսքն ասեմ։ Եվ միշտ այդպես է լինում, բարեկամս, որ աստված իրեն մոռացողներին հիշեցնում է իր մասին։ Եվ մենք չպետք է արտնջանք դրանից, այլ հասկանանք, որ դա մեր օգտի համար է տրվում։ Թե որ մենք աստծուն հիշեինք, նա էլ մեզ չէր մոռանա։ Ամեն ինչ կտար մեզ՝ և՛ հաճար, և՛ վարսակ, և՛ կարտոֆիլ — համեցի, կե՛ր։ Եվ քո տնասունների մասին էլ հոգ կաներ — քո

ձին, օրինակ, ինչպես է որ շունը վրան է։ Եվ թռչուններիդ, թե որ ունես, նրանց էլ իսկական ուղղություն կտար։

— Ձեր այդ ասածները բոլորն էլ ճիշտ են, Պորֆիրի Վլադիմիրիչ։

— Աստված ճանաչել — դա առաջինը, հետո մեծերին, որոնք թագավորից շնորհ են ստացել, կալվածատերերին, օրինակ։

— Մենք, Պորֆիրի Վլադիմիրիչ, կարծեմ...

— Այ դու «կարծում ես», բայց որ միտք անես ու քննես, գուցե և այդպես չէ իսկության մեջ։ Հիմա որ ինձ մոտ հաճարի ես եկել, խոսք չունեմ, շատ հարգանքով ես ինձ հետ, իսկ հերու չէ առաջին տարին, հիշո՞ւմ ես, երբ ինձ հընձվորներ էին հարկավոր և ես ձեզ մոտ եկա, խնդրեցի՝ օգնեցեք, եղբայրներ, նեղ դրությունից հանեք։ Իսկ դուք ի՞նչ պատասխան ավեցիք իմ խնդրանքին՝ ինքներս պետք է հնձենք հիմա առաջվա ժամանակը չի, որ տերերի համար աշխատենք, հիմա ազատություն է։ Ազատություն է, բայց հաճար չկա։

Պորֆիրի Վլադիմիրիչն ուսուցչաբար նայում է Ֆոկային, բայց նա չի շարժվում, կարծես քարացել է։

— Հպարտ եք դուք չափազանց, դրա համար էլ հաջողություն չունեք։ Այ ես, օրինակ, կարծես թե ինձ աստված էլ օրհնել է, թագավորն էլ բարի աչքով է նայում, բայց ես չեմ հպարտանում։ Ինչպե՞ս կարող եմ ես հպարտանալ։ Ո՞վ եմ ես։ Որդ եմ, ճիճու։ Թո՛ւ։ Իսկ աստված, իմ խոնարհությունն համար, վերցրեց ու օրհնեց ինձ։ Եվ ինքն իր ողորմությունը շնորհեց և թագավորին էլ ներշնչեց, որ բարեհաճ լինի դեպի ինձ։

— Ես, Պորֆիրի Վլադիմիրիչ, այնպես եմ հասկանում, որ առաջ, կալվածատերերի ժամանակ լավ էր,— շողոքորթում է Ֆոկան։

— Այո, եղբայր, դուք էլ լավ ժամանակ ունեցել եք։ Ուրախ ապրում էիք։ Ամեն ինչ ունեիք դուք՝ և՛ հաճար, և՛ խոտ, և՛ կարտոֆիլ։ Բայց դե ի՞նչ հիշենք անցյալը։ Ես հիշաչար չեմ, ես, եղբայր, հնձվորների մասին վաղուց եմ մո-

ռացել, հենց այնպես, խոսքի համար հիշեցի։ Ուրեմն ասում ես քեզ հաճար է հարկավոր։

— Այո, հաճար...

— Առնե՞լ ես ուզում, ինչ է։

— Որտեղի՞ց։ Փոխարինաբար, մինչև նոր բերքը։

— Ա՜խ-ա՜խ, հաճարը, եղբայր, հիմա կծում է... Զգիտեմ արդեն ինչ ասեմ քեզ...

Պորֆիրի Վլադիմիրիչը մի պահ մտքերի մեջ է ընկնում, ասես իսկապես էլ չի իմանում ինչ անի և ուզում է մարդուն օգնել, բայց հաճարն էլ կծում է»...

— Կարելի է, բարեկամս, փոխարինաբար հաճար տալ կարելի է,— վերջապես ասում է նա,— բայց, ճիշտն ասած, ես ծախու հաճար չունեմ էլ, տանել չեմ կարող աստծու տվածը ծախել։ Բայց փոխարինաբար՝ այդ հա, այդ ես ուրախությամբ կանեմ։ Ես, եղբայր, հիշում եմ — այսօր ես եմ քեզ փոխարինաբար տալիս, իսկ վաղը դու ես ինձ տալիս։ Այսօր ես ավելորդ ունեմ, վերցրու, տար։ Ձեռվերտ ես ուզում, չեռվերտ վերցրու, կեսն ես ուզում, կեսը լցրու։ Իսկ վաղն այնպես կարող է պատահել, որ ես էլ քո լուսամուտը ծեծեմ, թե՝ Ֆոկա, փոխարինաբար մի կես չեռվերտ հաճար տուր, ուտելու բան չունենք։

— Ո՞րտեղից։ Ինչո՞ւ պետք է դուք գաք...

— Ես, իհարկե, չեմ գա, այլ օրինակի համար... Աշխարհում շատ ուրիշ տեսակ բաներ են պատահում։ Այ, լրագրերում գրում են՝ ի՞նչ սյուն էր Նապոլեոնը, բայց նա էլ սրխալվեց, նպատակին չհասավ։ Այդպես, եղբայր։ Քեզ ինչքա՞ն հաճար է հարկավոր։

— Մի չեռվերտ, թե ողորմած կլինեք...

— Կարելի է։ Միայն թե սկզբից քեզ ասում եմ՝ կծում է հիմա հաճարը, ո՞նց է կծում։ Ուրեմն մենք այսպես կանենք. կպատվիրեմ քեզ վեց չեռվերիկ չափեն, իսկ ութ ամսից դու ինձ երկու չեռվերիկ գլխանք կտաս, այնպես որ ճիշտ մի չեռվերտ կլինի։ Տոկոս ես չեմ վերցնում, իսկ հաճարի ավելցուկից...

Իուդուշկայի առաջարկից Ֆոկայի շունչն անգամ կտրվեց։

Միառժամանակ նա ոչինչ չի ասում, միայն թիոսկրներն է շարժում։

— Շատ չի՞ լինի, աղա,— վերջապես ասում է նա, ըստ երևույթին երկչոտելով։

— Իսկ թե որ շատ է, դիմիր ուրիշին։ Ես, եղբայր, չեմ հարկադրում, սրտանց եմ առաջարկում։ Ես չեմ քո հետևից եկել, դու ես ինձ գտել։ Դու հարց ես տալիս, ես պատասխան եմ տալիս։ Այդպե՞ս է, եղբայր։

— Այդպեսը այդպես է, բայց կարծես թե գլխանքը շատ է։

— Ա՜խ, ա՜խ, ա՜խ, իսկ ես դեռ կարծում էի, որ դու արդարամիտ մարդ ես, պատկառելի։ Իսկ ես, դե ասա, ես ինչո՞վ պիտի ապրեմ։ Ես որտեղի՞ց պիտի իմ ծախսերը հոգամ։ Ես ինչքա՞ն ծախս ունեմ, իմանո՞ւմ ես դու։ Իմ ծախսերին վերջ չկա, սիրելիս։ Ես սրան էլ պիտի տամ, նրան էլ բավարարեմ, երրորդին էլ պիտի հանեմ ու տամ։ Բոլորին հարկավոր է, բոլորը Պորֆիրի Վլադիմիրիչի օձիքից են կպչում, իսկ Պորֆիրի Վլադիմիրիչը բոլորի փոխարեն պատասխան պիտի տա։ Այն էլ ասած, թե որ հաճարը ես վաճառականին ծախած լինեի, փողը իսկույն կանխիկ կստանայի։ Փողը, եղբայր, սուրբ բան է։ Փողով ես ինձ համար արժեթղթեր կառնեմ, ապահով տեղ կպահեմ և տոկոսներով կօգտվեմ։ Ոչ հոգս, ոչ վիշտ, կտրոնը կտրեցիր — խնդրեմ փողը։ Իսկ հաճարի համար դեռ հոգս արա, պահիր, հետևիր։ Ինչքա՞ն կչորանա, ինչքա՞ն կթափվի, ինչքա՞ն մկները կուտեն։ Չէ՛, եղբայր, փողը ուրիշ է։ Վաղուց պետք է ես խելքի գայի, վաղուց պետք է ես ամեն ինչ փողի վերածեի ու ձեզանից հեռանայի-գնայի։

— Դուք մնացեք, մեզ մոտ ապրեք, Պորֆիրի Վլադիմիրիչ։

— Ուրախ կլինեի, եղբայր, բայց ուժ չունեմ։ Թե որ առաջվա ուժը ունենայի, իհարկե, կապրեի, կպայքարեի։ Չէ, ժամանակ է, ժամանակ է հանգստանալու։ Կգնամ այստեղից ես Տրոից-Սերգի, կմտնեմ սրբի թևի տակ, ոչ ոք չի էլ լսի իմ մասին։ Իսկ ինձ համար ինչքա՞ն լավ կլինի՝ խաղաղ, ազնիվ, հանգիստ, ոչ աղմուկ, ոչ կռիվ, ոչ աղաղակ, կարծես երկնքում։

Մի խոսքով, ինչպես էլ շուռ է տալիս Ֆոկան, սակայն

գործը Պորֆիրի Վլադիմիրիչի ասածով է գլուխ գալիս։ Բայց այդ դեռ քիչ է. այն րոպեին արդեն, երբ Ֆոկան համաձայնում է փոխառության պայմաններին, բեմ է գալիս ինչ-որ մի շելեպիխա։ Այնպես, չնչին մի բան, մի դեսյատինաչափ հունձ, բայց այն էլ հազիվ թե... Այնպես որ...

— Ես քեզ լավություն եմ անում, դու էլ ինձ լավություն արա,— ասում է Պորֆիրի Վլադիմիրիչը։ Աստված բոլորին, իսկ մենք մեկս մյուսին պիտի օգնական լինենք։ Դու մի դեսյատինը կատակով կհնձես, իսկ ես քեզ չեմ մոռանա։ Ես, եղբայր, պարզ մարդ եմ։ Դու ինձ մի մանեթի գործ կանես, իսկ ես...

Պորֆիրի Վլադիմիրիչը վեր է կենում և ի նշան գործը վերջանալուն, աղոթում է՝ եկեղեցու կողմը դարձած։ Ֆոկան, նրա օրինակին հետևելով, նույնպես խաչակնքում է։

Ֆոկան անհայտացավ։ Պորֆիրի Վլադիմիրիչը մի թերթ թուղթ է վերցնում, զինվում է համրիչով և հատիկները թռչում են նրա արագաշարժ մատների տակ։ Կամաց-կամաց թվերի խրախճանք է սկսվում։ Ողջ աշխարհը կարծես քողով է ծածկվում Իուդուշկայի աչքերի առաջ, նա տենդային շտապողականությամբ համրիչից թղթին է անցնում. թղթից համրիչին։ Թվերն աճում են ու աճում...

ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐ

Դրսում գեկտեմբերի կեսն է, անծայրածիր ձնե սավանով ծածկված շրջապատը մեղմորեն անզգայանում է։ Գիշերը ճանապարհի վրա այնքան ձյուն է կուտակվել, որ գյուղացու ձիերը դժվարությամբ են շարժվում ձյան մեջ, քարշ տալով դատարկ սայլը։ Իսկ դեպի գոլովլյովյան կալվածատունը ընթացող շավիղ անգամ համարյա չկա։ Պորֆիրի Վլադիմիրիչն այն աստիճան խորթացել է այցելություններից, որ և՛ դեպի տունը տանող գլխավոր դարբասը, և՛ շքամուտքը աշնանից խուլ փակել է, տնեցիներին թողնելով արտաքին աշխարհի հետ հարաբերություն ունենալ ազախնանոցի մուտքով և կողքի դարբասով։

Առավոտ է. խփում է տասնմեկը։ Իուդուշկան, խալաթը հագած, կանգնել է լուսամուտի մոտ ու առաջ է նայում։ Առավոտյան վաղ առանձնասենյակում ետ ու առաջ էր քայլում և շարունակ ինչ-որ միտք էր անում ու երևակայական եկամուտներն էր հաշվում, այնպես որ վերջապես խճճվեց թվերի մեջ ու հոգնեց։ Ե՛վ կալվածատան ճակատակողմի դիմաց տարածված պտղատու պարտեզը, և՛ պարտեզի ետև պատսպարված ավանը,— ամեն ինչ թաղված է ձնակույտերի տակ։ Երեկվա թիփիից հետո սառնամանիք է, և ձնային ծածկոցն ամբողջովին փայլփլում է արևի տակ միլիոնավոր կայծերով, այնպես որ Պորֆիրի Վլադիմիրիչն ակամայից կկոցում է աչքերը։ Բակում ամայի ու լուռ է, ոչ մի շարժում ոչ սպասավորների, ոչ անասնաբակի մոտ. նույնիսկ գյուղա-

կան ավանը հանդարտվել է, ասես մեռել է։ Տերտերի տան վրա է միայն գորշ ծուխ բարձրանում ու իր վրա է գրավում Իուդուշկայի ուշադրությունը։

«Ժամը տասնմեկն է, բայց տերտերակինը դեռ չի վերջացրել եփել-թափելը,— մտածում է նա,— շարունակ խժռում են այս տերտերները»։

Այդ կետից ելնելով, նա սկսում է խորհրդածել՝ լի օր է, թե տոն է այսօր, պասուց, թե ուտիսուց օր է և ինչ է եփելու տերտերակինը, երբ հանկարծ նրա ուշադրությունը գրավվում է մեկ այլ կողմ։ Բլուրի վրա, Նագլովկա գյուղից դուրս գալու ս.եղը մի սև կետ է երևում, որը կամաց-կամաց առաջանում է ու մեծանում։ Պորֆիրի Վլադիմիրիչն ուշադիր նայում է և առաջին հերթին հազարավոր դատարկ հարցեր է տալիս՝ ո՞վ է գալիս, գյուղացի է, թե՞ ուրիշ մեկը... Ուրիշ մարդ, սակայն, չի կարող, նշանակում է, գյուղացի է... այո, գյուղացի է, որ կա։ Ինչո՞ւ է գալիս։ Թե որ փայտի՞, բայց չէ՞ որ Նագլովկայի անտառը գյուղի մյուս կողմն է... Անիծյալը՝ երևի, գողության է գնում կալվածատիրական անտառը... Եթե ջրաղաց է գնում, ապա նույնպես, Նագլովկայից դուրս գալով, պետք է աջ թեքվել... Գուցե քահանայի ետևի՞ց է։ Մեկնումեկը մեռնում է, կամ գուցե արդեն մեռե՞լ է... բայց գուցեև ծնվե՞լ է։ Այդ ո՞ր կինն է երեխա ծնել։ Նենիլան աշնանից հղի էր, բայց կարծես թե շուտ է... թե որ տղա է ծնվել, նշանակում է, ժամանակով ցուցակների մեջ կընկնի... Նագլովկայում վերջին ցուցակագրությամբ քանի՞ հոգի կա։ Իսկ եթե աղջիկ է, նրանց ցուցակ չեն գցում, այլև ընդհանրապես... Բայց և այնպես առանց կանացի սեռի նույնպես չի կարելի... Թո՛ւ։

Իուդուշկան թքում է ու սրբապատկերին է նայում, ասես պաշտպանություն է խնդրում նրանից սատանայի դեմ։

Շատ հավանական է, որ նա երկար կխարխափեր մրտքով, եթե Նագլովկայի մոտ երևացած սև կետը սովորականի պես երևար ու անհայտանար, բայց նա շարունակաբար մեծանում էր և վերջապես շուտ եկավ դեպի եկեղեցին տանող կամրջակը։ Այն ժամանակ Իուդուշկան բոլորովին պարզ տեսավ, որ զույգ ձի լծած ռոգոժով ծածկված փոքրիկ կիբիտկա է գալիս։ Ահա նա բարձրացավ և հավասարվեց եկեղեցուն («Գործակալը չի՞,— անցավ նրա մտքով։— Ահա թե ինչու տերտերենց տանը մինչև հիմա դեռ եփել-թափել կա»), ահա դարձավ աջ և թեքվեց ուղիղ դեպի կալվածատունը։ «Այդպես է, որ կա, այստեղ է գալիս»։ Պորֆիրի Վլադիմիրիչը բնազդաբար վրա քաշեց խալաթի փեշերը և ետ ընկավ լուսամուտից, ասես վախենալով, թե անցորդը կտեսնի իրեն։

Նա ճիշտ գուշակեց. սայլակը մոտեցավ կալվածատանը ու կանգ առավ կողմնակի դարբասի առաջ։ Սայլակից շտապով դուրս թռավ երիտասարդ մի կին։ Հագնված էր նա եղանակին միանգամայն անհամապատասխան, բամբակի աստառով վերարկու, բոլորքը մորթի դրած, ավելի շուտ շնորհքի համար, քան տաքության, և երևում էր, ցրտից սառել էր։ Ոչ ոքի կողմից չդիմավորված այդ անձնավորությունը, թռչկոտալով վազեց դեպի աղախնանոցի մուտքը և մի քանի վայրկյանից արդեն լսելի էր, ինչպես շխկաց աղախնանոցի դուռը, իսկ դրանից հետո ևս մեկ այլ դուռ, իսկ հետո մուտքին մոտ եղած բոլոր սենյակներում քայլոց, շխկոց և իրարանցում սկսվեց։

Պորֆիրի Վլադիմիրիչը կանգնել էր առանձնասենյակի դռանը և ականջ էր դնում։ Նա այնպես վաղուց ոչ մի կողմնակի մարդ չէր տեսել և ընդհանրապես այնպես էր խորթացել մարդկանց հասարակությունից, որ սարսափ տիրեց նրան։ Անցավ քառորդ ժամի չափ. քայլոցն ու դռան շխկոցը չէր դադարում, իսկ նրան դեռևս չէին զեկուցում։ Դա ավելի էր հուզում նրան։ Պարզ է, որ եկվորը պատկանում էր այն անձանց թվին, որոնք, որպես «յուրային», ոչ մի տեղիք չեն տալիս կասկածելով իրենց հյուրասիրման իրավունքի մասին։ Այդ ո՞վ է նրա «յուրայինը»։ Նա սկսեց վերհիշել, սակայն հիշողությունը բութ էր ծառայում նրան։ Ուներ նա Վոլոդկա որդի, և Պետկա որդի, նաև մամենկա Արինա Պետրովնան... Վաղուց, ա՜խ, վաղուց էր դա։ Անցյալ տարվա աշնանից հանգուցյալ հորաքույր Վարվառա Միխայլովնայի աղջիկը, Նադկա Գալկինան բնակվել է Գորյուշկինոյում,— չլինի՞ նա է։ Ոչ, նա արդեն մեկ անգամ փորձել է ներխուժել գոլովլյովյան մեհյանը, բայց ձեռքը բան չընկավ։ «Նա չի համարձակ-

վի. չի՛ համարձակվի»,— կրկնում էր Խուդուշկան, զայրույթով լցվելով Գալկինայի հնարավոր գալու մտքից։ Բայց ուրիշ ո՞վ կարող է լինել։

Մինչ նա այդպիսով վերհիշում էր, Եվպրակսեյուշկան զգուշությամբ մոտեցավ դռանը և զեկուցեց.

— Պոգորելկյան օրիորդը, Աննա Սեմյոնովնան է եկել։

Իրոք, դա Աննինկան էր։ Բայց այն աստիճան փոխվել էր, որ համարյա հնարավոր չէր ճանաչել։ Այս անգամ Գոլովլյովո էր եկել արդեն ոչ այն գեղեցիկ, ժիր, երիտասարդությամբ եռուն աղջիկը՝ կարմիր այտերով, դուրս ընկած գորշ աչքերով, բարձր կրծքով և ծանր մոխրագույն մազերի հյուսը գլխին, որը Արինա Պետրովնայի մահից քիչ ժամանակ անց այստեղ էր եկել, այլ ինչ-որ մի ուժասպառ, թուլակազմ արարած, ներս ընկած կրծքով, փոս գնացած այտերով, հիվանդագին կարմրությամբ, հույլ շարժումներով, կրզացած, համարյա կորացած մի արարած։ Նույնիսկ նրա հոյակապ ծաղերը մի տեսակ ցանցառ էին երևում, և միայն աչքերը, դեմքի ընդհանուր ներհակությունն պատճառով, ավելի մեծ էին թվում, քան առաջ և տենդային փայլով էին վառվում։ Եվպրակսեյուշկան երկար նայում էր նրան որպես անծանոթի, բայց վերջապես ճանաչեց։

— Օրիո՞րդ, դուք եք,— բացականչեց նա, ձեռքերը միմյանց կցելով։

— Ես եմ։ Ի՞նչ է որ։

Այս ասելիս Աննինկան կամացուկ ծիծաղեց, կարծես ուզում էր ավելացնել՝ այո, այնուամենայնիվ, ի՞նչ օրի ընդունեցին նրանք ինձ։

— Քեռին առո՞ղջ է,— հարցրեց նա։

— Քեռուն ինչ... այնպես, ոչինչ... Անունն է մենակ, որ ապրում է, թե չէ համարյա չենք տեսնում նրան երբեք։

— Ի՞նչ է պատահել նրան։

— Այնպես... ձանձրույթից, երևի, այդպես է դարձել...

— Մի՞թե բակլայով գուշակելն էլ թողել է։

— Այժմ նա, օրիորդ, լուռ է մնում։ Շարունակ խոսում էր, բայց հանկարծ լռեց։ Լսում ենք մեկ-մեկ ինչպես առանձնասենյակում ինքն իր հետ խոսում է, ծիծաղում է նույնիսկ, բայց որ սենյակ է դուրս գալիս, նորից լռում է։ Ասում են նրա հանգուցյալ եղբոր, Ստեպան Վլադիմիրիչի հետ էլ այդպես է պատահել... Շարունակ ուրախ է եղել, բայց հանկարծ լռել է։ Իսկ դուք, օրիորդ, առո՞ղջ եք։

Աննինկան ի պատասխան ձեռքը միայն թափահարեց։

— Քույրիկդ առո՞ղջ է։

— Արդեն մի ամիս է, որ Կրեչետովում մեծ ճանապարհի կողքին պառկել է գերեզմանում։

— Ողորմա՞ծ ասուված, ինչո՞ւ ճանապարհի կողքին։

— Հայտնի է ինչպես են թաղում ինքնասպաններին։

— Տե՞ր աստված, օրիորդ-տիրուհի էր և հանկարծ ինքն իր վրա ձե՞ռք բարձրացրեց... Այդ ինչո՞ւ այդպես։

— Այս, առաջ օրիորդ-տիրուհի էր, իսկ հետո թունավորվեց, ուրիշ ոչինչ... Իսկ ես վախեցա, ուզեցի ապրել։ Ահա եկել եմ ձեզ մոտ։ Շատ ժամանակով չէ, մի վախեցեք... կմեռնեմ։

Եվպրակսեյուշկան աչքերը լայն բաց արած, նայում էր նրան, կարծես չէր հասկանում։

— Ի՞նչ եք նայում ինձ։ Լա՞վ եմ։ Դե, ինչ որ կամ... Բայց այդ մասին հետո... Այժմ պատվիրեցեք կառքն արձակել և նախազգուշացրեք քեռուն։

Այդ ասելով, նա գրպանից հանեց հին դրամապանակն ու միջից երկու դեղին թղթադրամ դուրս բերեց։

— Ահա և իմ կարողությունը,— ավելացրեց նա, ցույց տալով լղարիկ ճամպրուկը։— Այստեղ բոլորն է. և՛ տոհմականը, և՛ անձնական վաստակածը։ Մրսել եմ ես, Եվպրակսեյուշկա, շատ եմ մրսել։ Ամբողջապես հիվանդ եմ, ոչ մի առողջ ոսկոր չկա վրաս, ցուրտն էլ, հակառակը պես, մյուս կողմից... Գալիս եմ ու մի բան եմ մտածում՝ հասնեմ Գոլովլյովո, թեկուզ և մեռնեմ, բայց տաքի մեջ։ Օդի տայիր ինձ... կա՞։

— Դուք, օրիորդ, լավ կանեք թեյ խմեք, ինքնաեռն իսկույն պատրաստ կլինի։

— Ոչ, թեյը հետո, իսկ այժմ օդի լիներ... Դուք, ի դեպ, քեռուն օրու մասին մի ասեք առայժմ... Հետո ամեն ինչ իրեն-իրեն հայտնի կդառնա։

Մինչ սեղանատանը թեյի սեղան էին պատրաստում, եկավ նաև Պորֆիրի Վլադիմիրիչը։ Իր հերթին Աննինկան զարմանքով հանդիպեց նրան, այն աստիճան նիհարել, խունացել ու վայրիացել էր նա։ Նա Աննինկային տարօրինակ վերաբերվեց. ոչ թե սառը, այլ կարծես թե ոչ մի առնչություն չունի նրա հետ։ Քիչ էր խոսում, հարկադրական, ինչպես դերասանը, որը դժվարությամբ է հիշում խոսքերը հին դերերից։ Ընդհանրապես ցրված էր, կարծես գլխում այդ ժամանակ բոլորովին այլ, ավելի կարևոր աշխատանք էր գնում, որից չնչին պատճառով վրդովիչ կերպով կտրեցին։

— Ահա և դու եկար,— ասաց նա։— Ի՞նչ ես ուզում, թե՞յ, սո՞ւրճ, կարգադրի՛ր։

Առաջներում ազգակցական հանդիպումների ժամանակ ըզգացվող մարդու դերը սովորաբար կատարում էր Իուդուշկան, բայց այս անգամ զգացվեց Աննինկան և զգացվեց ճըշմարտապես։ Անշուշտ շատ վիշտ էր կրել նա, որովհետև փարվեց Պորֆիրի Վլադիմիրիչի կրծքին և ամուր գրկեց նրան։

— Քեռի, ես ձեզ մոտ եմ եկել,— բացականչեց նա և հանկարծ արտասվեց։

— Ինչ կա որ, բարո՞վ ես եկել, սենյակներ ես շատ ունեմ, ապրիր։

— Հիվանդ եմ ես, քեռի, շատ, շա՞տ հիվանդ եմ։

— Իսկ եթե հիվանդ ես, ուրեմն հարկավոր է աստծուն աղոթել։ Ես ինքս էլ, երբ հիվանդ եմ լինում,— միշտ աղոթքով եմ բուժվում։

— Մեռնելու եմ եկել ես ձեզ մոտ, քեռի։

Պորֆիրի Վլադիմիրիչը փորձող աչքով նրան նայեց և հազիվ նկատելի քմծիծաղ սահեց շուրթերով։

— Խաղացիք-վերջացրի՞ք,— արտասանեց նա հազիվ լսելի, համարյա ինքն իրեն։

— Այո, խաղացինք-վերջացրինք։ Լյուբինկան — նա «վերջացրեց» ու մեռավ, իսկ ես ահա... ապրում եմ։

Լյուբինկայի մահը լսելով, Իուդուշկան երկյուղած խաչակնքեց և աղոթարար շշնջաց։ Աննինկան մինչդեռ նստեց սեղանի մոտ, կոթնեց և, եկեղեցու կողմը նայելով, շարունակեց դառնագին արտասվել։

— Այ, լաց լինելը և հուսահատվելը մեղք է,— ուսուցչարար նկատեց Պորֆիրի Վլադիմիրիչը։— Քրիստոնեաբար գիտե՞ս ինչ պետք է անել։ Ոչ թե լաց լինել, այլ հպատակվել և ակնկալել,— ահա ինչպես է հարկավոր քրիստոնեաբար։

Բայց Աննինկան ետ ընկավ աթոռի մեջքին և, վշտոտ կախելով թևերը, կրկնում էր.

— Ա՜խ, չգիտեմ արդեն։ Չգիտե՛մ, չգիտե՛մ, չգիտե՛մ։

— Թե որ դու քրոջդ համար ես այդչափ վշտանում, ապա դա ևս մեղք է,— շարունակեց մինչդեռ խրատել Իուդուշկան։— Որովհետև թեպետև գովելի է քույրերին և եղբայրներին սիրելը, սակայն եթե աստծուն հաճելի է նրանցից մեկին կամ նույնիսկ բոլորին իր մոտ կանչել...

— Ա՜խ, ոչ, ոչ։ Քեռի, դուք բարի՞ եք, բարի՞ եք դուք, ասացեք։

Աննինկան կրկին նետվեց նրա մոտ ու գրկեց։

— Դե, բարի եմ, բարի եմ։ Դե, ասա, ի՞նչ ես ուզում, ուտելի՞ք, թե՞յ, սո՞ւրճ, պահանջի՛ր, կարգադրի՛ր։

Աննինկան հանկարծ հիշեց, ինչպես երբ առաջին անգամ Գոլովլյովո եկավ, քեռին հարցրեց. «Հորթի միս ուզո՞ւմ ես, խոճկո՞ր, կարտոֆի՞լ»,— և նա հասկացավ, որ ոչ մի այլ մխիթարանք այստեղ նա չի գտնելու։

— Շնորհակալ եմ, քեռի,— ասաց նա, կրկին նստելով սեղանի մոտ,— ոչ մի առանձին բան հարկավոր չի ինձ։ Ես նախապես հավատացած եմ, որ ամեն ինչից գոհ կլինեմ։

— Իսկ որ գոհ կլինես, դե փառք աստծու։ Պոգորելկի ես գնալու, ի՞նչ է։

— Ոչ, քեռի, ես առայժմ ձեզ մոտ կապրեմ։ Դուք դեմ չե՞ք լինի։

— Քրիստոս քեզ հետ, ապրի՛ր։ Եթե ես Պոգորելկու մասին հարցրի, ապա նրա համար, որ գնալու դեպքում պետք է կարգադրություններ անել՝ կիբիտկա, ձիեր...

— Ո՛չ, հե՛տո, հե՛տո։

— Եվ սքանչելի։ Հետո մի ժամանակ կգնաս, իսկ առայժմ մեզ հետ ապրիր։ Տնտեսությանը կօգնես. չէ որ ես մենակ եմ։ Գեղեցկուհին այս,— Իուդուշկան համարյա ատե-

լությամբ մասնացույց արեց Եվպրակսեյուշկային, որը թեյ էր լցնում,— շարունակ սպասավորների հետ է վազվզում, այնպես որ երբեմն ոչ ոքի կանչել էլ չես կարողանում, ամբողջ տունը դատարկ է լինում։ Դե, առայժմ մնաս բարով։ Ես իմ սենյակը գնամ։ Ե՛վ կաղոթեմ, և՛ գործով կզբաղվեմ, ու նորից կաղոթեմ... այդպես, բարեկամս։ Վաղո՞ւց է Լյուբինկան վախճանվել։

— Մի ամիս կա, քեռի։

— Ուրեմն վաղը մենք առավոտ վաղ պատարագի կը-գնանք և ի դեպ մաղթանք կատարել կտանք նորավախճան աստծու ծառա Լյուբինկայի համար... Դե, մնաս բարով առայժմ։ Թեյ խմիր, իսկ թե ճանապարհից քաղցած ես, հրամայիր ուտելիք տան։ Ճաշին նորից կտեսնվենք։ Կխոսենք, կզրուցենք, թե որ մի բան հարկավոր է՝ կկարգադրենք, իսկ թե հարկավոր չի՝ այնպես կնստենք։

Այսպես տեղի ունեցավ այս առաջին ազգակցական հանդիպումը։ Այդ հանդիպումից հետո Աննինկան սկսեց նոր կյանքով ապրել նույն այն զզվելի Գոլովլյովոյում, որտեղից նա արդեն, իր կարճատև կյանքի ընթացքում երկու անգամ չէր խմանում ինչպես ազատվի։

* * *

Աննինկան սկսեց ցած գլորվել շատ արագ։ Գոլովլյովո մեկնելու կապակցությամբ առաջացած այն գիտակցությունը (Արինա Պետրովնա տատիկի մահից հետո), որ նա «օրիորդ-տիրուհի է, որ նա ունի իր բունը և իր գերեզմանները, որ ամեն բան իր կյանքում միայն հյուրանոցների ու իշխանների աղմուկով և գարշահոտությամբ չի սպառվում, որ կա, վերջապես, մի ապաստարան, ուր չեն հասնի նրան գինու և ախոռի հոտով վարակված գարշելի շնչառությունները, ուր չի ներխուժի այն «բեղավոր» հարբեցողությունից խռպոտած ձայնով և բորբոքված աչքերով (ա՜խ, ինչեր էր ասում նա իրեն, ինչ շարժումներ էր անում նա իր ներկայությամբ),— այդ գիտակցությունը չքացավ անհետ, երբ աչքերից անհետացավ Գոլովլյովոն։

Աննինկան այն ժամանակ Գոլովլյովոյից մեկնեց ուղիղ Մոսկվա և սկսեց աշխատել, որպեսզի իրեն և քրոջն ընդունեն պետական բեմը։ Այդ նպատակով նա դիմեց և maman-ին՝ այն ինստիտուտի դիրեկտրիսային, ուր դաստիարակվել էր նա, և ինստիտուտի մի քանի ընկերուհիներին։ Բայց ամեն տեղ նրան մի տեսակ տարօրինակ էին ընդունում։ Maman-ը, որ առաջին րոպեին բավական սիրալիր վերաբերվեց նրան, հենց որ իմացավ, որ նա խաղում է գավառական թատրոնում, հանկարծ դեմքի բարեհաճ արտահայտությունը փոխեց ծանրակշիռ և խիստ արտահայտության, իսկ ընկերուհիները, մեծ մասով ամուսնացած կանայք, այնպիսի լպիրշ զարմանքով նայեցին նրա վրա, որ նա ուղղակի վախեցավ։ Միայն մեկը, որ ավելի բարեհոգի էր, քան մյուսները, կամենալով ցավակցել նրան, հարցրեց.

— Իսկ ասա, հոգյակս, ճի՞շտ է, որ երբ դուք, դերասանուհիներդ, հագնվում եք առանձնարանում, ձեր կորսետները սպաներն են ձգում։

Մի խոսքով, նրա փորձերը՝ Մոսկվայում հաստատվելու, այդպես էլ մնացին փորձեր։ Պետք է, թեպետև, ճշմարիտն ասել, որ նա մայրաքաղաքի բեմերում հաջողություն ունենալու համար իսկական տվյալներ չուներ։ Թե նա, թե Լյուբինկան պատկանում էին այն աշխույժ, բայց ոչ առանձնապես շնորհալի դերասանուհիների թվին, որոնք իրենց կյանքում միշտ միևնույն դերն են խաղում։ Աննինկային հաջողվեց «Պերիկոլան», Լյուբինկային՝ «Երեքգունյա մանուշակը» և «Հին ժամանակների գնդապետը»։ Եվ այնուհետև, ինչի էլ որ ձեռք էին զարկում նրանք, միշտ ստացվում էր «Պերիկոլա» և «Երեքգունյա մանուշակ», իսկ մեծ մասամբ թերեւս և ոչինչ չէր ստացվում։ Պատահում էր Աննինկային խաղալ նաև «Ջքնաղ Հեղինե» (ծառայության պարտավորությամբ նույնիսկ հաճախ). իր մոխրագույն մազերի վրա կրակագույն պարիկ էր ծածկում, ներքնազգեստի բացվածքը մինչև գոտկատեղն էր հասցնում, բայց և այնպես ստացվում էր միջակ, հույլ, նույնիսկ ոչ ցինիկ։ «Հեղինեից» նա անցավ «Հատվածներ՝ Դքսուհի Հերոլշտեյնից»-ին, և որովհետև այդտեղ անգույն խաղին ավելացավ և միանգամայն անիմաստ

բեմադրությունը, ապա ինչ-որ միանգամայն հիմար բան ստացվեց։ Վերջապես ձեռք զարկեց խաղալու Կլերետայի դերը «Շուկայի դուստրը» օպերետայում, բայց այդտեղ, աշխատելով հասարակությանը էլեկտրականացնել, այն աստիճան չափազանցրեց, որ նույնիսկ գավառական անպահանջկոտ դիտողներին թվաց, որ բեմում վազվզում է ոչ թե «գոհացնել» ցանկացող դերասանուհի, այլ ուղղակի ինչ-որ մի անվայել կոնք։ Ընդհանրապես Աննինկայի մասին կարծիք կազմվեց որպես ժիր դերասանուհու, որը վատ ձայն չունի, և որովհետև դրա հետ միասին նա գեղեցիկ արտաքին ուներ, ապա գավառում նա կարող էր, թերևս, մուտք անել։ Բայց ուրիշ ոչինչ։ Իր մասին խոսեցնել նա չէր կարող և ոչ մի որոշակի դեմք չուներ։ Նույնիսկ գավառական հասարակության մեջ նրա պարտիան կազմում էին բացառապես ամեն զենքի սպասարկուները, որոնց գլխավոր պահանջն այն էր, որ ազատ մուտք ունենան կուլիսներում։ Իսկ մայրաքաղաքում նրա ներկայությունը հնարավոր էր ոչ այլ կերպ, քան շատ ուժեղ հովանավորության շնորհիվ միայն բեմ ընդունվելը, բայց և այդ բոլորով հանդերձ նա հասարակությունից կարող էր միայն աննախանձելի «արֆիստկա» մականունը ստանալ։

Ստիպված էր վերադառնալ գավառ։ Մոսկվայում Աննինկան նամակ ստացավ Լյուբինկայից, որից իմացավ, որ նրանց խումբը Կրեչետովից տեղափոխվել է Սամովարնով նահանգական քաղաքը, որի համար նա, Լյուբինկան շատ ուրախ է, որովհետև բարեկամացել է սամովարնեցի մի զեմստվոյական գործչի հետ, որն այնքան է հրապուրվել իրենով, որ «պատրաստ է, կարծես, զեմստվոյական փողերը գողանալ», միայն թե կատարի այն բոլորն, ինչ ուզում է ինքը։ Եվ իրոք, Սամովարնով գալով, Աննինկան քրոջը գտավ համեմատական շքեղ պայմաններում՝ թեթևամտորեն որոշած լինելով թողնել բեմը։ Գալու րոպեին Լյուբինկայի մոտ էր գտնվում և նրա «ընկերը»՝ զեմստվոյական գործիչ Գավրիլո Ստեպանիչ Լյուլկինը։ Դա պաշտոնաթող հուսարական շտաբ-ռոտմիստր էր, դեռ նորերս bel-homme (գեղեցիկ տղամարդ), բայց այժմ մասամբ ծանրացած։ Նրա դեմքն ազնվաբարո

էր, շարժուձևերն ազնվական, մտածելակերպն ազնվական, բայց միաժամանակ այդ բոլորը վստահություն էր ներշնչում, որ այդ մարդը զեմստվոյական դրամարկղից ամենևին փախուստ չի տա։ Լյուբինկան քրոջը գրկաբաց ընդունեց և հայտարարեց, որ իր բնակարանում նրա համար սենյակ է պատրաստված։

Բայց նորերս «իր վայրերը» կատարած ճանապարհորդության ազդեցության տակ Աննինկան բարկացավ։ Քույրերի մեջ բորբոքված խոսակցություն տեղի ունեցավ, իսկ հետո՝ գժտություն։ Ըստ որում Աննինկան ակամայից հիշեց, ինչպես վոպլինյան քահանան ասում էր, որ դերասանական կոչման մեջ դժվար է «գանձը» պահել։

Աննինկան բնակվեց հյուրանոցում և խզեց ամեն հարաբերություն քրոջ հետ։ Անցավ զատկի շաբաթը, սկսվեցին ներկայացումները, և Աննինկան իմացավ, որ քրոջ փոխարեն Կազանից հրավիրել են օրիորդ Նալիմովային՝ որպես դերասանուհի աննշան, բայց մարմնաշարժման իմաստով միանգամայն անարգել։ Ըստ սովորականի, Աննինկան հասարակության առաջ դուրս եկավ «Պերիկոլայում» և Սամովարնովի քաղքենիներին հիացմունք պատճառեց։ Վերադառնալով հյուրանոց, նա իր համարում մի ծրար գտավ, որի մեջ հարյուրանոց թղթադրամ և համառոտ տոմս կար, ուր ասված էր՝ «իսկ որևէ այլ դեպքում ևս նույնքան։ Մոդնի ապրանքի վաճառական Կուկիշև»։ Աննինկան զայրացավ և գնաց գանգատվելու հյուրանոցատիրոջ մոտ, բայց հյուրանոցատերը հայտարարեց, որ Կուկիշևն արդեն այդպիսի «սովորություն» ունի, որպեսզի բոլոր դերասանուհիներին գալուստի առիթով շնորհավորի, իսկ նա, իբրև թե, խաղաղ մարդ է և չարժե նրա վրա բարկանալ։ Հետևելով այդ խորհրդին, Աննինկան ծրարի մեջ փակեց նամակն ու փողը և մյուս օրը բոլորը վերադարձնելով ըստ պատկանելույն, հանգստացավ։

Բայց Կուկիշևն ավելի համառ դուրս եկավ, քան հյուրանոցատիրոջ կարծիքն էր նրա մասին։ Նա իրեն համարում էր Լյուլկինի բարեկամների թվում և բարեկամական հարաբերության մեջ էր գտնվում Լյուբինկայի հետ։ Նա հարուստ մարդ էր և, բացի դրանից, Լյուլկինի նման, քաղաքային

վարչության անդամ լինելով, ամենարարեկամաստ պայմանների մեջ էր գտնվում քաղաքային դրամարկղի նկատմամբ։ Եվ ընդսմին, նույն այն Լյուլկինի նման, անվախ էր։ Առևտրական շարքի տեսակետից նա դյուրիչ արտաքին ուներ։ Այն է՝ հիշեցնում էր այն բզեզին, որը, երգի խոսքերով, պըտուղի փոխարեն գտել էր դաշտում Մաշան.

Սև բզեզի բեղերով,
Խուճուճ մազերը գլխին,
Եվ սևագորշ հոնքերով՝
Իմ իսկական սիրելին։

Ապա, այդպիսի արտաքին ունենալով, նա ևս առավել իրավունք էր համարում իրեն հանդգնել, որովհետև Լյուբինկան ուղղակի իր աջակցությունն էր խոստացել։

Ընդհանրապես Լյուբինկան, ըստ երևույթին, վերջնականապես այրել էր իր նավերը, և նրա մասին քրոջ ինքնասիրությանը դիպչող շատ տհաճ լուրեր էին պտտում։ Ասում էին, որ ամեն երեկո նրա մոտ կերուխուր անողների ամբոխ է հավաքվում, որը ընթրում է կեսգիշերից մինչև լուսաբաց, որ Լյուբինկան գլխավորում է այդ կոմպանիան և, «գնչուհի» ներկայացնելով իրեն, կխամերկ (այս դեպքում Լյուլկինը, դիմելով հարբած ընկերներին, բացականչում էր՝ «նայեցեք, ա՜յ սա կո՛ւրծք եմ ասել, հա՞»), հերարձակ և կիթառը ձեռքին երգում է.

Հաճելի էր, ա՜խ, որքա՜ն,
Բեղավոր իմ սիրածն այն։

Աննինկան լսում էր այդ պատմությունները և հուզվում էր։ Իսկ ինչն ամենից շատ զարմացնում էր նրան, այդ այն էր, որ Լյուբինկան բեղավորի մասին ռոմանսը երգում էր գնչուական ձևով, ճիշտ և ճիշտ ինչպես մոսկովյան Մատրյոշան։ Աննինկան միշտ մեծ գերադասություն էր տալիս Լյուբինկային, և եթե նրան ասեին, օրինակ, որ Լյուբինկան «Հին ժամանակների գնդապետ»-ի քառյակները «աննման» է երգում, նա, հասկանալի է, դա շատ բնական կհամարեր և սիրով կհավատար։ Դե դրան չէր էլ կարելի չհավատալ, որովհետև և՛ կուրսկյան, և՛ տամբովյան, և՛ պենզենյան հասարակությունը մինչև այժմ էլ հիշում է, թե ինչպիսի աննման

միամտությամբ էր Լյուբինկան իր փոքրիկ ձայնով ենթագնդապետ* լինելու ցանկություն հայտնում... Բայց որ Լյուբինկան կարող է երգել գնչուական ձևով, ինչպես Մատրյոշան,— այդ ներեցեք, այդ սո՛ւտ է։ Այ ինքը, Աննինկան կարող է այդպես երգել, դա անկասկած է։ Դա իր ժանրն է, իր ամպլուան, և ողջ Կուրսկը, որը տեսել է նրան «Ռուսական ռոմանսները՝ դեմքերով» պիեսում, սիրով կվկայի, որ նա «կարող է»։

Եվ Աննինկան ձեռքն էր առնում կիթառը, շերտավոր լանջափոկը ուսն էր գցում, նստում էր աթոռին, ոտքը ոտքին էր գցում և սկսում՝ ի՜-է՜-է՜խ, ի-է՜-ա՜խ... Եվ իսկապես, ստացվում էր ճիշտ ու ճիշտ գնչուհի Մատրյոշայի նման։

Ինչ էլ որ լիներ, բայց Լյուբինկան շռայլում էր, իսկ Լյուլկինը, որպեսզի գինովի երանության պատկերը որևէ մերժումով չմթագնի, ըստ երևույթին, արդեն սկսել էր փոխառություններ անել զեմստվոյական դրամարկղից։ Չխոսելով անհաշիվ շամպայնի մասին, որ ամեն գիշեր խմվում և թափվում էր հատակին Լյուբինկայի բնակարանում, նա ինքն օրեցօր ավելի ու ավելի քմահաճ և պահանջկոտ էր դառնում։ Հանդես եկան սկզբում Մոսկվայից, m-me Մինանգուայից դուրս գրված հագուստներ, իսկ հետո՝ նաև ադամանդներ՝ Ֆուլդից բերել տված։ Լյուբինկան հաշվետես էր և ակնեղենը չէր արհամարհում։ Հարբած կյանքն՝ ինքն իրեն, իսկ ոսկին ու թանկարժեք քարերը և առանձնապես խաղատոմսերը՝ իրենք իրենց։ Համենայն դեպս կյանքն ընթանում էր ոչ այնքան ուրախ, որչափ բուռն, անզուսպ, արբեցումից-արբեցում։ Մի բան էր անհաճո՝ անհրաժեշտ էր պարոն ոստիկանապետի բարեհաճ ուշադրությունը շահել, որը թեպետև պատկանում էր Լյուլկինի բարեկամների թվին, բայց երբեմն սիրում էր զգացնել տալ, որ նա որոշ չափով իշխանություն է։ Լյուբինկան միշտ կոահում էր, թե երբ է ոստիկանապետը դժգոհ իր հյուրասիրությունից, որովհետև այդպիսի դեպքերում մյուս օրն առավոտյան պրիստավը գալիս

* Ռուսերենում այստեղ բառախաղ է ստացվում (ենթագնդապետ — подполковником) (Թան. խմբ.)

էր իր մոտ և անձնագիր էր պահանջում։ Եվ նա հպատակվում էր. առավոտյան պրիստավին ուտելիք և օդի էր մատուցում, իսկ երեկոյան պարոն ոստիկանապետի համար սեփական ձեռներով որևէ «շվեդական» պունշ էր պատրաստում, որի մեծ սիրահար էր պարոն ոստիկանապետը։

Կուկիշևը տեսնում էր այդ հեղեղման ծովը և նախանձից այրվում էր։ Նա ուզեց ճիշտ այդպիսի՝ դռները բոլորի առաջ բաց տուն ունենալ և ճիշտ ու ճիշտ այդպիսի «սիրունիկ»։ Այդ դեպքում կարելի էր ժամանակն էլ բազմազան անցկացնել՝ այս գիշեր Լյուլկինի «սիրունիկի» մոտ, վաղը գիշերը՝ իր, Կուկիշևի «սիրունիկի» մոտ։ Դա նրա նվիրական երազն էր, երազ հիմար մարդու, որը որչափ հիմար է, այնչափ համառ է իր նպատակներին հասնելու մեջ։ Եվ այդ երազն իրագործելու ամենից համապատասխան անձը Աննինկան էր հանդիսանում։

Սակայն Աննինկան անձնատուր չէր լինում։ Մինչև այդ արյունը դեռևս չէր խոսել նրա մեջ, թեպետև նա շատ երկրպագուներ ուներ և չէր քաշվում նրանց վերաբերվելու մեջ։ Եղավ մի րոպե, երբ նրան թվաց, որ պատրաստ է սիրել տեղական ողբերգու Միլոսլավսկի 10-րդին, որն, ըստ երևույթին, իր հերթին նույնպես այրվում էր դեպի նա ունեցած տենչից։ Բայց Միլոսլավսկի 10-րդն այն աստիճան հիմար էր և ըստ այդու այնպես համառորեն հարբած, որ ոչ մի անգամ ոչինչ չէր արտահայտում նրան, այլ միայն աչքերն էր շռում և մի տեսակ անշնորհք գկրտում էր, երբ Աննինկան անցնում էր իր կողքով։ Այդպես էլ այդ սերը խըլացավ իր սկզբնավորման իսկ պահից։ Իսկ մյուս բոլոր երկրպագուների վրա Աննինկան նայում էր որպես անխուսափելի պարագայի, որին գավառական դերասանուհին դատապարտված է իր արհեստի պայմաններով։ Նա հպատակվում էր այդ պայմաններին, օգտվում էր այն մանր արտոնություններից (ծափահարություններ, ծաղկեփնջեր, եռաձիով զբոսանք, բայց այդ, այսպես ասած, արտաքին անառակությունից դենը չէր անցնում։

Այս անգամ ևս նա այդպես վարվեց։ Ամբողջ ամառվա ընթացքում նա անշեղորեն մնաց առաքինության շավղի

վրա, խանդով պահպանելով իր «գանձը» և կարծես հեռվից-հեռու կամենալով ապացուցել վոպլինյան տերտերին որ դերասանուհիների մեջ նույնպես պատահում են անձնավորություններ, որոնց խորթ չէ հերոսությունը։ Մեկ անգամ նա նույնիսկ վճռեց Կուկիշևի դեմ գանգատվել շրջանի պետին, որը բարեհաճ ունկնդրելով նրան և հերոսության համար գովաբանելով, հանձնարարեց ապագայում ևս շարունակել նույնը։ Բայց դրա հետ միաժամանակ գտնելով, թե Աննինկայի գանգատը լոկ միայն առիթ է կողմնակի կերպով հարձակում գործելու իր՝ շրջանի պետի անձնավորության դեմ, բարեհաճեց կցել, որ ինքը, ներքին թշնամիների դեմ պայքարելու վրա ծախսելով իր ուժերը, հաստատուն հիմք չունի ենթադրելու, որ պահանջված իմաստով կարող է օգտակար գտնվել։ Այդ լսելով, Աննինկան կարմրեց ու հեռացավ։

Մինչդեռ Կուկիշևը գործն այնպես ճարպիկ էր տանում, որ կարողացավ իր ձգտումներով հետաքրքրել նաև հասարակությանը։ Հասարակությունը հանկարծ հասկացավ, որ Կուկիշևն իրավացի է և որ Պոգորելսկայա 1-ինը (Աննինկան այդպես էր հայտարարվում աֆիշներում) մի շատ մեծ «պտուղ» չի, որ այդպես սուտ բարեպաշտ է ձևացնում իրեն։ Ամբողջ մի պարտիա կազմվեց, որը նպատակ դրեց իրեն սանձահարել անհնազանդ անձնապաստանին։ Սկսվեց նրանից, որ կուլիսների մշտական հաճախորդներն սկսեցին խուսափել նրա առանձնարանից և իրենց համար բույն հյուսեցին հարևան օրիորդ Նալիմովայի առանձնարանում։ Հետո, առանց սակայն ուղղակի թշնամանք արտահայտելու, սկսեցին օրիորդ Պոգորելսկայային ելույթների ժամանակ այնպիսի սպանիչ զսպվածությամբ ընդունել, որ կարծես բեմ էր դուրս եկել ոչ թե խմբի առաջին դերասանուհին, այլ ինչ-որ մի բթամիտ ստատիստ։ Վերջապես պնդեցին, որպեսզի անտրպրենյորը մի քանի դերեր վերցնի Աննինկայից և տա Նալիմովային։ Եվ ինչն ամենից հետաքրքրականն է, այդ այն է, որ ընդհատակյա այդ ամբողջ խարդավանքում ամենից գործունյա մասնակցություն ուներ Լյուբինկան, որի սրտակիցն էր Նալիմովան։

Աշնան մոտ Աննինկան զարմանքով տեսավ, որ իրեն

հարկադրում են «Ձքնաղ Հեղինեում» Օրեստ խաղալ և որ իր նախկին դերերից իրեն մնացել է միայն Պերիկոլան, այն էլ այն պատճառով, որ Նալիմովան ինքը չէր համարձակվում մրցակցել նրա հետ այդ պիեսում։ Բացի դրանից, անտրպրենյորը հայտարարեց նրան՝ որովհետև հասարակությունը սառել էր նրանից, ուստի նրա ռոճիկն իջեցնում է ամսական 75 ռուբլու՝ մեկ կեսբենեֆիսով տարվա ընթացքում։

Աննինկան վախեցավ, որովհետև այդ ռոճիկով նա հարկադրված էր լինելու հյուրանոցից փոխադրվել իջևան։ Նա նամակ գրեց երկու-երեք անտրպրենյորների, առաջարկելով իր ծառայությունը, բայց ամեն տեղից պատասխան ստացավ, որ ներկայումս առանց այն էլ Պերիկոլայի ձեռքից դադար չկա, իսկ որովհետև, բացի դրանից, հավաստի աղբյուրներից հայտնի է դարձել նրա ըմբոստության մասին, ապա առավել ևս հաջողության հույս ունենալ հնարավոր չէ։

Աննինկան վերջին պահունի փողերն էր ծախսում։ Եվ մի շաբաթ, և նա խույս տալ չի կարող իջևանից, օրիորդ Խորոշավինային համահավասար, որը Պարֆենիա էր խաղում և օգտվում էր թաղային հսկչի հովանավորությունից։ Նա սկսել էր հուսահատության մեջ ընկնել, ևս առավել, որ ամեն օր մի խորհրդավոր ձեռք նրա համարն էր նետում միևնույն բովանդակությամբ տոմսեր՝ «Պերիկոլա, հնազանդվիր. քո Կուկիշև»։ Եվ ահա այդ ծանր րոպեին միանգամայն անսպասելի նրա մոտ ներխուժեց Լյուբինկան։

— Ասա, խնդրեմ, ի՞նչ իշխանի համար ես դու քո դանձը պահում,— հարցրեց նա ինքնատոր։

Աննինկան վարանմունքի մեջ ընկավ։ Նախ և առաջ նրան զարմացրեց, որ և՛ վոլլինյան տիկնոջը, և՛ Լյուբուշկան նույն իմաստով են գործածում «դանձը»։ Միայն թե տիկնոջը դանձի մեջ տեսնում է «հիմունքը», իսկ Լյուբուշկան դրան նայում է որպես դատարկ բանի վրա, որից, սակայն, «սրիկա-տղամարդիկ» պատրաստ են հիմարանալու աստիճանի հասնել։

Ապա նա ակամայից հարց տվեց իրեն՝ ի՞նչ բան է, իսկապես, այդ դանձը, իրո՞ք որ նա դանձ է և արժե՞ արդյոք պահպանել այն,— և ավա՜ղ, այդ հարցին գոհացուցիչ պա-

տասխան չգտավ։ Մի կողմից, կարծես, ամոթ է մնալ առանց դանձի, իսկ մյուս կողմից... ա՜խ, գրողը տանի, մի՞թե կյանքի ամբողջ իմաստը, ամբողջ արժանիքը նրանով հենց միայն պիտի արտահայտվի, որպեսզի ամեն րոպե պայքար մղվի դանձի համար։

— Ես կես տարում արդեն երեսուն խաղատոմս եմ կուտակել,— շարունակեց մինչ այդ Լյուբինկան,— և ինչքա՞ն էլ իրեր... Տես, ի՞նչ հագուստ եմ հագել։

Լյուբինկան պտույտ եկավ, նախ առաջի, ապա ետևի կողմից ձգեց հագուստը, թույլ տալով ամեն կողմից դիտելու իրեն։ Հագուստն իսկապես և՛ թանկագին էր, և՛ զարմանալի կարված, ուղղակի Մինանգուայից ստացված՝ Մոսկվայից։

— Կուկիշևը բարի է,— կրկին սկսեց Լյուբինկան,— նա քեզ տիկնիկի պես կզարդարի, փող էլ կտա։ Իսկ թատրոնը կարելի է և թողնել, հերիք է։

— Երբե՛ք,— բորբոքեցավ Աննինկան, որը դեռևս սուրբ արվեստ բառերը չէր մոռացել։

— Կարելի է և մնալ, եթե ուզում ես նորից քարձր ռոճիկ կստանաս, Նալիմովայից առաջ կգնաս։

Աննինկան լուռ էր։

— Դե, մնաս բարով, ինձ ցածում սպասում են մեքենան։ Կուկիշևն էլ այնտեղ է։ Գնա՞նք։

Բայց Աննինկան շարունակում էր լռել։

— Դե, մտածիր, թե որ մտածելու բան կա... Իսկ երբ կորոշես, արի։ Մնաս բարև։

Սեպտեմբերի 17-ին, Լյուբինկայի անվանակոչության օրը Սամովարնովյան թատրոնի աֆիշն ազդարարում էր արտաքո կարգի ներկայացում։ Աննինկան կրկին հանդես եկավ «Ձքնաղ Հեղինեի» դերում, և նույն այն երեկո, «այս անգամ միայն», Օրեստի դերը կատարում էր օրիորդ Պոգորելսկայա 2-րդը, այսինքն՝ Լյուբինկան։ Ի լրումն հանդեսի, և նույնպես «այս անգամ միայն», օրիորդ Նալիմովային տրիկո հագցրին, կարճ վիզիտկա, դեմքին թեթևակի մուր քսեցին, զինեցին երկաթթերթով և բեմ թողեցին դարբին Կեոլնի դերում։ Այդ բոլորի պատճառով, հասարակությունը նույնպես մի տեսակ

խանդավառ տրամադրություն ուներ։ Հազիվ էր Աննինկան կուլիսներից բեմ դուրս եկել, նրան այնպիսի աղաղակով դիմավորեցին, որ նա, բոլորովին արդեն խորթացած լինելով օվացիաներից, զգաց, որ հեկեկանքները խեղդում են իրեն։ Իսկ երբ երրորդ գործողության մեջ, գիշերային արթնացման տեսարանում թախտի վրայից վեր կացավ համարյա կիսամերկ, ապա դահլիճում բառի լայն իմաստով տնքոց բարձրացավ։ Այնպես որ մի չափազանց էլեկտրականացած հանդիսատես գոչեց դռներում երևացած Մենելայոսին՝ «Դե դո՛ւրս կորի դու, զզվելի մարդ»։ Աննինկան հասկացավ, որ հասարակությունը ներեց իրեն։ Իր կողմից Կուկիշևը, ֆրակով, սպիտակ փողկապով և սպիտակ ձեռնոցներով, արժանավորությամբ տարփողում էր իր հաղթանակի մասին և անտրակտներին բուֆետում շամպայն էր խմեցնում ծանոթներին և անծանոթներին։ Վերջապես, թատրոնի անտրպրենյորը ևս, ցնծությամբ տոգորված, եկավ Աննինկայի առանձնարանը և, ծունկ չոքելով, ասաց.

— Դե այժմ դուք, օրիորդ, խելացի եք։ Եվ ուստի այս երեկոյից սկսած դուք առաջվա պես փոխադրվում եք բարձր ոճիկի՝ համապատասխան թվով բենեֆիսներով։

Մի խոսքով, բոլորը գովում էին նրան, բոլորը շնորհավորում էին և համակրանք էին հայտնում, այնպես որ նա ինքն էլ, սկզբում որ երկչոտում էր և ճնշիչ վշտի գիրկն էր ընկել, ասես թե, միանգամայն անսպասելի կերպով համոզվեց, որ նա... կատարեց իր միսիան։

Ներկայացումից հետո բոլորը գնացին տոնակոչիկուհու մոտ, և այդտեղ շնորհավորանքները կրկնապատկվեցին։ Լյուբինկայի բնակարանում այնպիսի ամբոխ էր հավաքվել և միանգամից այնքան ծխախոտի ծուխ բարձրացավ, որ դժվար էր շնչել։ Անմիջապես ընթրիքի նստեցին, և շամպայնը հոսել սկսեց։ Կուկիշևը ոչ մի քայլ չէր հեռանում Աննինկայից, որը, ըստ երևույթին, փոքր-ինչ շփոթված էր, բայց և միաժամանակ այլևս չէր ճնշվում այդ սիրատածումից։ Նրան փոքր-ինչ ծիծաղելի, բայց և շոյիչ էր թվում, որ այդչափ հեշտությամբ ձեռք էր գցել այդպիսի հաղթանդամ և ուժեղ վաճառականին, որը կատակով պայտը կարող է ծալել ու

բացել և որին ինքը կարող է ամեն ինչ հրամայել և ինչ կամենա, այն էլ կանի նրա հետ։ Ընթրիքի ժամանակ ընդհանուր ուրախություն սկսվեց, այն գինովի, անկարգ ուրախությունը, որին մասնակցություն չեն ունենում ոչ միտքը, ոչ սիրտը և որից մյուս օրը ցավում է գլուխը և սրտխառնուք է զգացվում։ Ներկաներից միայն մեկը՝ ողբերգու Միլոսլավսկի 10-րդը մռայլ էր և հրաժարվելով շամպայնից, գավաթգավաթի ետևից հասարակ օղի էր գցում։ Ինչ վերաբերում է Աննինկային, ապա նա միաժամանակ զսպում էր իրեն «արբեցումից». բայց Կուկիշևն այնքան թախանձագին և այնպես խղճալի էր աղերսում ծունկ չոքած՝ «Աննա Սեմյոնովնա, դուք դյուբետ (debet — պարտք) ունեք, թույլ տվեք խնդրել, հանուն մեր երանությա՞ն, սե՞ր և միաբանությո՞ւն, շնո՞րհ արեք», որ նա՝ թեպետև տհաճ էր Կուկիշևի հիմար կերպարանքը տեսնել ու հիմար խոսքերը լսել, բայց և այնպես մերժել չկարողացավ և ուշքի չէր եկել դեռ, որ գլուխը պտտվեց։ Լյուբինկան, իր կողմից, այն աստիճան սիրալիր էր, որ ինքն առաջարկեց Աննինկային երգել՝ «Հաճելի էր, ա՞խ, որքա՞ն, բեղավորն իմ սիրած այն», որը վերջինս երգեց այնպիսի կատարելությամբ, որ բոլորը բացականչեցին. «Այ սա արդեն ճիշտ իսկական է... Մատրյոշկայի նման է»։ Դրա փոխարեն Լյուբինկան վարպետորեն երգեց կուպլետներ այն մասին, թե որչափ հաճելի է լինել ենթագնդապետ*, և բոլորին անմիջապես համոզեց, որ դա նրա իսկական ժանրն է, որի մեջ մրցակցուհի չունի ճիշտ այնպես, ինչպես Աննինկան գնչուական բնույթի երգերում։ Ի վերջո Միլոսլավսկի 10-րդը և օրիորդ Նալիմովան ներկայացրին «տեսարան-դիմակահանդես», որի մեջ ողբերգակը հատվածներ արտասանեց «Ուգոլինոյից» («Ուգոլինո», ողբերգություն է 5 գործողությամբ, հեղինակությունը Ն. Պոլևոյի[60]), իսկ Նալիմովան ռեպլիկներ էր տալիս նրան Բարկովի չհրատարակած ողբերգությունից։ Այն աստիճան անսպասելի դուրս եկավ, որ քիչ մնաց օրիորդ Նալիմովան մթագներ օրիորդ Պոգորելսկիներին և երեկոյի հերոսուհին դառնար։

* Ռուսերենում այստեղ բառախաղ է ստացվում։

(Ծան. խմբ.)

Լույս էր համարյա, երբ Կուկիշևը, թողնելով թանկագին անվանակոչուհուն, Աննինկային կառք էր նստեցնում։ Բարեպաշտ քաղքենիները վերադառնում էին առավոտյան ժամերգությունից և նայելով զարդարված ու թեթևակի օրորվող օրիորդ Պոգորելսկայա 1-ինին, մռայլ քրթմնջում էին.

— Մարդիկ եկեղեցուց են գալիս, իսկ նրանք գինի են լակում... ամոթա՛նք չունեն։

Քրոջ մոտից Աննինկան գնաց այլևս ոչ թե հյուրանոց, այլ իր բնակարանը՝ փոքրիկ, բայց հարմարին ու շատ անուշիկ կահավորված։ Նրա հետ այնտեղ մտավ նաև Կուկիշևը։

Ամբողջ ձմեռն անցավ մի տեսակ խելահեղության մեջ։ Աննինկան վերջնականապես անձնատուր եղավ և եթե ժամանակ առ ժամանակ վերհիշում էր «գտնձի» մասին, ապա միմիայն նրա համար, որպեսզի անմիջապես մտովի կցի՝ «ինչ հիմարն էի ես, սակայն»։ Կուկիշևը, այն հպարտ գիտակցության ազդեցության տակ, որ իր իդեալը՝ Լյուբինկային հավասար արժանիքներով «սիրունիկի» մասին՝ իրականացավ, ոչ միայն փող չէր խնայում, այլև մրցակցելուց մրոտված անպայման երկու հագուստ էր դուրս գրում, երբ Լյուլկինը միայն մեկն էր բերել տալիս, և երկու դյուժին շամպայն էր մատուցում, երբ Լյուլկինը մեկ դյուժին էր մատուցում։ Նույնիսկ Լյուբինկան սկսեց նախանձել քրոջը, որովհետև սա ձմեռվա ընթացքում կարողացել էր քառասուն խաղատոմս ունենալ, բացի բավականաչափ ոսկյա զարդերից՝ քարերով և առանց քարերի։ Նրանք, սակայն, կրկին մտերմացան և որոշեցին ամբողջ կուտակածը միասին պահել։ Ըստ որում Աննինկան դեռևս ինչ-որ բաներ երազում էր և քրոջ հետ մտերմական զրույցի ժամանակ ասում էր.

— Երբ այս բոլորը վերջանա, մենք կգնանք Պոգորելկի։ Մենք փող կունենանք և կսկսենք տնտեսությամբ զբաղվել։

Որին Լյուբինկան շատ ցինիկ պատասխանում էր.

— Իսկ դու կարծում ես որ սա երբևիցե կվերջանա՞... հիմար։

Աննինկայի շար բախտից Կուկիշևի մեջ նոր «իդեա» հայտնվեց, որին սկսեց հետապնդել նա սովորական համառությամբ։ Որպես անզարգացած և անտարակույս հիմար մարդ, նրան թվում էր, որ նա երանության գագաթնակետին հասած կլինի, եթե նրա «սիրունիկը» նրան «նվագակից դառնա», այսինքն իր հետ սկսի օղի խմել։

— Դե՛նք, միասի՞ն, մե՛կ-մե՛կ,— կպչում էր նա նրանից անդադար (նա Աննինկային միշտ «դուք» էր ասում, նախ և առաջ, գնահատելով նրա ազնվական կոչումը, և երկրորդ, որ նա զուր չէր «ծառա» եղել մոսկովյան առևտրական շարքում)։

Աննինկան միառժամանակ հրաժարվում էր, պատճառաբանելով, որ Լյուլկինը երբեք չի հարկադրում Լյուբինկային օղի խմել։

— Սակայն նա պարոն Լյուլկինի սիրո համար այնուամենայնիվ խմում է,— հակաճառեց Կուկիշևը։— Բայց և թույլ տվեք զեկուցել ձեզ, սիրունիկս, մի՞թե պարոն Լյուլկինը օրինակ է մեզ համար։ Նրանք Լյուլկին են, իսկ մենք ձեզ հետ Կուկիշև ենք։ Դրա համար էլ մենք կգցենք մեր ձևով, կուկիշևյան ձևով։

Մի խոսքով Կուկիշևը պնդում էր։ Մեկ անգամ Աննինկան իր սիրածի ձեռքից ընդունեց կանաչավուն հեղուկով լցրած գավաթը և միանգամից շուռ տվեց կոկորդը։ Հասկանալի է, խեղդվեց, հազաց, պտույտ-պտույտ եկավ և դրանով Կուկիշևին աներևակայելի հիացմունք պատճառեց։

— Թույլ տվեք զեկուցել ձեզ, սիրունիկս, դուք այնպես չեք խմում։ Դուք շատ եք միանգամից...— սովորեցնում էր նա, երբ Աննինկան մի փոքր հանգստացել էր։— Պակալչիկը (այդպես էր անվանում նա գավաթը) պետք է պահել ձեռքում ահա այսպես, հետո մոտեցնել շրթունքներին և առանց շտապելու՝ մեկ, երկու, երեք... Փա՞ռք քեզ աստված։

Եվ նա հանդարտ ու լրջորեն գավաթը դատարկեց կոկորդը, կարծես բովանդակությունը տաշտակի մեջ թափեց։ Նույնիսկ չկնճռոտվեց, այլ ափսեից մի փոքր կտոր սև հաց վերցրեց, թաթախեց աղամանը ու ծամեց։

Այդպիսով Կուկիշևը իրականացրեց նաև իր երկրորդ «իդեան» ու սկսեց միտք անել արդեն այն մասին, թե ինչ նոր «իդեա» հնարի, որպեսզի պարոնայք Լյուլկինների քթին դիպչի։ Եվ, հասկանալի է, հնարեց։

— Գիտե՞ք ինչ,— հանկարծ հայտարարեց նա։— Ամա-

որ երբ որ գա, պարոնայք Լյուլկիններին հետ կոմպանիայով գնանք իմ ջրաղացը, վերցնենք հետներս սակվոյաժը (այդպես էր անվանում գինու և ուտելիքների տուփերը) և, միմյանց մեջ կայացած փոխադարձ համաձայնությամբ, լողանանք գետում։

— Այդ արդեն երբե՛ք չի լինի,— զայրույթով առարկում էր Աննինկան։

— Ինչո՞ւ ոչ։ Առաջ կլողանանք, հետո քիչ կգցենք, հետո մի քիչ դադար կտանք ու նորից կլողանանք։ Շատ սքանչելի բան կլինի։

Հայտնի չէ, իրականացավ արդյոք Կուկիշևի այդ նոր «միդեան», բայց հայտնի է, որ մի ամբողջ տարի տևեց այդ գինարբուքը, և այդ ժամանակվա ընթացքում ոչ քաղաքային վարչությունը, ոչ էլ զեմստվոյականը նույնպես ամենաչնչին անհանգստություն անգամ չունեցան պարոնայք Կուկիշևի և Լյուլկինի նկատմամբ։ Լյուլկինը, սակայն, տեսքի համար, Մոսկվա մեկնեց և, վերադառնալով, ասաց, որ ծախեց անտառի երեսը, իսկ երբ նրան հիշեցրին, որ չորս տարի առաջ է արդեն նա անտառը ծախել, երբ գնչուհի Դոմաշկայի հետ էր ապրում, նա հակաճառում էր, թե այն ժամանակ Դրիգալովսկին է ծախել, իսկ հիմա Դաշկինա Ստիդորուշկայի պարապուտն է ծախել։ Ըստ որում, իր ասածին ավելի մեծ հավանականություն տալու համար, ավելացնում էր, որ ծախված պարապուտն այն պատճառով էր այդպես կոչվում, որովհետև ճորտատիրական իրավունքի ժամանակ այդ անտառում «բռնել էին Դաշկային և տեղնուտեղը պատժել՝ ոռզգիածեծ անելով։ Ինչ վերաբերում է Կուկիշևին, ապա նա, աչք փակելու համար, լուր տարածեց, թե արտասահմանից մատիտի արկղներում մի պարտիա հաշիաներ է բերել և այդ գործարքից մեծ շահ է ստացել։

Այնուամենայնիվ, հաջորդ տարվա սեպտեմբերին ոստիկանապետը Կուկիշևից փոխարինաբար հազար մանեթ փող խնդրեց, և Կուկիշևն անզգուշություն ունեցավ մերժել։ Այն ժամանակ ոստիկանապետն սկսեց ինչ-որ բանի մասին շշընջալ դատախազի օգնականին («երկուսն էլ ինձ մոտ ամեն գիշեր շամպայն էին լակում», ցուցմունք տվեց հետագայում

Կուկիշևը դատարանում։) Եվ ահա, սեպտեմբերի 17-ին, Կուկիշևյան «սիրո» տարեդարձի օրը, երբ նա ուրիշների հետ միասին կրկին տոնում էր Լյուբինկայի անվանակոչությունը, եկավ քաղաքային վարչության ձայնավորը և հայտարարեց Կուկիշևին, որ վարչության մեջ նիստ է գումարվել և արձանագրություն են կազմում։

— Նշանակում է «դյուբետը» գտա՞ն,— բավական սանձարձակ բացականչեց Կուկիշևը և առանց այլևս խոսք ասելու, գնաց վարչություն, այնտեղից էլ բանտ։

Մյուս օրը իրար անցավ նաև զեմստվոյական վարչությունը։ Հավաքվեցին անդամները, ուղարկեցին գանձատուն դրամական արկղի ետևից, հաշվեցին, վերահաշվեցին, բայց ինչպես էլ որ գցում էին համրիչի վրա, վերջիվերջո պարզվեց, որ այդտեղ էլ «դյուբետ» կա։ Լյուլկինը ներկա էր վերստուգմանը, գունատ, մռայլ, բայց վեհ տեսքով։ Երբ «դյուբետը» պարզվեց միանգամայն շոշափելի և անդամները, ամեն մեկը յուրովի, միտք էին անում, թե ամեն մեկն ինչ Դրիգալովյան անտառ է հարկադրված ծախելու՝ վատնած փողը ծածկելու համար, Լյուլկինը մոտեցավ լուսամուտին, գրպանից հանեց ատրճանակը և այդտեղ հենց կրակեց քունքին։

Շատ խոսք ու զրույցի տեղիք տվեց քաղաքում այդ դեպքը։ Դատում էին և համեմատություն էին անում։ Լյուլկինին մեղքանում էին, ասում էին՝ «համենայն դեպս ազնվորեն վերջացրեց»։ Կուկիշևի մասին ասում էին՝ «Արշիննիկ ծնվել է, արշիննիկ էլ կմեռնի»[61]։ Իսկ Աննինկայի և Լյուբինկայի մասին ուղղակի ասում էին, որ այդ՝ «նրանք» են, որ այդ «նրանց պատճառով է» և որ չէր խանգարի նրանց էլ բանտ նստեցնել, որպեսզի հետագայում այդ տեսակ ստահակներին խրատ լինի։

Քննիչը, սակայն, նրանց բանտ չնստեցրեց, բայց այնպես վախեցրեց, որ նրանք գլուխները կորցրին։ Եղան, իհարկե, այնպիսի մարդիկ, որոնք բարեկամաբար խորհուրդ տվեցին թաքցնել ինչ-որ արժեքավոր է, բայց նրանք լսում և ոչինչ չէին հասկանում։ Շնորհիվ այդ բանի, հայցատերերի փաստաբանը (երկու վարչություններն էլ նույն փաստաբանն

էին վարձել), անվեհեր մի մարդ, հայցերն ապահովելու նպատակով, դատական պրիստավի ուղեկցությամբ ներկայացավ քույրերին և բոլորը, ինչ-որ գտավ, վերցիր արեց ու կնքեց, նրանց տրամադրության տակ թողնելով միայն հագուստները և այն ոսկյա ու արծաթյա իրերը, որոնք, փորագրված մակագրություններից դատած, զմայլած հասարակության կողմից եղած նվիրաբերություններ էին։ Լյուբինկան, սակայն, հաջողացրեց կորսետի տակ թաքցնել մի բուռը թղթադրամ, որ նախօրյակին նվեր էր ստացել։ Այդ կապուկում դուրս եկավ հազար ռուբլի՝ այն բոլորը, որով պիտի քույրերն ապրեին անորոշ ժամանակ։

Դատավարության կազակցությամբ նրանց չորս ամիս պահեցին Սամովարնովում։ Հետո սկսվեց դատավարությունը, որի ժամանակ նրանք, և մանավանդ Աննինկան, շատ տառապանք կրեցին։ Կուկիշևը զզվանքի աստիճան ցինիկ էր. նույնիսկ կարիք չկար այն մանրամասնություններին, որոնք պատմում էր, բայց նա, ըստ երևույթին, ուզում էր ծնապաբծել սամովարնովյան կանանց առաջ և նկարագրում էր բացարձակապես ամեն ինչ։ Դատախազը և մանավոր մեղադրողը՝ երիտասարդ մարդիկ, նույնպես կամենալով սամովարնովյան կանանց բավականություն պատճառել, օգտվեցին դրանից, որպեսզի դատավարությանը աշխույժ բնույթ տան, որը, իհարկե, հաջողվեց նրանց։ Աննինկան մի քանի անգամ ուշաթափ եղավ, սակայն մեղադրողը՝ հայցը ապահովելու մտադրությամբ, ամենևին ուշադրություն չէր դարձնում դրան և հարց հարցի ետևից էր առաջարկում։ Վերջապես քննությունը ավարտվեց և խոսքը տրվեց շահագրգռված կողմերին։ Ուշ գիշերին արդեն ատենակալները մեղադրական վճիռ հանեցին Կուկիշևի համար, ըստ որում մեղմացուցիչ հանգամանքներով, որի հետևանքով նա դատապարտվեց աքսորի Արևմտյան Սիբիր, ոչ այնքան հեռու վայրեր։

Գործը վերջանալուց հետո քույրերը հնարավորություն ունեցան Սամովարնոյից մեկնել։ Եվ ժամանակն էր, որովհետև թաքցրած հազար ռուբլին վերջանում էր։ Իսկ բացի դրանից, նաև կրեչետովյան թատրոնի անտրպրենյորը, որի հետ նախապես համաձայնության եկան, սրսհանջում էր, որպեսզի նրանք անհապաղ ժամանեն Կրեչետով, հակառակ դեպքում սպառնալով խզել բանակցությունները։ Մասնավոր մեղադրողի պահանջով կնքած փողերի, իրերի և թղթերի մասին ձայն ու ծպտուն չկար։

Այսպիսիք էին «գանձի» հետ անփույթ վերաբերվելու հետևանքները։ Տանջված, տառապած, ընդհանուր արհամարհանքից ճնշված, քույրերն ամեն հավատ կորցրին իրենց ուժերի նկատմամբ, ամեն մի հույս՝ ապագա լույսի շուրջ։ Նրանք նիհարեցին, ընկճվեցին, փախչելիս։ Եվ ի լրումն այդ ամենի, Աննինկան, Կուկիշևի դպրոցն անցնելով, սովորեց խմել։

Հետո ավելի վատ գնաց։ Կրեչետովում, հակիվ էին քույրերը վագոնից իջել, որ նրանց ձեռքից-ձեռք խլեցին։ Լյուբինկային ընդունեց ռոտմիստր Պոպկովը, Աննինկան՝ վաճառական Զաբվեննին։ Բայց նախկին փարթամությունն այլևս չկար։ Ե՛վ Պոպկովը, և՛ Զաբվեննին կոպիտ մարդիկ էին, կովարար, բայց չափավոր էին ծախսում (Զաբվեննին արտահայտվում էր՝ «ապրանքին նայած»), իսկ երեք-չորս ամսից նաև նշանակալից չափով սառեցին։ Դրան ավելացրած և այն, որ սիրային չափավոր հաջողությունների հետ նաև բեմական չափավոր հաջողություն ունեին։ Անտրպրենյորը, որը հրավիրել էր նրանց, հույս կապելով Սամովարնովում նրանց ունեցած սկանդալի վրա, անապատելի կերպով միանգամայն սխալ դուրս եկավ իր հաշիվներում։ Առաջին իսկ ներկայացման ժամանակ, երբ Պոգորելսկայա քույրերը բեմ էին դուրս եկել, վերնասրահից մեկը բացականչեց. «Էֆ դուք, դատապարտյալներ»,— և այդ անունը այդպես էլ կպավ քույրերին, անմիջապես որոշվեց նրանց բեմական բախտը։

Հույլ, խուլ, ամեն տեսակ մտավոր հետաքրքրությունից զուրկ կյանք սկսվեց։ Հասարակությունը սառն էր, անտրպրենյորը բարկանում էր, հովանավորները չէին պաշտպանում։ Զաբվեննին, որը Կուկիշևի նման երազում էր, թե ինչպես պիտի հարկադրի իր «սիրունիկին» իր հետ փոքր գավաթ գցի, ինչպես պետք է «սիրունիկին» սկզբում կոտրատվի, իսկ հետո կամաց-կամաց զիջի, շատ վիրավորված զգաց իրեն, երբ տեսավ, որ դպրոցն արդեն անցած է լիովին և որ նրան մի զվարճություն է մնացել միայն՝ հափաքել բարե-

կամներին և նայել, թե ինչպես է Անյուտկան «օղի լակում»։ Իր կողմից Պոպկովը նույնպես դժգոհ էր և գտնում էր, որ Լյուբինկան նիհարել է, կամ, ինչպես ինքն էր արտահայտվում, «սատկել է»։

— Առաջ դու փարթամ մարմին ունեիր,— հարցաքննում էր նա նրան,— ասա, ի՞նչ ես արել։

Եվ դրա հետևանքով ոչ միայն չէր քաշվում նրանից, այլև շատ անգամ, հարբած վիճակում, ծեծում էր։

Ձմռան վերջին քույրերը ոչ «իսկական» հովանավորներ ունեին, ոչ «մշտական դիրք»։ Նրանք դեռևս մի կերպ դիմանում էին թատրոնում, բայց «Պերիկոլաների» և «Հին ժամանակների գնդապետների» մասին այլևս խոսք չկար։ Լյուբինկան, թեպետ, մասամբ արի էր երևում, իսկ Աննինկան, որպես ավելի ջղային, բոլորովին վհատվեց և, թվում էր, մոռացավ անցյալն ու չէր գիտակցում ներկան։ Բացի դրանից, նա սկսեց կասկածելի հազալ, ըստ երևույթին ինչ-որ խորհրդավոր հիվանդություն էր սպասում նրան...

Հաջորդ ամառը սոսկալի էր։ Կամաց-կամաց քույրերին սկսեցին տանել հյուրանոցները, եկվոր պարոնների մոտ, և նրանց համար չափավոր սակագին սահմանվեց։ Սկանդալներն հաջորդում էին սկանդալներին, ծեծ ու կռիվը՝ ծեծ ու կռվին, սակայն քույրերը կատվի նման կենսունակ էին և շարունակ ապրել էին ուզում։ Նրանք նման էին այն խղճուկ շնիկներին, որոնք, չնայած եռման ջրով խաշված լինելուն, վիրավորված լինելուն, ջարդոտած ոտներով, այնուամենայնիվ սողում են իրենց սովոր տեղերը, վնգստում են ու սողում։ Նման անձնավորություններին թատրոնում պահելն անհարմար դարձավ։

Այդ մայլ տարին մեկ անգամ միայն Աննինկայի կյանքում լույսի շող խուժեց։ Այն է՝ ողբերգակ Միլոսլավսկի 10-րդը Սամովարնովից նամակ գրեց, որով թախանձական առաջարկում էր իր ձեռքն ու սիրտը։ Աննինկան նամակը կարդաց և արտասվեց։ Ամբողջ գիշեր նա դես ու դեն էր ընկնում, ինչպես ասում են, կորցրել էր իրեն, բայց առավոտյան կարճառոտ պատասխան գրեց. «Ինչո՞ւ։ Նրա համար, որպեսզի միասին օղի՞ խմենք»։ Հետո խավարն առաջվանից ավելի

թանձրացավ ու կրկին սկսվեց անվերջ ստոր ինքնամոռացման վիճակը։

Լյուբինկան առաջինը արթնացավ, կամ, ավելի լավ է ասել, ոչ թե արթնացավ, այլ բնազդորեն զգաց, թե բավական է ապրել։ Աշխատանք այլևս չէր նախատեսնվում, և՛ գեղեցկությունը, և՛ երիտասարդությունը, և՛ ընդունակության սաղմերը — բոլորը մի տեսակ հանկարծ կորան։ Այն մասին, որ նրանք Պոգորելկիում ապաստան ունեն, նա երբեք չհիշեց նույնիսկ։ Դա ինչ-որ հեռավոր, աղոտ, բոլորովին մոռացված բան էր։ Եթե նրանց առաջ չէր գրավում Պոգորելկի գնալն, ապա այժմ առավել ևս։ Այո, ճիշտ հենց այժմ, երբ համարյա մեռնում էին քաղցից, այժմ ամենից քիչ էր գրավում Պոգորելկին։ Ի՞նչ երեսով պիտի նա հայտնվի այնտեղ,— երես, որի վրա ամեն տեսակ հարբած շնչերը խարանել էին՝ անա՛րգ նշանը։ Ամեն տեղ պառկած էին նրանք, այդ անիծյալ շընչերը, ամեն տեղ նրանք զգացվում էին, մարմնի ամեն մի մասում։ Եվ ինչն ամենից սարսափելին էր, թե՛ նա և թե Աննինկան այն աստիճան վարժվել էին այդ շնչերին, որ դրանք աննկատելի կերպով դարձել էին նրանց գոյության մասնիկը։ Նրանց համար զզվելի չէին ո՛չ գինետների գարշահոտությունը, ո՛չ իջևանների աղմուկը, ո՛չ հարբած խոսքերի ցինիզմը, այնպես որ, եթե Պոգորելկի գնային, ապա, հավանորեն, այդ բոլորը նրանք չէին ունենա այնտեղ։ Սակայն, դրանից բացի, չէ որ Պոգորելկիում ևս հարկավոր է մի կերպ գոյություն պահել։ Քանի՞ տարի է արդեն նրանք տառապում են արար աշխարհում, սակայն Պոգորելկիի եկամուտների մասին ինչ-որ չի լսվում։ Առասպել չէ՞ արդյոք նա։ Չե՞ն մեռել արդյոք այնտեղ բոլորը։ Բոլոր այդ վկաները հեռավոր ու հավիտենապես հիշատակելի մանկության, երբ Արինա Պետրովնա տատիկը նրանց՝ որբուկներին, մածնով ու աղ դրած հոտած մսով էր կերակրում... Ա՜խ, ի՞նչ մանկություն էր դա... ի՞նչ կյանք էր դա... ամեն ինչ ընդհանրապես։ Ամբողջ կյանքը... ամբողջ, ամբողջ, ամբո՛ղջ կյանքը։

Պարզ է, որ պետք է մեռնել։ Երբ այդ միտքը մեկ անգամ լուսավորում է խիղճը, ապա այլևս անբաժան է դառնում, ձեռք չի քաշում։ Քույրերը երբեմն արթնանում էին

խանձուքից, բայց Աննինկայի համար այդ արթնացումներն ուղեկցվում էին հիստերիկաներով, հեկեկանքներով, արցունքներով և շուտ էին անցնում։ Լյուբինկան սառն էր բնությունից, ուստի և չէր արտասվում, չէր անիծում, այլ միայն համառորեն հիշում էր, որ ինքն «անարգ» է։ Բացի դրանից, Լյուբինկան խոհական էր և միանգամայն պարզ դատում էր, որ ապրելու նույնիսկ հաշիվ չկա։ Առջևում ամենևին ոչինչ չի երևում, բացի անարգանքից, աղքատությունից ու փողոցից։ Անարգանքը սովորության բան է, անարգանքը կարելի է կրել, բայց աղքատությունը՝ երբե՛ք։ Ավելի լավ է վերջ տալ ամեն ինչի, միանգամից։

— Պետք է մեռնել,— ասաց նա մեկ անգամ Աննինկային նույն այն սառը-դատողական եղանակով, որով երկու տարի առաջ հարցնում էր նրան՝ ում համար է նա պահպանում իր «գանձը»։

— Ինչո՞ւ,— վախեցած առարկեց Աննինկան։

— Ես քեզ լուրջ եմ ասում, պետք է մեռնել,— կրկնեց Լյուբինկան։— Հասկացի՛ր, արթնացի՛ր, ուժ գործ դիր։

— Դե ինչ... մեռնենք,— համաձայնեց Աննինկան, հազիվ թե, սակայն, գիտակցելով այն դաժան նշանակությունը, որ պարունակում էր այդ որոշումը։

Նույն օրն ևեթ Լյուբինկան ֆոսֆորային լուցկու գլուխները փշրելով, երկու բաժակ լուծույթ պատրաստեց։ Բաժակներից մեկը ինքը խմեց, մյուսը քրոջը տվեց։ Բայց Աննինկան վայրկենապես սրդողեց և չուզեց խմել։

— Խմի՛ր... անարգ,— բղավում էր նրա վրա Լյուբինկան։— Քույրի՛կ, սիրելի՛ս, աղավնյա՛կս, խմի՛ր։

Աննինկան վախից համարյա ցնորված, աղաղակում էր ու վազվզում սենյակում։ Եվ միևնույն ժամանակ բնազդաբար ձեռներով կոկորդն էր բռնում, կարծես փորձում էր խեղդվել։

— Խմի՛ր, խմի՛ր... անա՛րգ։

Օրիորդ Պոգորելսկիների արտիստական գործունեությունը վերջացավ։ Նույն օրը երեկոյան Լյուբինկայի դիակը տարան դաշտը ու թաղեցին։ Աննինկան կենդանի մնաց։

***

Գոլովլյովո ժամանելուց անմիջապես հետո Աննինկան Իուդուշկայի հին բնի մեջ շատ շուտով ամենաանզուսպ թափառականության մթնոլորտ մտցրեց։ Վեր էր կենում ուշ, հետո, առանց հագնվելու, առանց սանրվելու, ծանրացած գլխով մինչև ճաշ թափառում էր անկյունից-անկյուն և այն աստիճան տառապալից հազում էր, որ Պորֆիրի Վլադիմիրիչն իր առանձնասենյակում նստած, ամեն անգամ վախենում էր ու ցնցվում։ Աննինկայի սենյակը մշտապես մնում էր առանց հավաքելու. անկողինը մնում էր անկարգ, սպիտակեղենի և արդուզարդի պատկանելիքները ցիրուցան թափված էին աթոռներին ու հատակին։ Սկզբնական շրջանում նա քեռու հետ տեսնվում էր միայն ճաշի և երեկոյան թեյի ժամանակ։ Գոլովլյովյան տիրապետն առանձնասենյակից դուրս էր գալիս ամբողջովին սև հագած, քիչ էր խոսում և միայն առաջվա նման հալումաշ անելու աստիճան երկարատև ուտում էր։ Ըստ երևույթին, նա զննում էր, և Աննինկան իր կողմն ուղղած նրա հայացքից հասկանում էր, որ նա հենց իրեն է զննում։

Ճաշից անմիջապես հետո իջնում էր դեկտեմբերյան վաղ մթնշողը և սկսվում էր հանդիսավոր սենյակների երկար շարքով քայլելու թախծալից գործողությունը։ Աննինկան սիրում էր հետևել, ինչպես աստիճանաբար հանգչում են ձմեռային գորշ օրվա շողերը, ինչպես մթնում է շրջապատը և սենյակները ստվերներով են լցվում, և ինչպես հետո հանկարծ ամբողջ տունը թաղվում է անթափանց մառախուղի մեջ։ Նա իրեն թեթևացած էր զգում այդ խավարի մեջ և ուսի երբեք մոմեր չէր վառում։ Միայն երկար դահլիճի վերջում ճթճթում ու հալվում էր էժանագին մոմը, իր բոցով փոքրիկ լուսավոր շրջան ստեղծելով։ Որոշ ժամանակ տանը սովորական հետաքրքիր շարժում էր տեղի ունենում՝ լսվում էր լվացվող ամանեղենի շխկոց, քաշվող և ծածկվող արկղների թխկոց, բայց շուտով հեռացող քայլերի դոփյուն էր հնչում և ապա մեռելային լռություն էր տիրում։ Պորֆիրի Վլադիմիրիչը պառկում էր հետաքրքիր հանգստի, Եվպրակսեյուշկան

իր սենյակում թաղվում էր վերմակ-ներքնակի մեջ, Պրոխորը սպասավորների սենյակն էր գնում, և Աննինկան բոլորովին մենակ էր մնում։ Նա քայլում էր ետ ու առաջ, կիսաձայն երգում էր և աշխատում էր հոգնեցնել իրեն և, գլխավորը, ոչ մի բանի մասին չմտածել։ Գնալով դահլիճի կողմը, հայացքը սևեռում էր մոմի բոցից առաջացած լույսի շրջանին, ետ դառնալիս աշխատում էր թանձրացող մառախուղի մեջ որևէ կետ զանազանել։ Սակայն հիշողությունները, ի հեճուկս գործադրած ջանքերի, շարունակ ընդառաջ էին լողում նրան։ Ահա առանձնարանը. տախտակյա միջնորմին ածանագին պաստառներ կպցրած, անխուսափելի տրյումոյով և ոչ պակաս անխուսափելի ծաղկեփնջով՝ Պապկով 2-րդ պոդպորուչիկից, ահա բեմը ծխոտած, կեղտոտված և խոնավությունից լպրծուն դեկորներով, ահա և ինքը պտտվում է բեմում, ի՛սկ որ պտտվում է միայն, երևակայելով, թե խաղում է. ահա թատերական դահլիճը, որ բեմից այնպես շքեղ, համարյա փայլուն է թվում, իսկ իրականում խղճուկ, մութը, զանազանատեսակ աթոռներով և մորեգույն մաշված պլիսով պատած լոժաներով։ Եվ, ի վերջո, ավագ-սպաներ, ավագ-սպաներ, ավագ-սպաներ անվերջ։ Հետո հյուրանոց՝ գարշահոտ միջանցքով, թույլ լուսավորված ծխացող նավթի լամպով, համարը, ուր նա, ներկայացումը վերջանալուց հետո, շտապով վազում է, որպեսզի հագուստը փոխի հետագա հանդեսների համար. համար՝ առավոտվանից չհավաքված անկողնով, կեղտաջրով լիքը լվացարանով, հատակին ընկած սավանով և բազկաթոռի մեջքին մոռացած վարտիքով, հետո ընդհանուր դահլիճը՝ խոհանոցի ծխով լցված, մեջտեղը բացված սեղանով. ընթրիք, կոտլետներ, ծխախոտի ծուխ, աղմուկ, հոհոց, հարբեցողություն, սանձարձակ գինարբուք... Եվ նորից ավագ-սպաներ, ավագ-սպաներ, ավագ-սպաներ անվերջ...

Այդպիսիք էին այն հիշողությունները, որոնք վերաբերում էին այն պահին, որը նա մի ժամանակ համարում էր իր հաջողությունների, իր հաղթանակների, իր բարեկեցության պահը...

Այդ հիշողություններին հաջորդում էին մի շարք այլ հիշողություններ։ Նրանց մեջ նշանակալից դերը խաղում էր իշևանը, արդեն բոլորովին հոտած, ձմեռը սառչող պատերով, ճոճվող հատակներով, որոնց ճեղքերից բաղլինջների ողորկ փորերն էին երևում։ Հարբած ու կոիվներով լի գիշերներ, ճանապարհորդ կալվածատերեր, որ շտապով լղարիկ դրամապանակներից կանաչ թղթադրամ էին հանում. ժիր վաճառականներ, որոնք «դերասանուհիներին» խրախուսում էին համարյա մտրակների հարվածներով։ Իսկ առավոտյան գլխացավ, սրտխառնուկ և վիշտ, վիշտ անսահման։ Ի վերջո — Գոլովլյովո...

Գոլովլյովոն — դա ինքը մահն է, չարասիրտ, ագահ. դա մահ է, որ հավիտենապես նոր զոհ է հետապնդում։ Երկու քեռիներն այստեղ են մեռել, երկու քեռորդիներն այստեղ ստացան «առավել ծանր» վերքեր, որոնց հետևանքը մահը եղավ. վերջապես և Լյուբինկան... Թեպետև թվում է, որ նա մեռել էր ուր-որ Կրեչետովում «իր գործերով», սակայն «առավել ծանր» վերքերի սկիզբը, անտարակույս, այստեղ, Գոլովլյովոյում է դրված։ Բոլոր մահերը, բոլոր թույները, բոլոր վերքերը — բոլորն այստեղից է գալիս։ Այստեղ տեղի ունեցավ հոտած, աղ դրած մսով կերակրելը. այստեղ առաջին անգամ որբերի ականջներում հնչեցին՝ զզվելիներ, մուրացկաններ, ձրիակերներ, անկուշտներ և այլն. այստեղ ոչինչ չէր անցնում նրանց համար աններում, ոչինչ չէր խուսափում անողոք, կամակոր պառավի խորաթափանց հայացքից՝ ոչ ավելորդ պատառը, ոչ կոտրած գրոշանոց տիկնիկը, ոչ պատրոված ցնցոտին, ոչ մաշված ոտնամանը։ Յուրաքանչյուր խախտում անհապաղ վերականգնվում էր կամ հանդիմանությամբ, կամ ծեծով։ Եվ ահա, երբ նրանք հնարավորություն ստացան իրենք տնօրինելու իրենց կյանքը և հասկացան, որ կարող են փախչել այդ նողկանքից, նրանք փախան... այնտեղ։ Եվ ոչ ոք չարգելեց նրանց փախուստը, բայց չէր էլ կարելի արգելել, որովհետև Գոլովլյովոյից էլ վատ, զզվելի ոչինչ չէր պատկերացվում։

Ա՜խ, եթե միայն կարելի լինի այդ բոլորը մոռանա՜լ։ Եթե կարելի լիներ գեթ երազանքում ստեղծել որևէ այլ բան, որևէ կախարդական աշխարհ, որը ծածկեր և՛ անցյալը, և՛

ներկան։ Բայց, ավա՜ղ, իր ապրած իրականությունն այնպիսի երկաթյա կենսունակությամբ էր օժտված, որ նրա ճնշման տակ իրենք իրենց հանգան երևակայության բոլոր շողերը։ Զուր է երազանքը ձգտում արծաթյա թևերով հրեշտակներ ստեղծել,— այդ հրեշտակների թիկունքից անողոքաբար նայում են Կուկիշևները, Լյուլկինները, Զաբվեննիները, Պապկովները... Տե՜ր աստված, մի՞թե արդեն ամե՛ն ինչ կորած է։ Մի՞թե ստելու, իրեն խաբելու ընդունակությունն անգամ խորասուզվել է գիշերային խրախճանքների, գինու և ապականության մեջ։ Հարկավոր է, սակայն, որևէ կերպ սպանել այդ անցյալը, որպեսզի չթունավորի նա արյունը, կտորկտոր չանի սիրտը։ Հարկավոր է, որպեսզի նրա վրա ինչ-որ մի ծանր բան պառկի, որը ճզմի նրան, ոչնչացնի բոլորովին, իսպա՛ռ։

Եվ ինչպե՜ս այդ բոլորը տարօրինակ ու անդութ դասավորվեց։ Չի կարելի պատկերացնել անգամ, թե հնարավոր է որևէ ապագա, որ գոյություն ունի մի դուռ, որով կարելի է որևէ տեղ դուրս գալ, որ կարող է գեթ որևէ բան պատահել։ Ոչինչ պատահել չի կարող։ Եվ ինչն ամենից անտանելի է, այդ այն է, որ ինքն, ըստ էության, արդեն մեռել է, մինչդեռ կյանքի արտաքին նշանները հրապարակի վրա են։ Պետք էր այն ժամանակ վերջացնել, Լյուբինկայի հետ միասին, իսկ նա չգիտես ինչու՝ մնաց։ Ինչպե՜ս չճզմեց նրան այն անթիվ խայտառակությունը, որն այն ժամանակ ամեն կողմից շարժվեց նրա վրա։ Եվ ինչպիսի՞ շնչին որդ պիտի լինել, այդպես միանգամից թափվող քարերի տակից դուրս սողալու համար։

Այդ հարցերը հարկադրում էին նրան տնքալ։ Նա վազվզում ու պտտվում էր դահլիճում, աշխատելով հանդարտեցնել հուզված հիշողությունները։ Իսկ ընդառաջ լողում էին ու լողում՝ և՛ դքսուհի Հերոլշտեյնսկայան, հուսարական թիկնոցը ցնցող, և՛ Կլերետա Անգոն, հարսանեկան հագուստով, կուրծքը մինչև գոտին հասնող բացվածքով, և՛ Զքնաղ Հեղինեն՝ առաջից, ետևից և կողքից եղած բացվածքներով... Ոչինչ, բացի անամոթությունից և մերկությունից... ահա ինչով անցավ ամբողջ կյանքը։ Մի՞թե այդ բոլորը եղել է։

Ժամը յոթի մոտ տունը սկսում էր կրկին արթնանալ։ Լսվում էին առաջիկա թեյի պատրաստություններ, իսկ վերջապես հնչում էր նաև Պորֆիրի Վլադիմիրիչի ձայնը։ Քեռին ու ազգականուհին նստում էին թեյի սեղանի մոտ, դիտողություններ էին փոխանակում անցած օրվա մասին, բայց որովհետև այդ օրվա բովանդակությունն աղքատիկ էր, ուստի զրույցն էլ աղքատիկ էր ստացվում։ Թեյը խմել-վերջացնելուց հետո և կատարելով ազգակցական բարի գիշերվա համբույրի ծեսը, Իուդուշկան վերջնականապես սողում էր իր բունը, իսկ Աննինկան գնում էր Եվպրակսեյուշկայի սենյակը և նրա հետ թուղթ էր խաղում։

Ժամը տասնմեկից սկսվում էր գինարբուքը։ Նախապես հավաստիանալով, որ Պորֆիրի Վլադիմիրիչը հանդարտվել է, Եվպրակսեյուշկան սեղանին էր դնում գյուղական աղաթթուներ և օղիով գրաֆինը։ Վերհիշվում էին անիմաստ ու անամոթ երգեր, հնչում էր կիթառը և երգերի ու զզվելի խոսակցության ընթացքում մեջեմեջ Աննինկան խմում էր։ Սկզբում խմում էր «ըստ Կուկիշևի», սառնասիրտ, «տեր ողորմյա», իսկ հետո աստիճանաբար անցնում էր մռայլ տոնի, սկսում էր տնքալ, անիծել...

Եվպրակսեյուշկան նայում էր նրան ու «խղճում էր»։

— Նայում եմ ձեզ վրա, օրիորդ,— ասում էր նա,— և այնպե՜ս եմ խղճում ձեզ, այնպե՜ս եմ խղճում։

— Իսկ դուք խմեք ինձ հետ և չեք խղճա,— առարկում էր Աննինկան։

— Չէ, ինձ ինչպե՜ս կարելի է։ Ինձ ձեր քեռու պատճառով արդեն քիչ էր մնում հոգևոր կոչումից հեռացնեին, իսկ եթե դա էլ լինի...

— Դե ուրեմն և խոսելու կարիք չկա։ Ավելի լավ է ես ձեզ համար «բեղավորը» երգեմ։

Կրկին ճնճնկում էր կիթառը, կրկին հնչում էր՝ ի-ա՜խ, ի-ո՜խ։ Ուշ գիշերին քարի պես քունն էր ծանրանում Աննինկայի վրա։ Այդ ցանկալի քարը մի քանի ժամ սպանում էր նրա անցյալը և նույնիսկ խաղաղացնում տկարությունը, իսկ մյուս օրը ջարդված, կիսացնոր՝ կրկին դուրս էր սողում այդ քարի տակից ու կրկին սկսում էր ապրել։

Եվ ահա այդպիսի նողկալի գիշերներից մեկում, երբ Անենինկան ժիր երգում էր Եվպրակսեյուշկայի առաջ իր գարշելի երգերի ռեպերտուարը, սենյակի դռան մեջ հանկարծ երևաց Իուդուշկայի հյուծված, մեռելանման գունատ կերպարանքը։ Նրա շրթունքները դողում էին, աչքերը խորն էին ընկել և մոմի խավար լույսի տակ թվում էին որպես կույր փոսեր. ձեռները ծալած էին կրծքին... Մի քանի վայրկյան կանգնելով անզգայացած կանանց առաջ, նա դանդաղ շուռ եկավ, դուրս գնաց։

* * *

Լինում են ընտանիքներ, որոնց վրա կարծես պարտադիր ճակատագիր է ծանրացած, առանձնապես դա նկատելի է այն աննշան մանր ազնվականների միջավայրում, որն առանց գործի, առանց ընդհանուր կյանքի հետ կապ ունենալու և առանց կառավարողի նշանակություն ունենալու, սկզբում պատսպարվում էր ռուսական երկրի երեսին ցրված ճորտատիրական իրավունքի պաշտպանության տակ, իսկ այժմ, արդեն առանց որևէ պաշտպանության, ապրում է իր դարը՝ քայքայվող կալվածատներում։ Այդ խղճուկ ընտանիքների կյանքում և՛ հաջողությունը, և՛ անհաջողությունը — ամեն ինչ կարծես կույր է, անսպասելի, անմտածված։

Երբեմն այդպիսի ընտանիքի վրա հանկարծ կարծես երջանկության շող է ճառագայթում։ Գյուղական խուլ անկյունում ծյուրվող, վտիտացած, աղքատացած կոռնետի և կոռնետուհու ընտանիքում հանկարծ երևան է գալիս երիտասարդների ամբողջ մի թուխս, ամրապինդ, մաքուր, ժիր և կյանքի էությունը չափազանց արագ յուրացնող,— մի խոսքով՝ «խելոքներ»։ Բոլորն անխտիր խելոք են՝ և՛ տղաները, և՛ աղջիկները։ Տղաները գերազանց ավարտում են դասընթացը «զավեդենիաներում» և դպրոցական նստարանից արդեն իրենց համար կապեր են ստեղծում և հովանավորներ գտնում։ Ճիշտ ժամանակին կարողանում են համեստ ցույց տալ իրենց (j'aime cette modestie[62],— ասում են նրանց մասին պետերը) և ճիշտ ժամանակին իսկ ինքնուրույն ցույց տալ (j'aime cette

indépendance[63]), նրբին կերպով գուշակում են ամեն տեսակի հոսանքները և նրանցից ոչ մեկի հետ չեն խզում կապերն, առանց հուսալի անցք թողնելու։ Դրա շնորհիվ նրանք ողջ կյանքում ապահովում են իրենց համար առանց սկանդալի և ամեն ժամանակ նետելու հին մորթը և նորը հագնելու, իսկ մի բան եղած դեպքում՝ կրկին հինը հագնելու։ Մի խոսքով, դրանք դարի իսկական ստեղծարարներն են, որոնք միշտ սկսում են որոնումով և համարյա միշտ վերջացնում են դավաճանությամբ։ Ինչ վերաբերում է աղջիկներին, ապա նրանք ևս, իրենց մասնագիտության հնարավորության չափով, օժանդակում են ընտանիքի վերածնմանը, այսինքն հաջող ամուսնանում են և ապա այնպիսի տակտ են հանդես բերում իրենց կանացի արդուզարդերում, որ առանց դժվարության աչքի ընկնող տեղեր են գրավում այսպես կոչված հասարակության մեջ։

Շնորհիվ այդ պատահաբար գոյացած պայմանների, հաջողությունն ուղղակի լողում է աղքատացած ընտանիքին ընդառաջ։ Առաջին հաջողակները, արիաբար տոկալով պայքարին, իրենց հերթին, նոր մաքուր սերունդ են դաստիարակում, որն արդեն հեշտ է ապրում, որովհետև գլխավոր ճանապարհները ոչ միայն նշված են, այլև բանուկ են դարձել։ Այդ սերունդներից հետո կգան նոր սերունդներ, մինչև որ, վերջապես, ընտանիքը բնական ճանապարհով կմտնի նրանց ցուցակը, որոնք արդեն առանց որևէ նախնական պայքարի ուղղակի համարում են, որ իրենք բնածին իրավունք ունեն ցկյանս հրճվանքի։

Վերջին ժամանակ, այսպես կոչված «թարմ մարդկանց» պահանջի առաջացման կապակցությամբ, պահանջ, որը պայմանավորված է «ոչ թարմ մարդկանց» աստիճանական այլասերումով, նման հաջողակ ընտանիքների օրինակներն սկսել են բավական հաճախ հանդես գալ։ Առաջ էլ պատահում էր, որ ժամանակ առ ժամանակ հորիզոնի վրա «պոշավոր» աստղ էր երևում, բայց դա հազվադեպ էր պատահում, նախ, որովհետև այդ անհոգ մարդը շրջապատող պարիսպը, որի դարբասների վրա գրած է՝ «Այստեղ մշտապես միջուկով կարկանդակ են ուտում», համարյա ճեղքեր չէր տալիս, ու երկ-

րորդ, և այն պատճառով, որովհետև «պոչի» ուղեկցությամբ այդ մարզը թափանցելու համար հարկավոր էր իրապես որևէ պատկառելի բան ունենալ։ Դե, իսկ այժմ և՛ ճեղքերն են բավականաչափ ավելացել, այլև թափանցելու գործն ինքը հասարակացել է, որովհետև եկվորից պատկառելի հատկություններ չի պահանջվում, այլ պահանջվում է միայն «թարմություն» և ուրիշ ոչինչ։

Սակայն հաջողակ ընտանիքների հետ միաժամանակ կան նաև շատ այնպիսիները, որոնց ներկայացուցիչներին տնական ոգիներն օրորոցից սկսած ոչինչ չեն պարգևում ըստ երևույթին, բացի անելանելի դժբախտությունից։ Հանկարծ կարծես ոչիլի պես ընտանիքի վրա թափվում է ոչ այն է ձախորդություն, ոչ այն է ախտ և սկսում է ուտել ամեն կողմից։ Սողում է ամբողջ օրգանիզմով մեկ, սպրդում է ուղղակի միջուկը և կրծում է սերունդից-սերունդ։ Հանդես են գալիս ուժգուրկ մարդուկների, հարբեցողների, մանրիկ անառակների, անիմաստ դատարկապորտների և ընդհանրապես անհաջողակների հավաքածուներ։ Եվ քանի գնում, այնքան մանրանում են մարդուկները, մինչև վերջապես բեմ են գալիս կենսապակաս ազազուններ, նման մեկ անգամ արդեն իմ նկարագրած Գոլովլյովիկներին*, ազազուններ, որոնք կյանքի առաջին իսկ ճնշմանը չեն դիմանում և կործանվում են։

Ճիշտ այդպիսի չարաբաստիկ ճակատագիր էր ծանրացել գոլովլյովյան ընտանիքի վրա։ Մի քանի սերունդ շարունակաբար երեք բնորոշ գիծ էր անցնում այդ ընտանիքի պատմության ընթացքում՝ պարապություն, անընդունակություն որևէ գործի և հարբեցողություն։ Առաջին երկուսը բերում էին իրենց ետևից դատարկախոսություն, դատարկամտություն և որկրամոլություն, վերջինը հանդիսանում էր ասես ընդհանուր կենսական խառնափնթորության պարտադիր եզրափակումը։ Պորֆիրի Վլադիմիրիչի աչքերի առաջ այրվեցին այդ ճակատագրի մի քանի զոհեր, իսկ, բացի դրանից, ավանդությունը նաև պապերի ու նախապապերի մասին էր ասում։ Դրանք բոլորը ամբարիշտ, դատարկամիտ և ոչ մի բանի պիտանի չեղած

* Տես՝ «Ընտանեկան հաշվեհարդարներ» (Ծանոթ. Սալտ.-Շչեդր.)։

հարբեցողներ էին, այնպես որ գոլովլյովյան ընտանիքը, հավանորեն, վերջնականապես տկարանալու էր, եթե այդ գինովի խառնափնթորության մեջ որպես պատահական ասուպ չփայլեր Արինա Պետրովնան։ Այդ կինը շնորհիվ իր անձնական եռանդի, ընտանիքի բարեկեցության վիճակը հասցրեց բարձրագույն կետին, բայց այդուհանդերձ նրա ամբողջ աշխատանքն ապարդյուն անցավ, որովհետև նա ոչ միայն իր հատկությունները չհաղորդեց երեխաներից ոչ մեկին, այլ, ընդհակառակը, ինքը մեռավ ամեն կողմից խճճված պարապությամբ, դատարկախոսությամբ և որկրամոլությամբ։

Մինչ այժմ, սակայն, Պորֆիրի Վլադիմիրիչը դիմանում էր։ Գուցե նա գիտակցաբար էր զգուշանում հարբեցողությունից, նախկին օրինակների հետևանքով, բայց գուցեև առայժմ նրան բավարարում էր դատարկամտության արբեցումը։ Սակայն իզուր չէր շրջապատի համբավը Իուդուշկային դատապարտել իսկական «հարբած» արբեցման։ Նա ինքն էլ երբեմն ասես զգում էր, որ իր գոյության մեջ ինչ-որ բան կա, որ դատարկամտությունը շատ բան է տալիս, բայց ոչ բոլորը։ Այն է՝ պակասում է ինչ-որ շշմեցնող, սուր բան, որը վերջնականապես ոչնչացներ կյանքի մասին եղած պատկերացումը և մեկընդմիշտ շպրտեր նրան դատարկության մեջ։

Եվ ահա ակնկալած ակնթարթն հայտնվեց ինքն իրեն։ Երկար ժամանակ, Աննինկայի զալու առաջին իսկ օրերից, Պորֆիրի Վլադիմիրիչը փակված էր առանձնասենյակում, ականջ էր դնում տան մյուս ծայրից իրեն հասնող անորոշ աղմուկին. երկար ժամանակ նա զուշակում էր ու տարակուսում... Եվ վերջապես հոտն առավ։

Մյուս օրը Աննինկան սպասում էր խրատների, սակայն այդպիսիք տեղի չունեցան։ Ըստ սովորության, Պորֆիրի Վլադիմիրիչն ամբողջ առավոտ փակված նստեց իր առանձնասենյակում, բայց երբ դուրս եկավ ճաշի, ապա օղու մեկ գավաթի փոխարեն (իր համար) երկուսը լցրեց և լուռ, ապուշային ժպիտով նրանցից մեկը ձեռքով Աննինկային ցույց տվեց։ Դա, այսպես ասած, լռելյայն հրավեր էր, որին և հետևեց Աննինկան։

— Այդպես ուրեմն, դու ասում ես, որ Լյուբինկան մեռա՞վ,— հանկարծ սթափվեց Իուդուշկան ճաշի կեսին։

— Մեռավ, քեռի։

— Դե, արքայություն իրեն։ Տրտնջալը հանցանք, է, իսկ հիշատակել պետք է։ Հիշատակե՞նք, ինչ։

— Հիշատակենք, քեռի։

Խմեցին ևս մեկական, և ապա Իուդուշկան լռեց. ըստ երևույթին նա դեռևս ամբողջովին ուշքի չէր եկել իր երկարատև վայրենացումից։ Միայն ճաշից հետո, երբ Աննինկան ազգակցական ծեսը կատարելով մոտեցավ շնորհակալություն հայտնելու քեռուն նրա այտը համբուրելով, նա, իր հերթին, շոյեց նրա այտը և ասաց.

— Ահա՞ թե ինչպիսին ես դու։

Նույն օրը երեկոյան, թեյի ժամանակ, որն այս անգամ սովորականից երկար տևեց, Պորֆիրի Վլադիմիրիչը որոշ ժամանակ նույն խորհրդավոր ժպիտով նայեց Աննինկային, բայց վերջապես առաջարկեց.

— Ասեմ ուտելի՞ք բերեն։

— Թող բերեն։

— Ավելի լավ է արդեն քեռու ներկայությամբ, քան անկյուններում... Համենայն դեպս քեռին...

Իուդուշկան չվերջացրեց։ Հավանորեն նա ուզում էր ասել, որ քեռին, համենայն դեպս «ետ կպահի», բայց բառն ասես չարտասանվեց։

Այդ ժամանակվանից սկած ամեն երեկո սեղանատանը ուտելիք էր բերվում։ Լուսամուտների արտաքին փեղկերը ծածկվում էին, սպասավորները քնելու էին գնում, և ազգականուհին մենակ էր մնում քեռու հետ։ Սկզբում Իուդուշկան կարծես չէր հասնում, սակայն կարճատև փորձառությունը բավական եղավ, որպեսզի նա լիովին հավասարվի Աննինկային։ Երկուսով նստում, առանց շտապելու խմում էին և զավթից-զավթ վերհիշում էին ու զրուցում։ Խոսակցությունը՝ սկզբում անտարբեր և հույլ՝ ավելի ու ավելի կենդանանում էր գլուխները տաքանալու հետ և վերջապես մշտապես փոխվում էր խառնաշփոթ վիճաբանության, որի հիմքը կազմում

էին գոլովլյովյան մահացումների և հաշմանդամացումների հիշողությունները։

Այդ վեճերի դրդիչը միշտ Աննինկան էր հանդիսանում։ Նա անխնա պնդերեսությամբ քրքրում էր գոլովլյովյան արխիվը և առանձնապես սիրում էր ծաղրել Իուդուշկային, ապացուցելով, որ բոլոր խեղումների մեջ գլխավոր դերը, հանգուցյալ տատիկի հետ հավասար, պատկանում է նրան։ Ըստ որում նրա յուրաքանչյուր բառը այնպիսի ցինիկ ատելությամբ էր շնչում, որ դժվար էր պատկերացնել, թե ինչպես այդ տառապած, կիսահանգած օրգանիզմում կարող էր դեռ այդչափ կենսական կրակ պահպանվել։ Այդ ծաղրանքներն անսահման խոցում էին Իուդուշկային, բայց նա թույլ էր առարկում և ավելի բարկանում էր, իսկ երբ Աննինկան իր հանդուգն գրգռումներում չափն անցնում էր, ապա գոռում-գոչում էր ու անիծում։

Նման տեսարանները կրկնվում էին օրեցօր, առանց փոփոխության։ Թեպետ վշտալի ընտանեկան հիշատակացույցակը շատ շուտ սպառեցին, սակայն այդ հիշատակացույցակն այն աստիճան անխուսափելի կանգնած էր այդ ճնշված արարածների առաջ, որ նրանց մտածողական բոլոր ընդունակությունները կարծես գամված էին նրան։ Յուրաքանչյուր էպիզոդ, անցյալի յուրաքանչյուր հիշողություն բորբոքում էր որևէ վերք, և յուրաքանչյուր վերք հիշեցնում էր գոլովլյովյան խեղումների նոր շարքը։ Ինչ-որ դառն, վրիժառու բավականություն էր զգացվում այդ թույները մերկացնելու, նրանց գնահատելու և նույնիսկ նրանց չափազանցումների մեջ։ Ոչ անցյալում, ոչ ներկայումս ոչ մի բարոյական հիմունք չկար, որից բռնել կարելի լիներ, ոչինչ, բացի խղճուկ ժլատությունը մի կողմից և անիմաստ որկրամոլությունը՝ մյուս կողմից։ Հացի փոխարեն՝ քար, խրատի փոխարեն՝ ծեծ։ Եվ որպես վարիանտ՝ զզվելի հիշեցում ձրիակերության, հացի ապականման, ողորմության, թաքցրած պատառների մասին... Ահա պատասխանը, որը ստանում էր ողջագուրանք, ջերմություն, սեր տենչացող երիտասարդ սիրտը։ Եվ ի՞նչ, բախտի ինչ-որ դառն ծաղրով, այդ անզուլթ դպրոցի արդյունքը հանդիսացավ ոչ թե մայլ վերաբերմունքը դեպի

կյանքը, այլ բուռն ցանկությունը՝ հրճվել նրա թույներով։ Երիտասարդությունը մոռացության հրաշք գործեց. նա թույլ չտվեց սրտին քարանալ, թույլ չտվեց անմիջապես զարգանալու նրանում ատելության սաղմերը, այլ ընդհակառակը, արբեցրեց նրան կյանքի ծարավով։ Այստեղից էլ թեթևամիտ, անդրկուլիսյան խանձուք, որը մի քանի տարի չէր թողնում ուշքի գալ և հեռու, դեպի խորքը մղեց այն ամենը, ինչ գոլովլյովյան էր։ Միայն այժմ, երբ արդեն զգացվեց վախճանը, սրտում մորմոքով ցավ բռնկվեց, միայն այժմ Աննինկան իսկականորեն հասկացավ իր անցյալը և սկսեց իսկականորեն ատել։

Գինովի զրույցները շարունակվում էին մինչև ուշ գիշեր, և եթե նրանց չմեղմեր մտքերի ու խոսքերի գինովի խառնափնթորությունը, ապա նրանք հենց սկզբից կարող էին ինչ-որ սոսկալի բանով վերջանալ։ Բայց, բարեբախտաբար, եթե գինին այդ տառապած սրտերում ցավերի անսպառ աղբյուրներ էր բաց անում, ապա նա էլ նաև խաղաղացնում էր նրանց։ Որչափ խորն էր իջնում նրանց վրա գիշերը, այնչափ անկապ էին դառնում զրույցները և անուժ էր դառնում նրանց փոթորկող ատելությունը։ Վերջում ոչ միայն ցավ չէր զգացվում, այլև ողջ առօրյա պայմաններն անհայտանում էին աչքից ու փոխվում էին լուսափայլող դատարկությամբ։ Լեզուները փաթ էին ընկնում, աչքերը ծածկվում էին, մարմնի շարժումներն ընդարմանում։ Ե՛վ քեռին, և՛ ազգականուհին ծանրորեն վեր էին կենում տեղից և օրորվելով քաշվում էին իրենց բները։

Ինքնին հասկանալի է, որ տանը նրանց գիշերային այդ արկածները դաղտնի մնալ չէին կարող։ Դրան հակառակ, նրանց բնույթն անմիջապես պարզորեն բնորոշվեց նրանով, որ ոչ ոքի տարօրինակ չթվաց, երբ տնեցիներից մեկն այդ արկածների մասին «քրեական» բառն արտասանեց։ Գոլովլյովյան ապարանքը վերջնականապես անզգայացավ, նույնիսկ առավոտները ոչ մի շարժում չէր երևում։ Տերերն ուշ էին արթնանում, և այնուհետև տանը մի ծայրից մյուսը հընչում էր Աննինկայի սիրտ ճմլող հազը, որ ուղեկցվում էր անընդհատ տեղացող անեծքներով։ Իուդուշկան սարսափով

էր ականջ դնում այդ սրտմաշուկ ձայներին և կռահում էր, որ իրեն էլ է մոտենում փորձանքը, որը վերջնականապես ճզմելու է նրան։

Ամեն կողմից, այդ ատելի տան բոլոր անկյուններից դուրս էին սողում «մահացյալները»։ Ուր էլ որ գնում ես, որ կողմ էլ որ դառնում ես, ամեն տեղ գորշ ուրվականներ են խըլրտում։ Ահա պապենկա Վլադիմիր Միխայլիչը, սպիտակ փեղյուրով, ծաղրող լեզվով և Բարկովից կտորներ արտասանող. ահա եղբայր Ստյոպկա-տխմարը և նրա կողքին՝ Պաշկա սուսիկ-փուսիկ եղբայրը. ահա Լյուբինկան, ահա և գոլովլյովյան տոհմի վերջին շառավիղները՝ Վոլոդկան և Պետկան... Եվ դրանք բոլորն էլ գինովի, շնացող, տառապած, արյունաքամ եղող... Եվ բոլոր այդ ուրվականների վրա սավառնում է կենդանի ուրվականը՝ ոչ այլ ոք, քան ինքը՝ Պորֆիրի Վլադիմիրիչ Գոլովլյովը, մեռնող տոհմի վերջին ներկայացուցիչը...

***

Վերջ ի վերջո հին մահացյալներին մշտապես մտաբերելը պետք է իր ազդեցությունը գործեր։ Անցյալն այն աստիճան պարզվեց, որ յուրաքանչյուր չնչին հպում նրան, ցավ էր պատճառում։ Դրա բնական հետևանքն եղավ ոչ այն է վախը, ոչ այն է խղճի արթնացումը, ավելի շուտ նույնիսկ վերջինը, քան առաջինը։ Ի զարմանս պարզվեց, որ խիղճը ոչ թե բոլորովին բացակայում էր, այլ միայն հալածված էր ու կարծես մոռացված և դրա հետևանքով կորցրել էր այն գործունյա զգայնությունը, որը մարդուն անպայման հիշեցնում է նրա գոյության մասին։

Վայրենացած խղճի այդպիսի արթնացումներն արտասովոր տառապալից են լինում։ Զրկված դաստիարակիչ խընամքից, ոչ մի լույսի շող չտեսնելով առջևում, խիղճը չի տալիս հաշտություն, չի մատնանշում նոր կյանքի հնարավորություն, այլ միայն անվերջ և ապարդյուն տանջում է։ Մարդը իրեն զգում է քարե տոպրակում, անգութ կերպով զոհաբերված զղջման հոգեվարքին, հենց միայն հոգեվարքին, առանց կյանքի վերադառնալու հույսի։ Եվ չկա ոչ մի այլ

միջոց հանդստացնելու այդ ապարդյուն մաշող ցավը, բացի նրանից, որ օգտվելով մոայլ վճռականության բոպեից, զբ-ղուխը փշրի՝ տոպրակի քարերին խփելով...

Իուդուշկան երկարատև որկրամոլական կյանքի ընթացքում մտքով անգամ չէր անցկացնում, որ այդտեղ իսկ, իր կողքին մահացման գործողություն է տեղի ունենում։ Նա ապրում էր իր համար կամաց-կամաց ու հանգիստ-հանգիստ, առանց շտապելու և աստծուն աղոթելով, և ամենևին չէր ենթադրում, որ ճիշտ հենց դրանից է առաջ գալիս շատ թե քիչ ծանր խեղումը։ Եվ հետևապես առավել քիչ պիտի ենթադրեր, որ այդ խեղումների հանցավորն հենց ինքն է, որ կա։

Եվ հանկարծ սոսկալի ճշմարտությունը լուսավորեց նրա խիղճը, սակայն լուսավորեց ուշ, անօգուտ, այն ժամանակ արդեն, երբ աչքերի առաջ կանգնած էր միայն անվերադարձ ու անուղղելի փաստը։ Ահա նա ծերացել է, վայրիացել, մի ոտքը գերեզմանումն է արդեն, բայց աշխարհում չկա ոչ մի էակ, որը մոտենար նրան, «խղճար» նրան։ Ինչո՞ւ է նա մենակ։ Ինչո՞ւ է նա չորս կողմը տեսնում ոչ միայն անտարբերություն, այլև ատելություն։ Ինչո՞ւ այն բոլորը, ինչ որ առնչվել է իր հետ,— բոլորը կործանվել է։ Ահա այստեղ, այս իսկ Գոլովլյովոյում մի ժամանակ մարդկային մի ամբողջ բուն կար, ինչպե՞ս պատահեց, որ այդ բնից փետուր անգամ չմնաց։ Այնտեղ սնուցված բոլոր ձագուկներից ազատվել է միայն ազգականուհին, բայց նա էլ հայտնվել է, որպեսզի ծաղրի ենթարկի նրան և վերջ տա։ Նույնիսկ Եվպրակսեյուշկան, որ այնչափ պարզամիտ է, նա էլ է ատում։ Նա ապրում է այստեղ, Գոլովլյովոյում, որովհետև նրա հորը, ժամկոչին ամեն ամիս այստեղից ուտելիք է ուղարկվում, բայց ապրում է, անկասկած, ատելով։ Նրան ևս Իուդուշկան ծանր խեղանք հասցրեց, նրանից ևս նա կարողացավ խլել կյանքի լույսը, խլելով որդուն և նետելով ինչ-որ անանուն մի փոս։ Ինչի՞ հանգեցրեց նրա ամբողջ կյանքը։ Ինչո՞ւ էր նա ստում, դատարկախոսում, ճնշում, ժլատություն անում։ Նույնիսկ նյութական տեսակետից, «ժառանգության» տեսակետից ո՞վ է օգտվելու այդ կյանքի արդյունքից։ Ո՞վ։

Կրկնում եմ. խիղճը արթնացավ, բայց ապարդյուն։ Իուդուշկան տնքում էր, գազազում, նեղվում էր և տենդային զայրույթով երեկոյան էր սպասում ոչ թե նրա համար, որպեսզի անասունի պես հարբի, այլ որպեսզի գինու մեջ թաղի խիղճը։ Նա ատում էր «անառակ բոզին», որն այդպիսի սառը անամոթությամբ քրքրում էր նրա վերքերը և միաժամանակ անդիմադրելի կերպով ձգտում էր դեպի նա, ասես դեռևս ամեն ինչ չէր արտահայտված նրանց մեջ, որ դեռ կային ուրիշ և ուրիշ վերքեր, որոնք նույնպես անհրաժեշտ էր բորբոքել։ Ամեն երեկո նա հարկադրում էր Աննինկային կրկնել Լյուբինկայի մահվան պատմությունը և ամեն գիշեր նրա մտքում ավելի ու ավելի էր հասունանում ինքնախորտակման գաղափարը։ Սկզբում այդ միտքը ծագեց պատահաբար, բայց աստիճանաբար, երբ մահացումների գործողությունը պարզվեց, այդ միտքն ավելի ու ավելի խորը սողաց և վերջապես դարձավ միակ լուսավոր կետը ապագայի խավարում։

Եվս առավել, որ նրա ֆիզիկական առողջությունը նույնպես խախտվեց։ Նա արդեն լուրջ հազում էր և երբեմն խեղդվելու անտանելի նոպաներ էր զգում, որոնք, անկախ բարոյական տառապանքներից, իրենք ինքնին արդեն կարող են կյանքն ամբողջական հոգեվարքով լցնել։ Հատկապես գոլովլյովյան թունավորման բոլոր արտաքին նշանները հրապարակի վրա էին, և նրա ականջներում հնչում էին արդեն դուբրովինյան տան վերնահարկում խեղդվող Պավլուշկա սուսիկ-փուսիկ եղբոր տնքոցները։ Սակայն այդ ներս ընկած, նիհար կուրծքը, որը, թվում էր, ամեն րոպե պատրաստ է պայթելու, զարմանալի կենսունակ էր։ Օրեցօր ավելի ու ավելի ֆիզիկական տանջանքներ էր պարփակում նա իր մեջ, բայց և այնպես դիմանում էր, չէր զիջում։ Կարծես օրգանիզմը ևս իր անսպասելի դիմացկունությամբ վրեժ էր լուծում հին մահացումների համար։ Մի՞թե դա վերջը չէ,— ամեն անգամ հույսով կրկնում էր Իուդուշկան. բայց վերջը դեռևս չէր հասնում։ Ըստ երևույթին վախճանն արագացնելու համար բռնություն էր պահանջվում։

Մի խոսքով, որ կողմից էլ մոտենալու լինես, կյանքի հետ բոլոր հաշիվները փակված են։ Ապրելը և՛ տանջալից

է, և՛ հարկավոր չէ. ամենից լավը մեռնելը կլիներ, բայց ցավն այն է, որ մահը չի գալիս։ Ինչ-որ դավաճանական ստորություն կա մահացման այդ անզգամ հապաղման մեջ, երբ հոգու բոլոր ուժերով կանչվում է մահը, իսկ նա միայն գայթակղում է ու ծաղրում...

. . . . . .

Մարտի վերջն էր, և չարչարանաց շաբաթը վերջանալու վրա էր։ Որչափ էլ որ վերջին տարիները Պորֆիրի Վլադիմիրիչն ընկել էր, սակայն մանկությունից դեռևս այդ օրերի սրբազան լինելու մասին ունեցած վերաբերմունքը նրա վրա ևս ունեցավ իր ազդեցությունը։ Մտքերն իրենք իրենց լրջանում էին, սրտում որևէ այլ ցանկություն չէր զգացվում, բացի բացարձակ անդորրության ծարավը։ Համաձայն այդ տրամադրության, երեկոներն էլ կորցրին իրենց խայտառակ գինովի բնույթը և անցնում էին լռությամբ, թախծոտ զբսպվածությամբ։

Իուդուշկան ու Աննինկան երկուսով նստել էին սեղանատանը։ Մեկ ժամ առաջ միայն վերջացել էր երեկոյան ծիսակատարությունը՝ տասներկու ավետարանների ընթերցումով և սենյակում դեռևս խնկի ուժեղ բույր էր կանգնած։ Ժամացույցը խփեց տասը, տնեցիները ցրվեցին իրենց անկյունները, և տանը խորը, կենտրոնացած լռություն տիրեց։ Աննինկան գլուխը ձեռների մեջ առած, հենվեց սեղանին ու մրտածմունքների մեջ ընկավ. Պորֆիրի Վլադիմիրիչը նստել էր դիմացը լուռ ու տրտում։

Աննինկայի վրա այդ ծիսակատարությունը միշտ խոր, ցնցող տպավորություն էր գործում։ Դեռ մանկական հասակում նա դառնագին արտասվում էր, երբ քահանան արտասանում էր. «Եվ հյուսեցին փշյա պսակ ու դրեցին նրա գլխին, և գավազան՝ աջը նրա...» ու հեծկլտացող դիսկանտով ձայնակցում էր տիրացուին. «Փառք բազում համբերությանը քո, տե՛ր, փա՞ռք քեզ»։ Իսկ ժամերգությունից հետո, ամբողջովին հուզված, վազում էր աղախինների սենյակն ու այնտեղ, թանձրացող մթնշղի մեջ (Արինա Պետրովնան, երբ գործ չկար, աղախինների սենյակ մոմ չէր տալիս), ճորտերին պատմում էր «տիրոջ չարչարանքները»։ Թափվում էին

ճորտական մեղմ արցունքները, հնչում էին ճորտական խորունկ հառաչանքները։ Ճորտերը սրտով զգում էին իրենց տիրոջն ու փրկչին, հավատում էին, որ նա հարություն կառնի, ճշմարտիվ հարություն կառնի։ Աննինկան նույնպես զգում էր ու հավատում։ Տանջանքների, ստոր ծաղրանքների խորունկ գիշերվա մեջ բոլոր այդ հոգով աղքատներին լույսի շողերի և ազատության թագավորություն էր երևում։ Ինքը ծեր տիրուհին՝ Արինա Պետրովնան, սովորաբար ահեղ, այդ օրերին խաղաղվում էր, չէր քրթմնջում, չէր կշտամբում Աննինկային իր որբությամբ, այլ շոյում էր նրա գլուխը և հորդորում էր հանգստանալ։ Բայց Աննինկան նույնիսկ անկողնում երկար ժամանակ չէր հանգստանում, ցնցվում էր, նետվում, գիշերը մի քանի անգամ վեր էր թռչում և խոսում էր ինքն իրեն։

Հետո սկսեցին ուսման տարիները, իսկ հետո և թափառումների տարիները։ Առաջիններն անբովանդակ էին, մյուսները տառապալից, ստոր։ Բայց այդտեղ ևս, դերասանական թափառականության այլանդակությունների մեջ անգամ Աննինկան խանդով տարբերում էր «սուրբ օրերը» և հոգում որոնում էր անցյալի արձագանքները, որոնք օգնում էին նրան մանկայնորեն հուզվել ու հառաչել։ Իսկ այժմ, երբ կյանքը պարզվել էր ամբողջովին, մինչ վերջին մանրամասնությունը, երբ անցյալն անիծվել էր ինքնին, իսկ ապագայում չէր նախատեսվում ոչ զղջում, ոչ ներում, երբ ցամաքեց գորովանքի աղբյուրը և նրա հետ միասին ցամաքեցին և արցունքները,— տառապանքի ճանապարհի մասին հենց նոր լսածի տպավորությունը հիրավի ճնշիչ էր։ Այն ժամանակ ևս, մանկության ժամանակ խորունկ գիշերն էր ճնշում նրան, սակայն խավարի միջից այնուամենայնիվ ճառագայթներ էին նախազգացվում։ Այժմ ոչինչ չէր նախազգացվում՝ գիշեր, հավիտենական, անփոփոխ գիշեր և ուրիշ ոչինչ։ Աննինկան չէր հառաչում, չէր հուզվում և կարծես նույնիսկ ոչ մի բանի մասին չէր մտածում, այլ միայն խորունկ անզգայության գիրկն էր ընկել։

Պորֆիրի Վլադիմիրիչը նույնպես մանուկ հասակից ոչ պակաս ճշտապահությամբ էր մեծարում «սուրբ օրերը», սակայն մեծարում էր բացառապես ծիսական կողմից, որ-

պես իսկական կռապաշտ։ Ամեն տարի ութի-ուրբաթի նախօրյակին հրավիրում էր նա քահանային, լսում էր ավետարանի զրույցը, հառաչում էր, ձեռները վեր էր առաքում, ճակատը գետին էր քսում. մոմի վրա գնդիկներով նշում էր կարդացած ավետարանների թիվը, բայց և այնպես ոչինչ չէր հասկանում։ Եվ միայն այժմ, երբ Աննինկան արթնացրեց նրա մեջ «մահացումների» գիտակցումը, նա առաջին անգամ հասկացավ, որ այդ զրույցում խոսվում է ինչ-որ մի անլուր անարդարության մասին, որը արյունալի դատաստան է տեսել Արդարության վրա...

Իհարկե, չափազանցություն կլիներ ասել, որ այդ հայտնաբերության հետևանքով նրա հոգում ինչ-որ կենսական համադրություններ առաջացան, բայց նրանում ինչ-որ, համարյա հուսահատության մոտեցող խռովք տեղի ունեցավ։ Այդ խռովքն այնչափ տառապալից էր, որչափ անգիտակցորեն էր ապրել նա այն անցյալը, որն աղբյուր էր հանդիսացել կյանքի համար։ Ինչ-որ սոսկալի բան կար այդ անցյալում, բայց ի՞նչ իսկապես, ամբողջականորեն հնարավոր չէ վերհիշել։ Սակայն և մոռանալ չի կարելի։ Ինչ-որ մի հսկայական բան, որը մինչև այժմ անթափանցության վարագույրով ծածկված, կանգնած էր անշարժ, և այժմ միայն շարժվեց ընդառաջ, ամեն բոպե սպառնալով ճզմել։ Եթե նա գոնե իրավամբ ճզմեր, դա լավագույնը կլիներ. բայց չէ որ Իուդուշկան կենսունակ է՝ կարող է պատահել և դուրս սողա։ Ոչ, վախճանին սպասել իրերի բնական ընթացքով շատ է ենթադրական, պետք է ինքը վախճան ստեղծի, վերջ տալու ուժերից վեր խռովքին։ Կա՛ այդպիսի վախճան, կա՛։ Նա ամսից ավելի հետևում է իրեն և այժմ, թվում է, խուսափել չի կարող։ «Շաբաթ օրը հաղորդվելու ենք, պետք է այցի գնալ հանգուցյալ մամենկայի գերեզմանին, պետք է հրաժեշտ տալ»,— հանկարծ ծագեց նրա գլխում։

— Գնա՞նք, ինչ,— դիմեց նա Աննինկային, բարձրաձայն հաղորդելով նրան իր ենթադրությունը։

— Թերևս... մեկնենք...

— Ոչ, չմեկնենք, այլ...— սկսեց Պորֆիրի Վլադիմիրիչը,

բայց հանկարծ ընդհատեց, կարծես ըմբռնեց, որ Աննինկան կարող է խանգարել։

«Բայց չէ որ ես հանգուցյալ մամենկայի առաջ... չէ որ ես նրան տանջեցի... ե՛ս»,— թափառում էր մինչ այդ նրա մտքերում և «հրաժեշտ տալու» ծարավը բոպե առ բոպե ավելի ու ավելի ուժգին էր բորբոքվում նրա սրտում։ Սակայն «հրաժեշտ տալ» ոչ այնպես, ինչպես հրաժեշտ են տալիս սովորաբար, այլ ընկնել գերեզմանի վրա և անզգայանալ մահացու հոգեվարքի հառաչանքներով։

— Այդպես ուրեմն, դու ասում ես, որ Լյուբինկան ի՞նքն իրեն սպանեց,— հանկարծ հարցրեց նա, ըստ երևույթին իրեն խրախուսելու համար։

Սկզբում Աննինկան կարծես չլսեց քեռու հարցը, բայց, ըստ երևույթին, հարցը հասավ նրան, որովհետև երկուերեք բոպե անց նա ինքն անհաղթահարելի պահանջ զգաց վերադառնալ այդ մահվան, տանջել դրանով իրեն։

— Այդպես էլ ասա՞ց՝ խմի՛ր... անա՛ բգ,— հարցրեց Իուդուշկան, երբ Աննինկան մանրամասն կրկնեց իր պատմությունը։

— Այո... ասաց։

— Իսկ դու մնացի՞ր, չխմեցի՞ր։

— Այո... ահա ապրում եմ։

Իուդուշկան վեր կացավ և նկատելի հուզմունքով մի քանի անգամ ետ ու առաջ քայլեց սենյակում։ Վերջապես մոտեցավ Աննինկային և շոյեց նրա գլուխը։

—Խեղ՞ճ, խե՞ղճ իմ,— ասաց նա կամաց։

Այդ հպումից Աննինկայի մեջ ինչ-որ անսպասելի բան տեղի ունեցավ։ Սկզբում նա զարմացավ, բայց աստիճանաբար նրա դեմքն սկսեց աղճատվել, աղճատվել և հանկարծ հիստերիկ սոսկալի հեկեկանքների մի ամբողջ հորձանք դուրս ժայթքեց նրա կրծքից։

— Քեռի՛, դուք բարի՞ եք։ Ասացեք, դուք բարի՞ եք,— Ցամարյա աղաղակեց նա։

Բեկբեկվող ձայնով, արցունքի ու հեկեկանքների միջից կրկնում էր նա իր հարցը, նույն այն հարցը, որն առաջարկեց նա դեռևս այն օրը, երբ «թափառումներից» հետո վերջ-

նականապես վերադարձավ Գոլովլյովոյում հաստատվելու, և որին նա այն ժամանակ այնպիսի անհեթեթ պատասխան տվեց։

— Դուք բարի՞ եք, ասացե՛ք, պատասխանեցե՛ք, դուք բարի՞ եք։

— Լսեցի՞ր դու ինչ կարդացին այսօր ժամերգության ժամանակ,— հարցրեց Իուդուշկան, երբ նա վերջապես խաղաղվեց։— Ա՜խ, ի՞նչ տանջանքներ էին դրանք։ Եվ միայն այդպիսի տանջանքներով կարելի է և... Եվ ներե՛ց։ Բոլորի՛ն հավիտյանս հավիտենից ներեց։

Նա նորից սկսեց մեծ-մեծ քայլերով անցնել սենյակում, մորմոքելով, տառապելով ու չզգալով, ինչպես դեմքը ծածկվում է քրտինքի կաթիլներով։

— Բոլորի՛ն ներեց,— բարձրաձայն ասում էր նա ինքն իրեն։— Ոչ միայն նրանց, որոնք այն ժամանակ լեղիախառն քացախ խմեցրին նրան, այլև նրանց, ովքեր նաև հետո, ահա այժմ, և հետագայում, հավիտյանս հավիտենից նրա շուրթերին կմոտեցնեն քացախ, լեղի խառնած... Սոսկալի՞ է։ Ա՜խ, սոսկալի՞ է դա։

Եվ հանկարծ, կանգ առնելով Աննինկայի դիմաց, հարցրեց.

— Իսկ դու... ներե՞լ ես։

Պատասխանի փոխարեն Աննինկան նետվեց դեպի նա և ամուր գրկեց։

— Պետք է ներել ինձ,— շարունակեց Իուդուշկան։— Բոլորի փոխարեն... Եվ քո... և նրանց... որոնք այլևս չկան... Ի՞նչ բան է սա... Այս ի՞նչ է պատահել,— համարյա շվարած բացականչեց նա, շուրջը նայելով,— ո՞ւր են... բոլորը...

. . . . . .

Տառապած, ցնցված, քաշվեցին նրանք իրենց սենյակները։ Բայց Պորֆիրի Վլադիմիրիչի քունը չէր տանում։ Կողքից-կողք էր շուռ գալիս անկողնում և շարունակ ուզում էր վերհիշել, թե ուրիշ էլ ինչ պարտականություն կա իր վրա ընկած։ Եվ հանկարծ նրա հիշողության մեջ միանգամայն պարզորոշ վերականգնվեցին այն խոսքերը, որոնք պատահաբար ծագել էին նրա գլխում երկու ժամ դրանից առաջ «Պետք է այցի գնալ հանգուցյալ մամենկայի գերեզմանին, հրաժեշտ տալու»... Այդ վերհիշման ժամանակ սոսկալի, տանջալից անհանգստություն պատեց նրա ողջ էությունը...

Վերջապես նա այլևս դիմանալ չկարողացավ, ելավ անկողնուց և հագավ խալաթը։ Դրսում դեռևս մութն էր և ոչ մի կողմից աննշան շշուկ անգամ չէր լսվում։ Պորֆիրի Վլադիմիրիչը միառժամանակ քայլում էր սենյակում, կանգ էր առնում կանթեղի լույսով լուսավորված փշյա պսակը գլխին փրկչի պատկերի առաջ և ուշադիր նայում էր նրան։ Վերջապես նա վճռեց։ Դժվար է ասել, թե նա ինքը որչափ գիտակցում էր իր վճիռը, սակայն մի քանի րոպե անց նա գաղտագողի անցավ միջանցքով ու բաց արեց դրսի դուռը փակող երկաթը։

Դրսում քամին էր ոռնում, և մարտի թիփին էր կուտակում հալչող ձյունը, բուռ-բուռ լցնելով աչքերը։ Բայց Պորֆիրի Վլադիմիրիչը գնում էր ճանապարհով՝ քայլելով ջրագուբերով, չզգալով ոչ ձյունը, ոչ քամին և միայն բնազդաբար ծածկելով խալաթի փեշերը։

* * *

Հետևյալ օրը վաղ առավոտյան Արինա Պետրովնայի թաղված գերեզմանատան մոտիկ գյուղից մի հեծյալ եկավ, հայտնելով, որ ճանապարհից մի քանի քայլ հեռու գտնվել է գոլովլյովյան բարինի սառած դիակը։ Նետվեցին Աննինկայի մոտ, սակայն նա անհուշ պառկած էր անկողնում, տենդի ակնհայտնի նշաններով։ Այն ժամանակ մի նոր հեծյալ ուղարկեցին Գորյուշկինո՝ «քույրիկ» Նադեժդա Իվանովնա Գալկինայի մոտ (հորաքույր Վարվառա Միխայլովնայի աղջկա), որը դեռ անցյալ աշնանից աշխատում էր Գոլովլյովոյում տեղի ունեցող անցուդարձին։

ՀԵՔԻԱԹՆԵՐ
1869

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԵԿ ԳՅՈՒՂԱՅԻ ԵՐԿՈՒ ԳԵՆԵՐԱԼ ԿԵՐԱԿՐԵՑ

Լինում են, չեն լինում, երկու գեներալ են լինում, բայց որովհետև երկուսն էլ թեթևամիտ են լինում, ուստի շուտով ձկան հրամանով և իմ ցանկությամբ, ընկնում են մի անմարդաբնակ կղզի։

Իրենց ամբողջ կյանքում գեներալները ծառայել էին մի ինչ-որ դիվանատան մեջ, այնտեղ ծնվել, այնտեղ դաստիարակվել ու ծերացել էին, հետևապես ոչինչ չէին հասկանում։ Նույնիսկ ուրիշ խոսքեր չէին իմանում, բացի՝ «ընդունեցեք իմ կատարյալ հարգանքի և անձնվիրության հավաստիքը»։

Դիվանատունը կարևոր չլինելու պատճառով փակեցին և գեներալներին ազատ արձակեցին։ Հաստիքից դուրս մնալով, նրանք բնակություն հաստատեցին Պետերբուրգում, Պոդյաչեսկի փողոցի վրա, տարբեր բնակարաններում։ Յուրաքանչյուրն ուներ իր խոհարարուհին և կենսաթոշակ էր ստանում։ Միայն թե հանկարծ ընկան մի անմարդաբնակ կղզի՝ արթնացան և տեսան, որ երկուսն էլ պառկած են մի վերմակի տակ։ Հասկանալի է, սկզբում ոչինչ չըմբռնեցին և սկսեցին զրույց անել միմյանց հետ, կարծես ոչինչ պատահած չլիներ։

— Տարօրինակ երազ տեսա այս գիշեր, ձերդ գերազանցություն,— ասաց գեներալներից մեկը,— տեսնում եմ, իբրև թե ես անմարդաբնակ կղզում եմ ապրում։

Ասաց այդ և հանկարծ թափով վեր թռավ։ Վեր թռավ նաև մյուս գեներալը։

— Տե՛ր աստված, սա ի՞նչ բան է, որտե՞ղ ենք մենք,— բացականչեցին երկուսով էլ, սաստիկ վախեցած։

Ու սկսեցին միմյանց շոշափել՝ հավաստիանալու համար արդյոք այդ ձախորդությունը երազո՞ւմ է պատահել իրենց, թե իրականության մեջ։ Սակայն, որչափ էլ աշխատում էին իրենց համոզել, որ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ երազ, բայց և այնպես հարկադրված էին համոզվել, որ դա տխուր իրականություն է։

Նրանց առաջ մի կողմից ծովն էր փռվել, մյուս կողմից մի փոքրիկ հողամաս, որից այն կողմ նույն այն անծայրածիր ծովն էր տարածվում։ Լաց եղան գեներալները դիվանատունը փակվելուց հետո առաջին անգամ։

Սկսեցին միմյանց զննել ու նկատեցին, որ գիշերային սպիտակեղենով են, իսկ վզերից մի-մի շքանշան է կախված։

— Լավ կլիներ հիմի մի-մի սուրճ խմեինք,— ասաց գեներալներից մեկը, բայց, հիշելով, թե ինչ անլուր դժբախտություն է պատահել, կրկին լաց եղավ։

— Ի՞նչ պիտի անենք մենք, սակայն,— շարունակեց նա արցունքների միջից,— թե որ հիմի զեկուցում գրենք, դրանից ի՞նչ օգուտ դուրս կգա։

— Ահա ինչ,— պատասխանեց մյուս գեներալը,— դուք, ձերդ գերազանցություն, գնացեք արևելք, իսկ ես կգնամ արևմուտք, և երեկոյան կրկին այստեղ կհանդիպենք, գուցե և մի բան գտնենք։

Սկսեցին փնտրել՝ ո՞ր կողմն է արևելքը և ո՞ր կողմը՝ արևմուտքը։ Հիշեցին, ինչպես պետը մեկ անգամ ասել էր՝ «Եթե կամենում ես արևելքը գտնել, կանգնիր երեսդ դեպի հյուսիս, աջ կողմը կլինի որոնածդ»։ Սկսեցին փնտրել հյուսիսը, կանգնեցին և՛ այսպես, և՛ այնպես, փորձեցին աշխարհի բոլոր կողմերը, բայց որովհետև իրենց ամբողջ կյանքն անց էին կացրել դիվանատանը, այդպես էլ ոչինչ չգտան։

— Ահա թե ինչ, ձերդ գերազանցություն, դուք գնացեք աջ, իսկ ես ձախ, այսպես ավելի լավ կլինի,— ասաց գեներալներից մեկը, որը բացի դիվանատնից, կանտոնիստնե-

ի[1] զինվորական դպրոցում գեղագրության դասատու էր եղել, հետևապես ավելի խելոք էր։

Այդպես էլ արեցին։

Գեներալներից մեկն աջ է գնում և տեսնում է, որ ծառեր կան բուսած, իսկ ծառերի վրա՝ ամեն տեսակ պտուղներ կան։ Գեներալն ուզում է գոնե մեկ հատ խնձոր քաղել, բայց բոլորն էլ այնքան բարձր են, որ պետք է ծառը բարձրանալ։ Փորձեց բարձրանալ, ոչինչ դուրս չեկավ, իզուր տեղը շապիկը պատռեց։ Գեներալը հասավ առվակի մոտ, տեսնում է՝ առվակում, ինչպես Ֆոնտանկայի ձկնարանում, ձկները վխտում են ու վխտում։

«Ա՜յ, եթե այս ձկները Պոդյաչեսկիում լինեին»,— մտածեց գեներալը և ախորժակը գրգռվելուց նույնիսկ գույնը գցեց։

Գեներալն անտառ մտավ, իսկ անտառում աքարներն են սուլում, մարեհավերն են ճթճթում, նապաստակներն են վազվզում։

— Տե՜ր աստված, ինչքան ուտելու բան կա,— ասաց գեներալը, զգալով, որ սիրտն արդեն սկսում է խառնել։

Ճար չկար, հարկադրված էր պայմանավորված տեղը վերադառնալ դատարկ ձեռքով։ Վերադառնում է և տեսնում, որ մյուս գեներալը արդեն իրեն է սպասում։

— Հը՞, ձերդ գերազանցություն, բան-ման ճարեցի՞ք։

— Ահա «Մոսկովսկիե Վեդոմոստի»[2] լրագրի մի հին համար գտա, ուրիշ ոչինչ։

Գեներալները կրկին պառկեցին քնելու, բայց քաղցած փորով քունները չի տանում։ Նրանց անհանգիստ էր անում մերթ այն միտքը, թե արդյոք իրենց փոխարեն ով է թոշակը ստանալու, մերթ հիշում էին ցերեկը տեսած մրգերը, ձկները, աքարները, մարեհավերը, նապաստակները։

— Ո՞վ կարող էր մտածել, ձերդ գերազանցություն, որ մարդու կերակուրն իր նախնական վիճակում թռչում է, լողում է և բուսնում է ծառերի վրա,— ասաց գեներալներից մեկը։

— Այո,— պատասխանեց մյուս գեներալը,— խոստովանում եմ, ես էլ մինչև այսօր մոածում էի, որ բուլկին հենց

այն ձևով բուսնում է, ինչ ձևով որ մատուցում են առավոտյան սուրճի ժամանակ։

— Նշանակում է, օրինակ, եթե մեկը կամենում է կաքավ ուտել, պետք է նախ որսա, սպանի, փետրի, տապակի... Միայն թե այդ բոլորը ինչպե՞ս պետք է անել։

— Ինչպես պետք է անել,— արձագանքի նման կրկնեց մյուս գեներալը։

Լռեցին և աշխատեցին քնել. բայց քաղցը վճռական կերպով չէր թողնում քնել։ Աչքերի առաջ շարունակ երևում էին աքարներ, հնդուհավեր, խոճկորներ՝ հյութեղ, քիչ կարմրին տվող՝ վարունգներով, թթուներով և այլ սալաթով։

— Այժմ ես, կարծեմ, իմ սեփական կոշիկը կուտեի,— ասաց գեներալներից մեկը։

— Զեռնոցներն էլ լավ են լինում, թե որ շատ մաշված են,— հառաչեց մյուս գեներալը։

Հանկարծ գեներալները միմյանց նայեցին. նրանց աչքերում շարագուշակ կրակ փայլեց, ատամները կափկափեցին, խուլ մռնչոց դուրս թռավ կրծքներից։ Սկսեցին դանդաղ սողալ միմյանց մոտ և ակամա թոթափել, երկուսն էր կատաղեցին։ Բռան մազի փնջեր, լսվեց ճիչ ու հառաչանք։ Այն գեներալը, որը գեղագրության ուսուցիչ էր եղել, կծեց իր ընկերոջ շքանշանը և իսկույն կուլ տվեց։ Բայց թափվող արյունը կարծես խելքի բերեց նրանց։

— Խաչը մեզ օգնական,— ասացին երկուսն էլ միաժամանակ,— այսպես որ գնա, հո մեկս մյուսին կուտենք։

— Ախր ինչպե՞ս ընկանք մենք այստեղ, ո՞վ է այն չարագործը, որ մեզ հետ այսպես խաղ խաղաց։

— Հարկավոր է, ձերդ գերազանցություն, որևէ խոսակցությամբ զբաղվել, թե չէ կարող է մարդասպանություն պատահել,— ասաց գեներալներից մեկը։

— Սկսեցեք,— պատասխանեց մյուսը։

— Ձեր կարծիքով, օրինակ, ինչու՞ է արեգակը առաջ ծագում և հետո մայր մտնում, այլ ոչ հակառակը։

— Տարօրինակ մարդ եք դուք, ձերդ գերազանցություն, բայց չէ՞ որ դուք ինքներդ էլ առաջ վեր եք կենում, գնում եք

դիվանատուն, այնտեղ գրում եք, իսկ հետո պառկում եք քնելու։

— Բայց ինչո՞ւ չի կարելի վերադասավորել այսպես. նախ պառկում եմ քնելու, զանազան երազներ եմ տեսնում, իսկ հետո վեր եմ կենում։

— Հը՞... այո... Իսկ ես, խոստովանում եմ, դիվանատանը ծառայած ժամանակ միշտ այսպես էի մտածում՝ այժմ ահա առավոտ է, հետո ցերեկ կլինի, իսկ հետո ընթրիք կըմատուցեն, որից հետո քնելու ժամանակն է արդեն։

Բայց ընթրիքի հիշատակումը երկուսին էլ վհատեցրեց և ընդհատեց խոսակցությունը հենց սկզբից։

— Մի բժշկից լսել եմ, որ մարդը երկար ժամանակ կարող է սնվել իր սեփական հյութով,— սկսեց կրկին գեներալներից մեկը։

— Այդ ինչպե՞ս։

— Սեփական հյութերն, իբրև թե, ուրիշ հյութեր են արտադրում, սրանք իրենց հերթին էլի հյութեր են արտադրում և այդպես շարունակ, մինչև հյութերը բոլորովին դադարում են...

— Այն ժամանակ ի՞նչ է լինում։

— Այն ժամանակ պետք է որևէ սնունդ ընդունել։

— Թո՛ւ։

Մի խոսքով, ինչի մասին էլ որ սկսում էին խոսել գեներալները, մշտապես խոսքը դառնում էր ուտելիքի շուրջը և այդ ավելի էր գրգռում ախորժակը։ Որոշեցին վերջ տալ խոսակցությանը և, հիշելով «Մոսկովսկի Վեդոմոստի» լրագրի գտած համարը, վրա ընկան և սկսեցին կարդալ։

«Երեկ,— կարդաց գեներալներից մեկը հուզված ձայնով,— մեր հնամենի մայրաքաղաքի հարգելի կառավարչի մոտ հանդիսավոր ճաշկերույթ կար։ Զարմանալի ճոխությամբ սեղան էր բացված՝ հարյուր անձի համար։ Բոլոր երկրների բարիքները կարծես տեսակցություն էին նշանակել միմյանց այդ կախարդական տոնին։ Կային այդտեղ և՛ «շեքսինյան ստերլյադ ոսկի[3]», և՛ Կովկասյան լեռների ծնունդ փասյան, և՛ փետրվար ամսին մեր հյուսիսում այնքան հազվագյուտ մորի»...

— Թո՛ւ, տեր աստված, բայց մի՞թե ձերդ գերազանցություն, չեք կարող մի ուրիշ բան գտնել,— հուսահատ բացականչեց մյուս գեներալը և ընկերոջ ձեռքից վերցնելով լրագիրը, սկսեց կարդալ հետևյալը։

«Տուլայից գրում են. երեկ, Ուպա գետում թառափ ձուկ որսալու առիթով (սա մի այնպիսի հազվագյուտ դեպք է, որի նմանը ծերունիներն էլ չեն հիշում, մանավանդ, որ թառափը նման էր թաղամասի պրիստավ Բ-ին), մեր ակումբում տոնախմբություն էր կազմակերպված։ Խնջույքի հանցավորին ներս բերեցին ահագին փայտե մատուցարանի վրա դրած, չորս բոլորքը վարունգներ շարած, և բերանում՝ մի փունջ կանաչի։ Բժիշկ Պ-ն, որն այդ ակումբի հերթապահ ավագն էր, ուշադիր հետևում էր, որպեսզի բոլոր հյուրերը բաժին ստանան։ Սոուսը բազմազան էր և նույնիսկ համարյա քմապարար»...

— Ներեցեք, ձերդ գերազանցություն, դուք, կարծեմ, նույնպես այնքան էլ զգույշ չեք ընթերցման նյութի ընտրության մեջ,— ընդհատեց առաջին գեներալը, և, իր հերթին, վերցնելով լրագիրը, կարդաց.

«Վյատկայից գրում են. այստեղի հին բնակիչներից մեկը հնարել է ձկնապուր եփելու հետևյալ հետաքրքիր ձևը. վերցնել կենդանի շերեփաձուկը, նախապես ծեծել, իսկ երբ հասցրած վիրավորանքից նրա լյարդը սկսի ուռչել»...

Գեներալները տրտում կախ գցեցին գլուխները։ Ուր էլ դարձնում էին հայացքները, ամեն բան ուտելիք էր հիշեցնում։ Իրենց սեփական մտքերը դավադրում էին իրենց դեմ, որովհետև որչափ էլ աշխատում էին հեռացնել իրենցից բիֆշտեքսի մտապատկերները, բայց և այնպես, այդ մտապատկերները բռնի ուժով ճանապարհ էին բացում իրենց համար։

Եվ հանկարծ՝ գեղագրության ուսուցիչ եղած գեներալի միտքը լուսավորվեց ներշնչմամբ...

— Ի՞նչ կասեք, ձերդ գերազանցություն,— ասաց նա ուրախ,— եթե մենք մի գյուղացի գտնենք։

— Այսինքն, ինչպե՞ս թե... գյուղացի։

— Դե, հա, հասարակ գյուղացի... այնպես, ինչպես առ-

հասարակ լինում են գյուղացիները։ Նա մեզ անմիջապես բուլկի էլ կմատուցեր, աքարներ էլ կորսար, ձկներ էլ...

— Հը՞մ... Գյուղացի... Բայց որտեղի՞ց գտնենք այդ գյուղացուն, քանի որ չկա։

— Ինչպե՞ս թե չկա, գյուղացի ամեն տեղ կա, հարկավոր է միայն որոնել նրան։ Հավանաբար նա այս կողմերը մի տեղ թաքնվել է, գործից խույս է տալիս։

Այս միտքն այն աստիճան քաջալերեց գեներալներին, որ նրանք առույգ վեր թռան ու սկսեցին գյուղացի որոնել։

Երկար թափառեցին նրանք կղզում ապարդյուն, բայց վերջապես մղեղախառն հացի սուր բույրից և ոչխարի մորթու կծու հոտից հետքը գտան։ Ծառի տակ, բռունցքը գլխի տակ դրած, փորը դեպի վեր, քնել էր վիթխարի մի տղամարդ՝ ամենալկտի կերպով խույս տալով աշխատանքից։ Գեներալների զայրույթը սահման չուներ։

— Քնե՞լ ես, ծույլ անբան,— հարձակվեցին նրա վրա — թերևս չես էլ մտածում, որ այստեղ երկու գեներալ երկրորդ օրն է քաղցից մեռնում են։ Հա՛յդա, աշխատանքի։

Արթնացավ գյուղացին, տեսնում է, որ գեներալները շատ խիստ են։ Ուզեց ծլկել, բայց նրանք պինդ բռնել էին իրեն։

Ու սկսեց ծառայել նրանց։

Նախ և առաջ բարձրացավ ծառը և գեներալների համար տասական ամենահասած խնձոր քաղեց, իսկ իր համար վերցրեց մի հատ թթու խնձոր։ Հետո հողը փորեց և գետնախընձոր հանեց, ապա, երկու կտոր փայտ վերցնելով՝ միմյանց շփեց ու կրակ վառեց։ Հետո սեփական մազերից թակարդ հյուսեց և աքարներ որսաց։ Վերջապես կրակ արեց և այնքան ուտելիք եփեց, որ գեներալների գլխում նույնիսկ այն միտքը ծագեց, թե արդյոք մի փոքր էլ այդ ձրիակերին բաժին չհանե՞ն։

Նայում էին գեներալները գյուղացու գործադրած ջանքերին ու նրանց սրտերն ուրախ խայտում էին։ Նրանք արդեն մոռացել էին, որ երեկ քիչ մնաց սովամահ լինեին, այլ մտածում էին՝ «Ա՛յ թե լավ բան է գեներալ լինելը, ամեն տեղ էլ գործդ հաջող է գնում»։

— Գո՞հ եք, պարոն գեներալներ,— հարցրեց նրանց ծույլ գյուղացին։

— Գոհ ենք, սիրելի բարեկամ, տեսնում ենք քո ջանքերը,— պատասխանեցին գեներալները։

— Թույլ չե՞ք տա արդյոք հիմի հանգստանամ։

— Հանգստացիր բարեկամ, միայն թե առաջ պարան հյուսիր։

Գյուղացին անմիջապես վայրի կանեփ ժողովեց, թրջեց ջրում, ծեծեց, տրորեց և երեկոյան կողմ պարանը պատրաստ էր։ Այդ պարանով գեներալները գյուղացուն ծառից կապեցին, որ չփախչի, իսկ իրենք պառկեցին քնելու։

Անցավ մեկ օր, անցավ մյուսը։ Գյուղացին այն աստիճան վարժվեց, որ նույնիսկ սկսեց ափի մեջ ապուր եփել։ Մեր գեներալները կայտառացան, կշտացան, փափկեցին, ըսպիտակեցին։ Սկսեցին խոսել, որ իրենք այդտեղ ահա ապրում են և ամեն բան պատրաստ է իրենց համար, իսկ մինչդեռ Պետերբուրգում նրանց թոշակները կուտակվում են ու կուտակվում։

— Իսկ ի՞նչ եք կարծում, ձերդ գերազանցություն, բաբելոնյան աշտարակաշինությունն իսկապես եղե՞լ է, թե դա միայն այլաբանություն է,— ասում է երբեմն գեներալներից մեկը մյուսին, նախաճաշելուց հետո։

— Կարծում եմ, ձերդ գերազանցություն, որ իսկապես եղել է, այլապես՝ հապա ինչո՞վ բացատրել, որ աշխարհում տարբեր լեզուներ գոյություն ունեն։

— Կնշանակի ջրհեղեղն է՞լ եղել է։

— Ջրհեղեղն էլ է եղել, որովհետև հակառակ դեպքում ինչով կարելի է բացատրել անդրջրհեղեղյան գազանների գոյությունը։ Մանավանդ, որ «Մոսկովսկիե Վեդոմոստում» պատմում են..

— Իսկ «Մոսկովսկիե Վեդոմոստի» չկարդա՞նք։

Գտնում են համարը, նստում են ստվերոտ մի տեղ և ըսկըսում են կարդալ, թե ինչպես են կերել Մոսկվայում, ինչպես են կերել Տուլայում, ինչպես՝ Պենզայում, ինչպես՝ Ռյազանում,— և ոչինչ, սիրտները չի խառնում։

Շատ անցավ թե քիչ, սակայն գեներալներն սկսեցին

տխրել։ Ավելի ու ավելի հաճախ սկսեցին հիշել Պետերբուրգում թողած իրենց խոհարարուհիներին և նույնիսկ միմյանցից գաղտնի լաց էին լինում։

— Հիմի ի՞նչ են անում Պոդյաչեսկիում, ձերդ գերազանցություն,— հարցնում էր մեկ գեներալը մյուսին։

— Էլ մի՛ ասեք, ձերդ գերազանցություն, սիրտս հալումաշ է լինում,— պատասխանում էր մյուս գեներալը։

— Այստեղ ապրելը շատ լավ է, խոսք չկա, բայց և այնպես, մի տեսակ, գիտեք անհարմար է խոյը մաքիից բաժանելը։ Մեկ էլ, համազգեստն ափսոս է։

— Այն էլ ինչպե՞ս։ Մանավանդ երբ չորրորդ կարգի համազգեստ է, հենց միայն կարվածքը մարդու խելք է թոցնում։

Ու սկսեցին հարկադրել գյուղացուն, թե տար, հա՛ տար մեզ Պոդյաչեսկի։ Եվ ի՞նչ. բանից պարզվեց, որ գյուղացին նույնիսկ Պոդյաչեսկին գիտե, այնտեղ եղել է, կերել է, խմել է, բայց բերանը բան չի ընկել։

— Մենք հենց Պոդյաչեսկիում ապրող գեներալներն ենք,— ուրախացան գեներալները։

— Իսկ ես, թե տեսել եք, այն մարդն եմ, որ տան դրսի կողմից պարանով կախվում է արկղի մեջ, պատերին ներկ է քսում, կամ ման է գալիս տանիքի վրա՝ ճանճի նման։ Ես հենց այն մարդն եմ,— պատասխանեց գյուղացին։

Ու սկսեց գյուղացին միտք անել, ինչպե՞ս անի, որ իր գեներալներին ուրախություն պատճառի այն բանի համար, որ նրանք իրեն, այդ ձրիակերին մարդատեղ դրեցին և նրա աշխատանքից չխորշեցին։ Եվ նավակ չինեց։ Նավակը թեպետ նավակ չէր, բայց մի այնպիսի բան էր, որ նրանով կարելի էր լողալ-անցնել օվկիանոս-ծովը և Պոդյաչեսկի հասնել։

— Տես, անզգամ, մեզ ջրում չխեղդես հա,— ասացին գեներալները, ալիքների վրա օրորվող նավակը տեսնելով։

— Ապահով եղեք, պարոն գեներալներ, առաջին անգամը չի,— պատասխանեց գյուղացին և մեկնելու պատրաստություն տեսավ։

Կարապի փափուկ աղվամազ հավաքեց գյուղացին ու նավակի հատակին փռեց։ Փռելուց հետո գեներալներին տեղավորեց հատակին և, խաչակնքելով, ճանապարհ ընկավ։

Թե ճանապարհին գեներալներն ինչքան սարսափեցին փոթորիկներից և ամեն տեսակ քամիներից, ինչքան հայհոյանք թափեցին գյուղացու գլխին իր ձրիակերության համար, ոչ պատմել կարելի է, ոչ նկարագրել։ Իսկ գյուղացին շարունակ թիավարում էր ու թիավարում և գեներալներին տառեխով կերակրում։

Ահա վերջապես և մայր Նևան, ահա և Եկատերինյան հրուշակավոր ջրանցքը, ահա և Մեծ Պոդյաչեսկին։ Զարմանքից ծափ տվեցին խոհարարուհիները՝ տեսնելով, ինչպես կուշտ, սպիտակ և ուրախ են իրենց գեներալները։ Սուրճ խմեցին գեներալները, փափուկ բուլկի կերան ու հագան համազգեստները։ Գանձատուն գնացին և թե ինչքան փող գտեցին, ոչ պատմել կարելի է, ոչ նկարագրել։

Սակայն գյուղացուն էլ չմոռացան, մի գավաթ օղի ուղարկեցին և հինգ կոպեկ արծաթ՝ ա՞ռ, գյուղացի, քե՛ֆ արա։

ԽԻՂՃԸ ԿՈՐԱՎ

Խիղճը կորավ։ Առաջվա նման մարդիկ խմբվում էին փողոցներում և թատրոններում. առաջվա նման նրանք մերթ վազում էին միմյանց ետևից, մերթ առաջ էին անցնում միմյանցից, առաջվա նման այս ու այն կողմ էին նետվում և պատառներ էին թոցնում, և ոչ ոք չէր կռահում, որ հանկարծ մի բան պակասեց և կյանքի ընդհանուր նվագախմբում մի սրինգ դադարեց նվագել։ Շատերը նույնիսկ առավել առույգ և ազատ զգացին իրենց։ Հեշտացավ մարդու ընթացքը, ավելի ճարպիկ կարողացան մերձավորի ոտքի տակը փորել, հեշտացավ շողոքորթելը, սողալը, քծնելը, լրտեսելը և զրպարտելը։ Ամեն մի ցավ հանկարծ խպառ վերացավ, մարդիկ ոչ թե քայլում էին, այլ ասես թռչում էին. ոչ մի բան չէր վշտացնում նրանց, ոչ մի բան չէր հարկադրում նրանց մտահոգվել. և՛ ներկան, և՛ ապագան — բոլորը, թվում էր, ինքն իրեն անձնատուր է լինում նրանց, այդ բախտավոր մարդկանց, որոնք չէին նկատում խղճի կորուստը։

խիղճը կորավ հանկարծ... համարյա մի ակնթարթում։ Դեռ երեկ այդ ձանձրույթ պատճառող ձրիակերը շարունակաբար կանգնած էր աչքի առաջ, շարունակաբար պատկերանում էր բորբոքված երևակայությանը, և հանկարծ... ոչի՛նչ չկա այլևս։ Անհայտացան անախորժ մտապատրանքները, և դրա հետ միասին հանդարտվեց և այն բարոյական հուզմունքը, որը բերում էր իր հետ մերկացնող, հայտնաբերող խիղճը։ Մնում էր միայն նայել ասածո աշխարհին և ուրախանալ։ Աշխարհի իմաստունները հասկացան, որ վերջապես ազատվեցին իրենց ընթացքը դժվարացնող վերջին լծից, և, իհարկե, շտապեցին օգտվել այդ ազատության պտուղներից։ Մարդիկ գազազեցին, սկսվեց թալան ու ավազակություն, սկսվեց առհասարակ քայքայում։

Իսկ թշվառ խիղճը, մինչ այդ, հանապարհի վրա պառկել էր խոշտանգված, արհամարհված, անց ու դարձ անողներից ոտնատակ եղած։ Ամեն ոք, որպես անպետք փալասի կտոր, հեռու էր նետում նրան իրենից, ամեն ոք զարմանում էր, թե ինչպե՞ս կարող է բարեկարգ քաղաքում, և այն էլ ամենարանուկ տեղում, ընկած լինել այդպիսի աղաղակող այլանդակություն։ Եվ ստված գիտե ինչքան ժամանակ այդպես ընկած կմնար զժբախտ տարագիրը, եթե նրան չըվերցներ թշվառ հարբեցողի մեկը, որը նույնիսկ այդ անպետք փալասին աչք դրեց, հույս ունենալով մի փոքրիկ շիշ օղի ստանալ փոխարենը։

Եվ հանկարծ հարբեցողն զգաց, որ իր մարմնով ասես էլեկտրական ինչ-որ հոսանք անցավ։ Պղտոր աչքերով սկսեց չորս կողմը նայել ու պարզորոշ զգաց, որ գլուխն ազատվում է գինու ազդեցությունից և աստիճանաբար վերադառնում է իրականության այն դառն գիտակցությունը, որից ազատվելու համար ծախսված էին իր էության լավագույն ուժերը։ Սկզբում նա միայն երկյուղ զգաց, այն բութ երկյուղը, որն անհանգստություն է պատճառում մարդուն՝ իրեն սպառնացող, ինչ-որ վտանգի լոկ միայն նախազգացումից, հետո հուզվեց հիշողությունը, արթնացավ երևակայությունը։ Հիշողությունն ամոթալի անցյալից անխնա դուրս էր քաշում բանուկությունների, դավաճանությունների, հոգեկան մեղկություն-

թյունների և անիրավությունների բոլոր մանրամասնությունները։ Երևակայությունը բոլոր այդ մանրամասնություններին կենդանի ձևեր էր տալիս։ Հետո ինքն իրեն արթնացավ դատաստանը...

Խղճուկ հարբեցողին իր ողջ անցյալը թվում է համատարած այլանդակ ոճրագործություն։ Նա չի վերլուծում, չի կըշռադատում, նա այն աստիճան իրեն ճնշված է զգում՝ իր առջև բացված բարոյական անկման պատկերի հանդեպ, որ ինքնադատապարտման այն գործողությունը, որին հոժարակամ ենթարկում է ինքն իրեն, անհամեմատ ավելի ուժգին ու ցավագին է հարվածում նրան, քան մարդկային ամենախստագույն դատարանը։ Նա չի կամենում նույնիսկ հաշվի առնել, որ իր անցյալի մեծագույն մասը, որի համար իրեն նզովում է այդպես, ամենևին իրեն չի պատկանում, իրեն՝ խեղճ ու թշվառ հարբեցողին, այլ պատկանում է ինչ-որ գաղտնի, հրեշավոր մի ուժի, որը քշել, առաջ է տարել իրեն, ինչպես մրրիկն անապատում չորացած խոտի չնչին շյուղերն է բերանն առած քշում։ Ի՞նչ է եղել նրա անցյալը, ինչո՞ւ նա այդպես է ապրել և ոչ այլ կերպ, ի՞նչ բան է ինքը,— սրանք այնպիսի հարցեր են, որոնց նա կարող է պատասխանել միայն զարմանքով և կատարյալ անգիտությամբ։ Լուծն է կարգավորել նրա կյանքը, լծի տակ է ծնվել նա, լծի տակ էլ և գերեզման կիջնի։ Այժմ, ահա, թեկուզ և արթնացել է գիտակցությունը, սակայն նրա ինչի՞ն է հարկավոր այդ գիտակցությունը։ Արդյո՞ք նրա համար է արթնացել, որպեսզի անագորույն հարցեր առաջարկի և նրանց պատասխանը լուությունը լինի, նրա համար, արդյո՞ք, որպեսզի խորտակված կյանքը կրկին ներխուժի արդեն ավերակ դարձած տաճարը, որն այլևս անկարող է դիմադրել նրա հորձանքին։

Ավա՜ղ, արթնացած գիտակցությունն իր հետ չի բերում նրան ո՛չ հաշտություն, ո՛չ հույսեր, իսկ դողահար խիղճը նրան միայն մի ելք է ցույց տալիս՝ ապարդյուն ինքնադատապարտման ելքը։ Առաջ էլ չորս կողմը մառախուղ էր տիրում, այժմ էլ նույն այն մառախուղն է, միայն տառապալից ուրվականներով վխտացող։ Առաջ էլ ձեռքերին ծանր շղթաներ էին շոնդում, այժմ էլ նույն այն շղթաներն են, միայն

նրանց ծանրությունը կրկնապատկվել է, որովհետև նա հասկացավ, որ դրանք շղթաներ են։ Գետի պես թափվում են հարբեցողի անօգուտ արցունքները, բարի մարդիկ կանգ են առնում և պնդում են, որ գինին է արտասվում նրա մեջ։

— Չե՛մ կարող... անտանելի՜ է,— բարձրաձայն աղաղակում է թշվառ հարբեցողը, իսկ ամբոխը հռհռում է ու ծաղրում նրան։ Ամբոխը չի հասկանում, որ հարբեցողը երբե՛ք այդպես ազատ չի եղել գինու զորությունից, ինչպես այդ բոպեին, չի հասկանում, որ նա ուղղակի դժբախտ գյուտ է արել, որը պատառ-պատառ է անում նրա խեղճ սիրտը։ Եթե ամբոխն ինքը գտած լիներ այն, ապա կիմանար, իհարկե, որ աշխարհում կա մի վիշտ, բոլոր վշտերից առավել դաժան — դա անսպասելի կերպով ձեռք բերած խղճի վիշտն է։ Ամբոխը կհասկանար, որ ինքը նույնչափ ընկճված է բեռան տակ և հոգով այլանդակված է, որչափ ընկճված և բարոյապես այլանդակված է իր առաջ այդպես աղերսող հարբեցողը։

«Ո՛չ, պետք է մի կերպ ազատվել նրանից, թե չէ շան նման կկորչես նրա հետ»,— միտք է անում թշվառ հարբեցողը և արդեն ուզում է իր գյուտը նետել ճանապարհի վրա, բայց մոտիկ կանգնած ոստիկանն արգելում է։

— Դու, բարեկամ, կարծեմ մտածել ես գաղտնի պասկվիլներ ձգելով զբաղվել,— ասում է նա, մատը վրան թափ տալով,— դրա համար անմիջապես թաղամաս կընկնես։

Հարբեցողն իր գտած փալասի կտորն շտապով թաքցնում է գրպանում և հեռանում։ Չորս կողմը նայելով ու գաղտագողի, մոտենում է նա իր վաղեմի բարկամ Պրոխորիչի գինետանը։ Սկզբում լուսամուտից զգուշաբար ներս է նայում և, տեսնելով, որ գինետանը ոչ ոք չկա, իսկ Պրոխորիչը մենմենակ ննջում է գինեսեղանի ետևը, ական թոթափել բաց է անում դուռը, ներս է վազում, և, նախքան Պրոխորիչի ուշքի գալը, զարհուրելի իրն արդեն նրա ձեռքումն է։

Միառժամանակ Պրոխորիչը կանգնած մնաց լայն բացած աչքերով, հետո քրտինքը պատեց նրան։ Այնպես թվաց իրեն, որ ինքը գաղտնի առևտուր է անում. առանց արտոնագրի, բայց, ուշադիր զննելով, համոզվեց, որ բոլոր արտոնագրերն էլ, թե կապույտ, թե կանաչ և թե դեղին, իրենց տեղն են։ Նայեց իր ձեռքում հայտնված փալասին ու թվաց, որ այն ծանոթ է իրեն։

«Էհե՜,— մտածեց նա,— մի՞թե սա հենց այն փալասն է, որից ես հազիվ կարողացա ազատվել արտոնագիր վերցնելուց առաջ։ Այո, հենց նա է, որ կա»։

Համոզվելով այդ բանում, նա անմիջապես, չգիտես ինչու, եզրակացրեց, որ այժմ արդեն սնանկանալու է։

— Երբ մարդ մի գործ է անում, և այդ ժամանակ այս տեսակ գարշելի մի բան է կպչում նրա օձիքից, նշանակում է, ամեն բան կորած է, ոչ մի բան դուրս չի գա և դուրս գալ էլ չի կարող,— խորհում էր նա համարյա մեքենայաբար և հանկարծ ամբողջապես ցնցվեց ու գունատվեց, ասես մինչ այդ անծանոթ երկյուղը նայեց նրա աչքերին։

— Բայց չէ՞ որ ավելի վատ է խեղճ ժողովրդին հարբեցնելը,— շշնջաց արթնացած խիղճը։

— Ա՜յ կին, Արինա Իվանովնա,— բացականչեց Պրոխորիչը, երկյուղից սարսափահար։

Մոտ վազեց Արինա Իվանովնան, բայց հենց որ տեսավ, թե ինչ է ձեռք բերել Պրոխորիչը, անբնական ձայնով աղաղակեց՝ «Օգնեցե՜ք, թալանում են»։

«Եվ ինչո՞ւ պետք է ես այն սրիկայի պատճառով մի բոպեում ամեն ինչից զրկվեմ»,— մտածեց Պրոխորիչը, ըստ երևույթին, ակնարկելով հարբեցողին, որ Պրոխորիչի վզին էր փաթաթել այդ գտնված իրը։ Իսկ մինչդեռ քրտինքի խոշոր կաթիլները ծածկում էին նրա ճակատը։

Մինչ այդ գինետունը քիչ-քիչ լցվում էր մարդկանցով. բայց Պրոխորիչը՝ փոխանակ իր սովորական անուշությամբ հյուրասիրելու հաճախորդներին, ի զարմանս վերջինների, ոչ միայն հրաժարվում էր նրանց գինի տալուց, այլև շատ սրբտառուչ կերպով համոզում էր, որ գինին խեղճ մարդկանց բոլոր տեսակի դժբախտությունների աղբյուրն է հանդիսանում։

— Եթե դու մեկ բաժակ խմեիր, այդ ոչինչ, դա նույնիսկ

օգտակար է,— ասում էր նա արտասվալից,— այնինչ դու աշխատում ես մի ամբողջ դույլ կուլ տաս։ Հետևանքը լինելու է այն, որ քեզ անմիջապես ոստիկանատուն են քարշ տալու, ոստիկանատանը մեջքդ դաղելու են զոլ-զոլ և այնտեղից դուրս գալուց հետո այնպես պիտի կարծես, թե մի լավ պարգև ես ստացել, այնինչ՝ ստացածդ պարգևն ընդամենը հարյուր ճիպոտն է։ Դե ուրեմն՝ դու լավ միտք արա, սիրելիս, արժի՞ արդյոք դրա համար նեղություն կրել, դեռ դառն քրտինքով աշխատածդ կոպեկներն ինձ նման հիմարին տալ։

— Ի՞նչ է պատահել քեզ, Պրոխորիչ, հո չես գժվել,— ասում էին նրան զայրմանք կտրած հաճախորդները։

— Կգժվես, սիրելիս, դեռ մի բան էլ ավելի, թե որ քեզ հետ էլ այսպիսի ձախորդություն պատահի,— պատասխանեց Պրոխորիչը։— Հապա մի տեսեք, թե այսօր ես ինչ արտոնագիր եմ ձեռք բերել։

Պրոխորիչը դուրս հանեց իր ստացած խիղճը և առաջարկեց, արդյոք հաճախորդներից ոչ ոք չի՞ ցանկանում օգտվել նրանից։ Բայց հաճախորդները՝ հասկանալով բանի էությունը, ոչ միայն համաձայնություն չհայտնեցին, այլև վախվորած խուսափեցին և հեռու բաժնվեցին։

— Ահա՞ թե ինչ արտոնագիր է,— ոչ առանց զայրույթի ավելացրեց Պրոխորիչը։

— Այժմ ի՞նչ ես անելու,— հարցրեցին նրան հաճախորդները։

— Այժմ ես այնպես եմ կարծում, որ ինձ մնում է միայն մեռնել։ Որովհետև այժմ ես այլևս խաբել չեմ կարող, խեղճ ժողովրդին հարբեցնել՝ նույնպես համաձայն չեմ։ Էլ ի՞նչ է մնում ինձ անել, եթե ոչ մեռնել։

— Խելացի որոշում է,— ծիծաղեցին նրա վրա հաճախորդները։

— Ես մինչև անգամ այժմ այսպես եմ մտածում,— շարունակեց Պրոխորիչը,— այստեղ եղած այս բոլոր ամանեղենը ջարդուփշուր անել և գինին թափել առուն։ Որովհետև նա, ով իր մեջ այս առաքինությունն ունի, նրան նույնիսկ գինու հոտը զզվանք կարող է պատճառել։

— Հապա համարձակվի՛ր այդպիսի բան անել,— առաջ եկավ, վերջապես, Արինա Իվանովնան, որի սրտում, երևում էր, չէր ծագել աստվածային այն շնորհքը, որն անակնկալ կերպով իջել էր Պրոխորիչի վրա։— Ահա՞ թե ինչ բարեգործն է լույս ընկել։

Բայց Պրոխորիչին այլևս դժվար էր զսպել։ Նա աղի արցունքներ էր թափում և շարունակ խոսում էր, շարունակ խոսում։

— Նրա համար, որ,— ասում էր նա,— ում հետ մեկ անգամ այս դժբախտությունը պատահեց, նա այդպես դժբախտ էլ մնալու է։ Եվ համարձակություն չի ունենա մտածելու, որ ինքն առևտրական է կամ վաճառական։ Որովհետև դա իզուր անհանգստություն պետք է պատճառի իրեն։ Նա միայն պետք է այն մասին մտածի, որ ինքն աշխարհիս մեջ ամենադժբախտ մարդն է և ուրիշ ոչինչ։

Այսպիսի փիլիսոփայական դատողություններով անցավ ամբողջ օրը և թեպետ Արինա Իվանովնան վճռականապես դիմադրեց իր ամուսնու մտադրությանը՝ կոտրատել ամանեղենը և գինին առուն թափել, այնուամենայնիվ, նրանք այդ օրը ոչ մի կաթիլ գինի չծախեցին։ Երեկոյան դեմ Պրոխորիչի քեֆը նույնիսկ բացվեց և քնելու պառկելիս, ասաց արտասվող Արինա Իվանովնային.

— Հոգյակս և իմ ամենասիրելի ամուսինս, թեպետև այսօր մենք ոչինչ չենք վաստակել, սակայն որչա՞փ թեթևացած է զգում մարդ իրեն, երբ խիղճ ունի։

Եվ հիրավի, պառկելուն պես անմիջապես քնեց։ Ու քնի մեջ չզառանցեց և նույնիսկ չխոմփաց, ինչպես պատահում էր առաջ, երբ նա վաստակ ուներ և խիղճ չուներ։

Բայց Արինա Իվանովնան այդ մասին մի փոքր այլ կերպ էր մտածում. նա շատ լավ էր հասկանում, որ գինեվաճառության գործում խիղճն ամենևին էլ այնպիսի մի հաճելի բան չի, որից կարելի լինի շահ սպասել, ուստի՝ որոշեց ինչ էլ ուզում է լինի, ազատվել անկոչ հյուրից։ Մի կերպ սպասեց մինչև առավոտ, բայց հենց որ գինետան փոշեծածկ լուսամուտից լույսի շողը ներս թափանցեց, նա քնած ամուսնուց գողացավ խիղճը և շտապով փողոց վազեց։

Ասես գիտավորյալ կերպով, այդ օրը շուկայի օր էր. մերձակա գյուղերից արդեն գալիս էին գյուղացիները՝ բեռնավորված սայլերով, և ինքը՝ թաղային ոստիկանապետ Լովեցն, անձամբ շուկա էր շտապում՝ կարգ ու կանոնին հետևելու։ Հազիվ էր Արինա Իվանովնան նկատել շտապով անցնող Լովեցին, որ գլխում անմիջապես երջանիկ մի միտք ծագեց։ Նա ամբողջ թափով վազեց նրա ետևից և հազիվ էր հասցրել նրան, որ անմիջապես, զարմանալի ճարպկությամբ, խիղճը զգուշաբար դրեց նրա վերարկուի գրպանը։

Չի կարելի ասել, որ Լովեցը վերջնականապես ամոթը կորցրած մարդ էր, սակայն այնքան էլ չէր սիրում իրեն ճնշել և գոփում էր բավական ազատ կերպով։ Նրա արտաքին տեսքը ոչ այնքան լպիրշ էր, որչափ շեշտակի։ Ձեռքերը ոչ այնքան հանդուգն էին, որչափ սիրով ճանկում էին այն ամենը, ինչ հանդիպում էր ճանապարհին։ Մի խոսքով, օրինավոր կաշառակերի մեկն էր։

Եվ հանկարծ այս մարդն սկսեց խղճի խայթ զգալ։

Հասավ նա շուկայի հրապարակը, և թվաց նրան, որ այն ամենը, ինչ դարսված է այնտեղ, և՛ սայլերի վրա, և՛ արկղների վրա, և՛ կրպակներում, այդ բոլորը իրենը չէ, այլ ուրիշինն է։ Առաջ երբեք նրա հետ այդպիսի բան չէր պատահել։ Տրորեց նա իր լկտի աչքերն ու մտածեց. «Հիմարացել եմ, թե՞ երազումս է կատարվում այս ամենը»։ Մոտեցավ սայլերից մեկին, ուզեց թաթը գցել ու ճանկել, սակայն ձեռքը չի բարձրանում. մոտեցավ մեկ ուրիշ սայլի, ուզեց գյուղացու մորուքը թափ տալ,— օ՜, սարսափ,— ձեռքն առաջ չի գնում։

Վախեցավ։

«Այս ի՞նչ է պատահել ինձ հետ այսօր,— մտածում է Լովեցը,— այսպես որ գնա, անշուշտ հետո էլ ամբողջ գործս փչացնելու եմ։ Լավ չի՞ լինի արդյոք տուն վերադառնամ, մինչև խելքս գլուխս գա»։

Սակայն հույս ուներ, գուցե, կանցնի։ Սկսեց ման գալ շուկայում։ Տեսնում է՝ ամեն տեսակ ուտելեղեն է դարսված, զանազան կտորեղեն է փռված, և բոլոր այդ իրերն ասում

են՝ ինչքան էլ մոտ է արմունկդ, այնուամենայնիվ, կծել չես կարող։

Իսկ մինչ այդ գյուղացիներն ավելի համարձակ էին դառնում. տեսնում են, որ մարդը ցնորվել է, իրեն պատկանող հարստության վրա աչքերն է միայն թարթում, սկսեցին կատակներ անել, Տխմար Տխմարի կանչել նրան։

«Չէ, ինչ-որ հիվանդություն է եկել վրաս»,— վճռեց Լովեցը և հենց այդպես, առանց տոպրակների, դատարկ ձեռներով տուն վերադարձավ։

Տուն է վերադառնում նա, իսկ տանը տիկին Լովչիխան սպասում է, մտածելով՝ «Տեսնենք այսօր քանի տոպրակ է բերելու ինձ իմ սիրելի ամուսինը»։ Եվ հանկարծ — ոչ մի տոպրակ էլ չկա։ Սաստիկ թունդ ելավ նրա սիրտը, բարկությամբ հարձակվեց Լովեցի վրա։

— Ո՞ւր են տոպրակները,— հարցնում է։

— Հանուն խղճի հայտնում եմ, որ...— ուզեց սկսել Լովեցը։

— Ո՞ւր են տոպրակները, հարցնում եմ քեզ։

— Հանուն խղճի հայտնում եմ, որ...— կրկին սկսեց Լովեցը։

— Դե որ այդպես է, մինչև հետևյալ շուկայի օրը, խղճովդ էլ ճաշդ արա, իսկ ես քեզ ճաշ տվողը չեմ,— վճռեց Լովչիխան։

Կորագլուխ ընկճվեց Լովեցը, որովհետև գիտեր, որ կնոջ ասածն ասած է։ Հանեց վերարկուն և հանկարծ կարծես վերափոխվեց։ Որովհետև խիղճը վերարկուի հետ միասին մընաց պատից կախված, ուստի նա իրեն դարձյալ թեթև ու ազատ զգաց, և կրկին այնպես թվաց իրեն, որ աշխարհում չկա ոչ մի բան, որ ուրիշինը լինի, այլ, որ բոլորը իրեն է պատկանում։ Ու կրկին կլանելու և հափշտակելու ընդունակ զգաց իրեն։

— Հիմի այլևս ձեռքիցս ազատվողը չեք, բարեկամներս,— ասաց Լովեցը, ձեռքերը շփելով և շտապով սկսեց վերարկուն հագնել՝ ամբողջ թափով շուկա թռչելու։

Բայց, ո՜վ հրաշք,— հազիվ էր հագել վերարկուն, որ նորից սկսեց վեհերոտել։ Ասես մեջը երկու մարդ կար, մեկը՝

առանց վերարկուի՝ անամոթ, գոփող, հափշտակող, մյուսը՝ վերարկուով՝ ամոթխած ու երկչոտ։ Թեպետ զգում է, որ դոնից դեռ դուրս չեկած, արդեն խաղաղվում է, սակայն շուկա գնալու մտադրությունից չհրաժարվեց։ Թերևս, մտածեց, հաղթահարեմ ինձ։

Բայց որչափ ավելի էր մոտենում շուկային, այնչափ ուժգին էր բաբախում սիրտը, այնչափ ավելի պահանջ էր ըզգում հաշտվելու բոլոր այդ միջակ ու փոքր մարդկանց հետ, որոնք մի գրոշ վաստակելու համար ամբողջ օրը տանջվում են անձրևի ու ձյան տակ։ Նա այն վիճակում էր գտնվում, որ ոչ միայն ուրիշների տոպրակներին աչք տնկելու ցանկություն չուներ այլևս, այլև գրպանում եղած սեփական քսակը բեռ էր դարձել իրեն, ասես նա հանկարծ հավաստի աղբյուրներից իրազեկ էր եղել, որ այդ քսակում եղած դրամը ոչ թե իրենն է, այլ ուրիշին է պատկանում։

— Ահա քեզ, բարեկամս, տասնհինգ կոպեկ,— ասում է նա, մոտենալով մի գյուղացու, դրամը նրան տալով։

— Այս ի՞նչ փող է։ Տխմար Տխմարի։

— Քեզ հասցրած առաջվա վիրավորանքների փոխարեն։ Ների՛ր ինձ՝ ի սեր Քրիստոսի։

— Աստված թողությո՛ւն անի։

Այսպես նա շրջեց ամբողջ շուկան և բաժանեց մոտը եղած բոլոր փողերը։ Սակայն, այսպես վարվելուց հետո, թեպետ և զգաց, որ սիրտը թեթևացավ, բայց խորը մտածմունքների մեջ ընկավ։

«Չէ, այսօր ինձ ինչ-որ հիվանդություն է կպել,— կրկին ասաց նա ինքն իրեն,— ավելի լավ է տուն գնամ, և, ի դեպ, ինչքան աղքատ կա, հետս տուն տանեմ և աստծու տվածից կերակրեմ»։

Ասելն ու անելը մեկ եղավ։ Անթիվ-անհամար աղքատներ հավաքեց և հետը իրենց տուն տարավ։ Լովչիխան զարմանքից ապուշ է կտրել, սպասում է, թե էլ ինչ օյիններ է հանելու։ Իսկ նա կամացուկ անցավ նրա մոտով և սիրալիր ասաց.

— Ահա, սիրելիս, այն խեղճ մարդիկ, որ դու խնդրեցիր ինձ տուն բերեմ։ Կերակրիր նրանց ի սեր Քրիստոսի։

Բայց հաղիվ էր վերարկուն մեխից կախել, որ կրկին իրեն

թեթև և ազատ զգաց։ Լուսամուտից նայում է և տեսնում, որ քաղաքի բոլոր աղքատները հավաքվել, լցվել են իր տան բակը։ Տեսնում է ու չի կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ են հավաքվել, մի՞թե դրանց բոլորին պետք է ծեծել։

— Ինչո՞ւ եք հավաքվել,— կատաղած դուրս վազեց բակը։

— Ինչպես թե ինչու են հավաքվել։ Դրանք այն խեղճ մարդիկ են, որոնց դու հրամայեցիր կերարկել,— կոպիտ պատասխանեց Լովչիխան։

— Քշե՛լ դրանց։ Վազակոթերին տալ։ Այ այդպե՛ս,— բղավեց նա անբնական ձայնով և խելագարի նման կրկին տուն ընկավ։

Երկար անց ու դարձ արեց սենյակում և շարունակ միտք էր անում, թե այդ ի՞նչ է պատահել իրեն։ Նա չափազանց ճշտապահ մարդ էր, իսկ պաշտոնական պարտականությունները կատարելու մեջ՝ ուղղակի առյուծ, բայց, հանկարծ, այսպես փալաս դարձավ։

— Ֆեդոսյա Պետրովնա, սիրելիս, կապկապիր ինձ, ի սեր աստծո, զգում եմ, այսօր այնպիսի բաներ կանեմ, որ հետո այլևս ամբողջ տարին ուղղել չի լինի,— աղերսեց նա։

Լովչիխան էլ տեսնում է, որ Լովեցի բանը վատ է։ Հագուստները հանեց, պառկեցրեց անկողնում և տաք-տաք թեյ խմեցրեց։ Քառորդ ժամից հետո միայն նա դուրս եկավ միջանցք և մտածեց՝ «հապա մի վերարկուի գրպանները նայեմ, գուցե գրոշից-բանից մնացած լինի»։ Նայեց մի գրպանը — դատարկ դրամապանակը գտավ, նայեց մյուս գրպանը — գտավ մի կեղտոտ, յուղոտած թուղթ։ Հենց որ թուղթը բաց արեց, անմիջապես սաստիկ հառաչանք դուրս թռավ կրծքից։

«Ահա՜ թե ինչով է զբաղված նա այժմ,— ասաց ինքն իրեն,— գրպանում խիղճ է պահում»։

Ու սկսեց միտք անել, թե ո՞ւմ վրա սաղացնի այդ խիղճը, որպեսզի նա ոչ թե վերջնականապես կործանվի, այլ մի փոքր անհանգիստ լինի խղճից։ Եվ եկավ այն եզրակացության, որ ամենից հարմար մարդը նախկին կապալառու, իսկ այժմ ֆինանսիստ և երկաթուղու գյուտարար[4] հրեա Շմուլ Դավիդովիչ Բրժոցսկին է։

— Նրա վիզը, համենայն դեպս, հաստ է,— վճռեց Լովչիթ խան.— գուցե մի փոքր բարակի, բայց կդիմանա։

Այսպես վճռելով, նա խիղճը զգուշորեն դրեց դրոշմված ծրարի մեջ, Բրժոցսկու հասցեն գրեց և գցեց փոստարկղը։

— Այժմ, սիրելի բարեկամս, ազատ կերպով կարող եմ շուկա գնալ,— ասաց նա ամուսնուն, տուն վերադառնալով։

Սամուիլ Դավիդիչ Բրժոցսկին ճաշի էր նստել, շրջապատված իր ամբողջ ընտանիքով։ Նրա կողքին նստած էր տասը տարեկան որդին՝ Ռուվիմ Սամուիլիչը և մտքում բանկային գործարքներ էր կատարում։

— Հայլի՛կ ջան, եթե ես քո նվիլած ոսկին շահով տամ ամսական քսան տոկոսով, տալեվելլը ինչքա՞ն փող կունենամ,— հարցրեց նա։

— Իսկ ի՞նչ տոկոսով, պա՞րզ, թե բա՞րդ,— հարցրեց իր հերթին Սամուիլ Դավիդիչը։

— Իհալկե, բալդ, հայլիկ։

— Եթե բարդ և կոտորակների հապավումներով, այդ դեպքում կստանաս քառասունհինգ ռուբլի և յոթանասունինը կոպեկ։

— Այդ դեպքում կտամ, հայլիկ ջան։

— Տուր, սիրելիս, միայն թե պետք է վստահելի գրավական վերցնել։

Մյուս կողքին նստել էր Իոսել Սամուիլիչը՝ յոթնամյա որդին և նույնպես մտքում վճռում էր «թռչում է սագերի երամը» խնդիրը։ Քիչ այն կողմ նստել էր Սոլոմոն Սամուիլիչը, նրա կողքին՝ Դավիդ Սամուիլիչը և հաշիվ էին անում, թե վերջինը առաջինին քանի տոկոս է պարտք փոխարինաբար վերցրած շաքարեղեգի համար։ Սեղանի մյուս ծայրին նստել էր Սամուիլ Դավիդիչի գեղեցիկ կինը՝ Լիա Սոլոմոնովնան՝ գիրկն առած փոքրիկ Ռիֆիկին, որը բնազդորեն թաթիկը մեկնում էր մոր բազուկները զարդարած ոսկյա ապարանջաններին։

Մի խոսքով, Սամուիլ Դավիդիչը երջանիկ էր։ Նա պատրաստվում էր ինչ-որ արտասովոր սոուս ուտելու՝ համարյա ջայլամի փետուրներով և բրյուսելյան ժապավեններով զարդարված, երբ սպասավորն արծաթյա սկուտեղի վրա դրած մի նամակ մատուցեց նրան։

Հազիվ էր Սամուիլ Դավիդիչը ձեռքն առել ծրարը, երբ անհանգիստ այս ու այն կողմ նետվեց՝ կրակի վրա խորովվող օձաձկան նման։

— Սա ի՞նչ բան է, ինչի՞ս է պետք սա,— ողբաց նա, ամբողջ մարմնով ցնցվելով։

Թեպետ ներկա գտնվողներից ոչ ոք ոչինչ չէր հասկանում այդ աղաղակներից, սակայն բոլորի համար ակնհայտ դարձավ, որ ճաշն այլևս շարունակել անհնարին է։

Ես չեմ նկարագրի այն տառապանքները, որը կրեց Սամուիլ Դավիդիչն այդ իր համար հիշատակելի օրը, սակայն այսքանը կասեմ, որ այդ՝ արտաքին տեսքից նվազ և թույլ մարդը հերոսաբար կրեց ամենաանողորմ տանջանքները, բայց նույնիսկ մեկ հատ տասնհինգ կոպեկանոց չհամաձայնեց վերադարձնել։

— Այս ինչ է որ, այս ոցինց, միայն դու ամուր բռնիր ինձ, Լիա,— հորդորում էր նա կնոջն ամենասաստիկ տագնապի ժամանակ,— և եթե ես փողի արկղը ուզեմ, ցլինի թե տաս, ավելի լավ է թող ես մեռնեմ։

Բայց որովհետև աշխարհում չկա այնպիսի դժվարին դրություն, որից դուրս գալ հնարավոր չլինի, ուստի այդ հընարը գտնվեց նաև այս դեպքում։ Սամուիլ Դավիդիչը հիշեց, որ ինքը վաղուց խոստացել է որևէ զոհաբերություն անել իր մի ծանոթ գեներալի իրավասությանը ենթակա բարեգործական մի հիմնարկի, բայց, չգիտես ինչու, շարունակ ձգձգում էր։ Եվ ահա այժմ դեպքն ուղղակի մատնանշում էր այդ վաղեմի ցանկությունն իրագործելու միջոցը։

Մտածելն ու անելը մեկ եղավ։ Սամուիլ Դավիդիչը զգուշաբար բաց արեց փոստով իրեն ուղարկած ծրարը, ունելիով հանեց միջից խիղճը, ուրիշ ծրարի մեջ դրեց, վրան ավելացրեց նաև մեկ հատ հարյուրանոց թղթադրամ, կնքեց և գնաց ծանոթ գեներալի մոտ։

— Կամենում եմ, ձերդ գերազանցություն, նվիրաբերություն անել,— ասաց նա, ծրարը դնելով ուրախությունից ժպտացող գեներալի առաջ։

— Շատ լավ, շատ գովելի գործ է,— ասաց գեներալը,— ես միշտ գիտեի, որ դուք... որպես հրեա... և Դավիթի օրենքի համաձայն... խաղ ու պարով... այդպե՞ս է կարծեմ։

Գեներալը շփոթվեց, որովհետև չգիտեր հավաստի կերպով իրոք Դավիթն էր օրենքներ հրատարակել, թե՞ մեկ ուրիշը։

— Միշտ այդպես, միայն թե մենք ի՞նչ հրեաներ ենք, Ձերդ գերազանցություն,— շտապեց հայտարարել Սամուիլ Դավիդիչը, արդեն բոլորովին թեթևացած։— Մենք միայն արտաքուստ ենք հրեա, իսկ հոգով ամբողջապես-ամբողջապես ռուս ենք։

— Շնորհակալ եմ,— ասաց գեներալը,— միայն մի բան եմ ափսոսում... իբրև քրիստոնյա... ինչո՞ւ դուք, օրինակ... հը՞...

— Ձերդ գերազանցություն... մենք միայն արտաքուստ... պատվով եմ երդվում, միայն արտաքուստ։

— Սակա՞յն։

— Ձերդ գերազանցությո՞ւն։

— Լավ, լավ, տերը ձեզ հետ։

Սամուիլ Դավիդիչը տուն թռավ, ասես թև առած։ Այդ իսկ գիշեր նա բոլորովին մոռացավ իր կրած տառապանքները և այնպիսի անլուր գործարք մտածեց ի վնաս բոլորի, որ մյուս օրը, երբ իմացան այդ մասին, բոլորն էլ զարմանքից քար կտրեցին։

Եվ երկար այդպես թափառեց թշվառ, հալածված խիղճն աշխարհիս երեսին, և շատ հազարավոր մարդկանց մոտ եղավ։ Բայց ոչ ոք չէր կամենում պատսպարել նրան, այլ բոլորը, ընդհակառակը, այն մասին էին մտածում, թե ինչպես ազատվեն նրանից և թեկուզ խաբեբայությամբ, հեռացնեն իրենցից։

Վերջապես խիղճն ինքն էլ ձանձրացավ, որ գլուխ դնելու տեղ չունի և պետք է իր օրն անցկացնի ուրիշ մարդկանց դռներում, առանց ապաստարանի։ Եվ ահա աղերսեց նա իր վերջին տանտիրոջը, մի քաղքենու, որը փողոցում թոզ էր

ծախում և ոչ մի կերպ չէր կարողանում այդ առևտրով հարստանալ։

— Ինչո՞ւ եք ինձ շարչարում,— գանգատվեց թշվառ խիղճը,— ինչո՞ւ եք ինձ դես ու դեն քշում։

— Ի՞նչ անեմ ես քեզ, տիրուհի-խիղճ, երբ ոչ ոքի դու պետք չես,— իր հերթին հարցրեց քաղքենին։

— Ահա՜ թե ինչ,— պատասխանեց խիղճը,— գտի՛ր ինձ համար մի ռուս մանկիկ, բաց արա նրա մաքուր սիրտն իմ առաջ ու թաղիր ինձ այնտեղ։ Գուցե նա, այդ անմեղ մանուկն ինձ պատսպարի ու խնամի, թերևս նա, հասակն առնելու հետ վեր հանի ինձ և ապա, գուցե, առանց ինձանից գարշելու, ինձ հետ միասին մարդկանց մեջ դուրս գա։

Այնպես, ինչպես ասել էր, այդպես էլ եղավ։ Քաղքենին մի ռուս մանկիկ գտավ, բաց արեց նրա մաքուր սիրտը և խիղճը թաղեց այնտեղ։

Մեծանում է փոքրիկ մանկիկը և նրա հետ միասին մեծանում է նաև խիղճը։ Եվ մեծ մարդ կդառնա փոքրիկ մանուկն ու նա մեծ խիղճ կունենա։ Եվ այն ժամանակ կվերանան բոլոր անիրավությունները, նենգությունները ու բռնությունները, որովհետև խիղճն այլևս երկչոտ չի լինի, այլ կցանկանա ամեն ինչ ինքը անել։

ՎԱՅՐԻ ԾԱՂԻԿԸ

Լինում է, չի լինում, ինչ-որ մի թագավորության մեջ, ինչ-որ մի պետության մեջ մի կալվածատեր է լինում։ Ապրում էր այդ կալվածատերը և, աշխարհին նայելով, ուրախանում էր։ Ամեն ինչ ուներ առատորեն՝ և՛ գյուղացիներ, և՛ հաց, և՛ անասուն, և՛ հող, և՛ այգիներ։ Սակայն այդ կալվածատերը հիմար էր, «Համբավաբեր»[5] էր կարդում և ուներ սպիտակ, թխլիկ ու փխրուն մարմին։

Մեկ անգամ այդ կալվածատերն աղերսեց աստծուն.

— Տեր աստված, շատ գոհ եմ ես քեզանից, ամեն բանով պարգևատրված եմ, միայն մի բան է անտանելի իմ սիրտ-

տի համար, այդ այն է, որ մեր թագավորության մեջ չափից շատ գյուղացի է բազմացել։

Բայց աստված գիտեր, որ այդ կալվածատերը հիմար է, ուստի չլսեց նրա խնդիրքը։

Տեսնում է կալվածատերը, որ գյուղացին օրեցօր ոչ թե պակասում, այլ ավելանում է ու ավելանում. տեսնում է, վախենում՝ չլինի՞ թե նա իմ բոլոր հարստությունը ուտի-սպառի։

Բաց է անում կալվածատերը «Համբավաբեր» լրագիրը, տեսնելու՝ թե այդպիսի դեպքում ինչպես պիտի վարվի և կարդում է. «Ջանա՛»։

— Մի խոսք է գրված միայն,— ասում է հիմար կալվածատերը,— բայց ոսկի խոսք է։

Եվ սկսեց ջանալ, այն էլ ոչ թե այնպես, պատահական կերպով, այլ օրենքով։ Գյուղացու հավը մտնում է կալվածատիրոջ վարսակի արտը, նա անմիջապես բռնում է և, ըստ օրենքի, արգանակի մեջ գցում. պատահում է՝ գյուղացին գաղտնաբար փայտ է կտրում կալվածատիրոջ անտառում,— իսկույն այդ նույն փայտը կալվածատիրոջ բակն է բերվում, իսկ փայտ կտրողից, օրենքի համաձայն, տուգանք է վերցվում։

— Ավելի շատ ես այժմ այդ տուգանքներով եմ նրանց վրա ազդում,— ասում է կալվածատերն իր հարևաններին,— որովհետև դա ավելի հասկանալի է նրանց համար։

Գյուղացիները տեսնում են, որ թեպետև հիմար է իրենց կալվածատերը, բայց մեծ բանականություն է տված նրան։ Այնպես է կտրել նա իրենց չորս կողմը, որ ոտ դնելու տեղ չի մնացել։ Ուր էլ դառնում ես, ամեն ինչ չի՛ կարելի, չի թույլատրված, ձե՛ր չէ։ Անասունը ջուր խմելու է գնում գետը — կալվածատերը գոռում է՝ «ջուրը իմն է», հավն է անցնում ցանկապատից այն կողմ — կալվածատերը բղավում է՝ «հողը իմն է»։ Ե՛վ հողը, և՛ ջուրը, և՛ օդը — բոլորը նրանը դարձավ։ Մարխ էլ չմնաց՝ գյուղացին վառի, ոստ չմնաց՝ խրճիթն ավլի։ Ուստի և գյուղացիներն ամբողջ համայնքով աղերսեցին աստծուն.

— Տե՛ր աստված, ավելի լավ է մենք մեր մանր երե-

խաներով ոչնչանանք, քան մեր ամբողջ կյանքում այսպես տանջվենք։

Ողորմած աստված լսեց որբուկների աղոթքը, և հիմար կալվածատիրոջ ամբողջ հողերի վրա ոչ մի գյուղացի չըմնաց։ Թե ինչ եղավ գյուղացին, այդ բանը ոչ ոք չտեսավ, միայն տեսան, ինչպես մղեղի հողմ բարձրացավ, և օդում սև ամպի նման սլացան գյուղացիների կտավե վարտիքները։ Կալվածատերը դուրս եկավ պատշգամբ, քթով հոտ առավ և զգում է, որ իր կալվածքներում օդը խիստ մաքրվել է։ Բնականաբար, գոհ եղավ։ Միտք է անում՝ այ, հիմի ես կքնքշացնեմ իմ սպիտակ մարմինը, սպիտակ մարմի՞նս թխլիկ ու փխրուն։

Ու սկսեց ապրել իր քեֆին և միտք անել, թե ինչով սփոփի իր հոգին։

«Թատրոն կհիմնեմ,— մտածում է։— Կգրեմ դերասան Սադովսկուն[6], թե՝ եկ, սիրելի բարեկամս, և դերասանուհիներ բեր հետդ»։

Լսեց նրան դերասան Սադովսկին, ինքը եկավ և դերասանուհիներ բերեց հետը։ Միայն թե տեսնում է, որ կալվածատիրոջ տունը դատարկ է, թատրոնը սարքող, վարագույրը բարձրացնող չկա։

— Ո՞ւր են քո գյուղացիները,— հարցնում է Սադովսկին կալվածատիրոջը։

— Աստված լսեց իմ աղոթքը և իմ բոլոր կալվածքները մաքրեց գյուղացիներից։

— Սակայն, եղբայր, հիմար կալվածատեր ես եղել։ Հապա ո՞վ է քեզ ջուր տալիս՝ լվացվելու։

— Քանի օր է արդեն անլվա եմ մնացել։

— Նշանակում է, ուզում ես դեմքիդ վրա ագարիկո՞ն բուսեցնես,— ասաց Սադովսկին, և այդ ասելով, ինքն էլ մեկնեց, դերասանուհիներին էլ տարավ։

Կալվածատերը հիշեց, որ մոտակայքում չորս ծանոթ գեներալ կա, մտածում է՝ «Ինչ եմ ես շարունակ թուղթ բաց անելով զբաղվել, ավելի լավ է փորձեմ գեներալներին կանչեմ և հետները մեկ-երկու շրջան թուղթ խաղամ»։

Ասելն ու անելը մեկ եղավ։ Հրավիրատոմս գրեց, օր նը-

շանակեց և նամակներն ուղարկեց ըստ հասցեների։ Գեներալները թեպետև իսկական էին, բայց սոված գեներալներ էին, ուստի շատ շուտով ժամանեցին։ Ժամանեցին և շատ զարմացան, որ օդն այդչափ մաքուր է։

— Այդ նրանից է,— պարծեցավ կալվածատերը,— որ աստված լսեց իմ աղոթքը և իմ բոլոր կալվածքները մաքրեց գյուղացիներից։

— Ա՜խ, ինչ լավ է,— գովում են կալվածատիրոջը գեներալները,— նշանակում է այսուհետև ձեզ մոտ այլևս երբեք ճորտերի հոտ չի՞ գա։

— Ամենևին,— պատասխանեց կալվածատերը։

Սկսեցին խաղալ մի շրջան, երկու շրջան. գեներալներն զգում են, որ իրենց օդի խմելու ժամանակն է, անհանգստանում են, չորս կողմն են նայում։

— Երևի դուք, պարոնայք գեներալներ, նախաճաշել եք ուզում,— հարցնում է կալվածատերը։

— Վատ չի լինի, պարոն կալվածատեր։

Վեր կացավ կալվածատերը տեղից, մոտեցավ պահարանին և այնտեղից ամեն մեկի համար մի-մի սառնաշաքար ու մի-մի հատ կարկանդակ հանեց։

— Սա ի՞նչ բան է,— հարցնում են գեներալները, զարմանքով նրան նայելով։

— Ահա, կերեք, ինչ տվել է աստված։

— Մեզ համար մսից-բանից լիներ։ Մսից-բանից։

— Միս չունեմ, պարոնայք գեներալներ, որովհետև այն օրվանից, երբ աստված ինձ ազատեց գյուղացիներից, խոհանոցում վառարանն առանց վառելու է մնացել։

Բարկացան գեներալները նրա վրա, այնպես, որ նույնիսկ նրանց ատամները կափկափեցին։

— Բայց չէ՞ որ ինքդ մի բան խժռում ես,— հարձակվեցին նրա վրա գեներալները։

— Հում բաներով մի կերպ յոլա եմ գնում, մեկ էլ առայժմ դեռ կարկանդակ կա։

— Սակայն դու հիմար կալվածատեր ես եղել,— ասացին գեներալները և, խաղը կիսատ թողնելով, իրենց տները վերադարձան։

Տեսնում է կալվածատերը, որ իրեն արդեն երկրորդ անգամ հիմար անվանեցին, ուզում է մտածել այդ մասին, բայց որովհետև այդ ժամանակ աչքովն ընկան խաղաթղթերը, ուստի ձեռք թափ տվեց ամեն բանի վրա և սկսեց թուղթ բաց անել։

— Տեսնենք,— ասում է,— պարոնայք ազատամիտներ, ով ում կհաղթի։ Ես ձեզ կապացուցեմ, թե ինչ կարող է անել հոգու իսկական անսասանությունը։

Թուղթ է բաց անում և մտածում է՝ «Եթե իրար ետևից երեք անգամ դուրս գա, նշանակում է ուշադրություն չպետք է դարձնել»։ Եվ կարծես հակառակի նման, քանի անգամ էլ բաց է անում, շարունակ դուրս է գալիս ու դուրս է գալիս։ Նույնիսկ ոչ մի կասկած չմնաց մեջը։

— Եթե ինքը բախտն է մատնանշում,— ասում է,— նշանակում է պետք է ամուր մնալ մինչև վերջը։ Իսկ առայժմ բավական է թուղթ բաց անելը, գնամ՝ աշխատեմ։

Եվ ահա քայլում է նա սենյակներում, հետո նստում է ու մնում նստած։ Ու շարունակ մտածում է։ Մտածում է, ինչ մեքենաներ է դուրս գրելու Անգլիայից, որպեսզի ամեն բան շոգիով արվի, շոգիո՜վ, իսկ ճորտերի հոտն ամենևին չլինի։ Մտածում է, ինչ պտղատու այգի է գցելու. ահա այստեղ տանձենիներ կլինեն, սալորիներ, ահա այնտեղ դեղձեր, այնտեղ՝ կաղին։ Լուսամուտից դուրս է նայում և տեսնում է, կարծես արդեն ամեն ինչ այնպես է, ինչպես ինքը ծրագրել է։ Տանձի, ծիրանի, դեղձի ծառերը պտուղների ծանրությունից ճղակոտոր են լինում, իսկ ինքը մեքենայով հավաքում է պտուղներն ու բերանն է դնում։ Մտածում է, այնպիսի կովեր կպահի, որ ոչ կաշի, ոչ միս ունենան, այլ միայն և միայն կաթ։ Մտածում է, այնպիսի ելակ կցանի, որ բոլորը կրկնակի ու եռակի, հինգ հատ մի ֆունտ կշռող պտուղ կտան. և ինչքա՜ն կծախի նա այդ ելակից Մոսկվայում։ Վերջապես հոգնում է մտածելուց, մոտենում է հայելուն՝ մեջը նայելու, իսկ հայելու վրա մի վերջոկ փոշի է նստել...

— Սե՛նկա,— ձայն է տալիս նա հանկարծ, մոռանալով, բայց հետո հիշում է և ասում՝ դե, թող միառժամանակ այս-

պես մնա, սակայն ես ցույց կտամ այդ ազատամիտներին, թե ինչեր կարող է անել հոգու անսասանությունը։

Այսպիսով անց էր կացնում օրը, մինչև մութն ընկնելն, ու քնում էր։

Իսկ քնած ժամանակ ավելի ուրախ երազներ էր տեսնում, քան արթուն ժամանակ։ Երազում տեսնում էր, որ նահանգապետն ինքն իմացել է նրա այդօրինակ կալվածատիրական անդրդվելիության մասին ու հարցնում է գավառական ոստիկանապետին. «Այդ ի՞նչ հաստատակամ շան որդի է լույս ընկել ձեր գավառում»։ Հետո տեսնում է, որ իրեն իր այդ անդրդվելիության համար մինիստր են դարձրել, և նա զարդարվել է ժապավեններով ու շրջաբերականներ է գրում՝ «լինել անսասան և մտիկ չանել»։ Հետո տեսնում է, որ քայլում է Եփրատի ու Տիգրիսի ափերին....

— Այսպես, բարեկամս,— ասում է նա։

Բայց ահա երազներն էլ բոլորը տեսել-վերջացրել է և ժամանակ է վեր կենալու։

— Սե՛նկա,— կրկին կանչում է նա, մոռանալով, բայց հանկարծ հիշում է... և տրտում կախ է գցում գլուխը։

— Ինչո՞վ զբաղվեմ,— հարցնում է նա ինքն իրեն։— Դոնե թեկուզ չար սատանայի մեկը պատահական գար։

Եվ ահա նրա այդ խոսքի վրա հանկարծ գալիս է ինքը՝ գավառական գնդապետ-ոստիկանապետը։ Անասելի ուրախացավ հիմար կալվածատերը, վազ տվեց պահարանի մոտ, երկու հատ կարկանդակ հանեց և մտածում է՝ «Սա, կարծեմ, գոհ կմնա»։

— Ասացեք խնդրեմ, պարոն կալվածատեր, այդ ի՞նչ հրաշքով ձեր բոլոր ժամանակավորապես-պարտատեր[8] գյուղացիները հանկարծ չքացան,— հարցնում է ոստիկանապետը։

— Այսպես ու այսպես, աստված իմ աղոթքով իմ բոլոր կալվածքները բոլորովին մաքրեց գյուղացիներից։

— Այդպես, իսկ հայտնի՞ է արդյոք ձեզ, պարոն կալվածատեր, թե ո՞վ պետք է նրանց փոխարեն հարկերը վճարի։

— Հարկերը... Նրա՛նք, նրանք իրե՛նք պետք է վճարեն, դա նրանց սրբազան պարտքն է ու պարտավորությունը։

— Այդպես, իսկ ի՞նչ ձևով կարելի է այդ հարկը նրանցից գանձել, եթե նրանք, ձեր աղոթքով, ցրվել են աշխարհի երեսով մեկ։

— Դա արդեն... չգիտեմ... ես իմ կողմից համաձայն չեմ վճարել։

— Իսկ հայտնի՞ է ձեզ, պարոն կալվածատեր, որ գանձարանն առանց հարկերի ու տուրքերի, և՛ս առավել առանց խմիչքի և աղի մաքսի, գոյություն ունենալ չի կարող։

— Ես դե՛մ չեմ... ես պատրա՞ստ եմ. մի գավաթ օղի... ես կվճարեմ։

— Իսկ դուք գիտե՞ք, որ ձեր շնորհիվ մեր շուկայում ո՛չ մի կտոր միս, ոչ մի ֆունտ հաց առնել չի կարելի։ Դուք գիտե՞ք՝ ի՞նչ հոտ է գալիս դրանից։

— Ներեցեք, ես իմ կողմից պատրաստ եմ զոհաբերելու։ Ահա երկու ամբողջ կարկանդակ։

— Հիմար եք դուք, պարոն կալվածատեր,— ասաց ոստիկանապետը, շուտ եկավ ու մեկնեց, նույնիսկ առանց կարկանդակներին նայելու։

Շատ խորը մտածմունքների մեջ ընկավ այս անգամ կալվածատերը։ Ահա արդեն երրորդ մարդն է, որ իրեն հիմար պատվանշանով է մեծարում, երրորդ մարդն է, որ նայում է, նայում իր վրա, թքում է ու հեռանում։ Մի՞թե ինքն իսկապես հիմար է, մի՞թե իր անդրդվելիությունը, որն այնպես փայփայում էր նա իր հոգում, սովորական լեզվով հիմարություն և անմտություն է նշանակում միայն, և մի՞թե իր անդրդվելիության հետևանքով դադարել են և՛ հարկերը, և՛ մաքսերը, և շուկայում ոչ մի ֆունտ ալյուր, ոչ մի կտոր միս ձեռք բերել հնարավոր չէ։

Եվ որովհետև հիմար կալվածատեր էր, ուստի և սկզբում նույնիսկ զոհունակությունից փոթկացրեց այն մտքից, թե ինչ օյին խաղաց ինքը, բայց հետո՝ հիշելով ոստիկանապետի խոսքերը՝ «իսկ գիտե՞ք՝ ի՞նչ հոտ է գալիս դրանից»,— սաստիկ վախեցավ։

Սկսեց իր սովորությամբ ետ ու առաջ քայլել սենյակում

և շարունակ միտք էր անում. «Արդյոք ի՞նչ հոտ է գալիս. աքսորի հոտ չի՞ գալիս արդյոք։ Օրինակ, Չեբոկսարում, կամ թե, գուցե, Վարնավինում»։

— Թեկուզ և Չեբոկսարի, համենայն դեպս, աշխարհը կհամոզվի, թե ի՞նչ է նշանակում հոգու անսասանությունը,— ասում էր կալվածատերը, իսկ ինքը գաղտնաբար միտք էր անում. «Չեբոկսարում ես, գուցե, իմ սիրելի գյուղացուն տեսնեմ»։ Քայլում է կալվածատերը, նստում է ու կրկին քայլում է։ Ինչ բանի որ մոտենում է, ամեն ինչ, թվում է, ասում է նրան՝ հիմար մարդ ես դու, պարոն կալվածատեր։ Տեսնում է, սենյակով մի մուկ է վազում և տապ-տապելով մոտենում է խաղաթղթերին, որով նա թուղթ է բաց անում և որոնք արդեն այնքան են յուղոտվել, որ գրգռել են մկան ախորժակը։

— Քշ՜,— հարձակվեց նա մկան վրա։

Բայց մուկը խելացի էր և հասկանում էր, որ կալվածատերն առանց Սենկայի իրեն ոչ մի վնաս հասցնել չի կարող։ Նա միայն պոչը շարժեց կալվածատիրոջ ահեղ բացականչությանն ի պատասխան և մի ակնթարթ հետո արդեն նայում էր նրան բազմոցի տակից, կարծես ասելով՝ սպասիր, հիմար կալվածատեր, դեռ ինչե՞ր է լինելու, ես ոչ միայն խաղաթղթերը, այլև քո խալաթն եմ կրծելու, երբ, ինչպես հարկն է, կկեղտոտես այն։

Շատ անցավ, թե քիչ, միայն կալվածատերը տեսնում է, որ այգու ճանապարհները կատուկերով են ծածկվել, թփերի մեջ օձեր և ամեն տեսակ սողուններ են խլրտում, իսկ պուրակում վայրի գազաններն են ոռնում։ Մեկ անգամ արջը մոտեցավ կալվածատանը, նստեց ետևի թաթերի վրա, նայում է կալվածատիրոջն ու թուքն է կուլ տալիս։

— Սե՛նկա,— բացականչեց կալվածատերը, բայց հանկարծ հիշեց... ու լաց եղավ։

Սակայն, հոգու անսասանությունը դեռևս չէր լքում նրան։ Մի քանի անգամ նա ընկճվեց, բայց հենց որ զգում էր, սիրտն սկսում է թուլանալ, անմիջապես վերցնում էր «Համբավաբերն» ու ակնթարթորեն կրկին դազաղում էր։

— Ո՛չ, ավելի լավ է վայրենանամ, ավելի լավ է վայրի

գազանների հետ թափառեմ անտառներում, բայց ոչ ոք չասի, որ ռուս ազնվական իշխան Ուրուս-Կուչում-Կիլիբաևը սկզբունքներից հրաժարվեց։

Եվ ահա նա վայրենացավ։ Թեպետ այդ ժամանակ արդեն աշուն էր, և օրինավոր սառնամանիք էր սկսվել, բայց նա նույնիսկ ցուրտ չէր զգում։ Ամբողջովին, գլխից սկած մինչև ոտները, մազով ծածկվեց, ասես նախնադարյան Եսավի նման, իսկ եղունգները երկաթի նման կարծրացան։ Քթի մաքրելը վաղուց էր դադարել, քայլում էր ավելի շորեքթաթ և նույնիսկ զարմանում էր, ինչպես նա առաջ չէր նկատում, որ զրոսանքի այդ ձևն ամենից վայելուչ և ամենից հարմար ձևն է։ Կորցրեց նույնիսկ հասկանալի ձայներ արտասանելու ընդունակությունը և յուրացրեց մի ինչ-որ յուրատեսակ հաղթական բացականչություն — մի տեսակ միջին ձայն սուլոցի, թշշոցի ու հաչոցի։ Բայց պոչ դեռ ձեռք չէր բերել։

Իջնում էր իր պուրակը, ուր մի ժամանակ գգվում էր իր սպիտակ, փխրուն, թխլիկ մարմինը, կատվի նման մի ակնթարթում թռչում էր ծառի ամենաբարձր գագաթն ու այնտեղ նստած, հսկում։ Վազելով գալիս էր նապաստակը, կանգնում ետևի թաթերի վրա և ականջ էր դնում՝ արդյոք իրեն վտանգ չի՞ սպառնում որևէ կողմից, իսկ կալվածատերը նետի նման ցած էր թռչում ծառից, բռնում որսը, եղունգներով հոշոտում և հենց այդպես փորոտիքով, նույնիսկ մորթիով ուտում։

Եվ սոսկալի ուժ ձեռք բերեց. այնչափ ուժեղ էր, որ նույնիսկ իրավունք համարեց բարեկամական հարաբերություններ սկսել նույն այն արջի հետ, որը մի ժամանակ լուսամուտից իրեն էր նայում։

— Ուզում ես, Միխայլո Իվանիչ, միատեղ արշավանք սկսենք նապաստակների դեմ,— ասաց նա արջին։

— Ուզելն ինչո՞ւ չեմ ուզում,— պատասխանեց արջը,— Միայն թե, եղբայր, դու գյուղացուն իզուր ոչնչացրիր։

— Ինչո՞ւ որ։

— Որովհետև գյուղացուն ուտելը շատ ավելի հարմար էր, քան ձեզ՝ ազնվականներիդ։ Ուստի ուղղակի կասեմ քեզ,

որ դու հիմար կալվածատեր ես, թեպետև իմ ընկեր բարեկամն ես։

Մինչդեռ կապիտան-ոստիկանապետը, թեպետև կալվածատերերին հովանավորում էր, բայց այդպիսի փաստի դեմ, ինչպիսին աշխարհի երեսից գյուղացու անհայտանալու փաստն էր, լուռ մնալ չհամարձակվեց։ Նրա զեկուցումներից անհանգստացավ նաև նահանգական իշխանությունը, գրեց նրան. «Իսկ ի՞նչ եք կարծում, ո՞վ պետք է այժմ հարկերը վճարի, ո՞վ պետք է գինետներում գինի-օղի խմի, ո՞վ պետք է անմեղ զբաղմունքներով զբաղվի»։ Կապիտան-ոստիկանապետը պատասխանում է. «Գանձատունն այժմ պետք է վերացնել, իսկ անմեղ զբաղմունքներն իրենք իրենց արդեն վերացել են, և նրանց փոխարեն գավառում տարածվել են թալանը, ավազակությունն ու սպանությունը։ Օրերս նույնիսկ իրեն՝ ոստիկանապետին մի ինչ-որ արջ էր, թե մարդ էր, քիչ էր մնում պատառ-պատառ աներ, և կասկածում է ինքը, որ այդ մարդ-արջը նույն այն հիմար կալվածատերն է, որը պատճառ է եղել այս ամբողջ խռովության»։

Անհանգստացան կառավարիչները և խորհուրդ հրավիրեցին։ Որոշեցին՝ գյուղացուն որսալ և վերադարձնել իր տեղը, իսկ հիմար կալվածատիրոջը, որն ամբողջ խռովության պատճառն է հանդիսացել, ամենամեղմ ձևով ներշնչել, որ նա իր սնապարծությունը թողնի և հարկերը գանձատուն մուծելուն արգելք չհանդիսանա։

Կարծես դիտմամբ, այդ իսկ ժամանակ նահանգական քաղաքով թռչում էր գյուղացիների եռապատկված պարսը, ծածկելով շուկայի ողջ հրապարակը։ Անմիջապես այդ աստվածային տուրքը հավաքեցին, զամբյուղների մեջ դրեցին և ուղարկեցին գավառ։

Եվ հանկարծ կրկին այն գավառում մղեղի և մուշտակի հոտ կանգնեց, բայց և միաժամանակ շուկայում երևաց և՛ ալյուր, և՛ միս, և՛ ամեն տեսակ կենդանիներ ու թռչուններ, և մի օրվա մեջ այնքան հարկ հավաքվեց, որ գանձապահն, այդչափ դրամը տեսնելով, զարմանքից ձեռքերը խփեց միմյանց ու բացականչեց.

— Եվ ո՞րտեղից եք վերցնում դուք, անզգամներ։

Իսկ ի՞նչ եղավ կալվածատերը,— կհարցնեն ինձ ընթերցողները։ Այդ հարցին կարող եմ պատասխանել, որ թեպետ մեծ դժվարությամբ, բայց և այնպես նրան էլ բռնեցին։ Բռնելուց հետո անմիջապես քիթը մաքրեցին, լողացրին և եղունգները կտրեցին։ Հետո կապիտան-ոստիկանապետը նրան համապատասխան ներշնչում արեց, խլեց «Համբավաբեր» լրագիրը և, Սենկայի հսկողությանը հանձնելով, մեկնեց։

Նա մինչև այժմ էլ կենդանի է։ Թուղթ է բաց անում, կարոտում է անտառներում անցկացրած կյանքին, լվացվում է միայն հարկադրաբար և ժամանակ առ ժամանակ բառաչում է։

1880—1886

ԻՄԱՍՏՈՒՆ ԾԱՆԾԱՂՈՒԿԸ

Լինում է չի լինում մի ծանծաղուկ։ Այդ ծանծաղուկի հայրն էլ, մայրն էլ խելոք ձկներ են լինում։ Նրանք շատ ու շատ տարիներ հանգիստ ու խաղաղ ապրեցին գետում և ոչ ձկնապուրի մեջ ընկան, ոչ էլ գայլաձկան որկորին զոհ գընացին։ Որդուն էլ նույնը կտակեցին։ «Տես, զավակս,— ասաց ծեր ծանծաղուկը մեռնելիս,— թե ուզում ես ուրախ ու անհոգ ապրել, միշտ պետք է զգաստ լինես»։

Իսկ երիտասարդ ծանծաղուկի խելքն անհուն ծով էր։ Իր այդ խելքով սկսեց նա ծանր ու թեթև անել և եկավ այն եզրակացության, որ ինչ էլ անի, միևնույն է, իր բանը բուրդ է։ Ջրի մեջ իր չորս կողմը մեծ-մեծ ձկներ են լողում, իսկ ինքն ամենից փոքրն է, ամեն ձուկ կարող է իրեն կուլ տալ, բայց ինքը ոչ մեկին կուլ տալ չի կարող։ Մանավանդ չի էլ հասկանում, թե ի՞նչ կարիք կա կուլ տալու։ Խեցգետինը կարող է նրան իր աքցանաձև ճանկերով միջից կես անել, ջրալուն կարող է ողնաշարի մեջ խրվել և մահու չափ տանջել։ Մինչև անգամ իր հարազատ ծանծաղուկներն էլ, երբ տեսնում են ինքը մի մոծակ է բռնել, ամբողջ խմբով վրա են թափվում, որ ձեռքից խլեն։ Խլում են ու սկսում են մի-

մյանց հետ կռիվ անել, զուր տեղը մոծակն են գզում-գրզգրզում։

Հապա մա՞ղը։ Այդ ի՞նչ նենգամիտ արարած է, ի՞նչ խարդախություն ասես չի հնարում, որպեսզի նրան, խեղճ ծանծաղուկին, անմեղ տեղը ոչնչացնի։ Է՛լ ուռկան, է՛լ թոռ, է՛լ թառի, և վերջապես... կա՛րթը։ Թվում է, կարթից էլ հիմար բան չի կարող լինել։ Թել է, թելի ծայրին՝ կեռ, կեռի վրա՝ ճիճու կամ ճանճ խփած... Այն էլ ինչպե՞ս խփած... Կարելի է ասել, ամենաանբնական դիրքով։ Մինչդեռ՝ ծանծաղուկներն ամենից շատ հենց կարթով են բռնվում։

Ծերունի հայրը շատ անգամ էր նրան զգուշացրել կարթից։ «Ամենից ավելի կարթից վախեցիր,— ասում էր,— որովհետև, թեպետ կարթը շատ հիմար գործիք է, բայց ինչ որ հիմար է, հենց այն էլ ամենից ավելի է քանդում ծանծաղուկների տունը։ Մի ճանճ են գցում քեզ, այնպես ես կարծում՝ ուզում են քեզ հյուրասիրել, բայց բերանդ ես առնում թե չէ, հենց այդ ճանճն էլ քո մահվան պատճառն է դառնում»։

Պատմել էր ծերունին նմանապես, թե ինչպես ինքը մեկ անգամ քիչ էր մնացել ձկնապուրի մեջ ընկներ։ Այն ժամանակ ձկներին որսում էին մեծ բազմությամբ։ Գետի ամբողջ լայնությամբ ուռկան էին գցել և երկու վերստաչափ այդպես քարշ տվեցին ուռկանը գետի հունով։ Այնքան ձուկ ընկավ ուռկանը, որ էլ թիվ ու համար չկար։ Է՛լ գայլաձուկ, է՛լ ձողաձուկ, է՛լ սպիտուկ, է՛լ կարմրակն ու քարթակ. նույնիսկ ծույլ ճանառներին դուրս քաշեցին տիղմի միջից։ Իսկ ծանծաղուկների հաշիվը կորել էր։ Թե ի՞նչ ահ ու դողի մեջ էր ինքը՝ ծեր ծանծաղուկը, քանի դեռ իրենց քարշ էին տալիս գետի միջով, ոչ պատմել կարելի է, ոչ նկարագրել։ Զգում է, որ իրեն տանում են, բայց թե ո՞ւր են տանում, չգիտե։ Տեսնում է, որ իր մեկ կողմը — գայլաձուկն է, մյուս կողմը — ձողաձուկը, հիմի սրանցից կամ մեկը, կամ մյուսը, մտածում է, կուլ է տալու իրեն, բայց նրանք ձեռք չեն տալիս... «Ո՞վ էր այն ժամանակ ուտելու մասին մտածում»։ Ամենքն էլ այն միտքն էին անում, որ ահա հասավ իրենց մահը, բայց թե ինչո՞ւ հասավ և ինչպե՞ս հասավ, ոչ ոք չէր հասկանում։ Վերջապես ուռկանի ծայրերը ժողովեցին, ափ քաշեցին և ըսկըսեցին ձկներին դուրս թափել խոտի վրա։ Այդ ժամանակ էր ահա, որ նա իմացավ, թե ինչ ասել է «ձկնապուր»։ Ավազի վրա ինչ-որ մի կարմիր բան էր թրթռում. նրանից գորշ ամպեր էին բարձրանում և այնպես տոթ էր, որ ինքն անմիջապես ուշաթափ եղավ։ Առանց այն էլ ջրից դուրս քիչ է մնում շնչահեղձ լինի, այնինչ տոթը դեռ ավելի են սաստկացնում... Լսում է, որ դրան «խարույկ» անունն են տալիս։ Իսկ այդ «խարույկի» վրա ինչ-որ սև բան է դրված, մեջը ջուր, և ջուրն այնպես է ալեկոծվում, ինչպես լիճը փոթորկի ժամանակ։ Սա «կաթսա» է, ասում են։ Հետո էլ ասացին, թե «կաթսան» ձուկ լցրեք, «ձկնապուր» եփենք։ Ու սկսեցին մերոնց լցնել այդ «կաթսան»։ Ձկնորսը «կաթսան» է գցում ձուկը, սա սկզբում խորասուզվում է ջրի տակ, հետո ցնորվածի նման դուրս է թռչում, կրկին է խորասուզվում, վերջապես հանդարտվում է։ Նշանակում է՝ «ձկնապուր» ճաշակեց։ Ըսկզբում լցնում էին անխտիր, իսկ հետո մի ծերունի նայեց ծանծաղուկին ու ասաց. «Այս փոքրիկն ինչ է, որ սրա ձկնապուրն ինչ լինի, թող գնա իր համար գետում մեծանա»։ Բռնեց իր քիմուխանեներից ու ջուրը գցեց։ Ծանծաղուկն էլ հո հիմար չէր, ինչքան ուժ ուներ, լող տվեց տուն։ Տուն է հասնում, տեսնում է կինը կիսամեռ վիճակում իրեն է սպասում, քիթը բնից հանած...

Բայց խնդիրն այն է, որ ծերունին այն ժամանակ ինչքան էլ բացատրեց, թե ինչ ասել է ձկնապուր և ինչումն է բանը, սակայն և այնպես մինչև օրս էլ գետում շատ քչերը մի կարգին հասկացողություն ունեն ձկնապուրի մասին։

Սակայն ծանծաղուկ-որդին շատ լավ էր հիշում ծանծաղուկ-հոր խրատներն ու իր մատին փաթաթան էր շինել։ Նա լուսավորյալ ծանծաղուկ էր, չափավոր-ազատամիտ և շատ լավ էր հասկանում, որ կյանք ապրելը այնպիսի բան չէ, ինչպես խառնիչ լպստելը։ «Պետք է զգաստ լինել,— առաց նա իրեն,— եթե ոչ, կկորչեմ»։ Ու սկսեց ապրել ու կյանք անել։ Նախ և առաջ մտածեց իր համար այնպիսի մի բան շինել, ուր ինքը կարողանա ներս մտնել, իսկ ուրիշները մտնել չկարողանան։ Մի ամբողջ տարի նա իր քթով փորեց

այդ բունը։ Ինչքան ահ ու դող քաշեց նա այդ ժամանակ, գիշերելով մերթ տիղմի մեջ, մերթ ջրային կռատուկի տակ կամ մամուռի մեջ։ Վերջապես, սակայն, փառահեղ բուն փորեց։ Մաքուր, կոկիկ, մի հոգի միայն կարող է տեղավորվել։ Հետո իր ապրուստի գործը որոշեց այսպես. գիշերը, երբ մարդիկ, գազանները, թռչուններն ու ձկները քնած են, նա դուրս կգա զբոսանքի, իսկ ցերեկը կնստի բնում ու կդողդողա։ Բայց որովհետև այնուամենայնիվ ուտել-խմել հարկավոր է, իսկ ինքը ոչ ոռճիկ է ստանում և ոչ էլ սպասավորներ է պահում, ուստի կեսօրվա մոտ, երբ բոլոր ձկներն արդեն կուշտ են, բնից արագ դուրս կվազի և, գուցե աստծու հաջողությամբ, մեկ-երկու միջատից, ճիճուից գտնի։ Իսկ եթե չգտնի էլ, հենց այդպես, սոված փորով կպառկի բնում ու կրկին կդողդողա։ Որովհետև ավելի լավ է չուտել, չխմել, քան թե կուշտ փորով կյանքից զրկվել։

Այդպես էլ արեց։ Գիշերը զբոսանք էր կատարում, լողում էր լուսնի լույսով, իսկ ցերեկը քաշվում էր բունն ու դողդողում։ Միայն կեսօրին դուրս էր վազում մի բան ճանկելու, բայց կեսօրին ի՞նչ կարելի է գտնել։ Այդ ժամանակ մոծակն էլ շոգից կուչ է գալիս տերևի տակ, մժղուկն էլ թաքնվում է կեղևի տակ։ Մի քիչ ջուր էր կուլ տալիս ու դրանով հարցը փակվում էր։

Պառկում է նա բնում ամբողջ օրերով, գիշերները կիսաքուն է մնում, հազիվ մի կտոր բան է ուտում և շարունակ միտք է անում. «Կարծես կենդանի եմ, չէ՞։ Ա՜խ, ի՞նչ է լինելու վաղը»։

Նիրհում է և երազում տեսնում է, որ ինքը խաղարկության տոմս ունի և երկու հարյուր հազար է շահել։ Ուրախությունից իրեն կորցրած, շուտ է գալիս մյուս կողքին, մեկ էլ տեսար՝ դնչի կեսը բնից դուրս ցցվեց... Ի՞նչ կլիներ խեղճի վիճակը, եթե այդ բոպեին գայլածուկը մոտ լիներ. չէ որ նրան բնից դուրս կքաշեր։

Մի անգամ նա արթնանում է ու տեսնում, որ ուղիղ իր բնի առաջ մի խեցգետին է կանգնել։ Կանգնել է անշարժ, կարծես կախարդված լինի և, ոսկրյա աչքերը չռած, իրեն է նայում։ Միայն բեղերն են ջրի հոսանքից տարուբերվում։

Ինչքա՞ն վախեցավ այն ժամանակ։ Ամբողջ կես օր, քանի մութը չէր ընկել, խեցգետինը նրա ճամփան էր պահում, իսկ այդ ամբողջ ժամանակ ինքը դողդողում էր ու դողդողում։

Մի ուրիշ անգամ, լույսը բացվելուն մոտ, հազիվ էր իր բունը վերադարձել, նոր էր միայն քաղցր հորանջել և պատրաստվում էր քնելու, երբ հանկարծ տեսավ՝ որտեղից-որտեղ մի գայլածուկ՝ կանգնած իր բնի առաջ՝ ատամներն է խշխշացնում։ Սա էլ ամբողջ օրը կանգնած մնաց այդպես, կարծես միայն ծանծաղուկի տեսքից կշտացած։ Բայց նա գայլածկանն էլ խաբեց. բնից դուրս չեկավ ու չեկավ։

Ոչ թե մեկ, ոչ թե երկու անգամ այդպես պատահեց, այլ համարյա ամեն օր նույնն էր կրկնվում։ Եվ ամեն օր նա, դողդողալով, հաղթող էր դուրս գալիս և ամեն օր բացականչում էր. «Փա՜ռք քեզ, աստված, ո՛ղջ եմ»։

Բայց այդ դեռ քիչ էր. նա չամուսնացավ և զավակներ չունեցավ, թեպետ իր հայրը մեծ ընտանիք ուներ։ Նա այսպես էր մտածում. «Հայրս խաղ ու պարով կարող էր ապրել։ Նրա ժամանակ գայլածուկն էլ ավելի բարի էր, ձողաձուկն էլ այնքան աչք չէր տնկում մեզ նման մանր ձկնիկներին։ Եվ թեպետ մի անգամ նա պետք է ձկնապուրի մեջ ընկներ, բայց այդտեղ էլ գտնվել էր մի ծերունի, որը փրկել էր նրան։ Իսկ այժմ, երբ գետում ձուկը պակասել է, ծանծաղուկի պատիվն էլ է բարձրացել, այժմ այլևս ընտանիք ունենալու ժամանակը չէ, այն էլ բավական է, որ ինքը մի կերպ ապրել կարողանա»։

Եվ այդ կերպ ապրեց իմաստուն ծանծաղուկը ավելի քան հարյուր տարի։ Շարունակ դողդողում էր, շարունակ դողդողում։ Ո՛չ բարեկամ ուներ, ո՛չ հարազատ, ո՛չ ինքն էր որևէ մեկի մոտ գնում, ո՛չ ուրիշն էր իր մոտ գալիս։ Թուղթ չի խաղում, գինի չի խմում, ծխախոտ չի ծխում, սիրուն աղջիկների ետևից չի ընկնում — միայն դողդողում է ու մի միտք է անում. «Փա՜ռք աստծո, կարծես ո՛ղջ եմ»։

Վերջ ի վերջո մինչև անգամ գայլածկներն սկսեցին գովել նրան։ «Ա՜յ, եթե բոլորն այդպես ապրեին,— ասում էին նրանք,— ի՞նչ խաղաղություն կտիրեր գետում»։ Սակայն

Նրանք դիտմամբ էին այդպես ասում, կարծում էին, որ ծանծաղուկը գովեստներից ուռած-փքված դուրս կգա, թե՝ տեսեք, ես այստեղ եմ ահա, իսկ նրանք՝ հա՛փ, կխպշտեն նրան։ Բայց նա գովեստներից էլ չխաբվեց և իր իմաստությամբ ազատ մնաց թշնամիների որոգայթներից։

Քանի տարի անցավ հարյուրից հետո, հայտնի չէ, միայն թե իմաստուն ծանծաղուկի մահը մոտեցավ։ Պառկել է բնում ու միտք է անում. «Փառք աստծո, ես իմ մահով եմ մեռնում, այնպես, ինչպես մեռել են հայրս ու մայրս»։ Եվ հիշեց գայլաձկան խոսքերը. թե. «Ա՜յ, եթե բոլորն այնպես ապրեին, ինչպես այս իմաստուն ծանծաղուկն է ապրում...» Հիրավի, ի՞նչ կլիներ այն ժամանակ։

Իր անհուն խելքով սկսեց միտք անել այդ մասին և հանկարծ կարծես մեկը շշնջաց նրա ականջին. «Բայց չէ՞ որ այդպիսով, թերևս, ծանծաղուկների ցեղը վաղուց արդեն բնաջինջ եղած կլիներ»։

Որովհետև ծանծաղուկների սերունդը շարունակելու համար նախ և առաջ հարկավոր է ընտանիք ունենալ, իսկ ինչն ընտանիք չուներ։ Բայց այդ դեռ քիչ է. որպեսզի ծանծաղուկների ընտանիքն ամրապնդվի ու բարգավաճի, որպեսզի նրա անդամները առողջ ու զվարթ լինեն, անհրաժեշտ է, որ նրանք դաստիարակվեն մայրենի տարերքում և ոչ թե բնի մեջ, ուր նա համարյա կուրացել էր մշտնջենական կիսախավարից։ Անհրաժեշտ է, որ ծանծաղուկները բավականաչափ սնունդ ստանան, չխուսափեն հասարակությունից, իրար հետ աղ ու հաց ուտեն ու մեկը մյուսից առաքինի և այլ լավագույն հատկություններ սովորի։ Որովհետև միայն այդ կյանքով կարող է կատարելագործվել ծանծաղուկների տոհմը, և այդպիսով միայն նրանք չեն մանրանա ու չեն այլասերվի։

Սխալ են նրանք, ովքեր կարծում են, որ միայն այն ծանծաղուկները կարող են արժանավոր քաղաքացի համարվել, ովքեր, վախից սարսափահար, նստում են բներում և դողդողում են։ Ո՛չ, դրանք քաղաքացիներ չեն, այլ առնվազն անօգուտ ծանծաղուկներ։ Նրանցից ոչ ոք ո՛չ շահ ունի, ո՛չ վնաս, ո՛չ պատիվ, ո՛չ անարգանք, ո՛չ փառք, ո՛չ անփա-

ռունակություն... ապրում են, ավելորդ տեղ են գրավում և կերակուր են սպառում։

Այս բոլորն այն աստիճան որոշակի ու պարզ պատկերացավ ծանծաղուկին, որ հանկարծ նրա մեջ բուռն ցանկություն առաջացավ՝ դուրս գամ բնից և հպարտորեն լող տամ ամբողջ գետով մեկ։ Բայց հազիվ էր միտք արել այդ մասին, որ կրկին վախեցավ։ Ու սկսեց դողդողալով մեռնել։ Ապրեց դողդողալով, մեռավ դողդողալով։

Ամբողջ կյանքը մի ակնթարթում անցավ նրա առջևով։ Ի՞նչ ուրախություն էր նա տեսել, ո՞ւմ էր մխիթարել, ո՞ւմ էր բարի խորհուրդ տվել, ո՞ւմ էր մի բարի խոսք ասել, ո՞ւմ էր պատսպարել, պաշտպանել, ո՞վ էր լսել նրա մասին, ո՞վ էր հիշել նրա գոյությունը։

Եվ բոլոր այդ հարցերին նա հարկադրված էր պատասխանել՝ ո՛չ ոքի, ո՛չ ոք։

Նա ապրել էր և դողդողացել — ուրիշ ոչինչ։ Նույնիսկ այժմ ահա, թեպետ մահը մոտ է, բայց նա շարունակ դողդողում է, ինքն էլ չգիտե ինչու։ Նրա բունը խավար է, նեղ, շրջվելու տեղ չկա. ո՛չ այնքան ճառագայթն է թափանցում, ո՛չ շերմությունն է բուրում։ Ու խոնավ այդ մշուշում կուրացած և ուժասպառ, բոլորի համար անպետք, պառկել ու սպասում է, թե ե՛րբ վերջապես քաղցած մահը կազատի իրեն իր անօգուտ կյանքից։

Լսում է նա, ինչպես իր բնի մոտով վազվզում են ուրիշ ձկներ, թերևս իր նման ծանծաղուկներ, և ոչ մեկը չի հետաքրքրվում իրենով։ Ոչ ոքի մտքով չի անցնում, թե հապա արի մի հարցնեմ այս իմաստուն ծանծաղուկին, տեսնեմ այդ ինչպես է նա կարողացել հարյուր տարուց ավելի ապրել, և ոչ գայլաձուկն է կուլ տվել նրան, ոչ խեցգետինն է միջից կես արել, ոչ ձկնորսն է բռնել կարթով։ Լողում են նրանք իրենց համար նրա բնի մոտով և, գուցե չգիտեն էլ, որ ահա այդ բնում իմաստուն ծանծաղուկն իր կյանքի ճանապարհն է բոլորում։

Եվ ինչն ամենից վիրավորականն է, նույնիսկ չի՛ էլ լսել, որ մեկն ու մեկն իրեն իմաստուն համարի։ Ուղղակի ասում են. «Լսե՞լ եք դուք այն ապուշի մասին, որը ոչ ուտում է, ոչ

խմում, ոչ ոքի չի տեսնում, ոչ ոքի հետ աղ ու հաց չի կիսում, այլ շարունակ իր խղճուկ կյանքի վրա է դողդողում»։ Իսկ շատերը նույնիսկ ուղղակի նրան տխմար ու անխելք են անվանում և զարմանում են, թե ինչպես է ջուրը հանդուրժում այդպիսի հիմարների։

Այսպես միտք էր անում նա ու նիրհում։ Այսինքն ոչ թե նիրհում էր, այլ արդեն ինքնամոռացության մեջ էր ընկնում։ Ականջներում հոգեվարքի շշուկներն հնչեցին, խոնջությունը տիրեց ամբողջ մարմնին։ Այդ ժամանակ նա կրկին առաջվա հրապուրիչ երազը տեսավ, իբրև թե ինքը երկու հարյուր հազար է շահել, մեծացել է կես արշինաչափ և ինքն ի գայլաձկներ կուլ տալիս։

Ու մինչ այդ երազով էր տարվել, նրա դունչը կամաց-կամաց բնից դուրս սողաց։

Եվ հանկարծ անհայտացավ։ Ի՞նչ պատահեց. գայլաձո՞ւկը կուլ տվեց արդյոք, խեցգետի՞նը հոշոտեց, թե ինքն իր մահով մեռավ ու ջրի երես դուրս եկավ, այդ բանին ոչ ոք վկա չեղավ։ Ամենից հավանականն այն է, որ իր մահով մեռավ, որովհետև ի՞նչ հաճույք պիտի ստանար գայլաձուկը, կուլ տալով հիվանդ, մերձիմահ մի ծանծաղուկ, այն էլ իմաստուն ծանծաղուկ։

ԱՆՁՆԱԶՈՀ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Մեկ անգամ նապաստակը մեղանչեց գայլի հանդեպ։ Բանն այն է, որ նա վազում էր գայլի բնի մոտով, գայլը տեսավ նրան, ձայն տվեց. «Կանգնիր, սիրելի նապաստակ»։ Բայց նապաստակը ոչ միայն կանգ չառավ, այլ ավելի ուժ տվեց ոտներին։ Գայլը մի երեք թռիչք գործեց ու բռնեց նրան և ասաց. «Քանի որ դու իմ առաջին խոսքի վրա կանգ չառար, ուստի ահա իմ որոշումը՝ դատապարտել քեզ մահվան, պատառ-պատառ անելու միջոցով։ Բայց որովհետև այժմ ես էլ եմ կուշտ, իմ գայլուհին էլ է կուշտ և դեռ մի հինգ օրվա պաշար էլ ունենք, ուստի նստիր այստեղ, այս թփի

տակ և հերթի սպասիր։ Բայց կարող է պատահել, որ ես քեզ և... հա՞... հա՞... ներեմ»։

Նստել է նապաստակը թփի տակ, ետևի թաթերի վրա ու տեղից չի շարժվում։ Մի միտք է անում միայն, թե արդյոք քանի՞ օրից ու ժամից է մահը վրա հասնելու։ Հայացքը գայլաբնի կողմն է դարձնում, իսկ այնտեղից գայլի փայլող աչքերն են իրեն նայում։ Երբեմն է՛լ ավելի վատ բան է տեղի ունենում. գայլն ու գայլուհին դուրս են գալիս մարգագետին և զբոսնում են նապաստակի կողքով։ Նայում են նրան, և գայլը ինչ-որ բան է ասում գայլուհուն, ու երկուսով բարձր ծիծաղում են՝ հա՞-հա՞։ Գայլաճուտերն էլ նրանց ետևից խաղ անելով, մոտ են վազում, փաղաքշում են, ատամներն են խշխշացնում... Նրանց համար դա խաղ է, իսկ նապաստակի սիրտը ահից նվաղում է։

Երբե՛ք նա այդչափ չէր սիրել կյանքը, ինչպես այժմ։ Նա խելացի և տնարար նապաստակ էր, հավանել էր մի այրի նապաստակուհու աղջկա և մտադրվել էր ամուսնանալ։ Հիմա էլ հենց նշանածի մոտ էր վազ տալիս, երբ գայլը բռնեց նրա օձիքից։ Հարսնացուն, անշուշտ, սպասում է իրեն և միտք է անում հիմի, թե շլդիկն իրեն խաբեց։ Գուցեև սպասել է, սպասել և ուրիշի է... սիրահարվել... Բայց գուցե և խեղճը թփի տակ խաղ է արել իր համար, և հանկարծ գայլը նրան... լափել է...

Մտածում է խեղճ նապաստակն այդ մասին և աղի արցունքները խեղդում են նրան։ Ահա՛ և քեզ նապաստակի ցնորքներ. ամուսնանալ ցանկացավ, ինքնաեռ գնեց, երազեց երիտասարդ կնոջ հետ միասին թեյ խմել, բայց այդ բոլորի փոխարեն ահա ինչ փորձանքի մեջ ընկավ։ Իսկ քանի՞ ժամ է մնացել դեռ մինչև մահը։

Եվ ահա, նստել է այդպես նապաստակը մի գիշեր ու նիրհում է։ Երազում տեսնում է, որ գայլն իրեն հատուկ հանձնարարություններ պաշտոնյա է նշանակել իր մոտ, և այն ժամանակ, երբ ինքը վերաքննություն կատարելու է վազվզում, գայլը հյուր է գնում իր կնոջ մոտ... Հանկարծ զգում է, որ մեկը հրում է իրեն։ Նայում է, իր հարսնացուի եղբայրն է։

— Հարսնացուդ մեռնում է,— ասում է։— Լսեց ինչ դրժբախտության մեջ ես ընկել, նույն ժամին հալ ու մաշ եղավ։ Այժմ մի միտք է անում. «Մի՞թե հենց այսպես պիտի մեռնեմ, առանց իմ պաշտելի նշանածին հրաժեշտ տալու»։

Լսում է այդ խոսքերը դատապարտյալն ու սիրտը կտորկտոր է լինում։ Ինչո՞ւ, իր ո՞ր մեղքի համար է այս դառը բախտին արժանանում։ Ապրել է խաղաղ ու պարզ, հեղափոխություն չի արել, զենքը ձեռքին հանդես չի եկել, միայն վազ էր տալիս իր անձնական գործով, մի՞թե դրա համար պետք է մահվան դատապարտվի։ Սա՛հ, մտածեցեք հապա՞, ինչ ասել է մահ։ Եվ ոչ միայն իրեն, այլև այն մոխրագույն նապաստակուհուն, որի հանցանքը միայն այն է, որ ամբողջ սրտով սիրել է իրեն, սիրել է շլդիկին։ Ինչպե՞ս կթուղեր այժմ նրա մոտ, առջևի թաթիկներով կբռներ նրա ականջներն ու կըփայփայեր, կփաղաքշեր։

— Փախչե՛նք,— մինչ այդ ասում էր հարսնեղբայրը։

Այդ լսելով, դատապարտյալը մի րոպե, կարծես, կերպարանափոխվեց, կծիկ դարձավ ու ականջները մեջքին դարսեց։ Ահա-ահա, և այլևս նրա հետքն էլ չի լինի։ Բայց այդ րոպեին նա չպիտի գայլաբնի կողմը նայեր, սակայն նայեց։ Եվ անմիջապես սիրտը թուլացավ։

— Չեմ կարող,— ասում է,— գայլը հրաման չի տվել։

Իսկ գայլն այդ ժամանակ ամեն ինչ տեսնում է և լսում ու կամացուկ շշնջում է գայլուհու հետ գայլերեն լեզվով, ըստ երևույթին, նապաստակի ազնվությունն են գովում։

— Փախչենք,— կրկին ասում է հարսնեղբայրը։

— Չեմ կարող,— կրկնում է դատապարտյալը։

— Այդ ի՞նչ եք փսփսում այդտեղ, շարագործնե՛ր,— հանկարծ գոչում է գայլը։

Նապաստակները երկուսով էլ քարացած մնացին։ Բռնվեց նաև հարսնեղբայրը։ Օրենքով ի՞նչ պատիժ է սպասում, երբ պահակին փախուստի են դրդում։ Ա՜խ, մոխրագույն նապաստակուհին մնալու է և՛ առանց նշանածի, և՛ առանց եղբոր — երկուսին էլ լափելու են գայլն ու գայլուհին։

Ուշքի եկան շլդիկները, իսկ գայլն ու գայլուհին նրանց գլխավերև կանգնած, ատամներն են կրճտացնում, գիշերվա

խավարի մեջ երկուսի աչքերն էլ լապտերի նման բոցավառվում են։

— Մենք, ձերդ բարձրություն, ոչինչ... միմյանց հետ... հայրենակիցս տեսության է եկել ինձ,— թոթովում է դատապարտյալը, ահից չորացած։

—«Ոչի՞նչ»... ձեզ լավ եմ ճանաչում... Ասացեք, ինչ բան է։

— Այսպես ու այսպես, ձերդ բարձրություն,— ասաց հարսնեղբայրը,— իմ քույրը, իսկ սրա հարսնացուն, մեռնում է, շատ է խնդրում, չի՞ կարելի արդյոք, թույլ տաք սրան գնա՝ վերջին հրաժեշտը տա։

— Հը... դա լավ է, որ նշանածը փեսային սիրում է,— ասում է գայլուհին։— Այդ նշանակում է, նրանք շատ ձագեր կունենան, գայլերի կերակուրը կառատանա։ Ես և գայլն էլ սիրաբանում ենք և շատ ձագեր ունենք։ Քանի-քանիսը մեծացել, ապրում են իրենց համար, ման են գալիս ազատ, իսկ չորս հատն այժմ էլ ապրում են մեզ հետ։ Գայլ, ա՜յ գայլ, բաց չթողնե՞նք փեսային հարսի մոտ, հրաժեշտ տա։

— Բայց չէ՞ որ վաղը չէ մյուս օրը մենք նրան ուտելու ենք...

— Ես, ձերդ բարեծնություն, կվերադառնամ... Անմիջապես ետ կդառնամ... Աստված վկա, կվերադառնամ,— վրա բերեց նապաստակը, և որպեսզի գայլը չկասկածի, թե կարող է ակնթարթապես վերադառնալ, հանկարծ այնպես կըտրիճ տեսք ընդունեց, որ գայլն անգամ զմայլվեց նրանով ու մտածեց. «Այ, եթե ես սրա նման զինվորներ ունենայի»։

Իսկ գայլուհին տրտմեց ու ասաց.

— Թեպետև նապաստակ է, բայց տեսեք ինչպե՞ս է սիրում իր նշանածին։

Ճար չկար, համաձայնեց գայլը՝ բաց թողնել շլդիկին՝ իր հարսնացուի մոտ գնա, բայց այն պայմանով, որ ճիշտ ժամանակին վերադառնա։ Իսկ հարսնացուի եղբորը պատանդ պահեց իր մոտ։

— Եթե երկու օրից, առավոտյան ժամը վերջին չվերադառնաս,— ասաց նա,— ես սրան կուտեմ քո փոխարեն, իսկ եթե վերադառնաս — երկուսիդ կուտեմ, բայց գուցեև... հա՜-հա՜... կներեմ։

Թռավ շլդիկը, ինչպես աղեղից արձակված նետ։ Այնպես է վազում, որ երկիրը ցնցվում է։ Լեռ է հանդիպում ճանապարհին՝ «ուռայով» հաղթահարում է, գետ է հանդիպում՝ ամենևին հաշվի չի առնում խորությունը, ուղղակի լողալով է անցնում, ճահիճ է հանդիպում, տասը ճիմը մեկեն է թռչում։ Կատա՞կ եք կարծում, յոթը սարի, յոթը քարի ետև ընկած թագավորությունը պետք է հասնի, բաղնիք պիտի գնա, պետք է ամուսնանա («անպայման կամուսնանամ»,— ամեն րոպե կրկնում էր նա) և վերադառնա գայլի համար նախաճաշ դառնալու...

Նույնիսկ թռչունները զարմանում էին նրա արագության վրա և ասում էին. «Մոսկովսկի Վեդոմոստի» թերթում գրում են, իբրև թե նապաստակները հոգի չունեն, բայց տեսեք, ինչպես է կծիկը դրել»։

Վերջապես հասավ։ Թե ինչ ուրախություն տեղի ունեցավ, ոչ հեքիաթում կպատմվի, ոչ գրչով կգրվի։ Հարսնացուն հենց որ տեսավ նշանածին, հիվանդությունն անմիջապես մոռացավ։ Կանգնեց ետևի թաթերին, թմբուկը վիզը գցեց և սկսեց թաթիկներով «հեծելազորի երթը» թմբկահարել.— սյուրպրիզ էր պատրաստել նշանածի համար։ Իսկ այրի նապաստակուհին ուրախությունից ուղղակի շփոթվել է» չգիտե ո՞րտեղ նստեցնի իր սիրեցյալ փեսային, ի՞նչ ուտեցնի, ի՞նչ խմեցնի։ Հավաքվեցին հորաքույրերն ու մորաքույրերն ամեն կողմից, քավոր-քավորկինը, եկան քույրերը.— բոլորի համար էլ դուրեկան էր փեսային տեսնելը, գուցեև մի համեղ պատառ ճաշակեին հյուրասեղանից։

Մենակ փեսան էր, որ անհանգիստ էր զգում իրեն։ Նոր էր միայն տեսնվել ու կարոտն առել հարսնացուից, որ սկսեց շտապեցնել.

— Շուտ արեք՝ բաղանիք գնամ և ամուսնանամ։

— Ինչո՞ւ ես այդպես շտապում,— կատակում է մայր-նապաստակուհին։

— Պետք է վերադառնամ։ Գայլը մեկ օրով է միայն արձակել։

Պատմեց բոլորը, թե ինչ էր պատահել և ինչպես էր եղել։ Պատմում է և դառն արցունքներ է թափում։ Եվ վերադառնալ

չի ուզում, և չվերադառնալ չի կարող։ Խոսք է տվել, իսկ նապաստակն իր խոսքի տերն է։ Միտք արեցին մորաքույրերն ու քույրերը, նրանք էլ միաբերան ասացին.— Ճիշտ ես ասում, շլդիկ, քանի խոսք չես տվել՝ դիմացիր, բայց երբ խոսք ես տվել՝ խոսքիդ տերը եղիր։ Նապաստակներիս ցեղի մեջ երբեք չի պատահել, որ նապաստակները խաբեբա դուրս գան։

Հեքիաթը շուտ է վերջանում, բայց նապաստակների գործն է՛լ ավելի շուտ է կատարվում։ Առավոտյան դեմ շլդիկին պսակեցին, իսկ երեկոյան նա հրաժեշտ տվեց երիտասարդ կնոջը։

— Գայլն ինձ անպայման ուտելու է,— ասում է նա,— բայց դու հավատարիմ կմնաս ինձ։ Եթե երեխաներ ծնվեն, խիստ դաստիարակություն տուր նրանց։ Իսկ ամենից լավն այն է, որ նրանց կրկես տաս, այնտեղ նրանց ոչ միայն թմբուկ զարկել կսովորեցնեն, այլև թնդանոթից սիսեռ կրակելու կվարժեցնեն։

Եվ հանկարծ, կարծես ինքնամոռացության մեջ (նշանակում է կրկին գայլին հիշեց) ավելացրեց.

— Բայց գուցեև գայլն ինձ... հա՞-հա՞... ների։

Եվ պոկվեց տեղից ու սլացավ։

Այն ժամանակ, մինչ շլդիկը քեֆի և ուրախության մեջ էր, հարսանիք էր անում, այն տարածության վրա, որը բաժանում էր յոթը սարի, յոթը քարի ետև ընկած տերությունը գայլի բնից, մեծ դեպքեր տեղի ունեցան։ Մի տեղ այնքան անձրև եկավ, որ այն գետը, որով նապաստակը խաղ ու պարով լող էր տվել-անցել, բարձրացել, հեղեղել էր ամբողջ տասը վերստ տարածություն։ Մեկ ուրիշ տեղ Արոն թագավորը Նիկիտա թագավորին պատերազմ էր հայտարարել և ուղիղ նապաստակի ճանապարհի վրա ճակատամարտ էր գնում։ Երրորդ տեղը խոլերա էր երևացել — պետք է հարյուր վերստ պոռչտ տալ կարանտինի շրջան... և բացի դրանից, ամեն քայլափոխին գայլերը, աղվեսները, բուերն էին դարան մտել։

Խելացի էր շլդիկը։ Նախապես այնպես էր հաշվել, որ ժամանակից երեք ժամ էլ շուտ տեղ հասնի, սակայն, երբ մեկը մյուսին հաջորդող խոչընդոտներն սկսվեցին, նրա սիր-

տը սառեց։ Վազում է նա ամբողջ երեկոն, վազում է կես գիշերին, ոտքերը քարերին դիպչելուց քերծվում են, փշերը բուրդն են գզգզում, աչքերը մթնում են, բերանը փրփուր է կապել, բայց դեռ ինչքա՞ն պիտի վազի։ Եվ շարունակ պատանդ ընկերն է պատկերանում աչքին։ Գայլի մոտ հիմա նա պահակ կանգնած, մտածում է՝ ահա մի քանի ժամից երևալու է սիրեցյալ փեսան՝ իրեն փրկելու։ Հիշում է նա այդ մասին և ավելի է արագացնում ընթացքը։ Լեռները, հովիտները, անտառները, ճահիճները ոչինչ են նրա համար։ Քանի անգամ սիրտը քիչ մնաց պայթեր, բայց նա սիրտն էլ հաղթահարեց, որպեսզի ապարդյուն հուզմունքները չշեղեն նրա ուշադրությունը գլխավոր նպատակից։ Վշտի ու արցունքների ժամանակը չէ այժմ, թող բոլոր զգացմունքները լռեն, միայն թե ընկերոջն ազատի գայլի որկորից։

Ահա լուսանում է։ Բվեճները, շղթիկները գիշերելու են շտապում, օդը սկսում է ցրտել։ Եվ հանկարծ շորս կողմ ամեն ինչ լռեց, ասես անզգայացավ։ Իսկ շլդիկը շարունակ վազում է և մի միտք է անում միայն. «Մի՞թե բարեկամիս փորձանքից չպիտի կարողանամ ազատել»։

Արևելքը բոսոր գույն ստացավ. նախ հեռու հորիզոնում ամպերը թեթևակի կարմրին տվեցին, ապա ավելի ու ավելի շառագունեցին և հանկարծ բոցավառվեցին։ Խոտերի վրա նստած ցողը գոլորշիացավ, արթնացան ցերեկային թռչունները, սողացին մրջյունները, որդերը, ճիճուները։ Օդում ծխահոտ զգացվեց, ցորենի ու գարու արտերը սոսափեցին ավելի ու ավելի աղմկոտ... իսկ շլդիկը ոչինչ չի տեսնում, չի լսում, միայն մի բան է կրկնում շարունակ «Կործանեցի՛ բարեկամիս, կործանեցի՛»։

Վերջապես ահա և լեռը։ Այդ լեռան ետև — ճահիճն է, և այդ ճահիճում՝ գայլի բունը... Ուշացա՞վ շլդիկը, ուշացա՞վ։

Լարում է նա վերջին ուժերը, լեռան գագաթը թռչելու... Թռավ։ Բայց այլևս վազել չի կարողանում, ուժասպառությունից գետին է տապալվում... Մի՞թե այլևս չի կարող վազել։

Գայլի բունը երևում է նրա դիմաց, ինչպես ափսեի մեջ։ Հեռվից հնչում է ժամացույցի վեց զարկը, և զանգի յուրաքանչյուր հարվածը կարծես մուրճի պես ծանր իջնում է ուժասպառ գազանի սրտին։ Վերջին հարվածի հետ գայլը դուրս եկավ բնից, ճմլկտաց և գոհունակությունից պոչը թափահարեց։ Ահա նա մոտեցավ պատանդին, թաթերի մեջ առավ և ճանկերը թաղեց փորի մեջ, նրան երկու կես անելու՝ մեկը իր համար, մյուսը՝ գայլուհու։ Գայլաճուտերն էլ հավաքվել, շարվել են հոր ու մոր շորս կողմ, ատամներն են կրճատացնում, սովորում են։

— Այստե՛ղ եմ, այստե՛ղ եմ,— գոչեց շլդիկն այնպի՛ս ուժգին ձայնով, կարծես հարյուր հազար նապաստակ լիներ միասին։ Ու սարից գլխիվայր ճահիճը գլորվեց։

Գայլը գովեց նրան։

— Տեսնում եմ,— ասաց նա,— որ նապաստակներին հավատալ կարելի է, ուստի ահա իմ որոշումը՝ երկուսդ էլ առայժմ նստեցեք այստեղ, այս թփի տակ, իսկ հետագայում ես ձեզ... հա՞-հա՞... կներեմ։

ԽԵՂԾ ԳԱԶԱՆԸ

Եթե ուրիշ գազան լիներ, գուցեև գթաշարժվեր նապաստակի այդօրինակ անձնազոհությունից և չբավականանար միայն խոստումներով, այլ անմիջապես ներեր նրան։ Բայց բարեխառն և հյուսիսային կլիմայում ապրող բոլոր գազաններից գայլն ամենից քիչ ընդունակ է մեծահոգի լինելու։

Սակայն նա իր կամքով չէ այդպես անգութ, այլ որովհետև նրա մարմնի կազմությունն է նենգ. բացի մսեղենից, նա ուրիշ ոչինչ ուտել չի կարող։ Իսկ մսեղեն կերակուր գտնելու համար նա չի կարող վարվել ոչ այլ կերպ, քան կենդանի արարածներին կյանքից զրկելով։ Մի խոսքով, պարտավորվում է չարագործություն անել։

Հեշտությամբ չէ նա սնունդ ձեռք բերում։ Մահը ոչ ոքի համար ցանկալի չէ, իսկ նա ամենքին հենց մահ է բերում։ Ուստի, ով ուժեղ է, ինքն է պաշտպանվում նրանից, իսկ ավ-

քեր իրենք պաշտպանվել չեն կարող, այդպիսիներին ուրիշներն են պաշտպանում։ Այնուամենայնիվ գայլը հաճախ է քաղցած մնում, և դեռ երբեմն էլ՝ ջարդված կողերով։ Այդպիսի ժամանակ նա նստում է, դունչը վեր է ցցում և այնպես բարձր ոռնում, որ մի վերստ տարածության վրա բոլոր կենդանի արարածները վախից և հուսահատությունից սարսափահար են լինում։ Իսկ նրա գայլուհին է՛լ ավելի վշտագին է կաղկանձում, որովհետև նա ձագուկներ ունի և նրանց կերակրելու ոչինչ չունի։

Աշխարհում չկա մի գազան, որն ատելիս չլիներ գայլին, չանիծեր նրան։ Երբ գայլը երևում է, ամբողջ անտառը հեծում ու տնքում է. «Անիծյա՛լ գայլ, կործանի՛չ, ավազա՛կ»։ Եվ վազում է նա շարունակ առաջ ու առաջ, ետ նայել չի համարձակվում, իսկ ետևից հնչում է. «Ավազա՜կ, սրիկա՜»։ Մեկ ամիս առաջ գայլը գողացավ մի կնոջ միակ ոչխարը. կինը մինչև օրս էլ արտասուք է թափում և անիծում է. «անիծվա՜ծ գայլ, հոգեա՜ռ», այնինչ գայլն այդ օրվանից բերանը պատառ չի դրել. այդ ոչխարը խժռեց, բայց ուրիշը ձեռքը չունկավ... Ե՛վ կինն է ոռնում, և՛ ինքը գայլն է ոռնում... Դրժվա՜ր է բան հասկանալ։

Ասում են, գայլը դժբախտացնում է գյուղացուն, սակայն գյուղացին նույնպես, երբ բարկանում է, շատ ավելի անգութ է դառնում։ Ե՛վ մահակով է նրան ծեծում, և՛ գնդակ է արձակում վրան, և՛ գայլագուբեր է փորում, և՛ թակարդներ է դնում, և՛ շուրջկալներ է սարքում։ «Կործանի՜չ, ավազա՜կ — այս է լսվում գայլի մասին գյուղերում,— վերջին կո՛վը հոշոտեց, վերջին ոչխա՛րը գողացավ։ Բայց ի՞նչով է հանցավոր նա, եթե ուրիշ կերպ աշխարհում ապրել չի կարող։

Նրան սպանելուց էլ ոչ մի շահ չկա։ Միսն անպետք է, մորթը կոշտ է, չի տաքացնում։ Միակ բավականությունն այն է, որ ուզածիդ չափ ծաղրում, նշավակում ես նրան, ոխդ ես հանում ու կենդանի-կենդանի եղանին խրած վեր ես բարձրացնում, որ անիծյալը կաթիլ առ կաթիլ արյունաքամ լինի։

Գայլը չի կարող առանց ուրիշին կյանքից զրկելու ապրել աշխարհում, ահա՛ ինչն է նրա դժբախտությունը։ Բայց

չէ որ նա ինքն այդ բանը չի գիտակցում։ Եթե նրան չարագործ են համարում, ապա նա ինքն էլ չարագործ է համարում նրանց, ովքեր հալածում, հաշմանդամ են դարձնում, սպանում են իրեն։ Հասկանո՞ւմ է միթե նա, որ իր կյանքով ուրիշների կյանքին վնաս է հասցնում։ Նա մտածում է, որ ապրում է, ուրիշ ոչինչ։ Ձին բեռներ է կրում, կովը կաթ է տալիս, ոչխարը բուրդ է մատակարարում, իսկ նա ավազակություն է անում, սպանում է։ Ե՛վ ձին, և՛ կովը, և՛ ոչխարը, և՛ գայլը — բոլորն էլ «ապրում են», ամեն մեկն իր ձևով, իր եղանակով։

Եվ ահա գտնվեց, սակայն, գայլերի մեջ մեկը, որը շատ տարիներ շարունակ սպանելուց և ավազակություն անելուց հետո, հանկարծ, ծերության օրերին, սկսեց հասկանալ, որ իր կյանքում ինչ-որ անհամաչափ բան կա։

Երիտասարդ հասակում այդ գայլը շափազանց լավ կյանք էր ունեցել և պատկանում էր այն փոքրաթիվ հոշոտողների թվին, որոնք համարյա երբեք քաղցած չէին մնում։ Օր ու գիշեր նա ավազակություն էր անում և շարունակ հաջողություն ուներ։ Հովիվների քթի տակից ոչխար էր գողանում, գյուղացիների բակերն էր մտնում, կովեր էր հոշոտում, մեկ անգամ անտառապահին այնպես ձվիկ-ձվիկ արեց, որ հազիվ ազատվեց մեռնելուց։ Բոլորի աչքի առաջ մի երեխայի փողոցից անտառ փախցրեց։ Լսում էր, որ այդ արարքների համար բոլորն իրեն ատում են և անիծում, բայց այդ կշտամբանքներից նա ավելի ու ավելի էր վայրագանում։

— Հապա՜ մի տեսնեին, թե ի՛նչ է կատարվում անտառում,— ասում էր նա,— չկա մի բոպե, որպեսզի այնտեղ սպանություն տեղի չունենա, որպեսզի գազաններից մեկն ու մեկը կյանքից զրկվելով, մահվան ճիչ չարձակի։ Մի՞թե պետք է դրա վրա ուշադրություն դարձնել։

Ահա այսպես, ավազակություն անելով, գայլը հասավ այն տարիքին, երբ նա այլևս «փորձառու գայլ» է կոչվում։ Մի փոքր ծանրացավ, սակայն ավազակությունը չթողեց, այլ, ընդհակառակը, կարծես ավելի վայրագացավ։ Միայն թե, մեկ անգամ պատահական կերպով ընկավ արջի ճանկը։ Իսկ արջերը գայլերին չեն սիրում, որովհետև գայլերը ոհմակով հարձակվում են նրանց վրա, և հաճախ անտառում լուր է տա-

բածվում, որ այսինչ ու այնինչ տեղ Միխայլո Իվանիչն անփույթ է գտնվել, և գորշ թշնամիները նրա մուշտակը դրդզրդել են։

Բռնել է արջը գայլին թաթերում ու մտածում է. «Ինչպե՞ս վարվեմ ես այս սրիկայի հետ, ուտե՞մ — սիրտս կխառնի, եթե խեղդեմ ու դեն նետեմ, դիահոտից անտառը կթունավորվի։ Արի փորձեմ, տեսնեմ, գուցե խիղճ ունի։ Եթե խիղճ ունի և կերդվի, որ այլևս ավազակություն չի անի, բաց կթողնեմ, թող գնա»։

— Գայլ, ա՛յ գայլ,— ասաց Թոփտիգինը,— մի՞թե դու խիղճ ասվածբանը չունես։

— Ա՞խ, ի՞նչ եք ասում, ձերդ բարձրություն,— պատասխանեց գայլը,— մի՞թե աշխարհում հնարավոր է առանց խղճի գեթ մե՛կ օր ապրել։

— Նշանակում է, հնարավոր է, քանի որ դու ապրում ես։ Մի լավ մտիր արա. ամեն ասածդ օր հենց այն է լսվում քո մասին, որ դու կամ մեկի կաշին ես մաշկել, կամ հոշոտել ես։ Մի՞թե դա խիղճ ունեցողի արարք է։

— Ձերդ բարձրություն, թույլ տվեք զեկուցել։ Ես պե՞տք է ուտեմ-խմեմ, թե՞ ոչ. իմ գայլուհուն պե՞տք է կերակրեմ, ձագերիս պե՞տք է դաստիարակեմ։ Այդ մասին դուք ի՞նչ եզրակացություն եք բարեհաճում անել։

Մտածեց-մտածեց Միխայլո Իվանիչը, տեսնում է, որ իսկապես, եթե գայլը ապրելու է աշխարհիս երեսին, նշանակում է նա իրավունք ունի նաև կերակրվելու։

— Պետք է,— ասում է։

— Իսկ ես մսեղենից բացի ուրիշ ո՛չ մի բան ուտել չեմ կարող։ Օրինակ, թեկուզ հենց վերցնենք ձերդ բարձրությունը։ Դուք մորի էլ եք ուտում, մեղր էլ եք փոխ առնում մեղուներից, վարսակ էլ եք ուտում, իսկ այդ բոլորն ինձ համար եղած-չեղած մի հաշիվ է։ Մեկ ուրիշ առավելություն էլ ունի ձերդ բարձրությունը. ձմեռը, երբ պառկում եք ձեր որջում, դուք ուրիշ ոչ մի պահանջ չունեք, բացի ձեր սեփական թաթը ծծելուց։ Իսկ ես, թե ձմեռը և թե ամառը չկա այնպիսի մի բոպե, որպեսզի ուտելիքի մասին չմտածեմ։ Եվ

այն էլ միայն մսի՛ մասին։ Հապա ի՞նչպես ձեռք բերեմ այդ ուտելիքը, եթե չհոշոտեմ ու չխեղդեմ։

Մտածեց արջը գայլի այդ խոսքերի վրա, սակայն դեռևս ուզեց մի փորձ էլ անել։

— Դու գոնե,— ասում է,— շա՞տ մի տանջիր...

— Ես, առանց այն էլ, ձերդ բարձրություն, ինչքան հնարավոր է, աշխատում եմ տանջանք չպատճառել։ Աղվեսը, օրինակ, մի կտոր պոկում ետ է փախչում, հետո կրկին է պոկում և կրկին ետ թռչում... Իսկ ես ուղղակի բռնում եմ կոկորդից — վերջացավ։

Ավելի խորը մտածմունքների մեջ ընկավ արջը։ Տեսնում է, որ գայլը ճշմարտություն է ասում, բայց և այնպես դեռ վախենում է բաց թողնել, որովհետև անմիջապես ըսկըսելու է իր ավազակությունը։

— Ձղջա՛, գա՛յլ,— ասում է։

— Ձղջալու բան չունեմ, ձերդ բարձրություն։ Ոչ ոք ինքն իր կյանքին թշնամի չէ, նույն թվում նաև ես։ Ուրեմն ի՞նչն է իմ հանցանքը։

— Դու գեթ խոստացի՛ր։

— Խոստանալ էլ չեմ կարող, ձերդ բարձրություն։ Աղվեսը, օրինակ, ինչ կամենաք, կխոստանա ձեզ, բայց ես՝ չե՛մ կարող։

Ի՞նչ անել։ Մտածեց, մտածեց արջը, վերջապես եզրակացրեց.

— Շատ դժբախտ կենդանի ես դու, ահա թե ինչ կասեմ քեզ,— ասաց նա գայլին։— Չեմ կարող ես քեզ դատապարտել, թեպետև գիտեմ, որ շատ մեծ մեղք եմ վերցնում հոգուս վրա, ազատ արձակելով քեզ։ Սակայն կարող եմ ավելացնել, եթե ե՛ս լինեի քո տեղը, ոչ միայն կյանքս թանկ չէի գնահատի, այլև մահը բարիք կհամարեի ինձ համար։ Եվ դու իմ այս ասածների վրա մտածիր։

Եվ ազատ արձակեց գայլին։

Ազատվեց գայլն արջի ճանկերից և անմիջապես իր հին արհեստը վերսկսեց։ Տնքում է նրա ձեռքից անտառը։ Վարժվեց մի գյուղի և երկու-երեք գիշերվա մեջ ամբողջ մի հոտ զուր տեղը հոշոտեց։ Եվ նրա համար — ոչի՞նչ։

Կուշտ փորով պառկում է ճահճում, գոհունակություն-նից ձգվում է և աչքերն է փակում։ Նույնիսկ իր բարերար արջին հետապնդեց, բայց նա, բարեբախտաբար, շուտ նը-կատեց և միայն հեռվից թաթով սպառնաց նրան։

Շատ թե քիչ այդպես մոլեգնեց նա, սակայն, վերջապես, ծերությունը նրան էլ վրա հասավ։ Ուժերը պակասեցին, ճարպիկությունն անցավ, նաև այն, որ մի գյուղացի մահա-կով մեջքը կոտրեց։ Թեպետև կազդուրվեց, բայց և այնպես այլևս նախկին անվեհերությունը չուներ։ Ընկնում է նապաս-տակի ետևից, բայց ոտքերում այլևս ուժ չկա։ Մոտենում է անտառի եզրին, փորձում է հոտից մի ոչխար փախցնել, բայց երբ շները վրա են տալիս, պոչը ծալում ու փախչում է դատարկաձեռն։

— Մի՞թե ես արդեն սկսել եմ շներից էլ վախենալ,— հարցնում է ինքն իրեն։

Վերադառնում է որջն ու ոռնում է։ Անտառում բուն ի հեծկլտում, ճահճում գայլն է ոռնում,— սարսափից գյուղը հուզմունքի մեջ է ընկնում։

Մի անգամ միայն մի գառ փախցրեց և սկսեց քարշ տալ անտառ։ Իսկ գառը դեռևս շատ փոքր էր, անհասկացող։ Գայ-լը նրան անտառ է քարշ տալիս, իսկ նա չի հասկանում և շարունակ կրկնում է։

— Ի՞նչ է, ի՞նչ է։

— Ես քեզ հիմի ցույց կտամ ինչ է... անպիտա՛ն,— բառ-կացավ գայլը։

— Քեռի, ես չեմ ուզում անտառ գնալ, ես մայրիկիս մոտ եմ ուզում, էլ չե՛մ անի, քեռի, չե՛մ անի,— հանկարծ գլխի ընկավ գառնուկը և պարզ չէր — բառաչում է, թե հեկեկում.— ա՜խ, հովի՛վ, հովի՛վ, ա՜խ, շնե՛ր, ա՜յ շներ։

Կանգ առավ գայլը և ականջ է դնում։ Իր կյանքում նա շատ ոչխար էր սպանել, և նրանք բոլորն էլ մի տեսակ ան-տարբեր էին լինում։ Հազիվ էր գայլը նրանց բռնում, իսկ նրանք արդեն աչքերն էին խփում և պառկում էին անշարժ, կարծես բնական տուրքն էին կատարում։ Իսկ սա դեռ որ-չափ փոքր է, բայց տեսեք ինչպե՞ս է արտասվում, ինչպե՞ս ապրել է ուզում։ Երևում է, այդ ատելի կյանքը բոլորի հա-

մար քաղցր է։ Հենց, օրինակ, ինքը զատ[illegible] է տրդին, բայց և այնպես էլի մի հարյուր տարի կուզենար ապրել։

Եվ հիշեց Թոփտիգինի խոսքերը, թե. «Քո տեղը ես որ լինեի, ոչ թե կյանքը, այլ մահը բարիք կհամարեի ինձ հա-մար»... Ինչո՞ւ այդպես։ Ինչո՞ւ աշխարհի բոլոր մյուս արա-րածների համար կյանքը բարիք է, իսկ նրա համար կյանքն անեծք է ու նախատինք։

Եվ առանց պատասխանի սպասելու, բաց թողեց գառ-նուկին, իսկ ինքը, պոչը կախ գցած, իր որջը գնաց, այնտեղ միայնության մեջ խորհելու այդ մասին։

Բայց իր մտածմունքները ոչ մի բան չպարզեցին, բա-ցի այն բանից, ինչ որ ինքը վաղուց արդեն գիտեր, այն է՝ որ ինքը ուրիշ ոչ մի կերպ ապրել չի կարող, բացի սպանու-թյունից և ավազակությունից։

Պառկեց փորի վրա գետնին, բայց ոչ մի կերպ չի կա-րողանում հանգստանալ։ Միտքն ուրիշ բան է ասում, իսկ ներսը բոլորովին այլ բան է բորբոքվում։

Հիվանդությունի՞ց է արդյոք թուլացել, ծերությո՞ւնն է քայքայել, թե քաղցն է ուժասպառ արել — միայն այլևս առաջվա նման իր վրա իշխել չի կարողանում։ Շարունակ հնչում է ականջին՝ «Անիծյա՜լ, կործանի՜չ, ավազա՜կ»։ Շատ էլ նա ինքն իրեն հանցավոր չի համարում, չէ՞ որ անեծքը այնուամենայնիվ խլացնել չի լինի։ Երևում է, ճիշտ էր ասում արջը, միակ միջոցը մնում է ինքնասպանությունը։

Սակայն այդ դեպքում ևս գայլն անզոր է. գազանը նույ-նիսկ չի կարող ինքնասպան լինել։ Նա չի կարող ոչ իր կյանքի ընթացքը փոխել, ոչ էլ մեռնել։ Ապրում է, ասես, երազում, և մեռնում է նույնպես, կարծես, երազում։ Գուցե շները կգըզ-գրզեն կամ գյուղացին հրացանազարկ կանի. այդ դեպքում էլ նա միայն խռխռացնում է, մի ակնթարթ գալարվում, ապա անշնչանում։ Իսկ թե ինչպես և որտեղից հասավ մահն իրեն, նա նույնիսկ չի էլ հասկանում։

Գուցե, քաղցած մնալով, սպանի իրեն... Այժմ նա նույ-նիսկ նապաստակ որսալն էլ թողել է, միայն թուլություններ է բռնում։ Բռնում է ագռավի կամ վայրի աղավնու մի ձագ և

դրանով էլ կշտանում է։ Այս դեպքում անգամ աղավնիները խմբով բացականչում են. «Անիծյա՛լ, անիծյա՛լ, անիծյա՛լ...

Իրավա՛մբ անիծյալ։ Մի՞թե սպանելու և ավազակություն անելու համար պետք է ապրել։ Ընդունենք, թե նրան անիրավացի են անիծում, որովհետև իր կամքով չէ նա ավազակություն անում, բայց ի՞նչպես չանիծել։ Քանի՞-քանի՞ գազան է ոչնչացրել նա իր կյանքում, քանի՞-քանի՞ կնոջ, քանի տղամարդու տուն է քանդել, դժբախտացրել է նրանց ողջ կյանքում։

Շատ տարիներ տանջվեց նա այդ մտորումներից, և մի բառ էր միայն շարունակ հնչում ականջին. «Անիծյա՛լ, անիծյա՛լ, անիծյա՛լ»։ Ինքն էլ իր մասին ավելի ու ավելի հաճախ կրկնում էր. «Իրավա՛մբ անիծյալ, կործանի՛չ, ավազա՛կ։ Բայց և այնպես, քաղցից նեղվելով, գնում էր որսի, խեղդում էր, հոշոտում, տանջում...

Ու սկսեց մահը տենչալ։ «Մա՛հ, մա՛հ, գոնե դո՛ւ ազատեիր ինձանից գազաններին, գյուղացիներին ու թռչուններին։ Գոնե դու ազատեիր ինձ ինձանից»,— օր ու գիշեր ոռնում էր նա, դունչը երկինք դարձրած։ Իսկ գազաններն ու գյուղացիները, լսելով նրա ոռնոցը, սարսափահար աղաղակում էին՝ «Անիծյա՛լ, անիծյա՛լ, անիծյա՛լ»։ Նույնիսկ երկընքին գանգատվելիս ամեն կողմից անեծքներ էին թափվում վրան։

Վերջապես մահն այնուամենայնիվ խղճաց նրան։ Գազանների ընավորությանն ու սովորություններին քաջածանոթ որսորդներ երևացին այդ կողմերում, և հարևան կալվածատերերը, օգտվելով նրանց ներկայությունից, որոշեցին շուրջկալ անել գայլին։ Մեկ անգամ գայլն իր որջում պառկած, լսում է, որ իրեն կանչում են։ Բարձրացավ տեղից և գնաց։ Տեսնում է, ճանապարհին առջևում ուղենիշեր են խրված, իսկ ետևից ու կողքերից գյուղացիներն են հետևում իրեն։ Բայց նա այլևս չէր մտածում ազատվել նրանց ձեռքից, այլ գլուխը կախ, գնում էր մահվան ընդառաջ...

Եվ հանկարծ՝ մի գնդակ դիպավ ուղիղ ճակատին։

— Ահա՛ նա... ահա՛ մահը ազատարար։

ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄՈԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաքինությունները Մոլությունների հետ վաղուց ի վեր թշնամի էին։ Մոլություններն ապրում էին ուրախ ու զվարթ և ճարպիկ հնարագիտությամբ սարքում էին իրենց գործերը. իսկ Առաքինությունների կյանքը գորշ և անցնում, բայց դրա փոխարեն բոլոր այբբենարաններում և ծաղկաքաղերում նրանք որպես օրինակ էին բերվում։ Այնինչ Առաքինությունները ծածուկ միտք էին անում. Ա՜յ, եթե մեզ էլ հաջողվի Մոլությունների նման մի լավ գործ գլուխ բերել... Եվ պետք է խոստովանել, առիթից օգտվելով, գլուխ էին բերում։

Դժվար է ասել, թե սկզբում նրանց մեջ ինչից պառակտում առաջացավ և ո՞վ առաջինը սկսեց։ Կարծեմ, առաջինը Առաքինություններն սկսեցին։ Մոլությունը ժիր էր և հնարագիտության մեջ վարպետ։ Հենց որ նա, ոսկեթել ու արծաթ դիպակներով զարդարված, արագավազ երիվարի նման չափ ընկավ արար-աշխարհում, Առաքինությունները նրանց ետևից հասնել չկարողացան։ Ուստի, վիրավորված զգացին իրենց։ «Դե լա՜վ, ասում են,— շարունակիր քո ցուցամոլությունը, մեքենանենով պճնազարդված անամոթ, մենք ձորձերով էլ ամենքից հարգված կլինենք»։ «Դե հարգված եղեք ասործով»,— պատասխան տվեցին Մոլությունները։

Չհանդուրժեցին Առաքինություններն այդ ծաղրը և սկսեցին ամեն տեղ անարգել Մոլություններին։ Հագնում են իրենց ձորձերը, դուրս են գալիս, կանգնում են ճանապարհի խաչակապուկներում և կպչում են անցորդների օձերից. «Ճըշմարի՞տ է, չէ՞, ազնիվ պարոններ, որ մենք ձորձերով էլ սիրելի ենք ձեզ»։ Իսկ անցորդները պատասխանում են. «Անցեք, անցեք, մուրացիկներ, ինչքա՞ն եք բազմացել։ Աստվա՛ծ տա»։

Փորձեցին Առաքինությունները քաղաքապահների օգնությանը դիմել, «Դուք այդ ինչե՞ր եք անում։ Ժողովրդին բոլորովին բաց եք թողել։ Այսպես որ գնա, մեկ էլ տեսաք, ամբողջովին Մոլությունների մեջ կթաղվեն մինչև ականջները»։ Իսկ քաղաքապահները շարունակում են կանգնած մնալ իրենց տեղերում և Մոլություններին պատվի առնել։

Անհաջողության մատնվեցին Առաքինությունները և հուսահատությունից սպառնացին. «Սպասեցե՞ք, ձեր արարքների համար ձեզ աքսո՛ր կքշեն»։

Իսկ Մոլությունները շարունակ առաջ են ընթանում և նույնիսկ պարծենում են. «Բա՞ն եք գտել վախեցնելու,— ասում են,— աքսո՞ր։ Դեռ հարց է, մեզ կաքսորեն՝ թե չեն աքսորի, բայց դուք ծնվել եք, չեք ծնվել, մինչև ականջներդ աքսորի մեջ եք։ Մի սրա՞նց մտիկ, կաշին ու ոսկորն է մնացել, բայց աչքերն ինչպե՞ս են փայլատակում։ Կարկանդակի հոտ են առել, սակայն ուտելու ձեր չգիտեն»։

Մի խոսքով, երկպառակությունը բորբոքվեց և գնալով ավելի ու ավելի խորացավ։ Քանի անգամ նույնիսկ բանը բացահայտ կռվի հասավ, բայց այդ դեպքում ևս բախտը համարյա միշտ Առաքինություններին դավաճանում էր։ Մոլությունները հաղթում էին և շղթաներով կապկապում էին Առաքինություններին. «Հանգի՛ստ նստեք, չարամիտնե՛ր»։ Ու նստում էին նրանք, մինչև իշխանությունը միջամտում ու ազատում էր նրանց։

Այսպիսի տուրուդմփոցներից մեկի ժամանակ նրանց մոտով անցնում էր Իվանուշկա-Դուրաչոկը։ Կանգ առավ և դարձավ կռվողներին.

— Հիմարնե՞ր դուք, հիմարնե՞ր, ինչո՞ւ եք այդպես հաշմացնում միմյանց։ Չէ՞ որ դուք սկզբից բոլորդ էլ «տոհմակիցներ» եք եղել և հետո միայն, մարդկային անկարգությունների ու նենգությունների հետևանքով է, որ Առաքինություններ ու Մոլություններ են առաջ եկել։ «Տոհմակիցներից» ոմանց ճնշել են, մյուսներին ազատ ասպարեզ են տրվել, դրանից էլ մեքենայի անիվները փչացել են։ Եվ աշխարհում թագավորել է խռովությունը, վեճը, տառապանքը... Դուք այսպե՛ս արեք. դիմեցեք սկզբնաղբյուրին, գուցե որևէ համաձայնության գաք։

Ասաց և շարունակեց իր ճանապարհը դեպի գանձատուն՝ հարկը վճարելու։

Ուզեցի՞ն արդյոք կռվողների վրա Իվանուշկայի խոսքերը, թե՞ կռիվը շարունակելու համար վառոդն էր սպառվել,

միայն կռվողները սրերը պատյանը դրեցին և մտածմունքների մեջ ընկան։

Ամենից շատ, սակայն, մտածում էին Առաքինությունները, որովհետև քաղցածությունից նրանց փորը վեց-վեց էր անում, իսկ Մոլությունները, հենց որ հնչեցին նահանջի փողերը, անմիջապես իրենց դժխեմ գործերին շտապեցին և կրկին փառահեղ կյանք վարեցին։

— Հեշտ-հեշտ խոսում է «տոհմակցության» մասին,— առաջինը խոսեց հեզ Իմաստությունը,— մենք ինքներս նրանից ավելի լավ ենք ճանաչում այդ «տոհմակցությունը»։ Բայց տեսեք, որ տոհմակիցների մի մասը թավիշի մեջ է ապրում, ոսկի ամաններից ուտում, իսկ մյուսները սեղանի շուրջն են պտտվում և օրերով քաղցած են մնում։ Իվանուշկայի համար ինչ, նա փորը հիմարությամբ լցրեց, և իրավացի է, բայց մեզ հիմարությամբ խաբել չի լինի, մենք իմանում ենք, թե որտեղ է թաղված շան գլուխը։

— Եվ հետո, ո՞րտեղից լույս ընկավ այդ «տոհմակցությունը»,— անհանգստացավ Բարեպաշտությունը,— քայքայման բան հո չկա՞ դրանում։ Միշտ եղել են Առաքինություններ, և եղել են Մոլություններ. հարյուր հազար տարի է այդ բանն այդպես կա և հարյուր հազար հատոր է գրված այդ մասին, իսկ նա՝ ոչ այս, ոչ այն, վեճի՞ տվեց. «տոհմակիցնե՞ր»։ Չէ՛, դու հապա վերցրու, ծանոթացիր այդ հարյուր հազար հատորին և կտեսնես, թե ի՞նչ փոշի կբարձրանա դրանից։

Քննեցին, ծանր ու թեթև արեցին և վերջապես որոշեցին, որ Բարեպաշտությունը ճիշտ է ասում։ Քանի՞ հազար դար է Առաքինությունը Առաքինություն է համարվում, Մոլությունը՝ Մոլություն։ Քանի՞ հազար գիրք է գրվել այդ մասին, ինչքա՞ն թուղթ ու թանաք է փչացել։ Առաքինությունները միշտ աջ կողմն են կանգնած եղել, Մոլությունները՝ ձախ, և հանկարծ Իվանուշկայի հիմար խոսքով հրաժարվիր ամեն բանից և «տոհմակից» կոչվիր։ Չէ՞ որ դա համազոր է այն բանին, որ հրաժարվեն իրենց կոչման իրավունքից և «մարդ» կոչվեն։ Պարզը պարզ է, բայց երբեմն այնպիսի պարզություն կա, որ գողությունից էլ վատ է։ Համեցեք, հապա, մի պարզ վերաբերմունք ցույց տվեք, առաջին իսկ քայլից այնքան անթիվ,

անհամար թակարդների մեջ ընկնես, որ թերևս, գլուխդ էլ թողնես այնտեղ։

Ոչ, «տոհմակցության» մասին մոռանալու հարկ չկա, բայց որևէ համաձայնության եզր գտնել, կամ ինչպես ռուսներն են ասում՝ հնար բանեցնել, դա, իսկապես որ, խելացի բան կլինի։ Այնպիսի մի հնար, որ Առաքինություններին էլ խնդություն պատճառի, այլև Մոլություններին դուր գա։ Որովհետև Մոլությունները ևս երբեմն ծանր վիճակի մեջ են ընկնում։ Օրինակ, անցյալ օրը Վավաշոտությունը հանգանք գործելիս բռնվել է բաղանիքում, արձանագրություն է կազմվել, իսկ նույն գիշեր Անհավատարմությանը սպիտակեղենով ցած են գլորել աստիճաններից։ Շա՞տ է անցել այն օրից, երբ Ազատամտությունն ուռճանում էր փարթամ ծաղկի պես, իսկ այժմ արմատից պոկել են։ Նշանակում է Մոլության համար ևս հնար գտնելը ձեռնտու է։ Ողորմա՞ծ պարոններ, ողորմա՞ծ պարոններ, ոչ ոք չի՞ ցանկանում միջոց առաջարկել. ո՞վ որևէ «միջոց» նկատի ունի։

Այդ կոչին առաջինը արձագանքեց Փորձառություն կոչված զառամյալ ծերունին (կա երկու Փորձառություն, մեկը՝ ախտավոր, մյուսը՝ առաքինի. սա առաքինին էր)։ Եվ առաջարկեց. «Գտե՛ք,— ասում է,— այնպիսի մեկին, որը և՛ Առաքինությունների կողմից հարգանքի արժանի լինի, և՛ Մոլությունների կողմից։ Եվ նրան բանագնաց ուղարկեցեք թշնամու բանակը»։

Սկսեցին փնտրել և, հասկանալի է, գտան։ Գտան երկու անտուն-անտեր Առաքինություն՝ Ջափավորությունը և Ճըշտապահությունը։ Երկուսն էլ ապրում էին առաքինի գյուղերում խեղճ ու կրակ, որբաբաժին հողամաս ունեին, բայց ծածկաբար դինի էին ծախում և Մոլություններին թաքուն հյուր էին ընդունում իրենց մոտ։

Սակայն առաջին փորձը անհաջողության դատապարտվեց։ Նրանք արտաքինով քիչ վայելչատես էին և չափից ավելի զիջող, որպեսզի կարողանային իրենց վրա դրված պարտականությունը կատարել։ Հազիվ էին նրանք երևացել Մոլությունների ճամբարում, հազիվ էին սկսել իրենց խոսքն այն մասին, թե՝ «կամաց-կամացն ավելի հանդիստ է, իսկ

թաքուն-թաքունը՝ ավելի ստույգ», որ Մոլությունները բոլորը միաբերան աղմկեցին.

— Այդ հեքիաթները մենք շատ ենք լսել, վաղուց է, որ դուք առաջարկում եք մեզ, բայց դա մեր բանը չի։ Գնացեք, տերը ձեզ հետ, զուր տեղ ձեր խոսքերը քամուն մի տվեք։

Եվ կարծես ապացուցելու համար Առաքինություններին, որ իրենք հեշտությամբ խաբվողը չեն, ամբողջ գիշերն անցկացրին «Սամարղանդ» գինետանը, իսկ առավոտյան դեմ, ցրվելիս, բռնեցին Ժուժկալությանն ու Մի՛ շնացիրին և այնպես ստորաբար վարվեցին նրանց հետ, որ նույնիսկ «Սամարղանդ»-ում եղած թուրքերն անգամ զարմացան։ «Լավ պարոններ են, բայց տեսեք ինչե՞ր են անում»,— մտածեցին նրանք։

Այն ժամանակ Առաքինությունները հասկացան, որ դա շատ լուրջ գործ է և պետք է ազդու միջոցներ ձեռք առնել։

Այդ ժամանակ էր, ահա, որ նրանց մեջ մեծանում էր միջին սեռի մի արարած։ Նա ոչ խեցգետին էր, ոչ ձուկ, ոչ հավ, ոչ թռչուն, ոչ տիկին, ոչ պարոն, այլ ամենից էլ քիչ-քիչ։ Անունն էլ միջին սեռի էր՝ Կեղծավորություն...

Այդ արարածի մեջ ամեն բան հանելուկային էր, սկըսած իր ծագումից։ Հնաբնիկներն ասում էին, որ մեկ անգամ Հեզությունը մութ միջանցքում ծանոթացել էր Վավաշոտության հետ և դրանից առաջացել էր մի պտուղ։ Առաքինները այդ պտուղը համայնքով պահել-մեծացրել էին, հետո տվել էին ֆրանսուհի Կամիլֆոյի պանսիոնը։ Այդ ենթադրությունը հաստատվում էր նաև Կեղծավորության արտաքին տեսքից, որովհետև նա, թեպետև ման էր գալիս շարունակ աչքերը ցած խոնարհած, բայց սրատես մարդիկ հաճախ նկատել էին, որ նրա դեմքով երբեմն հեշտասիրական ստվերներ են սահում, իսկ մեջքը, առիթ եղած դեպքում՝ նույնիսկ շատ վատ ցնցվում է։ Անտարակույս է, որ այդ արտաքին երկձայնության մեջ նշանավոր չափով հանցավոր էր Կամիլֆոյի պանսիոնը։ Այնտեղ Կեղծավորությունը սովորեց բոլոր գլխավոր գիտությունները, թե՝ «ինչպես ձգված պահել իրեն», ինչպես «ջուրը չպղտորել», ինչպես՝ «առանց օճառի հոգու մեջ սպրդել», մի խոսքով՝ այն ամենը, ինչ-որ ապահովում է

առաքինի կենցաղակերպը։ Բայց, միաժամանակ, նա խույս տալ չկարողացավ նաև կանկանից, որով ծծված էին պանսիոնի և՛ աղտերը, և՛ օդը։ Բայց՝ դրանից բացի, մաղամ Կամիլֆոն գործը փչացրեց նաև նրանով, որ Կեղծավորությանը հազորդեց իր ծնողների մասին եղած բոլոր մանրամասնությունները։ Հոր (Վավաշտության) մասին նոստովանեց, որ նա մովետոն էր և ժլիրհ, բոլորին կսմթում էր։ Մոր (Հեզության) մասին պատմեց, որ նա թեպետ փայլուն արտաքին չուներ, բայց այնպես հաճելի ճչում էր կսմթելիս, որ նույնիսկ կըսմթելու տրամադիր չեղած Մոլությունները (ինչպես Կաշառակերությունը, Փառասիրությունը, Վհատությունը և այլն) սնգամ չէին կարողանում հրաժարվել այդ բավականությունից։

Ահա այդ միջին արարածին, որն աչքերը խոնարհում էր ցած, բայց փակ կոպերի միջից դյուրագրգիռ դիտում էր շրջապատը՝ ընտրեցին Առաքինությունները, որպեսզի բանակցությունների մեջ մտնի Մոլությունների հետ և այնպիսի մի ընդհանուր modus vivendi[9] գտնի, որի շնորհիվ թե մեկը և թե մյուսները ազատ և խաղաղ ապրել կարողանան։

— Բայց դու մեր ձևերը գիտե՞ս արդյոք,— ուզեց նախապես հարցաքննել նրան Նրբակիրթ Վարվեցողությունը։

— Ե՞ս,— զարմացավ Կեղծավորությունը։— Ահա ինչպես...

Եվ դեռ ուշքի չէին եկել Առաքինությունները, որ Կեղծավորության աչքերն արդեն ցած էին խոնարհված, ձեռքերը կրծքին էին խաչված, և այտերը կարմրատակել էին... Իսկակա՛ն աղջիկ։

— Ինչ հետ եկա՞ծն է։ Իսկ նրա՞նց նման...

Բայց Կեղծավորությունն այդ հարցին նույնիսկ պատասխան չտվեց։ Մի ակնթարթում նա այնպիսի չտեսնված, բայց այն աստիճան հավատի ձևափոխություն ստացավ, որ Շրջահայացը միայն թքեց. թո՛ւհ...

Ապա միաբերան որոշեցին նոտար Բիզյանին մի հավատարմագիր գրել տան և հանձնեն Կեղծավորությանն այն

մասին, որ նա լիազորվում է՝ առաքինության վերաբերյալ բոլոր գործերը վարելու։

Մի գործ որ սկսեցիր, կես ճանապարհին կանգ մի առ։ Որչափ էլ դառն էր, սակայն հարկադրված էին Մոլություններից թողություն խնդրել։ Գնում է Կեղծավորությունը նրանց անարգ որջը և ամոթից չգիտե աչքերն ուր թաքցնի։ «Ամեն տեղ այժմ այս նողկալի աղտեղությունն է տիրում»,— գանգատվում է նա բարձրաձայն, իսկ մտքում ավելացնում է. «Ա՜խ, Մոլությունները լավ են ապրում»։ Եվ իրոք, Առաքինության կացավայրից հազիվ էր մի վերստաչափ հեռացել, որ արդեն ամեն կողմից ծովի պես հորձանք տվին նրա վրա ծիծաղը, պարն ու խաղերը։ Եվ ի՞նչ պատվական քաղաք էին շինել իրենց համար Մոլությունները. ընդարձակ, լուսավոր, փողոցներով և նրբափողոցներով, հրապարակներով ու զբոսարաններով։ Ահա Սուտ Վկայության փողոցը, ահա Մատնության հրապարակը, ահա և Խայտառակության զբոսարանը։ Ինքը, Ստության Հայրը նստած այդտեղ, իր խանութում, զրպարտության առևտուր է անում։

Բայց որչափ էլ ուրախ էին ապրում Մոլությունները, որչափ էլ փորձառու էին նրանք ամեն տեսակ սրիկայական գործերում, այնուամենայնիվ, տեսնելով Կեղծավորությանը, նրանք էլ զարմանքից քար կտրեցին։ Արտաքինից ոչ ավել, ոչ պակաս, իսկական կույս աղջիկ, բայց թե իրո՞ք է այդպես՝ այդ բանը, սատանան ինքը որոշել չէր կարող։ Նույնիսկ Ստության Հայրը, որը կարծում էր, թե աշխարհում չկա այնպիսի ստորություն, որն ինքը գերազանցած չլիներ, նա էլ աչքերը չռեց։

— Ես,— ասում է,— իզուր էի երազում այն մասին, որ աշխարհում ինձանից վնասակար բան չկա։ Ես ի՞նչ եմ որդ։ Ահա նա, իսկական թույնը որտեղ է։ Ես ավելի շուտ անամոթի համբավ ունեմ, այդ պատճառով էլ ինձ, թեպետև ոչ ճաճախ, բայց և այնպես ժամանակ առ ժամանակ վզակոթիս տալով աստիճաններից ցած են գլորում, իսկ այս գանը մեկ որ կպավ, նրանից այլևս ազատվել չես կարող։ Այնպես կխճճի քեզ, այնպես կկաշկանդի, որ մինչև բոլոր հյութերդ չքամի, բաց չի թողնի։

Այնուամենայնիվ, որչափ էլ մեծ լիներ Կեղծավորության հարուցած էնտուզիազմը, սակայն այստեղ ևս բանը առանց վեճի գլուխ չեկավ։ Նշանավոր Մոլությունները (բուն բնակիչները), որոնք ամենից ավելի անցյալի ավանդություններն էին գնահատում, ինչպես օրինակ՝ Սոփեստությունը, Դատարկամտությունը, Հպարտությունը, Մարդատյացությունը և ուրիշները, ոչ միայն իրենք չընդառաջեցին Կեղծավորությանը, այլև ուրիշներին նախազգուշացրին։

— Իսկական Մոլությունը դիմակավորվելու կարիք չունի, ասացին նրանք,— բայց իր դրոշը պահում է բարձր ու ահեղ։ Էական ի՞նչ նոր բան կարող է բաց անել մեզ համար Կեղծավորությունը, ինչ որ դարեր ի վեր հայտնի եղած չլինի մեզ և մենք գործադրած չլինենք։ Ոչի՛նչ ամենևին։ Ընդհակառակը, նա մեզ վտանգավոր հնարքներ է սովորեցնելու և հարկադրելու է մեզ՝ եթե ոչ ուղղակի ամաչելու, ինքներս մեզանից, ապա, համենայն դեպս, այնպես ցույց տալու, որ ամաչում ենք։ Caveant consules![10] Մինչև այժմ մենք բավականաթիվ անդրդվելի ու հավատարիմ հետևորդներ ունենք։ Բայց նրանք, տեսնելով մեր հնարաբանությունները, կարող են ասել, որ, ըստ երևույթին, հիրավի՝ Մոլությունների գործը վատ է, քանի որ հարկադրված են իրենք իրենց ժխտել։ Եվ երբ կդարձնեն մեզանից, ա՜յ, կտեսնեք, երբ կդարձնեն։

Այսպես էին ասում անուղղելի Մոլություն-Կատոնները[11], որոնց մեջ ավանդությունները միս ու արյուն էին դարձել և որոնք չէին ընդունում ոչ նոր հովեր, ոչ նոր գայթակղություններ, ոչ նոր պայմաններ։ Ծնված լինելով աղբի մեջ, նրանք գերադասում էին շնչահեղձ լինել այնտեղ, միայն թե չնահանջեն հին պապենական ավանդություններից։

Նրանց հաջորդում էր Մոլությունների մեկ այլ կատեգորիա, որը նույնպես առանձին էնտուզիազմ չհայտնաբերեց Կեղծավորության հանդեպ, սակայն ոչ այն պատճառով, որ վերչինս զզվանք էր պատճառում իրենց, այլ որովհետև նրանք արդեն առանց Կեղծավորության միջնորդության էլ գաղտնի հարաբերության մեջ էին Առաքինությունների հետ։ Սրանց թվին էին պատկանում Դավաճանությունը, Ուխտադրժությունը, Մատնությունը, Լրտեսությունը, Ամբաստանությունը և ուրիշները։ Նրանք ցնծության բացականչություններ չարեցին, չծափահարեցին, կենացներ չառաջարկեցին, այլ միայն աչքով արեցին, թե համեցեք, բարով ես եկել։

Ինչ էլ որ լիներ, Կեղծավորության հաղթանակն ապահովված էր։ Երիտասարդությունը, հանձինս Շնության, Հարբեցողության, Շատախոսության, Ցոփության, Տուրուդմփոցի և ուրիշների, անմիջապես ժողով գումարեց և բանագնացին դիմավորեց այնպիսի օվացիաներով, որ Սոփեստությունն անմիջապես հարկադրված եղավ առմիշտ վերջ տալ իր քրքիջընջոցին։

— Դուք միայն վրդովում եք բոլորի միտքը, ձեր գարշելիներ,— գոռգոռացին ծերերի վրա երիտասարդները։— Մենք ապրել ենք ուզում, իսկ դուք վհատություն եք սերմանում։ Մենք քրեստոմատիաներում տեղ կգտնենք (դա առանձնապես շողոքորթում էր), սալոններում կփայլենք։ Պառաված կանայք կսիրեն մեզ։

Մի խոսքով, համաձայնության հողը միանգամից գտնըվեց, այնպես որ, երբ Կեղծավորությունը վերադառնալով, Առաքինություններին հաշիվ ներկայացրեց իր առաքելության մասին, նրանք միաբերան ընդունեցին, որ Առաքինությունների և Մոլությունների միջև միմյանցից զատ ապրելու և միմյանց հետ թշնամի լինելու յուրաքանչյուր առիթ վերացած է ընդմիշտ։ Այնուամենայնիվ, հին անվանացանկը վերացնելու համարձակություն չունեցան. ո՞վ գիտե, գուցե կրկին հարկավոր լինի։ Բայց որոշեցին այդ անվանացանկը գործադրության մեջ դնել այն հաշվով, որ բոլորի համար պարզ լինի, թե դա ոչ այլ ինչ է, եթե ոչ քամուն արվող աճյուն։

Այդ օրվանից Առաքինությունների և Մոլությունների մեջ մեծ հյուրասիրություններ սկսվեցին։ Ցոփությունը ժուժկալության մոտ հյուր է ուզում գնալ, թևանցուկ է անում Կեղծավորությանը,— և ժուժկալությունն արդեն հեռվից նկատելով նրանց, ողջունում է.

— Բարով, հազա՞ր բարի, խնդրում եմ խոնարհաբար։ Մենք ձեր մասին...

Եվ ընդհակառակը։ Ժուժկալությունն է ցանկանում Ցո-

փության մոտ պասուց կերակուր ճաշակել, թեանցուկ է անում Կեղծավորությանը... և Ցոփության դռներն արդեն լայն բացված են.

— Բարով, հազա՜ր բարի, խնդրում եմ խոնարհաբար։ Մենք ձեր մասին...

Պաս օրերին պասուց կերակուրով են հյուրասիրում, ուտիսին՝ ուտիքի խորտիկներով... Մի ձեռքով խաչ են հանում, մյուսով՝ վայրագություն են անում։ Մի աչքը երկինք են ամբառնում, մյուսով՝ անդադար տենչում են։ Առաջին անգամ իրենց կյանքում Առաքինությունները քաղցրություններ ճաշակեցին, բայց Մոլություններն էլ կորուստ չունեցան։ Հնդհակառակը, բոլորին և ամենքին հայտարարում են. «Երբեք մենք այնպիսի համեղ բաներ չենք ունեցել, որով այժմ քեֆ ենք անում շարունակ»։

Իսկ Իվանուշկա-Դուրաչոկը մինչև օրս էլ չի կարողանում հասկանալ, թե ինչու Առաքինություններն ու Մոլություններն այդպես սիրով հաշտվեցին Կեղծավորության միջոցով, այնինչ շատ ավելի բնական էր՝ համաձայնության գալ այն հիման վրա, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը «տոհմակից» են միմյանց։

ԱՐՋԸ ԿՈՒՍԱԿԱԼ

Մեծ և լուրջ ոճրագործությունները հաճախ փառավոր անուն են ստանում և, որպես այդպիսիներ, գրվում են Պատմության էջերում։ Իսկ փոքր և տղայական ոճրագործությունները կոչվում են ամոթալի և ոչ միայն Պատմությունը չեն մոլորեցնում, այլև արժանի չեն լինում ժամանակակիցների գովասանքին։

I. ԹՈՓՏԻԳԻՆ 1-ԻՆ

Թոփտիգին 1-ինն այդ բանը շատ լավ էր հասկանում։ Հավատարիմ ծառայող-գազան էր, որջեր պատրաստել փիտեր և ծառեր արմատախիլ անել, հետևապես որոշ չափով ճարտարապետական արվեստին նույնպես տիրապետում էր։ Բայց նրա ամենից թանկարժեք հատկությունն այն էր, որ նա ուզում էր, ինչ գնով էլ լինի, Պատմության էջերն ընկնել և այդ պատճառով, աշխարհում ամենից ավելի արյունահեղության փառքն էր դերադասում։ Այնպես որ, ինչի մասին էլ խոսելու լինեիք հետը՝ առևտրի, արդյունաբերության, գիտությունների՝ նա միշտ նույն եզրակացության էր հանգում՝ արյունահեղություններ... արյունահեղություններ... ահա՛ ինչ է հարկավոր։

Այդ պատճառով Առյուծը նրան մայորության աստիճան տվեց և, որպես ժամանակավոր միջոց, հեռավոր անտառը կուսակալ ուղարկեց, ներքին թշնամիներին ճնշելու։

Անտառի բնակիչներն իմացան, որ մայորն իրենց մոտ, անտառն է գալիս, և մտածմունքների մեջ ընկան։ Այն ժամանակ անտառի ռամիկների մեջ այնպիսի սանձարձակություն էր տիրում, որ ամեն մեկն իր ուզածն էր անում։ Գազանները վազվզում էին, թռչունները թռչում, միջատները սողում էին, իսկ համաքալել ոչ ոք չէր կամենում։ Հասկանում էին ռամիկները, որ այդ բանի համար իրենց գլուխը չեն շոյի, սակայն ինքնակամ հրաժարվել դրանից չէին կարող։

— Սպասեցեք, մայորը գա,— ասում էին նրանք,— մի լավ կսեղմի, այն ժամանակ մենք կիմանանք, թե ինչ ասել է մեր քեֆին ապրել։

Եվ իսկապես, դեռ ուշքի չէին եկել գյուղացիները, որ Թոփտիգինն արդեն նրանց մոտ էր։ Կուսակալություն հասավ նա վաղ առավոտյան և անմիջապես որոշեց՝ վաղը արյունահեղություն է լինելու։ Ի՞նչը հարկադրեց նրան այդ որոշումն ընդունելու, հայտնի չէ, որովհետև նա, իսկապես ասած, շար չէր, այլ հենց այնպես — անասուն էր։

Եվ անպայման իր ծրագիրը կիրագործեր, եթե սատանան չդայթակղեցներ նրան։

Բանն այն է, որ արյունահեղությունն սկսելուց առաջ, Թոփտիգինը մտածեց իր անվանակոչությունը տոնել։ Մի դուլլ օղի գնեց և մեն-մենակ խմեց-հարբեց։ Բայց որովհետև նա իր համար դեռ որջ չէր պատրաստել, ուստի հար-

կադրված էր հարբած-հարբած անտառի բացատում պառկել՝ ընելու։ Պառկելն ու խումփացնելը մեկ եղավ, իսկ առավոտյան դեմ հակառակի նման այդ նույն բացատի մոտով թռավ Սարյակը։ Արտասովոր Սարյակ էր դա, խելոք էր. և՛ դույլ կրել գիտեր, և՛ կարևոր դեպքում դեղձանիկի փոխարեն երգել կարող էր։ Բոլոր թռչունները՝ նրան նայելով ուրախանում էին ու ասում՝ կտեսնեք, որ մեր Սարյակը ժամանակով փաթեթներ կսկսի տանել։ Նրա խելոքության լուրը նույնիսկ Առյուծին էր հասել և շատ անգամ էր ասել նա էշին (էշն այն ժամանակ նրա մոտ խորհրդական էր՝ իմաստունի համբավով), որ շատ կցանկանար գեթ մեկ ականջով լսել, թե ինչպես է Սարյակը երգելու իր ճիրաններում։

Բայց Սարյակը որչափ էլ խելոք էր, այնուամենայնիվ այս անգամ գլխի չընկավ։ Կարծեց թե բացատում փտած կոճղ է ընկած, նստեց արջի վրա ու սկսեց երգել։ Իսկ Թոփտիգինի քունը շատ էր զգայուն։ Զգում է նա, որ իր մարմնի վրա մեկը թռչկոտում է, և մտածում է, որ դա, անտարակույս, ներքին թշնամի է լինելու։

— Այդ ո՞վ է ապիկար սովորությամբ կուսակալի մարմնի վրա թռչկոտում,— բղավեց նա վերջապես։

Սարյակը պետք է թռչեր-հեռանար, բայց այս անգամ ևս չըմբռնեց բանի էությունը։ Իր համար նստել ու զարմանում է, որ կոճղը խոսել սկսեց։ Դե, բնական է, մայրն այլևս չըհամբերեց, թաթով չանթեց գոհիկին և, հարբածությունից դեռ զգաստացած չլինելով, առանց նայելու կերավ։

Ուտելը կերավ, բայց ուտելուց հետո հանկարծ ուշքի եկավ՝ «ի՞նչ էր կերածը, և այդ ի՞նչ թշնամի էր, որից նույնիսկ ատամների տակ ոչինչ չմնաց»։ Մտածեց-մտածեց, սակայն ոչ մի եզրակացության գալ չկարողացավ անասունը։ Կերավ — ուրիշ ոչինչ։ Եվ այդ հիմար գործը ոչ մի կերպ շտկել հնարավոր չէր, որովհետև ամենաանմեղ թռչունն անգամ լափելուց հետո մայրի փորում նույնպես փտելու է, ինչպես և ամենահանցավորը։

— Ինչո՞ւ ես կերա նրան,— հարցաքննում էր ինքն իրեն Թոփտիգինը.— Առյուծն ինձ այստեղ ուղարկելով, նախազգուշացրեց, թե՝ նշանավոր գործեր կատարիր, իսկ էշին

գործերից զգուշացիր։ Բայց ես հենց առաջին քայլերից ըսկըսեցի սարյակներ կուլ տալ։ Սակայն ոչինչ, առաջին պատառը միշտ կոկորդին է մնում։ Լավ է, որ վաղ առավոտ է և իմ արած հիմարությունը տեսնող չի եղել։

Ավա՜ղ, չգիտեր, ըստ երևույթին, Թոփտիգինը, որ վարչական գործունեության շրջանում առաջին սխալն ամենից ճակատագրականն է։ Որ սկզբից ևեթ վարչական վազքին շեղ ընթացք տալով, հետագայում այն ավելի ու ավելի կհեռացնի իր ուղիղ գծից...

Եվ իրոք, դեռ չէր հանգստացել այն մտքից, թե իր հիմարությունը տեսնող չի եղել, երբ լսեց, որ տարմահավը հարևան կեչու վրայից ձայն է տալիս.

— Հիմա՛ր, նրան ուղարկել են մեզ մի հայտարարի բերի, իսկ նա Սարյակ է ուտում։

Մոլեգնեց մայրը, տարմահավի ետևից ծառը մագլցեց, բայց տարմահավը հիմար չէր, մյուս ծառի վրա թռավ։ Արջը՝ նրա ետևից, իսկ նա նորից թռավ առաջին ծառին։ Արջն այնքան բարձրացավ-իջավ, որ այլևս ուժ չուներ, հոգին դուրս եկավ։ Իսկ տարմահավին աչք տալով, ագռավն էլ համարձակություն առավ։

— Ա՜յ քեզ անասուն, բարի մարդիկ նրանից արյունահեղություն են սպասում, իսկ նա Սարյա՜կ է ուտում։

Արջը ագռավի ետևից է ընկնում, բայց հանկարծ թփի տակից նապաստակն է դուրս թռչում։

— Գոհի՛կ բուրբոն, Սարյա՜կ է ուտում։

Հեռու-հեռու աշխարհներից մոծակը թռավ եկավ։

— Risum teneatis, amici![12] Սարյա՜կ է ուտում։

Ճահիճում գորտը կկռաց.

— Դդումի գլուխ, Սարյա՜կ է ուտում։

Մի խոսքով, և՛ ծիծաղելի է, և՛ վիրավորական։ Մեկ այս կողմն է ընկնում, մեկ այն կողմն է ընկնում մայրը, ուզում է իրեն նշավակողներին բռնել, բայց ապարդյուն։ Եվ որչափ շատ է ճիգ անում, այնչափ հիմար դրության մեջ է ընկնում։ Մի ժամ էլ չէր անցել, որ անտառում բոլորը, փոքրից մինչև մեծը գիտեին, որ մայր Թոփտիգինը Սարյակին կերել է։ Ամբողջ անտառը զայրացած էր։ Նոր կուսակալից այդ չէին

սպասում։ Կարծում էին, որ նա ձորերն ու ճահիճներն արյունահեղությամբ կփառաբանի, իսկ նա, համեցեք, ի՞նչ արեց։ Եվ ուր էլ դառնում է Միխայլո Իվանիչը, ամեն տեղ հնչում է. «Հիմա՞ր, հիմա՞ր, Սարյակ է ուտում»։

Գլուխը կորցրեց Թոփտիգինը, բարձրագոչ ոռնաց։ Միայն մեկ անգամ էր կյանքում նման բան պատահել իր հետ։ Այն ժամանակ դուրս էին քշել նրան իր որջից և որսաշների մի ամբողջ ոհմակ էին բաց թողել վրան։ Այնպե՞ս ամուր էին կպել իրեն շան լակոտները՝ և՛ ականջներին, և՛ բաշին, և՛ պոչի տակ։ Իսկապես որ այն ժամանակ մահը տեսավ նա իր աչքով։ Սակայն, այնուամենայնիվ, մի կերպ ազատվեց. շներից մի տասնյակի չափ խեղդամահ արեց, մյուսներից փախուստ տվեց։ Իսկ այժմ փախչելու տեղ էլ չկա։ Ամեն թուփ, ամեն ծառ, ամեն կոշտ կարծես կենդանի լեզու առած, ծաղրում է իրեն, և ինքը հարկադրված է լսել։ Բուն, որ այնչափ հիմար թռչուն է, բուն էլ ուրիշներից լսելով, գիշերները կանչում է. «Հիմա՞ր, Սարյա՛կ է ուտում»։

Բայց ամենից կարևորն այն էր, որ ոչ միայն ինքն էր նվաստացման ենթարկվում, այլև տեսնում էր, որ իշխանավորական հեղինակության սկզբունքն օրավուր ավելի ու ավելի ընկնում է։ Մեկ էլ տեսար, լուրը հարևան անտառները տարածվեց, և այնտեղ էլ սկսեցին ծաղրել իրեն։

Զարմանալի է, թե ինչպես ամենաչնչին պատճառները երբեմն ամենալուրջ հետևանքներ են ունենում։ Սարյակը փոքրիկ թռչնիկ է, բայց այդպիսի, կարելի է ասել, գիշատիչի հոչակը հավիտյանս փչացրեց։ Քանի դեռ մայրը նրան չէր կերել, ոչ ոքի մտքով չէր անցնում ասել, որ Թոփտիգինը հիմար է։ Բոլորն ասում էին. «Ձերդ արժանապատվություն, դուք մեր ծնող հայրն եք, մենք՝ ձեր զավակները»։ Բոլորը գիտեին, որ ինքը էշն Առյուծի առաջ նրա մասին բարեխոսում է, իսկ երբ էշը մեկնումեկին գնահատում է, նշանակում է նա արժանի է դրան։ Եվ ահա, շնորհիվ վարչական ամենաչնչին սխալի, բոլորի համար ամեն ինչ միանգամից պարզվեց։ Բոլորի լեզվից, ասես ինքն իրեն, դուրս թռավ՝ «Հիմա՞ր, Սարյա՛կ է ուտում» բառերը։ Այնպես, ինչպես մեկը խեղճ փոքրիկ գիմնազիստին մանկավարժական միջոցներով ինքնասպանության հասցնի... Բայց ոչ, այդպես էլ չէ, որովհետև գիմնազիստին ինքնասպանության հասցնելը փոքր ոճրագործություն չէ, այլ իսկական ոճրագործություն է, որը, թերևս, ուշադրության է առնում նաև Պատմությունը... Բայց... Սարյա՞կ... ասացե՛ք խնդրեմ։

«Այս տեսակ էլ ծիծաղելի բա՞ն, եղբայրներ»,— բառաչանչեցին խմբովին ճնճղուկները, ոզնիներն ու գորտերը։

Սկզբում Թոփտիգինի արարքի մասին խոսում էին զայրույթով (հարազատ անտառի համար ամոթաբեր էր), հետո սկսեցին ծաղրել. առաջ ծաղրում էին շրջակա հարևանները, հետո սկսեցին կրկնել նաև հեռավորները, սկզբում թռչունները, հետո գորտերը, մոծակները, ճանճերը։ Ամբողջ ճահիճը, ողջ անտառը։

— Ահա թե ինչ է նշանակում հասարակական կարծիք,— ավազում էր Թոփտիգինը, թաթով մաքրելով թփերում քերծված դունչը,— իսկ հետո, թերևս և Պատմության էջերն ընկնես... Սարյակի հետ միատեղ։

Իսկ Պատմությունն այնպիսի մեծ գործ է, որ անգամ Թոփտիգինը, երբ այդ մասին հիշատակություն էր լինում, մտորումների մեջ էր ընկնում։ Նա ինքը Պատմության մասին շատ անորոշ հասկացողություն ուներ, բայց էշից լսել էր, որ Առյուծն անգամ վախենում է նրանից. լավ չէ, ասում է, գազանային բնավորությամբ Պատմության մեջ ընկնելը։ Պատմությունը միմիայն փառահեղ արյունահեղություններն է գնահատում, իսկ մանրերի մասին հիշատակում է արհամարհանքով։ Եթե, օրինակ, նա կովերի մի ամբողջ հոտ խոշտանգեր, մի ամբողջ գյուղ ավազակությամբ թշվառացներ կամ անտառային վերակացուի տունը գերան-գերան քանդեր, այն ժամանակ Պատմությունը... սակայն այն ժամանակ թքած Պատմության վրա։ Հավանորեն այն ժամանակ էշը նրան գովասանական նամակ կգրեր։ Իսկ այժմ, տեսեք, Սարյակին կերավ և դրանով իսկ իրեն փառազրկեց։ Հազարավոր վերստեր կտրեց՝ եկավ, ինչքա՞ն ճանապարհածախս և օրապահիկ վատնեց — և առաջին գործը Սարյակին ուտելը եղավ... Ա՞խ։ Երեխաները դպրոցական նստարանների վրա կիմանան այդ մասին։ Ե՛վ վարդենի տունգուզը, և՛ ստեպանե-

րի զավակ կալմիկը — բոլորը կասեն՝ մայոր Թոփտիգինին ուղարկում են թշնամիներին նվաճելու, իսկ նա, դրա փոխարեն, Սարյակ է ուտում։ Չէ՞ որ իր երեխաներն էլ գիմնազիա են հաճախում։ Մինչև այժմ նրանց մայորի որդի էին անվանում, իսկ այսուհետև աշակերտները նրանց հանգիստ չեն տա, հեռևներից ընկած կբացականչեն՝ «Սարյա՜կ է կերել, Սարյա՜կ է կերել»։ Քանի՜-քանի՜ մեծամեծ արյունահեղություններ պիտի կատարի, որպեսզի այդպիսի մի գարշելիություն իր վրայից մաքրի։ Ինչքա՜ն ժողովուրդ պետք է թալանել, քայքայել, թշվառացնել։

Անիծյալ է այն ժամանակը, որը հիմար ոճրագործությունների օգնությամբ հասարակական բարեկարգության միջնաբերդերն է խորտակում, բայց խայտառակ, խայտառակ, հազարապատիկ խայտառակ է այն ժամանակը, որը մտածում է նույն այդ նպատակին հասնել խայտառակ և չնչին ոճրագործությունների օգնությամբ։

Անհանգիստ է Թոփտիգինը, գիշերները չի քնում, գեկուցումներ չի ընդունում, շարունակ նույն բանի մասին է մտածում, թե՝ «Ա՜խ, ի՜նչ կասի էշը իմ մայորական ստահակության մասին»։

Եվ հանկարծ էշից հրաման է ստացվում.

«Հասել է ի գիտություն նորին բարձրաստիճանություն պարոն Առյուծին, որ դուք ներքին թշնամիներին չեք հնազանդեցրել, այլ միայն Սարյակ եք կերել — ճշմարի՞տ է»։

Հարկադրված էր խոստովանել։ Զղջաց Թոփտիգինը, գեկուցագիր ուղարկեց և սպասում է։ Հասկանալի է, ուրիշ ոչ մի այլ պատասխան լինել չէր կարող, բացի մեկ պատասխանից՝ «Հիմա՜ր, Սարյա՛կ է կերել»։ Բայց մասնավոր կերպով էշը հանցավորին լուր տվեց (արջը գեկուցագրի հետ միասին մի տակառ մեղր էր ուղարկել նրան պարգև. «Դուք անպայման պետք է առանձնահատուկ արյունահեղություն անեք այդ գարշելի տպավորությունը վերացնելու համար»...

— Եթե բանը դրան է մնացել, ես դեռ իմ համբավը կուղղեմ,— ասաց Միխայլո Իվանիչը և անմիջապես հարձակվեց ոչխարների հոտի վրա ու մինչև վերջին ոչխարը հոշոտեց։ Հետո մորուտում բռնեց մի կնոջ և մորիով լի ամանը խլեց։

Հետո սկսեց արմատներ և թելեր որոնել, և, ի դեպ, հիմունքների ամբողջ մի անտառ շուռ տվեց։ Վերջապես, գիշերը մտավ տպարանը, մեքենաները փշրեց, տառերը խառնեց, իսկ մարդկային մտքի արտադրությունն արտաքնոցը նետեց։

Այդ ամենն անել-վերջացնելուց հետո, շուն-շան որդին ծարապատիկ նստեց ու սպասում է, որ խրախուսեն իր արարքը։

Սակայն նրա հույսերը չարդարացան։

Թեպետև էշը, առաջին իսկ առիթից օգտվելով, Թոփտիգինի քաջագործություններն ամենալավ գույներով պատկերացրեց, բայց Առյուծը ոչ միայն չպարգևատրեց նրան, այլև էշի զեկուցագրի անկյունում սեփականաթաթ խզմզեց՝ «Չեմ հավատում, որ այս օֆիցերը քաջ լինի. որովհետև սա ինքը նույն այն Թոփտիգինն է, որն իմ սիրեցյալ Սարյակը կերավ»։

Եվ հրամայեց հրաժարեցնել նրան հետևազորից։

Այդպես էլ Թոփտիգին առաջինը մայոր մնաց հավիտյանս։ Իսկ եթե նա ուղղակի տպարաններից սկսած լիներ, հիմա արդեն գեներալ էր։

II. ԹՈՓՏԻԳԻՆ 2-ՐԴ

Բայց պատահում է և այնպես, որ փայլուն ոճրագործություններն անգամ ապարդյուն են անցնում։ Դրա ողբագին օրինակ հանդիսանալը վիճակված էր մեկ այլ Թոփտիգինի։

Այս իսկ ժամանակ, երբ Թոփտիգին առաջինը հոշակվում էր իր խուլ անկյունում, Առյուծն այդպիսի մի խուլ անկյուն ուղարկեց մեկ այլ կուսակալ, նույնպես մայոր և նույնպես Թոփտիգին անունով։ Սա ավելի խելոք էր իր անվանակցից և, ինչն ամենից կարևոր է, հասկանում էր, որ վարչական համբավի խնդրում ամբողջ ապագան կախված է ադմինիստրատորի առաջին քայլից։ Ուստի, դեռ մինչև ճանապարհածախք ստանալը, նա լրջորեն կշռադատեց իր անելիքի ծրագիրը, և այն ժամանակ միայն վազեց կուսակալություն։

Այնուամենայնիվ, նրա կարիերան ավելի կարճատև եղավ, քան Թոփտիգին 1-ինի կարիերան։

Գլխավորապես նա հույսը դրել էր այն բանի վրա, որ տեղ հասնելուն պես անմիջապես ավերելու է տպարանը. այդ բանը էշն էլ նրան խորհուրդ էր տվել։ Պարզվեց, սակայն, որ նրան վստահած այդ խուլ անկյունում ոչ մի տպարան չկար, թեպետև վաղեմի բնակիչները հիշում էին, որ մի ժամանակ, ահա այն սոճու տակ պետական ձեռքի մամուլ գոյություն ուներ, որն անտառային լրագիր էր տպում, բայց դեռևս Մագնիցկու ժամանակ այդ մամուլը հրապարակով այրվել էր, և մնացել էր միայն ցենզուրային վարչությունը, որը լրագրերի կատարած պարտականությունը տարմահավերի վրա էր դրել։ Վերջիններս ամեն առավոտ՝ անտառում թռիչք կատարելիս, տարածում էին օրվա քաղաքական նորությունները, և ոչ ոք դրանից անհարմար դրության մեջ չէր ընկնում։ Այնուհետև հայտնի էր նաև, որ Փայտփորիկը, ծառի կեղևի վրա անդադրում գրում էր «Անտառի պատմությունը», բայց գող մրջյուններն այդ կեղևը գրվելուց հետո, կրծում և հափշտակում էին։ Եվ այդպիսով, անտառի շինականներն ապրում էին՝ չճանաչելով ոչ անցյալը, ոչ ներկան և չթափանցելով ապագայի խորքերը։ Կամ, այլ խոսքով ասած, թափառում էին անկյունից անկյուն՝ ժամանակների խավարով պատած։

Այն ժամանակ մայորը հարցրեց՝ չկա՞ արդյոք անտառում գոնե համալսարան կամ թեկուզ ակադեմիա, այդպիսիքն այրելու համար, բայց դուրս եկավ, որ Մագնիցկին այստեղ էլ նրա մտադրությունը կանխել էր. համալսարանն իր կազմով վեր էր ածել սահմանապահ գումարտակների, իսկ ակադեմիկոսներին բանտարկել էր փշակում, ուր նրանք մինչև օրս էլ լեթարգիական քնի մեջ են գտնվում։ Բարկացավ Թոփտիգինը և պահանջեց, որ Մագնիցկուն իր մոտ բերեն, որպեսզի նրան հոշոտի (similia similibus curantur)[13], բայց պատասխան ստացավ, որ Մագնիցկին, կամոքն ասած, հանգել է ի տեր։

Ճար չկար, Թոփտիգին 2-րդը վշտացավ, բայց չհուսալքվեց։ «Եթե այդ սրիկաների հոգին՝ այդպիսին չլինելու պատ-

ճառով՝ խորտակել չի կարելի,— ասաց նա ինքն իրեն,— նրջանակում է, պետք է ուղղակի նրանց կաշին մաշկել»։

Ասելն ու անելը մեկ եղավ։ Ընտրեց մի մութ գիշեր և մտավ հարևան գյուղացու բակը։ Հերթով հոշոտեց ձին, կովը, խոզը, զույգ ոչխարը և, թեպետ սրիկան գիտեր, որ գյուղացու տունը վերջնականապես քանդեց, բայց և այնպես իր արածը քիչ էր թվում։ «Սպասիր,— ասում է,— ես քո խրճիթը գերան-գերան կքանդեմ, հավիտյանս մուրացկան կդարձնեմ»։ Եվ այդ ասելով, բարձրացավ տանիքը, որպեսզի իր շարագործությունն իրագործի։ Միայն հաշվի չէր առել, որ գերանը փտած է։ Հենց որ ոտքը վրան դրեց, գերանը խորտակվեց։ Թոփտիգինը կախվեց օդում։ Տեսնում է, որ առանց այլևայլության գետին է գլորվելու, սակայն ոչ մի ցանկություն չունի։ Գրկեց գերանի կտորն ու ոռնաց։

Ոռնոցի վրա վազ տվեցին գյուղացիները, որը բրով, որը կացինով, որն էլ մզրախով։ Ուր էլ որ դառնում էին, ամեն կողմ ավերածություն է։ Ցանկապատերը փշրված են, բակը բաց է, գոմում արյան լիճ է կանգնած։ Իսկ բակի մեջ գերանից ինքը թշնամին է կախված։ Կատաղեցին գյուղացիները։

— Տեսնո՞ւմ ես նզովյալին, իշխանության գովասանքի՛ն է ուզում արժանանալ, իսկ մենք այդ պատճառով պետք է թշվառանանք։ Հապա՞, եղբայրներ, մեծարե՛նք նրան։

Այդ ասելով, մզրախը դրեցին այնտեղ, ուր պետք է ընկներ Թոփտիգինը, և մեծարեցին։ Հետո մաշկեցին կաշին, իսկ դիակը ճահիճը նետեցին, ուր առավոտյան գիշատիչ թռչունները կոցահարեցին նրան։

Այդպիսով անտառային նոր պրակտիկա առաջացավ, ըստ որի, փայլուն ոճրագործություններն էլ ոչ սակավ ողբալի վախճան կարող են ունենալ, ինչպես և ամոթալի ոճրագործությունները։

Այդ նոր պրակտիկան հաստատեց նաև անտառային Պատմությունը, ավելացնելով՝ առավել ուսանելի լինելու համար՝ որ պատմական ձեռնարկներում (միջնակարգ կրթական հաստատությունների համար հրատարակված) ոճրագործությունների փայլուն և խայտառակ ստորաբաժանումը վերացվում է

աումիշտ, և որ այսուհետև բոլոր ոճրագործություններն ընդհանրապես, ինչ չափի էլ լինեն նրանք, «ամոթալի» անունով են կոչվելու։

Այս մասին ներկայացված զեկուցագրի վրա Առյուծը սեփականաթաթ խզմզել է այսպես. «Պատմության դատավճռի մասին տեղեկացնել մայոր Թոփտիգին 3-րդին, թող իր գլխի ճարը տեսնի»։

III. ԹՈՓՏԻԳԻՆ 3-ՐԴ

Թոփտիգին երրորդն իր համբավավոր անվանակից նախորդներից ավելի խելացի էր։ «Փուչ բան է ստացվում,— ասաց նա իրեն,— կարդալով Առյուծի մակագրությունը,— քիչ կեղտոտություն կանես՝ ծաղրի առարկա կդարձնեն, շատ կեղտոտություն կանես՝ մզրախի կբարձրացնեն... Գնա՞լ արդյոք»։

Զեկուցագրով հարցում արեց էշին. «Եթե ո՛չ մեծ, ո՛չ փոքր ոճրագործություններ անել չի թույլատրվում, ապա չի՞ կարելի արդյոք միջին տեսակի ոճրագործություններ անել»։ Բայց էշը խուսափողական պատասխան տվեց. «Այս մասին բոլոր անհրաժեշտ ցուցմունքներն անտառային օրենսդրության մեջ կգտնեք»։ Կարդաց Անտառային օրենսդրությունը, բայց այնտեղ ամեն բանի մասին խոսվում էր՝ և՛ մորթու տուրքի մասին, և՛ սունկի, և՛ պտուղների, նույնիսկ եղևնիների ելունգների մասին, բայց ոճրագործությունների մասին ոչ մի խոսք։ Եվ այնուհետև նրա բոլոր հետագա խնդիրներին և պնդումներին էշը միանման խորհրդավորությամբ պատասխանում էր. «Գործեցեք ըստ պատշաճի»։

— Ահա՛ թե ինչ ժամանակների հասանք,— տրտնջում էր Թոփտիգին 3-րդը — մեծ աստիճան են տալիս քեզ, բայց թե ինչ ոճրագործություններով պիտի արդարացնել այն,— մատնացույց չեն անում։

Ու կրկին նրա գլխում միտք ծագեց. «գնա՞լ արդյոք», և եթե չհիշեր, թե որչափ շատ ճանապարհածախս ու օրապահիկ է պատրաստված իր համար գանձատանը, ճշմարիտ, կարծես չէր գնա։

Տեղ հասավ նա ոտքով,— շատ համեստ։ Ոչ պաշտոնական ընդունելություն նշանակեց, ոչ զեկուցման օրեր, այլ ուղղակի մտավ որջը, թաթը բերանն առավ ու պառկեց։ Պառկել ու միտք է անում. «Նույնիսկ նապաստակի կաշին մաշկել չի կարելի,— այդ էլ, թերևս, շարագործություն կհամարվի։ Եվ ո՞վ է համարելու։ Լավ է, եթե Առյուծը կամ էշը,— այդ դեռ ոչինչ, թե չէ ինչ-որ շինականներ։ Եվ հետո՝ ինչ-որ Պատմություն են գտել — իսկապես որ պա՞տ-մո՞ւ-թյո՞ւն»։ Քրքջում է Թոփտիգինը որջում, Պատմությունը միտը բերելով, բայց սիրտն ահով է պատած, զգում է, որ Առյուծն ինքը Պատմությունից երկյուղ է կրում... Ինչպե՞ս պետք է անտառի սրիկաներին զսպի,— հասկանալ չի կարողանում։ Շատ բան են պահանջում իրենից, սակայն ավազակություն անել թույլ չե՞ն տալիս։ Հենց նոր միայն թափ առած, որ կողմ էլ որ դառնալու լինի, չի՛ կարելի,— կանգնի՛ր, սպասի՛ր, քո սահմանից դուրս ես եկել։ Ամեն տեղ «իրավունքներ» են հայտնվել։ Նույնիսկ սկյուռն էլ այժմ իրավունքների տեր է դարձել։ Մեկ էլ տեսար քիթ ու մռութը ջարդեցին — ա՜յ քեզ իրավունք։ Նրանք իրավունքներ ունեն, իսկ ինքը միայն պարտականություններ։ Այնինք իսկական պարտականություններ էլ չկան — ուղղակի դատարկ մի տեղ։ Նրանք միմյանց միս են կրծում, իսկ ինքը ոչ ոքի դիպչել չի կարող։ Ինչի՞ է նման։ Ամեն բանի հանցավորն էշն է։ Նա, նա է խելքին զոռ տալիս, նա է այս ավելորդաբանությունն առաջ բերում։ «Ո՞վ է էշին այդպիսի արտոնություն շնորհել։ Ո՞վ է նրա կապանքները լուծել»,— ահա թե ինչը չպետք է նա ամեն ժամ մոռացության տա, բայց «իրավունքի» մասին է զոռում։ «Գործեցեք ըստ պատշաճի» — ա՜խ։

Երկար նա այդպես պառկած իր թաթն էր ծծում և նույնիսկ կանոնավոր կերպով իրեն հանձնարարած կուսակալությունը չէր ստանձնել։ Փորձեց նա մեկ անգամ «ըստ պատշաճի» ներկայանալ, բարձրացավ ամենաբարձր սոճու գագաթը և այնտեղից անբնական ձայնով ոռնաց. բայց դրանից էլ շահ չստացվեց։ Անտառի սրիկաները՝ վաղուց շարագործություն տեսած չլինելով, մինչ այն աստիճան երես էին առել, որ, լսելով նրա ոռնոցը, միայն ասացին. «Լսո՞ւմ եք, Միշկան

ռանում է, երևի քնի մեջ թաթը կծել է»։ Այդպես փոշմանած էլ Թոփտիգին 3-րդը կրկին իր որջը վերադարձավ...

Բայց, կրկնում եմ, նա խելոք արջ էր և այն պատճառով չէր իր որջը մտել, որպեսզի ապարդյուն տրտունջներով հալ ու մաշ լիներ, այլ այն պատճառով, որպեսզի որևէ իսկական միջոց գտներ։

Եվ գտավ։

Բանն այն է, որ մինչ նա պառկած էր որջում, անտառում ամեն ինչ ընթանում էր իր սահմանված կարգով։ Այդ կարգը, իհարկե, չէր կարելի միանգամայն «բարեհաջող» անվանել, սակայն կուսակալության խնդիրը ամենևին ինչ-որ երազական բարեհաջողության հասնելու մեջ չի կայանում, այլ նրանում, որպեսզի հնուց ի վեր սահմանված կարգը (թեկուզ և ոչ բարեհաջող) պահպանվի և պաշտպանվի խաթարվելուց։ Եվ ոչ նրանում, որպեսզի ինչ-որ մեծ, միջին և փոքր չարագործություններ կատարվեն, այլ՝ բավականանալ «բնական» չարագործություններով։ Եթե հնուց անտի այնպես է սահմանված, որ գայլերը նապաստակների կաշին են մաշկում, իսկ ուրուրները և բուերը ագռավներին փետրահանում, ապա, թեպետև այդօրինակ «կարգը» ոչ մի բարեհաջողություն չի պարունակում, բայց որովհետև դա այնուամենայնիվ «կարգ» է, հետևապես, նշանակում է, պետք է ճանաչել այն, որպես այդպիսին։ Իսկ եթե ըստ այդու թե՛ նապաստակները, թե՛ ագռավները ոչ միայն չեն տրտնջում, այլ շարունակում են բազմանալ և լցնել աշխարհը, ապա, դա նշանակում է, որ «կարգը» դուրս չի գալիս իր համար դարերից ի վեր նշված սահմաններից։ Մի՞թե նույնիսկ այդ «բնական» չարագործությունները բավարար չեն։

Տվյալ դեպքում ամեն բան այդպես էլ տեղի էր ունենում։ Ոչ մի անգամ անտառը փոփոխության չէր ենթարկել այն կերպարանքը, որը վայել էր իրեն։ Եվ ցերեկը, և գիշերը նա դղրդում էր միլիոնավոր ձայներով, որոնցից ոմանք հանդիսանում էին հոգեվարքի աղաղակներ, մյուսները՝ հաղթական կռինչներ։ Եվ՝ արտաքին ձևերը, և՝ ձայները, և՝ լուսաստվերները, և՝ բնակչության կազմը — ամեն ինչ անփոփոխ էր, կարծես անզգայացած։ Մի խոսքով, դա մի ա՛յն աստիճան

հաստատված և կայուն կարգ էր, որը տեսնելուց հետո նույնիսկ ամենից անագորույն, ցասկոտ կուսակալի մտքովն անգամ որևէ պսակազարդող չարագործություն անցնել չէր կարող, այն էլ դեռ՝ «Ձերդ բարձրաստիճանության անձնական պատասխանատվությամբ»։

Այդպիսով, Թոփտիգին 3-րդի մտավոր հայացքի առաջ կանգնեց անբարեհաջող բարեհաջողության մի ամբողջ թեորիա։ Կանգնեց իր բոլոր մանրամասնություններով և նույնիսկ գործնականում պատրաստի ստուգման ենթարկված։ Եվ վերհիշեց, ինչպես մեկ անգամ բարեկամական զրույցի ժամանակ էշն ասում էր.

— Այդ ի՞նչ չարագործությունների մասին եք դուք շարունակ հարցնում։ Մեր արհեստում գլխավորը — դա laissez passer, laissez faire[14]. Կամ այլ խոսքով ասած. հիմարը հիմարի վրա է նստած և հիմարին է քշում։ Ահա։ Եթե դուք, բարեկամս, այդ կանոնին հետևելու լինեք, ապա, չարագործությունն ինքնին կլինի, և ամեն ինչ ձեզանում բարեհաջող կընթանա։

Այդպես, հենց նրա ասածով էլ դուրս է գալիս։ Պետք է միայն նստել և ուրախանալ, որ հիմարը հիմարին հիմարով է քշում, իսկ մնացած ամեն բան կգործադրվի ինքն իրեն։

— Ես նույնիսկ չեմ հասկանում, թե ինչո՞ւ են կուսակալներ ուղարկում, չէ որ առանց նրանց էլ...— ուզեց ազատախոհել մայորը, բայց, հիշելով իր ստացած ոռճիկը, ընդհատեց անպարկեշտ միտքը.— ոչինչ, ոչինչ, լռություն...

Այդ ասելով, նա շուռ եկավ մյուս կողքին և որոշեց որջից դուրս գալ՝ միայն ոռճիկն ստանալու համար։ Եվ այնուհետև անտառում ամեն ինչ գնաց հալած յուղի պես։ Մայորը քնում էր, իսկ գյուղացիները բերում էին խոճկորներ, հավեր, մեղր և նույնիսկ հացի օղի, և իրենց նվերները շարում էին որջի առաջ։ Որոշված ժամերին մայորն արթնանում էր, դուրս էր գալիս որջից և լափում։

Այս ձևով Թոփտիգին 3-րդը որջում պառկած մնաց շատ տարիներ։ Եվ որովհետև անբարեհաջող, սակայն փափագելի անտառային կարգերը ոչ մի անգամ այդ ժամանակվա ընթացքում չխախտվեցին, և որովհետև ոչ մի չարագործու-

թյուն, բացի «բնականներից», տեղի չունեցան, ուստի և Առյուծը նրան իր ողորմածությունից չզրկեց։ Սկզբում բարձրացրեց փոխգնդապետի աստիճանի, հետո գնդապետի և վերջապես...

Բայց այդ ժամանակ որսորդ-գյուղացիները եկան անտառ, և Թոփտիգին 3-րդը որջից դաշտ դուրս եկավ։ Ու ենթարկվեց բոլոր մուշտակավոր կենդանիների ճակատագրին։

ԽԱԲԵԲԱ ԼՐԱԳՐՈՂԸ ԵՎ ԴՅՈՒՐԱՀԱՎԱՏ ԸՆԹԵՐՑՈՂԸ

Լինում է, չի լինում՝ մի լրագրող և լինում է, չի լինում՝ մի ընթերցող։ Լրագրողը խաբեբայի մեկն է լինում, միշտ խաբում է, իսկ ընթերցողը դյուրահավատ է լինում, ամեն բանի հավատում է։ Այդպես է եղել աշխարհում հնուց ի վեր. խաբեբաները խաբում են, իսկ դյուրահավատները հավատում։ Suum cuique[15].

Լրագրողն իր որջում նստած, շարունակ խաբում է ու խաբում։ «Զգուշացեք,— ասում է,— դիֆտերիտը հնձում է քաղաքացիներին»։ «Գարնան սկզբից,— ասում է,— անձրև չկա, այսպես որ գնա, անհաց ենք մնալու»։ «Հրդեհները գյուղեր և քաղաքներ են ոչնչացնում»։ «Պետական և հասարակական գույքը հափշտակում են»։ Իսկ ընթերցողը կարդում է և մտածում, որ լրագրողը բաց է անում իր աչքերը. «Մեզանում գրքի տպագրության մեծ ազատություն է, ասում է, ուր որ դարձնում ես աչքդ, ամեն տեղ կամ դիֆտերիտ է, կամ հրդեհ, կամ երաշտ»...

Եվ ավելի ու ավելի խորանում է։ Տեսնում է լրագրողը, որ իր խաբեությունները ընթերցողի սրտովն են, սկսում է առավել խորանալ։ «Մեզանում,— ասում է,— ոչ մի ապահովություն չկա, փողոց դուրս մի արի,— ասում է,— ընթերցող, թե չէ՝ բանտ կընկնես»։ Իսկ դյուրահավատ ընթերցողն հրպարտ անցնում է փողոցով և ասում. «Ա՜խ, ինչպես ճիշտ է արտահայտվում լրագրողը մեր անապահովության մասին»։ Այդ դեռ բավական չէ, հանդիպելով մեկ այլ դյուրահավատ ընթերցողի, հարցնում է. «Կարդացի՞ք դուք այսօր՝ ինչպես լավ էր գրել լրագրողը՝ մեր անապահովության մասին»։— «Ինչպե՞ս չեմ կարդացել,— պատասխանում է մյուս դյուրահավատ ընթերցողը,— աննմա՛ն էր։ Չի՛ կարելի, ճշմարիտ որ, չի՛ կարելի մեր փողոցներով անցնել, անմիջապես բանտ կընկնես»։

Եվ բոլորը հիացած են գրքի ազատ տպագրությամբ։ «Չէ՞ինք իմանում, որ մեզանում ամեն տեղ դիֆտերիտ կա,— խմբովին երգում են դյուրահավատ ընթերցողները,— ահա թե ինչ»։ Եվ, այնպես լա՞վ էին զգում նրանք իրենց, որ եթե այդ ժամանակ նույն այն լրագրողն ասելու լիներ, թե դիֆտերիտը եղել է և այժմ արդեն վերջացել է, թերևս նրանք դադարեին այլևս նրա լրագիրը կարդալուց։

Իսկ լրագրողն ուրախ էր, որովհետև խաբեբայությունը նրան անմիջական շահ էր տալիս։ Ճշմարտությունը բոլորին բաժին չի լինում, դե եկ ու ձեռք բեր, և թերևս, ճշմարտությանը տողին տասը կոպեկ վճարելով էլ՝ չկարողանաս ազատվել։ Ուրիշ բան է սուտը։ Գրիր ինչքան կարող ես ու խաբիր։ Տողը հինգ կոպեկով ամեն կողմից ստի դեզեր կհասցնեն։

Եվ այնպես սերտ բարեկամացան լրագրողն ու ընթերցողը, որ ոչ մի կերպ նրանց միմյանցից բաժանել չէր կարելի։ Որչափ շատ էր խաբում լրագրողը, այնչափ շատ էր հարստանում նա (իսկ ստախոսին ուրիշ ինչ է հարկավոր), իսկ ընթերցողը, որչափ շատ էին խաբում նրան, այնքան շատ հինգ կոպեկանոց էր տանում լրագրողին։

«Հազին փոխան չուներ,— ասում են լրագրողին նախանձողները,— իսկ այժմ տեսեք՝ ինչպե՞ս է ապրում»։ «Իր համար «շողոքո՞րթ» է վարձել. ժողովրդի կենցաղը նկարագրո՞ղ է գտել։ Երանության մեջ՞ է»։

Ուրիշ լրագրողներ փորձեցին ճշմարտությունով նրա գլխին խաղ խաղալ, մտածելով, թերևս, որ ճշմարտության վրա էլ բաժանորդը վազ կտա, բայց բան դուրս չեկավ։ Ընթերցողը ուրիշ ոչինչ չէր ուզում ճանաչել և շարունակ կրկնում էր.

Թանկ է ինչ համար ճշմարտությունը[16]
Մեզ գովաբանող խաբեությունը...

Շատ տևեց այսպես, թե քիչ, միայն գտնվեցին բարի մարդիկ, որոնք խղճացին դյուրահավատ ընթերցողին։ Կանչեցին խաբեբա լրագրողին և ասացին նրան. «Բավակա՛ն է, անամոթ ու անհավատարիմ մարդ, մինչև այժմ խաբեություն ես ծախել, իսկ սրանից հետո ճշմարտություն ծախիր»։

Ի դեպ, ընթերցողներն էլ կամաց-կամաց սկսել էին զգաստանալ և տոմսեր էին դրում լրագրողին, թե, օրինակ՝ «Այսօր ես աղջկանս հետ զբոսնում էի Նևսկում, մտածում էի թաղամասում գիշերել (աղջիկս նույնիսկ բուտերբրոդ էր վերցրել հետը, ասում էր. «Ա՜խ, ինչ ուրախ է»), բայց դրա փոխարեն երկուսով էլ ողջ ու առողջ տուն վերադարձանք... Այստեսակ մխիթարական փաստն ինչպե՞ս համաձայնեցնել մեր անապահովության մասին ձեր գրած առաջնորդողների հետ»։

Բնականաբար, լրագրողն իր կողմից հենց դրան էր սպասում։ Պետք է խոստովանել, նա ինքն էլ ձանձրացել էր խաբելուց։ Նրա սիրտը վաղուց ի վեր ճշմարտության կողմն էր հակվել, բայց ինչ կարելի էր անել, երբ ընթերցողը միայն ստի ետևից էր վազ տալիս։ Չես ուզում, բայց հարկադրված խաբում ես։ Իսկ այժմ, երբ ամեն կողմից նրա կոկորդին չոքեցին, որպեսզի ճշմարտությունն ասեր, նա պատրաստ էր այդպես անելու։ Ճշմարտությո՞ւն, թո՛ղ ճշմարտություն լինի, գրողը տանի։ Խաբեբայությամբ երկու քարաշեն տուն է ձեռք բերել, իսկ մյուս երկու քարաշեն տները հարկադրված է լինելու ճշմարտությամբ ձեռք բերել։

Եվ սկսեց ամեն օր ընթերցողին ճշմարտությամբ հալածել։ Դիֆտերիտ չկա, հրդեհներ էլ չկան, իսկ եթե Կոնոտոպն այրվել է, ապա հրդեհից հետո ավելի լավը կառուցվեց։ Իսկ բերքը, շնորհիվ տաք անձրևների, այնքան առատ էր, որ ինքներս կերանք-կերանք և վերջը սկսեցինք գերմանացիների սեղանի տակ նետել՝ կերեք, խեղդվեցեք։

Բայց ամենից նշանավորն այն էր, որ լրագրողը միայն ճշմարտություն էր տպում, բայց շարունակում էր տողին հինգ կոպեկ վճարել։ Եվ այն օրից, երբ սկսեցին ճշմարտությունը ծախու առարկա դարձնել, այն օրվանից նրա արժեքն ընկավ։ Այնպես է դուրս տալիս, որ ուզում է ճշմարտություն լինի, ուզում է խաբեբայություն լինի, բոլորը մեկ է, մի գին է։ Իսկ լրագրական սյունակները դրանից ոչ միայն տաղտկալի չդարձան, այլ ընդհակառակը, ավելի աշխուժացան։ Որովհետև, եթե սկսենք օդերի բարեխառնությունն ընդհուպ նկարագրել, այնպիսի պատկեր կստացվի, որ ինչ գին էլ տալու լինես, այնուամենայնիվ քիչ է։

Վերջապես ընթերցողը վերջնականապես զգաստացավ և նրա աչքերը բացվեցին։ Առաջ էլ նա վատ չէր ապրում, երբ խաբեբայությունը ճշմարտության տեղ էր ընդունում, իսկ այժմ վերջնականապես հանգստացավ։ Հացավաճառի մոտ է գնում, այնտեղ նրան ասում են. «պետք է որ ժամանակով հացի գինն իջնի», թռչնավաճառի մոտ է գնում — ասում են. «Երևի ժամանակով աքարը ինչ չի արժենա»։

— Իսկ այժմ ի՞նչ արժե։

— Այժմ զույգն արժե մեկ մանեթ քսան կոպեկ։

Ահա թե, աստծու օգնությամբ, ինչ շրջադարձ ստացան գործերը։

Եվ ահա մեկ անգամ դյուրահավատ ընթերցողը պճնված՝ փողոց դուրս եկավ։ Քայլում է «փառքի ու բարության հույսով» և ձեռնափայտն է պտտում, թե իմացեք, որ այսուհետև ես բոլորովին ապահով եմ։

Բայց այս անգամ, հակառակի պես, հետևյալ դեպքը պատահեց.

Մի քանի քայլ հազիվ էր անցել, երբ իրավաբանական սխալ տեղի ունեցավ, և նրան բանտ գցեցին։

Ամբողջ օրը քաղցած նստած մնաց բանտում։ Որովհետև, թեպետև նրան հյուրասիրեցին, բայց նա նայեց-նայեց և միայն արտասանեց. «Ահա՜ թե որն է մեր բերքը»։

Հենց այնտեղ էլ նա դիֆտերիտով հիվանդացավ։

Հասկանալի է, մյուս օրն իրավաբանական սխալը պարզվեց, և նրան բաց թողեցին երաշխավորությամբ (ով գիտե, տեսար նորից հարկավոր եղավ)։ Նա վերադարձավ տուն և մեռավ։

Իսկ խաբեբա լրագրողը մինչև օրս էլ կենդանի է։ Չորրորդ քարաշեն տան տանիքն է ծածկում և առավոտից մինչև

իրիկուն մի միտք է անում. արդյոք այսուհետև դյուրահավատ ընթերցողին ինչո՞վ կարող է ավելի լավ խաբել՝ խաբեբայությա՞մբ, թե՞ ճշմարտությամբ։

ՁՈՐԱՑԱԾ ՏԱՌԵԽԸ

Տառեխը որսացին, փորոտիքը մաքրեցին (հյութը միայն թողեցին՝ բազմացման համար) և կախ տվեցին պարանի վրա՝ արեգակի տակ՝ չորանալու։ Տառեխն այդպես կախված մնաց մեկ-երկու օր, իսկ երրորդ օրը նրա փորի կաշին խորշոմից, գլուխը չորացավ, և գլխում եղած ուղեղը քամվեց, թորշոմեց։

Ու սկսեց տառեխն ապրել իր համար*։

— Այժմ ինձ համար շատ լավ է,— ասում էր չորացած տառեխը։ —Ո՛չ ավելորդ մտքեր, ո՛չ ավելորդ զգացմունքներ, ո՛չ ավելորդ խիղճ. այժմ ես ոչ մի այդպիսի բան չեմ ունենա։ Բոլոր ավելորդ բաները քամհար արեցին, մաքրեցին ու չորացրին, և այժմ ես կամաց-կամաց իմ գիծը առաջ կտանեմ։

Որ աշխարհում ավելորդ մտքեր, ավելորդ խիղճ, ավելորդ զգացմունքներ են լինում, տառեխն այդ մասին լսել էր դեռ ազատության մեջ ապրած ժամանակ։ Եվ պետք է խոստովանել, երբեք չէր նախանձում նրանց, ովքեր այդպիսի ավելորդություններ ունեին։ Ի ծնե նա լրջմիտ տառեխ էր, ուրիշի գործերում չէր խառնվում, «ավելորդ» բաների ետևից չէր ընկնում, ցնորական աշխարհում չէր սավառնում և անբարեհույս ընկերություններից հեռու էր մընում։ Եթե, պատահում էր, լսում էր, որ քարթակները կոնստիտուցիայի մասին են խոսում, անմիջապես ճանապարհը

* Ես գիտեմ, որ բնության մեջ այդպիսի բան չի լինում, բայց որովհետև առակն անխոտելի է, ուստի, նշանակում է, այդպես էլ պիտի լինի։

Հեղինակ։

թեքում էր ձախ և թաքնվում էր կոատուկի տակ։ Սակայն այդ բոլորով հանդերձ, նա ապրում էր միշտ վախը սրտում, որովհետև ո՞վ գիտե, մեկ էլ տեսար... «Դժվար ժամանակներ են այժմ,— մտածում էր նա,— այնքան դժվար, որ անմեղն էլ մեղավորի տեղ կարող է անցնել։ Կսկսեն մեղավոր որոնել, իսկ դու թաքնվում ես այդտեղ, մոտերքում մի տեղ. տեսար մոտերքում էլ սկսեցին որոնել։ Որտե՞ղ էիր, ինչի՞ համար, ի՞նչ ձևով։ Տե՞ր, փրկիր և ողորմյա»։ Նշանակում է կարող եք պատկերացնել, թե որչափ ուրախ էր նա, երբ իրեն բռնեցին և բոլոր մտքերը, բոլոր զգացմունքները դուրս հանեցին նրա միջից։

«Այժմ համեցեք,— հաղթական ասաց նա,— ե՛րբ կամենաք և ո՛վ կամենա, այժմ ես բոլոր ապացույցներն ունեմ»։

Թե ինչ նկատի ուներ չորացած տառեխը «ավելորդ մտքեր և զգացմունքներ» ասելով, հայտնի չէ, բայց որ, իրոք, բավական շատ ավելորդ բաներ են առաջացել մեր աչքի առաջ, դրա հետ ես նույնպես չեմ կարող համաձայն չլինել։ Այդ ավելորդի էությունը ոչ ոք դեռևս իր անունով չի կոչել, բայց բոլորն էլ անորոշ կերպով զգում են, որ ուր էլ ուզում ես դարձիր, ամեն տեղ մի ինչ-որ ավելորդ բան կա։ Եվ ինչպես ուզում ես, բայց այդ ավելորդ բանը հարկավոր է կամ հաշվի առնել, կամ այնպես խույս տալ, որ նրա մտքով անգամ չանցնի, որ իրեն խաբում են։ Այդ բոլորը բազմաթիվ նոր հոգսեր, նոր բարդություններ և անհանգստություն է առաջացնում ընդհանրապես։ Մարդ ուզում է հին սովորությամբ ուղղակի անցնել գնալ, բայց ուղղակի ճանապարհը հոլմահար է եղել, դար ու փոսեր են գոյացել այնտեղ, ուստի համբերեք, յոթ վերստ պտույտ տվեք, որպեսզի կարողանաք տեղ հասնել։ Յուրաքանչյուր քաղաքացի արդեն գիտակցում է այդ ծանրությունը, բայց թե դրանից ինչքան դժվարություններ է ունենում իշխանությունը, այդ մասին ոչ պատմել կարելի է, ոչ նկարագրել։ Հաստիքները հին են, իսկ գործերը նոր. բայց և հաստիքների մեջ էլ արդեն ավելորդություններ են առաջացել։ Առաջ չինովնիկի մեջքը չուգունից էր, առավոտյան ժամը տասից որ նստում էր իր տեղը, այլևս վեր չէր կենում մինչև չորսը — ամբողջ ժամանակ ծառայում էր։ Իսկ այժմ գալիս է

ժամը մեկին, արդեն նախաճաշած, մի ժամ գլանակ է ծխում, մի ժամ կուպլետներ է երգում, իսկ մնացյալ ժամանակ թրև է գալիս սեղանների շուրջը։ Եվ գրասենյակային գաղտնիքներն ամենևին չի պահում։ Սկսում է մի գործ թերթել,— իսկույն թե՝ «տեսեք, ինչ զարմանալի է», մյուսն է վերցնում՝ «մտիկ տվեք, սա այնպիսի գործ է, ինչ էլ որ տաս, քիչ է»։ Մի տոպրակ կուրյոզներ է հավաքում և գնում է Պալկինի մոտ ճաշելու։ Իսկ ինչպես պիտի զսպես քեզ, որպեսզի կուրյոզներդ չտարփողես Պալկինի ճաշարանով մեկ։ Եվ եթե անգամ գրասենյակային ամեն մի անհամեստության համար տաժանակիր աշխատանք սահմանված լինի, այնուամենայնիվ անկարելի է անհամեստությունից հրաժարվել։

Հարց է ծագում, այդ դեպքում իշխանությունն այլևս ո՞ւմ հետ վեր բարձրանա։ Ամեն ոք օգնող ունի, իսկ իշխանությունը զուրկ է օգնողից, ամեն ոք թաքցնող, ծածկող ունի, իսկ նա՝ ոչ։ Ինչպես դադարեցնես «ավելորդի» կուտակումն այս մասնավոր աշխարհում, երբ քո սեփական միջնաբերդում, որ կողմ էլ որ նայում ես, ավելորդն ու անպատշաճը աչք է ծակում։

Դժվար է, ա՜խ, ինչպե՜ս դժվար է բոլոր այդ ավելորդությունների մեջ ապրելը, հարկ է լինում ամբողջ ճանապարհը խարխափելով անցնել։ Կարծում ես, որ իսկական տեղը շոշափել ես, բայց դուրս է գալիս, որ շոշափել ես «մոտավորապես»։ Ապարդյուն, անպտուղ, անգութ, խայտառակ։ Ասենք թե մեծ դժբախտություն չի, որ անմեղը մեղավորի տեղ է գնացել — շա՞տ են դրանք, այդ անմեղները որ։ Այսօր նա անմեղ է, բայց վաղը ո՞վ գիտի նրան։ Բայց կատարյալ դժբախտությունն այն է, որ իսկական հանցավորն, այնուամենայնիվ, չկա։ Նշանակում է՝ նորից հարկավոր է շոշափել, բայց նորից — կողքով անցնում ես։ Դրանով էլ հենց ամբողջ ժամանակը անցնում է։ Հասկանալի է, որ նույնիսկ ամենաճարտարամիտ մասնավոր մարդիկ անգամ (նրանք, որ ճարպի մոմ չեն ուտում և ապակիով չեն սրբվում),— նրանք էլ շվարեցին։ Եվ որովհետև ոչ ոք չի ուզում մերկ մարմնով նստել ոզնու վրա, ապա ամեն մեկն էլ ողբում է՝ տե՜ր, անցո։

Ոչ, ինչպես ուզում եք, բայց հարկավոր է երբևիցե այդ հավելումները հաշվի առնել, ինչպես և հարկավոր է ուսումնասիրել նրանց։ Իմանալ. ո՞րտեղից են եկել, ինչո՞ւ են եկել, ո՞ւր են ուզում խցկվել։ Հո բոլորն էլ անպատկառ առաջ չեն խցկվում, որևէ օգտակարն էլ կգտնվի։

Շատ հավանական է, սակայն, որ այդ հարցերն ամենևին չէին անցնում տառեխի մտքով։ Սակայն, կրկնում եմ, նա ևս մյուսների նման զգում էր, որ հավելումները նրա համար մահ են։ Եվ միայն այն ժամանակ, երբ նրան արեգակի տակ լավ չորացրին և քամհարեցին, երբ նա համոզվեց, որ իր ներսում բացի սերմնահյութից ուրիշ ոչինչ չի մնացել,— միայն այն ժամանակ ոգի առավ և ասաց ինքն իրեն՝ «հիմա թքա՛ծ ամեն բանի վրա»։

Եվ իրոք. այժմ նա, նույնիսկ առաջվա համեմատությամբ դարձավ ավելի պատկառելի և բարեհույս։ Մտքերը բանավոր էին, զգացմունքները՝ ուրիշների համար անվնաս, խիղճը՝ գրոշի։ Նստել է իր համար մի անկյուն և խոսում է այնպես, ինչպես գրում է։ Աղքատ է մոտենում — նայում է, թե ուրիշ մարդիկ կան, աղքատին մի գրոշ ողորմություն է տալիս, թե ոչ ոք չկա, գլխով է անում՝ աստվա՜ծ տա։ Հանդիպում է որևէ մեկին, անպայման խոսքի է բռնվում, անկեղծորեն իր կարծիքն է հայտնում և բոլորին հիացմունք է պատճառում իր հաստատամտությամբ։ Չի նետվում առաջ, պատեպատ չի դիպչում, չի բողոքում, չի նզովում, այլ բանական կերպով բանական բաների մասին է խոսում։ Խոսում է այն մասին, որ դանդաղ գնաս՝ շուտ կհասնես, որ փոքրիկ ձկնիկը լավ է մեծ խավարամիջատից, որ շտապես՝ մարդկանց վրադ կծիծաղեցնես և այլն։ Իսկ ամենից ավելի այն մասին, որ ականջները ճակատից վեր չեն բուսնում։

— Ա՜խ, սիրելի տառեխ, որչափ տխուր են քո զրույցները, կարծես սիրտդ խառնում է,— բացականչում է խոսակիցը, եթե նա նորերից է։

— Սկզբում բոլորի համար տխուր է,— ամաչկոտ պատասխանում է տառեխը։ Սկզբում տխուր է, բայց հետո՝ լավ է։ Այ, երբ կապրես աշխարհում և քո չորս կողմը բավականաչափ

կպրպտեն, այն ժամանակ տառեխին կհիշես, կասես՝ շնորհակալություն, որ խելք ու միտք սովորեցրեց։

Չէր էլ կարելի շնորհակալություն չհայտնել, որովհետև եթե արդար դատելու լինենք, կտեսնենք, որ միայն տառեխն էր բանի էությունն ըմբռնել։ Այնպիսի հանգամանքներ են լինում, երբ խելքի ու մտքի ձայնն ու ծպտունն էլ չկա, այլ կա միայն տառեխի խելքն ու միտքը։ Մարդիկ քնածի նման են լինում, ոչ մի գործի կպչել չեն կարողանում, ոչ մի բանով չեն ուրախանում, ոչ մի բանով չեն տխրում։ Եվ հանկարծ ականջին հնչում է օրորող մի շշուկ՝ կամաց-կամաց և զգուշությամբ, երկու մահ չի լինում, իսկ մեկն անխուսափելի է... Դա նա է, դա տառեխն է շշնջում։ Շնորհակալություն, տառեխ, ճշմարտությունն ասացիր դու.— երկու մահ չի լինում, իսկ մեկը մշտապես կանգնած է թիկունքում։

Եթե տառեխը փրկության չհասներ, կորուստն անխուսափելի էր։ Բայց նա ոչ միայն պատսպարանը մատնանշեց, այլև մի ամբողջ միջնաբերդ ստեղծեց։ Եվ ոչ այնպիսի միջնաբերդ, ուր հանդուգն մարդիկ նստած, կուրյոզներ են որոնում, այլ իսկական միջնաբերդ, որին նայելիս ոչ մի ճեղքի մասին մարդու մտքով անգամ չի անցնում։ Եվ այնտեղ ամեն ինչ փակ է ու գոց, այնտեղ արդեն ոչ մի հավելումի մասին խոսք անգամ չկա։ Ուտել ես ուզում — կեր, քնել ուզեցիր — քնիր։ Քայլիր, նստիր, խոսիր։ Դրան արդեն ոչ մի բան ավելացնել իսկ հնարավոր չէ։ Եղիր երջանիկ և ուրիշ ոչինչ։

Եվ ինքդ երջանիկ կլինես, և նրանք, որոնք քո շուրջն են, բոլորն էլ երջանիկ կլինեն։ Դու ոչ ոքի ձեռք չես տալիս, և ոչ ոք էլ քեզ ձեռք չի տալիս։ Քնեցեք, բարեկամներս, հանգիստ քուն մտեք։ Եվ ձեր շուրջը շոշափելու կարիք չկա, որովհետև ամեն տեղ ճանապարհները տրորված են, բոլոր դռները կրնկի վրա բաց են։ «Հառա՞ջ անվախ ու անկասկած»[17] կամ, այլ խոսքով ասած՝ քայլիր համապատասխան տեղը։

— Որտեղի՞ց քեզ այդչափ իմաստությունը, տառեխ,— հարցնում են նրան երախտագետ քարթակները, որոնք նրա խորհուրդների շնորհիվ ողջ էին մնացել։

— Ի ծնե ինձ ասված խելք է պարգևել,— համեստորեն

պատասխանում է տառեխը,— և բացի դրանից, շորացնելու ժամանակ էլ ուղեղս քամուն է տրվել... Եվ ահա այդ օրվանից ես սկսեցի մտքով ծանր ու թեթև անել...

Եվ հիրավի. մինչ պարզամիտ մարդիկ ցնորքներով են տարվում, իսկ շարասիրտներն առաջաբան հոդվածներով կյանքն են թունավորում, տառեխը միայն ծանր ու թեթև է անում և դրանով իսկ օգուտ է բերում։ Ոչ մի զրպարտություն, ոչ մի մարդատյացություն, ոչ մի օձային առաջնորդող հոդված այնպես դաստիարակիչ ազդեցություն չի ունենում, ինչպես ունենում է տառեխի համեստ օրինակը։ «Ականջները ճակատից վեր չե՛ն բուսնում»— չէ՞ որ դա հենց այն է, որի մասին հին հռոմեացիք ասում էին՝ respice finem![18] միայն ավելի հարմար է։

Զրպարտությունը լավ է, իսկ մարդատյացությունն է՛լ ավելի լավ է, բայց նրանցից այնպիսի ուժեղ հոտ է փչում, որ ամեն մի պարզամիտ չի կարող բովանդակել նրանց։ Շարունակ թվում է, որ այդտեղ մի կեսն անարգված է, իսկ մյուս կեսը՝ ամբաստանված։ Իսկ ամենագլխավորը, վերջը չես տեսնում։ Լսում ես կամ կարդում ես և շարունակ միտք ես անում՝ ճարտարը ճարտար է, բայց հետո ի՞նչ,— իսկ հետո կրկին զրպարտություն, կրկին թույն... Ահա հենց այդ է, որ շփոթում է։ Ուրիշ բան է տառեխի համեստ իմաստությունը։ «Դու ոչ ոքի ձեռք մի տուր, և քեզ ոչ ոք ձեռք չի տա»— չէ՞ որ սա մի ամբողջ պոեմա է։ Նսեմ է, ճշմարիտ է, այդ հոչակավոր իմաստությունը, բայց տեսեք, ինչպես ամուր է նա շոշափում մարդուն, ինչպես բարեխղճաբար է հղկում նրան։ Մանավանդ, եթե նա դաշնակցած է զրպարտության և փարախային թույնի հետ[19]։ Սկզբում զրպարտությունը կխոշտանգի, հետո փարախային թույնը կշշմեցնի, և երբ տանջանքի գործողությունն իր շրջանը կբոլորի, երբ մարդ կզգա, որ իր ողջ օրգանիզմում չկա մի տեղ, որ չտնքա, իսկ հոգում չկա այլ զգացմունք, քան անսահման տառապանքը — ահա այդ իսկ ժամանակ հանդես է գալիս տառեխն իր համեստ իմաստալից ասացվածքներով։ Նա անշշուկ մոտենում է խոշտանգվածին և առանց ցավ պատճառելու, շշմեցնում է նրան։ Եվ պատի մոտ տանելով նրան, ասում է. «Ահա, տեսեք, ինչքան է խզմզած այստեղ —

ողջ կյանքիդ ընթացքում եթե վերծանես, այնուամենայնիվ, ամբողջը վերծանել չես կարող»։

Նայիր այս խզմզանքին և եթե ցանկություն ունես, որոնիր նրանց իմաստը։ Այստեղ ամեն բան կուտակված է միատեղ՝ և՛ անցյալի պատվիրանները, և՛ ներկայի թույնը, և՛ ապագայի առեղծվածները։ Եվ բոլորի վրա պառկած է ամեն տեսակ կեղտի, գարշանքի, գարնանային հեղեղների և վատ եղանակների հետևանքների թանձր շերտը։ Իսկ եթե խզմզանք վերծանելու տրամադրություն չունես, ապա առավել լավ։ Հավատա ասածին, որ այդ խզմզանքների էությունը կարելի է արտահայտել մի քանի խոսքով՝ ականջները ճակատից վեր չեն բուսնում։ Եվ ապա — ապրիր։

Այդ բոլորը հիանալի կերպով ըմբռնել է չորացած տառեխը, կամ, լավ է ասել, ոչ թե ինքն է ըմբռնել, այլ այդ ըմբռնումը բերել է նրան չորացման այն գործողությունը, որին ենթակա է եղել նա։

Բոլոր ասպարեզները հերթով բացվում էին նրա առաջ, և ամեն տեղ նա ծառայություն էր մատուցում։ Ամեն տեղ նա ասել է իր խոսքը, դատարկամիտ, հիմար խոսքը, բայց հենց այն իսկ խոսքը, որ հանգամանքների բերմամբ, ամենից կարևորն է եղել։

Ներս սպրդելով բյուրոկրատիայի շարքերը, նա ամենից ավելի է պնդել գրասենյակային գաղտնիքի և ժամանակաշրջանների բոլորման վրա։ «Գլխավորը,— պնդում էր նա, որպեսզի ոչ ոք ոչինչ չիմանա, ոչ ոք ոչինչ չկասկածի, ոչինչ չհասկանա, որպեսզի բոլորը հարբածների պես լինեն»։ Եվ բոլորի համար իրոք որ պարզ դարձավ, որ հենց այդ էլ հարկավոր է։ Իսկ ինչ վերաբերում է ժամանակաշրջանների բոլորմանը, ապա տառեխը իմաստուն կերպով հաստատում էր, որ առանց դրա ոչ մի կերպ հնարավոր չէ հետքերը կորցնել։ Աշխարհիս երեսին շատ զանազան խոսքեր գոյություն ունեն, բայց նրանցից ամենից վտանգավորները ուղիղ, իսկական խոսքերն են։ Երբեք հարկավոր չէ իսկական խոսքեր ասել, որովհետև այդպիսի խոսքերը թերություններ ունեն։ Իսկ դու վերցրու դատարկամիտ խոսքերը և սկսիր նրանց շուռ ու մուռ տալ։ Շուռ ու մուռ տուր, շուռ ու մուռ տուր. և՛ այս կողմից

մտիկ տուր, և՛ այն կողմից վազվզիր, կարողացիր «դժբախտաբար խոստովանել» և միաժամանակ մշտապես ակնկալիր. վկայության կանչիր ժամանակի ոգին, բայց և աչքաթող մի արա նաև կրքերի սանձարձակությունը։ Այն ժամանակ թերություններն ինքնին կկորցնեն իրենց նշանակությունը, և կմնա միայն տառեխի ճշմարտությունը։ Այն ըղձալի ճշմարտությունը, որն օգնում է այսօր ապրել, իսկ վաղվա մասին չզուշակել։

Սպրդեց չորացած տառեխը նաև «սիրեցյալների» շարքերը — և այստեղ ևս ծառայություն մատուցեց։ Սկզբում սիրեցյալներն իրենց բավական հպարտ էին պահում՝ մենք այսպե՞ս, մենք այնպե՞ս... Ոտքերի տակ ենք սփոում մեր իմաստուն մտքերը։ Ուրիշ խոսք չունեն։ Իսկ տառեխը նստել է իր համար անկյունում համեստ և մտածում է ինքն իրեն՝ լա՞վ, ես իմ խոսքը հետո՛ կասեմ։ Եվ իսկապես. մեկ սփռեցին, երկու սփռեցին, երրորդ անգամ պատրաստվեցին սփռելու, բայց ծայրը ծայրին հասցնել չեն կարողանում։ Մեկը գոչում է՝ քիչ է, մյուսը ձայն է տալիս՝ շատ է, իսկ երրորդը ուղղակի խռովություն է հայտարարում — գնանք, եղբայրներ, ուղղակի... հենց ա՞յն է, թողեցի՞ն ձեզ։ Ահա այդ իսկ ժամանակ տառեխն հրապարակ եկավ։ Հարմար բոպեին սպասելով, երբ բոլորի կոկորդը չորացել էր, ասաց. «Սփռել,— ասում է,— մենք այն ժամանակ միայն կարող ենք, եթե մեզանից պահանջում են, իսկ եթե չեն պահանջում, այդ դեպքում մենք պետք է հանգիստ նստենք և մեզ համար որոշված ոռճիկը ստանանք»։— Այդ ի՞նչպես, ինչո՞ւ։— «Այն պատճառով,— ասում է,— որովհետև վաղուց ի վեր այդպես է սահմանված. եթե պահանջում են՝ սփռիր, իսկ չեն պահանջում — նստիր և հիշիր, որ ականջները ճակատից վեր չեն բուսնում»։ Եվ հանկարծ տառեխի այդ պարզ խոսքերից կարծես բոլորի աչքերից քողը վայր ընկավ։ Եվ սկսեցին սիրեցյալ մարդիկ գովաբանել տառեխին և զարմանալ նրա խելք ու մտքի վրա։

— Որտեղի՞ց է քեզ այդչափ անսպառ խելքը,— շրջապատեցին նրան ամեն կողմից,— եթե դու չլիներիր, հավանորեն, մեր բանը բուրդ կլիներ։

Իսկ տառեխը համեստորեն ուրախանում էր կատարած սխրագործությունից և բացատրում.

— Ես այն պատճառով եմ այսչափ խելացի, որ ինձ ժամանակին չորացրել են։ Այն ժամանակվանից կարծես ինձ համար լույսը ճառագայթեց. ոչ ավելորդ զգացմունքներ, ոչ ավելորդ մտածմունքներ, ոչ ավելորդ խիղճ—ոչինչ չկա ինձանում։ Մի բանի մասին եմ ամենայն ժամ և՛ ինձ, և՛ ուրիշներին կրկնում՝ չե՛ն աճում ականջները ճակատից վեր, չե՞ն աճում։

— Ճիշտ է,— համաձայնեցին սիրեցյալ մարդիկ և առմիշտ որոշեցին. եթե պահանջում են՝ սփռել, իսկ չեն պահանջում՝ նստել և որոշված ոռճիկը ստանալ։

Որպիսի կանոնը պահպանվում է և մինչ այսօր։

Չորացած տառեխը փորձեց նաև մարդկային մոլորությունները դատափետել և նույնպես հաջող արդյունքի հասավ։ Այդտեղ նա որոշակի ապացուցեց, որ եթե ավելորդ մտքերը և ավելորդ զգացմունքներն անհարկի բարդացնում են կյանքը, ապա ավելորդ խիղճը առավել ևս տեղին չէ։ Ավելորդ խիղճը սիրտը լցնում է երկչոտությամբ, կասեցնում է քարը նետելու պատրաստ ձեռքը, շշնջում է դատավորին՝ ստուգիր ինքդ քեզ։ Իսկ եթե մեկի խիղճը, մնացած փորոտիքի հետ մաքրված, հանված է, այդպիսին երկչոտության մասին հասկացողություն անգամ չունի, իսկ քարեր — մեծ քանակությամբ քար ունի ծոցում պահած։ Առանց աչք թարթելու նայում է չորացած տառեխը մարդկային մոլորությունների վրա և քար է, որ նետում է։ Յուրաքանչյուր մոլորություն նա համարակալել է և ամեն մեկի համար քար է պահել նույնպես ըստ համարի։ Մնում է միայն անաչառ հաշիվ պահել։ Աչքի տեղ՝ աչք, համարի տեղ՝ համար։ Եթե հարկավոր է ամբողջովին հաշմանդամել,— ամբողջովին հաշմանդամիր. ինքն է հանցավորը։ Եթե հարկավոր է մասամբ հաշմանդամել — հաշմանդամիր մասամբ. խրատ կլինի հետագայում։ Եվ իր այդ իմաստությամբ այնքան դուր եկավ նա բոլորին, որ շուտով խղճի մասին ոչ ոք այլևս առանց ծաղրի հիշել չէր կարողանում...

Բայց տառեխի կամավոր գործունեությունն ամենից ավելի մեծ արդյունք տվեց հասարակության մեջ առողջ մտքեր տարածելու խնդրում։ Առավոտից մինչև երեկո նա առանց հոգնության անցնում էր քաղաքներով ու գյուղերով և շարունակ նույն երգն էր երգում այն մասին, որ ականջները ճակատից վեր չե՛ն բուսնի, չե՞ն բուսնի։ Եվ երգում էր ոչ թե տաքարյուն, այլ պատկառելի, խոհեմ, այնպես, որ բարկանալու առիթ էլ չէր լինում... Պատահում էր՝ մեկն ու մեկը տաքացած բացականչում էր՝ ահա, զզվելին երգել սկսեց... Բայց դե առողջ մտքեր տարածելու գործում առանց դրա չի լինի, որ մեկն ու մեկը չհայհոյի զզվելի բառով...

Չորացած տառեխը, սակայն, չէր շփոթվում այդպիսի բարեմաղթություններից։ Նա ոչ առանց հիմքի ասում էր իրեն՝ թող սկզբում վարժվեն իմ ձայնին, իսկ հետո ես իմ նպատակին կհասնեմ...

Պետք է, սակայն, ճշմարիտն ասել, որ այն հասարակությունը, որին ուղղում էր տառեխն իր ուսմունքը, առանձնապես կայունություն չուներ։ Նրանում կային նաև համոզված մարդիկ, բայց ավելի խայտաբղետ մարդն էր գերակշռում։ Դա, ասենք, ամեն տեղ էլ այդպես է լինում. բայց ուրիշ տեղերում, համոզված մարդկանց համար, բավականաչափ լուսապայծառ ժամանակամիջոցներ են պատահում, իսկ այստեղ նրանք կարճատև են։ Համեցեք, մի ժամում բոլոր այդ խայտաբղետ մարդկանց ուղիղ ճանապարհի բերեք, համեցեք, հասեք այն բանին, որպեսզի նրանք յուրացնեն կյանքի նկատմամբ իրենց ունեցած իրավունքի պատկերացումը, և այն էլ ոչ թե մեքենայորեն յուրացնեն, այլ որպեսզի տեղը եկած ժամանակ կարողանան և պաշտպանել այդ իրավունքը։ Հաստատապես կարելի է ասել, որ դա տառապալից խնդիր է։ Իսկ մինչդեռ հանուն դրան քանի՞-քանի՞ կյանք է խորտակվում, ինչքա՞ն քրտինք և արյուն է թափվում, ինչքա՞ն տրտում և ծանր մտքեր են վերամտածվում։ Եվ եթե այդ ջանքերի հետևանքով ուրախության մեն-միակ րոպե փայլի (մանավանդ, կարծեցյալ), ապա այդ արդեն վարձատրություն է, որը բավական է համարվում՝ հետագա թունավորումների ամբողջ տարիներ արդարացնելու համար...

Եվ բացի դրանից՝ խորհրդավոր ժամանակ էր, անաստուգ

և դաժան։ Համոզված մարդիկ ուժասպառ էին լինում, տանջվում էին, դես ու դեն էին նետվում, հայցում էին և, պատասխանի փոխարեն, փակ դուռ էին տեսնում իրենց առջև։ Խայտաբղետ մարդիկ տարակուսած հետևում էին նրանց նկրտումներին և միաժամանակ հոտոտում էին օդը, թե ինչ հոտ է գալիս։ Վատ հոտ էր գալիս, երկաթյա օղակի ներկայությունն էր զգացվում, որն օրեցօր ավելի ու ավելի էր սեղմվում։ Ո՞վ պետք է ազատի մեզ, ո՞վ համապատասխան խոսք կասի,— անձկում էին խայտաբղետ մարդիկ և շատ էին ուրախանում, երբ նրանց ականջներում սթափեցնող ձայներ էին հնչում։

Մտահոգության կարճատև շրջան է սկսվում. խայտաբղետ մարդիկ արդեն որոշում կայացրել են, բայց դեռ ամոթ են զգում։ Ապա խայտաբղետ մասսան սկսում է կամաց-կամաց հուզվել։ Ավելի, ավելի — և հանկարծ աղաղակ՝ չե՛ն բուսնում ականջները ճակատից վեր, չե՛ն բուսնում։

Հասարակությունն զգաստացավ։ Ավելորդ մտքերից, ավելորդ զգացմունքներից և ավելորդ խղճից գլխովին ազատագրվելու տեսարանն այն աստիճան սրտառուչ է, որ նույնիսկ զրպարտիչներն ու մարդատյացները միաժամանակ լռում են։ Նրանք հարկադրված են խոստովանել, որ հասարակ, ցամաքած սերմնահյութով և քամհարած ուղեղով տառեխը կոնսերվատիզմի այնպիսի հրաշքներ գործեց, որի մասին իրենք գուշակել անգամ չէին համարձակվում։ Մի բան է նրանց մխիթարում, որ այդ սխրագործությունները տառեխը գործել է՝ նրանց մարդատյացության աղաղակների տակ թաքնվելով։ Եթե նրանք չդիմեին ճանկերում հուպ տալու միջնորդությանը, եթե չսպառնային նեղ տեղը լծելով, կարո՞ղ էր արդյոք տառեխը հաջողությամբ տանել իր խաղաղ վերածնման պրոպագանդը։ Չէի՞ն արգահատի արդյոք նրան, ծաղրի չէի՞ն ենթարկի արդյոք նրան։ Եվ վերջապես, զրպարտիչների կողմից ամենայն բոպե ցույց տրվող կարիճների և վերքերի հեռանկարը չէ՞ր արդյոք, որ ազդեց խայտաբղետ մարդկանց որոշման վրա։

Զրպարտիչներից ոմանք նույնիսկ, համենայն դեպս, ելքի անցք էին պատրաստել։ Գովաբանելը գովաբանում էին, սակայն համենայն դեպս ծոցերում քար էին պահում։ «Շատ գեղեցիկ,— ասում էին նրանք,— մենք ուրախությամբ ընդունում ենք, որ հասարակությունը զգաստացել է, որ բանդուսգուշանքն վերացել է, և նրա տեղը գրավել է առողջ, անշպար կյանքը։ Բայց երկա՞ր է տևելու արդյոք, բայց հաստատապե՞ս է արդյոք մեր զգաստացումը — ահա խնդիրը։ Այդ իմաստով մեր վերածնման պրոցեսը նշանավորող խաղաղ բնույթը շատ լուրջ մտորումներ է առաջացնում։ Մինչև այժմ մենք գիտեինք, որ մոլորություններն այնքան էլ հեշտությամբ չեն վայր դնում զենքը՝ նույնիսկ կատարված փաստերի ակնհայտնիության հանդեպ, բայց, հանկարծ, անսպասելի, անգուշակելի կերպով, շնորհիվ առածի հեղինակության՝ թեկուզ և բարեմիտ ու դարավոր փորձով նվիրագործված, սակայն և այնպես առածի՝ արմատական և համայնուրեք զգաստացում է հրապարակ գալիս։ Արդյո՞ք այդպես է, անկե՞ղծ է արդյոք մեր աչքի առաջ տեղի ունեցած դարձը, չի՞ հանդիսանում արդյոք նա ճարտար կոմպրոմիս կամ ժամանակավոր modus vivendi, աչքին թող փչելու համար։ Եվ չկա՞ն արդյոք վերածնումը առաջացնող ձևերի մեջ այն նշանները թեթևամիտ ազատամտության, որը, խուսափելով այնպիսի փորձված միջոցից, ինչպիսին է ճիրաններում հուպ տալը, երազում է հեզության միջոցով ցրել մեզ վրա ծանրացած մառախուղը։ Հեշտ կերպով մոռացության չի՞ տրվում այդ դեպքում արդյոք, որ մեր հասարակությունը ոչ այլ ինչ է, քան բազմապիսի և բնավորությունից զուրկ, ամեն հնարավոր հոսանքների և շերտավորումների մի զանգված, և որ հաջողությամբ գործ ունենալ այդ զանգվածի հետ կարելի է միայն այն դեպքում, երբ այդ զանգվածը կազմող բազմազան տարրեր նախապես մի հայտարարի բերված լինեն։

Ինչ էլ որ լիներ, սակայն, իսկական առողջ տոնը գրտնվել է։ Այն յուրացրին նախ սալոններում, հետո գինետներում, ապա... Տիկիններն ուրախանում էին և ասում՝ այժմ մեզանում կսկսվեն պարահանդեսները։ Առևտրականներն իրենց ճոթեղենն էին դուրս բերում և արդյունաբերության աշխուժացմանն էին սպասում։

Մնում էր մի բան. գտնել իսկական առողջ «գործ», որին կարելի լիներ «առողջ» տոն հարմարեցնել։

Սակայն այդ իսկ ժամանակ ինչ-որ արտասովոր մի բան կատարվեց։ Պարզվեց, որ մինչև այժմ բոլորի մտքում միայն ճիրաններում հուպ տալն էր, իսկ գործի մասին այնքան քիչ էին մտածում, որ ոչ ոք նույնիսկ նրա անունը չգիտեր։ Բոլորը սիրով ասում են՝ հարկավոր է գործ անել, բայց թե ի՞նչ գործ — չգիտեն։ Իսկ տառեխը մինչ այդ քայլում է վերածնված բազմության մեջ և ինքնաբավական բացականչում է. «Ականջները ճակատից վեր չե՛ն բուսնում, չե՛ն բուսնում»։

— Ներեցեք, տառեխ, սակայն դա միայն «տոն» է, բայց ոչ «գործ»,— առարկում են նրան, — ի՞նչ գործ պետք է կատարել, դու ա՛յդ ասա։

Բայց նա շարունակ իրենն է կրկնում և ոչ մի թզաչափ զիջել չի ուզում։ Այդպես էլ գործի մասին ոչ ոքից ոչինչ էլ չիմացան։

Եվ բացի դրանից, այդ իսկ ժամանակ կողքից դուրս պրծավ նաև մեկ այլ հարց. եթե անգամ, վերջապես, իսկական գործը հայտնի դառնա, ապա ո՞վ պետք է կատարի այն։

— Դուք, Իվան Իվանիչ, գործ կանե՞ք։

— Ես ի՞նչ գործ անող եմ, Իվան Նիկիֆորովիչ, ինձ չի վերաբերում... Այ, գուցե դուք...

— Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում, ես երկու գլուխ ունեմ, ի՞նչ է։ Ես, սիրելիս, դեռ չե՛մ մոռացել...

Եվ այդպես բոլորը։ Մեկին չի վերաբերում, մյուսը երկու գլուխ չունի, երրորդն ինչ-որ բան դեռ չի մոռացել...

Բոլորն աշխատում են մի կերպ դուրս պրծնել, բոլորի սրտերը տեղում չէ և ձեռքերն՝ ասես մտրակ լինեն...

«Ականջները ճակատից վեր չե՛ն բուսնում»— լավ է ասված, ուժեղ է, իսկ հետո՞ ինչ։ Պատի վրայի խզմզո՞նքը կարդալ,— ասենք թե այդ էլ լավ, իսկ հետո՞ ինչ... Տեղից չը-շարժվե՞լ, ձայն չհանե՞լ, քիթդ ներս չխոթե՞լ, չմտածե՞լ,— հիանալի է նաև այդ, իսկ հետո՞ ինչ։

Եվ որչափ ջանասիրությամբ ու խնամքով էին տրամաբանական հետևություններ անում տառեխի դոկտրինայից,

այնչափ ավելի հաճախ էր հարց առաջանում՝ իսկ հետո՞ ինչ։

Այդ հարցին պատասխանել հանձն առան զրպարտիչներն ու մարդատյացները։

«Ինքնին վերցրած,— ասում էին և գրում նրանք,— չբրացած տառեխի դոկտրինա կոչված ուսմունքը ոչ միայն ժխտման արժանի չէ, այլև կարող է միանգամայն ողջամիտ կոչվել։ Բայց բանը դոկտրինայի մեջ չէ և նրա դրույթների, այլ այն ձևերի, որոնք գործադրվել են նրա իրականացման համար և որոնց վերաբերմամբ մենք, սկզբից ևեթ, նախազգուշացնում էինք նրանց, ովքեր իրավասու են այդ բանում։ Այդ ձևերը միանգամայն անպետք էին, ինչպես պարզվեց այժմ։ Դրանք իրենց մեջ կրում էին նույն այն նողկալի ազատամտության կնիքը, որն արդեն քանի անգամ մեզ անդունդի եզրն է հասցրել։ Այնպես որ, եթե մենք դեռևս անդունդի հատակում չենք գտնվում, ապա շնորհիվ միայն դարերից ի վեր մեր կյանքի հիմքում պառկած ողջամտության։ Թող այդ ողջամտությունն այժմ ևս մեզ իր սովորական ծառայությունը մատուցի։ Թող թելադրի նա բոլորին, որոնք լրջորեն ըմբռնում են իրենց հայրենիքի շահերը, որ միակ նպատակահարմար ձևը, որի օգնությամբ մենք կարող ենք որևէ արդյունքի հասնել, ճիրաններում հուպ տալն է հանդիսանում։ Այդ մասին հիշեցնում են մեզ անցյալի ավանդությունները, նույն այդ մասին է վկայում նաև ներկայիս խռովությունը։ Այդ խռովության հիշատակն իսկ չէր լինի, եթե մեր նախազգուշացումները ժամանակին լսվեին և ուշադրության առնվեին։ Caveant consules!— կրկնում ենք մենք և միաժամանակ ավելացնում լատիններեն չիմացողների համար, որ այդ արտահայտությունը այլ խոսքով նշանակում է՝ «մի՛ հորանջիր»։

Այդպիսով, դուրս եկավ, որ թեպետև տառեխին չորացրին և նրա փորոտիքը մաքրեցին և ուղեղը քամուն ավեցին, բայց, այնուամենայնիվ, վերջիվերջո նա հարկադրված եղավ տեղի տալ։ Հաղթականից դարձավ նա կասկածելի, վստահելիից՝ ազատամիտ։ Եվ այնչափ ավելի վտանգավոր ազատամիտ, որչափ բարեհույս էր նրա պրոպագանդայի հիմքում պառկած միտքը։

Եվ ահա, մի առավոտ կատարվեց անլուր չարագործություն։ Ամենից մոլեռանդ զրպարտիչներից մեկը բռնեց չորացած տառեխի խռիկներից, կծեց նրա գլուխը, մաշկեց կաշին և բոլորի աչքի առաջ լափեց...

Խայտաբղետ մարդիկ նայում էին այդ տեսարանին, ծափահարում էին ու բացականչում. Կեցցե՞ ճիրաններում հուպ տալը։ Բայց Պատմությունը գործին այլ աչքով նայեց և մտքում գաղտնաբար որոշեց՝ հարյուր տարի անց ես անպայման տպագրելու եմ այս բոլորը։

ԱՐԾԻՎԸ ՄԵԿԵՆԱՍ

Պոետները ոտանավորներում շատ են գրում արծիվների մասին և այն էլ, շարունակ գովասանական։ Ե՛վ արծվի մարմինն է աննկարագրելի գեղեցիկ, և՛ հայացքն է սրատես, և՛ թռիչքն է մեծավայելուչ։ Նա չի թռչում մյուս թռչունների նման, այլ սավառնում է կամ ճախրում, այլև նայում է արեգակին ուղիղ և ամպրոպի հետ է վիճում։ Իսկ ոմանք նրան նույնիսկ մեծահոգություն են վերագրում։ Այնպես որ, եթե, օրինակ, ոտանավորում կամենում են քաղաքապահ գովերգել, նրան անպայման արծվի հետ են համեմատում։ Արծվի նման, ասում են, քաղաքապահ № այսինչը զննեց, կորզեց և, ունկնդրելով՝ ներեց։

Ես ինքս երկար ժամանակ հավատում էի այդ ներբողներին։ Մտածում էի, իրոք գեղեցիկ է։— Կորզե՛ց... ներե՛ց։ Ներեց— ահա ինչն էր ամենից ավելի հմայում։ Ո՞ւմ ներեց — մկա՞նը։ Ի՞նչ բան է մուկը։ Եվ ես շտապով վազում էի բարեկամ-պոետներից որևէ մեկի մոտ և հաղորդում էի արծվի նոր մեծահոգության մասին։ Իսկ բարեկամ-պոետը կեցվածք էր ընդունում, մի ակնթարթում փնչացնում էր և ապա սկսում էր ոտանավորներ որձկալ։

Բայց մեկ անգամ միտք ծագեց իմ մեջ, թե ինչու, այնուամենայնիվ, արծիվը «ներեց» մկանը։ Մուկն իր գործով վազ էր տալիս ճանապարհով, իսկ արծիվը տեսավ նրան, վրա ընկավ, տրորեց և... ներեց... Ինչո՞ւ նա «ներեց» մկանը, և ոչ թե մուկը «ներեց» նրան։

Քանի գնաց, այդ միտքն ավելի տիրապետեց ինձ։ Սկսեցի հետևել ու զննել։ Տեսնում եմ, որ այդտեղ ինչ-որ մի չարաբաստիկ բան կա։ Նախ, արծիվն այն պատճառով չի մկներ որսում, որպեսզի նրանց ների։ Երկրորդ, եթե անգամ ընդունենք, որ արծիվը «ներեց» մկանը, ապա, իրոք ավելի լավ կլիներ, եթե նա ամենևին չհետաքրքրվեր նրանով։ Եվ երրորդ, վերջապես, ուզում է նա արծիվ լինի, ուզում է գերարծիվ, այնուամենայնիվ նա թռչուն է։ Այն աստիճան թռչուն, որ նույնիսկ քաղաքապահի համար նրա հետ համեմատվելը միայն թյուրիմացությամբ կարող է հաճելի լինել։

Այժմ էլ ես արծիվների մասին այնպես եմ մտածում, որ արծիվները — արծիվներ են և ուրիշ ոչինչ։ Նրանք գիշատիչ են, մսակեր են, բայց նրանց արդարացումն այն է, որ ինքը բնությունն է նրանց այդպես բացառապես հակաբուսակեր ստեղծել։ Եվ որովհետև նրանք միաժամանակ ուժեղ են, հեռատես, արագասլաց և անգութ, ապա միանգամայն բնական է, որ նրա երևալուն պես բոլոր փետրավորները շտապում են թաքնվել։ Եվ այդ բանը տեղի է ունենում վախից և ոչ թե հիացմունքից, ինչպես պոետներն են հավատացնում։ Իսկ ապրում են արծիվները միշտ մեկուսացած, անառիկ վայրերում, հյուրասիրությամբ չեն զբաղվում, այլ ավազակություն են անում և ավազակությունից ազատ ժամանակ նիրհում են։

Բայց գտնվեց մի այնպիսի արծիվ, որ զզվեց մեկուսի ապրելուց, և ահա մեկ անգամ ասում է իր մարի արծվին.

— Տխուր է այսպես մեն-մենակ իրար հետ ապրելը։ Ամբողջ օրն արեգակին նայելով շշմել կարելի է։

Եվ սկսեց միտք անել։ Որչափ ավելի էր միտք անում, այնչափ ավելի էր թվում, որ լավ կլիներ այնպես ապրել, ինչպես հնում կալվածատերերն էին ապրում։ Սպասավորներ ու ծառաներ կհավաքեր և ուրախ-զվարթ կյանք կաներ։ Ագռավները բամբասանքները կհաղորդեին, թութակները գլուխկոնծի կտային, սարյակները կաշա կեփեին, տարմահավերը գովասանական երգեր կերգեին, բուերն ու բվեճները գիշերային հսկիչներ կդառնային, իսկ բազեները, ցիները և ուրուրները կերակուր կգտնեին նրա համար։ Իսկ իրեն կվե-

բաղտհեր միայն վայրագությունը։ Մտածեց մտածեց և վրճռեց։ Կանչեց նա մեկ անգամ բազեին, ցինին և ուրուրին ու ասաց նրանց.

— Հավաքեցեք ինձ համար սպասավորներ ու ծառաներ, ինչպես հնումը կալվածատերերն ունեին. նրանք ինձ կգվարճացնեն, իսկ ես նրանց աչ ու երկյուղի մեջ կպահեմ։ Ուրիշ ոչինչ։

Լսեցին գիշատիչներն այդ հրամանը և թռան ամեն կողմ։ Նոր աշխատանք սկսվեց։ Ամենից առաջ քշեցին-բերին մեծ թվով ագռավներ։ Հավաքեցին, գրեցին մարդահամարի աստիճաններում և հարկաթերթեր բաժանեցին։ Ագռավը բազմացող թռչուն է և ամեն ինչի համաձայն է։ Իսկ առավելապես լավ է նրանով, որ վարպետ է «գյուղացիների» դասակարգ ներկայացնելում։ Իսկ հայտնի է, որ երբ պատրաստ են «գյուղացիները», ապա մնում է միայն մանրամասնությունները, որոնք դժվար չէ հորինել։ Եվ հորինեցին։ Ջրահավերից ու գագարներից նվագախումբ կազմեցին, թութակներին ծաղրածու նշանակեցին, կաչաղակին, որպես հմուտ գողի, գանձարանի բանալիները հանձնեցին, բուերին ու բզվեճներին հարկադրեցին գիշերային հսկողություն անել։ Մի խոսքով, այնպիսի կարգ ու կանոն սահմանեցին, որ ամեն մի կալվածատիրոջ համար ամոթաբեր չէր լինի։ Նույնիսկ կկուին չմոռացան, գուշակ նշանակեցին մարի արծվի մոտ, իսկ կկուի որրերի համար դաստիարակչական տուն կառուցեցին։

Բայց արքունիքի շտատը, ինչպես հարկն է, դեռ գործի չէին դրել, երբ համոզվեցին, որ ինչ-որ մի պակասություն կա։ Մտածեցին, շատ մտածեցին, թե ի՞նչ է պակաս և վերջապես հասկացան, որ բոլոր արքունիքներում պետք է գիտություններ և արվեստներ լինեն, իսկ արծիվը չուներ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը։

Երեք թռչուն առանձնապես վիրավորված էին համարում իրենց համար այդ բացը՝ խածկտիկը, փայտփորիկը և սոխակը։

Խածկտիկը ժիր թռչնակ էր և պատանեկությունից՝ սուլելու մեջ վարպետ։ Սկզբում կրթություն ստացել էր կանոնիստների դպրոցում, հետո զորագնդում գրագիր էր եղել և, առոգանության նշաններ դնելը սովորելով, առանց նախնական թույլտվություն ստանալու, սկսել էր «Անտառային լրաբեր» լրագիրը հրատարակել։ Միայն թե ոչ մի կերպ հարմարվել չէր կարողանում։ Մեկ տեսար այն, ինչի մասին գրում է, գրել չի կարելի, մեկ տեսար՝ ինչի մասին չի գրում, այդ ո՛չ միայն գրել կարելի է, այլ և պետք է գրել։ Իսկ դրա համար շարունակ նրա գլխին տալիս էին։ Ուստի մտածեց. «Արծվի արքունիքը գնամ, թող հրամայի ամեն առավոտ անպատիժ կերպով իր փառքն ազդարարել»։

Փայտփորիկը համեստ գիտնական էր և խիստ մեկուսի կյանք էր վարում։ Ոչ ոքի հետ հարաբերություն չուներ (շատերը նույնիսկ կարծում էին, որ նա բոլոր լուրջ գիտնականների նման միշտ հարբած է լինում), այլ ամբողջ օրերով նստած սոճու ճյուղին, շարունակ փորում էր։ Եվ մի խուրձ պատմական ուսումնասիրություններ փորեց, ինչպիսիք են՝ «Անտառի ոգու տոհմաբանությունը», «Ամուսնացած եղե՞լ է արդյոք վհուկը», «Ջադուներին մարդահամարի մատյանում ո՞ր սեռին պիտի գրել» և այլն։ Բայց որքան էլ փորեց, իր գրքերի համար հրատարակիչ գտնել չկարողացավ։ Ուստի նա էլ մտածեց. «Գնամ արծվի մոտ որպես պալատական պատմաբան, գուցե նա ագռավների խնամակալությամբ իմ ուսումնասիրությունները տպագրի»։

Ինչ վերաբերում է սոխակին, նա կյանքի դառնություններից գանգատվելու բան չուներ։ Վաղուց ի վեր այնպես քաղցր էր երգում նա, որ ոչ միայն սոճիները, այլև մոսկովյան վաճառականները նրան լսելիս զգացվում էին։ Արար աշխարհ սիրում էր նրան, արար աշխարհ շունչը զսպած ունկնդրում էր, ինչպես նա ծառերի խիտ տերևների մեջ թաքնված, շնչահեղձ էր լինում իր քաղցրիկ երգերից։ Բայց նա չափից ավելի հեշտասեր էր և փառասեր։ Չէր բավարարվում անտառում ազատ երգեր հնչեցնելով, չէր գոհանում վշտացած սրտերը ձայների ներդաշնակությամբ արբեցնելով... Մտածում էր՝ արծիվը նրա վզից մրջյունների ձվաններից մանյակ կախ կտա, ամբողջ կուրծքը կենդանի խավարամիջատ-

ներով կգարդարի, իսկ մարի արծիվը գաղտնի տեսակցություններ կնշանակի լուսնի շողերի տակ...

Մի խոսքով, երեք թռչունները կպան բազեին, թե զեկուցիր ու զեկուցիր մեր մասին։

Լսեց արծիվը բազեի զեկույցը գիտություններ և արվեստներ հաստատելու անհրաժեշտության մասին և միանգամից չհասկացավ։ Նստած իր համար, խաղ է անում իր մագիլների հետ, իսկ աչքերը, ասես հղկված քարերի նման, արեգակի դիմաց շողշողում են։ Երբեք նա ոչ մի լրագիր չէր տեսել, ոչ վհուկով, ոչ էլ ջադուներով էր հետաքրքրվել, իսկ սոխակի մասին լսել էր միայն, որ դա շատ փոքրիկ թռչուն է և չարժե կտուց կեղտոտել նրա համար։

— Դու երևի չգիտե՞ս անգամ, որ Բոնապարտը մեռել է։

— Այդ ի՞նչ Բոնապարտ է։

— Ասո՞ւմ էի ախր։ Բայց նրա մասին իմանալը վատ չէ։ Իսկ եթե հյուրեր գան, սկսեն խոսել, թե այս բանը Բոնապարտի ժամանակ եղավ, դու միայն աչքերդ ես բաց ու խուփ անելու։ Լավ չի։

Բուին խորհրդի հրավիրեցին, նա էլ հաստատեց, որ պետք է արքունիքում գիտություններ և արվեստներ հիմնել, որովհետև գիտություններ և արվեստներ եղած դեպքում արծիվների օրն ուրախ կանցնի, ինչպես և ուրիշների համար տպավորությունը լավ կլինի։ Ուսումը լույս է, իսկ տգիտությունը՝ խավար։ Քնել և ուտել բոլորը գիտեն, բայց, օրինակ, այսպիսի խնդիր լուծել՝ «Թռչում էր սագերի երամը... — այնքան էլ հեշտ չէ։ Խելոք կալվածատերերը, պատահում էր, մեկ ծեծվածին երկու չծեծված էին տալիս,— նշանակում է՝ դրա մեջ շահ էին տեսնում իրենց համար։ Օրինակ՝ սարյակը. նրա ամբողջ գիտությունը կայանում է նրանում, որ ջրով լիքը դույլիկը քարշ տալ գիտե, բայց ի՞նչ փող են վճարում դրա համար։

— Ես խավարի մեջ էլ տեսնում եմ, դրա համար էլ ինձ իմաստուն են ասում, իսկ դու թեպետև ժամերով կարող ես անթարթ նայել արեգակին, բայց քո մասին ասում են՝ արծիվը ճարպիկ է, բայց ցանցառ է։

— Է՞հ, ես դեմ չեմ գիտություններին,— ասաց արծիվը։

Ասվեց և արվեց։ Հաջորդ օրն իսկ արծվի ապարանքում սկսվեց «ոսկե դարը»։ Սարյակներն սկսեցին սովորել «գիտությունները սնուցանում են պատանիներին» օրհներգը, ջրահավերն ու գագարները փող էին փչում, թութակները նոր ծաղրածուություններ էին հնարում։ Ագռավների վրա նոր հարկ նշանակեցին՝ «լուսավորության» հարկ անվան տակ, երիտասարդ բազեների և ճուռակների համար զինվորական դպրոց հիմնեցին, բուերի ու բվեճների համար՝ ակադեմիա դե սեանս[20], նաև ագռավների ճուտերի համար մեկ-մեկ օրինակ կոպեկանոց այբբենարան գնեցին։ Ի վերջո, ամենածեր սարյակին բանաստեղծ նշանակեցին Վասիլ Կիրիլիչ Տրեդյակովսկին[21] անուն-ազգանունով, և հրաման տվեցին, որ վաղն ևեթ պատրաստ լինի սոխակի հետ մրցելու։

Եվ ահա փափագելի օրը եկավ։ Նորակոչներին արծվի առաջ բերեցին և հրամայեցին նրանց սնապարծել։

Ամենամեծ հաջողությունն ունեցավ խածկտիկը։ Ողջույնի փոխարեն նա կարդաց իր գրած ֆելիետոնը, որն այն աստիճան թեթև էր, որ արծվին անգամ թվաց, թե հասկացավ։ Խածկտիկն ասում էր, որ պետք է ապրել ուրախ-զվարթ, և արծիվը հաստատեց՝ այո, այդպես։ Ասում էր, որ միայն իր առևտուրը հաջող լինի, իսկ ուրիշ բանի հետ գործ չունի, և արծիվը հաստատեց՝ այո, այդպես։ Ասում էր, որ ստրկական կյանքը լավ է, քան աղայականը, որ աղաների հոգսը շատ է, իսկ ստրուկն աղայի շվաքում ապրելով, ցավ ու հոգս չունի, և արծիվը հաստատեց՝ այո, այդպես։ Ասում էր, որ երբ ինքը խիղճ ուներ, այն ժամանակ ինքն անփոխան էր ման գալիս, իսկ այժմ, երբ խղճից նշույլ անգամ չի մնացել, միանգամից երկու փոխան է հագել, և արծիվը հաստատեց՝ այո, այդպես։

Վերջապես, խածկտիկը ձանձրացրեց։

— Հետևյա՛լը,— կլանչեց արծիվը։

Փայտփորիկը սկսեց այն բանից, որ արծվի սերնդաբանությունը արեգակից սկսեց, իսկ արծիվն իր կողմից հաստատեց, թե՝ «այո, ես էլ հայրիկիցս այդպիսի բան եմ լսել»։ Արեգակն ուներ,— ասաց փայտփորիկը,— երեք զավակ՝ Ակու-

լա աղջիկը և երկու տղա՝ Առյուծը և Արծիվը։ Ակուլան ցոփ կյանք էր վարում, դրա համար հայրը նրան ծովի հորձանուտում փակեց, Առյուծ որդին հորից երես դարձրեց,— հայրը նրան անապատի վեհապետ նշանակեց, իսկ Արծիվը հնազանդ որդի էր, այդ պատճառով էլ հայրը նրան իրեն մոտիկ պահեց, օդային տարածությունների վեհապետությունը նրան հանձնեց։

Բայց փայտփորիկը դեռ չէր վերջացրել իր ուսումնասիրության ներածականը փորփրել, որ արծիվն անհամբերությամբ բացականչեց.

— Հետևյա՛լը, հետևյա՛լը։

Այն ժամանակ սոխակն սկսեց և անմիջապես խայտառակ եղավ։ Երգում էր նա այն մասին, ինչպես ուրախացել էր ստրուկը, իմանալով, որ աստված իրեն կալվածատեր է ուղարկել, երգում էր արծիվների մեծահոգության մասին, որոնք ստրուկներին արաղի փող են տալիս՝ առանց խնայելու... Բայց և այնպես, որչափ էլ ճիգ ու ջանք էր գործ դնում՝ կատարելապես նմանվելու ստրուկի, այնուամենայնիվ, ոչ մի կերպ չէր կարողանում հաղթահարել իր մեջ եղած «արվեստը»։ Ինքը վերից վար ստրուկ էր (նույնիսկ հնամաշ սպիտակ փողկապ էր գտել և խոպոպիկներ էր սարքել գլխին), բայց «արվեստը» ստրկական շրջանակում տեղավորվել չէր կարողանում և անդադար դուրս էր թռչում։ Որքան էլ երգեց նա, արծիվը ոչինչ չհասկացավ։

— Ի՞նչ է փնթփնթում այդ հիմարը,— բացականչեց նա վերջապես,— կանչել այստեղ Տրեդյակովսկուն։

Իսկ Վասիլ Կիրիլիչը կանգնած էր պատրաստ։ Նույն այն ստրկական սյուժետները վերցրեց, բայց այնպես պարզորոշ նկարագրեց, որ արծիվը կրկնում էր շարունակ՝ այդպես, այդպես, այդպես։ Եվ ի վերջո, մրջյունի ձվաններից մանյակ կախեց Տրեդյակովսկու պարանոցից, իսկ սոխակի վրա փայլատակեց աչքերն ու բացականչեց. «Հեռացնե՛լ անպիտանին»։

Դրանով էլ վերջացան սոխակի փառասիրական փորձերը։ Անմիջապես նրան փակեցին վանդակում և ծախեցին «Հրաժեշտ բարեկամաց» պանդոկին, ուր մինչև օրս էլ քաղցր Թույնով է արբեցնում գինովցած «ասուպների» սրտերը։

Այնուամենայնիվ՝ լուսավորության գործը չլքեցին։ Ճուռակների և բազեների զավակները շարունակում էին գիմնազիա հաճախել. ակադեմիա դե սեանսը ձեռնարկեց բառարանի հրատարակությանը և հաղթահարեց Ա տառի կեսը, փայտփորիկը գրում էր «Անտառի ոգիների պատմության» 10-րդ հատորը։ Բայց խածկտիկը տապ արեց։ Առաջին իսկ օրից նա նախազգաց, որ լուսավորական այդ բոլոր աղմուկը շուտափույթ և անողորմ վախճան է ունենալու և, ըստ երևույթին, նրա նախազգացումը բավական ճիշտ հիմունքներ ուներ։

Բանն այն է, որ բազեն և բուն իրենց վրա վերցնելով լուսավորական գործի ղեկավարությունը, մեծ սխալ թույլ տրվեցին, նրանք ուզեցին կարդալ-գրել սովորեցնել արծվին։ Սովորեցնում էին նրան հնչական մեթոդով, հեշտ ու հետաքրքիր, բայց որչափ էլ աշխատեցին, նա մեկ տարուց հետո էլ «Արծիվ» գրելու փոխարեն գրում էր «Ածեվ», այնպես որ, ոչ մի խոշոր պարտապան այդպիսի ստորագրությամբ մուրհակ չէր ընդունում։ Բայց ավելի մեծ սխալը կայանում էր նրանում, որ ընդհանրապես բոլոր մանկավարժների նման, ոչ բուն, ոչ բազեն արծվին ոչ հանգիստ էին տալիս, ոչ ժամանակ։ Բուն ամեն ակնթարթ հետևում էր նրան կրնկակոխ, բացականչելով՝ բբ...զզ... խխ... իսկ բազեն, նույնպես ամեն ակնթարթ, ներշնչում էր, որ առանց թվաբանական չորս գործողությունները յուրացնելու, թալանած ավարը բաժանել չի լինի։

— Դու գողացար տասը հատ սագ, երկուսը թաղամասի ոստիկանատան գրագրին նվիրեցիր, մեկը կերար, քանի՞ հատ մնաց,— կշտամբանքով հարցնում էր բազեն։

Արծիվը չէր կարողանում լուծել և լուռ էր մնում, բայց օրեցոր ավելի ու ավելի մեծ զայրույթ էր կուտակվում սրտում բազեի դեմ։

Ստեղծվեց հարաբերությունների լարվածություն, որից շտապեց օգտվել խարդավանքը։ Դավադրության գլուխ կանգնեց ուրուրը և իր ետևից տարավ կկուին։ Վերջինս սկսեց շշնջալ մարի արծվի ականջին. «Կործանելու են նրանք մեր բարերարին, այնքա՛ն են սովորեցնելու, որ շշմեցնեն նրան»,

իսկ մարի արծիվն սկսեց ծաղրել արծվին՝ «գիտնական, գիտնական», հետո, ընդհանուր ուժերով, ճուռակի մեջ արթնացրին «վատ հակումներ»։

Եվ ահա, մեկ անգամ լուսաբացին, հազիվ էր արծիվը աչքերը բաց արել, որ բուն, սովորության համաձայն, ետևվից մոտեցավ անշշուկ և բզզաց ականջի տակ՝ վվ... զզզ... ըրր...

— Հեռացիր, զզվելի,— մեղմ ասաց արծիվը։

— Հանեցեք, ձերդ բարձրություն, կրկնել՝ թթ... կկ... մմ...

— Երկրորդ անգամ ասում եմ՝ հեռացիր։

— Պպ... խխ... շշ...

Արծիվը ակնթարթապես դարձավ նրա կողմն ու հոշոտեց նրան։

Իսկ մեկ ժամ անց, բանից անտեղյակ, առավոտյան որսից վերադարձավ բազեն։

— Ահա քեզ խնդիր,— ասաց նա,— այս գիշեր թալանված է երկու փութ որսամիս. եթե այդ ավարը երկու հավասար մասի բաժանելու լինենք, մեկը քեզ, մյուսը բոլոր սպասավորներին, քո բաժինն ինչքա՞ն կլինի։

— Բոլորը,— պատասխանեց արծիվը։

— Դու բան ասա,— առարկեց բազեն։— Եթե «բոլորը» լիներ, այլևս քեզ չէի հարցնի։

Առաջին անգամ չէր, որ բազեն այդպիսի խնդիր էր առաջարկում, բայց այս անգամ նրա վերցրած տոնը արծվին անհանդուրժելի թվաց։ Արյունը բորբոքվեց այն մտքից, որ ինքն ասում է «բոլորը», իսկ իր ստրուկը համարձակվում է առարկել, թե՝ «բոլորը չէ»։ Իսկ հայտնի է, որ երբ արծիվների արյունը բորբոքվում է, նրանք մանկավարժական ձևերը ապըստամբությունից տարբերել չեն կարողանում։ Այդպես էլ վարվեց։

Բայց բազեի հետ հաշիվը մաքրելով հանդերձ, արծիվը, սակայն, ասաց.

— Իսկ դե սեանս ակադեմիան մնա առաջվա պես։

Կրկին երգեցին սարյակները՝ «Գիտությունը սնուցանում

է պատանիներին». բայց բոլորի համար պարզ էր արդեն, որ «ոսկե դարը» վերջանալու վրա է։ Հեռապատկերում նկատվում էր տգիտության խավարը, իր մշտական ուղեկիցներ՝ պառակտման և ամեն տեսակ խռովությունների հետ միասին։

Խռովությունն սկսվեց նրանով, որ մեռած բազեի տեղը երկու թեկնածու հայտնվեցին՝ ճուռակը և ուրուրը։ Եվ որովհետև երկու հակառակորդների ուշադրությունն ուղղված էր բացառապես անձնական հաշիվների կողմը, ուստի արքունիքի գործերը հետին շարքն անցան ու սկսեցին կամաց-կամաց քայքայման դրության հասնել։

Մեկ ամիս անց «ոսկե դարից» հետքն էլ չէր մնացել։ Սարյակները ծուլացան, ջրահավերը սկսեցին կեղծերգել, կաչաղակը գողանում էր օր ու գիշեր, իսկ ագռավների վրա այնքան ապառիկներ կուտակվեցին, որ հարկադրված եղան էկզեկուցիայի դիմել։ Բանն այնտեղ հասավ, որ նույնիսկ սկսեցին փչացած կերակուր մատուցել արծվին։

Այդ խառնաշփոթությունից արդար դուրս գալու համար ճուռակը և ուրուրը՝ ժամանակավորապես համաձայնության գալով, բոլոր ձախորդությունները լուսավորությանը վերագրեցին։ Գիտությունները, իբրև, անտարակույս, օգտակար են, բայց միայն այն դեպքում, երբ նրանք պատեհ ժամանակին են հրապարակ գալիս։ Ապրել են, իբրև, մեր պապերն առանց գիտության, մենք ևս առանց նրա կապրենք...

Եվ, որպես ապացույց, որ վնասն ամբողջությամբ գիտություններից է, սկսեցին դավադրություններ հայտնաբերել, և անպայման այնպիսի դավադրություններ, որ անգամ ժամագիրքը մասնակից եղած լիներ նրանց։ Սկսվեցին հետախուզություններ, հետաքննություններ, դատավարություններ...

— Վե՛րջ,— հանկարծ հնչեց վերևից։

Բացականչողն արծիվն էր։ Լուսավորությունը դադարեցրեց իր ընթացքը։

Ամբողջ արքունիքում այնպիսի լռություն տիրեց, որ լսելի էր գետնի վրայով սողացող զրպարտության շշուկը։

Նոր հոսանքի առաջին զոհը եղավ փայտփորիկը։ Այդ

խեղճ թռչունը, ասուած վկա, հանցաւոր չէր։ Բայց նա գրել-կարդալ գիտեր, և դա միանգամայն բաւական էր՝ նրան մեղադրելու համար։

— Առոգանութեան նշանները դնել գիտե՞ս։

— Ոչ միայն սովորական առոգանութեան նշանները, այլև արտակարգ նշանները, ինչպես՝ չակերտները, գծիկը, փակագծերը միշտ խղճի մտոք դնում եմ։

— Իսկ իգական սեռը արական սեռից տարբերել կարո՞ղ ես։

— Կարող եմ։ Նոյնիսկ գիշեր ժամանակ չեմ սխալվի։

Ուրիշ ոչինչ։ Փայտփորիկի ոտքերը շղթայեցին և առհավետ փակեցին ծառի փչակում։ Իսկ մյուս օրը նա նույն փըչակում, մրջիւնների կերակուր դառնալով, կնքեց մահկանացուն։

Հազիվ էր վերջացել փայտփորիկի պատմությունը, սկսվեց ակադեմիա դե սեանսի ջարդը։

Սակայն բուերն ու բվեճները վճռական դիմադրություն ցույց տվեցին. ցավում էին, որ պիտի պետական քնակարաններից բաժանվեն։ Ասում էին, որ իրենք այն պատճառով չէ որ սեանսներով են զբաղվում, որպեսզի տարածեն նրանց, այլ նրա համար, որպեսզի շար աչքից պաշտպանեն։ Բայց ուրուրն անմիջապես նրանց խորամանկությունը հերքեց, հարց տալով՝ իսկ սեանսներն ինչի՞ համար են։ Եվ նըրանք այդ հարցին պատասխան տալ չկարողացան (չէին սպասում)։ Այն ժամանակ նրանց հատ-հատ ծախեցին բոստանչիներին, իսկ վերջիններս նրանցից խրստվիլակ պատրաստեցին և բանջարանոցների պահապան դրեցին։

Այդ իսկ ժամանակ ագռավներից ետ վերցրին կոպեկանոց այբբենարանները, սանդի մեջ ծեծեցին և ստացված զանգվածից խաղալիքներ շինեցին։

Բուերին և բվեճներին հաջորդեցին տարմահավերը, ջըրահավերը, սարյակները... Նույնիսկ խուլ մորեկին կասկածեցին «մտածելակերպի» մեջ այն հիման վրա, որ նա ցերեկը լռում է, իսկ գիշերը քնում...

Ապարանքը դատարկվեց։ Մնացին արծիվն ու մարի արծիվը և նրանց հետ՝ ճուռակը և ուրուրը։ Իսկ հեռվում մնաց ագռավների մասսան, որն անխիղճ կերպով բազմանում էր։

Եվ որքան շատ էր բազմանում, այնքան շատ հարկերի ապառիկներ էին կուտակվում նրանց վրա։

Այն ժամանակ ուրուրը և ճուռակը, այլևս չիմանալով ում ոչնչացնել (ագռավները հաշվի չէին), սկսեցին ոչնչացնել միմյանց։ Եվ կրկին գիտությունների հողի վրա։ Ճուռակը ամբաստանեց, որ ուրուրը ծածուկ ժամագիրք է կարդում, իսկ ուրուրը զրպարտեց, որ ճուռակը փչակում «նորագույն երգարան» է թաքցրել։

Արծիվը շվարեց...

Բայց այդտեղ արդեն ինքը Պատմությունն արագացրեց իր ընթացքը, որպեսզի վերջ դնի այդ խառնաշփոթությանը։ Կատարվեց ինչ-որ արտասովոր մի բան։ Տեսնելով, որ իրենք անտերունչ են մնացել, ագռավներն հանկարծ ուշքի եկան և մտածեցին, թե արդյոք այդ մասին ի՞նչ էր գրված կոպեկանոց այբբենարանում։ Եվ դեռ կարգին չէին վերհիշել, որ ամբողջ երամով բնագդաբար թողեցին իրենց տեղերն ու թռան։

Արծիվը հետապնդեց նրանց, բայց այլևս ուշ էր. կալվածատիրական քաղցր կյանքը նրան այնքան էր քնքշացրել, որ հազիվ էր կարողանում թևերը շարժել։

Այն ժամանակ դարձավ մարի արծվին և ասաց.

— Թող սա դա՞ս լինի արծիվներին։

Բայց ի՞նչ էր նշանակում այդ դեպքում «դաս» բառը։ Այն, որ լուսավորությունն արծիվների համար վնասակար է, թե՞ այն, որ արծիվները լուսավորության համար վնասակար են, կամ, վերջապես, թե մեկը և թե մյուսը միասին — այդ մասին նա ոչինչ չասաց։

ԻԴԵԱԼԻՍՏ ԾԱԾԱՆԸ

Ծածան ձուկը վիճում էր աքերին ձկան հետ։ Ծածանը ասում էր, որ աշխարհում հնարավոր է միայն արդարությամբ ապրել, իսկ աքերինը պնդում էր, որ առանց խար-

դախության ապրել հնարավոր չէ։ Իսկապես, «խարդախություն» ասելով աքերինը ի՛նչը նկատի ուներ, հայտնի չէ, սակայն ամեն անգամ, երբ նա արտասանում էր այդ բառը, ծածանը զայրույթով բացականչում էր.

— Բայց չէ՛ որ դա ստորություն է։

Աքերինը պատասխանում էր դրան.

— Ա՜յ, կտեսնես։

Ծածանը հեզ ձուկ է և հակամետ է իդեալիզմի. իզուր չէ, որ վարդապետները սիրում են ծածանը։ Ապրում է նա առավելապես գետի կամ լճակի հատակի խորշերում (ուր ավելի խաղաղ է), թաղված տիղմերի մեջ, ուր աչքով անտեսանելի խխունջներ է գտնում իր սնունդի համար։ Բնական է, ուրեմն, որ երկար ժամանակ այդպես պառկած մնալով, նա շարունակ մտածում է և մեկ էլ տեսար, մի բան փչեց խելքին։ Երբեմն նույնիսկ շատ ազատամիտ բան։ Բայց որովհետև ծածաններն իրենց մտքերը ոչ գրաքննության են ներկայացնում, ոչ էլ ոստիկանատանն են գրանցման ենթարկում, ուստի նրանց քաղաքական բարեհուսության վրա ոչ ոք չի կասկածում։ Իսկ եթե երբեմն-երբեմն ծածաններին շուրջկալ են անում, ապա դա ոչ թե նրանց ազատամտության պատճառով է, այլ որովհետև նրանք համեղ են։

Ծածաններին որսում են առավելապես թոռով կամ ուռկանով, բայց հաջող որս անելու համար պետք է հմտություն ունենալ։ Փորձառու ձկնորսները ծածանների որսը սկսում են անմիջապես անձրևից հետո, երբ ջուրը պղտոր է լինում։ Գցում են ուռկանը և սկսում են պարաններով, ձողերով խրփել ջրին և առհասարակ աղմուկ են բարձրացնում։ Լսելով աղմուկը և ենթադրելով, որ այդ աղմուկը ազատ գաղափարների հաղթանակն է ազդարարում, ծածանը դուրս է գալիս հատակից և աշխատում է ինքն էլ մի կերպ մասնակից լինել հաղթանակի այդ հանդեսին։ Ահա հենց այդ ժամանակ էլ նա մեծ բազմությամբ ընկնում է ուռկանի մեջ, որպեսզի հետո զոհ գնա մարդկային որկրամոլությանը։ Որովհետև, կրկնում եմ, ծածանը այնպիսի համեղ պատառ է (մանավանդ, հում սերով տապակած), որ ազնվականության պա-

ռագլուխները նրանցով հաճույքով հյուրասիրում են նույնիսկ նահանգապետներին։

Ինչ վերաբերում է աքերինին, ապա սա արդեն բռնված է թերահավատությամբ և միաժամանակ խայթող է։ Ձկնապուրի մեջ եփվելով, աննման արգանակ է ստացվում։

Ինչպես պատահեց, որ ծածանն ու աքերինը միմյանց հանդիպեցին, չգիտեմ, գիտեմ միայն, որ մեկ անգամ հանդիպելով միմյանց, իսկույն ևեթ վեճի բռնվեցին։ Վիճեցին մեկ անգամ, վիճեցին երկու անգամ, իսկ հետո համի ընկան ու սկսեցին իրար տեսակցություն նշանակել։ Լողալով հասնում էին ժամադրված վայրը՝ ջրային կռատուկի տակ ու սկսում էին խելոք-խելոք բաների մասին զրուցել։ Իսկ սպիտակափոր կարմրակները խայտում էին նրանց շորս բոլորքն ու իմաստություն էին սովորում նրանցից։

Առաջինը միշտ ծածանն էր սկսում։

— Չեմ հավատում,— ասում էր նա,— որպեսզի կռիվն ու վեճը բնական օրենք լինեն, որոնց ազդեցության տակ, իբրև թե, վիճակված է զարգանալ աշխարհի վրա եղած բոլոր արարածներին։ Հավատում եմ անարյուն բարգավաճմանը, հավատում եմ ներդաշնակությանը և խորապես համոզված եմ, որ երջանկությունը ցնորամիտ մարդկանց սին երևակայությունը չէ, այլ վաղ թե ուշ ընդհանուրի սեփականությունը կդառնա։

— Սպասիր, որ այդպես լինի,— հեգնում էր աքերինը։

Աքերինը վիճում էր ընդհատ-ընդհատ, անհանգիստ։ Սա մի ջրային ձուկ է, որն, ըստ երևույթին, շատ զրկանքներ է կրել։ Նրա սրտում շատ մաղձ կա... ա՜խ, ինչքան շատ։ Բանը դեռ չէր հասել ատելության, բայց հավատքի ու միամտության նշույլն անգամ չէր մնացել։ Խաղաղ կյանքի փոխարեն նա ամեն տեղ տեսնում է երկպառակություն, հառաջադիմության փոխարեն՝ ընդհանուր վայրենացում։ Եվ պընդում է, որ նա, ով ապրելու հավակնություն ունի, պետք է այդ բոլորը հաշվի առնի։ Իսկ ծածանին համարում է «երանելի», թեպետ միաժամանակ խոստովանում է, որ այնուամենայնիվ էլի նրա հետ միայն կարելի է «սիրտ թեթևացնել»։

— Այդպես էլ կլինի,— վրա բերեց ծածանը,— և մենակ

ինձ համար չէ, այլ բոլորի համար կլինի։ Խավարը, որի մեջ խարխափում ենք մենք, պատմական դառն պատահականության հետևանք է, բայց որովհետև այժմ, շնորհիվ նորագույն հետազոտությունների, կարելի է այդ պատահականությունը քննել մանրամասնորեն, ուստի և խավարը առաջ բերող պատճառները չի կարելի այլևս անբառնալի համարել։ Խավարը տեղի ունեցած իրողություն է, իսկ լույսը՝ տենչալի ապագան։ Եվ լույսը կծագի, կծագի՛ լույսը։

— Նշանակում է, քո կարծիքով, կգա այնպիսի մի ժամանակ, երբ այլևս գայլաձկներ չե՞ն լինի։

— Այդ ի՞նչ գայլաձկներ են,— զարմացավ ծածանը, որն այնչափ միամիտ էր, որ երբ իր մոտ ասում էին՝ «գայլաձուկը նրա համար է ծովում, որպեսզի ծածանը չնիրհի», կարծում էր, որ գայլաձուկ ասածը մեկն է այն ջրահարսերից ու ջրային ոգիներից, որոնցով վախեցնում են փոքր երեխաներին և, հասկանալի է, ամենևին երկյուղ չէր անում։

— Ա՜խ, դու հիմարի՜կ, հիմարիկ, համաշխարհային հարցեր ես ուզում վճռել, իսկ գայլաձկան մասին գաղափար անգամ չունես։

Աքերինը արհամարհական շարժում էր իր լողակներն ու անցնում, գնում, բայց քիչ ժամանակ անց, զրուցակիցները կրկին հանդիպում էին մեկուսի մի տեղ (չէ՞ որ ջրում ձանձրալի է ու կրկին սկսում էին վիճաբանել։

— Կյանքում բարությունն է առաջնակարգ դեր խաղում,—ճամարտակում էր ծածանը,—չարը հենց այնպես, թյուրիմացության արդյունք է, իսկ գլխավոր կենսական ուժը, այնուամենայնիվ, բարության մեջ է գտնվում։

— Գրպանդ լա՞ն բաց արա։

— Ա՜խ, աքերին, այդ ինչ անհարկի արտահայտություններ ես անում։ «Գրպանդ լա՞ն բաց արա»։— Մի՞թե դա պատասխան է։

— Քեզ, ճիշտն ասած, պատասխան անգամ չպիտի տալ։ Դու հիմար ես, ուրիշ ոչինչ։

— Չէ՛, դու լսիր, տե՛ս՝ քեզ ինչ եմ ասում։ Որ չարիքը երբեք չի հանդիսացել ստեղծագործող ուժ, այդ մասին վկայում է նաև պատմությունը։ Չարիքը խեղդել է, ճնշել է, ավերել է, հրի ու սրի ճարակ է դարձել, իսկ ստեղծագործ ուժը եղել է միայն բարին։ Նա ձգտել է օգնել տառապյալներին, ազատել է նրանց չղթաներից ու կապանքներից, նա համակել է սրտերը բեղմնավոր զգացմունքներով, նա ընթացք է տվել մտքի թռիչքներին։ Եթե չլիներ կյանքի այդ, հիրավի՛ ստեղծագործ գործոնը, չէր լինի նաև պատմությունը։ Որովհետև, իսկապես ասած, ի՞նչ բան է պատմությունը։ Պատմությունը — դա ազատագրության վեպն է, դա բարու և բանականության հաղթանակի պատմությունն է չարիքի և անմտության դեմ։

— Իսկ դու, երևում է, հաստա՞տ իմանում ես, որ չարիքն ու անմտությունը անարգված են,— հեգնեց աքերինը։

— Անարգված չեն դեռ, բայց կանարգվեն, հաստատ ասում եմ քեզ։ Եվ դարձյալ կհիմնվեմ պատմության վրա։ Համեմատության դիր այն, ինչ որ եղել է մի ժամանակ, այն բանի հետ, ինչ որ կա այժմ, և դու առանց դժվարության կհամաձայնես, որ չարիքի ոչ միայն արտաքին ձևերն են մեղմացել, այլև չարիքի հատկանիշների գումարն է պակասել։ Վերցրու, թեկուզ, ձկներիս ցեղը։ Առաջ մեզ որսում էին ամեն ժամանակ և առավելապես «ձկնկիթի» շրջանում, երբ մենք, խենթացածի նման, ինքներս ուղղակի ուռկանն էինք վազ տալիս։ Իսկ այժմ «ձկնկիթի» շրջանում մեզ որսալը համարվում է վնասակար։ Առաջ մեզ, կարելի է ասել, ոչնչացնում էին ամենաբարբարոս ձևերով։ Ուրալում, ասում են, որսի ժամանակ ջուրը մի քանի վերստ ձկան արյունից կարմրում էր, իսկ այժմ — վե՛րջ։ Ուռկաններ ու թառափեր և կարթեր չպետք է լինեն այլևս։ Արդեն կոմիտեներում էլ խոսում են այդ մասին՝ ի՞նչ ուռկաններ, ի՞նչ պատճառով, ինչի՞ համար։

— Կարծես քեզ համար միևնույն չէ, թե ինչ ձևով կընկնես ձկնապուրի մեջ։

— Այդ ի՞նչ ձկնապուր է,— զարմանում է ծածանը։

— Ա՜խ, գրողը քեզ տանի, անունը ծածան է, բայց ձրկնապուրի մասին նույնիսկ չի՛ էլ լսել։ Էլ սրանից հետո դու ի՞նչ իրավունք ունես ինձ հետ խոսելու։ Չէ՞ որ վիճաբանելու և կարծիքներ պաշտպանելու համար հարկավոր է, համենայն դեպս, նախապես ծանոթանալ գործի հանգամանք-

ներին։ Այլևս ինչի՞ մասին ես խոսում, երբ նույնիսկ այն պարզ ճշմարտությունն էլ չգիտես, որ ամեն մի ծածանի վերջը ձկնապուրն է։ Հա՞յդա, թե չէ կծակեմ։

Աքերինը բարկությամբ պատրաստվեց հարձակվելու, իսկ ծածանը արագորեն, որչափ թույլ էր տալիս նրան իր անշնորհքությունը, սուզվեց գետի հատակը։ Բայց հաջորդ օրը բարեկամ-հակառակորդները կրկին հանդիպեցին և նոր խոսակցություն սկսեցին։

— Անցյալ օրը գայլաձուկը մեր բունն էր եկել,— հայտարարեց աքերինը։

— Այն, որի մասին անցյալ անգամ ասացի՞ր։

— Նա։ Լողալով եկավ, նայեց, ասաց. «Այստեղ շատ խաղաղ է, ինչպես երևում է, ծածաններ են ապրում»։ Ասաց ու հեռացավ։

— Հիմա ես ի՞նչ եմ անելու։

— Պատրաստվիր, ուրիշ ոչինչ։ Հենց որ կգա աչքերը վրադ կշրի, դու շոշափուկներդ ու թևերդ ծալի՛ր և ուղիղ մտիր նրա որկորը։

— Ինչո՞ւ, եթե գեթ հանցանք ունենայի...

— Հիմար ես, ա՜յ թե որն է քո հանցանքը։ Եվ բավականին չաղլիկն ես։ Իսկ հիմարին ու չաղլիկին օրենքն անգամ հրամայում է գայլաձկան որկորն ընկնել։

— Չի կարող այդպիսի օրենք լինել,— անկեղծ վրդովվեց ծածանը։— Գայլաձուկն էլ զուր տեղը իրավունք չունի կուլ տալու, այլ պետք է նախ և առաջ բացատրություն պահանջի։ Երբ գալու լինի, ես հետը կբացատրվեմ, ամբողջ ճշմարտությունը երեսին կասեմ։ Ճշմարտությունը երեսին տալով, ես նրան նեղը կլծեմ։

— Ասում էի ես քեզ, որ տխմար ես, այժմ էլ նույնն եմ կրկնում. տխմա՛ր, տխմա՛ր, տխմա՛ր։

Աքերինը սաստիկ բարկացավ և խոսք տվեց իրեն՝ ապագայում խուսափել ծածանի հետ որևէ հարաբերություն ունենալուց։ Բայց մի քանի օր անց սովորությունը հաղթահարեց։

— Ա՜յ, եթե բոլոր ձկները միմյանց հետ համաձայն լինեին...— խորհրդավոր սկսեց ծածանը։

Այս անգամ աքերինը ևս ահաբեկվեց։

«Ի՞նչ ասել այս տխմարը,— մտածեց նա,— վայ թե քերանից խոսք թռցնի, իսկ մեծագլուխ սպիտակը թրև է գալիս մոտերքում։ Տես, տես, աչքերը ոնց է մի կողմ շուռ տվել, իբրև թե իր հաշիվը չի, բայց նա, լավ իմացած լինես, ականջ է դնում»։

— Դե դու էլ ինչ-որ խելքդ փչում է, իսկույն դուրս մի տուր,— համոզում էր նա ծածանին։— Հարկ չկա որ կոկորդովդ մեկ գոռաս, ինչ-որ ուզում ես ասել, կարելի է և շշուկով ասել։

— Ես չեմ ցանկանում շշուկով խոսել,— շարունակեց ծածանը անվրդով,— ես ուղղակի ասում եմ, որ եթե բոլոր ձկները համախոհ լինեին, այն ժամանակ...

Բայց աքերինը կոպտորեն ընդհատեց բարեկամի խոսքը։

— Ինչպես երևում է, քեզ հետ խոսելիս առաջուց պետք է հաշիվդ վերցրած լինես,— գոռաց ծածանի վրա և լողակները բացելով, հեռացավ։

Նա և՛ զայրանում էր, և՛ խղճում էր ծածանին։ Թեպետև նա հիմար է, բայց և այնպես էլի միայն նրա հետ կարելի է սրտաբաց խոսել։ Նա լսածը սրան-նրան չի ասի, չի մատնի, իսկ այդ հատկություններն այժմ ո՞վ ունի։ Վատ ժամանակներ են հիմի, այնպիսի ժամանակ է, որ հորն ու մորն անգամ վստահել չի կարելի։ Վերցնենք կարմրակը. թեպետ նրա մասին բացարձակ կերպով որևէ վատ խոսք ասել չի կարելի, բայց և այնպես, տեսար, առանց մտածելու, դուրս տվեց։ Իսկ սպիտակների, մուրծանների, ճանառների և մնացած այլևայլ ձկների մասին խոսելն անգամ ավելորդ է։ Մի ճիճուի համար պատրաստ են զանգակների զողանջի տակ երդում ուտել։ Խե՜ղճ ծածան, զուր տեղը նահատակ է լինելու։

— Մի լավ նայիր քեզ,— ասում էր նա ծածանին,— ախր դու ինչպե՞ս պիտի կարողանաս պաշտպանվել։ Փորդ հաստ, գլուխդ փոքր, հնարիմացության մեջ այնքան էլ վարպետ չես, բերանդ էլ՝ փոքր։ Նույնիսկ վրայիդ թեփերը մի մի կարգին բան չեն։ Ոչ ճարպկություն ունես, ոչ արագաշարժ ես, ի՛սկը որ թամբալ։ Ով ուզենա, ուզղակի կարող է մոտ գալ քեզ և ուտել։

— Ախր ինչո՞ւ պետք է ինձ ուտեն, քանի որ ես ոչ մի հանցանք չունեմ,— առաջվա պես համառում էր ծածանը։

— Լսիր, հիմարի գլուխ, կարծում ես ուտում են «ինչո՞ւ»-ի համար, ուտում են պատժելո՞ւ համար։ Ուտում են նրա համար, որովհետև ուտել են ուզում, ուրիշ ոչինչ։ Չէ՞ որ ինքդ էլ ես ուտում։ Հո զուր տեղը չէ՞, որ քիթդ տիղմի մեջ ես խրում, այլ ճիճուներ ես որսում։ Նրանք, այդ ճիճուները ապրել են ուզում, իսկ դու, ցանցառամիտ, առավոտից մինչև իրիկուն փորդ նրանցով ես լցնում։ Ասա տեսնեմ, այդ ի՞նչ հանցանք են կատարել նրանք, որ դու ամեն րոպե պատժում ես նրանց։ Հիշո՞ւմ ես, ինչպես մի երկու օր առաջ ասում էիր՝ «Ախ, եթե բոլոր ձկներն իրար հետ համախոհ լինեն»... Ի՞նչ կասես, եթե ճիճուներն իրար հետ համախոհ լինեին... Այն ժամանակ ի՞նչ կլիներ քո դրությունը, ցանցառ։

Հարցն այնպես ուղղակի էր դրված և այնքան անախորժ, որ ծածանը շվարեց և կարմրեց։

— Բայց ճիճուները... չէ որ դա...— կմկմաց նա շփոթված։

— Ճիճուները ճիճուներ են, ծածանները՝ ծածաններ։ Ծածանը ճիճու է ուտում, իսկ գայլաձուկը՝ ծածան։ Ճիճուներն էլ ոչ մի հանցանք չունեն, ծածաններն էլ մեղավոր չեն, բայց թե՛ մեկը և թե՛ մյուսը պիտի պատասխանատու լինեն։ Թեկուզ հարյուր տարի մտածիր այդ մասին, միևնույն է, նոր բան մտածել չես կարող։

Աքերինի այս խոսքերից հետո ծածանը խորը թաղվեց տիղմի մեջ ու մտածմունքների մեջ ընկավ։ Մտածում էր, մտածում, միաժամանակ ճիճու էր, որ ուտում էր։ Եվ որքան շատ էր ուտում, այնչափ ավելի ուտել էր ուզում։ Վերջիվերջո, սակայն, եզրակացության հանգեց։

— Ճիճուները ես այն պատճառով չեմ ուտում, որ նրանք հանցավոր են, այդ մեկը դու ճիշտ ես ասում,— բացատրեց նա աքերինին,— այլ՝ որովհետև այդ ճիճուները քնության կողմից տրված են ինձ որպես կերակուր։

— Այդ ո՞վ ասաց քեզ։

— Ոչ ոք չի ասել, այլ ինքս իմ սեփական դիտողությամբ այդ եզրակացության եմ եկել։ Ճիճվի հոգին հոգի չէ, այլ

շոգի է, ուտում ես, բայց նա չի էլ հասկանում այդ։ Ինքն էլ այնպես է կազմված, որ նույնիսկ չի էլ կարիքի կուլ շտալ։ Ջուրը բերանդ ես քաշում թե չէ, տեսար անթիվ-անհամար ճիճուներ վիտում են բերանիդ մեջ։ Ես ամենևին էլ չեմ որսում նրանց, այլ նրանք իրենք են բերանս մտնում։ Իսկ ծածանը բոլորովին ուրիշ է։ Ծածանը, եզբայր, նույնիսկ սառը վճռականոց է լինում։ Նշանակում է այդպիսի ծերունի հետ, ուտելուց առաջ, նախ հարկավոր է խոսել, բացատրություն պահանջել։ Հարկավոր է, որ նա շատ լուրջ չարիք գործած լինի։ Այն ժամանակ, իհարկե...

— Ա՜յ, երբ գայլաձուկը կուլ կտա քեզ, այն ժամանակ կիմանաս, թե դրա համար ինչ պետք է անել։ Իսկ լավ կանես բոլորովին լռես։

— Ոչ, չեմ լռի։ Թեպետ ես իմ օրումը գայլաձուկ չեմ տեսել, բայց ուրիշների պատմածների հիման վրա կարող եմ ասել, որ արդարության ձայնի հանդեպ նրանք խուլ չեն։ Ասա խնդրեմ, մի՞թե այդպիսի չարագործություն կարող է պատահել։ Պառկած է իր համար ծածանը հանդիստ, ոչ ոքի վնաս չի հասցնում, և հանկարծ, ոչ այս, ոչ այն, ընկնում է գայլաձկան փորը։ Երբեք չեմ հավատա ես այդ բանին։

— Հիմար, անցյալ օրը վարդապետը քո աչքի առաջ երկու ուռկան ձերոնցից բռնեց... Ի՞նչ ես կարծում, նա ծածանները որսաց, որ վրան նայելով զմայլվի՞։

— Չգիտեմ, այդ դեռ հարց է, թե այդ ծածաններին ինչ են արել։ Գուցե կերել են, գուցեև գցել են ավազանը, և այժմ նրանք ապրում են իրենց քեֆին և վանքի հաց են ուտում։

— Դե որ այդպես է, ապրիր դու էլ, գլխից ձեռք վերցրածդ մեկը։

Անցնում էին օրեր, և ծածանի ու աքերինի վիճաբանություններին վերջ չկար։ Նրանց բնակված տեղը խաղաղ էր, նույնիսկ մի փոքր էլ կանաչ մամուռով էր պատած և շատ հարմար էր վիճաբանությունների համար։ Այնպիսի տեղ էր, որ ինչ ուզում ես խոսիր, ինչ ցնորքներ ուզում ես ունեցիր, լիապես անպատիժ կմնաս։ Այս հանգամանքն այնպես էր սրտապնդում ծածանին, որ նա լուրաքանչյուր վիճաբանու-

թյան ժամանակ ավելի ու ավելի էր բարձրացնում երևակայական աշխարհում կատարած իր ճանապարհորդությունների տոնը։

— Պետք է ձկները սիրեն միմյանց,— հռետորում էր նա,— որպեսզի մեկը ամենքի համար ու ամենքը մեկի համար պաշտպան հանդիսանա,— ահա թե երբ կիրականանա իսկական ներդաշնակությունը։

— Կուզեի իմանալ, թե դու քո այդ սիրովդ ի՛նչպես պիտի բարեկամանաս գայլաձկան հետ,— սառը ջուր ածեց նրա ոգևորության վրա աքերինը։

— Ես, եղբայր, կբարեկամանամ,— պնդում էր ծածանը։— Ես այնպիսի խոսքեր գիտեմ, որ ուզածդ գայլաձուկը մի բոպեում ծածան կդառնա։

— Հապա ասա մի տեսնենք այդ ինչ խոսքեր են։

— Ուղղակի հարց կտամ. գիտե՞ս, գայլաձուկ, թե ինչ բան է առաքինությունը և մերձավորների հանդեպ ինչ պարտավորություններ է նա դնում։

— Ասեցիր էլի, խոսք չկա։ Ուզո՞ւմ ես, ես քո այդ հարցի համար փշովս փորդ ծակեմ։

— Չէ, ի՞նչ ես ասում, այդպիսի կատակ մի արա։

Կամ թե՝

— Մենք, ձկներս այն ժամանակ միայն կգիտակցենք մեր իրավունքները, երբ մեզ փոքր հասակից քաղաքացիական զգացումների գիտակցությամբ կդաստիարակեն։

— Քաղաքացիական զգացումնե՞րն ինչիդ են հարկավոր։

— Այնուամենայնիվ...

— «Այնուամենայնի՞վ»... Քաղաքացիական զգացումներն այն ժամանակ են միայն բանի պետք, երբ նրանց առաջ լայն առպարեզ կա։ Իսկ դու տիղմի մեջ պառկած ի՞նչ ես անելու այդ քաղաքացիական զգացումները։

— Ոչ թե տիղմի մեջ, այլ ընդհանրապես..

— Օրինա՞կ։

— Օրինակ, վարդապետն ուզում է ինձ ձկնապուրի մեջ գցել, իսկ ես կասեմ նրան. իրավունք չունես, հայր սուրբ,

առանց դատ անելու, ինձ այսպիսի զարհուրելի պատժի ենթարկել։

— Իսկ նա քո այդ կոպտության համար քեզ կամ թավայի մեջ կտապակի, կամ մոխրի մեջ կխորովի... Ոչ, եղբայր, տիղմի մեջ ապրելու համար ոչ թե քաղաքացիական, այլ տխմարային զգացումներ պիտի ունենալ — այդ մեկը ճիշտ է։ Խորը մի տեղ թաք կաց և սուս արա, տխմար։

Եվ կամ թե՝

— Ձկները չպետք է ձկներով կերակրվեն,— զառանցում էր օրը ցերեկով ծածանը։— Ձկների համար բնությունը առանց այն էլ շատ ու շատ համեղ պատառներ է պատրաստել։ Ճիճուներ, ճանճեր, որդեր, սարդեր, ջրալուներ, վերջապես խեցգետիններ, օձեր, գորտեր։ Եվ ամբողջ այս բարիքը գործածության համար է։

— Իսկ գայլաձկան համար ծածանն է կերակուր,— ըզգաստացնում էր նրան աքերինը։

— Ո՛չ, ծածանը գոհ է ինքն իրենից։ Եթե բնությունը նրան պաշտպանողական միջոցներ չի տվել, ինչպես քեզ, օրինակ, նշանակում է՝ պետք է նրա անձը ապահովող հատուկ օրենք հրատարակել։

— Իսկ եթե այդ օրենքը չկատարվի՞։

— Այն ժամանակ պետք է հայտարարել, որ ավելի լավ է ոչ մի օրենք չհրատարակվի, եթե նրանք չեն կատարվելու։

— Եվ լա՞վ կլինի։

— Կարծում եմ, շատերը կամաչեն։

Կրկնում եմ, օրերն անցնում էին օրերի ետևից, իսկ ծածանը շարունակում էր զառանցել։ Եթե մեկ ուրիշը լիներ, դրա համար, ամենաքիչը, քթին գոնե մի հատ կհասցնեին, իսկ նրան՝ ոչինչ։ Այսպիսով նա դեռ շատ ու շատ տարիներ կարող էր ապրել ու շարունակել իր բարբաջանքը, եթե գեթ մի փոքր զգույշ լիներ։ Սակայն նա իրեն արդեն այնպես էր երևակայում, որ բոլորովին չափը կորցրեց։ Զգուշությունը այն աստիճան թուլացրեց, այնքան մոռացության տվեց, որ հանկարծ մեկ օր սպիտուկը նրան մի կոչնագիր բերեց, թե՝ գայլաձուկը վաղը բարեհաճում է զալ ձեր

խորշը, այնպես որ, ծածան, չմոռանաս լույսը բացվելուն պես ներկայացիր պատասխան տալու։

Ծածանը, սակայն, չվախեցավ։ Նախ և առաջ, նա այնքան տարբեր կարծիքներ էր լսել գայլաձկան մասին, որ ինքն հետաքրքրվում էր տեսնել նրան, իսկ երկրորդ՝ գիտեր, որ ինքն այնպիսի կախարդական խոսք է իմանում, որն արտասանելուն պես ամենաանագորույն գայլաձուկն անգամ ծածան է դառնալու։ Եվ շատ էր վստահ իր իմացած այդ խոսքի վրա։

Նույնիսկ աքերինը, տեսնելով նրա այդ հավատը, մտածմունքի մեջ ընկավ, արդյո՞ք ինքը իր ժխտողական ուղղության մեջ չափազանցության չի՞ հասել։ Գուցե հիրավի գայլաձուկը միայն սպասում է, որ իրեն սիրեն, բարի խորհուրդ տան, իր միտքն ու հոգին լուսավորեն։ Գուցե նա... բարի է։ Ծածանն էլ այնչափ արդեն պարզամիտը չէ, ինչպես երևում է արտաքուստ, այլ ընդհակառակը, մտածված քայլերով է իր համար ասպարեզ հարթում։ Վաղը ահա նա կներկայանա գայլաձկանը և ուղղակի նրա երեսին կնետի զուտ ճշմարտությունը, որը նա իր կյանքում երբեք լսած չի եղել։ Իսկ գայլաձուկը պատասխան կտա՝ որովհետև դու, ծածան, ինձ զուտ ճշմարտությունը ասացիր, այդ խորշը պարգևում եմ քեզ, եղիր այդ խորշի կառավարիչը։

Առավոտյան ճիշտ ժամանակին գայլաձուկը լողալով եկավ։ Նայում է նրան ծածանը և զարմանում է՝ ինչ բամբասանքներ ասես, որ նրա մասին չէր լսել, իսկ նա սովորական ձուկ է, միայն բերանն է մինչև ականջները և կոկորդն էլ այնպես է, որ ծածանին կուլ տալու համար շատ է հարմար։

— Լսել եմ, ծածան,— ասաց գայլաձուկը,— որ դու խելոք ես և ճոռոմաբանության մեջ վարպետ։ Ուզում եմ քեզ հետ վիճաբանել։ Սկսիր։

— Երջանկության մասին եմ ես առավելապես մտածում,— համեստ, բայց արժանավայել պատասխան տվեց ծածանը։— Որպեսզի ոչ միայն ես, այլև բոլորը երջանիկ լինեն. որպեսզի բոլոր ձկները ազատ կարողանան լող տալ բոլոր ջրերում, իսկ եթե մեկը ցանկանա տիղմի մեջ թաքնվել, ապա ուրեմն, թող տիղմի մեջ պառկի։

— Հրմ... և դու կարծում ես, որ այդպիսի բան հնարավո՞ր է։

— Ոչ միայն կարծում եմ, այլև ամենայն ժամ դրան եմ սպասում։

— Օրինակ, ասենք, ես լող եմ տալիս, իսկ իմ կողքից ծածա՞ն է լողում։

— Ի՞նչ կա տարօրինակ։

— Առաջին անգամն եմ լսում։ Իսկ եթե ես շուտ գամ և ծածանին... ուտե՞մ։

— Այդպիսի օրենք, ձերդ բարձրապատվություն, չկա։ Օրենքն ուղղակի ասում է՝ ճիճուները, մոծակները, ճանճերն ու մեղուները թող կերակուր ծառայեն ձկներին։ Եվ բացի դրանից, հետագա այլևայլ հրովարտակներով կերակրերի շարքն են դասվել ջրալուները, սարդերը, որդերը, բզեզները, գորտերը, խեցգետինները և ջրային զանազան այլ կենդանիները։ Բայց ոչ ձկները։

— Ինձ համար քիչ է։ Սպիտուկ, մի՞թե այդպիսի օրենք կա,— դարձավ գայլաձուկը սպիտուկին։

— Անցած-գնացած ժամանակներում, ձերդ բարձրապատվություն,— խորամանկորեն հարցի տակից դուրս պրծավ սպիտուկը։

— Ես այդպես էլ գիտեի, որ չի կարող այդպիսի օրենք լինել։ Ուրիշ էլ ի՞նչ բանի եւ ժամ առ ժամ սպասում, ծածան։

— Սպասում եմ նաև, որ արդարությունը կհաղթանակի։ Զորեղները լեն նեղի թույլերին, հարուստները՝ աղքատներին։ Դու, գայլաձուկ, բոլորից ուժեղ ես և ճարպիկ, նշանակում է քեզ ավելի դժվար գործ կհանձնարարեն, իսկ ինձ իմ համեստ ընդունակությունների չափով էլ համեստ գործ կտան։ Մեկը ամենքի և ամենքը մեկի համար,— ահա ինչպես կլինի։ Երբ մենք պաշտպան լինենք մեկս մյուսին, այն ժամանակ այլևս ոչ ոք մեզ վնաս պատճառել չի կարող։ Ուռկանը դեռ նոր գցած, մենք անմիջապես փախուստ կտանք, որը քարի տակ, որը հատակը՝ տիղմի մեջ, որը բնում կամ ջուրը տապալված ծառի տակ։ Ցնցոտիներից, անշուշտ, պետք է հրաժարվեն։

— Չգիտեմ։ Մարդիկ այնքան էլ հեշտությամբ չեն հրաժարվում այն բանից, ինչ որ սիրում են։ Ասենք դեռ այդ բանը ե՞րբ է լինելու։ Ուրեմն, քո ասելով, դուրս է գալիս, որ ե՞ս էլ պիտի աշխատեմ։

— Ինչպես մյուսները, այնպես էլ դու։

— Առաջին անգամն եմ լսում։ Գնա՛, քնիր, որ զգաստանաս։

Զգաստացավ ծածանը, թե ոչ, բայց նրա խելքը, համենայն դեպս, չավելացավ։ Կեսօրին նա դարձյալ եկավ վիճաբանությանը, և ոչ միայն առանց երկյուղի չնչին նշույլի, այլև նույնիսկ առաջվանից ավելի զվարթ։

— Ուրեմն դու ենթադրում ես, որ ես պետք է աշխատեմ, իսկ դու իմ աշխատանքի արդյունքը ճաշակե՞ս,— հարցը ուղղակի դրեց գայլաձուկը։

— Բոլորս մեկս մյուսի... ընդհանուր փոխադարձ աշխատանքի արդյունքով...

— Հասկանում եմ՝ «մեկս մյուսի»...ի միջի այլոց, նաև իմ... հը՞մ։ Թվում է, սակայն, որ դու պախարակելի խոսքեր ես ասում։ Սպիտուկ, այժմ այդպիսի խոսքերն ինչպե՞ս են կոչվում։

— Սիցիլիզմ, ձերդ բարձրապատվություն։

— Այդպես էլ գիտեի։ Վաղուց է արդեն լսում եմ, որ ծածանը գրգռիչ խոսքեր է ասում, բայց չէի հավատում և որոշեցի ինքս իմ ականջով լսել... Ահա՛ թե ով ես դու։

Այս ասելով, գայլաձուկը պոչով այնպես ազդու խփեց ջրին, որ ծածանը որչափ էլ միամիտ էր, այնուամենայնիվ նա էլ ըմբռնեց դրա նշանակությունը։

— Ես, ձերդ բարձրապատվություն, այնպես բան չեմ ասում, դա իմ պարզամտությունից է...

— Լավ։ Պարզամտությունը, ասում են, գողությունից վատ է։ Եթե հիմարների ձեռքն իրավունք տաս, խելոքներին բնաջինջ կանեն աշխարհի երեսից։ Հազար ու մի տեսակ բաներ էին ասում ինձ քո մասին, բայց դու ոչ ավել, ոչ պակաս, մի սովորական ծածան ես։ Հինգ րոպե չկա հետդ խոսում եմ, բայց արդեն մահու չափ ձանձրացրիր դու ինձ։

Գայլաձուկը սկսեց մտածել և այնպես խորհրդավոր նայեց ծածանին, որ սա արդեն վերջնականապես հասկացավ նրա միտքը։ Բայց, ըստ երևույթին, գայլաձուկը երեկվա որկրամոլությունից հետո դեռ կուշտ էր, ուստի հորանջեց և անմիջապես խոմփացրեց։

Բայց այս անգամ ծածանի գործն այնքան էլ բարեհաջող ընթացք չունեցավ։ Հենց որ գայլաձուկը լռեց, սպիտուկներն անմիջապես շրջապատեցին ծածանին և հսկողության տակ առան։

Երեկոյան, դեռ արևը մայր չէր մտել, որ ծածանը երրորդ անգամ ներկայացավ գայլաձկանը՝ վիճաբանելու։ Սակայն այս անգամ նա ներկայացավ արդեն պահակների ուղեկցությամբ և մարմնական որոշ խաթարվածքով։ Այն է՝ մուրծան հարցաքննելիս, խածել էր նրա մեջքն ու պոչի մի մասը։

Բայց ծածանը դեռևս առույգ էր զգում իրեն, որովհետև դեռ իր կախարդական խոսքը կար, որպես վերջին միջոց։

— Թեպետև դու իմ հակառակորդն ես,— կրկին առաջինը սկսեց գայլաձուկը,— բայց երևում է, իմ բախտն այսպես է, շատ եմ սիրում վիճաբանել։ Առողջությո՛ւն եմ ցանկանում. սկսիր։

Այս խոսքերի վրա ծածանը հանկարծ զգաց, որ սիրտը բռնկվեց։ Մի ակնթարթում իրեն հավաքեց, թպրտաց, պոչի մնացորդը ջրին խփեց, և ուղիղ նայելով գայլաձկան աչքերին, ամբողջ ուժով բացականչեց.

— Գիտե՞ս դու, թե ինչ է առաքինությունը։

Գայլաձուկը զարմանքից բաց արեց բերանը։ Մեքենայաբար ներս ծծեց ջուրը և, ամենևին չկամենալով ծածանին կուլ տալ, կուլ տվեց։

Այս անցքին վկա գտնվող ձկները մի ակնթարթ ապշած մնացին, բայց անմիջապես ուշքի եկան և շտապեցին գայլաձկան մոտ, իմանալու՝ արդյոք նա հաջողա՞կ ընթրել բարեհաճեց, չխեղդվե՞ց արդյոք։ Իսկ աքերինը, որը սկզբից ամեն ինչ նախազգում էր և գուշակել էր, առաջ լողաց և հանդիսավոր ազդարարեց.

— Ահա՛ թե ինչ հետևանք են ունենում մեր դիսպուտները։

ՄԱՐԴ–ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

1884* թվականին ես ապրում էի Ռուսաստանի հյուսիսային նահանգներից մեկում։ Ապրում էի, այսինքն ծառայության մեջ էի գտնվում, ինչպես ինքնին հասկացվում էր այդ բանն այն ժամանակ։ Եվ միաժամանակ ամեն անսակ գործ կատարում էի, բազմում էի երկրամասի պետի սեղանին, կատիլյոն էի պարում նահանգապետի կնոջ հետ, խոսում էի ժանդարմական շտաբ-սպայի հետ՝ Ռուսաստանի փառքի մասին և, պետական գույքերի պալատի կառավարչի հետ միասին, աղի արցունք էի թափում, երբ վերջինս հավաստիացնում էր, որ ապագան շրջանների պետերին է պատկանում։ Եվ, որ ամենից կարևորն է, սաստիկ բարկանում էի, երբ իմ ներկայությամբ շրջանների պետերին Պուգաչևի գործակալներ էին համարում։ Մի խոսքով, ժամանակս այնքան էլ օգտաշահ չէի անցկացնում։

Այն ժամանակ նահանգական քաղաքի մոտ բարգավաճում էր (գուցե այժմ էլ բարգավաճում է) Լյուբեզնով գավառական քաղաքը, ուր ես հաճախ էի լինում, նախ, որովհետև շատ ազատ ժամանակ ունեի, և երկրորդ, որովհետև այնտեղի քաղաքապետն իմ բարեկամ շտաբս-կապիտան Վալյաժնին էր, իսկ նրա մոտ ապրում էր տնտեսուհի Աննուշկան։ Այդ Աննուշկան խիստ դուրեկան անձնավորություն էր, և խոստովանում եմ, երբ պատահում էր թեյ կամ սուրճ էի խմում Վալյաժնու մոտ, շատ հաճելի էր մտածել, որ առաջարկված ըմպելիքը բարի արգանդի ծնունդ այդ օրիորդի և ոչ մեկ ուրիշ ինչ-որ սիրունիկի լցրածն է։ Սակայն, ի դեպ, ուրիշ ոչինչ։ Թեպետև ինձ ամբաստանել էին, իբրև թե ես Լյուբեզնով մեկնում եմ «սիրաբանության» համար, սակայն իմ անաղարտ ծառայության շնորհիվ դա այն աստիճան անհավանական էր թվում, որ ինքը նորին գերազանցությունը սեփական ձեռքով մակագրել էր ամբաստանագրի վրա՝ «Չեմ հավատում. թող մեկնի»։

Ինչպես առհասարակ յուրաքանչյուր ընտանիքի հայր ունի իր առանձնապես վստահելի զավակը, որի մասին ծնողներն ասում են՝ «սա չի դավաճանի»,— այնպես էլ յուրաքանչյուր

նահանգապետ ունի իր սիրեցյալ քաղաքը, որը նորին գերազանցությունն իր «գավարդիան» է անվանում և որի նկատմամբ նրա սիրտը ոչ մի անհանդգստություն չի ունենում։ Այդպիսի քաղաքների մասին թե նահանգապետի դիվանատանը, թե նահանգական վարչության մեջ ամիսներով ոչ մի բան չի լսվում։ Ոստիկանապետերն այդպիսի քաղաքներում չեն խմում, քաղաքապետերն այնպիսի մարդիկ են, որ երկու գավաթ արմենալիս են խմում, երեք գավաթ ճաշից առաջ և երեք գավաթ՝ ընթրիքից առաջ և իրենք են ասում՝ «բավ է»։ Այդպիսի քաղաքների քաղաքագլուխները միայն այն մասին են մտածում, թե ինչպես նոր հրդեհաշեջ խողովակ ձեռք բերեն կամ հասարակական դրամատուն հիմնեն, իսկ բնակիչներն աշխատասեր են, դեպի իշխանավորները սիրալիր են և հարկերը վճարելու մեջ հոժարակամ։

Իշխանավորի սրտին ուրախություն պատճառող այդ քաղաքների թվին էր պատկանում նաև Լյուբեզնովը։ Ես հիշում եմ, երբ խոսք էր լինում այդ քաղաքի մասին, նահանգապետը նույնիսկ ձեռքերն էր շփում։ «Լյուբեզնովի մասին ես հանգիստ եմ։ Լյուբեզնովցիները ինձ չեն դավաճանի»,— բացականչում էր նորին գերազանցությունը, և ողջ նահանգական վարչությունը ամբողջ կազմով կրկնում էր՝ «Այո, Լյուբեզնովի մասին մենք հանգիստ ենք։ Լյուբեզնովցիները մեզ չեն դավաճանի»։ Բայց, եթե պատահում էր, Պետերբուրգից շրջաբերական էր գալիս նվիրաբերություն ընդունելու Ֆեոֆան Պրոկոպովիչի արձանի կամ գեներալ-մայոր Մարդարի Հանդուգնի անվան թոշակի համար, անմիջապես առաջին միտքը լինում էր այդ մասին շուտափույթ հայտնի դարձնել Լյուբեզնովցիներին։ Եվ իրոք. իշխանությունը դեռ հազիվ էր ուշքի գալիս, որ ոստիկանապետ Միլովզորովն արդեն 50 կոպեկ էր ուղարկում, իսկ քաղաքապետ Վալյաժնին ամբողջ 75 կոպեկ։ Այնինչ Պոլոումնովի քաղաքապետը տխուր զեկուցագիր էր ուղարկում, որ իր եռանդագին հրավերին՝ հիշյալ նպատակի համար նվիրաբերություններ անելու՝ ստացվել է ընդամենը 1 կոպեկ... Եվ դեռ կարգադրություն էր խնդրում, ինչ անել այդ մեկ կոպեկը, որովհետև փոստային գրա-

սենյակը դրամական փոխադրությունը ընդունում է միմիայն կլոր գումարներով։

Լյուբեզնովը փոքր քաղաք էր, բայց այնչափ մաքուր, որ միայն խուլ աշնանը, և այն էլ ոչ բոլոր փողոցներում, կարելի էր թաղվել ցեխի մեջ։ Այնտեղ կար հասարակական դրամատուն, սարքին հրդեհաշեջ ջոկատ, զբոսարան Լյուբեզնովկա գետի ափին, փոքրիկ քարաշեն առևտրաշարք, եկեղեցի, երկու սալահատակած փողոց, մի խոսքով՝ այն ամենը, ինչ որ կարող է ուրախացնել ամենաքմահաճ իշխանավորական սիրտը։ Բայց քաղաքի ամենամեծ զարդարանքն ինքը քաղաքագլուխն էր։ Այդ ուշագրավ, գործունյա մարդն ամբողջ հինգ եռամյակ շարունակում էր քաղաքագլուխ մնալ, և այդ ամբողջ ժամանակամիջոցում անշեղորեն խնջույքներ էր տալիս նահանգական իշխանություններին, իսկ տեղականներին ողորմություն էր նետում։ Այդ ներքին քաղաքականության օգնությամբ նա և՛ ինքն էր մնում իր պաշտոնում, և լյուբեզնովյան հասարակությունն էր պահում խստության հասնող կարգապահությամբ։ Եվ ահա, թերևս այս վերջին հանգամանքի շնորհիվ Լյուբեզնովում ծաղկեցին բազմազան արհեստներ, որոնք այդ քաղաքի անունը հռչակեցին ոչ միայն նահանգում, այլև նահանգի սահմաններից դուրս։

Այս փայլուն արդյունքն ստացվել էր, սակայն, ոչ առանց դժվարության։ Ավանդություն կա, որ Լյուբեզնովը մի ժամանակ կոչվել է Բուլանով, և որ այդ անունը տրված է եղել նրան նրա բնակիչների ծայրահեղ սանձարձակ լինելու պատճառով։ Եղել է, իբրև թե, այնպիսի ժամանակ, երբ լյուբեզնովցիներն իրենց ժամանակն անց են կացրել խրախճանքով ու դատարկապորտությամբ և ձեռքերն ընկած բոլոր փողերը «խռովարարական եղանակով» խմել և վատնել են, երբ նրանք ոչ միայն հարգանքի անհրաժեշտ նշաններ չեն ցույց տվել իշխանությանը, այլև իրենց քաղաքապետներից մեկին գերի են վաճառել հարևան քաղաքը (տես «Հյուսիսային ժողովրդապատմություններ», աշխատ. Ն. Կ. Կոստոմարովի)։ Նույնիսկ մինչև այսօր քաղաքում ամենից շատ տարածված ազգանունները վկայում են նրանց խռովարարական ծագում ունենալը։ Օրինակ, Իզուվերովներ, Իդոլովներ, Ստրոպտիվցիներ, Վալնիցիներ, Նեպրոյմյոնովներ և այլն։ Այնպես որ, բավական տարօրինակ է տեսնել ինչ-որ մի Իդոլովի, որի նախահայրը մի ժամանակ քաղաքապետին գերության է վաճառել, իսկ նրա սերունդը ներկայումս, աստիճանական միջոցառումների շնորհիվ, այն դրության է հասել, որ պատրաստ է, իշխանությանն ուրախություն պատճառելու համար, ինքն իրեն զուր տեղը գերության մատնել։

Բարեբախտաբար հաջորդաբար չորս հաջողակ և երկարատև քաղաքագլուխներ են եղել, որոնք և վերջ են տվել այդ խառնաշփոթությանը։ Առաջինն այդ հաջողակ քաղաքագլուխներից քաղաքին վերքեր հասցրեց, երկրորդը՝ կարիճներ[22] մատուցեց, երրորդը՝ խորտակեց նրա համառությունը, իսկ չորրորդը՝ ճիրաններում հուպ տալուն ծանոթացրեց[23]։ Եվ, անկախ դրանից, չորսն էլ դիմում էին նաև մեղմ միջոցների, զարմանք կտրած քաղաքացիներին անդադար ներշնչելով, որ մարդը ծնված է երեք նպատակի համար. առաջինը՝ որպեսզի անդուլ աշխատանքի մեջ գտնվի, երկրորդը, որպեսզի իշխանավորների առաջ գլխարկ հանի, իսկ երրորդը՝ արցունք թափի։ Կրկնում եմ, արդյունքը փայլուն էր։ Իզուվերովները փոխանակ «ընդդիմադրությամբ» զբաղվելու, զբաղվեցին perpetuum mobile[24] հնարելով, և մինչև այդ գործի գլուխ գալը, ինքնաշարժեր էին կառուցում և մի տեսակ առանձնահատուկ խաղալիքներ էին շինում, որոնք «քիչ էր մնում խոսեին»։ Իդոլովները՝ վերջ տալով «մարդասիրությանը», մասնագիտություն ընտրեցին փայտե ժամացույցներ շինելը, որոնք մեկ օրում երկու օր էին ցույց տալիս, բայց, այնուհանդերձ, որպես ռուսական մտավոր կարողության արդյունք, կարող էին առիթ ծառայել Ռուսաստանի փառքի մասին խորհրդածություններ անելու։ Ստրոպտիվցիները՝ թողնելով «հեղափոխությունները», այնպիսի արկղիկներ հնարեցին, որոնց ձեռք տալուն պես ամբողջ տունը աղմուկով և զողանջով էր լցվում։ Իսկ Նեպրոյմյոնովներից մեկը՝ մրջյունի ձվերի վաճառքով զբաղվելով (սոխակներին կերակրելու համար), այնչափ համարձակություն առավ, որ նույնիսկ դիսերտացիա գրեց՝ «Մրջյունի ձվերի համեմատական թանձրության մասին» և, ուղարկելով այն համապատասխան գիտական ընկերության

(վկայականն հետ միասին, որ հարկերի ապառիկներ չկան իր վրա), դրա համար անգամ-աչակցի գիպլոմ ստացավ։

Եվ ահա, երբ քաղաքը վերջնականապես մաքրվեց խռովարարությունից և վճարեց բոլոր ապառիկները, երբ ամենավերջին քաղաքացին իսկ այնչափ խորացավ իր մասնագիտության մեջ, որ ազմկելու այլևս ժամանակ չուներ և արդեն ժամանակն էր, որ վճարեր հարկերն ու գլխարկ հաներ, այդ ժամանակ ինչ-որ հանդիսավոր և զարմանահրաշ բան տեղի ունեցավ։ Քաղաքապետ Վոլնիցինի կողմից համայնական խորհրդի հրավիրված քաղաքացիները (դա վերջին համայնական խորհուրդն էր, որից հետո խորհրդի հրավիրող զանգակը խորտակվեց գետի մեջ), հրապարակորեն մեղա եկան և ապա, զգացմունքների հորդումից, միաձայն որոշում կայացրին՝ խնդրել բարձր իշխանությանը, որպեսզի Բույանով անունը Արսենևի աշխարհագրության գրքից վտարվի, իսկ իրենց քաղաքը նոր կյանքի վերածնել Լյուբեզնով անունով։

Պե՞տք է արդյոք ավելացնել, որ այս միչնորդությունը հարգվեց։

Կրկնում եմ. 184* թվականին Լյուբեզնով քաղաքը ոչ մի «ժողովրդապետության» մասին այլևս չէր մտածում, այլ ուղղակի պատկանում էր այն քաղաքների թվին, որոնք դատապարտված էին նահանգապետական սրտերն ուրախացնելու։ Իսկ որովհետև ժամանակները նահապետական էին, ապա նահանգական սինկղիտոսի ավագանիները հաճախ էին մեկնում այդտեղ, նախ, որպեսզի ուրախանան աշխատասեր և սիրալիր քաղաքացիներին տեսնելով, իսկ երկրորդ, որպեսզի ուտեն ու խմեն հյուրասեր քաղաքագլխի տանը։ Հետևելով մտքերի ընդհանուր տրամադրությանը, ես ևս մեկնում էի այնտեղ։

Մեկ անգամ մեկնում եմ ուղղակի իմ բարեկամ Վալյաժնու մոտ և դեռ աստիճանների վրա լսում եմ, որ քաղաքապետական տանը ինչ-որ արտասովոր բան է կատարվում։ Բայց եմ անում դուռը և հետևյալ պատկերն եմ տեսնում։ Քաղաքապետը կանգնել է նախասենյակի մեջտեղը՝ ձայներ արձակելով ու ձեռքերը տարածած (ծեծով թե անծեծ,— հավաստել չեմ կարող), իսկ նրա հանդեպ կանգնել է, անկյունում սեղմված, բավական հասակավոր մի տղամարդ, նուրբ մահուդե կապույտ կաֆտանով, արտաքինից պատկառելի, բայց դեմքով գունատ և կարծես տառապած։ Ըստ երևույթին, դա Լյուբեզնովի քաղաքացիներից մեկն էր, որն արդեն այնչափ մեղքեր ուներ, որ նույնիսկ քաղաքագլուխն իր ձեռքում եղած մեղմության միջոցառումները գտել էր ոչ բավական և հանցավորին հղել էր բարձրագույն իշխանության ներգործությանը ենթարկելու։

— Ստեպա՞ն Ստեպա՛նիչ, սիրելի՛ս,— բացականչեցի ես, ողջունելով թանկագին տանտիրոջը,— իսկ մենք նահանգում կարծում ենք, որ Լյուբեզնովում «պատժել» բառն անգամ վերացած է։

— Այո... բայց...— շփոթվեց սկզբում Վալյաժնին, սակայն իսկույն ևեթ շտկվեց և, դիմելով այնտեղ կանգնած «ստասնապետներին», ավելացրեց,— է՛յ, վազ տվեք խանութ, Տվերդոլոբովի ետևից, նույնպես և դատավորի... Բոստո՞ն ենք խաղում,— դարձավ նա ինձ։

— Ուրախությամբ։

— Հիանալի՞։ Համեցե՛ք։ Իսկ ես իսկույն — վերջացնեմ միայն։

Եվ մինչ ես հանվում էի (ձմեռ ժամանակ էր), նա շարունակեց դատաստանը։

— Ասա, ինչո՞ւ չես ուզում կնոջդ հետ «ապրել»։

Վալյաժնին կանգ առավ մի բոպե և կշտամբական օրորեց գլուխը։ Մեղադրյալը լուռ էր։

— Կինդ էլ այնպիսի կին է... Քիչ առաջ այստեղ էր... Իսկական վառարան։ Իսկ դո՞։ Ա՜խ դու, ա՜խ։

Բայց մեղադրյալը շարունակում էր լուռ մնալ։

— Դու իմանո՞ւմ ես, որ նույնիսկ գրքերում ասված է, որ «ամուսինը պարտավոր է կնոջը»...— ուզեց ավետարանի խոսքերով խրատել Վալյաժնին, սակայն դեմ առավ ու կրկին արտասանեց,— ա՜խ, ա՜խ, ա՜խ։

Քաղքենին շարունակում էր կանգնած տեղը ոտքից ոտք փոխվել, բայց դեմքի վրա կամաց-կամաց ինչ-որ անսահման տրտում արտահայտություն երևաց։

— Խոսիր, ինչո՞ւ չես խոսում։

— Ի՞նչ ասեմ, ձերդ գերազանցություն։

—«Ապրելո՞ւ» ես կնոջդ հետ ինչպես հարկն է... Ինչպես օրենքն է հրամայում։ Ասա՛։

Մեղադրյալը մի քանի վայրկյան լռեց և, վերջապես, հանկարծ արագորեն ասաց.

— Ձերդ գերազանցություն, ես ոչ թե խոսել, այլ անգամ մտածել... Արձակեցեք ինձ, ձերդ գերազանցություն։

— Դե որ այդպես է, մա՛րշ, բանտ։ Եվ որպեսզի վաղը՝ առանց ավելորդ խոսակցության։ Իսկ եթե կսկսես խոսել — այնքան կխստացանեմ, որ մինչև մահ չես մոռանա։ Մա՛րշ։

Եվ ցուցամատը մեղադրյալի քթի տակ թափահարելով (որպեսզի ավելի ազդու լինի), Վալյաժնին հրամայեց տանել նրան, և ապա, դառնալով իմ կողմը, զույգ ձեռքերը մեկնեց ու բացականչեց.

— Ահա՛ և դուք մեզ մոտ եկաք։ Շա՞տ ուրախ եմ, շա՞տ ուրախ եմ։ Ա՛ննուշկա, թեյ։

Մինչև բոստոն սկսելը, ես կես ժամի չափ վեճի բռնվեցի Վալյաժնու հետ։ Նա ասում էր, որ «օրենքներում կա», իսկ ես ասում էի, որ «օրենքներում չկա»։ Ուղարկեցինք գրագրի ետևից։ Նա պատասխանեց երկու կերպ՝ «ինքս չեմ տեսել, բայց պետք է որ մի տեղ լինի»։ Աննուշկան՝ լսելով մեր խոսակցությունը, նույնպես հակվում էր հօգուտ այն բանի, որ պետք է որևէ տեղ լինի, «որովհետև, եթե նրանք ներկայումս ամուսնացած են, ուրեմն էլ ինչի նման կլինի, եթե կինը ամուսնուց չստանա իր պահանջը»։ Նույնիսկ բոստոնին հասած դատավորն ասաց, որ պետք է ծանոթություններ մեջ որոնել, որովհետև երբեմն այնտեղ, որտեղ չես ենթադրում, հենց այնտեղ էլ գտնում ես որոնածդ գանձը։ Վերջացավ նրանով, որ Վալյաժնին գրագրին հրամայեց մինչև վաղը գտնել օրենքը, ավելացնելով, որպես եզրափակում.

— Իսկ գիշերը թող բանտում մնա։ Ինչ էլ որ լինի, բայց և այնպես նրա համար խրատ կլինի։

Երեկոյի ընթացքում գործն ինձ համար, թեպետ ոչ լրիվ, բայց և այնպես պարզվեց։ Մեղադրյալը Լյուբեզնովի քաղքենի Նիկանոր Սերգեևն Իզուվերովն էր, որը քաղաքում ամենալավ խաղալիքի արհեստանոցն ուներ։ Զգաստ, աշխատասեր և հնազանդ մարդ էր, հանդիսանալով քաղքենու այն իդեալական տիպը, որպիսին հարկ է ներկայանա աստծու, և նրա ահեղ դատաստանի առաջ։ Նրա վարպետության հրուշակը մասամբ հասել էր նույնիսկ մայրաքաղաք, որովհետև ծառայության հանգամանքներով այդ քաղաքը ժամանած յուրաքանչյուր աստիճանավոր կամ սպա իր պարտքն էր համարում խրախուսել այդ «բնածին» վարպետին և նրանից մի քանի առանձնապես հնարիմաց խաղալիք գնել։ Ասում էին, որ նա ոչ թե խաղալիքներ, այլ «իսկական փայտյա մարդուկներ է շինում»։ Եվ էլի ասում էին, որ եթե ռուսական երկրի ընդերքում թաքնված բոլոր բնածինները հանվեն, այնպիսի շիլաշփոթ կստացվի, որի տակից Ռուսաստանի թշնամիները հավիտյանս դուրս գալ չեն կարող։

Իզուվերովը մինչև քառասուն տարեկան դառնալն ապրում է իր պառավ մոր հետ։ Ամբողջովին տարված իր մասնագիտությամբ, նա, ըստ երևույթին, նույնիսկ կնոջ հասարակության կարիքը չի զգում, բայց հինգ տարի առաջ պառավ մայրը մեռնում է, և սատանան գայթակղում է նրան։ Ոչ ոք չկար, որ ապուր եփեր, չկար մեկն՝ անդրավարտիքը կարկատեր։ Նա տխրում է և նույնիսկ սկսում է խմել։ Այդ ժամանակ հանդիպում է քսանհինգամյա օրիորդ Մատրյոնա Իգոլովային։ Մատրյոնան բարձրահասակ, փափկամարմին մի աղջիկ է լինում, որը կարծես հատկապես ստեղծված էր՝ վառարանից կերակրի կաթսաներ հանելու համար։ Իզուվերովը վճռում է։ Նա նույնիսկ ուրախ էր, որ ուժեղ, վառարանի նման տաք կին է ունենալու, կարծում է, որ ուժեղ կին ունենալու դեպքում տանն ավելի կարգ ու կանոն կլինի։ Բայց ավա՜ղ։ Մատրյոնան առաջին իսկ քայլերից ոչ այնչափ վառարանից կաթսաներ հանելու հակում է հրապարակ բերում, որչափ պահանջում է, որպեսզի ամուսինն իր նկատմամբ կանացի ասպետ լինի։ Եվ որովհետև Նիկանոր Սերգեևը, ըստ երևույթին, կանանց հաճոյակատար լինելու դերի մեջ թույլ կոչում էր զգում, ապա անմիջապես իսկ հրապարակ է գալիս ընտանեկան կատարյալ խառնաշփոթու-

թյուն և ի վերջո գործը հասնում է ոստիկանության միջամտությանը։

Հասկանալի է, մյուս օրը գրագիրը հայտարարեց, որ «օրենքներում չկա»։ Սակայն, բացի դրանից, պարզվեց, որ Իզուվերովին նույնիսկ «ծեծել» չի կարելի, որովհետև օրենքն այս դեպքում ուղղակի ասում էր, որ ուսյալ քաղքենիները մարմնական ներգործություններից ազատվում են։ Այդ պատճառով Իզուվերովին անմիջապես ազատ արձակեցին, իսկ նրա կնոջը Վալյաժնին հակիրճ հայտարարեց՝ օրենք չկա։

Գործի այսպիսի ընթացք ստանալը ես մասամբ վերագրում եմ ինձ։ Իհարկե, ես այստեղ պատահական գործիք էի և նույնիսկ կրավորական, բայց, այնուամենայնիվ, որպես նահանգից եկած պաշտոնյա, որոշ չափով իմ մեջ հեղինակություն էի անձնավորում։ Ես համոզված եմ, որ, եթե վրա չհասնեի տեսարանին և հարց չհարուցեի այն մասին, արդյոք օրենքում կա՞, թե ո՞չ, ոչ ոք (և ամենից քիչ ինքը Իզուվերովը) այդ մասին չէր էլ մտածելու։ Նիկանոր Սերգեևը ոչ միայն կնոջը բանտում «իրեն համար սահմանված» չափով, այլև, հավանորեն, «ծեծի» կենթարկվեր։ Շատ-շուտ՝ Վալյաժնին, «ծեծելուց» առաջ, կասեր՝ «հապա, ուսյալ, պառկիր»։ Դա միակ կոմպրոմիսը կլիներ, որը թույլ կտար նա, որպես ապացույց այն բանի, որ քաղաքապետական վարչության մեջ կա մի պահարան, ուր, որպես կալանավոր, բանտարկված է օրենքը։

Ամոթով պիտի խոստովանեմ, որ, շատ հաճախ լսած լինելով Իզուվերովի արտասովոր ընդունակությունների մասին, ես մինչև այժմ դեռ ոչ մի անգամ չէի հետաքրքրվել նրա արհեստի արգասիքներով։ Ուստի այժմ, երբ անկախ նրա համբավից, ինձ հետաքրքրեց «բնածին մեխանիկի» անձնավորությունը, ես իմ պարտականությունը համարեցի այցելել նրան և նրա արհեստանոցը։

Իզուվերովի բնակված տունը գտնվում էր քաղաքամերձ արվարձաններից մեկում և համարյա ոչնչով չէր տարբերվում հարևան տներից։ Նույնպես մաքուր, կարծես քերված, նույնպես երեք լուսամուտ ունեցող և նույնպիսի փոքրիկ բակով։ Ընդհանրապես Լյուբեգնով քաղաքի արհեստանոց-

ները և արհեստավորական արվարձանները պլանավորված և կառուցված էին զարմանալի միակերպությամբ, այնպես որ քաղաքացիներն իրենք իսկ կատակով ասում էին. «մեզանում կարծես աքսորավայր լինի»։ Տներում առավոտից մինչև երեկո անխոնջ աշխատանք էր գնում, բոլորն աշխատում էին՝ և՛ հասակավորները, և՛ պատանիները, և՛ փոքրահասակները, և՛ արական սեռը, և՛ իգական սեռը, բայց դրա փոխարեն, փողոցները դատարկ էին և լուռ։

Ես Իզուվերովին գտա արհեստանոցում միայնակ։ Նա ընդունեց ինձ մի տեսակ երկչոտ սիրալիրությամբ և չափազանց համակրելի անձնավորություն թվաց ինձ։ Նրա դեղնագունատ և փոքր-ինչ տառապած դեմքը շատ գրավիչ էր, իսկ առանձնապես դուրեկան էր նրա մեծ գորշադույն աչքերի նայվածքը, ուր ժամանակ առ ժամանակ խորը տառապալից վիշտ էր երևում։ Նա բավական ակարամարմին էր, այնպես որ առաջին իսկ հայացքից նկատելի էր, որ նրա ճակատին գրված է՝ չլինել օրինակելի ասպետ։ Ուսերը նեղ, կուրծքը ներս ընկած, ձեռքերը նիհար, առանց մազի, ակնհայտնի կերպով ծանր աշխատանքի անընդունակ։ Երբ ես ներս մտա, նա շապկանց կանգնած էր դազգահի առաջ և աճապարանքով շտապեց հագնել մոտը մեխից կախված վերնազգեստը։ Դազգահի վրա ընկած էր կիսատ մի տիկնիկ։ Լերկ գլուխ, առանց աչքերի, կրծքի և փորի փոխարեն երկու դատարկ տուփ, որոնց մեջ դրվելու էր մեխանիզմը և ձեռքերի ու ոտքերի փայտյա կմախքները։

Ես, իհարկե, իմ կյանքում շատ ավերված տիկնիկներ էի տեսել, սակայն նրանք ինձ վրա երբեք տպավորություն չէին գործել։ Բայց այստեղ, այս «խաղալիքային գործով» հագեցած մթնոլորտում, ինձ հանկարծ ինչ-որ ճմլող զգացում պատեց, ոչ թե տխրություն, այլ մի տեսակ լքում։ Կարծես ես մտած լինեի մի ինչ-որ բոլորովին լսիրշ թագավորություն, ուր ամեն ինչ մի տեսակ բութ վհատությամբ անզգայացել էր ու համրացել։ Այս վերջին հանգամանքն առանձնապես ծանր էր, որովհետև համրությունն իր մեջ ինչ-որ հուսալքում է պարունակում։ Այնպես որ ինձ չափազանց խղճալի թվաց այդ մարդը, որը դատապարտված է իր կյանքն

անցկացնել այդ անզգայացած թագավորության մեջ, նայել փորված աչքերին, ամեն տեսակ հիմար բաներով լցնել կրծքերն ու իր հնարագիտության ողջ ուժն ուղղել այն բանին, որ քողարկված մեխանիզմով շարժման մեջ դրվող ձեռքերը «փայտի նման» չթխթխկան, այլ՝ լաթերով ու բամբակով սարքված և «բնականության համար» կաշիով պատած՝ սահուն և փափուկ խաչվեն կրծքին, ինչպես կեղծ բարեպաշտների և զրպարտիչների ձեռքերը։

— Ինչպե՞ս եք ապրում,— ողջունեցի ես նրան։

— Խաղաղ։ Հանգիստ է մեզանում այստեղ։ Պրոխոր Պետրովիչը՝ քաղաքագլուխը մեր քաղաքում այնպիսի լռություն է հաստատել, որ թվում է, եթե դազգահը չթխթխկար, կկարծեի, որ ինքս էլ մեռել եմ։

— Տխու՞ր է։

— Տխուր չէ, այլ կարծես ոչ մի բան չկա. ոչ տխրություն, ոչ ուրախություն — միայն լռություն է։ Մենք բոլորս այստեղ հավասար դրության մեջ ենք, ասես թե բոլորս մի ընդհանուր պարանի վրա շարված լինենք։ Առավոտյան մեկն արթնանում է, ձիգ է տալիս պարանը, և բոլորն արթնանում են. մեկը աշխատանքի կանգնեց դազգահի առաջ — բոլորն էլ կանգնում են։ Կարգապահություն է։

— Դա լավ է։ Կարգապահություն և միաժամանակ լռություն,— դա նախ և առաջ։ Այդ պատճառով էլ իշխանավորները, ձեզ նայելով, ուրախանում են, այդ պատճառով էլ ձեզ վրա ապառիկներ չկան։ Եվ այդ իսկ պատճառով էլ շատ հավանական է, որ ձեր ախտավոր հատկությունները, սնունդ չստանալով...

Բարեբախտաբար հազս բռնեց այդ բառի վրա, և երբ հազացել վերջացրել էի, արդեն խոսքի թելը կորցրել էի, այդպիսով ուսուցչական տրամադրությունն ինքն իրեն թողեց ինձ։

— Դուք, ասել են ինձ, խաղալիքների արհեստով եք զբաղվում։ Եվ ասում են, ինչ-որ առանձնահատուկ, ընտիր տիկնիկներ եք շինում։

— Ինքս ինձ գովել չեմ համարձակվում, բայց, իհարկե, աշխատում եմ հասնել։ Ամբողջ կյանքդ անց ես կացնում

տիկնիկների մեջ, շարունակ լուռ ես ու մտածում ես... Մտածում ես, մտածում և հանկարծ այդ տիկնիկը կանգնում է առաջդ որպես կենդանի։ Դե, բնական է, ուզում ես նպատակիդ հասնել... Իսկ այդ դեպքում, ինքնին արդեն հասկանալի է, միայն լաթերով ու փայլուն կաշիով բավականանալ չի կարելի։

— Նշանակում է, դուք մասամբ նաև քանդակագործության եք դիմում։

— Զգիտեմ՝ ինչպես ասել ձեզ, պարոն, այդ մասին։ Իմ կարծիքով, ես տիկնիկ եմ շինում, միայն, հասկանալի է, աշխատում եմ նպատակս իրագործել։ Ասենք հիմի այսպես. ուզում եմ ես տիկնիկ-դատական պաշտոնյա շինել, ինչպե՞ս պետք է անել։ Հասկանալի է, կարելի է և՛ այսպես. վերցրի մի կոճղի կտոր, աչքերը, քիթը, շրթունքները նշեցի, վերնազգեստն ու անդրավարտիքը հագցրի և տարա շուկա վաճառելու հատը տասը կոպեկով։ Բայց կարելի է նաև ուրիշ կերպ։ Կարելի է այնպես անել, որ նույն այդ պաշտոնյան խոսի, ձեռքերով շարժումներ անի։

— Ահա՛ թե ինչ։

— Այո, և դա, թույլ տվեք ասել, դեռ բոլորը չէ։ Պաշտոնյաները ևս տարբեր են լինում։ Մի պաշտոնյա կաշառակեր է, մյուսը կաշառք չի վերցնում, բայց անուշ բաների սիրահար է, երրորդը՝ առանց որևէ պատճառի ձեռքերն է մեկնում առաջ, չորրորդը՝ այն մասին է միտք անում միայն, թե ինչպես գյուղացիներին բարերարություն անի։ Ահա, տեսնում եք, միայն չորս տեսակը թվեցի և նշանակում է, չորս առանձնահատուկ տիկնիկ է հարկավոր լինում։

— Այնպես որ, եթե պաշտոնյաների բոլոր տեսակները տիկնիկների ձևով շինվեն, նրանք, թերևս, ձեր ամբողջ արհեստանոցը կլցնե՞ն։

— Զարմանալի չի լինի։ Կամ, օրինակ, կանացի սեռը — տիկնիկային գործի համար ինչքա՞ն նյութ կա։ Միայն «պրճնասերների» թիվը տասնյակներով կարելի է հաշվել, իսկ ինչքան լկտիներ, ապականվածներ, դուրս ընկածներ կան, որոնք իրենց ողջ կյանքում ապարդյուն դես ու դեն են ընկնում և ոչ մի ապիկարության վրա կանգ առնել չեն կարո-

պանում։ Ահա մեկը, հաճեցեք նայել,— բացականչեց նա, ցույց տալով լուսամուտից,— սա մեր հարևանուհին է, տիկին Սերոպտիվցևան, անցում է փողոցով։ Ամուսինը ժամագործությամբ է պարապում, իսկ ինքը, տեսնում եք, հոգնել է նրա փոխարեն, զբոսնելու է դուրս եկել։ Հաճեցեք նայել հապա—ինչո՞վ նման չի տիկնիկի։

Իրոք, փողոցի մյուս կողմով անցնում էր երիտասարդ մի կին, բավական տարօրինակ, կարծես մոռացումի տեսքով։ Քայլում է, թևերը թափահարում, գլուխը ցնցում, ոտքերը միմյանց խճճում։ Ոչ այն է, ինչ-որ բան է փնտրում, ոչ այն է մտածում է, թե ինչ է իր որոնածը։

— Ահա մի այսպիսի տիկնիկ շինելու համար, և եթե ինչպես հարկն է կարելի լինի գաղտնիքը գտնել, արժե՞ արդյոք, հարցնում եմ ձեզ, աշխատել, թե ոչ։ Իսկ մեր խաղալիքի վարպետներից շատե՞րն են արդյոք, թույլ տվեք հարց տալ, հասկանում դա։ Մեծ մասն այսպես է մտածում, լաթեր լցրեցիր, կաշվով ծածկեցիր, հագուստ հագցրիր — արդեն պատրաստ է կանացի սեռը։ Համեցեք, ես այդ տեսակի տիկնիկների հիանալի նմուշներ ունեմ, չե՞ք հաճի հետաքրքրվել։

Նա մոտեցավ ապակեպատ պահարանին և այնտեղից հանեց մի բավական մեծ ու թանկարժեք տիկնիկ։ Տիկնիկը շքեղ զարդարված «նորապսակ» էր ներկայացնում, կրինոլինով, սպիտակ ատլասից արծաթով ասեղնագործած և ժանյակներով զարդարված հագուստ հագած։ Դեմքը մոմից էր, քնքշորեն շինած այտերով, աչքերը ճենապակուց էին, գլխի մազերը՝ դեղնավուն։ Գլխից մինչև ոտքերն իջնում էր տյուլի երկար քողը։

— Մի գնդապետ էր եկել գինվորագրության ժամանակ,— բացատրեց Իզուվերովը,— իմ արհեստանոցը գնաց, իսկ հետո այս տիկնիկին ինձ ընծա բերեց Պետերբուրգից։ Ձեր կարծիքով, պարոն, թա՞նկ արժե այս տիկնիկը։

— Քսան-քսանհինգ մանեթ կարժենա։

— Ա՜յ, տեսնում եք։ Այդչափ գումար ես նույնիսկ արտասանել չեմ կարող, բայց իմ կարծիքով, սրա գինը մի գբրոշից ավելի չէ։

— Ինչո՞ւ այդպես։

— Դատարկ տիկնիկ է, ահա ինչու։ Կա թե չկա, միևնույն է։ Եթե, ասենք, կոտրես գլուխը, առանց գլխի էլ նա գեղեցիկ է, հագուստը պատոհիր, նորը կարելի է կարել։ Աչքերը զուր տեղն են շարժվում։ Ոչ աչքի տակով նայել կարող է, ոչ վերից նայել, ոչինչ չի կարող։ Դատարկ տիկնիկ է, ուրիշ ոչինչ։

Իսկապես, ուշադրությամբ զննելով պետերբուրգյան պըճնազարդ տիկնիկը, ես ինքս էլ համոզվեցի, որ դատարկ տիկնիկ է։ Եթե երեխայի ձեռքը տաս, անմիջապես երեխան նրա գլուխը կկծի և շատ էլ լավ կանի։ Սակայն ես, այնուամենայնիվ, փորձեցի Իզուվերովի դատավճիռը մի փոքր գոնե մեղմել։

— Լսեցեք, բայց չէ՞ որ սա «նորապսակ» է,— ասացի ես,— ի՞նչ եք պահանջում նրանից։

— Եթե, ձերդ բարեծնություն, խելքի մասին եք բարեհաճում ասել, ապա թույլ տվեք ասել ձեզ, որ թեպետև դրժվար է «նորապսակից» իսկական խելք սպասել, սակայն, եթե նա խելք չունի, գոնե պետք է պարզություն ունենա, իսկ այս տիկնիկը նույնիսկ իսկական պարզություն չունի։ Ինչո՞ւ է նա «նորապսակ», ի՞նչ նպատակով, ո՞ր աստիճանի մեջ է գտնվում։ Ի՞նչ պատասխան կարող է տալ նա այս հարցերին։ Այն, որ քող է գցած գլխին ի նշան անարատության։ Սակայն քողը կարելի է գլխից վերցնել։ Ի՞նչ կդառնա այն ժամանակ նա,— «նորապսա՞կ», թե դատարկ կրծքով մի կին, որն իր մերկությամբ կամենում է անցնող մարդկանց աչքերը շլացնել։

— Մի՞թե կարելի է նրանից պատասխաններ պահանջել, քանի որ նա «նորապսակ» է։ Նա ինքը, թերևս, իր մասին ոչինչ ասել չի կարող։

— Այդպես էլ է պատահում, իհարկե։ Պատահում են այնպիսիները, որ ինչի մասին ուզում ես խոսիր նրա հետ, նա շարունակ ուզում է միայն համբուրվել... Այդ դեպքում պետք է որ այդ բանն անմիջապես հայտնի լինի։ Որպեսզի ամեն մեկը, հենց որ նրան տեսնի, անմիջապես ասի՝ «Ա՜յ, ինչ կին է... ա՜խ, ա՜խ, ա՜խ»։ Թե չէ, համեցեք։ Քող է գցել և

կարծում է բան է շինել։ Այս տեսակ տիկնիկները մեր շուկայում հատը տասը կոպեկով են ծախում։ Ահա անկյունում ինչքան է թափված դրանցից։

— Դուք, ուրեմն, հասարակ տիկնիկներ է՞լ եք շինում։

— Առանց հասարակ տիկնիկի ապրել չենք կարող։ Իսկ իսկական տիկնիկ շինում եմ, երբ ազատ ժամանակ եմ ունենում։

— Եվ դա հետաքրքրո՞ւմ է ձեզ։

— Հայտնի է, եթե հետաքրքիր չլիներ, այդ դեպքում ավելի լավ էր հասարակ տիկնիկներ շինելը. համենայն դեպս գրպանս ավելի շատ փող կմտներ։ Իսկ դրանից, այդ «մարդուկներից» տան համար ամենևին շահ էլ չկա, և դեռ, տեսար, վշտից կորար։

— Վիշտն ի՞նչ գործ ունի այստեղ։

— Վիշտը նրանից է, որ դու «հասնել» ես ուզում, բայց գործը ցույց է տալիս, որ ձեռքերդ կարճ են։ Ուզում ես, օրինակ, որպեսզի «դատական պաշտոնյան»... ասենք, ծիծաղի... բայց նա դրա փոխարեն միայն «զայրանում է»։ Ուզում ես, որ նա այսօր ուրիշ լինի, վաղը՝ ուրիշ, իսկ նա առավոտից մինչև իրիկուն շարունակ նույնն է կրկնում։ Ուզում ես, որպեսզի քո «մարդուկները» վարմունք ունենան, բայց նրանք միայն թևերն են թափահարում։

— Ինչպե՞ս կարող են տիկնիկները վարմունք ունենալ։

— Գիտեմ, պարոն, որ իմ ցանկության մեջ խելացի քիչ բան կա, բայց չէ որ ոչ ոք արգելք չի հանդիսանում ցանկություն ունենալու — ահա մեր ցավն ինչումն է։ Մտածում ես, հիմի թափ կառնեմ ու կթռչեմ, իսկ «մարդուկը» կախվել է քեզանից և թույլ չի տալիս։ Ինչ գիծ որ բռնել է նա, այլևս այդ գծից չի շեղվում։ Ես նույնիսկ այնպիսի մեխանիզմ եմ հնարել, որ իմ մարդուկները կարմրում են, բայց դրանից էլ բան դուրս չեկավ։ Կարմրադեղ ես քսում դեմքին և մտածում ես, որ հիմի կսկսի բարկանալ, բայց նա «զայրանում» է և ուրիշ ոչինչ։ Հիմի մի ուրիշ հնարք էլ եմ հարմարեցրել. սկսել եմ նրանց ներսը սիրտ դնել, բայց հենց սկզբից գիտեմ, որ դա միայն ձևականություն է։

Եվ նա ցույց տվեց ինձ մի ամբողջ կապուկ տիկնիկա-

յին փոքրիկ սրտեր, որոնցից յուրաքանչյուրի վրա մանր մանր տառերով փորագրված էր. «Այս սրտի գինը մեկ կոպեկ է»։

— Ահա թե ինչ վիճակի մեջ ես ընկնում սրանց հետ։ Խելք չունեն, վարմունք չունեն, ցանկություններ չունեն, իսկ ամեն ինչի փոխարեն՝ լոկ տեսք։ Եվ ահա, սոսկումն է պատում քեզ։ Տեսար՝ կոկորդդ կտրեցին։ Նստում ես այդ համբուրության մեջ ու միտք ես անում. տե՞ր աստված, ո՞րտեղ են թաքնվել իսկական մարդիկ։

— Ա՜խ, սիրելիս, բայց արդյո՞ք իրական կյանքում շա՞տ կան այդպիսիները, որոնց կարելի լինի «իսկական» մարդ կոչել։

— Այո, պարոն, այո։ Եվ այդ է միայն, որ զսպում է։ Նայում ես չորս կողմդ, ամեն տեղ տիկնիկներ են, ամեն կողմ տիկնիկներ, վերջ չկա այդ տիկնիկներին։ Տանջում են, ճնշում են, հուսահատության, հանդգնության են մղում։ Հավատո՞ւմ եք, երբեմն մարդ միտք է անում, թե՝ տե՞ր աստված, բայց չէ՞ որ եթե չլիներին տիկնիկները, ներկայիս չարագործությունների մեկ տասներորդականն էլ չէր լինի։

— Հը՞մ... դա մասամբ, թերևս, և այդպես է։

— Միանգամայն ճիշտ է։ Որովհետև իսկական մարդն առաջ է նայում։ Նա ամեն տեսակ ցավ ճանաչում է, վիշտը հասկանալ կարող է, վախ ունի։ Շրջահայացություն կա նրանում։ Իսկ տիկնիկը ո՛չ վախ ունի, ո՛չ ցավ — ոչինչ։ Ապրում է՝ ասես կյանքից վերացած, ոչ իսկական վիշտ ունի, ոչ ուրախություն, ապրում և մարդու հոգի է ճնշում,— և՛ վերջացավ։ Հենց թեկուզ այդ տիկին Ստրոպտիվցկան, որին նոր միայն հաճեցիք տեսնել։ Ուզում ես քրքրիր, բացի փալասներից ու տիկնիկային այդ բնույթից, նրա մեջ ուրիշ ոչինչ գտնել չի կարելի։ Իսկ որչա՞փ չարագործություններ կանի նա իր այդ փալասների օգնությամբ. թվում է, եթե նրան իր ամբողջ կյանքում դատելու լինեն, այնուամենայնիվ կրկին մի այդչափ կյանքի համար դեռ կմնա։ Ահա երբ այդպես ես մտածում, հարկադրված ես լինում հաշտվել։ Ավելի լավ է, ասենք, ես իմ փայտե մարդուկների մոտ գնամ, քան թե կենդանի տիկնիկների հետ կորստյան մատնվեմ։

— Նշանակում է՝ փայտե մարդուկների հետ ավելի՞ հաճելի է։

— Ինչպե՞ս կարելի է։ Փայտե «մարդուկի» հետ ես ինչ խոսակցություն ուզում եմ, այն էլ ունենում եմ, իսկ եթե ձանձրացրեց, կարելի է զսպել.— տուփը մտիր, պառկիր։ Իսկ կենդանի տիկնիկին ինչպե՞ս կարող ես զսպել.— նա ինքը քեզ ուժասպառ կանի, ինքը քո հոգին կհանի, ամբողջ կյանքում հյուծախտավոր կդարձնի։

Իզուվերովն այդ ասաց կրքոտ, համարյա ատելությամբ։ Երևում էր, որ նա ճանաչում է այդպիսի մի «կենդանի տիկնիկ», որ թերևս այժմ էլ, այս իսկ րոպեին էլ աներևույթ կերպով մաշում է նրան, հոգին բերանն է բերում և տզզում է նրա ականջի տակ։

— Մեզանում, պարոն, այստեղի զեմսկի դատարանում, մի լավ մարդ է ծառայում,— շարունակեց նա,— հենց որ գլուխը մի փոքր տաքանում է, գալիս է ինձ մոտ։ «Իզուվերով,— ասում է,— ոստիկանապետը հոգիս հանեց, առավոտից մինչև իրիկուն շաղակրատում է։ Ինձ համար այնպիսի մի տիկնիկ պատրաստիր, որ ես կարողանամ ոստիկանապետի փոխարեն նրա հետ խոսեմ»։

— Բայց հետաքրքիր կլիներ ձեր պատրաստած ոստիկանապետին տեսնել։ Ունի՞ք։

— Մենք դեռևս, ձերդ գերազանցություն, նյութեր չունենք՝ պարոնայք ոստիկանապետներին տիկնիկային տեսքով պատկերելու։ Թեպետ այն էլ պետք է ասել, որ պարոն քարտուղարը շատ էլ մեծ հաճույք չէր ստանա, եթե ես նրա քմահաճույքը կատարելու լինեի։ Այսօր նա կզվարճանար, սիրտը կամոքեր, բայց վաղը նա կրկին պետք է նույն այն կենդանի տիկնիկի մոտ գնար՝ իր պատիժը կրելու։ Դժվա՛ր է, պարոն, նույնիսկ շա՞տ դժվար է աշխարհում տիկնիկների մեջ ապրելը։

Նա լռեց մի ակնթարթ, հառաչեց ու ավելացրեց.

— Եկեղեցու հայր սարկավագը ինձ քիչ անգամ չի ասել՝ «Դու, Իզուվերով, ուղղակի հիմար ես։ Առանց այն էլ կենդանի տիկնիկների ձեռքից աշխարհում ապրել չի լինում, իսկ դու դեռ փայտե տիկնիկներ ես բազմացնում»։

Իզուվերովը կրկին լռեց և այս անգամ, ըստ երևույթին, կասկած ծագեց մեջը, արդյոք ճի՞շտ վարվեց խոսակցությանը փիլիսոփայական ուղղություն տալով։ Նա ամաչկոտ պտտվում էր դազգահի շորս բոլորքն ու վերնազգեստի փեշով մաքրում թեփն ու տաշեղները։

— Չե՞ք ցույց տա արդյոք ինձ ձեր «մարդուկներին»,— հարցրեցի ես։

— Ի՞նչ եք ասում, իհարկե,— պատասխանեց նա,— նույնիսկ մեծ պատիվ կհամարեմ ինձ համար։ Ահա, թույլ տվեք սկզբում թեկուզ պարոնայք «դատական պաշտոնյաներին» ձեզ ծանոթացնել։

— Հապա, պարոն կոլլեժսկի ասեսսոր, դուրս եկ,— բացականչեց Իզուվերովը, արկղից հանելով տիկնիկն ու դազգահի վրա կանգնեցնելով։

Իմ առաջ կանգնած էր մոտ հինգ վերշոկանոց մի «մարդուկ», նրա դեմքն ու մարմնի մասերը բավարար համաչափություն ունեին, գլուխը, թևերն ու ոտքերն ազատ շարժվում էին։ Պաշտոնյայի տիպը դրականապես հաջող էր որսած։ Գլխի մազերը սև էին, խնամքով սղալած, քունքերի մոտ խոպոպիկներ և ճակատին՝ գանգուր։ Դեպի վեր ցցված դեմքը ինքնագոհ էր՝ նեղ ճակատով և դուրս ընկած այտոսկրներով։ Աչքերը մանր էին, շարժուն և վավաշոտ, խիստ պսպղուն։ Այտերը փքված, դեղնին տվող և դուրս ցցված մասերում ասես աղյուսով շփված (կարմրության փոխարեն)։ Շրթունքները թխլիկ էին, կարմիր, ճարպոտ, կարծես հենց նոր միայն յուղալի կերակուր կերած լինեին. ծնոտը սափրած էր ու տեղ-տեղ կտրված, տեղ-տեղ ելունգներ ցանված։ Հագած էր մոխրագույն կազինետի վիցմունդիր, կարմիր կազինետի՝ մասամբ տարօրինակ ձևի՝ օձիքով և շատ նեղ, համարյա մինչև գետին հասնող փեշերով։ Վիցմունդիրի հետ հագել էր մոխրագույն անդրավարտիք՝ կարճ և մաշված։ Բոլոր գրպանները խորն էին, այնպես, որ հաջող շրջագայությունից տուն վերադարձող մուրացկանի մախաղի պարունակությունը կարող էին տեղավորել։ Կոճկանցքից կախված էր արծաթագույն թիթեղի մեդալ՝ «Կործանվողներին

ազատելու համար» մակագրությամբ։ Ազդրերը կլոր էին, կանացի, փորը կլոր, գուղձի նման, և ուրախ խլխլացող, կարծես այնտեղ դեռևս շարունակում էին թպրտալ նոր միայն կենդանի-կենդանի կուլ տված հավերը և այլ ընտանի կենդանիները։ Մի ձեռքը կողին էր դրել, մյուսը՝ անդրավարտիքի գրպանը, ասես շտապով մի բան թաքցնելով այնտեղ։ Ոտքերը դարսել էր մկրատաձև։ Ընդհանրապես իր ամբողջ կերպարանքով նա հիշեցնում էր սուր ծայրը ներքև դարձած մկրատ։ Եվ թեպետ հավաստի չկարողացա վերհիշել, թե ո՞րտեղ եմ տեսել ես այդ անձնավորությանը, բայց կասկածից դուրս էր, որ նրան մի տեղ հանդիպել էի և այն էլ հաճախ։

—«Կաշառակե՞ր է»,— հարցրեցի։

— Նա ինքն է։ Ինչպե՞ս է ձեր կարծիքով։

— Վատ չէ։ Միայն թե, խոստովանում եմ, ես այնքան էլ չեմ հասկանում, ինչո՞ւ դուք նրան մոխրագույն վիցմունդիր եք հագցրել, այն էլ կարմիր օձիքով։ Այդպիսի տարազ, որքան ինձ հայտնի է, գոյություն չունի։

— Ցենզուրայի համար։ Եթե ես նրան իսկական վիցմունդիր հագցնեի, ինչպե՞ս կարող էի ազատվել։ Իսկ այժմ ես ոչ մի բանից տեղյակ չեմ. քաղաքացիական մարդ է, ուրիշ ոչինչ։

— Իսկ ինչո՞ւ դուք նրան կոլլեժսկի ասեսսոր եք անվանում։

— Նույնպես ցենզուրայի համար։ Մի անգամ մի մարդ եկավ իմ արհեստանոցը։ Պետերբուրգում պաշտոնյա էր։ Նա ինձ ասաց, որ այնտեղ կոլլեժսկի ասեսսորից բարձր պաշտոնյաներին տիկնիկային տեսքով ներկայացնել չի թույլատրվում, իսկ մինչև կոլլեժսկի ասեսսոր, իբրև, կարելի է։ Ահա այդ ժամանակվանից էլ ես օրենք դարձրի ինձ համար այդ նորման վերցնել։

— Ճիշտ է։ Դե, այժմ ցույց տվեք ինձ, ինչպես է գործում ձեր կոլլեժսկի ասեսսորը։

— Իսկույն, ձերդ բարեծնություն։ Մենք նրան նախ և առաջ քննության կենթարկենք։ Ասա, կոլլեժսկի ասեսսոր, կաշառք սիրո՞ւմ ես։

— Պա՛պպպպ,— հանկարծ միանգամայն պարզորոշ բացականչեց մարդուկը։

Ես նույնիսկ ցնցվեցի։ Մի տեսակ զարմանալիորեն անհաճո տպավորություն գործող ձայն էր, որով արտասանվեցին այդ հնչյունները։ Կարծես թութակ լիներ հարևան սենյակից բացականչող. մեկ էլ հին կալվածատիրական տներում ձրիակերներն ու իրիցկանայք էին այդ ձայնով խոսում, երբ կամենում էին ուրախություն պատճառել իրենց բարերարներին։

— Այդ նշանակում է՝ սիրում եմ,— բացատրեց Իզուվերովը և, կրկին դիմելով «կոլլեժսկի ասեսսորին», շարունակեց.— մե՞ծ կաշառք ես սիրում, հարկավ։

— Պա՛պպ-պ-ա։

— Այնպես որ մինչև վերջին թելը թալանվի՞։

— Պա՛պպա, պա՛պպա, պա՛պպա։

Երիցս կրկնելով այդ բացականչությունը, կոլլեժսկի ասեսսորը ծայրահեղ հուզվածություն էր արտահայտում. պտույտ էր տալիս աչքերը, գլխով անում, փորը ցնցում և ձեռքերը ազդրերին խփում, ճիշտ այնպես, ինչպես թռչունն է թևերը խփում կողքերին, երբ անսպասելի կերպով վրա է հասնում թափված հատիկների։ Ինձ թվաց, որ նույնիսկ մի ակնթարթ եղավ, երբ նա կարմրեց...

— Ահա, դուք ասում էիք, որ ձեր «մարդուկները» արարմունք չունեն,— ասացի ես,— բայց տեսեք, ի՞նչ անկեղծ հիացմունք է արտահայտում ձեր կոլլեժսկի ասեսսորը։

— Բանն այն է, որ կատարյալ չէ, ձերդ բարեծնություն,— առարկեց Իզուվերովը։ Ե՛վ ձեռներն է խփում ազդրերին, և՛ աչքերն է պտույտ տալիս — այդ ճշմարիտ է, բայց դեմքի վրա, այնուամենայնիվ, իսկական ագահություն չի երևում։ Ա՛յ մեր դատական ատյանում մի քարտուղար կա, նա, հենց որ կաշառք է տեսնում, նույնիսկ ամբողջովին մեռելի գույն է ստանում։ Ե՛վ հայացքն է պղտորվում, և՛ ձեռներն են դողդողում, և՛ լորձունք է երևում շրթունքներին։ Իսկ իմը դեռևս դրան չի՞ հասել։

— Ինձ թվում է, որ դուք արդեն չափից ավելի համեստ

եք, Նիկանոր Սերգեիչ։ Իմ կարծիքով ձեր «պաշտոնյան» նույնպես կատարյալ սրիկա է։

— Ո՛չ, պարոն, ո՞րտեղից։ Հետագայում ավելի կհամոզվեք, որ իզուր չեմ ես դժգոհում նրանից։ Իսկ առայժմ թույլ տվեք քննությունը շարունակել։ Հապա, կոլլեժսկի ասեսսոր, ասա։ Որ դու մեծ կաշառք ես սիրում, այդ մենք գիտենք, իսկ փոքր կաշառքն ինչպե՞ս, կընդունե՞ս։

— Պա՛պպ... վզզզզ՞...

«Մարդուկը» կարծես հանկարծ ուշքի եկավ և վզզաց։ Խոստովանում եմ, ես մտածեցի, չի՞ փչացել արդյոք նրա միջի մեխանիզմը, բայց Իզուվերովը շտապեց՝ ցրելու իմ կասկածները։

— Այդ նշանակում է՝ կընդունեմ նաև փոքրը, բայց միայն այն դեպքում, երբ մեծը պոկելու հնարավորություն չկա։— Դե, իսկ ի՞նչ կասես, օրինակ, որ առանց կաշառքի գործը վերջացնես։

— Վզ՞զ՞զզ...

Կոլլեժսկի ասեսսորը ոչ միայն սկսեց վզզալ, այլև պըտույտ-պտույտ եկավ։ Դեմքն ամբողջովին կարմիր հեղուկով լցվեց, աչքերն անհանգիստ շարժվում էին խոռոչներում։ Ընդհանրապես նկատելի էր, որ գործն առանց կաշառքի վերջացնելու գաղափարն անգամ կարող է նրան կատաղության հասցնել։

Նույնիսկ Իզուվերովը զայրացավ այդպիսի լկտիությունից և օրորեց գլուխը։

— Ինչպես տեսնում եմ, դու, «կաշառակեր»,— ասաց նա,— այնքան ագահ ես, որ, թվում է, կաշառքի համար պատրաստ ես հարազատ հորդ կախել։

— Պա՛պպ-պա, պա՛պպ-պա, պա՛պպ-պա։

— Իսկ դրա համար ուզո՞ւմ ես դատի տակ ընկնել։

— Վզ՞զ՞զ՞զ՞զ...

— Չե՞ս սիրում։ Իհարկե... Ո՞վ կուզի դատի տակ ընկնել։ Որևէ բարվոք վիճակի, որչափ էլ անարժեք լինի այն, այնուամենայնիվ, արժանանալը հաճելի է։ Դու, անշուշտ, քեզ համար արդեն որևէ գյուղ նկատի առել ես։

— Պա՛պպ-պա՛։

— Կաշառք կհավաքես, կամուսնանաս, կտեղափոխվես կալվածքդ, երեխաներ կունենաս, գյուղացիներին կոռ ու բեգյարի տակ կդնես, տոն օրերին պատարագին եկեղեցու դասից կերգես։

— Պա՛պպ-պա։

— Եվ հանկարծ կաթված կստանաս։

— Վզ՞զ՞զզ...

— Չե՞ս սիրում։— Ոչ մի բանով նրան այնպես վշտացնել չի կարելի, ձերդ բարեծնություն, ինչպես մահվան մասին հիշեցնելով։— Դե, լավ, կոլլեժսկի ասեսսոր։ Իսկ առայժմ մենք քեզ մի մարդու հետ կհանդիպեցնենք։

Իզուվերովը մի այլ տուփ փնտրեց և այնտեղից հանեց մի «գյուղացի»։

Գյուղացին համարյա իսկական էր և, ըստ երևույթին, նույնիսկ ունևոր։ Մորուքը երկար էր, արդեն սպիտակած, մազերին առատորեն կովի յուղ քսած, ուսերին՝ կապույտ վերնազգեստ, մեջքին կարմիր գոտի, ոտքերին՝ նոր տրեխներ։ Մոցում ուներ պահած հավեր, սագեր, բադեր, հնդուհավեր, խոճկորներ, իսկ մեկ գրպանից երևում էր նույնիսկ մ՝ ամբողջ կով։ Իզուվերովն սկզբում նրան քիչ հեռու դրեց կոլլեժսկի ասեսսորից։

— Հը՞, շինական, հանցավո՞ր ես։

— Մմ-մո՞ւ-ո՞ւ։

— Իսկ եթե հանցավոր ես, նշանակում է՝ ծո՛ւնկ չոքիր։

Նա գյուղացուն ծունկ չոքեցրեց և դեմքը դարձրեց կոլլեժսկի ասեսսորի կողմը։

— Սողա՛։

Գյուղացին սողաց և կանգ առավ «Կաշառակերի» դիմաց։ Կոլլեժսկի ասեսսորը սկզբում շուռ տվեց գլուխը մի կողմ, ձևանալով, իբր չի տեսնում հայցողին, բայց, մի քանի անգամ կրկնվող «մմ-մու-ու»-ից հետո՝ կամաց-կամաց սկսեց նայել հանցավորի ուղղությամբ և, վերջապես, գիշակեր և սուր ճիչ արձակեց.

— Պա՛պպ-պա։

Եվ անմիջապես գյուղացու ծոցից խլեց սագն ու տեղն ու

տեղը, թռչունների մոլեգին կոնչյունների մեջ, կենդանի-կենդանի լափեց։

— Գլո՛ւխ տուր, գլո՛ւխ տուր, շինական,— խրախուսում էր Իզուվերովը,— ներո՛ւմն խնդրիր... այ՜, այդպես՝ մեղավոր եմ, ձերդ բարեծնություն, այլևս չե՛մ անի։

— Մմո՜ւ-ու-ու, մմո՜ւ-ու-ու, մմո՜ւ-ու-ու,— կրկնում էր գյուղացին։

Դրանից խրախուսված, կոլլեժսկի ասեսորը ասես գազազեց։ Ամբողջ իրանով ետ ընկավ և միառժամանակ կանգնեց այդպես, կարծես զննելով իր զոհին, ապա սկսեց ճոճվել կողքից-կողք, ըստ որում արյունը դեմքին էր խփում, և վերջապես ամբողջ ուժով հարձակվեց գյուղացու վրա և սկսեց գզգզել նրան ու թալանել։ Այս ամենն այն աստիճան արագ կատարվեց, որ իմ մազերը նույնիսկ բիզ-բիզ կանգնեցին։ «Կաշառակերը» գյուղացու ծոցերից հանեց բոլոր հավ ու թռչունները, եղջյուրներից բռնած գրպանից դուրս քաշեց կովը, հետո շուռ տվեց մյուս գրպանն ու այնտեղ գըտավ խոզը, որը վախից անմիջապես տասը հատ ձագ բերեց։ Եվ ամեն անգամ՝ մի բան գտնելիս, բացականչում էր.

— Պա՛պպ-պա, պա՛պպ-պա, պա՛պպ-պա։

Իսկ գյուղացին խանդաղատանքով կրկնում էր նրա ետևից.

— Մմո՜ւ-ու-ու։

Վերջապես, «Կաշառակերը» պոկ եկավ, և գյուղացին, մտածելով, որ իր հանցանքն արդեն ներված է, նույնպես շտապով ուզեց ոտքի կանգնել։ Բայց այդպես չէ՞ր։ Կոլլեժսկի ասեսորը կրկին ինչ-որ բան հիշեց (և, ըստ երևույթին, ամենից կարևորը) և եռանդագին թափահարել սկսեց թևերը, ցույց տալով գյուղացու տրեխները։ Գյուղացին շփոթվեց, կարծես խարդախության մեջ բռնված, ապա հնազանդ նըստեց գետնին և սկսեց արձակել ոտքի փաթաթաններն ու տրեխները։ Ամբողջ ժամանակ, քանի դեռ տեղի էր ունենում արձակման գործողությունը, «Կաշառակերը» ուշադիր հետևվում էր հանցապարտին և խորամանկորեն ժպտում, կարծես ասելով՝ խաբե՞լ էիր ուզում... անզգա՛մ։ Եվ իրոք. քանի բացվում էին գյուղացու փաթաթանները, այնտեղից թափվում էին բազմաթիվ սպիտակ և դեղին կլոր իրեր։

— Դրանք ռուբլիանոցներ և կիսսիմպերիալներ են,— բացատրեց Իզուվերովը։

Կոլլեժսկի ասեսորը կրկին մոլեգնեց։ Ական թոթափել վրա ընկավ նա հանցապարտին, շոշափեց գյուղացուն ոտքից գլուխ, վերցրեց փողերը, հանեց գյուղացու հագի վերնազգեստը և նույնիսկ խլեց գոտուց կախված պղնձյա սանրը։

— Պա՛պպ-պա, պա՛պպ-պա, պա՛պպ-պա,— բացականչում էր նա հիացմունքով։

— Մմո՜ւ-ու-ու,— կրկնում էր նրա ետևից գյուղացին։

— Դե, այժմ վեր կաց,— որոշեց Իզուվերովը, գյուղացուն ոտքի կանգնեցնելով։

Գյուղացին սաստիկ զզզված էր, սակայն, ըստ երևույթին, ամենևին վշտացած չէր։ Նա հասկանում էր, որ իր պարտքն է կատարել և միայն կամացուկ թափ էր տալիս իր հագուստը։

— Գո՞հ ես,— դարձավ նրան Իզուվերովը։

— Մմո՜ւ-ու-ու։

— Դե՛, իհարկե։ Այժմ քո գործն ապահով է, և տանն էլ բոլորին այդպես ասա, որ «այժմ ինձ ուզում ես կաշայով կեր, ուզում ես կտոր-կտոր արա — գործս ապահով է»։ Դե, դե, բարի, կրկին արկղդ մտիր և հարստություն կուտակիր մյուս անգամվա համար։

Նա բռնեց գյուղացու իրանից և կրկին արկղի մեջ դրեց։

— Այս գյուղացին «ներկայացումների» համար է,— բացատրեց ինձ Իզուվերովը։— Ինքնին նա անձնավորություն չի ներկայացնում, իսկ եթե հարկավոր է մեկն ու մեկին ցույց տալ հոգու կարողությունը՝ սրանից էլ լավ մարդ գտնել հնարավոր չէ։ Այժմ, ձերդ բարեծնություն, թույլ տվեք խընդրել ձեզ, չէի՞ք բարեհաճի արդյոք դուք ձեր կողմից արդեն հարցեր առաջարկել պարոն կոլլեժսկի ասեսորին։

— Ի՞նչ հարցեր։

— Ինչ կամենաք, պարոն, այն էլ հարցրեք։ Կտեսնեք, համենայն դեպս, ինչ ուժ հրապարակ կբերի նա ձեր հանդեպ։

— Համեցեք։ Ի՞նչ օրինակ... Օրինակ, հասկանո՞ւմ ես

դու, կոլլեժսկի ասեսսոր, ինչ նշանակություն ունի «արդարություն» բառը։

Լռություն։

— Իսկ աստծուց... վախենո՞ւմ ես։

Լռություն։

— Ուրիշ ի՞նչ հարց տամ... Մերձավորիդ ծառայել կըցանկանայի՞ր։

Կրկին ու կրկին լռություն։ Ես տարակուսական նայեցի Իզուվերովին։

— Չի հասկանում,— բացատրեց հակիրճ։

— Այսինքն, ինչպե՞ս թե չի հասկանում։ Կարծես հարցերն այնքան էլ խորիմաստ չեն։

— Խորիմաստ չեն, բայց և այնպես նա պատասխան տալ չի կարող։ Նա «առաքինության» մասին հասկացողություն չունի։ Մտքում շարունակ գողությունը, ստորությունը և թալանն է։ Ընդհանրապես թույլ տվեք հայտնել ձեզ, որչափ աշխատեցի առաքինի տիկնիկ պատրաստել, ոչ մի կերպ չկարողացա։ Սրիկաներ,— որքան կուզեք, իսկ ինչ վերաբերում է առաքինության, թվում է, որ այդ բառը նույնիսկ ամենևին չի գործածվում այս թագավորության մեջ։

— Դա, սակայն, բնական է։ Վերցրեք նույնիսկ կենդանի տիկնիկին — մի՞թե նա հասկանում է ինչ ասել է առաքինություն։

— Չի հասկանում,— այդ ճիշտ է։ Բայց գոնե նա, ծայրահեղ դեպքում, կեղծավորություն անել գիտե։ Հարցրեք, օրինակ, մեր դատարանի քարտուղարին՝ վախենո՞ւմ ես արդյոք աստծուց,— նա թերևս, նույնիսկ կզգացվի։ Բայց իմ կոլլեժսկի ասեսսորն այդ բանն անել չի կարող։

— Դա, ես կարծում եմ, նրանից է, որ ըստ էության ձեր «կոլլեժսկի ասեսսորն» ավելի առաքինի է, քան դատարանի քարտուղարը,— ուրիշ ոչինչ։ Իսկ հապա փորձեցեք «առաքինի» խոսակցությունը կեղծավորության տեսակետով տանել, այն ժամանակ ես հավատացած եմ, որ ձեր «Կաշառակերը» նույնպես դատարանի քարտուղարից ավելի լավ պատասխաններ կտա ամեն մի հարցին։

Այս գաղափարը, որ ինքնին շատ հասարակ գաղափար

էր՝ անգգամի համար առաքինությունը մատչելի դարձնել, կեղծավորության միջոցով առաքինությունը ստորության փոխել՝ ըստ երևույթին, մինչև այժմ չէր ծագել Իզուվերովի գլխում։ Նույնիսկ այժմ նա այնքան էլ պարզ չէր կարողանում ըմբռնել, թե այդ ինչպե՞ս կարող է առաքինությունը հանկարծ ստորության փոխվել։ Բայց վերջիվերջո փոխակերպությունը հասկանալի դարձավ նրա համար կատարելապես։

— Ես, ձերդ բարեծնություն, կփորձեմ,— ասաց նա՝ վեհերոտ նայելով ինձ։

— Իհարկե, փորձեցեք։ Եվ ես համոզված եմ, որ կատարյալ հաջողություն կունենաք։

— Այն ժամանակ ես, ձերդ բարեծնություն, անշուշտ, կարող կլինեմ տիկին Ստրոպտիվցևայի նման տիկնիկ պատրաստել։

— Իհարկե։ Սակայն սպասեցեք, կարող ենք նույնիսկ այժմ փորձել այդ բանը ձեր «Կաշառակերի» վերաբերմամբ։ Նոր ձևի հարց տանք և տեսնենք՝ ինչ կասի նա մեզ։

Եվ դառնալով տիկնիկին, ես հարցն այսպես ձևակերպեցի.

— Լսի՛ր, «Կաշառակեր», որ դու չես հասկանում՝ ի՞նչ ասել է արդարություն, այդ մենք գիտենք։ Բայց եթե, օրինակ, քաղաքագլխի մոտ ճաշի հրավիրված ժամանակ խոսք բացվեր արդարության մասին, այն ժամանակ դու ևս, անտարակույս, կարո՞ղ էիր այնպես ձևացնել, որ, իբրև թե, միայն արդարությամբ է աշխարհը սիրելի։

«Կոլլեժսկի ասեսսորը» նայեց մեզ տարակուսանքով և մի քանի ակնթարթ ասես միտք էր անում, աշխատելով ըմբռնել։ Եվ հանկարծ սուր և ուրախաձայն բացականչեց.

— Պա՛պ-պա, պա՛պ-պա, պա՛պ-պա։

Նոր տիկնիկը՝ «Քաղցրամոլը» արտաքինից նույնքան բավարար էր, որչափ և «Կաշառակերը»։ «Քաղցրամոլը» անհայտ տարիքի «մարդ» էր, շպարած կեղծամով, ետևում հյուսած և քունքերին՝ խոպոպներ, տասնութերորդ դարի պճնամոլի հագուստով, ինչպես պատկերացնում են նրանց գավառական

հյուրանոցների պատերը զարդարող նկարներում։ Լիքը, կարմիր, ժպտուն դեմք, հյութեղ շրթունքներ, աչքերը՝ հածող։ Մի ձեռքով բռնել էր եռանկյունի գլխարկը, մյուսը՝ տարածել օդում այն ձևով, ասես օդային համբույր էր առաքում։ Նրա ետևը շիրմա էր դրած, որի վրա ոսկե տառերով գրված էր՝ «օթևան քաղցր ոգևորությանց». կողքերից դրված էին այլ շիրմաներ, մակագրությամբ՝ «մուտք գեղեցկուհյաց»։ Ընդհանրապես նկատելի էր այնպիսի պայմաններ ստեղծելու ձգտում, որն ամբողջապես մատնանշեր գործող անձի ամոթալի զբաղմունքի բնույթը։

— Նույնպե՞ս ծառայության մեջ է,— հարցրեցի ես։

— Ներեցեք, ճարմանդ[25] ունի։

Այդ նախնական բացատրությունից հետո «Քաղցրամոլը», տրված նշանի վրա, արագ-արագ շարժել սկսեց ազատ ձեռքը, մերթ սեղմելով կրծքին, մերթ մոտեցնելով շրթունքներին։ Եվ միաժամանակ, ասես ենթարկվելու ինչ-որ նրբին հոգեբանական դրդման, մեկ ոտքը բարձրացրեց։

— Կանացի սեռն է զգում,— բացատրեց Նիկանոր Սերգեիչը, մինչ «Քաղցրամոլն» ամբողջ ուժով մեկ բացականչում էր.

— Մա՛մ-չկա, մա՛մ-չկա, մա՛մ-չկա։

Կարծես ի պատասխան այդ կոչի՝ «գեղեցկուհյաց մուտքը» ծածկող վարագույրը շարժվեց։ Ես սպասում էի, որ ահա դուրս է գալու որևէ մի թեթևամիտ մարքիզուհի, բայց, ի զարմանս իմ, ներս եկավ մի... պառաված կին... Եվ ոչ թե մարքիզուհի, այլ քաղքենի, հնամաշ վերարկուով, գլխին թաշկինակ կապած և նույնիսկ, ըստ երևույթին, առաքինի։ Նրա դեմքը կնճռոտված էր, աչքերն արցունքաթոր, ծնոտը դողդողում էր, քիթը երկարատև հարբուխի նշաններ էր արտահայտում, բերանի մեջ ոչ մի ատամ չէր երևում։ Նա ձեռքին խնդրագիր ուներ պահած և անմիջապես ծունկ չոքեց «Քաղցրամոլի» առաջ, կարծեք արդարանալով, որ ոչինչ չունի, բացի անպտուղ հիշողություններից՝ իր առաքինի անցկացրած կյանքի մասին։

Սկզբում «Քաղցրամոլը» ասես չէր հավատում իր աչքերին, բայց հետո սոսկալի զայրացավ։

— Վղ՞զզ,— թշղաց նա զայրույթով, ոտները դոփելով և ամբողջ ուժով թափահարելով փոքրիկ գանգակը։

— Խենթացավ Իսկարիովտացին,— շշնջաց ինձ Իզուվերովը,— ըստ երևույթին մեծ կարեկցություն ունենալով դեպի պառավը։— Նա, ձերդ բարեծնություն, բարեգործականի հոգաբարձու է և անթիվ-անհամար կանայք են գալիս մոտը։ Եվ սրիկան երբեք հիվանդներին կամ գառամյալներին օգնություն ցույց չի տալիս։ Հենց թեկուզ այս պառավին վերցնենք։ Քանի տարի է արդեն խնդրում է իրեն անկելանոց վերցնեն՝ բայց օգուտ չի անում։

Մինչ Իզուվերովն իր զայրույթն էր արտահայտում, գանգակի ձայնի վրա վազ տալով եկավ սպասավորը, և գործող անձանց մեջ տեղի ունեցավ այսպես կոչված «կոմիկական» գործողություն։ «Քաղցրամոլի» բռունցքները սեղմած հարձակվեց սպասավորի վրա, սպասավորը՝ նույն գենքով՝ հարձակվեց պառավի վրա. պառավի գլխից պոկվեց գլխաշորը և պառավը, բարկացած, կսմթեց «Քաղցրամոլի» փափուկ տեղը։ Այն ժամանակ սպասավորը և «Քաղցրամոլը» վերջնականապես կատաղության հասան և սկսեցին հարվածել պառավին արդեն միացյալ ուժերով։ Մի խոսքով, ինչ-որ անբնական, անմիտ և տխուր բան ստացվեց, և ես նույնիսկ գոհ էի, երբ առաքինի պառավին, վերջապես, դուրս գցեցին։

— Վ՞զզզ...— մեղմ թշղաց «Քաղցրամոլը», հայելու առաջ իրեն կարգի բերելով և դժվարությամբ զսպելով հուզմունքը։

Կամաց-կամաց, սակայն, ամեն ինչ կարգի ընկավ. սպասավորը հեռացավ, իսկ «Քաղցրամոլը» խաղաղվելով, նախկին դիրքն ընդունեց և կրկին, որչափ ուժ ուներ, բացականչեց.

— Մա՛մ-չկա, մա՛մ-չկա, մա՛մ-չկա։

Այս անգամ վարագույրի ետևից դուրս եկավ մի երիտասարդ կին։ Բայց որովհետև գեղեցկության զգացումը Իզուվերովի մեջ առանձնապես զարգացած չէր, ապա ներս եկած «գեղեցկուհու» գեղեցկությունը մի տեսակ յուրահատուկ բնույթ ուներ։ Նրա և՛ դեմքը, և՛ մարմինը ճարպոտ էր, գույները ոչ այն է գունաթափվել էին, ոչ այն է կորել էին անլվայության և երկար քնած լինելու հետևանքով գոյացած թանձր

շերտի տակ։ Հագնված էր տասնութերորդ դարի մարքիզուհու ձևով, կարճ հագուստ՝ լուսամուտի հին վարագույրի կտորներից կարված, ֆիժմաներով և համարյա մինչև գոտին մերկ։ Ջնայած, սակայն, «գեղեցկուհու» անգրավչությանը, «Քաղցրամոլը»՝ նրան տեսնելով, նույնիսկ գլխարկը վայր գցեց ձեռքից՝ այնքա՞ն համապատասխան եղավ նա իր ճաշակին։

— Հնդուհավ,— շշնջաց ինձ Իզուվերովը։

Իրոք, կանգնելով «Քաղցրամոլի» դիմաց, «գեղեցկուհին» մի տեսակ ողբալի և ընդմիջումներով ծոր տվեց.

— Պը-լյա՞, պը-լյա՞, պը-լյա՞։

Ի պատասխան որի «Քաղցրամոլը» անհապաղ բացականչեց։

— Կո՛ւրլի-ուրլի-ուրլի։ Կո՛ւր-կուրլի։

Սկսվեց հրապուրման միմիկական գործողությունը։ Որչափ էլ որ հիմար էր թվում «Հնդուհավը», բայց և նա՝ անգամ հասկացավ, որ առանց նախնական խաղի, որ միջնորդությունը չի հարգվելու։ Իսկ դա այնպիսի մի միջնորդություն էր, որ պետությունից ռոճիկ ստացող մարդը չէր կարող մոռացումների մեջ չընկնել այդ առթիվ։ Այն է՝ պահանջվում էր, որպեսզի «Քաղցրամոլը»՝ մոռացության տալով պարտքն ու երդումը, միանար ներքին թշնամուն, իրեն ենթակա հիմնարկությունները գաղտնի պատսպարան դարձներ, ուր կարողանային թաքնվել անբարեհույս տարրերը և այնտեղից անպատիժ կերպով խռովություն սերմանեին։ Հասկանալի է, «Հնդուհավը» պետք է գործադրեր իր բոլոր հնարավոր թովչանքները, որպեսզի իր հանցագործ մտադրությունը հաղթանակեր։

Մենք, որ մեր կյանքում տեսել ենք անթիվ-անհամար ազատասեր պետական վարչությունների հրապարակ գալն ու նրանց անհայտանալը,— մենք այնքան արդեն բթացրել ենք մեր զգացողությունները, որ նույնիսկ դատարանական կամ զեմստվոյական դավադրությունը մեզ վրա անհրաժեշտ ազդեցությունը չի ունենում։ Բայց այն ժամանակ դավադրությունը դեռևս նորություն էր։

«Քաղցրամոլը», ըստ երևույթին, ինքն էլ լավ չէր ըմբռնում, թե իրոք վտանգն ինչումն է, այլ միայն անորոշ կերպով գիտակցում էր, որ այն քայլը, որը պետք է կատարի ինքը, կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ իր կարիերայի համար։ Եվ այդ նախազգացման ճնշման տակ, կամացուկ ցնցվում էր։

Գայթակղեցման տեսարանը շարունակվում էր։ «Հնդուհավը» աչքերն էր խաղացնում, իրանը թեքում, ազդրերն էր շորորում, իսկ «Քաղցրամոլը» շարունակում էր կանգնած մնալ, հուզված հայացքը նրան գամած և ցնցվում էր։ Ի՞նչ էր կատարվում այդ ժամանակ նրա հոգում։ Հասկացա՞վ վերջապես նա, սոսկա՞ց արդյոք հանցագործ անծանոթուհու հանդգնությունից, կամ թե պարզամտորեն մտածում էր՝ նախ մեկ-երկու ժամ հաճելի ժամանակ կանցկացնեմ, իսկ հետո սպասավորի հետ ոստիկանատուն կճանապարհեմ, հետագա տնօրինության...

Այսպես թե այնպես, տեսնելով այդ տատանումները, «Հնդուհավը» վճռեց դիմել ծայրահեղ միջոցի՝ ձեռքերով սկսեց շփել իր ազդրերը, միաժամանակ խոնջությամբ բացականչելով.

— Պ-լյա, պ-լյա, պ-լյա։

Այն ժամանակ «Քաղցրամոլն» այլևս չդիմացավ։ Մոռանալով պաշտոնի պարտականությունը, ամբողջովին քքրտինքի մեջ կորած, նետվեց դեպի գայթակղեցնողը և գրկեց նրա մեջքը... Խոստովանում եմ, ես խիստ շփոթվեցի։ «Քաղցրը ոգևորությանց օթևան»-ն այնքան մոտիկ էր գտնվում, որ ես մտածում էի, թե շուտով խայտառակություն է դուրս գալու, բայց Իզուվերովը հասկացավ իմ կասկածներն ու շտապեց հանգստացնել ինձ։

— Մի՛ անհանգստացեք, ձերդ բարեծնություն, անհարկի ոչինչ չի լինի,— ասաց նա այն րոպեին, երբ ըստ երևույթին, ոչինչ այլևս արգելք չէր կարող հանդիսանալ խռովության իրականացմանը։

Եվ իսկապես, որտեղից-որտեղ հանկարծ հայտնվեց... գյուղացին։ Դա նույն այն մարդն էր, որը մի քանի րոպե դրանից առաջ ներկայացել էր «Կաշառակերին»։ Բայց կարճ ժամանակամիջոցում նա ի՞նչ հարստության տեր էր դարձել։ Կրկին նույն կապույտ վերնազգեստն էր հագին, կար-

մյուր գոտիով, կրկին ծոցերում լիքն էին հավեր, բադեր, սագեր և այլն, իսկ գրպանից բառաչելով, պոզավոր գլուխն էր դուրս հանել կովը, կրկին նրա ոտքի փաթաթանները եռում էին կաթով ու յուղով, այսինքն՝ արծաթով ու ոսկով... Եվ նա նորի՛ց հանդավոր էր։

Նա ներս ընկավ ցնորվածի նման, ծունկ չոքեց ու մնաց անշարժ։

— Սխալվե՞լ է,— բացատրեց Իզուվերովը,— նա նորից պետք է «Կաշառակերին» ներկայանար, բայց հարկերը շփոթել է և «Քաղցրամոլի» մոտ է ընկել։

Ու պատմեց, ինչպես մեկ անգամ մի գյուղական քահանա՝ նահանգական քաղաք գնալով, արծաթագործի մոտ է տանում հին արծաթեղենը, աղջկա օժիտի համար նորոգել տալու, բայց նույնպես հարկերը շփոթում է և արծաթագործի փոխարեն, կոնսիստորիայի քարտուղարի մոտ է ընկնում։

— Եվ այդպիսով տուն վերադարձավ արդեն առանց արծաթի,— ավելացրեց Իզուվերովը։

Առաջին բոպեին և՛ «Քաղցրամոլը» և՛ «Հնդուհավը» ապուշ կտրեցին, ասես նոր հենց արթնացան։ Բայց իսկույն ևեթ երկուսով էլ թշշացին, հարձակվեցին գյուղացու վրա և սկսեցին հարվածներ տեղալ։ Աղմուկի վրա, պարզ է, վազեց սպասավորը և նույնպես սկսեց աջ ու ձախ հարվածել։ Կրկին բավական կոպիտ «կոմիկական» տեսարան տեղի ունեցավ, որի ընթացքում գործող անձերը մինչ այն աստիճան խառնվեցին, որ սկսեցին բռնցքահար անել նրան, ով ձեռքի տակ էր ընկնում։ Գյուղացուն, իհարկե, դուրս արեցին, բայց ընդհանուր տուրուդմփոցի մեջ, բարեբախտաբար, անհայտացավ նաև «Հնդուհավը»։

— Հույս ունեմ, որ նա այլևս չի գա,— դիմեցի ես Իզուվերովին։

— Կգա,— պատասխանեց նա,— բայց այն ժամանակ, երբ խռովության հարցը վերջնականապես կհասունանա։

«Քաղցրամոլը» մնաց միայնակ և հայելու առաջ մտախոհ սկսեց ուղղել թեթևակի դուրս ընկած ծնոտը։

Չնայած ծեծված լինելուն, նա, սակայն, չխաղաղվեց, և

հենց որ վնասված ծնոտը տեղն ընկավ, անմիջապես, և նույնիսկ առաջվանից ավելի սրտառուչ, բացականչեց.

— Մա՛մմ-չկա, մա՛մմ-չկա, մա՛մմ-չկա։

Դուրս թռավ բավական գեղեցկատեսիլ սուբրետուհի (նույնպես ըստ տասնութերորդ դարի պատկերի), համեստ ողջույն տվեց և «Քաղցրամոլին» մի գիրք մատուցելով, դիմաշարժով բացատրեց.

— Օրիորդը հրամայեց ողջունել և շնորհակալություն հայտնել. խնդրում է, չկա՞ արդյոք ուրիշ այդպիսի գիրք՝ կարդալու։

Ավա՜ղ, մեծագույն վշտով պիտի ասեմ, որ ուղարկված գրքի շապկի վրա գրված էր. «Բարկովի աշխատությունները։ Մոսկվա։ Համալսարանական տպարան։ Տպագրված Ոստիկանական Վարչության թույլտվությամբ»։

Ես այնպես շփոթվեցի այդ հայտնությունից, որ նույնիսկ ամաչեցի իմանալ օրիորդի ազգանունը։

Մինչ այդ «Քաղցրամոլը» բերած հատորը խնամքով դրեց սեղանին, մոտեցավ սուբրետուհուն և կսմթեց նրան։ Տեղի ունեցավ միմիկական տեսարան, որն իր արտահայտությամբ չէր զիջում այն տեսարաններին, որոնք կատարվում էին Մարիուսլոլ քաղաքի Պետիպայի թատրոնում։

— Ես դեռ ձեզանից ոչինչ չեմ տեսել,— ասաց սուբրետուհին,— իսկ դուք արդեն կսմթում եք։

Այն ժամանակ «Քաղցրամոլը» ըմբռնելով, որ իր դիմաց կանգնածը խոհեմ աղջիկ է, առանց ժամանակ կորցնելու, պահարանից հանեց մի տուփ օծանելիք և մի ֆունտ բոված կաղին և այդ բոլորը դրեց սուբրետուհու ոտքերի տակ։

— Իսկ եթե դու համաձայնես,— ավելացրեց նա մարմնաշարժությամբ,— այն ժամանակ իմ մնացյալ ողջ կարողությունն այսպես անհապաղ քո տրամադրության տակ կդնեմ։

«Սուբրետուհին» մտածմունքների մեջ ընկավ, որոշ ժամանակ նույնիսկ մատների վրա ինչ-որ հաշիվներ արեց և, վերջապես, ասաց.

— Եթե սրանց ավելացնես ևս հիսուն կոպեկ, այն ժամանակ կարող եմ համաձայնել։

Այդ ամբողջ խոսակցությունը տեղի ունեցավ չափազանց

արագ։ Եվ որովհետև պատճառ չկար ենթադրելու, որ վախճանը կարող է ուշանալ (ես տեսա, ինչպես «Քաղցրամոլն» արդեն սկսեց գրպաններում փնտրել՝ որոնելով պահանջված դրամը), ուստի ես սարսափով մտածում էի, որ այժմ արդեն խայտառակությունը, անտարակույս, անխուսափելի է։

Բայց զզվելի հեշտասերի ճակատին գրված էր, որ այդ օրը նա պետք է առանց «քաղցրություն» ճաշակելու մնա։ Այն իսկ ժամանակ, երբ նա արդեն տարածել էր դողդոջուն ձեռքերն իր ագահության նոր զոհին հափշտակելու, կողքի կուլիսների հետև աղմուկ լսվեց և բեմ թափվեցին մի խումբ կանայք։ Դրանք «Քաղցրամոլի» նախկին գայթակղեցրած կանայք էին։ Նրանք քսան հոգու չափ էին, բոլորը զանազան հագուստներով և բոլորն էլ ձեռքներին ունեին մի-մի նորածին մանկիկ։

— Պ-լյա՜, պ-լյա՜, պ-լյա՜,— բացականչեցին նրանք բոլորը միաժամանակ։

«Քաղցրամոլը» մի րոպե, ասես, շփոթվեց, բայց իսկույն ևեթ տիրապետեց իրեն և դառնալով մեր կողմը, հպարտությամբ ասաց, ցույց տալով նորածին մանուկներին.

— Ահա՛ իմ խնամատարական գործունեության արդյունքն անցած տարում։

Դրանով ներկայացումը վերջացավ։

Դրանից հետո Իզուվերովը ևս երկու «ներկայացում» տրվեց. մեկը կոչվում էր «Պատժված ամբարտավանը», մյուսը՝ «Անխոհեմ հնարագետը», կամ «Բարի եղիր, կանգ առ»։ Ես, սակայն, մանրամասնորեն չեմ նկարագրի այդ ներկայացումների սցենարիաները, այլ միայն համառոտ կանգ կառնեմ նրանց բովանդակության վրա։

«Պատժված ամբարտավանը» պիեսն սկսվեց նրանով, որ կոլոսեժսկի ասեսսորը երևաց երեք անվեհեր ձի լծած կառքով, ծայրահեղ արագությամբ սլանալով, մի քանի պտույտ արեց դազգահի վրա։ Հազիվ էր բեմ դուրս եկել, որ ամբողջ ուժով աղաղակեց. «Հո՜-հո՜-հո՜» և հայտարարեց, որ գնում է խաղաղեցնելու ու կառապանի մեջքին բռունցքով հարվածեց։ Հագել էր պաշտոնական վերարկու, փայլուն կոճակներով և նշանակիր գլխարկը գլխին։ Ձախ ձեռքում բռնել էր վարչական զանազան նկատառումներով թափված ատամներով լի մի տոպրակ, իսկ աջը պահել էր պատրաստ։ Ճնայած արագասլաց ընթացքին, նա ոչ մի րոպե չէր դադարում աղաղակել, հարվածելով կառապանի մեջքին, հանելով նրա ատամներն ու մազերը պոկելով։ Վերջապես մասնակի անդամախեղումը նրան, ըստ երևույթին, քիչ իրական թվաց և նա վրճռեց միանգամից վերջ տալ կառապանին։ Պոկեց նրա գլուխն ու նետեց թփերի մեջ։ Ազատություն զգալով, ձիերը կատաղի առաջ նետվեցին, և ես արդեն նախատեսում էի այն րոպեն, երբ կառքը և նրա փտած հեծյալը անխնայորեն ջարդուփշուր են լինելու։ Բայց, բարեբախտաբար, կայարանը մոտիկ էր։ Հպատակվելով բնազդին, ձիերը, մեխվածի նման կանգ առան կայարանի սյունի մոտ, և անմիջապես երեքն էլ սատկեցին։ Մինչ «Ամբարտավանը» վերջին կես վերստն էր սլանում, ես նկատեցի, որ կայարանի բակում ինչ-որ խիստ անհանգիստ շարժում է տեղի ունենում, բայց, երբ կառքը հասավ և հնչեց որոտընդոստ «հո-հո-հո-ն», ոչ ոք չարձագանքեց դրան։ «Ամբարտավանը»՝ գլուխը ետ գցած, քայլում էր ետ ու առաջ, ժամացույցը ձեռքում պահած և հաստատ համոզված էր, որ նոր կառքը շուտով կմատուցվի։ Բայց սահմանված րոպեն անցավ և ոչ մի շարժում նկատելի չեղավ։ Այն ժամանակ «Ամբարտավանը» զարմանքով չորս կողմը նայեց, և նրա աչքերի առջև հետևյալ տրտում պատկերը բացվեց....

Փոստակայանը միայնակ կանգնած էր անտառում, և ներսն ամեն ինչ, ասես, մեռած լիներ։ Ինչ-որ խորհրդավոր ձայներ էին լսվում բակից, որոնք և՛շշուկի էին նման և փընչոցի, և մեկ էլ լսելի էր, որ հեռվում, անտառային թավուտում, անտառի ոգիներն են ձայն տալիս միմյանց։ «Ամբարտավանը» շատ լավ էր հասկանում, որ այդտեղ հակահիշխանական գործողություն է թաքնված և անմիջապես ըսկըսեց որոնումները։ Իսկապես, չէր անցել մեկ րոպե, որ վզից բռնած թաքստոցից հանեց գրագրին և չորս կառապան։ Եվ դուրս հանելու հետ միաժամանակ զրկում էր նրանց կյանքից, նույնիսկ առանց հարցաքննության։ Իսկ երբ կյանքից զրկեց վերջին կառապանին, կրկին բացական-

չեց «հո՞-հո՞-հո՞», ենթադրելով, որ այժմ արդեն պատրաստի կառքը դուրս կգա։ Սակայն այդ կանչի վրա էլ ոչ ոք չհայտնվեց։ Այն ժամանակ՝ գայլությունից կատաղած, բռնեց աքաղաղին և գլուխը պոկեց, հետո՝ նկատելով վազող շանը, ետևից ընկավ և հասնելով, կտոր-կտոր արեց։ Բայց դա ևս չօգնեց։

Մինչ այդ բավական ժամանակ անցավ. խավարն իջավ երկրի վրա և անտառի խորքում երևաց քաղցած գայլերի ոհմակը։ Առաջին անգամ «Ամբարտավանի» գլխում ծագեց այն միտքը, որ եթե ինքն այդչափ շատ հոգ տարած չլիներ իշխանության առանձնաշնորհումները պաշտպանելու մասին, ապա, հավանորեն, այդ բոպեին հանգիստ շարունակելիս կլիներ իր ճանապարհը և, գուցե, տեղ հասած լիներ։ Իսկ գայլերը մինչ այդ, սպանվածների հոտն առնելով, ավելի ու ավելի էին մոտենում և, վերջապես, այնպիսի հոգեմաշ ոռնոց բարձրացրին, որ անգամ ագռավները, որոնք խնջույքի հույսով շարվել էին մոտակա սոճու վրա, ըմբռնեցին, որ հարցն արդեն պարզ է և կկոտցով թռան հեռու։

Խավարը թանձրանում էր, գայլերը ոռնում էին, անտառն սկսում էր աղմկել... Երկար ժամանակ քաջալերում էր իրեն «Ամբարտավանը», մտածում էր շարունակ, որ՝ «Չի կարող պատահել այդ», բայց, վերջապես, արտասվեց։ Արտասվեց երկար ու դառը, արտասվեց հուսահատ, ինչպես մի մարդ, որն անսպասելի կերպով հասկանում է, թե որչափ անագորույն, սատանայական անմտություն էր պարունակում իր մեջ կյանքից գրկվելու գործողությունը։ Եվ, արտասվելով, հիշեց հայրիկին, մայրիկին, եղբայրներին, քույրերին և դառնաղի գոչեց. «Ո՞ւր եք»։ Ապա՝ մտքով դարձավ իր իշխանավորներին և նույնպես ողբաց՝ «Ո՞ւր եք»։ Եվ արցունքների այդ հոգեվարքի մեջ պղծախոսում էր, ասելով՝ «Բայց չէ՞ որ կառավարել և ավերել միևնույն բանը չէ»։

Բայց այդ ժամանակ ինչ-որ մի սոսկալի բան կատարվեց։ Գայլերի ոհմակն այնքան մոտեցավ, որ ամբողջովին ծածկեց «Ամբարտավանին»։ Մի բոպե ևս — և կայարանի տան առաջ ընկած էր միայն գլխարկը՝ գլխանիշով...

«Անխոհեմ Հնարագետի» բովանդակությունը մի փոքր ավելի բարդ էր։

Մի ինչ-որ կոլլեժսկի ասեսսոր՝ իշխանություն ստանալով, հանկարծ, չգիտես ինչու, մտածեց, որ իզուր տեղը չէ, որ իրեն իշխանություն է տրված։ Բայց որովհետև նրան իշխանություն տվող պետերն այդ մասին նրան ոչինչ չբացատրեցին, ուստի նա ինքը սկսեց եզրակացություններ անել։ Մտածեց-մտածեց, վերջապես եզրակացրեց, որ իշխանություն տրվում է տգիտությունն արմատախիլ անելու համար։ «Արդեն հարյուր տարի է,— ասաց նա իրեն,— որ կոլլեժսկի ասեսսորներն արմատախիլ են անում ռուսական տգիտությունը, բայց, այնուամենայնիվ, արդյունք չկա։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, պարոնս, որ բոլոր կոլլեժսկի ասեսսորները հավասար ուժով չեն գործում։ Շատ կան նրանց մեջ կաշառակերներ, շնացողներ, ատամ փշրողներ, և շատ սակավ իսկական տգիտություն արմատախիլ անողներ։ Ասկրսում է իսկական արմատախիլ անողը արմատախիլ անել, իսկ տգիտությունը, տեսար, հիսուն կոպեկ փրկանք տալով, ազատվեց։ Այնինչ պետք է այնպես սեղմել տգիտությունը, որպեսզի շնչել չկարողանա, որպեսզի ուր էլ խցկվի, ամեն տեղ էլ մահ լինի նրա համար»։

Եվ հենց որ «Հնարագետը» որոշեց, թե ինչ խնդիր է դրված իր առաջ, անմիջապես նստեց սեղանի մոտ և այն ժամանակվանից այլևս վեր չի կենում այնտեղից։ Չի խմում, չի ուտում, չի քնում — շարունակ «անխոհեմ» հնարքներ է հնարում։

Առավոտից մինչև իրիկուն գրում է. բայց որովհետև ինքն էլ չի հասկանում ինչ է գրում, ուստի ամեն ինչ ստացվում է անկապ, խառնիխուռն։ Հանկարծ շատ խելք ունենալուց մեկ թվում է՝ Ռուսաստանում այն պատճառով է տգիտություն տիրում, որ համայնքը կապկում է գյուղացու ոտքն ու ձեռքը,— և ահա պատրաստ է նախագիծը.— վերացնել համայնքը։ Մեկ հանկարծ թվում է՝ այն պատճառով է տգիտությունը թագավորում, որ գյուղերում լավ ցեղական հովատակներ չկան,— անհապաղ ձեռք բերել այդպիսիք։ Կամ խելքին փչում է՝ ռուսական տգիտության իսկական

հիմունքը գինետներն են — անմիջապես որոշում՝ գինեմները փակել և դրանց փոխարեն ամեն տեղ կարկանդակի առևտուր սկսել։ Եվ վերջապես՝ որչա՞փ մենք լուսավորյալ կլինեինք, եթե գյուղացիները հաճարի փոխարեն լվածաղիկ ցանեին, բանջարանոցներում բողկի փոխարեն գազար ցանեին։ Եվ կրկին որոշում՝ հաղորդել ում հարկն է, և այլն։

Բայց ցավն այն է, որ տգիտությունը համառ է։ Բավական չէ ասել նրան՝ քեզ հեռացնելու նկատառումներով անհրաժեշտ է վերացնել համայնքը։ Հարկավոր է, բացի դրանից, նրան ընդունակ դարձնել՝ այդ ճշմարտությունն ըմբռնելու։ Այլապես, թերևս նա այն էլ չի ըմբռնի, թե ինչ հիմանվրա են իրեն տգիտություն անվանում և ինչու անպայման անհրաժեշտ է արմատախիլ անել։ Ինչպե՞ս անել հապա, որպեսզի տգիտությունն այդ բանն ըմբռնելու ընդունակ դառնա։ Մտածեց-մտածեց կոլլեժսկի ասեսորը և, վերջապես, թեպետև ցավ ի սիրտ, սակայն եկավ այն եզրակացության, որ ամենալավ միջոցը էկզեկուցիան է։ Իհարկե, խորհրդածում էր նա ինքն իրեն,— դա նույնն է, ինչ որ հնումն «ծեծ» էր կոչվում, սակայն մեկը մյուսին արժե — կա՛մ նաղ ու տուզ անել, կա՛մ իրագործել։ Ծեծ, ուրեմն ծեծ։

Եվ ահա, նստել է նա և առանց հոգնության զվարճացնում է իր անխոհեմությունը, իսկ ճանապարհին զինվորներն են փող փչում, պուրակում շրջանային պետերը ճիպոտներ են կտրում, իսկ գյուղում շինականն է աղաղակում՝ «Ձերդ բարեծնություն, էլ չեմ անի»։ Լսում է այդ աղաղակները «Հնարագետը», բայց միաժամանակ այնպես է ցույց տալիս, որ չի հասկանում։ Սակայն, վերջապես նա էլ է տեսնում, որ անհասկացող ձևանալ այլևս չի կարելի։ Թռչում է տեղից, ձեռքը սրտին է դնում և իրեն արդարացնելու համար ասում է. «Գիտեմ, սիրելիներս, որ դուք հիմի ցավ եք զգում, բայց հույս ունեմ, որ հետագայում ինքներդ կհասկանաք, թե ո՞րչափ օգտակար է սա ձեզ համար»։

Եվ ամենից սարսափելին այն է, որ նա ոչ միայն անկաշառելի է, այլև անհողդողդ։ Քանի անգամ գյուղացիներն ամբողջ համայնքով մոտն էին գնացել, նվերներ էին տարել, ծնկաչոք աղերսել էին — չի ունկնդրում և չի ընդու-

նում։ «Հիմարներ,— ասում է,— կընտելանաք ու կսիրեք, իսկ վերջն ինձանից շնորհակալ կլինեք»։

Եվ այդպես, մինչև այժմ գործը շարունակվում է ճախարակի նման պտտվել։ Նա անխոհեմ հնարքներ է հնարում, իսկ նրանք աղաղակում են. «Ձերդ բարեծնություն, այլևս չենք անի»։ Լվածաղիկը ցանեցին, բայց լվերն առաջվանից ավելի են նեղացնում. ցեղական հովատակների մասին անընդհատ գրեցին, բայց իշխանությունը սխալմամբ ցեղական խոզեր ուղարկեց. գինետները փակեցին — օղենենգները բազմացան։

Միայն համայնքն է մինչև այժմ անձեռնմխելի մնացել. ըստ երևույթին, ինքն աստված է հովանի նրան։

Բոլոր «պաշտոնյաները» ցույց տվեց։ Այդ չորս տիպն էր միայն հնարել Իզուվերովը, գուցեև, իսկապես, միայն դրանք գոյություն ունեին այն պարզ ժամանակներում։ Ես, սակայն, շատ ուրախ էի դրա համար։ Չնայած այն բանին, որ իմ այցելությունը երկու ժամից ավելի չէր տևել, բայց ես ծայրահեղ հոգնածություն էի զգում։ Եվ ոչ միայն ֆիզիկական, այլև բարոյական։ Կարծեք թե լպիրշության զգացումը, որի մասին խոսեցի վերևում, կամաց-կամաց սողաց նաև իմ ներսը և ամեն ինչ իմ ներսում մնջացավ ու քամվեց։

Ես իմ կյանքում շատ կենդանի տիկնիկներ եմ տեսել և շատ լավ եմ հասկանում, ինչ թույն են մտցնում նրանք մարդկային գոյության մեջ։ Բայց այս անգամ մնջության զգացումն այնպիսի ճնշիչ տպավորություն գործեց ինձ վրա, որ ես պատրաստ էի տոկալ կենդանի տիկնիկների անթիվ բազմության ներկայությունը, միայն թե կարողանայի հեռանալ «մարդուկների» աշխարհից։ Նույնիսկ տիկին Ստրոպտիվցևան, որն այդ ժամանակ փողոցով տուն էր վերադառնում, նույնիսկ նա «խելոք» թվաց ինձ։

Ինձ թվում է, այդ ճնշվածության զգացման գաղտնիքը կայանում է նրանում, որ կենդանի տիկնիկներին մենք հանդիպում ենք բազմազան կապակցություններում, որոնք թույլ չեն տալիս նրանց մնալու մշտապես ամբողջական, հավատարիմ իրենց տիկնիկային բնույթին։ Եվ դրանից բացի,

նրանք ապրում են, թեպետև աղքատիկ, սակայն և այնպես կենդանի կյանքով, ուր կան մի քանի, մարդկային ցեղին ընդհանուր բնազդներ և տենչեր։ Մի խոսքով, մասնակցություն են ունենում կենսական ընդհանուր դրամայում։ Մինչդեռ փայտե մարդուկները պատկերանում են մեզ մի տեսակ ստահակաբար կենտրոնացած, բթության աստիճանի հետևողական և միանգամայն մեկուսացած որևէ բարդություններից, որպիսիք առաջանում են կենդանի բնազդի գոյության դեպքում։ Մասնակցելով ընդհանուր կենսական դրամայում, ուրիշ տիկնիկների հետ խառը, կենդանի տիկնիկը հենց այն պատճառով այդչափ հարստահարիչ ազդեցություն չի ունենում, որ նրա անհրեսությունը մասամբ մեղմանում է կենսական զանազան անակնկալություններով։ Փայտե մարդուկներն այդ դիմադրությանն էլ չեն հանդիպում։ Նրանք միայն մեկ լար ունեն, բայց այդ լարին խփում են նրանք անարգել և կանոնավոր միապաղաղությամբ, որը մտածող դիտողին հուսահատության է հասցնում։

Ճշմարիտ է, Իզուվերովը պնդում է, որ նրա «մարդուկներին» հեշտությամբ կարելի է զսպել, մինչդեռ կենդանի տիկնիկն ինքը, իբրև, կարող է հոգի հանել և հարկադրել՝ անիծելու քո ծնված ժամը։ Ասենք, այդ այդպես է, բայց այդ դեպքում արժե՞ հետաքրքրվել այդ մարդուկներով, արժե՞ արդյոք նրանց վրա կյանք վատնել։ Եվ իրավացի չէ՞ եղել արդյոք եկեղեցու սարկավագը, որը կշտամբել է Իզուվերովին, թե՝ «Կենդանի մարդուկների ձեռքից դադար չկա աշխարհում, իսկ դու դեռ փայտե մարդուկներ ես բազմացնում»։

Բայց, բացի դրանից, գործի խորքը լավ թափանցելու դեպքում, Իզուվերովն անիրավացի կլինի նաև մեկ այլ բանում։ Նա չափից ավելի արհամարհական և բարձրից արտահայտվեց Պետերբուրգից ուղարկած «Նորապսակի» մասին, չափից ավելի շտապեց՝ նրան «դատարկ» տիկնիկ անվանելու։ Նախ և առաջ, այդպիսի տիկնիկ պատրաստելու համար մտորելու, հնարելու, իրեն հանճար ենթադրելու հարց չկա, այլ բավական է որոշ վարժություն — ձեռքի տակ բավարար քանակով լաթեր և փայլուն կաշի ունենալ և կարողանալ ճաշակով կարգավորել արտաքին զարդարանքները։ Իսկ երկրորդ, որպես «Նորապսակ», այդ տիկնիկից լավը չես ուզենա։ Իզուվերովը հարցնում է. «Ինչի՞ համար և ո՞ր աստիճանի»։ Տարօրինակ հարցեր են։ Ամեն ինչի և ամեն աստիճանի—ահա բոլորը։

Բնությունը բարեհաճ է, մարդիկ՝ չար։ Բնությունը թույլ չի տալիս խիստ հետևողական ներքին դատարկություն, իսկ մարդիկ, ընդհակառակը, շատ մեծ հաճույքամբ են պնդում այդ հետևողականության վրա։ Եթե բնությունը ցանկանար մինչև վերջն անգութ լինել, նա կենդանի մարդուկներին շնորհած կլիներ դրդումների և շարժումների նույն այն ապուշ համառությունը, որպիսին շնորհում է Իզուվերովն իր փայտե մարդուկներին։ Ահա այն ժամանակ կլիներ սարսափելի, սարսափելի, սարսափելի, այդ բառի կատարյալ իմաստով։ Տիկնիկին ոչ կարելի է զսպել, ոչ նրանից խուսափել։ Նստիր և ամեն ակնթարթ զգա, ինչպես է նա հոգիդ հանում։ Եվ մի շարժվիր, որովհետև յուրաքանչյուր բողոք, ամեն մի շարժում առաջ է բերում նոր վայրագություն, նոր անտանելի ցավ։

Բայց գուցե կյանքն ինքն է այդպիսի մարդուկներ ստեղծում։ Գուցե այն անթիվ հարկադրական շրջաններում, որոնք ամեն կողմից հսկում են մարդուն, ամենևին հազվագյուտ չեն այն ցնցող «տիկնիկային կոմեդիաները», ուր կենդանի տիկնիկը կրնկակոխ է անում կենդանի մարդուն։ Գուցե Իզուվերովն ամենևին ջյուտարար չէ, այլ միայն գունատ պատճենահանն այն բանի, ինչ որ վաղուց արդեն հնարված է կյանքում։

Ո՞վ կարող է իր վրա համարձակություն վերցնել՝ պնդելու, որ այդ այդպես չէ։ Եվ ո՞վ համաձայն չի լինի, որ բոլոր գաղտնիքներից, որոնց հայտնաբերելն ամենից ավելի է հետաքրքրում մարդկային գոյությանը, «տիկնիկների գաղտնիքն» ամենից էականը, ամենից հափշտակիչը չէ։

ՍԱՐՅԱԿԻ ՎԻՇՏԸ

Դեղձանիկին ամուսնացրին Սարյակի հետ և հոյակապ հարսանիք սարքեցին։ «Զվարճություն և Գործ» խանութում

նոր եկեղեցի գնեցին, պաստորի պաշտոնը ուսյալ եղնակը կատարեց, Տարմահավերը գովաբանական երգեր երգեցին, իսկ կարգը պահպանելու համար ոստիկանապետը մանրիկ բազեների մի վաշտ ուղարկեց։ Համարյա ամբողջ անտառի թռչունները հավաքվեցին նորապսակներին նայելու։ Քիչ չէր նաև պատվավոր հյուրերի թիվը։ Սարյակի խաչեղբայրը Սերինոսն էր, Դեղձանիկինը՝ Սոխակը։ Ինքը Բազեն առաջարկում էր հարսնացուի հարսնահայրը դառնալ, բայց ծնողները, պատշաճ պատճառաբանությամբ, հրաժարվեցին այդ պատվից և հրավիրեցին խուլ Փայտմորեկին, այն Փայտմորեկին, որը, դեռ Նոյի տարին ի պատիվ իր զառամյալ տարիքի և հիշողությունը կորցնելու, սենատի անդամ էր նշանակվել։

Ե՛վ նորապսակները, և՛ ծնողները, և՛ հարսանիքավորները —բոլորն էլ ուրախ տրամադրության մեջ էին։ Սարյակը հպարտ էր և հաճույքի երջանկությունն էր կանխավայելում, Դեղձանիկը կտուցով փետուրներ էր հարդարում, ծնողները մտածում էին. «Փա՜ռք աստծո, աղջիկներից մեկին սաղացրինք», իսկ հարսանիքավորները երազում էին կանեփի կույտերի, թթու դրած մոծակների, շաքարած ճանճերի մասին, որ ոչնչացնելու էին հետո, երբ գնային Սարյակի նորտունը շնորհավորելու։ Միայն չարագուշակ Ագռավն էր անմտորեն կռկռում. «Այս ամուսնությունը հաջող չի՛ լինի, չի՛ լինի, չի՛ լինի»։

Թեպետ Ագռավը համբավ է վայելում մարդկանց մոտ, սակայն թռչունները շատ լավ գիտեն, որ երբ Ագռավը կռկռում է, նշանակում է, դրա համար նա պատճառ ունի։ Եվ իսկապես, հազիվ էր հնչել Ագռավի կռկռոցը, որ Կկուն առաջինը կանչեց. «կո՜ւ-կո՜ւ, չլինի՞ հանկարծ Ագռավի գուշակությունը կատարվի»։ Իսկ նրան, նույն իմաստով հետևեցին Երաշտահավը, Կարմրատուտը, Ցախսարեկը...

Ու բոլորն սկսեցին ուշադիր զննել նորապսակներին, սկսեցին վերհիշել։ Քրքրեցին նոր միայն անխզելի կապերով միմյանց հետ կապված այդ երկու արարածների անձնական պատմությունը, հիշեցին նրանց հակումները, ճաշակները,

սովորությունները։ Եվ, ինչպես լինում է միշտ, մի ամբողջ պատկեր ստացվեց։

Սարյակը պարզասիրտ և բարի թռչուն էր, ուներ երեք բնորոշ առանձնահատկություն՝ չափավորություն, ճշտապահություն և տնարարություն։ Բացի դրանից, նա այնքան էլ երիտասարդ չէր, թեպետև նա չէր կորցնում իր հույսը, որ հարկ եղած դեպքում կարող է պաշտպանել իր պատիվը։ Նա իր ամբողջ կյանքում ծառայել էր համբարակային վարչությունում, հասել էր մայորական աստիճանի և հենց այնտեղ էլ կազմակերպել էր իր խելքն ու սիրտը։ Կաշառք չէր վերցնում (թալանի թագավորությունն անցել էր), այնուամենայնիվ, անկողմնակալ գործունեությամբ կարողացել էր դրամագլուխ ունենալ։ Մեկ անգամ, պատահաբար նրան հաջողվեց մեծ քանակությամբ դեղձանիկների ուտելիք կորեկ ձեռք բերել և ահա այդ իսկ ժամանակ միտք ծագեց նրա գլխում. «Կամուսնանամ Դեղձանիկի հետ և կնոջս ու երեխաներիս կորեկով կկերակրեմ»։ Հորից և մորից զրկվել էր դեռ նոր թև առած ժամանակ, ոչ մի ժառանգություն չէր ստացել, ուստի սիրով հպարտանում էր, որ հասարակության մեջ իր գրաված նշանավոր դիրքի համար միմիայն իրեն է պարտական։ Նույնիսկ փոքրիկ դույլով ջուր կրելը ինքն իրեն էր սովորել։

Այսպես էր նորապսակի մտավոր և բարոյական դեմքը։ Համակրանքի ուրույն պատճառներ նա, իհարկե, չուներ, բայց օրինականության տեսակետից նա այնպիսի քաղաքացի էր, որից լավը հարկավոր չէր։

Նրա արտաքինում նմանապես առանձին հրապուրիչ կամ փայլուն բան չէր նկատվում, ընդհակառակը, նրա ողջ կերպարանքը զարմանք էր պատճառում իր անտարակույս սովորական և միջակ տեսքով։ Նույնիսկ ճնճղուկները ծիծաղում էին, երբ նա, կամենալով որևէ աղջկա հաճոյախոսություն անել, ցնցում էր նշանազգեստի քղանցքները և աչքերը շեղում։ Հաճոյախոսություններն էլ տափակ էին դուրս գալիս. կամ համբարակային անեկդոտներ էր պատմում, կամ պարծենում էր, որ որչափ էլ էժան է պահանջում նրանից կառապանը, ինքը, այնուամենայնիվ, միշտ հինգ կոպեկ

պակաս է վճարում. իսկ եթե ժամանակ է ունենում, նույնիսկ ոտքով է գնում։

— Եվ ահա, փառք աստծո,— վերջացնում էր նա սովորաբար,— ոչ միայն կարող եմ ինձ կերակրել, այլև կարող եմ ընտանիք պահել։

Նման խոսքերը ծնողներին շատ էին դուր գալիս, և նրանք այնպես եռանդով էին աշխատում որսալ նրան իրենց ցանցում, որ մեկ անգամ քիչ էր մնացել բոլորովին խեղդեին։ Բայց նրանց որիորդները նրան «համբարակային խոլերա» էին անվանում և նրա երեսին պես ակնթարթապես թոչում-ցրվում էին, թեպետև մայրերը հրամայում էին նրանց՝ «restez!»[26]։ Եվ նա ոչ միայն չէր վիրավորվում աղջիկների այդպիսի արարքներից, այլև նույնիսկ հանգստացնում էր նրանց ծնողներին, ասելով.

— Ոչինչ, ես սովոր եմ։ Դա կուսական ամոթխածության արդյունք է։ Երբ ես ծառայում էի համբարակային վարչության մեջ, այնտեղ մի խաղատնիկ կար։ Այնքան լավիկն էր, որ ամեն ինչ կարելի էր տալ, դեռ քիչ էր։ Նույնպես ըսկրզբում շարունակ ծիծաղում էր վրաս։ Ես նրան ասում էի. «ծան։ թանանք, օրիորդ», իսկ նա թե՝ «ա՜խ ոչ, դուք զզվելի եք»։ Մի խոսքով, ես ընկնում եմ նրա ետևից, իսկ նա փախչում է ինձանից։ Այս կողմ, այն կողմ... հասա։ Եվ ի՜նչ։ Վերջը նույնիսկ սկսեց գովաբանել։

— Այ՜ թե ինչպիսին եք դուք, Իվան Իվանովիչ,— կատակում էին ծնողները,— ով է իմանում ապօրինի զավակներ էլ ունեք։

— Ճշգրիտ ասել չեմ կարող, բայց երաշխավորել չեմ համարձակվում։ Բնական թուլությունն իր ժամանակին ամբողջությամբ գործադրել եմ։ Այդ մասին ես, ընդհանրապես, այն կարծիքին եմ, որ պետք չէ չափազանցություն թույլ տալ, բայց հարաբերաբար ինչո՞ւ պետք է իրեն զրկել բավականությունից։ Ես նույնիսկ օղուց չեմ հրաժարվում, խմում եմ, սակայն ոչ այնչափ, որ ինքս ինձ կորցնեմ, այլ այնքան, ինչպես ասված է երգում՝ «այդ պատճառով»...

Վերջին ժամանակ նա ծառայությունը թողել էր... «Կուշտ եմ»։ Նրա քմահաճույքները մեծ չէին, բայց այդ, կապիտալը, որ աստված ուղարկել էր նրան ծառայության միջոցին, ամուր էր բռնել։ Հետևաբար, պետական տոկոսները միայն բավական էին նրան, իսկ եթե նա իր կապիտալը գրավականով պարտ տալու լիներ, այդ դեպքում չէր իմանա ինչ անել փողերը։

— Հագուստս ձրի է, աստվածատուր,— ասում էր նա,— ուտում եմ նույնպես ոչ թե փողով գնածը, այլ աստծուց շընորհածը, իսկ եթե կամենամ բավականություն պատճառել ինձ, այդ էլ թանկ չարժե. երգ է, կերգեմ ու վերջացավ։ Հետևապես, քանի դեռևս աշխարհիս երեսին ճանճեր, սարդեր, որդեր և նման ուտելիք կա, և քանի դեռ ուժ ունեմ որսալու, ապահովված եմ։ Իսկ եթե ուժերս ինձ դավաճանեն, այդ դեպքում, ուրեմն, ժամանակ է մեռնելու։ Մյուս թռչունների հետ էլ միշտ այդպես է լինում, ի՜նչ կա որ։

Բայց եթե պաշտոնավարելիս անգամ նա ուրիշ ոչ մի բանի մասին այնպիսի բավականությամբ չէր մտածում, ինչպես ընտանեկան օջախի, ինքնաեռի, խալաթի, երկտեղ մահճակալի և ընտանեկան երջանկության այլ իդեալների մասին, որոնք մշակվել էին համբարակային վարչությունում («ինչ է ներկայացնում իրենից առանց ընտանիքի Սարյակը,— մտածում էր նա,— բժշկական տերմին և ուրիշ ոչինչ»), ապա պաշտոնից հրաժարվելուց հետո այդ միտքն սկսեց նրան օրեցօր ավելի ու ավելի ճնշել։ Եվ ահա, աչք դնելով դեղին Դեկաբանիկին, հագավ համազգեստը, կապեց խթանները (այդ բոլորը նա, պաշտոնը թողնելիս, ստացել էր «որպես հատուցում») և գնաց իր հավանած հարսնացուի ծնողների մոտ նրա ձեռքը խնդրելու։

Իր կյանքում առաջին անգամ հիացմունքը տիրեց նրա սրտին։ Առաջին անգամ կյանքում երգեց «Սալահատակ փողոցով» երգը — և չկեղծեց։ Կիրքը դեպի գեղեցկուհի Դեղձանիկն այն աստիճան տիրապետեց նրան, որ նա, հակառակ իր սովորական շրջահայեցողության, արհամարհեց նույնիսկ տեղեկանալ, ո՞վ է արդյոք իր հարսնացուն, և որևէ օժիտ ունի՞ արդյոք։

Իսկ դա, թերևս, ավելորդ չէր, որովհետև հարսնացուն աշխարհիկ և ուսյալ օրիորդ էր։ Սիրում էր կոտրատվել, զուգ-

վել-զարդարվել, երգում էր «Si vous n'avez rien à me dire»[27], երգեհոնի վրա «Le Ruisseau»[28] էր նվագում և տխրում էր, եթե իր շուրջն ասպետներ չէին լինում։ Գուցեև նա բարի էր, սակայն այդ մասին մտածելու ժամանակ չուներ։ Մերթ նոր տարազներ էին բերում խանութից, մերթ յունկերներն էին եղբոր մոտ հյուր գալիս։ Այդպես, գործի մեջ, իր բարի լինելը չէր էլ նկատում։

— Օրիորդ, կարելի՞ է ձեր ոտքիկը համբուրել,— հեռապնդում էին նրան յունկերները։

— Ա՜խ, դուք ինչպիսի...դե, համբուրեցե՞ք։

Ուրիշ ոչինչ։

Նրա ծնողներն էլ բարձրաշխարհիկ էին և նույնպես առանց հյուրերի տխրում էին։ Հայրիկը դեղձանիկյան նահանգում հինգ եռամյակ պարագլուխ էր եղել, չորս ժառանգություն էր վատնել, մեկ տարի առաջ վերջին հողային տոկոսաբեր թղթերն էր ծախսել և այժմ ապրում էր ֆինանսական գործարքներով և այն աստիճան հմտացել էր, որ կառապաններից միջանցուկ դարպասներով էր խույս տալիս։ Ինչ վերաբերում է մայրիկին, ապա նա երիտասարդ ժամանակ ինչպես Դեղձանիկ եղել էր, այդպես Դեղձանիկ էլ մնացել էր նաև ծերության օրերին։ Զողից-ձող էր թռչկոտում, նայում էր, արդյոք ասպետներ չե՞ն երևում, գոհունակությամբ հիշում էր, ինչպես պարագլխի կին եղած ժամանակ կարկանդակներ էր ուտում, իսկ Սիրամարգ նահանգապետը, նրան տեսնելիս, պոչն էր բաց անում։ Նույն այդ ոգով էլ նա իր ավագ դստերն էր դաստիարակել։

— Ես իմ աղջկան բարձրագույն կուրսեր չեմ ուղարկում,— ասաց նա Սարյակին, երբ սա աղջկա ձեռքը խընդրեց,— իմ կարծիքով բավական է, որ աղջիկը ֆրանսերեն իմանա, ձողից-ձող թռչկոտա, հագնվի դեմքին սազական, հյուրերին զբաղեցնի,— ահա այն ամենը, ինչ հարկավոր է կնոջ երջանկության համար։

— Եվ լավ եք արել, տիրուհի, որ ձեր օրիորդին աստվածային երկյուղածությամբ եք դաստիարակել,— համաձայնեց Սարյակը։— Տղամարդուն, հիրավի, անհրաժեշտ է աշխարհագրություն իմանալ, որովհետև, մեկ էլ տեսար, իշխանավորը հրամայում է թռչել, իսկ ո՞ւր — հայտնի չէ։ Իսկ օրիորդին յուրաքանչյուր ասպետ ուրախությամբ է ուղեկցում։ Միայն հարկավոր է չմոլորվել։

— Ա՜խ, ոչ, այդ կողմից կարող եք հանգիստ լինել, մայր։ Իմ աղջիկն այնչափ խելացի աղջիկ է, որ եթե նույնիսկ ուլանի հետ թավ անտառն ընկնի, այն ժամանակ էլ մազաչափ անգամ չի վնասվի։

— Տա՛ աստված։

Բացի այս երեք անձնավորություններից, ընտանիքում կային նաև կրտսեր դուստրը և երկու որդիները։ Կրտսեր քույրն ավելի շատ ճայեկի էր նման, քան դեղձանիկի (այդ պատճառով էլ նրան հենց ճայեկ անունով էլ կանչում էին իսկ ավագ քրոջը Պրոզերպինոչկա էին կանչում), այդ պատճառով էլ տնեցիները նրա վրա նայում էին որպես Սանդրիլիոնի[29]։ Բայց նա բարի, ընտանիքին անձնվեր և առույգ աղջիկ էր, և չնայած այն հանգամանքին, որ նրան աղախնի նման զուրկ էին պահում և յուրաքանչյուր պատճառի համար կըշտամբում, նա, այնուամենայնիվ, ջերմագին սիրում էր և՛ ծնողներին, և՛ քրոջը, և՛ եղբայրներին։ Մի բանի մասին էր միայն ծածուկ արտասվում, որ տան հոգսերը թույլ չէին տալիս բարձրագույն կուրսեր հաճախել։ Ինչ վերաբերում է եղբայրներին, ապա մեծը յունկեր էր ուլանական գնդում և ոչ մի կերպ չէր կարողանում քննություն տալ կրոնից, իսկ կրտսերը գիմնազիա էր հաճախում և չէր կարողանում հասկանալ, թե իշխանավորների ինչին է հարկավոր, որ ինքը հունական լեզուն գիտենա։

— Ախր իմ ինչի՞ն է հարկավոր, մայրիկ ջան, այդ անճոռնի լեզուն,— գանգատվում էր նա մորը։— Լատիներենն էլի հասկանալի է։ «Mons, parturiens mus»... mus, muris... mons, montis... parturio, parturire, parturire [30]... ասենք։ Դեղագիր գրել, առաջնորդող հոդվածում մեջբերում անել — պատրաստ է։ Բայց հունարեն... ինչի՞ս է պետք, հարց եմ տալիս ձեզ, հունարեն լեզուն։

— Գուցե վարքի համար է,— կռահեց մայրը։

— Ա՜խ, մայրիկ ջան։

Ամբողջ օրն այդ տանն իրարանցում և հյուրասիրություն

էր, ամբողջ օրը հյուրեր էին գալիս ու գնում։ Շտուդից դյուղ են ցատկում, երգեհոն են նվագում, երգեր են երգում։ Կորեկը, օշինդրի սերմերը, կաթի մեջ թրջած հացը, հարած ձվի դեղնուցը երբեք չէր պակասում, մինչդեռ կես տարի է մանրավաճառի պարտքը չէր վճարված։ Շուտ ու մուտ է գալիս ծեր Դեղձանիկը՝ թավայի մեջ տապակվող ձկան նման, միտք է անում, ինչպես փող գտնի։ Ամեն առավոտ արած գործն այն է, որ թռչում է բարեկամների մոտ, մեկին ասում է, որ հորաքույրն այս օրերս մեռել է և փող է հարկավոր՝ ժառանգությունը ստանալու համար, մյուսին ասում է, որ իր կալվածքում քարածուխ է հայտնաբերվել, բայց առանց կապիտալի մշակել հնարավոր չէ, երրորդին ուղղակի հայտարարում է, որ փողի խիստ կարիք ունի։ Իսկ երբեմն մոտենում է յունկեր հյուրերից մեկին և ասում. «Երիտասարդ, արդյոք մի տասը կոպեկ չունեք, վաղը շնորհակալությամբ կվերադարձնեմ»։ Եվ տալիս էին։ Բայց և քեֆ-ուրախություն էին անում։ Թռչում-հավաքվում են ուլան-յունկերները, Պրոզերպինոչկային սեղմում են անկյունն ու բեղերն են ոլորում։ Իսկ խեղճ Ճայեկը տեսնում է, ինչ վտանգի է ենթարկվում քույրն ու աղի արցունք է թափում։

Այսպես էր այն ընտանիքը, ուր նպատակ դրեց մտնել Սարյակը։ Բոլոր հարևանները գիտեին, որ ծեր Դեղձանիկը մինչև վերջին թելը սնանկացել է, որ տիկին Դեղձանիկին վերջին օրերը տեսել էին վաշխառու Կեռնեխի հետ թփերի մեջ քշփշալիս, որ ինքը Պրոզերպինոչկան, երգեցողության դասերի անվան տակ, Սոխակի մոտ է թռչել, և ապա, իբրև թե անբեղմնավոր ձու է ածել... Բայց Սարյակը կարծես կուրացել էր և խլացել։ Մնողների համաձայնությունն ստանալով, նա խանդավառությամբ թռչում էր ծառից-ծառ, տեսնելու, ինչպես իր գեղեցկուհի հարսնացուն լողանում է տաշտակում, և եթե կարողանում էր տեսնել, երգում էր։ Երգում էր կեղծ և ամբողջ ուժով, բայց ավա՜ղ, դա նրա միակ մատչելի միջոցն էր գոհունակություն հայտնելու արարչին՝ իրեն այս կյանքում արած շնորհի համար։

— Զգում եմ և գիտեմ,— երգում էր նա,— որ արժանի

լեմ ես այս ողորմածությանը, սակայն կաշխատեմ արժանի լինել ապագայում։

Սակայն, ի պատիվ Պրոզերպինոչկայի, պիտի ասել, որ նա նշանված լինելով հանդերձ, ամենևին չէր թաքցնում Սարյակից, որ անտարբեր է դեպի նա։ Երբ ծնողներն հայտարարեցին նրան, որ մայորը պատիվ է արել նրան, և որ իրենք նախապես արդեն համաձայնություն են տվել, նա բարձրաձայն ծիծաղեց և ասաց։

— Ա՜խ, maman[31], մի տեսեք, ինչ ծիծաղելին է նա։

Եվ հետո, երբ ծնողները դիտավորյալ մենակ թողեցին նրանց, որպեսզի նրանք մոտիկից ճանաչեն միմյանց, նրանց մեջ հաճոյական խոսքերի փոխարեն, բավական անկեղծ խոսակցություն սկսվեց։

— Դուք ժլա՞տ եք,— հարցրեց նրան Պրոզերպինոչկան։

— Ես ժլատ չեմ, այլ խնայող եմ,— պատասխանեց Սարյակը։— Ես այնպես եմ կարծում, որ կարիք չկա՝ զուր տեղը փողը շաղ տալու, երբ կարելի է սեփական միջոցներով կառավարվել։ Բայց ձեզ համար, որպեսզի ձեզ բավականություն պատճառած լինեմ, ես նույնիսկ պատրաստ եմ իմ խնայողասիրությունից հրաժարվել։

Այս ասելով, մայորը սիրալիր պատվի առավ, բայց ավա՜ղ, այդ վարմունքը ոչ միայն ներգործություն չունեցավ Պրոզերպինոչկայի վրա, այլ ընդհակառակը, նոր քրքիջ առաջ բերեց։

— Ա՜խ, որչափ ծիծաղելի եք պատվի առնում։ Մե՛կ էլ, մե՛կ էլ... ահա այդպես։ Հա՜-հա՜։ Տանը դուք ի՞նչ եք ուտում. երևի զզվելի բաներ։

— Ինքս ուտում եմ աստծուց շնորհած բաները։ Հասարակ, բայց առողջարար։ Իսկ ձեզ կորեկ կտամ՝ ուտեք։

— Ա՜խ ոչ, ես ամենից շատ սալաթ եմ սիրում։

— Սալաթ գտնելը դժվար գործ չէ։ Առավոտյան բանջարանոց կթռչեմ և կքաղեմ գաղտագողի։ Ուրիշին դա կարող է մեծ փող արժենալ, իսկ ես ձեզ համար նույնիսկ ձրիաբար կգտնեմ։

— Իսկ ի՞նչ նվեր կտաք դուք ինձ։ Մոտ ժամանակներս

Փարիզից նոր ֆասոնի մանժետներ են ուղարկել... Կնվիրե՞ք, այո՞։

— Մեծավ բավականությամբ։ Այսօր իսկ Սարդին կըպատվիրեմ, որպեսզի վաղը լույսը նոր բացված, պատրաստ լինի։

— Բայց չէ՞ որ այդպիսի մանժետները թանկ արժեն...

— Մի հաճեք անհանգստանալ։ Սարդը, երբ փողը ստանալու գա, ես նրան կուտեմ։ Եվ այդպիսով մենք քվիթ կլինենք։

— Հա՜-հա՜, ինչ ծիծաղելին եք։

Այդպես էլ շարունակվեց նրանց մեջ. չեղավ մեկ անգամ, որպեսզի փեսացուին «սիրելիս» կամ «հոգյակս» ասեր, այլ շարունակ՝ «ծիծաղելի եք» և ուրիշ ոչինչ։ Եվ քանի գնում, հարսնացուն այնչափ ավելի ու ավելի համարձակ էր դառնում։ Փեսացուով համարյա ամենևին չէր զբաղվում, այլ շրջապատել էր իրեն յունկերներով ու գիմնազիաներով և ամենաանխիղճ կերպով քշփշում էր նրանց հետ։

— Գիտե՞ք, մայր, ինչ են պատմել ինձ ձեր մասին,— ասում էր հարանացուն նրան,— որ դուք վերջին պատերազմի ժամանակ զորքն ու նավատորմիղը փտած պաքսիմատով եք կերակրել։

Փեսացուն շփոթվում էր, բայց չէր ժխտում, որովհետև թեպետև պաքսիմատը նրա իրավասության ենթակա չէր, բայց և այնպես ինքն էլ հանցանք ուներ՝ ձիերի համար պատրաստած խոտի մեջ ամեն տեսակ անպետք բաներ կային։ Իսկ դա թերևս, փտած պաքսիմատից ավելի վատ էր, որովհետև զինվորը գանգատվել կարող է, իսկ ձին գանգատվելու հնարավորություն անգամ չունի...

Ա՜խ, վա՛ռ բան էր արել նա այն ժամանակ։

Երբեմն Պրոզերպինոչկան նույնիսկ ամբողջ կամպանիայով ծաղրի էր ենթարկում նրան։ Սրինակ, երիտասարդները որոշում են փախչել-բռնել խաղալ, իսկ նա, զզվելին, ցցված է նրանց կողքին։ Ահա և հարկադրում են նրան վազել, ու դեռ աչքերն էլ կապում են։ Թափով առաջ է նետվում, բայց է անում թևերն ու թռչում, իսկ Պրոզերպինոչկան ընկերուհիների և յունկերների հետ թաքնվում է թփերի մեջ և այնտեղից, գըլուխները հանած այնքան ժամանակ «բռնիր, մայր, բըռնիր» են կանչում, մինչև նա թափով դիպչում է սոճուն։

Սկզբում տիկին Դեղձանիկը վախենում էր, որ մայրը կարող է վիրավորվել, և երբեմն-երբեմն նույնիսկ բղավում էր աղջկա վրա՝ «Ֆինիսսե՛»[32]։ Բայց երբ համոզվեց, որ մայրն ուշադրություն չի դարձնում դրան, թողեց և միայն ամեն երեկո ճշտապահորեն դիմում էր փեսային. «մեկ մանեթ չունե՞ք, մայր, վաղը մենք մեծ գոհունակությամբ կվերադարձնենք»։

Միայն Ճայեկն էր խզճում խեղճ Սարյակին, և ով գիտե, արդյոք այդ խղճալու մեջ ավելի քաղցր զգացմունքի մասնակցություն չկա՞ր... Համենայն դեպս, մեկ անգամ, ուշ երեկոյան, երբ մայրը, ծուլորեն թափահարելով թևերը, տուն էր վերադառնում, Ճայեկը հասավ նրա ետևից։

— Մի՞թե ձեզ սազական է այդպիսի գեղեցկուհուն սիրելը,- ասաց նա նրան,— ավելի լավ է ամուսնացեք ինձ հետ։ Ես ձեզ շատ լավ կխնամեմ։

Սակայն Սարյակը կարծես փայտացած լիներ։ Նույնիսկ կարգին չլսեց Ճայեկի խոսքերը և կոպտորեն պատասխանեց.

— Եթե ես ուզենայի Ճայեկի հետ ամուսնանալ, այդ դեպքում Ճայեկի հետ էլ կնշանվեի, բայց որովհետև ես ձեր քույրիկի հետ եմ նշանվել, հետևապես նրա հետ էլ ցանկանում եմ իմ կյանքի շրջանը կատարել...

Սակայն, չի կարելի ասել, որ նա ամենևին բան չէր հասկանում։ Ընդհակառակը, նա շատ բան և շատ նրբամտորեն հասկանում էր։ Բայց միաժամանակ նա պարզ կերպով տեսնում էր, որ թակարդն է ընկել և որ իր բախտը որոշված է անդառնալի և ընդմիշտ։ Ինչո՞ւ ընդմիշտ,— նա այդ մասին իրեն հաշիվ տալ չէր կարողանում, այլ միայն կրկնում էր անդադար. «անդառնալի՜, ընդմի՜շտ»։

Եվ ահա, նա ամուսնացավ։ Հարսանիքից հետո ամբողջ երեկո կերուխում արեցին, այնպես որ վերջալույսը մեկ ժամ առաջ մարել էր արդեն, երբ Սարյակը պատրաստվեց նորահարսի հետ իր բունը թռչել։ Լա՜վ էր զգում իրեն, սքանչելի՜։ Տաք գիշերը ցուրտվեր էր, աստղերը երկնի մութ

կապույտում խաղում էին ալմաստների նման, իսկ ինքը՝ Սարյակն ամբողջովին այրվում էր։ Բերկրանքն էր թավալվում նրա երակներում, զմայլելի, աբբեցուցիչ բերկրանքը։ Մեկ երգել էր ուզում, մեկ հեկեկալ, բայց միաժամանակ ինչ-որ մի զգայուն քաղաքավարություն հարկադրում էր նրան զսպել իր պոռթկումները։ Ինքը Պրոզերպինոչկան, թվում էր, ենթարկվում է այդ կրքի թովչանքին։ Նա խոնջությամբ փակեց աչքերն ու հաճելի սարսուռով քթիկով կտցահարեց նրա կատարը... Բայց այդ իսկ րոպեին հանկարծ Սարյակի փչակի մոտով մի խումբ հարբածներ անցան։ Դրանք նրա եղբայրներն էին, ընկերների մի ամբողջ ամբոխի ուղեկցությամբ։ Նրանք աղմուկով և սուլոցով երգում էին «Մալբրուգն արշավանքի ելավ»... Լսելով այդ ձայները, նորահարսն ակնթարթապես վերածնվեց։ Գիշերային հագուստով դուրս թռավ փչակից և մինչև աքաղաղների կանչերը քրքչաց յունկերների հետ։ Սարյակը, մունդիրը հագած, կանգնել էր երիտասարդ կնոջ ետևը և նույնպես աշխատում էր ուրախանալ։ Բայց ավա՜ղ, նա շուտով համոզվեց, որ ուրախությունը մայրական աստիճանին արդեն սազական չէ։ Որչափ էլ նա հարկադրում էր իրեն, բայց աստիճանը զառամյալ հասակի հետ միասին, այնուամենայնիվ իրենցը վերցրին։ Նրա աչքերն իրենք իրենց փակվեցին, իսկ մի րոպե անցած՝ բարձրաձայն խռմփոցը տարածվեց փչակում։ Նույնիսկ դրան հետևող ծիծաղի պոռթկումը չարթնացրեց նրան։ Այդպես, ամբողջովին կոճկած մունդիրով, նա քնեց իր մեղրագիշերը։

Այդ րոպեից նա վերջնականապես ոչնչացավ իր երիտասարդ կնոջ աչքում։

Երբ արթնացավ, թեպետև դեռ շատ վաղ էր, Պրոզերպինոչկայի հետքն էլ չկար։

Սերինոսը, որին նա աղախին էր վարձել, հայտնեց, որ օրիորդը թռել է մոր մոտ և արդյոք տա՞նն է ճաշելու, թե ոչ, հայտնի չէ։ «Օրիո՛րդ»— այդ բառը կարծես եռացրած ջրի նման խաշեց նրան։

Նա դուրս նայեց փչակից և թռավ մերձակա ճյուղքի վրա։ Ջորս կողմը տիրում էր մեռելային լռություն, որը նախորդում է արթնացմանը, և որի ժամանակ ողջ բնությունը կարծես անկենդան լինի։ Թռչունները դեռ չէին արթնացել. նույնիսկ ծառերի տերևները չէին շարժվում։ Բայց արևելքն արդեն շառագունել էր, և մայորին թվաց, որ վարդամատն Ավրորան, հեգնական ողջունելով իրեն, քիթ է ցույց տալիս։ Ըստ երևույթին, այդ գիշեր նրա գոյության մեջ ինչ-որ մի չափազանց կարևոր բան տեղի ունեցավ, որը պառկեց նրա ողջ ապագայի վրա, որպես մի անջնջելի սև բիծ։ Նա պետք է ինչ-որ պարտականություն կատարած լիներ,— մի, սակայն ոչ դժվարին և ամեն Սարյակի հատուկ պարտականություն,— բայց նա, որպես ծույլ և նենգամիտ ստրուկ, այդ պարտականությունը չիրագործեց...

Դիմելով իր դրության բազմակողմանի քննությանը, նա նախ և առաջ խորամանկություն գործադրեց։ Կամ, գիտության խոսքով ասած, սկսեց գործը քննության առնել հանգամանքները ծնող պատճառների տեսակետով։ Իրենից կախված պատճառներո՞վ նա չիրագործեց իր պարտականությունը, թե՞ իրենից անկախ։ «Եթե ես պատճառ եղած լինեի այդ բանին,— ասում էր նա ինքն իրեն,— այն ժամանակ, իհարկե, թեկուզ գլուխս կտրեցեք, եթե ես հանցավոր եմ,— խոսք չե՛մ ասի։ Թե չէ՝ իմ կողմից ոչ մի պատճառ չկա և տեսնեք՝ ինչ եղավ»։ Բայց հազիվ էր նա մտածել այդ պատրվակը, որ անմիջապես ըմբռնեց նրա ապարդյուն լինելը։ Կան փաստեր, որոնց նկատմամբ պատճառականության օրենքը թույլատրելի չէ։ Նրանք պետք է իրագործվեն առանց զանցառության, և ոչ մի տրամաբանություն չի կարող վերստեղծել այն, ինչ որ պետք է լիներ և չի եղել։ Դա արդարացում չունի։ Ոչ մի երիտասարդ ամուսին, ոչ մի սիրող մայր, երդվյալների ոչ մի դատարան, նույնիսկ թագավորական դատարան, ոչ մի այլ վճիռ չի կարող հանել դրա համար, բացի խայտառակություն բառից.— խայտառակությո՜ւն, խայտառակությո՜ւն, խայտառակությո՜ւն։

Նա պետք է ետ մղեր հարբած ամբոխի հարձակումը, նա պետք է իր բունն անմատչելի դարձրած լիներ, պետք է կրծքով պաշտպաներ «պարտականությունը» իրագործելու իրա-

վունքը, պետք է հանուն պարտականության արյունահեղ մարտի դուրս գար... Qu'il mourût![33]

— Խայտառակությո՛ւն,— կրկնեց նա մեքենայորեն և մեքենայորեն էլ, առանց մունդիրը հանելու, քաղցած փորով ու ճմրթված թռավ այնտեղ։

Տիկին Դեղձանիկն արդեն արթնացել էր և սաստիկ զայրացած էր։ Բացի այն, որ իր Պրոզերպինոչկայի հետ այդպիսի «խայտառակություն էր» տեղի ունեցել, գիշերը հեռու-հեռու աշխարհից թռել, հյուր էր եկել նրա մոտ Դեղձանիկ-հորաքույրը և իր պատմություններով սաստիկ փչացրել էր նրա տրամադրությունը։ Նա էլ իր Միլոչկային ամուսնացրել էր Խացկտիկի հետ, բայց... ի՞նչ տարբերություն։ Ա՜խ, ի՞նչ տարբերություն։

— Միլոչկային ամուսինն այնպե՞ս է սիրում,— ասում էր հյուրը,— այնպե՞ս է սիրում։ C'est tout un poème![34] Երեվակայիր...

Հյուրը, թեքվելով դեպի հորաքրոջ ականջը, մի բան շշընջաց ու ցնծագին սոսկումով ետ ընկավ, կրկնելով.

— Բայց երևակայի՞ր իմ քնքուշիկիս զարմանքը...

Իսկ տիկին Դեղձանիկը լսում էր և զայրույթով քրթմնջում քթիկով։

— Դե՞, տա՛ ասված Միլոչկային... տա՛ ասված,— շշնջաց նա,— իսկ մենք... Կան, որոնց բախտը բերում է, իսկ մեզ... Քո Միլոչկային ամուսինն ահա թե ինչպես է ուրախացրել, իսկ մերը... Ուրիշ ում ուզում եք, բայց իմ Պրոզերպի՞նոչկային, կարծեմ, կրծած ոսկոր անվանել չի՛ կարելի... Ե՛վ գեր է, և՛ վարդագույն... և՛ այտիկները, և՛ կուրծքը... Եվ ի՞նչ, սրիկան նույնիսկ ուշադրություն չի դարձրել։

— Est-ce possible?![35]

Այդ իսկ րոպեին հայտնվեց Սարյակը։ Եվ նոր էր պատրաստվում արդարանալու, որ բարկացած զոքանչը դուռ ցույց տալով, գոչեց.

— Սորտե՛[36]։ Խայտառակությո՛ւն, պարոն խայտառակությո՛ւն, խայտառակությո՛ւն, խայտառակությո՛ւն։

Իսկ նրա ետևից, արձագանքի նման մորաքույրը նույնպես կրկնեց.

— Խայտառակությո՛ւն, խայտառակությո՛ւն, խայտառակությո՛ւն։

Սարյակը՝ շշմած, ուզեց թռչել, անհայտանալ, բայց նրա թևերն անգամ կարծես կոտրած լինեին։ Նա քայլեց ճանապարհով, գնալով դեպի իր փչակն ու մտածում էր այնտեղ թաքցնել իր խայտառակությունը, բայց թռչուններն արդեն արթնացել էին և ամեն բան գիտեին։ Եվ թեպետ նրանցից ոչ մեկը նրան երես առ երես ոչինչ «համապատասխանող» բան չասաց, իսկ մի քանիսը նույնիսկ մոտ թռան և շնորհավորեցին, բայց նա միանգամայն պարզորոշ տեսնում էր, որ բոլորի աչքերում գրված է.

— Խայտառակությո՛ւն, խայտառակությո՛ւն, խայտառակությո՛ւն։

Երեկոյան դեմ, սակայն, Պրոզերպինոչկան վերադարձավ և առանց բոնժուր[37] ասելու, ուղղակի թռավ իր բունը։

— Սիրելի՞ս, անուշի՞կս, հրեշտա՞կս,— սուլեց նրա ետևից մայրը, և այնպես ազիոզորմ, որ Սերինոսը, թեպետև հասարակ կոչման թռչուն էր, բայց արտասվեց։

Սակայն Պրոզերպինոչկան ոչ մի ձայն չհանեց, և Սարյակը լսեց, ինչպես նա բնում թաթիկներով ետ քաշեց աղվամազը, իր համար անկողին պատրաստելով։

— Ամուսնյա՞կս, ասածո՞ւց ինձ շնորհված ամուսնյակս,— ոչ թե սուլեց, այլ մի տեսակ մղկտաց մայրը և լաց եղավ։

Բայց և այդ կոչի հանդեպ Պրոզերպինոչկան անտարբեր մնաց։ Սարյակը մոտեցավ նրա անկողնուն ու խոնարհվեց վրան, բայց Պրոզերպինոչկան արդեն քնած էր, կամ ավելի շուտ, քնած էր ձևանում։

Այդ գիշեր ևս մայրը հարկադրված եղավ միայնակ անցկացնել։ Մունդիրը, իհարկե, նա հանեց, բայց անդրավարտիքը հանել չհամարձակվեց, որպեսզի անհարմար դրության մեջ չդնի Պրոզերպինոչկային։ Իսկ հաջորդ առավոտյան, որչափ էլ նա շուտ արթնացավ, բայց և այնպես Պրոզերպինոչկան արդեն չկար, թռել էր ծնողների մոտ։

Սկսվեց մայորի մարտիրոսագրությունը։

Ամբողջ ամսվա ընթացքում երիտասարդ կինը ոչ մի բառ չարտասանեց։ Ամեն գիշեր թռչում-գալիս էր նա Սարյակի փչակը, պառկում էր բնում և ամեն առավոտ անհայտանում էր այնպես խորհրդավոր և հապճեպ, որ մայորը ոչ մի կերպ չէր կարողանում հետևել։ Այդ ժամանակվա ընթացքում մի չորս անգամ Պրոզերպինոչկան թռավ-եկավ յունկերների և գիմնազիստների ամբողջ խմբով և, Սերինոսին կանչելով, ճոխ ընթրիք պատվիրեց։ Բայց թե՛ նա և թե նրա հյուրերը, որ ամենալպիրշ կերպով ուտում և խմում էին Սարյակի աչքի առաջ, ոչ մի անգամ նույնիսկ շնորհակալություն չհայտնեցին նրան, կարծես նա իր փչակի տերը չէր, այլ միայն ծառա էր այնտեղ։ Կնոջ ծնողների ընտանիքում մայորին այլ կերպ չէին անվանում, քան «սրիկա»։

— Իսկ «սրիկան» կրկին խաղատոմս է գնել,— հաղորդում էր տիկին Դեղձանիկը հյուր եկած հորաքրոջը։

Կամ՝

— Շուտով, կարծես, «սրիկան» կխելագարվի։ Սկսել է մտքերի մեջ խորասուզվել։

Միայն ծերունի աներն էր ժամանակ առ ժամանակ այցելում մայորին, մխիթարում էր նրան և նույնիսկ խոստանում էր ծեծել Պրոզերպինոչկային, բայց խոստումները չէր կատարում, այլ միայն մեծ թվով քանկոպեկանոցներ էր կորզում փեսայից։

Անցավ ևս մեկ ամիս։ Պրոզերպինոչկայի հարաբերությունը դեպի մայորը մասամբ փոխվեց, սակայն ոչ դեպի լավը։ Դեղձանիկն աստիճանաբար մտել էր իր դերի մեջ, լկտիացել էր։ Նա այլևս լուռ չէր, բայց այնպիսի տոնով էր խոսում Սարյակի հետ, ինչպիսի տոնով կարող է խոսել թագուհին պալատի ինչ-որ անհայտ մի վառարանավառի հետ։

— Փո՛ղ է հարկավոր,— ասում էր նա։

— Որքա՞ն։

— Ո՛չ թե «որքան», այլ տվե՛ք։

Որքան, ինչի համար,— այդ մասին ոչ մի խոսք։ Գուցե նա դիտավորյալ էր այդպես վարվում, կամենալով Սարյակի հոգին տանջել, բայց, գուցեև՝ առանց նպատակի, այլ

«այնպե՞ս»։ Դեղձանիկի հոգին մութ անորոշություն է, և ոչ մի իմաստուն չի կարող պարզել, որտեղ է վերջանում այնտեղ մտքի ճախրանքը և որտեղ է սկսվում վայրագությունը։ Ինչևէ, Սարյակը չէր հակաճառում։ Նա մի բոպե անցնում էր փչակի հետին բաժանմունքը և դողդոջուն ձեռքերով դուրս էր բերում այնտեղից իր գանձատուփը։ Եվ մինչ Պրոզերպինոչկան հանում էր այնտեղից արծաթյա հինգ կոպեկանոցները, միաժամանակ մի տեսակ տարօրինակ ժպտալով, Սարյակին թվում էր, որ իր հոգին են հանում։ Ոչ այն պատճառով, որ նա ժլատ էր, այլ որովհետև բնականից պահանջ էր զգում՝ ամեն ժամանակ ճշտորեն իմանալու իր դրամարկղի դրությունը։

Թալանելով ամուսնու դրամարկղը, Պրոզերպինոչկան թռչում-գնում էր, իսկ մի ժամ անց ամուսինն արդեն տեսնում էր նաև կատարված թալանի արդյունքները։ Պրոզերպինոչկան ուլանների և կիսաթեթև վարքի տեր կանանց մի ամբողջ երամի գլուխ անցած, աղմուկով և երգերով թռչում էր փչակի մոտով և նստում մոտակա մարգագետնում։ Այնտեղ, Սարյակի հաշվին, ուրախ խնջույք էր կազմակերպվում, և ամբողջ խումբը մինչև վերջալույս քեֆ էր անում, երգում, խմբապարում, ժամանակ առ ժամանակ թռչելով՝ թփերի մեջ հանգիստ առնելու։

Մեկ անգամ Պրոզերպինոչկան տուն եկավ արտասովոր հուզված վիճակում։ Թռչում էր փչակում («քի՛չ էր մնացել կրծկիկը փշրեր»), պտույտ էր գալիս, երգում էր, ծիծաղում, արտասվում... Մայորը նայում էր նրան սկզբում վախեցած, բայց հետո հանկարծ հուզվեց։ Նրա գլխում դժբախտ մի միտք ծագեց, որ գուցե Պրոզերպինոչկայի սիրտը բացվել է, որ հասել է իր փորձությունների վախճանը, որ նա ինքն ընդառաջում է իրեն... Ընդառաջում է, որպեսզի երանություն պարգևի իրեն, անվերջ, անսահման երանություն։ Քաղցր և միաժամանակ այրող հուզմունքը տիրեց նրա ողջ էությանը և արթնացրեց նրա մեջ համարձակություն, մի համարձակություն, որ հատուկ չէր բոլոր համբարակային մայրներին։ Կրքի խելահեղությամբ, նա կամացուկ մոտեցավ Պրոզերպինոչկային այն բոպեին, երբ նա հայացքը մութ

տարածության մեջ հառած, կանգնել էր մուտքի մոտ, և քթիկով կամաց խփեց Պրոզերպինոչկայի գլխին։

— Հիմա՛ր,— բացականչեց Պրոզերպինոչկան և, խուսափելով նրա գրկախառնումից, փչակից դուրս թռավ։

Դա նրա կողմից շատ վճռական քայլ էր։ Մինչև այժմ նա թռչում-գնում էր ցերեկը, այժմ թռավ գիշերը։

Մյուս առավոտյան նա, սակայն, վերադարձավ, բայց ամբողջ օրը տխուր էր, արտասվում էր, ոչ մի տեղ իրեն հանգիստ զգալ չէր կարողանում։ Իսկ երեկոյան, հազիվ էր մայորը խոմփացրել, կրկին թռավ-գնաց։

Այդպես շարունակվեց ամբողջ երկու շաբաթ։ Գիշերը խորհրդավոր անհայտացում, ցերեկը՝ հիստերիկա, արցունքներ։ Մայորը տառապանքից ուժասպառ էր եղել, քայլ առ քայլ հետևում էր նրան, քթիկում, համենայն դեպս, ջրով լի փոքրիկ դույլը պահած և արտասվալից համոզում էր.

— Ջուր խմիր, սիրտդ բա՛ց արա իմ առաջ։ Ոչ որպես ամուսնու — ավա՜ղ, ես այդ բախտին արժանի չեմ,— այլ որպես հո՛ր, որպես եղբո՛ր։ Ո՞վ է վիրավորել քեզ, իմ թռչնի՜կս։

— Հիմա՜ր։

Վերջապես Պրոզերպինոչկան չվերադարձավ ամենևին։ Մայորը սպասեց մեկ օր, սպասեց երկրորդ օրը և որոշեց... սպասել հավիտյանս։ Ծանր ժամանակ սկսվեց նրա համար, կատարյալ միայնակության օրեր։ Կինը թողեց նրան, ազգականները, առանց որևէ խոսքով նախազգուշացնելու, անհայտացան,— ըստ երևույթին ծերունի Դեղձանիկը իսկապես որ հորաքրոջ մահից հետո ժառանգություն էր ստացել։ Իսկ մյուս թռչուններին նայել՝ նա ինքն ամաչում էր, որովհետև, այնուամենայնիվ, չէր մաքրել իր խայտառակությունը, չէր արդարացրել իրեն։ Նույնիսկ աղախին Սերինոսը վերջնահաշիվ պահանջեց և ճնճղուկի հետ բուն հյուսեց տանիքի տակ։

Մինչև այժմ նա գոնե տառապանքներ ուներ, այրող, սուր տառապանքներ, որոնք հնարավորություն էին տալիս նրան ցավից անհանգիստ դես ու դեն նետվել, անիծել... և հուսալ։ Այժմ տառապանքները մնացին, բայց ստացան բութ

ձև, որը շղթայում էր նրա շարժումները, ջլատում էր նրա կամքը և ապագան անթափանց խավարով էր լցնում...

Մինչ այդ՝ աշունը եկավ. թռչունները կրկնապատկած ուժերով աշխատում էին իրենց բների շուրջը։ Միայն նա ոչինչ չէր ձեռնարկում, չէր կարողանում որոշել՝ թռչե՞լ արդյոք տաք ջրերը, թե՞ մնալ հայրենիքում։ Անձրևներ եկան, սառը քամիներ փչեցին. պուրակը մերկացավ և տրտում խշշաց, գիշերները երկարեցին, ավելի խավար դարձան։ Իսկ նա գիշերներն ամբողջ, քաղցած ու ցրտից դողահար, առանց աչք փակելու նստում էր իր անպաշտպան փչակի շեմքին ու սպասում։ Քանի անգամ գիշատիչ Բուն թռավ մոտիկից, թևով նրա փչակին խփելով, քանի անգամ փչակի ներսը նայեց արյունարբու Սկյուռը։ Բայց բախտի բերմամբ ոչ Բուն, ոչ Սկյուռը անհանգիստ չարեցին նրան։ Շատ հավանական է, որ նա ուտելի լինելու տեսակետից գիշատիչների համար արդեն այլևս շնչին մեծություն էր կազմում, բայց հնարավոր է նաև այն, որ գիշատիչները գիտեին որչափ գործունյա համբարակային սպա էր եղել նա ժամանակին և, չկամենալով զրկել հայրենիքը նրա մատուցելիք ծառայություններից ապագայում, խնայում էին...

Ըմբռնելով, որ իր կյանքը խորտակված է, նա ակամա դառնում էր անցյալի հիշողություններին։ Ամեն ինչ այնտեղ այնպես մաքուր էր, կարգ ու կանոնով, որ նրա սիրտը օտարի նման ուրախանում էր։ Եվ հաճելի բաներ կային... Միայն համբարակային միջոցառումները չէին, այլև, օրինակ, Խաղտանիկը։ Ինչ կայտառ, ճշտապահ աղջիկ էր... ասես վարո՞ւնգ լիներ։ Եվ նույնպես սկզբում թե. «ա՜խ, ինչ ծիծաղելի՜ն եք դուք»։ Ծիծաղելի, ծիծաղելի, իսկ հանկարծ. «ա՜խ, սիրելիս, ի՜նչ հիմարն էի ես, զուր տեղը ժամանակ կորցրի»։ Պետք էր նրա հետ ամուսնանալ, բայց դրա փոխարեն, նրան թողեց վեցը երեխաների հետ։ Կամ թե մեկ անգամ նա գնացել էր այրի Լորամարգի մոտ, որը ճանապարհի վրա իշևան էր պահում և կորեկի ու հնդկացորենի ձավարի առևտրով էր զբաղվում։ Խոսք բացեցին իրար հետ, «քանի՞ է կորեկը, և ձավա՞րը քանի է։ Անշուշտ տխուր է ձեզ համար՝ առանց ամուսին, տիկին»... Մեկ էլ, արդեն ամեն տեղ կրակները հանգցրին... Եվ հենց պետք է նրա հետ էլ

ամուսնացած լիներ, բայց նա խոստացավ և մոռացություն տվեց։

Լա՜վ էր այն ժամանակ, սքանչելի՛։ Եվ որչափ տմարդի էր վարվում այն ժամանակ նա Խաղտտնիկի ու Լորամարգի հետ, այնչափ ավելի հպարտանում էր, այնչափ ավելի գովեստներ էր լսում իր մասին։ Համբարակային վարչության բոլոր գրագիրներն ասում էին նրա մասին. «Մեր մայորը ճարպի՜կն է... ոտներն է քստքստացնում... պտույտ պտույտ է անում... այդպե՛ս էլ հարկավոր է նրանց, այդ հիմարների՛ն»...

— Վա՜հ։ Կրկին համբարակային վարչություն չմտնե՞մ արդյոք։ Ի՞նչ բան է որ, վերցրի գրիչը, դիմում գրեցի — կընդունե՛ն, ճշմարի՛տ, ուրախությա՜մբ կընդունեն։

Բայց հազիվ էր ծագում այդ միտքը, որ նա քշում էր արդեն իրենից։ Ոչ թե Խաղտտնիկների և Լորամարգիների մասին պետք է մտածի նա այժմ, ոչ, ո՛չ նրանց մասին։ Այսուհետև նրան մնում է միայն տառապել ցավից ու սպասել։ Սպասել իր Թանկագին, դեղնիկ օրիորդին, նախախնամության կողմից իրեն սահմանված կնոջը։ Կգա, կգա նա, ա՜յ, կտեսնեք, անպայման կգա։

Մերթ ընդ մերթ, սակայն, նա զայրանում էր։ Բայց ոչ ինքնակամ, այլ չարամիտ թռչունների դրդման ազդեցության տակ, որոնք գալիս էին նրա մոտ՝ պարտք փող խնդրելու։ Առանձնապես քայքայիչ ազդեցություն էր ունենում այդ մտքով նրա վրա Կեռնեխը։ Նա միշտ սկսում էր այն բանից, որ ցավակցություն էր հայտնում, որ նա այդպես միայնակ կյանք է վարում և ապա, մեկ ցավակցությունից մյուսին անցնելով, շատ ճարպկորեն ներշնչում էր, որ ներկա ժամանակ ապահարզանը ոչ մի դժվարություն չունի։

— Փաստաբա՜ն վարձեցիր, վերջացա՛վ,— համոզում էր նա,— փաստաբանը ամեն ինչ մի ժամում կսարքի։ Ճշմարի՛տ եմ ասում, բարեկամս, բաժանվի՛ր։ Ի՞նչ կարիք կա այդ անբարոյականի ետևից ընկնելու։

Բացի Կեռնեխից, Սերինոսն էլ էր նրան խռովք պատճառում, բայց սա դեմ էր ապահարզանին, այլ խորհուրդ էր տալիս դիմում ներկայացնել «գավառային» ատյան։

— Շատ մեծ պատիվ կլինի նրանց համար, եթե ամեն

մի ցոփակյացի ապահարզան տրվի,— ասում էր նա,— ուղղակի «գավառային» դիմիր, այնպիսի բաղանիք սարքեն նրա համար այնտեղ, որ հավիտյանս չմոռանա։

Եվ ահա մեկ օր մայորը անձնատուր եղավ գայթակղությանը։ Թռավ Պետերբուրգ և ուղղակի դիմեց փաստաբան Բալալայկինին.

— Ուզում եմ կենդանի կնոջիցս բաժանվել և ուրիշի հետ ամուսնանալ — գործը գլո՛ւխ բեր։

— Ուրախությա՜մբ,— պատասխանեց Բալալայկինը,— ես ինքս՝ չո՛րս կին բաց թողնելով, հինգերորդի՛ հետ եմ ամուսնացած և, ինչպես տեսնում ես, նույնիսկ կալանատուն չեմ նստել։

Բայց արդեն իսկ այն տոնից, որով Բալալայկինն այդ խոսքերն ասաց, Սարյակն ըմբռնեց, որ նրա միջնորդությունից բան դուրս չի գալու։ Քսան կոպեկ վճարելով Բալալայկինին (սուտ խոսելու համար միայն), նա, զայրույթը զսպելով, ուղղեց իր թռիչքը դեպի «գավառային», բայց այդտեղ ևս անհաջողություն հանդիպեց։

— Բե՛ր նրան, մենք կծեծե՞նք,— պատասխանեցին նրան միանգամայն իրավացի կերպով,— իսկ եթե այսուհետև ևս առանց ապացույցի նեղություն ես պատճառել մեզ, մենք արդեն քե՛զ կծեծենք, չենք նայի, որ մայոր ես։

Դա, այսպես ասած, ապստամբող մարմնական վերջին ջղն էր։ Նա տուն վերադարձավ և վերջնականապես խաղաղվեց։

Անցավ ձմեռը։ Կիսասառած, սովալլուկ, կիսակենդան Սարյակը դուրս սողաց իր փչակից և հազիվհազ թռավ մինչև դետակը։ Սառույցն արդեն այնչափ թույլ էր, որ մի քանի տեղ ճեղքեր էին բացվել։ Մոտեցավ նրանցից մեկին, հույս ունենալով ուտելու որևէ բան գտնել, փտած մի բան։ Բայց չրի մեջ իր պատկերը տեսնելով, սարսափահար եղավ։ Ձմեռվա ընթացքում նա այնչափ նիհարել, վտիտացել էր, որ հագի մունդիրն ասես կախարանից կախված լիներ։ Նախկին ճշտապահ կոճակված, մաքուր և կուշտ Սարյակից հետքն էլ չէր մնացել. նույնիսկ խթանները հայտնի չէր ինչ էին եղել։

Վշտացած սրտով վերադարձավ իր փչակն ու անմիջապես կորցրեց հավատը դեպի լուսավոր ապագան։

Ի՞նչ օգուտ, եթե անգամ նա վերադառնա։ Ի՞նչ բարեմաղթություններով կարող է ընդունել նրան, ի՞նչ ապացույցներ կարող է ներկայացնել իր ամուսնական սիրալիր-հավատարիմ անձնվիրության։

Եվ հանկարծ, մայիսյան մի տաք գիշեր նա վերադարձավ։ Վերադարձավ նիհարած, հիվանդ, զզզված և կարծես իրեն կորցրած։ Գլխի փետրափունջը տրորված, պոչը նոսրացած, նույնիսկ դեղին հագուստը գունաթափվել և գորշացել էր։ Եվ ամբողջ մարմնով դողում էր՝ չգիտես ցրտից թե ամաչելուց։ Դժվարությամբ ճանաչեց նրան Սարյակը։

— Սհա և ես եկա,— ասաց Պրոզերպինոչկան։

— Ապրիր,— պատասխանեց Սարյակը։

Ուրիշ ոչինչ չխոսեցին նրանք։ Անցյալի մասին — լություն, ապագայի մասին՝ ո՛չ մի խոսք։

Եվ ապրում են այն օրվանից միմյանց մոտ նույն փչակում լուռ և շարունակ ինչ-որ միտք են անում։ Գուցե հրաշքի են սպասում, որը բաց կանի նրանց սրտերը և կլցնի ներման ու սիրո հրճվանքով։ Բայց, գուցե, զգում են իրենց վերջնականապես ջախջախված և մոայլ տրտնջում են։ Սարյակն այն մասին, թե՝ «ա՜խ, խորտակեցի՛ր դու իմ կյանքը, անզգա տիկնիկ»։ Պրոզերպինոչկան, թե՝ «ա՜խ, մաշեցիր դու իմ երիտասարդությունը, ատելի մայրս»։

ՀԱՎԱՏԱՐԻՄ ՏՐԵԶՈՐԸ

Տրեզորը Մոսկվայի երկրորդ գիլդի վաճառական Վորոտիլովի շտեմարանի պահապան էր կարգված և արթուն աչքով հսկում էր տիրոջ կայքին։ Երբեք նա իր բնից չէր հեռանում. նույնիսկ Ժիվոդյորկան, ուր գտնվում էր շտեմարանը, օրինավոր չէր տեսել։ Առավոտից մինչև իրիկուն շղթան վզին վազվզում էր ու հաչում. Caveant consules!

Շատ իմաստուն շուն էր, երբեք յուրայինների վրա չէր

հաչում, այլ ուրիշների։ Պատահում է, տիրոջ կառապանը գալիս է գարի գողանալու, սակայն Տրեզորը պոչն է թափ տալիս ու մտածում է. տանում է, թող տանի, կառապանի սարածն ինչ է լինելու։ Բայց եթե պատահեր իր գործերով մեկն ու մեկն ուզենար անցնել շտեմարանի մոտերքով, Տրեզորը սոսկալի աղմուկ-աղաղակ էր բարձրացնում։ «Հասեք հա՜, գողերը թալանո՜ւմ են»։

Վաճառական Վորոտիլովը՝ տեսնելով Տրեզորի եռանդը, ասում էր. «Այս շունը անգին շուն է»։ Եվ մեկ-մեկ Տրեզորի բնի մոտով անցնելիս, կարգադրում էր. «Տրեզորին լափ տվեք»։ Իսկ Տրեզորը հիացմունքից կաշվից դուրս էր գալիս՝ «Ուրախությամբ կջանամ, ձերդ արժանապատվություն... հա՛ֆ-հա՛ֆ-հա՛ֆ... հա՛ֆ-հա՛ֆ...»

Մեկ անգամ նույնիսկ այսպիսի դեպք պատահեց. թաղամասի պրիստավն ինքն անձամբ շնորհ բերեց վաճառական Վորոտիլովի մոտ, բայց Տրեզորը նույնիսկ նրա վրա կասկած ունեցավ։ Այնպիսի աղմուկ-աղաղակ բարձրացրեց, որ տանտերը, տանտիրուհին ու երեխաները դուրս թափվեցին։ Կարծում էին, թե թալանում են, բայց տեսան, որ թանկագին հյուր է եկել։

— Համեցեք, ձերդ բարեծնություն։ Ջա՛նդ, Տրեզոր։ Ջճանաչեցի՞ր, ինչ է, սրիկա՛։ Ձերդ բարեծնություն, համեցեք, օդի ճաշակեցեք։

— Շնորհակալ եմ։ Սքանչելի շուն ունիք, Նիկանոր Սեմյոնիչ, հավատարի՛մ շուն։

— Շատ լավ շուն է, շատ մարդկանցից ավելի լավ է հասկանում։

— Նշանակում է՝ ճանաչում է սեփականությունը, իսկ դա մեր ժամանակներում շատ ցանկալի հանգամանք է։

Եվ ապա՝ դառնալով Տրեզորի կողմը, ավելացրեց.

— Հաչի՛ր, բարեկամս, հաչի՛ր։ Այժմ մարդն անգամ, եթե ցանկանում է իր մասին լավ կարծիք կազմեն, նա էլ պարտավորվում է շան նման հաչել։

Վորոտիլովը երեք անգամ փորձեց Տրեզորին, նախքան իր կայքի պահպանությունը լիապես նրան հանձնելը։ Հաղնվեց գողի նման (զարմանալի սաղ էր գալիս նրան այդ հագուս-

տը), ընտրեց մի մութ գիշեր և գնաց շտեմարանը թալանելու։ Առաջին անգամ հետը մի կտոր հաց վերցրեց, մտածելով՝ դրանով գրավել Տրեզորին, բայց Տրեզորը հացի կտորը հոտոտեց և ատամներով պինդ բռնեց նրա սրունքից։

Երկրորդ անգամ մի ամբողջ երշիկ գցեց առաջը, իսկ Տրեզորը նրա հագուստի քղանցքը պատռեց։ Երրորդ անգամ հետը վերցրեց մեկ հատ ճարպոտած մանեթանոց, մտածելով՝ փողով կաշառել շանը, բայց Տրեզորը հիմար չէր, այնպիսի աղմուկ բարձրացրեց, որ ամբողջ թաղի շները հավաքվեցին ու զարմացած էին մնացել, թե ինչո՞ւ է շունն իր սեփական տիրոջ վրա հաչում այդպես։

Այն ժամանակ վաճառական Վորոտիլովը հավաքեց տնեցիներին ու բոլորի ներկայությամբ ասաց Տրեզորին.

— Քեզ եմ հանձնում իմ ունեցած-չունեցածը, և՛ կնոջս, և՛ երեխաներիս, և՛ կարողությունս, պահպանի՛ր։ Տրեզորի համար լա՞փ բերեք։

Հասկացա՞վ արդյոք Տրեզորը տիրոջ գովասանքը, թե ուղղակի հաչում էր շնային բնույթի շնորհիվ, բայց նա այդ օրվանից բոլորովին շնացավ։ Մի աչքով քնում էր, իսկ մյուսով նայում, արդյոք ոչ ոք չի՞ մոտենում դարպասին։ Երբ վազվզելուց հոգնում էր, պառկում էր, բայց շղթան այնուամենայնիվ զնգզնգացնում էր, թե՝ չկարծեք քնած եմ։ Եթե պատահում էր նրան մոռանում էին կերակրել, նա նույնիսկ շատ ուրախ էր լինում, մտածելով, որ եթե շանն ամեն օր կերակրեն, տեսար մի շաբաթվա մեջ բոլորովին շնացավ։ Եթե տնեցիներն աքացում էին նրան, դա նույնպես իր համար գգտակար նախազգուշացում էր համարվում, որովհետև եթե շանը չծեծեն, տեսար՝ տիրոջն էլ մոռացավ։

— Մեզ, շներիս, պետք է լուրջ վերաբերվել,— մտածում էր նա,— ծեծիր և՛ տեղին, և՛ անտեղի ծեծիր,— օգտակար է։ Միայն այն ժամանակ մենք, շներս իսկական շուն կդառնանք։

Սի խոսքով, Տրեզորը սկզբունքներ ունեցող շուն էր և այնպես բարձր էր պահում իր դրոշը, որ մյուս շները նախանձելով էին նայում նրան։

Տրեզորը թեպետ երեխաներ շատ էր սիրում, բայց երեխաներն էլ չէին կարողանում գայթակղեցնել նրան։

Մոտենում են տանտիրոջ երեխաները.

— Գնանք, Տրեզոր, մեզ հետ զբոսնելու։

— Չեմ կարող։

— Չե՞ս համարձակվում։

— Ոչ թե չեմ համարձակվում, այլ իրավունք չունեմ։

— Գնանք, հիմար, այնպես կգնանք, որ ոչ ոք չի տեսնի։

— Իւկ խի՞ղճը։

Տրեզորը պոչը սեղմում է ոտների արանքն ու թաքնվում է բնում, գայթակղությունից հեռու։

Քանի՞-քանի՞ անգամ ավազակներն էլ խոսքը մեկ արեցին՝ Տրեզորին Զամոսկվարեչիի տեսարանների նկարներով այրում նվիրենք, բայց նա դրանից էլ չշողոքորթվեց։

— Ոչ մի տեսարան հարկավոր չէ ինձ,— ասաց նա,— ես այս բակում ծնվել եմ, այս բակում էլ կհանգչեն իմ ոսկորները, ուրիշ էլ ի՞նչ տեսարան է հարկավոր ինձ։ Հնացե՛ք։

Մի թուլություն ուներ Տրեզորը. շատ էր սիրում Կուտկային, բայց այն էլ ոչ միշտ, այլ ժամանակ առ ժամանակ։

Կուտկան էլ նույն բակում էր ծնվել և նույնպես բարի շուն էր, բայց միայն սկզբունքներ չուներ։ Կհաչի, կհաչի ու կդադարի։ Այդ պատճառով էլ նրան շղթայակապ չէին պահում, այլ ապրում էր ավելի տիրոջ խոհանոցում և տանտերերի երեխաների հետ էր լինում շարունակ։ Իր կյանքում նա շատ համեղ պատառներ էր անուշ արել, բայց ոչ մի անգամ Տրեզորին բաժին չէր հանել, սակայն Տրեզորը նրանից երբեք չէր տրտնջում։ Չէ՞ որ Կուտկան տիկին էր, ուստի և պետք է համեղ բաներ ճաշակեր։ Բայց երբ Կուտկայի սիրտն սկսում էր խոսել, նա կամացուկ վնգստում էր և թաթով ճանկռտում էր խոհանոցի դուռը։ Այդ աղերսական հեծկլտանքը լսելով, Տրեզորն իր հերթին այնպիսի մոլեգին, և այսպես ասած, հատկանշական ոռնոց էր բարձրացնում, որ տերն ըմբռնելով այդ ոռնոցի նշանակությունը, ինքն անձամբ օգնության էր շտապում։ Տրեզորին շղթայից արձակում էին և նրա տեղը պահապան էին նստեցնում դռնապան Նի-

կիտային։ Իսկ Տրեզորը Կուտկայի հետ, հուզված ու երջանիկ, վազ էին տալիս Սերպուխովյան գարպասի կողմերը։

Այդ օրերին վաճառական Վորոտիլովը սաստիկ շարասիրտ էր դառնում, և երբ առավոտյան Տրեզորը վերադառնում էր էքսկուրսիայից, մտրակով անխնա ծեծում էր նրան։ Եվ Տրեզորն, ըստ երևույթին, գիտակցում էր իր հանցանքը, որովհետև հպարտ-հպարտ վազ չէր տալիս տիրոջն ընդառաջ, ինչպես այդ անում են իրենց պարտականությունը կատարած չինովնիկները, այլ նվաստացած ու պոչը ոտների մեջ սեղմած, սողում էր նրա ոտքերի տակ։ Եվ մտրակի հարվածների ցավից ոտնոց չէր բարձրացնում, այլ կամացով վնգստում էր՝ mea culpa! mea maxima culpa![38] Իսկապես ասած, նա չափից ավելի խելացի էր, չհասկանալու համար, որ այդպես վարվելով, տերը աչքաթող էր անում որոշ մեղմացնող հանգամանքներ, բայց միաժամանակ տրամաբանորեն դատելով, նա հանգում էր այն եզրակացության, որ եթե նման դեպքերում չծեծեն իրեն, ապա ինքն, անտարակույս, շնանալու է։

Բայց Տրեզորի մեջ ամենից գնահատելին այն էր, որ նրան միանգամայն օտար էր փառասիրական զգացմունքը։ Հայտնի չէ, թե նա նույնիսկ հասկացողություն ունե՞ր արդյոք տոն օրերի մասին և այն մասին, որ վաճառականները տոն օրերին իրենց հավատարիմ ծառաներին պարգևներ տալու սովորություն ունեն։ Նիկանորների անվանակոչությունը («ինքը» անվանակոչության հերոսը), թե Անֆիսաների անվանակոչությունը («ինքը» անվանակոչության հերոսուհին) լինի, այդ միևնույն է, բակում է Տրեզորը, ինչպես սովորական օրերին՝ միշտ շղթայակապ։

— Ձա՛նդ կտրիր, վերջապես, զզվելի արարած,— բղավում է նրա վրա Անֆիսա Կարպովնան,— գիտե՞ս ինչ օր է այսօր։

— Ոչինչ, թող հաչի,— կատակում է Նիկանոր Սեմյոնիչը,— տոնդ է շնորհավորում։ Հաչա՛, Տրեզոր, հաչա՛։

Մեկ անգամ միայն Տրեզորի մեջ փառասիրության նման մի բան արթնացավ։ Այդ այն ժամանակ էր, երբ քաղաքային հովվի պահանջով, տիրոջ Ռոխլյա անունով պոզահարող

կովի վզից զանգակ կախեցին։ Պետք է խոստովանել, որ երբ կովը զնգզնգացնելով անցավ բակով, այնուամենայնիվ, Տրեզորը նախանձ զգաց։

— Ա՜յ քեզ բախտավորություն։ Բայց ինչի՞ համար,— դառնությամբ ասաց նա Ռոխլյային։— Քո արժանիքն այն է միայն, որ օրեկան կես դույլ կաթ ես տալիս, բայց դե դա ի՞նչ արժանիք է։ Քո կաթը ձրի է, քեզանից անկախ է. եթե լավ են կերակրում քեզ, շատ կաթ ես տալիս, քիչ են կերակրում, դադարում ես կաթ տալուց։ Կճղակդ կճղակիդ չես խփում՝ տիրոջը ծառայություն մատուցելու, բայց տես, թե ինչպես են վարձատրում քեզ։ Իսկ ես, տես, ինքս իմ կամքով motu proprio[39] գիշեր-ցերեկ տանջվում եմ։ Հոգիս դուրս է գալիս, ոչ ուտում եմ, ոչ քնում, շատ հաչելուց խռպոտել եմ, բայց գոնե մի հատ բոժոժ գցեին առաջս, թե ահա, Տրեզոր, առ և լավ իմացած եղիր, որ քո մատուցած ծառայությունը տեսնում ենք։

— Հապա շղթան ի՞նչ է,— ասաց Ռոխլյան։

— Շղթա՞ն։

Այդ ժամանակ միայն Տրեզորը հասկացավ։ Մինչև այդ նա մտածում էր, որ շղթան շղթա է, բայց դուրս եկավ, որ շղթան մի տեսակ մասոնական[40] նշան է, որ ինքը, նշանակում է, սկզբից ևեթ պարգևատրված է, պարգևատրված է դեռ այն ժամանակ, երբ ոչ մի արժանիք չուներ։ Եվ որ այսուհետև նա պետք է մի ցանկություն միայն ունենա, որպեսզի հին, ժանգոտած շղթան (որը մեկ անգամ նա արդեն կտրել էր) հանեն և նոր, ավելի ամուր շղթա գնեն իր համար։

Իսկ վաճառական Վորոտիլովը կարծես գաղտնի լսել էր այդ համեստ փառասիրական ցանկությունը։ Տրեզորի տոնի նախօրյակին միանգամայն նոր, հիանալի կոփածո մի շղթա գնեց և, որպես սյուրպրիզ, կապեց Տրեզորի վզնոցին։ Հաչա՛, Տրեզոր, հաչա՛։

Եվ սկսեց հաչել նա այն բարեհոգի, սրտագին հաչոցով, որով հաչում են այն շները, որոնք իրենց շնային բարեկեցությունն անբաժան են համարում այն շտեմարանի անձեռնմխելիությունից, որին նրանց կապել է տիրոջ ձեռքը։

Ընդհանրապես Տրեզորը լավ էր ապրում, թեպետ, իհար-

կե, ժամանակ առ ժամանակ պատահում էր, որ վշտանում էր։ Շների աշխարհում նույնպես, ինչպես մարդկանց աշխարհում, շողոքորթությունը, բամբասանքը և նախանձը հաճախ այնպիսի դեր են խաղում, որպիսին ըստ իրավունքի, ամենևին իրենց չի պատկանում։ Քիչ չէր պատահել, որ Տրեզորը կրել էր նախանձի խայթոցներ, բայց նա ուժեղ էր իր կատարած պարտքի գիտակցության ուժով և ոչ մի բանից չէր վախենում։ Եվ դա նրա կողմից ամենևին մեծամտություն չէր։ Ընդհակառակը, նա պատրաստ էր առաջինը դիջելու պատիվն ու տեղը ա՛յն առաջին նորահայտ շանը, որն անպարտելի լինելու մեջ իր առաջնությունը կապացուցեր։ Երբեմն նա նույնիսկ հուզմունքով մտածում էր, թե ո՞վ է գրավելու իր տեղն այն բոպեին, երբ ծերությունը կամ մահը վերջ դնեն իր հավատարիմ ծառայությանը... Բայց ավա՜ղ, Ժիվոդյորկայում բնակություն հաստատած մանրացած, խրոպոտած շների ահագին ոհմակի մեջ նա, ճշմարիտն ասած, չէր գտնում և ոչ մեկին, որին կարողանար վստահությամբ մատնացույց անել, թե ահա, սա կարող է իմ հաջորդը լինել։ Այնպես որ, երբ խարդավանքը որոշեց ինչ գնով էլ լինի Տրեզորի հեղինակությունը գցել վաճառական Վորոտիլովի աչքում, ապա նա, այդ խարդավանքը, մի հաջողություն ունեցավ միայն, և այն էլ իր համար միանգամայն անցանկալի, այն է՝ հրապարակ բերեց շնային տաղանդների ընդհանուր ուժասպառություն։

Շատ անգամ էր պատահել, որ նախանձոտ Բարբոսները և՛ միայնակ, և՛ փոքրիկ խմբակներով հավաքվում էին վաճառական Վորոտիլովի բակում, նստում էին փոքր-ինչ հեռու և մրցության էին հրավիրում Տրեզորին։ Շնային զարհուրելի ոռնոց էր բարձրանում, որից բոլոր տնեցիները սարսափահար էին լինում, բայց տանտերը լսում էր հետաքրքրությամբ, որովհետև հասկանում էր, որ մոտ է այն ժամանակը, երբ Տրեզորին էլ օգնական է հարկավոր։ Այդ զարհուրելի ոռնոցի մեջ բավական դուրեկան ձայներ կային, բայց այնպիսի ձայն, որի պատճառած վախից մարդ հանկարծակի փորացավ ընկներ, այդպիսի ձայն չկար ամենևին։ Այս կամ այն Բարբոսը արտասովոր ընդունակություն

էր հայտնաբերում, սակայն կամ հաչոցը չէր վերջացնում, կամ չափն անց էր կացնում։ Այդպիսի մրցակցությունների ժամանակ Տրեզորը սովորաբար լռում էր, կարծես հակառակորդներին հնարավորություն տալով արտահայտվելու, բայց ի վերջո չէր համբերում, և ընդհանուր ոռնոցին, որի յուրաքանչյուր նոտան վկայում էր արհեստական լարվածությունը, միացնում էր իր սեփական, ազատ և զգաստ հաչոցը։ Այդ հաչոցը միանգամայն ցրում էր բոլոր կասկածները։ Լսելով նրա հաչոցը, խոհարարուհին դուրս էր թռչում խոհանոցից և եռացրած ջրով խաշում էր խարդավանքի առաջնորդներին։ Իսկ Տրեզորի համար լափ էր բերում։

Այնուամենայնիվ, վաճառական Վորոտիլովը իրավացի էր, պնդելով, որ լուսնի տակ ոչ մի բան հավիտենական չէ։ Մեկ անգամ առավոտյան Վորոտիլովի գործակատարը՝ շան բնի մոտով շտեմարան գնալիս, Տրեզորին քնած գտավ։ Երբեք այդպիսի բան չէր պատահել նրա հետ։ Քնե՞լ էր արդյոք նա երբևիցե, այդ բանը ոչ ոք չգիտեր և, համենայն դեպս, ոչ ոք նրան քնած չէր տեսել։ Հասկանալի է, գործակատարը շտապեց այդ արտասովոր պատահարի մասին անհապաղ զեկուցել տիրոջը։

Վաճառական Վորոտիլովն ինքն անձամբ դուրս եկավ Տրեզորի մոտ, նայեց և տեսավ, որ նա հանցապարտ շարժում է պոչը, կարծես ուզում է ասել՝ ինքս էլ չեմ հասկանում, ինչպես է ինձ հետ այսպիսի բան պատահել։ Վաճառական Վորոտիլովն առանց զայրանալու, կարեկից ձայնով ասաց.

— Ի՞նչ է, ծերուկ, պատրաստվում ես խոհանո՞ց գնալ, ծերացե՞լ ես, ուժասպա՞ռ ես եղել։ Դե, լավ, դու խոհանոցում էլ հավատարիմ ծառայություն կմատուցես։

Սկզբում, սակայն, բավականացան Տրեզորին օգնական փնտրելու գործով։ Դյուրին խնդիր չէր։ Այնուամենայնիվ, բավական շատ որոնելուց հետո, Կալուգյան դարպասի մոտ գտան Արապկային, որը բավական լավ հեղինակություն ուներ արդեն։

Ես չեմ նկարագրի, թե ինչպես Արապկան առաջինն ընդունեց Տրեզորի հեղինակությունը և անառարկելի կերպով են-

թարկվեց նրան, ինչպես նրանք բարեկամացան, ինչպես Տրեզորին, ժամանակի ընթացքում, վերջնականապես խոհանոց տեղափոխեցին և ինչպես, չնայած դրան, նա գնում էր Արապկայի մոտ և առանց որևէ շահախնդրության, սովորեցնում էր նրան վաճառականական շան բոլոր իսկական հատկությունները։ Մի բան միայն կասեմ, որ ոչ ազատությունը, ոչ համեղ պատառների առատությունը, ոչ Կուտկային մոտ գտնվելու հանգամանքը Տրեզորի համար մոռացության չէին տալիս այն ոգևորության բոպեները, որ ունեցել էր նա շղթայակապ և ցրտից դողահար՝ ձմռան երկար գիշերներին

Ժամանակը, սակայն, անցնում էր, և Տրեզորն ավելի էր ծերանում։ Պարանոցին խոց էր գոյացել, որի պատճառով գլուխը կախ գցած էր պահում և մեծ դժվարությամբ էր ոտքի կանգնում։ Աչքերը համարյա չէին տեսնում, ականջները կախվել էին անշարժ, բուրդը թափվում էր և գույնը գցում, ախորժակը կորցրել էր, իսկ մշտապես օգացած ցուրտը հարկադրում էր խեղճ շանը կսած մնալ վառարանին։

— Կամքը ձերն է, Նիկանոր Սեմյոնիչ, բայց Տրեզորն արդեն սկսել է քոսոտել.— զեկուցեց մեկ անգամ խոհարարուհին վաճառական Վորոտիլովին։

Այդ անգամ, սակայն, վաճառական Վորոտիլովը ոչինչ չասաց։ Այնուամենայնիվ խոհարարուհին չէր հանգստանում և մի շաբաթ անց կրկին զեկուցեց.

— Չլինի թե հանկարծ երեխաները Տրեզորից վարակվեն... Բոլորովին քոսոտել է...

Բայց այս անգամ էլ Վորոտիլովը ոչինչ չասաց։ Այն ժամանակ խոհարարուհին, երկու օրից, արդեն բոլորովին զայրացած, ներս վազեց և հայտարարեց, որ ինքն այլևս ոչ մի րոպե չի մնա, եթե Տրեզորին խոհանոցից չհեռացնեն։ Եվ որովհետև խոհարարուհին հիանալի խոճկոր էր եփում, իսկ Վորոտիլովն անսահման սիրում էր այդ կերակուրը, ապա Տրեզորի բախտը որոշվեց։

— Այդ վախճանը չէի նախատեսել ես Տրեզորի համար,— ասաց զգացված,— բայց երևում է, առածը ճիշտ է ասում, որ շանը շան մահ է սպասում... խեղդել Տրեզորին։

Եվ ահա Տրեզորին բակ դուրս բերեցին։ Բոլոր ծառաները դուրս թափվեցին՝ շան մահվան հոգիվարքը տեսնելու։ Նույնիսկ տանտիրոջ երեխաները լցվեցին լուսամուտների առաջ։ Ճրապկան նույնպես այդտեղ էր և, տեսնելով ծեր ուսուցչին, ուրախ թափահարեց պոչը։ Տրեզորը ծերությունից հազիվ էր քարշ տալիս ոտները և, ըստ երևույթին, չէր հասկանում, թե ինչ է կատարվում, բայց երբ մոտեցավ դարպասին, ուժերը դավաճանեցին, և հարկադրված էին քռնած քարշ տալ։

Ինչ պատահեց հետո, այդ մասին պատմությունը լռում է, բայց Տրեզորն այլևս ետ չվերադարձավ։

Իսկ շատ չանցած՝ Արապկան Տրեզորի պատկերն ընդմիշտ հեռացրեց վաճառական Վորոտիլովի սրտից...

ԱՐԹՈՒՆ ԱՉՔԸ

Լինում է չի լինում մի թագավորության մեջ մի Դատախազ է լինում, և այդ Դատախազը երկու աչք է ունենում՝ մեկը նիրհող, մյուսն արթուն։ Նիրհող աչքով նա բացարձակապես ոչինչ չէր տեսնում, իսկ արթուն աչքով անընշան բաներ էր տեսնում։

Այդ թագավորության մեջ հնուց ի վեր սովորություն կար, որ երբ քաղաքացիներից մեկը որդի էր ունենում երկու աչքով՝ մեկը նիրհող, մյուսն արթուն, անմիջապես մարդահամարի տոմարում գրանցում էին. «Ճահիճում ապրող քաղքենի Ստահակ Անզգամյանը որդի ունեցավ Դատախազ անունով»։ Եվ ապա սպասում էին, մինչև երեխան չափահաս դառնա։

Այդպես պատահեց նաև այս անգամ։ Հազիվ էր երեխան հասակ առել, անմիջապես ծանուցեցին նրան, թե՝

— Համեցե՛ք։

— Մեծա՜վ ուրախությամբ, բայց շո՞ւտ է արդյոք սենատորական տեղ բացվելու։

— Ա՜խ, խնդրեմ, հենց որ բացվեց, իսկույնևեթ։

Պատկառելի դեմք ընդունեց երեխան, նայեց հայելուն,

ու տեսավ՝ հայելու միջից խորամանկի մեկն իրեն է նայում — դա ինքն է։ Շատ լավ։ Եվ, բամբասանք չլինի, անմիջապես գործի անցավ։ Նիրհող աչքով ոչինչ չէր տեսնում, իսկ արթուն աչքով աննշան բաներ էր տեսնում։ «Ես,— ասում է,— այստեղ մի քանի րոպեով եմ մնալու միայն՝ սենատ գնալու ճանապարհին՝ իսկ սենատում երկու աչքս էլ կփակեմ։ Ականջներս էլ, աստված տա, մինչ այդ, փակված կլինեն»։

Կաշառակերները, զրպարտիչները, մարդասպանները, կողոպտիչները, ավազակները տեսան, որ երեխան նրանց արթուն աչքով է նայում և իսկույն վախեցան։ Շատ միտք արեցին, թե ինչ անեն, ինչ չանեն, վերջապես որոշեցին նիրհող կողմով գնալ և Դատախազի նիրհող աչքի հովանու տակ պատսպարվել։

Եվ արթուն կողմն այնպես մաքրվեց, կարծես ի սկզբանե անտի չէին եղել ոչ չարագործներ, ոչ ավազակներ, ոչ մարդասպաններ, այլ եղել էին և կան միայն սովորական ստախոսներ, սրիկաներ, մատնիչներ, դավաճաններ և կեղծ բարեպաշտներ, որոնց նկատմամբ Դատախազն, իսկապես ասած, անելիք էլ չունի։

Իսկ երեխան՝ տեսնելով, որ միայն իր արթուն հայացքից այդպիսի մաքուր հորիզոններ բացվեցին, ուրախանում է։ Մի՞թե,—մտածում է,— իշխանությունը նկատի չի ունենալու իր եռանդը։

Եվ սկսեց նա հպարտ-հպարտ զբոսնել դատական-վարչական դաշտում։ Քայլում է և սուլում՝ զգուշացե՛ք, մի գդալ ջրում կխեղդեմ։

Տեսնում է՝ մի մարդ կանգնած, հարայ-հրոցով գոչում է. «Թալանեցին, կարո՞ւլ»։ Հասկանալի է, անմիջապես մոտենում է թալանվածին։

— Ի՞նչ ես փողոցով մեկ գոռգոռոցը գցել, ես քու այսպես-այնպեսը։ Հիմի ես քե՛զ...

— Ներեցեք, Դատախազ Ստահակյան, ավազակնե՞րը։

— Ո՞րտեղ են ավազակները։ Ի՞նչ ավազակներ։ Սո՛ւտ ես ասում, ոչ մի ավազակ չկա և չի՛ կարող լինել (իսկ նրանք նրա նիրհող աչքի կողմից թաքնվել էին քթի տակ)։ Դուք, պորտաբույծներ, դիտավորյալ կերպով դատարկ գանգատներով ուզում եք իշխանության գործը դժվարացնել... Բանտարկե՛լ սրան։

Առաջ է անցնում, լսում է. «Դատավոր Ստահակյան, կաշառակերները հոգի հանեցին։ Կաշառակերնե՞րը, չարագործնե՞րը, կեղծողնե՞րը, շնացողնե՞րը»։

— Ո՞ւր են կաշառակերները, ո՞ւր են չարագործները, ոչ մի կաշառակեր ես չեմ տեսնում։ Դուք դիտավորյալ եք աղաղակում, ձեր այսպես-այնպեսը, որպեսզի հեղինակությունները գցեք։ Բանտարկե՛լ սրան։

Կրկին առաջ է անցնում, լսում է. «Պետական և հասարակական գույքը թալանում են, ի՞նչ եք անում, Դատախազ Ստահակյան, ահա՛ կողոպտիչները, սրա՞նք են»։

— Ո՞ւր են կողոպտիչները, ո՞վ է պետական գույքը թալանում։

— Ահա՛ կողոպտիչները, սրա՛նք են։ Ահա սա՛, տեսեք՝ ի՞նչ հագուստ է կարել տվել գողացած փողերով։ Իսկ այն մյուսը, քանի՞ դեսյատին հող է գողացել պետությունից։

— Սո՛ւտ ես ասում, քու այսպես-այնպեսը։ Սրանք կողոպտիչներ չե՛ն՝ այլ սեփականատերե՛ր։ Նրանք իրենց սեփական կայքին են տիրապետում և ունեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն այդ մասին։ Դուք դիտավորյա՛լ եք աղաղակ բարձրացնում այդ մասին, դատարկապորտներ, որպեսզի սեփականության սկզբունքը խախտեք։ Ձերբակալե՛լ սրան։

Քանի առաջ է գնում, այնքան ավելի ու ավելի աղաղակներ է լսում. «Կինն առավոտից մինչև իրիկուն ամուսնու կյա՞նքն է մաշում»։— «Ամուսինը կնոջն անշուշտ գերեզման կիջեցնի»։— «Ո՛չ մի բանի ուշադրություն չեք դարձնում դուք, դատախա՞զ Ստահակյան»։

— Այդ ե՞ս ուշադրություն չեմ դարձնում։ Իսկ դու տեսե՞լ ես ինչ աչք ունեմ ես։ Մեկ հատ է միայն, բայց որչա՞փ հեռուներն եմ տեսնում։ Այնքան հեռուները, որ անգամ քո հոգի՛ն եմ տեսնում ամբողջովին, ապիկա՞ր։ Եվ գիտեմ՝ ի՞նչ եք կամենում դուք, անպիտաններ։ Դուք ուզում եք ընտանեկան միությունը քայքայել։ Ձերբակալե՛լ սրան։

Մի խոսքով բոլոր միությունները շոշափեց և ամեն տեղ

էլ գտավ, որ միությունները իրենք անսասան են, սակայն աղմկարարները անպայման կքայքայեն, եթե նրանց բերանները ժամանակին չվազվի։

Իսկ երբ տղան պետական միությանը հասավ, այլևս խոսք էլ բաց չարեց։ Բղավում է միայն. «Ձերբակալե՛լ սրան, կապկապե՛լ նրան, բանտի շորս պատի մեջ թաղե՛լ»։ Ինքը բղավում է, իսկ արթուն աչքն անիվի նման պտույտ է գործում աչքի խոռոչում։

Ամբողջ օրն այսպես տառապում է երեխան, միությունները է պաշտպանում, իսկ երեկոյան տուն է վերադառնում հանգստանալու։ Պառկում է մահճակալի վրա ու մտածում. «Ամեն ինչ ես կատարել եմ այնպես, ինչպես իշխանությունն է ցանկանում։ Կողոպտիչներին, կաշառակերներին, անբարոյականներին և ի չարը գործ դնողներին իմ արթուն աչքի օգնությամբ ես ցիր ու ցան եմ արել, իսկ իշխանության հեղինակությունը գցողների նկատմամբ, որոնք անտեղի գանգատներով անհանգստություն են պատճառում իշխանությանը, հատուկ կարգադրություն եմ արել։ Մաքո՞ւր, պատվավո՞ր։ Հույս ունեմ, որ իշխանությունն էլ, իր հերթին, իմ աշխատանքն ըստ արժանվույն կգնահատի։

— Օրինակ՝ ի՞նչ ցանկանամ ինձ համար,— ասում էր նա ինքն իրեն։— Եթե սենատ գնալ ուզենամ, սակայն դեռ մի ականջս լսում է, մեկ էլ որ սենատը չի փախչի... Ա՛յ, եթե... թեկուզ ոչ հիմի... բայց ոչ, այդ այն ժամանակ կարելի է, երբ հոտոտելիքս էլ կորցրած կլինեմ։ Ոչ, առայժմ, այս մոտավոր ապագայում ի՞նչ ցանկանամ, օրինակ...

Վրդովեց, վրդովեց իր երևակայությունը, և վերջապես խանգարեց։ «Հարկավոր է ամուսնանալ՝ որքան կարելի է շուտ, ահա թե ինչ»,— որոշեց նա։

Եվ որովհետև նա հարսնացու որոնելու համար արթուն աչքը գործի դրեց, հասկանալի է, անմիջապես գտավ։ Գտավ օրիորդ Ագրիպինային, որն այնպես գեղեցիկ էր, որ ոչ պատմել կարելի է, ոչ նկարագրել։ Եվ հետն էլ երկու հարյուր հազար,— ճիշտ այնքան, որքան ներքին փոխառության խաղարկության տոմսի շահող գումարն է։

Ամուսնացավ։ Փառահեղ հարսանիք արեցին Գանգրահերյանի ճաշարանում և տուն մեկնեցին։ Տուն հասան թե չէ, նորահարսն անմիջապես թաքնվեց նիրհող աչքի հովանու տակ։ Նայում է Դատախազը, չկա։ Զայն է տալիս, «Ագրիպի՞նա, որտե՞ղ ես»։

— Ես Ագրիպինա չեմ, այլ Ագա՛ֆիա։ Եվ իմ անվանակոչությունը փետրվարի 5-ին է լինում։

Ա՜յ քեզ բան։ Վախից երեխան նույնիսկ գունատվեց։

Չլինի՞ սատանան սկսել է իր ծառայության գործին խառնվել։

— Դո՛ւրս եկ, Ագա՞ֆիա,— խնդրում է նա։

Տեսնում է Ագաֆիայի աչքերն էլ իր աչքերի նման մեկը նիրհում է, իսկ մյուսն արթուն է։ Միայն իր արթուն աչքն աչ կողմից է, իսկ նրանը՝ ձախ։ Կարծես թե բախտն ինքն է տնօրինել, որ նրանք երկուսով դատախազական պաշտոնը վարեն։

— Օժիտ ունե՞ս դու։

— Ես ոչ մի օժիտ չունեմ։ Ունեմ մեկ հատ արթուն աչք և ուրիշ ոչինչ։

Ա՛խ, գրո՛ղը տանի, այս ինչպե՞ս պատահեց։ Ագրիպինան հանկարծ Ագաֆիա դարձավ։ Սկսեց միտք անել, թե ինչպես այդպես պատահեց և բանից պարզվեց, որ շատ հասարակ ձևով է այդպես եղել։ Մինչ նա իր արթուն աչքով մի կողմ էր նայում, Ագրիպինան մի բոպեով բացակայել էր և ամուսնացել մի սպայի հետ, իսկ ինքն ամուսնացել էր... Ագա՞ֆիայի հետ։

Բանը բանից անցել էր։ Իզուր տեղը հո չէր փող տվել Գանգրահերյանին հարսանիքի համար, պետք էր մի կերպ ապրել միասին։ Պառկեցին քնելու, բայց նախազգուշական միջոցներ ձեռք չառան։ Նայում են միմյանց իրենց արթուն աչքերով — ինքը անգամ սարսափահա՞ր եղավ, բայց կնոջ համար ոչինչ, նույնիսկ հաճելի է։

— Վհո՞ւկ ես դու, ինչ է,— հարցրեց նրան։— Պատմի՛ր։

— Ոչ, ես վհուկ չեմ, այլ քո օրինավոր կինը։ Իսկ մինչև այսօր գողացած հին գուլպաներ էի ծախում Ապրակսինյան շուկայում։

— Ի՞նչպես թե «գողացած»։ Այդ ինչպես է եղել, որ ես քեզ չեմ բռնել։

— Մի՞թե դու կարող ես մեկնումեկին բռնել։ Դու շարունակ մի կողմ ես նայում, իսկ թե ինչ է կատարվում քո քթի ձախ կողմը, չես տեսնում։

— Որ այդպես է, եկ միասին բռնենք գողերին։ Ես այից, դու ձախից։

Մի խոսքով, գործերն այնպես հաջող ընթացք ստացան, որ մի տարուց մի որդի ծնվեց նրանց, նույնպես արթուն աչքով։

— Ա՜յ քեզ խենթուկ,— բացականչեց Դատախազը, իր առաջնեկին նայելով։

Այդ ժամանակ միայն հասկացավ նա, որ որչափ էլ թանկ է արթուն աչքը, բայց երկու սովորական աչքը, թերևս, առավել թանկ է։

Նրա ծառայությունը, մինչ այդ, իր հերթին շարունակում էր իր երթը։ Կամաց-կամաց բոլոր բանտերը լցրեց աղմկարարներով, իսկ կողոպտիչները, կաշառակերները, կոնցեսիոներները և մյուս իսկական ցնցում առաջացնողները, նրա նիրհող աչքի հովանու տակ բարեբաստիկ կյանք էին վայելում։

Շատ տևեց թե քիչ այսպես, բայց ժամանակի ընթացքում նա սկսեց երկու ականջով էլ ծանր լսել։ Նույնիսկ արթուն աչքը կամաց-կամաց սկսեց փակվել։ Նշանակում էր՝ սենատ շտապելու իսկական ժամանակն էր, քանի դեռ հոտառությունը չէր կորցրել։

Լսում է... կանչում են։

Հագավ ֆլանելի ֆուֆայկան, բրդե գուլպաները և ոտքերին քաշեց երկարավիզ թաղիքե կոշիկները, ականջները խծուծեց, քափուրի յուղով օծվեց, մուշտակի մեջ փաթաթվեց, իսկ Ագաֆիան մուշտակի վրայից բրդե շարֆով փաթաթեց վիզը։ Եվ սենատ գնաց։ Գնում է ու մտածում, թե ինչ երազ է տեսնելու նա՝ առաջին անգամ սենատում նստած ժամանակ։

Բայց միանգամայն անսպասելի բան պատահեց։ Մինչ նա արթուն աչքով շարունակ աջ էր նայում, սենատն անցավ ձախ կողմը և նիրհող կողմում թաքնվեց։ Փնտրում է Դատախազ Ստահակյանը, քթով օդն է հոտոտում, լեզուն է ծպպացնում, նույնիսկ ձեռքերով շոշափում է չորս կողմը, բայց սենատը ոչ մի կերպ գտնել չի կարողանում։

Վերջապես տեսնում է, որ քաղաքապահն արթուն պահակ է կանգնել իր պոստում։ Բնականորեն մոտենում է նրան։— Այսպես ու այսպես, բարեկամս, չգիտե՞ս ինչ է եղել սենատը։

Քաղաքապահը նայեց նրան և իսկույն ըմբռնեց նրա արթուն հոգին։

— Գիտեմ,— ասաց նա,— սենատն ահա այնտեղ է։ Ահա շողշողում է արեգակի տակ։ Հսկում է, որ ոչ մի ստահակ օրենքը ոտնահար չանի... Է՞հ դու, է՞հ։ Սակայն սենատում ամեն մարդու համար տեղ չկա պատրաստված։ Դու, ահա, արթուն աչքովդ նայել ես գրքերին, բայց ոչինչ չես տեսել, այնպես որ այժմ այդ տեսակներին սենատ թողնելու հրաման չի տրված։ Ավելի լավ է, հաշմանդամ, տուն վերադարձիր, կոշիկներդ հանիր, աչքերդ տրորիր, ականջներդ լվա ու պառավիդ հետ պառկիր՝ քնելու... Իսկ սենատում այժմ այնպիսի կարգ է սահմանված, որ թե գլուխը և թե մնացած բոլոր անդամները, ամեն ինչ պետք է իրենց տեղը լինեն, և բոլորի աչքերն ու ականջները բաց լինեն։

Այդպես էլ Դատախազ Ստահակյանը սենատ չընկավ։

ՀԻՄԱՐԸ

Այս դեպքը պատահել է շատ հին տարիներում, նոյ նահապետի ժամանակ։ Խելոք ծնողները հիմար որդի ունեցան։ Իվանուշկան քանի դեռ մանուկ էր, ծնողները զարմանում էին, թե ո՞ւմ է քաշել նա։ Մայրն ասում էր, որ հորն է քաշել, հայրը պնդում էր, որ մորն է քաշել։ Շատ միտք արեցին նրանք և վերջապես որոշեցին, որ, ըստ երևույթին, քաշել է երկուսին։

Ծնողներին անհանգստացնողը, սակայն, այն չէր, որ

իրենց որդին հիմար է — տանը սազական հիմարը վատ չէ, նույնիսկ ցանկալի է։ Բայց նրանց անհանգստացնում էր այն հանգամանքը, որ նա առանձնահատուկ հիմար է, այնպիսի հիմար, որի համար, մեկ էլ տեսար, հարկադրված ես լինելու իշխանության առաջ պատասխանատու լինել։ Կարող է փորձանք բերել, խենթություն անել, բայց ի՞նչ իրավունքով, ո՞ր օրենքի հիման վրա։

Լինում են թեթև հիմարներ, բայց սա բարդ, դժվար հասկանալի հիմար էր։ Օրինակ, Միլիտրիսա Կիրբիտևնայի որդի Լյովկան նույնպես հիմար է, ոտաբոբիկ փողոց է վազում, բաց է անում շապիկի թևքերը, ցատկոտում է մի ոտքի վրա և բացականչում. «Տիլի՞ն-տիլի՞ն, Լյովկին ծեծին, բիմի՞-բիմի՞, բո՞մ-բո՛ւմ»։ Անմիջապես նրան բռնում են, փակում են ցուրտ սենյակում։ Լյովկային նույնիսկ նահանգապետին ցույց տվեցին, երբ նա վերաքննություն կատարելու էր ժամանել։ Նահանգապետը գովեց նրան և ասաց ծնողներին. «Լավ խնամեցեք, հիմարները մեզ հարկավոր են»։

Իսկ այս հիմարն արտասովոր հիմար է։ Երբ տանն է նստում, գրքեր է կարդում կամ հորն ու մորն է գուրգուրում, բայց հանկարծ՝ մեկ էլ տեսար՝ սիրտն սկսեց բոցավառվել։ Այնպես է վազ տալիս, որ երկիրը ցնցվում է։ Այն գործին, որին պետք է մոտենալ զարտուղի ճանապարհներով, նա վրա է տալիս առանց այլևայլության, այն խոսքերը, որոնք պետք է ամենևին մոռացության տալ, նա հենց ուղղակի երեսով է տալիս։ Մի կողմից լավ է, մի կողմից՝ վատ։ Ուզում ես վրան բղավիր, ուզում ես ծեծիր, ոչինչ չի զգում, ոչինչ չի լսում։ Իր ուզածը կանի և կրկին տուն վազ կտա հոր ու մոր մոտ, նրանց թևի տակ։

— Ի՞նչ է պատահել քեզ, աչքիս լույսս Նստիր, սիրելիս, հանգստացիր։

— Ես, մայրիկ ջան, հոգնած չեմ։

— Ո՞ւր էիր գնացել, հոգյակս։ Ձչ ոքի ոչինչ չես ասում ու գնում ես։

— Ես, մայրիկ, գնացել էի Լյովկայի մոտ։ Լյովկան հիվանդ է, հաց էր ուզում։ Գնացի հացավաճառի սեղանից վերցրի ու տարա նրան։

Լսում է մայրն այդ խոսքերն ու բացականչում.

— Ա՜խ, սպանեցիր, գլուխս ողջ-ողջ թաղեցիր։ Այդ ի՞նչ ես արել։ Նշանակում է այդ դո՞ւ ես հացը գողացել։

— Ինչպե՞ս թե «գողացել»։ Ի՞նչ է նշանակում «գողացել»։

Հարևանները նույնիսկ մի քանի անգամ զգուշացրել էին ծնողներին.

— Սաստեցեք ձեր հիմարին։ Իր հիմարությամբ նա շատ փորձանք կբերի ձեր գլխին։

Բայց ծնողները ոչինչ անել չէին կարող։ Հեշտ է ասելը՝ «սաստեցեք»։ Բայց ինչպե՞ս կարող ես սաստել։ Ինչպե՞ս չեն կարողանում հասկանալ այդ մարդիկ, որ ծնողական սիրտը հիմար որդու համար ավելի է ցավում, քան խելոքի։

Եվ հիրավի, հայրը երբեմն սկսում էր խրատել հիմարին, թե «հացը մասնավոր սեփականություն է». որդին կարծես հասկանում է՝ «այո՛, հայրիկ»։ Բայց հանկարծ այդ ժամանակ որտեղից որտեղ հայտնվում է Լյովկան ու խնդրում.

— Վա՜նյա, հա՛ց տուր։

Վանյան անմիջապես նետվում է և հացավաճառի սեղանից հացը թռցնում։ Դե արի ու հասկացիր՝ հացը նա գողացա՞վ թե չգողացավ։

Հացավաճառը համբերեց-համբերեց, բայց վերջը թաղամաս գնաց, գանգատ տվեց։

Թաղամասի ոստիկանապետը եկավ հիմարի ծնողների մոտ և ասաց. «Ինչպես կուզեք, սակայն բարեհաճեցեք ձեր հիմարին ծեծել»։ Ծնողական սիրտը շատ էր ցավում, բայց հնար չկար։ Հայրը տեսավ, որ ոստիկանապետն իրավացի է, ուստի հիմարին մի լավ ծեծ տվեց։

Սակայն հիմարը ոչինչ չըմբռնեց։ Ցավ զգալով, լաց եղավ, բայց չգանգատվեց՝ թե «ինչո՞ւ» են ծեծում իրեն և չբացականչեց թե՝ «այլևս չեմ անի»։ Ավելի շուտ զարմացավ, թե հոր ինչի՞ն էր պետք իրեն ծեծելը։

Այդպես էլ այդ դասը ապարդյուն անցավ։ Իվանուշկան ինչպես հիմար էր նախքան ծեծ ուտելը, այդպես հիմար էլ

մնաց ծեծ ուտելուց հետո։ Երբ լուսամուտից տեսնում էր, որ Լյովկան ոտաբոբիկ փողոց է դուրս եկել, ինքն էլ դուրս էր վազում, հանում էր կոշիկները, շապիկի թևերն արձակում էր և սկսում հիմարի հետ միասին անմիտ բաներ անել։

— Այդ ինչե՞ր ես անում,— բարկանում էր մայրը,— ծաղրում ես հիմարին։

— Մայրիկ ջան, ես չեմ ծաղրում, այլ հետը խաղ եմ անում, որովհետև նա միայնակ տխրում է։

— Այնքան այդպես կանես, կանես, վերջը ինքդ էլ կհիմարանաս։

Լսում է հայրն այս խոսակցությունը և բարկանում մայրիկի վրա։

— Դրա համար հարկավոր է նրան ծեծել, իսկ դու ուզում ես խոսքերով խելքի բերել։ Խոսիր, ինչքան կուզես, կխելոքանա, ինչպե՞ս չէ։ Եթե դու շուտ-շուտ նրա շապիկը բարձրացրած, ծեծ տված լինեիր, հիմի վազուց մարդ դարձած կլիներ։

Եվ բոլոր հարևանները հավանություն էին տալիս հայրիկի ասածներին, նախ, որովհետև օրենք կա, որ հիմարներին պետք է խրատել, և ապա, որովհետև բոլորը Իվանուշկայի ձեռքից օր չունեին։ Անցյալ օրը հարևանների երեխաները հավաքվում, ուզում են այծին շարացնել, բայց Իվանուշկան պաշտպան է դուրս գալիս, չի թողնում։ Կանգնում է այծի և նրանց մեջ ու չի թույլ տալիս այծին նեղացնեն։ Այծը պոզերով խփում է նրան ետևից, տղաները առաջից են խփում՝ տուր թե կտաս ինչով պատահի, բայց նրա հոգը չէ։ Տուն բերին ամբողջովին կապտած։ Իսկ մյուս օրը նորից պատմություն. խոհարարի ձեռքից աքաղաղը փախցրեց։ Խոհարարը թևի տակ դրած մի աքաղաղ էր տանում, դիմացը դուրս է գալիս հիմարը։ «Այդ ո՞ւր ես տանում աքաղաղը, Կուզմա»։— «Հայտնի է, տանում եմ խոհանոց, արգանակի մեջ գցելու»... Հանկարծ հիմարն այնպես է վրա պրծնում խոհարարին, որ մինչև նա ուշքի կգար, աքաղաղն արդեն ցանկապատին թառած, թևերն էր թափահարում։

Շատ բացատրեց հայրիկը, թե, «Աքաղաղը քոնը չէր, ինչպես համարձակվեցիր խոհարարի ձեռքից խլել», բայց

նա շարունակ իրենն է կրկնում. «Գիտեմ, որ աքաղաղը իմը չէ, բայց խոհարարինն էլ չէ. այլ ինքն իր սեփականն է»...

Որչափ էլ տնեցիները սիրում էին հիմարին իր քաղցրաբարո և խաղաղ բնավորության համար, բայց ժամանակի ընթացքում նա իր արարքներով բոլորի հոգին հանեց։ Ուտել է ուզում, սակայն մորը չի խնդրում, թե՝ սիրելի մայրիկ ջան, թույլ տուր պահարանից կարկանդակ վերցնեմ, այլ ինքն իր գլխի գնում քրքրում է և՛ պահարանը, և՛ խոհանոցը, և ինչ ձեռքն է ընկնում, առանց հարցնելու ուտում է։ Զբոսնել է ուզում, տեսար գլխարկն առավ և առանց մեկն ու մեկին մի խոսք ասելու, գնաց։ Մի անգամ լուսամուտի տակ մի աղքատ ողորմություն խնդրեց, իսկ այդ րոպեին, հակառակի պես, սեղանի վրա մի հատ երեքանոց կար, վերցրեց և ամբողջ երեք մանեթն էլ աղքատի մախաղը դրեց։

— Տե՞ր աստված, սրանից իսկական Կարտուշ[41] է դուրս գալու,— բացականչեց մայրը հուսահատ։

— Եվ անպայման դուրս կգա,— վրա բերեց հայրը։— Ավելի վատ բան դուրս կգա, եթե դու, փոխանակ նրան ծեծելու, հետը լեզու թափես։

Ուրիշ ճար չկար, մայրն էլ ծեծեց հիմարին, բայց ծեծեց, պետք է ճշմարիտն ասել, թեթև, այնպես որ, միայն խրատ լինի։ Իսկ նա ելավ տեղից և արցունքներն աչքերին, գրկեց մորը։

— Ա՜խ, մայրիկ ջան, մայրիկ, իմ խե՜ղճ մայրիկ։

Եվ հանկարծ՝ մայրն այնպես ամաչեց, այնպես ամաչեց, որ ինքն էլ արտասվեց։

— Իմ անգի՜ն հիմարիկս, գե՛թ բարեգո՛թ աստված մեզ իր մոտ կանչեր միասին։

Վերջապես, սակայն, նա քիչ մնաց իրեն էլ, մորն էլ կործաներ։ Մի անգամ նրանք ամբողջ ընտանիքով զբոսնում էին գետափին։ Հայրիկը թևանցուկ էր արել մայրիկին, իսկ նա գնում էր առջևից և իրեն երևակայում էր որպես հետախույզ։ Իբրև թե նրանք պատրաստվում են Նիգերյան աղբյուրները հայտնագործել և իրեն առաջ ուղարկել են իմանալու, վտանգ հո չի՞ սպառնում որևէ կողմից։ Հանկարծ հառաչանքներ են լսվում։ Նայում են նրանք գետի կողմը

և տեսնում են, որ մի երեխա թպրտում է ջրի մեջ։ Դեռ ուշքի չէին եկել, որ հիմարը գետը նետվեց, իսկ հիմարի ետևից մայրիկը, հենց այդպես կրինոլինով իրեն ջրի մեջ զգաց։ Մայրիկի ետևից էլ երկու քաղաքապահ՝ իրենց հանդերձանքով։ Իսկ հայրիկը, ցանկապատի մոտ կանգնած, թևերն է թափահարում թռչունի նման և աղաղակում. «Մերո՛նց ազատեցեք, մերո՛նց»։ Վերջապես քաղաքապահները երեքին էլ հանեցին ջրից։ Մայրիկը միայն վախեցավ, իսկ հիմարը մի ամբողջ ամիս տաքության մեջ պառկած մնաց։ Հասկացա՞վ, որ հիմար բան արեց, թե մայրիկին խղճահարվեց, միայն երբ ուշքի եկավ և տեսավ իր գլխավերևը նստած մայրիկին նիհարած ու գունատ, արցունքները խեղդեցին նրան։ Լաց է լինում և շարունակ կրկնում է. «Մայրիկ ջան, մայրիկ, ինչո՞ւ աստված մեզ իր մոտ չտարավ»։

Իսկ հայրը կանգնած էր այդտեղ և հույս ուներ, որ հիմարն այս անգամ գոնե կասեր. «Ներեցեք, սիրելի հայրիկ, այլևս չեմ անի»։ Սակայն նա ոչ մի ուլդպիսի բան չասաց։

Այդ դեպքից հետո հայրիկն ու մայրիկը լուրջ խորհուրդ արեցին, թե ինչպես վարվեն հիմարի հետ։ Նրանք գրկված քայլում էին դահլիճում, առարկան քննում էին ամեն կողմից և երկար ժամանակ ոչ մի եզրակացության գալ չէին կարողանում։

Բանն այն է, որ հայրիկը ճշմարտասեր մարդ էր։ Ե՛վ տանը, և՛ հյուր եղած տեղը, և՛ փողոցում նա շարունակ այն էր կրկնում, որ՝ «ավելորդ է օրենք գրելը, եթե օրենքը չի կատարվելու»։ Նույնիսկ նրա արտաքինը չափազանց ծիծաղելի էր, կարծես մի ձեռքին կշեռք բռնած լիներ, իսկ մրյուսով մարդկային արարքների կշռաթաթում մերթ մսխալ էր ավելացնում, մերթ կես մսխալ էր գցում հատուցման թաթում։ Ուստի և, նկատի առնելով բոլոր վերոհիշյալները, նա պահանջում էր, որպեսզի Իվանուշկայի հետ վարվեն ընտանեկան կոդեքսի ողջ խստությամբ։

— Ջանցառություն է թույլ տվել, նշանակում է պետք է և համապատասխան հատուցում ստանա։ Ա՛յ, տե՛ս։—Եվ նա ցույց տվեց մայրիկին մի աղյուսակ հետևյալ նշանակումներով.

Հանցանքի տեսակը Հնոզանդության կանոններից շեղվելու համար	Հատվածների քանակը սկսած մինչև
5	7

Բայց մայրիկը մայրիկ էր և ուրիշ ոչինչ։ Արդարությունը նա չէր ժխտում, բայց այն հասկանում էր իր նախնական իմաստով, ինչ իմաստով որ հասկանում է հասարակ ժողովուրդը՝ «արդարադատ» մարդու մասին խոսելիս։ Առանց հատուցման, այլ մի տեսակ, կարծես ներման իմաստով։ Եվ որչափ էլ մայրիկն իրավաբանորեն շատ քիչ էր զարգացած, բայց և այնպես մի րոպեում հայրիկին խայտառակ արեց։

— Ինչո՞ւ պետք է մենք նրան պատժենք,— ասաց նա,— նրա համար, որ խեղդվողին ազատե՞ց։ Ուշքի՛ եկ։

Այնուամենայնիվ հայրիկը պնդեց, որ հիմարին տանը պահել անհնարին է, այլ պետք է նրան «ուսումնարան» հանձնել։

Ուսումնարանի կարգ ու կանոնի ենթարկված խաղաղ կյանքը սկզբնական շրջանում հիմարի վրա բավական բարերար ազդեցություն ունեցավ։ Ոչ մի բան չէր գրգռում նրա զգայնությունը, նրա մեջ հանկարծակի հոգեկան շարժումներ չէր արթնացնում։ Առաջին տարիներում նույնիսկ կանոնավոր ուսում չկար, այլ միայն յուրացվում էր ուսման նյութը։ Նույնպես և ընկերական միջավայրում խիստ տարբերություն չէր նկատվում, այնպիսի տարբերություն, որ մխիթարելու, օգնելու հարկ լիներ։ Ամեն բան գնում էր այն միջին ընթացքով, որը ուսման հաջողությունը կապում է գլխավորապես հիշողության հետ։ Եվ որովհետև Իվանուշկան հիանալի հիշողություն ուներ, այլև սիրտը ոսկի սիրտ էր, ապա քիչ էր մնացել, որ Իվանուշկան իսկապես էլ հիմարից խելոք դառնար։

— Ախր ասում էի ես քեզ,— հաղթական ասում էր հայրիկը։

— Լավ, լավ, մի բարկացիր,— պատասխանում էր մայրիկը, ասես մեղա գալով, որ շտապել էր հայրիկին խայտառակել։

Բայց առաջադրվող գիտության ծավալը մեծանալու հետ Իվանուշկայի գործը բարդանում էր։ Գիտությունների մեծ

մասը նա ամենևին չէր հասկանում։ Չէր հասկանում պատմությունը, իրավաբանությունը, հարստության կուտակման և բաշխման գիտությունը[42]։ Ոչ այն պատճառով, որ չէր ցանկանում հասկանալ, այլ ուղղակի չէր հասկանում։ Եվ ուսուցիչների ու դաստիարակների բոլոր հորդորներին մի պատասխան էր տալիս միայն՝ «չի կարող այդպես լինել»։

Միայն այդ ժամանակ վերջնականապես իմացան, որ նա անտարակույս կատարյալ հիմար է։ Այնպիսի հիմար, որին մատչելի կարող են լինել միմիայն գիտության արտաքին կողմը, բայց ինքը գիտությունը՝ երբե՛ք։ Բնությունը ժամանակ առ ժամանակ դաժան է լինում, մարդկային ընդունակությունները երևան է բերում միայն այբբենական նյութը հասկանալու աստիճան, իսկ երբ մարդ նյութից եզրակացություններ հանելուն է հասնում, ամեն ինչ փակվում է նրա առաջ։

Հայրիկը կրկին ամոթահար եղավ ու սկսեց մայրիկին կշտամբել, որ Իվանուշկան նրան է քաշել։ Բայց մայրիկն այլևս ականջ չէր կախում կշտամբանքներին, այլ շարունակ լաց էր լինում։ Մի՞թե Իվանուշկան հենց այդպես իր ամբողջ կյանքում հիմար է մնալու։

— Դու գոնե ձևացիր, թե հասկանում ես,— համոզում էր նա Իվանուշկային,— հարկադրիր ինքդ քեզ, գոնե մի փոքր հասկացիր, ա՜յ, արի ցույց տամ։

Մայրիկը բաց է անում գիրքը և կարդում։ «§ Ժառանգության կարգի մասին ըստ օրենքի միաարգանդից»— և ամենևին բան չի հասկանում։ Լաց են լինում նրանք երկուսով՝ և՛ հիմարը, և՛ մայրը։ Իսկ հայրիկը մինչ այդ ջրի պես վրա է տալիս. «Միաարգանդիցը, նախ և առաջ, անհրաժեշտ է տարբերել, առաջինը՝ արյունակիցներից, երկրորդ՝ նրանցից, որոնք, լինելով միաարգանդ, միաժամանակ և արյունակիցներ են և, երրորդ, փոսիկի տղաներից»...

— Ա՜յ, հայրիկն ինչպես լավ է իմանում,— զարմանում է մայրիկը, շարունակելով լաց լինել։

Տեսնելով մայրական արցունքները, հիմարը հաճախ լարում էր իր բոլոր ուժերը։ Դասամիջոցներին մտնում է դասարան, բաց է անում տետրակը, մատներով փակում է ականջներն ու սկսում է անգիր սերտել։ Անգիր է անում և այնպես լավ է պատասխանում դասը, ասես բակլա է բաժանում։ Բայց հանկարծ այնպիսի մի բան է դուրս տալիս Ալեքսանդր Մակեդոնացու[43] մասին, որ ուսուցչի ճաղատ գլխին եղած երեք հատ մազն էլ փշաքաղվում է։

— Նստեցեք,— ասում է ուսուցիչը,— տխուր վիճակ է սպասում ձեզ ապագայում։ Դուք երբեք պետական մարդ չեք դառնա։ Գոհացեք աստծուց, որ նա ձեզ այնպիսի ծնողներ է տվել, որոնք ոչ մի նկատողության տակ չեն ընկել։ Որովհետև, եթե նկատողության տակ ընկած լինեին... Նրստեցեք, և եթե կարող եք, աշխատեցեք չզայրացնել ձեր դաստիարակներին անհանդուրժելի արտահայտություններով։

Եվ իրոք, միայն շնորհիվ ծնողների ազնվաբարո լինելուն, հիմարին դասարանից դասարան էին փոխադրում և վերջապես ուսումնարանն էլ ավարտել տվեցին աստվածանվեր։ Բայց երբ նա ավարտական վկայականը ձեռքին տուն եկավ, մայրիկը հենց որ տեսավ ինչ է գրված վկայականում անմիջապես սկսեց արտասվել, իսկ հայրիկը խիստ հարցրեց.

— Այդ ինչ ես արել դու, անզգա կուրք։

— Ես, հայրիկ, ոչինչ չեմ արել, երևի ուսումնարանի կարգն է այդպես...

Նույնիսկ մի կարգին բացատրություն չտվեց։ Լյովկային տեսնելով փողոցում, անմիջապես դուրս վազեց։

Լյովկային նա սիրում էր առաջվանից ավելի, որովհետև խեղճ հիմարը ավելի թշվառ տեսք ուներ։ Ինչպես վեց տարի առաջ, նա կրկին ոտաբոբիկ էր, վտիտ ձեռքերը փոցխի նման պահած, բայց մազակալել էր և ահագին բոյ քաշել։ Միլիտրիսա Կիրբիտենան վաղուց ձեռք էր քաշել նրանից, չէր կերակրում և համարյա չէր հագցնում։ Ուստի նա միշտ քաղցած էր, և եթե գթասիրտ հայավաճառ կանայք չլինեին, վաղուց արդեն քաղցից մեռած կլիներ։ Բայց ամենից ավելի նա տանջվում էր փողոցի երեխաների ձեռքից։ Նրանք հանգիստ չէին տալիս նրան, ծաղրում էին, շներին քրս էին անում վրան, կսմթում էին սրունքները, քաշքշում էին շապիկը։ Ամբողջ օրը փողոցում լսվում էր նրա ոռնոցը, հիմարավարի

մոլեգին շրփշրփոցի հետ միատեղ։ Նա ոռնում էր ցավից, բայց չէր հասկանում, որտեղի՞ց է այդ ցավը գալիս...

Հիմարը պաշտպանեց Լյովկային, խնամեց, կերակրեց ու հագցրեց։ Այն ամենը, ինչ հարկավոր էր Լյովկային, Իվանուշկան վերցնում էր առանց թույլտվության, իսկ եթե չէր կարողանում գտնել, ապա պահանջում էր այնպիսի տոնով, կարծես թե նրա համար միանգամայն օտարոտի էր մերժում ստանալու պատկերացումն անգամ։ Միայն հիմարի ձայնի մեջ է այդպիսի համոզվածություն լինում, այդպիսի անառարկելիություն լինում հայացքում։ Ոչ ոքից և ոչնչից չէր վախենում, ոչ մի բանից չէր խորշում և վտանգի մասին ամենևին հասկացողություն չուներ։ Տեսնելով ոստիկանապետին, նա չէր անցնում փողոցի մյուս կողմը, այլ ուղղակի ընդառաջ էր գնում, կարծես ոչ մի հանցանք չուներ։ Քաղաքում եթե հրդեհ էր պատահում, առաջինն էր վազ տալիս հրդեհի վայրը, լսում էր՝ որևէ տեղ ծանր հիվանդ կա, վազ էր տալիս հիվանդի մոտ, նստում էր գլխավերևը և ծառայություններ մատուցում նրան։ Եվ նման դեպքերում այնպիսի խելացի խոսքեր էր ասում, կարծես ամենևին հիմար չլիներ։ Մի բան միայն ծանր քարի պես նստել էր նրա սրտի վրա. մայրն անքուն գիշերներ էր անցկացնում, մինչ նա իր հիմարությունն էր շարունակում։ Բայց նրա բախտի մեջ ինչ-որ մի անհաղթահարելի, ճակատագրական բան կար, որը նրան քաշում, ինքնանվաստացման, ինքնազոհաբերության էր տանում, և նա բնազդորեն ենթարկվում էր այդ մատնանշումին, չհետաքրքրվելով սպասվող արդյունքներով և թույլ չտալով ոչ մի գործարք նույնիսկ հօգուտ արյունակցական կապերի։

Շատ էին մտածում ծնողները, թե ինչ գործի դնեն հիմարին, որպեսզի նա փոքրիշատե մարդու նման լինի։ Հայրիկի միջնորդությամբ նրան տեղական դպրոցի հոգաբարձու նշանակեցին (առանց ռոճիկի, առանց ռոճիկի հիմարն էլ ձեռք կտար, իսկ ռոճիկով — անշո՛ւշտ), բայց հիմարն անմիջապես այնպիսի անհեթեթություններ թույլ տվեց իրեն, որ ոստիկանապետը, միմիայն ի պատվի նրա ծնողների արդեն ստուգված բարեբարոյության, համաձայնեց այդ գործը

կոծկել։ Այն ժամանակ մայրիկի գլխում միտք ծագեց հիմարին ամուսնացնել, գուցե աստված նրա կապանքները լուծի։ Հարսնացու ընտրեցին վաճառականի երիտասարդ այրի Պոդվոխինային։ Հարսնացուն գեղեցկուհի էր և երկու խանութ ուներ։ Այրությունը կրում էր անբասիր, մշտապես լավագույն տեսակի ապրանք էր ծախում, իր առևտրական գործերը վարում էր հմտությամբ և ինքնուրույն։ Մի խոսքով, նրանից էլ հաջող հարսնացու չէր լինի։ Հիմարն իր հերթին, նույնպես դուր եկավ հարսին. արտաքինը վայելուչ էր, վարվեցողությունը մեղմ։ Հարսնացուն նույնիսկ ուրիշների նման չէր պնդում, որ անխելք է, միայն գտնում էր, որ հարկավոր է նրա խելքը հայտնաբերել և միանգամայն վստահ էր իր վրա, որ այդ բանը իրեն կհաջողվի։

Բայց ընդհանրապես հիմարի բոլոր բնազդներն այն աստիճան թմրած էին, որ նույնիսկ այդ գթասիրտ և համեստ կինն անգամ զարմացավ։ Ոչ մի անգամ նա չցնցվեց նրան հպվելիս, ոչ մի անգամ խռովք չունեցավ, չզգաց մեկը այն անպատշաճություններից, դեպի որոնք այնքան սրտաբուխ կարեկցությամբ են վերաբերվում կանայք, բնազդորեն գուշակելով սիրո առաջին, հաճելի տրոփյունը։ Տուն էր գալիս հիմարը, ճաշում էր, թեյ էր խմում և, ըստ երևույթին, ամենևին չէր հասկանում, թե ինչու է ինքը Պոդվոխինայի մոտ, այլ ոչ իրենց տանը գտնվում։

— Այդ ինչպես չեք ձանձրանում. դուք ոչինչ չե՞ք հասկանում,— հարցնում էր նրան գեղեցկուհի այրին։

— Ախ, ոչ, ինձ համար շատ ձանձրալի է։ Ասում են նրանից է, որ ես ոչ մի զբաղմունք չունեմ։

— Այդ դեպքում զբաղվեցեք... սիրեցեք մեկնումեկին։

— Ներեցեք, ինչպե՞ս կարելի է չսիրել։ Բոլորին պետք է սիրել։ Երջանիկներին պետք է սիրել նրա համար, որ նրանք կարողացել են երջանիկ լինել, դժբախտներին նրա համար, որ նրանք զուրկ են ուրախությունից։

Այդպես էլ այդ հարսնախոսությունը գլուխ չեկավ։ Տրխրեց այրի Պոդվոխինան և նույնիսկ խոստացավ մի տարի սպասել, բայց մեկ-երկու ամիս սպասելուց հետո ծննդյան օրերին ամուսնացավ քաղաքագլուխ Լիխոյեդովի հետ։ Այժմ

նրանք արդեն չորս խանութ ունեն առևտրական շարքում. լի օրերին նրանք չորս խանութում էլ առևտուր են անում, կինը գալանտերեայի, ինքը՝ նպարեղենի բաժիններում, իսկ տոն օրերին ոստիկանապետին և մյուս իշխանավորներին կարկանդակով են հյուրասիրում։

Իսկ հիմարը մնաց տանը, ծնողների վզին և ամենևին հոգը չէր։ Վազում էր հրդեհների վայրը, հիվանդներին էր խնամում, խմբերով աղքատներ էր տուն բերում։

— Գոնե աստված հոգին առներ,— շշնջում է հայրիկը կամացուկ, որպեսզի մայրիկը չլսի։

Իսկ մայրիկը շարունակ աղոթում է, հույսը աստծու ողորմածության վրա դրած, որ տերը կլուսավորի Իվանուշկայի բանականությունը հասկացողությամբ, նրան պարոն ոստիկանապետի, նրա օգնականի և անփոփոխելի ատենակալի[44] ճանապարհով կառաջնորդի։ Պետք է որ նա որևէ պաշտոն ստանա։ Չի կարող պատահել, որ բոլորի համար գործ լինի, և միայն նրա համար չլինի։

Մի մարդ միայն այլ աչքով նայեց հիմարի վրա, բայց նա էլ պատահական անցորդ էր։ Անցնում էր նա այդ քաղաքով և որոշեց այցելել հայրիկին, որի հետ շատ հին բարեկամ էր։ Խոսեցին հին-հին պատմություններից, հիշեցին հին օրերը, կուշտ խոսեցին երիտասարդության օրերի հրապուրանքների մասին և, ի միջի այլոց, անդրադարձան նաև ներկային։ Հայրիկը, համենայն դեպս, դռները ծածկեց և երկուսով, ինչ որ ունեին իրենց սրտերում, ամեն ինչ հայտնեցին։ Բացատրվեցին։ Զարտահայտեցին, սակայն ամեն մեկը մյուսի մասին մտածեց. «Ահա թե դու ով ես, եղբայր»։ Պարզ է, գանգատներ եղան նաև հիմարից, և որովհետև նրանից այլևս չէին քաշվում, ուստի հենց իր ներկայությամբ, «հիմար» էլ մեծարում էին։ Հետաքրքրվեց անցորդը հիմարի մասին արված պատմություններով, գիշերելու մնաց բարեկամի տանը և մյուս օրն ասաց.

— Ամենևին էլ հիմար չէ նա, միայն թե՝ ստոր մտքեր չկան նրանում, այդ պատճառով էլ կյանքին հարմարվել չի կարողանում։ Պատահում են և այնպիսիները, որոնք ստոր մտքերից աստիճանաբար ազատվում են, բայց ազատման

այդ պրոցեսը մեծ ճիգեր է արժենում և հաճախ ծանր բարոյական ճգնաժամ է առաջացնում։ Իսկ նրա համար ոչ մի ճիգ հարկավոր չի եղել, որովհետև նրա օրգանիզմում չեն եղել այնպիսի ծակոտիներ, որոնց միջով կարողանային ներս սողոսկել ստոր մտքերը։ Ինքը բնությունն է պարգևել նրան այդ։ Սակայն, անկասկած է, որ կգա այն րոպեն, երբ կյանքի հորձանքն իր ճնշման ուժով կհարկադրի նրան հիմարության և ստորության մեջ ընտրություն կատարել։ Այն ժամանակ նա կհասկանա։ Միայն թե խորհուրդ չեմ տալիս ձեզ արագացնել այդ րոպեն, որովհետև հենց որ հասավ այդ րոպեն, աշխարհում այլևս նրանից դժբախտ մարդ չի լինի։ Բայց և այն ժամանակ՝ ես դրանում համոզված եմ՝ նա կդերադասի հիմար մնալ։

Ասաց անցորդն այդ, շարունակեց իր ճանապարհը։ Իսկ հայրիկը մտածմունքների մեջ ընկավ։ Սկսեց իր ողջ կյանքը քրքրել, վերհիշելով, թե ինչ ստոր մտքեր է ունեցել ինքը և ինչ ձևով է ազատվել նրանցից։ Եվ, հասկանալի է, որչափ էլ խիստ քննության ենթարկեց իրեն, բայց փորձությունից պատվով դուրս եկավ։ Երբեք նա ստոր մտքեր չէր ունեցել, հետևապես և նրանցից ազատվելու կարիք չէր զգացել։ Սակայն, ինչո՞ւ հապա ինքը հիմար չէ։

Վերջապես եկավ այն եզրակացության, որ իր վաղեմի բարեկամի խելքը շաղվել է։ «Նստել են Պետերբուրգի փոսերում ու զարգանում են։ Զարգանում են ու սկսում են անհեթեթ բաներ դուրս տալ։ Իսկ մենք ահա նստած ենք, Պոշեխոնում[45], չենք զարգանում, բայց և անհեթեթություններ թույլ չենք տալիս, այսպես ավելի հաստատուն է։ Եվ ամբողջովին փչում է. բնության ոչ մի պարգև չկա հիմարության մեջ, և եթե աստծու ողորմությամբ իմ հիմարը երբևիցե խելոքանա, ապա հավանորեն դրանից չի դժբախտանա, այլ ծառայության կմտնի և կսկսի ուրիշների նման ապրել»։

Այդպես վճռելով, սկսեց սպասել, որ շուտով Իվանուշկայի միտքը կսկսի լուսավորվել և նրան, ոչ օրինակ այլոց, անմիջապես ծառայության կկանչեն։ Բայց դրա փոխարեն մի գեղեցիկ առավոտ հայտնեցին նրան, որ հիմարը տանից բոլորովին անհայտացել է։

. . . . . .

Տարբերվել անելու արտասուքից ծերունի ծնողների աչքի լույսը պակասեց։ Ամեն բոպե սպասում էին նրանք, նրանց բոլոր մտքերն ուղղակի թե անուղղակի, շարունակ անհայտացած հիմարի շուրջն էին դառնում։ Ամեն ինչ մոռացել էին ծերունիները և մի միտք էին անում միայն՝ որտե՞ղ է այժմ նա, կո՞ւշտ է, հագուստ ունի՞ արդյոք։ Շա՞տ է դժվար հիմարի համար մեռնել-ոչնչանալը։ Աստված թշնամուս չտա այն տառապանքները, որ կրում է ծնողական սիրտը, ամբողջ հանցանքն իր վրա վերցնելով և մանկական հեծեծանքների հաղարապատիկ արձագանքով մորմոքվում։

Սակայն հիմարը վերադարձավ։ Վերադարձավ հանկարծ, այնպես, ինչպես անհայտացել էր։ Բայց առողջությամբ փթթող նախկին հիմարից հետքն էլ չէր մնացել։ Նա գունատ էր, վտիտ և տառապած։ Ո՞ր կողմերում էր թափառել նա, ի՞նչ էր տեսել, հասկացե՞լ էր, թե՞ չէր հասկացել, ոչ որ ոչինչ իմանալ չկարողացավ նրանից։ Տուն եկավ և լռեց։

Համենայն դեպս անցորդը իրավացի էր. նրան տված ճիշտ կոչումը այդպես էլ մնաց մինչև նրա մահը։

ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

Մի գյուղում երկու հարևան կային. Իվան Հարությունը և Իվան Աղքատը։ Հարությունին «պարոն» և «Սեմյոնիչ» էին հորջորջում, իսկ աղքատին՝ ուղղակի Իվան, երբեմն էլ Իվաշկա։ Երկուսն էլ լավ մարդիկ էին, իսկ Իվան Հարությունը՝ նույնիսկ գերազանց մարդ էր։ Իսկական ֆիլանտրոպ[46] էր ամեն կողմից։ Ինքը արժեքներ չէր արտադրում, բայց հարստության բաշխման մասին շատ աղնվաբար էր մտածում։ «Սա, ասում էր, իմ լուման է։ Կան այնպիսիները, որոնք և՛ արժեքներ չեն արտադրում, և՛ անաղնիվ են մտածում։ Դա նրանց կողմից արդեն խոզություն է։ Ես դեռ էլի ոչինչ»։ Իսկ Իվան Աղքատը հարստության բաշխման մասին ամենևին չէր մտածում (ժամանակ չուներ), բայց դրա փոխարեն, արժեքներ էր արտադրում։ Եվ նմանապես ասում էր. «Սա իմ լուման է»։

Հանդիպում էին նրանք տոն օրերի նախօրյակի երեկոներին, երբ թե աղքատները, և թե հարուստները պարապ են լինում, նստում էին Իվան Հարուստի ապարանքի առաջ եղած նստարանի վրա և զրույց էին անում։

— Դուք վաղը շչին ինչո՞վ եք եփելու,— հարցնում է Իվան Հարությունը։

— Դատարկով,— պատասխանում է Իվան Աղքատը։

— Իսկ մերը մսով է։

Հորանջում է Իվան Հարությունը, խաչակնքում է բերանը, նայում է Իվան Աղքատին և խղճում նրան։

— Տարօրինակ բաներ են կատարվում աշխարհում,— ասում է նա,— մարդ կա, որ շարունակ աշխատում է և տոն օրերին նրա սեղանի վրա դատարկ շչի է, իսկ ով օգտաշահ պարապությամբ է անցկացնում իր օրը, նա լի օրերին էլ մսով շչի է ուտում։ Ինչո՞ւ է այդպես։

— Ես էլ վաղուց մտածում եմ, թե ինչո՞ւ է այդպես, բայց մինչև վերջը մտածելու ժամանակ չունեմ։ Հենց որ սկսում եմ մտածել, տեսար՝ պետք է անտառը գնալ՝ փայտի, փայտը բերեցիր, տեսար՝ հարկավոր է գոմաղբը փոխադրել, կամ վար անելու ժամանակը եկավ։ Այդպես էլ գործի մեջ մտքերս շաղ են գալիս։

— Հարկավոր է, սակայն, որ մենք այդ բանի մասին միտք անենք։

— Ես էլ եմ ասում, հարկավոր է։

Իվան Աղքատն էր իր հերթին հորանջում, խաչակնքում է բերանը, գնում է քնելու և երազում վաղվա դատարկ շչին է տեսնում։ Իսկ մյուս օրն արթնանում է և տեսնում, որ Իվան Հարուստն իր համար անակնկալ նվեր է պատրաստել, շչիի համար միս է ուղարկել։

Հաջորդ տոնի նախօրյակին կրկին հանդիպում են հարևաններն ու կրկին հին նյութին են դառնում։

— Հավատո՞ւմ ես,— ասում է Իվան Հարությունը,— ես թե արթուն և թե քնած ժամանակ շարունակ այն եմ տեսնում, թե դու իմ համեմատությամբ որչափ զրկված ես։

— Դրա համար էլ շնորհակալ եմ քեզանից,— պատասխանում է Իվան Աղքատը։

— Թեպետև ես իմ ազնիվ մտքերով հասարակությանը քիչ շահ չեմ բերում, սակայն դու... եթե դու ժամանակին վար ու ցանքի դուրս չգաս, այն ժամանակ, թերևս, մենք անհաց նստենք։ Ճշմարի՞տ եմ ասում։

— Այդ մեկը շատ ճշմարիտ է։ Միայն թե աշխատանքի դուրս չգալ ես չեմ կարող, որովհետև այդ դեպքում առաջինը ես քաղցից կմեռնեմ։

— Ճիշտ ես ասում։ Շատ խորամանկ է այդ բոլորը սարքված։ Բայց դու չկարծես, որ ես հավանություն եմ տալիս դրան։ Աստված չանի։ Ես միայն մի վիշտ ունեմ. ինչպե՞ս անել, որ Իվան Աղքատը լավ ապրի։ Որպեսզի թե՛ ես իմ բաժինն ունենամ, թե՛ նա իր բաժինն ունենա։

— Դրա համար էլ, պարոն, շնորհակալ եմ, որ անհանգիստ եք լինում։ Այդ մեկը ճշմարիտ է, եթե ձեր բարերարությունը չլիներ, տոն օրը ես ջրաբրդոշից բացի ուրիշ բան չէի ունենա...

— Ի՞նչ ես ասում, ես ամենևին այդ նկատի չունեմ։ Դու այդ մասին մոռացիր։ Իսկ ես, ա՜յ ինչ եմ ասում։ Քանի-քանի անգամ որոշել եմ, թե հիմի հենց կայքիս կեսը բաժանեմ աղքատներին։ Եվ բաժանել եմ։ Բայց ի՞նչ է դուրս գալիս։ Այսօր բաժանում եմ կես կայքս, իսկ վաղն ապրենանում եմ, տեսնում եմ տեղը երեք քառորդով նորից ավելացել է։

— Նշանակում է, տոկոսներով...

— Ոչինչ անել չես կարող, եղբայր։ Ես փողից փախչում եմ, իսկ փողը գալիս է ինձ մոտ։ Ես աղքատին մի բուռ եմ տալիս, իսկ ինքս չգիտեմ որտեղից, երկուսն եմ ստանում։ Հրաշք է ուղղակի։

Խոսում են, խոսում ու սկսում են հորանջել։ Իսկ խոսակցության ընթացքում Իվան Հարուստն այնուամենայնիվ միտք է անում, թե ինչպես անի, որ վաղը Իվան Աղքատը մսով շչի ունենա։ Մտածում է, մտածում և վերջը հնարքը գտնում է։

— Լսիր, սիրելիս,— ասում է,— մինչև գիշեր այնքան էլ շատ չի մնացել արդեն, գնա իմ բանջարանոցը, մարգերը փորիր։ Դու մի ժամի չափ խաղ կանես բանջարանոցում, իսկ ես քեզ, ուժերիս ներածին չափով կվարձատրեմ, այնպես, իբրև թե դու իսկապես աշխատանք ես կատարել։

Եվ իրոք, Իվան Աղքատը խաղ է անում բահով մեկ-երկու ժամի չափ, իսկ մյուս օրը տոն է նրա համար, ասես թե, «իսկապես էլ աշխատած լինի»։

Շատ թե քիչ ժամանակ հարևաններն այսպես խոսք ու զրույց արեցին, միայն թե վերջիվերջո Իվան Հարուստի սիրտը բորբոքվեց այնպես, որ այլևս համբերությունն ըստ-ոավեց։— Կգնամ,— ասում է,— Ամենագլխավորի մոտ, կընկնեմ նրա առաջն ու կասեմ. «Դու մեր թագավորի աչքն ես, դու նորում ես ու կապում, դու պատժում ես ու ներում։ Ինձ ու Իվան Աղքատին այնպես հավասար դարձրու, որ եթե նրան դինվոր տանեն, ինձ էլ տանեն, նրանից սայլ պահանջեն, ինձանից էլ պահանջեն, նրա դեսյատինից հարկ վերցնեն, իմ դեսյատինից էլ վերցնեն։ Եվ որպեսզի թե՛ իմ և թե՛ նրա հոգիները միատեսակ ազատ լինեն ակցիզից»։

Եվ ինչպես ասել էր, այնպես էլ արեց։ Եկավ Ամենագլխավորի մոտ, ընկավ նրա առաջը, բացատրեց իր վիշտը։ Ամենագլխավորն այդ բանի համար Իվան Հարուստին գովեց և ասաց նրան. «Փառք ու պատիվ քեզ, բարի կտրիճիդ, որ դու քո հարևան Իվան Աղքատին չես մոռանում։ Իշխանության համար ավելի հաճելի ոչինչ չկա, քան այն, որ պետության հպատակներն համերաշխ և փոխադարձ հոգատարությամբ են ապրում, և չկա ավելի մեծ չարիք, քան այն, որ նրանք իրենց ժամանակն անց են կացնում միմյանց հետ կռվելով, միմյանց ատելով ու մատնելով»։ Ասաց Ամենագլխավորն այդ և, իր պատասխանատվությամբ, հրամայեց իր օգնականներին, որպեսզի, փորձի համար, երկու Իվանների թե՛ դատ ու դատաստանը, թե՛ հարկերը հավասար լինեն, իսկ որ առաջ մեկը կրում էր բոլոր ծանրությունները, իսկ մյուսը երգ էր երգում, որպեսզի այսուհետև չլինի այլևս։

Վերադարձավ Իվան Հարուստն իրենց գյուղը, ուրախությունից ոտները գետնին չեն դիպչում։

— Սիրելի բարեկամս,— ասում է,— իշխանավորական ողորմածությամբ դեն գցեցի ես սրտիս վրա նստած ծանր քարը։ Այժմ ես քո համեմատությամբ այլևս ոչ մի արտոնություն չեմ ունենալու։ Քեզանից զինվոր են պահանջելու, ինձանից էլ են պահանջելու, քեզանից՝ սայլ, ինձանից էլ՝

սայլ, ջո դեսյատինից մի գրող հարկ են վերցնելու, իմ դեսյատինից էլ մի գրող են վերցնելու։ Այսպիսով, դու դեռ ուշքի եկած չես լինի, որ հավասարության շնորհիվ ամեն օր մսով կերակուր կունենաս։

Ասաց Իվան Հարուստն, իսկ ինքը՝ փառքի ու բարության հույսով, մեկնեց տաք ջրերը, ուր և մնաց երկու տարի, օգտաշահ պարապությամբ անցկացնելով օրերը։

Եղավ Վեստֆալիայում — վեստֆալյան ապուխտ կերավ, եղավ Ստրասբուրգում — ստրասբուրգյան կարկանդակ կերավ, եղավ Բորդոյում — բորդոյան գինի խմեց, եղավ վերջապես Փարիզում — ամեն ինչ ընդհանրապես կերավ ու խմեց։ Մի խոսքով, այնպես ուրախ կյանք անցկացրեց, որ հազիվ կարողացավ բաժանվել։ Եվ ամբողջ ժամանակ Իվան Աղքատի մասին էր մտածում, թե նա հիմի, հավասարվելուց հետո, ամեն օր կուշտ-կուշտ ուտում է։

Իսկ Իվան Աղքատը, մինչդեռ, ամբողջ ժամանակ աշխատանքի մեջ էր։ Այսօր վարում է իր հողաշերտը, իսկ վաղը տափանում է, այսօր հնձում է, իսկ վաղը, եթե աստված արև է շնորհում, սկսում է խոտը չորացնել։ Գինետան ճանապարհն էլ էր մոռացել, որովհետև գիտեր, ու գինետունը մահ էր իր համար։ Նրա կինը՝ Մարիա Իվանովնան էլ հետը աշխատում էր՝ և՛ հնձում է, և՛ տափանում, և՛ խոտը փռում, և՛ փայտ կոտորում։ Նրանց երեխաներն էլ մեծացել էին և ամեն մեկն այս կամ այն չափով աշխատում էր։ Մի խոսքով, ամբողջ ընտանիքն առավոտից մինչև իրիկուն կարծես եփ էր գալիս կաթսայում, բայց և այնպես դատարկ շշից բացի ուրիշ ոչինչ չէր լինում նրանց սեղանի վրա։ Իսկ այն օրից, երբ Իվան Հարուստը գյուղից հեռացավ, Իվան Աղքատը տոն օրերին էլ այլևս անակնկալներ չէր տեսնում։

— Ձախ է գնում մեր բանը,— ասում է խեղճը կնոջը,— փորձի համար հրեն ինձ հավասարեցրին Իվան Հարուստի հետ բոլոր պարտավորություններում, բայց մենք, այնուամենայնիվ, հին վիճակի մեջ ենք գտնվում։ Հարուստ ենք ապրում տիկնոջ տան մեջ. ինչ որ բռնում ենք, դատարկ ենք նստում։

Իվան Հարուստը՝ հարևանին նախկին աղքատ վիճակում գտնելով, զարմանքից քար կտրեց։ Խոստովանանք լինի, առաջին միտքն այն էր, որ Իվաշկան իր աշխատանքի արդյունքը գինետուն է տանում։ «Մի՞թե նա այդչափ անուղղելի է, այդչափ արմատացել է նրա մեջ»,— բացականչեց նա խորին դառնությամբ։ Սակայն Իվան Աղքատի համար ոչ մի դժվարություն չէր ներկայացնում ապացուցել, որ նա ոչ միայն գինու, այլև աղի համար շատ հաճախ փող չէր ունենում։ Իսկ որ նա շռայլող չէր, վատնող չէր, այլ լավ աշխատավոր էր, դրա ապացույցներն էլ ակնհայտ էին։

Ցույց տվեց Իվան Աղքատն իր տնտեսական գույքը. ամեն ինչ իր տեղն էր, այնպես, ինչպես եղել էր հարևանի տաք ջրերը ուղևորվելուց առաջ։ Աշխետ ձի հաշմանդամացած —1, գորշագույն կով խալավոր —1, ոչխար —1, սայլ, արոր, տափան։ Նույնիսկ հին սահնակը հենած էր ցանկապատին, թեպետ ամառ ժամանակ նրա կարիքը չէր զգացվում և, ուրեմն, կարելի էր՝ առանց տնտեսությանը վնաս հասցնելու, գրավ դնել գինետանը։ Հետո դիտեցին խրճիթը, այնտեղ էլ ամեն բան իր տեղն էր. միայն կարի ծղոտն էր տեղ-տեղ քանդված, բայց այդ էլ նրանից էր, որ նախանցյալ գարնանը կերը պակաս էր, այդ պատճառով էլ փտած ծղոտով էին կերակրել անասուններին։

Մի խոսքով, ոչ մի փաստ չկար, որի շնորհիվ կարելի լիներ մեղադրել Իվան Աղքատին ցոփության կամ շռայլության մեջ։ Դա բնիկ, ճնշված ռուս գյուղացի էր, որը լարում էր բոլոր ուժերը, արդարացնելու իր կյանքի իրավունքները, բայց մի ինչ-որ անգութ թյուրիմացության շնորհիվ իրականացնում էր այդ իրավունքը միմիայն ամենաչնչին աստիճանով։

— Տե՞ր աստված, ինչու՞ է այսպես,— վշտացավ Իվան Հարուստը։— Հավասարեցրին մեզ իրար, մեր իրավունքներն էլ մեկ են, տուրքերն էլ հավասար ենք վճարում, բայց այնուամենայնիվ դրանից դու ոչ մի շահ չունես։ Ինչի՞ց է։

— Ես ինքս էլ մտածում եմ, ինչի՞ց է,— վհատ պատասխանեց Իվան Աղքատը։

Սկսեց Իվան Հարուստը միտք անել և, հասկանալի է, պատճառը գտավ։ Նրանից է այդպես ստացվում, որ մեզանում չկա ոչ հասարակական, ոչ մասնավոր նախաձեռնություն։ Հասարակությունն անտարբեր է. մարդիկ բոլորն էլ իրենց մասին են մտածում. կառավարողներն էլ թեպետև լարում են ուժերը, բայց ապարդյուն։ Նշանակում է, նախ և առաջ պետք է հասարակությունը խրախուսել։

Ասելն ու անելը մեկ եղավ։ Իվան Հարուստը գյուղում ժողով գումարեց և բոլոր տնատերերի ներկայությամբ փայլուն ճառ արտասանեց հասարակական և մասնավոր նախաձեռնության օգտավետության մասին... Խոսում էր հանգամանորեն, հատ-հատ և պարզորոշ, կարծես ուլունք էր շաղ տալիս խոզերի առաջ։ Ապացուցում էր օրինակներով, որ միայն այն հասարակություններն են հառաջադիմության և կենսունակության գրավական ներկայացնում, որոնք կարողանում են հոգ տանել իրենք իրենց մասին, իսկ նրանք, որոնք թողնում են, որ դեպքերը տեղի ունենան հասարակական բախտից անկախ, այդպիսիներն իրենք իրենց նախապես դատապարտում են աստիճանական մահվան և վերջնական կործանման։ Մի խոսքով, այն բոլորը, ինչ կարդացել էր Այբբենարան-Լումայում, ամենը նույնությամբ պարզեց ունկնդիրների առաջ։

Արդյունքը գերազանցեց բոլոր ակնկալիքները։ Գյուղացիների աչքերը ոչ միայն բացվեցին, այլև նրանք տոգորվեցին ինքնագիտակցությամբ։ Երբեք նրանք զանազանգույն զգացմունքների այդօրինակ բուռն հորդում չէին զգացել։ Թվում էր, որ հանկարծակի, գաղտագողի իրենց է մոտեցել վաղուց ի վեր ցանկալի, բայց չգիտես ինչու ինչ-որ տեղ կալանված կենսական ալիքը, որն այդ խավար մարդկանց առնելով իր մեջքին, վեր բարձրացրեց նրանց։ Ամբոխը ցնծում էր, հրճվելով իր գիտակցության գալուց։ Իվան Հարուստին մեծարում էին, հերոս էին անվանում։ Եվ ի եզրակացություն, միաձայն որոշում կայացրին. 1) գինետունը փակել ընդմիշտ, 2) հիմք դնել ինքնօգնության, հիմնելով Հոժարակամ Լումայի Ընկերություն։

Նույն օրն ևեթ, գյուղի շնչերի թվի համաձայն, ընկերության դրամարկղը մտավ երկու հազար քսաներեք կոպեկ, իսկ Իվան Հարուստը, բացի դրանից, չքավորներին հարյուր օրինակ Այբբենարան-Լումա նվիրեց, ասելով. «Կարդացե՛ք, բարեկամներս, այդտեղ ամե՞ն ինչ կա, ինչ հարկավոր է ձեզ»։

Կրկին Իվան Հարուստը մեկնեց տաք ջրերը, և կրկին Իվան Աղքատը մնաց իր օգտաշահ աշխատանքների հետ, որոնք այս անգամ, շնորհիվ ինքնագործության նոր պայմանների և Այբբենարան-Լումայի օժանդակության, անկասկած պետք է հարյուրապատիկ շահ բերեին։

Անցավ մի տարի, անցավ մյուսը։ Կերա՞վ արդյոք այդ ժամանակամիջոցում Իվան Հարուստը Վեստֆալիայում վեստֆալյան խոզապուխտ, իսկ Ստրասբուրգում՝ ստրասբուրգյան կարկանդակ,— հավաստի ասել չեմ կարող։ Բայց գիտեմ, որ երբ նա, ժամանակը լրանալուց հետո, վերադարձավ տուն, ապա բառի լայն իմաստով ապուշ կտրեց։

Իվան Աղքատը նստած էր կիսաքանդ հյուղակում, վտիտ, սովալլուկ. սեղանի վրա դրված էր ջրարբդոշը, որի մեջ Մարիա Իվանովնան, տոնի պատճառով, հոտի համար մի գդալ պասուց յուղ էր լցրել։ Երեխաները սեղանի շուրջը բոլորած, ուտում էին շտապ-շտապ, կարծես վախենալով, չլինի թե հանկարծ օտար մեկը ներս գա և պահանջի որբերի բաժինը։

— Ի՞նչն է սրա պատճառը,— դառնությամբ, համարյա հուսահատությամբ, բացականչեց Իվան Հարուստը։

— Ես էլ եմ ասում, ի՞նչն է սրա պատճառը,— ըստ սովորության ասաց Իվան Աղքատը։

Կրկին սկսվեցին նախատոնային զրույցներն Իվան Հարուստի ապարանքի առաջ եղած նստարանին նստած, բայց խոսակիցները որչափ էլ բազմակողմանի քննում էին իրենց ընկճող հարցը, ոչինչ դուրս չեկավ այդ քննությունից։ Իվան Հարուստը սկզբից սկսեց ենթադրել, որ դա նրանից է առաջանում, որ իրենք դեռ հասունացած չեն, բայց լավ խորհելուց հետո համոզվեց, որ Միջուկով կարկանդակ ուտելն այնքան էլ դժվարին գիտություն չէ, որպեսզի դրա համար հասունության վկայականի կարիք լինի։ Փորձեց ավելի խորը փորփրել, բայց առաջին իսկ պահին խորքերից այնպիսի

խրտվիլակներ դուրս թռան, որ նա անմիջապես երդվեց երբեք ոչ մի բան չփորփրել։ Վերջապես որոշեցին, որպես վերջին միջոց, դիմել տեղական իմաստուն և փիլիսոփա Իվան Պարզամիտին։

Պարզամիտը բուն գյուղացի էր, կաղ մի սապատավոր, որը մարմնական պակասության պատճառով արժեքներ չէր արտադրում, այլ կերակրվում էր ողորմություն հավաքելով։ Բայց գյուղում նրա մասին ասում էին, որ նա տեր-Սիմոնի նման խելացի է, և նա միանգամայն արդարացնում էր այդ համբավը։ Ոչ ոք նրա նման բակլա գցել և մազի վրա գուշակել չէր կարողանում։ Կարմիր աքաղաղ էր գուշակում Պարզամիտը, մեկ էլ տեսար աքաղաղն արդեն տանիքի վրա բարձրացած, թևերն է թափահարում. աղավնու ձվի մեծությամբ կարկուտ էր գուշակում,— տեսար՝ կարկուտից խելակորույս հոտը փախչում է դաշտից։ Բոլորը նրանից վախենում էին, իսկ երբ լուսամուտի տակ հնչում էր նրա մուրացկանային գավազանի թխկթխկոցը, տանտիրուհին շտապում էր ըստ հնարավորի շուտով ամենալավ պատառներից բաժին հանել նրան։

Այս անգամ ևս Պարզամիտը միանգամայն արդարացրեց իր կանխատես լինելու համբավը։ Հենց որ Իվան Հարուստը բացատրեց նրան գործի էությունը և ապա հարց տվեց, ինչի՞ց է այդպես լինում,— Պարզամիտն անմիջապես, առանց մտքերի մեջ խորասուզվելու, պատասխանեց.

— Նրանից է, որ մոլորակի վրա այդպես է գրված։

Իվան Աղքատն, ըստ երևույթին, անմիջապես ըմբռնեց Պարզամիտի ասածը և հուսահատորեն օրորեց գլուխը։ Բայց Իվան Հարուստը վճռականորեն տարակուսեց։

— Այդպիսի մի մոլորակ կա,— բացատրեց Պարզամիտը պարզորոշ արտասանելով յուրաքանչյուր բառը և կարծես հրճվելով իր սեփական կանխատեսությունից,— և այդ մոլորակի վրա այսպես է գրված. Իվան Աղքատն ապրում է ճամփաբաժնում, և նրա տունը ոչ խրճիթ է, ոչ ծակ մաղ, դրա համար էլ հարստությունը շարունակ թափվում է ու թափվում, որովհետև արգելքի չի հանդիպում։ Իսկ դու, Իվան Հարուստ, ապրում ես ուղղակի միախառնման տեղում, ուր

ամեն կողմից վազում են գետակները։ Քո ապարանքն ընդարձակ է, կարգին-սարքին, չորս կողմն ամուր ցանկապատ է քաշված։ Գետակները հարստությամբ հոսում են քո ապրած տեղը և այդտեղ էլ կանգ են առնում։ Եվ եթե դու, օրինակի համար, ասենք, երեկ կայքիդ կեսը բաժանել ես, այսօր, ուրեմն, դրա փոխարեն երեք քառորդն է լցվում։ Դու փախչում ես փողից, իսկ փողը վազում է քեզ մոտ։ Ո՛ր թփի տակ էլ դու մտիկ տալու լինես, ամեն տեղ հարստություն ես գտնում։ Ահա թե ինչ է գրված այդ մոլորակի վրա։ Եվ որչափ էլ դուք խոսք ու զրույց անեք միմյանց հետ, որչափ էլ զոռ տաք խելքներիդ, ոչինչ մտածել չեք կարող, քանի այն մոլորակի վրա այդպես է գրված։

ՈՂՋԱՄԻՏ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Թեպետ դա մի շատ սովորական նապաստակ էր, բայց չափազանց խելոք էր։ Եվ այնպես առողջ դատողություններ էր անում, որ էշին անգամ վայել էր։ Թաքնվում էր թփի տակ, որ իրեն չտեսնեն, և խոսում ինքն իր հետ։

— Ամեն մի գազան,— ասում է,— իր համապատասխան կյանքն ունի, գայլը՝ գայլի, առյուծը՝ առյուծի, նապաստակը՝ նապաստակի։ Գոհ ես, թե գոհ չես քո կյանքից, միևնույն է, քեզ ոչ ոք չի հարցնում — ապրիր և ուրիշ ոչինչ։ Մեզ, նապաստակներիս, օրինակ, բոլորն ուտում են։ Կարծում եմ, մենք պետք է որ դրա դեմ պահանջ ներկայացնելու հիմք ունենայինք։ Սակայն, եթե առողջ դատելու լինենք, ապա հազիվ թե նման պահանջն իրավացի կարելի լինի համարել։ Նախ, ով ուտում է, նա իմանում է ինչու և ինչ նպատակով է ուտում, և երկրորդ, եթե անգամ մեր պահանջը իրավացի լինի, այնուամենայնիվ, մեզ ուտելուց չեն դադարի։ Անհրաժեշտ քանակից ավելի, միևնույն է, չեն ուտելու, բայց ինչքան որ հարկավոր է, անպայման ուտելու են։ Ներքին գործոց մինիստրության հրատարակած վիճակագրական տվյալները...

Այդ խոսքի վրա նապաստակը սովորաբար քնում էր, որովհետև վիճակագրությունը նրան անզգայության վիճակի հասցնելու հատկություն ուներ։ Բայց քունն առնում էր ու կրկին սկսում իր առողջ դատողությունը։

— Ուտում են մեզ, ուտում են, բայց մենք, նապաստակներս, տարեցտարի ավելի ենք բազմանում։ Նշանակում է մենք էլ այնքան շուտ խաբվողներից չենք։ Ե՛վ ամառ ժամանակ, և՛ ձմեռ ժամանակ հապա մի մարգագետնին նայիր, նապաստակ է, որ ոստոստում է աջ ու ձախ։ Մտնում ենք ֆաղամբի մարգերը կամ վարսակի արտերը, և կամ մատչաշ խնձորենիների մոտ ենք ապաստանում։ Նույնիսկ պետք է ասել, գյուղացիները մեր ձեռքից դաղար չունեն։ Այո, մեզ, նապաստակներիս վրա էլ պետք է հսկողություն ունենալ։ Իզուր չէ, որ ներքին գործերի մինիստրության հրատարակած վիճակագրական տվյալները...

Նոր քուն, նոր արթնացում, նոր առողջ մտքեր։ Նապաստակն անվերջ շարունակում էր իր խելացի դատողությունները, և՛ այսպես էր շուտ տալիս, և՛ այնպես էր հաշվում, ու ամեն ինչ լավ վախճան էր ունենում։ Բայց ամենից արժեքավորն այն էր, որ նա այդ դեպքում ոչ իր կարիերան նկատի ուներ, ոչ էլ հայացքների յուրօրինակությամբ իշխանության առաջ փայլելու հույս էր կապում (նա գիտեր, որ իշխանությունը մինչև վերջը իրեն չլսած, ուտելու է), այլ ուղղակի սիրում էր ինքն իրեն պատկառելի, նապաստականման դատողություններ անել ամեն տեսակ բաների մասին, թե՝

Իրավ չեն Շուվալով, նրանք,
Ովքեր ապակին հանածոներից
Ստոր են կարծում[47] ...

Ա՜յ թե մենք ինչպես ենք։

Մեկ անգամ, թփի տակ այդպես նստած, ուզեց առողջ մտքերով պարծենալ իր տիկնոջ առաջ։ Բարձրացավ ետևի թաթերի վրա, սրեց ականջները, առջևի թաթիկներով զանազան խաղուձևեր է անում, իսկ լեզվով խոսքը խոսքի ետևից շաղ է տալիս սիսեռի նման։

— Ո՛չ,— ասում է,— մենք, նապաստակներս, կարող ենք նույնիսկ շա՜տ լավ ապրել։ Մենք և՛ հարսանիքներ ենք անում, և՛ պարահանդեսներ ենք կազմակերպում, և՛ տերունական տոներին գարեջուր ենք եփում։ Տասը վերստի վրա պահակներ ենք նշանակում ու ձայներս գլուխներս ենք գրում։ Մեր ձայնը լսելով, վազում, գալիս է գայլը, թե՝ «Ես ե՞վ է երգում»... Այդ ժամանակ, բնական է, փախչում ենք, ով որտեղ կարող է։ Եթե հաջողեցիր ծլկել, գնա մեկ ուրիշ տեղ գարեջուր եփիր, չկարողացար՝ գայլը քեզ կուտի՝ առանց մի կասկածի։ Եվ ոչինչ անել չես կարող։ Ճիշտ չե՞մ ասում, տիկին նապաստակ։

— Եթե սուտ չես ասում, նշանակում է ճիշտ ես ասում,— պատասխանեց տիկինը, որի համար այդ նապաստակը տասներորդ ամուսինն էր, և որի նախկին ինը ամուսիններն անիրավ մահով ոչնչացել էին իր աչքի առաջ։

— Ստոր արարածներ են այդ գայլերը, պետք է ճշմարիտն ասել։ Նրանք շարունակ ավազակության ու թալանի մասին են մտածում,— շարունակեց նապաստակը։— Քանի՜-քանի՜ անգամ ես և՛ ասել եմ, և՛ լրագրերում գրել եմ, թե՝ պարոնա՛յք գայլեր, փոխանակ միանգամից նապաստակին հոշոտելու, դուք գոնե միայն նրա կաշին մաշկեցեք — նա այդ դեպքում, միառժամանակ անցնելուց հետո, ուրիշ կաշի կներկայացներ ձեզ։ Նապաստակը թեպետև շուտ բազմացող է, սակայն եթե այսօր մի ամբողջ խումբ ոչնչանա, վաղը մի ուրիշ խումբ, տեսար՝ շուկայում նապաստակը քսան կոպեկից հիսուն կոպեկի թռավ։ Բայց եթե դուք հերթով գաք, թե՝ պարոնա՛յք նապաստակներ, չե՞ք բարեհաճի արդյոք գայլի այսօրվա ճաշի համար այսքան տասնյակ նապաստակ մատուցել։— Ուրախությա՜մբ, պարոնա՛յք գայլեր։ Է՛յ, տանուտե՛ր, բե՛ր հերթական նապաստակներին։ Եվ ամեն ինչ օրենքով կլինի, ինչպես հա՜րկն է։ Ե՛վ գայլերը, և՛ նապաստակները, բոլորն էլ հույսով կլինեն։ Ե՛վ մենք, և՛ դուք, և՛ մեկ կողմից, և՛ մյուս կողմից... Ա՜խ, պարոննե՛ր, պարոննե՛ր։

Խոսեց-խոսեց նապաստակը և քիչ մնաց ամեն բան դուրս տար, երբ հանկարծ լսեց, որ մոտակայքում խոտի մեջ մի

բան է խշխշում։ Մտիկ է տալիս,— տիկին նապաստակը վաղուց է կծիկը դրել, իսկ բանսարկու աղվեսը փորի վրա պառկած, իր կողմն է սողում, կարծես նապաստակի հետ խաղ անելու է պատրաստվում։

— Այդ ի՞նչ խելոք նապաստակ ես եղել,— առաջինը սկսում է աղվեսը,— այնպես անո՞ւշ ես խոսում, որ եթե ամբողջ կյանքումս շարունակ քեզ լսեի, ա՛յնուամենայնիվ էլի կուզենայի միշտ լսել։

Խելոք էր նապաստակը, բայց նա էլ գովասանքից առաջին պահ շլացավ։ Կանգնել է ետևի թաթերի վրա՝ գետնին մեխված նման, և չգիտես, հայացքով ճանապա՞րհ է որոնում՝ փախուստ տալու, թե՞ միտք է անում այն մասին, թե ահա, երբ հնարավոր դարձավ առողջ դատողության տեսակետից իր վիճակը տեսնել...

— Քաղցա՞ծ ես, մորաքույր,— հարցրեց նա, աշխատելով ըստ հնարավորի քիչ երկչոտել։

— Չէ՛, ի՞նչ ես ասում, տե՛ր քեզ հետ, ես շատ կուշտ եմ։ Թե ի՞նչ կլինի հետո, չգիտեմ, բայց այժմ,— աստվա՛ծ ոչ անի։ Բարև՛, նապաստակ։

Աղվեսը նստեց շան դիրքով և հրավիրեց նապաստակին ևս նստել։ Նապաստակը ոտքերը ծալեց։ Ծալեց ու ինքն իրեն դատողություններ է անում. «Ինչպես ենթադրում էի, այնպես էլ եղավ... Ամեն գազան իրեն համապատասխան կյանքն ունի. առյուծը՝ առյուծի, աղվեսը՝ աղվեսի, նապաստակը՝ նապաստակի։ Հապա՛, նապաստակի կյա՛նք, հանի՛ր այս նեղ դրությունից»։

Իսկ աղվեսը կարծես կարդում էր նրա գաղտնախորհուրդ մտքերը, նստել ու մի գլուխ գովաբանում է նապաստակին։

— Այդ ո՞ր կողմերից ես շնորհ բերել դու մեզ մոտ, փիլիսոփա նապաստակ։

— Նորերս միայն, մորաքույր, խենթի նման թավալգլոր եկել եմ յոթ սարի էն կողմից։ Ապրում էի ես մեր կողմերում, կարելի է ասել, նույնիսկ շա՞տ լավ էի ապրում։ Ընտանիք էլ ունեի, տուն ու տեղս էլ սարքին-կարգին էր։ Ամբողջ ձմեռ մենք կալվածատիրոջ անասունների բակում ապրում էինք դեզի մեջ խաղ ու պարով, ցերեկները քնում էինք,

իսկ գիշերները թիկի ու խնձորենի էինք կրծոտում։ Գարունը բացվելու մոտ էր, մենք պատրաստվում էինք անտառ փոխադրվել՝ ժամանակն էր արդեն ամառանոց դուրս գալու, բայց այդ ժամանակ, մեկ էլ հանկարծ մի գայլ շնորհ բերեց մեզ մոտ։ Այդ ի՞նչ գազաններ են, ի՞նչ անձնագրով, ո՞ւմ թույլտվությամբ... Ես, խոստովանանք լինի, փախա, իսկ տիկին նապաստակը ձագուկներով...

— Լսել եմ ես այդ մասին։ Գայլն իմ քավորն է, նա այսպես է պատմել. «Այս օրերս, ասում է, ես նապաստակների մի ամբողջ բուն քարուքանդ արեցի, բայց նապաստակը փախավ։ Ինչպե՞ս անենք, ասում է, քավոր, որ նրան գտնենք։ Ուրեմն դու այն նապաստա՞կն ես եղել։ Երևի շա՞տ ես խղճում կնոջդ։

— Ոչինչ չեմ հիշում։ Տեսա, որ պետք է փախչել — փախա։ Հասնում եմ այստեղ, տեսնում եմ մի այրի նապաստակուհի է նստել, ասում եմ, արի միասին ապրենք։ Ու ըսկրսեցինք ապրել։ Նրա հետ, պարսավելու բան չունեմ, լավ էինք ապրում, բայց քիչ առաջ նա փախավ, իսկ ես մնացի։

— Խե՞ղճ, խե՞ղճ նապաստակ։ Ոչի՛նչ, սպասիր, մենք նրան կբռնենք։

Աղվեսը հորանջեց, թեթևակի դիպավ նապաստակի ազդրին (սակայն նա ցույց տվեց, որ իբր ոչինչ չնկատեց), պառկեց կողքին, գլուխը ետ գցեց ու աչքերը փակեց։

— Արևն այնպե՞ս է այրում,— ծուլորեն ասաց նա,— կարծես մե՞ծ գործի վրա լինի։ Ես կքնեմ, իսկ դու մոտ նստիր ու մի բան պատմիր։

Այդպես էլ արեցին։ Աղվեսը ննջեց, իսկ նապաստակը նստեց այնպես, որ աղվեսի դունչը ցանկացած ժամանակ իրեն հասներ, ու սկսեց հեքիաթ պատմել։

— Ես, մորաքույր, քմահաճ չեմ,— ասաց նա,— ամեն տեսակ ապրուստի համաձայն եմ։ Երեք տարի չկա, որ ապրում եմ աշխարհում, բայց Ռուսաստանի համարյա կեսը ոտնատակ եմ տվել։ Նոր-նոր հաստատվում ես մի տեղ, մեկ էլ տեսար կամ գայլը, կամ բուն, կամ որսորդները շուրջկալ արեցին։ Դե փախի՞ր գլխապատառ և բնակություն հաստատիր նոր տեղ, յոթը սարի, յոթը քարի ետև։ Բայց ես գրա-

նից չեմ տրտնջում, որովհետև հասկանում եմ, որ նապաստակի կյանքն այդպես է։ Իսկ եթե երբեմն չեմ էլ հասկանում, այնուամենայնիվ, այդպես չհասկացած էլ փախչում եմ։ Ճիշտ այնպես, ինչպես մեր կողմերի գյուղացիները։ Պատրաստություն է տեսնում քնելու, բայց տեսար լուսամուտը թխկթխկացրին, թե՝ քեռի Միխեյ, պարհակի՛ դուրս արի սայլովդ։ Դուրսը բուք է, ցրտից մարդ է սառչում, իսկ քեռի Միխեյը զինվորներով լցրած սայլը քշում է քսան վերստ, ինքը սայլի կողքով ոտքով քայլելով։ Մեկ օրից կրկին վերադառնում է տուն, երեխաների համար կարկանդակ է բերում, կնոջ համար՝ գլխաշոր, իսկ բոլորի համար՝ արցունքներ։ Հարցրու նրան, թե ի՞նչ է նշանակում դա, նա քեզ կպատասխանի՝ դա նշանակում է գյուղացու կյանք։ Այդպես էլ մենք — նապաստակներս։ Ապրելն ապրում ենք, բայց ինքներս մեզ կյանքից չենք զրկում։ Մենք միշտ պատրաստ ենք... Ճի՞շտ եմ ասում, մորաքույր։

Աղվեսը պատասխանի փոխարեն կամացուկ փնթփնթաց, ուրծես քնի մեջ. նապաստակն աչքի տակով նայեց՝ ստուգելու, չի՞ քնել արդյոք մորաքույրը։ Արդյո՞ք որոշել էր նա մտքում, հարմար առիթին կծիկը դնել— ճիշտն ասել չեմ կարող, բայց շատ հավանական է, որ նապաստակի կյանքի ծրագրում այդպիսի քաղաքականություն կա։ Սակայն, թեպետև աղվեսը ոչ միայն աչքերն էր փակել, այլև պառկել էր մեջքի վրա և սրիկան նույնիսկ ոտքերն էր փռել, բայց նապաստակը հոտառությամբ հասկացավ, որ նա դիտավորյալ է այդ կատակերգությունը խաղում։

— Կպատմե՛մ քեզ,— շարունակեց նա,— ինչպես իմ քեռին մի զինվորի մոտ սպասավոր էր դարձել։ Զինվորը բռնել էր նրան շատ փոքր հասակում և զինվորական բոլոր նիստ ու կացը սովորեցրել։ Հրացան արձակելու, զանազան վարժություններ անելու, համաքայլելու, թմբուկ զարկելու մեջ քեռիս առաջինն էր։ Պատահում է, միասին գնում են շուկա և ներկայացումներ են տալիս, իսկ հասարակությունն ի սեր Քրիստոսի՝ մեկը մի ձու, մյուսը մի քանի կոպեկ, մի կտոր հաց է տալիս։ Եվ ահա այդ զինվորը քեռուս պատմում է իր կյանքը։ «Ապրում էի ես, ասում է, ծնողներիս մոտ՝

և հայրս մեկ անգամ ինձ ուղարկեց՝ սահնակը կարգի գրելու ձմեռվա համար։ Սահնակն եմ սարքի գցում, երգում եմ ինձ համար և ծխամորճ եմ ծխում, հանկարծ բակ է մտնում տասնապետը, թե՝ Սիմոն, արի գավառական ատյան, քեզ զինվոր են պահանջում։

— Ես, ինչպես կայի, հենց այնպես էլ գնացի. լավ էր, ծխամորճս կարողացա թաքցնել վարտիշիս մեջ։ Գնացի և այնուհետև քսան տարի զինվոր մնացի։ Քսան տարուց հետո վերադարձա մեր տուն, բայց այլևս ոչինչ չէր մնացել, մաքո՛ւր էր... Ահա թե ինչպես է շուտ գալիս, այլակերպվում գյուղացու կյանքը,— լրջմիտ ավելացրեց նապաստակը։ —Տեսնում ես, գյուղացի է, բայց մեկ էլ տեսար՝ զինվոր է, և թե՛ մեկը, թե՛ մյուսը կյանք է համարվում։ Ահա այդպես էլ մենք՝ նապաստակներս...

— Մի՞թե ձեզ էլ են զինվոր տանում,— հարցրեց աղվեսը, իբրև թե նոր միայն արթնանալով։

— Ո՛չ, մեզ ուտո՛ւմ են,— պատասխանեց նապաստակը, որչափ հնարավոր էր ուրախ։

— Ես էլ այդպես եմ կարծում, որովհետև դուք ի՞նչ զինվորացու եք. ավելի վատ, քան հին բերդապահ զորքը, որին հռչակավոր գեներալ Բիբիկովը «անպետքություն» էր անվանում։ Երևի զինվորը վերջիվերջո քո քեռուն կերա՞վ։

— Ո՛չ, զինվորը մեռնում է, իսկ քեռիս փախչում է։ Տուն եկավ, բայց նապաստակի գործ անել չէր կարողանում, մոռացել էր։ Իսկ մորաքույրս համաձայն չէր նրան ձրի կերակրել։ Եվ ահա քեռիս մեկ անգամ միտք է անում, թե՝ «գընամ շուկա, ներկայացում տամ»։ Բայց հենց նոր է սկսում։ Թմբուկ խփել, որ դները հարձակվում են վրան և հոշոտում են։

— Տեղն է. ինչու էր հասարակությանն անհանգստություն պատճառում։ Թեպետ քեռիդ, անշուշտ, հենց սկզբից գիտեր, որ իրեն երբևիցե ուտելու են։ Շները չուտեին, գայլն էր ուտելու, գայլը չուտեր, աղվեսն էր ուտելու։ Ձեր բոլորիդ վախճանը նույնն է։ Դե, լավ, իսկ առայժմ ասա, թե ձեր կողմերում աղվեսներն ինչպե՞ս են, երևի շա՞տ ճարպիկ են։

— Մեր կողմերում, պետք է ճիշտն ասել, աղվեսները

նոյնիսկ չափից ավել ճարպիկ են։ Ես ինքս ոչ մեկի հետ մոտիկ հանդիպում չեմ ունեցել, բայց տեսել եմ, ինչպես մեկ անգամ որսորդն իմ աչքի առաջ մի աղվես խփեց։ Եվ, պիտի ասեմ...

Նապաստակն ուզում էր ասել՝ «ուրախացա», բայց շոտ ուշքի եկավ ու վախեցավ, սակայն աղվեսը գուշակեց նրա միտքը։

— Ա՜յ թե ինչ արյունարբուն ես եղել դու,— կշտամբեց նրան և այնպես կծեց նրա կողքը, որ վերքից արյուն դուրս գայտեց։

— Ա՜խ,— ճչաց նապաստակը ցավից, բայց անմիջապես գսպեց իրեն և կորովի տեսք ընդունեց։— Ես, ձերդ բարձր ս·րժանապատվություն, այնտեղի աղվեսների մասին եմ ասում, իսկ այստեղի աղվեսները, ասում են, բարի են։

— Մի՞թե։

— Ճիշտ եմ ասում։ Անցյալ տարի մեր անտառում մի որբացած նապաստակ էր մնացել, մի աղվես նրան երեխաներով իր խնամքի տակ վերցրեց։

— Ուրեմն մեծացրեց և բա՞ց թողեց։ Այժմ ո՞ւր է ձեր այդ որբը։

— Ո՞վ գիտե... կորել է կարծեմ։ Ասում են, սկսել էր գողություն անել, վատ ճանապարհով էր գնացել, վերջապես մի ջահել աղվես էր գայթակղեցրել։ Այդ պատճառով, իբրև թե, պառավ աղվեսը կերել է նրան։

— Ե՛ս եմ կերել նրան։ Այն աղվեսը, որի մասին լսել ես, ես եմ։ Միայն թե այն պատճառով չեմ ես նրան կերել, որ վատ ճանապարհով էր գնացել և անառակություն էր անում, այլ այն պատճառով, որ նրա ժամանակը հասել էր։

Աղվեսը մի ակնթարթ մտքերի մեջ խորասուզվեց և ատամները չկացրեց, լու բռնելով։ Ապա, առանց շտապելու, վեր կացավ տեղից, թափ տվեց իրեն և միանգամայն բարեսիրտ եղանակով հարց տվեց նապաստակին.

— Իսկ այժմ, ի՞նչ ես կարծում, ես ո՞ւմ եմ ուտելու։

Խելոք էր նապաստակը, բայց չկարողացավ գուշակել։ Կամ, լավ է ասել, այն իսկ ժամանակ նրա մտքում ծագեց. «Հա՜, սկսում է նապաստակի կյանքը»... Սակայն նա ոչ

մի պայմանով չէր ցանկանում խոստովանել այդ բանը թեկուզ ինքն իրեն։

— Չգիտեմ,— պատասխանեց նա։

Բայց նրա թե՛ դեմքից և թե՛ ձայնից այնպես ակնհայտ էր կեղծիքը, որ աղվեսը սաստիկ բարկացավ։

— Ահա՛ թե ինչ ստախոսն ես եղել դու,— ասաց նա։— Քո մասին ինձ ինչե՞ր ասես, որ չէին ասում, որ դու և՛ փիլիսոփա ես, և՛ սրտագետ, բայց դուրս է գալիս, որ դու մի շատ սովորական անպիտան նապաստակ ես։ Քե՛զ եմ ուտելու, քե՛զ, պարոն։

Աղվեսը ետ ոստնեց և այնպես ցույց տվեց, որ իսկույն հարձակվելու է նապաստակի վրա, ուտի։ Բայց նստեց և, կարծես ոչինչ պատահած չլիներ, սկսեց հետին թաթով ականջի ետևը քորել։

— Գուցե դու կներես ինձ,— կիսաձայն երկչոտ ենթադրություն արեց նապաստակը։

— Մեղա՜ քեզ տեր,— էլ ավելի բարկացավ աղվեսը։— Այդ ո՞րտեղ ես լսել, որ աղվեսները ներեն, իսկ նապաստակները ներում ստանան։ Մի՞թե նրա համար ենք մենք միասին նույն երկնքի տակ ապրում, տխմարկ գլուխ, որպեսզի ներում-ներում խաղանք իրար հետ... հը՞։

— Մորաքույր, մի՛ ասեք, այդպիսի օրինակներ եղել են,— պնդեց նապաստակը, դեռևս պարծենկոտ, սակայն իսկույն ևթ վհատության մեջ ընկավ։

Հիշեց, ինչպես հալածական փախչում էր տեղից տեղ, որպես «բարձրյալ քաղաքն որոնող» աղանդավոր գյուղացի, ինչպես ամբողջ օրերով ծառի փչակում դողդողում էր քաղցած, ինչպես մեկ անգամ մի չար գազանի ձեռքից խույս տալով, ընկավ գյուղացու մառանը, բայց լավ էր, մեծ պահքի օրերն էին և գյուղացին ազատ արձակեց իրեն։ Հիշեց իր սիրած նապաստակուհիներին, ինչպես նրանց հետ պահելխնամել էին իրենց ձագուկներին, և ինչպես նրանցից և ոչ մեկի հետ մի կարգին օր չէր տեսել։ Վերհիշելով այդ բոլորը, կամացուկ կրկնում էր.

— Ա՜խ, եթե ապրեի՜, ա՜խ, եթե մի փոքր է՛լ ապրեի։

Իսկ աղվեսն այդ ժամանակ իրոք որ հաճելի անակնկալ էր պատրաստել նապաստակի համար։

— Լսիր, անարգ նապաստակ,— ասաց նա.— ես կարծում էի, դու իսկապես փիլիսոփա ես, բայց տեսնում եմ, որ դու մահվան մտքից անգամ դողում ես։ Ուստի ես քեզ համար հետևյալ արտոնությունն եմ մտածել։ Ես չորս սաժեն հեռու կգնամ և կնստեմ՝ մեջքս քո կողմը դարձրած և ամբողջ հինգ րոպե չեմ նայի քեզ, զզվելի արարածիդ։ Իսկ դու այդ ժամանակ աշխատիր իմ կողքով փախչել այնպես, որ ես քեզ չտեսնեմ։ Եթե կարողացար ծլկել — քո բախտը, իսկ եթե չկարողացար, որոշումը պատրաստ է անհապաղ։

— Ա՜խ, մորաքույր, ես ինչպե՞ս կարող եմ։

— Հիմար, եթե նույնիսկ չկարողանաս փախչել, այնուամենայնիվ ժամանակ կվաստակես։ Գործով կզբաղվես, կաշխատես նպատակիդ հասնել, այդպիսով վիշտդ կմեղմանա։ Այնպես, ինչպես զինվորը պատերազմի ժամանակ, կրակում է հա կրակում, մինչև ինքն էլ կորչում է։

Նապաստակը մտածեց-մտածեց և պետք է համաձայներ, որ աղվեսը խելոք բան է մտածել։ Գործի մեջ ուտվելը, այնուամենայնիվ, ավելի արտոնյալ վիճակ է, քան տանջալից սպասողական դրությամբ։ Նապաստակի իսկական մահը հենց այդպես է, թափով վազելու ժամանակ։ Վազում ես բոլոր ուժերդ լարած, բայց հանկարծ վրա է հասնում մահդ։

«Ոչինչ չես հասկանում, թե քեզ հետ ինչ է կատարվում, բայց հանկարծ քեզ երկու կտոր են անում,— մտածեց նապաստակը և մեքենայորեն ավելացրեց,— բայց կարող է պատահել...»

— Այդ զառանցանքները թող,— նախազգուշացրեց աղվեսը, գուշակելով նրա գլխում ծագած անորոշ հույսի նշույլը։— Ավելի լավ է՝ առանց երևակայությունների... Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք։ Տեր, դու հաջողիր... Սկսի՛ր։

Այս ասելով, աղվեսը չորս սաժեն առաջ անցավ, նախապես նապաստակին նստեցնելով մեջքը դեպի խիտ թփուտը, որպեսզի նա ոչ մի կերպ չկարողանար ետ փախչել, այլ անպայման իր մոտով փախչեր։

Նստել է աղվեսն ու իր գործով է զբաղվել, կարծես նապաստակին ամենևին չի էլ տեսնում։ Բայց նապաստակն ամենևին չէր կասկածում, որ նա եթե նույնիսկ նորից չորս սաժեն առաջ անցած լիներ, այնուամենայնիվ, իր ամենաչնչին շարժումն իսկ չէր խուսափի նրա հայացքից։ Մի քանի անգամ նա թռավ ոտքի և ականջները մեջքին ծալեց, մի քանի անգամ կծիկ դարձավ, նպատակ ունենալով որևէ արտասովոր թռիչք գործել, որի շնորհիվ միանգամից կարողանար ազատ լինել հետապնդումից, բայց այն համոզմունքը, որ աղվեսը չտեսնելով անգամ տեսնում է ամեն ինչ, նրան անզգայության էր դատապարտում։ Բայց և այնպես, աղվեսն, այնուամենայնիվ, իրավացի էր ըստ իր տեսակի — նապաստակն իրոք գործ ունեցավ իր համար, որը որոշ չափով մեղմում էր նրա մահվան ճգնաժամը։

Վերջապես սահմանված հինգ րոպեն անցավ, բայց նապաստակն անշարժ նստած էր նախկին տեղը և ամբողջությամբ խորասուզված էր իր նապաստակային կյանքի խորհրդածությունների մեջ։

— Դե, այժմ եկ, խաղանք, նապաստակ,— առաջարկեց աղվեսը։

Սկսեցին խաղալ։ Քառորդ ժամի չափ աղվեսը թռչկոտում էր նապաստակի շուրջը, մերթ կծում էր և պատրաստվում էր արդեն կոկորդը սեղմել, մերթ թռչում էր մի կողմ և միտք անում, չեռի՞ արդյոք նրան։ Բայց և այնպես դա էլ նապաստակի համար յուրատեսակ գործ էր, որովհետև թեպետև նա չէր պաշտպանվում ճշմարտապես, սակայն և այնպես թաթերով ծածկվում էր ու լաց էր լինում...

Բայց քառորդ ժամից արդեն ամեն ինչ վերջացած էր։ Նապաստակից մնացին մորթու ծվեններն ու խելացի խոսքերը, թե՝ «Ամեն գազան իր համապատասխան կյանքն ունի, առյուծը՝ առյուծի, աղվեսը՝ աղվեսի, նապաստակը՝ նապաստակի»։

ԱԶԱՏԱՄԻՏԸ

Լինում է չի լինում, մի երկրում Ազատամիտ մի մարդ է լինում, ըստ որում այնքան անկեղծ, որ ոչ ոք ձայն չէր հա-

նում, իսկ նա արդեն կոկորդով մեկ բացականչում էր. «Ա՜խ, պարոններ, պարոններ, այդ ի՞նչ եք անում, չէ՞ որ դուք ինքներդ ձեր տունն եք քանդում»։ Եվ դրա համար ոչ ոք չէր բարկանում նրա վրա, այլ ընդհակառակը, բոլորն ասում էին. «Ո՞ղ նախազգուշացնի, մեզ համար ավելի լավ»։

— Երեք գործոն,— ասում էր նա,— պետք է դրված լինեն յուրաքանչյուր հասարակական կյանքի հիմքում՝ ազատություն, ապահովություն և ինքնագործունեություն։ Եթե հասարակությունը զուրկ է ազատությունից, այդ նշանակում է, որ նա ապրում է առանց իդեալների, առանց մտքի բոցավառության, չունենալով ոչ ստեղծագործության հիմունքներ, ոչ էլ հավատ՝ դեպի ապագա իր բախտը։ Եթե հասարակությունն իրեն անապահով է զգում, այդ հանգամանքը նրա վրա ճնշվածության կնիք է դնում և անտարբեր է դարձնում դեպի իր սեփական վիճակը։ Եթե հասարակությունը զրկված է ինքնագործունեությունից, ապա նա անընդունակ է դառնում իր սեփական գործերը կարգի բերելու և նույնիսկ կամաց, կամաց կորցնում է հայրենիքի պատկերացումը։

Ահա ինչպես էր մտածում Ազատամիտը, և, պետք է ճշմարիտն ասել, ճիշտ էր մտածում։ Նա տեսնում էր, որ չորս կողմը մարդիկ թափառում են թունավորված ճանճերի նման, ու ասում էր ինքն իրեն. «Դա նրանից է, որ նրանք չեն գիտակցում, որ իրենց բախտի տնօրենն իրենք են։ Դրանք կալանավորներ են, որոնց թե՛ երջանկությունը, թե՛ դժբախտությունը գալիս է՝ առանց իրենց կողմից նախատեսելու, որոնք անվերապահ կերպով անձնատուր չեն լինում իրենց զգացողություններին, որովհետև չեն կարողանում որոշել, արդարև՞ դրանք զգացողություններ են, թե ինչ-որ ուրվապատկերներ»։ Մի խոսքով, Ազատամիտը հաստատ համոզված էր, որ միայն վերոհիշյալ երեք գործոնները կարող են հասարակությանը կայուն հիմքեր տալ և իրենց հետ բերել հասարակական կյանքի զարգացման համար անհրաժեշտ մընացյալ բոլոր բարիքները։

Այդ դեռ քիչ է. Ազատամիտը ոչ միայն ազնվաբար մտածում էր, այլև ձգտում էր բարի գործ կատարել։ Նրա նվիրական ցանկությունը կայանում էր նրանում, որ իր միտքը ջերմացնող լույսի ճառագայթը փարոսի շրջապտույտի խավարը, լուսավորի այն և բոլոր արարածներին կյանք և զորություն ներշնչի։ Բոլոր մարդկանց նա եղբայր էր համարում, բոլորին հավասարապես հրավեր էր կարդում՝ զվարճանալու իր փայփայած իդեալների հովանու տակ։

Թեպետ իդեալները երևակայականից գործնական հողի վրա դարձնելու այդ ձգտումն այնչափ էլ վստահելի բան չէր գուշակում, բայց Ազատամիտն այնքան անկեղծ էր բոցավառվում և միաժամանակ այնպես սիրալիր ու գութգուրական էր վերաբերում բոլորին, որ նրա անվստահելի լինելու հանգամանքն անգամ սիրով ներում էին նրան։ Նա կարողանում էր և՛ ճշմարտությունները ժպիտով արտահայտել, և՛, ուր հարկն է, պարզամիտ ձևանալ, և՛ անշահախրությամբ պարծենալ։ Իսկ ամենից գլխավորն այն էր, որ նա երբե՛ք և ոչինչ չէր պահանջում մարդու կոկորդին չոքելով, այլ միշտ պահանջում էր միայն և միայն ճնարավորության սահմաններում։

Իհարկե, «հնարավորության սահմաններում» արտահայտությունը նրա եռանդի համար առանձնապես հրապուրիչ հանգամանք չէր հանդիսանում, բայց Ազատամիտը համակերպվում էր դրան, նախ և առաջ, հանուն ընդհանուր շահի, որը նրա համար միշտ առաջին շարքումն էր գտնվում, և, երկրորդ, իր իդեալներն անօգուտ տեղը և անժամանակ խորտակելուց պաշտպանելու համար։ Բացի դրանից, նա գիտեր, որ իրեն ոգևորող իդեալները չափից ավելի վերացական են, որպեսզի անմիջականորեն ազդել կարողանան կյանքի վրա։ Ի՞նչ է ազատությունը, ապահովությո՞ւնը, ինքնագործունեությո՞ւնը։ Այդ բոլորը վերացական դարձվածքներ են, որոնց հարկավոր է, անտարակույս, շոշափելի բովանդակություն տալ, որպեսզի հասարակական կյանքը դրա շնորհիվ ծաղկել կարողանա։ Այդ դարձվածքներն իրենց ընդհանրությամբ կարող են դաստիարակել հասարակությունը, կարող են բարձրացնել նրա հավատի և հույսերի մակարդակը, բայց շոշափելի, գոհունակության անմիջական զգացողություն առաջացնող բարօրություն բերել չեն կարող։ Այդ բարօրությանը հասնելու համար, իդեալը հանրամատչելի դարձնելու համար

հարկավոր է մասնատել, բաժան-բաժան անել այն և ապա այդ ձևով գործադրել՝ մարդկությունը ճնշող, ընկճող ցավերը բուժելու համար։ Ահա հենց այդ ժամանակ, մասնատելու, բաժան-բաժան անելու ժամանակ է, որ ինքնին մշակվում է այդ «հնարավորության սահմաններում» արտահայտությունը, որը երկու միմյանց առնչվող կողմերից մեկին հարկադրում է որոշ չափով հրաժարվել մեկուսացած դրությունից, իսկ մյուս կողմին հարկադրում է զգալի չափով սահմանափակել իր պահանջները։

Այս ամենը շատ լավ էր հասկացել մեր Ազատամիտը և, այդ նկատառումներով զինված, գոտեպնդվեց՝ իրականության դեմ պատերազմելու։ Եվ ամենից առաջ, իհարկե, դիմեց բանիմաց մարդկանց։

— Ազատություն,— դրանում, կարծեմ, ոչ մի պախարակելի բան չկա՞,— հարցրեց նրանց։

— Ոչ միայն պախարակելի չէ, այլև նույնիսկ չափազանց գովելի է,— պատասխանեցին բանիմաց մարդիկ։— Իզուր տեղը զրպարտում են մեզ, իբրև թե մենք ազատություն չենք ցանկանում։ Իրապես մենք հենց ազատության մասին ենք հոգ տանում... Բայց, հասկանալի է, որոշ սահմաններում...

— Հը՛մ... «որոշ սահմաններում»... Հասկանո՛ւմ եմ։ Իսկ ի՞նչ կասեք դուք ապահովության մասին։

— Դա նույնպես բարով է եկել... Բայց, իհարկե, նույնպես որոշ սահմաններում։

— Իսկ ինչպե՞ս եք դուք գտնում հասարակական ինքնագործունեության իմ իդեալը։

— Միակ պակասը դա է։ Բայց, իհարկե, նմանապես որոշ սահմաններում։

Է՜հ, որոշ սահմաններում, թող որոշ սահմաններում լինի։ Ազատամիտն ինքը լավ էր հասկանում, որ ուրիշ կերպ լինել չի կարող։ Երիվարի սանձը որ բաց թողնես, նա մի ակնթարթում այնպիսի ավերածություն կանի, որ տարիներով այլևս ուղղել չես կարող։ Իսկ երբ սանձը բերանին է — քշիր ինչպես ուզում ես։ Գնում է երիվարը ու ետ է նայում — հապա, երիվար, ես քեզ մտրակով դաղեմ... այդպե՛ս։

Եվ սկսեց Ազատամիտը գործել «որոշ սահմաններում»։ Այստեղ մի բան է պոկում, այնտեղ կտրում է, երրորդ տեղը նույնիսկ բոլորովին թաքնվում։ Իսկ բանիմաց մարդիկ նայում են նրան և հիացմունքից հրճվում են։ Մի ժամանակ նույնիսկ այնքան հրապուրվեցին նրա աշխատանքով, որ կարելի էր կարծել, իրենք էլ ազատամիտ են դարձել։

— Աշխատի՛ր,— խրախուսում էին նրան,— սրա մոտից անց կաց, նրա վրա ուշադրություն մի դարձրու, իսկ երրորդին ամենևին մի մոտեցիր։ Այսպիսով ամեն բան լավ կգնա։ Մենք, սիրելի բարեկամս, քեզ նման այծին ուրախությամբ ներս կթողնենք մեր բոստանը, բայց ինքդ շատ լավ տեսնում ես, թե մեր բոստանն ինչպիսի ցցապատնեշով է շրջապատված։

— Տեսնում եմ, տեսնում եմ,— համաձայնում էր Ազատամիտը,— միայն թե ամոթ է ինձ համար իմ իդեալները խորտակել, ամոթ է, անչափ ամոթ։

— Ոչինչ, մի փոքր էլ ամաչիր, ամոթը աչք չի ծակի, բայց հնարավորության սահմաններում, այնուամենայնիվ, նպատակդ կիրագործես։

Սակայն, քանի հնարավորության սահմաններում իրականանում էին ազատամիտ նպատակները, բանիմաց մարդիկ հասկանում էին, որ Ազատամտի իդեալները նույնիսկ այդ վիճակում վարդի հոտ չունեն։ Մի կողմից չափից դուրս լայն է ծրագրված, մյուս կողմից՝ բավականաչափ հասունացած չի և յուրացնելու պատրաստ չէ։

— Մեր ուժից վեր են քո իդեալները,— ասացին բանիմաց մարդիկ Ազատամտին,— մենք դեռ պատրաստ չենք, չենք դիմանա։

Եվ այնպես մանրամասն ու պարզորոշ թվեցին իրենց անկարողություններն ու ստորությունները, որ Ազատամիտը, որչափ էլ դառն էր իր համար, հարկադրված էր համաձայնել, որ իսկապես իր ձեռնարկության մեջ ինչ-որ ճակատագրական վրիպում կա. շալվարը նեղ է գալիս, և վերջացա՛վ։

— Ա՜խ, որչափ ցավալի է,— գանգատվում էր նա իր բախտից։

— Հիմա՞ր,— մխիթարում էին նրան բանիմաց մարդիկ,— տխրելու բա՞ն ես գտել։ Քեզ ի՞նչ է հարկավոր, որ ապահովես իդեալներիդ ապագա՞ն, բայց չէ՞ որ մենք դրանում քեզ արգելք չենք լինում։ Միայն թե՝ մի՛ շտապիր դու, ի սեր Քրիստոսի։ Եթե չի կարելի «հնարավորության սահմաններում», ապա բավականացիր «թեկուզ մի բան» ձեռք բերելով։ Չէ՞ որ «թեկուզ մի բանն» էլ իր արժեքն ունի։ Կամաց-կամաց, առանց շտապելու և առ աստված աղոթքներ առաքելով, մեկ էլ տեսար՝ մի ոտքդ արդեն մեհյանումն է։ Մինչև այժմ դեռևս ոչ ոք չի տեսել այդ մեհյանի ներսը. իսկ դու ներս ես մտնում... դրա համար անգամ պետք է փառք տաս աստծուն։

Ճար չկար, հարկադրված էր դրան էլ համակերպվել։ Եթե չի կարելի «հնարավորության սահմաններում», ապա աշխատիր «թեկուզ մի բան» պոկել և դրանով բավականացիր։ Ազատամիտն այդպես էլ վարվեց և շուտով այնպես վարժվեց իր նոր վիճակին, որ ինքն էլ զարմանում էր, թե որչափ հիմարն է եղել ինքը, ենթադրելով, որ կարող էր ուրիշ կերպ լինել։ Եվ զանազան համեմատություններով ինքն իրեն խրախուսում էր։ Իբրև թե՝ ցորենի հատիկն էլ միանգամից պըտուղ չի տալիս, այլ դեռ նազ ու սազ է անում։ Առաջ հարկավոր է ցանել հողի մեջ, ապա սպասել, մինչև քայքայվի, հետո ցողուն արձակի, հասկ բռնի և այլն։ Ահա քանի՞-քանի՞ փոփոխություն պիտի կրի հատիկը, մինչև պտուղ տա հարյուրապատիկ։ Այդպես էլ իդեալների գործում։ «Թեկուզ մի բանը» ցանեցիր հողի մեջ, նստիր ու սպասիր։

Եվ ճիշտ որ, Ազատամիտը հողի մեջ «թեկուզ մի բան» ցանեց և նստեց ու սպասեց։ Սպասեց, սպասեց, բայց «թեկուզ մի բանը» չի բուսնում։ Ապառաժի վրա է ընկել, ինչ է, թե՞ աղբի մեջ այրվել է, դե արի ու հասկացիր։

— Պատճառն ի՞նչ է,— քրթմնջում էր Ազատամիտը, մեծ չվարմունքով։

— Պատճառն այն է, որ դու շատ մեծ բաներից ես բըռնում,— պատասխանեցին բանիմաց մարդիկ։— Այնինչ՝ մեր ժողովուրդը դեռևս թույլ, ծայրահեղ ստոր է։ Դու ուզում ես բարիք անել նրան, իսկ նա աշխատում է քեզ էլ հենց մի գըդալ ջրում խեղդել։ Շատ մեծ ճարպկություն պետք է ունենա մարդ, որպեսզի կարողանա այդ ժողովրդի մեջ անբիծ մնալ։

— Ներեցեք, այժմ ի՞նչ անբիծ մնալու մասին խոսելու ժամանակ է։ Ի՞նչ պաշար ունեի հետս, երբ ճանապարհ ընկա, բայց վերչացրի նրանով, որ բոլորը կորցրի ճանապարհին։ Սկզբում գործում էի «հնարավորության սահմաններում», հետո «թեկուզ մի բանը» ձեռք բերելու ետևից ընկա, մի՞թե դրանից դենը գնալու տեղ կա այլևս։

— Իհարկե, կա։ Չե՞ս ուզում, օրինակ, գործել «ստորությանը հարմարվելով»։

— Այդ ի՞նչպես։

— Շատ պարզ։ Դու ասում ես, որ մեզ համար իդեալներ ես բերել, իսկ մենք ասում ենք՝ շա՞տ գեղեցիկ, բայց եթե դու կամենում ես, որ մենք ընդառաջենք քեզ, ապա ուրեմն գործիր հարմարվելով։

— Նշանակո՞ւմ է։

— Նշանակում է՝ իդեալներովդ շատ էլ մի՛ գոռոզացիր, այլ հավասարեցրու մեր մասշտաբին և այդպիսով գործդ կատարիր հարմարվելու գծով։ Իսկ հետո, կարող է պատահել, որ մենք էլ, երբ տեսնենք դրա օգուտը... Մենք ևս, եղբայր, փորձված գայլ ենք, ծրագիր առաջարկողներ շա՞տ ենք տեսել։ Վերջերս գեներալ Կոկորդիլոսյանն էլ դիմել էր մեզ, թե՝ «պարոնա՞յք,— ասում է,— իմ իդեալը բա՛նտն է, համեցե՛ք»։ Մենք հիմարաբար հավատացինք, և հիմա նրա փականքի տակ ենք նստած։

Խոր մտածմունքների մեջ ընկավ Ազատամիտը, այդ խոսքերը լսելով։ Առանց այն էլ նրա նախնական իդեալների անուններն էին մնացել միայն, այժմ էլ այդ անուններին ստորություն են առաջարկում։ Այսպես եթե գնա մեկ էլ տեսար՝ ինքդ ստորների շարքը կընկնես։ Տե՞ր աստված, մի խե՛լք սովորեցրու։

Իսկ բանիմաց մարդիկ, տեսնելով, որ նա մտատանջության մեջ է ընկել, իրենց կողմից սկսեցին նրան հարկադրել.—«Մեկ որ դու, Ազատամիտ, այս տեսակ բրդո՞ղ ես բըրդել, ուրեմն այլևս խեքիդ զո՛ռ մի տուր, գործը մինչև վեր-

ջը տար։ Դու մեզ հուզեցիր, գրգռեցիր, դու էլ խաղաղություն բեր մեզ, բարվոքիր մեր վիճակը... Գործի՛ր»։

Եվ սկսեց նա գործել։ Ու միշտ հարմարվելով ստորությանը։ Երբեմն փորձ է անում խուլս տալ, բայց բանիմաց մարդն անմիջապես քաշում էր նրա թևը. «Այդ ո՞ր կողմ ես մտիկ տալիս, Ազատամիտ, նայիր ուղի՛դ»։

Այսպիսով անցնում էին օրերը, և օրերի հետ առաջ էր գնում նաև «ստորությանը հարմարվելու» գործի հառաջադիմությունը։

Իդեալների հիշատակն էլ չէր մնացել,— մնացել էր միայն զգվանք ու գարշանք, բայց Ազատամիտն, այնուամենայնիվ, չէր վհատվում։ «Ի՞նչ անենք, թե ես իմ իդեալները մինչև ականջներս թաղել եմ ստորության մեջ։ Դրա փոխարեն, սակայն, ինքս կոթողի նման անվնաս եմ մնացել։ Այսօր ես ցեխի մեջ եմ թաղված, իսկ վաղը արեգակը կշողշողա, կշորացնի ցեխը, և ես կրկին նույն քաջարի կարիճը կլինեմ»։ Իսկ բանիմաց մարդիկ լսում էին նրա այդ պարծենկոտությունը և հրահրում էին իրենց կողմից. «Այդպե՞ս է, որ կա»։

Եվ ահա մի անգամ անցնում էր նա փողոցով իր բարեկամի հետ և, ըստ սովորության, խոսում էր իր իդեալների մասին ու իր իմաստությունը գովաբանում, երբ հանկարծ զգաց, որ կարծես այտին մի քանի կաթիլ ընկավ։ Որտեղի՞ց, ինչո՞ւ։ Վեր նայեց Ազատամիտը, անձրև չէ՞ արդյոք։ Սակայն, տեսնում է, երկնքում ամպեր չկային, արեգակն էլ ցնորվածի նման խայտում է զենիթում։ Թեպետ քամի կար, բայց որովհետև լուսամուտներից կեղտաջուր թափելն արգելված էր, ուստի այդ գործողությունը ևս կասկածից դուրս էր։

— Այս ի՞նչ հրաշք է,— ասում է Ազատամիտը բարեկամին,— անձրև չկա, կեղտաջուր չկա, բայց դեմքիս կաթիլներ են ցայտում։

— Տեսնո՞ւմ ես, ահա, անկյունում թաքնված մարդուն,— պատասխանեց բարեկամը,— դա նրա՞ գործն է։ Նա ուզում է թքել քեզ վրա, քո ազատամիտ գործերիդ համար, բայց համարձակություն չունի այդ բանն ուղիղ երեսիդ անելուն։

Եվ ահա նա, «ստորությանը հարմարվելով», անկյունից թքեց, իսկ քամին կաթիլները դեմքիդ խփեց։

ՄՈՌԱՅԿՈՏ ԽՈՅԸ

Ընտանի ոչխարներն անհիշելի ժամանակներից ապրում են մարդու ստրկացած, նրանց իսկական նախահայրերն անհայտ են։

ԲՐԵՄ

Ընտանի ոչխարները երբևիցե «ազատ» եղե՞լ են թե ոչ, պատմությունն այդ մասին լռում է։ Ամենահին ժամանակներում նահապետներն ընտելացրած ոչխարների հոտեր են ունեցել, և այնուհետև, բոլոր դարերում, ոչխարը տարածված է եղել ամբողջ աշխարհի երեսին, կարծես հատկապես մարդու գործածության համար ստեղծված լինելով։ Մարդն, իր հերթին, առաջացնում է ոչխարների շատ ուրույն տեսակներ, որոնք միմյանց հետ համարյա ոչ մի նմանություն չունեն։ Ոմանց պահում են որպես մսացու, ոմանց՝ ճարպի համար, ոմանց՝ տաք մուշտակների, ոմանց էլ՝ առատ և փափուկ բրդի համար։

Ընտանի ոչխարներն իրենք, իհարկե, ամենից քիչ են հիշում իրենց ազատ նախահորը, այլ միայն գիտեն, որ պատկանում են այն տեսակին, որպիսին եղել են իրենց ծննդյան րոպեին։ Այդ րոպեն հանդիսանում է ոչխարի անձնական պատմության սկզբնակետը, սակայն դա ևս, ոչխարի հասակ առնելու հետ միաժամանակ, հետզհետե աղոտանում է։ Այնպես որ, ճշմարիտ իմաստուն համարվում է այն ոչխարը միայն, որը ոչինչ չի հիշում և ոչինչ չգիտի, բացի իր համար կերակուր հանդիսացող կանաչից, խոտից ու դարմանից։

Բայց փորձանքն ու դժբախտությունն ո՞ւմ գլխից են անպակաս։ Մի անգամ մի խոյ քնեց ու երազ տեսավ։ Ըստ երևույթին, երազում տեսածը միայն դարմանը չէր եղել, որովհետև, երբ արթնացավ, հուզված էր և հայացքով երկար ժամանակ հնչեցրած բան էր որոնում։

Սկսեց նա վերհիշել, թե ինչ էր պատահել, բայց ինչ արեցչարեց, ոչինչ հիշել չկարողացավ։ Արծաթափայլ լույսով ողողված ինչ-որ հեռավոր տարածություն էր տեսածը և ուրիշ ոչինչ։ Նրա հիշողության մեջ մնացել էր այդ անձև արծաթափայլ հեռավորության աղոտ զգացողությունը միայն, բայց ո՛չ մի որոշ ուրվագիծ, ո՛չ մի կենդանի պատկեր...

— Մաքի՛, ա՜յ մաքի, այդ ի՞նչ տեսա երազումս,— հարցրեց նա իր կողքին պառկած ոչխարին, որը, որպես իսկական ոչխար, իր օրումը երազ չէր տեսել։

— Քնիր, փչա՜ն,— բարկացած պատասխանեց մաքին,— հեռու, հեռու երկրներից քեզ նրա համար չե՛ն բերել, որ երազ տեսնես ու քեզ մոդայի սիրահար պատկերացնես։

Խոյը ազնվացեղ անգլիական մերինոս էր։ Կալվածատեր Իվան Սոզոնտիչ Ռաստակովսկին շատ փող էր ծախսել նրա վրա և մեծամեծ հույսեր էր կապել։ Բայց, իհարկե, հեռու աշխարհներից այն նպատակով չէր բերել, որ նա իր համար խելոք ոչխարների սերունդ առաջ բերի, այլ, որպեսզի նա իր տիրոջ համար փափկամազ ոչխարների հոտ ստեղծի։

Եվ արդարև, տեղ հասնելու առաջին օրերին խոյը չափազանց լավ հեղինակություն ստեղծեց իր մասին։ Ոչ մի դատողություն չէր անում, ոչ մի բանով չէր հետաքրքրվում, նույնիսկ չէր հասկանում, թե ո՞ւր և ինչո՞ւ են բերել իրեն, այլ հենց այնպես, ուղղակի ապրում էր իր համար։ Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե ի՞նչ է ոչխարը և որո՞նք են նրա իրավունքներն ու պարտականությունները, խոյն այդ մասին ոչ միայն որևէ պրոպագանդ չէր անում, այլև հազիվ թե մինչև անգամ մտքովն անց էր կենում, որ այդպիսի հարցեր կարող են հուզել ոչխարների գլուխները։ Բայց հենց այդ հանգամանքն էր, որ օգնում էր խոյին՝ կատարելու իր գործն այն աստիճան ճշտորեն ու բարեխղճությամբ, որ Իվան Սոզոնտիչի ուրախությանը չափ ու սահման չկար, և հարևաններին էլ կանչում էր ու պարծանքով ցույց տալիս, թե տեսեք հապա, ի՞նչ խոյ է։

Եվ հանկարծ այդ երազը... Թե դա ի՛նչ երազ էր, խոյն ամենևին հասկանալ չէր կարողանում։ Զգում էր միայն, որ

իր էությանն ինչ-որ արտասովոր բան է պատել, մի հուզմունք, մի վիշտ։— Փարախն էլ, ըստ երևույթին, նույնն է, կերն էլ նույնն է, և նույն այդ հոտն է իրեն կատարելագործելու հանձնած, բայց կարծես ինքը ոչ մի առնչություն չունի նրանց հետ։ Թափառում է փարախում՝ գլուխը կորցրած և մայում է միայն։

— Ի՞նչ տեսա երազումս, բացատրեցեք ինձ, ի՞նչ էր, որ տեսա։

Բայց մաքիները ոչ մի կարեկցություն չէին ցույց տալիս նրա հուզմունքներին և նույնիսկ թունավոր հեգնանքով նրան անվանում էին իմաստուն և փիլիսոփա, որ, ինչպես հայտնի է, ոչխարական լեզվով շատ ավելի վատ նշանակություն ունի, քան «մովետոն»[48] բառը։

Այն օրից, երբ նա սկսեց երազներ տեսնել, մաքիներն ափսոսանքով հիշում էին այն հասարակ շլյոնյան ցեղի խոյին, որը դրանից առաջ չորս տարի շարունակ ապրել էր իրենց հետ, բայց ի վերջո, որպես մատուցած ծառայության վարձատրություն, խոհանոց էր տարվել և կորել էր անհետ (տեսել էին միայն, ինչպես նրան խոհանոցից սկուտեղի վրա դրած, հաղթականորեն տիրոջ տուն էին տարել)։ Ա՜յ, իսկական ծառայող խոյ էր. երբե՛ք ոչ մի երազ չէր տեսնում, ոչ մի հուզմունք չէր ունենում, այլ կատարում էր իր գործը՝ ոչխարային կանոնադրության ճշգրիտ իմաստի համաձայն, և այլևս ուրիշ ոչինչ ճանաչել չէր կամենում։ Եվ ի՞նչ, նրան, այդ հին, այդ փորձված ծառային արձակեցին, իսկ նրա տեղը նշանակեցին մի ինչ-որ դատարկապորտի, ցնորքներով տարված մեկին, որն առավոտից մինչև իրիկուն չգիտես ինչի մասին է մայում, իսկ մինչդեռ իրենք, մաքիները մնում են ամուլ։

— Այս անգլիական ապիկարը մեզ ամենևին չի ազնվացնում,— գանգատվեցին մաքիները հովիվ Նիկիտային,— այնպես դուրս չգա հանկարծ, որ այդ հիմարի պատճառով մենք պատասխանատու լինենք Իվան Սոզոնտիչի առաջ։

— Հանդարտվեցե՛ք, սիրելիներս,— հուսադրեց նրանց Նիկիտան,— վաղը մենք նրան կխուզենք, հետո եղինջով կծեծենք, մետաքսի պես կփափկի։

Սակայն Նիկիտայի հաշիվները չարդարացան։ Խոյին խուզեցին, ծեծեցին, բայց նա հենց նույն գիշեր կրկին երազ տեսավ։

Այդ օրվանից երազները չէին հեռանում նրանից։ Հազիվ էր ոտները ծալում, որ անմիջապես նիրհում էր, առանց իրեն հաշիվ տալու — դրսում ցերեկ է թե գիշեր։

Հենց որ փակում էր աչքերը, ասես ամբողջապես այլափոխվում էր, դեմքն էլ, ասես, ոչխարային դեմք չլիներ, այլ լրջանում էր, խիստ արտահայտություն էր ստանում, նման այն ուղղամիտ մարդկանց դեմքին, որոնց հին ժամանակ «մինիստր» էին կոչում։ Այնպես որ, կողքով անցնողն անպայման կասեր. «Այս ոչխարի տեղը փարախը չէ, սա արժանի է կալվածքների կառավարիչ նշանակվելու»։

Այնուամենայնիվ, ինչքան էլ աշխատում էր նա վերականգնել հիշողության մեջ հենց նոր միայն տեսած երազը, նրա ջանքերն առաջվա պես ապարդյուն էին անցնում։

Նա հիշում էր, որ երազում իր առջևով անց էին կենում կենդանի պատկերներ, մինչև անգամ ամբողջ տեսարաններ, որոնց պատկերացումը հրճվանք էր պատճառում իրեն, բայց արթնանում էր թե չէ, անմիջապես և՛ պատկերները, և՛ տեսարաններն աներևութանում էին, ու նա կրկին դառնում էր սովորական խոյ։ Ողջ տարբերությունը կայանում էր լոկ նրանում միայն, որ առաջ նա աշխուժով կատարում էր իր ոչխարային գործը, իսկ այժմ թափառում էր շփոթված, հիմարաբար ինչ-որ բան էր որոնում, բայց թե ի՛նչ, ինքն էլ բացատրել չէր կարող... Ոչխա՞ր, և այն էլ մելամաղձո՞տ ոչխար, դանակից բացի, ինչի՞ կարող է արժանի լինել նա ապագայում։

Դանակի հեռանկարներից բացի, խոյի դրությունն ինքնին արդեն տանջալից էր։ Չկա՛ առավել մեծ տառապանք, քան այն, որը բերում է իր հետ խավարից դեպի լույսը եղած անգիտակ հուզմունքի անզոր ձգտումը։ Անգիտակ ակնկալության հանկարծակի արթնացած ծարավով բռնված, խեղճ, սրտաբեկ արարածն այս ու այն կողմ է նետվում, ուժասպառ է լինում, չկարողանալով բնորոշել ո՛չ իր ակնկալությունների բնույթը, ո՛չ նրանց աղբյուրը։ Նա զգում է, որ իր

սիրտը բոցավառվում է, և չգիտե, հանուն ինչի՞ է այդ կրակը բռնկվել։ Նա աղոտ կերպով զգում է, որ աշխարհը փարախի պատերով չի սահմանափակվում, որ այդ պատերից դուրս բացվում են լուսավոր, շողշողուն հեռանկարներ, և չի կարողանում նշել նույնիսկ այդ հեռանկարների ուրվագծերը։ Նա նախազգում է լույս, լայնարձակ տարածություններ, ազատություն, բայց չի կարող պատասխան տալ, թե ի՞նչ է լույսը, ի՞նչ է լայնարձակ տարածությունը, ազատությունը...

Քանի հաճախ էին կրկնվում երազները, այնչափ ավելի ու ավելի մեծանում էր խոյի հուզմունքը։ Ոչ մի տեղից ոչ կարեկցություն էր տեսնում նա, ոչ պատասխան էր ստանում... Երբ նա մոտենում էր, մաքիները վախեցած կուչ էին գալիս միմյանց սեղմված։ Հովիվ Նիկիտան թեպետև, ըստ երևույթին, մի բան գիտեր, բայց համառորեն լռում էր։ Դա մի խելացի մարդ էր, որը շատ լավ ծանոթ էր ոչխարական սովորություններին և նրանց համար միայն մեկ պարտավորություն էր ընդունում.

— Եթե ծնվել ես ոչխարային դասում,— ասում էր նա հաստատ համոզմունքով,— նշանակում է, որպես ոչխար էլ պիտի ապրես։

Բայց հենց այդ էր, որ խոյը կատարել չէր կարողանում։ Հենց «դասն» էր, որ տանջում էր նրան, ոչ այն պատճառով, որ վատ էր ապրում, այլ որովհետև այն օրվանից, երբ ըսկըսել էր երազներ տեսնել, այդ օրվանից նա սկսել էր ինչ-որ մի այլ «դաս»-ի մասին մտածել։

Նա չէր կարողանում հիշողության մեջ վերականգնել իր երազները, բայց նրա բնազդներն այնքան էին հուզված, որ, չնայած իր էությունը խռովող ներքին անորոշությանը, նա այլևս հաղթահարել չէր կարողանում նրանց։

Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում նրա հուզմունքներն սկսեցին խաղաղվել, և նա կարծես նույնիսկ ավելի լրջմիտ էր դառնում։ Սակայն այդ խաղաղությունը հետևանք չէր այն բանի, որ նա լրջորեն որոշել էր այսուհետև շարունակել իր ոչխարային կյանքը, այլ, ընդհակառակը, ավելի շուտ վկայում էր ոչխարային օրգանիզմի ընդհանուր ուժասպառությունը։ Ուստի դրանից ոչ մի օգուտ չեղավ։

Խոյը, ըստ երևույթին կանխակալ դիտավորությամբ, առավոտից մինչև իրիկուն քնում էր, կարծես նպատակ ունենալով երազում ստանալ այն զգացմունքները, որոնք չէր կարողանում վերականգնել արթուն ժամանակ...

Միաժամանակ նա օրեցօր ավելի մաշվում ու թուլանում էր և, վերջապես, այն աստիճան նիհարեց, որ հիմար մաքիները նրան տեսնելիս սկսում էին փոնգտալ ու ծաղրաբար փսփսալ միմյանց հետ։ Եվ քանի այդ անմեկնելի ցավը տիրում էր խոյին, նրա դեմքն ավելի ու ավելի խոհական կերպարանք էր ստանում։ Բոլոր հովիվները խղճում էին նրան։ Բոլորը գիտեին, որ նա ազնիվ ու բարի խոյ է, և եթե չի արդարացնում տիրոջ հույսերը, ապա այդ բանում ինքը հանցավոր չէ, այլ միմիայն այն պատճառով, որ նա շատ խորունկ, ոչխարներին միանգամայն խորթ դժբախտության է հանդիպել, որը, սակայն, միաժամանակ, ինչպես շատերը բնազդաբար նախազգում էին, անձնապես մեծ պատվի էր արժանի անում նրան։

Ինքը՝ Իվան Սոզոնտիչը կարեկցաբար էր վերաբերում խոյի կրած տառապանքներին։ Մի քանի անգամ հովիվ Նիկիտան ակնարկել էր, որ այսպիսի առեղծվածային դրության լավագույն վախճանը դանակն է, բայց Ռաստակովսկին համառորեն մերժում էր այդ առաջարկը։

— Կորան իմ փողերը, ճիշտ է,— ասում էր նա,— բայց այն նպատակով չեմ գնել ես նրան, որպեսզի մորթին ինձ մնա։ Թո՛ղ իր մահով մեռնի։

Եվ ահա հասավ մտքի պայծառության տենչալի վայրկյանը։ Դաշտերի վրա շողում էր հունիսյան տաք, լուսնի լույսով ողողված գիշերը։ Խորին լռություն էր տիրում շրջբոլորը։ Ոչ միայն մարդիկ էին շունչները զսպել, այլև ողջ բնությունն անզգայացել էր կախարդական թովչանքով։

Փարախում բոլորը քնել էին։ Մաքիները, գլուխները կախ, նիրհում էին ցանկապատի մոտ։ Խոյը միայնակ պառկած էր փարախի մեջտեղ։ Հանկարծ նա արագ և անհանգիստ վեր թռավ տեղից։ Զգեց ոտները, վիզը երկարեց, գլուխը բարձրացրեց վեր և ամբողջ մարմնով ցնցվեց։ Այդ սպասողական դրությամբ, ասես ականջ դնելով և ուշադրությունը

լարած, կանգ առավ նա մի քանի րոպե, ապա ուժգին, սրբատաճմլիկ մի մայուն արձակեց սրտի խորքից...

Հոգեվարքի այդ հանդիսավոր մայունից մաքիները վախեցած վեր թռան տեղերից ու մի կողմ նետվեցին։ Պահապան շունը նույնպես արթնացավ և հաչոցով վազեց՝ հուզված հոտը կարգի բերելու։ Բայց խոյն այլևս ուշադրություն չէր դարձնում տեղի ունեցած խառնաշփոթությանը. նա ամբողջովին կլանված էր իր երևակայական աշխարհով։

Նրա մթագնող հայացքի առաջ ակներևորեն բացվեց իր երազների ցանկալի գաղտնիքը...

Մի վայրկյան ևս — ու նա ցնցվեց վերջին անգամ։ Ապա ոտներն իրենք իրենց ծալվեցին, և նա մեռած՝ գետնին փռվեց։

Իվան Սոզոնտիչը սաստիկ վշտացավ նրա մահով։

— Ի՞նչն էր պատճառը,— գանգատվում էր նա բարձրաձայն։— Ոչխար էր բոլոր ոչխարների նման, և հանկարծ կարծես կապվեց-կաշկանդվեց... Նիկիտա, դու հիսուն տարի հովիվ ես, նշանակում է լավ պիտի ճանաչես այդ հիմար ցեղը, ասա, ինչո՞ւ նրա գլխին այդպիսի փորձանք եկավ։

— Երևի երազում «ազատ ոչխար» էր տեսել,— պատասխանեց Նիկիտան։— Տեսնելը, ըստ երևույթին, տեսել է, բայց հասկանալ, ըմբռնել չի կարողացել... Այդ պատճառով էլ սկզբում տրտմեց, հալ ու մաշ եղավ, իսկ հետո սատկեց։ Այնպես, ինչպես մարդու հետ է պատահում...

Բայց Իվան Սոզոնտիչը հետագա բացատրություններից խուսափեց։

— Թող սա մեզ խրատ լինի,— ասաց նա։— Կարելի է, որ մեկ ուրիշ տեղ այս ոչխարից այծ դուրս գար, բայց մեզանում այսպես է. եթե ոչխար ես, ոչխար էլ մնա առանց այլևայլության։ Տիրոջդ համար էլ լավ կլինի, քեզ համար էլ լավ կլինի, տերության համար էլ հաճելի կլինի։ Եվ ամեն ինչ առատ կլինի քեզ համար՝ և՛ խոտը, և՛ կանաչը, և՛ դարմանը։ Մաքիներն էլ հետդ սիրալիր կլինեն... Այդպես չէ՞, Նիկիտա։

— Ճիշտ այդպես է, Իվան Սոզոնտիչ,— պատասխանեց Նիկիտան։

ՈՒԺԱՍՊԱՌ ՁԻՆ

Ձին՝ պառկած ճանապարհի եզրին, ծանր նիրհում է։ Գյուղացին նոր հենց արձակել է նրան և բաց է թողել արածելու։ Բայց Ձին հոգնած է, ուտելու մասին չի էլ մտածում։ Դժվարին հողաշերտ էր, քարքարոտ, մեծ դժվարությամբ կարողացան հաղթահարել այն։

Գյուղական սովորական Ձի է. տանչված, ծեծված, նեղ կրծքով, դուրս ընկած կողերով ու խանձված ուսերով, արյունոտված ոտներով։ Կորագլուխ է, բաշը խճճված. աչքերից և ռունդներից լորձունք է թափվում, վերին շրթունքը բլիթի նման կախ է ընկած։ Այդ տեսակ ձիով շատ գործ կատարել չի կարելի, բայց պետք է աշխատել։ Ամբողջ օրը Ձին լծից չի արձակվում։ Ամառն առավոտից մինչև երեկո հող է վարում, ձմեռը՝ մինչև տաքերն ընկնելն՝ «արտադրանքներ» է կրում։

Իսկ ուժ կուտակելու միջոց Ձին չունի. կերն այնպիսին է, որ զուր տեղն ատամներն է շարշարում։ Ամառը, մինչև գոմը մտնելը, գոնե փափուկ խոտով օր է անցկացնում, իսկ ձմեռը «արտադրանքներն» է կրում շուկա և տանը փտած ծղոտ է ուտում։ Գարնանը, երբ անասուններին դաշտ են դուրս բերում, նրան ձողի հարվածներով հազիվ են ոտքի կանգնեցնում։ Իսկ դաշտում խոտ ասված բանը չկա. տեղ-տեղ միայն ցից-ցից կանգնած են անցած տարվանից մնացած խոտեր, որ անցյալ աշնանը պատահաբար ազատվել են անասունների ատամներից։

Վատ է Ձիու կյանքը։ Դեռ լավ է, որ բարի գյուղացի է և զուր տեղը չի տանջում։ Երկուսով, արորն առած՝ դաշտ են դուրս գալիս։ «Դե՜, սիրելիս, ձի՛գ տուր», լսում է Ձին ծանոթ բացականչությունը և հասկանում է։ Իր ամբողջ խղճուկ կմախքով ձգվում է, առջևի ոտքերով ամուր հենվում է գետնին, ետևի ոտները առաջ է գցում, դունչը կրծքին է թեքում։ «Դե՜, տաժանակիր, քաշիր»։ Իսկ ինքը, գյուղացին, կրծքով ընկել է արորի վրա, ձեռքերով աքցանի նման բռնել է մաճը, ոտները հողի թաց կոշտերից ծանրացել են, աչքերով հետևում է, որպեսզի արորը խարդախություն չանի, չվրիպի

Անցնում են ակոսը գլխից-գլուխ և երկուսով էլ դողում են, որ ահա-ահա, մահը վրա հասավ։ Երկուսի էլ մահը, և՛ Ձիու, և՛ գյուղացու։ Ամե՛ն օր մահ։

Գյուղական փոշեպատ շավիղը նեղ ժապավենի նման վազում է գյուղից-գյուղ, աներևութանում է, դուրս է պրծնում ու կրկին վազում է անհայտ ուղղությամբ։ Եվ ամբողջ երկարությամբ երկու կողմից դաշտերը հսկում են նրան։ Դաշտերը վերջ չունեն, գրավել են ամբողջ լայնքն ու հեռուները։ Նույնիսկ այնտեղ, ուր երկինք ու երկիր միաձուլվում են, այնտեղ էլ դաշտեր են։ Ոսկեգույն, կանաչին տվող ու մերկացած՝ նրանք երկաթյա օղակով գրկել են գյուղը, և գյուղը ուրիշ ելք չունի, բացի դաշտերի այդ երախաբաց անդունդը։ Ահա հեռվում մի մարդ է գնում։ Գուցե նրա ոտքերը, շտապ քայլելուց, ծալվում են, բայց հեռվից թվում է, որ նա շարունակ կանգնած է նույն տեղը, կարծես չի կարողանում ազատվել դաշտերի հաղթահարող տարածությունից։ Ոչ թե խորանում է այդ փոքրիկ, հազիվ նշմարելի դեմը, այլ միայն մթագնում է։ Մթագնում է, մթագնում և հանկարծ անսպասելի աներևութանում է, ասես տարածությունն ինքնին ներս է ծծում նրան։

Դարեդար դաշտերի այդ ահեղ, այդ անշարժ զանգվածը անզգայանում է, կարծես իր գրկում գերի պահելով հեքիաթային մի ուժ։ Ո՞վ կազատի այդ ուժը գերությունից։ Ո՞վ նրան լույս աշխարհ կհանի։ Երկու էակի է բաժին ընկել այդ առեղծվածը՝ գյուղացուն և Ձիուն։ Եվ երկուսով էլ ծնված օրից մինչև գերեզման տանջվում են այդ առեղծվածի վրա, արյուն-քրտինք են թափում, իսկ դաշտը մինչև այժմ էլ իր հեքիաթային ուժը ձեռքից բաց չի թողնում,— այն ուժը, որը կարձակեր գյուղացու կապանքները, իսկ Ձիու տրորված ուսերը կբժշկեր։

Պառկել է Ձին արեգակի այրող ճառագայթների տակ, չորս կողմը ոչ մի ծառ չկա, իսկ օդը այն աստիճան շիկացել է, որ շունչը բռնվում է կոկորդում։ Երբեմն շավիղի վրա փոշու ամպեր են բարձրանում, սակայն փոշի բարձրացնող քամին ոչ թե զովություն է բերում, այլ տապի նոր ու նոր տարափ։ Բոռերն ու ճանճերը կատաղի պտույտներ են գործում

Զիու վրա, մտնում են նրա ականջները, ռունգները, կնճիթները խրում են տրորված տեղերը, իսկ նա մեքենայորեն ականջներն է ցնցում խայթոցներից։ Նիրհո՞ւմ է Զին, թե՞ մեռնում է, դժվար է գուշակել։ Նա գանգատվել էլ չի կարող, որ իր ներսը ամբողջապես այրվում է տապից ու դժվարին աշխատանքից։ Աստված նույնիսկ այդ մխիթարությունից զրկել է անբան անասունին։

Նիրհում է Զին, իսկ հանգիստը փոխարինող տառապալից հոգեվարքի վրա ոչ թե երազանքներն են ճախրում, այլ անկապ, ճնշող մառախուղը։ Մառախուղ, որի մեջ ոչ միայն պատկերներ, այլ անգամ հրեշներ չկան, այլ կան հսկայական բծեր, մերթ սև, մերթ բոցավառ, որոնք և՛ անշարժ են, և՛ շարժվում են տանջված Զիու հետ միասին, և ձգում, տանում են նրան իրենց հետ ավելի ու ավելի հեռու, դեպի անհունությունը։

Վերջ չունեն դաշտերը, չես կարող ազատվել նրանցից։ Այդ դաշտով շրջել է Զին արորին լծված և՛ երկայնքով, և՛ լայնքով, բայց և այնպես վերջ չունի նա։ Ե՛վ մերկացած, և՛ ծաղկուն, և՛ ընդարմացած սպիտակ սավանի տակ, նա տիրաբար փովել է անհունապես և իր հետ ոչ թե պայքարելու հրավեր է կարդում նա, այլ ուղղակի ճորտացնում է։ Ո՛չ ըմբոնել, ո՛չ նվաճել, ո՛չ ուժասպառ անել կարելի է նրան։ Մեկ տեսար՝ նա անկենդան է, մեկ տեսար կրկին ծնունդ է առել։ Չես հասկանում՝ ո՞րն է մահը, ո՞րը՝ կյանքը։ Բայց և՛ մահվան, և՛ կյանքի առաջին և մշտական վկան Զին է։ Բոլորի համար դաշտը լայնարձակ տարածություն է, պոեզիա, ընդարձակություն, իսկ Զիու համար՝ ճորտություն։ Դաշտը ճնշում է նրան, խլում է նրա վերջին ուժերը և այնուամենայնիվ հագեցած չի համարում իրեն։ Քայլում է Զին արշալույսից-արշալույս, իսկ առջևից ճոճուն սև բիծն է ընթանում ու ձգում է, ձգում է նրան իր ետևից։ Ահա այժմ այդ բիծը ճոճվում է նրա դիմաց, ու նա նիրհի միջից լսում է. «Դե՞, սիրելի, դե՞, տաժանակիր, դե՞»...

Երբե՛ք չի մարելու այդ հրեղեն գունդը, որն արշալույսից-արշալույս Զիու վրա շիկացած ճառագայթների հեղեղ է թափում, երբե՛ք չեն դադարի անձրևները, կայծակները, բուքը, սառնամանիքը... Բոլորի համար բնությունը մայր է, միայն նրա համար է չարիք ու տառապանք։ Բնության կյանքի յուրաքանչյուր արտահայտությունը, յուրաքանչյուր բողբոջը տանջանք ու թույն է դառնում Զիու համար։ Չկա Զիու համար ո՛չ անուշ բույր, ո՛չ ձայների ներդաշնակություն, ո՛չ գույների խաղում. ո՛չ մի զգացողություն չունի նա, բացի ցավի, հոգնածության ու դժբախտության զգացողությունը։ Թո՛ղ արեգակը ջերմությամբ և լույսով ողողի բնությունը, թո՛ղ նրա ճառագայթները կյանք ու հրճվանք առաջ բերեն, խեղճ Զին նրա մասին մի բան գիտե միայն, որ նա նոր թույն է ավելացնում բոլոր այն անթիվ թույներին, որից հյուսված է իր կյանքը։

Աշխատանքը վերջ չունի։ Աշխատանքով է սպառվում նրա գոյության ողջ իմաստը։ Աշխատանքի համար է նա սկիզբն առել ու ծնվել, և աշխատանքից դուրս նա ոչ միայն պետք չէ ոչ ոքի, այլև, ինչպես ասում են հաշվով ապրող և խնայողություն անող տերերը, նա վնաս է։ Ողջ այն պայմանները, որոնց մեջ ապրում է նա, այնպես են դասավորված, որպեսզի նրա մեջ չնվազի այն մկանային ուժը, որից բխում է ֆիզիկական աշխատանքի հնարավորությունը։ Ե՛վ կերը, և՛ հանգիստը տրվում է նրան այն չափով, որպեսզի նա ընդունակ լինի կատարելու սահմանված աշխատանքը։ Իսկ այնուհետև թող դաշտն ու տարերքը հաշմանդամ դարձնեն նրան. ոչ ոք գործ չունի, թե քանի՞ նոր վերք է ավելացել նրա ոտներին, ուսերին ու մեջքին։ Ոչ թե նրա բարօրությունն է հարկավոր, այլ աշխատանքի լուծը կրելու ընդունակ կյանքը։ Քանի՞ դար է կրում նա այդ լուծը, չգիտե, քանի դար ևս կրելու է, չի հաշվում։ Նա ապրում է, ասես թաղվում է խավար անդունդի գիրկը և կենդանի օրգանիզմին հատուկ բոլոր զգացողություններից ճանաչում է միայն աշխատանքից առաջացած տնքացող ցավը։

Զիու կյանքը հավիտենականության խարանով է կընքվել։ Նա չի ապրում, բայց և չի մեռնում։ Դաշտը գլխոտանու պես իր անթիվ շոշափուկները թաղել է նրա մեջ ու բաց չի թողնում սահմանված շերտից։ Ինչպիսի արտաքին առավելություններով էլ օժտված լինի պատահականությունից, նա

շարունակ նույն ծեծված, տառապած, հազիվ կենդանի Զին է։ Նման այն դաշտին, որը նա ոռոգում է իր արյունով, նա չի հաշվում ո՛չ օրերը, ո՛չ տարիները, ո՛չ դարերը, այլ ճանաչում է միայն հավիտենականությունը։ Նա չափչփել է ողջ դաշտը, և՛ այստեղ, և այնտեղ նա միանման ձգվում է իր խղճուկ կմախքով և ամեն տեղ նույնն է, նույն անանուն Զին։ Նրա մեջ չմեռնող, բաժան-բաժան չեղող և անոչնչանալի մի ամբողջ զանգված է ապրում։ Վերջ չունի կյանքը — այդ մեկն է պարզ միայն այդ զանգվածի համար։ Սակայն ի՞նչ բան է այդ կյանք ասվածը։ Ինչո՞ւ է նա խճճել Զիուն անմահության ցանցում, որտեղի՞ց է եկել նա և ու՞ր է գնում։ Հավանորեն ապագան երբեմն պատասխան կտա այդ հարցերին... Բայց, գուցե, նա ևս նույնչափ համր ու անտարբեր գտնվի, ինչպես և անցյալի այն խավար անդունդը, որն աշխարհը լցրել է ուրվականներով և կենդանի արարածներին նրանց ձեռքն է մատնել։

Անհիշելի ժամանակներում մի ծեր ձի էր ապրում, նա ուներ երկու որդի՝ Զին և Պորտաբույծը։ Պորտաբույծը քաղաքավարի և զգայուն զավակ էր, իսկ Զին անտաշ և անզգա։ Երկար համբերեց ծերունին Զիու անտաշությանը, երկար ժամանակ երկու որդուն էլ հավասարապես էր նայում, ինչպես վայել է զավակասեր հորը, բայց, վերջապես, զայրացավ և ասաց. «Ահա հավիտյանս հավիտենից իմ որոշումը ձեր մասին. Զիուն դարման, իսկ Պորտաբույծին՝ գարի»։ Այդպես էլ գնաց այդ օրվանից սկսած։ Պորտաբույծին հատկացրին տաք գոմը, տակը փափուկ ծղոտ փռեցին, մեղրաջուր խմեցրին և մսուրի մեջ գարի լցրին, իսկ Զիուն ախոռն արեցին, մի խտիտ փտած ծղոտ գցեցին, թե՝ խժռիր ատամներով, Զի, իսկ ջուրը, ահա, այն փոսից խմիր։

Պորտաբույծը համարյա մոռացել էր, թե աշխարհում ինքը եղբայր ունի, բայց հանկարծ՝ չգիտես ինչու, կարոտ զգաց և հիշեց։ «Զանձրացել եմ,— ասում է,— տաք գոմից, տաղտկացել եմ մեղրաջրից, կոկորդովս կուլ չի գնում գարին, գնամ, տեսնեմ՝ ինչպե՞ս է ապրում եղբայրս»։

Տեսնում է, որ եղբայրն անմահ է։ Ծեծում են նրան ինչով պատահի, բայց նա ապրում է։ Ծղոտով են կրակրում,

բայց նա ապրում է։ Եվ դաշտի որ կողմն էլ ուզում ես նայիր, ամեն տեղ եղբայրն է աշխատում։ Հիմա դու նրան այստեղ ես տեսնում, բայց մի ակնթարթ չանցած, հրեն, որտե՞ղ է ոտքերը շարժում։ Նշանակում է՝ նրա մեջ ինչ-որ մի առաքինություն կա, որ փայտն ինքը փշրվում է նրա վրա, բայց նրան ջախջախել, խորտակել չի կարողանում։

Եվ սկսեցին Պորտաբույծները պտույտ գալ Զիու չորս բոլորքը։

Մեկն ասում է.

— Նրան ընկճել չի լինում այն պատճառով, որովհետև մշտապես աշխատելուց նրա մեջ շատ առողջ բանականություն է կուտակվել։ Նա հասկացել է, որ ականջները ճակատից վեր չեն բուսնում, որ համառությամբ ոչինչ անել չի լինի, և ամբողջովին առածների մեջ խճճված, ապրում է իր համար, հնազանդ, առանց որևէ կարիքի։ Ողջ լեր, Զի, կատարիր քո գործը, արթո՛ւն կաց։

Մյուսն հակաճառում է.

— Ա՜խ, ամենևին էլ առողջ բանականության շնորհիվ չէ, որ նրա կյանքն այդպես հաստատուն դասավորություն է ստացել։ Ի՞նչ բան է առողջ դատողությունը։ Առողջ դատողությունն ինչ-որ առօրյա, սովորական բան է, գռեհկության չափ պարզ, որ հիշեցնում է մաթեմատիկական ֆորմուլան կամ ոստիկանական հրամանը։ Դա չէ, որ Զիու մեջ պահպանում է անխորտակելիությունը, այլ ա՛յն, որ նա իր մեջ կրում է ոգու կյանքը և կյանքի ոգին։ Եվ քանի որ նա իր մեջ կպարունակի այդ երկու գանձերը, ոչ մի փայտ նրան չի կարող խորտակել։

Երրորդն ասում է.

— Ի՞նչ հիմար-հիմար բաներ եք ասում։ Ոգու կյանք, կյանքի ոգի — դա ի՞նչ է, եթե ոչ անքովանդակ բառերի դատարկ տեղափոխություն։ Զին ամենևին այդ պատճառով չէ անխոցելի, այլ այն պատճառով, որ նա իր ֆիզիկական աշխատանքն» է գտել։ Այդ աշխատանքը նրան հոգեկան հավասարակշռություն է տալիս, հաշտեցնում է նրան և՛ իր սեփական խղճի, և՛ մասսաների խղճի հետ, և օժտում է նրան այն դիմացկունությամբ, որը ճորտության դարերն իսկ

չկարողացան հաղթել։ Աշխատիր, Զի, ճի՛գ արա և աշխատանքից վերցրու այն հոգեկան պարզությունը, որը մենք, Պորտաբույծներս, կորցրել ենք ընդմիշտ։

Իսկ չորրորդը (ըստ երևույթին գինեվաճառի գոմից նոր հենց դուրս եկած) կցում է.

— Ա՜խ, պարոններ, պարոններ, դուք բոլորդ էլ սխալվում եք։ Զի՛ կարելի ընկճել Զիուն ոչ թե նրա համար, որ ինչ-որ ուրույն պատճառ կա, այլ՝ որովհետև նա դարերից ի վեր ընտելացել է իր կյանքին։ Ուզում ես ամբողջ մի ծառ փշրիր նրա մեջքին, նա կենդանի կմնա։ Այժմ ահա նա պառկել է, և թվում է, որ նրա մեջ շունչ անգամ չի մնացել։ Բայց հապա մտրակով քաջալերիր նրան մի լավ, նա կրկին իր ոտքերը գործի կդնի։ Ով ինչ գործի որ նշանակված է, նա այն գործն էլ անում է։ Հաշիվ արեք, քանի՞-քանի՞ սրա նման հաշմանդամներ են ցրվել դաշտում, և բոլորը նման են մեկը մյուսին։ Հաշմանդամացրե՛ք նրանց այժմ որքան կամենաք, և երբե՛ք նրանց թիվը չի պակասի։ Տեսնում ես՝ նա չկա, բայց մեկ էլ տեսար՝ կրկին գետնի տակից դուրս թռավ։

Եվ որովհետև բոլոր այդ խոսակցություններն իսկական գործից չէին բխում, այլ արդյունք էին պարապությունից առաջացած թախծի, ուստի Պորտաբույծները խոսում էին, խոսում և հետո սկսում էին միմյանց հանդիմանել։ Բայց, բարեբախտաբար, ճիշտ ժամանակին կարթնանա գյուղացին և լուծում կտա բոլոր վեճերին, ասելով.

— Դե՜, տաժանակիր, շարժվի՛ր։

Այդ ժամանակ Պորտաբույծները հիացմունքից արդեն շընչահեղձ կլինեն։

— Տեսե՜ք, տեսե՜ք,— կբացականչեն նրանք բոլորը միաբերան ու համերաշխ,— տեսեք՝ ինչպե՜ս է նա կուչ ու ձիգ անում, ինչպես է առջևի ոտներով հենվում, իսկ ետևիններն առաջ նետում։ Իսկապես որ գործը վարպետից է վախենում։ Ուժ արա, Զի։ Ահա՛ թե ումից պետք է սովորել, ահա՛ ում պետք է նմանվել։ Դե՜, տաժանակի՛ր, դե՜։

ԿԻՍԵԼ

Խոհարարուհին կիսել եփեց և դրեց սեղանին։ Պարոնները կերան, շնորհակալություն հայտնեցին, իսկ երեխաները մատները լիզեցին։ Փառահեղ կիսել էր, բոլորը հավանեցին, բոլորին գոհացրեց։ «Ա՜խ, ինչ քաղցր կիսել է», «ա՜խ, ինչ փափուկ կիսել է», «հիանալի՜ կիսել է»,— շարունակ այս բացականչություններն էին լսվում։ «Խոհարարուհի, տե՜ս, ամեն օր սեղանի վրա կիսե՛լ լինի»։ Ե՛վ իրենք կերան կշտացան, և՛ հյուրերին փառավոր մեծարեցին, վերջը մի ման էլ փողոցով անցնողներին տվեցին։—«Կերե՛ք, ազնի՜վ պարոններ, այնպես հիանալի՜ կիսել է, որ ինքն իրեն բերան է մտնում։ Շատ կերեք, կիսելը սիրում է, երբ շատ են ուտում»։ Բոլորը մոտենում էին, խոթում գդալը կիսելի մեջ, ուտում էին ու բերանները մաքրում։

Կիսելն այն աստիճան փափուկ էր և հալչող, որ ոչ մի անհարմարություն չէր զգում, երբ իրեն ուտում էին։ Ընդհակառակը, ընդհանուր գովեստներ լսելով, նա նույնիսկ սկսեց հպարտանալ։ Բազմել է սեղանի վրա և ուռչում-փքվում է ինքն իրեն։ «Նշանակում է՝ ես լա՜վն եմ, որ պարոնները սիրում են ինձ։ Տո՛ւտ արա, խոհարարուհի, լցրու»։

Շատ տևեց այսպես թե քիչ, միայն կիսելն սկսեց պարոններին ձանձրացնել։ Պարոններն առաջվա համեմատությամբ ավելի ուսյալ էին դարձել, նույնիսկ նրանք, ովքեր ստորին աստիճանից քիչ թե շատ բարձր աստիճանի էին հասել, նրա՛նք անգամ սկսեցին ժելեներին ու բլամանժեներին[49] գերադասություն տալ։

— Ներեցե՜ք,— ասում է մեկը,— ի՜նչ լավ բան կա այս կիսելի մեջ, մի՞թե դա ուտելիք է։ Փորձեցեք հապա, տեսեք որչափ փափուկ է, լպրծուն և քաղցրավուն։

— Կիսելը պարոնայք, խոզերին տանք,— վրա բերեց մեկ ուրիշը,—իսկ ինքներս մեկնենք հանքային ջրերը՝ ժամանակ անցկացնելու։ Ուզածին չափ ման կգանք մեր քեֆին, իսկ հետո, եթե դա անպայման անհրաժեշտ է, կրկին կվերադառնանք տուն՝ կիսել ուտելու։

Է՜, ինչ կա որ, ուզում են, թող խոզերն ուտեն, կիսելի

համար միևնույն է, թե ի՞նչ աստիճան ունեցող անձնավորություն է իրեն ուտում։ Միայն թե ուտեն։ Խոզն իր դունը մինչև ականջները թաղեց կիսելի մեջ և չփչփոցը գցեց բակով մեկ։ Չփչփացնում է ու զնդզնդում. «Քե՞ֆ կքաշեմ, թավա՞լ կտամ՝ աղաների կիսելն ուտելով»։ Անարդ, կենդանին կշտանալ հո չունի, խոհարարուհին մի փոքր որ ուշացնում է, անմիջապես զնդզնդում է, թե՝ «լցրո՞ւ», իսկ եթե ասում են՝ «կիսել կար, բայց այլևս չկա», այն ժամանակ ընկնում է բոլոր անկյունները, բոլոր ծակուծուկերը, դնչով աղբն է քրքքրում և անպայման գտնում է որևէ տեղից։

Խոզը այնքան կերավ, այնքան կերավ, մինչև որ վերջին կաթիլը կերավ վերջացրեց։ Իսկ պարոններն այդ ժամանակ այնքան զբոսնեցին, այնքան ժամանակ անցկացրին, որ ամեն ինչ սպառեցին։ Սպառեցին և ասում են միմյանց. «Այլևս ոչինչ չունենք, որ մեր քեֆը շարունակենք, այժմ տուն վերադառնանք՝ կիսել ուտելու»։

Տուն վերադարձան, գդալները վերցրին, բայց կիսելից միայն չորացած տականքն էր մնացել։

Եվ այժմ արդեն բոլորը՝ և՛ պարոնները, և՛ խոզերը միաբերան ողբում են.

— Կիսելը կերանք, բայց պաշար չպահեցինք։ Ի՞նչ ենք ուտելու մենք այսուհետև։ Հե՞յ, ո՞ւր ես կիսել, հե՞յ։

ՊԱՐԱՊ ԶՐՈՒՑՑ

Այժմ այդպիսի բան չի պատահում, սակայն կար ժամանակ, երբ նույնիսկ բարձրաստիճան պաշտոնյաների մեջ վոլտերականներ էին լինում։ Ինքը բարձր իշխանությունը հետևում էր այդ մոդային, իսկ բարձրաստիճան պաշտոնյաները նմանվում էին։

Ահա այդ իսկ ժամանակ կար ու չկար մի նահանգապետ կար, որը չէր հավատում այն ամենին, ինչին պարզամտորեն հավատում էին ուրիշները։ Իսկ ամենից գլխավորը, չէր հավատում, ինչ նպատակով է հիմնված նահանգապետական պաշտոնը։

Ընդհակառակը, այդ նահանգի ազնվականության պարագլուխն ամեն բանի հավատում էր, իսկ նահանգապետական պաշտոնի նշանակությունն ըմբռնում էր մինչև անգամ իր բոլոր նրբություններով։

Եվ ահա մեկ անգամ նրանք՝ նստած նահանգապետական առանձնասենյակում, վիճեցին։

— Մեր մեջ ասած, ես ուղղակի չեմ հասկանում այդ բանը,— ասաց նահանգապետը։— Իմ կարծիքով, եթե մեզ, բոլոր նահանգապետներիս սուս ու փուս վերացնեն, նույնիսկ ոչ ոք չի էլ նկատի այդ բանը։

— Ա՜խ, ձերդ բարձրություն, ինչպե՞ս եք այդպիսի բաներ ասում,— առարկեց նրան զարմացած և մինչև անգամ վախեցած պարագլուխը։

— Հասկանալի է, ես սա ձեզ գաղտնաբար, վստահելով եմ ասում... սակայն խղճով եթե ասելու լինենք, նորից եմ կրկնում, ես ուղղակի այդ չե՛մ հասկանում։ Պատկերացրեք ձեզ. մարդիկ խաղաղ ապրում են, աստծուն հիշում են, թագուհուն պատիվնե՞ր են տալիս, մեծարո՛ւմ են, և հանկարծ... նրանց գլխին նահանգապե՞տ են ուղարկում... Ո՞ր տեղից, ինչպե՞ս, ի՞նչն է պատճառը։

— Պատճառը հենց ա՛յն է, որ իշխանությո՞ւն է,— խելամուտ էր անում նրան պարագլուխը.— առանց դրան չի՛ կարելի։ Վերևում — նահանգապետն է, մեջտեղը՝ ոստիկանապետը, ներքևում՝ տանուտերը։ Իսկ կողքերից՝ պարագլուխները, նախագահները, զինվորականները...

— Գիտեմ, բայց ինչո՞ւ։ Ասում եք — տանուտերը. լա՜վ։ Տանուտերը, որ գյուղացու գլխին է դրված,— դա է՛լ հասկանում եմ։ Այժմ պատկերացրեք ձեզ. գյուղացին ապրում է, աշխատում է դաշտում, վարում է, հնձում է, բազմանում է, մի խոսքով, կատարում է իր կյանքի շրջանը։ Եվ հանկարծ որտեղից-որտեղ, կարծես գետնի տակից, դուրս է պրծնում տանուտերը... Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել։

— Չի՛ պատահել, բայց կարո՛ղ է պատահել, ձե՞րդ բարձրություն։

— Չե՛մ հավատում։ Երբ մարդիկ ապրում են իրենց քեֆին, տանուտերն ինչների՞ն է հարկավոր։ Երբ նրանք

խաղաղ, հանգիստ իրենց կարիքներն են հոգում, չեն մոռանում աստծուն, թագուհուն պատվում-մեծարում են, ուրիշ ի՞նչ կարող է պատահել բացի լավ բանից։ Եվ, տվյալ դեպքում, ի՞նչ կարող է անել կամ ավելացնել տանուտերը։ Աստված եթե բերք տվեց — բերք կլինի, աստված բերք չտվեց — այդպես էլ մի կերպ կապրեմ։ Ի՞նչ գործ ունի այդտեղ տանուտերը։ Մի՞թե նա կարող է թեկուզ մեկ հատիկ հասկ ավելացնել կամ պակասեցնել խրձից։ Ո՛չ, նա վրա է ընկնելու, պղտորելու է, գոռգոռալու է, և տեսար՝ մեկնումեկին դեռ բանտ էլ գցեց։ Ուրիշ ոչինչ։

— Ձուր տեղը բանտ չի՛ գցի, մի պատճառ կլինի՞։

— Բայց և այնպես, համաձայնիր, որ եթե տանուտերին սատանան չբերեր՝ ամեն բան առանց նրա էլ իր կարգով կգնար և ոչ մի «ինչ-որ բան» չէր պատահի։ Համենայն դեպս, ոչ ոք բանտ չէր նստի։ Բայց հենց որ տանուտերը հայտնվում է, անմիջապես նրա ետևից էլ «ինչ-որ բանն» է հայտնվում։

— Ա՜խ, ձերդ բարձրություն, բայց չէ՞ որ տարբե՞ր տանուտերեր են լինում։ Ա՜յ, մեզանո՛ւմ, օրինակ...

— Չէ՛, դուք լսեցեք ես ինչ եմ ասում։ Ես անձնավորությունների մասին չեմ խոսում, ոչ էլ ուզում եմ ձեր առաջ պարադոքսներով պարծենալ։ Ես փորձով գիտեմ այդ երաժշտությունը և նույնիսկ կարող եմ ինքս ինձ օրինակ բերել։ Օրինակ, ասենք, նահանգից ես մեկնում եմ — և հանկարծ ի՞նչ է պատահում։ Դեռ ուղեկալից հազիվ հեռացած եմ լինում, որ հանկարծ ամբողջ նահանգում օդի բարեխառնություն է տեղի ունենում։ Ոստիկանապետը չի արշավում, թաղայինները չեն վազում, քաղաքապահները եռանդ չեն ցուցաբերում։ Նույնիսկ պարզամիտները, որոնք իմ գոյության մասին ճշգրիտ չգիտեն, նրանք էլ զգում են, որ իրենց կյանքից ինչ-որ ստորակետ է պակասել, անհայտացել, մի ստորակետ, որից նրանց բոլոր տեղերը ցավ էր զգում։ Ի՞նչ է նշանակում այս երաշը, հարց եմ տալիս ձեզ։ Այն, տեր իմ, որ իմ տեղակալը չի կարող անել այն ամենը, ինչ կարող եմ անել ես և որ, հետևապես, թե՛ ծառայողների, թե՛ քաղաքացիների համար այդ տարբերությունը թեթևություն է բերում։ Բայց ահա ես կրկին վերադառնում եմ պաշտոնիս։

Ազմուկ, աղաղակ, արշավ, վազվզուք... Ով հասարակ գլխարկով էր մեր գալիս, եռանկյունի գլխարկով է վազվզում, ով մեկ ամբողջ ամիս ապրում էր իր քեֆին, կրկին վհատության մեջ է ընկնում։ Բոլորն սկսում են զզվելի ավելորդ ձևականություններ տեսնել իրենց առջևում... Սակայն ի՞նչ կարիք կա այդ մասին զուր տեղը խոսելու, դուք ինքներդ էլ, հավանորեն, մասամբ զգացած կլինեք այդ բանը...

Իրոք, պարագլուխը հիշեց, որ ինքն էլ այդպիսի մի հանցանք ունի։ Հենց որ, պատահում է, նահանգապետը մեկնում է նահանգից, անմիջապես հրամայում է. «Է՜յ, տարանտա՜սը»,— և մա՛րշ, քշում է գյուղ։ Ու մնում է այնտեղ՝ մինչև իշխանությունը կրկին իր պարտականությանն է կոչում։ Մի ձևականություն է կատարում միայն, այն, որ փոխնահանգապետի տան մոտով անցնելիս, մի րոպեով ներս է մտնում և պայմանավորվում է նրա հետ.

— Արեֆիյ Իվանիչ, մի բան որ պատահի, սուրհանդակ ուղարկեցեք։

— Ի՞նչ կարող է պատահել. տե՞րն ընդ ձեզ։

— Դե, մնա՛ք բարի։ Ներեցեք Կապիտոլինա Սերգեևնային։ Քշի՛ր, շո՛ւտ։

Այդ է, որ նրան տեսան։

— Այդ հանցանքը կա,— ասաց նա,— բայց, այնուամենայնիվ, նրանից չէ որ... Ուղղակի մարդ հանգստանալ է ուզում և օգտվում է առիթից։

— Հենց այդ է, «հանգստանա՜լ»։ Իսկ ո՞վ էր խանգարում հանգստանալուն։ Մի՞թե հանգստանալու մեջ հանցանք կա։ Ոչ մի հանցանք չկա, այլ ուղղակի խանգարում էր, որովհետև նահանգապետ է,— ուրիշ ոչինչ։ Այժմ առաջ անցնենք։ Նկատե՞լ եք դուք, թե քաղաքացիները ինչ կարծիք են հայտնում, երբ ուզում են նահանգապետին գովաբանել։ «Սա,— ասում են,— լավ նահանգապետ է, նա հանգիստ է պահում իրեն, ոչ ոքի վնաս չի տալիս»։ Այդպես։ Նշանակում է, նահանգապետի մեջ ամենից ավելի թանկարժեք բանն այն է, որ նա հոժարակամ կերպով ոչինչ չի անում։ Եվ իսկապես, խղճով դատեցեք, քաղաքացիների գործերում նրա խառնվելն ի՞նչ օգուտ կարող է բերել։ Գալիս է նահանգ, որպես

օտարից-օտար մի մարդ,— այդ առաջինը։ Գուցեև նա մի բան սովորել է ժամանակին, բայց ոչ այն, ինչ հարկավոր է,— այդ երկու։ Հետո. վիճակագրություն նա չգիտե, էթնոգրաֆիա չի հասկանում, բարքերն ու սովորությունները նրա սրոք չեն դրված, որտեղ ինչ գետ կա, ո՞ւր է հասնում, ինչո՞ւ է հոսում և ի՞նչ իմաստով է հոսում — այդ բանն այն ժամանակ է, թերևս, իմանում, երբ մի հինգ անգամ չափչփում է ամբողջ նահանգը. երկաթուղիների մասին այնքանն է իմանում, թե որ կնացքը երբ է մեկնում և ուր է մեկնում, որպեսզի դեպք եկած ժամանակ չուշանա։ Իսկ թե ինչու է կառուցված ճանապարհը, ինչքան կամուրջ է ստարվել անցյալ տարի. ինչքան՝ այս տարի, ուր և ի՞նչպես՝ օժանդակ գիծ պետք է անցկացնել,— այդ բոլորը նրա համար խելքից-մտքից դուրս բաներ են։ Սակայն կարելի է այդ բոլորն իմանալ, տեղեկություններն էլ բոլորը ձեռքի տակ են, բայց հետաքրքիր չէ և հարկ էլ չկա։ Այդ տեղեկություններից ոչինչ դուրս չի գա*։ Կամ թե վերցնենք աճուրդները, արհեստները, զբաղմունքները. կոշկակարություն, բանջարաբուծություն։ Մի տեղ ռադիա են գործում, մի ուրիշ տեղ մանգաղ, գերանդի են կոփում։ Ինչո՞ւ, ի՞նչ բանի համար,— ո՛չ մի հասկացողություն։

— Ձերդ բարձրություն,— ընդհատեց պարագլուխը չափից ավելի առաջ անցած նահանգապետին,— ես ինքս այստեղի բնիկ քաղաքացի եմ, բայց ես էլ այդ բոլորից ոչինչ ըմբռնեմ։

— Դուք ուրիշ եք, դուք պարագլուխ եք։ Ճաշի վրա ձեզ միս են մատուցում,— դուք ամենևին կարիք չունեք իմանալու որտեղի՞ց է։ Միայն թե համեղ լինի, այլևս ձեր բանը չէ։ Իսկ ես նահանգապետ եմ, ես պետք է ամեն բան իմանամ։ Ինձ, մեկ էլ տեսար, հանկարծ հարց տվեցին, թե ի՞նչ գրության մեջ է բանջարաբուծությունը։

— Այո, մեր ժամանակներում ամեն բան սպասելի է։

— Այժմ այնպիսի ժամանակ է, որ պետք է յուրաքանչյուր կոպեկ հաշվի տակ առնված լինի, որպեսզի հնարավոր տեղից օգուտ քաղվի, տուրք սահմանվի, եթե դա շահավետ կլինի։ Ահա թե ինչպես է այժմ։ Եվ համենայն դեպս, պատասխանում ես, թե եղած-չեղածը մի բան չէ։

— Այո, բայց ի միջի այլոց, կաղամբը մեզանում...

— Հենց այդ է, «կաղա՞մբը»։ Իսկ ես վերջերս եմ միայն այդ մասին իմացել։ Այս օրերիս կաղամբ են մատուցում, իսկ ես կարծում էի, որ կաղամբը Ալժիրից են բերում, բայց դուրս եկավ, որ Պոզդեևկայից է։

— Ճիշտ է, Պոզդեևկայից է։ Այնտեղ գազար էլ են ցանում, բոլոր էլ, և ամեն տեսակի կանաչեղեն։ Մեզանում միշտ այդպես է։ Մենք զանազան էմսեր և Մարիենբադներ[50] ենք գնում՝ ջուր խմելու, այնինչ Պոզդեևկայում մեր սեփական ջուրն ունենք, և ավելի լավ ջուր, որովհետև Մարիենբադի ջրից մարդու ստամոքսը խանգարվում է։

— Իսկ ասացեք, Պոզդեևկայի կաղամբը ո՞վ է առաջ բերել, երևի նահանգապե՞տը։ Ինչպե՞ս չէ։ Գյուղացի՛ն է առաջ բերել, տեր իմ։ Հին ժամանակներում պոզդեևցի մի ոմն Սեմյոն Մալյավկա Ռոստով է գնացել, տեսել է, ինչպես այնտեղ կաղամբի սածիլ են բազմացնում, ինքն էլ տուն վերադառնալով, բանջարանոց է ցանել, իսկ նրան նայելով՝ մյուսներն էլ են սկսել։

— Այդ մեկն այդպես է, ձերդ բարձրություն,— հարկադրված էր համաձայնել պարագլուխը։

— Մեզանում զբաղմունքները զուտ տեղական բնույթ ունեն։ Տեսնում ես մի տեղ լիություն, առատություն է, իսկ նրա կողքին ոչինչ չկա։ Երևակայեցեք, այդ Պոզդեևկայի կողքին Ռազվալիխա անունով գյուղ կա,— այնտեղ բանջարանոցի մասին ամենևին լսած էլ չեն, իսկ գյուղացիները բոլորն էլ գզրարներ են։ Ամառը, գյուղական ընդհանուր սովորությամբ, վարուցանք են անում, իսկ ձմեռը ցիրուցան են լինում այս ու այն կողմ և գզրարություն են անում։ Դրա հետ էլ նահանգապետը ոչ մի կապ չունի, այլ Աբրամկո անունով մի հասարակ գյուղացի Կալյազինսկի գավառում եղած ժամանակ գզրարություն է սովորել և բերել է հետը։ Դե հիմի բան հասկացեք։ Կաղամբ, վարունգ, գզրարություն, կո-

* Ինքնին հասկանալի է, որ այդ բանը միայն հեքիաթներում է հնարավոր։

Հեղինակ։

շիկներ, ոոգոժա... բոլորը, բոլորը քաղքենիների արածն է։ Ձեր կարծիքով մեր Ռաստերյաևկայի զանգակատունը ո՞վ է կառուցել։ Նահանգապե՞տը։ Ամենևի՛ն, վաճառական Պոլիկարպ Ագեև Պարալիչևն է կառուցել, իսկ նահանգապետը միայն օրհնելիս է ներկա գտնվել և ձկնով կարկանդակ է կերել։

— Այդ ճիշտ է։

— Իսկ պերեսլավսկի տառեխը ո՞վ է առաջինը ապխտել։

— Նույնպես ճիշտ է։ Նահանգապետը չէ։

— Իսկ սալմո՞նը, իսկ մո՞րը, իսկ ոժևյան և կոլոմինյան պաստիլա՞ն։ Նահանգապե՞տը, այո՞։

— Ներեցեք, ձերդ բարձրություն, բայց չէ՞ որ բանջարաբուծությունից և նպարեղեններից բացի կան նաև բավականաչափ այլ բաներ...

— Օրինա՞կ։

— Հարկերը, օրինակ... Հավաքել, պահանջել։

— Իսկ ի՞նչ բան է հարկը։ Լսե՞լ եք։

— Հարկերը... դա, այսպես ասած, պատկանելության վկայությունն է...— սկսեց պարագլուխը, բայց շփոթվեց ու լռեց։

—«Վկայությո՞ւնն է»... Իսկ ի՞նչ եք կարծում, հաճելի՞ է այդ «վկայությունը»։ Տեսե՞ք, տեսե՞ք, հարկ հավաքելու է ե՞կել, ա՞խ, ի՞նչ հաճելի է։ Ուրի՛շ բան, եթե մուրոմյան վարունգի կամ տամբովյան ապուխտի գաղտնի՛քը բերած լիներք։ Թե չէ՛, եկել են հա՞րկ կորզելու։ Եվ, թույլ տվեք հարցնել, ինչպե՞ս պետք է ես այդ «պատկանելության վկայությունը» իրագործեմ, եթե, օրինակ, պոզդեևցիները կաղամբի բերք չեն ունեցել։ Այդ դեպքում ի՞նչ է իմ դերը։ Ոստիկանապետներին շրջաբերական կուղարկեմ, ուրիշ ոչինչ։ Իսկ ոստիկանապետներն աղմուկ-աղաղակ են բարձրացնելու նահանգում,— և նույնպես ուրիշ ոչինչ։ Համենայն դեպս ես հարկադրում եմ, առանց իմանալու, թե ինչո՞ւ։ Ոստիկանապետը գուգռոում է, թե ինչո՞ւ, նո՛ւյնպես չգիտե։ Ի՞նչ է պատահել։ Ի՞նչ են եղել պետական հարկերը։ Արդյոք բերք չլինելո՞ւն է գյուղացուն թշվառացրել, հարբեցողությո՞ւն է հաղթահարել, վաշխառո՞ւն է ծծել նրան, կամ գուցե գյուղացին կամակորությո՞ւն է անում, որոշել է իր պուտո՞ւկը լցնել։ Ահա թե քանի՞-քանի՞ դեպքեր կարող են լինել, և դեռ հարց է, արդյո՞ք դա է բոլորը։ Իսկ մենք անհանգստանում ենք, աղմուկ ենք բարձրացնում, ոչ մի բան չե՛նք ուզում հասկանալ և պահանջո՞ւմ ենք՝ հարկերը տվե՞ք և ուրիշ ոչինչ։

— Այո, այդպես է։ Աղմուկ-աղաղակ կբարձրացնեն, նույնիսկ ծակուծուկերը կքրքրեն, բայց թե ի՞նչ օգուտ կստացվի դրանից, իրենք էլ չգիտեն,— տրտում հաստատեց պարագլուխը։

Խոսակիցները մի բոպե մտածմունքների մեջ ընկան։

Առաջինը սթափվեց պարագլուխը։ Նա, ըստ երևույթին, դեռևս չէր հուսահատվել և արդեն պատրաստվում էր հարց տալ՝ հապա ժողովրդական բարոյականությո՞ւնը, հապա լուսավորությո՞ւնը, գիտությունն՞երը, արվեստնե՞րը, երբ նահանգապետը, ասես գուշակելով նրա մտքերն, այնպես խիստ հայացք գցեց իր խոսակցի վրա, որ նա միայն կարողացավ ասել.

— Իսկ ժողովրդի պարենավորո՞ւմը։

— Եվ չե՞ք ամաչում,— պատասխանի փոխարեն ուղղակի հարց տվեց նահանգապետը։

Պարագլուխը շիկնեց։ Նա հիշեց, ինչպես տարեսկզբին ինքը, որպես զեմսկի վարչության նախագահ, շրջագայել էր գավառներում և այլն։ Հիշեց և ամոթահար եղավ։

— Սակայն մի՞թե, վերջապես...— բացականչեց նա և հանկարծ ինչ-որ բան հիշեց։— Թույլ տվեք, ահա ձեզ պատճառը՝ օժանդակել հասարակության միավորմանը։

— Այդ ո՞ր հասարակության։

— Այստեղի։

— Հըմ... ուրեմն դուք կարծում եք, որ ես միավորում եմ այստեղի հասարակությո՞ւնը։

— Եվ դուք, ձերդ բարձրություն, և ձեր տիկինը... Լուկերյա Իվանովնան։

— Լուկերյա Իվանովնան, թերևս, բայց ես... ո՛չ... ինձ... ազատեցեք։ Եվ վերջապես ո՞ւմ է հարկավոր այդ «հասարակության միավորումը», այն էլ այստեղի հասարակության։

Խոսակիցները վերջնականապես լռեցին։ Եվ, թերևս, նրանք շատ անհարմար զգային իրենց, եթե նրանց օգնության չհասներ նահանգական վարչության գանձապահը։

Այդ օրը ամսի 30-ն էր։ Մի ժամանակ, ինչպես հայտնի է, ամսի 30-ին ոռճիկ էին տալիս և բոլոր վարչությունների գանձապահներն իրենց պետերի մոտ էին գնում դրամական գրքերով, որոնք արդարանում էին ստացման ստորագրություններով։

Նահանգապետը վերցրեց գանձապահից դրամը, առանց շտապելու հաշվեց, դրեց սեղանի վրա և ստորագրեց։

— Հապա սա՞,— կատակեց պարտգլուխը, ցույց տալով դրամը։— Ի՞նչ իմաստով պիտի հասկանալ «սա»...

— Այո... այսինքն դուք ուզում եք ասել «սա՞»,— հարցրեց նահանգապետը, ասես արթնանալով։

— Այո՛, սա։ Հենց ինքը...սա՛։

— Հը՞մ... «սա՞»... Սա... հատուցո՞ւմ է։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀՐԴԵՀ

(Թերևս հեքիաթ, թերևս եղելություն)

Սոֆոնիխա գյուղում կեսօրվա մոտ հրդեհ ծագեց։ Այդ օրը պատահեց հունիսյան հերկի ամենաեռուն ժամանակ։ Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք դաշտում էին գտնվում։ Ասում էին, որ գյուղի մոտով մի զինվոր է անցել, նստել է մի տան հողաթմբի վրա, ծխամորճ է ծխել և ապա շարունակել է ճանապարհը։ Նրա գնալուց հետո սկսվել է հրդեհը։

Գյուղը հիմնովին այրվեց։ Միայն այն շարքը, ուր շտեմարաններն էին գտնվում, կիսով չափ ազատվեց։ Գյուղացիները մի ժամում ամեն ինչ կորցրին ու թշվառացան։ Այրվեցին Պրասկովյա տատիկը և Տատյանայի տղա Պետկան։ Տղամարդիկ ու կանայք՝ նկատելով թանձր ծուխը, խելագարի նման վազ տվեցին, թողնելով արորներն ու ձիերը։ Բայց այլևս ազատելու ոչինչ չէր մնացել։ Լավ էր, դեռ անասունները տանը չէին և գոմաղբն էլ վերջերս էր դուրս կրած, թե չէ բոլորովին քաղցած պիտի մնային։ Փոքր երեխաներ-

ը, որոնք հրդեհի ժամանակ խաղ էին անում փողոցում, փախան, թափվեցին գետը և հուսահատորեն ճչում էին։ Պատանի աղջիկները, նորածին մանուկները գրկներին, վախվորած նայում էին ածխացած տներին և մերկացած վառարանների կմախքներին։

Մորաքույր Տատյանան դեռ առույգ և երիտասարդ այրի էր։ Վեց տարի առաջ մեռել էր ամուսինը, բայց նա շարունակում էր պահպանել տնտեսությունը։ Հողաբաժնի արժեքի դիմաց բերքի կեսը համայնքին վճարելով, ինքը հերկում էր, հնձում ու կալսում։ Նա միայն մի որդի ուներ, ութ տարեկան Պետկան, որին սիրում էր անսահման սիրով և իր ամբողջ հույսը նրա վրա էր դրել։ Պետկան ինքն էլ արդեն ըզգում էր այդ և ասում էր.

— Ես, մայրիկ, տղամարդ եմ դառնալու... գյուղացի։

Ամբողջ գյուղը սիրում էր Պետկային։ Ժիր և բարեհամբույր երեխա էր և արդեն դպրոց էր հաճախում։ Երբեմն, երբ անցնում էր գյուղամիջով, ծերունիները հարց էին տալիս նրան.

— Հը՞, փոքրիկ գյուղացի, օգնո՞ւմ ես մորդ։

— Օգնում եմ։

Փողոցը լցվել էր ամեն տեսակ անպետք իրերով. գյուղացու համար ամեն բան թանկ է, ամեն ինչ հարկավոր է։ Տանտերերն իրենց տնեցիներով շրջապատված, թափառում էին ամեն մեկն իր այրված օջախների չորս բոլորքն ու հավաքում տանում էին այն ամենը, ինչ պատահում էր՝ հին կաշվի կտոր, ժանգոտած մեխ, փոկի կտոր, կոտրած խոփ և այլն։ Մի քանի նկուղներ ազատվել էին, բայց որովհետև դեռ նոր հնձի ժամանակը չէր, ուստի դատարկ էին (Պետրոս և Պողոս առաքյալների պահքն էր)։ Ամենքին հայտնի մի մուրացկան, որը տասը տարուց ի վեր ողորմություն էր հավաքում, դեռ ևս դեն էր նետվում ու գոչում.

— Ո՞ւր է իմ պուտուկը, ո՞ւր է, ո՞վ է տարել, ասեք, ո՞վ։

Ավդոտյա տատիկը փողոցում մոտենում էր սրան ու նրան և ցույց էր տալիս երկու հատ ներքին փոխառության կիսով չափ այրված խաղատոմս։ Այրվել էին կողքերը, իսկ միջին մասը մի քանի կտրոններով ազատվել էր։

— Գուցե կտան,— մխիթարում էր նրան տանուտեր Մի-խեյը։— Համարներն էլ մնացել են (չայրված կուպոնների), տիրուհին Պիտերում կմիջնորդի այդ մասին*։

Մերունիները հավաքվեցին ու քննության առան հա-մայնքի վիճակը։ Բոլորի դեմքերը տառապալից էին, ոմանց աչքերից արցունք էր թափվում։ Որոշեցին ամբողջ համայն-քով գնալ և խնդրել նույն կալվածատիրոջը պատկանող հա-րևան գյուղից, որ հրկիզյալներին պատսպարեն, մինչև, թե-կուզ ժամանակավոր, որևէ շենք շինելը։ Հետո տանուտերին ձիով ուղարկեցին քաղաք, վարչության մոտ, օգնություն խնդրելու և ապահովագրության փողերն ստանալու։

Եկավ գյուղի քահանան և, շրջելով գյուղացիների մեջ, սկսեց նրանց մխիթարել։

— Ո՞վ էր տվել,— աստվա՛ծ,— ասում էր նա։— Ո՞վ ա-ռավ,— աստվա՛ծ։ Մի՞թե նա չգիտե, թե ի՞նչ է անում։

Գյուղացիները լուռ ողջունեցին նրան։

— Դուք մի՛ վհատվեք,— շարունակեց տեր հայրը,— ի՞նչ իրավունքով, ինչո՞ւ, ինչպե՞ս, ո՞վ է թույլ տվել։ Անասուն-ները մնացե՞լ են, երկրագործական գործիքներն անվնա՞ս են, գոմաղբը դա՞շտ է տարված,— էլ ի՞նչ է հարկավոր հո-ղագործին։ Իսկ դուք տրտնջում եք։ Ահա արդեն վարչու-թյունը շինության համար փող բաց կթողնի, կալվածատի-րուհին կարիքավորներին հաց կուղարկի. ես նմանապես... մի՞թե ես աղոթք չեմ անում ձեզ համար։ Ես ոչ միայն ձեզ

* Փաստ։ 1872 թվին հեղինակի մոտ եկավ Ուգլիցկու գավառի Զաոկ-ոե գյուղացի մի կին և ցույց տվեց երկու թե երեք կողքերն այրված տոմս, բաց այնպես, որ աչատված միչին կուպոնների վրա երևում էին տոմսերի թե համարները և թե սերիաները։ Ես խնդրեցի մի քանի բարի ծանոթների միջնորդել այդ մասին բանկում։ Բոլորը կարծում էին, որ ոչ մի կասկած չի կարող լինել, բայց պ. Լամանսկին բանկի այն ժամանակավոր կառավարիչը՝ աչ կարծիքի եղավ։ Բանից պարզվեց, որ տոմսերը ոչ կարելի է նորոգել, ոչ էլ իսկական արժեքը վճարել։ Դա, գիտեք, բանկի շահն է։ Ահա՛ ինչպես են պաշտպանում գանձարանի շահերը հշմարիտ սանովնիկները։

Հեղինակ։

համար, այլև բոլորի համար եմ աղոթում։— «Եվ բոլոր ուղ-ղափառ քրիստոնյաների»— ահա թե ինչպես։

Կրկին ողջունեցին նրան գյուղացիները, իսկ զրուցասեր տեր հայրը շարունակեց.

— Եթե աստվածային վախը սրտներումդ պահեք և ջեր-մեռանդորեն աստծու տուն հաճախեք, չեք էլ նկատի, ինչ-պես աստված հարյուրապատիկը կվարձատրի։ Այս տարի հացի լավ բերք է սպասվում։ Աշնանացանը ընտիր է, գար-նանացանը, տա աստված, կլավանա։ Հետո տիրուհու խոտ-հարքում կիսովի կաշխատեք, և այդպիսով խոտ կունենաք։ Մեկ-երկու սայլ քաղաք կտանեք, կծախեք,— տեսաք՝ քսակ-ներումդ փող երևաց։ Հետո աշնանացանը կհնձեք, քչից-շա-տից հաճար կծախեք, կրկին փող կլինի, վերջապես վարսակն էլ փող է։ Մյուս տարի ձեզ համար աննկատելի կերպով անագորույն կրակից ոչնչացած հյուղերի տեղ նոր տներ կկանգնեն, ավելի լավ և ընդարձակ տներ, և դուք բոլորդ կապրեք նրանց մեջ, ամեն ոք իր նվիրական թզենու տակ, և համարյա ուրախությամբ փառք կտաք ձեր արարչին՝ ձեզ առաքած բարօրության համար։ Այ, կտեսնեք։

Իսկ մորաքույր Տատյանան անօգնական պտտվում էր իր մոխրակույտի շուրջը, շուռ ու մուռ էր տալիս ծխացող գե-րաններն ու կանչում էր.

— Պե՛տ, ա՜ Պետ, ո՞ւր ես, սիրելիս։ Ձա՛յն տուր։

Եվ չէր լսում, ինչպես զառամյալ Կալիստրատիչն ասում էր նրան.

— Մտի՛կ տուր, մի տես, անտառը փախած չլինի։ Ես նրան տեսա կրակի ժամանակ։ Նստած էր շտեմարանի պատ-վանդանի վրա, երբ ձեր տունը բռնկվեց։ Տեսնեմ, Պետկան պտույտ-պտույտ է անում սենյակում, շապիկով իրան հով է անում։ Ձայն եմ տալիս, թե դուռը, դուռը հրիր, սիրելիս։ Պտտվեց, պտտվեց, իսկ հետո այլևս ոչինչ չերևաց։ Երևի վախից անտառ է փախել։

Բայց Տատյանան ոչինչ չէր զգում, բացի այն, որ սիրտը կտոր-կտոր էր լինում։

— Պե՛տ, ա՜ Պետ, ո՞ւր ես, սիրելիս, ձա՛յն հանիր,— հնչում էր նրա սուգ ու շիվանն ընդհանուր խոսակցության մեջ։

Վերջապես երկու մարդ խղճահարվեցին նրան և օգնություն հասան։ Շուտ տվեցին քանդված առաստաղը և ծխացող բեկորների տակ գտան երեխայի դիակը։ Սարմնի և դեմքի դեպի վեր դարձած մասն այլանդակ սև զանգված էր ներկայացնում, բայց ներքևի կողմն անաղարտ էր մնացել։

Տատյանան օրորվեց, աչքերը մթնեցին և գյուղով մեկ կրծքից դուրս թռավ ցնցող հառաչանք.

— Տե՛ր աստված, տեսնո՞ւմ ես արդյոք։

Այդ հառաչանքը լսեց նաև քահանան և, պարզ է, շտապեց մխիթարելու։

— Տրտնջո՞ւմ ես,— ասաց նա սիրալիր կշտամբանքով,— իսկ Հոբ Երանելուն հիշո՞ւմ ես։ Ո՞չ։ Այդ դեպքում ես կհիշեցնեմ քեզ։ Նա հարուստ էր ու հռչակված. ուներ երեխաներ, հոտեր ու գանձեր — և հանկարծ, աստծո թույլտվությամբ, ամեն ինչ խլվեց նրանից, և՛ երեխաները, և՛ անասունները, և՛ բարեկամները, իսկ ինքը բորոտությամբ ծածկվեց, դուրս քշվեց ու պառկեց քաղաքի դարպասի մոտ, աղբակույտերի վրա։ Շները լիզում էին նրա վերքերը... շները։ Բայց, այդուհանդերձ, նա ոչ միայն չտրտնջաց, այլ առավել ևս սիրեց իր արարիչ աստծուն։ Եվ աստված, տեսնելով նրա այդպիսի հավատարմությունը, իր բարեգութ աչքը նրա վրա դարձրեց։ Կարճ ժամանակից հետո Հոբը և՛ առողջ էր, և՛ հարուստ, և՛ հռչակված առաջվանից ավելի։ Հոտերը բազմացան, երեխաներ ծնվեցին, մի խոսքով, ամեն ինչ...

Սակայն քահանայի հորդորներն անգամ Տատյանային հասնում էին միայն որպես անորոշ և աներես աղմուկ։ Նա, հայացքը սևեռած այն գծին, որը Պետկայի դեմքի անվթար մասը բաժանում էր ածխացած մասից, շշնջում էր.

— Տե՛ր աստված, տեսնո՞ւմ ես արդյոք։

Ագարակում այդ ժամանակ բարի տիրուհի Աննա Անդրեևնա Կոպեյշչիկովան իր ծննդյան տարեդարձն էր տոնում։ Հավաքվել էին փոքրաթիվ, բայց անկեղծ բարեկամներ՝ պարագլուխ Կիպյաշչը կնոջ հետ, ոստիկանապետ Շիպյաշչն ազգականուհու հետ և Իվան Իվանիչ Գլազը, մի հասարակ քաղաքացի, որի մասին ասում էին, որ նրա ներկայությամբ

պետք է լեզուն զուսպ պահել։ Թեպետև այստեղ եղածները բոլորն էլ այնպիսիներն էին, որոնց ներկայությամբ նույնպես պետք էր լեզուն շղթայի տակ պահվեր (Աննա Անդրեևնան ասում էր, որ ինքը ինչ-որ մի տեղ «ծառայում է»), այնուամենայնիվ Իվան Իվանիչն այդ շրջանում իրեն չափազանց լավ էր զգում։ Ներկա էր նաև քահանան՝ իր տիրուհու հետ։

Աննա Անդրեևնան գեներալի այրի էր, քառասունից քիչ ավելի տարիքի, դեռևս գեղեցիկ և բալերում ու երեկույթներում առանձնապես աչքի էր ընկնում իր կրծքով, ուր դեկոլտեն պարտադիր է և ուր նա իրեն էր գամում ամեն հասակի և բոլոր զենքերի մարդկանց հայացքները։ Բայց նա միանգամ ընդմիշտ ասել էր իրեն՝ «n-i-ni — c'est fini[51], և իրեն ամբողջովին նվիրել էր իր երեխաներին։ Դրա համար բարձր հասարակության մեջ նրա մասին ասում էին՝ c'est une sainte[52], իսկ հայրենասիրության համար՝ c'est une fière matrone![53] Բոլոր ռուս տիկինների նման ֆրանսերեն էր խոսում, գիտեր un peu d'arithmétique, un peu de géographie et un peu de mythologie (cette pauvre Léda!)[54] երկար ապրել էր արտասահմանում, իսկ վերջին շրջանում դարձել էր հայրենասեր և սիրել էր «բարի ռուս ժողովուրդը»։ Երեք տարի առաջ նա այցելել էր հայրենի Գորբիլոն և այդ ժամանակվանից ամեն ամառ այդտեղ էր գալիս։ Այգում դամբարան էր կառուցել ամուսնու համար և ամեն օր աղոթք էր անում։ Ոչ ոքի հետ ծանոթություն չէր հաստատում, բացի փորձառու «կարգապահության բարեկամներից». տնտեսությամբ չէր զբաղվում, այլ հողը կիսովի տալիս էր գյուղացիներին և փող էր տնտեսում։ Ուներ Սերյոժա անունով տասնվեց տարեկան իրավագետ մի որդի և տասնութ տարեկան Վերոչկա անունով մի աղջիկ, կայտառ մի արարած, որը նույնպես գիտեր un peu d'arithmétique et un peu de mythologie.

Պարոններն արդեն վերադարձել էին եկեղեցուց և նախաճաշի սեղան էին նստել, երբ հայտնեցին, որ Սոֆոնիխան այրվում է։ Քահանան անմիջապես շտապեց հորդորելու, մյուսները վազեցին լուսամուտների մոտ՝ հրդեհը դիտելու։ Ծխի հսկայական ամպի ետևից կրակ չէր երևում, բայց քա-

մին ծուխն ուղղակի կալվածատուն էր բերում, և սենյակնե-
րում զգացվում էր նրա դառն հոտը։ Մարդիկ նմանապես
չէին երևում, բայց ճանապարհով հրդեհի վայրն էին վազում
հարևան գյուղացիների և սպասավորների խառնիխուռն խմ-
բեր։

— Ինչպես կամենաք, պարոնայք,— ասաց վերջապես Ան-
նա Անդրեևնան,— սակայն ես չեմ կարող անտարբեր դի-
տողի դերում մնալ։ Չէ՞ որ դրանք իմ գյուղացիներն են։
Զար մարդիկ բաժանել են մեզ միմյանցից[55],— վստահ եմ,
ժամանակավորապես,— բայց ես այնուամենայնիվ հիշում եմ,
որ նրանք իմն են։

Սակայն նրան թույլ չտվեցին միայնակ կատարելու իր
ինքնազոհությունը և ցանկություն հայտնեցին խմբովին ու-
ղեկցել նրան։

— Եվ ընդհանրապես դա մեր պարտականությունն է,—
շարունակեց Աննա Անդրեևնան։— Եթե անգամ նրանք իմ
գյուղացիները չլինեին, այնուամենայնիվ մեր սրբազան պար-
տականությունն է՝ լինել այնտեղ, որտեղ տառապում են։
Մենք աղքատացել ենք, մենք վիրավորված ենք... բայց մենք
ամեն ինչ մոռացել ենք։ Մենք միայն զգում ենք, որ մեր
կրտսեր եղբայրն իր վշտաթոր հայացքը մեզ է ուղղել։

Տեղեկանալով, որ այդ օր բանվորների և սպասավոր-
ների համար հաց է թխված, նա հրամայեց մի քանի հատ
մաս-մաս կտրատել և հրկիզյալներին բաժանել։

— Իսկ վաղը կրկին հաց կթխեք ձերոնց համար... Չէ՞
որ հարկավոր է։ Չմոռանաք աղ ցանել վրան։

Մի խոսքով, արեց այն ամենը, ինչ որ ներում էին իր
ուժերը, և վերջապես դրամապանակը հետը վերցնելով, ասաց.
«սա համենայն դեպս»։ Վերոչկան էլ, մոր օրինակով, վերցրեց
իր դրամապանակը՝ նվիրական փայլփլուն դրամներով։

Խումբը կանգ առավ գյուղի տակ, բայց Վերոչկան և օրիորդ
Շիպյաշչևան չհամբերեցին և առաջ անցան։

— Ասացեք գյուղացիներին, որ ես նրանց երկու չետ-
վերտ հաճար եմ նվիրում,— ձայն տվեց նրանց ետևից Աննա
Անդրեևնան։

Հինգ բոպեից Վերոչկան վազելով ետ եկավ, ամբողջովին
արցունքոտած։

— Ա՜խ, մայրիկ,— հայտարարեց նա,— այնտեղ մի խեղճ
կին կա, որի երեխան այրվել է։ Ա՜խ, սարսափելի է, ի՞նչ
է կատարվում նրա հետ։ Տեր հայրը հորդորում է նրան, իսկ
նա չի լսում և միայն կրկնում է «տե՛ր աստված, տեսնո՞ւմ
ես արդյոք»։ Մայրիկ, սոսկալի՜ է, սոսկալի՜ է, սոսկալի՜ է։

— Մեղք է խեղճը, բայց դու այդ որչափ նյարդային ես,
Վերոչկա,— կշտամբեց նրան Աննա Անդրեևնան։— Դա լավ
չէ՛, բարեկամս։ Ամեն բանի մեջ նախախնամության մատը
կա,— սա՛ պետք է հիշել նախ և առաջ։ Իհարկե... մե՛ծ կո-
րուստ է դա, բայց դրանից շատ ավելի մեծ կորուստներ են
լինում, սակայն մենք հպատակվում ենք և կրում։ Հիշո՞ւմ
ես Բայմակովի սնանկությունը և մեր ընթացիկ հաշիվը...
6 տոկոս էր տալիս, բայց հետո ի՞նչ եղավ։ Թեպետ, սոխա-
կին հեքիաթներով չեն կերակրում։ Պարոնա՜յք,— դարձավ
նա իր շուրջը եղածներին,— մի փոքրիկ հանգանակություն
անենք՝ հօգուտ տառապյալ մոր։ Ո՞վ որքան կարող է։

Նա դողդոջ ձեռքով դրամապանակից տասը ռուբլիանոց
թղթադրամ հանեց, դրեց ափի վրա ու պարզեց ձեռքը։ Վե-
րոչկան անմիջապես տվեց իր ամբողջ քսակը, հյուրերը նույն-
պես մի քանի մանր թղթադրամ հանեցին։ Միայն Իվան Իվա-
նիչ Գլազը շուտ եկավ և սկսեց սուլել։ Հավաքվեց մոտ երեսուն
մանեթ։

— Ահա առ, տար նրան,— ասաց Աննա Անդրեևնան
աղջկան։— Ասա, որ աշխարհն առանց բարի մարդկանց չէ։
Գյուղացիներին նորից ասա հաճարի մասին... երկու չետ-
վերտ։ Հացը բերեցի՞ն։ Ասա, որ բաժանեն։

Վերոչկան արագ վազ տվեց։ Նա այդ բոպեին պատկե-
րացրեց, որ ինքը պահապան հրեշտակ է և արծաթյա թևե-
րով սավառնում է երկնի կապույտում, երեսուն մանեթը
ձեռքին։ Նա Տատյանային գտավ նույն վիճակում։ Վերջինս
կանգնած էր լայն բացված աչքերով, մեքենայորեն շարժում
էր շրթունքները, առանց որևէ բան զգալու։ Քահանան առաջ-
վա նման նրա մոտ կանգնած, օրինակներ էր պատմում անա-
գորույն Ներոն թագավորի ժամանակվա առաջին նահա-

տակների պատմությունից։ Տատյանային դեռևս չէր պատ-
կերանում այն հարցը, թե ի՞նչ է անելու ինքը, հարկավո՞ր է
իրեն արդյոք տուն, դաշտ և ընդհանրապես այն ամենը, ինչ
որ մինչև այժմ լցնում էր իր կյանքը, թե՞ թափառելու է արար
աշխարհում, սրա-նրա դռներում բատրակություն անելով։

Եվ հանկարծ իջնում է պահապան հրեշտակը։

— Վերցրու, սիրելիս, մայրիկս է ուղարկել,— ասաց Վե-
ռոչկան, նրան մեկնելով փողերը։

Տատյանան ոչինչ չըմբռնեց, նույնիսկ չնայեց ողորմու-
թյան վրա։

— Վերցրու, անհնազա՛նդ,— հորդորեց տեր հայրը,— բա-
րի պարոններն են նվիրում, իսկ դու արհամարհո՛ւմ ես։

Նույնիսկ գյուղացիները հետաքրքրվեցին և սկսեցին հա-
մոզել։

— Վերցրու, մորաքույր Տատյանա, վերցրու, երբ տա-
լիս են։ Տուն շինելու համար հարկավոր կլինի։

Տատյանան ոչ մի շարժում չարեց։

Վերոչկան սպասեց-սպասեց, փողը դրեց գետնին ու հե-
ռացավ վշտացած։ Քահանան վերցրեց փողը։

— Եթե դու չես ուզում վերցնել,— ասաց նա,— այդ դեպ-
քում ես կգործադրեմ եկեղեցու զարդարանքի վրա։ Կանթեղը
վատ է, հին կծախենք և այս փողերի հետ նորը կառնենք։
Վկա եղեք, ուղղափառներ։

— Մայրիկ, չվերցրեց,— ասաց Վերոչկան, դողդոջուն ձայ-
նով։ Զարմացան։

— Սակայն նրանց մեջ ոգին դեռ կա, դեռ ամբողջովին
չի ոչնչացած,— խորհրդավոր ասաց Գլազը։

Այս անգամ Աննա Անդրեևնան համաձայն չեղավ նրա հետ։

— Ոգին դեռևս կա, դա ճիշտ է, բայց աչքաթող չպետք է
անել նրա վշտի խորությունը։ Միայն մայրական սիրտը կա-
րող է հասկանալ, ինչ է նշանակում կորցնել... որդուն։

Տեր հոր գուշակությունը կատարվեց։ Երկու տարի հետո
ես անցնում էի Սոֆոնիխայի մոտով և ականատես եղա կա-
տարյալ կերպարանափոխության։ Նախկին մոխրակույտի տեղ
կանգնել էր նոր տների շարքը, բարձր և համեմատաբար

ընդարձակ։ Տանիքները, ճիշտ է, ծղոտով էին ծածկված,
բայց հարդարված, հարթած, այնպես, որ կախ-կախ ծվեն-
ները չէին տրտմեցնում մարդու աչքը։ Գերաններից շինված
նոր պատերը փայլում էին արեգակի տակ, ինչպես կճեպած
ձու։ Միայն Տատյանայի տնատեղում ընկած մնացել էին
խանձողները, իսկ ինքն անհայտացել էր գյուղից՝ հայտնի
չէ, թե ուր։ Երևի թափառում է սրբատեղերում, հանուն
Քրիստոսի։ Գյուղացիները համերաշխ էին ապրում և, հետե-
վապես, ճշտապահ էին։ Եռանդուն աշխատում էին, վճարում
էին ետգնման* և համայնական պարտքերը լրիվ, կատա-
րում էին զինվորական, սայլի և ճանապարհային պարհակնե-
րը։ Եթե դրանցից բացի ուրիշ բան էլ էր պահանջվում, այն
էլ կատարում էին պատրաստակամ։

Ոստիկանապետ Շիպյաշչևը չափազանց գովասանքով էր
խոսում նրանց մասին։

— Այս գյուղն առաջինն է բոլոր գյուղերի մեջ,— ասում
էր նա։

Ասուված օգնական, տղա՛յք։

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

(Զրույց)

Ճանապարհով երկու գյուղացի էին գնում՝ Իվան Բոգրո-
վը և Յեոդոր Գոլուբկինը։ Նրանք համագյուղացի էին և տըն-
կից հարևաններ, երկուսով էլ նոր էին ամուսնացել։ Ապրիլ
ամսից Սոսկվայում որմնադրություն էին անում և այժմ
տիրոջից թույլտվություն էին խնդրել՝ տուն վերադառնալու,
իրենց հունձն անելու։ Երկաթուղու կայարանից սկսած քա-
ռասուն վերստ ճանապարհ պիտի անցնեին, իսկ այդչափ
տարածությունն, անշուշտ, սովոր մարդն էլ հազիվ թե մեկ
օրում կարողանար անցնել։

Քայլում էին առանց շտապելու, ուժերը խնայելով։

* Ետգնման վճար — Գյուղացիներին անցած հողերի արժեքի վճարը։

Դուրս էին եկել վաղ առավոտյան, իսկ այժմ արևագին տիզ դեն բավական բարձրացել էր։ Հազիվ էին տասնհինգ վերստ անցել, որ ոտները հանգիստ պահանջեցին, մանավանդ, որ էլ չոգ էր, խեղդուկ։ Ջորս կողմ դիտելով՝ որպեսզի ոչ մի խոտ դեզ գտնեն, ստվերում մի կտոր հաց ուտելու և մի փոքր քնելու՝ նրանք զվարթ խոսակցում էին.

— Իվան, դու ի՞նչ ես տանում տուն,— հարցրեց Ֆեոդորը։

— Երեք հատ հնգանոց տվեց աղեն՝ հաշիվները մաքրելիս։ Մեկը խոստովանանք լինի, մանր-մունր ծախսել եմ Մոսկվայում, իսկ երկու հատը տուն եմ տանում.

— Ես էլ։ Միայն թե ի՞նչ կարելի է անել երկու հնգանոցով։

— Եղած-չեղածը դա է ընդամենը, իսկ հայրս իմաց է տվել, թե ինչ-որ հին ապառիկ է լույս աշխարհ ընկել, պահանջում են։ Երևի բոլորը դրա դիմաց է գնալու։

— Իսկ մեր հացն էլ մինչև նորը քաղելը հերիք չի անելու։ Հասնում է հնձի ժամանակը, ամբողջ օրը շարշարվում ես, հոգնում և ուզես-չուզես ուտել ես ուզում։ Ոչ մի բան չունենք, ոչ հաց, ոչ աղ, բայց մենք էլ մարդ ենք համարվում։ Ասում են՝ դուք որմնադի՞ր եք, Մոսկվայո՞ւմ եք աշխատում, դուք պետք է փո՛ղ ունենաք... Իսկ ինչքա՞ն փող կարող ենք ունենալ, եթե նույնիսկ մինչև աշուն աշխատելու լինենք։

— Վատ է գյուղացու կյանքը։ Դրանից էլ վատը չկա։

— Դրանից վատն էլ ո՞րն է։

Ճանապարհորդները հառաչեցին և մի քանի բոպե լուռ քայլեցին։

— Ի՞նչ են անում հիմի մերոնք,— կրկին սկսեց Ֆեոդորը։

— Ի՞նչ են անում։ Երևի գոմաղբը դաշտ են կրել, վարում են... Ե՛վ վարում են, և՛ տափանում, և՛ ցանում են. ամբողջ ամառ հողի հետ են, բայց էլի հաց չկա։ Իրար ետևից երեք տարի է փչանում է. կամ շորային է լինում, կամ կարկուտն է ծեծում... Տեսնենք ի՞նչ կտա աստված այս տարի։

— Իսկ ես, եղբայր, մի ուրիշ ցավ էլ ունեմ։ Տանուտերն

ընկել է Դունկայի ետևից, կնկան հանգիստ չի տալիս։ Միջնորդներ է ուղարկում նվերներով, մեկին հերս երասանակով մի լավ խրատեց, բայց փոխարենը դեռ իրեն երեք օր բանտ գցեցին։

— Ոչինչ անել չի կարելի։ Հիշո՞ւմ ես, ինչպես ամառը Սատրյոնկա Պրոխորովնան խեղդվեց։ Նույնպես տանուտերի պատճառով։ Համբերեց, համբերեց, բայց վերջը կախվեց...

— Մեր բանը վատ է, բայց մեր կանանց բանն է՛լ ավելի վատ է։ Մենք, գոնե, Մոսկվա ենք գնում, աշխարհ ենք տեսնում, իսկ կանայք — ո՞ւր կարող են գնալ։ Կարծես շղթայված լինեն բանտում։ Ոտքն ու ձեռքն ամառվա ընթացքում ճաքճքում է, դեմքը կոշիկի ճտքից ավելի սև է դառնում, մարդկային կերպարանքից դուրս է գալիս։ Եվ ամեն մեկն աշխատում է վիրավորել նրան ու հայհոյում...

— Ֆեդյա, արի դարդից երգենք։

Սկսեցին երգել, բայց վշտից ու հոգնածությունից երգել չէին կարողանում...

— Ինչ էի ուզում հարցնել քեզ, Իվան։ Որտե՞ղ է գտնվում Արդարությունը,— հարցրեց Ֆեոդորը։

— Ես էլ շատ անգամ եմ հարցրել մարդկանց, թե ո՞րտեղ է Արդարությունը, ո՞րտեղ գտնեմ նրան։ Մի երիտասարդ պարոն ասաց, որ իբր թե Արդարությունը թաքնվել, նստել է ջրհորի հատակում։

— Տե՞ս մի, է։ Այդպես որ լիներ, մեր կնանիք հիմի վաղուց էին դուրս հանել այնտեղից,— կատակեց Ֆեոդորը։

— Պարզ է, երիտասարդ պարոնը վրաս ծիծաղեց։ Նրանց ի՞նչ։ Նրանք առանց Արդարության էլ կապրեն։ Իսկ Անարդարությունը մեր հոգին է հանել։

— Մերունիներն ասում են, որ երեմեյ պապիկը՝ դեռևս ծեր աղայի ժամանակից սկսած, շարունակ Արդարություն է որոնել, և Արդարությունն էլ հենց այլանդակել է նրա կյանքը։

— Առաջ շատերն էին Արդարություն որոնում։ Նշանակում է, առաջ ավելի դժվար է եղել ապրելը, համ էլ ծերունիների սիրտը ցավել է։ Հենց կոռ ու բեգյարն ինչքա՞ն մարդ է ոչնչացրել։ Դաշտում՝ մահ, տանը՝ մահ, ամեն տեղ...

Տոն օրերին գյուղային եկեղեցի է գնում, իսկ եկեղեցում բոլոր պատերի վրա Արդարություն է գրված, միայն թե պատերից պոկել հնարավոր չէ։

— Ճիշտ ես ասում, հնարավոր չէ։ Ի՞նչ է գյուղացին։ Նա թեպետ տեսնում է, բայց անհասանելի է իր համար։ Խավար մարդիկ ենք, դժբախտ ենք։ Միայն հառաչում ենք ու արտասվում՝ տե՞ր, ողորմյա՞ մեզ... ուրիշ ոչինչ։ Կարգին աղոթել էլ չենք իմանում։

— Առաջներում խնդարկուներ կային, համայնքի շահերը պաշտպանում էին։ Պատահում էր, խնդարկուն ծածուկ գնում էր Պետերբուրգ, իսկ այնտեղից նրան էտապով...

— Բայց և այնպես առաջ թեկուզ հենց Արդարությունն խնդրում ավելի լավ է եղել։ Ծերերն էլ խրատում էին երեխաներին, թե՝ Անարդարությունը մեզ շատ է նեղել, պետք է Արդարությունը որոնել։ Հայրս ասում է, որ Երեմեյ պապիկը շատ լավ սիրտ ուներ, շարունակ աշխատում էր հասարակության համար օգտակար լինել։ Այժմ էլ խեղանդամ դարձած, տանը պառկած, այնուամենայնիվ շարունակ Արդարության մասին է խոսում։ Միայն թե այժմ նրան այլևս չեն լսում։

— Հենց ա՛յդ է, ասում են, հիմի իբրև դրությունը թեթևացել է, դրա համար էլ Երեմեյին չեն լսում։ Ո՞ւմ է հարկավոր այժմ Արդարությունը։ Ե՛վ համայնական ժողովում, և՛ գինետանը — ամեն տեղ հիմա թեթևություն է...

— Առաջ պարոններն էին հոգի հանում, այժմ վաշխառուներն ու գինեպանները։ Ամեն գյուղում մի վաշխառու է դուրս ընկել, հոշոտում է քրիստոնյա հոգիները և վե՛րջ։

— Վերցնենք թեկուզ Վասիլ Իգնատևին։ Ինչ պալատներ է շինել իր համար քրիստոնյաների արյունով։ Կարմիր տանիքը մի վերստից երևում է։ Տան կողքին խանութն է, իսկ ինքը դռան մեջ կանգնած, փորն է դուրս ցցում։

— Եվ բոլորը հարգանք են մատուցում նրան։ Տանուտեր է գալիս, կերուխում է անում հետը, նրա պարտքերը պետական հարկից առաջ է հավաքում։ Պրիստավ է գալիս, նույնպես նրա մոտ է գնում։ Նա և՛ շշի ունի մսով, և՛ օղի։ Ամառը Պիտերից մի ջահել աղա էր եկել. գալուն պես թե՝ «խնդրեցեք

ինձ մոտ Վասիլ Իգնատիչին»... «Ինչպե՞ս եք, Վասիլ Իգնատիչ, ո՞ղջ եք, առո՞ղջ եք։ Ինչպես է գնում ձեր առևտուրը։ Եկեք թե, խմենք միասին... Դուք իսկական ռուս գյուղացի եք, շարշարվում-տանջվում եք, ուրիշներին օրինակ եք ցույց տալիս.... և եթե ձեզ մի բան հարկավոր լինի, գրեցեք ինձ Պետերբուրգ»։

— Իր հողամասը ետ է գնել վերջացրել, յոթը անձի հողամաս էլ առանձին է առել։ Համայնքից բոլորովին կտրվել է, աղա է դարձել։

— Իսկ հիմի համայնքն է նրա ոտքը գնում, երբ հարկերը վճարելու ժամանակն է գալիս։ Համայնքով նրա խոսն էլ են հավաքում, ցորենն էլ են հնձում...

— Լա՞վ թեթևություն է։ Չէ՛, դու ինձ ասա, ո՞րտեղ որոնենք Արդարությունը։

— Երևի աստծու մոտ է։ Աստված տարել է երկինք և բաց չի թողնում։

Ճամփորդները կրկին լռեցին, կրկին հառաչեցին։ Բայց Ֆեոդորը հավատում էր, թե չի կարող պատահել, որ աշխարհում Արդարություն չլինի և դուրը չէր գալիս, որ ընկերն այդպես թեթևամիտ վերաբերմունք է ցույց տալիս իր այդ հավատքին։

— Չէ, ես կփորձեմ,— ասաց նա։— Հենց որ տուն հասա, իսկույն կգնամ Երեմեյ պապի մոտ։ Ամեն ինչ հարցուփորձ կանեմ, թե ինչպե՞ս է նա Արդարություն որոնել։

— Իսկ նա քեզ կպատմի, ինչպես իրեն ոստիկանատանը ծեծել են, ինչպես էտապով քշել են և քիչ է մնացել Սիբիր հասցնեն, բայց ծեր աղան հանկարծ գլխի է ընկել, որ ավելի լավ է Երեմեյին անտառի պահապան նշանակել, քան աքսորել։ Եվ մինչև ազատության օրերը նա աղայի անտառն էր պահպանում, ապրելով մի խուլ տեղ, և հրամայված էր, որ ոչ ոքի չթողնեն նրա մոտ։ Չէ՛, ավելի լավ է այդ բանից ձե՛ռք քաշիր։

— Անկարելի բան է։ Վերցրու թեկուզ Դունկային։ Հենց որ տուն հասնեմ, նա անմիջապես ամեն բան պատմելու է ինձ... Ի՞նչ է, ես պետք է քա՛ր կտրեմ-կանգնեմ նրա առաջ,

հա՞։ Չէ՛, գործը մինչև մահվա՛ն կարող է հասնել։ Ես նրա աղիքները կթափեմ, այն ագահ շան...

— Ա՜յ քեզ բան։ Մինչև հիմի Արդարության մասին էր խոսում, իսկ հիմի բանը աղիքները թափելուն հասցրեց։ Դա ի՞նչ Արդարություն է։ Գիտե՞ս, թե այդ տեսակ Արդարության համար քեզ ի՞նչ կանեն։

— Թող անեն։ Քո կարծիքով, նշանակում է հենց այդպես էլ պետք է թողնե՞լ։ Համեցե՛ք, Եգոր Պետրովիչ, իմ Դունկան մշտապես պատրաստ է... Ո՛չ։ Այս բանն այսպես թողնել չի կարելի։ Կգտնե՞մ ես Արդարությունը, կգտնե՛մ։

— Ի՞նչ շոգ է,— ասաց Իվանը, խոսակցությունը փոխելու նպատակով։— Շուտով ուղենիշ սյունը կերևա, իսկ հետո էլ գյուղը։ Գյո՞ւղը մտնենք, թե՞ դաշտում հանգստանանք։

Բայց Ֆեոդորն այլևս չէր կարողանում խաղաղվել և շարունակ կրկնում էր.

— Կգտնե՛մ Արդարությունը, կգտնե՛մ։

— Իսկ ես այնպես եմ կարծում, որ դու ոչինչ էլ չես գտնի, որովհետև մեզ համար Արդարություն չկա, դեռ ժամանակը չի հասել,— ասաց Իվանը։— Դու ավելի լավ է մտածիր, թե ինչ փողով հաց առնենք, որ մինչև նորը հասնելը, ուտելու բան ունենանք։

— Հենց նույն այն Վասիլ Իգնատիչի մոտ կգնանք, ոտքերը կընկնենք,— մռայլ պատասխանեց Ֆեոդորը։

— Երևի այդպես ենք անելու, և դեռ մի դեսյատին էլ խոտ ենք հնձելու նրա համար, որ սպասի։ Հայրիկը երևի ասել է՝ փոխանակ երրորդ հնգանոցը կնոջդ գլխի աղլուխի ու քամարի վրա ծախսելու, լավ կանեիր պահեիր, հացի՛ տային։

— Կրում ենք և՛ ցուրտ, և՛ քաղց, ամեն տարի սպասում ենք, սպասում, թե գուցե լավ լինի... մինչև ե՞րբ ախր։ Թե՞ իսկապես Արդարություն չկա աշխարհում։ Ջուր տեղն են մարդիկ դուրս տալիս՝ Արդարություն, Արդարություն... Հապա ո՞ւր է նա։

— Վերջերս Մոսկվայում մի տիրացու ասում էր ինձ. «Արդարությունը մեր սրտերում է։ Ապրեցեք արդարությամբ և թե ձեզ, թե բոլորի համար լավ կլինի»։

— Երևի կուշտ է այդ տիրացուն, դրա համար էլ այդպես է բրթում։

— Գուցեն պարոններն են երես տվել։ Հասարակ գյուղացի է, բայց ինչ խոսքեր է ասում։ Իր համար լավ է, այդ պատճառով էլ մոռացել է, որ ուրիշները տանջվում են։

Այդ ժամանակ ճանապարհորդների դիմաց երևաց կիսափտած ուղենիշ սյունը, որի վրա հազիվ կարելի էր կարդալ. «Մոսկվայից 18, Ռուդակի կայարանից 3 վերստ»։

— Դաշտո՞ւմ հանգստանանք, ի՞նչ կասես,— հարցրեց Իվանը։— Հրեն գեղն էլ մոտ է։

— Ինչպես դաշտում, բա էլ ո՞ր տեղ։ Գյուղում հո ծախս չե՞նք անելու։

Ընկերները ճանապարհից դուրս եկան և նստեցին հին, ծռված դեզի ստվերում։

— Կան մարդիկ,— նկատեց Իվանը, տրեխները հանելով,— որոնք դեռ մինչև հիմա խոտ ունեն։ Մեզանում տանիքների ծղոտն էլ կովերը դեռ գարնանից կերել են։

Պատրաստվեցին հաց ուտելու։ Ջուր գտան և տոպրակներից հաց հանեցին — դա էր ամբողջ ուտելիքը։ Հետո դեզից մի-մի խոտիտ խոտ քաշեցին ու պառկեցին։

— Տես, Ֆեդյա,— ասաց Իվանը, պառկելով ու հորանջելով,—ի՞նչ ընդարձակ տարածություն է շորս կողմը։ Բոլորը տեղ ունեն, իսկ մենք...

ԴՅՈՒՅԱԶՆ

Մի թագավորության մեջ մի Դյուցազն ծնվեց։ Վհուկը ծնեց նրան, պահեց-խնամեց և երբ մեծացավ, աժդահա դարձավ, ինքը քաշվեց անապատ, իսկ որդուն բաց թողեց արար-աշխարհ, թե՝ գնա՛, Դյուցազն, գնա՛ և քաջագործություններ արա։

Պարզ է, Դյուցազնը ամենից առաջ անտառ վազեց. տեսնում է անտառում մի կաղնի է կանգնած — իսկույն արմատահան արեց. տեսնում է մեկ ուրիշը — բռունցքով մի-

ջից կես է անում, տեսնում է երրորդը և նրա մեջ փչակ։ Դյուցազնը մտնում է փչակն ու քնում։

Հառաչեց կանաչազարդ մայր անտառը Դյուցազնի որոտաձայն խռմփոցից, փախուստ տվեցին անտառից գազանները վայրագ, թռան-հեռացան թռչունները փետրավոր։ Ինքն անտառի ոգին այնպե՛ս վախեցավ, որ կնոջն ու երեխաներին գիրկն առավ և անհետացավ։

Դյուցազնի հոչակը տարածվեց ամբողջ աշխարհում։ Ե՛վ յուրայինները, և՛ օտարները, և՛ բարեկամները, և թշնամիները վախից սարսափահար եղան։ Յուրայինները վախենում էին ընդհանրապես այն պատճառով, որ եթե վախենալու չլինեն, հապա ինչպե՞ս ապրեն։ Եվ, դրանից բացի, կար նաև այն հույսը, որ Դյուցազնը այն պատճառով է փչակը մտել, որպեսզի քնի մեջ է՛լ առավել հզորանա և՝ «ահա կարթնանա մեր Դյուցազնը և մեզ ամբողջ աշխարհի առաջ կփառաբանի»։ Օտարներն իրենց հերթին վախենում էին, որովհետև՝ լսո՞ւմ եք ինչպես տնքում-հառաչում է երկիրը, չլինի՞ թե «նրանց» երկրում Դյուցազն է ծնվել։ Վա՜յ թե արթնանալուց հետո մեր տունն ավերի։

Եվ բոլորը քայլում էին մատների ծայրերի վրա ու շշուկով կրկնում. ննջի՞ր, Դյուցազն, ննջի՛ր։

Այդպես անցավ հարյուր տարի, հետո՝ երկու հարյուր, երեք հարյուր և հանկարծ՝ ամբողջ հազարամյակ։ Խխունջը գնաց-գնաց և վերջապես տեղ հասավ։ Երաշտահավը պարծեցավ-պարծեցավ, բայց ծովն այրել չկարողացավ. այնքան եփեցին-խաշեցին գյուղացուն, մինչև ամբողջ հյութերը դուրս ծծեցին նրանից։ Հե՜յ, գյուղացի։

Ամեն ինչ հորինեցին, ամեն ինչ ավարտեցին և մեկը-մյուսին թալանեցին մինչև վերջին ծեղը։ Վե՞րջ։ Իսկ Դյուցազնը շարունակում էր քնած մնալ, շարունակում էր չտեսնող աչքերով փչակից ուղիղ արեգակին նայել և որոտալից խռմփոց արձակել հարյուրավոր վերստերի վրա։

Շատ նայեցին թշնամիները, շատ միտք արեցին այն մասին, որ երևի շատ է հզոր այդ երկիրը, ուր վախենում են Դյուցազնից այն պատճառով միայն, որ նա քնել է փչակում։

Բայց սկսեցին քիչ-քիչ ծ նրութեթև անել, սկսեցին վերհիշել, թե քանի՞-քանի՞ անգամ այդ երկիրն անագորույն փորձանքների է ենթարկվել, բայց Դյուցազնը ոչ մի անգամ օգնության չի հասել խեղճ ու կրակ մարդկանց։

Այսինչ թվականին խղճուկ այդ մարդիկ գազանի պես կովեցին իրար հետ և շատ ժողովուրդ ոչնչացրին իզուր տեղը։ Շատ տրտմեցին այն ժամանակ ծերունիները, շատ ապերսեցին՝ ե՛կ Դյուցազն, ե՛կ, վե՛րջ տուր մեր ձախորդությանը։ Բայց նա դրա փոխարեն շարունակում էր քնած մնալ փչակում։ Այսինչ տարին արևը խանձեց բոլոր դաշտերը, և կարկուտը ծեծեց, մտածում էին, որ Դյուցազնը կգա, կկերակրի շինականներին, բայց նա, դրա փոխարեն, նստած մնաց փչակում։ Այնինչ թվականին և՛ քաղաքները, և՛ գյուղերը հրո ճարակ դարձան, խեղճ ու կրակ մարդիկ մնացին անտուն ու մերկ, առանց ուտելիքի։ Կարծում էին, ահա կգա Դյուցազնը և համայնքի կարիքները կհոգա, բայց նա այս անգամ էլ շարունակեց քնա՛ծ մնալ փչակում։

Մի խոսքով, հազար տարվա ընթացքում այդ երկիրն ամեն տեսակ ցավ ու վիշտ կրեց, բայց ոչ մի անգամ Դյուցազնը նեղություն չկրեց հետաքրքրվելու, ի՞նչից է այդպես տնքում-հառաչում երկիրը։

Ո՞վ է այդ Դյուցազնը։

Բազմաշարշար ու համբերատար էր այդ երկիրը և մեծ էր ու անխոնջ նրա հավատը։ Արտասվում էր ու հավատում, հառաչում էր ու հավատում։ Հավատում էր, որ երբ արցունքների ու հառաչանքների աղբյուրը ցամաքի, այն ժամանակ արդեն Դյուցազնը ժամանակ կգտնի նրանց ազատելու։ Եվ ահա հասավ բոպեն, սակայն ո՛չ այն բոպեն, որն ակնկալում էին բնակիչները։ Ոտքի ելան թշնամիները և շրջափակեցին այն երկիրը, ուր փչակում քնած էր Դյուցազնը։ Եվ բոլորը դիմեցին ուղիղ Դյուցազնի վրա։ Սկզբում մեկն զգուշությամբ մոտեցավ փչակին — տեսավ հոտ է գալիս, մյուսը մոտեցավ — նույնպես հոտ է գալիս։ «Դյուցազնը փտած է եղել»,— ասացին թշնամիները և հարձակվեցին երկրի վրա։

Թշնամիներն անզութ էին և անողորմ։ Նրանք այրում և

կոտորում էին այն ամենը, ինչ հանդիպում էր իրենց ճանապարհին, վրեժ լուծելով այն ծիծաղելի դարավոր երկյուղի համար, որը ներշնչել էր նրանց Դյուցազնը։ Դես ու դեն նետվեցին խեղճ ու կրակ մարդիկ, տեսնելով չար ձախորդությունը, նետվեցին թշնամուն ընդառաջ, բայց տեսան, որ դատարկ ձեռքերով են։

Եվ հիշեցին Դյուցազնին ու միաբերան աղերսեցին.

«Շտապի՛ր, Դյուցազն, շտապի՛ր»։

Այն ժամանակ հրաշք կատարվեց. Դյուցազնը տեղից չշարժվեց։ Ինչպես և հազար տարի առաջ, նրա անշարժ գլուխը կույր աչքերով նայում էր արեգակին, բայց այլևս չէր արձակում այն զորեղ խոմփոցը, որից մի ժամանակ սարսափահար էր լինում մայրի անտառը կանաչ։

Մոտեցավ այն ժամանակ Դյուցազնին հիմար Իվանուշկան, բռունցքով խորտակեց փչակը և տեսավ, որ իժերը Դյուցազնի մարմինը լափել էին մինչև պարանոցը։

Ննջի՛ր, Դյուցազն, ննջի՛ր։

ԲՈՐԵՆԻ

(Խրատ)

Բաց արեք որևէ կենդանաբանության գիրք և լավ դիտեցեք բորենու կերպարանքը։ Նրա սուր դնչից ամենևին չի երևում, որ նա կարող է լինել խարդախ, նենգամիտ, ևս առավել՝ վայրագ, այլ ընդհակառակը, նույնիսկ դուրեկան տպավորություն է գործում։

Այդ լավ տպավորությունը նա գործում է շնորհիվ իր փոքրիկ աչքերի, որոնց մեջ ողորմածություն է շողում։ Մյուս սրադունչ կենդանիների աչքերը վճիտ են, արագաշարժ, փայլատակող, հայացքը խիստ է, գիշատիչ։ Իսկ բորենու աչքերը հոգնատանջ են, տամուկ, են, հայացքը՝ մտերմական, վստահություն ներշնչող։ Կաթոլիկ քահանաներն այդպիսի փաղաքշական աչքեր են ունենում, երբ պատրաստվում են ad majorem Dei gloriam[56], հովվյալի խղճի մեջ պրպտումներ կատարել։ Կամ այն չինովնիկները, որոնց, որպես մեծագույն գաղտնիք, հանձնարարված է տոնական պարգևատրման ցուցակները մաքուր արտագրել։ Նրանք էլ, որպեսզի բոլորին հուսադրած լինեն և միաժամանակ պետական գաղտնիքը չհայտնեն, սկսում են բոլորին միանման ժպտալ։

Ո՞վ կմտածեր, որ այդ կերպարանքը պատկանում է այն բորենիներից մեկին, որոնց մասին վաղեմի ժամանակներից սկսած այդպիսի վատ համբավ է կազմվել։

Հին մարդիկ բորենու մեջ ինչ-որ գերբնական բան էին տեսնում և կախարդական հմայքի ուժ էին վերագրում նրան։ Բորենու վերաբերմամբ եղած այդ հայացքը նշանավոր չափով տիրում է նաև մինչև այսօր այն երկրների նախնաբնիկների մեջ, ուր տարածված են այդ կենդանիները։ Բրեմի[57] պատմածներին նայած, տեղական արաբները հավատում են, որ մարդը խելագարվում է բորենու ուղեղը գործածելիս և որ կախարդները օգտագործում են այդ բանը՝ իրենց ատելի մարդկանց վնասելու համար։ Ավելին. արաբները համոզված են, որ բորենիները ոչ այլ ինչ են, եթե ոչ դիմակավորված կախարդներ, որոնք ցերեկը մարդու տեսքով են լինում, իսկ գիշերը գազանի կերպարանք են առնում՝ բարեպաշտ հոգիները կործանելու համար։

Ըստ երևույթին, այդ ասեկոսեները նույնչափ անհավանական են, որչափ այն առասպելը, որը ես լսեցի մի կուպչիխայից Զամոսկվարեչիեում, իբրև թե՝ ինքը մի բորենի է ճանաչում, որը ցերեկը մարդկային տեսքով թանկագին հյուրեր է ընդունում, բայց հենց մթնում է թե չէ, վերցնում է գրիչն ու սկսում է բորենու կերպարանք առած՝ «լրագիր գրել»...Ի՞նչ հիմարություն։

Սակայն շերտավոր բորենու մասին Բրեմը բավական ներողամիտ կարծիք է հայտնում, թեպետ, հասկանալի է, առանձին առաքինություններ նրա մեջ չի տեսնում։ Բայց գազաններն ընդհանրապես չեն ունենում ոչ առաքինություններ, ոչ մոլություններ, այլ ունենում են հատկություններ։ Շերտավոր բորենու ոռնոցն իսկ, Բրեմի վկայությամբ, այնչափ գարշելի չէ, ինչպես պատմում են, և ինքը շատ անգամ է զվարճացել նրա ոռնոցը լսելիս։ Ընդհակառակը, խալավոր

բորենու ոռնոցը իրոք որ ունի «ինչ-որ սոսկալի քրքիջի բնույթ, որը ամեն մի վառ երևակայությամբ օժտված հավատացյալ հոգի հեշտությամբ կարող է վերագրել սատանային և նրա դժոխային ընկերակիցներին»։ Այնպես որ, եթե կարդալով, օրինակ, լրագրերը, դուք քրքիջ եք լսում, «որը կարելի է վերագրել սատանային», ապա իմացեք, որ նա պատկանում է խալավոր բորենուն, և որ բորենիների այդ տեսակը ամենից վտանգավորն է ու ատելին։

Բորենիական այդ անմնավորության մասին Բրեմը ոչ մի տեղեկություն չի տալիս, բայց պետք է ընդհանրապես նշել, որ նրա պատմածները բորենիների մասին որոշ չափով խրճճված են։ Եվ, ըստ երևույթին, այդ խճճվածությունը առաջացել է հենց այն բանից, որ այլակերպվող բորենու տիպը կարծես թե վրիպել է նրա աչքից։ Բարեբախտաբար, այդ տիպը չի վրիպել այն զամոսկվարեչյեցի կուպչիխայի աչքից, որի մասին ես հիշատակեցի վերևում, և որը իր սեփական աչքերով հաստատապես տեսել է այդպիսի բորենի։

— Վրան որ նայում ես, հոգյա՛կ է,— պատմում էր նա,— բայց երբ սկսում է ղնդղնդալ ու քրքջալ... Քրքջո՞ւմ է, քրքրքջո՞ւմ, մեկ էլ հանկարծ հեծկլտում է.... Տե՛ր, ողորմյա մեզ։

Այնուամենայնիվ, կասկածից դուրս է, որ հենց այդ այլակերպությունը նկատի ունի Բրեմը, երբ ասում է, որ բորենիներն ունեն զզվելի սուր ձայն, անտանելի հոտ են արձակում և ուտելիս այնպես են հևում ու թառանչում, աղաղակում և հռհռում, որ սնահավատ մարդկանց միանգամայն բնականորեն թվում է, կարծես դժոխքի բոլոր սատանաներն են մոլեգնում։ Բացի դրանից, այդ բորենին հարձակվում է միայն թույլերի, քնածների ու անպաշտպանների վրա (և, իհարկե, առավել լավ է, եթե գոհը կապկապված է) և, բացի դրանից, հաճախ մտնում է տներն ու փոքր երեխաներ է տանում։ Ընդհանրապես երեխաներն այլակերպվող բորենու ամենասիրած պատառն են։ Գիշերը նա մտնում է մամբուկների (քաֆիրների ցեղերից մեկն է) տունը, անցնում է հորթերի մոտով, առանց նրանց վնաս պատճառելու, և քնած մայրերի վերմակների տակից տանում է երեխաներին։

Կենդանի բորենուն որսալն այնքան էլ դժվար չէ, և ուստի գազանանոց պահողները բավական աժան գնով են ձեռք բերում նրանց և վանդակներում փակած, ցույց են տալիս մարդկանց։ Վանդակում փակված, բորենին ամբողջ ժամեր կոճղի նման պառկում է մի կողքի, հետո հանկարծ ցատկում է ոտքի, նայում է ապուշ-ապուշ, կողերը ոռոներին է քսում և ժամանակ առ ժամանակ այնպես է քրքջում, որ թափանցում է մինչև ոսկորների ծուծը։

Այդուհանդերձ, նույն Բրեմի վկայությամբ, բորենին որչափ նենգ է, նույնչափ էլ վախկոտ է։ Մեկ անգամ պատահեց, որ Բրեմը ընկերներով գիշերում էր Կապույտ գետի ափին, երբ հանկարծ խարույկին շատ մոտիկ երևում է բորենին և սկսում իր սիրտ մորմոքող երգը։ Սակայն բավական է լինում, որպեսզի ընկերներով, ի պատասխան այդ երգի, քրքջան, որ անկոչ հյուրը վախենում է և անմիջապես փախչում։ Մեկ ուրիշ անգամ, Սենաար քաղաքում, կեսգիշերին հյուրատեղից տուն վերադառնալիս, Բրեմը քաղաքի փողոցներից մեկում հանդիպում է բորենիների բավական մեծ ոհմակի։ Բայց նրանց վրա նետած մեկ հատիկ քարը բավական է լինում, որ ամբողջ ոհմակը փախչի։

Բորենիներին կարելի է նույնիսկ ընտելացնել։ Իհարկե, այդ զբաղմունքը բավականություն պատճառել չի կարող, բայց, այդ կենդանու բնավորությունը մանրամասնորեն ուսումնասիրելու նկատառումով, նման փորձն ապարդյուն չի լինի։ Բավական հեշտ է ընտելանում. հերիք է միայն հաճախակի ծեծի դիմել և սառը ջրում լողացնել։ «Այդ ձևով ընտելացած բորենիները,— պատմում է Բրեմը,— ինձ տեսնելիս, ուրախ ոռնոցով ցատկում էին տեղերից, սկսում էին թռչկոտել իմ շուրջը, առջևի թաթերը դնում էին իմ ուսերին, հոտոտում էին դեմքս, վերջապես ուղիղ վեր էին բարձրացնում պոչերը և 1½—2 դյույմ ցցում ետևի անցքից դուրս հանած աղիքը»։ Մի խոսքով, մարդը հաղթանակել է նաև այն բանում, ինչպես ամեն բանում, միայն դուրս ցցած աղիքն արդեն ավելորդ է։

Բայց, թեպետ, բորենու ուրախությունը տեսնելը... դա նույնպես յուրատեսակ մի...

Սակայն ի՞նչ է նշանակում այս ամբողջ պատմությունը

և ի՞նչ նպատակով է գրված,— գուցե հարց կտա ինձ ընթերցողը։— Ես այս բոլորն այն նպատակով պատմեցի, որպեսզի պարզորոշ ցույց տամ, որ «մարդկայինը» միշտ և անխուսափելի կերպով պետք է հաղթանակի «բորենիականին»։

Երբեմն մեզ թվում է, որ «բորենիականը» պատրաստ է ամբողջ աշխարհը լցնել, որ նա և՛ աջ, և՛ ձախ տարածել է թևերը և ահա շուտով կխեղդի ամեն մի կենդանի արարած։ Այսպիսի ուրվապատկերներ հաճախ են պատահում։ Զորս կողմը բարձրանում է դիվական քրքիջ ու ոռնոց, խավարի խորքից հնչում են ատելության, գժտությունների և երկպառակությունների բացականչություններ։ Բոլոր կենդանի արարածներն անհուն սարսափով ընկնում են երեսնիվայր, բոլոր հոգեկան պարտավորություններն անզգայանում են մտքի այն միակ ճնշիչ տառապանքից, որ խորտակվել է ազնիվը, խորտակվել է մարդկայինը։ Ամեն ինչ առմիշտ, ասես անթափանցելի վարագույրով, ծածկվել է ատելությամբ, ամբաստանությամբ, բորենիականությամբ։

Սակայն դա հսկայական և հանցավոր մոլորություն է։ «Մարդկայինը» երբեք վերջնականապես չի ոչնչացել, այլև մոխրի տակ, որով ժամանակավորապես ծածկել է նրան «բորենիականը», նա շարունակում է բոցկլտալ։

Եվ այսուհետև ևս նա չի ոչնչանա և չի դադարի բոցկլտալուց։ Երբե՛ք։ Որովհետև հաղթանակելու համար նրան մի բան է հարկավոր միայն՝ սրտերն ու մտքերը լուսավորել այն գիտակցությամբ, որ «բորենիությունը» ամենևին չունի այն կախարդական դյութանքները, որ անմիտ և չար նախապաշարմունքը վերագրում է նրան։ Հենց որ այդ բանը տեղի ունենա, մտքերն ու սիրտը լուսավորվեն այդ գիտակցությամբ, այլևս հարկ չի լինի «բորենիությունը» ձեռնասուն դարձնելու։ Ի՞նչ կարիք կա։ Նա, միևնույն է, չի դադարելու գարշահոտություն արձակելուց, բացի դրանից, ձեռնասուն դարձնելն էլ մեծ գլխացավանք է պատճառելու։ Նա ինքը կսկսի իրեն-իրեն ավելի ու ավելի խորքերն ընկղմվել, մինչև, վերջապես, ծովը կկլանի նրան, ինչպես հին ժամանակ կլանել է խոզերի բոլուկը։

ԿՐԱՄՈԼՆԻԿՈՎԻ ԱՐԿԱԾԸ

(Հեքիաթ-եղերերգ)

Մեկ անգամ առավոտյան Կրամոլնիկովը, արթնանալով, միանգամայն պարզորոշ զգաց, որ ինքը չկա։ Դեռևս երեկ նա գիտակցում էր, որ գոյություն ունի, իսկ այսօր երեկվա գոյությունը մի տեսակ մոգական գավազանով փոխվել էր անգոյության։ Բայց այդ անգոյությունը միանգամայն հատուկ տեսակի էր։ Կրամոլնիկովը խուճապով շոշափեց իրեն, հետո բարձրաձայն մի քանի բառ արտասանեց, վերջապես նայեց հայելու մեջ։ Պարզվեց, որ ինքն այդտեղ է, կա, և, որպես տոմարագրված անձ, գոյություն ունի նույն այն ձևով, ինչպես և երեկ։ Բացի դրանից, նա փորձ արեց մտածել. դուրս եկավ, որ մտածել էլ կարող է... Բայց, այդ ամենով հանդերձ, իր համար կասկածից դուրս էր, որ ինքը չկա։ Չկա այն ո՛չ տոմարագրված Կրամոլնիկովը, որպիսին նա գիտակցում էր իրեն դեռ երեկ։ Կարծես նրա առաջ փակվել էր ինչ-որ մի դուռ կամ առջևում եղած ճանապարհն էր խափանվել, և նա այլևս ոչ գնալու տեղ ուներ, ոչ էլ հարկ կար գնալու։

Մեկ ենթադրությունից մեկ այլ ենթադրության անցնելով և միաժամանակ ուշադիր զննելով շրջապատը, նրա հայացքը հարևանցի կանգ առավ գրասեղանի վրա ընկած կիսատ գրական աշխատության վրա, և հանկարծ նրա ողջ էությամբ կարծես էլեկտրական հոսանք անցավ...

Պե՛տք չէ, պե՛տք չէ, պե՛տք չէ։

. . . . . .

Սկզբում մտածեց, որ դա հիմարություն է և գրիչը ձեռքն առավ։ Բայց երբ ուզեց շարունակել սկսած աշխատությունը, անմիջապես համոզվեց, որ իրոք հարկադրված է գիծ քաշել և այդ գծի տակ գրել՝ Պե՛տք չէ։

Նա հասկացավ, որ ամեն ինչ մնացել է առաջվա պես, բայց միայն իր հոգին է կնքված։ Այսուհետև նա ազատ է տոմարագրական անձին հատուկ գործունեություն ունենալու, ազատ է, թերևս, մտածելու, բայց այդ բոլորը ոչ մի արժեք չունի։ Նրանից խլված է այն գլխավորը, որը կազ-

մում էր նրա կյանքի հիմքը և էությունը. խլված է այն հա-
ռագայթող ուժը, որը հնարավորություն էր տալիս նրան
իր սրտի հրով բոցավառել ուրիշների հոգիները։

Նա կանգնել էր ապշած նայում էր և չէր տեսնում, որո-
նում էր և չէր գտնում։ Ինչ-որ մի հավիտենական տանջա-
լից բան այրում էր նրա ներսը... Իսկ օդում, մինչ այդ, հնչ-
չում էր անհեթեթ, ամբարիշտ մի շշունջ. «Թունեցի՛նք, հաս-
կացա՛նք, հասատեցի՛նք»։

— Ի՞նչ բան է, ի՞նչ է պատահել։

Հաստատապես նրա հոգին կնքված էր։ Ինչպես ամեն մի
համոզված և հավատացյալ մարդ, այնպես էլ Կրամոլնիկովն
ուներ իր ներքին տաճարը, ուր պահվում էր նրա հոգու գան-
ձը։ Նա չէր թաքցնում այդ գանձերը, իր բացառիկ սեփակա-
նությունը չէր համարում այն, այլ շռայլում, վատնում էր։
Նրա կարծիքով դրա մեջ էր պարփակվում մարդկային կյան-
քի ողջ իմաստը։ Առանց այդ գործունյա, տոկուն ուժի,
—որը մարդու համար պահանջ դարձնելով իրենից լույս և բա-
րություն արձակելը, միաժամանակ ընդունակ է դարձնում
նրան ուրիշներից ևս լույս և բարություն ընդունելը,— մարդ-
կային հասարակությունը գերեզմանի կնմանվեր։ Դա ոչ թե
հասարակություն կլիներ, այլ դիակների պահեստ... Եվ ահա
Նրա համար սկսվեց դիակնացման շրջանը։ Լույսի և բարու-
թյան փոխանակումը վերջացավ։ Եվ նա ինքը, Կրամոլնի-
կովն է դիակ, և նրանք, որոնց նա դեռ վերջերս դիմում էր,
որպես իր գործունեության կենարար ջրի աղբյուրի,— նրանք
նույնպես դիակ են... Երբեք նա, անգամ երևակայությամբ,
դրանից առավել խոր դժբախտություն չէր պատկերացրել
իր համար։

Կրամոլնիկովը բնիկ պոշեխոնցի գրականագետ էր, որը
չուներ ոչինչ այլ կապեր, քան ընթերցողը, ոչ մի այլ ուրա-
խություն, քան ընթերցողի հետ հաղորդակից լինելը։ Ընթեր-
ցողը նրա համար չէր անձնավորվում որևէ նյութական ձևով,
բայց և այնպես շարունակաբար կանգնած էր նրա առաջ։ Դե-
պի վերացական անձնավորությունը եղած այդ կապվածու-
թյան մեջ ինչ-որ բացառիկ, հիվանդագին խանդոտության
հասնող բան կար։ Ամբողջ տասնամյակներ միմիայն դա՛ էր

սնուցանում նրան և տարեցտարի ավելի ու ավելի անհրա-
ժեշտություն էր դառնում։ Վերջապես վրա հասավ ծերու-
թյունը, և կյանքի բոլոր վայելքները, բացի բարձրագույն և
ամենաէական մեկից, վերջնականապես անպետքացան նրա
համար և նա անտարբեր էր դեպի նրանք...

Եվ հանկարծ այդ բոպեին խորտակվեց նաև վերջին վա-
յելքը։ Բացվեց խավար անդունդը և կլանեց այն «միակը»,
որն իմաստավորում էր կյանքը...

Գրական ցեխում այդպիսի՝ բացառապես մեկ ուղղու-
թյամբ ընթացող անձնավորություններ ժամանակ առ ժամա-
նակ հանդիպում են։ Երիտասարդությունից սկսած այնպես
միակողմանի դասավորություն է ստանում նրանց կյանքը,
որ ինչպիսի պատահականություններ էլ որ դուրս գցելու
լինեն նրանց իրենց ճակատագրորեն նշված ասպարեզից,
շեղումը ոչ լուրջ է լինում, ոչ էլ երկարատև։ Բերովի հնոտի-
ների կույտերի տակ շարունակում է ընթանալ իսկական
կենսունակ հոսանքը։ Կյանքի ողջ բազմազանությունը կեղծ
է թվում նրանց, կյանքի ամբողջ շահագրգռությունը կենտ-
րոնանում է մեկ լուսատու կետում։ Երբեք նրանք հաշիվ
չեն տալիս իրենց, թե ինչ պատահականություններ են սպա-
սում իրենց ճանապարհին, երբեք չեն նախատեսում, չեն
աշխատում ապահովել թիկունքը, հետախուզումներ չեն կա-
տարում, չեն տեղեկանում նախկին օրինակների մասին։ Ոչ
այն պատճառով, որ նրանց առջևից անցնող երևույթները և
իրենց կախումն այդ երևույթներից նրանց համար անորոշ
է, այլ որովհետև ոչ մի կանխատեսություն, ոչ մի տեղեկանք
մազաչափ անգամ չեն կարող ձևափոխել այն գործունեու-
թյունը, որի դադար առնելը համազոր կլիներ գոյության
դադարին։ Պետք է մարդուն սպանել, որպեսզի այդ գոր-
ծունեությունը դադարի։

Մի՞թե հենց այդ սպանությունն է տեղի ունեցել այժմ,
այդ առեղծվածային բոպեին։ Ի՞նչ է պատահել։ Ապարդյուն
էր նա այդ հարցի պատասխանը որոնում։ Նա մի բան էր
հասկանում միայն, որ երախաբաց դատարկությունն է շրջ-
ապատում իրեն ամեն կողմից։

Կրամոլնիկովը կաթոգին և բուռն խանդով նվիրված էր

իր երկրին և հիանալի ճանաչում էր նրա ինչպես անցյալը, նույնպես և ներկան։ Բայց այդ ճանաչողությունը բոլորովին ուրույն ազդեցություն էր ունեցել նրա վրա. դա ցավերի կենդանի մի աղբյուր էր, որոնք, անընդհատ վերանորոգվելով, վերջապես դարձան նրա կյանքի գլխավոր բովանդակությունը, ուղղություն և եռանդ տվեցին ողջ գործունեությանը։ Եվ նա ոչ միայն չէր աշխատում մեղմել այդ ցավերը, այլ, ընդհակառակը, աշխատում էր նրանց վրա և կենդանացնում էր նրանց իր սրտում։ Ցավի գոյությունը և նրա անընդհատ զգացողությունը աղբյուր էին հանդիսանում կենդանի պատկերների, որոնց միջոցով ցավը ուրիշների գիտակցությանն էր հաղորդվում։

Գիտեր նա, որ Պոշեխոնյան երկիրը հնուց ի վեր հռչակված է եղել անկայունությամբ և փոփոխականությամբ, որ նրա բնությունն իսկ հավատ չի ներշնչում։ Գետերը տարածվում են լայնությամբ և համարյա ամեն տարի փոխում են իրենց հունը, երփներանգվելով ավազի կույտերով։ Սթենոլորտային երևույթները զարմանք են պատճառում կախարդանքի նրմանություն ունեցող հանկարծակիությամբ. այսօր սաստիկ տաք է, այնպես, որ քրտինքից շապիկը ջուր է դառնում, իսկ յաղը նույն այդ շապիկը փայտի պես է նստում բնակիչների մեջքին։ Ամառը կարճատև է, բուսականությունն աղքատ, ճահիճներն անծայրածիր... Մի խոսքով, ամենաանընդունակ, դավաճան բնություն, այնպիսին, որ ոչ մի գործ նախապես որոշել չի լինում։

Բայց առավել անկայուն է Պոշեխոնում մարդկային վիճակը։ Հասարակ ժողովուրդն ասում է. «մախաղից ու բանտից ազատում չկա», արհեստավորներն ասում են. «մեր վաստակը սառցի վրա է գրված», բոյարինն ասում է. «երեկ իմ ականջները ճակատիցս վեր էին բուսել, իսկ այսօր բոլորովին գտնել չեմ կարողանում»։ Չկա կապ երեկվա և վաղվա միջև։ Մարդը կարծես թափառում է կախարդված հովտում,— աստված հաջողեց, գործը լավ կգնա, չհաջողեց — կորավ։

Ի՞նչ խոսք կարող է լինել խղճի մասին, երբ չորս կողմն ամեն ինչ դավաճանում է, մատնում է։ Ինչի՞ վրա կարող է հենվել խիղճը, ինչո՞վ է նա դաստիարակվելու։

Գիտեր այդ ամենը Կրամոլնիկովը, բայց, կրկնում եմ, այդ իմացողությունը կենդանացնում էր նրա սրտի ցավերը և հանդիսանում էր նրա գործունեության մղիչ ուժը։ Կրկնում եմ, նա խորապես սիրում էր իր երկիրը, սիրում էր նրա թշվառությունը, նրա մերկությունը, նրա դժբախտությունը։ Գուցե նա կանխապես տեսնում էր, որ ապագայում հրաշք է տեղի ունենալու, որը մեղմելու է իրեն լափող վիշտը։

Նա հավատում էր հրաշքներին և սպասում էր նրանց։ Կախարդությունների ծոցում դաստիարակված, նա ինքն իր համար աննկատելի հպատակվում էր կախարդության ազդեցությանը և կախարդանքն ընդունում էր որպես վճռական գործոն պոշեխոնյան կյանքի համար։ Ո՞ր ուղղությամբ է ընթանալու կախարդությունը — դա է ամբողջ հարցը... Մանավանդ որ անցյալում ևս մշտապես խավար չի եղել։ Երբեմն խավարը նոսրանում էր, և լույսի տիրապետության կարճատև ընթացքում պոշեխոնցիներն իրենց ավելի առույգ էին զգում։ Արեգակի ճառագայթների տակ փթթելու ու քաջալերվելու այդ հատկությունը՝ որչափ որ թույլ լիներ այն՝ ապացույց էր, որ բոլոր մարդկանց համար ընդհանրապես լույսն ինչ-որ ցանկալի բան է։ Պետք է պահպանել նրանց մեջ լույսի այդ բնազդական ծարավը, պետք է հիշեցնել, որ կյանքն ուրախություն է, այլ ոչ անսահման տառապանք, որից ազատել կարող է միմիայն մահը։ Ոչ թե մահը պետք է լուծի կապանքները, այլ վերականգնված մարդկային պատկերը, լուսավորված ու զտված բոլոր այն անարգանքներից, որոնք շերտ-շերտ նստել են նրա վրա ստրկության դարերի ընթացքում։ Այս իրողությունն այնչափ բնականորեն բխում է մարդկային էության բոլոր բնորոշումներից, որ անգամ ակնթարթային կասկած ունենալ չի կարելի նրա ապագա հաղթանակի նկատմամբ։ Կրամոլնիկովն հավատում էր այդ հաղթանակին և իրեն ամբողջովին նվիրել էր այդ հաղթանակը մարդկանց հիշեցնելու աշխատանքին։

Իր մտքի ու սրտի ողջ ուժերը նա նվիրել էր այն բանին, որպեսզի իր բարեկամների հոգիներում վերականգնի լույսի ու արդարության պատկերացումը և պահպանի նրանց սրտերում այն հավատը, որ կգա լույսը, և խավարը չի ծածկի նրանց։

Դրա մեջ էր, իսկապես ասած, կայանում նրա գործունեության ողջ խնդիրը։

Իրոք, կախարդանքը չհապաղեց իր իրավունքներին տեր դառնալու։ Սակայն ո՛չ այն փրկարար կախարդանքը, որի մասին նա երազում էր, այլ սովորական, պոշեխոնյան անողորմ կախարդանքը։

Պե՛տք չէ, պե՛տք չէ, պե՛տք չէ։

Ի պատիվ Կրամոլնիկովի, պետք է ասել, որ նա երբեք, ո՛չ մի անգամ հարց չէր տվել՝ ինչո՞ւ։ Նա հասկանում էր, որ պատճառականության կատարյալ բացակայության հետևանքով նման հարցը ոչ միայն անտեղի է, այլև ուղղակի վկայում է հարց տվողի հոգեկան թուլությունը։ Նա նույնիսկ չէր ժխտում իր հետ տեղի ունեցած փաստի նորմալ լինելը, նա միայն գտնում էր, որ այս դեպքում նորմալությունը հրապարակ է եկել արդեն չափից դուրս վայրագ և խիստ։ Շատ անգամ էր պատահել նրան իր երկարամյա գրական ճանապարհին կախարդանքի հանդեպ anima vilis-ի[58] դեր խաղալ, բայց մինչև այժմ վերջինս գոնե նրա հոգին թողել էր անձեռնմխելի։ Այժմ նա այդ հոգին խլել էր, ճզմել ու կլանքել, և որչափ էլ սովորական լինեին Կրամոլնիկովի համար կախարդության քմահաճույքները, բայց այս անգամ նա իրեն զարմացած զգաց։ Նա ամբողջությամբ կարծես խորտակված լիներ. իր ողջ էության մեջ այրող և միանգամայն նոր մի ցավ էր զգում։

Եվ հանկարծ նա հիշեց «ընթերցողի» մասին։ Մինչև այժմ նա իր բոլոր ուժերը տալիս էր ընթերցողին միանգամայն անձնազոհ կերպով, առանց որևէ ակնկալիքի. այժմ նրա սրտում առաջին անգամ արթնացավ արձագանքի, համակրանքի, օգնության անորոշ ակնկալությունը...

Ու նա բնազդորեն ձգտում ունեցավ փողոց դուրս գալու, կարծես թե այնտեղ նրան ինչ-որ բացատրություն էր սպասում։

Փողոցը սովորական պոշեխոնյան տեսք ուներ։ Կրամոլնիկովին թվաց, որ իր աչքերի առաջ համր, կույր և խուլ տարածություն է փոված։ Միայն քարերն էին աղաղակում։ Մարդիկ քայլում էին ետ ու առաջ զգուշորեն ու շրջս կողմը

նայելով, կարծես գողություն էին գնում։ Այդ լարն էր միայն կենդանի։ Մնացած ամեն ինչը զարմանք էր արտահայտում, համարյա քարացած վիճակում էր։ Սակայն Կրամոլնիկովին առաջին պահ թվաց, որ նույնիսկ այդ համր փողոցն ինչ-որ բան գիտե։ Նա այնպես բուռն էր ցանկանում այդ, որ քարերի աղաղակը մարդկանց աղաղակի տեղ ընդունեց։ Բայց և այնպես նա, մասամբ, չէր սխալվում։ Իսկապես այստեղ ու այնտեղ համարձակ աղմուկ էր հնչում։ Դա լիբերալների աղմուկն էր՝ մոտիկ շրջանի իր բարեկամների։ Ամանցից նա առաջ էր անցել, ոմանք ընդառաջ էին եկել իրեն։ Բայց ավա՜ղ... կարեկցության ոչ մի նշույլ չէր երևում նրանց դեմքերին։ Ընդհակառակը, նրանց վրա արդեն ուրացության ստվերն էր նստել։

— Այնուամենայնիվ, շատ շուտ թաղեցին ձեզ, սիրելի՛ս,— ասաց մեկը։— Խի՛ստ է, պարոն, խի՛ստ է։ Այո, բայց դուք ինքնե՛րդ էլ... չի կարելի այդպես, բարեկամս, ես ձեզ վաղուց էի ասում, որ չի կարելի։ Հանդուրժեցին ձեզ, հանդուրժեցին,— դե, վերջապես...

— Բայց ի՞նչ «վերջապես»։

— Ուղղակի «վերջապես» և ուրիշ ոչինչ։ Ձանձրալի դարձավ։ Այժմ հարկավոր է ոչ թե խոսել, այլ նայել և, եթե կարելի է, նկատել։ Դուք, պարոն, պետք է ինքներդ վաղուց հասկանայիք այդ։ Իսկ եթե դուք նողկում էիք ողջ հոգով միանալուց, այդ դեպքում հարկավոր էր թեկուզ մի փոքր. ո՞վ պետք է կարողանար քրքրել, թե ինչ կա... իմ ներսում։ Թե չէ դուք ամեն ինչ հենց բացեիբաց, հենց բացեիբաց... Եվ ահա ձանձրացրեց։ Ես ինքս էլ — մի՞թե դուք կարծում եք՝ շատ հաճելի է ինձ համար։ Երեկվանից չէ, որ ինձ ճանաչում եք։ Բայց և այնպես ես էլ շատ մտածեցի ու խորհուրդ արեցի բարի մարդկանց հետ... Փա՜ռք քեզ, տեր... Թրը՞խկ։

Մեկ ուրիշն ասաց.

— Այո, սիրելի բարեկամ, ափսոս եք դուք, շա՜տ ափսոս։ Հաճելի էր կարդալ։ Ժպտում ես, հառաչում ես, իսկ երբեմն էլ խելացի մի բան ես գտնում... Նույնիսկ շտապում ես՝ բարեկամներիդ հաղորդել։ Գրասենյակներում ցիտում էին։ Ես մի ծանոթ ունեի, որը շատ բան անգիր գիտեր։ Բայց,

մյուս կողմից, ամեն ինչ սահման ունի։ Այնպիսի ժամանակ է այժմ, երբ ուրիշ բան է հարկավոր, դուք պետք է հասկանայիք այդ և ոչ թե սպասեիք, մինչև գլխներիդ տային։ Թե ի՞նչ է այդ «ուրիշ բանը», այդ հետո կպարզվի, բայց այժմ... Ահա ես, ուրիշների նման նայեցի-նայեցի ու ասում եմ կնոջս՝ հարկավո՛ր է։ Նա էլ ասում է՝ հարկավո՛ր է։ Ես էլ վճռեցի։

— Ի՞նչ վճռեցիք դուք։

— Ուղղակի գնալ ընդհանուր տրորված ճանապարհով։ Առանց աջ ու ձախ նայելու, առանց վեր ճախրելու, առանց մտածելու լայն խնդիրների մասին... Կամաց-կամաց և ըզգուշությամբ։ Թեպետ տխուր և զորշ է այդպես, բայց մի կողմից փայլելը մեր ուժից վեր է, մյուս կողմից՝ ընտանիք կա։ Կինս պճնվել, զվարճանալ է սիրում... Ինքս էլ դիրք ունեմ հասարակության մեջ, կապե՞ր, ծանոթություններ, տեսնում եմ՝ ինչպես մյուսները շարունակ առաջ են գնում, մտածում եմ, մի՞թե պետք է ամեն ինչ կորուստի մատնվի։ Դուք կարծում եք ես ընդմիշտ եմ... Ոչ, ես նույնպես վերապահությամբ եմ... Երբևիցե լավ ժամանակներ էլ կգան... Ա՛յ, օրինակ, եթե Նիկոլայ Սեմյոնիչը... Իշխանությունը, սիրելիս, այժմ... Այսօր Իվան Սիխայլիչն է, իսկ վաղը Նիկոլայ Սեմյոնիչը... Դե այն ժամանակ կրկին...

— Բայց չէ՞ որ Նիկոլայ Սեմյոնիչը գող է։

— Գո՞ղ։ Ա՜խ, ինչպես անողոք եք արտահայտվում։

Վերջապես երրորդն ուղղակի բղավեց նրա վրա.

— Տե՛ղն է։ Բավակա՛ն է։ Դուք, պարոն, ոչ միայն ձեզ, այլև ուրիշներին եք արատավորում,— ահա ինչ։ Ես ձեր պատճառով երեկ բացատրություն ունեցա և այժմ չգիտեմ, ես կամ թե չկամ։ Իսկ ի՞նչ իրավունք ունեք դուք, թույլ տվեք հարցնել ձեզ։ «Բարեկամական հարաբերությունների մեջ եք պարոն Կրամոլնիկովի հետ,— ասում է,— ուստի...» Ես այս կողմ, այն կողմ։ «Ի՞նչ բարեկամական հարաբերություն, ձերդ բարձրություն, խեղկատակի մեկն է, ինչո՞ւ չպետք է աշխատանքից հետո ծիծաղել»։ Առայժմ քսանչորս ժամ ժամանակ տվեցին մտածելու, իսկ հետո թե ի՞նչ կլինի... Իսկ ես ընտանիք ունեմ, կին, երեխաներ... Եվ վերջապես ես ինքս էլ առանց ցանելու դաշտ չեմ... Կարելի՞ էր միթե այսպիսի բան

սպասել։ Կրկնում եմ, ի՞նչ իրավունք ունեք դուք։ Ա՜խ, ա՜խ, ա՜խ։

Կրամոլնիկովը հարկ չհամարեց շարունակել։ Բացակայությունը և առաջ անցավ։ Բայց որովհետև նրա ճանապարհի վրա գտնվում էր այն տունը, որտեղ ապրում էր իր դասընկերը, ուստի մտավ նրա մոտ, հասածելով գոնե այնտեղ որոտը թեթևացնի։

Սպասավորն ընդունեց նրան. ըստ երևույթին նա դեռ ոչինչ չգիտեր։ Նա հայտնեց, որ Դմիտրի Նիկոլաևիչը, տանը չէ, իսկ Ագլայա Ալեքսեևնան հյուրասենյակում է։ Կրամոլնիկովը բաց արեց դուռը, բայց հազիվ էր ոտքը շեմքից ներս դրել, որ հյուրասենյակում եղած տիկինը ճիչ արձակեց ու փախավ։ Կրամոլնիկովը դուրս գնաց։

Վերջապես նա հիշեց, որ Պեսկի կոչված թաղամասում ապրում է իր հին ծառայակից (Կրամոլնիկովը տասնհինգ տարի առաջ նույնպես ծառայել էր Հանցավոր խորհրդածությունների դեպարտամենտում) Յակով Իլյիչ Վորոբուշկինը։ Այդ մարդը Կրամոլնիկովի ամենամեծ հարգողներից էր և անհաջողակ ծառայող։ Տասը տարուց ավելի նա քարշ էր տալիս ենթաբաժնի վարիչի ծանր աշխատանքը, հեռանկարում բարձրանալու ոչ մի հույս չունենալով և հոսանքների յուրաքանչյուր փոփոխության ժամանակ դողալով իր պաշտոնի վրա։ Բնությունից լինելով ջղկլոտ և առանց ձգտումների, նա նույնիսկ մասնավոր ծառայության մեջ պատրաստարվել չէր կարողանում։ Սկզբից ևեթ նա իրեն այնպես էր դրել, որ իր համար իսկ տարօրինակ էր թվում որևէ բանի ձգտել, առաջարկներ անել՝ ոչնչացնելու և վերացնելու մասին, թափառել միջանցքներում և աստիճանների վրա և այլն։ Մեկ անգամ միայն նա առաջարկ մտցրեց՝ հոգով աղքատներին քաջալերելու անհրաժեշտության մասին, բայց դիրեկտորը, կարդալով այն, միայն մատով սպառնաց նրան, և այն օրից սկսած Վորոբուշկինը լռեց։ Վերջին ժամանակները, սակայն, նա սկսեց անորոշ հույսեր տածել, սկսեց հաճախել այն եկեղեցին, ուր հաճախում էր իր պետը, այնպես որ վերջինս մեկ անգամ նրան նվիրեց բարեմաղթության նշխարի կեսը (միջին մասը) և ասաց. «շատ ուրախ

եմ»։ Այդպիսով նրա գործն արդեն հաջողվելու վրա էր, երբ հանկարծ...

Կրամոլնիկովի առաջ դուռը բաց արեց պառավ դայակը, որն ետևից, ներքին դռների միջից երևում էին երեխաների վախեցած դեմքերը։ Դայակը բարկացած էր, որովհետև անապասելի հյուրը խանգարեց նրան՝ լվեր բռնել։ Նա առանց ա լևայլության ասաց.

— Յակով Իլյիչը տանը չէ, նրան ձեր պատճառով պետի մտ ն են կանչել, և կենդանի է այժմ նա թե ոչ, անհայտ է, իսկ տիկինը եկեղեցի է գնացել՝ աղոթք անելու։

Կրամոլնիկովն սկսեց ցած իջնել աստիճաններով, բայց հազիվ էր մի երկու քայլ արել, որ հանդիպեց իրեն՝ Վորոբուշկինին։

— Կրամո՛լնիկով, ներեցեք ինձ, բայց ես չեմ կարող շարունակել մեր հին հարաբերությունները,— ասաց Վորոբուշկինը հուզված ձայնով։— Այս անգամ, թեպետև ես, կարծես, արդարացա, բայց և վստահ ասել չեմ կարող։ Դիրեկտորն այդպես էլ ասաց. «Ձեզ վրա անչնչելի կեղտ կա»։ Իսկ ես կին ունեմ, երեխաներ։ Թողե՛ք ինձ, Կրամոլնիկով։ Ներեցեք, որ ես այսչափ փոքրոգի եմ, բայց չեմ կարող...

. . . . . .

Կրամոլնիկովը տուն վերադարձավ ընկճված, համարյա վախեցած։

Որ նա այսուհետև դատապարտված է միայնակության, այդ նա գիտակցում էր։ Այն պատճառով չէր նա միայնակ, որ ընթերցող չուներ, որը գնահատեր, գուցեև սիրեր իրեն, այլ որովհետև նա կորցրել էր ամեն տեսակ հաղորդակցություն իր ընթերցողի հետ։ Այդ ընթերցողը հեռու էր գտնվում և իր հետ ունեցած կապերը խզել չէր կարող։ Ընդհակառակը, կար այլ ընթերցող, մերձավորը, որը ամեն ժամանակ հնարավորություն ուներ խայթել Կրամոլնիկովին մահու աստիճան։ Այդ ընթերցողը ներկա էր և լկտիաբար հայտարարում էր, որ Կրամոլնիկովի համբությունն իսկ ատելի է իրեն։

Անորոշաբար անցավ նրա մտքով, որ բոլոր ուրացումների մեջ, որոնց վկա էր եղել ինքը, թաքնված է ոչ միայն անձնական դավաճանություն, այլև հերերի մի ամբողջ ճնշող շարան։ Որ բոլոր այդ երեկվա ազատ մտածողները, որոնք դեռևս շատ մոտիկ անցյալում այնպես բարեկամաբար սեղմում էին իր ձեռքը, իսկ այսօր խույս են տալիս իրենից՝ ինչպես ժանտախտից, այդ անում են ոչ միայն վախից դրդված, այլ որովհետև նրանք ճզմվել են։

Նրանց ճզմել է կյանքի ծարավը, և որովհետև այդ ծարավը միանգամայն օրինական է ու բնական, ուստի Կրամոլնիկովը սարսափում էր այդ մտքից։ «Մի՞թե,— հարց էր տալիս նա իրեն,— գոյություն պահպանելու իրավունք ձեռք բերելու համար պետք է ամոթալի ու վայրագ լուծը կրել։ Մի՞թե այս առեղծվածային աշխարհում միմիայն այն է բնական, ինչ որ հակառակ է ընթանում հոգու ամենանվիրական և թանկագին ձգտումներին»։

Կամ թե. նրա խոսակիցներից համարյա յուրաքանչյուրը հենվեց ընտանիքի վրա. մեկն ասաց. «կինս պճնվել է սիրում», մյուսը. «կին»— և ուրիշ ոչինչ... Բայց առանձնապես ծանր էր այդ բանը Վորոբուշկինի համար։ Ընտանիքը հոշոտում էր նրա հոգին։ Երևի նա զրկում էր իրեն ամեն ինչից, վատ էր ուտում, վատ քնում, կողմնակի աշխատանք էր ձեռք բերում — բոլորը հանուն ընտանիքի։ Բայց այդ բոլորով հանդերձ նա այնքան քիչ էր վաստակում, որ միայն Լուկերիա Վասիլևնայի՝ Վորոբուշկինի կնոջ անձնազոհությունն էր օգնում՝ կրելու այդ թշվառությունը։ Եվ ահա, հանուն այդ ընչին վաստակի, հանուն այդ ողորմության...

Ի՞նչ բան է դա։ Ի՞նչ է ընտանիքը։ Ի՞նչպես կարգավորել ընտանեկան հիմունքը, ի՞նչպես անել, որ ընտանիքը մարդու համար չդառնա եգիպտական խոց, չքաշքշի նրան ամեն կողմ, չխանգարի քաղաքացի լինելուն։

Կրամոլնիկովը շատ մտածեց այդ մասին, և հանկարծ կարծես մի բան խայթեց նրան։

«Ինչու՞,— ասում էր նրան ներքին ձայնը,— այդ այրող հարցերն առաջ չէին ներկայանում քեզ այդպես համառորեն, ինչպես ներկայանում են այժմ։ Այն պատճառով չէ՞ արդյոք, որ առաջ դու ստրուկ էիր, քեզ ինչ-որ կեղծ ուժի տեր համարելով, իսկ այժմ դու ստրուկ ես, բայց այլևս անուժ, ճզմված։ Ինչո՞ւ դու չէիր ընթանում ուղիղ և չէիր ժխտում

ինքդ քեզ։ Ինչո՞ւ դու քեզ հպատակեցնում էիր ինչ-որ պրոֆեսիայի, որը քեզ տալիս էր դիրք, կապեր, բարեկամներ, այլ չէիր շտապում այնտեղ, որտեղից հառաչանքներ էին հնչում։ Ինչո՞ւ դու դեմառդեմ չէիր կանգնում այդ հառաչանքներին, այլ հուզվում էիր նրանցով միայն վերացականորեն։

«Քո գրչից բողոք էր հոսում, բայց դու այդ բողոքին այնպիսի ձև էիր տալիս, որ այդ բողոքը դառնում էր մեռածին։ Այն ամենը, ինչի դեմ բողոքում էիր դու, այդ ամենը այժմ էլ նույն դրության մեջ է գտնվում, ինչ դրության մեջ որ գտնվում էր քո բողոքից առաջ։

«Քո աշխատանքն ապարդյուն էր։ Դա փաստաբանի աշխատանք էր, որի լեզուն ուժասպառ է եղել իրեն խճճող կեղծիքներից։ Դու բողոքում էիր, սակայն ցույց չէիր տալիս ոչ այն, թե ինչ պետք է անել, ոչ այն, ինչպես մարդիկ ավելի խորանում են ու ոչնչանում, այլ միայն համակրանքդ էիր առաքում նրանց։ Սակայն դա գերված մտքի զայրույթ էր, թերևս բարի զայրույթ, բայց, այնուամենայնիվ, միայն զայրույթ։ Դու նույնիսկ այն մարդկանց, որոնք այսօր այդպես լպիրշ կերպով երես դարձրին քեզանից, դու նույնիսկ նրանց չես կարողացել հասկանալ. դու մտածում էիր, որ երեկ նրանք այլ էին, քան այսօր։

«Ճշմարիտ է, դու ընդունակ չես այդ մարդկանց հետքերով գնալու, դու ընդունակ չես դավաճանելու այն բարի զայրույթին, որը երիտասարդ հասակից միս ու արյուն է դարձել քո մեջ։ Դա, իհարկե, հաշվի կառնվի... բայց ո՞րտեղ և ե՞րբ։ Իսկ այժմ, երբ ծերությունն է ամեն կողմից պաշարել քեզ իր ցավերով, ինքդ խորհիր, թե ի՞նչ է քեզ սպասում...»

Post scriptum[59] հեղինակից։ Ինքնին հասկանալի է, որ վերը գրածը ոչ այլ ինչ է, եթե ոչ հեքիաթ։ Ոչ մի Կրամոլնիկով չկա և չի եղել, իսկ ուրացողներ և փոփոխական հոգու տեր մարդիկ եղել են ամեն ժամանակ, այլ ոչ միայն ներկայումս։ Եվ որովհետև մյուս բոլոր բաները նույնպես հայողակ դրության մեջ են գտնվում, ուստի ամենևին կարիք չկար այս բոլորը գրելու, որի համար հեղինակն անկեղծորեն զղջում է ընթերցողների առաջ։

ԶԱՏԿԱԿԱՆ ԳԻՇԵՐ

(Ավանդություն)

Դաշտը դեռ անզգայացած է, բայց գիշերվա խորին լռության մեջ ձյան սավանի տակ արդեն լսվում է արթնացող գետակների խոխոջը։ Ձորերում և հովիտներում այդ խոխոջը խուլ թնդյունի է փոխվում և զգուշացնում է ճանապարհորդներին, որ այդ տեղերում ձյունածածկ խորխորատներ կան։ Բայց անտառը դեռ լուռ է, եղյամից ճնշված, ինչպես հեքիաթային հսկան՝ երկաթյա սաղավարտով։ Խավար երկինքն ամբողջովին ծածկված է երկրի վրա պաղ ու թրթռուն լույս սփռող աստղերով։ Նրա խաբուսիկ շողերի տակ երևում են ձնակույտերի մեջ թաղված սևագեղատ գյուղեր։ Որբության, թշվառության ու անտերության կնիքն է պառկել և՛ անկենդան դաշտավայրի, և՛ լռության դատապարտված գյուղի վրա։ Ամեն ինչ կաշկանդված է ու լուռ, կարծես ճնշված լինի անտեսանելի, բայց ահավոր լծի տակ։

Բայց ահա դաշտավայրի մի ծայրում հնչեց կեսգիշերային զանգակի զողանջը. նրան ի պատասխան, հակառակ ծայրում հնչեց մեկ ուրիշը, հետո՝ երրորդը, չորրորդը։ Գիշերվա մութ ֆոնի վրա նկատելի դարձան եկեղեցիների շողշողուն գմբեթները, և շրջակայքը հանկարծ կենդանացավ։ Ճանապարհին երևաց գյուղացիների երկար շարանը։ Առջևից քայլում էին գորշ կյանքից ու թշվառությունից տառապած մարդիկ, տանջված սրտերով, գլուխները ցած խոնարհած։ Նրանք տաճար էին տանում իրենց հեզությունն ու հառաչանքները. դա էր այն ամենը, ինչ կարող էին տալ նրանք հարություն առած աստծուն։ Հետևից նրանց հետևում էին իրենց տոնական հագուստներով պճնված գյուղական հարուստները, վաշխառուները և գյուղի մյուս իշխանավորները։ Նրանք ուրախ զրույց էին անում միմյանց հետ և տաճար էին տանում առաջիկա շաբաթվա իրենց խրախճանքների ցանկությունները։ Բայց շուտով ժողովրդյան բազմությունը թաղվեց ճանապարհի հեռավորության մեջ, օդում նվազեց տաճար հրավիրող զանգահարության վերջին զարկը, ու կրկին ամեն ինչ թաղվեց հանդիսավոր լռության գիրկը։

Խորունկ մի գաղտնիք զգացվեց սկսված շարժման այդ հանկարծակի դադարի մեջ, ասես տիրող լռությանը հաջորդելու էր կյանք և վերածնություն ներշնչող մի հրաշք։ Արդարև, դեռ չէր շառագունել արևելքը, երբ ցանկալի հրաշքը կատարվեց։ Հարություն առավ անարգված ու խաչված աստված, այն աստվածը, որին վաղուց ի վեր աղերսում են վշտահար ու ցավատանջ սրտերը. «Տե՛ր, շտապի՛ր»։

Հարություն առավ աստված և իրենով լցրեց տիեզերքը։ Ընդարձակ դաշտն ընդառաջեց նրան իր ձյուներով ու մրրիկներով։ Դաշտի մյուս կողմն ընկած հզոր անտառը նույնպես զգաց հարուցյալի մերձավորությունը։ Հինավուրց եղևնիները դեպի երկինք պարզեցին իրենց թավուտ թաթերը, հարյուրամյա մայրիները օրորեցին իրենց սաղարթները, զնգացին ճորերն ու գետերը, բներից ու որջերից դուրս վազեցին գազանները, բներից թռան թռչունները, բոլորը զգացին, որ խորքից գալիս է ահա լուսավոր, հզոր, լույս և ջերմություն սփռող մեկը, ու բոլորը բացականչեցին. «Դո՞ւ ես այդ, տեր»։

Աստված օրհնեց ցամաքն ու ջուրը, գազաններին ու թռչուններին և ասաց նրանց.

— Խաղաղությո՞ւն ձեզ։ Ես բերել եմ ձեզ գարուն, ջերմություն և լույս։ Ես կազատեմ գետերը սառցի կապանքներից, դաշտը կանաչով կզուգեմ, անտառը երգերով ու բուրմունքներով կլցնեմ։ Ես կկերակրեմ ու կհագեցնեմ թռչուններին ու գազաններին և բնությունը ցնծությամբ կլցնեմ։ Թող նրա օրենքները թեթև լինեն ձեզ համար, թող նա ամեն մի շյուղի, ամեն մի հազիվ նկատելի միջատի համար սահմաններ գծի, որոնց մեջ նրանք հավատարիմ մնան իրենց բնատուր կոչմանը։ Դուք անդատելի եք, որովհետև դուք կատարում եք այն, ինչ տված է ձեզ դարեր ի վեր։ Մարդն անվերջ կռիվ է մղում բնության դեմ, թափանցելով նրա գաղտնիքների խորքը, չնախատեսելով իր աշխատանքի վերջը։ Նրան անհրաժեշտ են այդ գաղտնիքները, որովհետև դրանք նրա բարեկեցության և հառաջադիմության անխուսափելի պայմանն են հանդիսանում։ Բայց բնությունը գոհանում է ինքն իրենով, և դրա մեջ է նրա առավելությունը։ Հոգ չէ, որ մարդը փոքր առ փոքր թափանցում է նրա խոր-

քերը. նա նվաճում է միայն հյուլեներ, իսկ բնությունը նրա հանդեպ շարունակում է մնալ իր նախնական անմատչելիությամբ և ճնշում է նրան իր հզորությամբ։ Խաղաղությո՞ւն ձեզ, դաշտեր ու անտառներ, գազաններ ու փետրավորներ, և թող չերմանեն ու կենդանություն ներշնչեն ձեզ իմ հարության հաճագայթները։

Օրհնելով բնությունը, հարուցյալը դարձավ մարդկանց։ Առաջինը նրա դեմ ելան արտասվող, աշխատանքի բեռան տակ ճնշված ու թշվառության ճիրաններում խորտակված մարդիկ։ Եվ երբ նա ասաց. «Խաղաղությո՞ւն ձեզ»,— նրանք լցրին օդը հեծեծանքներով և երեսնիվայր ընկան, լռելյայն փրկություն հայցելով։

Եվ հարուցյալի սիրտը կրկին մթագնեց այն մեծ և մահացու վշտով, որով լցված էր նա Գեթսեմանի պարտեզում՝ իրեն պիտակված մրոտն ըմպելիս։ Բազմությունը, այդ բազմությունը, որ երեսնիվայր ընկել էր նրա առաջ, որում էր կանգնած նրա մեծ հանուն նրա. նրանք առաջինն էին, որ ունկնդրեցին նրա խոսքը և հավիտենապես գրոշմեցին նրան իրենց սրտերում։ Բոլորին տխսալ նա Գեթսեմանի բարձունքից, ինչպես նրանք, գերության շղթաներով կապկապված այս ու այն կողմ էին նետվում հեռվում։ Եվ օրհնեց նա նրանց բոլորին, իր խաչը կրելով ու բոլորին ապատություն խոստացավ։ Եվ նրանք բոլորն այն օրվանից փափագում են նրան ու նրան են ձգում։ Բոլորն անկեղծ հավատով նրան են տարածում իրենց ձեռքը. «Դո՞ւ ես, արդյոք, տեր»։

— Այո, ես եմ,— ասաց նա նրանց։— Ես խորտակեցի մահվան կապանքները, որպեսզի ձեզ մոտ դամ, իմ հավատարիմ ծառաներ, իմ թանկագին տառապյալներ։ Ես մշտապես և ամեն տեղ ձեզ հետ եմ, և ամեն տեղ, ուր թափված է ձեր արյունը, այնտեղ թափված է նաև իմ արյունը՝ ձեր արյան հետ միասին։ Դուք մաքուր սրտով անկեղծորեն հավատում էիք ինձ, որովհետև իմ քարոզն իր մեջ պարունակում է ճշմարտություն, առանց որի տիեզերքը կործանման շեմարան է և զարհուրելի դժոխք։ Սիրի՛ր աստծուդ և սիրի՛ր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ,— ահա այդ ճշմարտությունն իր ողջ պարզությամբ և անկեղծությամբ։ Եվ նա

առավել մատչելի է ոչ թե աստվածաբաններին ու դպիրներին, այլ հենց ձե՛զ, որ ունեք պարզ ու վշտաբեկ սրտեր։ Դուք հավատում եք այդ ճշմարտությանը և սպասում եք նրա գալստյանը։ Ամառն արեգակի կիզիչ ճառագայթների տակ, արորի մաճը բռնած, դուք ծառայում եք այդ ճշմարտությանը. ձմռան երկար գիշերներին, ծխացող ճրագի աղոտ լույսի տակ, աղքատիկ ընթրիքի ժամանակ դուք սովորեցնում եք այդ ճշմարտությունը ձեր զավակներին։ Որչափ էլ համառոտ է նա ինքնըստինքյան, բայց ձեզ համար նրա մեջ է ամփոփված կյանքի ողջ խորհուրդը և նորանոր զրույցների երբե՛ք չցամաքող աղբյուրը։ Այդ ճշմարտությամբ դուք արթնանում եք առավոտյան, այդ ճշմարտությամբ անկողին եք մտնում քնելու, և այդ իսկ ճշմարտությունն եք բերում դուք իմ տաճարը՝ որպես արցունք ու հառաչանք. որը խնկի բույրից առավել քաղցր բացում է սիրտս։ Իմացած եղեք ուրեմն, թեպետ կանխապես ոչ ոք չի նախատեսում, երբ է հնչելու ձեր ժամը, բայց նա արդեն մոտալուտ է։ Կհնչի այդ ցանկալի ժամը, և կծագի լույսը, որին չի կարող հաղթահարել խավարը։ Եվ դուք կթոթափեք ձեզանից վշտի, ցավի ու կարիքի լուծը, որն ընկճում է ձեզ։ Ճշմարիտ եմ ասում ձեզ, և ինչպես մի ժամանակ Գողգոթայի բարձունքից օրհնեցի ձեզ ձեր հոգիները վաստակելու համար, այնպես էլ այժմ օրհնում եմ ձեզ նոր կյանքի համար՝ լույսի, բարու և ճշմարտության թագավորության մեջ։ Եվ թող չգայթակղվեն ձեր սրտերը նենգավոր խոսքերից և անարատ ու պարզ լինեն նրանք, ինչպես մինչև այսօր, և խոսքը իմ թող լինի ճշմարիտ։ Խաղաղությո՛ւն ձեզ։

Հարուցյալն առաջ անցավ և իր ճանապարհին հանդիպեց տրիշ մարդկանց։ Այդտեղ կային և՛ հարուստներ, և՛ վաշխառուներ, և՛ դաժան իշխանավորներ, և՛ ավազակներ, և՛ մարդասպաններ, և՛ կեղծավորներ, և՛ կեղծ բարեպաշտներ, և՛ անիրավ դատավորներ։ Նրանք բոլորը քայլում էին ապականությամբ լցված սրտերով և ուրախ խոսակցում էին, դիմավորելու ոչ թե հարությանը, այլ հառաջիկա տոնական խրախճանքին։ Բայց նրանք էլ կանգ առան շփոթված՝ զգալով հարուցյալի մերձենալը։

Նա նույնպես կանգ առավ նրանց դիմաց և ասաց.

— Դուք ձեր դարի զավակներն եք և ձեր դարի ոգով եք առաջնորդվում։ Շահասիրություն և իշխանասիրություն — ահա ձեր գործերի շարժառիթները։ Ձեր կյանքի ողջ բովանդակությունը չարությամբ է լցված, բայց դուք այնպես հեշտ եք կրում չարության լուծը, որ ձեր խղճի ոչ մի մասնիկը չի սարսռում այն ապագայի հանդեպ, որը պատրաստում է ձեզ այդ լուծը։ Ձեզ թվում է, որ ձեր շրջապատում եղած ամենը բան կոչված է ծառայելու ձեզ։ Բայց տիեզերքին տեր եք դարձել դուք ո՛չ այն պատճառով, որ հզոր եք դուք ինքնին, այլ այն պատճառով, որ դուք այդ հզորությունը ժառանգել եք ձեր նախնիներից։ Այն ժամանակից սկսած դուք պաշտպանված եք ըստ ամենայնի, և աշխարհի հզորները ձեզ համարում են մշտնջենական։ Այն ժամանակվանից դուք հրով ու սրով ընթանում եք առաջ ու առաջ, դուք գողանում և սպանում եք, անպատիժ կերպով պարսավելով աստվածային և մարդկային օրենքները, և պարծենում եք, որ դա ի սկզբանե անտի ձեր ժառանգած իրավունքն է։ Բայց ասում եմ ձեզ, կգա ժամանակ,— և հեռու չէ այն,— երբ ձեր երազները փոշի կդառնան։ Թույլերը նույնպես կգիտակցեն իրենց ուժը, իսկ դուք կզգաք ձեր ոչնչությունն այդ ուժի հանդեպ։ Նախատեսե՞լ եք արդյոք դուք երբևիցե այդ ահեղ ուժը, շփոթե՞լ է արդյոք ձեզ այդ նախատեսությունը ձեր և ձեր որդիների ապագայի նկատմամբ։

Մեղավորները ոչ մի պատասխան տալ չկարողացան այդ հարցին։ Նրանք լուռ էին։ Կանգնել էին հայացքները խոնարհած, ասես սպասելով առավել մեծ դատաստաններ լսելու։ Այդ ժամանակ հարուցյալը շարունակեց.

— Բայց հանուն իմ հարության, ես ձեր առաջ ես բաց եմ անում փրկության հանապարհը։ Այդ ճանապարհը ձեր սեփական խղճի դատաստանն է։ Նա բաց կանի ձեր առաջ ձեր անցյալն իր ողջ մերկությամբ, նա դուրս կկանչի ձեր շնորհիվ կործանվածների ստվերները և պահապան կկանգնեցնի ձեր սնարի մոտ։ Ատամների կրճտոցով կլցվի ձեր մատունը. կանայք չեն հանաչի իրենց ամուսիններին, զավակները՝ հայրերին։ Բայց երբ ձեր սրտերը կլցաքաղեն վշտից

ու տատապանքից, երբ ձեր խիղճը մինչև շուրթերը կլցվի բաժակի նման, անկարող այլևս տեղավորելու իր մեջ լցված կսկիծը, այն ժամանակ կործանվածների ստվերները կհաղորդվեն ձեզ հետ և փրկության ճանապարհը բաց կանեն ձեզ համար։ Եվ չեն լինի այն ժամանակ ո՛չ ավազակներ, ո՛չ մարդասպաններ, ո՛չ կաշառակերներ, ո՛չ կեղծ բարեպաշտներ, ո՛չ անիրավ իշխաններ, և բոլորը միանման, ընդհանուր սեղանի շուրջը բոլորած, կհրճվեն իմ տաճարում։ Գնացեք ուրեմն և իմացեք, որ ճշմարիտ եմ ասում ձեզ։

Այդ իսկ ըստեղին արևելքը շառագունեց, և անտառի նոսրացող մթնշաղի մեջ երևաց մարդկային այլանդակ մի դիակ, որ կաղամախուց կախված, ճոճվում էր։ Կախվածի գլուխը, որ համարյա պոկվել էր մարմնից, կախ էր ընկել ցած. ագռավներն արդեն փորել էին նրա աչքերն ու կտցահարել էին այտերը։ Մարմինը տեղ-տեղ մերկ էր և ժահրոտ վերքերով ծածկված, բամին տարուբերում էր թևերը։ Գիշատիչ թռչունների երամը ճախրում էր մարմնի շուրջ, իսկ ավելի համարձակներն անվախ շարունակում էին քայքայման գործը։

Դա մատնիչի մարմինն էր, որն ինքն իր դատաստանն էր արել։

Բոլորը սարսափով ու զզվանքով երես դարձրին այդ տեսարանից. հարուցյալի հայացքը բռնկվեց բարկությամբ։

— Օ՜, մատնիչ,— ասաց նա,— դու կարծում ես, որ ազատ մահով ազատվե՞լ ես քեզ տանջող դավաճանությունից. դու շուտ գիտակցեցիր քո անարգանքը և շտապեցիր հաշիվդ փակել ամոթալի կյանքիդ հետ։ Ոճրագործությունն այնչափ ակներև դարձավ քեզ համար, որ դու սոսկումով տեղի տվեցիր ընդհանուր անարգանքի հանդեպ և հոգու կործանումը գերադասեցիր։ «Մի ակնթարթ,— ասացիր դու քեզ,— և իմ հոգին կխորասուզվի անթափանց լավարի գիրկը, իսկ սիրտս կդադարի խղճի խայթին մատչելի լինելուց»։ Բայց թո՛ղ չլինի այդպես։ Իջիր ծառից, մատնիչ, և թող վերադառնան քեզ քո փորված աչքերը, և ծածկվեն ժահրոտ վերքերը դ և վերականգնվի նախատական քո կերպարանքն այնպես, ինչպես որ էր այն ըստեղին, երբ դու համբուրում էիր նրան, որին մատնում էիր։ Ապրի՛ր։

Այս խոսքի վրա, բոլորի աչքի առաջ մատնիչն իջավ ծառից և փռվեց գետնին, հարուցյալի առաջ, աղերսելով մահը վերադարձնել իրեն։

— Ես ամենքին մատնանշեցի փրկության ճանապարհը,— շարունակեց հարուցյալը,— բայց քեզ համար, մատնիչ, փրկության ճանապարհը փակված է առհավետ։ Դու նզովված ես աստծուց և մարդկանցից, նզովված ես հավիտյանս հավիտենից։ Դու չես սպանել ընկերոջդ, որը քո առաջ բաց էր արել իր հոգին, այլ՝ հանկարծակիի բերելով նրան, մատնել ես մահվան ու անարգանքի։ Դրա համար ես քեզ դատապարտում եմ կենդանության։ Դու կթափառես քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ և ոչ մի տեղ օթևան չես գտնի քեզ պատսպարող։ Դու կբախես դռները, և ոչ ոք բաց չի անի, հաց կաղերսես, և քեզ քար կտան, դու կծարավես, և քեզ քո մատնածի արյունով լցված բաժակը կմատուցեն։ Դու կարտասվես, և քո արցունքները հրեղեն հեղեղ կդառնան ու կալրեն քո այտերը և խոցերով կծածկվեն նրանք։ Քարերը, որոնց վրայով կքայլես դու, կաղաղակեն. «մատնի՛չ, անիծյա՛լ լինես»։ Մարդիկ հրապարակներում խույս կտան քեզանից, և բոլորի դեմքերին դու կկարդաս. «մատնի՛չ, անիծյա՛լ լինես»։ Դու մահ կփնտրես և՛ ցամաքի, և ջրերի վրա, և ամեն տեղ մահը երես կդարձնի քեզանից և՛ կբացականչի. «մատնի՛չ, անիծյա՛լ լինես»։ Ա՛յդ չէ դեռ բոլորը. որոշ ժամանակ բախտը կխղճահարվի քեզ, դու բարեկամ կունենաս և դմատնես նրան, ու այդ բարեկամը զնդանի խորքից կաղաղակի. «մատնի՛չ, անիծյա՛լ լինես»։ Դու ընդունակ կլինես բարիք գործելու, բայց այդ բարիքը կթունավորի քո բարեբարածների հոգիները։ «Անիծյա՛լ լինես, մատնիչ,— կաղաղակեն նրանք,— անիծյա՛լ լինես դու և անիծյալ լինեն քո բոլոր գործերը»։ Ու կթափառես դու դարեդար՝ անխոնջ որդը սրտումդ, խորտակված հոգով։ Ապրի՛ր, անիծյալ, և գալիք սերունդների համար եղիր որպես վկայություն այն անվերջ դատապարտության, որն սպասում է մատնիչին։

Վե՛ր կաց, գավազանի փոխարեն վերցրու ծառի այն ճյուղը, որից կախվելով մահ էիր ակնկալում, և գնա։

Եվ հազիվ էր օդում մարել հարուցյալի խոսքը, որ մատնիչը բարձրացավ գետնից, վերցրեց իր գավազանը, և շուտով նրա քայլերը լռեցին այն անընդգրկելի, անհուն, խորհրդավոր հեռավորության մեջ, ուր նրան կյանք էր սպասում դարեդար։ Ու շրջում է նա մինչև այսօր երկրի վրա, խռովություն, դավաճանություն և երկպառակություն սերմանելով...

ԽՆԴՐԱՐԿՈՒ ԱԳՌԱՎԸ

(Հեքիաթ)

Մեր ագռավի սիրտը ցավից մորմոքում էր։ Ոչնչացնում են ագռավների ցեղը, ցանկացողը խփում է նրանց։ Գոնե մի օգուտ լիներ մեջտեղը, թե չէ՝ հենց քեֆի համար։ Ագռավներն իրենք էլ թուլամորթ են դառնում։ Առաջվա մարգարեական կոկոցի հիշատակն էլ չի մնացել. խմբով հավաքվում են կեչու վրա և զուր տեղը ձայն տալիս, թե. «ահա մենք այստեղ ենք»։ Բնականաբար, իսկույն ևեթ բո՛ւհ — և երամից մեկ-երկու տասնյակ չկա։ Առաջվա առատ կերակուրն էլ չկա։ Չորս կողմն անտառները կոտորել են, ճահիճները չորացրել են, գազաններին փախցրել, ոչ մի կերպ հնարավոր չէ ազնիվ միջոցներով կերակրվել։ Ագռավներն սկսել են թրև գալ բանջարանոցներում, այգիներում, գոմերի բակերում։ Իսկ դրա համար — կրկին բո՛ւհ,— և կրկին երամից մեկ կամ երկու տասնյակ չկա։ Դեռ լավ է, որ ագռավները շուտ են բազմանում, թե չէ ո՞վ պիտի բազեի, ճուռակի և արծվի տուրքերը վճարեր։

Սկսում է ծերունին իր երիտասարդ եղբայրներին խրատել, թե. «զուր տեղը մի կոկռացեք, մի թռեք ուրիշի բանջարանոցները», բայց միշտ նույն պատասխանն է լսում. «Պառավ ծերուկ, նոր բաներից ոչինչ չես հասկանում։ Հիմի այնպիսի ժամանակ է, որ գողություն չանել չի կարելի։ Գիտությունն էլ ասում է, եթե ուտելու բան չունես, մի կերպ ճար արա քեզ։ Հիմի բոլորն էլ այդպես են ապրում, աշխատանք չեն անում, այլ ճար են անում։ Ի՞նչ է, պիտի կորչե՞նք մենք։ Մենք դեռ էլի մեկ-մեկ լույսը դեռ չբացված արթնանում ենք, դուրս ենք գալիս բներից ու ամբողջ անտառը տակնուվրա ենք անում, քրքրում ենք, բայց կոտրած հատիկ էլ չենք գտնում։ Ո՛չ պտուղ, ո՛չ մանրիկ թռչնակ, ո՛չ սատկած գազան։ Որդն ի՞նչ է, որդն էլ թաղվել է հողի տակ»։

Լսում է ծեր ագռավն այս խոսքերն ու խոր մտածմունքների մեջ է ընկնում։ Հիշում է անցյալում եղած դժվար ժամանակները։ Պատահում էր, որ տարիներ շարունակ ագռավները սովի էին մատնվում, անթիվ-անհամար ագռավ էր ոչնչանում։ Բայց այն ժամանակ կարգ էր, որ ավելի լավ է սեփական մագիլներով ինքը իր կուրծքը պատառոտի, քան ուրիշի պատառին աչք դնի։ Սակայն հենց այն ժամանակ նկատելի էր, որ ագռավները երկար չեն կարող դիմանալ նկատելի էր, որ ագռավները երկար չեն կարող դիմանալ այդ շկոլային։ Տեսնել, ինչպես են ուրիշներն ապրում ուրախ-զվարթ, իսկ ինքը կամավորապես մեռնի քաղցից — հենց միմիայն դրանից ում սիրտն ասես կտնքա։

Գիտությունն էլ, ի դեպ, օգնության հասավ՝ կտցիր ինչ կարող ես և որտեղ կարող ես։ Հաջողվեց լցնել փուչիկդ — թռիր քեզ համար ազատ և ուրախ, չհաջողվեց՝ խրտվիլակի փոխարեն կախվիր բանջարանոցում։ Կոիվ է։

Երբ ծերունի հայրը իրեն, որ դեռ նոր էր փետրավորվել, հեռու-հեռու երկրներից այստեղ բերեց, այն ժամանակ արձակ ու ազատ էին այս կողմերը։ Անտառ ու ջուր — այնչափ, որ հայացքն ընդգրկել չէր կարողանում։ Անտառում ինչքան ուզես ամեն տեսակ պտուղ, ամեն տեսակ գազան ու թռչուն կար, ջրում ձկան ձեռքից տեղ ու դադար չկար։ Այն ժամանակ էլ իրենց կառավարիչը ճուռակն էր, ինչպես այժմ, բայց այն ժամանակվա ճուռակն ինքն էլ կուշտ էր և պարզասիրտ, այնչափ պարզասիրտ, որ մինչև օրս էլ նրա պարզասրտության մասին անեկդոտներ են պատմում։ Սիրում էր, ճշմարիտ է, երիտասարդ ագռավներ ճաշակել, բայց այդ դեպքում էլ արդարությունը չէր մոռանում. այսօր մի բնից էր տանում, վաղը մեկ ուրիշ բնից, իսկ երբ տեսնում էր, որ

բունը աղքատ է ու քայքայված, առանց ձեռք տալու թռչում-գնում էր։ Տուրքերն էլ այն ժամանակ ծանր չէին. մի-մի ձու ամեն բնից և մի-մի փետուր ամեն թևից, ու ամեն տասը բնից մի ագռավաճուտ արծվին պարգև։ Տուրքդ տվեցիր, քնիր քեզ համար հանգիստ, երկու ականչդ խուփ։

Բայց, քանի գնաց, այնքան ավելի ու ավելի փոխվեց ամեն բան։ Հավանեց մարդն այդ ազատ-արձակ տեղերն ու առաջին գործը եղավ այն, որ կացինը բանի դրեց։ Անտառները նոսրացան, ճահիճները չորացան, գետը ծանծաղեց։ Սկզբում գետի ափին երևացին ագարակներ, հետո գյուղեր, ավաններ, կալվածատերերի տնտեսություններ։ Կացնի հարվածները խուլ արձագանք էին առնում անտառների թավուտներում, խանգարելով գազանների ու թռչունների կյանքի սովորական ընթացքը։ Ագռավների ցեղի ավագներն այն ժամանակ արդեն գուշակում էին, որ ինչ-որ չար բան է ըսպառնում իրենց, սակայն երիտասարդ ագռավներն ուրախ կոկոցով թռչկոտում էին մարդկային բնակարանների շուրջը, կարծես ողջունելով եկվորներին։ Նախահայրերի խիստ պատգամները ձանձրույթ էին պատճառում երիտասարդներին, անտառի թավուտները զզվեցրել էին նրանց։ Պահանջվում էր ինչ-որ նոր, օտարոտի, դեռևս անծանոթ մի բան։ Ագռավները բաժանվեցին պարտիաների, սկսվեց վիճաբանություններ, երկպառակություն, անհամերաշխություն...

Այդ փոփոխությունների հետ միաժամանակ թռչնական վերին շրջաններում ևս փոփոխություններ տեղի ունեցան։ Մեր ճուռակն իր կոչման բարձրության վրա կանգնած դուրս չեկավ։ Նա կարող էր կառավարել միայն նահապետական կարգերում, բայց երբ հարաբերությունները բարդացան, երբ յուրաքանչյուր քայլափոխում ագռավների գոյության մեջ նոր տարրեր սպրդեցին, այն ժամանակ նա վերջնականապես զրկվեց վարչական հոտառությունից։ Գլխավոր կառավարիչները նրան հնացած թասակ էին անվանում, ագռավներն առարկում էին նրա իշխանության դեմ և, առանց քաշվելու, ամեն տեսակ հիմարություններ էին կոկոում նրա ականջին։ Իսկ նա, փոխանակ չարիքը միանգամից արմատախիլ անելու, միայն ներողամտաբար աչքերն էր ճպճպացնում

և կատակով ասում. «Ա՜յ, երբ որ ռեֆորմը կգա, այն ժամանակ կիմանաք բանի էությունը»։ Վերջապես եկավ նաև սպասվող ռեֆորմը։ Ծերունուն արխիվ հանձնեցին, իսկ նրա տեղը կառավարիչ ուղարկեցին մի չափազանց երիտասարդ ճուռակի, իսկ՝ առավել լավ հսկողության համար, օգնական նշանակեցին բազեին։

Թռան-եկան նոր կառավարիչները և ագռավների ցեղին անողորմ խոսք ասացին. «Ես ձեզ մի հայտարարի կբերեմ»,— գոչեց ճուռակը, իսկ բազեն ավելացրեց. «Ես նույնպես»։ Այդ ասելով, հայտարարեցին, որ այսուհետև տուրքերն ավելանում են նախկինի համեմատությամբ երեք անգամ, հարկաթերթեր բաժանեցին ու թռան-գնացին։

Սկսվեց վերջնական քայքայումը։ Ագռավները տրտնջում էին. «Խիստ տուրքեր են նշանակված, բայց նոր հողամասեր չեն տրամադրված»,— հնչում էր անտառում, բայց ոչ ճուռակը, ոչ բազեն ուշադրության չէին առնում ագռավների բողոքը և փալկոններին ուղարկում էին որսալու խռովարարներին, որոնք զուր տեղը փուչ խոսքեր են տարածում ժողովրդի մեջ։ Շատ բներ ավերվեցին այն ժամանակ, շատ ագռավներ գերեվարվեցին և գայլերի ու աղվեսների կերակուր դարձան։ Կարծում էին, որ սարսափահար եղած ագռավները անհապաղ իրենց տուրքերը կվճարեն, բայց նրանք վախից միայն զանազան կողմեր էին նետվում ու կոկում. «Թեկուզ սպանեք, թեկուզ հրացանազարկ անեք, բայց տուրքերը վճարել չենք կարող»։

Մինչև այսօր էլ այդպես շարունակվում է. ագռավները քայքայվում են, բայց գանձարանը չի լցվում։ Ինչ էլ որ բնկնում է ագռավի ճանկը, փալկոնը ճանապարհին խլում է։ Մի խոսքով, դրանից վատ կյանք լինել չի կարող։ Մեռք արեցին ագռավները նոր տեղեր որոնել և հետախույզներ ուղարկեցին նախօրոք, բայց նրանք թռչելը թռան, սակայն ետ չվերադարձան։ Գուցե մոլորվեցին, գուցե ճանապարհին փալկոնները խեղդեցին, բայց գուցեև իրենք իրենց քաղցից ոչնչացան։ Բայց և կատա՞կ է ասել, տարիներ շարունակ սովոր վայրերից, տուն ու տեղից անծանոթ երկրներ թռչել։ Այժմ այլևս ազատ տեղեր չկան, մարդը ոտք է դրել ամեն տեղ։

Մարդու համար էլ արդեն տեղը նեղ է։ Կացինն առած առաջ է ընթանում. տնքում են անտառները. փախուստ են տալիս գազանները, իսկ մարդն առավոտից մինչև իրիկուն կոճղեր է քանդում-հանում, հող է բաց անում, խրճիթներ է շինում, իսկ գիշերը հյուղակում դողում է ցրտից ու քաղցից, սպասելով, երբ պետք է այդ բոլոր խառնաշփոթությունը կարգի ընկնի։

Մտածեց, մտածեց ծեր ագռավը, վերջապես եկավ այն եզրակացության, որ պետք է թռչել և ամբողջ ճշմարտությունը հրապարակով հայտարարել։ Միայն թե ծեր է ինքը և ուժասպառ, կարո՞ղ է արդյոք տեղ հասնել։ Այնքան էլ մոտ ճանապարհ չի։ Նախ հարկավոր է ճուռակին ներկայանալ, հետո բազեին և, վերջապես, ուրուրին, որն այդ ժամանակ ագռավների ցեղի վրա որպես շրջանի կառավարիչ էր նշանակվել։

Թռչուններն էլ մարդկանց նման են, ամեն տեղ ատյաններ կան, ամեն տեղ հարցնում են, արդյոք եղե՞լ ես ճուռակի մոտ, եղե՞լ ես բազեի մոտ, իսկ եթե չես եղել, մեկ էլ տեսար՝ խռովարարի համբավ կվաստակես։

Վերջապես, սակայն, վաղ առավոտյան դուրս եկավ բնից ու թռավ։ Տեսնում է, բարձր, շատ բարձր սոճու ճյուղին նստել է արդեն կուշտ ճուռակը և մագիլներով կտուցն է մաքրում։

— Բարև, ծերուկ,— ողջունեց նրան ճուռակը բարեհամբույր,— ինչո՞ւ ես շնորհ բերել։

— Եկել եմ քո մեծությանը ճշմարտությունը հայտարարելու,— հրատոչոր կոկռաց ծեր ագռավը,— կործանվում է ագռավների ցեղը, կործանվո՞ւմ է։ Մարդը ոչնչացնում է նրան, անգութ տուրքերը քայքայում են, փալկոնները նեղացնում են... Կոտորվում է ագռավների ցեղը, իսկ նրանք, ովքեր էլ կենդանի են մնացել, ուտելու ոչինչ չունեն։

— Ահա՞ թե ինչ։ Արդյոք ձեր անջանասիրությունից չէ՞, որ բոլոր այդ փորձանքները ձեր գլխին են թափվել։

— Դու ինքդ գիտես, որ մենք անջանասեր չենք։ Առավոտից մինչև իրիկուն խուզարկում ենք և ուտելիք ենք փընտրում։ Ապրում ենք աշխատանքով, ինչպես վայել է ապրել

ազնիվ ագռավին, միայն թե ազնիվ կերպով որևէ բան ձեռք բերել այլևս հնարավոր չէ։

Ճուռակը մի րոպե մտածմունքի մեջ ընկավ, կարծես չէր կարողանում իսկական խոսքն ասել, բայց, վերջապես, ասաց.

— Մի կերպ յոլա գնացեք։

Սակայն այդ որոշումը չբավարարեց, այլ ավելի ևս հուզեց ագռավին։

— Ես գիտեմ, որ այժմ բոլորը յոլա գնալով են ապրում,— տաքացած պատասխանեց նա,— բայց ագռավների ցեղն այդ բանին ընդունակ չէ։ Ուրիշները միլիոններ են գողանում, և ոչինչ, բայց երբ ագռավն է մի կոպեկ գողանում,— դրա համար նրան մահվան են դատապարտում։ Հապա մի մտածիր, մի՞թե շարագործություն չէ մի կոպեկի համար սպանելը։ Իսկ դու դեռ սովորեցնում ես, թե մի կերպ յոլա գնացեք։ Քեզ մեզ վրա կառավարիչ են ուղարկել, որպեսզի պաշտպանես մեզ նեղություն պատճառողներից, բայց ինքդ առաջին ավերողը և ճնշողն ես։ Մինչև ե՞րբ պիտի մենք համբերենք։ Եթե մենք...

Ագռավը չշարունակեց և վախեցավ. ըստ երևույթին, ճշմարտությունը հայտարարելը հեշտ չէր։

Բայց ճուռակը, ինչպես ասվեց, կուշտ էր և անկոչ հյուրին բարեհոգությամբ էր նայում։

— Գիտեմ, մի շարունակիր,— ասաց նա,— վաղուց է մենք այդ երգը լսում ենք, բայց դեռ աստված ողորմած է... Սակայն դու, այնուամենայնիվ, մի մոռացիր, որ եկել ես ինձ ճշմարտությունը հայտարարելու, բայց հենց առաջին իսկ խոսքից կարկամեցիր... Ինչ որ ուզում էիր ասել, բո՞լորն ասացիր։

— Առայժմ բոլորը,— պատասխանեց ագռավը, շարունակելով երկչոտել։

— Դե լսիր՝ ինչ եմ ասում քեզ. քո ճշմարտությունը վաղուց ի վեր հայտնի է բոլորին, ոչ միայն ձեզ, ագռավներիդ, այլև փալկոններին, ճուռակներին և ուրուրներին։ Միայն թե ներկա ժամանակ ճշմարտությունը ձեռնտու բան չէ, ուստի որքան էլ կուզես հայտարարիր նրա մասին, ուզում ես բոլոր ճանապարհների վրա աղաղակիր, դրանից ոչինչ դուրս

Չի գա։ Իսկ երբ կգա այն ժամանակը, որ նա ինքն իրեն հայտարարվի, այդ մասին առայժմ ոչ ոք չգիտե։ Հասկացա՞ր։

— Մի բան հասկացա, որ ագռավների ցեղի վերջը հասել է,— դառնասիրտ պատասխանեց ագռավը։

— Դե որ չհասկացար, եկ խոսենք այդ մասին։ Դու ասում ես, որ մարդը ձեզ ոչնչացնում է, բայց մի՞թե մենք, թռչուններս, կարող ենք մարդուն հակառակ գնալ։ Մարդը վառոդ է հնարել, իսկ մենք դրան ինչո՞վ կարող ենք պատասխանել։ Վառոդ է հնարել մարդը և կրակում է մեզ վրա, ինչ որ խելքին փչում է, այն էլ անում է մեր նկատմամբ։ Մենք նման ենք գյուղացիներին, ամեն կողմից նրանց վրա ամենքը կրակում են։ Մեկ տեսար երկաթուղին է կրակում նրանց վրա, մեկ՝ մի նոր մեքենա, մեկ բերք չի լինում, մեկ նոր հարկեր են դրվում։ Իսկ նրանք մի կերպ տակից դուրս են պրծնում։ Ինչպե՞ս պատահեց, որ Գուբոշլեպովը երկաթուղի անցկացնելու իրավունք ստացավ, իսկ նրանց գրպանից տասական կոպեկ պակասեց,— մի՞թե խավար մարդը կարող է դա ըմբռնել։ Իսկ հարցը շատ պարզ է. Գուբոշլեպովը վառոդ է հնարել, իսկ գյուղացիները, ճիճուների նման, միայն ադրի մեջ սողալ գիտեն։ Իսկ եթե դու ճիճու ես, նշանակում է ապրիր այնպես, ինչպես ճիճուն պիտի ապրի։ Ճիճուներին նույնիսկ դուք, ագռավներդ, երես չեք տալիս։ Եթե, օրինակ, ճիճուներն աղմուկ բարձրացնեն ձեր դեմ, առաջինը դուք ինքներդ չե՞ք զարմանա, թե, տեսեք, սողացող ճիճուներ են, բայց նրանք էլ են խոսում։ Այդպես է, ծերունի։ Ով հաղթող է, նա էլ իրավացի է։ Այժմ հասկացա՞ր։

— Նշանակում է, պետք է ոչնչանա՞նք։ Ա՜խ, ինչ անգութ խոսք ասացիր դու,— վշտացավ ագռավը։

— Անգութ է իմ խոսքը, թե անգութ չէ, բանն այդ չէ, այլ այն, որ ես էլ ճշմարտությունը քեզանից չթաքցրի։ Ո՛չ այն ճշմարտությունը, որ դու ես որոնում, այլ այն, որը ներկա ժամանակ ամեն մեկը պետք է հաշվի առնի։ Բայց շարունակենք խոսակցությունը։ Դու ասում ես, որ փալկոնները ձեր ձեռքից խլում են ձեր կերակուրը, որ ես ինքս ավերում եմ ձեր բները, որ մենք ձեր պաշտպանները չենք, այլ կործանիչներն ենք։ Դուք ուտել եք ուզում, մենք էլ ենք ուտել

ուզում։ Եթե դուք ուժեղ լինեիք, դուք մեզ կուտեիք, մենք ենք ուժեղ, մենք ենք ձեզ ուտում։ Չէ՞ որ սա էլ ճշմարտություն է։ Դու ինձ քո ճշմարտությունը հայտարարեցիր, իսկ ես իմը հայտնեցի, միայն թե իմ ճշմարտությունը կատարվում է աչքի առաջ, իսկ քոնը թռչում է ամպերից վեր։ Հասկացա՞ր։

— Կորչելու ենք, կորչելու ենք,— շարունակում էր կրկնել ծեր ագռավը, համարյա չգիտակցելով ճուտակի խոսքերի իսկական նշանակությունը, բայց բնազդաբար զգալով, որ այդ խոսքերի մեջ ինչ-որ անլուր-անողորմ բան կա թաքնված։

Ճուտակը ուշի-ուշով դիտեց խնդրարկուին գլխից մինչև պոչը և որովհետև կուշտ էր, ուզեց ծաղրել ծերունուն։

— Իսկ ուզո՞ւմ ես, ես քեզ ուտեմ,— ասաց նա, բայց տեսնելով, որ ագռավը բնազդորեն թռիչք գործեց դեպի ետ, շարունակեց։— Գնա՜ դու էլ, նիհար ես ու ծեր, ի՞նչ ուտելու բան ես։ Հապա, բաճկոնդ բաց արա։

Ագռավը տարածեց թևերը և ինքն էլ զարմացավ. ոսկոր էր ու կաշի, ոչ աղվամազ կար, ոչ փետուր, այնպես որ, քաղցած գայլն էլ աչք չէր դնի այդպիսի թռչունին։

— Ա՜խ, տեսնում ես ինչ ես դարձել։ Եվ բոլորը նրանից է, որ արդարության մասին ես մտածում։ Եթե դու ագռավի նման առանց մտքերի ապրեիր, այդպե՞ս կլիներիր հիմա։ Սակայն ժամ է վերջ տալու։ Գանգատվում ես նաև, որ ագռավներից անխիղճ հարկեր են վերցնում,— այդ էլ իրավ է։ Բայց միտք արա, հապա ումի՞ց վերցնել. ճնճղուկները, երաշտահավերը, սարյակները, սերինոսները շա՞տ բան կարող են տալ։ Աքարները, փայտմորեկները, արոսները, փայտփորիկները, կկուները,— ամեն մեկն ապրում է իր համար, նրանց ցերեկը ճրագով էլ գտնել չի լինի։ Միայն ագռավներն են ապրում համայնքով, ինչպես իսկական գյուղացիներ, և շարունակաբար ազդարարում են իրենց մասին։ Էլ զարմանալու ի՞նչ կա, որ նրանք ընկել են մարդահամարի տոմարների մեջ։ Եվ երբ ընկել ես մարդահամարի տոմարների մեջ, ուրեմն դիմացիր։ Իսկ եթե վերջին ժամանակ հարկերն իրոք ծանրացել են առաջվանից, նշանակում է,

այդպես էլ հարկավոր է։ Պահանջը շատ է, ուրեմն հարկերն էլ շատ են լինելու. ում ուզում ես հարցրու այդ մասին։ Այսպես ահա, ծերունի։ Դու ճշմարտությունն ասացիր, ես էլ ճշմարտությունն ասացի. իսկ թե ում ճշմարտությունն է ամուր, դրա պատասխանը տալիս է ագռավների կյանքը։ Դե, այժմ թռիր-գնա, իսկ ես քնել եմ ուզում։

Սակայն ագռավը տուն չվերադարձավ, այլ թռիչքն ուղղեց բազեի մոտ։

«Ինչ ուզում է լինի,— մտածում էր նա, դժվարությամբ թափահարելով ծերունական թևերը,— բայց ես գործը մինչև վերջ կտանեմ։ Եթե բազեն էլ իմ արդարությունը չընդունի, կթռչեմ նահանգ, իրեն՝ ուրուրի մոտ, բայց արդարությունից հետ չեմ կանգնի»։

Բազեն ապրում էր լեռնային ձորակի խոռոչում, և շատ դժվար էր նրա մոտ գնալը։ Նրա բնակարանի շեմքին նստել էր հերթապահ փալկոնը և ընդունում էր խնդրատուներին։ Այս անգամ հերթապահը բոլոր ագռավներին հայտնի փալկոն Իվան Իվանիչն էր, բազեի սիրելին (լուրեր կային, որ նա նրա ապօրինի զավակն է), որին բազեն հանձնարարում էր ամենակարևոր և գաղտնի գործերը։ Դա քաջ, արտաքինից բարեհոգի, հաճոյական և նույնիսկ պատվական շարժ ու ձևեր ունեցող փալկոն էր։ Դեմ չէր նաև երբեմն կատակաբանել, քեֆ անել որևէ տեղ ամպերից վեր, շատախոս աղչիկների հետ փախչել-քոնել խաղալ, նույնիսկ բարեկամ-ընկերոջը սիրալիրություն անել, բայց այդ ամբողջ բարեհոգությունը շարունակվում էր մինչև այնքան ժամանակ, քանի նա ծառայությունից ազատ էր լինում։ Հենց որ դիմում էր իր պարտականությունների կատարմանը (առանձնապես գաղտնի հանձնարարությունների), ապա ակնթարթապես կերպարանափոխվում էր։ Դառնում էր սառը, բիրտ և խրոխտասրտության աստիճան կատարողական։ Հրամայում են նրան ետևից հասնել — հասնում է, հրամայում են խեղդել — խեղդում է։ Եթե անգամ թռչունը կրկնակի մեծ է և ուժեղ է իրենից, նա այնպես թափով է վրա ընկնում, որ դիմացինը վաղորոք սկսում է աղաղակել ու թպրտալ։ Ընդհանրապես այն թռչունները, որոնք երբևէ ընկել էին նրա

ճանկը, նրա անունը միայն լսելիս սարսափահար էին լինում։

— Քունդ չի՞ տարել, ծերունի,— հեգնական ողջունեց խնդրարկուին Իվան Իվանիչը։

Ձեր ագռավը հասկացավ, որ այստեղ ամեն բան հայտնի է։ Թռչուններն էլ ունեն իրենց լրտեսները, որոնց միջոցով հայտնի է դառնում բնակիչների ոչ միայն գործերը, այլև գաղտնի մտադրությունները։

— Ծերունիների քունն ինչ է որ,— խուսափողական պատասխանեց նա։

— Եկել ես արդարությո՞ւնը հայտնելու,— շարունակեց փալկոնը։— Թեպետ դա քո գործն է։ Զեկուցե՞մ։

— Այո, բարի եղիր։

Իվան Իվանիչն անհայտացավ խոռոչում և մի ժամի չափ մնաց այնտեղ։ Ագռավը սրտի տրոփով սպասում էր նրա վերադարձին։ Վերջապես նա երևաց։

— Հրամայված է ասել քեզ,— ասաց նա,— որ քեզ հետ խոսք ու զրույց սկսելու ժամանակ չկա։ Քո արդարությունը վաղուց անտի հայտնի է բոլորին և, նշանակում է, մի բան կա, որ ինքն իրեն հրապարակ չի գալիս։ Անհանգիստ բնավորություն ունես դու, փուչ խոսքեր ես տարածում ժողովրդի մեջ։ Վաղուց պետք էր դրա համար քեզ ուտել, բայց ձեր ես, նիհար, անուժ։ Հիմի շրջանի կառավարչի մո՞տ ես թռչելու։

— Ոչ, էլ ինչ կարիք կա...— ուզեց թաքցնել ագռավը։

— Մի ժխտիր, ես քեզ լավ եմ հասկանում։ Թռիր միայն թե այնպես չլինի, որ քո արդարության համար աչքերդ կոցահարեն։ Տես, չսխալվես։ Բայց դու, ինչպես երևում է, ճանապարհն էլ չգիտես։ Տեսնո՞ւմ ես այն ամպը։ Այնտեղ, հենց այդ ամպից վերև — այնտեղ է։

Չնայած փալկոնի գուշակությանը, ագռավը որոշեց իր սկսած գործը հասցնել մինչև վերջ։ Երկար ու շրջապտույտ ճանապարհով բարձրանալ սկսեց նա, գիշերելով գազանների լքած բներում ու կերակրվելով լեռնապարերի վրա երբեմն հանդիպած պտուղներով։ Վերջապես նա թաղվեց ամ-

պի գիրկը, և նրա աչքերի առաջ կախարդական պատկեր բացվեց։

Մի քանի միմանց հարևան ձյունապատ լեռնագագաթներ բոցավառվում էին ծագող արեգակի շողերի մեջ։ Հեռվից հեքիաթային դղյակի էր նմանվում, որի ստորոտում անշարժացել էին ամպերը, իսկ վերևում, սանիքի փոխարեն, փռված էր երկնային անծայրածիր լազուրը։

Ուրուրը նստած էր ժայռի վրա, շրջապատված բազմաթիվ այլևայլ թռչուններով։ Աջ կողմը նստած էր սպիտակ բազեն՝ նրա օգնականն ու խորհրդականը, ոտքերի մոտ խավալվում էին ամեն տեսակի հատուկ հանձնարարությունների պաշտոնյաները՝ թութակներ, ուսյալ խածկտիկներ և սարյակներ։ Եռևի կողմից տարմահավերի խումբը զեկուցում էր առավոտյան փոստի մասին, քիչ հեռու, մեկ այլ բարձունքի վրա նիրհում էին բուները, բվեճները և չղջիկները, կազմելով մի տեսակ նահանգային խորհուրդ։ Հեռվում երևում էին անհամար ագռավներ և ագռնեներն ականջների ետև, գրում էին հրամաններ, առաջադրություններ և զեկուցագրեր ու բացականչում. «Թունդ, հատու խնդրագիր, զույգը արժի մի շահի»։

Ուրուրը զառամյալ ծերունի էր և ծերությունից հազիվ էր կտուցը բացուփուփ անում։ Այն րոպեին, երբ ագռավը ծրնկաշոք եկավ նրա ոտքերի մոտ, նա նոր հենց ճաշել էր և կիսաքուն, աչքերը փակած, գլուխն էր օրորում, չնայած խլացուցիչ խոսք ու աղմուկին։ Սակայն խնդրարկուի երևալը թռչունների մեջ որոշ չափով խառնաշփոթություն առաջ բերեց, որի շնորհիվ ուրուրը ցնցվեց։

— Խնդիր ունե՞ս, ծերունի,— հարցրեց նա ագռավին սիրալիր։

— Հեռու-հեռու երկրներից թռել-եկել եմ քո բարձրաստիճանությանը ճշմարտությունը հայտնելու,— սկսեց ագռավը ոգևորված, բայց բազեն անմիջապես կանգնեցրեց։

— Ճոռոմաբանություն մի արա,— սառնությամբ ընդհատեց նրան վերջինս,— խնդիրդ ասա առանց պաճուճանքների, պարզ ու որոշ, կետ առ կետ։ Ի՞նչ ես ուզում։

Սկսեց ագռավը կետ առ կետ իր խնդիրը հայտնել. սարդը ագռավներին ոչնչացնում է, փալկոնները, ճուռակները, բազեները ճնշում են, անողորմ հարկերը քայքայում են... Եվ ամեն անգամ, երբ նա վերջացնում էր մի կետը, ուրուրն ասում էր.

— Ճշմարի՛տ ես ասում, ծերունի։

Մեր ագռավի սիրտն ուրախությունից թրթռում էր ուրուրի այդ հաստատումով։ «Վերջապես,— մտածում էր նա,— կտեսնեմ ես այդ արդարությունը, որի համար փոքր հասակից տառապում եմ։ Ծառայություն մատուցած կլինեմ իմ ցեղին, նախանձախնդիր կլինեմ նրա համար»։ Եվ որչափ ավելի էր տևում նրա խոսքն, այնչափ ավելի ջերմորեն էր հնչում այն։ Վերջապես նա արտահայտեց այն ամենը, ինչ ուներ սրտում և լռեց։

— Բոլո՞ր ասացիր,— հարցրեց ուրուրը։

— Բոլորը,— պատասխանեց ագռավը։

— Ճուռակի, բազեի մոտ քո խնդրով եղե՞լ ես։

— Եղել եմ նաև նրանց մոտ։

Նա համառոտակի պատմեց ճուռակի հետ ունեցած իր խոսակցությունը, նաև բազեի հետ ունեցած անհաջող տեսակցությունը։

— Ահա թե ինչ կասեմ ես քեզ քո Արդարության մասին,— ասաց ուրուրը։— Երկու հարյուր տարուց ավելի է նստած եմ ես այս ժայռի վրա և թեպետ կողքեհան, բայց և այնպես նայում եմ արեգակին... Բայց Արդարության դեմքին մինչև օրս էլ նայել չեմ կարողացել։

— Բայց ինչո՞ւ,— տարակուսած կոկռաց ագռավը։

— Որովհետև թռչունը չի կարող պարփակել Արդարությունը։ Եթե որևէ մեկն իր մասին մտածում է, որ ինքը Արդարությունը պարփակել է, ուրեմն և պետք է կատարի այնի՛կ մենք, նշանակում է, կատարել չենք կարող, այդ պատճառով էլ նրա վրա աչքի տակով ենք նայում։ Մտածում ենք, թերևս նա մեր կողքով կանցնի-կգնա։

Ուրուրը մի ակնթարթ մտածմունքների մեջ ընկավ ու շարունակեց.

— Ճուռակը քեզ անգութ, բայց իրավացի խոսք է ասել։ Լավ բան է արդարությունը, բայց ամեն ժամանակ և ամեն ոք նրա մասին լսելը հաճելի չէ։ Ոմանց նա կարող է գայթակղեցնել, մյուսներին կարող է թվալ կշտամբանք։ Այնպիսին կա, որ ուրախ կլինի արդարությանը ծառայել, բայց դատարկ ձեռքերով ինչպե՞ս մոտենաս նրան։ Արդարությունը ագռավ չի — նրա պոչից քոնել չի լինի։ Նայիր շուրջդ — ամեն տեղ երկպառակություն, ամեն տեղ վեճ, ոչ ոք չի կարող ճշմարիտ կերպով ասել ո՞ւր և ինչո՞ւ է գնում ինքը... Այդ պատճառով էլ յուրաքանչյուրը հենվում է իր անձնական արդարության վրա։ Բայց կգա ժամանակ, որ յուրաքանչյուր կենդանի աբաբածի համար պարզ կլինեն այն սահմանները, որոնց մեջ պետք է ընթանա իր կյանքը, այն ժամանակ իրենք իրենց կվերանան պառակտումները, և նրա հետ միասին ծխի պես կցրվեն նաև բոլոր «անձնական արդարությունները»։ Հրապարակ կգա իսկական, միասնական և բոլորի համար պարտադիր Արդարությունը, կգա և ամբողջ աշխարհը կլուսավորի։ Եվ կապրենք մենք բոլորս միասնաբար ու սիրով։ Այդպես ահա, ծերունի։ Իսկ առայժմ թռիր խաղաղությամբ և հայտարարիր ագռավների ցեղին, որ ես նրանց վրա վստահ եմ, ինչպես անառիկ լեռան վրա։

ԾՆՆԴՅԱՆ ՀԵՔԻԱԹ

Սքանչելի քարոզ կարդաց այսօր մեր գյուղական քահանան տոնի առթիվ։

«Շատ դարեր առաջ,— ասաց նա,— այս իսկ օրը աշխարհ եկավ Արդարությունը։

«Արդարությունը հավիտենական է։ Նա առաջինը մարդասեր Քրիստոսի հետ նստեց ընդ աջմե հոր, նրա հետ միասին մարմնավորվեց ու վառեց երկրի վրա իր կանթեղը։ Նա կանգնած էր խաչի ստորոտում և Քրիստոսի հետ միատեղ խաչվեց. նա, լուսափայլ հրեշտակի նման, բազմել էր նրա դագաղի մոտ և տեսավ նրա հարությունը։ Եվ երբ մարդասերը երկինք ամբարձավ, ապա Արդարությունը թողեց աշխարհում՝ որպես կենդանի վկա դեպի մարդկային ցեղն ունեցած իր քարյացակամության։

«Այն օրվանից սկսած ամբողջ աշխարհում չկա մի անկյուն, ուր թափանցած չլինի Արդարությունը և իրենով լցված չլինի այն։ Արդարությունը դաստիարակում է մեր խիղճը, ջերմացնում է մեր սրտերը, աշխուժացնում է մեր աշխատանքը, մատնացույց է անում այն նպատակը, որին ուղղված պիտի լինի մեր կյանքը։ Վշտացած սրտերն Արդարության մեջ գտնում են ճշմարիտ և մշտապես հյուրընկալ պատսպարան, ուր նրանք կարող են հանգիստ առնել և մխիթարվել կյանքի պատահական ալեկոծումներից։

«Մխալ են մտածում նրանք, ովքեր պնդում են, որ Արդարությունը երբևէ թաքցրել է իր դեմքը, կամ, որ առավել վատթարն է, Արդարությունը երբևէ հաղթահարվել է Անարդարությունից։ Ո՛չ, նույնիսկ այն վշտալի դրպեններին, երբ անհեռատես մարդկանց թվում էր, թե կեղծիքի հայրն է հաղթանակում, իրապես հաղթանակել է Արդարությունը։ Արդարությունն է միայն, որ ժամանակավոր բնույթ չունի, նա է միայն, որ մշտապես առաջ է ընթացել, աշխարհի վրա տարածելով իր թևերը և լուսավորելով այն իր մշտնջենական լույսով։ Կեղծիքի կարծեցյալ հաղթանակը ցրվել է ծանր երազի նման, իսկ Արդարությունը շարունակել է իր երթը։

«Հալածվածների և նվաստացածների հետ միասին Արդարությունն իջնում էր նկուղներն ու թափանցում լեռնային կիրճերը։ Նա նահատակների հետ միասին խարույկ էր բարձրանում և նրանց հետ էր լինում տանջողներին դեմ-հանդիմանել։ Նա քորքոջում էր նրանց հոգիներում սրբազան հուրը, վանում էր նրանցից փոքրոգության ու գավաճանության մտորումները, նա սովորեցնում էր նրանց տառապել հաճությամբ։ Ապարդյուն էին երևակայում կեղծիքի հոր սպասավորները հաղթանակել, այդ հաղթանակը տեսնելով այն իրական նշանների մեջ, որ ներկայացնում են իրենցից դատապարտությունն ու մահը։ Ամենաանգթորույն դատապարտություններն անզոր էին խորտակել Արդարությունը, այլ

ընդհակառակը, առավելագույն ձգողական ուժ էին հաղորդում նրան։ Տեսնելով այդ դատապարտությունները, բորբոքվում էին հասարակ սրտերը, և նրանց մեջ Արդարությունը սերմանման նորանոր բարեբեր հող էր գտնում։ Բոցավառվում էին խարույկներն ու կլանում նահատակների մարմինները, բայց այդ խարույկների բոցերից անթիվ կանթեղներ էին վառվում, այնպես, ինչպես առավոտյան ժամերգության ժամանակ վառված մեկ մոմից հանկարծ լուսավորվում է տաճարը հաղարավոր մոմերով։

«Ի՞նչ է Արդարությունը, որի մասին խոսում եմ ես ձեզ հետ։ Այդ հարցին մեզ պատասխանում է ավետարանի պատգամը։ Նախ և առաջ սիրիր աստծուն, և ապա սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ։ Այդ պատգամը, չնայած իր համառոտությանը, պարունակում է իր մեջ մարդկային կյանքի ողջ իմաստությունը, ողջ նշանակությունը։

«Սիրիր աստծուն, վասնզի նա կենսատու է և մարդասեր, վասնզի նրա մեջ է պարունակվում բարության, բարոյական գեղեցկության և ճշմարտության սղբյուրը։ Նրա մեջ է Արդարությունը։ Այս իսկ տաճարում, ուր անարյուն զոհաբերություն է մատուցվում աստծուն, այս իսկ տաճարում է կատարվում Արդարության մշտնջենական սպասարկությունը։ Այս տաճարի պատերն ամբողջովին տոգորված են Արդարությամբ, այնպես որ դուք, և վատթարագույնները անգամ ձեզանից, տաճար մուտք գործելով, հաշտ և լուսավորված եք զգում ձեզ։ Այստեղ, խաչեցյալի ներկայությամբ դուք ամոքում եք ձեր վշտերը, այստեղ խաղաղություն եք ձեռք բերում ձեր խռովված հոգիների համար։ Նա խաչվեց հանուն Արդարության, որից բխող ճառագայթները տարածվում էին ամբողջ աշխարհում։— Արդյո՞ք պիտի դուք հոգով տկարանաք ձեզ հասած փորձության հանդեպ։

«Սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ — այսպես է Քրիստոսի պատգամի երկրորդ մասը։ Ես չեմ խոսի այն մասին, որ առանց մերձավորին սիրելու հնարավոր չէ հանրակեցությունը։ Կասեմ ուղղակի, առանց վերապահումների, որ այդ սերը ինքնին, անկախ բոլոր կողմնակի նկատառումներից, մեր կյանքի գեղեցկությունն է ու հրճվանքը։ Մենք պետք է սիրենք մեր մերձավորին ոչ թե փոխադարձը ստանալու համար, այլ հանուն սիրո։ Պետք է սիրենք անդադար, անձնազոհ, պատրաստ մեր անձը զոհաբերելու, այնպես, ինչպես բարի հովիվն իր անձն է դնում իր ոչխարների համար։

«Մենք պետք է ձգտենք մեր մերձավորին օգնության հասնել, առանց սպասելու, արդյո՞ք կվերադարձնի նա մեզ թե ոչ իրեն մատուցած ծառայությունը. մենք պետք է պաշտպանենք նրանց դժբախտություններից, եթե անգամ դժբախտությունը մեզ կլանելու լինի. մենք պետք է բարեխոս լինենք նրանց համար աշխարհի հզորների առաջ, նրանց համար պետք է մարտի դուրս գանք։ Դեպի մերձավորն ունեցած սիրո գագաթնումն այն բարձրագույն գանձն է, որն ունի միայն մարդ և որը տարբերում է նրան մյուս կենդանիներից։ Առանց նրա կենարար ոգու մարդկային բոլոր գործերը մեռյալ են, առանց նրա գունատվում և անըմբռնելի է դառնում ինքը գոյության նպատակը։ Միայն այն մարդիկ են լիակատար կյանքով ապրում, որոնք բոցավառվում են սիրով և անձնազոհությամբ, միայն նրանք են ճանաչում կյանքի իսկական ուրախությունը։

«Եվ այդպես, սիրենք աստծուն և միմյանց — այդպես է մարդկային Արդարության իմաստը, որոնենք այն և նրա ճանապարհով ընթանանք։ Չվախենանք կեղծիքի խարդավանքներից, այլ լինենք բարի ու հակադրենք նրան մեր վաստակած Արդարությունը։ Կեղծիքն անարգանքի կմատնվի, իսկ Արդարությունը կմնա ու կջերմացնի մարդկանց սրտերը։

«Այժմ դուք կվերադառնաք ձեր տները և անձնատուր կլինեք տիրոջ և մարդասերի ծննդյան տոնի ուրախությանը։ Բայց և ձեր ուրախության մեջ մի մոռացեք, որ նրա հետ միասին աշխարհ է եկել Արդարությունը, որ նա ամեն օր, ամեն ժամ և ամեն րոպե ներկա է ձեր մեջ և որ նա այն սրբազան հուրն է, որը լուսավորում և ջերմացնում է մարդկային գոյությունը»։

Երբ քահանան վերջացրեց և դասից հնչեց՝ «Օրհնյա՛լ

եղիցի անուն տյառն մերոյ», ամբողջ եկեղեցում խոր հառաչանք հնչեց։ Կարծես աղոթողների հսկայական բազմությունն իր այդ հառաչանքով հաստատում էր՝ «այո, օրհնյա՛լ եղիցի»։

Բայց եկեղեցում եղածներից հայր Պավելի խոսքերն ամենից ուշադիր լսում էր մանր հողատիրուհու որդի տասնամյա Ռուսլանցև Սերյոժկան։ Ժամանակ առ ժամանակ նա նույնիսկ հուզմունք էր արտահայտում, աչքերն արցունքով էին լցվում, այտերն այրվում էին և ինքն ամբողջ մարմնով առաջ էր ընկնում, կարծես կամենալով մի բան հարցնել։

Մարիա Սերգեևնա Ռուսլանցևան երիտասարդ այրի էր և հենց գյուղում մի փոքրիկ ագարակ ուներ։ Ճորտատիրության ժամանակ գյուղում, միմյանցից շատ մոտիկ հեռավորության վրա կալվածատիրական յոթ ագարակ կար։ Կալվածատերերը սակավահող էին, իսկ Ֆեոդոր Պավլիչ Ռուսլանցևն ամենից աղքատն էր. նա ընդամենը երեք ծուխ և տասի չափ սպասավոր ուներ։ Բայց որովհետև նրան համարյա միշտ ընտրում էին զանազան պաշտոնների, ուստի ծառայության շնորհիվ կարողացել էր մի փոքրիկ դրամագլուխ ետ գցել։ Երբ ճորտերի ազատագրումը եղավ, նա, որպես սակավահող, հողի արտոնյալ ետգնման իրավունք ստացավ և, շարունակելով հողագործությունը շնչապատկան փոքրիկ հողաշերտի վրա, մի կերպ պահպանում էր գոյությունը։

Մարիա Սերգեևնան ամուսնացավ նրա հետ գյուղացիության ազատագրությունից բավական ժամանակ անց, իսկ մեկ տարի հետո արդեն այրիացավ։ Ֆեոդոր Պավլիչը ձիով իր անտառամասը շրջագայելիս, ձին ինչ-որ բանից վախեցած, ցած է գլորում նրան, գլուխը դիպչում է ծառին ու ջախջախվում։ Երկու ամիս անց երիտասարդ այրին որդի ունեցավ։

Մարիա Սերգեևնան ավելի քան համեստ էր ապրում։ Հողագործությունը նա թողեց, հողը կապալով տվեց գյուղացիներին, իր ձեռքում պահելով ագարակը՝ փոքրիկ այգիով և բանջարանոցով։ Նրա տնտեսության ամբողջ կենդանի ինվենտարը մեկ ձի էր և երեք կով, սպասավորները միայն մեկ ընտանիք էին՝ նախկին սպասավորներից՝ իր դայակը՝ աղջկա և ամուսնացած որդու հետ։ Դայակը հսկում էր տան տնտեսությունը և խնամում էր փոքրիկ Սերյոժկային, աղջիկն խոհարարուհի էր, տղան՝ կնոջ հետ՝ խնամում էին անասունները, թռչունները, մշակում էին բանջարանոցը, այգին և այլն։ Կյանքն անցնում էր առանց ապրուկի։ Կարոտություն չէին քաշում. վառելափայտը և պարենի գլխավոր մթերքները տանից էին և համարյա ոչ մի բան գնելու կարիք չէին զգում։ Սպասավորներն ասում էին. «Կարծես դրախտում ենք ապրում»։ Ինքը Մարիա Սերգեևնան նույնպես մոռացության էր տվել, որ աշխարհում ուրիշ կյանք կա (նա հարևանցի տեսել էր այդ կյանքը ինստիտուտի լուսամուտից, ուր դաստիարակվել էր)։ Միայն Սերյոժան էր երբեմն անհանգստացնում նրան։ Սկզբում նա լավ էր մեծանում, բայց յոթ տարեկան դառնալուց հետո սկսեց ինչ-որ հիվանդագին դյուրազգացության նշաններ հայտնաբերել։

Սերյոժան հասկացող, հանգիստ, բայց միաժամանակ թույլ և հիվանդոտ երեխա էր։ Յոթ տարեկանից Մարիա Սերգեևնան սկսեց գրել-կարդալ սովորեցնել նրան. սկզբում ինքն էր սովորեցնում, իսկ հետո, երբ երեխան տասը տարեկան դարձավ, նրա ուսման մեջ մասնակցություն ունեցավ նաև հայր Պավելը։ Ենթադրվում էր Սերյոժային գիմնազիա տալ, հետևապես անհրաժեշտ էր ծանոթացնել հին լեզուների գոնե նախնական հիմունքներին։ Ժամանակը մոտենում էր, և առաջիկայում որդուց բաժանվելու միտքը շատ խռովահույզ մտորումներ էր պատճառում Մարիա Սերգեևնային։ Միայն այդ բաժանման գնով կարելի էր իրագործել որդու կրթության խնդիրը։ Նահանգական քաղաքը հեռու էր, և տարիկան վեց-յոթ հարյուր մանեթ եկամուտով հնարավոր չէր քաղաք տեղափոխվել։ Սերյոժայի մասին նա արդեն նամակագրություն էր ունեցել իր հարազատ եղբոր հետ, որն ապրում էր նահանգական քաղաքում, աննշան պաշտոն վարելով, և այս օրերս նամակ էր ստացել, որով եղբայրը համաձայնում էր Սերյոժային իր ընտանիքի մեջ ընդունել։

Եկեղեցուց տուն վերադառնալուց հետո, թեյի ժամանակ, Սերյոժան դեռևս հուզված էր։

— Մայրիկ, ես ուզում եմ Արդարությամբ ապրել,— ասաց նա։

— Այո, սիրելիս, կյանքում ամենից գլխավորն Արդարությունն է,— հանգստացրեց մայրը,— միայն թե դու դեռ շատ ժամանակ ունես։ Երեխաներն ուրիշ կերպ չեն ապրում, և չեն էլ կարող ապրել։ Նրանք ապրում են միայն Արդարությամբ։

— Ո՛չ, ես այդպես չեմ ուզում ապրել. տեր հայրն ասում էր, որ նա, ով Արդարությամբ է ապրում, պետք է մերձավորին պաշտպանի վիրավորանքներից։ Ահա ինչպես պիտի ապրել, իսկ ես մի՞թե այդպես եմ ապրում։ Անցյալ օրը ծախում էին Իվան Աղքատի կովը, ես միջամտեցի՞ մի՞թե։ Ես միայն նայում և լաց էի լինում։

— Ահա հենց այդ արցունքների մեջ է մանկական Արդարությունը։ Դու ուրիշ ոչինչ անել չէիր էլ կարող։ Իվան Աղքատի կովը ծախեցին օրենքով, պարտքի դիմաց։ Օրենք կա, որ ամեն մարդ պետք է իր պարտքերը վճարի։

— Իվանը, մայրիկ, վճարել չէր կարող։ Նա կուզենար վճարել, բայց չէր կարող։ Դայակն էլ ասում է, որ ամբողջ գյուղում նրանից էլ աղքատ մարդ չկա։ Այդ էլ ի՞նչ Արդարություն է։

— Կրկնում եմ, որ այդպիսի օրենք կա և բոլորը պարտավոր են օրենքը կատարել։ Եթե մարդիկ ապրում են հասարակության մեջ, ապա ուրեմն իրավունք չունեն արհամարհելու իրենց պարտականությունները։ Դու ավելի լավ է ուսման մասին մտածիր, ահա քո Արդարությունը։ Գիմնազիա որ մտնես, ջանասեր եղիր, քեզ հանգիստ պահիր և այդ կնշանակի, որ դու Արդարությամբ ես ապրում։ Չեմ սիրում, երբ դու այդպես հուզվում ես։ Ինչ որ տեսնում ես, ինչ որ լսում ես, ամեն ինչ սրտիդ մոտ ես ընդունում։ Տեր հայրն ընդհանրապես էր խոսում. եկեղեցում ուրիշ կերպ էլ ասել չի կարելի, իսկ դու արդեն քեզ վրա ես վերցնում։ Մերձավորներիդ համար աղոթք արա — դրանից ավելի աստված քեզնից ոչինչ չի պահանջի։

Բայց Սերյոժան չէր հանգստանում։ Նա վազ տվեց խոհանոց, ուր սպասավորները հավաքված, տոնի պատճառով թեյ էին խմում։ Խոհարարուհի Ստեպանիդան ունելիքով կերակրի ամաններն էր հանում վառարանից։ Մսի ու տոնական կարկանդակի հոտը բռնել էր ամբողջ օդը։

— Ես, աստիկ, Արդարությամբ եմ ապրելու,— հայտարարեց Սերյոժան։

— Մի տեսե՞ք, քանի տարեկանից է սկսել,— կատակեց պառավը։

— Ոչ, տատիկ, ես ճշմարիտ խոսք եմ տվել ինձ։ Կմեռնեմ Արդարությամբ, բայց Անարդարությանը չեմ հպատակվի։

— Ա՜խ, սիրելիս, մի տես թե գլխիկդ ի՞նչ է մտել։

— Մի՞թե լսեցիր Եկեղեցում ինչ էր ասում քահանան, Արդարության համար կյանքը պետք է զոհել,— ահա թե ինչ։ Ամեն մարդ պետք է Արդարության համար կռվի դուրս գա։

— Հայանի բան է, եկեղեցում ուրիշ ի՞նչ պիտի ասեն։ Եկեղեցին նրա համար է, որպեսզի այնտեղ արդար բաների մասին խոսեն։ Միայն թե դու, սիրելիս, ասածը լսիր, բայց ինքդ էլ քո խելքով ծանր ու թեթև արա։

— Արդարությամբ ապրելիս մարդ պետք է զգույշ լինի,— լրջմիտ ասաց բանվոր Գրիգորին։

— Ինչո՞ւ, օրինակ, ես ու մայրիկս սեղանատանն ենք թեյ խմում, իսկ դուք խոհանոցում։ Մի՞թե դա արդար է,— բորբոքվեց Սերյոժան։

— Արդարը արդար չէ, բայց միշտ այդպես է եղել։ Մենք հասարակ մարդիկ ենք, մեզ համար խոհանոցում էլ լավ է։ Եթե բոլորը սեղանատանը լինեն, այն ժամանակ սենյակները հերիք չեն անի։

— Դու, Սերգեյ Ֆեդորիչ,—կրկին միջամտեց Գրիգորին,— երբ մեծանաս, որտեղ կուզես, այնտեղ էլ նստիր, կուզես սեղանատանը, կուզես խոհանոցում։ Իսկ քանի դեռ փոքր ես, նստիր մայրիկիդ հետ, սրանից էլ լավ Արդարություն քո տարիքում չես գտնի։ Տերտերը երբ ճաշելու գա, նա էլ քեզ նույնը կասի։ Ինչքա՞ն գործ ենք անում մենք. և՛ անասուն-

ներին ենք հետևում, և՛ հողի հետ ենք լինում, իսկ պարոն-ներն այդպիսի գործեր չեն անում։ Այդպե՞ս է։

— Չէ՞ որ դա հենց ինքն Անարդարությունն է։

— Իսկ մեր տեսակետով այսպես է. եթե պարոնները բարի են, գթասեր են, դա նրանց Արդարությունն է։ Իսկ եթե մենք, բանվորներս, ջանասիրությամբ ծառայում ենք պարոններին, չենք խաբում, ցանք չենք խնայում, դա էլ մեր Արդարությունն է։ Շնորհակալ պետք է լինել և այն բանի համար, եթե ամեն մեկն իր Արդարությունը պահպանում է։

Կարճատև լռություն տիրեց։ Սերյոժան, ըստ երևույթին, կամենում էր հակաճառել, բայց Գրիգորիի պատճառաբանություններն այնչափ բարեհոգի էին, որ նա տատանվում էր։

— Մեր կողմերում,— առաջինը խզեց լռությունը դայակը,— որտեղից որ ես ու մայրիկդ ենք եկել, Ռազսոշնիկով ազգանունով մի կալվածատեր կար։ Սկզբում ապրում էր, ինչպես բոլորն են ապրում, բայց հանկարծ ուզեց Արդարությամբ ապրել։ Եվ վերջիվերջո ի՞նչ արեց։ Մախեց կալվածքը, փողերը աղքատներին բաժանեց, իսկ ինքը պանդխտության գնաց... Այն ժամանակվանից նրան այլևս տեսնող չի եղել։

— Ա՜խ, տատիկ, ի՞նչ լավ մարդ է եղել։

— Ի միջի այլոց, նրա որդին ծառայում էր Պետերբուրգում, զորաբանակում,— ավելացրեց դայակը։

— Հայրը կալվածքը բաժանեց, իսկ որդին մնաց առանց ոչնչի... Որդուն պետք է հարցնել, լա՞վ է արդյոք հոր Արդարությունը,— դատողություն արեց Գրիգորին։

— Իսկ որդին չհասկացա՞վ միթե, որ հայրն Արդարությամբ վարվեց,— պաշտպան հանդիսացավ Սերյոժան։

— Բանն այն է, որ այնքան էլ չհասկացավ նա այդ և փորձեց թույլ չտալ։ Ինչո՞ւ ինձ զորագունդ ուղարկեց, ասում է, երբ ես այժմ ապրելու միջոց չունեմ։

— Զորագունդ ուղարկեց... ապրելու միջոց չունեմ...— մեքենայաբար կրկնեց Սերյոժան, խճճվելով այդ հակադրությունների մեջ։

— Ես էլ մի այդպիսի դեպք եմ հիշում,— շարունակեց Գրիգորին։— Նույն այդ Ռազսոշնիկովից օրինակ առավ գյուղում Մարտին անունով մի գյուղացի, նույնպես բոլոր փողերը,

ինչ որ ուներ, բաժանեց աղքատներին, ընտանիքի համար թողեց միայն խրճիթը, իսկ ինքը մախաղն ուսը գցեց և գիշերը, գաղտագողի հեռացավ գյուղից։ Միայն թե մոռացել էր անձնագիր հանել, այդ պատճառով էլ մեկ ամիս հետո նրան էտապով տուն վերադարձրին։

— Ինչո՞ւ, մի՞թե նա վատ բան էր արել,— հակաճառեց Սերյոժան։

— Վատը վատ չէր, ես դա չեմ ասում, այլ այն, որ Արդարությամբ ապրելու համար պետք է զգույշ լինել։ Առանց անձնագրի ապրելն արգելվում է,— կա՛րճ։ Թե չէ, բոլորը ցրիվ կգան, աշխատանքը կթողնեն, և այդ թափառաշրջիկների ձեռքից մարդ հանգստություն չի ունենա...

Թեյը վերջացավ։ Բոլորը ոտքի ելան և աղոթեցին։

— Դե, հիմի շուտով ճաշելու ենք,— ասաց դայակը,— գնա, սիրելիս, մայրիկիդ մոտ։ Շուտով տերտերը կգա տիրուհու հետ։

Իսկապես, ժամը երկուսի մոտ եկավ հայր Պավելը կնոջ հետ։

— Ես, տեր հայր, Արդարությամբ եմ ապրելու, ես Արդարության համար կռիվ կգնամ,— ողջունեց հյուրերին Սերյոժան։

— Ա՜յ թե ինչ զինվոր է լույս ընկել։ Գետնից չի երևում, բայց արդեն կռիվ գնալ է պատրաստվում,— կատակեց տեր հայրը։

— Զանձրացրեց ինձ, առավոտից մինչև հիմի շարունակ նույն բանն է կրկնում,— ասաց Մարիա Սերգեևնան։

— Ոչինչ, տիկին, կասի, կասի ու կմոռանա։

— Ո՛չ, չեմ մոռանա,— պնդեց Սերյոժան։— Դուք ինքներդ էիք այսօր ասում։

— Եկեղեցին նրա համար է, որպեսզի այնտեղ Արդարության մասին ազդարարվի։ Եթե ես՝ հոգևոր հովիվս, իմ պարտականությունը չկատարեմ, եկեղեցին ինքն ինձ կհիշեցնի այդ մասին։ Նույնիսկ ինձանից անկախ, ամեն մի խոսք, որ արտասանվում է այնտեղ — Արդարություն է։ Միայն կարծրացած սրտերը կարող են խուլ մնալ նրա հանդեպ։

— Իսկ ինչպե՞ս ապրել։

— Ապրել հարկավոր է Արդարությամբ։ Ա՜յ, երբ դուս հասակ առնես, այն ժամանակ Արդարությունն ամբողջությամբ կըմբռնես, իսկ առայժմ քեզ համար բավական է և այն Արդարությունը, որը հատուկ է քո հասակին։ Սիրիր մայրիկիդ, հարգանք ունեցիր դեպի մեծերը, սովորիր ազնասիրությամբ, համեստ պահիր քեզ,— ահա քո Արդարությունը։

— Բայց չէ՞ որ նահատակները... դուք էիք ասում առավոտյան...

— Նահատակներ էլ են եղել։ Արդարության համար անարգանք էլ պետք է կրել։ Միայն քո ժամանակը չէ այդ մասին մտածել։

— Նահատակնե՞ր... խարույկնե՞ր...— թոթովում էր Սերյոժան խռովահույզ։

— Բավակա՛ն է,— անհամբեր բարկացավ նրա վրա Մարիա Սերգեևնան։

Սերյոժան լռեց, բայց ճաշի ժամանակ մտախոհ էր։ Ճաշի վրա առօրյա խոսակցություն սկսվեց գյուղական գործերի մասին։ Խոսքը հետևում էր խոսքին և չէր երևում, որ ամեն անգամ էլ Արդարությունը հաղթանակող է դուրս գալիս։ Իսկապես ասած, ոչ Արդարություն կար, ոչ Անարդարություն, այլ սովորական կյանք էր, այն ձևերով և այն աստառով, որին հավիտենից վարժվել էին բոլորը։ Սերյոժան անթիվ անգամ լսել էր այդ խոսակցությունները և երբեք առանձնապես չէր հուզվել։ Բայց այդ օրը նրա էության մեջ ևս ինչ-որ մի նոր բան էր թափանցել, որը գրգռում և հուզմունք էր պատճառում նրան։

— Կե՛ր,— հարկադրում էր նրան մայրը, տեսնելով, որ նա համարյա ոչինչ չի ուտում։

— In corpore sano mens sana[60],— իր կողմից ավելացրեց տեր հայրը։— Լսիր մայրիկիդ — դրանով ամենից ավելի կապացուցես քո սերը դեպի Արդարությունը։ Արդարությունը պիտի սիրել, բայց առանց պատճառի իրեն նահատակ երևակայելն արդեն փառասիրություն է, ունայնություն։

Արդարության մասին եղած նոր հիշատակությունը հուզեց Սերյոժային. նա գլուխը կախեց ափսեի վրա և փորձեց ուտել, բայց հանկարծ հեկեկաց։ Բոլորն անհանգստացան ու շրջապատեցին նրան։

— Գլուխդ ցավո՞ւմ է,— հարցրեց Մարիա Սերգեևնան։

— Ցավում է,— նվաղուն ձայնով պատասխանեց նա։

— Գնա պառկիր անկողնումդ։ Դայակ, տար պառկեցրու։

Սերյոժային տարան։ Ճաշը մի քանի րոպե ընդհատվեց, որովհետև Մարիա Սերգեևնան չկարողացավ համբերել և գընաց դայակի ետևից։ Վերջապես երկուսով էլ վերադարձան և հայտարարեցին, որ Սերյոժան քնեց։

— Ոչինչ, կքնի ու կանցնի,— հանգստացրեց Մարիա Սերգեևնային տեր Պավելը։

Երեկոյան կողմ, սակայն, ոչ միայն գլխացավը չանցավ, այլև տաքություն երևաց։ Սերյոժան գիշերն անհանգիստ բարձրանում էր անկողնուց և ձեռքերով շարունակ շոշափում էր շուրջը, կարծես ինչ-որ բան էր որոնում։

— Մարտինը... էտապով... Արդարության համար... Ի՞նչ է նշանակում,— թոթովում էր նա անկապ։

— Այդ ի՞նչ Մարտինի մասին է հիշում,— տարակուսական դիմեց Մարիա Սերգեևնան դայակին։

— Հիշո՞ւմ եք, մեր գյուղում մեկը կար, որ տանից հեռացավ որպես մուրացկան... Առավոտյան Գրիգորին պատմեց Սերյոժայի ներկայությամբ։

— Ինչ հիմարություն ասես կպատմեք դուք էլ,— բարկացավ Մարիա Սերգեևնան,— երեխային ամենևին չի կարելի ձեզ մոտ թողնել։

Հաջորդ օրն առավոտյան վաղ ժամերգությունից հետո քահանան հանձն առավ քաղաք մեկնել բժիշկ հրավիրելու։ Քաղաքը քառասուն վերստի վրա էր, այնպես որ բժշկին գիշերվանից շուտ սպասել չէր կարելի։ Պետք է ասել, որ բժիշկն էլ ծեր էր, տգետ, ոչ մի ուրիշ միջոց չէր գործադրում, բացի օպոդելդոկից[61], որը տալիս էր և՛ ներսի, և՛ դրսի համար։ Քաղաքում նրա մասին ասում էին. «Բժշկության չի հավատում, իսկ օպոդելդոկի՞ հավատում է»։

Գիշերը, ժամը տասնմեկի մոտ բժիշկը եկավ։ Նայեց հիվանդին, շոշափեց զարկերակը և հայտարարեց, որ «տաքություն» ունի։ Ապա հրամայեց հիվանդին օպոդելդոկով շփել և հարկադրեց նրան երկու գնդիկ կուլ տալ։

— Տաքություն ունի, բայց կտեսնեք, որ օպոդելդոկից ամեն ինչ անմիջապես կանցնի,— վստահ հայտարարեց նա։

Բժշկին կերակրեցին ու քնեցրին, իսկ Սերյոժան ամբողջ գիշեր անհուշ թպրտում էր անկողնում և այրվում, ինչպես կրակի մեջ։

Մի քանի անգամ արթնացրին բժշկին, բայց նա կրկնեց օպոդելդոկի գործադրությունը և շարունակում էր հավատացնել, որ առավոտյան ամեն ինչ անցած կլինի։

Սերյոժան զառանցում էր, զառանցանքի մեջ կրկնում էր. «Քրիստոս... Արդարություն... Ռազսոշնիկով... Մարտին»... և շարունակում էր շոշափել շուրջը, արտասանելով՝ «ո՞ւր է, ո՞ւր է...» Առավոտյան դեմ, սակայն, հանգստացավ ու քընեց։

Բժիշկը մեկնեց, ասելով՝ «Ա՜յ, տեսնում եք», և պատճառաբանելով, իբր քաղաքում իրեն ուրիշ հիվանդներ են սպասում։

Ամբողջ օրն անցավ վախի և հույսի մեջ։ Քանի դեռ բակում լույս էր, հիվանդն իրեն լավ էր զգում, բայց ուժերի անկումն այնչափ մեծ էր, որ համարյա չէր խոսում։ Մութն ընկնելու հետ կրկին սկսվեց «տաքությունը», և զարկերակը սկսեց արագ խփել։ Մարիա Սերգեևնան լուռ տարսափով կանգնած էր նրա անկողնու մոտ, ճիգ անելով ինչ-որ մի բան հասկանալու և չէր հասկանում։

Օպոդելդոկը թողեցին. դայակը Սերյոժայի գլխին քացախի թրջոց էր դնում, յախու էր գցում, լորի ծաղկի թեյ էր խըմեցնում, մի խոսքով՝ տեղի թե անտեղի գործադրում էր այն բոլոր միջոցները, որոնց մասին լսել էր և ինչ-որ ձեռքի տակ գտնվում էր։

Գիշերն սկսվեց հոգեվարքը։ Երեկոյան ժամը ութին բարձրացավ լրիվ լուսինը, և որովհետև անփութության պատճառով լուսամուտի վարագույրներն իջեցրած չէին, ուստի պատի

վրա սպիտակ մեծ շերտ գոյացավ։ Սերյոժան բարձրացավ տեղից և ձեռքերը տարածեց դեպի լույսի այդ շերտը։

— Մայրի՜կ,— թոթովեց նա,— նայի՛ր, ամբողջովին սպիտակ հագած... դա Քրիստոսն է... դա Արդարությունն է... Նրա ետևից... նրա մոտ...

Նա ընկավ բարձին, հեծկլտաց ու մեռավ։

Արդարությունը երևաց նրան ու նրա ողջ էությունը երանությամբ արբեցրեց, բայց մանկական դեռևս չամրապնդված սիրտը չդիմացավ ուժգին հոսանքին ու պայթեց։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՐՈՆԱՅՔ ԳՈՒՂՈՎԱՅՈՎՆԵՐԸ

1. Բուրմիստր — որևէ առանձին կալվածքի գլխավորիչ, ընտրվում էր սովորաբար ճորտ գյուղացիներից — 5։

2. Ճակատ սափրել — այսինքն զինվոր ուղարկել։ Առաջացել է այն բանից, որ նորակոչիկների գլուխները, զինվոր դարձնելուց հետո, սափրում էին։ Կալվածատերերը, երբ որևէ ճորտ գյուղացու պատժել էին ուզում ինչ-որ արարքի համար, սափրել էին տալիս գլուխը, այդպիսով զինվոր ուղարկելով նրան, իսկ այն ժամանակ զինվորը ծառայում էր համարյա իր ամբողջ կյանքում — 8։

3. Բարկով Ի. Ս.— XVIII դարի բանաստեղծ և թարգմանիչ. մեծ մասամբ անպարկեշտ բովանդակությամբ բանաստեղծություններ էր գրում, որոնք տարածվում էին ձեռագիր վիճակում — 9։

4. Բոգիչ — բուրավետ խոտերով համեմված օղի — 10։

5. Ենամակալական խուճուրդ — ընկեցիկների և որբանոցների կորթական վարչություն. զբաղվում էր նաև զանազան վարկային գործարքներով — 10։

6. Պարիա — ազատելի, չշահագործվող մարդ, կուրկ բոլոր իրավունքներից — 11

7. Ֆավորիտ — սիրելի, շնորհարկյալ — 13։

8. Հարյուր ռուբլի ասիգնացիայում — XIX դարի կեսերին մեկ ռուբլի ասիգնացիայով հավասար էր 27½ կոպեկ արծաթ փողով — 13։

9. Նադվորնի գատարան — քաղաքացիական և քրեական գործերի բարձրագույն դատարան Մոսկվայի և Պետերբուրգի նահանգներում (մայրաքաղաքների նահան ներում) — 14։

10. Փոխարինող զինվոր գնալ աշխարհազորում — Ղրիմի պատերազմի ժամանակ աշխարհազոր արվեց հարուստ ազնվականները չկամենալով իրենք գնալ, փոխարինող էին ուղարկում աղքատացած ազնվականներից — 14։

11. Խոչակալի շուրջ բոլորը պտտեց — այսինքն՝ եկեղեցական ծեսով ամուսնացավ — 15։

12. Իուդուշկա — համաձայն ավետարանի լեգենդի, Հուդա առաքյալը Քրիստոսին մատնեց իշխանությունների ձեռքը, երեսուն արծաթ ստանալով դրա համար։ Այստեղից էլ «Հուդա» նշանակում է մատնիչ, կեղծավոր — 16։

13. Փոլովարան — աստեղ ակումբ է նշանակում նախկին իմաստով, ուր թղթախաղ էր տեղի ունենում — 24։

14. Սուզդալ-վանք — տղամարդկանց վանք Սուզդալ քաղաքում, ուր ապաշխարանքի էին աքսորում տղամարդկանց — 25։

15. Տրեզները պսկված են ու ծախվում հալելու համար — տրեզները հյուսված էին լինում արծաթաթելով. հին տրեզները հալում էին և մաքուր արծաթ ստանում — 27։

16. Ժուկով — ծխախոտի խոշոր գործարանատեր, որի անունով էլ կոչվել է ծխախոտը — 28։

17. Զինվորական հաշվային ստուգական — զինվորներ հավաքագրելիս կալվածատերը կարող էր իր հարտ գյուղացիներին առանց որևէ հերթի զինվոր տալ։ Պատերազմի ժամանակ պանված զինվորի համար կալվածատերը գանձարանից զինվորական հաշվային տարադրանքներով փող էր ստանում — 29։

18. Իսկ վազը — ո՞ւր ես գնում, մարդ — Գերժավինի հիշատակ Մեշչերսկու մահվան առթիվ նեղսրտից — 31։

19. Մեդուզա — ըստ հին հունական դյուցազնական հին-հրեշ, մազերի փոխարեն գլխին օձեր։ Մեդուզայի հայացքից մարդ քարանում էր — 38

20. Ֆայեթ — այն ժամանակ ծխախոտի հայտնի գործարանատեր, որը մրցում էր Ժուկովի հետ։ (Մանոթություն Սալտիկով-Շչեդրինի) — 39։

21. Զեմսկի — ավագ գրագիր կալվածքի գրասենյակում — 40։

22. Լոմբարդ — գրավատուն։ Լոմբարդներն այն ժամանակ կատարում էին նաև բանկային գործարքներ — 40։

23. Նեսեսեր — արդուվարդի ճանապարհորդական արկղիկ — 43

24. Մահսավոր — ըստ Աստվածաշնչի, մաքսավորները հին Հրեաստանում հարկահավաքներ էին և համարվում էին մեղսավորներ, որի հետևանքով և արհամարհված էին — 45։

25. Փարիսեցի — Աստվածաշնչում փարիսեցիները պատկերված են որպես ֆանատիկոսներ ու կեղծավորներ։ Դրանք ունևոր քաղաքացիների կրոնա-քաղաքական կուսակցության անդամներ էին, որոնք արհամարհանքով էին վերաբերում մաքսավորներին — 45։

26. ... հետո նահանգական կոմիտեները, հետո խմբագրական հանձնաժողովները — ճորտատիրական իրավունքը վերացնելու շրջանում 1857 թվին կազմակերպվեցին գյուղացիական նահանգական կոմիտեներ, որոնց կազմում մտնում էին միայն կալվածատերերը։ Իսկ 1859 թվին կազմակերպվեցին կառավարական խմբագրական հանձնաժողովներ — 79

27. Էմանսիպացիայի գործը — այսինքն 1861 թվի ռեֆորմը—80։

28. Հողերի ետ գնման — 1861 թվի ռեֆորմից հետո կալվածատերերին իրավունք էր տրված գյուղացիներին անցած հողի համար գանձարանից գնման փող ստանալ։ Այդ գնման փողը գյուղացիները պետք է վերադարձնեին գանձարանին մասամաս, որոշ ժամանակի ընթացքում։ Այդ ետ գնման վճարը ծանր բեռ էր գյուղացիների համար — 109։

29. Բաբելոնյան աշտարակ — Աստվածաշնչի լեգենդով՝ մինչև երկինք հասնող աշտարակ, որն ուզում էին կառուցել մարդիկ — 114։

30. Աֆոն — վանքերի մի խումբ Աֆոն լեռան վրա, Մակեդոնիայում —115։

31. «Զինաղ Հելինե»— Ֆրանսիացի կոմպոզիտոր Օֆֆենբախի օպերետան —115։

32. Կորպուս — կադետական կորպուս, զինվորական մշտնակարգ դպրոց ցարական Ռուսաստանում —117.

33. Գավառակային պրիստավ — շրջանային ոստիկանության պետ ցարական Ռուսաստանում —120։

34. Քանանացիների երկիր — Աստվածաշնչում այդպես է կոչվում հին Պալեստինը և Փյունիկիան—124։

35. Ինչ-որ միջին տեղ է ընկնում — այսինքն քավարանը, ուր, կաթոլիկների հավատալիքով, մեռածների հոգիները, նախքան այրքայություն ընկնելը, մաքրվում են մեղքերից զանազան փորձությունների միջոցով — 124։

36. Առնետներ էին ուտում — թոքը վերաբերում է 1870—1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Փարիզում եղած սովին—125։

37. Կոմֆորտ — կյանքի հարմարություններ, փարթամկեցություն — 134։

38. Տարտյուֆ — Մոլիերի «Տարտյուֆ» կոմեդիայի գլխավոր հերոսը։ Այդ անունը դարձել է կեղծավորության, կեղծ բարեպաշտության հոմանիշ.— 142։

39. Թեկուզում — համապատասխան իրադրություն, արտաքին քաղաքավարություն —143։

40. Էմպիրեա — հին հունական մյութոլոգիայով՝ երկինք. փոխաբերական իմաստով՝ հասարակական բարձր շրջան — 1[illegible]։

41. Կորպորացիա — ընկերություն, միաբանություն, կազմակերպություն—143։

42. Լեգալ — օրինական—144։

43. Ադել — Մալեկ-Ադել, M-e Cottin-ի վեպի հերոսը—144.

44. Միջնադարի — հորական իրավունքի վերացումից հետո կալվածատերերի և աղատագրված գյուղացիների մեջ առաջացած վեճերը քննության էին առնում հաշտարար միջնորդները, որոնք նշանակվում էին նահանգապետի կողմից՝ կալվածատերերից—147։

45. Նապոլեոն III — Նապոլեոն Բոնապարտի ազգականը, 1848 թվի հեղափոխության չախչախումից հետո՝ ֆրանսիական հանրապետության

պրեզիդենտ, իսկ 1851 թվի վերջից՝ Ֆրանսիայի թագավոր։ 1870 թվին Պրուսիայի հետ ունեցած պատերազմի ժամանակ Ֆրանսիայի պարտվելուց հետո զրկվեց գահից և մեռավ Անգլիայում 1873 թվին—147։

46. «Փիլիսոփա անվարունգ» — Կռիլովի «Բոստանչին ու փիլիսոփան» առակի վերջին խոսքերը—154։

47. Հիլ — համեմունք է—155։

48. Պլեակա, Յացիկով — այն ժամանակ հայտնի փաստաբաններ — 158։

49. Աֆորիզմ — հակիրճ խոսքերով արտահայտված միտք, իմաստալից խոսք, առացվածք—168։

50. Ուր սեզոնն էր ուտելիքներով — դագաղն է այնտեղ — Դերժավինի՝ «Իշխան Մեշչերսկու մահվան առթիվ» օդայից—209։

51. Կնիկսեն — ծնկածալում, աղչիկները բարևելիս աջ ոտքը ծնկում փոքր-ինչ ծալում էին. համարվում էր կրթվածության և քաղաքավարության նշան —214։

52. Պյոտր Պիկարդակի կամ Պյոտր Անապատական — վարդապետ, առաջին խաչակրաց արշավանքի կազմակերպողն ու ոգեշնչողը—218։

53. Տելիցային նվիրված օդա — Դերժավինի օդան—219։

54. Tabula rasa — բառացի՝ «մաքուր տախտակ», այսինքն, որևէ մաքուր, անարատ բան— 219։

55. Տավրիդայի իշխան — իշխան Գ. Ա. Պոտյոմկին, Եկատերինա II թագուհու սիրելին —219։

56. Դագերոտիպ պատկեր — պատկեր, որ ստացվում էր հին ձևի լուսանկարչությամբ՝ լոդային արծաթով ծածկված մետաղյա թերթի վրա —241։

57. Օվիդիոս — հռոմեական պոետ (43 թ. մինչ մեր դարաշրջանը և 17 թ. մեր դարաշրջանի) — 254։

58. Ոգեհարցության սեանս — ոգեհարցությամբ զբաղվողների երեկո, երբ նրանք փորձում են մեռածների հոգիները դուրս կանչել թխկացնելով, սեղանը պտտելով և այլն—311։

59. Վլադիմիրկայի ճանապարհով — ճանապարհ Մոսկվայից դեպի Վլադիմիր և այնուհետև դեպի արևելք, որով Սիբիր էին ուղարկում աքսորականներին—313։

60. Ն. Ա. Պոլևոյ — գրող, քննադատ, հրապարակախոս և հրատարակիչ, Ա. Ս. Պուշկինի ժամանակակից — 345։

61. Աբշինենիկ — արշինավոր, ծաղրաբար այդպես էին անվանում վաճառականներին — 349։

62. J'aime cette modestie — ինձ դուր է գալիս այդ համեստությունը — 360։

63. J'aime cette indépendance — ինձ դուր է գալիս այդ անկախությունը —361։

ՀԵՔԻԱԹՆԵՐ

Սալտիկով-Շեդրինի «Հեքիաթների» տպագրությունը, չնայած իրենց սոցիալ-քաղաքական իմաստի սրության, հեղափոխական-դեմոկրատական միտումի, ցարական ցենզուրայի պայմաններում բարդ պատմություն են ունեցել։ Հեքիաթներից մի քանիսը անլեգալ տպագրությամբ են տարածվել։

Սալտիկով-Շեդրինի մահից անմիջապես հետո նրա կինը Դիլիժանի մի խումբ բանվորներից նամակ է ստանում, որով իրենց վշտակցությունն էին հայտնում ռուս մեծ գրողի՝ «ազնիվ, սիրող հոգու տեր մարդու» ընկածների բանակամ, ազատության մարտիկի մահվան առթիվ։ Այդ նամակից մեջ ենք բերում մի քանի տող, որ վերաբերում է «Հեքիաթներին»։

«Նրա վերջին հոդվածում հեքիաթներում, արտաքին ձևերում պատմվածներից լավ ենք հասկանում, մենք պարզ տեսնում ենք մեզ շրջապատող կյանքի մին, այժմ մեծ և անհասկանալի կողմերը։ Այդ հեքիաթներն արդեն են ալքում ընթերցողը հոգու վրա, որ ամենից աչքին նուազնիկ արտաքուստ է երևում տեսնելով անգաստական մարդու չիշան ու վիրավորանքները։

Առանձնապես մեզ դուր են գալիս «Ճանապարհին» պատմվածքը, որի մեջ մեզ հարազատ բանվորներին ենք տեսնում անմեղ թվում ունեցող «Ոժաստպատ ձին», «Հարևաններ», «Ջատկական գիշեր», «Իդեալիստ ծածանը» և ուրիշները։ Ո՞վ չի սիրի այդ հեքիաթները, ո՞վ չի հասկանա, որ նրանց հեղինակը սիրել ու խղճացել է հասարակ ժողովրդին։ Նա գիտեր և զգում էր մեր վիշտը և տեսնում էր, որ մենք մեր ամբողջ կյանքը անց ենք կացնում ծանր խավար (անթափանց) աշխատանքում, օգտվելով նրա պտուղներից» (Ն. Շեդրին (Մ. Ե. Սալտիկով), Երկերի լիակատար ժողովածու, հատոր XX, 1937 թ., ռուսերեն հրատ., էջ 418)։

1886 թ. լույս է տեսել հեքիաթների առաջին ժողովածուն — «23 հեքիաթ»։

Իր հեքիաթներից մի քանիսը Սալտիկով-Շեդրինը մտադիր էր հրատարակել առանձին գրքույկներով ժողովրդի համար — «Իմաստուն ծանծաղուկը», «Անձնազոհ նապաստակը», «Խեղճ գայլը», «Իդեալիստ ծածանը», «Հարևաններ», «Ջատկական գիշեր», «Մննդյան հեքիաթ»։ «Հեքիաթների» հրատարակությունը ժողովրդի համար թույլ չտրվեց։ Ցենզորը զգուշացել էր, որ «Ամն ինչը պ. Սալտիկովը հեքիաթ է անվանում, ամենևին չի համապատասխանում իր անվանը, նրա հեքիաթները նույն այն երգիծանքն է, և կծու, տենդենցիոզ երգիծանք, ավելի կամ պակաս ուղղված մեր հասարակական և քաղաքական կազմակերպության դեմ... Այդ հեքիաթները, ժամանակ առ ժամանակ հրապարակ գալով մեր պարբերական հրատարակություններում, մամուլին հետևող իշխանության մեջ միտքապես կասկած են առաջացնում, արդյոք չպե՞տք է դրանք արգելել»։

Սալտիկով-Շեդրինի բոլոր հեքիաթները՝ թվով 32 հատ, առաջին անգամ ամբողջությամբ հրատարակվել է 1927 թվին։ Հայերենը թարգմանված

է յոթհատորյակի 6-րդ հատորից, ուր ամփոփված են բոլոր հեքիաթները, ցարական ցենզուրայի կողմից հանված կտորների վերականգնումով։

«Այն մասին, ինչպես մեկ գյուղացի երկու գեներալ կերակրեց» — առաջին անգամ տպագրված է «Օտեչեստվենների լապիսկի» ժուռնալի 1869 թ. № 2-ում, փետրվար ամսին։

1. «Կանտոնիստներիս զինվորական դպրոց — ուր ընդունվում և սովորում էին միայն զինվորականների որդիները — 378։

2. «Մոսկովսկիե Վեդոմոստի» — ռեակցիոն լրագիր։ Մ. Ն. Կատկովի խմբագրությամբ։ Կատկովը եղել է ժամանակի ամենառեակցիոն ժուռնալիստը — 378։

3. Ցիտատ Դերժավինի «Ճաշի հրավեր» բանաստեղծությունից — 380։

«Խիկեր կոբրա»— առաջին անգամ տպագրվել է «Օտեչեստվենների լապիսկի» ժուռնալի 1869 թ. № 3-ում, մարտ ամսին։

4. Այն մարդը, որը զբաղվում էր երկաթուղային նախագծեր կազմելով և կառուցման համար պետությունից կամ մասնավոր մարդկանցից դրամ էր ստանում։ Չարաշահության խոշոր աղբյուր էր — 395։

«Վայրի կալվածատերը»— առաջին անգամ լույս է տեսել «Օտեչեստվենների զապիսկի» ժուռնալի 1869 թ. № 3-ում, մարտ ամսին։

5. «Համբավաբեր» («Վեստ») լրագիրը 1863—1870 թ.թ. ազնվականության ամենահետադիմական մասի օրգանն էր — 399։

6. Ն. Մ. Սադովսկի (1818 — 1872 թ. թ.) — ռուս նշանավոր դերասան — 401։

7. Ագարիկոն — սունկի տեսակ է — 401։

8. Այն գյուղացիները, որոնք ազատվել էին ճորտատիրությունից, սակայն կալվածատերերից դեռ ետ չէին գնել իրենց հողաբաժինները — 404։

«Իմաստուն ծանծաղուկը» — առաջին անգամ տպագրված է արտասահմանյան «Օրշչեհ դելո» ժուռնալի 1883 թ. № 55-ում, սեպտեմբեր ամսին, առանց հեղինակի «ստորագրության, հետո «Օտեչեստվենների զապիսկի» ժուռնալի 1884 թ. № 1-ում, հունվար ամսին։

Լենինը հաճախ է օգտագործել «Իմաստուն ծանծաղուկի» կերպարը՝ քաղաքական հակառակորդներին բնութագրելու համար։

Ստալինը դիմել է նույն այդ կերպարին. «Գոյություն ունեն մերձկուսակցական որոշ քաղքենիներ, որոնք հավատացնում են, թե մեր արտադրական ծրագիրն անիրական է, անիրագործելի է։ Սա Շեդրինի «Իմաստուն ծանծաղուկների» նման մի բան է, որոնք միշտ պատրաստ են «համբակային դատարկություն» տարածել իրենց շուրջը։ Իրա՞կան է արդյոք մեր արտադրական ծրագիրը։ Անպայման, այո՛»։ («Նոր իրադրություն — տնտեսական շինարարության նոր խնդիրներ» — ճառ՝ տնտեսվարների խորհրդակցությանը, 1931 թ. հունիսի 23-ին։ Ի. Ստալին. «Լենինիզմի հարցերը», հայերեն հրատ., էջ 578)։

«Անենազոն նապաստակը» — առաջին անգամ տպագրվել է արտասահմանյան «Օբշչեե դելո» ժուռնալում, 1883 թ., № 55, սեպտեմբեր ամսին, առանց հեղինակի ստորագրության. հետո «Օտեչեստվեննիե զապիսկի» ժուռնալում, 1884 թ., № 1։

«Խեղճ գայլը» — առաջին անգամ տպագրվել է արտասահմանյան «Օբշչեե դելո» ժուռնալում, 1883 թ., № 55, սեպտեմբերին, առանց հեղինակի ստորագրության, հետո «Օտեչեստվեննիե զապիսկի» ժուռնալում, 1884 թ., № 1։

«Առաքինություններ և մոլություններ» — առաջին անգամ տպագրվել է «XXV տարի, 1859—1884» ժողովածուում, Կարիքավոր գրականագետներին և գիտնականներին օժանդակող Ընկերության Կոմիտեի հրատարակությամբ։ 1884 թ., Պետերբուրգ։

9. Modus vivendi — համաձայնության եզր — 436։

10. Caveant consules! — թող հյուպատոսներն արթուն լինեն։ Այս խոսքերն արտասանվում էին այն ժամանակ, երբ հռոմեական սենատը դրժվարին հանգամանքներում հյուպատոսներին դիկտատորական իրավունք էր վերապահում — 438։

11. Կատոն ավագ և Կրտսեր — հռոմեական պետական գործիչներ, որոնք արիստոկրատական կարգերի կողմնակից էին — 438։

«Արջը կուսակալ» — հեղինակի կենդանության տրոք և երկար ժամանակ մահից հետո տարածվում էր ռուսական և արտասահմանյան անլեգալ հրատարակություններով։ Այնուհետև տպագրվեց Սալտիկով-Շչեդրինի երկերի ժողովածուի 5-րդ հրատարակության IV հատորում, 1906 թ., Պետերբուրգ։

12. Risum teneatis, amici! — զսպեցե՛ք ձեր ծիծաղը, բաբեկամներս — 443։

13. Similia similibus curantur — սեպը սեպով են հանում — 448։

14. Laissez passer, laissez faire — թույլ տալ, չխանգարել — 453։

«Խաբեբա լրագրողը և դյուրահավատ ընթերցողը» — առաջին անգամ տպագրվել է «XXV տարի, 1859—1884» ժողովածուում, Կարիքավոր գրականագետներին և գիտնականներին օժանդակող Ընկերության Կոմիտեի հրատարակությամբ, 1884 թ., Պետերբուրգ։

15. Suum cuique — ամեն մեկն ըստ իրեն — 454։

16. Պուշկինի «Հերոսը» և «Ատանանգեր» բանաստեղծություններից — 456։

«Ջորացած ասեղը» — հեղինակի կենդանության օրոք և երկար տարիներ մահից հետո տարածվում էր ռուսական և արտասահմանյան անլեգալ հրատարակություններով։ Ցենզուրայի պահանջների հետևանքով խիստ փոփոխված խմբագրությամբ՝ «Փոքր է ձուկը, բայց մեծ խավարամիջատից լավ է» վերնագրով տպագրվել է Սալտիկով-Շչեդրինի երկերի ժողովածուի 1906 թ. Պետերբուրգում լույս տեսած 5-րդ հրատարակության IV հատորում։ Սկզբնական հիմնական վիճակում առաջին անգամ տպագրված է Սալ-

տիկով-Շչեդրինի երկերի ժողովածուի XVI հատորում. 1937 թ., «Գեղարվեստական գրականություն», Պետական հրատարակչություն։

17. Պլեշչեևի բանաստեղծության սկիզբը — 462։

18. Respice finem! — շրջահայաց եղիր. նախատեսիր վերջը — 463։

19. Փարախային թույն ասելով Սալտիկովը նկատի ունի ամենառեակցիոն գաղափարները — 463։

«Ուրիվը մեկենաս» — առաջին անգամ տպագրված է արտասահմանյան «Օբշչեե դելո» ժուռնալում, 1886 թ., № 81, հունվար։ Նույն տարի լույս է տեսել էլեկտրոնի (ծնև) առանձին հրատարակությամբ։ Տարածվել է նաև ռուսական անլեգալ հրատարակություններով, հետո մտել է Սալտիկով-Շչեդրինի երկերի ժողովածուի 5-րդ հրատարակության IV հատորում։ 1906 թ., Պետերբուրգ։

20. Գիտությունների ակադեմիա։ «Գիտությունները պատանիներին են սնում» — Լոմոնոսովի օդայից՝ «Ելիզավետայի գահակալության օրվանց», 1747 թվի տարեդարձին։ Այդ տարի հաստատվեցին Գիտությունների ակադեմիայի նոր կանոնադրությունը և նոր հաստիքները — 477։

21. Տրեդյակովսկի, Վ. Կ. (1703—1769), գիտնական և պոետ — 477։

«Իդեալիստ ծածանը» — առաջին անգամ լույս է տեսել «XXV տարի, 1859—1884» ժողովածուում, Կարիքավոր գրականագետներին և գիտնականներին օժանդակող Ընկերության Կոմիտեի հրատարակությամբ, 1884 թ., Պետերբուրգ։

Լենինը օգտագործել է «Իդեալիստ ծածանի» կերպարն իր «Մեր վերացնողները...» հոդվածում. «... քանի դեմոկրատիան քաղաքական ծածաններ ունի, լիբերալիզմի գայլաձկները ապրելու բան կունենան։ Քանի այդպիսի ունի, լիբերալիզմի գայլաձկները ապրելու բան կունենան։ Քանի այդպիսի անկենդանություն դեմոկրատիայում, որը շատ ակնառու լուսաբանվում է à la Պոտրեսով ֆիգուրաներով, մինչ այն լիբերալիզմի «էմպիրիկների» արվեստը միշտ այդ ծածաններին որսալու միջոց կունենա» (Վ. Ի. Լենին, 4-րդ հրատարակություն, 17 հատոր, ռուսերեն, էջ 44)։

«Մարդ խաղալիքներ» — առաջին անգամ տպագրված է «Օտեչեստվեննիե զապիսկի» ժուռնալում, 1880 թ., № 1, հունվար ամսին, «Ներածական» ենթավերնագրով։ Նախապես մտածված է եղել որպես մի ամբողջ ցիկլ մարդ-խաղալիքների մասին։

22. Ըստ երևույթին պատժելու գործիք է («Իմ հայրը ձեզ պատժում էր մտրակներով, իսկ ես կպատժեմ կարիճներով» — Գիրք թագավորաց) — 501։

23. Կարելի է մեկնաբանել այսպես.— առաջինը ոչնչացրեց աղատությունը, երկրորդը պատժիչ միջոցներ մտցրեց, երրորդը խստություններ գործադրեց, իսկ չորրորդն այդ խստություններն առավել սաստկացրեց — 501։

24. Perpetuum mobile — հավիտենական շարժման մեքենա — 501։

25. Ճարմանդը պատվանշան էր, որ ցարական կառավարությունը տալիս էր երկարամյա ծառայության համար — 524։

«Մարյակի վիշտը» — առաջին անգամ տպագրված է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1884 թ., № 357, դեկտեմբերի 25-ին։

26. Restez — մնացեք — 540։

27. Si vous n'avez rien à me dire — եթե դուք ինձ ոչինչ ասելիք չունեք — 542։

28. «Le Ruisseau» — «Դետակը» (երաժշտական պիես է) — 542։

29. Մանդրիլիոն — հանրածանոթ հեքիաթի հերոսուհին։ Մնողները հետապնդում են, արհամարհում են Մանդրիլիոնին, բայց նա վերջը ամուսնանում է իշխանի հետ (համեմատիր Հայկական Մոխրատիկի հետ) — 543։

30. Mons, parturiens mus — լեռը մուկ ծնեց — 543.

31. Maman — մայրիկ — 545.

32. Finissez! — վերջ տվեք — 547։

33. Qu'il mourût! — թող մեռներ — 550։

34. C'est tout un poème — դա կատարյալ պոեմ է — 550։

35. Est-ce possible? — հնարավո՞ր է դա միթե — 550։

36 Sortez! — դո՛ւրս — 550։

37. Բոն ժուր — բարի օր — 551։

«Հավատարիմ Տրեզորը» — առաջին անգամ տպագրվել է «Կնիժկա Նեդելյա»-ում, 1885 թ., № 2, փետրվարին, «Անլվա Տրեզորը» վերնագրով

38. Mea culpal mea maxima culpal — իմ հանցանքն է, իմ ծանր հանցանքն է — 562։

39. Motu proprio — սեփական ցանկությամբ — 563։

40. Սիմվոլիկ նշան, որ գործ էին ածում մասոնները — 563։

«Աբթուն աչքը» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1885 թ., № 14, հունվարի 15-ին։

«Հիմարը» — առաջին անգամ տպագրված է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1885 թ., № 41, փետրվարի 12-ին։

41. Կարտուշ, Լուի Դոմինիկ (1693—1721), հայտնի ավազակ — 577։

42. Հարստության կուտակման և բաշխման գիտություն — Սալտիկովը նկատի ունի բուրժուական քաղաքատնտեսությունը, որն արդարացնում է տնտեսական այն կարգը, որի ժամանակ ստացած արտադրանքի մեծ մասը բաժին է ընկնում ոչ թե արտադրող աշխատավորին, այլ շահագործող հարստին — 580։

43. Ալեքսանդր Մակեդոնացի — Մակեդոնիայի թագավոր, մեր դարաշրջանից առաջ IV դարում — 581։

44. Անփոփոխելի ատենակալ — զեմստվոյական դատարանի անդամ, ընտրված ազնվականության կողմից — 584։

45. Սալտիկովը Պոշեխոն անվան տակ նկատի ունի ցարական Ռուսաստանը, որպես խուլ, հետամնաց վայր — 585։

«Հարևաններ» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1885 թ., № 149, հունիսի 2-ին։

46. Ֆիլանտրոպ — մարդասեր — 586։

«Ոգջամիտ նապաստակը» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկին Վեդոմոստի» թերթում, 1885 թ., № 135, մայիսի 19-ին։

47. Լոմոնոսովի «Նամակ ոսկու օգուտի մասին» ոտանավորի սիզբը (գրված Ի. Ի. Շուվալովին) — 596։

«Ազատամիտը» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1885 թ., № 170, հունիսի 23-ին։

Լենինը մեջ է բերում «ժողովրդի թշնամիները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատության մեջ («Ռուսկոյե Բագատստվո»-ի ընդդեմ մարքսիստների գրած հոդվածի պատասխանը) հիշում է «Ազատամիտը» հեքիաթը—«... Շչեդրինի կողմից այդպես դիպուկ նկարագրած Ռուսաստանի ազատամիտի էվոլուցիայի պատմությունը։ Սկսում է այդ ազատամիտը նրանով, որ իշխանությունից ռեֆորմներ է խնդրում «ըստ հնարավորի»։ շարունակում է նրանով, որ ավելանում է «դե, թեկուզ մի քանի բան» և վերջացնում է «ստորության համեմատ» հավիտենական ու անդրդվելի գիրքով» (Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., I հատոր, էջ 44, ռուսերեն հրատ.)։ «Ելնելով մի արշավանք դեմոկրատիայի դեմ» հոդվածում Լենինը նույն այդ հեքիաթը նկատի ունի, երբ գրում է. «Իսկ Շչեդրինն անխնա ծաղրում էր ազատամիտներին և առհավետ նշավակել է նրանց «ստորության համեմատ» ֆորմուլայով»։ (Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., 18 հատ., էջ 287, ռուսերեն հրատ.)։

«Մոռացկոտ խոյը» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1885 թ., № 190, ապրիլի 23-ին։

48. Մովետոն — անբարեկիրթ վարվեցողություն, վերաբերմունքի տգեղ, կոպիտ, գռեհիկ ձև — 615։

«Ուժասպառ ձին» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1885 թ., № 70, մարտի 13-ին։

Լենինը «Նարոդնիկության տնտեսական բովանդակությունը և նրա քննադատությունը պ. Ստրուվեի գրքում (Մարքսիզմի անդրադարձումը բուրժուական գրականության մեջ)» աշխատության մեջ օգտվում է հեքիաթի հիմնական կերպարով, խոսելով գյուղացիության դրության մասին. «... մարդու արթնացումը «ուժասպառ ձիու»— արթնացում է, որն այնպիսի հսկայական, համաշխարհային-պատմական նշանակություն ունի, որ նրա համար օրինական են բոլոր զոհաբերությունները...» (Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., I հատոր, էջ 866, ռուս. հրատ.)։

«Այդ «սուրբ» պարտականության մասին է ասվում նրա կողմից ընկճված ու ճնշված ուժասպառ ձիուն»... (նույն տեղ, էջ 382). «...մարդ արտադրողի ռեակցիոն գծերը, նրա ընկճվածությունը, որ հարկադրում է նրան հավատալ այն բանին, որ նրան հավիտյանս «սուրբ պարտականություն է» վիճակված ուժասպառ ձի լինել» (նույն տեղ, էջ 382)։

«Կիսել» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1885 թ., № 70, մարտի 13-ին։

49. Ժելեներ և բլամանժենք — Ֆրանսերեն ժելե և բլամանժ բառերի աղավաղված արտասանություններն է հոգնակիով։ Նրանք էլ քաղցր ուտելիք են—627։

«Պարապ զուլց» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1886 թ. № 45, փետրվարի 15-ին։

50. Էմս — կուրորտ Պրուսիայում։ Մարիենբադ — կուրորտ Բոհեմիայում —633։

«Գյուղական նրդեն» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1886 թ., № 257, սեպտեմբերի 19-ին։

51. n-i-ni — c'est fini — ոչ, ոչ, դա վերջացած է — 641։

52. C'est une sainte — Նա սուրբ է — 641։

53. C'est une fiére matrone — Նա վեհ մայր է — 641։

54. Un peu d'arithmetique, un peu de geographie et un peu de mythologie (cette pauvre Léda!) — մի քիչ թվաբանություն, մի քիչ աշխարհագրություն, մի քիչ դիցաբանություն (այդ խե՜ղճ Լեդան)։ (Լեդա — հունական դիցաբանական դեմքերից մեկն է, որը լինելով Զևսի սիրուհին, կարապի կերպարանքով տեսություն էր գալիս նրան) —641։

55. Չար մարդիկ բաժանել են մեզ միմյանցից — ակնարկում է հորտերի ապատագրումը — 642։

«Ճանապարհին» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1886 թ., № 245, սեպտեմբերի 7-ին։

«Գյուցազն» — առաջին անգամ տպագրվել է «Կրասնի արխիվ» ժուռնալում, 1922 թ., II հատոր։

«Ռոբենին» — առաջին անգամ տպագրված է «23 հեքիաթ, Մ. Ե. Սալտիկովի (Շչեդրինի) կենդանության օրոք լույս տեսած ժողովածուում, 1886 թ., Պետերբուրգ։

56. Ad majorem Dei gloriam — ի փառս աստծո — 654։

57. Բրեմ Ա. Ե. (1829—1884) հռչակավոր կենդանաբան և ճանապարհորդ — 655։

«Դրամայնիկովի արկածը» — առաջին անգամ լույս է տեսել «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1886 թ., № 252, սեպտեմբերի 14-ին։

58 Anima vilis — կենդանի էակ — 664։

59. Post scriptum — հետգրություն — 670։

«Զատկական գիշեր» — առաջին անգամ տպագրված է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1886 թ., № 245, սեպտեմբերի 7-ին։

«Խնդրարկու ագռավը» — առաջին անգամ տպագրվել է «Վ. Մ. Գարշինի հիշատակին» գեղարվեստական-գրական ժողովածուում, 1889 թ., Պետերբուրգ։ (Լույս է տեսել 1888 թ. դեկտեմբերին)։

«Ենդյան ճեմիաթ» — առաջին անգամ տպագրվել է «Ռուսկիե Վեդոմոստի» թերթում, 1886 թ., № 354, դեկտեմբերի 25-ին։ 1887 թ. մարտին հեքիաթը հեղինակի կողմից այլ երկերի հետ միասին ուղարկվում է «Պուարեդնիկ» հրատարակչությանը։ Լ. Ն. Տոլստոյը հեքիաթը գտնում է «հրաշալի», բայց նրա համար հեքիաթի «ոչ քրիստոնեական» վերջավորությունն անընդունելի է լինում։ Առաջարկվում է փոխել կամ բոլորովին հանել հեքիաթի վերջը։ Սալտիկով-Շչեդրինը իրեն այցելած հրատարակչության ներկայացուցչին (Վ. Չերտկովին) պատասխանում է. «Դուք ուզում եք խուզել վերջը... Դե ուրեմն իմացեք, որ իմ աշխատությունները ես արշինով չեմ չափում»։ Սալտիկով-Շչեդրինի մասնակցությունը «Պոսրեդնիկին» չի կայանում։

60. In corpore sano mens sana — առողջ մարմնի մեջ առողջ հոգի — 700։

61 Օպոդելդոկ — ռևմատիզմի և այլ հիվանդությունների դեմ գործադրվող պառավական դեղ — 701։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարոնայք Գոլովլյովները

Ընտանեկան գատաստան 5
Ալկակցաբար 73
Ընտանեկան ամփոփումներ 130
Ակգանանուհին 190
Անթուլյատելի ընտանեկան ուրախություններ 250
Անժառանգը 287
Հաշվեհարդար 327

Հեքիաթներ
1869 թ.

Այն մասին, թե ինչպես մեկ գյուղացի երկու գեներալ կերակրեց . . 376
Խիղճը կորավ 385
Վայրի կալվածատերը 399

1880 — 1886 թթ.

Իմաստուն ծանծաղումը 409
Անձնազոհ նապաստակը 416
Խեղճ գայլը 423
Առաքինություններ և մոլություններ 431
Արջը կուսակալ 440
Խաբեբա լրագրողը և դյուրահավատ ընթերցողը 454
Չորացած տառեխը 458
Արծիվը մեկենաս 473
Իդեալիստ ծածանը 483
Մարդ խաղալիքներ 498
Սարյակի վիշտը 537
Հավատարիմ Տլեպտորը 558
Արթուն աչքը 567
Հիմարը 573
Հարևաններ 586
Ողջամիտ նապաստակը 595
Ազատամիտը 605
Մռռացկոտ խոյը 613
Ուժասպառ ձին 620
Կիսել 627
Պարապ ղրույց 628
Գյուղական հրդեհ 636
Ճանապարհին 645
Դյուցազն 651
Բորենի 654
Կրամոլնիկովի արկածը 659
Ջատկական գիշեր 671
Խնդրարկու ագռավը 678
Մենդյան հեքիաթ 690

Մանրագրություններ

Պարոնայք Գոլովլյովները 704
Հեքիաթներ 708

Սալտիկով-Շչեդրին
Միխայիլ Եվգրաֆովիչ

Պարոնայք Գոլովլյովները
Հեքիաթներ

Михаил Евграфович
Салтыков-Щедрин

Господа Головлевы
(роман)
Сказки

(На армянском языке)

Издательство «Советакан грох»
Ереван-9, ул. Теряна, 91.
Ереван, 1977 г.

Խմբագիր՝ Գ. Պ. Սարգսյան
Նկարիչ՝ Գ. Ա. Գասպարյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Գ. Հովսեփյան

Հանձնված է շարվածքի 16/XII 1975 թ.
Ստորագրված է տպագրության 10/II 1977 թ.
Թուղթ՝ № 1, 84×108 1/32 տպագր. 22,37 մամ.
= 37,59 պայմ. մամ., հրատ. 32,2 մամ.
Պատվեր 2701. Տպաքանակ 50000. Գին 2 ռ. 98 կ.
«Սովետական գրող» հրատարակչություն,
Երևան-9, Տերյան 91.
Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ,
Երևան-9, Տերյան 91.

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта
Госкомитета Сов. Мин. Арм. ССР по делам
издательств, полиграфии и книжной
торговли. Ереван-9, ул. Теряна, 91.

«Սովետական գրող» հրատարակչությունը «Ռուս դասականների գրադարան» մատենաշարով առաջիկա տարիներին լույս կընծայի հետևյալ գրքերը՝

1. Ա. Ս. Պուշկին — Ընտիր երկեր
2. Մ. Յու. Լերմոնտով — Ընտիր երկեր
3. Ն. Վ. Գոգոլ — Ընտիր երկեր
4. Վ. Գ. Բելինսկի, Ն. Ա. Դոբրոլյուբով, Ն. Գ. Չերնիշևսկի — Հատընտիր
5. Ա. Ա. Ֆետ, Ֆ. Ի. Տյուտչև, Ա. Ա. Ախմատովա, Լ. Պատերնակ, Ա. Տ. Տվարդովսկի — Հատընտիր
6. Ի. Ս. Տուրգենև — Ընտիր երկեր
7. Լ. Ն. Տոլստոյ — Աննա Կարենինա
8. Ա. Պ. Չեխով — Հատընտիր